ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՅՍԻՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի

ԲԱԼԱՀԱՅՍՏԱՆԵԱՑՆ

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՌԱՉՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ARCHEOLOGY AND ETHNOGRAPHY

ETHNOGRAPHIC AND FOLKLORISTIC HERITAGE
2

HOVHANNES HOVSEPIAN

ARMENIANS OF GHARADAGH

II

FOLKLORE

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
2009

ԳՐԱՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ
2

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ

II

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԴ 398=919.81
ԳՄԴ 82.3 h
Հ 872

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. Ս. ՂԱՋԻՅԱՆ, Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Լ. Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ս. Գ. ՀՈՐՈՍՅԱՆ

Ժողովածուն հրատարակության են պատրաստել և առաջաբանը գրել՝
բան.գիտ.թեկնածու *Սվետլանա Սվետիսի Վարդանյանը*,
բանագետ *Էսթեր Հայկի Խեմչյանը*

Պատասխանատու խմբագիր՝
Բան.գիտ.թեկնածու *Ալվարդ Սարուխանի Ղազիյան*

Հ 872 Հովսեփյան Հ.Հ. ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ. II ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ. - Եր., Գիտություն, 2009, 643 էջ:

Հ $\frac{4702080105}{703(02)-2008}$ 2009թ.

ISBN 978-5-8080·0700-0 ԳՄԴ 82.3h

Ժողովածուն ընդգրկում է Ղարադաղի հայերի ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի մի շարք ստեղծագործություններ, որոնք բանավոր ավանդմամբ կենցաղավարել են մինչև XX դար:

Ժողովածուն նախատեսված է ինչպես բանագետ-հայագետների, այնպես էլ ժողովրդական բառուբանի երկրպագուների համար:

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԿԱՋՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Բանահավաքը ոսկե օղակն է անցյալի, իր ապրած ժամանակի և ապագայի միջև: Համընդհանուր կորուստների շփոթի մեջ նա միշտ էլ բնազդով զգացել է սեփական ժողովրդի պատմության, մշակույթի, գրական արժեքների հիմքը հանդիսացող բանահյուսական նշխարների փրկության անհրաժեշտությունը և անմնացորդ նվիրումով ծեռնամուխ եղել բանահավաքչության ազգանվեր ու կարևոր գործին: Նման մտահոգությամբ, ժամանակի կանչին ընդառաջ, մանկավարժ Հովհաննես Հովսեփյանը[1] երիտասարդ տարիներից ի վեր նվիրվել է՝ իր իսկ բնութագրմամբ. «Համատարած անգրագիտության, աշխարհից կտրված, խուլ ու մութ մի գավառի՝ Ղարադաղի» հայոց հոգևոր մասունքների փրկության գործին: Ընթերցողը, ժողովածուի նյութերին ծանոթանալով, կարծում ենք, փոքր-ինչ վերապահումով կընդունի բանահավաքի կողմից՝ գավառին տված նման գնահատականը: Հիշյալ «խուլ ու մութ գավառի» հայ բնակչությունը երբեք չի հեռացել իր ակունքներից, ինքնատիպ բարբառից, ապուպապերից իրեն ավանդված հոգևոր արժեքներից: Օժտված բնատուր տաղանդով՝ նա իրեն շրջապատող բնության, մարդկային տարաբնույթ հարաբերությունների, կյանք ու կենցաղի շուրջ ստեղծել է բազում հոգևոր գանձեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց բույրն ու հմայքը՝ մեկ անգամ ևս վերահաստատելով, որ հայ ժողովուրդը իր կենսունակությունը պահպանել է՝ ամենից առաջ ապավինելով տոհմիկ ակունքներին, իրեն փոխանցված հոգևոր արժեքներին: Այս ամենի խորը գիտակցմանն է հանգել բանահավաքը, բանահավաքչական գործունեության ավարտին, գրելով. «Ճիշտ է, Ղարադաղում գրագիտությունը տարածված չէր, երբեք գրի չէր առնված նրանց գոհարների շարանները, բայց ամեն մի տարեց ղարադաղցի հայ հանդիսանում էր մի գանձարան՝ դարերից եկող խոսքն ու զրույցը բանավոր կերպով սերնդից սերունդ հաղորդելու համար»:

---

[1] Հ. Հովսեփյանի մասին կենսագրական տվյալները տե՛ս սույն հատորի Ծանոթագրություն բաժնում:

Հովհաննես Հովսեփյանի մեջ բանահյուսության նկատմամբ հետաքրքրությունը ծևավորվել է պատանեկան տարիներին: Հաճախակի այցելությունները տեղի ուխտավայրերը, սրբավայրերը, ավերակված բերդերը, գյուղերը, երաժիշտ հոր հետ ճամփորդությունները հեռավոր գյուղեր, ծանոթությունները խոսքի վարպետների հետ, հայտնի հեքիաթասաց Պետրոս պապից լսած հեքիաթները մանկուց նրա մեջ ծևավորել են որոշակի վերաբերմունք, մտածելակերպ, աշխարհայացք ժողովրդական իմաստնախորհուրդ խոսք ու զրույցի, անցյալի հիշատակների հանդեպ:

Հատկապես 1943-46թթ., բուն Ղարադաղում բանահավաքչության բնագավառում նա մեծ արդյունքների է հասել: 1946թ. քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Ղարադաղում սկսված համատարած արտագաղթը հիմնականում դեպի Հայաստան, Թավրիզ, Թեհրան, ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլ երկրներ, բոլորովին անտերության մատնեցին ղարադաղահայերի նահապետական օջախները: Կիսատ մնաց նաև անխոնջ բանահավաքի ծեռնարկած բանահավաքչական գործունեությունը: 1946թ. Հայաստան գալուց հետո, Հ. Հովսեփյանը որոշում է շարունակել իր անավարտ գործը՝ մայր հայրենիքում և այլուր հանգրվանած ղարադաղահայերի միջավայրում: Նրա փորձերը, ցավոք, անցան ապարդյուն. գաղթերը, ժամանակը, տարածությունը միշտ իրենց ավերիչ դերն են կատարում՝ պատճառ դառնալով հոգևոր արժեքների մոռացության ու կորստյան: Հ. Հովսեփյանի նոր մտահղացումների իրականացումը, իր իսկ պատկերավոր բնութագրմամբ. «նման էր այն բանին, որ մարդ իր ուսի վրա թառած թռչունը թռցնի, նոր գնա անտառ՝ թռչուն բռնելու»: Հայրենակիցներին՝ բուն արմատներին մշտապես շփման մեջ պահելու, նրանցից անդառնալիորեն չօտարվելու առաքելությամբ Հ. Հովսեփյանը իր իսկ կողմից գրառված բանահյուսական նյութերը մեկ առ մեկ խնամքով արտագրել է (չնայած վատ տեսողությանը) և հանձնել ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժին՝ այն հույս ու հավատով, որ դրանք երբևէ կհրատարակվեն: Շնորհիվ որդու՝ Մայիս Հովսեփյանի ջանքերի իրականացավ վաստակաշատ բանահավաքի ցանկությունը:

«Ղարադաղի հայերի բանահյուսությունը» բազմաժանր ժողովածուն ամբողջական պատկերացում է տալիս Ղարադաղի հայոց հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Ժողովածուում ընդգրկված նյութերի ընդհանուր քանակն է 865 միավոր, որից հեքիաթներ՝ 103, զրույցներ՝ 143, ստապատում՝ 18, զվարճա-

խոսություններ՝ 86, ծիսական և քնարական երգեր՝ 5, խաղիկներ՝ 5, բանաձևային բանահյուսություն՝ 510: Բանահյուսական նյութերը հաղորդել են ավելի քան 55 բանասաց. մասնագիտական կազմում ընդգրկված են հիմնականում հողագործներ:

Ժողովածուի առյուծի բաժինը կազմում են հեքիաթներն ու զրույցները: Հեքիաթները աչքի են ընկնում սյուժետային ու մոտիվային բազմազանությամբ: Հրաշապատում և իրապատում հեքիաթները տեղական տարբերակներ են, բնորոշ՝ ինչպես Հայաստանի պատմաազգագրական այլ շրջանների, այնպես էլ՝ այլ ժողովուրդների հեքիաթային երկացանկին: Կենցաղային զրույցները օժտված են վիպական հորինվածքի որոշակի առանձնահատկություններով. դրանցում միահյուսված են կենսափիլիսոփայությունն ու կենսահաստատ լավատեսությունը: Ղարադաղահայերի վիպական բանահյուսության մեջ ինքնատիպությամբ ուշագրավ են Սեֆյան դինաստիայի ինքնակալ Շահ-Աբաս առաջինին առնչվող պատումները: Բանահյուսական ստեղծագործություններում վիպական Շահ-Աբասը որոշ հատկանիշներով հարազատ է մնացել իր պատմական նախատիպին: Հայերի և Հայաստանի նկատմամբ Շահ-Աբասի վարած քաղաքականությունը դրսևորվել է ժողովածուում տեղ գտած «Հղցին մաչեն քարը կորալ ա» զրույցում: Ժողովածուում առածնակի տեղ են գրավում զվարճախոսությունները: Զվարճախոսները հիմնականում իրական անհատներ են, որոնց սրատես աչքերից չեն վրիպել կյանք ու կենցաղում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները: Ուշագրավ է, որ բանասացը նյութի սոսկ հայեցողական կրողը չէ: Զրույցների ծագման, ձևավորման, տարածման ուղիների վերաբերյալ նա ուներ իր հստակ պատկերացումները, տեսական մտածողության յուրատիպ ընկալումները. «Հարութե արած հանաքը իրան տանը կուճիգիրանեն տակեն թաքուն մնալիս չի: Դե, տոն ա՝ դուրք օնի, գենցուղ-եկուղ կանի, անց ա կնալիս բերանից բերան, տարածվիս շենավը միհ՝ դռնալիս մասալա» («Հարութ բելուն չաբուջնեն»): Ղարադաղում լայն տարածում ունեին Պըլը Պուղու, Մոլա Նասրեդինի և տեղական կերպարներից՝ Դովունց Ավու, Ուստա Մուրադի, Սուտասան Սուրու, Պուղուզ ապուր շուրջ հորինված զրույցները: Ղարադաղի բազմաժանր բանահյուսության մեջ ինքնատիպությամբ աչքի են ընկնում որսորդությանը նվիրված պատմությունները, որոնք բնակչության կողմից համարվել են ստախոսություն, իսկ հերոսները «քյուհչի» են անվանվել (քյուհչի Սուրի) և այլն:

Նման բնութագրումը պայմանավորված է հիշյալ զրույցներում առկա դեպքերի չափազանցված, ուռճացված նկարագրություններով, վիպաառասպելական դրվագների առատությամբ: Անդնդախոր ծորերով, լեռներով, անտառներով շրջապատված Ղարադաղում բավական լայն տարածում ուներ որսորդությունը: Գավառում վայրի կենդանիների ու գազանների առատությունը, անարգել որսը՝ 1940-ական թվականներից ի վեր բանահավաքին դարձրել են որսի սիրահար: Բանահավաքը որսորդությանը նվիրված զրույցների գրառումն իրականացրել է որսորդների միջավայրում:

Ժողովածուում տեղ գտած նյութերին կից համապատասխան նախաբաններում բանահավաքն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է նյութերի կենցաղավարման, սերնդից սերունդ ավանդելու ուղիների վերաբերյալ աղբյուրագիտական կարևորություն ունեցող տեղեկություններ, որոնք, անշուշտ, իրենց արժանի տեղը կգրավեն հայ բանահավաքչության պատմության մեջ: Նրա վկայություններից պարզվում են, որ Ղարադաղում բանահյուսական նյութերի կենացաղավարման, մեկից մյուսին փոխանցման, լայն տարածման համար կային օբյեկտիվ նախապայմաններ: Ղարադաղահայերը ձմեռային երկար գիշերները ընտանիքներով հավաքվում էին գերդաստանի ամենատարեց մարդու տանը և պատմում հեքիաթներ, զրույցներ, իրական պատմություններ, ժամանակի նորություններ և այլն:

Ղարադաղում յուրաքանչյուր ընտանիք հարևան գյուղերում ուներ ծանոթ-բարեկամներ, ճանաչված օջախներ, որոնց հետ հաճախակի էին տեղի ունենում փոխայցելություններ: Նրանք փոխադարձաբար, միմյանց «խոնախա» (ծանոթ, բարեկամ), իսկ թուրքերի հետ՝ «դոստ, «քիրվա» անվանումներով էին կոչում: Նման փոխայցելությունների ընթացքում նրանք միմյանց պատմում էին հեքիաթներ, զրույցներ, առած-ասացվածքներ, կատարում երգեր, խաղիկներ և այլն, որոնք էլ ժամանակի ընթացքում տարածվում էին գավառով մեկ:

Բանահավաքի մի այլ վկայությունից պարզվում է, որ ղարադաղահայերը առհասարակ մեկուսի ու ինքնամփոփ կյանք չեն վարել. գյուղատնտեսական աշխատանքների ավարտից հետո, նրանք արտագնա աշխատանքների են մեկնել Շուշի, Գանձակ, Մեղրի, Ղափան, Թիֆլիս, Բաքու: Շփումները նոր միջավայրի հետ նույնպես նպաստել են բանահյուսական սյուժեների ու մոտիվների տարածմանը, կատարողական երկացանկի հարստացմանը: Թուրքերի հետ համակեցությունը ևս նպաստել է որոշ

մոտիվների ու սյուժեների փոխադարձ ներթափանցումներին: Ժողովածուում ընդգրկված բազմաթիվ խաղիկներ, առած-ասացվածքներ ղարադաղահայերի միջավայրում կատարվել են հայերեն ու թուրքերեն:

Ուշագրավ են բանահավաքի կողմից՝ բանասացներին տրված «պատմիչ» և «ասմունքող» անվանումները: Պատմիչ անվանումը նա պայմանավորում է հետևյալ հանգամանքով. «Նրանցից ոմանք ոչ մի գրագիտություն չունեին և զարմանալի ճշտությամբ, ըստ ժամանակաշրջանի, տեղեկություններ են հայտնում երկրում տեղի ունեցած անցուդարձերից, խաների, բեկերի կողմից կատարված ասպատակություններից, գաղթերից»: Ասմունքող ինքնատիպ բնորոշմամբ, բանահավաքը նկատի է ունեցել կյանքի տարաբնույթ կողմերը գեղարվեստական բազմերանգ գույներով ներկայացնելու բանասացների բացառիկ շնորհքը: Բանահավաքը փորձում է բնութագրել նաև բանահյուսության բուն էությունը՝ ընդգծելով հատկապես մեկից մյուսին փոխանցվելու նրա կարևորագույն առանձնահատկությունը: Բանահավաքի մի այլ վկայություն, սակայն, բացահայտում է բանասաց-բանահավաք-լսարան եռաստիճան կապի վերաբերյալ նրա ոչ հստակ պատկերացումը: Բանասացից նյութը գրառելու պահին՝ լսարանից հնչած ունկնդրի միջամտությունը. «Այս առակը պատկանում է այսինչ մարդուն: Դա ես նրանից եմ լսել առաջին անգամ, այսինչ ժամանակ» միանշանակ ընդունվում է բանահավաքի կողմից և նյութին կից նա նշում է «այն առակախոսների անունները, որոնցից լսվել և տարածվել է առաջին անգամ»: Նման մոտեցմամբ բանահավքը անտեսում է բանահյուսության ներշարժունակ զարգացման հնարավորությունները, նյութը ստեղծագործաբար վերարտադրելու յուրաքանչյուր անհատ ասացողի անսպառ կարողություններն ու ինքնատիպությունը:

Ըստ բանահավաքի վկայության հայոց կենցաղում առկա՝ մականուններով միմյանց կոչելու սովորությունը, պայմանավորված տվյալ անհատի ծագմամբ, մասնագիտությամբ, զբաղմունքով և այլ հատկանիշներով, տարածված էր նաև ղարադաղահայերի միջավայրում. Պըտոնց Մարդի՝ Մարտիրոս Պետրոսի Հայրապետյան, Թառանե տղա Օվանես՝ խորթ մոր Թառանի անունով կոչված, ձի քշող Աղաջան՝ հմուտ ձիավար, զարգյար Արմենակ՝ ոսկերիչ, դուլգար Ալիքսան՝ հյուսն, խաղ ասող Մցական՝ հարսանիքներում, խնջույքներում երգելու համար, վըրսական Թաթավես՝ որսորդ, Ապեր՝ ընկերների շրջանում ամենատարեցը և այլն:

Ժողովածուի նյութերը գրառվել են հիմնականում այն ղարադաղահայերից, որոնք դարեր շարունակ բնակվել են Հյուսիսային Իրանի՝ Արաքս

գետի ափամերձ գյուղերում (Խանագահ, Նորաշեն, Վինա և այլն): Բանահավաքը, լինելով բնիկ ղարադաղցի, հնարավորինս հարազատ է մնացել մայրենի բարբառին:

Ձևաբանական դասակարգմամբ Ղարադաղի բարբառը «ս» ճյուղին է պատկանում (գյուլիս ըմ, գյուլիս ըս, գյուլիս ա և այլն): Քերականական առանձնահատկություններով, բառապաշարով այն միջին տեղ է գրավում Մեղրու ու Ղարաբաղի միջև: Չունի «ֆ» հնչյունը: Բառասկզբում խուլ հնչյուններ չեն գործածվում. գրական լեզվի ձայնեղների դիմաց գործածվում են շնչեղ-ձայներ, իսկ խուլերի դիմաց՝ ձայնեղ-բաղաձայններ (պապ - բաբ, կերակուր - գերակուր, տուն - դուն, ճակատ - ջակատ, բերան - բ'երան, ջուր - ջ'ուր և այլն): Ձայնավորների հնչյունափոխություններից են՝ ա - է (բան -բեն), ե - ի (թել - թիլ, ես - իս), ի - է (վիզ - վեզ, միս - մես) և այլն: Հոգնակիակերտ մասնիկներն են՝ ըր, էր, նե (օտենք հացըր, ջիրեր, վըչխըրոտենք, աղսախկալնե) և այլն: Նկատի ունենալով, որ բարբառներն առհասարակ անվերահսկելի են և այս կամ այն բարբառ կարող են ներթափանցվել լեզվաբարբառային, խոսակցական դրսևորումներ՝ հիմք դառնալով ամենատարբեր հնչերանգների արտաբերման, հնչյունափոխության. համանման բառերի հնչունափոխված տարբերակները թողել ենք նույնությամբ (օր, հարթնը, հառնը, հարսը և այլն): Այլ ազգերի հետ հարևանությամբ ապրելը (հիմնականում՝ թուրքերի, քրդերի) նպաստել են օտար բառերի ներթափանցումներին, որոնց առկայությունը բնագրերում նույնպես թողել ենք անփոփոխ: Գրառումներում առկա են նաև գրական որոշ բառերի, նույնիսկ նախադասությունների ներթափանցումներ. դրանք նույնպես փոփոխության չեն ենթարկվել:

ԲԱՆԱՀԱՎԱՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Ղարադաղն իր գողտրիկ բնաշխարհով ներկայացնում էր հեքիաթային մի ընդարձակ հայաշատ գավառ: Նրա տարածքում ապրող հայերի մեջ ժամանցի համար իրենց ուրույն տեղն ունեին ժողովրդական հեքիաթները: Պատանիներից սկսած մինչև զառամյալ ծերունիները սիրում էին լսել հեքիաթներ: Սակայն հեքիաթ պատմողները շատ քիչ մարդիկ էին: Ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Սրանց կարելի է հաշվել ձեռքի մատների վրա»:

Շատերն էին ցանկանում հեքիաթներ պատմել շրջապատում, ժամանցի ժամանակ տարածել իրենց լսած հեքիաթը, ցույց տալ իրենց շնորհքը: Սակայն դա հաջողվում էր շատ քչերին. «հաջողվում էր հազարից մեկին»: Օրինակ, մեր՝ հասակակիցներիս շրջապատում, հաճախ էր տեղի ունենում մրցավեճ, թե երեկոյան լսած հեքիաթը ով կարող է պատմել այնպես, ինչպես որ լսել է պատմողից: Ցանկացողներ շատ էին լինում: Բայց ոչ մեկին չէր հաջողվում պատմել այնպես հետաքրքիր, բովանդակալից, կախարդիչ, ինչպես պատմում էին հեքիաթների պատմիչները, որոնք իրենց հմայիչ վարպետությամբ հեքիաթը պատմում էին այնպես, որ լսողներից շատերը, ինքնակամ, կարծես թե մի պահ մոռանում էին շրջապատը, կախարդվում, դառնում հեքիաթի հերոսներից մեկն ու ընկնում հեքիաթային աշխարհ. նիրհում, ննջում, քնում երկար հեքիաթից ազդված, իրենց տեսնում հեքիաթային աշխարհում, քաղցր երազներում:

Այն ժամանակներում գրագիտությունը համատարած չէր. ակումբ, գրադարան, ռադիո, հեռացույց և այլ միջոցներ չկային՝ ծմեռային երկարատև գիշերները մաշելու համար: Հայ շինականին մնում էր, որպես միջոցառում ժամանցի համար՝ հեքիաթները, առակները, առածները, հանելուկները, շուտասելուկները տեղի շնորհաշատ մարդկանց կողմից գավառում տեղի ունեցած անցուդարձերին վերաբերվող՝ միամիտ մարդկանց մասին հորինած հումորներն ու երգիծանքները[2], որոնք մեծ քանակով կային գավառում:

---

[2] Ընդգծված բառերը եզրային նշանակություն չունեն, բանահավաքը դրանք գործածում է զվարճախոսությունների, գրառումների վերաբերյալ (ծան. խմբ):

Բերենք մեկ օրինակ ժամանակի անցկացման վերաբերյալ:

Ղարադաղի հայերը՝ ավարտելով աշնանային դաշտային աշխատանքները, սովորություն ունեին ձմեռային երկար գիշերներն անցկացնել տոհմի ամենատարեց մարդու տանը՝ ամբողջ ընտանիքներով հավաքվելով: Օրինակ՝ մենք հավաքվում էինք Տեր Եզնիկ քահանայենց տանը:

Գյուղի բոլոր տների կառուցվածքը գրեթե համաչափ էր՝ ուղղահայաց, տասը մետր երկարությամբ, հորիզոնական տասներկու մետր լայնությամբ: Տան մուտքի դուռը հարավային աջ անկյունից էր: Մուտքի ձախ կողմի վրա՝ տան ներսում, հինգ մետր երկարությամբ՝ ուղղահայաց, հինգ մետր երկարությամբ, երկու մետր բարձրությամբ, մեկուկես մետր լայնությամբ՝ միջնապատով բաժանված մի զույգ «քնտոկ» (հացահատիկի և ալյուրի առանձնարան, պահեստ) էր պատրաստված: Տան հյուսիսային վերևի պատի տակ՝ աջ անկյունում, ջուլհակի հորն էր տեղադրված. քահանայի կինը՝ Ոսկի տատիկը, զանազան գործվածքներ էր գործում: Տան մեջտեղի սյունից դեպի արևմտյան կողմը դրված էին զանազան հացահատիկների, ընդեղենի ջվալներ, ոչխարի, այծի մորթիներից պատրաստված լիքը պարկեր: Տունը բաժանված էր երկու մասի՝ մի նեղ անցքով: Առաջին մասի հարավային պատի կենտրոնում տան կրակարանն էր՝ օջախը: Առաջին բաժինը հանդիսանում էր որպես ճաշասենյակ, հյուրասենյակ, զրուցարան: Կավե հատակին փռում էին հասարակ կարպետներ, կարպետների վրա՝ գորգեր: Տան ջվալներով ու պարկերով անջատված երկրորդ բաժինը ծառայում էր զանազան սննդամթերքների, կճուճների, պղինձների և այլ անհրաժեշտ իրերի պահեստ: Քահանայենց մեծ տունը ոչ մի լուսամուտ չուներ: Նրա լուսավորողը տան կտուրին գտնվող երկու երդիկներն էին: Մեկը գտնվում էր անմիջապես ջուլհակահորի վերևում, մյուսը՝ օջախի վերևում:

Ժամանցի համար քահանայենց տանն էին հավաքվում ամեն երեկո յոթ ընտանիք, այդ թվում՝ մեր ընտանիքն էր, քահանայի հորեղբոր տղաների՝ Թովմասի, Ալեքսանի, Ասատուրի, տիրացու Հարությունի, Թովմաս ամու փեսա՝ Ռուստամի և քավոր Մկրտիչի ընտանիքները: Քահանայի ընտանիքի անդամների հետ միասին կազմում էինք 46 շունչ:

Ըստ տեղի նահապետական ադաթի՝ օջախի աջ կողմում նստում էր քահանան, ապա՝ ըստ տարիքի ու հարգանքի իրար կողքի ծալապատիկ նստում էին տղամարդիկ՝ մինչև տան կենտրոնում գտնվող սյունը: Օջախի ձախ կողմում նստում էր քահանայի կինը՝ Ոսկի տատը: Ըստ տարիքի ու հարգանքի նստում էին կանայք՝ Թովմաս ամու կինը՝ Մնեշակ զիզան,

տիրացուի կինը՝ Նուբար բաջին, մայրս՝ Մինա զիզան և մյուսներն իրար կողք կողքի, ծալապատիկ նստում էին մինչև տան կենտրոնի սյունը: Սյունին մեջքը հենած ու հպարտ նստում էր քահանայի ավագ որդի Մարգար ապին: Մարգար ապին մշտաժպիտ մարդ էր՝ զվարճախոս: Նա տղամարդկանց զրույցներին գրեթե չէր մասնակցում. զանազան ծիծաղաշարժ հումորներ, հանելուկներ, բառախաղեր էր ասում ու ծիծաղ պատճառում կանանց: Միաժամանակ Մարգար ապին կանանց մոտ միշտ հպարտանում էր իր օրվա բերած չոր ընտիր ցախով, որ կարողանում էր միշտ թեժ պահել օջախի կրակն ու լուսավորել կրակի բոցով ամբողջ տունը:

Տղամարդկանցից ծխախոտ էին ծխում միայն քահանան ու տիրացուն: Թոմաս ամին օգտագործում էր քթախոտի փոխը: Մյուս տղամարդկանց զբաղմունքը իրենց խոշոր ուլունքներից պատրաստած, զանազան գույներից՝ գլխավորապես՝ սաթից, «տղորմաներն» էին, որոնք ռիթմիկ չխչխկոցով շարժվում էին մատների արանքներում, ափերի մեջ:

Տղամարդիկ ժամանցը սկսում էին գյուղում տեղի ունեցած նորություններով, ապա անդրադառնում գավառի նորություններին: Պատմում էին օտարության մեջ եղած տարիներին իրենց հետ տեղի ունեցած արկածներից, օրենքներից և իրենց հետաքրքրող անցուդարձերից: Ժամանցի համար հավաքված մարդկանց մեջ միայն քահանան էր, որ գիտեր բազմաթիվ հետաքրքիր հեքիաթներ: Եթե երեկոյան մտադիր էին հեքիաթ լսելու, զանազան հարցերի շուրջ չէին զրուցում, քանի որ հեքիաթները շատ երկար էին լինում: Հաճախ շատերը նիրհում էին, քնում, բայց հեքիաթները չէին վերջանում:

Կանանց խումբը տղամարդկանց նման անգործ ու անբան չէր լինում: Ամեն երեկո, ամեն մի կին իր գործն ուներ: Մեկը գուլպա էր գործում, մյուսը որևէ հագուստ էր կարում, Ղարադաղում ամեն մի կին իր ընտանիքի դերձակուհին էր համարվում, մեկն էլ հագուստ էր կարկատում: Աղջկա օժիտի համար ասեղնագործություն էին անում և ամեն մի գործում՝ դիմում քահանայի կնոջ խորհրդին ու հավանությանը:

Երրորդ խումբը՝ երեխաները, պարկերով ու ջվալներով բաժանված տան երկրորդ մասում տապկնոցի, աչքակապ խաղեր էին խաղում, հանելուկներ, բառախաղ, շուտասելուկներ ասում ու զվարճանում: Ավելի փոքրիկները զարմանալիորեն լուռումունջ, կասես թե համրացած, նստում էին իրենց մոր գրկում՝ առանց որևէ մեկին խանգարելու:

Թող ընթերցողին զարմանալի չթվա, որ ես այժմ մտածում եմ ու խորհում, թե դա ինչպիսի վերաբերմունք էր, ինչպիսի հարգանք, որ 46 հոգուց

բաղկացած խումբ, բաժանված երեք խմբի, ինչպես էին ղեկավարվում, որ ամբողջ ժամանակի ընթացքում ոչ մեկը մեկից ոչ մի նկատողություն կամ դիտողություն չէր ստանում. կասես՝ մի մարդ է նստած:

Ժամանցը նաև այդպես էր անցնում գյուղի մյուս տոհմակից ընտանիքներում:

Ժամանցը որքան էր տևում կամ քանի ժամ, ոչ ոք չգիտեր, քանի որ գյուղերում ժամացույց գոյություն չուներ: Ժամանակը լրացված էր համարվում այն ժամանակ, երբ խոսելու նորությունները կամ հեքիաթը ավարտվում էր:

Գյուղերում գիշերային ժամանակի չափանիշը հանդիսանում էր աքլորների կանչը: Գիշերային առաջին կանչին համարում էին, որ գիշերը կիսվել է, երկրորդ կանչին՝ մոտենում է լուսաբացը, երրորդ կանչին՝ արդեն լուսաբաց է[3]:

Ընթերցողին ներկայացվող բանահյուսական ստեղծագործությունները լսել եմ 1934-39թթ. ընթացքում, ինչպես նաև գրի առել 1941-46թթ. գավառում կատարած շրջագայության ժամանակ:

[3] Խանագահ գյուղի 96 ընտանիքներից միայն գյուղի քահանան ուներ գրպանի ժամացույց: Ըստ քահանայի՝ այն պատկանել էր գյուղի վերջին մելիք Բալա Ազարյանին: 1916թ. նրա մահից հետո, մելիքի հարազատները ժամացույցը նվիրել են քահանային: Այն արտադրվել էր 1884թ. «Саркисов» գործարանում: Մոտ 100 տարի ժամացույցն աշխատել է անխափան (ծան.բանահավաքի):

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1 (1). ՀԱՋԱՐԱՆ ԲՈՒԼԲՈՒԼԸ

Իլալ ա, իլա չի, մի թաքավեր ա իլալ: Էտ թաքավերը իրան պալատնուն ըռշկին մի բաղ-բաղար լալ, որ ճոնդ լալ, պուճախ չի լալ, էնքան մըծ լալ:

Էտ բաղ-բաղարմը ըշխարքեն տակեն հինչ թահրը ծառ, վարթ, ծաղեգ ասս, իլալ ա: Ըշխարքմս հինչքան, հինչ տեսակի ղուշր կան, էտ բաղարմը իլալ ա: Քառասուն ախպիր լալ, քառասուն գյուղով, վըսկե ծոկները մաչեն:

Մի խոսքավ, Աստծեն դրախտեն նման մի չտըսնված, մի անթառամ բաղար:

Օմեն իր քշանոց շուդավ, լուսը բինվալեն նետ թաքավերը գինիս լալ բաղարմը սեյր ըրիլիս ախպիրներեն քչքչոցից, ղուշերեն ծըլվըլոցից, ծառերեն խշշոցից, վարթերեն անոշ հոտից ուլխնալիս, ջհիլնալիս, գյուլիս պալատմը նստիս, չայ խմիլիս, հաց ուտիլիս, ըլխանալիս:

Մի քշանաց ալ թաքավերը բաղարմը սեյր ա ըրիս, պալատը գյուղուց տըսնալիս ա մի դարվիշ նայե պալատեն դրքեն վըտ կացած, աղոթք ա ըրիլիս:

Դարվիշը, որ թաքավերեն տսնալիս ա, գյուլոխ ա տալիս, սուս-փուս վըտ կնալիս:

- Տեղս հի՞նչ բեն օնըս,- դարվիշեն նանե հրցրիլիս ա թաքավերը:

- Դարվիշ մարթմ, եկածմ քու թաքավրեթունը օրհնմ, որ ինձ ողորմութուն տաս:

- Հի՞նչ ողորմութուն տամ,- կզնված ըսիս ա թաքավերը, ձեռքեն գավազանավը թխիս դարվիշեն գլխեն:

Դարվիշը խղճացած թաքավերեն ըսիս ա.- Իս Աստծու մարթմ: Դու որ ինձ դերտակ հղե յըս դիրիս, թող Աստված տա քու էտ բաղարտ չուրանա:

Էս խոսքեն երե, դարվիշը անհետանմ ա: Թաքավերը ետ ա յիշիս դիբի բաղը, աշկերեն հվտալիս չի: Տսնալիս ա բաղարեն ծառըրը ըսկսալն տի-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՇԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

րիվաթափ դըռնիլ չուրանալ: Ծաղեգնեն, վարթերը թռմիսն: Ախպիրնեն ցմքիսն: Թեխյա ղուշրը ծըլծվալավ թռիսն, գինիս:

Թաքավերը վխեցած ըսկսիս ա կանչիլը.- Դարվիշեն ճրեցեք, դարվիշեն փռնեցեք...

Քաղաքեն դըրբզենքը փկիսն... Դեսն շոռ գյոլիս, դեննն շոռ գյոլիս... Դարվիշը մի թիքա հաց ա դըռնալիս, կուրչիլիս: Կրիս չըն ճարի:

Թաքավերը հվաքիլ ա տալիս իրան երգիրեն օմեն գիտնականնեն, հաքիմնեն, բախտայիշուղնեն ու ոչ մինը կրիս չի մի ամալ, մի հնարք արի, որ բաղարը կնեչի:

Վերջը մի օր մի հիլիվր դարվիշ գյոլիս ա թաքավերեն ըսիս, որ.- Բաղարդ նորից դրախտ դռնալու հետե էրկու միջոց կանի: Առաչինը՝ պետք ա համ ան դարվիշը ճարեք, իրան տված անեծքը ետ եր օնի Աստուծեն նանե, որ բաղարը կնենչի: Ըրկումինջինն ալ՝ պետք ա հազարան բուլբուլ ճարեք, բերեք երքի, ընդուր երքի սասից կենթանութուն գյո բաղարեն:

Թաքավերեն իրք տղա յա ինիս: Իրեքքան ալ ազափն ինիս: Գիդալիսն, որ կարի չըն ճնանչիլ. դարվիշեն ճարիլ: Մարթ ա մի խուրջուն վըսկե գիցիսն ձիանցը երե, եր ինիս ձիանցը, իրք ախպեր միասին, մի հղե փռնիս, գինիլիս:

Շատն գինիս, քա խրեգ, Աստուծ գիդա, հսնիսն մի տեղ, տսնալիս՝ մի մըծ չինարի ծառ կա, տակեն մի ախպիր, ախպիրին կողքեն մի տոն կա: Թաքավերեն տղեքը ձիանցը նանե վերն գյոլիս, նի մտիս տոնը, տսնալիսն մի հիլիվր մարթ նայե տանը նստած: Թաքավերեն տղեքը իրաց դարդը նաղլ են ըրիս հիլիվերեն:

Հիլիվրը ըսիս ա.- Իս լսածմ, էս թարափներմը ձեր օգած ղուշեն նանե կաննի: Համա դե, քա ըշտեղ ա, գիդիլս չըմ:

Մըծ ախպերը ըսիս ա.- Հիլվրը օրհնված կենա, քու տանը կողքեն նհետ հղեն իրք տեղ ա բուժինվլիս: Վը՞ր հղոք գիննք քու մասլահաթավ, որ բալքա մըր նպատակեն կարնք հասնի:

Հիլիվրը ըսիս ա.- Թաքավերեն տղեքը ապրած կենան, երե հղեն նա մաշտեղեն հղեն պարի ա, հու որ էտ հղցննավը գենցածն, ետն դըռած եկած: Համա դե էս ներքե հղեն, գեդան-գյալմազ: Հարուր տարե ա տեղս ըպրիսմ, հալա տըսած չըմ, որ էտ հղոքը գենցուևղներից մինը ետ դըռնի: Ներքե հղոքը գինիլը իս մալսահաթ չըմ տալիս:

Մըծ ախպերը ըսիս ա.- Իս երե հղոքը կգինմ, իմ բախտեն:

Մաչնակ ախպերն ալ ըսիս ա.- Լա մաչտեղեն հղեն ալ իմ բախտեն:

Կուճի ախպերն ալ ըսիս ա.- Աստված-Աստված, իս ալ ներքե հղոքնմ գիննական: Հինչ կդըռնի, թող դըռնի:

Ախրտանքը պայմանն դիրիս, որ հուր հինչ կհաջողվի, հաջողվի չի, ետ դըռնի գյո հիլիվերեն տանը էնքան մնա, որ իրք ախպեր հվաքվնք, միասին գիննք տոն: Պայմանն կպիս՝ Աստուծեն անմը տալիս, եռ ինիս ծիանցը, օմեն մինը մի հղոք գինիլիս:

Շատն գինիս, թա խրեգ, շատն շոռ գյոլիս, թա խրեգ, էտ ալ Աստծ գիդա: Մըծ ախպերն նա մաչնակ ախպերը մի քաղաքմ մին-մինու ջհհիսն: Որոշիսն հազարան բուլբուլեն միասին շոռ գյոն, ճարն:

Էրկու ախպերը թող մի տեղ շոռ գյոն, մընք խաբեր տանք կուճի ախպորը նանե:

Կուճի ախպերը իրան գենցած հղոքը շատ քյոռուղ ա քաշմ: Որ չի ինիս, որ ջհհի վեչ մրթակեր հիյվանու, նախկա օղնու, նման շատ բիներու ումունունց հետ կռվոմը տղան միշտ հաղթիս ա, առաչ գինիս առանց վախի: Մի օր ալ տսնալիս ա մի ծմակում կրակու ծոխ ա ըրվալիս: Տղան ուլխնալիս ա, ըսիս ա. «Փառքտ շատ ինե Աստծ, շուդով մարթկանց իրս կտըսնմ»:

Չին քշիս, գինիս ա հսնիս ծոխը ըրվալիս տեղը: Տըսնալիս ա՝ բեցուր պատերավ հասար քաշած շինութուն ա, ըրկաթի դըրբզավ:

Դուրքը թկիս ա: Մի նախշուտ աղչիգ գյոլիս ա դուրքը բինալիս: Տըղեն որ տսնալիս ա, ըսկսիս ա լեց ինիլը:

- Խե՞ յս լեց ինիս,- զարմացած հրցրալ ա տղան, համ ալ զարմանալավ ըղչգյանը անսվելի նախշուտթունից:

- Ըշտեղավ եկածս, տեղավն ալ ետ դըռ գինի,- նորից ըսիս ա աղչիգը:

- Ախր խե՞, հինչու հետե,- հրցրիս ա տղան:

- Հորտ տոնը շեն,- ըսիս ա աղչիգը,- պա էսքան տըղ եկածս, տսնալիս չը՞ս, որ ոչ մի մարթ, կենթանոթուն կավչնի: Մի վախտ տեղարս շատ շեն, քաղաք կար, լիգը ժողովուրթ: Տեղս իրք դև ա արսա եկալ, իրք ախպեր: Իրքն ալ մարթակեր: Օմեն ժողովուրթեն կերալն վերացրալ, աշխրքը շինալ խարաբա: Շուդանց մարթ չի ըրվալիս, որ օտի: Միեգ քոն ա, որ եր կանա՝ քի ալ, քու ծիանն ալ մի դոնա կօտի: Մեղքս, քանի շուդ ա, ետ դըռ գինի:

Տղան ըսիս ա.- Դու վախլ մա, իս որ եկածմ հասած տեղս, ուրեմն ինձ ալ մի զորութուն օնըմ: Թա իրոք մրթակերն, իս ալ դևակերմ: Թող գյո կռվնք:

Աղչիգը ուլխացած, տղեն ասած խոսքավը, ըսիս ա.- Տեղես ապրուղ դևը իրք գյլխսնե յա: Կռվիս տեղը որ հաջողվի հաղթս իրան, էրկու գյուլոխը կկտրիս, մաշտեղեն գյուլոխը կթողս: Ինքը հարչան կասի. «Մաշտեղեն գյուլոխս ալ կտրի, մաշտեղեն գյուլոխս ալ կտրի»: Կտրս վեչ: Որ կտրս, կսղանա, ալ կարի չըս ըսպանի:

Էսքանը աղչիգը ըսիս ա, գինիս: Տղան ալ ծին կպիս ա մի ծառու երե, բիցիրնալիս դրբզին գյլխեն գյող կնալիս, սուրը ձեռքեն հազր պահած:

Դևը քոնե եր ա կնալիս: Պատառ դիբի դես, դիբի դեն շոռ ա գյուլիս, ուլխացած ըղչիգյանը ըսիլիս.- Մարթու վըտ ըմ ունիլիս: Տեղարքս մարթ ա եկած: Ասօր մարթա մըսմ ուտլական:

- Իս բենա խաբար չըմ: Տեղարս մարթ չի ըրվացած: Դուս եք գինի, շոռ եք ճարի,- դևեն ըսիս ա աղչիգը:

- Ասօր տեղարս մարթ ա եկած, եկուղ մարթը իմ ղոնաղն ա, իմ աշկեն լուսն ա, իմ գյլխեն երե տեղ օնի,- իստի սոտ խուսքերավ, եկած մարթեն խիփիլավ, դևը մուտուճալիս ա դարբազեն:

Բիլնալոն գիցիս ա, որ դուրքը բենի, տղան եռնաց սուրավը միետ աջ ա թխիս, միետ ծեխ, դևեն էրկու գյուլոխը կտրվիսն, վեր ինգիս:

Դևը վեր ա ինգիս քցըքացե ըրիս, թավիլ տալիս, կնչիլիս. «Թխի, թխի, միետ ալ թխի մաչտեղես գյլխեն»:

Տղան ծծղիս ա ըսիլիս.- Լա էտքանը քի բոլ ա:

Դևեն սասը կտրիս ա, ըստկիլիս:

Աղչիգը ուլխացած գյուլիս ա նի ինգիս տղեն կոռնը, տնիս տոն, հարցփորց ըրիս, թա՝ հինչ ցավ ա քի բերած հսցրած տեղարս՝ դևերեն երգիրը: Տղան իրան դարդը նաղլ ա ըրիս, ըսիս, որ հազարան բուլբուլուվ ա եկած:

Աղչիգը տղեն ըսիս ա, որ մի հատ հազարան բուլբուլ կա: Նայե ըսպանած դևեն մըծ ախպուրը տանը: Համա դև եր ունիլու հետե շատ մըծ դժվարեթուն կա:

- Պետք ա մի օր հղե գինս,- տղեն հետե մասլահաթ ա ըրիլիս աղչիգը,- կհասնս հենց գյլխանե դևեն: Թա կհաջողվի՝ կկռվըս դևեն նհետ, ալլա չորք գյուլոխը կկտրիս, մաշտեղեն գյուլոխը կթողս: Հարչան ղանչաք կարի, լսըս վեչ: Դևրեն քուշտեն մաջնակ քուրս ա կնալիս: Քիշերը ղոնաղ կմնաս քվորս քուշտեն: Կօտըս, կխմըս, կդինջանաս: էքսի քշանաց եռ կինս ծիանտ, կգինս հասնս մըծ դևեն՝ օխտը գյլխանուն տոնը: Նհետը կռըվ կարս, որ հաղթս, ալլա վեց գյուլոխը կկտրիս, մաչտեղեն գյուլոխը կթողս: Հինչքան ղանչաք կարի, կտրըս վեչ: Հազարան բուլբուլը պիհս ա

իրան բաղարեն վեչջին քունջումը շինած տանը: Օրեշ մարթ որ կարե վեչ բուլբուլը գյուղանա, տանի, դևը բաղարմը օխտը քողցած գյուլ ա բեց թողած, օխտը քողցած նախկա օղծը, իտուք երի կտան, որ քի օտն, վախս վեչ, կսպանս: Այտս կտըսնս հղցին կողքեն մի շոն կա կապած, ըռշկին խոտ դիրած, պատառ ալ հըռե մի գյոռնը կա կապած, ըռշկին մըս ա դիրած: Խոտը եր կօնըս կտաս գյոռանը, մըսն ալ կտաս շանը: Նի կմտըս օթախը, կտըսնս, որ հազարան բուլբուլը վըսկե ղփազմ նայե պատեն կախ տված: Եր կօնս կբերս:

Տղան ըղչիգանը արած մասլահաթը լսիս ա: Եր ա կնալիս եռ ինիս ձիանը, գինիս հսնիլիս հենգ գյլխանե դևեն տոնը: Կռվի ա փռնվիլիս դևեն նհետ: Տղեն հաջողվիս ա, դևեն չորք գյուլոխը կտրիս ա: Դևը հինչքան ղանչաք ա ըրիս, որ մաչտեղեն գյուլոխն ալ կտըրի: Տղան կտրիս չի: Դևը ըստակմ ա:

Էտ քիշեր տղան մնալիս ա դևեն տանը: Տըսնալիս ա, որ էտ դևեն պահած աղչիգն ալ մի չտըսնված նախշուտ աղչիգ ա, տղան ինքը իրան որոշիս ա, որ՝ սաղ-սալամաթ օմեն հինչ գյուլոխ բերմ, էս աղչիգը կտանմ իմ մաջնակ ախպուրս հետե:

Էքսի օրը տղան նստիս ա ձին, գինիս օխտը գյլխանե դևեն տոնը ճրիլիս:

Դևեն նհետ ըսկսվիս ա կռըվը: Տղեն հաջողվիս ա դևեն վեց գյուլոխը կտրիլ: Դևը հինչքան ղանչաք ա ըրիս, որ օխտըմինջին գյուլոխն ալ կտրի, տղան կտրիս չի: Դրը ըստկիս ա:

Տղան տսնալիս ա էտ դևեն տանը մի աղչիգ կա՝ էնքան նախշուտ ա, որ կարող ա իրիննակեն ասի՝ «Դու դուս մա գյուլ: Իս քու տեղը դուսմ եկած»:

Տղան ալլա որոշիս ա, որ. «Աստուծ տա իրան հաջողութուն, էտ աղչգանն ալ կտանըմ մըծ ախպուրս հետե հռնացու»:

Տղան նստիս ա պատառ դինջինալիս, եր կնալիս գինիս հազարան բուլբուլը բիրիլու: Մին ալ էն ա տսնալիս օխտը գյուլ երի յըն տալիս իրան, որ օտեն: Տղան սուրը քշիս ա, ինդի ա թխիս գյուլերին, որ մաչմը կենդե յըն դռնալիս:

Գյուլրը կուտուրիս ա պրծնիս, նախկա օղծըրնն զիրավ դռանլիս: Տղան վխիս չի, ալլա սուրը քշիս ա, որ նախկու թխիս ա, մաչավը կիսվիս ա շախկ ա դըռնալիս:

Գինիս ա գինիս, տսնալիս ա ղուրթավ մի շոն կա կապած, ըռշկին խոտ ա դիրած: Մի գյոռնը կա կապած, ըռշկին մըս ա դիրած: Խոտը եր ա ունիս, դիրիս գյոռանը ըռշկեն: Մըսը եր ա ունիս, դիրիս շանը ըռշկեն, գի-

նիս ութախեն դուրքը բինալիս ա, ըշկերեն տըսածեն հվտալիս չի: Միետ մին մնալիս ա քար կտրած վըտը:

Հազարան բուլբուլը նալ, որ տղեն տըսնալիս ա, ըսկսիս ա երքիլը: Բուլբուլեն երքից տղեն քոնը տնիս ա: Բուլբուլը, որ երքը թուղիս ա, տղան ալ եր ա կնալիս: Նորից պատառ ալ թիմիշա յա ըրիս բուլբուլեն, եր կնալիս, ղափազավ բուլբուլը եր ունիս գինիս ըղչիգանը կոշտը: Օխտը գյլխանե դևեն իլած հարստութունը հվքիս ա, բիռնիս մի էրկու ծիան, ըղծիգանը նետ եր ունիս, գյոլիս հենգ գյլխանե դևեն տոնը:

Հենգ գյլխանե դևեն իլածն ալ հվքիս ա, ըղչիգանը նետ եր ունիս, բիրիլիս իրք գյլխանե դևեն տոնը: Իրք գյլխանե դևեն իլած, չիլածն ալ հվքիս ա, ըղչգյանը նետ մի քյարվան կպիլիս, հվքիս բիրիս ճամփաբաժանեն երե իլած հիլիվերեն տոնը:

Տեղտ ալ օնգատն ա ինգիս, էրկու օր անց տղեն էրկու ախպերնեն գյոլիսն դեփ-դերտակ, էրկու խուրջին վըսկեն ծախսած: Կուճի ախպերը շատ ա ուլխնալիս, որ ախպերնեն վախտեն գյոլիսն: Նաղլ ա ըրիս, թա հինչքան նեղութունե, չարչարանք ա քաշած, դեչանը որ կրեցած ա հազարան բուլբուլը ճարի:

Էտ քիշերը մնալիսն հիլիվերեն տանը: Մըծ ախպուր նա միջնակ ախպուրը քոնը քիշերը տնիս չի: Խիյալն ըրիս, որ իրաք մարթա մի խուրջուն վըսկե յըն ծախսած, դերտակ ետ դըռած, իրաց պադև չի բերի, որ թաքավերը գիդա հազարան բուլբուլը շատ հարուստեթուն, իրք հրնացուն ճարած ա կուճի տղան:

Քիշերը խյալ-խյալն ըրիս, թաքուն մի բեն որոշիս, քոն ինիս:

Քշանաց շուդավ կուճի ախպերը եր ա կնալիս բեռնրը կպուտիս, որ հղե ինգն:

Մըծ ախպերը թուղիս չի: Ըսիս ա.- Ասօր ալ մնանք, սորին դինջանանք, նոր էքուց քշանոց հղե կինգնք կգիննք:

Օրը պատառ որ բինվալիս ա, մըծ ախպերը կուճնեն ըսիս ա.- Եկեք իրք ախպրավ քու հռնցուվեն նետ գիննք դովրըբարը, պատառ շոռ գյոնք, տըսննք տեղարս հինչ կա, հինչ չկա, սրտռնես բենվի:

Կուճի ախպերը համաձայնվմ ա, գինիս ա: Շոռ գյոլավ գինիսն ծմակեն մաչեն մի ախպիրն ճրիս: Մըծ նա միջնակ ախպերը բիրիսն կուճի ախպուրն նա հռհնցուվեն ձերքը-վըննոնեն կուպուտիլիս, ըշկռնեն դուս ունիլիս: Ախպուրը աշկրը դիրիսն հռհնցուվեն ջուբոմը: Հռնցվեն աշկրը դիրիս տղեն ջուբոմը, թուղիս, գինիս:

Էրկու ախպրավ գյոլիսն թայդի բեռնըրը կպուտիս, հղե ինգիս գինիլիս:

Իրաց քաղաքեն որ մուտանալիսն, մի մարթ ա դասիդն ղարկիս թաքավերեն, որ հազարան բուլբուլը ճարածն, բիրիսն: Թաքավերը, իրան վագիր-նագիրնեն, քաղաքեն սաղ ժողովուրդը երքավ, պարավ, զուռնա-դհոլավ գյուլիսն տղեցը առաջը:

Տղեքը թաքավերեն նաղլն ըրիս, թա հունչուր տանջանքավ, չարչարանքավն կրեցած հազարան բուլբուլը ճարիլ: Իրաց կուճի ախպուրը նանե յալ ըսիննն, որ գինիս տեղը իրաց նանե ջոկվալ ա, մի գեդան գյալմազ հողք գենցալ, թա՝ ըշտեղ ա գենցալ, հինչ ա դըռալ, ոչ ջիհալն, ոչ ալ խաբեր օննն:

Հազարան բուլբուլը օրախ-օրախ տընիսն դիրիս բաղմը, որ երքի՝ բաղը կնեչի:

Հազարան բուլբուլը ոչ յրքիս ա, ոչ կեր ա ուտիս, ոչ ալ ջուր խմիս: Տխուր, սուս-փուս նստիս ա ղփազմը:

Մինը ըսիս ա՝ հալբաթ ալուզ ա, որ յիրքիս չի: Մինը ըսիս ա՝ հալբաթ երկար հղե յն բերած ինջինմիշ ա: Օրրը իրար ետևից անցն կնալիս: Հազարան բուլբուլը ոչ ուտիս ա, ոչ ալ յրքիլիս:

Հիլվր դարվիշն ալ լսիս ա, որ հազարան բուլբուլը ճարածն, բերած, ինքն ալ ա գյուլիս, որ տըսնի: Թաքավերը դարվիշեն խաբար ա տալիս, որ գիդալիս չընք հազարան բուլբուլը խռաված ա, թա ալուզ ա, ոչ ուտիս ա, ոչ խմիս, աչ ալ յրքիս ա:

Դարվիշը պատառ խյալ-խյալ ա ըրիս, թաքավերեն ըսիս, որ կա-չկա, բուլբուլը իրան իսկական ճարողն չի բերած: Մեկը մինեն նանե թաքունն բերած, յա գյուղացածն: Պետք ա մանիհ ճարիլ:

Թողննք հազարան բուլբուլը ղափազմը անխոս մնա, մընք խաբար տանք թաքավերեն կուճի տղեն նա հռնցուվեն նանե, տըսննք իրան ախպրտանց խայիհ, անմարթկայիհ արարքից ետը ծմակմը հինչն դըռալ:

Էրկու ախպերնեն որ իրաց ախպուրը նա իրան հառնացվեն աշկրը հնիսն, թուղիս ծմակմը գինիլիս, մի վախտ անց էրկու ղոնեգ գյուլիսն, թա ըխպիրին ջուր խմընն: Տսնալիսն ըխպրին կողքեն ծրքը-վընննը կապած, աշկռնեն հանած էրկու ջահիլ-ջիվան վերինգած, շատ մղքրնեն ա գյուլիս: Շոռն գյուլիս ըշկռնեն ճրիս, դիրիս տեղը, տսնալիսն, որ հնգիս չի: Գիդալիսն, որ փոխած կինն, փուխիլիսն, ըխպիրին ջիրովը լվնալիս, իրաց թվերեն թըփռավը սղլիլիս, տղեն նա ըղչիգյանը աշկռնեն սիրուննալիս ա, տըսողութունը գյուլիս տեղը: Ղոնեգնեն կտոցավ կտկտիսն, ըղչիգանը կուռներեն կապը ետ ըրիս: Աղչիգն ալ ուլխնալիս ա, եր կնալիս, տղեն վընննը-ծեռքը ետ ըրիլիս:

էրկու հուգի շատ նեղութունավ, չարչարանքավ գյուլիսն հսնիլիս թաքավերեն պալատը: Տղեն առաչին խոսքը էն ա ինիս, որ՝ ըշտեղ եք պիհիս հազարան բուլբուլը:

Տընիսն նշանց տալիս: Բուլբուլը որ տղեն տսնալիս ա, եր ա կնալիս օրախ-օրախ ղփազեն մաչեն շոռ գյուլիս, ծվծվալիս:

Տղան բուլբուլը տնիս ա դիրիս բաղմը, բուլբուլը ըսկսիս ա երքիլը: Երքեն սասեն բաղեն ծառրը ըսկսիսն կոկոն տալ, բենվիլ, գյուրնքան նման: Ծաղեգնեն, վարթրը բենվմն: Ախպիրնեն քչքչալիսն, բուլբուլեն երքից բաղը թողած, հռացած օմեն ղուշրը գյուլիսն: Թաքավերը, պալատին ժողովուրթը բենից բեխաբար յիշիսն, տսնալիս, մնալիս քար կտրած: Բուլբուլեն երքից հվաքմն գյուլիս քաղաքեն ժողովուրթը:

Թաքավերեն մըծ նա մաչնակ տղան, իրաց ախպուրը տսնալավ՝ գիդալիս չըն հինչ արն: Ճարնեն կտրած, գյլխնեն քակիլավ թուղիսն փխչիլիս, թա ըշտեղավըն փխչիս, ըշտեղն գինիս, հինչն դըռնալիս՝ դեչանը ասօր Աստոծ ալ խաբար չի:

Բաղը, ծառ-ծաղեգը, որ գյուլիսն հսնիս իրանց առաչվա նխշուտթունեն, նոր տղան իրան հռնցվեն նհետ գինիսն թաքավերեն ըռշկին չուքիլիս, ձեռքը պչիլիս, գյլխնոն եկած փորձանքը նաղլը ըրիս:

Թաքավերը տղեն նա հարսնացվեն ճակատը պչիս ա, երգիրավը մին օրախութուն տարածիս, օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիս: կուճի տղեն դիրիս իրան տեղը թաքավեր, հառինն ալ՝ թագուհի:

Օմեն հինչ որ վիրջանմ ա, օմեն բեն որ խաղաղվմ ա պրծնիլիս, տան հուրտավը իրք հատ անմահական խնձոր ա վեր ինգիլիս: Մինը տալիսն նաղլը կպողուն, մինն ալ՝ նաղլը ըսողուն, մինն ալ դնակով կես-կեսն ըրիս բուժունիլու ա անքոն դըռած, բիրինննեն չուրացած նաղլը լսողներեն[4]:

2 (2). ՎԸՍԿԵՔՅԱՔՈՒԼ ՏՂԱՆ

Նաղլն կապած, որ շատ քյոհնա դովրին մի թաքավեր լալ: էտ թաքավերեն իրեք տղա լալ: Իրեքան ալ՝ հասած-փիսած, մըծմծացած, փսկիլու վխտրնեն:

---

[4] Նման հետաքրքիր ու երկար հեքիաթների ավարտից հետո, տան տիկինը բերում չոր մրգեր, ընկույզ, նուռ, թուզ, չամիչ, արմավ և այլ մրգեր էր բաժանում՝ աշխուժություն և ուրախություն պատճառում բոլորին (ծան. բան.):

Թաքավերեն տղեցը հինչ թաքավերու աղչիգն նշանց տվալ, հինչ նազիր-վազիրու ղղչըգյեքն նշանց տվալ, ոչ միներն ալ բագյան չըն կացալ: Օմեն միներն երե մի փոթ դիրալն, քաշվալ ղրաղ:

Վերչը, մի օր նազիր-վազիրներն հվաքվալն թաքավերեն կոշտը մասլահաթ արալ, ասալ.- Թաքավերը ապրած կանա, տղերքտ որ աղչիգ չըն հավան կնալիս, եք մըր քյոհնա ադաթավ աղչիգ օզնք, նշան դիրնք:

Տղա նշան դիրիլա քյոհնա ադաթը էն լալ, որ իրաց առանձին ղոնեգ լալ: Ղոնեգը թռցրիսն լալ, հուր կտրե վեր լալ գյուլիս, ընդուր աղչիգն ալ ուզիսն լալ՝ էտ լալ բախտը, քյասիբ-հարուստու յիշիս չըն լալ:

Բիրիսն իրք ղոնեգ բեց թուղիս: Ղունեգնեն իրեքան ալ գյովդա փարվազ-փարվազ'ն ըրիս, գինիս քաղաքեն մի ճոնդմ, մի կտրե վեր գյուլիս: էտ ըրակոնը թաքավերը մարթինք ա ղուրկիս, որ գենցեք տըսեք էտ տնատարը հո՞ւ վա, հի՞նչ աղչիգ օնի:

Ուզունգյաններն գենցալն, եկալ, խաբեր բերալ, ասալ.- Թաքավերը ապրած կենա, գենցալնք տանը հյուրդավը թաքուն եշալ, տըսալնք տանը իրք եթիմ աղչիգ կա նստած, իրաց հետե սոհբաթն լալ ըրիս: Իրեքան ալ հասած-փիսած, նախշունտ ղղչգերքն լալ: Մըծ քուրն ասալ ա. «Ասօր լսածմ, որ թաքավերը ղղչգան ա շոռ գյուլիս՝ տղեն փսիկիլու հետե: Ինձ որ օզն, թաքավերեն հետե, ինդի մի խալի կգյործմ, որ հինչքան վազիր-նազիր օնի, երե նստըն, ալլա ազատ տըղ կմնա»:

Մաչնակ աղչիգն ասալ ա. «Ինձ որ թաքավերը օզի տղեն հետե, ինդի մի սուփրա կգյործմ, բրուշիմ թիլիրից, որ թաքավերը հինչքան ղոնաղ-ղոնաղնե ինի, նստըն հաց ուտիլու, ալլա սուփրեն մի ճոնդը ազադ կմնա»:

Կուճի քուրն ալ ծծղեցալ ա, ասալ. «Թաքավերը որ խըլք արի ինձ օզի տղեն հետե, իս մի վըսկեքյաքյուլ թոռնը կբերմ, թաքավերեն հետե, որ աշխարքը լսի արմանա»:

Թաքավերն որ էսքանը լսիս ա, խիյալ ա ըրիս, ըսիլիս.- Քյասիբեթունը հաշիվ չի, որ օրախ, նախշուտ ղղչգերքն, համ ալ իրաց խոսքը փրծուլու հետե, գենցեք իրիքնուց ալ նշան դիրեցեք, հրսանեք արնք, բերնք:

Գինիսն էտ իրք քվորը նշան դիրիս թաքավերեն իրք տղեյը հետե:

Իրք տղեցը հրսանեքն ալ մի դոնայն ըրիս՝ օխտը օր, օխտը քիշեր:

Մըծ քուրն, միջնակ քուրը իրաց խոսքը կդրիսն: Մի տարմ խալին նա սուփրեն գյուրծիսն:

Դե ըշխարքես օրենքն ա, հռնքեն ետը, որ ինն ամես, ինն օր, ինն սհաթը թամամ ա դըռնալիս, կուճի հառհնը ազադվիս ա, մի վըսկեքյաքյուլ

տղա յա բիրիս: Սաղ երգիր, աշխարհ սաս ա ինգիս, որ՝ ասի չե՛ք, փլան երգիրեն թաքավերը վըսկեքյաքյուլ թոռն օնի:

Երգիրեն թաջրնեն, ընմավր մարթիք, հրևան մարթիք հվքվիս, գյուլիսն թաքավերեն ըշկլուսանք տան, վըսկեքյաքյուլ թոռնը ինիլու հետե:

Ղորմի աթալարեն, խամ խոսքը չըն թողած: Ասածն. ըշխարքմս սուտաևան մըռած չի: Մըռնի ալ չի:

Դու մա ասի, թաքավերեն էրկու մըծ հառհնրը սոնգազն, խոխա չի ինիս: Լսիսն, որ իրաց քուրը վըսկեքյաքյուլ տղա յա բերած, աշխարքս արմացրած, իրաք իրաց խայինքունից խրեգ ա մնալիս, որ պայքն, կտորկուտր դըռնն: Պալատեն տատմարը մի պառավ ջադու կնեգ ա ինիս: Էրկու քուվերավ կնչիսն պռավեն մի քիսա վըսկե տալիս, ըսիլիս, որ՝ էտ վըսկեքյաքյուլ խոխան մաշտեղե վերացրու, անհետ, անսաս կուրցրու:

Ջադու պռավեն ալ իդի մի բեն լալ հարկավեր: Խոխան տալիս ա իրան մի հավատարիմ մարթու, մի քանե յալ վըսկե տալիս, խոխան կուրցնիլու հետե: Պառավ դու պառավ, այտս բիրիս ա մի շան թուլա դիրիս կուճի հարսանը ծոցմը, պալատը սաս գիծիս, որ հի՞նչ վըսկըքյաքուլ տղա, հինչ բեն, հառհնը ազադված ա, մի շան թուլա յա բերած:

Թաքավերը հոքմ ա ըրիս, որ. «Իմ անմը խայտառակելու հետե, պալատեն դրբզին ըռշկին մի կուճի շուշաբանդ-օթախ սըրքեցեք, հարսանը, իրան շան թուլին նհետ դիրեցեք մաչեն, մըր անմը խայտառակ ըրիլու հետե, գեցուղ-գինեցուղ քքն իրեսեն»:

Թաքավերեն հոքմը էրկու օրմ կդարմն:

Դե թողնընք թաքավերեն էրկու հռհներեն իրաց նպատակեն հասած, ալխային դըռած: Մընք տըսննք վըսկեքյաքյուլ խոխան հի՞նչ ա դըռնալիս:

Ջադու պռավեն նանե խոխան տանող մարթը անխիղճ, անաստուծ չի ինիս: Խիյալ ա ըրիս, ինքը իրան ըսիս. «Էս անմեղ խոխան որ ըսպանմ, Աստուծեն ալ նախոշը կգյո: Պահմ, մծցրըմ, ետերը գիդան ինծ ալ կսպանն, խուխեն ալ: Սորունը էն ա, մի ղութի սարքմ, խոխան դիրմ մաչեն, նի գիծմ գետը, իրան բախտեն, հինչ կդըռնի, թող դըռնի»:

Մի հիլիվր մարթ ըշխարքմս օմեն հինչ կուրցրած, մանցած ա ինիս մանակ: Մըծ քաղաքեն, վարար գետեն կողքեն ջեղաց ա ինիս սարքած, արխը դուս բերած, գետեն ջրի նանե տարած, ջեղացը բինիցրած:

Ջղացպանը նայե ինիս ջղացմը նստած, իրան հետե չուբող քշիլիս: Միհն ալ էն ա տըսնալիս ջեղացը վըզտ ա կացալ, ջուրը կտրվալ ա: Գինիս ա արխեն յիշիս, տսնալիս մի փադե ղութի ա եկած, դեմ ինգյած ջղացեն

նվիճ: Ղուբիճ տնիս ա բինալիս, մնալիս զարմացած՝ ղութվեն մաչեն վըսկեքյայքուլ տղան տսնալավ:

Ջղացեն կողքեն ջղցպանեն սորիճ տներ ա ինիս, բաղ-բաղար ա ինիս: Որոշիս ա, որ էտ խոխան Աստուծ ա ղորկած իրան հետե, որ մանակ, անժառանգ մնա վեչ: Գինիս ա մի ծնած կավ ունիս, բիրիս բաղմը կպիս, կավեն կաթնավը խոխան պիհիլիս:

Հունչուր կասն՝ խալխեն խոխենքը տարավն մըծնալիս, համա վըսկեքյաքյուլ տղան օրը-օրեն երե յա բոյ քշիս, մծնալիս:

Քյոհնա այամեն թվանգեն նետն լալ ըսիս: Թաքավերնան զորքը նետավ լալ կռվիս: Վըրսկաները նետավն լալ վըրս ըրիս: Ջղացպանն ալ վըրսու սեր լալ: Տղան որ պատառ մծնալիս ա, նհետը տնիս ա վըրս, ծմկնեն շոռ ըծիս, վըրս անիլը սվըրցրիլիս: Տսնալիս ա, որ ըշկաբեց տղա յա, ղոչաղ ա, ալ ինքը գինիս չի: Նետը տալիս ա տղեն, մանակ ղուրկիս վըրս:

Տղան մի օր գինիս ա վըրս, տսնալիս ա՝ մի եղնը խրտնած դուս ա գյուլիս առաչը: Նետը երի ա ըրիս եղանը ճկտմաչեն վեր գիծիս: Միճ ալ էն ա տսնալիս մի դաստա ծիավրնե եղանը հետեն եկալն: Չիավուրնան միճը ըսիս ա.- Տղա, տեղս թաքավերեն տղեն վըրսատեղն ա: Դու էս եղնը խե՞ յըս վեր գիծալ:

Տղան ըսիս ա.- Ինծ եղնը պետքի չի: Իս հավասու հետե յըմ վըրս ըրիս: Եղն ա, դուք չրչրվիս եք լալ, որ վեր գիծեք, իսմ վեր գիծալ: Միճու թուքեն նանե մի խրիվիլու կտրեք, տվեք ինծ՝ հիլիվր պապ օնմ, տանմ պապես հետե: Մանցածը ձեզ հալալ ինի:

Չիավորնեն եղանը փորը ճղիսն, թուքեն նանե պատառ կտրիս, տալիս տղուն, եղնը եր ունիս, գինիս:

Մռանանք վեչ ասնք, որ թաքավերեն կուճի տղեն աշքը մնալիս ա վըրսական տղուն երե: Մթկոմը ըսիս ա. «Ախր ինծ պետք ա իստի մի վըսկեքյաքյուլ տղա լալ ինի»:

Թաքավերեն տղան վըրսըտեղե գինիս, պընդ ըլուզնալիս ա: Պալատմը սաս ա ինգիս, որ վըրսատեղ վըսկեքյաքյուլ տղա յա տըսած, էտ ա պատճառ դըռած:

Խոսքը հսնիս ա թաքավերեն հռհներեն: Կնչիսն ջադու պռավեն, վըսկեքյաքյուլ տղեն մասեն խաբար տալիս: Դան ըղալու մինավ պառավը եր ա կնալիս էրկու պարկ ցորեն դիրիս մի էշու երե, գինիս ջեղաց: Տըսնալիս ա ղուրթավ՝ վըսկեքյաքյուլ տղան ա, որ կա:

Պառավ ջադուն վըսկեքյայքուլ տղեն ըսիս ա, թա.- Դու ղոչաղ տղա յըս, սաղ օրը սար ու ծոր ինգյած, վըննտ քարեն տալավ, իրստ քոլեն տա-

լավ, շորրտ ծրղուտիլավ բեն չի դուս գյո: Թա կօզս հանգիստ, թաքավերու նման ապրիլ, հունչուր քու տարը, քի մի պարի գաղտնիք կասմ, որ լսըս:

- Կլսըմ,- ըսիս ա տղան:

Պառավը ըսիս ա.- Իստի գյլխյեր որ գինս, օխտը սար անցկանաս, կտըսնըս տեղը մի օխտը գյլխանե դև ա ըպրիս: Դևեն բաղմը մի ծառ կա, որ ըշխարքմս հինչ ղուշ ասս, գյուլիսն երե թառ ինիս: Հինչ վըրսու հեյվանե կան, գյուլիսն տակեն նստոտիլիս: Մի ծրքը արկան օձի շատ կուճի: Կինա դիրիլ ջբոմ: Էտ արկանը, որ բիլբիլցրս, սրտավտ հինչ անցկանա, հազր կդըռնի: Դևեն ալ մի աղչիգ օձի՝ քի նման նախշուտ, ջահիլ, քու բոյետ, հանց ա կսըս մի խնձոր կեսած ինս: Էտ աղչիգն ալ քի հռհնացու կսազի: Ղոչաղ տղա յըս, գինի դևեն ըսպանի, ասածնես հվաքի բեր, քի հետե հանգիստ ապրի:

Պառավը էսքանը լցրիս ա վըսկեքյաքյուլ տղեն գյուլոխը, պարկրը բիռնիս էշեն, գինիս թաքավերեն հռհներեն խաբար տնիս, որ՝ ասի չէ՞ք ձեր ասածը ղորթ լալ, տղեն խափածմ, ինդի մի տեղմ ղորկած, որ ետ դըռնալ գյոլ ինի չի:

Տղան պռվեն խոսքը գյորա, էքսի քշանաց եր ա կնալիս պուղվաթե ղաման կողքեն կպիս, նետը նի գիծիս օսսը, եռ ինիս խամու կապած ծիանը, հղե ինգիս՝ ըշտե՞ղս, օխտը գյլխանե դև, եկալմ:

Տղան գինիս ա վեցը սարն ալ անց ա կնալիս, օխտըմինջին սարն ալ բիցիրնալիս ա, խրեգ ա մնալիս դուս գյո սարեն քյալլան, տըսնալիս ա՝ իրան մի քոն վեր ա կոխալ: Խրեգ ա մնալիս, որ ծիանը նաներ վեր ինգի: Չին ալ քռնոքու մաչե կորած ա:

Տըսնալիս ա հղցին կողքեն մի մըծ ծառ կա, տակեն ալ մի զուլալ ախպիր: Չիանը նաներ վեր ա գյուլիս, ջուր խմիս, իրսն լվընալիս, խուտուրավ ա ինգիս՝ պատառ դինջանա, քունավ ա ընցրիս: Մին ալ զուրթնալիս ա, տսնալիս նայե սարեն տակեն: Մնալիս ա զարմացած:

Տղան խիյալ-խիյալ ա ըրիս, մնալիս մաթալ, թա՝ իս հասածմ լալ սարեն գյուլոխը, հունչո՞ւր ա դըռած, որ նայեմ սարեն տակեն: Տսնալիս ա՝ բեն չի գյուլոխ ինգիս, ալլա նստիս ա ծին, բիցիրնալիս սարը: Համան բենը ալլա կրկնվիս ա:

Իրան քոնը տնիս ա, կրիս չի ծիանը երե նստի: Չիանը քռնոք վեր ա կուխիս, խրեգ ա մնալիս նափասը կտրի: Զոռավ հսնիս ա սարեն գյլխեն ախպիրը: Չիանը նաներ վեր ա գյուլիս, իրան լվնալիս, ջուր խմիս, նստիս ա

պատառ դինջանա, ալլա քոնը տնիս ա: Ջուրթնալիս ա՝ տըսնալիս ալլա նայե սարեն տակեն:

Տեղտ տղան հազրի ա գյոլիս, որ կա-չկա սարը կախարդված ա: Հարկավեր ա մի փանդ արիլ՝ սարն անց կանալ:

Նորից եռ ա ինիս ծիանը, քշիս դուս գյոլիս սարեն գյուլոխը: Տըսնալիս ա, որ քոնը տնիս ա, ծին քռնքալ ա: Վեր ա գյոլիս ծիանը նանե, կուճի մաննը դնակավ կտրիլիս, վիրավըրելիս: Մաննը ըսկսիս ա հըռ տալը, քոնը պատառ փխչիս ա: Ջիանը լուկտան փռնած, զոռռավ, գիժավ սարն անց ա կնալիս: Պատառ տեղ ետի ա դռնալիս, տսնալիս ա մի սորին ցորտ ախպիր կա, կողքեն մի կուճի տոն: Տանը ըռշկեն սպիտակ մրքավր մի հիլիվր մարթ ա նստած: Մտունալիս ա, հիլիվերեն պարի օր տալիս, պրվիլիս, կողքեն նստիլիս:

Հիլիվրը ըսկսիս ա տղեն նանե հարց, փորձ արիլը.- Հո՞ւվս, տեղարս հի՞նչ բեն օնս, հի՞նչ բենուվս եկած:

Տղան մին առ մին իրան նպատակը, իրան գյուլոխ էկածնեն նաղլ ա ըրիլիս:

Հլիվրը գյուլոխը ուրուրիս ա, ըսիլիս.- Դու մղափոնս, եք ինձ լսի, ետ դըռ գինի: էտ մթկավ հարուրավր քի նման ջահիլնեյն գենցած: Համա դե ոչ մինը ետ չի դըռած: Օմեն ալ դևեն հետե կերն դըռած:

Տղան ըսիս ա.- Պապա, թա գաղտնիք գիդաս, ինձ սվրցրի: Քու պարի խրատեն հետե շատ շունորհակալմ:

Հիլիվրը ըսիս ա.- Դե որ իտի ա դու տըս, որ ըխպիրին տակեն նհետ դեչանը դևեն դուրքը կախարդված ա, հղցին մաչը սաղլամ ասըղ, մախաթ, մեխ ա կնեչ լած, վընը դիրիլու տեղ կավչնի: Ջիտ տեղս կապի, ջուբերտ, ծոցրտ, պարկտ ըխպիրին ղումեն նանե լցրի, շաղ տալով գինի: Ղումից օմեն ասըղ, մախաթնեն կվիրանան: Քու բախտը տեղն ա բերած, որ էս օրրը դևը ծանդր ալուզ ա: Վըտանը տակը մի մըծ մի մախաթ ա նի մտած: Կրեց լալ չի դուս օնի: Վընը օռռած ա: Վխիս ա, որ կմըռնի: Դու մի էրկու գիզանոց ճպատ կտրի, մի մախաթ նի քաղի գյուլոխը: Ղումը շաղ տալավ գինի, դևը նա է իննական խոտուրու ինգյած, վըտանը ցավեն նանե գյուռգյուռալիս: Հըռե վըտ կկանաս, մխաթավը պիզ կտաս օռուցքը փոլ կածս, դու գյող կանաս: Վախս վեչ: Դևը սիվթա գյուռգյուռլական ա: Վըտանը թարախը որ գինի, դինջինլական ա: Այտս ղանչանք ա ըրլական, թա՝ ինձ էս ցավեն նանե ազադուղը հո՞ւ վա, ուրթոմնմ ուտիս իմ մոր կաթնավը, որ վնաս չըմ տա, թող գյո կոշտս: Դևը որ մորը կաթնավը ուրթունմը կօտի, կիվատաս: Կմուտանաս, վըտանը նանե մախաթը դուս կօնս: Թա-

մուզ կլվանաս: Բաղմը մոշ կա, մի քանե մուշուտիրվ կբերս, կդիրիս յարեն երե, կկապս:

Դևը քի ըսլական ա. «Ինձ որ մահից փրկալս, հի՞նչ լավեթուն արմ, որ քու սրտավը ինի, ինձանե գոհ գինս»: Դու կասս. «Դևեն էրկար գյանք ինի, որ ինձ ասիրգյամիշ վեչ արս, իրք խնթրանքու հետեյմ էկած հասած էս աշխարքը, պետք ա տաս՝ տանմ: Առաչինը՝ եկածմ քի փըսե դըռնմ, աղչիգյտ ուզիլու հետե յըմ էկած: Ըրկումինջինը՝ ըղչիգյանը հետե ջհեզ պետք ա տաս կախարդական ծըրքըրկնեն: Իրքմինջինը՝ հեյվոնաքեն, ղուշերեն կախարդական ծառը»: Դևը լսլական ա քի, ծծղլական ա, ասի. «էտ նպատակավ հարուրավր տղերքն էկած: Համա դե ոչ մինը ետ չի գենցած: Օմենն ալ ինձ հետե կերն դըռած: Համա դե որ ինձ ազադալս մահից, իս ալ ուրթումնմ կերած իմ մոր տված կաթնավը, դու ինձ հաղթալս: Առաչինը՝ մնա, իմ իլած-չիլածեն տար կաց, ապրի քի հետե: Ըրկումինջինը՝ որ օզս վեչ մնալ, իրեքան ալ քու մոր կաթնեն նման քի հալալ, եր կալ, տար»: Դու կասս. «Դևը ապրած կենա, աշկը հղեց հիլիվր պապ օնմ: Գինմ տըսնամ, մհետ աղչիգյտ եր կօնմ, կգյոմ»: Տղան շունուրհակալութուն ա ըսիս պարի հիլիվերեն, ձին թողիս կուշտեն, մի մախաթ նի քղիս մի ճպատու գյուլոխ, ղումը շաղ տալավ՝ ասըղ-մախաթնեն մաչավը հղե բինալավ գինիս, հսնիս դևեն կոշտը:

Հլիվրը հինչ խրատ տված լալ տղեն, օմենը մինի-մինի, տեղեն-տեղեն կադարիս ա, առանց սխալի:

Օմեն հինչ պարիհաջող վերչացնելուց ետը, տղան դևեն աղչիգը, կախարդական ծրքըրկնեն, կախարդական ծառը եր ա ունիս, գյուլիս հիլիվերեն կոշտը, ըղչգյանը դիրիս ձիանը երե, հիլիվերեն մնաս պարև ըրիլիս, գյուլիս հսնիս իրանց ջեղացը:

Տղան կախարդական ծառը որ դևեն բաղեն նանե տկռհան ա ըրիս, ծառը կուճացած լալ, դըռած մի կուճի շև: Իրաց բաղմը որ տնգիս ա, մի օրմը մծընալիս, դըռնալիս ա հարուր տրեկան ծառ: Ըշխարքմս հինչքան նախշուտ ղուշր կան, գյուլիսն ծառեն երե թառ ինիս: Ըշխարքմ հինչ տեսակը վըրսու հիյվնե կա, գյուլիսն ծառեն տակեն նստոտիլիս:

Չրքարկանն ալ բիլբիլցրիս, իրք հրկանե մի շհնութուն ա ուզիս, օմեն տեսակի խալիներավ, սարք-սորքավ, ինդի որ թաքավերեն պալատեն, ունեցվածքեն նանե ետ վեչ ինի:

Տղան հինչ որ օզած ա ինիս, օմեն հինչ ալ տեղը-տեղեն դըռնալիս ա:

Մի վախտ դևեն ըղչիգյանը նհետ ապրիլեն ետը, մի օր տղեն սըրտը ուզիս ա գինի տըսնի իրան վըրստեղրը: Նետը եր ա ունիս գինիս: Մին ալ

էն ա տսնալիս ալլա խրտնած մի եղն ա եկալ: Երի ա ըրիս, եղնը վեր գիծիս, տըսնալիս ա համան ծիավրնեն եկալն: Դե ծանոթն հնիս, տղեն տսնալիսն, պարևն տալիս, ծծղուտիլիս:

Տղեն ըսիս ա.- Պարիկամնե, եղնը ձեզ փեշքյաշ: Իս հավասա հետե յըմ դուս էկած վըրսու: Ջիգարը տվեցեք ինձ: Եղնը ձեզ փեշքեշ հնի, եր կալեք, տարեք:

Մի քանե օր անց ա կնալիս, ալլա թաքավերեն պալատմը խոսք ա գինիս, որ թաքավերեն կուճի տղան ալլա վըրսատեղ վըսկեքյաքյուլ տղա յա տըսած, եկած ա ուլուզացած:

Թաքավերեն հառհնրը ալլա կնչիսն ջադու պռավեն, տեղյակ պիհս: Պառավն ալլա էրկու պարկ ցորեն դիրիս ա մի էշու, ցորեն ըղալա մահնավ գինիս ջեղաց: Գինիս ա շընոթունեն, կախարդական ծառը տսնալիս, մնալիս ա զարմացած, թա հինչ ամալու տար ա, որ կրեցած ա օխտը գյլխանե դևեն նանե պրծնի, էսքան բեն ալ ըղչգյանը նհետ եր օնի բերի:

Գինիս ա թաքավերեն հռհներեն ըսիս, որ.- էտ վըկսեքյաքյուլ տղեն նանե պրծնիլու հետե, մինջա մի հղե կա: Հարկավեր ա ղոնաղ կնչիլա մհնավ բերնք, թույննք, ըսպաննք:

Մի էրկու օրեն ետը թաքավերեն էրկու վազիր ջադու պառավեն նհետ գյուլիսն ջղցպանեն, վըսկե քյաքուլ տղեն, դևեն ըղչիգյանը կնչիս ղոնաղ:

Դու մի ասի, դևեն աղչիգը շատ գիդ ա, ըշխարքեն տակն ալ գիդալիս, գյուլղոխն ալ: Չտըսնված բախտու եշուղ ա, որ նմանը ըշխրքմ կավչնի:

Թաքավերեն պալատմը մըծ սուփրա յըն բհնալիս, հազար ու մի տեսակի ուտելեղեն, գինի յըն վեր քղիս: Թաքավերը գինավ լիգը ըրծաքի թասը եր ա ունիս, որ մի կենաց ասի, խմըն, օտն, ուլխանան, դևեն աղչիգը ձեռքը բիցիրցիրիս ա, թաքավերեն նանե խոսք խնթրիս, ըսիլիս, որ ինքը բախտաեշուղ ա, թուլ տա մի քանե խոսք ասի, այտս թաքավերեն բախտեն եշի, նոր հաց օտն:

Թաքավերը ուլխացած իրավունք ա տալիս: Դևեն աղչիգը ըսիս ա.- Առաչինը՝ թաքավերեն երկար գյանք նա առողջութունմ կամենմ, մըզ իրան պալատը ղոնաղ կնչիլու հետե: Ըրկումինջինը՝ խնթրիսմ խոսքս կտրս վեչ, իրավունք տաս՝ գյոն մըզ նհետ սուփրա նստն քու իրք տղաները, իրք հառհնրտ, մին ալ պառավ տատմարը:

Թաքավերը ըսիս ա.- Խանմը թող ներուղ հնի, ինձ էրկու հառհնը օնմ:

Դևեն աղչիգը ըսիս ա.- Դրբզին եթկեն շուշաբանդ ութախմը, շանը կողքեն կապած կնեգը քու հալալ հառհն ա, շատմ խնթրիս բերիլ տաս:

Տեղս թաքավերը մաննը կծիս ա, որ տեղս մի գատղնիք կա, բերիլ ա տալ:

Օմեն որ նստիսն չուրք բուլոր, դևեն աղչիգը ծոցեն նաևե մի վըսկե ջամ ա դուս ունիս՝ իրիննակու նման պլպլացող, գիրավ, նկարներավ նախշած: Վըսկե ջամը գինի ա լցրիս, թաքավերեն ըսիս.- Ձեռքտ իրեսավը քաշի:

Թաքավերը վըսկե ջամեն իրեսավը ձեռքը քշիս ա:

Դևեն աղչիգը յիշիս ա ջամեն մաչեն գինուն, ըսիլիս.- Թաքավերը ապրած կենա, իրք տղա օնս: Փսակածս իրք քվոր նհետ: Էրկու մըծ քուրրը սոնգսզն: Կուճի քուրը հուննչուր որ խոսք լալ տված, իրան վախտին վըսկեքյաքուլ տղան բիրիս ա:

Էս խոսքեն երե ջադու պառավն ա էրկու հառհնը ջնռնեն քռնոք կուխիս ա, ուզիսն եր կանաև, գինն:

Թաքավերը կզնված ըսիս ա.- Սուս արած տղրներ նստեցեք, դեչանը վերչ: Հու որ եր կանա, գյլոխը կտրիլ կտամ:

Դևեն աղչիգը թասեն յիշիլավ խոսքը շարունակիս ա.- Էրկու քուրը նախանձմն կուճի քվորը: Մի պառավ կնգա ձեռուք վըսկեքյաքյուլ տղան կուրցրիսն, տեղը մի շան թուլա դիրիլիս: Թաքավերը հվատմ ա ջադու պառավեն, կուճի հարսանը, շան թուլեն նհետ տանըմ դըրբզեն երկեն կպիս, որ գեցուղը քքի հարսանը իրեսեն՝ թաքավերեն խայտառակ ըրիլու հետե: Պարի մարթը վըսկեքյաքյուլ խոխեն կուրցրիս չի: Դիրիս ա մի ղութվու մաչ նի գիձիս գետը: Գետը տնիս ա դուս բիրիս մի ջղացու նվըկտիր: Մըր ըռշկին նստած ջղացպանը ճրիս ա, գինիս մի ծնած կավ ունիս, բիրիս կվեն կաթնավը վըսկեքյաքյուլ տղեն պիհիս, մծցրիս, վըրսկնեթուն սվրցրիլիս: Մի օր վրսատեղ վըսկե քյաքյուլ տղեն հարը տսնալիս ա, խումար ա դըռնալիս, որ՝ էս տղան պետք ա իմն լալ ինի: Գինիս ա՝ ուլուզնալիս: Թաքավերեն հառհնրը գիդալիսն: Ջադու պառավեն խաբերն տալիս: Պառավը գյոլիս ա վըսկեքյաքյուլ տղեն ղուրկիս «գեդան-գյալմազ»՝ օխտը գյլխանե դևեն կոշտը՝ աղչիգը ուզիլու, կախարդական ծրքըրկնեննա ղուշերեն նա հեյվաննոն ծառն ջհեզու տեղ բիրիլու: Վըսկեքյաքյուլ տղեն հաջողվում ա օմեն հինչ հաջող ձեռք բերիլ: Տղան նորից ա գինիս վըրս: Ալլա ջհիս ա իրան հորը: Հարը նորից ա ուլուզնալիս: Ըխպրկնաևեքը գիդալիսն, ծըռքը-վըննը ինգիս, խաբեր տալիս պռավեն: Պառավը վըսկեքյաքյուլ տղեն վերացնելու հետե էրկու հղե յա նշանց տալիս: Առաչինը՝ պալատեն եթկեն թաքուն դրքեն ըռշկին խոր հոր քանդն, ղոնաղ կանչն, բերն նի գիձն հորը՝ տղեն վերացնն: Էտ բենը որ հաջողվի վեչ, կե-

րակորեն մաչը դեղ գիծն, թունավորն, ըսպանն: Միեգ թաքավերը ապրած կենա, վըսկեքյաքյուլ տղան՝ իմ կողքեն նստած, քու հալալ թոռն ա: Դիմացը նստածը՝ հալալ մարը: Հիլիվր ջղացպանը՝ պահուղ-մըծըցնողն ա: Փործու հետե յալ խնթրիսմ մի շոն բերեք, տղեն ըռշկին ճաշը տվեցեք օտի, տըսնանք՝ հինչքան կապրի:

Շոնը բիրիսն, ճաշը տալիս: Ուտիս ա, տեղնուտեղը ըստկիս:

- Դե նեղություն քշեցեք, գենցե՛ք, տըսե՛ք՝ կուճի դրքեն ըռշկին հոր կա քանդած, իրիսը խալի գիծած, ծածկած:

Գինիսն տըսնալիս՝ էն ալ ղորթ ա:

Այտս թաքավերեն ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա, միեգ մըծ հռհներետ, ջադու պառավեն դադը դու արի:

Դևեն ըղչգյանը արած նաղլեն երե օմեն մնալիսն քար կտրած:

Թաքավերեն կուճի տղան, կնեգը, վըսկեքյաքյուլ տղան երն կնալիս, մին-մինու խստիս, լեց ինիս:

Թաքավերը հոքմ ա ըրիս, որ ջադու պռավեն, իրան էրկու հռհներեն տանն պլատեն ըռշկին ծառեն երե կապն՝ նման անպադիվ, խայտառակ բեն սրքիլու հետե, խաբեր տան երգիրեն ժողովրթեն՝ օխտը օր շարունակ գյոն թքն իրիսնուն: Օխտը օրեն ետը՝ օմեն մինը կապն մի պըլ ծիան հագվու երե, բեց թողն չոլուրը, քաշ տան, տանն տանջն, ըսպանն:

Թաքավերեն հրամանը կդրիսն:

Օխտը օրեն ետը, բիրիսն օխտը օր, օխտը քիշեր երգիրավը մին հրսանեքն ըրիս, ուտիս, խմիս, պար գյոլիս, ուլխանալիս, վըսկեքյաքուլ տղեն, դևեն ըղչիգյանը նհետ փսկիս:

Թաքավերը հիլիվերած ա ինիս, թաքավերեթունն ալ տալիս ա վըսկեքյաքյուլ թոռանը:

Նաղլեն վերչմը հուրդավը չտըսնված իրք խնձոր ա վեր ինգիս: Մինը տալիսն նաղլը կպողուն: Մինը՝ նաղլը ըսողուն: Մինն ալ դիլիմ-դիլիմ ըրիս, բուժինիս բիրինեն բեց արած նաղլը լսողներեն, որ օտն, բիրինեն քղցրանա, քունռնեն փախչի, նոր նաղլը ալլա քաղցր լսըն:

3 (3). ՋՄՐՈՒԽՏ ՂՈՒՇԸ

Նաղլն ըրիս, քյոհնա ըշխարքմը իլալ ա, իլա չի, մի թաքավեր լալ:

Էտ թաքավերեն մի ծառ-ծղեգյու բաղար լալ, որ ճոնդ լալ, պուճախ չի լալ: Բաղեն մաչեն անմահական խնձորու մի ծառ լալ: Տարեկան էրկու խնձոր լալ եր ունիս: էն ալ թաքավերը վըչ միետ խնձորեն համը տըսած

չի լալ: Օմեն տարե լա մի էրկու օր լալ մնալիս, որ խնձորրը հասնն, դըռնան քաղելու, անհայտ մինը քիշերը գյոլիս լալ, խընձորնեն ծառեն նանե քաղմ, տանմ:

Էտ թաքավերեն իրք հասած, փիսած տղերք լալ: Թաքավերը մի օր կնչիս ա տղերցը, շատ նղացած ըսիլիս.- Առաչինը՝ ձեզ չի պատև բիրիս: Ըրկումինջինն ալ՝ ինձ, վըր մի խնձորու գյող կրիս չեք փռնի:

Թաքավերը տղեցը ամոթանք տալեն ետը, մըծ տղան ըսիս ա.- Առաչինը իսմ գիննական խնձորի ծառեն բուսխուն պահմ:

Գինիս ա: Մի օր, էրկու օր, հենգ օր ու քիշեր բուսխուն ա պիիս: Խնձորեն գյողը ըրվալիս չի: Հակառակը հակառակ ա ինիս: Մի քիշեր ալ՝ հունչուր ա դըռնալիս, լուսըբեցեն մոտե, քոնը տնիս ա, լինջիս ա: Եր ա կնալիս տըսնալիս՝ խնձորնեն քաղածն, տարած: Քուռըփեշման թուղիս ա, գյոլիս տոն:

Էքսի տարեն մաչնակ ախպերն ա գինիս: Էտ խըղճն ալ մի քանե օր, քիշեր սայաղ ա կնալիս, քոն չի ինիս: Ալլա մի քիշեր, լուսը բեցեն լինջիս ա: Եր ա կնալիս, տըսնալիս՝ խնձորնեն տարածն:

Իրքմինջի տարեն որոշիսն իրք ախպեր մի տեղ գինն խնձորը պահն, որ էրկուսը քոն ինած տեղը, մինը զերթոն կինի:

Գյոլիս ա խնձորեն հսնիլեն վախտը, իրք ախպրավ գինիսն: Էրկու մըծ ախպերնեն հըրթավ քոնն ինիս, եր կնալիս: Կուճի ախպերը քոն չի ինիս: Մի քիշեր էրկու ախպրավ քոնն ինիս իլած: Լուսըբեցեն կուճի ախպուրը քոնն ալ ա տընիս: Կուճի ախպերը փանդավ ա ինիս: Նհետը աղ ա ինիս տարած: Բիրիս ա կուճի մանըը կտրիս, աղ զիրավ ըրիս: Մանըը որ մռմռալիս ա, քոնը փխչիս ա: Լուսը բինվալեն նհետ մին ալ էն ա տըսնալիս, իրք գյլխանե մի դև եկալ ա, որ խնձորնեն տանի: Հարայ ա տալիս ախպըրտանցը: Դևը փխչիս ա: Իրք ախպերավ ալ դևեն հետեն վազ տալավ գինիսն:

Դևը գենցալ ա նի մտալ մի անտակ վըր: Իրք ախպրավ գենցալն վըրեն երե վըտը կացալ:

Մըծ ախպերը ասալ ա.- Առաչ ինձ կպեցե՛ք, կախ տվեք:

Կապալն կախ արալ: Պատառ խորացալ ա, վայ-վայ ա արալ, թա.- Իրվիսմ, դուս բերեք:

Քաշալն, դուս բերալ:

Մաչնակ ախպուրնն կախ տվալ: Ալլա պատառ խորացալ ա, հարայ ա տվալ, որ վըրեն տակեն կրակն վառած, իրվիս ա, շուդ դուս քաշն: Մաչնակ ախպուրնն ալն վըրեն նանե դուս բերալ:

Կուճի ախպերը ասալ ա.- Ինձ կախ տվեցեք: Թա վայ-վայ ալ արմ, եշեք վեչ, կախ կտաք, դեչանը վերչ:

Բիրիսն կուճի ախպուրը կախ տալիս: Գինիս ա հսնիս վըրեն տակեն: Տըսնալիս ա կրակն վառած: Կոխկավը ջիրու արխ ա գինիս: Ջիրավ կրակը ընցրիս ա: Գինիս, գինիս տըսնալիս կիսամբեն աշխարհ ա: Մի տեղ բեցուր պտերավ մի մըծ շինոթուն կա, ըրկաթի դարբազան երե: Դրբզան թկիս ա, թկիս, տըսնալիս ա իրք աղչիգ, ջահիլ, ջիվան, մինը միներն նաներ նախշուտ, վազտալավ եկալն դըրբզան բեցալ, տղեն տըսալ, զարմացած հրցրալն.- Դու հո՞ւ վս, տեղարս հի՞նչ բեն օնս: Ըշտեղավ եկածս, տեղավն ալ ետ դըռ գինի: Տեղս մի իրք գյլխաներ դև կաննի: Նոր քոն ա ինալ: Գիդա տեղարս մարթ կաննի, եր կկանա, ինդի կօտի, հուսչոր փալանգը՝ մի գյոռան:

Տղան ըսիս ա.- Լա իս էտ դևեն ըսպնիլու հետե յըմ եկած: Օմեն տարե մըր պադիվեն նետ ա խաղ ըրիս: Գյոլիս ա, մըր անմահական խնձորնեն գյուղնալիս, տրնիլիս:

Ըղչգերքը ըսիսն.- Մընք կտաննք նշանց կտանք: Աստուծ քի նետ: Առաչինը կշխադս դևեն մաչտեղեն գյուլոխը կտրիլը: Կուղկերեն էրկ կուճի գյլխնեն կտրիս վեչ: Հինչքան հարայ կտան՝ «մըզ ալ կտրի, մըզ ալ կտրի», կտրիս վեչ: Կուճի գյլխնեն որ կտրըս, ընդուց նաներ կրակ կթափվի՝ աշխարհն ալ, մըզ ալ նետը կվառի:

Տղան թորը ձեռքեն գինիս ա:

Դևը մարթու վըտ ունիլավ քոնե եր ա կնալիս, աշկրը հղղիս, ըսիս.- Մարթավըտ ա գյոլիս: Մարթավըտ ա գյոլիս:

Դևը դեչանը աշկրը բենալը, տղան ինդի յա թխիս, որ մի թխիլմ դևեն գյուլոխը հասած տանձու նման վեր ա ինգիս: Էրկու կուճի գյլխնեն հարչան հարայ-հրոցն տալիս՝ մըզ ալ կտրի, մըզ ալ կտրի, տղան ըսիս ա.- Ինձ հինչ պետքի լալ, արալմ: Իս ձեր հարայ-հրոցեն յիշիս չըմ:

Ըղչգերքը տսնալիսն, որ տղան դևեն ըսպանալ ա, վազն տվալ եկալ տղեն խտտալ, ասալ.- Դևեն շատ հարուստեթուն օնի: Հվաքնք, մըզ ալ քի նետ տար լուս աշխար: Շատնք խնթրիս, մըզ անտեր թողս վեչ տեղարս:

Տղան իրան մաչեն որոշիս ա, որ. «Իրք քուրն, մընք ալ իրք ախպեր, ազափ տղերք: Կտանմ, օմեն մինը մի ախպեր կօզընք: Նախշուտ, ջահիլ ըղչգերքն»:

Դևեն ունեցած հարուստեթունը հվքիսն, բիրիս վըրեն տակեն դիրիս:

Տղան կնչիս ա ախպրտանցը, որ քողը քաշն: Առաչ դևեն հարուստեթունն դուս բիրիս: էրկու ըղչգյանն ալ որ դուսն բիրիս, կուճի ախչիգը ըսիս ա.- Եք դու ալ դուս եք: Վերջմ ինձ կիանեք:

Տղան ըսիս ա.- Պա ամոթ չի՞, որ քի թողմ վըրմը, իս դուս գյոմ: Եք դու դուս եք: Վերչմը իս դուս կգյոմ:

Աղչիգը հակառակվմ ա, ըսիս.- Իս որ դուս գյոմ, կարուղ ա ախպերնետ քու արարմունքեն երե նախանձն, քի վըրեն նանե դուս վեչ բերն: Համա դու ինձ կիանս, հակառակմ ա, եք դու դուս եք:

Տղան ըղչգյանը ըսածեն երե նղնալիս ա, ըսիլիս.- Կարուղ չի պդահի, որ իմ ախպերնեն նամարդ մարթ դուս գյոն: Բեյթոն տեղը խոսիլը պետք չի:

Ախչիգը ըսիս ա.- Լավ, քի լսիսմ: Բեն ա, որ քի վըրմը թողն, էն վախտը օմեն օր տեղավս իրք վըչխարն գյոլիս անց կնալիս: Դևեն վչխրնեննն: Դևը ընդուցավ լալ լուս աշխարհ դուս գյոլիս: Մինը՝ սըվ ռանգի ա: էն մթեն աշխարքեն հետե յա: Մինը՝ կարմուր ա, էն ալ կեսամթեն աշխարքեն հետե յա: Իրքմինչին վըչխարը սիպտակ ա: էն ալ լուս աշխարքեն հետե յա: Վըչխրնեն որ կգյոն, մըծ-մըծ կռավուր պուզերավ ղոչին, թայդի վեչ ինգյս: Առաչ եռ կինս սըվ ղոչեն երե: Սըվը քի զախ կտա կարմուր ղոչեն երե: Կարմուր ղոչն ալ քի զախ կտա սիպտակ ղոչեն երե: Սիպտակն ալ զախ կտա նի կինգյս լուս աշխարհը:

Կուճի աղչիգը էսքանը տղեն ըսիս ա, քողեն ճոնդը կպիս մաշկը: Քաշմն, հանմ: Կուճի ախպերը եշմ ա, եշմ ալ քողը կախ չըն տալիս: Մնալիս ա վըրմը:

Կուճի ախպուրը թողնք վըրմը հղե յիշիլիս: Տըսնանք մըծ ախպերնեն հինչն ըրիլիս:

էրկու ախպեր դևեն հարուստեթունն ա, ըղչգերքը տնիսըն պալատ՝ թաքավերեն կոշտը, նաղլ ըրիս, որ խնձոր գյողացուղը մի իրք գյլխանե դև լալ: Ըսպանածն:

Ըղչգերանցը էրկոնեն նիետ փսկվիսն: Կուճի աղչիգն ալ առանձին դիրիսն մի ութախմ, մի պառավ կնեգ ղարավուլ դիրիս երե, որ ըղչգյանը կոշտը ոչ մի մարթ թողի վեչ գինին-գյոն, որ իրաց փռնած բեներն հետե աղչիգը թաքավերեն կարի վեչ մի բեն խաբեր տա:

Մհեգ էրկու ախպուրը թողնք իրաց հետե ալխային, հանգիստ ապրն: Խաբեր տանք կուճի ախպուրը նանե, տըսնանք վըրմը հինչ ա դըռալ:

Թաքավերեն կուճի տղան տըսնալիս ա, որ կուճի աղչիգը խելունք աղչիգ լալ, դուզ ա ասալ: Ախպրտանքը խայոնեթունն արալ:

Մին ալ տըսնալիս ա ղոչրը եկալ: Հակառակը հակառակ ա ինիս: Շըշկըռվիս ա, առաչ եռ ա ինիս սիպտակ ղոչեն: Սիպտակը զախ ա տալիս կարմուր ղոչեն երե: Կարմուրն ալ՝ սըվ ղոչեն երե: Սըվ ղոչն ալ զախ ա տալիս, տղեն գինիս ա նի ինգիս ավելի մբեն աշխարհը:

Տղան շոռ ա գյուլիս, շոռ գյուլիս գինիս դուս գյուլիս մի մըծ քաղաք: Նի ա մտիս մի տոն, տըսնալիս ա մի թաք պառավ ա, ուջաղեն կողքեն նստած: Տղան նստիս ա պռավեն կողքեն, գյլխեն եկածը նաղլը ըրիս:

Պառավը տղեն սըրտ ա տալիս, ըսիս, որ հարկավեր չի նղաճալ: Աշխարք ա, իտի ալ կպդահի: Եր ա կնալիս, հաց բիրիս:

Տղան պռավեն նաճե հրցրիլիս ա.- Չեր քաղաքմը ըշտեղավ շոռմ եկալ, օմեն տեղ ալ տըսալմ մըծ, կուճի սըվն գեցած, տխորն, լեցն ինիս: Էտ հի՞նչ բեն ա:

Պառավը ըսիս ա.- Մըր քաղաքեն ախպիրին երե մի սըվ նախկա օղծ ա բիհամ եկած: Թուղիս չի որ ջուր գյո: Պետք ա մի աղչիգ տաննք կոլ տա, որ թողի մի օր ջուր գյո: Քաղաքեն ըղչգերքը պրծալն: Հըրթը հասած ա թաքավերեն ըղչիգյանը: Էքուց պետք ա տաննք տանք նախկեն, որ մի օր ջուր թողի: Ըտուր հետե յալ քաղաքը սուքի մաչ ա: Սըվ ա գեցած: Տըսնալիսս, որ քի հացմ տվալ, ջուր չըմ տալիս: Ջուր կավչնի:

Էքսի քշանաց թաքավերեն աղչիգը որ տնիսն տան նախկեն, տղան ալ ա նհտնուն գինիլիս: Նախկան որ ըղչիգյանը տըսնալիս ա, ըռըխը լեն բինալիս ա, վեզը յրկնցրիս, մուտնալիս, որ կոլ տա: Սըվ գեցած օմեն ժողովուրթը ըսկսիսն բեցուր սասավ լեց ինիլը: Տղան տեղը սամթ ա գիծիս, իրան թորը դեմ ա տալիս նախկեն ըռխեն, մի ձեռքավ թորեն դաստագեն նհետ ա փռնիս, մի ձեռքավ ալ յալլհազ թորեն պտկեն նհետ: Ինքը հըռե վըտ ա կնալիս, ջոխտ ձեռքավ թորը հոպ տալիս առաչ՝ էնքան վըր թորը նխկեն մաչավը ծիվմ ա, ըրիս էրկու կուտր:

Ժողովուրթը արմացած, զարմացած խըռնվիսն մին-միննու, նախկեն կուտուրնեն քաշ տալիս, դեն գիցիս, ջուր տնիս:

Տղան ետ ա դըռնալիս, գինիս պռավեն տանը նստիս, իրան հետե դինջինալիս:

Տղեն չտըսնված արարմունքեն խաբերը հսնիս ա թաքավերեն: Թաքավերը գինիս ա, որ էն տղեն տըսնի, եր օնի տանի պալատը պադև տա: Շոռն գյուլիս, տղեն կրիս չըն ճարի: Թաքավերը բիրիս ա էյլամ տալիս, որ հու վեր նախկեն ըսպանած ա, հուզուր գյո՝ տըսնամ: Ախչիգյս օզի, աղչիգյս կտամ, թաքավերությանս կեսը օզի, թաքավերությանս կեսը կտամ:

էյլամ տալեն ետը անց ա կնալիս իրք օր: Վըչ մի մարթ հուզուր դուս չի գյոլիս: Նախկան ըսպանած օրը շատ մարթ ա վընննատակ ինգյած ինիս, սպանված: Շատ մարթինք ալ ինդի յըն խյալ ըրիս, որ կարուղ ա էտ տղան ալ ա վընննատակ ինգյած, ըսպանված: Յա ղարիբ տղա լալ, մի տեղավ թողած ա, գենցած:

Քաղաքեն շատ մըծամըծ, անմատար մարթկանց ջահիլ տղերք գինիսն թաքավերեն կոշտը, թա. նախկան ըսպանողը իսմ:

Թաքավերեն աղչիգը հորը ասած ա ինիս, որ. «Նախկան ըսպանուղ տղեն երե իս նշանմ թխած: Քանե իս իմ նշանը տըսնամ վեչ, ոչ միներն հավատ վեչ արս»:

Հինչ տղա որ գյոլիս ա ըսիս, թա. նախկա ըսպանուղը իսմ լալ, աղչիգը յիշիս ա տղեն, տըսնալիս ա իրան նշանը տղեն երե կավչնի: Սոտ ըսիլեն երե ամոթանք ա տալիս, հղե դիրիլիս:

Վերչը, նախկա ըսպանուղ տղան որ ճրվիս չի, թաքավերը իրան վազիրներեն հոքմ ա տալիս, քաղաքեն չորք թիրափեն դարբազենքը փակն, ոչ քաղաքից մարթ թողն դուս գյո, ոչ ալ ներս թողն, նի ինգյն քաղաքեն քյուչա առ քյուչա, տոն առ տոն շոռ գյոն: Մի առ մի հինչքան ջահիլ տղերք կան, հըրթավ բերն պալատը՝ ըղչիգյանը կոշտը:

Դու մի ասի, տղան որ նախկան ըսպնիս ա, էտ խառը վախտը թաքավերեն աղչիգը ծեռքը նախկեն արուներն նանե թթխիս ա, թաքուն դաջիս տղեն թիգյունքեն:

Քաղաքեն տղերքը որ բիրիսն մինի-մինի ըստուգիս, տեղտ տղան ճըրվիս ա: Աղչիգը տղեն կոռնը փռնիս, տնիս ա հորը կոշտը ըսիս.- էս ա նախկան ըսպանուղը:

Թաքավերը շատ ա ուլխնալիս: Ըսիս ա.- Որ դու իմ ըղչիգյանս ազադալս նախկեն նանե, համ ալ իմ քաղաքեն ջուրը հալալցրալ, սըրտտ հինչ որ օզի՝ հազրմ քի տալու:

Տղան ըսիս ա.- Օմեն հինչից շունուրակալմ: Աշկս ոչ մի բենու երե չի: Իս ալ թաքավերու տղա յըմ: Թա ծեռքտ կգյո, ինծ օքնի, լուս աշխարհ դուս գյոմ, գինմ մուրազես հասնմ:

Թաքավերը հվաքիլ ա տալիս իրան նազիր-վազիրներեն, երգիրեն հաքիմներեն, նստիսն խյալ-խյալ ըրիս, թա հի՞նչ հնար կա տղեն լուս աշխարհ հնիլու: Հաքիմներեն մինը տղեն ըսիս ա. - Լուս աշխարհը գինիլու հետե պետք ա մի քաջեթուն ալ արս: Թա կրեցալս, կգինս լուս աշխարհ: Թա կարս վեչ՝ հուր-հավիդյան կմնաս մըր քուշտեն, մըր քաղաքմը:

- Ասի, օժս փորձմ,- ըսիս ա տղան:

Հաքիմը ըսիս ա.- Մըր քղաքեն կողքեն մի մըծ, բեցուր ծառ կա: Ծառեն երե մի զմրուխ ղուշ բուն ա դիրած: Էտ ղուշը օմեն տարե ձու ա ըծիս, ճոտ դուս ըրիս, պիհս, մծմծցրիլիս: Լա մի էրկու օր ա մնալիս, ճոտրը թռցրի, էն քու ըսպանած նախկեն հնգերը գյուլիս ա ճոտրը կոլ տալիս, խըղճ զումրուխ ղոշեն թուղիս մրմնջալավ: Թա կրեցալս էտ նախկեն ալ ըսպանիլ, հաստադ գիդաց, որ լուս աշխարհը կտըսնաս: Լա քու բախտեն՝ սորին վախտ ա, ճոտրը մծմծացածն: Ասօր, էքուց ըշտեղ որ ա, նախկան կըրվա:

- Շատ լավ,- ըսիս ա տղան,- իմ բախտեն գինմ, միետ իմ օժը փորձմ:

Գինիս ա մի էրկու օր ու քիշեր զմրուխ ղուշեն ճուտերեն գյուդմիշ ըրիս: Ծառեն նանե պատառ հըռե մի քարու տակե նստիս ա պատառ դինջանա: Քոնը տնիս ա: Մին ալ քոն տեղը մի ծվծվոցու սաս ա հսնիս ընջուկեն: Եր ա կնալիս, տըսնալիս նախկան եկած ա, որ եռնի ծառեն, ճոտրը օտի: Զմրուխ ղուշեն ճոտրը վխթուռնոն ծվծվալիսն:

Տղան ըսկսիս ա նախկեն քարավ տալը: Սիվթա նախկան տղեն բենու տեղ չի դիրիս: Տըսնալիս ա՝ չի, տղան քարավ իրան ուզիս ա հաղթի: Կզնվիս ա, հուջում ըրիս: Գետու նման փշփշցրիլավ հուջում ըրիս տղեն երե, որ տղեն ալ կոլ տա:

Տղան լոք ա տալիս քարեն երե, թորը դուս ունիս նախկեն նիետ կըռըվ տալիս: Երկար կըռվիլեն ետը, տղան սամթ ա գիծիս, ինդի ա թխիս նախկեն գյլխեն, որ գյուլոխը օխտը կուտուր ա դըռնալիս:

Տղան շատ հոքնած, քռնքած ա ինիս, գյուլիս ա ծառեն տակեն խուտուրու ինգիս, քունավ ընցրիս: Զմրուխ ղուշը գենցած ա ինիս ճուտերեն հետե կեր բերի: Գյուլիս ա տըսնալիս տղան նայե ծառեն տակեն քոն, ինդի յա գիդալիս՝ օմեն տարե ճոտրը օտուղն ա: Երի ա տալիս որ ըսպանի, ճոտրը ծվծվալիսն, թուղիս չըն, ըսիսն, որ էտ տղան իրաց ազադած ա նախկեն նանե: Հոքնած ա, քունավ անցած:

Զմրուխ ղուշը որ տսնալիս ա քարեն տակեն ըսպանած նախկեն, շատ ա ուլխնալիս: Գյուլիս ա թվերավը քամե ըրիս, որ տղան ավելի հանգիստ քոն ինի:

Տղան որ քունե եր ա կնալիս, զումրուխ ղուշը ըսիս ա.- Իմ ճոտրը որ նախկեն նանե ազադածս, իս հի՞նչ լավեթուն արմ, որ տեղը դուս գյո: Հի՞նչ մուրազ օնս, որ օքնմ:

Տղան ըսիս ա.- Իմ մուրազը էն ա, որ ինձ օքնս, տանս լուս աշխարհ հանս:

- Տեղես նիետ դեչանը լուս աշխարք գինիլը օխտը օր, օխտը քիշերվա հղե ա: Քի տանելու հետե ինձ հարկավեր ա օխտը վըչխարու դմակ, օխ-

տը տեգ գինի: Թա կրեցալս ճարի, կտանմ: Թա կարս վեչ, Աստուծ քի նհետ:

Տղան գինիս ա թաքավերեն խաբար տալիս: Թաքավերը շատ ա ուլխնալիս: Օխտը դմակ, օխտը տեգ գինի, տղեն հետե յալ օխտը օրվա ուտլեղեն բերիլ ա տալիս, տընիս բիռնիս զմրութ ղուշեն, տղեն հղե դիրիս լուս աշխարհ:

Զումրութ ղուշը տղեն որ տնիս ա լուս ըշխարքմը վեր դիրիս, տըսնալիս ա տղան կըղալիս ա, հրցրիս ա.- Խե՞ յըս կըղալիս:

Տղան ըսիս ա.- Դե երկար հղե յըմ եկած, վըտըրս տմբրածն:

Զմրութ ղուշը ծծղիս ա, ըսիս.- Ինձ խափիլ մա: Վերչին օրը որ դմակմ օզալ, մի դմակ վեր լալ ինգյած: Դու քու բուդեն նանե յըս կտրալ, տվալ ինձ, իս գիդացալմ, կերա չըմ: Լուզվես տակեն պահալմ:

Բուդեն մըսը դիրալ ա տեղը սըղալալ, տղեն վընը սղացալ ա:

Տղան գենցալ ա հոր պալատը: Ըխպրտանքը իրաց կուճի ախպուր գյոլը գիդալավ, համան քիշերը երն կացալ անհետ մի հղոք գենցալ՝ թաքավերեն նա իրաց ախպուրը քուշտեն սվընիրս չմնալու հետե:

Տղան հինչ որ գյլխավը անց լալ կեցած մինի-մինի թաքավերեն նաղլ ա արալ: Թաքավերը բերալ ա կուճի տղուն դևեն կուշտեն նհետ բերած ըղչիգյանը նհետ պսակալ, թաքավերութունը տվալ իրան, օխտը օր, օխտը քիշեր հրսանեք արալ:

Վերչը կուճի տղեն հասալ ա մուրազեն:

4 (4). ՀՐԵՂԵՆ ՁԻՆ

Մըր մըծրը նաղլն լալ ըրիս, որ շատ քյոհնա դովրոմը մի շինացե մարթ ա ինիս: էտ մարթեն ցորեն վրիլու հետե մի շատ սորին արտ ա ինիս: Օմեն տարե արտը վրիլիս ա: Ցորենը կնիչիս ա գյոլիս լալ հսնիս, հնծիլեն վախտը գինիսն լալ տսնալիս. որ քիշերը մի հեյվան եկած ա, արտը ըրծեցած, կոխ տված, փչացրած, ցորենը շարքից հանած, թողած, գենցած:

էտ շինացուն իրք տղա յա ինիս: Որոշիսն հըրթավ քիշերնեն գինն արտեն սայաղ կանան, տըսնան ցորենը փչացնողը հի՞նչ հեյվան ա:

Առաչի տարեն մըծ ախպերն ա գինիս արտը պհիլու: Մի քանե քիշեր դեչանը լուս նստիս ա: Արտեն մոտե եկուղ ինիս չի: Հակառակու նման մի քիշեր լուսպեցեն մոտե քունը տնիս ա: Լուսը բեցված քոնե եր ա կնալիս, տըսնալիս ա, եկածն, արտը ըրծեցած, մանցածն ալ կոխն տված, տափեն նհետ հավասարացրած, գենցած:

Էքսի տարեն մաչնակ ախպերն ա գինիս արտը պհիլու: Գինիս ա, մի երկու քիշեր սայաղ կնալիս: Ալլա մի քիշեր քունավ ա ինգիս մըծ ախպուրը նման, եր կնալիս, տսնալիս՝ արտը քոռն արած: Քուռըփեշման թուղիս ա, գյոլիս տոն:

Էն մին տարեն ալ կուճի ախպերը ըսիս ա.- Պետք ա արտը իս գինմ պահմ: Հըրթը իմն ա:

Մըծ ախպրտանքը ծծղիսն, կուճի ախպուրը ըսածեն երե: Ըսիսն.- Մընք աժդահա տղըմարթինք կրեցա չընք մի բեն արի: Դու հալա շատ ջահիլս, հի՞նչ կարս արիլ, որ ուզիսս, աս տարե գինիս տեղը քի ալ մըզ նետ կտաննք:

Կուճի ախպերը մըծ ըխպորանցը ասածնան հվատամ չի: Գյոլիս ա արտեն հասնիլեն վախտը: Քիշերվա կեսեն եր ա կնալիս պատառ աղ յայլխեն ծոնդմը կպիլիս: Մի երկար քող ալ գիծիս օսսուքը, գինիս հսնիս արտը:

Արտեն մաչտեղը մի մըծ կաղնե ծառ ա ինիս: Բիրիս ա քուղին մի ծոնդը պընդ կպիս ծառեն, մի ծոնդն ալ պհիս ձեռքեն: Նստիս ծառեն տակեն: Քոնը որ ուզիս ա տանի, եր ա կնալիս պատառ ծառեն ղրըղնավը շոռ ա գյոլիս, ալլա գյոլիս նստիլիս: Լուսբեցեն մոտե քոնը զոռ ա ըրիս, կրիս չի դմանալ: Բիրիս ա կուճի մաննը դնակավ պատառ կտրիս, աղ վիրավ ըրիլիս: Մաննը մռմռալիս ա, տըղընն քոնը անց ա կնալիս: Լուսբեցեն մոտե մին ալ էն ա լսիս, որ գյովդա մի վշշոց, թշշոց ա գյոլիս: Տընսնալիս ա, ըհը՜, ծուռու նման մի սիպտակ թվավր հրեղեն ծի եկալ ա արտմը վեր եկալ, ըսկսալ դընղնած ցորենեն հասկրը ըրածիլը, կոխ տալ, փչցրիլ: Արտեն մաչավը դես-դեն վազ ա տալիս, իրան հետե խաղ ա ըրիս: Խուտորու վա ինգիս, թավել տալիս: Մի խոսքով, դուշմանու նման հինչուր քեփը ուզիս ա, ինդի ալ ցորենը փչոցրիս ա: Էդ մոմենդմը տղան փորսող տալավ մուտանալիս ա ծիանը, վեզը քուղավ կպիլիս: Ձին հազրի ա գյոլիս, ուզիս ա փախչի, թռի: Ալ ըշտե՞ղ: Քուղին ծոնդը նա է ինիս ծառեն երե պընդ կապած: Կրիլիս չի բեց ինգի:

Տղան մի միակ եր ա ունիս, ծիանը ետ ըծիս, ծառեն չորք թիրափավը բիլբիլցրիլիս: Ձին էնքան ա պտտվիս, որ քողը վիրավ ա տալիս ծառեն պրծնիս, մնալիս ա վըտ: Տղան մուտնալիս ա, փռնիս:

Ձին ինսանու նման լուզի ա ունիս, տղեն նետ խուսիլիս: Ըսիս ա.- Ինձ կուճի քոռակ օնմ, աշկը հղեց: Ինձ բեց քող գինմ: Դու իմ հագվեն նանե էրկու մազ բոք տոր, ջուբոմտ պահի: Հիբ որ նեղութինու մաչե կինըս, իմ

կարիքը կինի, մազրս քշկոռ կգիցս, ինծ կկանչս՝ հրեղեն ծի, հրեղեն ծի, իս ըշտեղ որ ինմ, կգյոմ կողքետ վըտ կկանամ, քի կօքնմ:

Տղան հվտալիս ա ծիանը: Հագվեն նանե երկու երկար մազ բուք ա տալիս, դիրիս ջբոմը, ծին բեց թուղիս, գինիս տոն:

Տղան իրան արած բենեն հետե տանը ոչ մինեն ոչ մի բեն ըսիս չի:

Մի քանե օր անց ա կնալիս: Մըծ ախպերը ըսիս ա.- Դե արտը պիիլեն վախտն ա: Եկեք էս քիշեր գինինք, սայաղ կանանք:

Իրք ախպերներ միասին գինիսն տըսնալիս հի՞նչ... արտ չկա: Ցորենը տափեն նհետ հավասարված ա:

Դու մի ասի, էտ երգիրեն թաքավերը շատ մազալու խասյաթ օնի: Օմեն տարե աշունքը մի խաղ, մի բեն ա ըրիս, ժողովուրթը հվիքիս, ուլխնալիս:

Մի տարե երգիրեն ջահիլնեն հվքիս ա, թա՝ կոխլ կացե՛ք, տըսնանք հուվա ղվաթի: Մի տարե հվիքիս ա, թա՝ վազ տվեցե՛ք, տըսնանք հո՞ւվա ումունուց ջյալդը:

Էտ տարեն ալ մի անգին մտանե ա սարքիլ տալիս, դիրիս ըղչիգյանը մանինը: Աղչիգը նստցրիս պալատեն իրքմինջի հարկեն փնջարոմը, ըսիլիս.- Հու վեր կարի ծին քշի գյովդա բիցիրանա, ըղչիգյանս մատանը նանե մտանեն դուս օնի, աղչիգս կտամ ընդուր:

Գյոլիսն երգիրեն շատ ղոչաղ, սորին ծի քշող ջահիլնեն: Հինչքան վարժ ծի քշող ա ինիս, կրիս ա հասնի դեչանը ըրկումինջին հարկը: Իվլ կրիս չըն բիցիրանալ: Դե շատրն ալ ծին խռեք տալիս տեղը վերն ինգիս, կունդըկծեգ դըռնալիս: Ժողովուրթը թիմիշա յըն ըրիս, ծծղոտում, ուլխնալիս՝ թաքավերեն նհետ մի տեղ:

Ըտրա տըռնը էրկու տղեքն ալն մի քանե օր թիմիշա ըրիս, իրաք ալ ծի խռեք տալիս, փուրծիս թաքավերեն ըղչիգյանը մտանեն տանիլ: Հաջղվիս չի: Օմեն օր թաքավերեն պալատեն ըռշկին հինչ օյնր ա դըռնալիս, գյոլիսն ըրակոնը տան նաղլը ըրիս, ծծղուտիլիս:

Կուծի ախպերը շատ ա ղանչաք ըրիս, լեց ինիս, որ մի օր ալ իրան տանն, ինքն ալ մհետ տըսնի, պատառ ուլխանա:

Ախպրտանքը ըսիսն.- Այ տնշենա խոխա, ըսկի գիդաս, որ օրական քանե-քանե մարթ ա նի ինգիս ծիանցը վտերեն տակը, մռնիլիս, շիքյաստ դըռնալիս: Տընիլու ինի, կտաննք: Վխիսնք տաննք, մի բեն պդահի, խաջալաթ մնանք մըր հոր ըռշկին: Էն ա, հինչ տըսնալիսնք, գյոլիսնք տոն նաղլը ըրիս, դու ալ լսիս:

Կուծի տղան ինքն իրան խյալ ա ըրիս, որոշիս. «Պա իմ չարչարանքը հինչո՞ւ հետե լալ, որ հրեղեն ծին փռնալմ, բեց թողալ: Մհեգուց նանե սո-

րին վախտ կավչնի: Միետ փորձու հետե հրեղեն ձին կանչմ, եռ ինմ, գինմ, տըսնամ հինչ կինի»:

Էքսի օրը քշանաց շուդավ, ալլա թաքուն կուճի տղան եր ա կնալիս իրան թազզա շորրը գինալիս, գինիս արտեն կաղնե ծառեն տակեն վըտ կնալիս, հրեղեն ձիանը հագվեն մազրը ջուբեն նանե դուս ունիս, քշկոռ գիձիս, ըսկսիս կանչիլը՝ հրեղեն ձի, հրեղեն ձի:

Հրեղեն ձին գյոլիս ա, քուշտեն վըտ կնալիս: Տղան եռ ա ինիս հրեղեն ձիանը, քշիս, գինիս թաքավերեն պալատեն նանե ղալին հըռե վըտ կնալիս, յիշիս, տսնալիս, որ ձիախաղը ըսկսված ա: Փորձն ըրիս, թաքավերեն ըղչիգյանը մատանը նանե մտնանե դուս օնն, տանն, հաջողվմ չի:

Տղան ձին խռեք ա տալիս, թռցրած, գյովդա գյոլիս: Հվաքված ժողովուրթը տըսնալիսն գյովդա եկող ձիավորեն՝ մնալիս զարմացած: Օրախ-օրախ հայ-հույն ըրիս, ծծղուտիս:

Տղան ձին քշիս ա, հսնիս ըղչիգյանը, կրիս չի մտանեն հանի: Անց ա կնալիս, գինիս: Նորից ա գյոլիս: Ժողովորթը ալլա ըսկսիս ա հարայ-հրոց տալ, ուլխանալը: Էս դոնում տղան զոռռավ ձեռքը հսցրիս ա ըղչիգյանը ձեռքեն: Մտանեն ալլա կրիս չի հանի: Անց ա կնալիս գինիլիս:

Իրքմինջի դոնմն ա տղան ձին քշած գյոլիս: Ժողովուրթը որ տսնալիսն, ալլա ըսկսիսն հարայ-հրոց տալ, ասիլ. հրեղեն ձին եկալ ա, հրեղեն ձին եկալ ա, առաչը կտրեցեք, փռննք: Տղեն հաջողվմ ա, էս դոնում ըղչիգյանը մատանը նանե մտանեն դուս ա ունիս, տնիս:

Ըրկոնոն էրկու ախպեր գյոլիսն տոն՝ բիրինննեն մանցած բեց: Նաղլն ըրիս, թա հունչուր մի տղա եկալ ա հրեղեն ձիանը երե նստած, թաքավերեն ըղչիգյանը մատանը նանե մտանեն դուս կալալ, տարալ:

Մըծ ախպերը տըսնալիս ա կուճի ախպերը ձեռը յլխավ կապած ա: Հրցրիս ա.- Ձեռքտ խե՞ յըս կապած:

Ըսիս ա.- Մոշ ուտիս տեղը հանդմը վեր ըմ ինգյած, պատառ ճղված ա: Իտուր հետե ալ կապած ա:

Հրեղեն ձիավորը թաքավերեն ըղչիգյանը մտանեն տանիլեն ետը անց ա կնալիս իրք օր: Թաքավերը հղե ա յիշիս՝ մտանե տանողը գինիս չի աղչիգը ուզիլու: Մնալիս ա զարմացած: Ճարը կտրած էյլամ ա տալիս, որ՝ «հու որ ըղչիգյանս մտանեն տարած ա, թող գյո նշան դիրի, հրսանեք արի, տանի: Օխտը օր վահդա յըմ տալիս: Օխտը օրմ գյո վեչ, ընդոր ետը գիցողուն ղաբուլ չըմ արի»:

Շատ հարուստ մարթինք ինդի յըն գիդալիս, որ հրեղեն ձիավրը անպայման ձիանը նանե վեր ա ինգյած, մըռած, որ գինիս չի թաքավերեն ըղ-

չիգյանը ուզիլա: Շատրը թինգյանոց մտանե յըն սրքիս, տընիլիս թաքավերեն տալիս: Յանի քի ինքն ա իլած հրեղեն ծիավորը:

Թաքավերը իրան ըղչիգյանը հետե սարքիլ տված մտանուն երե գաղտնի նշան ա ինիս թխիլ տված: Յիշիս ա տըսնալիս իրան գաղտնի նշանը կավչնի, ծծղիս ա, ամոթանք տալիս, մտանեն ետ տալիս:

Մի քիշեր ըրտատըռնը, տնեցեք մին ալ էնն տսնալիս՝ տոնը լուսավորվալ ա, հանցա ինս կասս, որ տանը մաչեն իրիննակ ա դուս եկալ: Դու մի ասի, կուճի տղեն ձեռքեն կապած յայլխնա եր ինած, թաքավերեն ըղչգյանը մատանն նանե դուս կալած մտաննոն աշկն ա իրիննակու նման շփղշափաղ ըրիլիս:

Տղան զուրթնալիս ա, ուզիս ա ձեռքը կապի: Հսցրիս չի: Տնեցեք, օմեն երն կնալիս, խռնվիս մին-մինա: Տղեն նանե հարցուփորձն ըրիս, թա՝ էս մտանեն քի մոտ հի՞նչ բեն օնի, հի՞նչ տեղե յա: Տղան ալ կրիս չի գաղտնիքը պահի, մին-մինի նաղլ ա ըրիս, թա հունչոր ա գենցած արտը պահած, հունչոր ա հրեղեն ձին փռնած: Այտս հինչուր ա նստած հրեղեն ձին, գենցած թաքավերեն ըղչիգյանը մատանը նանե մտանեն հանած:

Ըխպիրանքը հաշիվն ըրիս, տըսնալիսն, որ թաքավերեն էյլամ տված վախտեն նանե հալա մի օր կա: Բիրիսն էքսի օրը իրաց կուճի ախպորը սորին թազա շորր գեց տալիս: Տղան ալ գինիս ա հրեղեն ձին բիրիս: Երն կնալիս գինիս թաքավերեն ըղչիգյանը նշան դիրիլիս: Բիրիս օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիս:

Վերչին քիշերը երգինքից իրք հատ անմահական խնձոր ա վեր ինգիս: Մինը տալիսն նաղլը կպողուն, մինը՝ նաղլը ըսողուն, մինն ալ կես-կեսն ըրիս, տալիս նաղլը լսողներեն, որ օմեն տեղ նաղլը արն կուճի ախպուրը փանդրը:

5 (5). ՄՂԴՈՍՈՆ ՆԱՂԼԸ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի Մղդոսի լալ: Էտ Մղդոսին անչափ շատ գիդ լալ: Հունչար կասն՝ տափեն տակն ալ լալ գիդալիս, տափեն իրիսն ալ, Մղդոսուն իլած այսլը, թաք մի տղա լալ:

Մի օր տղեն կնչիս ա կոշտը, տղեն գյուլոխը, խըլքը ըստուգիլիս, գյուլոխը դառա տալավ ըսիս.- Տղաս, իս ըշխարքեն ամենաշատ գիդ մարթանցը միննմ: Համա դու աշխարքեն ամենաանխըլք մարթանցը մինը: Էքուց իս որ մըռնմ, ժողովուրթը գյոն տըսնն ժառանգս դու վրս, օմեն ալ թռսխա, կծծաղն: Համ իս խայտառակ կդըռնմ, համ՝ դու: Իս մասլահաթմ

գիդալիս, որ քի հինչ պետք ա իմ տանս նանե էր օնս, գինս մի օրեշ քաղաք: Քի հետե մի բեն ճարս, աշխատս ապրս:

Տղան ըսիս ա.- Ա հար, որ դու իտի՞ յըս մասլահաթ գիդալիս, իս քի լսիլիսմ: Աս քիշեր ալ քու տանտ կմնամ: Քշանաց լուսիբեցեն եր կկանամ, մի տեղավ կգինմ բախտս ինձ նհետ:

Էքսի քշանաց լուսը բինվալիս ա՝ Աստծու պարին նհետը՝ պարի լուս ալ բենվի ձեր ումունուց հետե: Մղդուսուն տղան եր ա կնալիս մի քանե հաց դիրիս միզարմը, նի կպիս մաշկը, մի միակ ալ ձերքը եր ունիս, Աստծեն անմը տալիս, նի ինգիս մի հղե, գինիլիս:

Շատ ա գինիս, թա՝ խրեգ, էտ ալ Աստծ գիդի, հսնիս ա մի յուրդա տեղ, տսնալիս օբան քոչած ա, գենցած հղցին կողքեն մի քյոփագ շոն նայե նստած: Մղդոսոն տղան մեզարը բինալիս ա, նստիս, պատառ հաց տալիս ա շանը, պատառ ալ ինքն ուտիլիս: Եր ա կենմ, շոնը հետը գիձիս, հղեն շարոնակմ, ուլխնալիս ա, որ նհետը մի նափաս կա:

Մղդոսոն տղան շանը նհետ շատ տեղ ա քինիս, շատ տեղ շոռ գյուլիս, վերջը հսնիլիս ա մի մըծ ազադ շեն: Տսնալիս ա շենեն ժողովուրթը հվաքվածն շենեն մաչեն, մեյդանչումը ղլմղալ ըն ըրիլիս, ուզիսն չոբան փռնն, շենեն վչխրնեն տանի պահի: Օմեն ալ հարուստն: Ոչ մինը լայաղ չի ըրիս չոբան դըռնի:

Մղդոսուն տղան առաչ ա կնալիս, ըսիլիս.- Չուբնեթոնը իմ փեշակն ա: Իս ձեր չոբանը կդըռնմ, էն պայմանավ, որ իս տան-տեղից հռացած մարթմ: Ինձ ապրիլու տոն տաք, օրվա ուտիլու հաց տաք, դեչանը օժս ների, ինձ հետե ապրուստ ճարմ, տոն-տեղ դըռնմ:

Շինացեք ղալին ուլխնալիսն, չուբանեն հետե օմեն հինչ տալիս:

Էտ երգիրեն օրենքն ալ ինդի ա ինիս, որ չոբանը մի տարե քանե գյուլոխ վըչխար պահած ա ինիս, տարվա վերջին քսան գյուլոխ վըչխարեն մինը՝ էն ալ ջուկովի, տալիսն չուբանեն:

Դե տարե յա, շոռ ա տալիս գյոլիս, Մղդուսուն տղան դռնալիս ա տասը գյուլոխ վըչխար տար: Էքսի տարեն օմեն վըչխրնեն ջոխտն ծնիլիս: Նորից տասն ալ շինացիքն տալիս: Անց ա կնալիս մի քանե տարե, չոբանը փսկվիս ա շենեն նախրչուն ըղջգյանը նհետ: Դռնալիս տան, ապրուստի տար:

Մի քանե տարե ալ անց ա կնալիս, չոբանը դռնալիս ա հարուստ մարթ: Այտս ինքն ա իրան հետե ջոկ չոբան փռնիլիս, նոքյար պհիլիս:

Մղդուսուն տղան մի օր կնգանը նաղլ ա ըրիս իրան գըլխավը եկածը, այտս ըսիլիս.- Ա կնեգ, դու տան-դրքեն տրեթուն արի, իս իմ նոքյարես նհետ գինմ շոռ գյոմ, տըսնմ կկարմ իմ հոր ճարի, տըսնմ կա, կավչնի:

Գինիս ա շոռ գյոլիս, Մղդուսոն ճրիլիս, իրան գլխավը անցածը նաղլ ըրիլիս: Մղդուսին լսիս ա, մնալիս զրմացած: Եր ա ինիս ծիանը, տղեն նհետ գյոլիս տղեն տոնը ղոնաղ:

Հալա շենեն չհասած, Մղդուսոն տղան նուքյարեն առաջ-առաջ ղուրկիս ա շենը, որ գինի շինացոց դոյող արի, որ հորս ճարալմ բիրիլիս, թող զուռնավ, դոհոլավ գյոն մըր առաջը:

Գյոլիսն հսնիս շենեն ղրաղը: Շինացեք օրախթունավ, զուռնավ, դհոլավ, պարգյոլավ գյոլիսն ըռչնեն:

Մղդուսուն տղեն իլած հարգանք-պատիվեն հետ, սաղ շինացեք հվքվան իրք օր, իրք գիշեր ուտիս, խմիս քեփ ըրիս, Մղդուսան զարմացրիլիս:

Մղդուսան քոնը քիշերը տնիս չի, տըսնալիս ա, որ տղան համան տղան ա, գյլխոմը ալիա ոչ մի դովլաթ կավչնի: Խիյալ-խիյալ ա ըրիլիս, էքսի քշանաց տղեն ըսիլիս.- Հինչ հարստութուն օնս, պետք ա օմեն ինծ նշանց տաս՝ տըսնմ:

Տղան օրախ-օրախ հինչ հարստութուն օնի, օմեն ալ Մղդուսուն նշանց ա տալի:

Մղդուսին տսնալիս ա՝ չէ, հինչ որ տըսած ա, ըտոց ոչ մինեն գյլխոմը դովլաթ չկա: Տղեն նանե խռվիս ա, թա ինծանե թաքուն ապրանքս պհած:

Տղան ըսիս ա.- Ա հար, ալ օրեշ բեն չօնմ, մի քյոփագ շոն ա մնալիս: Կօզս հվատա, կօզս հվատա մա:

Մուղդոսին ըսիս ա.- Տար էտ շանն ալ տըսնըմ, հինչ շոն ա, որ ջոկ պհիսս:

Տղան տնիս ա շանը նշանց տալիս:

Մուղդուսոն տսնալիս ա էտ օմեն դովլաթը նայե շանը գյլխոմը:

Տղեն հոքմ ա ըրիս, որ էտ շանը պետք ա պհիս վեչ՝ ըստկցրս:

Տղան նաղլ ա ըրիս, թա իրան մանուկ վախտը հինչուր ա էտ շանը ճարած, դըռած ա իրան ումուդը: Նհետը հնգրեթուն ա արած՝ չորան իլած տարիներին: էտ խաթրեն հետե պհիս ա: Ուզիս չի շանը արած լիվեթունը կուրցրի, մռանա:

Մուղդուսին հոքմ ա ըրիս, որ էտքան շատ տարե իրավունք չկա շոնը պհիլա: Պետք ա անպայման շանը ըսպանել տաս:

Տղան կնչիս ա մի չուբանու, շոնը տալիս իրան, թա՝ տար մի հըռե տեղ, մի ծորում շանը ըսպանի:

Մի վախտ անց ա կնալիս, Մուղդուսին տըսնալիս ա տղեն ոչ մի վնաս նի չի գյուլիս: Գիդալիս ա, որ դովլաթը ալլա մնալիս ա տղեն տանը:

Մի ըրակու վըչխրնեն որ գուլիսն ինիս տոն, ըռշկնան վըտ ա կնալիս ըստուգիս: Տսնըալիս ա՝ ըհը՛, դովլաթը նայե մի պառավ՝ լղար ղոչու գյլխոմ: Դու մա ասիլ, որ չոբանը տնիս ա շանը ըստկցրիս, էտ վախտը վըչխրնուն սուրուն նայն լալ տեղարիք ըրըծիլիս: էտ լղար ղոչը էկած ա ինիս ըստկած շանը իրեսավը լոք տված, անցած: Դովլաթն ալ շանը գյլխեն նանե դուս ա ինգյած ինիս, նի ինգյած էտ ղոչեն գյուլոխը:

Մղդուսին գյուլիս ա տոն, տղեն ըսիս, որ.- էն լղար ղոչը մորթի, գյուլոխը իփի, իս օտմ: Շուդոնց ա վչխարու գյուլոխ՝ չըմ օտի:

Տղան ծծղիս ա ըսիս.- Ա հար, հարուրավոր գյուլոխ վեչխար օնմ: Էտքանեն մաչեն պա ամոթ չի՞ մի լղար ղոչ մորթմ:

Դե տղան միամիտ մարթ ա, գիդալիս չի հոր մտքը հինչ ա:

Հարը վըտ ա կնալիս, թա.- Լա չէ, պետք ա լա էն լղար ղոչը մորթս:

Դե Մղդուսուն էրկու թոռն ա ինիլիս, տասնչորք, տասնհենգ տարեկան տղա խոխենք: Թոռնրը վարժատանը նանե գյուլիսն տոն: Տըսնալիսն իրանց մարը տանը չի: Յիշիսն տսնալիս ուջաղեն երե մի կիճոճ կա, մաչեն մի ղոչու գյուլոխ նայե իփիլիս: Իրանք ալ քողցածն ինիս: Եր են ունիս էրկու ախպրավ ղոչեն գյուլոխը դիրիս ըռշկնոն ուտիլիս:

Խոխենցըե մարը գյուլիս ա տըսնալիս, մնալիս քար կտրած: Վազ ա տալիս գինիս մարթեն խաբար տալիս: էդ միջոցեն Մուղդուսին գենցած ա ինիս եգեղեցեն աղոթքի: Խոխենցը հարը բիրիս ա, մի ղոչ մուրթիս, գյուլոխը իփիլ տալիս:

Մղդուսին եգեղեցուց գյուլիս ա տոն, հաց ա ուզիս:

Բիրիսն ղոչեն գյուլոխը դիրիս ըռշկին: Ճնչիլիս ա, ուտիս չի:

Տղան նաղլ ա ըսիս, թա.- Լղար ղոչեն գյուլոխը հինչ ա դըռած:

Մուղդոսին չարանմ ա, ըսիս.- Ասօր խոխենքը ղոչեն գյուլոխնն կերած, էքուց ալ իմն ա քու գյուլոխը կօտն: Պետք ա տանս էրկու խոխենքյն ալ մորթս: Թա չի, էքուց եր կկանամ, շորրս հանմ, չփլաղ տամ շեներն քյուչենավը՝ քի խայտառակ անմ, ասմ՝ տղաս ինձ պիհս չի: Ուզիս ա քողցած մըռնմ:

Տղան հինչքան Մղդոսուն խնքրիս ա, գյուլոխ չի գյուլիս: Ճարը կտրած էրկու խոխենքն ալ տալիս ա չոբաննան, թա.- Տարեք մուրթեցեք, արուննոտ շորերը բերեք տվեք Մուղդուսի հորս, տըսնի՝ ջանը դինջանա:

Չորանենեն խոխենցը տնիսն մի հըռի ծմակ, իրանց նհետ թաքուն խուխու շորր ալն ինիս տարած, մին ալ մի գյոռնը: Ծմակմը մի քրատակ ա ինիս: Տեղը գյոռնը մորթիսն, խրիվիս ուտիլիս, նհետնան տարած շորրը ըռնոտ ըրիս, խոխենցը քոն ըրիլիս: Կշտուռնուն մի քանի օրվա հաց թողիս: Խոխենքը թափշուր ըրիս Աստոծեն: Իրանք թաքուն թողիս, գյոլիս: Արնոտ շորրը բիրիս տալիս Մղդուսուն:

Ամեն հինչ իրան տեղը, պարին՝ պարի մարթկանց, չարը՝ ըշխարքեն չար մարթկանց: Եկեք մընք ալ տըսնանք խոխենքը ծմակմը հինչն դռնալիս:

Լուսը բինվալիս ա, պարին նհետը: Խոխենքը քոնե երն կնալիս, տըսնալիս ոչ մի մարթ կավչնի: Նստիսն պատառ լեց ինիս, պատառ դես, դեն շոռ գյոլիս, կնչիլիս, տսնալիսն՝ չէ, դովրըբարմը մարթ կավեչնի: Ծմակմը մի հղե յն ճրիլիս: Լեց ինիլավ նի յըն ինգիս հղեն, գինիլիս:

Շատն գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա: Մի օր հսնիսն մի մըծ քաղաքու: Էրկու ախպրավ՝ մի վախտ ձեռք-ձեռքի փռնած տոնբատոն ինգյած շոռն գյոլիս, մինեն նանե ջուր ուզիլավ, մինեն նանե հաց ուզիլավ, իրանց հետե ըպրիսն: Քշերն ալ մի հարմար պատա տակե, հղցու նանե ղրաղ, մին-մինա խտտիս, քոն ինելիս:

Պդհիս ա մի օր, ախպեր ախպուր կորցրիսն: Մի քանե օր շոռն գյոլիս, կրիս չըն մին-մինու ճարին:

Խաբեր տանք մըծ ախպորը նանե: Մըծ տղան մի ըրակու տսնալիս ա քաղաքեն կողքեն մի տեղ մի մըծ քյարվան ա վեր եկած: Դու մա ասիլ, թաջուրու քյարվան ա: Թաջրեն նոքարնեն ալ մի թիժ կրակն վառած, չորք թիրափավը նստոտած, իրանց հետե սոհբաքն ըրիլիս:

Տղան գինիս ա ըտոց քուշտեն խըղճ, անխոս վըտ կնալիս: Թաջրեն նոքարնեն տղեն խոսցրիսն, տսնալիսն խելացի, ըշկաբեց տղա յա, իրաց քուշտեն պհիսն ձեռաց: Ղուրկիսն, գինիս ա ջուր ա բիրիս, տնիս ա ձիանքը ջուր տալիս, ղուրկիսն հացա՝ իտի օմեն բենում քյոմագ ա ըրիս:

Էտ քաղաքմը իրաց առուտորը ըրիսն պրծնիլիս: Մի քանի օր անց հղե յըն ինիս, գինիս մի օրեշ քաղաք: Էտ տղեն ալ իրաց նհետ տնիլիսն:

Նոր քաղաքմն ալ իրաց ծխիլու ապրանքը ծխիսն, ունիլու ապրանքն ունիսն: Մի օր ալ լսիսն, որ էտ երգիրեն թաքավերը մըռած ա: Էտ օրը թագա թաքավերն դհրլական թախտեն երե:

Էտ երգիրեն օրենքն ալ ինդի լալ, որ ըտոց մի աղավնի լալ: Ժողովուրքը հվաքվմն լալ քաղաքեն մեյդանմ, աղավնին բեցն լալ թուղիս՝ հուր գյլխեն երե նստիս լալ, ընդոր ալ նշանակիսն լալ թագա թաքավեր:

Էտ օրը որ թաջրեն քյարվանը պետք ա քաղաքից հղե լալ ինի, գինի օրեշ քաղաք, գինիս չի: Վըտն կնալիս, տըսնն հու վա դըռնալիս թազա թաքավեր: Թաջրը, նոքարնեն, տղան ալ նհուտնոն գինիսն թիմիշա:

Քաղաքեն, երգիրեն մըծամըծրն հվքվիսն մի մըծ մեյդան: Թող նաղլը լսողնեն չզարմանան, որ աղավնին բեցն թողիս՝ բեցուր երգինքմը շրտում-շորտամ ա ըրիս, գյուլիս էտ կորած, մոլորված Մղդոսուն թոռանը գյլխեն վեր գյուլիս:

Դիվանեն մարթիք գյուլիսն տսնալիս՝ աղավնին վերա եկած մի ղարիբ տղու գյլխեն, զարմանալիսն: Աղավնուն երն ունիս տնելիս, նորից թռցրելիս: էտ ալլա գյովդա փարվազ-փարվազ ա ըրիս, նորից գյուլիս էտ տղեն գյլխեն երե վեր գյուլիս:

Դիվանի մարթիքը գյուլիսն տսնալիս՝ ալլա էն տղեն գյլխըն ա նստած, կզնվիսն, ուզիսն տղեն թակն, քաղաքեն նաներ դուս արն: Տեղտ թաջրը տղմրթեթուն ա ըրիլիս: Ըսիս ա.- էտ տղան անտեր չի: Իս թաջր մարթմ: էտ տղան ալ իմ ախպուրս տղան ա: Ինձ նհետ բերածմ քաղաքնեն շոռ գյո: Համ ալ թաջըրեթուն սվերի: Մհեգ օրենք ա, աղավնին գյլխեն էրկու հետա վեր ա գյուլիս: Թաքավերութունը իրանն ա:

Դիվանեն մարթիք ըսիսն.- Մըր օրենքը իրք հետ ա աղավնին բեց թողնիլը: Մհետ ալ թռցրնք: Հուր գյլխե նստի՝ թաքավերն էն ա:

Տնիսն աղավնին նորից թռցրիլիս:

Ալլա փարվազ ա ըրիս, գյուլիս, տղեն գյլխեն երե վեր գյուլիս:

Երգիրեն օրենքը գյորա, զուռնա-դհոլավ, երգավ, պարավ, օխտը օր, օխտը քիշեր քեփն ըրիս, բիրիս Մղդոսուն թոռանը թաքավեր նստցրիս երգիրեն թախտեն երե:

Նոր թաքավերը իրան տրեթոն արած թաջրեն կնչիս ա ըսիլիս.- Թաջրը ապրած կենա, իս խամ տղայմ: Ինձ հետե շատ դիժեր կինի երգիրը ղեկավարիլ: Դու ինձ հետե սուրոնեթուն արածս, եք ալլա արի, դու դըռ երգիրեն թաջրնան թաջրը, նուքարնետ դըռնն վազիր-նազիրնե: Մի տեղ ղեկավարնք երգիրը:

Թաջրը տսնալիս ա, թազա թաքավերը սորին բեն ա ըսիս: Լսիլիս ա:

Դե թողնք մըծ ախպերը իրան թաքավերութունը անի: Մընք ալ գիննք տըսննննք, կուծի ախպերը հինչ ա դըռալ:

Կուծի ախպերը, մըծ ախպուրը կուրցրելին ետը քաղաքը շատ ա շոռ եկալ, ախուպորը կրեցա չի ճարիլ: Մի օր ալ ջհհիլիս ա մի հիլիվր մարթու:

Հիլիվիրը տղեն նհետ պատառ դեսեն-դենեն հարցուփորձ ա ըրիս, տսնալիս ա անտոն, անտեր տղա յա, տընհսի ա իրան տոնը պհիլիս:

Մի քշանոց մի քող ա տալիս տղեն, նշանց տալիս քաղաքեն դիմացի սարեն դոշեն ծմակը, ըսիլիս.- Տղա ջան, էն ծմակը լիգը չոր փադ ա: Գինի օրական մի շելակ կուտուրի բեր. քաղաքեն մեյդանմը փադ օնուղ շատ ա ինհս, ծախնք, մըզ հետե ապրնք, տըսննք դեչանը գյլխնես հինչ ա գյոլիս:

Մի օր ալ տղան փադը ծխիս ա գյոլիս տոն, ջուբհն նաևե մի ծըտա ձվու միչնհի վըսկե ձու դուս ունհս, տալիս հիլիվերեն: Հիլիվրը զարմացած հըրցրիս ա.- Պա էս ձուն ըշտեղե՞ յա:

Տղան ըսիս ա.- Փադ ըրիս տեղը մի քոլու երե մի կուճի նաղշուտ ծըտա բունմ ճարալ: Ջուն նա լալ բունումը:

էտ ծըտը տասն օրը մհետ իտի մի վըսկե ձու լալ ըծիլիս: Տղան ալ բհրիս, տալիս լալ հիլիվերեն:

Մի տասը հատ որ ձուն թուփ ա եկալ, հիլիվրը տարալ ա ծախալ, փող արալ: Իրան իլածը մի քյոհնա կիսաքանդ տոն լալ: Բերալ ա էրկու հարկանի մի մըծ տոն սարքալ՝ տակեն հարկմը դուքան ա բեցալ: Երե հարկմն ալ մի օթախ առանձհին սարքալ ա, տղեն ասալ.- Ըսուր ետը ալ գհնս վեչ փադու: Կգհնս ծըտեն բունը սալամաթ կբերս կդհիս առանձհին սարքած ութախմը: Ծըտը կգյու տեղն ալ ձուն կածհ: Դու ալ ամեն օր կգհնս քաղաքմը շոռ կգյոս, տըս կարս ախպուրտ ճարհ: Համ ալ էժան, սորուն հինչ ապրանք որ կճարըս, կօնս, կբերս իս առուտոր կարմ:

Հիլիվերեն տանը ըռշկհն, քուչեն էն թիրափմը մի հարուստ թաջր լալ ըպրիլիս: Թաջրը մնալիս ա զարմացած, թա էս օրեն հացեն կարոտ հիլիվերեն հինչ ա պդահալ, որ կարճ վախտում եկալ ա իստի ունեցվածքի տար դըռալ:

Թաջրեն մի աղչհգ լալ, հիլիվերեն տանը կնալիս տղեն թայդաշ:

Թաջրը ըղչհգյանը սվրցրիս ա, թա.- Գհնի էն տղեն նհետ ծանոթացի: Կանչհ բեր մըր տոն: Մոտհկ ուրան արհ: Ուտացրի, խմցրի, իրաց հարստանալաև գաղտնհքը գհտաց:

Թաջրեն աղչհգը հորը ասածնեն կադարիս ա: Մի օր ալ, որ հիլիվրը տան չհ ինհս, տղեն կնչհս ա իրաց տոն, շատ գհնի ա խմցրիլիս, հարստանելու գաղտնհքը գհդալիս ա, որ ծըտեն ածած վըսկե ձուվանհինն: Ծըտեն բունն ալ նայե իրաց տանը, երե հարկեն ութախմը:

Աղչհգը տղեն ջուբեն նաևե տանը բհլալհն դուս ա ունհս: Գհնհս դուրքը բհնալիս, ծըտեն բունը բհրհս դհրհս իրաց տանը, գհնհս, օմեն հինչ հորը

խաբար տալիս: Հարը գյուլիս ա տսնալիս՝ տղան նայե իրաց տան հարփած, վեր ինգյած:

Թաջրը կզնվիս ա, տղեն անջոկը փռնիս, տանը նանե դուս ըրիս, ըսիս ա, որ ալ իրան տոնը մհետ ալ վընը վեչ դիրի: Վերջին գյուլը ինի: Մհետ ալ որ տըսնի, գյուլոխը բուք կտա:

Տղան գինիս ա տոն: Հուշը գյուլիս ա տեղը: Յիշիս ա տսնալիս ծըտեն բոնը կավչնի: Գիդալիս ա, որ թաջրեն նա ըղչգանը արած բեննրնն ինիս:

Հիլիվերեն ոչ մի բեն ըսիս չի:

Էքսի քշանոց հիլիվերեն ըսիս ա.- Իս էս քաղաքը թամոզ շոռմ եկալ: Իմ ախպեր էս քաղաքմը չի: Դու քու դուքանավը յոլա գինի, քի հետե ապրի: Իս ալ գինմ մի քանե քաղաք շոռ գյոմ, բալքա ախպուրս ճարմ, յա ծնողնուս նանե մի խաբար գիդամ:

Հիլիվերը համաձայնվմ ա: Տղեն պատառ փող ա տալիս, օրհնիլիս, հղե դիրիս:

Տղան գինիս ա շատ շեն, քաղաքնե ա շոռ գյոլիս, ոչ ախպուրն ա ճրիս, ոչ ալ ծնողներեն նանե ա մի խաբար գիդալիս:

Մի օր ալ մի հղոք գինիս տեղը անջուկեն մի բեցուր ղլմղալ ա հսնիլիս: Յիշիս ա տըսնալիս՝ մի թումբա երե իրք նահանգ մարթ նայեն վըտը. տղեն տսնալիսն՝ ձեռուքն ըրիս, կընչիս իրաց կոշտը: Տղան վըխվըխիլավ գինիս ա, ռիսկի եկած խուսիլիս:

Հրցրիս ա, թա.- Ձեր ղլմղալը հինչո՞ւ ետե ա:

Նհանգներից մըծն ըսիս ա.- Մընք իրք ախպերնք: Մըզ իրք կտոր ապրանք օննք: Բարիշիս չընք, որ կես արնք: Դու հինչ ասս՝ մընք քի կլսնք: էն ինի, որ մընք կռվնք վեչ:

Ըսիս ա մըծ նհանգը, բիրիս իրք հատ ապրանք նշանց տալիս.- էս մինը մի սուփրա յա, հիբ որ սըրտտ հինչ ուտելեղեն օզի, անմը տաս, սուփրան կբենվի, օզած ուտելեղենը մաչեն: Երկրորդն ալ մի կուճի նախշոտ-բրոշոտ խալի ա: Եթե նստս, ըշտեղ ասս կտանի, օզած տեղտ վեր դինի: Վերջինն ալ մի արախչի ա, որ դիրս գյլխետ, ոչ մի մարթու աշկե ըրվա չըս: Դե կես արի մըզ բարշցրի:

Տղան պատառ խիյալ ա ըրիս, ըսիլիս.- էն դիմացի ծուռը գլխեն սարը տսնալիս եք: Իրք ախպրներավ գենցեք էն սարեն նհետ ծուռ բիրիլիա: Ըռշկին եկողեն՝ սուփրան կտամ: Երկրորդ եկողեն՝ խալին կտամ, վերջին եկողին՝ արախչին կտամ:

- Համաձայննք,- ասիսն նահանգնեն, քքիս հփռնոմը, հղե հնգիս գինիլիս:

Նասհանգնեն որ պատառ հռնալիսն, նստիս ա խալուն երե, սուփրան կպիս մաշկը, արախչին դիրիս գյլխեն, թռիս, գինիս իրան խափած, խայտառակ արած հրըվան թաջերն դրքըն վեր գյոլիս: Յիշիս, որ աղչիգը դուս գյո:

Տղան մին ալ էն ա տսնալիս, թաջրեն աղչիգը կոժն օսսեն գյոլիս ա, գինի ախպիրը ջուր բերի: Ինքը արախչին դիրիս ա գյլխեն, խալին փռիս դրբզեն ըռչկին, մի էրկու վըսկե ալ դիրիս խալուն երե:

Աղչիգը գյոլիս ա տսնալիս, մնալիս զարմացած: Կռնալիս ա, որ վըսկեեն եր օնի, տղան վըտ ա կնալիս խալոն երե, ըսիսլիս. մըզ տար մի միալ, որ չորք թարափը ծով ինի:

Աղչիգը մին ալ էն ա տսնալիս, որ մանակ նայե մի տեղ, որ չորք թարափը ծով ա:

Տղան էն ղոլեն նհետ խաղ ըսիլավ գյոլիս ա: Աղչիգը որ տղեն տըսնալիս ա, ջանը դող ա ինգիս:

Տղան յանի բենից խաբեր չի, մուտանոլիս ա, ըսիս.- Այ ախչի, դու հո՞ր, տեղարս հո՞ր, քի հի՞նչ բեն օնըս տեղս, հինչո՞ւ հետե յըս էկած:

Ախչիգն ալ ըսիս ա, որ.- Իս ոչ մի բենից խաբար չըմ: Գինիսմ լալ ախպիրը ջուր բիրիլա, մին ալ էնմ տըսալ, որ նայեմ տըղս վըտը:

Տղան ըսիս ա.- Դե ասի տըսնմ դու ինծանե հի՞նչ փիսեթոնս լալ տըսած, որ ինծ խափալս, խմցրալ, անպատվալ, ծըտես բունն ալ գյողացալ, տարալ:

Աղչիգ ասալ ա, որ.- էտ օմենը իմ հոր ըրծնեն լալ: Իրան մեխքը չօնի:

Տղան նա աղչիգը մի վախտ մանցալն տեղը, իրաց հետե կերալ, խմալ քեփ արալ:

Դե, կնեգը, որ կա, Եվայե ցեղեն նանե ա, լուգին նա սըրտը իրար նհետ խոսի չըն: Մի օր վըտ ա կնալիս ըսիս, թա.- Մընք հալալ մարթ նա կնեգնք, պետք ա ինծանե գաղտնի բեն վեչ պահս: Ասի, գիդամ, թա դու հինչո՞տս ինծ բերալ տեղս, համ ալ էսքան հի՞նչ հաշիվավ, ըշտեղե նանե յընք մընք ուտիս:

Տղան համոզված ինհլավ, որ աղչիգը իրան ալ վնաս չի տա, բիրիս ա խալին նա սուփրան նշանց տալիս՝ գաղտնիքնեն ըսիլիս:

Մի քանի օր անցակնալիս, ախչիգը ալլա տղեն սորին գինի ա խմցրիլիս շատ: Տղան հարփիս ա: Մին ալ աշկրը բինալիս ա, տսնալիս ա ախչիգը կավչնի: Շոռ ա գյոլիս, ճրիս չի: Գինիս ա սուփրան բենի՝ մի կուտր հաց եր օնի, տըսնալիս ա սուփրան տեղը չի: Գինիս ա դիբի խալին, տըս-

նալիս ա խալին ալ կավչնի: Գիդալիս ա, որ ալլա ախչիգը իրան խափած ա: Սուփրան նա խալին եր ա կալած փախած, գենցած:

Դե տղղըտիրաք, որ ամեն օր հացն լալ ուտիլիս, հացեն նանե մանցած կուտրտանքը նի յըն լալ ըծիս ծովը: Տղան, որ շատ ա քուղծծնալիս, ինքը իրան ըսիս ա. « Գինմ տըսնմ ծովեն ղրաղավը հացա կուտր մանցած կինի, ճարմ օտըմ»:

Գինիս ա ծովեն կողքին շոռ գյուլիս, բեն չի ճրիլիս: Մին ալ էն ա տսնալիս, որ մի մըծ ծուկնը եկալ ա, ծովեն կողքեն վըտ կացալ, մարթու նման խոսեցալ, հրցրալ ա տղեն նանե, թա.- Խե՞ մանակս, հինչո՞ւ հետե յըս դիլխոր:

Տղան գյլխեն եկած փորձանքը ծուկնեն նաղլ ա ըրիլիս:

Ծուկնը ըսիս ա.- Դու իմ ծուկներեն շատ լավեթոնս արած: Ամեն օր հացս տված, պահած: Քու արած լավութունեն հետե, եկ եռնի մաշկես քի տանմ դուս բերմ ցամաքը:

Ծուկնը տղեն տնիս ա, ցամաքմնը վեր դիրիլիս, այտս լուզվեն տակեն նանե մի վըսկե բիլալի՝ մի թարափը սոր, պիզու նման, մի թարափն ալ տափակ:

Ծուկնը ըսիս ա.- էս վըսկե բիլալին ինձանե հիշատակ պահի: Բիլալին իրան գաղտնիք օնի: Դիզ թիրափավը հինչ մարթ ա նի գյոս՝ հինչ-հինչ հեյվան օզըս կդըռնի: Տափակ թիրափավը նի գյոս՝ կդըռնի ալլա համան մարթը:

Տղան ծուկնեն նանե շատ շնորհակալութուն ա հյտնիլիս, նի ինգիս մի հղե գինիլիս: Մռանանք վեչ ասնի, որ տղան ըղչիգանը արախչուն գաղտնիքեն տեղեն մասին ոչ մի բեն ասած չի ինիս: Արախչին մանցած ա ինիս: Վըսկի բիլալին մի ջուբոմը՝ արախչին մի ջուբումը, տղան գինիս ա դոս գյուլիս մի մըծ քաղաք, տըսնալիս՝ քղաքեն մի ճոնդմը մըծ շինութունն սրքիլիս: Հարուր-հազարավր մարթիք էշավ, ձիավ քար, փադվզանքն կրիլիս շինութունեն հետե: Շինութունը սարքուղնոն նանե հարց-փորձ ա ըրիս, թա էսքան մըծ հի՞նչ շինութոնն սըրքիլիս, հո՞ր հետե ա:

Ըսիսն, որ երգիրեն թաքավերը փոխված ա: Մի ջահիլ տղա յա թաքավեր դըռած: Քյոհնա թաքավերեն պալատներեն հավան չի: Իրան հետե իրան օզածը գյորա պալատ ա սրքիս:

Տղան էտ քաղաքմը շատ ա հարցուփորձ ըրիս, տեղես-տեղեն խաբեր գիդալիս: Գյուլիս ա էն մտքեն, որ կա, չկա, էտ նոր ջահիլ թաքավերը հաստատ իրան ախպերն ա իննական:

Եր ա կնալիս, քքիս հոփռմը, գինիս հսնիլիս թաջրեն կնալիս քաղաքը: Արախչին դիրիս ա գյլխեն, որ մարթու աշկե ըրվա վեչ: Գինիս ա առաչ, տսնալիս իրան պահող հիլիվիրը նայե սաղ: Դուքանմը նստած իրան հետե առուտոր ա ըրիլիս: Ալլա գինիս ա թաջրեն դրբզին ըռաշկեն նստիլիս: Տսնալիս ա՝ ըհը, էն ա աղչիգը կոժը օսսեն դիրած գինիս ա ջիրու:

Տղան մուտինալիս ա վըսկե բիլոլուն պիզ թիրափավը ըղչիգյանը կողքեն պիզ տալիս՝ ըսիլիս.- Չի դըռ:

Ախչիգը դըռնալիս ա մի նախշուտ ձի:

Տղան եր ա ինիս ձիանը, քշիս, գինիս հսնիլիս թազա թաքավերեն քաղաքը: Ինքն ալ ըսկսիս ա ձին առանց փալանի քար բեռնիլ, պալատեն հետե սաղ օրը քար ա կրիս:

Թազա թաքավերը իրան երգիրմը թազա ադաթ ա ինիս դիրած: Իրան պալատեն ըռշկին մի մըծ զանգ ա ինիս կախ արած: Հուր վեր գենգյատ ա ինիս, գինիս ա զանգը տալիս, թաքավերեն վազիրը գինիս ա զանգը թխողուն գանգյատը լսիս, պադասխանը տալիս:

Տղան ձիանը որ շատ ա քյոռուղ ըրիս, ծանդր բեռանը տակեն մաշկը պուլուկվիս ա, յարա դըռնալիս: Գինիս ա զանգը թխիլիս:

Թաքավերեն վազիրը գինիս ա տըսնալիս, զանգը թխողը մի ձի ա: Մնալիս ա զարմացած: Չիանը հալը տսնալիս ա, կանչիլ ա տալիս ձիատըռնը, հրցրիս, թա.- Չին խե յա իտի քյոռռող տալիս, որ ձի տեղավը եկած ա գենգյատ ըրիլիս:

Տղան ըսիս ա, որ.- Քյասիբ մարթմ, օրվա իք կալած փողս անջուղ հացու փող ա դըռնալիս: Կրիս չըմ մի փալան օնիմ ձիանս հետե:

Վազիրը բիրիս ա փող ա տալիս, ըսիս.- Չին մեխկ ա, տար սորին պահի:

Տղան ալլա իրան ասածն ա ըրիս:

էտ բենը իրք հետ կրկնվիս ա:

Վազիրեն ճարը կտրած գինիս ա թաքավերեն խաբեր տալիս: Թաքավերը հոքմ ա տալիս, որ.- Չիանը չարչարելու հետե, ձիատըռնը բերեք քաղաքեն մեյդանմը կախ տվեցեք:

Դե սաղ քաղաքը սաս ա ինգիս, որ մի մարթ ձիանը տանջիլու հետե թաքավերը հրաման ա տված, որ կախ տան: Քաղաքեն օմեն ժողովուրթը հվքվիս, գյուլիսն, որ թիմիշա արն:

Կախաղանեն հետե, օմեն հինչ հզրալն պրծալ, տղեն բերալն վընը արալ, ասալ.- Դե քի հի՞նչ խոսք օնըս ըսլիու, ասի, որ կախ տանք:

Տղան ասալ ա.- Ինձ էրկու խոսք օնըմ ըսիլու, էն ալ թաքավերեն պետք ա ասըմ: Թա թուլ կտա՝ գինըմ կոշտը, ասըմ: Թա թուլ չի տա, օրեշ բեն չօնմ ըսիլու: Թաքավերեն հոքմն ա՝ կախ տվեցեք:

Թաքավերը ըսիս ա.- Թողեք գյո տըսնըմ հի՞նչ ա ըսիս:

Տղան մոտոնալիս ա թաքավերեն, ըսիս.- Թաքավերն ապրած կենա, առաջինը էս հեյվանը ծի չի, աղչիգ ա: Առաչ ինքն ա ինձ տանջած, չրչարած: Միեգ ալ իսմ տնջիս, չրչրիս, տեղը հանմ:

Տղան, որ ըստի ա ըսիս, թաքավերը, հվաքված ժողովուրթը մնալիսն քար կտրած:

Տղան մոտոնալիս ա ծիանը, վըսկե բիլալուն տափակ թիրափավը կողքեն գյոլիս, ըսիս՝ աղչիգ դըռ: Ջին դըռնալիս ա աղչիգ, ըսիս, որ տղան դուզ ա ըսիլիս:

- Առաջին մեղքը ինմ ա: Տղեն իրավունք օնի ինձ տնջիլու:

Տղան ըղչիգանը ըսիս ա.- Լա էտքանն ալ բոլ ա: Մանցածը բղշիսմ թաքավերեն նա էս հվաքված ժողովըրթեն: Թողի գինի հորը տոնը:

Տղան ետ ա դըռնալիս թաքավերեն ըսիլիս.- Թաքավերը ալլա ապրած կենա, ղորթ ա, իս ջահիլմ. համա դե գյուլոխս շատ փորձանք ա եկած, շատ բեն իմ տըսած: Համա դե լսած ալ կավիչնմ, որ հալալ ախպերը ախպուրը կախաղան հանի:

Տղան որ իստի խոսիս ա, ալլա թաքավերը հվաքված ժողովուրթը նորից տղեն խոսքեն երե քարն կտրիս:

Տղան ըսկսիս ա կծեգը քանդիլը, ըսիս ա.- Թաքավերութունըտ հաստադ մնա, դու մի մդդուսու թոռնս, չուբանու տղա: Մի ղոչա գյուլոխ ուտիլու հետե, ախպորտ նհետ մահապատիժի եք ենթարկված, բերված մի ծմակմ կուրցրած: Ախպուրտ մի քաղաքմ կուրցրածս, եկած թաքավեր դըռած: Ախպորտ ալ կախաղան ըրիս:

Տղան, որ էսքանը նաղլ ա ըրիս, թաքավերը թախտեն նաեե լեց ինիլավ եր ա կնալիս, ըրտասոնքը ըշկերեն գյոլիս ախպորը խըստիս, պչիլիս:

Տղեն արած նաղլեն երե լեցն ինիս ամբողջ ժողովուրթը:

Թաքավերը ախպուրը ըսիս ա.- Դու որ եկալս ինձ ճարալ, միեգ ալ պետք ա գինս ճարս մըր կորցրած ծնողնան, եր օնս, բերս տեղս:

Տղան գինիս ա շոռ գյոլիս, ծնողնան ճրիլիս: Տսնալիս ա քյասիբացածն, դըռած օրվա հացա կարոտ: Մղդուսին մըռած ա ինիս: Ծնողներեն բիրիս ա էն հիլիվերեն կոշտը, որ իրան տար ա ինիս կացած, պահած: Օմնուց հվիքիս ա, բիրիս թաքավեր ախպուրը կոշտը:

էն թաջրին ալ, որ ախպուրը թեքունք լալ դըռած, թաքավեր նստցրած, ընդոր ալ էրկու հասած, փիսած աղչիգ ա ինիս: Էրկու ախպեր, էրկու քվոր նհետ փսկվիսն: Օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիս, ուտիս, խմիս, ուլխանանալիս:

Երգինքից հուրդավը իրք հատ անմհական խնձոր ա վեր ինգիս: Մինը տալիսն նաղլը կպողուն, մինը՝ նաղլը ըսողան, մինն ալ դիլիմ-դիլիմն ըրիս բոժինիս նաղլը քաղցր լսողնուն:

6 (6). ՈՒԽԱՅԸ

Իլալ ա, իլա չի, շինացե մի մարթ նա մի կնեգն ինիլիս: Իտունց իլածը մի տղա ա ինիս: Մի օր էտ մարթը կնգանը նհետ նստիս ա մասլահաթ ըրիս, որ տղեն տանի քաղաք մի մարթու քուշտը սանադի տա, մի բեն սըվըրի, իրան հետե մարթ դըռնի:

Կնեգը պատառ չեմ, չում ա ըրիս, լեց ա ինիս, վերջը համաձայնվամ ա:

Մի քշանաց էտ մարթը մի քանե հաց դիրիս ա հաբգյոմը, օսուքը ըրիս, տղեն կոռնը փռնիս, Աստուծեն ամնը տալիս, հղե ինգիս:

Շատն գինիս, թա խրեգ՝ Աստուծ գիդա, հսնիսն մի ախպիրու: Հար նա տղա նստիսն ըխպիրին կոխկեն, հացն ուտիլիս: Հարը ծըրվիլիս ա: Շենեն ղայդավը երի ա ինգիս սորին-սորին ըխպիրին մի կոշտ ջուր խմիս, քուշտնալիս, այտս ըսիլիս՝ ուխա՜յ...

Էտ մարթը մին ալ ա տսնալիս մի հիլիվր մարթ, սիպտակ մրքավր, ըռշկին վեր ա կացալ, ասալ.- Ուխայը իս ըմ: Ասի գիդամ, ինձ հի՞նչ օնըս ըսիլու:

Ծարավը կոտրած մարթը մեղավոր մարթու նման խղճացած ասալ ա.- Պարիկամս, ախըր իս քի չըմ կանչալ: Մըր շինացուց հետե ադաթ ա: Հու ծարավ ա ինիս, ջուր ա խմիս, ծարավը կուտրիլիս, ըսիս ա «ուխա՜յ», յանի սարին ջուրը տոր ա եկալ:

- Լավ, հվատամմ: Դե, ասի գիդամ, դու հո՞ւվս, էտ խոխան եր կալած ըշտե՞նս գինիս:

Շինացեն իրան նպատակը ըսիս ա:

- Դե լա սորին ա դըռալ,- ըսիս ա Ուխայը,- Իս լա իտի մի տղա խոխու պետք օնըմ: Եք տղատ տոր ինձ, տանմ կոշտս շագիրդ պահմ: Համ ուսում կսվըրցրիմ, համ ալ հաքիմեթոն: Հիբ սըրտդ խոխետ կօզի, կգյոս ալլա էս ըխպիրին ջուր կխմըս, իմ անմը կտաս: Իս համան սհաթեն քու խոխատ կբերմ քի կտամ:

Շինացեն համաձայնվմ ա Ուխայեն դիրած պայմանեն, տղեն տալիս ա Ուխայեն: Ինքը ետ դռնալիս, գինիս:

Ուխայը իրան խոսքեն տար ա կնալիս: Շինացուն տղեն տնիս ա համ ուսում ա սվըրցրիս, համ ալ հաքիմեթուն: Ուխայեն մի առանձին օթախ ա հնիս, գրքերավ լիգը: Շինացուն տղան քիշերը գիրքերեն օթախմն ա քոն հնիս: Պատառ որ գիրըճանեչ ա դըռնալիս, ըսկսիս ա քիշերները ծրեգը վառիլը, նստիս էտ գիրքերը կարթիլը՝ Ուխայեն նանե թաքուն:

Դու մա ասիլ, Ուխայը շատ մըծ հաքիմ ա, ըշխարքեն տակը, գյուլոխը գիդացող: Օմեն օր, սաղ միալմը, հու լալ գիդալիս ըշխարքեն որ ծոնդից՝ հինչ թահրը հիվանդ լալ հնիս, բիրիսն լալ Ուխայեն դուրքը:

Ուխայը օմեն հիվանդնեն հըրթավ ընթոնիս լալ: Հինչքան ծանդր հիվանդ լալ հնիս, պիժիսկիս լալ, հղե դիրիս: Շինացուն տղան ալ իրան օքնմ լալ, համալ հաքիմեթոնը սվրիս լալ:

Անց ա կնալիս մի վախտ: Շինացոն կնեգը մարթեն հանգիստ չի տալիս: Լեց ա հնիս, շիվան ըրիս, թա՝ դու խոխես տարալս կորցրալ, եկալ, մհետ գինի տըս հինչ ա դըռալ:

Շինացեն եր ա կնալիս ալլա մի էրկու հաց դիրիս հաբգյոմը, գիծիս օսսոքը, գինիս էն ըխպիրին կողքեն նստիս, հաց ուտիս, եր կնալիս ջուր խմիս, ըսիս՝ ուխա՜յ:

Ուխայը գյուլիս ա կողքեն վըտ կնալիս, հրցրիլիս.- Հի՞նչս ուզիլիս:

- Պարիկամս ապրած կենա,- ըսիս ա շինացեն,- կնեգս շատ անհանգիստ ա տղեն հետե: Խնթրիսմ բերս, տանմ մարը մհետ տըսնի: Թա հարկավեր կինի, ալլա կբերմ քի կտամ:

- Տղան բերածմ տար: Հիբ կօզս, ալլա բեր: Հալա ուսումը թմամած չի,- ըսիս ա Ուխայը, անհետանմ:

Շինացեն տղեն եր ա ունիս, հղե հնգիս: Ամռն ա հնիս, օրը տաք:

Գյուլիսն հսնիս մի մըծ ծառու: Նըստիսն պատառ դինջանան: Շինացեն քունավ ա ընցնիս: Եր ա կնալիս տսնալիս մի աչռնը, հի՜նչ աչռնը, օտըս վեչ, խմիս վեչ, վըտ կանաս թիմաշա արըս: Ուզիս ա եր կանա փռնի: Աչռնը փխչիս ա: Կնչիս ա, որ տղան գյո քյոմագ արի, փռնն: Տղան սաս չի ըրիս: Աչռնը կուրչիս ա: Ինքն ալ հնջհնմիշ դըռած, քռնքած ետ ա դըռնալիս, գյուլիս տըսնալիս՝ տղան նայե ծառեն տակեն քոն: Տղեն երե նղնալիս ա, թա.- Խե՞ յս քունավ անցալ: Եր լալ կանալ քյոմագ արիլ, աչռնը փռնիլն լալ:

- Դե ղիսմաթ չի լալ, կրեցալ չս փռնիլ,- ըսիս ա տղան:

Երն կնալիս գինիս:

Գինիսն-գինիս, ալլա ինջինմիշն ինիս: Հսնիսն մի ծռոտ, կնչկոտ տեղ: Նստիսն պատառ դինջանան: Շինացեն ալլա քունավ ա ընցնիս: Եր ա կնալիս, իրան ըշկերեն տսածեն հվտալիս չի: Դես-դեն յիշիս ա, տսնալիս ա շրջապատմ մարթ չկա: Համա մի ծի, հի՞նչ ծի, հանց ա կասս հրեղեն ինի: Նայե կանեչնոն մաչեն ըրծիլիս:

Եր ա կնալիս, որ փռնի: Չին փխչիս ա: Հետեն հարչան գինիս ա, կրիս չի փռնի: Չին գինիս ա կուրչիս: Ետ ա դռնալիս, գյոլիս տսնալիս տղան նայե ծառեն տակեն նստած: Ալլա գյլխեն եկածը նաղլ ա ըրիս, տղեն երե նղնալիս, թա՝ իրան շատ ա կանչալ, որ քյոմագ արի, ծին փռնի: Հրեղեն ծի լալ: Տանիլն լալ ծախի, իրաց հետե ապրուստ ըստեղծիլ:

- Սաստ լսալ չըմ, ա հար: Դե որ ղիսմաթ լալ ինի, դու մենակ ալս լալ փըռնի: Եր կաց, մըր հղեն գիննք:

Շինացեն ամեն օր իրան տղուն հանգիստ տալիս չի: Լա խոսիս ա, թա.- Դու քունավս անցալ, եր չըս կացալ էն հրեղեն աչըռնը, ծին փռնինք: Միեգ տանիլ լալ ծախիլ, մըզ հետե ապրուստ ըստեղծիլ, խըղճ մարթը գիդալիս չի լալ, որ իրան տղան ինդի մին հրաշք գիդութուն ա սվըրած, որ էն հրեղեն աչըռնը, ծին ոչ թա երգինքիցն լալ գյոլիս, լա իրան տղան լալ:

Մի ըրակու տղան հորը ըսիս ա.- Ա հար, էքուց մըր միալեն բազարեն օրն ա: Քշանաց շուտավ նի կմտըս մըր գյոմը: Կտըսնս քու էն տըսած հրեղեն աչըռնը նայե գյումոմը կապած: Եր կօնըս, կտանըս բզարմը կծախս: Համա դե, ըչռանը վիզին կապը ծախս վեչ: Ետ կարս, կբերս տոն: Հինչքան փող կտան, տալ չըս: Կասս՝ մըր պապական նիշանգյահս, կարի չըմ տալ: Հանկարծ փողու խափնվս, ծախս: Գիդաց, դու ալ ինծ գյանքմ կարի չըս տըսնս:

Շինացեն աչըռնը տնիս ա բազար: Բազար եկած միալեն ժողովուրթը համարյա էտ օրը առուտոր ըրիս չի: Օմեն հվիքիսն գյոլիս էտ ըչըռանը թիմիշա ըրիս: Աչըռնը ունիլա հետե մուշտարի շատ ա դուս գյոլիս: Ասընք, թա էտ վախտը մի ըչռանը գինը հենգ ղռան լալ: էտ ըչռանը հենգ թիման արժեքն կտրիլիս: Մի հարուստ մարթ փողը տալիս ա, ուզիս ա աչըռնը տանի, շինացեն կապը ետ ա ըրիս, տալիս չի, թա.- էս իմ պապական նիշանգյահն ա:

- Տալիս չըս, տալ մա, թող քի մնա:

Բզարմը մի կապ առնիս ա, ըչռանը վեզը կպիս, տնիլիս: Շինացեն ալ օրախ-օրախ գյոլիս ա տոն:

Մի քանե օր անց ա կնալիս, տղան մի ըրակու ալլա հորն ըսիս ա.- Ա հար, էքուց միալեն բզարեն օրն ա: Քշանաց շուդավ եր կկանաս, քու տը-

սած հրեղեն ձին նա կինի գյոմումը կապած: Կտանս բազար, կծախս: Մտետ պահե. ջլավը ծախըս վեչ: Ալլա կբերս տոն: Բեն ա, հինչքան որ ձիանը կտան, էնքան ալ ջլավեն տալու ինն: Տաս վեչ:

Էքսի օրը շինացեն ձին տնիս ա բազար: Ալլա բզարեն առըտորը վըտ ա կնալիս: Սաղ ժողովուրքը հվքվիս ա, հրեղեն ձիանը թիմիշա ըրիլիս: Էտ օրը թա բզարմը ամենասորին ձիյանը մազանդան հենգ թիման ա ինիս, հրեղեն ձին դիյմաք ըտտու հիցուն թիման: Ոչ մի ձի օնուղ ռիսկ չի ըրիս մուտանա ձին օնի:

Մին ալ հվաքված ժողովուրքը դես-դեն ըրիլավ, մի հիլիվր մարթ, չալիգը ձեռքեն գյուլիս ա մուտուննալիս, ձիանը վարավուրդ ըրիս: Փողեն քսակը դոս ունիս, հիցուն թիման հմբրիլիս, տալիս շինացոն, ձիանը ջլավը փռնիլիս:

- Ջլավը տալ չըմ,- ըսիս ա շինացեն,- իմ պապական նիշանգյահ ա:

- Հո՞ւվ ա տըսած, այ ժողովուրթ, որ ձին ծախն առանց ջլավի,- ծծղոլավ ըսիս ա ձի օնուղը:

Վերջը խոսքը տեղն ա հսնիլիս, որ ձի օնուղն ըսիս ա.- Հիցուն թիման ալ ջլավեն կտամ, որ առանց ջլավի ձին տանի չըմ:

Դե ժողովուրթն, մի քանենը ձի ունողուն ըսիսն.- Այ տնաշեն, ջլավեն մինը մի ղռան, նայե բազարը լիգը: Էտ հի՞նչ խըլք ա, որ հիցուն թիման տալիսս մի ջլավա:

Մի քանեսն ալ զարմացած ձի ծախողուն ըսիսն.- Այ տնաշեն, էտ ձի օնուղը խըլքը թռցրած ա, խե, հիցուն թիման կտա՞ն մի ջլավո: Դու ալ խըլքտ թռցրած չըս, տոր. հիցուն թիմանը մի տարվա ապրուստ ա:

Վերջը շինացուն գյլխահանն ըրիս, ջլավը ծխիս ա: Հիլիվրը ձիանը ջլավը, որ փռնիս ա տանե, ժողովուրքը տըսնալիս ա, որ ձիանը ըշկերեն նանե արտասունքը մարթու արտասունքու նման վեր ա դըռնալիս:

Ձին լեց լալ հնիլիս:

Ձին օնուղ, տանողը Ուխայն լալ:

Ուխայը տղին ա տնիս իրան տոնը: Ղալին երե կզնվիս ա, որ նման բեներ չպիտի անի: Իրան գիրքերեն տան դրքեն երե ալ փակ ա դիրիլիս, որ տղան ալ կարի վեչ գիրք կարթի:

Մի օր ալ համարյա մըռածու նման ջնազու երե դիրած մի հիվանդ մարթն բիրիս:

Ուխայը հիվանդեն տնիս ա օթախը, դուրքը փկիլիս: Տղան մնալիս ա զարմացած: Էտքան վախտ հինչքան հիվանդ ընթոնուծ լալ, միշտ իրան ալ տարած լալ նես: Համա դե հինչ բեն լալ, որ իրան թուղեցա չի: Տղան

պատառ խիյալ-խիյալ ա ըրիս: Բիցիրնալիս ա տան կտորը: Գինիս կտրեն հուրդավը թաքուն յիշիս, թա Ուխայը հինչ ա ըրիս: Տըսնալիս ա, որ հիվանդեն գյլխեն մազրը վեր ա արալ, գյլխեն ղափաղը կտրալ, եր կալալ: Հղողեն երե մի պղոճ լալ, չանգիրը նի քաղած հղողեն մաչը: Ոսխայը հինչքան չարչարվիս ա, որ պղոճը հղողեն նանե եր օնի, կրիս չի: Ջոռավ ալ որ եր օնի, հղողեն փարդան կճղվի: Ուխայը մնալիս ա մաթալ: Գիդիլիս չի հինչ արի: Տղան ալ կրիս չի դմանա: Հուրդնվեր կնչիս ա.- Ուստա, մաշան տաքացրի, ուստա, մաշան տաքացրի դիրի պղոճի մաշկեն երե:

Ուխայը մաշան տաքացրիս ա, դիրիս պղոճեն մաշկեն: Պղոճը իրանիրան չանգիրը հղողեն նանե հնիս ա, կոչ գյոլիս: Ուխայը եր ա ունիս, դիրիս ղրաղ, դեղ քսիս, ղափաղը դիրիս տեղը, կպիլիս: Հիվանդը աշկրը բինալիս ա: Ուխայը վրազ դուս ա գյոլիս: Տղան գիդալիս ա, որ ինքը թաքոն հետևած ա ուստեն գործեն, փռնլական ա, շատ խիստ պատիժ տա: Կտրեն նանե վեր ա գյոլիս փխչիլիս: Ուխայը հետեն վազ ա տալիս, որ փռնի:

Տղան տըսնալիս ա, որ Ուխայը կարուղ ա իրան փռնի, մի աղունեգ ա դըռնալիս, թռչիլիս: Ուխայն ալ մի ղըրղի ա դըռնալիս, նի ինգիս աղունեգեն հետը:

Աղունեգը տըսնալիս ա, որ ղըրղին հետնաց հսնիս ա, մի շենա իրեսավ թռիս ա ինիս, մի տան կտրե երե վեր ա գյոլիս, դըռնալիս մի չտըսնված նախշուտ խնձոր, հուրդավը նի ինգիս տոն: Դու մի ասի էտ տանը հրսանեք ա ինիլիս: Հռնքավերը մնալիս ա զարմացած, թե՝ էս մծեթոն, էսքան նախշուտ խնձորը հո՞ւվ ա բերալ հուրդավը վեր գիծալ: Դուսն գյոլիս, տանը չորք թարափը շոռ գյոլիս, ոչ մի մարթ ըրվալիս չի: Իրաք իրաց որոշմն, որ հալբաթ երգինիքից Աստվածանից ա վեր ինգյալ:

Չէ որ պդահած իտի խնձոր երգինքից վեր ա ինգիս երկար, քաղցր նսղլըր պատմելոց վերչում: Խնձորը երն ունիս տալիս հարսանը:

Ուխայը տսնալիս ա, որ աղունեգ դըռած տղան խնձոր ա դըռալ հուրդավը նի ինգյալ տոնը: Ինքն ալ մի աշուղ ա դըռնալիս, սազը օսսը գիծած գյոլիս նի մտիս տոն ըսիլիս.- Այ ժողովուրթ, տսնալիսմ, որ հրսանեքը առանց նվագի, առանց աշուղի եք ըրիլիս: Իրավունք կտաք իս ձեզ ուլխցրըմ:

- Ասօր մըր շենմը հրսանեք շատ կա: Մըզ աշուղ հասա չի: Քի լա Աստվածանիցն ղորկած մըզ ուլխցրիլու հետե: Համեցե՛ք, եկե՛ք նստեցեք, մըր հրսանեքը օրախ շարունակնք,- ըսիսն աշուղեն, տըղ տալիս սուփրեն երե:

Դե հրսանեք ա, ուտիսն, խմիս, աշուղն ալ սազը ըծիս ա, երքիս, քեփն ըրիս, ուլախանալիս: Վերչմը հռսնքեն տարը աշուղեն ըսիս ա.- Դու եկալս մըզ շատ ուլխնալիս: Դե ասի գիդամ, քի հինչ տանք, որ դու ալ մըզանե գոհ, օրախ գինս:

- Իս օմեն հինչից շնորհակալմ,- ըսիս ա աշուղը,- Իս մինչու իմ ձեր տոնը գյոլուց առաչ, ձեր հուրդավը մի խնձոր ա վեր ինգյալ: Իս էն խնձորը կօզում, քա հառհնը նղանա վեչ:

Աշուղեն էտ խոսքեն երե, հառհնը խնձորը դեմ ա ունիս աշուղեն: Աշուղը ձեռքը մկնիս ա, որ եր օնի, խնձորը մի ասղ ա դըռնալիս, տընգվիլիս հարսանը դոշեն երե: Աշուղն ալ մի երկար թիլ ա դըռնալիս, թիլվիս ասղեն, ուզիս, որ հուրդավը ասղեն դուս տանի:

Դե ասղը թիլեն նանե ծնդր ա ինիս: Թիլեն զոռ ա ըրիս, մուտցրիլիս հարսանը ձեռքեն լուս տալիս շամեն թիլը շամեն կրակից իրվիլիս ա, մոխուր դըռնալիս: Ըստուբոնավ թիլ դըռած Ուխայը մռնիլիս ա: Ասղը դռնալիս ա մի տղա՝ հարսանը կողքեն վըտ կնալիս:

Էս հրաշք բենին երե ամբողջ հռնքավերը մնալիս ա լուռ-մունջ, քար կըտրած, բենից անտեղյակ: Համա դե թիլը վառվելուց, կրակը տղեն ալ լալ վնաս տված, պատառ իրիսը վառված լալ: Տղան ջուբին նանե մի դեղ ա դուս կալալ քսալ, անցալ ա:

Տղան իտիթունով ազադվիս ա Ուխայեն նանե: Գինիս ա տրեթուն ըրիս Ուխայեն իլած-չիլածեն, ինքն ալ հաքիմ դռնալիս, հիվանդներ ընթունիս, պիժիսկիս, հղե դիրիս:

Տղեն մթկումը մի մուրազ ա ինիս, ուզիս ա մի դեղ սարքի, որ էտ դեղավը կարողանա անմահացրի: Տղան Ուխայեն իլած օմեն գիրքերը կրթիս ա: Շատ ա չարչարվիս, շատ փորձր ա ըրիս, շատ տարուց ետը, վերչը անմահական դեղը սրքիս ա:

Տղան արդեն տարիքը առած մըծ մարթ ինիս դըռած: Ուզիս ա ամենից առաչ անմահական դեղը իրան երե փորձի, ինքը խմի դեղեն օժը տըսնի: Դեղը նի ա ըծիս մի ըստաքան, լա ուզիս ա խմի, մին ալ էն ա տսնալիս աշկեն ըռշկին վըտ ա կնալիս մահվան հրիշտրակը, հրցրիս.- Հի՞նչս ըրիլիս:

- Անմահության դեղմ սարքած: Փորձի հետե ուզիսմ խմըմ,- ըսիս ա հաքիմը:

- Պա իս ըշտեղմ, որ թողմ դու անմահանաս: Ըշխարքմ անմահութուն չկա: Հինչ որ ծնվիս ա, պետք ա մահանա, որ նորը ծնվի: Իտի ա դիրված ըշխարքեն օրենքը:

Թեվավ թխիս ա, դեղը վեր ըծիս, թուղիս չի, որ հաքիմը խմի, համ ալ ըսիլիս.- Քուվ ալ վախտտ թմամած ա, հոքիտ տոր, գինմ:

Հաքիմը խոսքը չի ծրիս, որ ասի: Նստիս ա, սուս-փուս ենթարկվում աշխարհքեն դիրած, մարթեն ճակատեն գիրած օրենքեն:

7 (7). ՆԱԽՐՉՈՒՆ ԱՂՉԻԳԸ

Իլալ ա, իլա չի, մի թաքավեր լալ: էտ թաքավերեն շատ վըրսու սեր լալ:

Օմեն գիրագի իրան նագիր-վազիրներեն նհետ գինիս լալ վըրսի:

Մի օր, հունչուր ա դըռանլիս, գյուլիսն մի քյասիբ նախրչու տան քիշերը ղոնաղ ինգիլիս: Նախրչուն մի աղչիգ ա ինիս: էտ աղչիգը մանակ տեղավը թաքավերեն ինդի ղունլուղ ա ըրիս, որ ումնաց բերանը բեց ա մնալիս:

Թաքավերը որ գինիս ա տոն, կնչիս ա իրան գյլխավր նագիրեն ըսիս.- էն նախրչուն ըղչգյան նանե շատ շնորքավ մարթ դուս կգյո: Գինի նշան դիրի իմ տղես հետե:

Նագիրը մըծ թադարիքավ գինիս ա նախրչուն տոնը, ըղչիգանը ուզնգան:

Նախրչին մնալիս ա զարմացած, թա՝ էս հինչ խաբար ա, իմ Աստոծ հինչուր կարուղա պդահի, որ թաքավերը իրան նագիր-վազիրների ըղչգերքը թողած, գյո՝ մի շենմ նախրչուն նհետ խնամե դըռնի: Մի բեն, որ ըշխարքմը հու վեր լսի՝ կզարմանա:

Նախրչին շնորհակալութուն ա հայտնիս նագիրեն, համալ ըսիս, որ հարկավեր ա ըղչիգանն ալ տեղյակ պահիլ: Կնչիսն նախրչուն ըղչիգյանը եկած նագիրեն նպատակը ըսիլիս:

Աղչիգն ըսիս ա.- Թաքավերը գիդալիսնք թաքավեր ա: Պա տղան ալ թաքավեր չի: Իրան հինչ սանադ օնի, որ կարող ա թաքավերը մըծ մարթ ա, մըռնի, իրան ալ թաքավերեթուն չտան, կարողանա իրան սանադավը աշխադի ապրի:

Ըղչգյանը էս խոսքեն երե հորը լուզին կապ ա ինգիս: Նագիրն ալ խոսք չի ծրիս՝ պատասխան տա: Եր ա կնալիս սուս-փուս գինիս թաքավերեն կոշտը:

Թաքավերը նագիրեն նանե հրցրիս ա, թա.- Հի՞նչ խաբերս բերած:

Նագիր ծծղիս ա, թա.- Ասի՞ չըս, նախրչուն ախչիգը իստի հարց ա դիրալ ըռշկիս, ասսլ ա. «Թաքավերը մըծ մարթ ա, կըմռնի, տղեն ալ կարուղ

ա թաքավերութուն չտան: Պա իրան մի սանադ օճի՞, որ ըշխադի տոնը, խոխենքյը պադիվավ պահի»:

Թաքավերը նազիրեն ըսիս ա.- Տըսա՞լս որ ասալմ էտ ըղչիգանը նանե շնորքավ մարթ դուս կգյո:

Թաքավերը տղան սանադու վա տալիս: Գինիս ա խալի գյործիլ սվըրիլիս: Մի խալի ալ գյործիս ա նախրչուն ըղչգյանը նկարը երե նախշուտ գյործած: Այտս եր ունիս, գինիս նշանդրեք: Աղչիգը շատ հավան ա կնալիս տղեն գյործած խալուն, այտս խոսք տալիս:

Թաքավերը նախրչուն նհետ խնամե ա դըռնալիս: Բիրիս ա օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիլիս:

Մի վախտ անց ա կնալիս: Մի հրևան թաքավեր ղոշուն քյոշլղա ըրիս: Գյոլիս ա մըր ծանոթ նախրչուն խնամե թաքավերեն երե կըռըվ: Թաքավերը հիլիվերած ա ինիս: Կրիս չի ղոշունը տանի կռվի: Իրան տղեն ա ղուրկիլիս: Տղան ալ ջահիլ ա ինիս, կրիս չի հունչուր պետք ա, կռվի: Հղթվիս ա: Հակառակ թաքավերը ասիր ա տնիս: թաքավերեն տղեն խըլքը էն ա կտրիս, որ շորրը փուխիս ա, հասարակ զինվորու շորր ա գինալիս, որ գիդան վեչ ինքը թաքավերու տղա յա:

Ասիր ընգած զորքը թաքավերը տնիս ա իրան հետե թազա պալատ սրքիլու հետե փահլա բինիցիրիլիս անհախ:

Մի օր թաքավերեն տղան իրաց բինիցիրող վազիրեն ըսիս ա.- Իս սանադքարմ, չտեսնված խալի յըմ գյուրծիս: Դու ինձ միջոց տոր, խալի գյործմ, տար ծախի, թաքավերու չափ հարուստ մարթ դեռ:

Վազիրը շատ ա ուլխնալիս: Օմեն բեն սազ ա ըրիս: Թաքավերեն տղան ըսկսիս ա խալի գյործիլը: Դու մի ասի էտ թաքավերեն երգիրմը խալի գյործիլուց գաղափար չունն: Վազիրը խալիները, որ դուս ա բիրիս բազար, օմեն մնալիսն զարմացած: Չըտըսած մենծ արժեքն տալիս:

Թաքավերեն տղան մի օր ալ մի խալի բիրիս ա տալիս վազիրեն, ըսիլիս, որ. «էս խալին ղորկս հրևան թաքավերեն. խալուն ծնդրեթունը վըսկե կտա:

Վազիրը հվտալիս ա: Խալին տալիս ա էրկու նուքարու, ղուրկիս հրևան թաքավերեն: թաքավերեն հառնը խալուն վարավուրդ ա ըրիս, տըսնալիս ա խալուն երե գիրվածք կա: Կրթիս ա տսնալիս ա իրան մարթեն ձեռքեն բեննն ա: Գիրած ա, որ իս սաղմ, ասիրմ ընգած: Նայեմ փլան քաղաքմը: Եք ինձ ազադի:

Թաքավերեն հառհնը խալի բիրուղնուն ասիր ա պիհս, թուղհս չի գինն, խալին տնհս ա թաքավերեն կուշտեն գիրվածքը կրթիլհս: Թաքավերը հարսանը իրավունք ա տալհս՝ ղոշուն կապի, գինի տղեն ազադի:

Հառհնը անց ա կնալհս բենե: Կարճ ժամանակմ մըծ ղոշուն ա հվքհս: Դուշման թաքավերը բեխաբար, գինհս ա պալատեն չորք թարափը կտրհս, կուտուրիլհս: Իրաց ժողովուրթեն նաևե հինչքան ասիր ա ինհս, իրան մարթեն նհետ մի տեղ ազադհս, բիրհս:

Հիլիվր թաքավերը շատ ա ուլխնալհս իրան հարսանը խըլքեննա տղմրթութունեն երե: Բիրհս ա նորից օխտը օր, օխտը քիշեր քեփ, ուրախեթուն ըրհս, հարսանը խըլքեն թարիփը տարածիլհս երգիրավը մին:

Երգիրեն ղեկավարությունն ալ տալհս հարսանը:

8 (8). ԽՈՐԹ ՄԱՐԸ

Իլալ ա, իլա չի, մի վըրսական մարթ լալ: Էտ վըրսկանեն օխտը աղչիգ լալ: Դե Աստուծեն բենն ա: Վըրսկանեն կնեգը մռնհս ա: Վըրսականը գինհս ա մի նոր կնեգ ա բիրհս: Վըրսկանեն խասյաթ լալ, որ օրվա աշխադանքը պրծնալհս լալ, օխտը կաքավ լալ վեր գիձհս, բիրհս:

Անց ա կնալհս մի օր, հենգ օր, տասը օր, էտ կնեգը մհետ մի կուտուր կքավու մըս տալհս չի մարթեն: Վերչը մի օր վըրսականը լուզի ա գյուհս, ըսիլհս.- Ա կնեգ, օրական օխտը կաքավմ բիրհս: Մի օր մի թիքա տոր ինձ, իս ալ տըսնըմ կքավեն մսին համը հինչո՞ւր ա:

Խորթ կնեգը յաման ա ինհս: Ըղչգերանցը յուլա չի տընհս: Ամեն օր կըռվհս ա նհտնուն, թկիլհս, լեց ըրհլհս:

Վըրսականը որ կքավա մըս ա ուզհս, կնեգը սոտ տեղը լեց ինհլավ ըսհս ա.- Օխտը կաքավս բիրհս, օխտ ալ աղչիգերք օնըս, օմեն մինը մի հատ երն ունհս ուտիլհս, ըսկի թուղաս չըն, որ մի թիքա իս օտըմ, համը տըսնմ: Քի ըշտեղե՞ տամ,- ըսհս ա, լեց ինհս, իրան սըվ բախտը անիծհս:

Վըրսականը ճարը կտրած սուս ա ըրհս:

Խորթ մարը ըղչգերանցը նաևե պրծնիլու հետե, մի օր բիրհս ա էրկու պարղաճ ա թխիլհս: Մինը նալի ա ըրհս, մինը՝ աղի: Օմեն մի պարղաճը դիրհս ա մի ջոկ պարկու մաչե: Քշանաց շուդով պարկրը տնհս ա մի հըռե ծմակմ, մի տանձի ծառավ կախ տալհս, ետ դըռնալհս գյուհս տոն՝ ըղչգերանցը ըսհլհս.- Ձեր հարը գենցած ա ծմակմը մի տանձի ծառ ա ճարած: Մհեգ նայե տանձը թափ ա տալհս: Եկեք տանմ, տանձը հվքեցեք, բերեք: Ըղչիգերքը ուլխնալհսն: Երն կնալհս, նի դռնալհս խորթ մորը հետը գինի-

լիս: Խորթ մարը ըղչգերանցը տընիս ա դուս բիրիս ծմակեն մաչեն մի թումբու գյուլոխ: Տեղետ նհետ ըղչգերանցը ղալին հըռե ծմակեն մաչեն մի ծառու նշանց տալիս, ըսիլիս.- էն ծառեն երե սվե տվողը ծեր հարն ա: Գենցեք տանձը հվքեցե՛ք, եկե՛ք, իս ալ տեղս փադ ըմ հվքիլիս: Կգյոք, մի տեղ կգիննք տոն:

Հակառակ էտ օրն ալ քամե ա ինիս, քամեն որ թխիս ա, պարկրը նի յըն գյոլիս մին-մինու, շխկշխկալիս: Ըղչգերքն ալ ինդի յն գիդալիս, որ իրաց հարն ա տանձը թափ տալիս: Ուլխացած կընչիլավ գինիսն.- Ապեր, հե՛յ, տանձը թափի, հասածը ջոկի, եկալնք...

Գինիսն, գինիս հսնիլիս տանձի ծառեն, տըսնալիսն տեղարը մարթ չկա: Խյալն ըրիս, որ հալբաթ իրաք ետն ինգիած, իրաց հարը գենցած ա կըքվավըրս: Ըշտեղ որ ա կգյո իրաց կիվաքի, կտանի:

Օրը մթնիս ա: Վըրսականը գյոլիս չի: Ըղչգերքը երն կնալիս դես-դեն ինգիս կնչիս իրաց հորը, լեց ինիս, ոչ մի բեն դըռնալիս չի: Ճարնեն կտրած հվքվիսն ծառեն տակը, նեստի կնալիս մին-մինու, լեց ինիս, քունավ ընցնիլիս՝ ումուդ ունիլավ, որ քշանաց իրաց հարը կգյո, կճարի, կիվաքի կտանի:

Քիշերը անց ա կնալիս: Պարի լուսը բենվի ձըզ երե: Բինվալիս ալա ըղչգերանցը երե, յիշիսն, յիշիս իրաց հարը գյոլիս չի: Երն կնալիս ալլա կնչիս, սաս արուղ չի ինիս: Քուղցածածն ինիս: Մըծ քուրը եռ ա ինիս ծառեն պարկրը վեր բիրիս: Մի պարկեն բերանը բինալիսն, տըսնալիս մի պարղաճ կա մաչեն: Ուլխնալիսն: Բիրիսն օխտը տեղ փայ ըրիս: Հակառակու նման աղի պարղաճն ա ինիս, ուտիսն, ծրվիլիս: Շոռն գյոլիս ջուր չըն ճրիլիս: Որոշիսն որ էն մին պարղաճը թոլ արն, պարղաճը ըշտեղ գինի վըտ կանա՝ տեղը ջուր կինի:

Յամաջ տեղ ա ինիս: Պարղաճը թող ըն ըրիս՝ հետեն գինիս: Պարղաճը գինիս ա մի կնչկոտ տեղ վըտ կնալիս: Ըղչգերքը գինիսն տսնալիս կնչկոտ տեղը մի սուզունքու ջուր ա դուս գյոլիս: Ձեռքավ մի կուճի կոլա յըն սրքիլիս: Ջուրը գյոլ ա տալիս: Մարթա մե քանե կում խմիսն, ալլա՝ ապեր կնչիլավ, լեց ինիլավ ծմակեն մաչավը գինիսն:

Դե հու գիդա ըղչգերքը քանե օրն մնալիս ծմկնոմը, չուլուտնըմը, վերջը մի օր գինիսն դուս գյոլիս մի քաղաք: Դե հալա քաղաք չտըսած խոխենքն լալ, պատառ դես-դեն շոռն եկալ՝ զարմացած քաղաքեն շինութուններից, ժողովրթից: Իրաք հմնչեցալն մինեն խուսցընը, իրաց դարդը ասն: Մի մարթ ալ ըսկի իրաց չի հարցուփորձ արալ: Օրը եկալ ա, մթնալ: Խյալն արալ մի հարմար պատու տակ ճարն, հվաքվն քիշերը մնան:

Քաղաքեն ճոնդեն մի տան քուշտավ անց կնալիս տեղը, մի պառավ կնեգ տըսնալիս ա օխտը ախչիգ մոլոր-շորոր, տխուր նայեն քյուչավը գինիս: Պառավը խիյալ ա արալ, որ կա, չկա էս ըղչգերքը ղարբն: «Հալա հրցրմ տըսնմ հո՞ւվն, ըշտղացե՞ յն, ըշտե՞ղ ըն գինիս»: Ըղչգերքը որ մուտունալիսն իրան, վըն ա ըրիս, հրցըփորձ ըրիս: Մըծ քուրը իրաց դարդը, գյլխնուն եկածը նաղլ ա ըրիս պռավեն: Պառավն ըսիս ա.- Վախմեք, իս թաք մարթմ: Իս ձզ հետե մար կդըռնմ, կպահմ: Եկեք տանմ իմ տոնը:

Պառավը ըղչգերանցը տնիս ա տոն: Հաց ա տալիս, ջուր ա տալիս, քիշերը մնալու հետե տեղ ա տալիս: Ըղչգերքը ուտիսն, խմիս, ուլխնալիս, քիշերը հանգիստ քոն ինիս:

Էքսի քշանաց, որ ըղչգերքը քունու տեղից երն կնալիս, պառավը մարթա մի քուղու կտոր տալիս ա ըղչգերանցն ըսիլիս, որ.- Իս կարմ ձեզ պահիլ հունչուր պետքն ա: Դուք հասած, փիսած խոխեենք եք, պետք ա գինեք ծմակը, մարթա մի շելակ օրական չոր փադ բերեք, իս ալ փադը ծախմ, մըզ հետե օրվա ապրուստ սարքմ:

Ըղչգերքը ուլխնալիսն, գինիսն ծըմակը, օրական մարթա մի շելակ փադը բիրիլիս:

Վախտ ա անցկնալիս: Մի օր ալ ըղչգերքը փադն ըրիսն, շիլիկնեն կպիս. ցորտ օր ա ինիս, ծմակեն մաչեն մի փեհինլղ տեղն ճրիլիս: Հվքվիսն փեհինլղմը նստիս, ըրըվեն տակեն պատառ դինջանան, տքանան, նոր եր կանան շլկնեն եր օննն, գինն:

Կուճի աղչիգը մըծ քվորը ըսիս ա.- Բաջի-բաջի, գյուլոխս քոր ա գյուլիս:

Մըծ քուրն ալ ըսիս ա.- Բաջի-բաջի, բեր գյուլոխդ դիրի ծունգյանս, եշըմ, տըսնմ հի՞նչ կա, որ քոր ա գյուլիս:

Մըծ քուրը որ կուճի քվոր գյուլոխն ա պտռիլիս, կուճի քուրն ալ տափն ա պտռտիլիս:

Միհն ալ ըսիս ա.- Բաջի-բաջի մի չամենչմ ճարալ:

- Հո՞ր ա,- ըսիս ա մըծ քուրը:

- Կերալմ,- ուլխացած ըսիս ա կուճինը:

Մըծ քուրը կուճնեն գյուլոխը պտռիլավ, կուճի քուրն ալ տափը պտռիլավ, հա չամենչ ա ճրիս, բուժինիս քվորտենցը:

Ըղչգերքը հազրի յըն գյուլիս, որ կա-չկա փեհինլղեն տակեն մի բեն կա: Չամենչը տեղս հի՞նչ բեն օնի:

Օխտը քուվերավ ըսկսիսն փեյնը ետ տալը, քանդիլը: Պատառ որ քնդիսն, միհն ալ մի հուրդ ա բինվալիս: Կուճի քուրը ըսիս ա.- Ինձ կախ տվեցեք, գինըմ տըսնմ հուրդեն տակեն հի՞նչ կա:

Բիրիսն քողը կպիս կուճի քվորը մաշկավը, կախ տալիս: Պատառ վախտ անց ա կնալիս, կնչիս ա օրախ-օրախ, որ՝ քողը քշեցեք, դուս գյոմ:

Կուճի քուրը հուրդավը դուսն բիրիս, տսնալիս՝ հի՜նչ՝ գյուրգը լիքը չամենչ ա, խուրմա յա, փուշուտհատ ա, բադամ ա:

Ըղչգերքը զարմացած հրցրիլիսն.- Պա էս ըշտեղե՞ յա, հո՞ւ վա քի տվալ:

Կուճի քուրը ըսիս ա.- Պա ասի չեք, որ տեղս, տափեն տակեն մի երկար գյում կա, ղալին ալ ծի կա տեղը կպոտած: Ջիանցը ըխուրնեն լիգը իստի բեներ ա:

Ըղչգեքը հուրդը փկիսն, նստիս պատառ չամենչ, խուրմա ուտիլիս, եր կնալիս, փադը շլկիս, գինիս տոն: Էտ օրը գյլխնուն եկածը նաղլն ըրիս պռավեն, գյումեն նաեե հանած չարազեղեներն, մանցածն ալ դիրիսն պռավեն ըռշկին:

Պառավը ըսիս ա.- Ամա՜ն, էտ մըր երգիրեն թաքավերեն ծիանցը գյումն ա: Թաքավերը ծիանքը պիիս ա տափեն տակեն, մքեն տեղը, իստի քաղցր բիներավ կորմիտ ըրիս, որ ծիանքը սորին չղանան, կռըվ իլած վախտը ուժեղ կռվըն: Ալ մին ալ տեղարը գինեք վեչ, իստի բեն արեք վեչ: Մի օր ալ կգիդան, կգյոն ձեզ փռնոտն, տանն վիզրնետ կտրըն:

Դե աղչիգ խոխենք, քաղցրր չամենչ, խուրմա, բիրիննեն սվերած: Պռավեն խրատեն լսիս չըն: Ամեն օր գինիսն հուրդը բինալիս, կուճի քուվորը նի գիցիս գյումը, մի փեշկիրը քաղցրեղեն բիրիս ա, նստիսն ուտիս:

Մի օր ծիանքը պահուղ նոքարը գինիս ա ծիանցը տար կանուղ վազիրեն ըսիս.- Վազիրը ապրած կենա, իս առաչվա նման ալլա ծիանցը սորին կերմ տալիս, օմեն հինչը տեղը-տեղեն պհիլիս: Համա դե աշկես ինդի ա ըրվալիս, որ ծիանքը օրբաօր չաղանալու տեղը, լդրիսն:

Վազիրը գինիս ա տսնալիս, որ նոքյարեն ասածնեն դուզ ա: Ջիանքը ղալին լդրածն: Նուքարեն հղե ա դիրիս տոն, ինքը մենակ գյումումը մի քունջում գյող ա կնալիս:

Մի վախտ անց ա կնալիս, լսիս ա, որ գյումեն կտորը քնդիսն: Մին ալ էն ա տսնալիս՝ մի քող փռնած, մի նախշուտ աղջիգ նի ա մտալ գյումը, ըսկսալ թայդի ծիանցը ըխորտնռն նաեե չամենչ, խուրմաև հվաքիլ, նի ածիլ փեշկիրը:

Վազիրը թաքուն գյոլիս ա ըղչգյանը փռնիլիս: Աղչիգը վխեցած սաս ա ըրիս, ըսկսիս լեց հինիլը: Դիյեր քուվուրտանքը իրաց քվոր լեցեն սասը որ լսիսն, գիդալիսն, որ մի բեն ա պդահալ, հուրդը փկիսն, գինիս իրաց փադը շլըկիլիս, լեց հնիլավ թուղիս, գինիլիս:

Վազիրը փռնած ըղչգյանը ըսիս ա, որ վախի վեչ, լեց վեչ ինի, իրան ոչ մի բեն արի չի, համա դե պետք ա տանի թաքավերեն կոշտը:

Վազիրը մի ծի դուս ա ըրիս, ըղրչիգյանը նստցրիս ծիանը, ինքն ալ եռ ինիս, տընիլիս իրան տոնը: Ըղչիգյանը ծիանը նաներ վեր ա ունիս, ըսիս.- Դու տեղս նստի, իս ծին տանմ գյումումը կապմ, գյոմ գիննք թաքավերեն կոշտը:

Վազիրը ծին տնիս ա կպիս, գյոլիս տսնալիս՝ աղչիգը կավիչնի: Դես՝ աղչիգ, դեն՝ աղչիգ, մի թիքա եղուտ հացու կուտուր ա դռնալիս, կուրչիլիս: Վազիրը մնալիս ա մավիս վըտը:

Կուճի աղչիգը տսնալիս ա, վազիրը տարալ ա ծին կապի, ինքը փըխչիս ա մի տեղավ գինիս: Մին ալ տըսնալիս ա մի տան դուրք նայե բեց: Փղչիս ա նի մտիս տան մի քյունջ, սուս ըրիս: Տըսնալիս ա տան մարթ չկա: Տան մաչն ալ թառած-թափած ա: Եր ա կընալիս տան մաչը ետ հվըքիս, ավիլը բիրիս սիրբիլիս, օմեն հինչ կարքի բիրիս, մի կուտուր հաց տաշտեն նաներ ունիս, ուտիս, ալլա գինիս քյունջումը սուս-փուս նստիլիս:

Պատառ վախտ անց ա կնալիս, աղչիգը մին ալ էն ա տսնալիս՝ մի պառավ կնեգ չալիգը ձեռքեն եկալ ա, նի մտալ տոն, մանցալ զարմացած, տսնալավ տոնը մաքրած, կարքի բերած, խիյալ ա ըրիս, որ հալբաթ որ մռացալ ա տան դուրքը փակի, հրվանեն աղչիգը եկած ա տըսած, որ տոնը թամուգ չի, ինքը դասավըրած ա, օմեն բեն սարքած, գենցած:

Էքսի օրը պառավը եր ա կնալալիս դուրքը փկիս, գինիս եգեղեցեն՝ աղոթքի: Գյոլիս ա տսնալիս՝ ալլա տոնը մաքրած, օմեն հինչ տեղը-տեղեն դասավորած ա: Պառավը խիյալ ա ըրիս, որ կա, չկա տանը իրան նաներ թաքուն օրեշ մի մարթ ա ըպրիլիս, վըտ ա կնալիս, ղանչաք ըրիլավ ըսիլիս.- Դե մըծ կնեգմ, վընը-ձեռքե ինգյած: Աստվածանից հու որ եկած ա իմ տոնը, շատմ խնթրիս դուս գյո՝ տըսնմ:

Պառավը որ իստի ա ըսիս, աղչիգը քյունջեն նաներ դուս ա գյոլիս, պռավեն ըռշկեն չուքիս, գյլխեն եկածը նաղլ ըրիս:

Պառավը ուլխացած ըսիս ա.- Դու վախ մա: Տոնը ըստի սալղավ որ պահըս, իս ալ քի թաքուն ինդի կպահմ, որ ոչ մինը գիդա չի քու տեղը:

Կուճի ախչիգը թողք պռավեն քուշտեն թաքուն ապրի: Վեց ըղչգերքն ալ թողնք փադ բերն, պառավը ծախի, ընդունք ալ տեղը գյլխնեն պահն: Տըսննք թաքավերեն վազիրը կուճի ըղչգյանը կուրցրիլեն ետը հի՞նչ ա ըրիս:

Թաքավերեն վազիրը տսնալիս ա կրեցա չի չամենչ գյուղացուղ ըղչգյանը ճարի, կրիս չի մռանա: Մի օր թաքավերեն պալատմը մի օրախ, քաղցր սոհբաթու վախտ նաղլ ա ըրիս չամենչ գյուղացող հրաշք ըղչիգյանը մասեն:

Թաքավերից դեչանը օմեն նազիր-վազիրնեն լսիսն, մնալիս զարմացած:

Պա հինչուր արն, էտ հրաշք ըղչիգյանը ճարն... Խիյալ-խիյալն ըրիս, որոշիս, որ՝ «Թաքավերեն հազարավր գյուղոխ վըչխրնեն խոզածն. բուրթեն ճար-մադատ չօնի: Հարկավեր ա էտքան բուրթը լվանալ, գիզիլ, մանիլ, թիլ արիլ կարպիտ, խալի գյործիլ, հիվսալա գիցիլ»: Էտքանը մի քանե տասը մարթ մի տարըմ կարի չըն արի: Էտքան աշխատանքը կարճ վախտըմ ըրիլու հետե, համ ալ հրաշք ըղչիգանը կարն ճարիլը:

Էքսի օրը թաքավերեն նոքյարնեն նի յըն ինգիս քաղաքեն օմեն քյուչենեն, տոնբատոն շոռ գյուղիս, մինի-մինի ըրիս, քաղաքմը հինչքան աղչիգ կա հվքիս, բիրիս թաքավերեն պալատեն լեն-բոլ հայաթը: Դաստա-դաստա բուժինիս, մի դաստան սաղ օրը բուրթ ա լվնալիս: Մի դաստան չուրցրիս, սնդերքավ գիգիս ա: Մի դաստան չխրկներավ մնիս ա: Մի դաստան կնչկարմուրեն օխտը ըռանգյավ նրկիս ա: Մի դաստան ալ կարպիտ նա խալի յըն գյուրծիս: Չամենչ գյուղացուղ աղչիգը, ինգիս ա խալի գյործուղ ըղչգերանցը դաստան:

Թաքավերեն վազիրը հըրթավ շոռ ա գյուղիս, ըղչգյանը տըսնալիս ա խալի գյործելուց: Ծանոթութուն տալիս չի: Գինիս ա թաքավերեն նազիր-վազիրներեն հվքիս, բիրիս ըղչգյանը նշանց տալիս: Հու որ ըղչգյանը տըսնալիս ա, լա նխշութթուներն նանե մնալիս ա բերանը բեց, վըտը:

Ըխչգերքը որ ամեն աշխատանք վախտեն, տեղը տեղեն ըրիսն, խրեգ ա մնալիս, որ պրծնըն, մի օր վազիրը գյուղիս ա ըղչգերանցն ըսիլիս.- Իս գինիսմ մի ամսավ օրեշ թաքավերու երգիր՝ շոռ գյուղու: Ձեր կադարած սորուն աշխադանքեն հետե թաքավերը ինձ ասած ա՝ ձըզ հետե մարթա մի անամ բերմ: Դե մհեգ հուր սրտոմ հինչ կա, հու սրտանց հինչ ուզիս ա, թող ասի, որ օնմ, բերմ:

Դե ախչիգն ալի, մինը ըսիս ա՝ ինձ հետե ըրծաթի մատնոց կբերս, մինը մի սանդրք ա ուզիս, մինը զիզանուք, մինը մի հիլիլի: Օմեն մինը իտի մի բեն օզիսն: Հընրթը հսնիս ա կուճի ըղչգյանը, ըսիս ա՝ ինձ հետե մի հիլիլի կբերս, մի չախկու, մին ալ մի նոռնը:

Վազիրը խյալ ա ըրիս, մնալիս մաթալ, թա՝ խե օմեն ըղչիգերքը մին-մին բենն օզալ, էս աղչիգը իրք:

Վազիրը գինիս ա օրեշ երգիր, շոռ գյուլիս: Ըղչգերքն ալ հինչ որ օզածն լալ ունիս, բիրիս բուժինիլիս: Կուճի ըղչգյանը օզած իրք անամը որ տալիս ա, թաքուն գինիս ա, թա՝ տըսնմ հետեն էս իրք անամնեն հի՞նչ ա ըրլական:

Աղչիգը անամնեն տնիս ա տոն: Տըսնալիս ա պառավը տոն չի: Ծլպատակ նստիս ա, անամնեն ըռշկին շրիլիս, ըսկսիս դարդրը, գյլխավը անցած բեները նաղլ արիլը: Նոռանը ըսիս ա.- Ա նոռնը, ինծ հար լալ, մար լալ, մընք ալ օխտը քուր ընք լալ: Մըր մար մըռալ ա: Մըր հար գենցալ ա մի կնեգ բերալ մըզ հետե խորթ մար ա դըռալ, մըզ յոլա չի տարալ: Ա նոռնը, իս ծա՞քմ, թա՞ դու: Իմ հար վրսական լալ: Օրը օխտը կաքավ լալ բիրիս: Մըր խորթ մարը իփիս լալ, ուտիս, մըր հոր խփիս, թա՝ կաքավնեն ըղչգերքտն ուտիս, ինծ ալ տալիս չընն, ա նոռնը իս ծա՞քմ, թա՞ դու: Վերջը մի օր մըր խորթ մարը մըզ օխտը քվորը տարալ ա մի ծմակմ խափալ, կուրցրալ: Օխտը քվորով եկալնք դուս եկալ էս քաղաքը: Մի պարի պառավ մըզ տրեթուն ա արալ: Ինդի ա դըռալ, որ իմ քվորտանցս կուրցրալմ, ա նոռնը իս ծա՞քմ, թա՞ դու:

Աղչիգը նոռանը որ դարդրը նաղլ ա ըրիս, պրծնիս, նոռնը դարդեն նանե ճքճքոտում ա, կուտր-կուտր դըռնալիս: Աղչիգն նոռանը դարդրը նաղլ ըրիս տեղը, նհետն ալ լեց լալ հնիս: Տըսնալիս ա, որ իրան դարդրը նոռնը լսիլավ ճաքալ ա, կտոր-կոտր դըռալ, ինքն ալ յլխավ արտասունքնեն սիրբալ ա, չախկուն եր կալալ, որ նի խրցնի իրան սըրտը, ըսպանի:

Վազիրն ալ որ թաքուն լսիս լալ ըզչիգյանը դարդրը, լոք ա տալիս ըղչիգյանը խստիլիս, չախկուն ձեռքեն նանե իք ունիս, տնիլիս թաքավերեն կոշտը: Հինչ վըր լսած լալ ըղչիգյանը նանե՝ նոռնեն նաղլ ըրիլուց, օմեն մինի-մինի նաղլ ա ըրիս թաքավերեն:

Թաքավերեն հոքմավը գինիսն ըղըչիգանը վեց քվորտանցն ալ ճրիս, բիրիս թաքավերեն կոշտը: Տըսնալիսն՞ հի՞նչ ըղչգերք, օմեն մինը մի հուրի, փարի, իրինննակ, լուսլոնգյա, պսպղան տվող աստղնե:

Պալատմը հինչքան վազիր-նազիրնու ազափ տղեք ա ինիս, թաքավերը կնչիս ա բիրիս օխտա հուգյու՝ օխտը քվորտանց նհետ նշան դիրիլիս: Իրան ծախսավը օխտը հրսաննենքն ալ մի դոնա ըրիլիս: Ըշխարքմը չտըսնված, չլսված օխտը քվոր հրսաներքը ըրիսն, օխտը օր, օխտը քիշեր: Ուտիս, խմիս, երքիս, պար գյուլիս, քեփ ըրիս, անիծիս աշխարքեն օմեն չար մարթկանց, աղոթիս, երկար գյանք կամենաս աշխարքեն օմեն մի պարի մարթկանց:

Հռնքեն վերչմը երգինքից օխտը անմահական խնձոր ա վեր ինգիս: Խնձորնեն հվքիս տալիսն նորապսակներեն: Նորապսակներն ալ խնձորնեն դիլիմ-դիլիմն ըրիս, բուժինիս հռնքվերնուն՝ կուժինից դեչանը մըծը: Օմեն ալ որ օտըն, անմահանան, պարին տարածն ըշխարքավը մին:

9 (9). ՀԱՑԸ ՀՈ՞Ւ Ա ՏԱԼԻՍ

Իլալ ա, իլա չի, մի թաքավեր լալ: Էտ թաքավերեն իլած, չիլածը թաք մի աղչիգ լալ: Ամեն քշանոց աղչիգը որ նստիս լալ մի կուտր հաց օտի, մի ըստաքան չայ խմի, թաքավերը գյոլիս, ըսիս լալ.- Աղչիգս, հացը հո՞ւ վա տալիս, որ ուտիսս:

Աղչիգը ըսիս լալ.- Թաքավերը ապրած կենա, հացը Աստուծ ա տալիս, ուտիսնք:

Ըղչիգյանը պատասխանը թաքավերեն նախոշն լալ գյոլիս: Կզնվիս լալ, ըսիս.- Չէ՛, աղչիգ ջան, սվըրի ասի՝ «Հացը իմ հարս՝ թաքավերն ա տալիս»:

Աղչիգը հորը ենթարկվմ չի լալ: Աղչիգը միշտ իրան ըսածեն տար լալ: Թաքավերը՝ մին, էրկու, տըսնալիս ա, որ ախչիգը իրան ուզիս չի լսի, լա ըսիս ա. «Հացը Աստուծն ա տալիս»:

Մի օր ալ ըղչգյանը անջուկեն փռնիս, պալատեն նանե դուս ա ըրիս, ըսիլիս.- Դե որ ինձ ենթարկվմ չըս, քու գյլխենս զոռ տալիս, գինի, թող Աստուծ ալ քի հաց տա, տըրեթուն անի, պահի:

Աղչիգը լեց ինիլավ թուղիս ա, գինիս: Քղաքեն մի ճոնդում ըղչգյանը մի պառավ կենգ ա ջիհիս: Պառավը ըղչգյանը նանե հրցրիս ա.- Դու հո՞ւվս, հի՞նչ տեղս գինիս մանակ:

Աղչիգը դուզը ըսիս չի: Ըսիս ա.- Անբախտ, անտեր աղչիգյմ, գյուլոխ երկալած, բախտինա գինիսմ:

Պառավը ըսիս ա.- Որ իդի ա, իս լա քի նման մի ըղչգյան կարիք օնմ: Եք լա տանմ, մոր նման պահմ:

Պռավեն ալ մի հասած, սորուն տղա յա ինիս: Շատ քյասիբ ինիլավ, կրիս չի լալ փսակի, աղչիգը տվող չի լալ: Էտ ճարած ըղչիգյանը տնիս ա իրան տղեն նհետ փսկիլիս:

Պռավեն տղան փահլա մարթ լալ: Քաղաքմը, տեղս-տեղը բեն լալ ըրիս, օրական մի հացու փող բիրիս, զոռավ իրաց գյուլոխը պիհիլիս:

Պռավեն տղան մի ըրակու ալ բինի տեղե գյոլիս ա տոն, ըսիս.- Ասօր մի թանջրուվմ ջիհած: Ասալ ա՝ ինձ մի ըշկաբեց նոքյար ա պետքի, գի-

նիսմ հըռե երգիրներ առուտորի: Նոքյարը որ խելունք ինի, տարեկան հարուր վըսկե կտամ:

Պառավը պատառ վսվսալիս ա, թա՝ թաք տղա յըս, գինի մա, պետքի չի:

Կնեգը ըսիս ա.- Գինի: Կգինս շատ երգիրնե շոռ կգյոս, շատ մարթիք կտըսնս: Առուտորեն օրենքնեն կգիդաս: Հարուր վըսկեն ալ կբերս, տըսնալիսս՝ մըր տոնը տան նման չի, մի թազզա տոն կշինք:

Տղան որ ուզիս ա հղե ինգի գինի, կնեգը ըսիս ա.- Քի նետ ղալին վաղզ եր կօնս: Ցամաք, անջուր հղցկնավեք գինլալան, վաղզը պետքի կգյո:

Տղան թաջրեն քյարվանեն նետ գինիս ա:

Շատ քաղաքնե յըն շոռ գյոլիս: Շատ երկրներ ա տսնալիս: Մի օր ալ գյոլիսն ինգիս մի չոլ-յաբան տըղ: Կեսօրեն, քեղցած, ծարավ, բեզարած մի ջիրոհորու քուշտե վեր գյոլիս: Տեղտ մի օրեշ թաջրու քյարվան ալ ա ինիս վեր եկած: Դե օմեն ծարավ կուտուրվիսն: Համա ոչ մինը ըռիսկ չի ըրիս, նի մտնի ջրին հորը: Տղան ոչ մի բենու նաներ խաբար չի ինիս, թա էտքան մարթունցը ոչ մինը խե չի նի մտիս ջուրհորը:

Վերջը էրկու թաջրնեն ալ ըսիսն, որ հու նի մտնի ջուր բերի, մարթա հենգ վըսկե կտանք:

Տղան ըսիս ա.- Ինծ կպեցեք, գինմ:

Տղան նի ա մտիս ջուրհորը, մի քանե կոժ ջուր լցրիս, քշիսն հնիս դուս: Մին ալ էն ա տըսնալիս մի իրք գյլխանե դև եկալ ա, կողքեն վըտ կացալ, ասալ.- էյ, խամ մարթ, դու քանե գյլխանե յըս, որ ռիսկս արած, առանց ինծ ըսիլու իմ ջուրը կրըմ, տնիսս:

Տղան ներողութուն ա խնթրիս, ըսիս, որ ինքը խամ մարթ ա, գիդացած չի:

Դևը ըսիս ա.- Դե որ գիդալիս չըս, եք տանմ օրենքը նշանց տամ:

Դևը տնիս ա մի օթախ, տղեն նշանց ա տալիս, որ մի սունու երե ժինջիլավ մի կնեգ ա կապած, մին ալ մի շոռ: Մի օրեշ ութախու դուրք ալա բինալիս, նշանց տալավ, որ լիգին ա մարթկանց քիլլենավ:

Դևը տղեն նաներ հրցրիս ա.- Էս կնեգ նա շոռը որ մի տեղ կապածմ, խե՞ չըս հրցրալ, թա էտ հի՞նչ բեն ա:

Տղան պատառ խիյալ ա արալ, ասալ.- Դևը շատ ապրի, էտ քու իրավունքն ա, քու սեփական բենը, իմ գիդալավ էն մարթը մարթ չի, որ բենեն անտեղյակ, օրեշ մարթու բենեն կխառնվի: Իս ալ էտ հաշվի ունիլավ, խուսեցա չըմ:

Դևը ըսիս ա.- էտ մի խոսքավը դու քու գյուլոխը փրկալս: Հարուրավր մարթ ա եկած տեղս, բեներն անտեղյակ, վրազ ինձ ասսծն՝ էս կնեգը մեխկ ա, խե՞ յըս շանը կողքեն կապած: Բեներն անտեղյակ որ իմ բեներն խառնվածն, իս ալ գյլխներն կերածմ, քիլլեներն թուփ արած: Էս կնեգը իմ կնեգն լալ,- խոսքը շարունակիլավ ըսիս ա դևը,- իրան խանմ-խաթունու նման պիհսմ լալ: Կազմակերպալ ա, որ ինձ սպանիլիս ա փախչի: Շոնը գիդացալ ա, թողա չի: Իս ալ բերալմ ըրկոքան մի տեղ կապալ: Շոնը հինչ որ ուտիս ա, իվիլնալիս ա, նոր մանցածը տալիսմ իրան:

- Արժանի պատիժ ա,- ըսիս ա տղան:

Դևը ըսիս ա.- Ալ քու գյուլոխը փըրկված ա, գինի, հինչքան ջուր պետք ա, լցրրու տար:

Տղան ուզիս ա գինի: Դևը ըսիս ա.- Հալա ասի գիդամ, կարո՞ւղ ա կուշտետ վաղզ ճարվի:

Տղան ջուբերեն նանե իլած վաղզը դուս ա տալիս՝ տալիս դևեն: Տղան վաղզը ջուբոմը պահած լալ կնգանը խոսկավը: Ասած լալ, որ միշտ վաղզ կպահս: Անջուր ինգյած տեղը, հըռի հղե գինիլուց շատ պետքի կգյո:

Դևը վաղզը որ տըսնալիս ա, զարմանալիս ա: Բիրիս ա տղեն երկու նոռն ա տալիս, թա՝ տար, նըղ օրը պետքի կգյո:

Տղան գինիս ա ջուրհորեն տակեն նհետ կնչիս, որ դերտակ կոժրը կապն, կախ տան: Հինչքան ջուր պետք ա ինիս, կրիսն տնիլիս: Վերչուս ալ տղուն քաշմն հանմ ջուրհորից:

Տղան որ ջուրհորից դուս ա գյուլիս, էրկու թիրափե թաջրնան, ժողովուրթը հվքվիսն տղեն չորք թիրափավը դըռնալիս, թա նաղլ արի տըսննք՝ ջուրհորը որ նի յըս մտալ, տեղը հի՞նչս տըսալ:

Տղան դանմիշ ա ինիս, որ ոչ մի բեն տըսած չի, իրան ալ ոչ մի բեն պդահած չի: Տղան հարցուփորց ա ըրիս, տսնալիս, որ էն մին թաջրեն քյարվանը գինիս ա իրաց քաղաքը: Ձեռքեն իլած քսան վըսկեն, մին ալ դևեն տված էրկու նոռնը տալիս ա թաջրեն, իրաց տան տեղն ալ ըսիլիս, որ տանի տա իրան մոր նա կնգանը:

Ժամանակ ա, անց ա կնալիս: Տարե ա, շոռ ա տալիս, գյուլիս ա տղեն վահդան թմմիս ա: Թաջըրն ալ գյուլիս ա իրաց քաղաքմը վեր գյուլիս: Կնչիս ա տղուն իրան կոշտը, հարուր վըսկեն տալիս, մի տարվա նոքյարթունեն հախը, ըսիլիս.- Գինի ձեր տոն դինջաց: Տասը օրեն ետը քեփտ կարի, եք ալլա քու բեներն: Չէ՛, քեփտ օզի չի, Աստված քեզ նհետ:

Տղան շնորհակալութուն ա տալիս թաջրեն, վըսկեներն եր ունիս, գինիս:

Իրաց տոնը քաղաքեն գյլխեն մի բեցուր թումբու երե լալ:

Տղան հըռնաց եշալ ա դիբի թումբը, ըշկերեն հվտացա չի: Իրաց տան տեղը մի չտըսնված պալատնե յըն լալ սարքած: Տղան խիյալ ա արալ, որ հալբաթ մարն նա կնեգը իրան գինիլեն ետը քյասիբութունն քաշած, տոնը ծախածն մի հարուստ մարթու: Հարուստն ալ իրան հետե պալատնե ա սարքած:

Իրան մոր նա կնգանը ճարելու հետե օրեշ ճար չի ճրիս: Որոշիս ա, գինի պալատնոն տըռնը նանե հրցնի, բալքա իրան տեղը ասն: Գինիս ա տըսնալիս՝ մի աղչիգ նայե պալատեն դըրքերը լվնալիս:

Հրցրիս ա, որ.- էս պալատնուն տեղը մի քյոհնա տոն լալ, տեղը մի պառավ կնեգ, մին ալ մի ջահիլ հառհն լալ ըպրիս, հի՞նչն դըռած, կարո՞ւղ ա գիդաս ըշտեղն գենցած, ըշտեղն ըպրիս:

- Քու ասսծ պառավ կնեգն ալ, ջահիլ հառնն ալ ոչ մի տեղ գենցած չըն: Էս պալատեն տարնն, նայեն տեղս ալ ըպրիլիս,- ըսիս ա աղչիգը:

Տղան գինիս ա ներս, մնալիս զարմացած: Տըսնալիս ա՝ ղուրթավ պալատմը իրան մարն ա, իրան կնեգն ըննն: Տղան հրցրիս ա.- Պա էս հի՞նչ խաբար ա, էս հի՞նչ բեն ա, էսքանը ըշտեղե յա:

Կնեգը ըսիս ա.- Զարմանալու բեն կավչնի: Էն թաջրեն նհետ, որ էրկու նոռն ըս լալ ղորկած, կտրալլնք, տըսալ՝ նուռներեն մաչը լիգը անգին քարեղեն ա: Ծախալնք էս պալատնեն սարքալ:

Տղեն կնեգը տեղտ ասալ ա.- էն հինչ որ դեչանը մհեգ թաքուն պահածմ լալ ձգանե, մհեգ պետք ա ասմ: Մին ալ պետք ա ասմ, թա հինչ օննք ըրիլու:

Տղեն կնեգը նաղլ ա ըրիս իրան հու ինիլը, թա իրան հարը՝ թաքավերը, հինչու հետե յա իրան տանը նանե դոս արած:

Այտս մարթեն ըսիս ա, որ.- Ամեն մի ամսենը, տարանը մհետ, եշած թաջուրու, գինիսն թաքավերեն տըսութունը՝ թինգյանոց անամներավ: Էքուց ամսվա վերչ ա: Թաքավերեն տըսնալու օր ա: Իս մի թինգյանուց մատանե յըմ սարքիլ տված, եր կօնս, կգինս կխառնվս թաջրներեն, դու ալ կգինըս թաքավերեն տեսութուն: Թաջրնեն որ նի մտն պալատը, թաքավերեն ըռշկին ծոնգն դիրլական, գյլխնեն քշցրն՝ պարև տան, այտս եր կանան շարքեն նստոտն: Դու ծոնգը չըս չոքի...Վըտը տեղը պարև կտաս թաքավերեն, կմուտանաս ձեռքը կպաչըս, մտանեն նի կգիծս մաննը, կողքեն նստըս: Նման քու վերաբերմունքը զարմանք ա բիրիլական թաքավերեն: Թաջրնեն որ իրաց տարած անամնեն որ տան, օզըն գինիլը, թաքավերը քի թուղլական չի, դուս գյոս: Ըսլական ա՝ դու մնա, քի նհետ իս սոհբաթ օնմ: Վերչմ քիանե հրցրլական ա որ էնքան մըծամըծ թաջրնե ծոնգն չոքալ,

ինձ գյուլոխ տվալ...դու մի ջահիլ թաջրս, հինչս հաշիվ արալ, որ իմ ըռշկին ծոնգը չըս չոքալ, գյուլոխ տվալ: Ասի գիդամ՝ դու հո՞ւվս:

Դու կասս՝ թաքավերը ապրած կենա, իս թաջրմ, համ ալ թաքավերու փեսե յըմ:

Կհրցնի՝ ո՞ր թաքավերու փըսե յըս:

Կասս՝ խնթրիսմ քու վազիրներեն նհետ գյոս իմ տոնը ղոնաղ, նոր օմեն հինչ կգիդաս:

Տղան էքսի օրը գինիս ա թաքավերեն պալատը: Օմեն հինչ տեղը-տեղեն կդրիլիս, գյոլիս, կնգանը խաբեր բիրիս, որ թաքավերը էքուց իրան վազիրնուն, մըծ-մըծ մարթկունցը նհետ գյոլիս ա ղոնաղ:

Թաքավերը էքսի օրը իր վազիրնուն նհետ գյոլիս ա ղոնաղ կանչված տեղը, նստիսն հաց ուտիլու: Ըսիս ա.- Քանե գիդամ վեչ էս հինչ մարթո տոն ա, հուր սուփրու նանե յըմ հաց ուտլական, իմ բերանմը հացու փոշուր դիրի չըմ:

Էն ղոլնաց իրան աղչիգը եր ա կնալիս, վըտ կնալիս, ըսիլիս.- Էս քու հարազատ ըղչիգյանը տոնն ա: Հացն ալ թաքավերը չի տված: Աստծու տված հալալ հաց ա, կարողս հալալ օտիլ:

Աղչիգը որ էսքանը ըսիս ա, թաքավերեն հետե օմեն հինչ պարզ ա դըռնալիս: Եր ա կնալիս, լեց հնիլավ գինիս ըղչիգանը խստիլիս, պուչ-պուչ ըրիս: Ըղչիգանը մարն ալ ա գինիս խռնվիս նհտնուն, խստիս ըղչիգանը, լեց հնիս:

Թաքավերը շոռ ա գյոլիս, լա տեղնուտեղը իրան թաքավերական գեյման հնիս, գեց տալիս փըսուն, թագն ալ դիրիս գյլխեն, ըսիլիս.- Աստված ինձ տղա թագաժառանգ չի տված, իմ իլած ժառանգը լա էս մի աղչիգն լալ, որ մի խոսքա երե կզնվալմ պալատից դուս արալ, այտս կուրցրալ, հետեն շոռ եկալ, կրեցալ չըմ ճարի: Ասօր ճարածմ:

Ետ դըռնալավ փըսուն ըսիս ա.- Դու որ իմ ըղչիգանս ճարածս, տար կացած, էս փառքեն հսցրած, լա արժանի յըս ասօրեն նհետ թաքավրեթունը եր օնիլ, երգիրը կառավարիլ, իս ալ հասակս առած, հիլիվր մարթմ:

Թաքավերեն էս խոսքեն երե պռաված թագուհին իրան թագը եր ա ունիս, դիրիլիս ըղչիգանը գյլխեն:

Ղոնախլղը փուխվիս ա հռնքու: Երգիրավը մին օրախութունն տարածմ: Օխտը օր, օխտը քիշեր հըրսանեքն ըրիլիս, ուտիս, խմիս, ուլխնալիս, քեփ ըրիլիս:

Պռավեն տղան դըռնալիս ա թաքավեր, թաքավերեն աղչիգը՝ թագուհի:

Հոնքեն վերչումը երգինքից իրք հատ անմահական խնձոր ա վեր ինգիս: Մինը տալիսն նաղլը կպողուն, մինը՝ նաղլը ըսողուն, մինն ալ՝ կես-կեսն ըրիս, բուժինիս նաղլը լսողնան:

10 (10). ՔԱՇԿԵՐԵՆ ԴՎԱՆԸ

Կասի քյոհնա այամեն, մի քյոհնա մըծ քաղաքու հըռե մի ճոնդմ, մի մարթ լալ ըպրիլիս: էտ մարթեն իլած-չիլածը կնեգն լալ, միհն ալ մի տղա, անմը Հրաշք: էտ մարթեն սանադը վրսկնեթունն լալ՝ գինիս լալ օրական մի մըծ հեյվան վեր գիձիս, բիրիս քաղքեն մեյդանմը ծխիլիս, իրան հետե ապրուստ սըրքիս, յոլա գինիս: էտ վախտրն ալ թիվանգ չի լալ: Մարթիք կռըվը, վըրսկնեթունը ըրիսն լալ նետավ, միհն ալ գյորդավ: Մռանամ վեչ ասմ, որ էտ վախտրն ալ ծմկնոն ծառրը կտորիլ, անծուղ սարքիլը ադաթ չի լալ: Ըշխարքեն ծմկնենուն ջոնդ-պուճախ չի լալ: Ծմկնեն ալ լիգընն լալ քաշկավ, դևերավ՝ մի քանե գյլխանե նախկենավ, ալլա նման մրթակեր ջին-ջանավարավ:

Մըր աթալարեն սորին խոսքր օննն: Ասածն. անմը գյորա՝ մարթն ալ կինի: Վըրսկանեն տղան՝ Հրաշքը, լա հրաշք ալ դըռնալիս ա: Շատ սրտավ, ջանավ, անվախ տղա յա ինիս: Հորը նհետ գինիս ա վըրս: Հինչ թահր հեյվան պդիս ա, նետավ, գյորդավ կռվիս, հղթիս ա: Հարը լա մնալիս ա զարմացած:

Վախտ ա գյալիս, վրսկանը հիլիվրիս ա: Մի օր ալ պընդ ուլուզնալիս ա: Գիդալիս ա, կարող ա մըռնի: Կնչիս ա տղեն վասյա ըրիլիս, ըսիս ա.- Տղաս, իս հիլիվերածմ, ալուզմ, հու մըռնի վեչ, մըծը կմըռնի: Դե ինձ պարզ ա, դու ալ քու ապրուստը ճրլականս՝ վըրս ըրիլավ: Իս քի հինչ ծմկնե տարածմ վըրսի, դու ալլա վըրսի կգինս ծանութ ծմկնեն: Հինչքան ալ վըրսը պկասի, հինչքան ալ նեղութունու մաչ ինգյս, քաղաքեն դիբի աղոթարանեն թարափեն ծմկնեն վըրսու գինս վեչ: Հինչքան տղամարթ վըրսական էն թարափնեն վըրսի գենցածն, հալա ետ դըռած, եկուղ չկա:

Էսքանը վըրսկանը տղեն ըսիս ա, մռնիլիս:

Տրենե ա անց կնալիս: Այամը փոխվիս ա: Վըրսկնեն շտնալիսն: Ծմկնան վըրսի հեյվանեն պկսիսն: Հրաշք նեղութունու մաչ ա ինգիս: Ըստիպված ա ինիս հորը տված վասիեն դեմ գինիլ:

Մի քշանաց շուդավ եր ա կնալիս, գյորդան կպիս, նետը նի գիձիս օսսը, Ըստուծեն անմը տալիս, հղե ինգիս՝ դիբի աղոթարանեն թիրափեն ծմկնեն: Գինիս ա, գինիս, տըսնալիս հինչ՝ լա դուրթավ գինիլու տեղ չի:

Օմեն մի սհաքը գյորա, մի նախկա օղծ ա դուս գյոլիս, հղեն կտրիս: Ընտըսած մարթակեր ջին-ջանավար հիյվաննե յըն հղեն կտրիս: Հրաշքը որոշիս ա, որ. «Քանե գյուլոխս ինծ երե ա, պետք ա գինմ, տըսնմ ըստուր վերչը ըշտեղ ա, հի՞նչ կա»:

Պդահած ջին-ջանավարնուն մի քանենը գյորդավ շախկա յա ըրիս, մի քանենը նետավ ա ըսպանիս. իտի չարչարանքավ գինիս ա դուս գյոլիս մի բեցուր սարու գյուլոխ: Նստիս ա պատառ դինջինալիս: Նոր խըլքեն գյոլիս ա, որ՝ տանջանքավ եկալմ հասալ տեղս: Պա նայե օրը մթնիլիս: Քիշերը ըշտեղ կարուղմ մնալ: Մանակ հինչո՞ւր կլուսցնմ էս ջին-ջանավարնուն մաչեն:

Իրրինակը մար մտնիս տեղը, յիշիս ա տսնալիս՝ իրան նանե ղալին հըռե, ծմակեն մաչեն մի տեղ ծոխ ա բիցիրնալիս: Հրաշք ըլխանալիս ա, որոշիս ա, որ տեղը ապրուղ մարթ կա:

Գինիս ա տսնալիս, տեղը մի քանե հարուր գյուլոխ վըչխրնեյն ըրծիլիս: Քյոհնա շինատեղ ա՝ խարաբալղա: Մի տան բուխարավ ծոխ ա դուս գյոլիս: Տանը ըռշկին ալ վըչխրնուն հետե մի մըծ աղալ ա՝ քարավ հասար քաշած:

Հրաշք տսնալիս ա, որ վըչխրնեն նիյն դըռնալիս աղալը, վըչը սիսուռնուն տանը նանե էրկու ջմարն դուս գյոլիս, մինը մի հիլիվր մարթ, մինն ալ մի պառավ կնեգ: Ըրկոքան ալ ջոխտ աշկավ քոռ:

Կնգանը ձեռքեն մի թինջիր ա լալ, որ վըչխար որ ջիհալ ա, հիլիվըրը փռնալ ա, պառավն ալ կթալ ա:

Հրաշք ալ խոսեցա չի: Ինքը իրան որոշալ ա, թա. «Տըսնմ վերչը հի՞նչ ա դըռնալիս»:

Թինջորան կաթնավ, որ լցվալ ա, երն կալալ, գենցալ տոն: Հրաշք ալ նափասը պահած նի ա մտալ տոն:

Թինջիրան դիրալն տանը՝ ուջաղեն ըռշկին, մի մըծ կութավր չամչուգ լալ, երն կալալ հըրթավ չամչուգավ կաթնը խմալ, մըրթը-կնեգ:

Հրաշք տըսալ ա, որ ըտուց ուտիլու օրեշ բեն չոնն, ըպրուստնեն վըչխրչնեննն, միհ ալ կաթնը: Ինքն ալ թաքուն չամչուգը եր ա կալալ, թինջիրին կաթնե նանե խմալ:

Պռվնեն կաթնը ուտիսն, խոտորու ինգիս, քոն ինիս: Քշանաց երն կնալիս, էրկու թինջիրա կաթնը կթիս: Մինը քշանաց ուտիսն, մինն ալ պիհս կեսօրվա հետե: Աղալեն դուրքը բինալիս, վըչխրնեն հինչուր չոբանը գյլխնոն երե վըտը, գինիսն ըրծիս, ըրակունն ալ հվքվիս, գյոլիս: Հրաշք ալ կաթնեն նանե ուտիս ա, իրան հետե խոտորու ինգիս, դինջինալիս:

Մի օր հիլիվրը պռավեն ըսիս ա.- Այ կնեգ, մի բեն ասմ, ծծաղս վեչ: Ախր, առաչ մի թինջիրա կաթնը էրկու հյոգի ուտիսնք լալ, քուշտունալիսնք լալ: Համա մհեգ մի քանե օր ա քողցածմ մնալիս: Կարող ա մի օրեշ մարթ մըր թինջիրին նանե օքտվիս ա, մընք գիդալիս չընք:

Կնեգը ծծղիս ա, ըսիլիս.- Իս ալ իտի մի բեն ղթարմ արած, ինձ ու ինձ խյալմ լալ ըրիս, որ քի ասմ, դու կծծաղս:

Մարթն ըսիս ա.- Դե որ իտի ա, աս ըրակու կաթնը ուտիս տեղը, իս սոտ տեղը կհազմ, ձեռքս դիբի քի յրկնցնմ: Դու ալ քու ձեռքը դիբի ինձ կբերս: Թա մի օրեշ մարթ ինի, կփռնընք, գաղտնիքը գիդանք:

Էտ ըրակունը հինչուր որ պայմանավորվածծ լալ, հիլիվրն նա պռռավը Հրաշքե փռնիսն, լեց ինիս, ղանչաք ըրիս, որ ասի գիդան՝ հո՞ւ վա, ըշտեղե՞ն հետ ա եկած, խե չի խուսիս, որ իրաք մի բեն գիդան:

Հրաշք ըսկսիս ա խոսիլը, իրան գյուլոխը էկածը մինի-մինի նաղլ ա ըրիս:

Հիլիվրը ուլխոնոլիս ա, ըսիլիս.- Դե լա քի Աստուծ ա ղորկած տեղս, որ մըզ տրըթուն արս: Մըր քուշտեն կմնաս: Մընք կմըռնընք, մըզ կթաղս: Մըր մռնիլեն ետը, մըր իլած վըչխրնեն քի հալալ: Կօզս՝ կմնաս տեղս, օզի չըս՝ կիվաքս կտանս:

Հրաշք հրցրիս ա.- Էս հի՞նչ բեն ա, որ ըրկոքան ալ ջոխտ աշկավ քոռացած ըք:

Հիլիվրը նաղլ ա ըրիս, որ մի վախտ տեղս ավադ՝ մըծ շեն լալ: Շենեն գյլխեն սարեն երկեն խոր ձոր կա: Տեղը քաշկրն արսա եկալ: Իրաց հանգիստ չըն տվալ՝ օմեն օր գյոլիսն լալ նախշուտ խոխենքը փխցրիս, իլած վըչխըրնե տնիլիս: Էնքան չարչարանքն տվալ, որ շենը իստի խարաբա յա դըռալ: Մընք ալ որ մծացածնք լալ, մըզ ըսպանալ չըն: Ըշկռնես դուսն կալալ տարալ, որ տըսննք վեչ օրական քանե վըչխարն տնիս:

- Դե որ իտի ա,- ըսիս ա Հրաշք,- մհեգ կգինմ ձեր աշկրը կբերմ:

Հիլիվր նա պռռավը շատն ղանչաք ըրիս, լեց ինիս, որ գինի վեչ՝ խաթա մաչ կինգի, անջաղն իրան ճարած, նորից կմնան անտեր: Հրաշք ըսիս ա.- Իմ անմը բեյթուն տեղն չըն դիրած Հրաշք: Թա իրաց անմը քաշկ ա, իմ անմս ալ Հրաշք ա: Դուք հանգիստ կացեք: Իս ձեզ առանց աշկի թողի չըմ մնեք,- ըսիս ա Հրաշք, գյորդան կպիս, նետը նի գիծիս օսսը, հղե ինիս, գինիս դիբի քշկերեն շենը:

Գինիս ա սարն անց կնալիս, երի դըռնալիս խարաբա յուրքնեն, մին ալ էն ա տսնալիս՝ մի խոր ձորու նհետ զուռնա-դոմբու սաս ա գյոլիս: Պատառ ալ դվեր ա կնալիս, տըսնալիս ա հի՞նչ՝ ձորը լիգը քաշկ ա, խառն-

ված մին-մինու, որը զուռնա յա ըծիս, որը դոմբի ա թկիս, միքանենը պարն գյուլիս, խաղն ըսիս, կոխլն կնալիս, մի խոսքավ քեփ-ուրախեթուն ա՝ հու հինչ ուզիս ա, ըրիս ա:

Քաշկրը որ Հրաշքե տսնալիսն, վազն տալիս, գյուլիս տնիս մի մըծ, տասը գիզանուց չոր կաղնե ծառու կոշտ, ըսիլիս, որ.- Մըր մաչեն պարապ մարթ չկա: Հաց ուտիլեն վախտը մուտուննալիս ա: Հազր փադ չկա, որ փլավ իտնք, խրավածարնք: Շուդ արի, էս գերանը ճրղոտի, տոր մըզ:

- Աշկես երե,- ըսիս ա Հրաշքը,- փադ ճղիլը իմ սանադն ա:

Ըսիս ա, կացենը եր ունիս, կաղնե գերանը բոյեբոյ մաչավը կես ըրիս, կացենը թուղիս ճեղքմը, ետ դռնալիս հարայ-հրոց տալիս, օմեն քաշկրը հվքիս, ըսիս.- Օմեն ալ մին-մին ծռքրնետ դրեցեք գիրանեն ճեղքմը, որ օժ արնք ճղընք, որ կարմ այտս ճրղոտիլ, կտուր-կտուր փադ անիլ:

Քաշկրը շատ հուգի յըն ինիս: Հրաշք քաշկերեն մախոսան ա ըսիս.- Մի-մի ծեռք դիրեցեք ճեղքմը, որ օմեն քաշկերեն տըղ ինի:

Քաշկրը մինը-մինեն կուփե-կուփե ըրիլավ գյուլիսն ծռքրնեն դիրիս գիրանեն ճեղքմը: Հրաշք տսնալիս ա, որ ալ դուսըմ քաշկ չի մանցած, լընգ ա տալիս, կացենը գերանեն ճեղքեն նանե դուս ունիս: Գերանը թիլու նման պընդ հոպ ա տալիս քշկերեն ումունուց ծեռքրը ճզմիլիս: Քաշկրը ցավից հարչան հարայ-հրոցն տալիս, լեցն ինիս, խնդրիս թա.- Հինչ որ օգս՝ կտանք, թաքլա իրաց ազադի:

Հրաշք ըսիս ա.- Էս սարեն եթկեն մի շեն կա, ծեր ծեռոքը խարաբա արած: Տեղը մհեգ էրկու պառավ մարթ կաննի: Ընդոց աշկրը հանած եք, բերած: Ըսեցեք գիդամ, աշկրը ըշտեղ եք պահած, հի՞նչ եք արած, նոր ծեզ կազադմ: Թա չի, ծեզ պըրծում չկա: Թա ծեզ քաշկն ըսիս, ինձ ալ Հրաշքն ըսիս:

Քաշկերեն գյլխվրը ըսիս ա.- Քու ասած մարթկանց աշկրը բերածնք վիզանուք սարքած, թազա հարսանը վիզավը կախ տված: Եք մըզ թիլին նանե ազադի, գիննք եր օնմ, տամ քի, տար:

- Տեղն ըսեցեք, իս գինմ բերմ: Քաշկեն օմեն խոսքեն ինա չի հվատս,- ըսիս ա Հրաշք, իրան խոսքեն տար կնալիս:

- Էն երե քըրծեն տակեն մի խոր քրատակ կաննի: Փըսեն, հառհնը մին ալ քավերը նայեն տեղը նստած: Հարսանը աջ կուռանը թրափեն վիզանունքեն երե հիլիվերեն աշկրն ա, ծեխե թիրափենը՝ պռավեն: Հարսանը ուսսերեն երե էրկու սիպտակ ղոնեգ կա նստած: Օմեն մի ղունեգեն նանե մի թըփռ դուս կօնս, կտանս աշկրը դիրըս իրանց տեղը: Ղունիգնոն թըփռավը կսղալս: Կտընս, որ աշկռնեն սուրինացալ ա, լուսը եկալ տեղը.- ալ-

լա ըսիս ա քշկերեն գյլխավրը, այտս ղանչաք ըրիս, որ իրաց թիլին նանե ազադի:

- Չէ՛,- ըսիս ա Հրաշք,- իս քանե տանըմ վեչ փորձմ, պռվնեն քանե լուս աշխարքը տըսննն վեչ, ձեզ ազադվիլ չկա:

Ըսիս ա Հրաշք, գինիս ա, հարսանը դոշեն նանե աշկրը եր ունիս, ղունոգնան նանե էրկու թըփռ բուք տալիս, հղե ինգիս պռվնոն կոշտը:

Քաշկերեն գյլխավրը հինչ որ ասած լալ, Հրաշք ինդի ալ ըրիս ա: Պառավնոն ըշկերեն լուսը գյոլիս ա տեղը: Ըրկոքան ալ Հրաշքե խստիսն, ըսիլիս, որ.- Դու մըր տղան, մընք ալ քու ծնողնեն: Մհեգ հինչ ուզիսս՝ որոշի, հինչ ուզիսս՝ արի: Մըր իրավունքը քու ձեռքեն ա:

Հրաշք ըսիս ա.- Ղորթ ա, գենցալմ քաշկերեն դիվանը արալ, մհեգ ալ նայեն թիլոմը տնջվիլիս: Իս ալ ոչ մի բենից վախ չօնմ: Համա դե ինձ մար օնմ, աշկը հղեց ա: Իս նի ինգմ առաչ, դուք վըչխռնեն հետես քշեցե՛ք, եկե՛ք: Գինընք մըր շենը, իմ մոր նհետ միասին ապրնք միասին:

Հրաշք քաշկերեն դըվանը արալ ա, թողալ թիլոմը դեչանը ասօր տնջվիլիս: Ինքն ալ իրան դովրոմը ապրալ, իրան մուրազեն հասալ:

Ըսիսն, որ մհեգ ըշխարքմս իրք քաշկ ա շոռ գյոլիս, քշկերեն փըսեն, հառհինը, մին ալ քավերը, ուզիսն մի նոր հրաշք ճարն տանն իրաց մախլողը ազադն: Կկարն ճարի՝ Աստուծ գիդա:

11 (11). ԽՈՍՔ ՃԱԽՈՒՂ ԴԱՐՎԻՇԸ

Նաղլն ըրիս, որ մի մարթ տոնը, տեղը թողած, տասը տարե մանցալ ա ղարիբթունում: Տասը տարմ, տասը քաղաք ա շոռ եկալ, հարուր մի տեղ բեն ա մտալ դուս եկալ, կրեցա չի մի հաջողութուն ճարի, մի հացու տար դըռնի: Վերչը որոշալ ա՝ ետ դըռնի, գինի տոն:

Ղարիբեթուն գինիլուց տոնը թողած լալ կնգանը, մին ալ տասը տրեկան մի տղան:

Մի քշանաց շուդավ, որ հղե ա ինգիս գինի տոն, քաղաքեն դրբզին ըռշկին տըսնալիս ա մի քոռ դարվիշ նստած, կնչիս ա. խոսքմ ծխիս, խոսքմ ծխիս:

Էտ մարթը վըտ ա կնալիս ինքը իրան խյալ ըրիս, ըսիլիս. «Հա, ըշխարքմս օմեն բենա առուծախը կա, լըսածըմ, տըսածմ... Պա խոսքեն ծախիլը վը՞րն ա», խյալ ա ըրիս, խյալ, մուտունալիս դարվիշեն, ըսիլիս.- Դարվիշ բաբա, քու խոսքը հի՞նչ աժի:

- Իմ խոսքես մինը մի վըսկե աժի,- ըսիս ա դարվիշը:

Էտ մարթը տասը տարմ աշխադանքից ետ գիձածը, ջուբումը իլածը տասը վըսկե ա հնիս, մի վըսկե տալիս ա դարվիշեն, թա՝ մի խոսք ծախի, օնմ:

Դարվիշը ըսիս ա.- Կանչած տեղը գինի՝ ուլխցրի: Չկանչած տեղը գինի մա՝ սրտրնեն նղցրու:

Ղարիբը խյալ ա ըրիս, ըսիլիս.- Դարվիշ բաբա, պա լա խոսքը է՞տ ա:

- Հա՛,- ըսիս ա դարվիշը,- խոսքը հասկացողեն հետե շատ մըծ խոսք ա:

Ղարիբը մի վըսկե ալ ա տալիս: Դարվիշը ըսիս ա.- Սրտանց ըշկդիրածը նախշուտ կինի:

Ղարիբը խյալ-խիյալ ա ըրիս, ալլա մի վըսկե տալիս դարվիշեն: Դարվիշը ըսիս ա.- Սաբրեն չյեշուղը, քյափուր կինի:

Ղարիբը ալլա խիյալ ա ըրիս, մինը մի վըսկե արժեք արած դարվիշեն խոսքերեն նանե բեն չի գյուլոխ ինգիս, ալ շարունակմ չի խոսք օնիլը: Հղե ա ինգիս, գինիլիս:

Շատ ա գինիս, թա խրեգ, Աստված գիդա: Գինիս ա մի տեղ, տըսնալիս հղցին նանե պատառ հըռե մի մըծ քյարվան ա վեր եկած: էտ քյարվանեն նանե մի մարթ իրան փփաղավ ա ըրիս, կնչիլիս, որ՝ եք տեղս, եք տեղս:

Ղարիբը որոշիս ա դարվիշեն ծախած խոսքը փորձի, գինիս ա:

Կանչուղը ըսիս ա.- Մըր քյարվանեն մի քանե կոժ ջուր ա պետքի: Ջուրհորից որ կարաս ջուր հանիլ, քի տասը վըսկե կտանք:

Ղարիբ մարթը բենեն անտեղյակ նի ա մտիս, մի քանե կոժ լցրիս ա, հնիսն:

Մին ալ էն ա տսնալիս մինը իրան անջուկը փռնալ ա, ասալ.- Քի տեղս հի՞նչ բեն օնս: Էս ջուրը անտե՞ր ա, որ տնիսս: Հո՞ւր նանեյս իրավունք իք կալած:

Ղարիբը ետ ա յիշիս, տսնալիս ա՝ իրք գյլխանե մի զարզանդ դև ա:

Դևը ղարիբեն անջուկը փռնած տընիս մի տան, դուրք բինալիս, ըսիլիս.- Տըս, տեղս հարուրավր մարթկանց քյալլա կա: Էս օմենը իրաց գյլխնեն թողածն տեղս՝ քի նման ջրու եկածնեյն, մի թաք քյալմա խոսքու դուզ պատասխան չտալու հետե: Մհեգ էտ խոսքը քի ալմ ըսլական: Դուզ ջուղաբ տաս, անամմ տլական, հղե դիրըմ: Թա չէ՝ քու քյալլան ալ կբիցրանա ըստուց երե:

Էսքանը ըսիս ա դևը, մի օրեշ տան դուրք բինալիս: Տանը էրկու աղչիգ ա հնիս նստած: Մինը էնքան նախշուտ, որ իրիննակեն կարուղ ա ասի, որ. «Դու դուս վեչ գյոս, իս քու տեղը կկարմ դուս գյոլ, աշխարհը լուսավո-

րիլ»: Էն միևն ալ մի սըվ, անսիփաթեն միևը լալ. սուտանեն ալ որ տըսնիլ լալ, օխտը օրվա հղե հըռե լալ փախչիլ:

Դևը հրցրիս ա.- Էս ըղչգերանցը նախշուտը վը՞րն ա:

Ղարիբը խյալ ա ըրիս, մթկոմը ըսիս. «Մի բեն, որ ինծ ազադվիլ չկա, պետք ա դարվիշեն նանե կալած խոսքս ասմ, ջհանդամը, հինչ կըդըռնի, թող դըռնի»: Ըսիս ա.- Դևը ապրած կենա, իրեսնաց նախշուտը նախշուտ չի, սրտավ սիրածը նախշուտ կինի:

Դևը ծծղեցալ ա, ասալ.- Այ մարթ, դու պը՞լս, գի՞ժս, էս իրիննակեն նման շփղ-շափաղ տվող աղչիգը թողած, հի՞նչս ըսիլիս: Սորին խյալ արի:

Ղարիբը խոսքը փոխիս չի, ալլա իրան խոսքն ա պնդիս, որ ըրկուքնուց ալ Աստուծ ա ըստեղծած: Մարթ կա ընդուր կսիրի, մարթ ալ կա, էն միևեն:

Դևը իրք հետ խոսքը շոռ ա տալիս: Ղարիբն ալ իրք հետ իրան խոսքն ա ըսիս:

Վերչը դևն ըսիս ա.- Հարուր տարե յա, որ իս տեղս ըպրիսմ: Հարուրուվըր մարթինքն եկած տեղս ջուր տնիլու: Ոչ միևը կրեցած չի քի նման մի տղըմարթու դուզ խոսք ասի, օմեն ալ մանցած'ն տեղս, ինծ հետե կեր դըռած:

Դևը բիրիս ա էրկու նոռն ա տալիս ղարիբեն, ըսիս.- Քու տղամարթ խոսքեն հետե էս նոռները անամմ տալիս, տար ապրի քի հետե: Համա հինչ տըսածս, հինչ դըռալ ա, ուրեշու ասս վեչ:

Ղարիբը ուլխացած դևեն ձեռքը պչիս ա, շնորհակալութուն ըսիս, գյոլիս պակաս ջուրն ալ հնիս, ինքն ալ դուս գյոլիս ջիրին հորեն նանե, տասը վըսկեն իք ունիս, դիրիս ջուբոմը, իրաց շենեն հղեն փռնիս, գինիլիս:

Էքսի քշանաց լուսը բինվալիս ա ըշխարքեն երե: Պարի լուսն ալ բենվի ձեր ումունննուց երե: Լա լուսըբեցեն ղարիբը հսնիս ա իրաց շենը: Իրան տոնը մի թալաքա կուճի փանջարա յա հնիս, յիշիս ա տըսնալիս՝ կնեգը նա է մի ջահիլ տղու նետ քոն: Մտքավը հնդի ա անց կնալիս, որ ինքը ետ ա հնգյած, կնեգը օրեշ մարթ ա օզած, բերած տան երե:

Սուս-փուս ետ ա դըռնալիս, գինիս ախպուրը տոնը: Տսնալիս ա ինդոք ալ օմեն նայեն քոն: Ախպուրը թիվանգը եր ա ունիս, գյոլիս իրաց տոն, փանջարավը թվանգը մկնիս, որ երի արի կնգան նա կողքեն տղըմարթեն վեր գիձի, ըսպանի:

Լա թվանգեն վըննը հվիքիս տեղը, մի բիրդամ կնգանը կողքեն տղամարդը սաբիր ա գյոլիս: Ղարիբը մըտն ա բիրիս դարվիշեն ծախած իրքմինջին խոսքը, ալ թվանգը երի չի ըրիս: Սալամաթ ետ ա քշիս, գինիս ախպուրը տոնը: Տըսնալիս, որ քունե երն կացած: Ախպերը տըսնալալ

իրան թիվանգը ախպուրը ձեռքեն, մնալիս ա զարմացած, քա՝ էս հի՞նչ բեն ա:

Ղարիբքունից եկածը նաղլ ա ըրիս գյլխեն եկածը:

Ախպերը եր ա կնալիս, ախպուրը խստիս, պչպուրոտիս, թվանգը իք ունիս, ըսիս.- Այ տնաշեն, էն քու տղան ա: Պա դու ընդոր տասը տրեկան խոխա թողալս գենցալ, տասը տարե ա ղարիբեթունմ: Աստուծը պահի, մծացած ա, տղամարթ դըռած:

Երն կնալիս հվքվիս գինիս իրաց տոն: Երկար, քաղցր սոհբաթեն ետը, ձեռքը տնիս ա ջուբը, մի նոռնը կտրիս, որ բիրընեն քղցրցրն: Տըսնալիսն հի՞նչ՝ լիգը անգին քարեղեն ա: Ամեն մի պարիկամա մի քանե քարեղեն ա տալիս: Մնացածն ալ ծխսիս ա, ապրուստ ըստղծիս, դարվիշեն տված խոսքավը ըպրիս:

12 (12). ՏՎՐԱԾԵՆ ԱԽՐԸ

Նաղլն ըրիս, որ քյոհնա ըյամեն իլալ ա, իլա չի, մի քյասիբ մարթ նա մի կնեգն հնիլիս: Ըտուց էրկու կուճի տղա յա հնիս, միներն անմը Փարամազ, միներնն ալ՝ Մանամազ: Մարթեն փեշակը նախրչեթուն լալ: Էտ միալմը քյոհնա ադաթ լալ: Օմեն մի տվրատար շհնացե օրական մի հացն լալ տալիս նախրչուն:

Էտ մարթը օմեն օր շեներն նախիրը տնիս լալ պիհս: Ըրակունն ալ հացը հըվքիս, բիրիս տոն, իրաց հետե ըպրիլիս:

Մի քշանաց նախրչին քունե եր ա կնալիս, կնգանը ըսիլիս.- Այ կնեգ, մի բեն ասմ, համա դե հնձ երե ծծաղս վեչ:

- Հի՞նչ բեն ա,- հրցրալ ա կնեգը:

Նախրչին ասալ ա.- էրկու քիշեր ա, որ ըրազի մի սիպտակ մրքավր հիլիվր մարթ գյոլիս, հնձ ըսիս ա. «Օմեն մի մարթ որ ծնվիս ա, ծնված օրը մընք ճակատագիրը գիրիսնք: Դե, մինջա Աստուծա անսխալ բեն փռնիլիս, հունչուր ա դըռած, մռացածնք քու ճակատագիրը գիրնք: Միեգ քու ավալտ ուզի՞ս պարի անց կանա, քա՝ ախրտ: Դե իս խյալ-խյալմ ըրիս, կրիս չըմ մի բեն ջուղաբ տամ: Դու ասի, որ մհետ ալ գյո հրցրի, հի՞նչ ասմ:

Կնեգը ըսիս ա.- Արազը սոտ չի հնի: Ղորթ բեն ա: Մարթը սիվթա ջահիլ ա հնիս, օժը տեղն ա հնիս, հինչ դժվարեթուն, նեղութուն հնի, կկարի յոլա գինի, ապրի: Համա դե ետնե, հիլիվերած ա հնիս, օժը պկասած, ապրիլը

դիժիրնալիս ա: Մարթեն ախրը պետք ա սորին, պարի ինի: Միետ ալ ըրազի որ էտ հիլիվրը կգյո, կիրցնի, կասս՝ ուզսիմ իմ վերչը պարի ինի:

Ըրազի իրքմինջի դոնմնն գյուլիս նախըրչուց հրցրիս՝ ճակատագիրը որոշելու հետե, նախրչին ալ իրան կնեգը հինչ որ մասլահաթ լալ գիդացած, ասած, ինդի ալ ջուղաբ ա տալիս հիլիվերեն:

Նախրչուն կնեգը էնքան նախշուտ լալ, կարող լալ իրիննակեն ասի, որ՝ դու դուս վեչ գյոս, իս կկարմ իմ նախշուտթունավ շփղշափաղ արմ, աշխարքը լուսավորմ: Տոնն ալ շենեն ղրաղեն լալ: Տանը կողքեն ալ մի քանե քյոհնա, մըծ-մըծ ծառր կար: Ծռերեն տակեն ալ մի շատ վարար, սառնը ախպիր: Շենավը հինչ քյարվան, հինչ ղարիբ մարթինք գյուլիս անցն կնալիս, էտ ըխպիրին երե վերն գյուլիս, դինջինալիս, ջուր խմիս, հղեն շարունակիս:

Մի օր, դիբի ըրկոնաց, մի հարուստ թաջիրու քյարվան գյուլիս ա ըխպրին երե վեր գյուլիս: Թաջրեն նոքյարնեն գյուլիսն նախրչուն կնգանը խնթրիս, որ մի ղզղան տա, տանն, պատառ շորվա իփն, ղզղանն ալլա բերն:

Նոքյարնեն ղզղանը տնիսն, օմեն հինչ թողած, թաջրեն նաղլ ըրիլիս նախրչուն ջահիլ կնգան նախշուտեթունեն հետե: Դու մի ասի, թաջրեն կնեգ չօնի:

Քիշերվա մի վախտ թաջրը եր ա կնալիս, ապրանքը բիռնիլիս ծիանցը, էրկու նոքյար թաքուն գինսն նի մտիս նախրչուն տոնը, կնգնանը բերանը կպիս, որ սաս չհանի, եր ունիս նհտնոն, տնիլիս:

Քշանաց շուդավ նախրչին եր ա կնալիս, տսնալիս կնեգը կավչնի: Դես՝ կնեգ, դեն՝ կնեգ, շոռ ա գյուլիս, ճրվիս չի:

Նախրչին ալ կրիս չի շինամաչ դուս գյո: Մի ղոլնաց խուխենցը ինա չի լալ թողի տան մանակ, մի ղոլնաց ալ՝ տեղեն նհետ եր կանուղը հրցրիս լալ՝ պա կնեգյտ հի՞նչ ա դըռալ, պա գիդացա չըս հի՞նչ տեղ ա գենցալ, հո՞ւ վա տարալ: Իստի հարցերը չլսիլու հետե՝ ամոթու, մի քշանաց ալ նախրչին էրկու խուխենցը կուռնռնեն փռնիս ա, յաբախտին ա, գյուլոխ եր ունիս, մի հղոք թուղիս, գինիս:

Նախրչին խոխենցն նհետ շատ ա գինիս, թա՝ խրեգ, Աստուծ գիդա, հսնիս ա մի վարար գետու: Գետեն երե կարմունջ չի ինիս, որ անց կանան: Խուխնցը մինեն թուղիս ա գետեն կողքեն նստած, մինեն շլկիս, որ գետը անցկցրի, ետ դըռնի, էն մինը տանի:

Հակառակը հակառակ ա ինիս, լա հսնիս ա գետեն կեսը, լսիս ա, որ գետեն կողքեն թողած խոխան լեց ա ինիս, ճվճվալիս: Ետ ա յիշիս տըս-

նալիս մի գյուղ երի ա տված, որ խուխեն տանի: Ինքը գետեն մաչեն նետ ըսկսիս ա հարայ-հրոց տալը. շշկռվիս ա՝ շլակեն խոխան վեր ա ինգիս, գետը քշիս ա տնիս: Ուզիս ա հասնի գետեն կողքեն խոխան ազադի, էն ալ գյուղը իրան նանե շուդ ա հսնիլիս, ըռըխն ունիս, փխցրիս, տնիլիս: Տվարածը էրկու խոխենքն ալ նհախ տեղը կուրցնիս ա, մնալիս մավի վըտը: Պատառ ինքն իրան խիյալ ա ըրիս, որոշիլիս, թա՝ «Ալ իմ ապրիլը հուր ա պետք: Կնեգս ինդի ա անհետ կորալ, խոխենքս ալ իստիյմ կուրցրալ: Միեգյաց ետը ալ իմ ապրիլը հի՞նչ աժի: Սորինն էն ա, իս ալ նի ինգմ գետը, մըռնմ, պրծնմ»: Ըսիս ա, իրան նի գիծիս գետը:

Ըստուծանաց գետեն կողքավը մի քանե մարթիքն լալ գինիլիս: Տըսնալիսն, որ մի մարթ իրան նի ա գիծալ գետը: Վազն տալիս, հալա խըղդված վեչ, գետեն նանե դուս ունիս:

Նախրչուն օշը որ գյուլիս ա տեղը, գետեն նանե իրան դուս ունուղնուն նաղլ ա ըրիս իրան գյլխեն եկած անհաջող փորձանքնեն: Էտ մարթիքն ալ թոհմաթն տալիս, որ ինա չի իտի բենու հետե գյանքը խթարիլ: Իտի բենը Աստուծեն ալ նախոշը կգյո: Օմեն մի մարթ, օմեն մի բենու հետե, որ իրան գետը գիծի, ալ աշխարքմ մարթ չի մնա:

Այտս էտ մարթինքը նախրչուն նաղլն ըրիս, որ իրանք ալ օմեն մի շինացե յըն, հնգեր, հրևան մարթինք: Սորին կինի, որ ինքն ալ իրաց նետ հնգերանա, միասին գինն ղարիբբուն: Ետերն ալ Աստված մըծ ա, մի բեն կորոշնք:

Նախրչին համաձայնվմ ա, անծանոթ մարթունցը նետ հնգեր դռնալիս, գինիս:

Նախրչին անծանոթ մարթկանց նետ հնգրացած գինիսն դուս գյուլիս մի մըծ քաղաք: Էտ քաղաքմը օմեն մինը մի հարուստ մարթու հետե փահլեթունն ըրիս, ըպրիլիս, փող ըշխդիլիս: Թա էտ քաղաքըմը հինչքան վախտն մնալիս, իրաք գիդան, մին ալ՝ Աստուծ: Համա դե, էտ ալ ասմ, որ ղարիբական տղեքը միշտ իրար նետ ջիհիսն լալ, մին մինու աշխադանքեն ցավեն, դարդեն տեղյակ ինիս:

Մի ըրակու ալ տղերքը որ հվքվիսն մի տեղ, մին մինու քեփ հրցրիս, այտս որոշիսն, որ ղալին վախտ ա ղարիբբունու մաչե յըն: Մհեգ իրաց հարազատնոն ըշկռնեն հղեց ա, նիգյարանն: «Մընք ալ հարկավեր ա ետ դըռննք, գիննք»: Որոշիսն էքսի օրը, գինիս բազար, օմեն-մինեն հինչ որ պետք ա տան հետե, ունիս, հզրցրիս, թադարիք տըսնալիս, որ հղե ինգյն:

էտ օրը քաղաքմը սաս ա ինգիս, որ երգիրեն թաքավերը մըռալ ա, իրան ալ ժառանգ չօնի, որ թաքավեր դիրն: Մի ղուշու միջոցավ ժողովրքեն նանե թաքավերն նշանակելու:

Ղարիբ տղերքը որոշիսն էրկու օր ալ մնան, տըսնն թաքավերը հինչո՞ւրն նշըննկիս, որ գինն, շեննն ալ նաղլ արն երգիրեն թազգա խաբարից:

Թաքավեր նշանակելու հետե երգիրի օմեն տեղեն նհետ մարթինքն հվքվիս, գյուլիս: Ղարիբ տղեքն ալ իրաց թազգա շորրը գինալիսն, գինս թիմիշա:

Պալատեն ըռշկեն՝ մըծ մեյդանմը, բիրիսն մի շատ բեցուր թախտն կպիլիս: Վազիրնեն նարդիվանավ բիցիրնալիսն թախտեն երե, թաքավերական ղուշը թռցրիսն: Գյովդա փարվազ ա ըրիս. փարվազ գյուլիս՝ նախրչուն գյլխեն վեր գյուլիս:

Վազիրնեն գյուլիսն, տսնալիս մի անծանոթ, հասարակ մարթ ա, համա դե, թազգա շորր կա գեցեն, ինքն ալ շնորքավ մարթ ա ըրվալիս: Հրցրիսն.- Դու հո՞ւվս, ըշտղացե՞ յըս, հի՞նչ սանադու տար մարթս, տեղս հի՞նչ բեն օնըս:

Նախրչուն լուզին կապ ա ինգիս: Աստվածանից բախտը բիրիս ա. ինքը էն թաջրեն տանը որ բեն լալ ըրիս, էտ թաջրն ալ տեղտ ա ինիս, տըսնալիս ա, զարմանալիս: Մուտունալիս ա, նախրչուն տըրեթուն ըրիս, վազիրներեն ըսիլիս.- Էս մարթը իմ ախպուր տղան ա:

Վազիրնեն նախանձմն, որ իրաց նման մարթինքը թողած, ղուշը վեր ա էկած մի թաջրու ախպուր տղու գյլխեն: Վազիրնեն ըսիսն.- Թաջրը ապրած կենա, խոսք չօնինք ըսիլու, բախտու բեն ա: Օրենք կա: Ղուշը պետք ա իրք հետ թըռցըրինք, նոր թաքավերը որոշնք:

- Օրենքեն դեմ չըմ,- ըսիս ա թաջրը,- տարեք թռցրեցեք:

Բախտի բեն ա: Ղուշը իրք հետ թռցրիսն, իրք հետ ալ գյուլիս ա, նախրչուն գյլխեն երե վեր գյուլիս: Թաջրն ալ թեգյունք ա դըռնալիս, նախրչուն թաքավեր նստցրիս:

Օմեն հինչ որ երգիրմ խաղաղվմ ա, թազգա թաքավերը կնչիս ա իրան թեգյունք իլած թաջրեն, ըսիլիս.- Էս մըծ լավութունը, որ դու ինձ արալս, իս ալ քի նշանակմմ երգիրեն օմեն թաջրներեն գյլխավր թաջր, համալ՝ թաքավերական օմեն առուտորեն իրավունքը տալիս քի:

Վախտ ա անց կնալիս, դովրըբարեն թաքավերնուն նանե դուշման թաքավեր ա ինիս: Գիդալիս ա, որ հըրևան թաքավերը մըռած ա, տեղը մի ղարիբ մարթ ա թաքավեր նստած, ղոշունքյաշլըղա ըրիս, նոր թաքավե-

րեն երգիրեն նաեե մի քաեե մհալու տար դըռնալիս: Թազա թաքավերեն նամուսեն դոռ ա գյոլիս: Ինքն ալ ղոշուն ա կպիս, գինիս կըռըվ:

Կըռվըմը մի տղա շատ անվախ խըլքու տար ա դուս գյոլիս: Թաքավերը տսնալիս ա, որ էտ տղան շատ հունարավ ա, խըլքու տար ա, նշանակիս ա ղոշուներն զորավար:

Ղոշուներն նոր զորավարը կրիս ա դուշման թաքավերեն ղոշուներն հաղթիլ, եր կալած մհալներն ետ-եր օնիլ, հալա գինիս նի ա մտիս դուշման թքավերեն սահմանը:

Հունչուր ա դըռնալիս, էտ կռվեն վերչըմը, թազա զորավարը յարալու ա դըռնալիս: Դե եք ասմ, որ էտ կըռվոմը մի ջահիլ հաքիմ ալ մըծ անմ ա դուս բիրիս: Հինչ յարալու մարթ տընիսն կոշտը, ինդի դեղ ու դարման ա ըրիս, որ մի քաեե օրմ սուրհինհալիսն, գինիս իրաց բեներ:

Թաքավերը հոքմ ա տալիս, որ իրան պալատմը առաներին շինութուն տան ջահիլ հաքիմեն նա ջահիլ զորավարեն, որ յարան սղրի: Պալատեն մաչեն ըշխադուղ մի շնորքաշատ կնգան ալ թամբահն ըրիս, որ քիշեր-ցիրեկ մոր նման խիտմար արի յարալու զորավարեն: Զորավարեն յարան սղնալու հետե, օմեն օր իրք հետ խաբարն տալիս թաքավերեն:

Անց ա կնալիս մի վախտ, թաքավերեն խաբարն տալիս, որ զորավարը շատ սուրնացացած ա, եր ա կնալիս շոռ գյոլիս, ըսիս, խուսիս, ծծղիլիս: Թաքավերը գինիս ա զորավարեն տըսնի. խեր-խաբարեն երե ուլխնալիս ա:

Գինիս ա՝ հսնիս էն ութախեն, ըշտեղ զորավարեն դեղ-դարմանն լալ ըրիս: Օթախեն նեսեն նհետ օրախ ղլմղալ ա գյոլիս: Վըտ ա կնալիս, թա՝ տըսնմ հուվն, հի՞նչն խուսիլիս:

Լսիս ա, որ զորավարը իրան պահուղ կնգանը ըսիս ա.- Քաեե վախտ ա դու ինձ պիիսս ինդի, հունչուր հալալ մարը կպահի իրան տղեն: Խնքրիսմ նաղլ արս՝ գիդամ, դու հո՞ւվս, ըշխարքըմը հի՞նչ օնս, հի՞նչ չօնս, հի՞նչ լավեթուն կարամ անի քի, որ քու լավեթուներն տեղը դուս գյո:

Ղարավաշ կնեգը նաղլ ա ըրիս.- Իս մի նախրչու կնեգյմ լալ, ըպրիսնք լալ մի շեներ: Մըզ էրկու տղա լալ, միներն անմը Փարամազ, միներն ալ՝ Մանամազ:

Էս խոսքեն երե էտ կնեգը տսնալիս ա՝ տղեքը ռանգը-ռուշտըրներն գիծալն: Հրցրիս ա.- Ձեզ հի՞նչ ա պդահալ:

- Ոչ մի բեն, դու քու նաղլը շարունակի:

Էտ խոսքեն երե, թաքավերեն ալ միետ մին ուզիս ա նի մտի նես, նի չի մտիս: Որոշիս ա՝ տըսնի էտ կնեգը հալա հինչ ա նաղլը ըրլական:

Ղարավաշ կնեգը նաղլը շարունակիս ա, ըսիլիս.- Մըր տոնը շենեն ղրաղեն լալ: Տանը կողքեն ծառրր լալ, ցորտ ախպիր լալ: Մի ըմռան օր, մի թաջր իրան քյարվանավը եկալ ա ըխպիրին երե վեր եկալ: Նոքյարնեն եկալն ինձանե մի ղզղան տարալ, որ շորվա իփն: Դու մի ասիլ, էտ թաջրեն կնեգ չօնի: Նոքյարնեն տըսալն, որ իս ջահիլ, շատ նախշուտմ, գենցալն թաջրեն ասալ: Թաջրեն նոքյարնեն քիշերը եկալն իմ բերանս կապալ, տարալ: Իս թաջրեն ենթարկվալ չըմ: Սամթմ գիձալ, փախալ, եկալ մըր շենը ճարալ: Տըսալմ մըր տոնը խարաբա յա դըռած: Մարթս նա խոխենքս կավչնն: Հինչքան շոռմ եկալ, կրեցա չըմ ճարի: Մի պարի մարթու միջոցավ եկածմ տեղս ղարավաշեթուն ըրիլիս:

Էսքանը նաղլ ա ըրիս, ըսկսիս լեց հինլը:

Հաքիմ նա զորավարը ըսկսիսն սըրտ տալ անբախտ կնգանը, ըսիս, որ. աշխարքը մըծ ա, վերչը սորին կինի:

Ղարավաշ կնեգը ըշկերեն ըրտասունքը սիրբալ ա, ասալ.- Տղերք ջան, մատաղ ինմ ծեզ, դուք նաղլը ըրեցեք, տըսնմ՝ դուք հի՞նչ օնեք, ըշտղացե՞ եք, հարը, մարը ըշտե՞ղն, հի՞նչն ըրիլիս:

Հաքիմը ըսիս ա.- Իմ անմը Փարամազ ա: Հար, մար տըսած չըմ, ինձ մի չոբան ա պահած, մծցրած: Չոբանը ինձ նաղլ ա արած, որ՝ «Միետ մի գետու կողքե վըչխարմ լալ պիհիլիս: Միհն ալ էնմ տըսալ, մի գյուլ մի խոխա յա ըռըխմ կալած, լեց ըրիլավ, տընիս ա: Երմ կացալ հարայ-հրոց տվալ, շները քուշ տվալ, գյուլը վխեցալ ա, խոխան վեր ա գիձալ, փախալ»: Այտս տարալ ա իրան տոնը, իրան խուխեն նման պահալ, մծցրալ, ղորկալ էս մըծ քաղաքը ուսումի: Իս ալ սորին սվերալմ, հաքիմ դըռալ: Էս անցած կըռվավն ալ, որ աշկի յըմ ինգյալ, թաքավերը նշանակալ ա պալատեն հաքիմ:

Հաքիմը որ իստի նաղլ ա արալ, զորավարն ալ ծծղեցալ ա, ասալ.- Լա իմ գյանքես նաղլն ալ քունեն նման ա: Խուխեթոնս մի թալաքյա մտես ա: Ծնողներս, ըրազու նման հիշիլիսմ: Ինձ Մանամազն լալ ըսիս: Ալլա ըրազու նման մտես ա, որ միետ իմ հար ինձ շլակած մի գետավ անց լալ կնալիս: Գիդալիս չըմ հինչ ա պդահալ, որ իմ հոր շլակեն նանե վեր ըմ ինգյալ, նի ինգյալ գետը: Գետը շատ վարար լալ: Իմ հար կրեցա չի ինձ փռնի, ազադի: Մի ջղացպան եկած ա հնիս, որ գետեն նանե ջուր քընք արի՝ դիբի արխը տանի, ջեղացը բինիցիրի: Միհն ալ էն ա տըսնալիս՝ գետը մի խոխա յա տնիս: Երի ա տալիս գետեն, խոխան փռնիս, տնիլիս ջեղացը: Էտ խոխան իսմ հնիլիս: Ջղացպանը ինձ պիհս ա, մծցըրիլիս: Խյալ ա ըրիս, որ՝ «էս տղան պահմ քուշտես, պետք յա ինձ նման մի ջղացպան դըռնի»: Բի-

րիս ա ինձ ղուրկիս քաղաք, որ ուսում առնմ, մի օքտակար մարթ դըռնամ: Ուսումս վերչացրալմ, երգիրմը կըռըվ ա ինգյալ: Կռվոմը ղոչաղեթուն'մ արալ, աշկի ինգյալ իմ օժավ, խըլքավ: Թաքավերը տըսալ ա իմ մծեթուն, առաչ ա քաշալ, տվալ ղոշունեն զորավար: Դե, հունչուր կասն՝ «Կռվոմը չամենչ չըն բիժոնմ»: Վերչին կռվեն թունդ վախտը յարալուվմ դըռալ: Դե, մհեգ ալ փառք Աստուծեն, դուք էրկուսավ ինձ օքնալ եք, յարաս լավացալ ա: Ումուդ օնմ, որ կապրմ:

Էսքան խոսացկուբուն, նաղլը, որ թաքավերը լսիս ա, ալ կրիս չի իրան պահի, գյուռալիս ա, լեց հնիս, նի մտիս օթախը, կնգան նա տղեցը խստիս, ըսիլիս.- Իմ արազը կադարվալ ա... Իմ ախրը պարի ա դըռալ, դու իմ կորած կնեգնս, իս՝ քու մարթը, դուք ալ ջոխտավ իմ կուրցրած բլոտենքը:

Թաքավերեն լեցեն-սասեն պալատմը հինչքան ժողովուրթ կա՝ հվքվիսն, գյոլիս տըսնալիս, մնալիս արմացած:

Էս պարի խաբերը մի օրվա մաչեն սաղ երգիրավը մին տարածվում ա: Ամեն մի պարի մարթ, հարուստ, թա՝ քյասիբ, հու վեր լսիս ա, գյոլիս ա թաքավերեն ըշկլուսանք:

Թաքավերեն թեգյունք դըռած թաջըրեն էրկու հասած-փիսած ախչիգնե յա ինիլիս: Թաքավերը որոշիս ա, որ քանե իրան օզուղ սորուն մարթիքը հվաքվածն, իրան ալ էտքան ձախորթութունը անց ա կացած, եկած հաջողությունը, հարկավեր ա մի մըծ ուրախութուն արիլ, ումունուց ուրախացնիլ: Բիրիսն թաջրեն ջոխտ ախչիգը ուզիլիս Փարամազե նա Մանամազե հետե: Օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիլիս, ուտիս, խմիս, քեփ ըրիս:

Նախրչուն արազը կադարվմ ա: Ախըրը պարի ա դըռնալիս, վերչը օմեն հսնիսն իրաց մուրազեն:

Թող Աստուծ տա նաղլը կապուղն ալ, նաղլը ասողն ալ, նաղլը լսողնեն ալ հինչ պարի նպատակ օնն, մուրազ օնն, նախրչոն նման վերչը պարիս կադարվի:

13 (13). ՎՐՍԿԱՆԵՆ ԲԱԽՏԸ

Նաղլն ըրիս, որ քյոհնա ըյամեն մի մարթ ըշխարհեն օմեն մի բենից աշկը կուշտացած լալ: Ըշխարքեն մարթկանցը չարից-գենգատոց հըռի մնալու, անջուկը դինջ պիհլու հետե, թվանգը եր ա ունիս, գինիս մի հըռե ծմակմ, մի քրատակ ծրիս, վըրս ըրիլավ, ծմակեն պտուղներավ իրան հետե ըպրիլիս:

Մի պառավ աղվես դադանղու ա դռնալիս, օմն օր գյոլիս ա վրսկանեն թափած, իվիլացած մսեն, վսկեռեն նանե ուտիս, պատառ դվեր մի օրեշ քրատակ ա ինիս, էտ քրատակեն իրան հետե ըպրիլիս:

Մի վախտ անց կնալեն ետը, աղվեսը աշկրը բինալիս ա: Ըսկսիս ա չղանալը, վընը փռնիլ, շոռ գյոլը:

Մի օր աղվեսը ինքը-իրան ըսիս ա. «Մանակ մնալով բեն չի ինի: Մի բեն, որ ուտլեղենը շատ ա: Գինմ ծմակմը շոռ գյոմ, մի հնգեր ճարմ, բերմ»:

Ծմակավը գինիս տեղը տսնալիս ա մինը իրան հագին փռնալ ա: Ետ ա յիշիս, տըսնալիս ա մի գյուլ ա:

- Էտ հի՞նչս ըրիս,- հրցրիս ա աղվեսը:

Գյուլը ըսիս ա.- Որ ասմ՝ տնիսմ հըրսանեք, կիվատա՞ս: Քողցածմ: Պետքյ ա քի օտըմ:

Աղվեսը ըսիս ա.- Ինծ ուտիլավ բեն չի դըռնի: Իս ուտիլու բեն շատ օնըմ: Լա մի քողցած հիյվանու վըմ շոռ գյոլիս, տանմ օտի, ինծ ալ հնգեր դըռնի:

- Աղվեսնեն շատ գիդն ինիս, ինծ կխափս, թալաք գիծս,- ըսիս ա գյուլը:

- Հագիս փռնած եք գիննք: Թա խափմ, ինծ կօտս, թա չէ՝ ղորթ կինի, էն ա հնգեր կդըռնանք, մըզ հետե կապրինք:

Գյուլը գինիս ա, տըսնալիս՝ աղվեսը սոտ չի ըսիս, ուտլեղենը լիգն ա: Ըղվեսեն նհետ հնգեր ա դռնալիս, մնալիս:

Մի վախտ անցակնալիս, գյուլն ալ ա գյուքինալիս, վընը փռնիս:

Մի օր աղվեսը գյուլեն ըսիսի ա.- Հնգերս, եք գիննք ծմակը շոռ գյոնք, տըսնանք՝ հինչ կա, հինչ չկա:

Գինիսն ուռուզահն գյոլիս մի առջու: Առջը գենգյատ ա ըրիս, որ պռաված ա: Կրիս չի կեր ճարի, օտի, ապրի:

Աղվեսն նա գյուլը առջեն ալն տնիս իրաց հնգեր ըրիս՝ վրսկանեն սալղեն իրաց հետե բոլ-բոլ ուտիս, ըպրիլիս:

Առջն ալ որ չղանմ ա, վընը փռնիս, մի օր ալլա իրք հուգի գինիսն ծմակը շոռ գյոլու: Տըսնալիսն մի ղզղուն նայե մի քարու երե նստած, կրիս չի թըռի:

Հրցրիսն.- Խե՞ յըս մանակ, տխուր նստած քարեն՝ ղուշերեն թաքավերեն իտի սզիս չի:

Ղուզղունը ըսիս ա.- Ալ մծացածմ: Կրիս չըմ ուտիլեղեն ճարիլ, ապրմ: Յիշիսմ օլումս գյո, ինծ տանի:

- Իտի խյալ մա արիլ: Մի վախտ մըք ալ քի նմաննք լալ: Մի շատ սորին ուտիլու, ըպրիլու տեղնք ճարալ: Եք մըզ նհետ հինգեր դըռ, քի ալ տաննք, մըզ նհետ կեր, ապրի:

Ղուզղունը ուլխնալիս ա նհուտնուն գինիս:

Ումունուննց քեփը որ սուրուննալիս ա, մի ըրակո աղվեսը հնգրոնացն ըսիս ա.- Մըր տարը որ էսքան վախտ իստի սորին մըզ պիիս ա, հարկավեր ա մի լավութին ալ մընք իրան արնք: Ինքը փսակված չի: Մըր երգիրեն թաքավերը մի նախշուտ ախչիգ օնի: Պետք ա գիննք բերնք մըզ պահող մարթեն հետե կնեգ:

Առջը, գյուլը, ղուզղունը զարմացալն, ծծղոտալ, թա հունչո՞ւր կարնք գինիլ թաքավերեն աղչիգը բերիլ:

Աղվեսն ըսիս ա.- Ինձ շատ գիդ աղվես կասն, դուք ինձ նհետ որ գյոք, օմեն հինչ ալ սորուն կգտարնք:

Մի քշանաց շուտավ աղվեսը հնգրոնացը հվքիս գինիս ա թաքավերեն պալատեն ըռշկին մեյդանմը յանի հրսանեքն ըրիլիս: Գյուլը ուռնալիս ա, յանի քի զուռնա յա ըծիս: Առջը փընթփընթալիս ա, թաթրը թխիս մին-մինու՝ յանի քի դոմբի ա թկիս: Աղվեսն ալ դիբի դես, դիբի դեն լոք-լոք ա ըրիս, թավիլ տալիս՝ միթամ հրսանեք ա, պար ա գյոլիս:

Ղուզղունն ալ գյովդա թռիս ա՝ միթամ թա թիմիշա յա ըրիս:

Էտ հիյվնուն սասեն թաքավերեն պալատմը հինչքան ժողովուրթ կա, զարմացած, գյոլիսն մեյդանմը վըտ կնալիս, թիմիշա ըրիլիս:

Էտ խառը վախտը, ղուզղունը երի ա տալիս, թաքավերեն ըղչիգյանը եր ունիս, գյովդա տնիլիս:

Աղվեսը, առջը, գյուլը թուղիսն, փխչիլիս:

Թաքավերը իրան նազիր-վազիրնեն հըվքվիս, խիյալն ըրիս, որոշիս, որ էտ բենը սարքովի լալ, ըղչգյանը շեն, քաղաք տարած չըն ինի: Ճարելու հետե հարկավեր ա ծմկնեն շոռ գյոն:

Գինիսն ծմկնեն շոռ գյոլիս, տսնալիսն՝ մի հըռե ծմակմ, մի տեղ ծոխ ա բիցիրնալիս: Գինիսն տսնալիս՝ մի խոր քրատակ ա: Սաղլամ հեյվանու մորթիներից փարշ արած: Ըռշկին թիժ կրակ ա վառած, էրկու չոր ծառ դիրած երե: Մի մարթ կրակեն երե մըս ա խրիվիլիս, թաքավերեն աղչիգըն ալ ծլպատակ նստած գյուլբաք ա գյուրծիս: Մըս խրավուղ մարթը թաքավերեն մարթկանց կնչիս ա, բիրիս կրակեն կողքեն նստցրիս, խրաված մըս պատիվ ըրիս:

Թաքավերեն մարթինքը խաբերն տալիս, որ սաղ ժողովուրթը նի ինգյած ծմկնեն, շոռն գյուլիս թաքավերեն աղչիգը ծրիլու: Պետք ա թողի աղչիգը տանն:

Վրսականը ըսիս ա.- Առաչինը՝ իս աղչիգը չըմ բերած, որ տամ տանեք: էտ ըղչիգյանը բենն ա: Ինքը գիդա: Ըրկումինջինն ալ՝ աղչիգը հու վեր բերած ա, տանիլը ընդուց իրավունքըն ա:

Աղչիգը խոսք չի տալիս գինիլու: Ըսիս ա.- էս նախշուտ ծմակեն ծառծաղեգնան մաչեն ինծ հետե ապրիլը հազար թաքավերու պալատ աժի: Գյուլիս չըմ:

Աղվեսը, գյուլը, առջը որ լսիսն, թա էկածն աղչիգը զոռավ տանն, զուրզունք տալավ երի յըն տալիս, թաքավերեն մարթկանցը փուրնեն վեր ածըն: Զոռռավ, մի թահրավ, փխչիսն գինիս, իրաց տըսածը, խոսեցածը, լսածը թաքավերեն նաղլը ըրիլիս: Թաքավերը հոքմ ա ըրիս, որ իտի ա, ղոշոն կպեցեք, գենցեք, հեյվանուն կուտորեցեք, ըղչիգյանս բերեք:

Էս բենը աղվեսը գիդալիս ա, իրան հնգրոնացը ըսիս ա: Առաչինը գյուլեն ըսիս ա.- Դու գինի հինչքան գյուլ կա ծմկնոմը, հվաքի, բեր: Իս գինանականմ հինչքան աղվես կա, հվաքմ բերմ: Թաքավերեն զորքը ծիավ ա գյուլական: Կգյոն քրըտակեն կմուտանան, մընք երի կտանք ծիյերի յիհարնուն ղայիշնեն կկրծընք կկըտրընք, որ ծիավորնեն վեր դըռնն: Դուք՝ գյուլրտ՝ գիրավ կդըռնեք ծիանցը կկուտորեք: Առջն ալ կգինի, հինչքան առջ կա ծըմակմը, հվաքի, կբերի: Ձիանցը նան վեր դըռած ղոշունեն կթակն, բուռնըհարն, խռեք կտան, կփխցրն: Ղուզղունն ալ կգինի, հինչքան ղուզղուն կա, կհվաքի, կբերի, օմեն մինը մի քար եր կօնն վըտերավ, գյովդա փարվազ կարն, վեր կգիցն ղոշունեն գյլխնան երե, որ վըտ կանող ինի վեչ, գյուլոխ եր օնն, փախչըն:

Աղվեսեն ասածը կդարմ ա, թաքավերեն ղոշունը գյուլիս ա:

Լա որ ուզիսն մուտանան քրըտակեն, աղվեսնեն երի յըն տալիս ծիանցն ղայիշնեն կուրծիս, կտորիլիս: Գյուլրը ուռնալավ դուսն դռնալիս, ըսկսիս ծիանցը փորրը դուս գիցիլը: Առջրը մրթմրթալավ գյուլիսն, ծիանցը նաևե մարթկանցը բուռնըհտիլիս: Փախչուղ մարթունցը երե, ղուզղունեն գյովդան քարն վեր ըծիս:

Գյուլոխը պրծցրած ղոշունը գինիս ա, թաքավերեն խաբեր տալիս՝ աշխարքմը չտըսնված, չլսած կռվեն նանե: Թաքավերը պատառ խիյալ ա ըրիս, հըրցըրիլիս, թա.- էն վրսկանը հինչուր տղա յա: Հինչուվ ա սազական:

Առաչին դոնմը գենցած, տըսած վազիրնեն ըսիսն, որ.- Մի շատ բոյավ, բուսաթավ, շնորքավ, հարգանքավ տղա յա, լա քու ըղչգյանն ալ արժանի:

- Դե որ իտի ա,- ըսիս ա թաքավերը,- գենցե՛ք զուռնա-դհոլով, երքավ-պարավ, ըրկուքնոց ալ եր կալե՛ք, բերե՛ք:

Թաքավերեն նազիր-վազիրնեն, քաղաքեն հաքիմ-թաջրնեն, թաքավերեն հարգուղ ջահիլ-ջիհուլնեն, զուռնա-դհոլով, երքով-պարով գինիսն վրսկանեն, թաքավերեն ըղչգյանը բիրիլիս:

Տեղտ թաքավերը ըսիս ա.- Իս հիլիվերածմ: Իմ իլած-չիլած ժառանգը թաք էս մի աղչիգն ա: Իմ վերչին ամենաօրախ օրը, ասօր ա: Հազր հվաքվածն՝ իմ օմեն պարի ուզողնեն: Հոքմմ ըրիս, իմ հաշիվեն օխտը օր, օխտը քիշեր հրսանեք արեք: Կերեք, խմեցեք, ուլխացեք, քեփ ըրեցեք: Հրսանեք ըրեցեք: Աղչիգս տալիսմ իրան բաժան արած տղեն՝ վրսկանեն, թաքավերութունս ալ նիետը:

Օմեն ժողովուրթը ուլխնալիսն, թա թաքավերը հինչուր հոքմ լալ տված, կադարիսն:

Թաքավեր դըռած վրսկանն ալ աղվեսեն, գյուլեն, առջեն, ղուզղունեն արած լավեթունը մռնալիս չի: Պալատեն կողքեն բաղարմը առանձին տոն ա սարքիլ տալիս, աղվեսեն, գյուլեն, առջեն, դիրիս մաչեն՝ օմեն օր ալ իրաց օզած կերը տալիս:

Մի մըծ, բեցուր ծառու երե յալ ղուզղունեն հետե բուն ա սարքիլ տալիս՝ իրան օզած կերն ալ օմեն օր տալիս:

Ծմակեն վրսկանը աղվեսեն խըլքավը բախտավորվում ա, դըռնալիս թաքավեր:

Նաղլը կապողը, նաղլը ասողը, նաղլը լըսողնան ալ բախտը բերի՝ հասնն իրաց մուրազեն:

14 (14). ԿՈՒՌՆԵՐԸ ԿՏՐԱԾ ԱՂՉԻԳԸ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի ախպեր նա մի քուրն իլալ, իտուք էնքան սերավն լալ, հինչուր իրիքնակն ա լուսլոնգյան:

Էտ ախպերը հինչ տըղ որ գինիլ լալ, անպայման քվորը հետե մի բեն բերիլ լալ: Ախպերը միշտ ուզոս լալ քուրը օրախ ինի:

Ախպուրը մի չար, նախանձ, Աստուծեն մըտեն ինգյած, սըվ օղնու նման կնեգ լալ: Տըսնալիս լալ, որ քուր-ախպեր էտքան սերավն, խրեգ լալ մնալիս, որ չարտամիշ ինի:

Ախպոր-քվոր ղաթմը կըռըվ, խռըվեթուն գիցոլա հետե օմեն բեն հնրիս, ըրիս լալ: Խնեցեն կուտրիս լալ, թա՝ քուրտ ա կոտրալ: Օշնակ, կոժ կոտրիլ լալ, թա՝ քվորտ արածն ա: Հավը թխիլ լալ, վեր գիծիլ, նստիլ լեց հնիլ, թա՝ քուրտ ա արալ: Իտի հազար ու մի բեն լալ սարքիլ, ախպերքուր իրար նհետ կռվցնիլա հետե, համա ախպերը քվորը ծաղեկնեց իվիլ մի դեռնը խոսք ասիլ չի լալ: Ախպոր, քվոր սերը, քաղցրեթոնը մնալիս լալ համաև, համանը:

Միետ ախպերը գինիս ա քաղաք բազարլըղու: Քվորը հետե մի նախշոտ չախկու վա բիրիս: Չախկուն դըռնալիս ա Աստուծը ուրացած ըխպրկնգանը հետե մի ճարած մահնա: Ըտոց ուրուրուցմը մի կուճի խոխա յա հնիս: Մի քիշեր ախպերը, քուրը որ քաղցր քոն հնածն հնիս, ըխպրակենը եր ա կնալիս, տալեն ջուբեն նաևե չախկուն դուս ունիս, իրան խոխան մուրթուլիս, ըռնոտ չախկուն տնիս, դիրիս տալեն ջուբոնը:

Ըխպրակենը քշանաց քիշերավ եր ա կնալիս, մի շիվան նի գիծիս տոնը, որ՝ ասի չե՞ք, քիշերը խոխան ուրուրոցմը մորթածն:

Խոխան մուրթիլեն խաբերը մի սհաթմ սաղ շենավը մին տարածվմ ա: Սաղ շենըհավան՝ մըծ, կուճի հվքվիս գյոլիսն: Տանը մաչեն քիշերը հո՞ւ ռիսկը կարի, գյո նի մտի անմեղ խոխան մորթի: էտ հի՞նչ թշնամեթուն ա, հի՞նչ բեն ա, սաղ շենըհավան մնալիսն քար կտրած:

Մորթված խուխեն մարը դես ա հնգիս, դեն ա հնգիս, գինիս տալեն ջուբեն նաևե արունոտ չախկուն դուս ունիս: Արար-աշխարհ սաս ա հնգիս, որ քուրը ախպուրը անմեղ խոխան ուրուրուցեն մաչեն դնակավ մորթած ա:

Նման մեղք բենու հետե սաղ ժողովուրթը արթար դատ ա ուզիլիս:

Շենեն քյոխվան, դերը, աղսխկլնեն հվաքվմն, որոշիս, որ խոխա մրթողեն կուռները կտրին, տանն մի ծմակմ բեց թողնն, մնա քողցած, տանջվի, առջու, գյուլու փայ դըռնի:

Ըղչգյանը էրկու կուռներն ալ կտրիսն, տընիս, մի ծմակմ բեց թուղիլիս:

Երգիրեն քաքավերեն մի թաք տղա յա հնիլիս, հասած, փիսած, հնքն ալ վըրսու շատ սեր ա հնիլիս:

Միետ ալ վըրս ա գինիս հնգրոնացը նհետ: Տըսնալիսն վըրսի շները գենցալն ծմակեն մաչեն մի քրըտակու ըռշկին, վըտ կացալ, հաչալ: Վըրսկաևը գիդացլն, որ քրըտակեն մի բեն կա, որ շները հչիսն: Գենցալն մուտացալ, շներեն քըս-քըս արալ: Մին ալ օմենը մանցալն զարմացած: Քրըտական մի ըղչգյան սասն լսալ:

Աղչիգը ըսիս լալ.- Տեղս գազան չկա, որ շները քաշ եք տալիս, իս մարթմ, մարթ, աղչիգ-մարթ:

Թաքավերեն տղան ասալ ա.- Աղչիգ-մարթը ծմակեն մաչեն, քրըտակեն հի՞նչ բեն օնի, դուս եք, տըսննք դու հո՞ւվս, հի՞նչ ինսանս:

- Կորած, մոլորված աղչիգմ, աշխարքից կըտըրված: Գեցես շոր չի մանցած: Թեխիյա քոլուրը, փոշրը ծրղոտածն տարած: Հմնչի՞սմ որ դուս գյոմ: Շոր բերե՛ք գենմ, ջանս ծացկմ, որ դուս գյոմ:

Քըրտակեն նհետ խոսուղ ըղչգյանը սասը շատ ա զարմացրալ թաքավերեն տղեն: Գեցեն գեյման հանալ ա, շըպըրտալ քրատակը:

- Ինձ կոռնը չօնմ, որ գենմ: Միհուքը եկեք, գեց տվեցեք,- հմնչիլավ ասսլ ա աղչիգը:

Թաքավերեն տղան վըխվխիլավ նի ա մտալ քրատակը՝ ըշկերեն տըսածեն հվըտացալ չի: Հի՞նչ աղչիգ: Հունց լալ կասս, մի իրիննակ ինի՝ մթեն տեղը պլստրատուն տալիս:

Թաքավերեն տղան տըսածեն երե զարմացած, հրցրիս ա.- Էս հի՞նչ բեն ա, դու ինսան արարած ես, ծմակմը հի՞նչ բեն օնս: Կուռներտ խե՞ յա կտրած:

Աղչիգը հմնչիլավ, դուղդողալավ կարճ նաղլ ա ըրիս գյլխեն եկածը: Թաքավերեն տղան ըղչգյանը նստցրիս ա ծհանը, տնհիս պալատ, հորը ըսիլիս.- Վըրսը վըրս ա:

Եղնը չի ջհհալ, աղչիգ ա ջհհալ, իրան բախտեն ինքը ազափ տղա յա, ուզհս ա նհետը փսակվի:

Թաքավերն նա թաքուհին իրաց տղեն հարնան խրատն տալիս, նասիաթն ըրիս, որ՝ աշխարքը լիգը թաքավերու, նազիր-վազիրա, թաջրու աղչիգներավ նայե լիգը: Ամոթ ա ըտուց թողած փսակվի ծմակմը ճարած, առանց կոռնի ըղչիգյան նհետ: Լսողնեն տնազ կարն, կծծաղն: Տղան էրկու վըննը դիրիս ա մի չմշկում, թա լա օզեք ալ՝ էս ա, օզեք ալ վեչ՝ էս ա:

Թաքավերն նա թագուհին պատառ խյալ-խյալն ըրիս, որոշիս, թա՝ մըր իլածը էս մի թաք տղան ա: Էսքան ըսիլեն ետը, որ լսիս չի, սրտավ կպած ա էտ ըղչիգյանը, թող իրան ասածը ինի:

Աստված, Աստված իրան բախտեն: Հինչ կինի, թող պարին ինի:

Բիրիսն օխտը օր, օխտը քիշեր հըրսանեք ըրիս, ուտիս, խմիս, քեփ ըրիս: Կոռնրը կտրած ըղչգյանը ուզհլիս թաքավերեն տղեն հետե:

Դու մա ասի, էտ թաքավերեն մի հըրևան թաքավերու ալ իլած-չիլածը մի մադար հասած, փիսած աղչիգ ա ինիս: Աշկը նայե ինիս հղեց, որ իրան հրըվան թաքավերը կօզի իրան տղեն հետե: Խաբերը որ գինիս ա, թա թա-

քավերեն տղան վըրս ըրիլուց ծմակմը մի կոռնըը կտրած աղչիգ ա ճարած, բերած նհետը փսակված, շատ պընդն ա գյոլիս: Ղոշոն քյաշլղ ա ըրիս, որ թաքավերեն վեր գիձի, տղեն ըսպանի, երգիրեն ալ տըրանա:

Թաքավերեն տղան ալ տըսնալավ, որ հըրևան թաքավերը դուշմանեթուն ա ըրիս, ինքն ալ ղոշուն ա կպիս, գինիս կըռըվ:

Մի վախտ անց, կըռըվը հալա պրծած վեչ, կոռնըը կտրած հառնը ազադվիս ա, իրան նանե յալ ավելի նախշուտ մի տղա յա բիրիս: Թաքավերը բիրիս ա մի ըշկըլուսանքու նամակ ա գիրիս, տալիս մի ղասիդու, որ տանի, կռվեն տեղը տա իրան տղեն:

Հակառակը հակառակ ա ինիս: Ղասիդը գինիս ա քիշերը ղոնաղ ա ինգիս կոռնըը կտրած ըղչիգյանը ախպուրը տանը:

Ըխպրկնեգը ըրկոնան խաբեր ինիլավ ղասիդեն նամակ տանիլեն հետե, քիշերը ղասիդը քոն ինած տեղը, ինքը եր ա կնալիս, ղասիդեն ջուբեն նանե նամակը դուս ունիս, ինքը մի օրեշ նամակ գիրիս, դիրիս ղասիդեն ջբոմը: Նմակմը գիրած ա ինիս, որ՝ «Տղա ջան, էն վախտը գյլխնես թակալնք, որ ծմակեն մաչեն ճարած, կոռնըը կտրած ըղչիգյանը նանե պադև չի դուս գյո: Դու հվըտացա չըս: Կնեգյըտ ազադված ա, մի շան թուլա յա բերած»:

Միամիտ ղասիդը քշանաց եր ա կնալիս, հղե ինգիս, գինիս թաքավերեն տղեն ճրիս, նամակը տալիս իրան:

Նամակը կրթիս ա, հվտալիս չի: Գիդալիս ա, որ էտ բենմը մի դուշմանեթուն կա: Պադասխանը գիրիս ա, որ՝ հինչ որ կա, թողեք մնա, դեչանը իմ գյոլը: Նամակը տալիս ա ղասիդեն, հղե դիրիս:

Հակառակու նման, ղասիդը գյոլիս ա, ալլա համան տանը քիշերը ղոնաղ ինգիս:

Կոռնըը կտրած ըղչգյանը ըխպրակենը ղասիդեն ջուբեն նանե թաքավերեն տղեն նամակը դուս ա ունիս, ալլա փոխիս: Գիրիս ա. «Քանե եկած չըմ տոն, խոխան կկապեք էտ անառակ շանը դոշեն, տանը նանե դուս կարեք, որ աշկս տըսնի վեչ»:

Թաքավերը, տղեն նամակը գիրածեն համապատասխան, խոխան կապիլ ա տալիս հարսանը դոշեն, պալատեն նանե դուս ըրիս:

Կոռնըը կտրած հառնը, խոխան խտտեն շատ ա շոռ գյոլիս, ոչ կրիս ա թաքավերեն տղեն ճարի, ոչ ալ դարդեն դարման արուղ ա ճրվիս: Քողցած, ծարավ մի օր ջհիիս ա մի գյոլու, կռընալիս ա, որ պատառ ջուր խմի, խոխան դոշեն նանե վեր ա ինգիս, նի ինգիլիս գյոլը: Դե կոռնըը չօնի, որ

խոխան գյոլեն նաներ դուս օնի: Ըսկսիս ա սըրտըպատառ լեց ինիլը, գյոմաք կանչիլը:

Սին ալ գյովդան մի հիլիվր մարթու սաս ա լսիս: Ըսիլիս ա.- Ախչիգ ջան, վախի մա, կուռներտ քի երե ա, խոխան փռնի:

Յիշիս ա տըսնալիս՝ ղուրթավ, կուռները նայե իրան երե: Խոխան գյոլեն նաներ դուս ա ունիս, ուլխացած հղեն գինիս:

Շատ ա գինիս, թա խրեգ, Աստոծ գիդա: Հսնիս ա մի մըծ քաղաքու: Օրը մթնիս ա, բախտեն անմը տալիս ա, լա սիվթա պադահած տան դուրքը բինալիս: Տըսնալիս ա մի հիլիվր մարթ նա պառավ կնեգ նայեն տանը նստած:

- Անկանչիլ ղոնաղ կօզե՞ք,- ըսիս ա հմնչիլավ, քողցած, ծարավ թաքավերեն հառհնը:

- Ղոնաղը Աստոծեն ա,- ըսիս ա հիլիվրը,- առաչ եք, տըսննք հո՞ւվս, ըշտե՞ղս գինիս:

Թաքավերեն հառհնը նի ա մտիս տոն, իրան գյլխավը անցածնեն մինիմինի նաղլը ըրիլիս հիլիվերեն նա պռավեն:

Հիլիվրը ուլխացած ըսիս ա.- Մըզ ըշխարքըմս ոչ մի ժառանգ, սրտամոտ հարազատ օնի չընք: Էտ լա Աստվածանից լալ, որ եկալս մըզ ծարալ: Դու կմնաս մըր տանը, հուսչուր մըր հառհնը: Խոխան ալ կդըռնի մըր հալալ թոռնը: Վախտ կգյո, մընք մըծնք, կմըռննք, մըզ տրեթուն կարեք, կթաղեք, մըր տանը իլած, չիլածեն ալ տրեթուն կարեք: Դե բեն ա, Աստված մըծ ա, կարող ա ախպուրտ, մարթեդ սըրտը Աստոծ խըղճ գիծի, շոռ գյոն, քի ծարն: Դու խոխան խտտած կարի չըս շոռ գյոլ քու կորած բախտը ծարի: Համ ալ մըր տոնը մըծ հղցու երե յա: Օմեն օր հըռե տըղարու նաներ ղուննղներ յընք ունիլիս: Հարցուփորձ կարնի, խաբեր կղորկնի, թա քու բախտմը կինի, մի լուս կբենվի:

Հիլիվերեն մասլահաթը թաքավերեն հառհնը ղաբուլ ա ըրիս, մնալիս տեղը:

Շատ վախտ ա անց կնալիս: Կոռնրը կտըրած ըղչգյանը ախպերը շատ ա խյալ-խյալ ըրիս, ինքը իրան որոշիս, որ իրան խոխան մորթողը իրան քուրը չի ինի: Էտ բենմը մի դուշմանեթուն ա իլած: Իզուր տեղը վախտեն շոռ չի եկած, մանին ծարած: Բենը ետե ա գյուլոխ ինգյած, համա դե հարկավեր ա ալլա հետևիլ, շոռ գյոլ ծարիլ, գաղտնիքը բենիլ: Որոշիս ա, մի օր եր կնալիս, խուրջինը գիծիս ծիանը, մի հղե փռնիս, գինիլիս:

Թաքավերեն տղան ալ կըռըվը վիրչիցիրիս ա: Գյուլիս ա տոն, տըսնալիս՝ կնեգը, խոխան կավչնն: Հարսանը խուխեն նհետ տանե դուս ըրիլեն նաղլը թաքավերը ըսիս ա տղեն:

Թաքավերեն տղան շատ խելոնք ա ինիս: Գիդալիս ա, որ էտ բենմը մի դուշմանու ձեռք կա: Որոշիս ա առագ գինի, քանե շուտ ա կնգանն ա խուխեն ճարի: էտ ալ խուրջինը գիծիս ա ծիանը, մի հղե փռնիս, գինիլիս:

Մի օր, ըրկոնաց, տափը մթնիլեն նհետ մի ծիավր մարթ գյուլիս ա հիլիվերեն տանը ղոնաղ ինգիս:

Հիլիվրը ծին տնիս ա գյումումը կպիս, ղունաղեն ալ տնիս ղունղօթախը:

Մի կես սհաթ անց, ալլա մի ծիավր մարթ ալ ա գյուլիս:

Հիլիվրը ըտուր ալ ա ընթունիս:

Ղունղնեն հացն ուտիս, չայ խմիս, ետ դըռնալիս մինը-մինեն նանե հարցուփորձ ըրիլիս՝ դու հո՞ւվս, հի՞նչ մարթըս, հի՞նչ տեղեյս գյուլիս, հի՞նչ տեղս գինիս, հի՞նչ ցավ ու դարդ օնս:

Ղունղնեն որ իտի ըսկսիսն սոհբաթ արիլը, թաքավերեն հառհնը ղունողնուն սասեն գյուլիս ա, դըրքեն ետքեն վըտ կնալիս՝ անջուկ դիրիս:

Առաչին ծիավրը կրճարոտ իրան դարդը նաղլ ա ըրիս, ըսիլիս.- Դե հի՞նչ ասմ: Իմ տանը մի չլսված բեն ա պդահալ: Իս իմ գյուլոխը կուրցրալմ: Քուրս տանը նանե գյուլոխ եր ա կալալ, գենցալ կորալ: Մհեգ իս իմ կորած քվորնմ շոռ գյուլիս, որ ճարմ:

էտ մարթը որ իտի նաղլ ա ըրիս, ըրկումհնջի ծիավրը գյուլոխը ուրուրիս ա, ըսիլիս.- Քու տոնը շեն, դե ասի մընք ախպերնք ալի: Իտի մի բեն ալ ինձ ա պդահած: Իս թաքավերու տղա յըմ: Կըռեվմ լալ գենցած: Հինչ որ մի թշնամեթուն ա դըռած: Թաքավերը խոխաս տված ա կնգանս, տանը նանե դուս արած: Մհեգ ուզիսմ կորածս ճարմ, նոր ետ դըռնամ, տըսնմ իմ դուշմանս, իմ տոն քանդողը հո՞ւ վա:

- Դե որ իտի ա,- ըսիս ա առաչին ծիավորը,- լա ղուրթավ որ ախպերնք: Քշանուց նհետ մընք միասին կգինք շոռ գյուղու:

Հիլիվերեն տան հառհնը էսքանը որ լսիս ա, իրան մի թահրավ, զոռավ պիս ա: Գիդալիս ա հաստատ, որ մինը իրան հալալ ախպերն ա, մինն ալ իրան մարթը: Ըրկոքան ալ իրանն շոռ գյուլիս:

Ղունղնեն որ քոնըն ինիս, էտ հառհնը տնիս ա մի վըսկե փիալա դիրիլիս ախպուրը խուրջինմը, մի շան թուլա ալ մարթեն խուրջինմը:

էքսի քշանոց ղունղնեն որ երն կնալիս հղե ինգյն, հառհնը իրան տղեն հինչ որ պետք ա, սվըրցրիլիս ա, ղուրկիս ղունուղնուն կոշտը: Տղան գի-

նիս ա առաչին ղունաղեն ըսիլիս.- Քեռի, իմ վըսկե փիալավը ըրկոնե ջուրմ խմալ, դիրալ պտըռհանմ, մհեգ տեղը չի: Մըր տոն ալ քիշերը օրեշ մարթ չի եկած, կարող ա նախշուտթունեն հետե թամահ արած, եր կալած ինս:

Ղոնաղը ուրթոմն ա ուտիս, ըսիս.- Պա դուք ինձ էդքան սորին հարգալ եք, ղոնաղ արալ, ինձ հետե ամոթ չի՞, որ քու վըսկե փիյալան տանմ: Խի, իս գյո՞ղմ:

- Չէ, հվատմ չըմ,- ըսիս ա տղան,- բեր քու խուրջինը բենանք, տըսննք:

Խուրջինը բինալիսն, տըսնալիս՝ վըսկե փիյալան նանե մաչեն: Ղոնաղը մնալիս ա քար կտրած:

Տղան հուլուրվիս ա, էն մին ղունաղեն ըսիս.- Հայրիկ, ինձ մի կուճի սորին շան թուլա օնմ: Ըրվալիս չի: Կարող ա նախշուտթունեն հետե տանիս ինիս:

Ղոնաղը ծծղիս ա, ըսիս.- Տղա ջան, իմ ցավը, դարդը հինչ ա, քու ասածը հինչ ա: Շան թուլան իմ հինչե՞ն ա պետքի:

- Դե որ իտի ա, բեր քու խուրջինեն ալ եշնք:

Թաքավերեն տղան խուրջինը բինալիս ա, մնալիս զարմացած: Տըսնալիս ա՝ ղուրթավ, մի կուճի նախշոտ շան թուլա նայե խուրջինեն աշկմը կոչ եկած, նստած:

Էն ղոլնուց տղեն մարը կզնված դուս ա գյոլիս, ղունաղնոն երե նղնալիս, որ իրան խուխեն վըսկե փիյալան նա շան թուլան գյուղացածն, տնիս, խոխան լեց ըրիլիս:

Առաչի ղոնաղը առաչ ա կնալիս, դենակը ջուբեն նանե դուս ունիս, ըսիս.- Այ քուր, տեղս մի թշնամեթուն կա, հարկավեր ա պարզիլ: Մհեգ որ իս իմ փորը ճըղմ, կհավատա՞ս, որ փիյալան իմ խուրջունմը դիրիլեն նանե իս խաբեր չըմ:

Տղեն մարը ըսիս ա.- Ախպեր ջան, պա որ իս իմ փորը ճղիսմ լալ, որ քու խոխան մուրթիլեն նանե իս խաբար չըմ, տեղս մի դուշմանեթուն կա, դու խե՞ ինձ լսալ չըս: Կոռնրս կտրալն, տարալ նի գիձալ չուլիրնեն:

- Վա՜յ, իմ կորած քուր,- լեց ինիլավ ըսիս ա ախպերը՝ քվորը խտտիլիս:

- Լավ, պա էս շան թուլան հի՞նչ հաշիվ ա,- զարմացած ըսիս ա թաքավերեն տղան:

- Ախպորս կնգա թաքավերեն նամակը փոխած, տղետ տեղը շան թուլա գիրած, քի սար ու քոլ գիձածն ա:

- Ուրեմն դու իմ կնեգնս, էս ալ իմ տղան,- ըսիս ա թաքավերեն տղան, ինքն ալ ըրկուքնոց խտտիս, լեց ինիս:

Օմեն գաղտնիք պարզվմ ա: Թշնամեթունը ավելի հաստատելու հետե, թաքավերեն տղան գինիս ա իրան հետե նամակ տանուղ, բերող դասիդեն եր ունիս գինիս, թա.- Եք գիննք, տըսնամ՝ դու քիշերը ըշտեղս ղոնաղ մննալիս:

Դասիդը թաքավերեն տղեն տնիս ա կոռնրը կտրած ըղչգյանը ախպուրը տոնը:

Օմեն մի թշնամեթուն տեղում հաստադվըմ ա, գաղտնիքը ումնոց հետե պարզ ա դըռնալիս: Չար, խային կնգանը արժանի պատիժն տալիս: Բիրիսն ծամըրը կպիս մի պըլ ծիան հաքվե նհետ, տըննիս բեց թուղիս չոլրը: Ըսիսն՝ դեչանը ասօր ալ պըլ ծին չար, նախանձ կնգանը գյլխեն քցըպրանի տալավ, քաշ ա ըրիս դեսուդեն:

Պարին գյո ծըզ հետե՝ ամեն օր լուսը բեցեն նհետ: Պարի մարթիք ալ դեչանը ասօր ըպրիսն իրաց պարի գործով:

15 (15). ԹԻԼԵՆ ԿԾԵԳԸ

Նաղլն ըրիս, որ շատ քյոհնա այամեն էրկու տղա յին ինիս, մի քուր: Ըտուց ըշխարքմը ոչ մի հարազատ մարթ, պարիկամ ինիս չի: էրկու տղերքն ալ վըրսականն ինիս: Տըսնալիսն որ հարազատութուն չօնն ըշխարքմը, մի քշանաց երն կնալիս, իրաց քվորը եր ունիս, գինիս մի հըռե տեղ, ծմակեն մաչեն մի տոն սրքիլիս, իրաց հետե՝ էրկու ախպեր, մի քուր մի տեղ ըպրիլիս: Ախպրտանցը ամեն օր էն ա ինիս, որ գինիսն մի չոլա հեյվան վեր գիծիս, բիրիս տոն: Քվորը բեննն ալ էն ա ինիս, որ տան կրակը միշտ վառ ա պիհս, ճաշ ա իփիս ախպերտանցը հետե, շոր ա կրիս, գյուլբաքա գյուրծիս:

Մի օր աղչիգը քունավ ա ընկնիս:

Եր ա կնալիս, տըսնալիս կրակը ընցրած ա: Օրեշ բեն ինիս չի, որ կրակը վառի: Նստիս ա պատառ լեց ինիս, թա՝ ըրակու ախպերնես կգյոն, կմնան մթեն տեղը: Պատառ խյալ-խյալ ա ըրիս, եր կնալիս, բիցիրնալիս տան կտորը:

Դես ա յիշիս, դեն ա յիշիս, տըսնալիս ա՝ ծմակմը մի հըռե տեղեն նհետ ծոխ ա բիցիրնալիս: Աղչիգը ուլխնալիս ա, կըտրեն նաճե վեր ա գյուլիս, վազ տալավ գինիս կրակ բիրիլու: Գինիս ա հսնիս ծոխը բիցիրնալիս տեղը, տըսնալիս ա հի՞նչ՝ մի մըծ շինութուն ա, բեցուր պատերավ, ըրկաթի դըրբզան երե:

Դըրբզան թկիս ա: Տըսնալիս ա մի ջահիլ, ջիվան տղա՝ հուց ա, կասս, բուլորած լուսլոնգա ինի, եկալ ա դարբազան բեցալ, մանցալ խըված վըտը՝ ղարիբ ըղչգյանը տըսնալավ: Պատառ եշալ ա, եշալ, տըսալ՝ աղչիգը հմնչբուներ խոսիլիս չի, հրցրալ ա.- Այ աղչիգ, դու հո՞ւ վըս, հի՞նչ բեն օնս տեղարս, քի հի՞նչ քամե յա բերած: Տեղս մի իրըք գյլխանե դև ա ըպրիլիս, մարթ ուտիլա հետե գիժվիս ա: Նայե քոն ինած: Եր կանա քի հոմ-հոմ կոտի: Ըշտեղավ եկածս, տեղավն ալ ետ դըռ, գինի, մեղքս:

Աղչիգը լեց հնիլավ նաղլ ա ըրիս, որ իրաց տան կրակը ընցրած ա: Եկած ա կրակ տնիլու:

Աղչիգը տղեն մեղքն ա գյուլիս, ըսիս ա.- Դե յայլխտ դիրի բիրանետ, նափասը որ դևը գիդա վեչ, եք տանմ հղե դիրմ:

Աղչիգը յայլխը բիրանեն պահած, թիաթավ տղեն հետնաց գինիս ա: Աղչիգը գինիս ա տըսնալիս հի՞նչ՝ իրըք գյլխանե դևը նայե ուջաղեն կողքեն խուտուրու ինգյած, քոն ինած: Էրկու գյլխնեն կուճի-կուճի յըն, ուսսերեն երե, նոռան միչի: Մաչտեղեն գյուլոխը մըծ ա՝ մարթա գյլխա նման: Մի աղչիգ նստած ա, դևեն գյուլոխը դիրած գյուրգոմը: Մի աղչիգ ալ դևեն վըտրն ա դիրած գյուրգյոմը:

Էտ էրկու ըղչգերքն ալ, որ եկող ըղչիգյանը տըսնալիսն, մնալիսն քար կտրած:

Տղան օջաղեն նանե էրկու խանճող կրկկալած տալիս ա ըղչիգյանը, հղե դիրիս:

Ախչիգյանը ըխպրտանքը ըրկոնոց որ գյուլիսն տոն, օրվա գյլխեն եկած օյինը մին-մինի նաղլ ա ըրիս:

Ախպրտանքը շատ փիս կըզնվիսն իրաց քվոր երե, ըսիլիս, որ.- Շատ մըծ սխալ ինքնագյուլոխ բենս փռնած: Սորին լալ մըր բախտից, դևը քոն լալ: Միետ ալ իտի բեն փըռնս վեչ, ըստուր ետն ալ դուրքը փակ կպահս: Կարող ա հալա դևը, վըր եր օնի, գյո:

Խաբերը տանք դևեն նանե:

Էքսի քշանաց դևը քունըտեղե եր ա կնալիս, ուլխացած ըսիլիս.- Ղարիբ մարթու վըտմ լսիլիս, ըշտե՞ղ ա, բերեք օտմ:

Ըղչիգերքը, տղան ուրունալիսն, որ իրաք խաբեր չըն: Կարող ա վըրսկան ա եկած, տանը քուշտավը անց կացած: Դևը չարանմ ա, խոսքը պնդիս, որ՝ յա ղարիբ մարթեն տեղն ասն, յա չէ՝ իրաց իրքնաց գյող կացած մարթեն տեղը կօտի: Ըղչգերքը, տղան լեցն հնիս, ուրթոմնը ուտիս, որ իրաք խաբար չըն:

Դևը եր ա կնալիս, դես շոռ գյոլիս, դեն շոռ գյոլիս, տըսնալիս ա՝ մի թիլու ճոնդ նայե բանդ ինած դըրքեն: Դու մի ասի, աղչիգը որ եկած ա ինիս կրակ տնիլու, գյուրգյոմը թիլու կծեգ ա ինիս՝ գյուլբաք գյուրծիլու հետե: Թայդիթունեն շշկռվա ա ինիս, գիդալիս չի որ գյուրգեն նաեե կախ ինգյած թիլին ճոնդը բանդ ա ինիս դևեն տանը դըրքեն... Աղչիգը որ ծմակավը գինիս ա, թիլին կծեգն ալ ետ տալավ տնիս ա՝ ինքը բենից բեխաբար:

Դևը թիլին ճոնդը փռնիս ա, կծկիլավ գինիս դուս գյոլիս վըրսկան տղեցը տոնը, տըսնալիս ա դուրքը նեսի ղոլից փակ ա: Դուրքը ըսկսիս ա թակիլը:

Աղչիգը մնալիս ա զարմացած, թա օրեն էս վախտը հո՞ւ պետք ա ինի: Ախպրտանքը հալա նորն գենցած վըրս, ախպրտանքը չըն:

Դուրքը որ շատն թկիս, աղչիգը հրցրիս ա.- Դու հո՞վս, հի՞նչս ուզիլիս:

- Ղարիբ մարթմ, էկածմ ղոնաղ, դուրքը բեց,- ըսիս ա դևը:

- էտ ղարիբ մարթա սաս չի: Կա-չկա դու դևս, դուրքը բենի չըմ: Հինչ տեղավ էկածս, տեղավն ալ գինի: Քանե հալա իմ ախպրտանքը էկած չըն քի տըսած:

Դևը ըսիս ա.- Դե որ դուրքը բինալիս չըս, գյոմ տոն, մտանու մանտ դրքեն փկըծկոռավը դուս բեր, քի հետե մտանեքմ բերած: Ուզիսմ նշան դիրմ տղես հետե, մտանեն նի քաղմ մաննտ:

Դևը որ շատ ա ղանչաք ըրիս, աղչիգը խփվիս ա, մաննը փկըծկոռավը դուս ա բիրիս: Դևը ըղչգյանը մաննը կծիս ա, արուևը ծծիլիս: Ըղչգյանը օշը տնիս ա, վեր ինգիս, դևը ետ ա դըռնալիս, գինիլիս:

Ըրկոնան վըրսկնեն գյոլիսն տոն, տըսնալիս՝ տան դուրքը նեսի ղոլից փակ ա: Հարչան դուրքը թկիսն, ոչ բենուղ ա ինիս, ոչ ալ սաս արուղ: Գիդալիսն, որ մի բեն պդահած ա: Եռն ինիս կտրեն, հուրդավը նի մտիս տոն, տըսնալիս՝ իրաց քուրը նայե օշը տարած, դըրքեն ետքեն վեր ինգյած: Ըղչիգյանը իրեսեն ջուրն շաղ տալիս, օշը բիրիս տեղը: Հինչ որ պդահած լալ, աղչիգը ըխպրտանցը նաղլ ա ըրիս:

Էրկու ախպեր որոշիսն, որ դևեն կարի չըն ըսպանի: Հարկավեր ա գյլխեն մի քյալագ բերիլ: Բիրիսն տանը երե քյունջումը մի օխտը գիզանոց վըրն քնդիս, երե խալի գիձիլիս, գինիս դևեն կնչիս ղոնաղ: Յանի քի համաձայննք, մըր քվորը տանք քու տղեն:

Դևը կասկածմ ա, որ կարողա իրան գյլխեն մի փորձանք բերն: Վըխիս ա գինի տանը դիերը նստի: Նստիս ա տան դվերը, դուրքեն ետքեն: Տղերքը ըսկսիսն դևեն խափիլը: Մինը եռ ա ինիս տանը կտրեն դումբդումբցըրիս, մինն ալ դևեն կողքեն նստիս ա, դևեն կողքեն գյոլիս, ըսիլիս.- Առնա

դև ախպեր, պատառ ալ դիեր կաց, ղոնաղ շատ մարթ ա գյոլիս: Առնա դև ախպեր, պատառ ալ դիեր կաց, շատ ղոնաղ ա գյոլիս:

Դե որ կտրեն դումբդումբցրիսն, դևը հվտալիս ա, որ իրան պադիվեն հետե շատ մարթինքն գյոլիս: Ինքը հա դիյեր ա կնալիս՝ էնքան, որ դրունբալիս ա, նի ինգիս վըրը:

Էրկու ախպրավ վըղը երի յըն ըծիս՝ առնա դևեն վըրեն, մաչեն թղիլիս:

Այտըս երն կնալիս գինիլիս դևեն տոնը, տըսնալիս՝ հի՜նչ տոն. հի՜նչ ըմարաթ, հի՜նչ հարուստեթուն, դիբի հինչ տըղ յիշիսն, մնալիս են զարմացած: Տըսնալիսն դևեն ըղչգերքը, տղեն նաեն յըն նախշուտ, տղան ալ՝ ըղչըգյերանցն նաեն: Էրկու ախպրավ խըլք-խըլքի յըն տալիս, որոշիս, որ իստուր դենը աշխարք չկա: Իրաց բախտն ալ էս ա, որ ճարածն: Բիրիսն էրկու ախպրավ փսկվիս էրկու քվոր նհետ: Իրաց քվորն ալ փսկիս դևեն տղեն նհետ:

Իստիթունավ, կրակ ճարիլն նա թիլեն կծեգը պատճառն դըռնալիս, էրկու ախպեր իրանց քվոր նհետ բախտավորվմն, հսնիս իրաց մուրազեն:

Թող Աստված տա, ըշխարքմս օմեն մի նեղյալ, օմեն մի արթար մարթ ալ հասնի իրան պարի բախտեն, իրան մուրազեն:

Հինչքալ ալ չար մարթ կա, լավեն դիմաց չար մտածող կա, չար բեն փռնող կա, առնա դևեն նման գինն նի ինգյն օխտը գիզանոց վըրը, թաղված մնան դեչանը ըշխարքեն վերչը՝ լուս աշխարք տըսնն վեչ:

16 (16). ԱՍԼԱՆ-ՂԸՌԱՍԼԱՆ

Քյոհնա ըյամեն մի շենմ կնգանը ջան ասող, ջան լսող մարթ ա ինիս: Ըտւց էրկու խոխա յա ինիս: Մինը տղա, մինը՝ աղչիգ:

Տղան մըծ ա ինիս՝ հորը նհետ շեներն վըչխռներնն ա տնիս պիիս՝ չոբանն ինիս: Աղչիգը հալա կուճի ա ինիս՝ հինգ-վեց տըրեկան:

Ցիրկը որ վըչխրներն նստիսն դինջինալու, տղան հորը թուղիս ա վըչխրնուն կուշտեն, ինքը վըրսու հետե, վիրուննի մըղրճանջու բուն ճրիլու հետե, նի ա ինգիս ծմկներն, քըրծըրը շոռ գյոլիս:

Մի օր ալ մի քըրծավ գինիս տեղը, մի քըրտակու վընգվընգոց ա լսիլիս: Մուտոնալիս ա, տըսնալիս փալանգյա էրկու թուլայն՝ տասը, տսնհեներգ ուրական: Նայեն մին-մինու նհետ փարե կնալիս, խաղ ըրիլիս: Տղան նափասը պահած դիբի դես, դիբի դեն վարավուրդ ա ըրիս, թա տըսնի փալանգը ըշտեղ ա: Փալանգը ըրվալիս չի: Գիդալիս ա, որ թուլեներքը թողած, գեներցած ա վըրս ըրիլու: Սալամաթ թուլլոտենքը դիրիս ա ծոց-

մը, փխչիս, գինիլիս: Փալանգեն թուլոտանցը վըչխարու կաթը տալիս, պիրս, մծըցրիս: Միներն անմը դիրիս ա Ասլան, միներն ալ՝ Ղըռասլան:

Ասլանն նա Ղըռասլանը մըծնալիսն, չուբաներն տղեն հետե, շան նման նհետը գինիս վըրսու, վըչխար պիհլու:

Մըռնանք վեչ ասնք, որ տղեն անմը Զարզանդ ա ինիս: Քվոր անմը՝ Զարթար:

Զարզանդ մի վախտ տսնալիս ա մորը ունքամաչը բինվալիս չի: Միշտ խոմար ա: Պդահած թաքոն լեց ա ինիս:

Զարզանդ մի օր մորը նանե հրցրիս ա, թա՝ խե՞ միշտ խոմար ա, լեց ա ինիս: Հի՞նչն ա պակաս, պատճառն հի՞նչ ա:

Մարը հինչքան ուզիս ա թաքուն պահի, դըռնալիս չի: Վերջը ըսիս ա.- Ախր տանն նանե վըխիսմ դուս գյում: Լա մի բենավ գինիսմ մի հրվանու տոն, յա ախպիրը ջիրու, գյուլիսմ տըսնալիս ցոռնով լիգը պարկը կավչնի: Տաշտեն հացը կեսն արած: Կարճ ասած, օրը մի բեն տանը մաչեն կուրչիս ա: Ոչ հրվանու բեն ա, ոչ ալ քաշկա բեն, մանցածմ իստի տընջվիլիս:

Էքսի քշանց Զարզանդ հորը ըսիս ա.- Ա հար, ասօր գյուղխս ցվիս ա: Դու վըչխրնեն տար: Իս մնամ տանը:

Զարզանդը գյուլիս ա թաքուն նի մտիս տոն, մի քյունջմը գյող կնալիս:

Լա մարը կոժը եր ա ունիս, գինիս ախպիրը ջուր բիրիլա, Զարթար տղերեն նանե եր ա կնալիս, գյուլիս տաշտմը կուտած, թազգա թխած լավաշ հացեն կեսը ուտիս, գինիս նի մտիս տըղերը, ալլա քոն ինիս:

Ըրակոնը հարը որ գյուլիս ա տոն, Զարզանդ իր աշկավը տըսածը նաղլ ա ըրիս ծնողներեն:

Մարը որ տղեն ասածը լսիս ա, իրան տալիս ա տփերավը, լեց, շիվան ըրիս, որ իտի բեն ասի մա: Աղչիգ խոխա յա, խայտառակ կըղըռնանք: Օզուղ, տանուղ չի ինի: Թող տըսննք գյլխնես հի՞նչ ա գյուլիս, հի՞նչ ա դըռնալիս:

Զարզանդ ըսիս ա.- Դե որ ինձ հվտալիս չեք, ուզիս չեք վախտեն հինչ վեր պետքն ա արնք, Աստված ձեզ նհետ: Իս ալ ձեր տղան չըմ: Գյուլոխ երմ ունիս, մի տեղավ գինմ:

Էսքանը Զարզանդ ըսիս ա, էրկու օրվա հաց դիրիս միզրմը, Ասլանն ու Ղըռասլան նի գիձիս հետը, մհակը դիրիս օսսեն, մի հղե փռնիս, գինիլիս:

Շենեն ներքե ղոլեն, հղցին կողքեն գյուլասու բաղ ա ինիս: Գյուլասը կիրմիրած, լալա լալ կնչիս: Վըտ ա կնալիս, պատառ գյուլաս քնդիս, ուտիլիս: Պատառ ալ նի ըծիս բինջակեն ջուբը, հղեն շարունակիս:

Շատ ա գինիս, թա խըրեգ, Աստուծ գիդա: Մի պառակ տեղ տսնալիս ա մի սառնը ախպիր կա: Նստիս ա ըխպիրին կողքեն, հաց ա ուտիս, ջուր ա խմիս: Ջուբոմը իլած գյուլասն ալ դուս ա ունիս ուտիս, կռազնեն ըխպիրին կուշտեն շաղ տալիս, Ասլան, Ղըռասլանուն նետ հղեն շարունակիլիս:

Շատ գինիլեն ետը, մի հանդմ տըսնալիս ա մի սիպտակ մրքավր հիլիվր մարթ, մհակը դեմ տված չանեն, ոչխար ա պիհլիս: Ջարզանդ մուտունալիս ա հիլիվերեն, պարի օր ա տալիս, նստիս կողքեն: Հարց ու փորց ըրիս, իրան դարդրը նաղլը ըրիս:

Հիլիվրն ալ իրան դարդրն ա նաղլ ըրիս, ըսիլիս.- Ըշխարքմս ինձ ալ օրեշ բեն չօնմ: Էս մի հարուր գյուլոխ վըչխարն ա, մին ալ իմ պառավ կնեգը: Մհեգ իս ալ հիլիվերածմ: Շատ դիժերմ կրիս վըչխրնեն պահիլ: Քի լա Աստուծ ա ղորկած իմ կոշտը: Դու վըչխրնեն կպահիս, իս կդըռնամ քու հարը, պառավս ալ՝ քու մարը: Միասին հալալ կապրնք: Մընք քի կփսակնք, տնարար արնք: Մընք ալ կմըռննք, դու մըզ կթաղս:

Ջարզանդ համաձայնվմ ա հիլիվերեն դիրած պայմանեն: Իտի ըպրիսն մի քանե տարե:

Ջարզանդ մըծնալիս ա, դըռնալիս հասած տղա: Հիլիվրն նա պառավը օմեն օր յխենն կնալիս, որ հաձայնվի փսակնք:

Վերչը մի օր Ջարզանդ ըսիս ա.- Ախր իս սարու, քարա նանե չըմ ծնված: Ինձ հար, մար, քուր օնմ: Ինձ շատ մըծ դարդ օնմ: Միետ գինմ տըսնամ իմ հար, իմ մար հի՞նչ բենե յըն: Նոր որ ետ դըռնամ գյոմ, իմ փսկվիլես հետե կմտածնք:

Ջարզանդ էսքանը ըսիս ա, մի խուրջին հացավ, ուտելեղենավ լցրիս, գիձիս ձիանը, Ասլան նա Ղըռասլան ժանջիլավ կպիս տանը ըռշկին ծառեն երե, ըսիլիս.- Դուք մի քանի օր յոլա գենցեք, դեչանը իմ գյոլը: Ասլան-Ղըռասլանե լալ սորին կպահեք: Համ ալ շատ սայաղ կկանեք, բեն ա, քիշեր կինի, թա ցիրկ, կտըսնեք, որ իմ հեյվաննեն անհանգիստն, հչիսն, կունճկունճալիս, գիդացեք, որ իս պընդմ ինգյած, նեղությա մաչե յըմ: Իրաց ժանջիլնեն ետ կարեք, բեց թողեք: Իս ըշտեղալ որ ինմ, իրաք կգյոն ինձ կճարն, նեղութունից կազադն:

Ըսիս ա, նստիս ձիանը , իրաց շենը տանող հղեն փռնիս, գինիլիս:

Գինիս ա հսնիս շենը, տսնալիս հինչ շեն՝ խարաբախանա յա: Վըչ մի մարթ, վըչ մի հեյվան գոյութուն չօնի: Տըներեն շատրն ալ քարուքանդն ըղռած: Ջառզանդ գյուլխով ա ինգիս, որ իրան քվորը՝ Ջարթարե արածն ա:

Ջին քշիս ա, գինիս իրաց դըրքեն ըռշկին վեր գյուլիս, խուրջինը դիրիս սրահմը, ծին տընիս կպիս գյումումը, ևի մըտիս տոն, տըսնալիս՝ քուրը մանակ նայե ուջաղեն կողքեն նստած:

Զարզանդ հալա խոսելաց վեչ, Զարթարը ախպուրը ճնչիս ա: Եր ա կնալիս, չորք թիրափավը կնալիս, լեց ինիս, թա՝ քողցածմ, պա ուտիլու բեն բերա՞ծ չըս:

- Խուրջինը լիգը հաց ա: Դիրածմ սրահմը, գինի կեր,- ըսիս ա Զարզանդը:

Քուրը դուս ա գյուլիս դուրքը, ետ դըռնալիս, գյուլիս ըսիս.- Ախպեր ջան, սրահմը խուրջին չկա: Բալքյա հղեց կուրցրա՞ծս:

Զարզանդ գյուլխավ ա ինգիս, որ քուրը մի դոնա խուրջունը կոլ ա տված, ըսիս ա.- Քուր ջան, շենեն տակեն նստալմ, պատառ դինջացալ: Հալբաթ մանցած ա տեղը:

Քուրը ըսիս ա.- Ախպեր, պա փիադա՞ յըս եկած, թա՞ ձիավ:

Զարզանդ ըսիս ա.- Ձիավմ եկած: Ձին նայե գյումումը կապած:

Քուրը դուս ա գյուլիս, պատառ վախտ անց գյուլիս, ըսիլիս.- Ախպեր ջան, պա կասս՝ ձին գյումմը կապած ա: Գյումմը ձի չկա:

Զարզանդ մաննը կծիս ա: Գյուլխու յա ինգիս, որ քուրը ձիյանն ալ ա կերալ: Ըսիս ա.- Ա քուր, մռացալմ ասլ: Ձիս քողցած լալ: Թողալմ շենեն ներքե բաղմը, պատառ ըրածի, դինջանա:

Քուրը ալլա յա դուս գյուլիս:

Զարզանդ ինջինմիշ ա ինիս: Խուտորավ ա ինգիս, պատառ քոն ինի, դինջանա:

Էտ սհաթեն ըշտեղե յա՝ Աստվածանից մի վըրծակ ճըրվիլիս, գյուլիս ա տանը կտրեն հուրդեն երե վըտ կնալիս, կնչիլիս.- Կիկլիկի՜... Զարզանդ տղա: Քոն ինիլու վախտը չի: Շուդ արի եր կաց, ճար օնս, ճարտ տըս՝ փախչի: Քուրտ նայե կըռնքնեն սըրիս, որ քի օտի:

Զարզանդ վըրծակեն սասը որ լսիս ա, եր ա կնալիս փխչիլիս:

Զարթար կըռնքնեն սրիս ա, գյուլիս տըսնալիս ախպերը կավուչնի: Փախած ա: Նի ա ինգիս հղեն, հետնաց վազ տալավ գինիս: Ինդի ա գինիս, որ գյուլլա գիծս հետեն, հասնի չի:

Զարզանդ մին ալ ետ ա յիշիս տըսնալիս հինչ՝ էս ա հրահաս քուրը իրան կհասնի: Բախտի բերմամբ, հասած ինիս էն ըխպիրին, որ տանը նհետ գինիս տեղը նստած լալ գյուլաս կերած, կռըզնեն՝ շաղ տված: Իրք կռազ կնեցածն լալ, եկած, հասած, փիսած ծառր դըռած: Զարզանդ զոռռավ հսցրիս ա, եռ ինիս մի ծառու:

Քուրն ալ ետնանց հսնիս ա, եռ ինիս ծառեն: Զարզանդ իրան կուրցնիս չի: Ծառեն նանե մի մըծ ճեղնը ճխկռիս ա, կուտրիս, ըսկսիս քվորը գյլխավը վեր թակիլը:

Քուրը շշմիս ա, ծառեն նանե վեր ինգիս, այտս ըսկսիս ծառը կոռծիլը: Բախտի բերումով ծառը շոռ ա գյոլիս էն մին ծառեն երե: Զարզանդ ծառեց-ծառ փուխվիս ա:

Քուրը էն մին ծառն ալա կուռծիս, կտրիս: Էտ ծառն ալա շոռ գյոլիս վերչին ծառեն երե: Զարզանդ ալա փուխվիս վերչին ծառեն երե:

Քուրը ըսկսիս ա կուրծկործիլը վերչին ծառը: Զարզանդե հուշեն գյոլիս ա, որ իրան էրկու փալանգ օնի: Ըսկսիս ա կանչիլը՝ Ասլան, Ղըռասլան, նըղնմ ինգյած, ըշտե՞ղ եք, շուդ հասեք:

Հիլիվրը մին ալ էն ա տըսնալիս՝ փալանգնեն շատ անհանգիստն: Գըռմռալիսն, ուզիսն ժանջիլնեն կտըրն: Լեղ ա ըրիս կապրը ետ ըրիս, բեց թուղիս:

Զարթար իրքմինջի ծառը խռեգյ ա ինիս մանցած, որ կտրի: Փալանգնեն հսնիսն:

Զարզանդ հասնող փալանգնոն որ տըսնալիս ա, ըսիս ա.- Դե, ձեզ ղուրբան, Ասլան-Ղըռասլան էտ մարթակերեն ինդի հոպ տվեցեք, կոլ տըվեցեք, որ մի կաթ արուն ալ վեչ կարի տեղարս վարակի: Դե, մի աղչիգը էրկու փալանգյա հետե հինչ լալ, երբաեր ուտիսն, վերացրիլիս:

Զարզանդ ծառեն նանե վեր ա գյոլիս, փալանգնեն հետը գիձիս, հղեն շարունակիս: Օրը մթնելեն նհետ, Զարզանդ տըսնալիս ա հղցին կողքեն մի ծըռոտ տեղ, մի թաջիրու մըծ քյարվան ա վեր եկած:

Թաջրն ալ տըսնալիս ա հղոքմ մի մարթ ա գինիս, էրկու փալանգ՝ շան նման, հետեն: Զարմանալիս ա, նոքյարներեն ըսիս ա.- Կանչեցեք էն մարթեն, բերեք իմ կոշտը:

Զարզանդ գյոլիս ա թաջրեն կոշտը, նստիսն, իրաց հետե սոհբաթն ըրիս, ուտիս, խմիս, ուզիսն քոն ինն: Միս ալ մի դաստա հարամի գյոլիսն, որ թաջրեն մարթկանցը կտորն, հարստեթունը հվաքն, տանն: Զարզանդ փալանգնեն բեց ա թողիս: Ասլան նա Ղըռասլան հսնիսն օմեն հարամենքը փռնիսն, ըսպնիս:

Էքսի քշանոց որ երն կնալիս, թաջրը ըսիս ա.- Ախպեր տղա, իմ հարուստութունեն կեսը տամ քի, դու փալանգներից մինը տոր ինձ: Իս հղե գենցուղ մարթմ, իստի շառ-շուռ բենր ինձ նհետ շատ ա պդահմ: Ըրկոնե որ քու փալանգնեն չըն լալ ինի, հարամենքը մըզ ումունոս կուտուրլականն լալ, իլած, չիլած հարուստեթունը տանն:

Զարզանդ ըսիս ա.- Խնթրիսմ իտի բեն ասս վեչ: Քու օմեն հարուստեթունն ալ որ տաս, իս քի փալանգ չըմ տա: Քու ապրանքը քի հալալ: Դու եր կաց քու ձիանքը բեռնի, քու հղեն գինի, հասեր քու մուրազեն: Իս ալ գինմ հասնմ իմ մուրազեն:

Թաջրը ըսիս ա.- Իտի բեն չկա: Իմ հարուստեթունը, իմ գյանքը հարամիներեն նանե քու փալանգնենն փրկած: Քի ալ մուրազ օնըս: Պետք ա գինս, փսակվս: Իմ ձիանցը բեռնրը տարբեր թահրի կտորեղեն ա: Քու բախտեն՝ եր կաց մի ձի բեռնի, միներն ալ եռնի, գինի հասեր քու մուրազեն:

Զարզանդ մի բեռնը կուտրեղենը եր ա ունիս, տընիս տոն: Հիլիվրն նա պառավը շատն ուլխնալիս Զարզանդե ետ գյոլեն հետե: Իրանը գյորա մի նախշոտ, տընարար ախչիգյն ճըրիս, նշան դիրիս, Զարզանդե նհետ փսկիս՝ տան, ուջաղու տար ըրիս:

Չարը վիրանմ, գինիս ա աշխարքեն իրեսից:

Զարզանդե վերչը պարի ա դըռնալիս: Հսնիս ա իրան մուրազեն: Դըռնալիս ա կնգատար, խուխատար մարթ:

Մըծ, կուճի նաղլը լսողնոն ալ թող Աստուծ տա, վերչրնեն պարին կադարվի: Հուր հինչուր մուրազ օնի՝ հասնի իրան մուրազեն: Նաղլը կպողուն նա, նաղլը ըսողուն իսկի մռանան վեչ, պահն մըտռնոն, իրաք ալ նաղլ արն իրանց նանե երե եկուղնոն:

17 (17). ԲԱԽՏԻՅԱՐԸ

Նաղլն ըրիս, որ շատ քյոհնա վախտը մի տղա յա իլալ, անմը Բախտիյար:

Բախտիյարը մի քիշեր քնոմը արազ ա տըսնալիս. ըրազի տըսնալիս ա՝ նայե մի չտըսնված պալատմ քոն: Իրիննակը դուս ա եկած գյլխեն դիյերը: Մի շուղշուղացուղ աստղ՝ մի օսսեն երե, միննն ալ մի օսսեն երե:

Քշանաց քունըտեղե եր ա կնալիս, մորը ըսիս, որ մի քանե հաց դիրի միզարմը տա իրան: Քիշերը արազ ա տըսած: Պետք ա գինի արազը ճարի:

Բախտիյարե հարը, մարը ղանչանքն ըրիս, ըսիս, որ արազը կադարվող ինի, տանն ալ կկադարվի: Արազեն հետեն գինի չըն:

Բախտիյար լսիս չի: Ըսիս ա.- Իմ տըսած արազը ինդի արազ ա, որ պետք ա հետեն գինմ:

Ըսիս ա, մեզարը նի կպիս մաշկը, միակը ձեռքը ունիս, Աստուծըն անմը տալիս, հղե ինգիս, գինիլիս: Շատ ա գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա: Կես օրեն հսնիս ա մի տեղ, տըսնալիս՝ մի կնչկոտ տեղ ա, մի շատ մըծ կաղնե ծառ կա: Ծառեն տակեն նհետ սարին ախպիր ա դուս գյոլիս: Մի չոբան, ջահիլ տղա, մի բյոլիգ վըչխար նստցրած ա ծառեն շվաքմը: Էրկու շոն ալ կողքեն խոտորվն ինգյած, քունավ անցած: Չոբանն ալ նստած ա մի քարու երե, իրան հետե շվե յա ըծիլիս:

Բախտիյար մուտունալիս ա չուբանեն, պարի օր տալիս, ջուր խմիս, դինջինալիս: Չոբանն ալ եր ա կնալիս, մի ջամ կաթն ա կթիս վըչխրնոն նանե, բիրիս հացն նիփրթիս կաթնեն մաչը, էրկու հուգի նստիս, ուտիլիս:

Հացը ուտիլեն ետը, չոբանը հրցրիս ա Բախտիյարե նանե՝ հղե գինիլու նպատակը: Բախտիյար ալ նաղլ ա ըրիս իրան տըսած արազը:

Բախտիյարե արազը շատ տոր ա գյոլիս չուբանեն, ըսիս ա.- Անծանոթ ախպեր, քու նաղլ ըրիլավ տանտ հար, մար, կնեգ, խոխենք օնը՞ս: Հունչուր քի ախպեր, մի բեն ասըմ, նղանաս վեչ: Լսի ինձ, ինձ աշխարքմ ոչ մի բեն չօնմ: Ազափ տղա յըմ, իլած-չիլածս էս էրկու հարուր գյուլոխ վըչխըրնեննն, մին ալ էրկու շոնը: Եք համաձայնվի, վըչխրնես տամ քի: Դու արազտ տոր ինձ: Իս ազափ տղա յըմ, իս գինմ, արազտ ճարմ:

Բախտիյար համաձայնվմ ա: Գեցեն շորրը հնիս ա տալիս չուբանեն: Չոբանն ալ իրան շորրը հնիս ա տալիս Բախտիյարեն: Դնակավ կուճի մնռնեն կտրիսն, արուննեն խռնիս մին-մինու: Բախտիյար դըռնալիս ա չոբան, վըչխռնեն նի ըրիս առաչը, շվեն ըծիլավ, ջոխտ շոնը հետեն, գինիս տոն: Չոբանն ալ դըռնալիս ա Բախտիյար, միակը դիրիս օսսեն, մեզարը կպիս մաշկը, բախտեն անմը տալիս, գինիս արազը ճրիլու:

Շատ ա գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա: Մի օր, տափը մթնած, հսնիս ա մի մըծ քաղաք: Ղարիբ մարթ, ղարիբ քաղաք: Դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, հսնիս ա մի մըծ շինութոնու: Չորք թարափը բեցուր պատ շարած: Շինութոնեն դարբազեն կողքեն մի թալաքյա դալդելը տեղ ա ինիս: Տեղտ նստիս ա՝ դինջանա, քիշերը անց կցնի, քշանոց եր կանա, հղեն շարունակի:

Քիշերվա մի վախտ տըսնալիս ա մի մարթ ա եկալ, էրկու ճիյան կապ փռնած: Էտ մարթը ճիանցը կապրը տվալ ա Բախտիյարե ասալ.- Կա, քի տասը վըսկե յըմ տալիս, տեղս նստի, ճիանքը պահի: Ներսի կողմից խուրջինն կախ ըրլական, իս պատառ լինջիսմ: Խուրջինը որ կախ կարն, ինձ սուս-փուս եր կկցրըս:

Ջիանքը բերուղը քունավ ա ընցնիս:

Քիշերվա մի վախտ, Բախտիյար միհ ալ էն ա տըսնալիս շինիթուներն նեսի ղոլից պատավը մի խուրջինն կախ տըվալ: Բախտիյար հարչան ըրիս ա, ծիանքը բիրողեն կրիս չի քոնից եր կցրի: Ճարը կտրած ինքը խրջունը փռնիս ա վեր բիրիս, գիծիս ծիանցը միներն երե:

Միհ ալ ա տըսնալիս մի խուրջոնն ալն կախ տըվալ: էտ խուրջինն ալ փռնիս ա, վեր բիրիս, գիծիս էն միհ ծիյանը երե: Միհ ալ տըսնալիս մի աղչիգյ ալն կախ գիծալ: Ախչիգյանն ալ ա վեր բիրիս: Աղչիգը եռ ա ինիս ծիանցը միներն, ըսիս.- Եռ ինի էտ մի ծիանը, հետես եք:

Բեներն բեխաբար Բախտիյար, առանց խուսիլու, եռ ա ինիս ծիանը, ըղչիգյանը հետեն գինիլիս: Բախտը քնած մարթեն թուղիս պատեն տակեն քոն:

Բախտիյար անծանոթ ըղչիգյանը նհետ առանց խուսիլու դեչանը լուսաբեց հղե յըն գինիս: Լուսըբեցեն աղչիգը ըսիս ա.- Հի՞նչ խոսմ:

- Ինծ խոսք չօնմ ըսիլու,- ըսիս ա Բախտիյար:

Աղչիգը սասեն երե ճնչիս ա, որ իրան ծանոթ տղան չի, հրցրիս ա զարմացած.- Դու հո՞ւվս, էս ծիանքը ըշտեղե յա քու ձեռքը ինգյած:

Բախտիյար գյլխեն էկածը նաղլ ա ըրիս:

- Պա դու հո՞ւվս, հի՞նչ տեղս լալ գինիս, անմտ հի՞չ ա:

- Իս գինիսմ լալ իմ արազը ճրիլու: Անմս ալ Բախտիյար ա:

Աղչիգը ըսիս ա.- Իս իմ բախտը կուրցըրալմ: Լուսը բեցված ա, ետ գինիլ, ճարիլ ինա չի: Հորս տոնն ալ գինիլ, կարի չըմ: Անմտ որ Բախտիյար ա, իմ բախտը կպիսմ քի նհետ: Իմ անմն ալ Բարի ա: Ջիտ քշի, գիննք, Աստված, Աստված:

Բախտիյար նա Բարի գինիսն դուս գյոլիս մի օրեշ թաքավերու երգիր: Հսնիսն էն քաղաքը, ըշտեղ թաքավերն ա նստած ինիլիս:

Հակառակու նման թաքավերը գենցած ա ինիս մի օրեշ թաքավերու երե կըռըվ:

Բարի նհետը բերած էրկու խուրջինն ալ լիգը վըսկեղեն, թանգյանուց քարեղեն ա ինիս: Բիրիսն թաքավերեն պալատեն դիմացը թաքավերու նման մըծ շինութուններ գիծիլիս:

Երգիրեն թաքավերը կըռվեն տեղեն նհետ ետ ա դըռնալիս գյոլիս, տըսնալիս, որ իրան պալատնուն դիմացը ինդի մի պալատնեյն սարքած, որ իրինննակը դուս գյոլուց, էտ թազա պալատնուն շվաքը ինգիս ա իրան պալատնուն երե, ըրևեն առաչը կտրիս:

Վազիրնոն նանե ղուրկիս ա, որ.- Գենցե՛ք, էտ պալատնուն տարը բերեք, տըսնմամ էտ հի՞նչ մարթ ա, որ առանց ինձանե, հըրցիլու ուռուսխար եր ունիլու, ինքնագյուղոխ եկած ա իտի պալատներ սարքած:

Դու մի ասի, որ Բարի մըծ գիտնական ա: Ըշխարքես տակն ալ ա գիդալիս, գյուղոխն ալ:

Թաքավերեն վազիրնեն որ գյոլիսն Բախտիյարե ըսիս՝ երգիրեն թաքավերը քի կնչիս ա, Բարի Բախտիյարե ըսիս ա.- Գինի, թաքավերեն կասս, որ իս փլան թաքավերեն տղանմ, փլան թաքավերեն ալ փըսեն: Իմ սըրտը տեղըս ա օզած ըպրիլու, եկածմ տեղս: Դու ալ իմ աշկեն երե տեղ օնս: Համեցե՛ք, գիննք ղոնաղ իմ պալատը: Ղոնաղ գյուղու հետե օր կնշանակս: Բեն ա, որ կասի լա աս օրմ գյոլիս ղոնաղ, դու մի մարթավ ինձ խաբեր կղորկս, որ իս ինդի արմ, թաքավերեն աշկեն ըրվամ վեչ: Թաքավերը ջահիլ տղա յա: Իմ նխշուտեթունը որ տըսնի, ինձանե ձեռք չի քաշի: Կօզի քի ըսպանիլ տա, մի մահնով քի ըսպանի, որ ինձ տար դըռնի:

Բախտիյար գինիս ա թաքավերեն կոշտը:

Ըսիսն, խուսիս, ծանոթվիս, Բախտիյար թաքավերեն ղոնաղ ա կնչիս: Թաքավերն ալ ըսիս ա.- Աս օրվա նանե սորին օր չկա: Եր կաց գիննք պալատնետ տըսնալու:

Բենը ինդի ա դըռնալիս, որ Բախտիյար կրիս չի Բարու խաբար ղորկիլ: Թաքավերը գյոլիս ա, Բարու տըսնալիս, ընդուր նախշուտթունեն երե մնալիս քրացած: Նստիսն կերուխումի: Թաքավերը Բախտիյարե նհետ ախպեր ա դըռնալիս:

Թաքավերեն մի շատ ջադուբազ, բազզադ հաքիմ ա ինիս: Էտ ալ Բարու տըսած ա ինիս: Թաքավերը Բարուն տար դըռնալու մըտքը հաքիմեն ըսիս ա:

Մի վախտ անց ա կնալիս, հաքիմը Բախտիյարե կնչիս ա թաքավերեն կոշտը, ըսիլիս.- Բախտիյար, մըր թաքավերը, քու ախպերացուն, շատ փիս ծանդր ալուզ ա: Ըտուր փրկութինը երգինքի Հուրի-փարիների մորանց կաթնն ա: Հարչան խիյալնք ըրիս, ծընդր-թիթվ ըրիսլիս, տըսնալիսնք, որ քի ա կման օրեշ մարթ կարի չի ճարի, գինի բերի: Պետք ա դու վեզ օնըս, գինս ճարս, բերս, թաքավերեն փրկնք:

Հաքիմեն ասածը Բախտիյար գյոլիս ա Բարու նաղլը ըրիլիս: Բարի ըսիս ա.- Իս քի ասալմ, որ ինդի կարս, որ թաքավերը ինձ տըսնի վեչ: Էտ օմենը սարքովի բեն ա: Վախիլ մա: Մընք ինդի կաշխադնք, որ իրաք իրանց նպատակեն հասնի չընն: Լսի՝ տըս հի՞նչմ ըսիս: Երկաց էրկու տիգ քյոհնա գինի լցրի, գիձի խուրջինը, գիձի ծիանը երե, եռ ինի, գինի հասեր

էն հըռե իրք հչանե բեցուր սարը: Տեղը մի կուճի ծըռոտ, կնչկոտ տեղ կա: Մաչտեղը մի բերակ, զուլալ ախպիր կա: Ախպիրին երե մի կուճի քարե նավ կա: Օմեն օր լուսըբեցեն մի հրեղեն ձի գյուլիս ա էտ ըխպիրից ջուր խմիս: Դու կգինս, ըխպրին աշկը կփակս, նավեն ջուրը կդրտակս: Տարած գինիտ նի կածս նավը, դու քուլերեն մաչեն գյող կկանաս: Հրեղեն ձին գյուլական ա, ջրի տեղ գինին խմի՝ հարփի խտուրու ինգի: Դու դուս կգյոս, հրեղեն ձիանը հագվեն նանե էրկու մազ բուք կտաս, կդիրս ջուբոմը: Ձին որ օշքի գյո, ալ օրեշ տեղ կարի չի գինի, կենքարկվի քի՝ քու սեփական ձիյանը նման: Քու ձին տեղը կթողնս: Եռ կինս հրեղեն ձիանը, կասս՝ ինձ տար հուրի-փարիների բաղը: Հրեղեն ձին բաղեն տեղը գիդալիս ա: Բաղը օմեն քշանաց երգինքից վեր ա գյուլիս երգիրեն երե՝ իրան ծառ, ծղեգյավ, շողը երե վարթերավ, երքուղ բուլբուլներավ, սառնը ախպիրավ: Հուրի-փարիները գյուլիսն կուժռնեն դիրած ուսսուռնուն: Կոժրը դիրիսն ըխպիրին, իրաց հետե շոռ գյուլիս, երքիս, խաղ ըրիս, վարթ քըղիս, փոնջ կպիս: Այտս գյուլիսն ըխպիրին իրիսնեն լվնալիս, կոժրը ջիրավ լցրիս: Օմեն հինչ որ վերչանմ ա, բաղն ալլա բիցրնալիս ա, գինիս երգինք: Հուրի-փարիները որ կուժռնեն կդիրն ըխպրին կողքեն, գինն վարթ քնդիլու, դու դուս կգյոս մի կոժ եր կօնս, ալլա գյող կկանաս, կգյոն, օմեն մինը իրան կոժը եր կօնի, կլցնի: Մի կոժ կպկասի: Կուժատարը լեց ա իննական, կոժն օզի: էտ վախտը դու դուս կգյոս, կասս՝ «Ինձ քո մոր կաթնեն նանե պատառ կաթն ա պետքի, ուրթունմը կեր քո մոր տված կաթնավը, որ կգինս կաթնը կբերս, կոժտ կտամ քի»:

Բախտիյար մինի-մինի լսիս ա Բարու ըսծնեն: Եռ ա ինիս ձիանը, գինիս քարե նվով ախպիրը ճրիլիս: Գինի նի ըծիս նավը, հրեղեն ձին փռնիլիս, գինիս ճրիս երգինքից վեր եկուղ անմահական բաղը, հուրի-փարիներից մինեն կոժը պիհիլիս, կաթնը իք ունիս, բիրիս տալիս թաքավերեն:

Թաքավերեն հաքիմը մնալիս ա զարմացած, թա՝ Բախտիյար հինչ օժու տար ա, որ կրեցած ա գինի հուրի-փարու մոր կաթնը բերի: Թաքավերեն նհետ պատառ խյալ-խիյալն ըրիս: Մի բեն որոշիս, Բախտիյարեն գյլխեն նոր փորձանք բիրիլու հետե, կնչհիլիս, բիրիլիս պալատ, ըսիլիս.- Ըշխարքմս ոչ մի տեղ լսված , տըսված չի, որ մարթ ինսանը գինի հուրի-փարիների մոտից կաթնը բերի: Էս բենը սարքովի ա: Դու մըզ խիփիլի՞սս, թա՝ ղորթ ա: Պետք ա գինս էս կաթնը տվողն բերս, տըսնանք, որ հավատանք, նոր թաքավերը կաթնը խմի:

Բախտիյար գյուլիս ա թաքավերեն ըսծնեն Բարու նաղլը ըրիլիս:

Բարի ըսիս ա.- Այ մարթ, պապական խոսքը ըսիս ա՝ «Գետը մտնողը, փոխկրը թրչվիլեն նաեե պետք ա վախի վեչ»: Մընք ալ գետննք ինգյած: Դու տղամարթ կաց, վախիլ մա: Իս ալլա բենը գյուլոխ կբերմ:

Բարի ըսիս ա.- Եր կաց, ալլա եռ ինի ծիաևը, գինի հասեր քարե նվավ ըխպիրին: Հրեղեն ծիաևը մազրը նի քսի մին-մինու: Ջին կգյո: Եռ կինս գինս ալլա կհասնս երգինքից վեր եկուղ անմահական բաղը: Օմեն կես օր հուրի-փերիները գյուլիսն, բաղեն մաչտեղը գյոլ կաննի, գյուլումը լըղնալիս: Իրաք որ նի կմտըն գյուլը լողնուլու, դու էրկունեն շորրը եր կօնս, կպահս: Շորերեն տարրը որ շոռ կգյոն, լեց կինն, իրաց շորրը կօզն: Դու կասս՝ «Լեց մեք ինի: Շորրը իմ ձեռքեն ա: Ջեր տված կաքնը տարալմ տվալ թաքավերեն, խմիս չի: Հվտալիս չի: Ըսիս ա՝ պետք ա գինս կաքնը տվողեն բերս, տըսնամ, որ հավատամ: Թա չի, քու գյուլոխը կտրիլ կտամ: Ըղչգերքը որ ալլա իրաց մորը տված կաքնավը ուրթումնը կօտն, շորրը կտաս, կգեննն, կնստցրս հրեղեն ծիաևը, կբերս:

Բախտիյար ալլա մինի-մինի, տեղը-տեղեն, Բարի հինչ ասած լալ, ինդի ալ ըրիս ա: Գինիս ա հուրի-փարիներից էրկու հուգի բիրիս, թաքավերեն ըռշկին վընը ըրիս: Թաքավերեն լուգին կապ ա ինգիս, կրիս չի խոսի:

Մի քանի օր անց ա կնալիս, թաքավերն ալլա կնչիս ա հաքիմեն ըսիս.- Վերչնական մի բեն ճարի Բախտիյարից պրծնընք:

Հաքիմը խիյալ-խիյալ ա ըրիս, վերչնական մի բեն սվրցրիս թաքավերեն:

Թաքավերը կնչիս ա Բախտիյարե, ըսիլիս.- Բախտիյար, երգիրից դեչանը երգինք քիաևե շատ գոհմ՝ ինձ մահից փրկիլա հետե: Իրքմինջի խոսքս ալ որ կադարս, կգիդամ, իմ ամենահարազատ հնգերսս, պարիկամսս, հալալ ախպերսս:

- Ասի, լըսմ,- ըսիս ա Բախտիյար:

Թաքավերը ուլխացած ըսիս ա.- Պա ասի չըս, մի քաևե քիշեր ա կրիս չըմ հանգի քոն ինի: Սաղ քիշերը մնալիսմ չարչարանքե մաչե: Ըրազմ տըսնալիսմ իմ հար, իմ մար էն դունյա շատ նեղության մաչե յըն, տանջվիսն, չարչավիսն: Պետք ա գինս էն դունյեն նհետ մի խաբեր բերս, գիդամ, որ իմ ծնողների չարչարանքեն, տանջանքեն մանին հի՞նչ ա:

Բախտիյար շատ նղացած, օնքրը երի տված, ետ ա դըռնալիս գյուլիս տոն, տըսնալիս Բարի հուրի-փարիներեն նհետ նստած նայեն իրաց հետե օրախ-օրախ, սոհբաթ ըրիլիս: Բարի տըսնալով Բախտիյարե դրութունը, թայդի հրցրիս ա.- Հի՞նչ ա պդահած:

Թաքավերեն ասածը Բախտիյար նաղլ ա ըրիս: Բարի ալ ա նի ինգիս մտածմունքա մաչ: Էտ թաքավերեն երգիրմ մի անսովոր օրենք ա ինիս: Մըռալը թղիս չըն: Փադն հվիքիս, մեյդը դիրիս մաչեն, կրակ տալիս:

Բենից պարզվմ ա, որ Բախտիյարե պետք ա դիրն կրակմը, էրն, հոքին գինի էն դունյա՝ թաքավերեն հետե խաբար բերի:

Հուրի-փարիներն տըսնալիսն Բախտիյար նա Բարի շատն մտածմ, շատն տխրած, ըսիսն.- Մընք գիդալիսնք լալ, որ էտ թաքավերը ձեզ էրկու փորձանքի բերած ա, իրքմինջինն ալ բիրլական ա: Ըտուր հետե մընք գենցա չընք, մանցածնք տեղս: Վախմա, գինի թաքավերեն ասի՝ աչքես երե, կգինմ, կբերմ, դու կրակը հզրցրի:

Դե սաղ երգիրը ջառ ա ինգիս, որ մի մարթ ա եկած մըր երգիրը, գենցած ա հուրի-փարիները մորանցից կաթն ա բերած, թաքավերեն մահից փըրկած: Միեգ ալ գինիս ա էն դունյա: Էն դունյա՝ թաքավերեն ծնողնան նանե խաբար բերի: Դե ժողովուրդը հվիքվիսն, գյուլիս:

Բախտիյար գինիս ա թաքավերեն ըսիս.- Իմ աշկեն երե: Հազրմ: Համա դե փադը շատ հվաքիլ տոր, բեցուր ինի, որ շուդ հասնմ:

փադն հվաքմ, բեցուր կուտմ, Բախտիյարը դիրիս բիրթակեն գյլխեն, կրակը վռիլիս: Օլավը, ծոխը երգինք նի ա ունիս: Իրիլիս, վեր ընցնիս:

Դու մի ասի, որ կրակը վռիսն, ծոխը թունդ բիցրնալիս ա, հուրի-փերինեն գյուլիսն Բախտիյարե փադեն կուտակեն իրեսեն նանե եր ունիս, տնիլիս տոն, նստիս թաքավերեն հորը, մորը ընըմանց մի նամակ գիրիս, փիչիտիս, տալիս Բախտիյարե ձեռքը, թա՝ տար տոր թաքավերեն թող կարթի:

Նամակմը գիրածն ինիս, որ երկար վախտ ա քիանե բուժոնվածնք, քու կարոտը քաշիլավ ուլուզացածնք: Նամակը ստանալուն նետ, վրազ քու հաքիմեն նետ եկեք: Շուդ կգյոք, որ ըշկռնես մնա վեչ հղեց:

Էքսի քշանաց թաքավերը կնչիս ա հաքիմեն, վազիրներեն ըսիս.- Դե Բախտիյարե նանե պրծալնք: Ըսեցեք, տըսնմ, հի՞նչ մասլահաթ եք ըրիս, որ գինընք Բարու բերնք:

Լա էս խոսքեն երե, Բախտիյար նի ա մտիս պալատը ուրուխ-օրախ, նամակը տալիս թաքավերեն ձեռքը: Օմեն մնալիսն շշմած, քար կտրած՝ Բախտիյարեն տըսնալավ:

Թաքավերը նամակը բինալիս ա, կրթիս: Սհաթտա հոքմը ըրիս, որ՝ փադ բերեք, կրակը վռեցե՛ք, իս նա հաքիմը գինիսնք: Թաքավերու հոքմ ա: Կրակը սհաթտա վռիսն, թաքավերեն նա հաքիմեն հղե դիրիս էն դունյա:

Բախտիյար գյուլիս ա տոն, տըսնալիս տանը մարթ չկա: Խուտորու վա ինգիս պատառ քոն ինի դինջանա, էտքան նահախ չարչարանքեն ետը:

Քոն ա ինիս: Աշկրը բինալիս, տըսնալիս հուրի-փարիները մին-մին տղա խոխա խտտած, նայեն աջ ու ձեխ կողքարնեն վըտը: Բարի ալ գյլխեն դիյերը վըտը: Պարզվիս ա, որ Բարի ազադված ա, ջոխտ տղա յա բերած:

Բախտիյար ըսիս ա.- Իս իմ արազը ճարալմ, թշնամուս վերացրալ: Կարողմ հանգիստ ապրիլ:

Հուրի-փարին ալ ըսիսն.- Մընք ալ մըր պարտքը կադարալնք: Գիդալիսնք, որ ալ մըր հանգիստը խանգարուղ չի ինի: Մնաք բարով:

Ըսիսն ու անհետանում:

Բախտիյար հսնիս ա մուրազեն: Աստուծ տա ձեր ումուննուց տըսած արազն ալ պարին կադարվի: Դոք ալ հասնեք ձեր մուրազեն:

18 (18). ՆԱԽՇՈՒՏ ՀԱՌՆԸ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի մարթ լալ, անմը Սավադ: Սավադե մի կնեգ լալ, անմը Նախշուտ:

Նախշուտը էնքան նախշուտ լալ, որ իրիննակեն նման շփըղ-շափաղ լալ տալիս: Ըդուր հետե ալ պարիկամ, ծանոթ, հրևան, հու վեր Նախշուտեն տըսած լալ, ծանոթ լալ, ըսիսն լալ. Նախշուտ հառհնը: Լա իտի ալ անմը մանցալ ա դովրիբարմը Նախշուտ հառհնը:

Չեշած որ Սավադ շատ ջահիլ լալ, հալա նոր լալ փսակված, համա դե մըծ հարուստեթուն լալ, երգիրեն թաջրնուն, բազիրգյանուն նհետ լալ նստիս, եր կնալիս:

Պապական խոսքը ըսիս ա. «Օմեն հինչը՝ վախտը գիդա, մին ալ բախտը գիդա»: Դե ժամանակ ա եկալ, որ Սավադե բախտը թարս ա շոռ եկալ: Առուտորեն գյամին ծովումն ա շոռ եկալ: Մի քիշեր ալ գյողրը տոնն թլանալ տարալ, ճուբղենեն դուքանը կրակ ա ինգյալ, մի խոսքավ՝ Սավադ մի տարմ ղըռալ ա երգիրեն ամենաքյասիբ մարթոնցը մինը:

Վերչը, մի օր Սավադ բերալ ա իրան մնացած իլած-չիլածը թուփ արալ, մի տարվա ուտիլու ապրուստ թուփ արալ, դիրալ տանը, կնգանը ասալ.- Նախշուտ, մի տեղ իս ըպրանքու ումուդ օնմ: Գինիլ-գյոլըս մի տարե կքաշի: Իս քի հետե մի տարվա ուռուզի հվաքածմ, դիրած տոն: Մի տարմը դու տանը նանե դուս չըս գյո: Կտըսնաս, որ տարեն թմամալ ա՝ եկա չըմ, նոր իմ քվոր նհետ դուս կգյոս ինձ հետե սորաշըղ կարս:

Սավադե փսակված, գենցած, մի քուր ա ինիս: Համան քաղաքմն ա ըպրիլիս: Քվորն ալ կնչիս ա, տանը մի բիլալին տալիս իրան, ըսիլիս.- Այ քուր, դու ալ ձրքաթող վեչ արս: Հարդամ կգյոս, դուրքը կբենաս, Նախշուտ հարսանը նհետ սոհբաթ կարս: Քեփը, հալը կհրցնիս, կգինս:

Սավադ էսքանը ըսիս ա, նստիս ձիանը, գինիս:

Ժամանակ ա, շոռ ա տալիս, գյոլիս տարեն թմմիլիս: Տարեն թմամած համին օրը, Սավադե քուրը գյոլիս ա Նախշուտ հարսանը ըսիլիս.- Այ հառհնը, բոլ ա տոն մանակ նստիս: Դու ալ մեղքս: Ասօր իմ ախպուր գյոլեն տարեն թմմիս ա, եր կաց դուս գյոնք քաղաքը, հարցուփորձ արնք, բալքյա միհը իմ ախպուր նանե մի խաբեր տա, մի բեն ասի:

Նախշուտ հառհնը համաձայնվմ չի: Ըսիս ա.- Ասօր ալ, դեչանը ըրակու գյոլու ումիդ կա: Սավադ որ գյո վեչ, նոր էքուց կարողմ տոնը նանե քաղաք դուս գյոմ:

Վերչը բուսավն մտնիս, Նախշուտ հառհնը ըսիս ա՝ չի: Տալը ըսիս ա՝ հա: Ախրը տալը զոռ ա ըրիս, Նախշուտ հարսանը դոս բիրիս քաղաք:

Հակառակը հակառակ ա ինիս: Լա պատառ տեղ առաչն կնալիս, տըսնալիսն թաջրու մի մըծ քյարվան ա գյոլիս: Ուլխնալիսն, քա՝ եկուղ թաջրեն նանե հրցրնք, տըսնանք Սավադե նանե մի խաբեր կգիդա:

Քյարվանը գյոլիս ա մուտնալիս, տըսնալիսն թաջրը լա Սավադ ինքն ա: Ուլխացած վազն տալիս, մուտուռնալիս, որ պարևն, տըսնալիսն հինչ՝ Սավադ մա ասի, մի փալանգ ասի՝ կզնված հուջում ըրիս, ըսիլիս.- Այ քուր, այ կնեգ, դուք տեղս հի՞նչ բեն օնեք: Իս ձեզ ասածմ լալ, որ մի տարե տանը նանե դուս վեչ գյոս: Ուրեմը դուք լա սաղ տարեն նի եք ինգյած քաղաքը՝ շոռ եկած:

Քուրը ուզիս ա մի էրկու խոսք ասի, Սավադ համփերմ չի: Թորը դուս ա ունիս, որ թխի, ուրկկնեց ալ ըսպանի:

Էտ սհաթեն, Աստվածանից մի չտըսնված քամե, թոզաղան ա եր կնալիս: Նախշուտ նա տալը Սավադե աշկեն ըռշկին կուրչիսն:

Քամեն անց ա կնալիս: Սավադը աշկրը բինալիս ա, չորք թարափը յիշիս, շոռ գյոլիս, ո՛չ Նախշուտեն ա ճրիս, ո՛չ ալ քվորը:

Սավադ քյարվանը բիրիս ա տոն: Բռնրը վեր ունիս, նստիս խիյալ-խիյալ ըրիս, տըսնալիս՝ սորին բեն չի փռնած: Պետք ա համփերիլ լալ, կնգանն ալ, քվորն ալ խոսքը լսի, տանը նանե դուս գյոլեն մանին գիդալ լալ: Տըսնալիս ա, որ խամ բեն ա փռնած, մեղքը իրանն ա, եր ա կնալիս գինիս, նի ինգիս քաղաքից քաղաք, շենից շեն շոռ գյոլիս՝ կնգան նա քվորը ճրիլու:

Սավադե թողնք իրան կուրցրածեն շոռ գյուլիս, խաբեր տանք Նախշուտ հարսան նանե, տըսննք հի՞նչ ա դըռալ, ըշտեղ ա գենցալ:

Օրերից մի օր, մի թաջրու քյարվան գյուլիս ա մի ծըռոտ, կնչկոտ, մի սարին ախպիրու կուշտե վեր գյուլիս՝ դինջինալու:

Նոքյարնեն ձիանքը տընհիսն ըխպիրին ջուր տալու: Ձիանքը ջուր չըն խմիս, խրտնիսն, ետ-ետ գինիլիս:

Նոքյարնեն գինիսն թաջրեն խաբեր տալիս: Թաջրը զարմացած գյուլիս ա ախպիրին ջիրին վարավուրդ ըրիս, տըսնալիս ա, ջուրը հիլիլու նման պարզ մի ըղչիգյան նկար ա նշանց տալիս: Զարմացած յիշիս ա ըխպիրին գյլխեն թալվար ծառեն, տըսնալիս ա մի չըտսնված նախշուտ աղչիգ նայե ծառեն հչոմը նստած:

Թաջրը ըղչգանը խնքրիս ա, ծառեն նանե վեր բիրիս, հարցուփորձ ըրիս՝ հո՞վս, հի՞նչ աղչիգյս, տեղս հի՞նչ բեն օնըս, անմտ հի՞նչ ա:

Աղչիգը ըսիս ա.- Իմ անմը Նախշուտ ա: Ինծ Նախշուտ հառհնն լալ ըսիս: Մըծ տան տարմ լալ: Բախտս ինծ կուրցրարալ ա: Եկածմ, ինգյած տեղարս, մանցած անտեր:

Թաջրը ըսիս ա.- Իս ազափմ: Հալա փսկված չըմ: Իմ երգիրից երգիր, քաղաքից քաղաք շոռ գյուլը ոչ թա թաջրեթունն ա, իմ նպատակը՝ մի նախշուտ, իմ օզած, հավանած աղչիգ ճարիլ, փսակվիլն ա: Դե որ իտի ա, իս քու մարթը, դու իմ կնեգը,- ըսիս ա թաջրը, Նախշուտ հարսանը եր ունիս, տընհիս իրաց քաղաքը, իրան տոնը:

Ըրկոնուն Նախշուտ հառհնը բիրիս ա տղեր ա սրքիս, թաջրեն ըսիս.- Դու շորրտ փոխի, նի մտի տղերը, իս ալ գինըմ, շորրս փոխմ, գյոմ:

Թաջրը շորրը փուխիս ա, նի մտիս տղերը, հա յիշիս ա, աշկրը ճիպճիպիս, եկուղ չի ինիս: Եր ա կնալիս, սաս ըրիս, դես-դեն շոռ գյուլիս, տըսնալիս ա Նախշուտ հառհնը կավչնի, որ կավչնի: Մի թիքյա եղուտ հացա դըռնալիս, կուրչիլիս: Թաջրը մնալիս ա մաթալ: Որոշիս ա հինչ գինավ ալ ինի, շոռ գյո, Նախշուտ հարսանը ճարի, տըսնա էտ հի՞նչ հրաշք բեն լալ:

Թաջրն ալ թողնք Սավադե նման օմեն հինչը թողած, ինգյած Նախշուտ հարսանը շոռ գյուլիս, մընք ալ շոռ գյոնք, տըսննք Նախշուտ հառհնը հի՞նչ տեղ ա գենցալ, հի՞նչ ա դըռալ:

Օրերից մի օր մի շենու ջահիլ չոբան վընչխըռնեն արած սարեն դոշավը, քարեն երե նստած շվե լալ ըծիս: Մին ալ էն ա տըսալ, մի չըտըսնված նախշուտ աղչիգ եկալ ա կուշտեն վըտ կացալ: Չոբանը ըշկերեն հվտացա չի, մանցալ ա զարմացած, քար կտրած, թա՝ էս նխշտեթունու տար աղչիգը, տարուն էս վախտը էս սարերմը՝ ման-մանակ հի՞նչ ա ըրիլիս: Հալբաթ

նաղլերեն մաչեն որ ըսիսն. սարերմը հուրի-փարիներ կան, հալբաթ էս էն հուրի-փարիներեն նաներ յա:

Ըսիս ա, թա.- Դու դուրթավ աղչիգյս, խոսի գիդամ՝ դու հո՞ւվս, տեղարս հի՞նչ բեն օնս: Անմտ հի՞նչ ա,- ըսիս ա չոբանը:

- Իս աղչիգ չըմ, հառնմ: Անմս Նախշուտ ա: Բախտս կորած ա, բախտեսմ շոռ գյոլիս: Քաղցածմ, հաց օ՞նս, պատառ հաց տոր,- հմնչիլավ ըսիս ա Նախշուտ հառհնը:

Չոբանը ուլխնալիս ա, եր ա կնալիս մի ջամ կաթն ա կթիս, մեզարը բինալիս, հացը դիրիս Նաշխուտ հարսանը ըռշկին: Նախշուտ հառհնը ուտիս ա, քուշտնալիս: Չոբանը Նախշուտ հարսանը ըսիս ա.- Դու ալ կորած բախտետ շոռ չըս գյո, քու կորած բախտը լա իսմ, որ եկալս ճարալ: Իս ազափ տղա յըմ: Աս օրեց նհետ՝ իս քու կորած բախտը, դու իմ կնեգը,- ըսիս ա չոբանը, վչխրնեն հվըքիս, Նախշուտ հարսանը նհետ եր ունիս, գյոլիս տոն:

Ըրկոնուն ալլա Նախշուտ հառհըն տըղեր ա բինալիս, չուբաներն ըսիս.- Դու խուտորու ինգի դինջաց, իս գինմ լվացվմ գյոմ:

Չոբանը նի ա մտիս տղերը, յիշիս, յիշիս, էկուղ չի ինիս: Ճարը կտրած եր ա կնալիս, շորրը գինալիս, կնչիս, սաս արուղ չի ինիս: Շոռ ա գյոլիս, Նախշուտ հարսանը ճրիս չի: Չուբաներն քոնը քիշերը տնիս չի: Քշանաց եր ա կնալիս, շինացուց ըսիս.- Օմեն մարթ իրան վըչխռնուն տըրեթուն արի: Ալ իս ծեր չոբանը չըմ: Գինիսմ իմ կուրցրած բախտը ճրիլու:

Չուբաներն ալ թողնք, գյնի էրկու թաջրներեն նման բախտեն շոտ գյոլու: Մընք ալ գիննք, տըսնանք Նախշուտ հառհնը ըշտե՞ղ ա գենցալ, հի՞նչ ա դըռալ:

Նախշուտ հառհնը չուբաներն տանը նաներ փխչիս, գինիս ա դուս գյոլիս մի քաղաք: Տըսնալիս ա՝ քաղաքեն հարուստ, քյասիբ, մըծ, կուճի օմեն ալ ուլխնալիսն, հվքվիս, գինիսն դիբի քաղաքեն մաչեն մըծ մեյդանը:

Հրցրիս ա.- էս հի՞նչ օրախեթուն ա, էս հի՞նչ հավաք ա:

Ըսիսն.- Երգիրեն թաքավերը մըռած ա: Ժողովրթը հվաքվմ ա, թազա թաքավեր նստցրըն թախտեն:

Նախշուտ հառհնն ալ ա խռնվիս ժողովրթեն, գինիս մեյդանմը մի տեղ վըտ կնալիս:

Էտ երգիրմն ալ օրենք ա ինիս. նոր թաքավեր վընընը ըրիլու հետե, ըտուց մի ղուշ ա ինիս, իրք հետ թռցրիսն, հուր գյլխե վեր գյո, ընդորն տալիս թաքավերութունը:

Ղուշը բիրիսն իրք հետ բեց թուղիս: Իրք հետ ալ գյուլիս ա, Նախշուտ հարսանը գյլխեն երե վեր գյուլիս:

Երգիրեն մըծամըծ մարթինք, նազիր-վազիրնեն հվքվիսն, տըսնալիս՝ ղուրթավ, ղուշը ինդի մի ջահիլ ըղչիգյան գյլխե ա վեր եկած, որ լա բոյավ, բուսաթավ, նախշուտթունավ թաքավեր դըռնալու սազական ա: Բախտի բերումով Նախշուտ հառհնը դըռնալիս ա երգիրեն թաքավեր:

Թազա թաքավերեն առաչին հոքմը էն ա ինիս, որ նազիր-վազիրնուն ըսիս ա.- Քաղաքեն գյլխեն մըծ հղցին կողքեն ծըռոտ, կընըչկոտ սառնը ախպիր կա: էտ հղոքը օմեն մի թաջրու քյարվան, ղարիբ մարթիք գինիս-գյուլիս տեղը էտ ախպիրին քուշտեն նստիսն, դինջինալիս, ջուր խըմիս, իրաց հղեն շարունակիս: Իմ նկարը մծցրեցե՛ք, տարեք ըխպիրին գյլխեն վըննը ըրեցեք: Կողքեն թաքուն քիշեր-ցիրկ ղարավուլ վընը ըրեցեք: Հինչ մարթ կգյո, էտ ըխպիրից ջուր կխմի, կյեշի նկարեն, ա՞խ կքաշի, կփռնե՛ք, կբերեք պալատեն շինոթունումը ջոկ-ջոկ ութախմ կպահեք: Լա որ իրք մարթը կթմամի, կգյոք ինձ խաբեր կտաք: էտ մարթկանցն ալ կպահեք թաքավերու նման:

Դե աշխարք ա, Աստուծ գիդա, հինչքան վախտ ա անցկնալիս: Գյուլիսն թաքավերեն խաբար տալիս, որ նկարեն եշուղ, ախ քաշուղ իրք մարթ փռնածնք:

Թաքավեր դըռած Նախշուտ հառհնը ըսիս ա.- Հըրթավ, մինի-մինի բիրեցեք իմ կոշտը:

Առաջինը դուս ա գյուլիս Սավադ: Դե հո՞ւր խըլք, հուր մըտք, որ Նախշուտ հառհնը եկած թաքավեր դեռած կինի: Սավադ գյուլիս ա, թաքավերեն ըռշկին մեղավեր մարթա նման ծունգաչոք, գյուլոխը կախ, նստիս:

Թաքավերը սհաթտա ճնհչիս ա Սավադե: Հրցրիս ա.- Դուզը ասի, գիդամ, որ եկալս, մըր քաղաքեն գյլխեն ըխպիրին նաեե ջուր խմալ, հինչո՞ւ հետե յըս ա՞խ քաշած՝ ըխպիրին կողքեն նկարեն յիշիլավ:

Սավադ ըսկսիս ա գյուլոխը եկածը նաղլ արիլը: Ըսիս ա.- Թաքավերը ապրած կենա: Իս մի թաջր մարթմ իլած: Իմ մեխկը վեզում ունիս, ըսիս: Նահախ տեղը իմ կնգանը կուրցրածմ: Ետետը գիդալավ, որ իս մեղավերմ, կնգանս մեղք չի իլած: Միեգ տոնս, աշխադանքս թողած, սար, չոլմ ինգյած, որ կնգանս ճարմ: Եկալմ ձեր քաղաքեն քուշտեն ըխպիրին նաեե ջուր խմալ: Դե մեղքս հի՞նչ պահըմ: Նկարը տըսալմ, շատմ նմնցրալ իմ կնգանը: Ա՞խմ քաշալ՝ նկարը տըսնալավ: Եկալն ինձ փռնալ, բերալ տեղս:

- Շատ սորին,- ըսիս ա թաքավերը,- եր կաց, եք, իմ աջի կողքեն նստի:

Սավադ կասս թա լսածեն չհվտալավ, եր ա կնալիս, դուդդուղալավ նստիս թաքավերեն աջի թիրափմը:

Բիրիսն ըրկումինջին փռնված մարթը: Նաղլ ա արալ.- Իս մի ջահիլ թաջրմ լալ: Քաղաքից-քաղաք շոռ գյոլես նպատակը առուտորը չի լալ: Նպատակս էն լալ՝ ինձ սազական մի ախչիգ ճարմ, փսակվմ: Օրերից մի օր մի ծռոտ տեղ, սառնը ըխպիրին կողքեն քյարվանս վեր լալ եկած: Նոքյարնես խաբարն բերալ, որ ծիանքը ջուր չըն խմիս, յիշիսն ջիրին, խըրտնիլիս, ետ դըռնալիս: Գենցալմ ջրին եշալ, տըսալ, որ ջիրին մաչեն մի նախշուտ ըղչիգյան նկար կա շվաք ինգյած: Եշալմ տըսալ՝ ըխպրին գյլխեն, ծառեն երե մի չտըսնված նախշուտ ախչիգ կա նստած: Խնթրալմ ըղչիգյանը, ծառեն նանե վեր բերալ: Դե ձըզանե հի՞նչ թաքցրմ, որոշալմ, որ իմ բախտն ա, տարալմ տոն: Բերալ ա ըրկոնուն տղեր բեցալ, ինձ դիրալ տղերմը, ասալ՝ «Դու հանգիստացեր: Իս շորրս փոխմ, գյոմ»: Եշալմ, եշալ, եկա չի: Մի թիքյա հաց ա դըռալ, կորալ: Իս ալ մայիլ (սիրահար) դըռած, նի յըմ ընգյած երգիրից երգիր, շոռմ գյոլիս: Եկալմ ծեր քաղաքեն ըխպիրին ջուր խմալ: Տեղը դիրած նկարը տըսալ, մանցալ քարացած՝ նկարը շատ, շատ նման լալ իմ կուրցրած, հետեն շոռ գյոլիս ըղչիգյանը: Ա՜խմ քաշալ: Ըտուր հետե ինձ փռնալն, բերալ տեղս:

- Շատ սորին,- ասալ ա թաքավերը,- եր կաց, եք, իմ ձեխե թիրափմը նստի:

Իրքմինջի փռնված մարթը եկալ ա վըտ կացալ, նաղլը արալ.- Իս մի ջահիլ-ջիվան չոբանմ: Մըր սրերմը վըչխարմ լալ պիիս: Մի քարու երե նստած, շվե ըծիլիս, մին ալ էնմ տըսալ՝ մի չտըսնված աղչիգ նայե կողքես վըտը: Ըշկերես հվտացա չըմ: Ինդի յըմ գիդացալ որ, նաղլերմ ըսիս՝ հուրի-փարի ա, աշկես ա ըրվալիս: Խուսցրալմ, տըսալմ խուսեցալ ա, գիդացալմ, որ ղուրթավ, մարթ արարած ա: Ինձ նհետ տարալմ տոն՝ էն ումիդավ, որ նհետը փսակվմ, տոն դըռնմ: Ըրկոնոն բերալ ա տղեր բեցալ, ինձ դիրալ տղերմը, ասալ՝ «Դու հանգիստացեր, էս ա շորրս փոխմ, գյոմ»: Եշալմ, եշալ, եկա չի: Մի թիքյա եղուտ հաց ա դըռալ, կորալ: Դե ինձ կներեք, էտ օրվանից վըչխրնես թողած, էտ ըղչիգյանը հետենմ շոռ գյոլիս: Եկալմ ծեր քաղաքեն ըխպիրին կողքեն դիրած նկարը տըսալ, քարմ կտրալ: Նկարը դուզբադուզ նման լալ իմ կուրցրած ըղչիգյանը: Այտս, ա՜խ մ քաշալ: Գիդալիս չըմ իմ մեղքը հինչո՞մ ա: Ինձ փըռնալն, բերալ տեղս:

- Շատ սորին,- ըսիս ա թաքավերը,- դու ալ եք, ձեխե կոքես նստի:

Թագավերը այտս հուլիրվալ ա, ձեռքը գիծալ Սավադե վիզավը, ասալ.- Քու ընջուկնավը լսալս էս էրկու մարթկնացը ասած նաղլրը, Սավադ ջան: Նման մարթունցը նանե հրաժարվուղ կնեգը, կարո՞ղ ա դավաճանե իսկական մարթուն, նամուսը տափավը տա:

Դե թաքավերը դադը մանակ չի լալ ըրիս: Հվքավածն ինիս երգիրեն թաջրնեն, հաքիմնեն, վազիրնեն: Էսքանը որ լսիսն, օմեն հինչ պարզ ա դըռնալիս: Օմեն ալ երն կնալիս գյուլիս, թաքավերեն ըռշկին ծոնդր դիրիս:

- Իս Նախշոտնմ, Սավադե կնեգը՝ Նախշուտ հառհնը: Իս հասալմ իմ մուրազեն: Սաղ ժողովուրթը թող իմ խազնեն հաշիվեն իրք օր, իրք քիշեր քեփ անի: Իմ հետեն շոռ եկուղ թաջրը գինի, իրան ըպրիս քաղաքմը վազիր նստի, ղեկավարի՝ հինչուր իրան սեփական քաղաքը, թաքավերեն առանց հարկ-տուրք տալու: Իմ հետեն շոռ եկուղ չոբանն ալ թող գինի, իրաց շենմը քյոխվեթուն արի, շենը դըռնի իրան սեփականը, առանց թաքավերական հարկ ու տուրքի: Թող ըշխարքեն ժողովրթն ալ գիդան, որ կնեգը մարթեն նամուսն ա. օգի կբիցիրցրի, հսցրի երգինք, օգի՝ կքշցրի, արի վըղեն հավասար: Մարթն ալ պարտավեր ա բենեն հալա անտեղյակ, կնգա պադևը վըղեն հավասար վեչ անի:

Սավադ մեղավեր մարթու նման եր ա կնալիս, թաքավեր դըռած կնգանը ըռշկին չուքիլիս:

Ժողովուրթը իրք օր, իրք քիշեր թաքավերեն հաշիվեն ուտիսն, խմիս, քեփ ըրիս, իրաց թաքավերեն մծըքնունեն, նամուսեն հետե արարքը բերանից բերան գիծիս:

Թաջրն ալ մի փեչատած թոխտ ձեռքեն գինիս ա, իրաց քաղաքմը վազիր դըռնալիս:

Չոբանն ալ գյուլոխը քուրիլավ մի փիչատած թոխտ եր ա ունիս, գինիս, իրաց շենմը քյոխվա դըռնալիս, շենը ղեկավարիլիս:

Նաղլը լսողնեն ալ ըշխարքեն բենեն երե զարմացած, գինիսն իրաց բենեն կնալիս:

19 (19). ԷՐԿՈՒ ՀՆԳԵՐԸ

Շատ-շատ տըրենե առաչ մի քյոհնա հայ շենմ, էրկու տղա յըն լալ ըպրիլիս: Իրաց ծնողնեն ալ հըրևանն լալ:

Էտ էրկու տղեքը լա խոխա վըխտոց շատ վախտ իրար ծոցմն լալ քոն ինիս:

Տղեցը միներն անմը Արշի լալ, միհինն ալ՝ Մուսի: Աստուծ ձեզ պահի: Դե, Ըստուծեն հրամանավը Արշի նա Մուսի մըծացալն, հասած տղեք դըռալ: Մի օր էրկու հնգեր որոշալն գինն ղարիբեթուն, փող ըշխադն, գյոն փսակվն՝ տոն դըռնն:

Մի քշանոց շուդով, Արշի նա Մուսի մարթա մի քանե օրվա հաց դիրալն միզարըմը, նի կապալ մշկռնեն, հղե ինգյալ: Կեսօրեն հասալն մի ըխպիրու: Նստալն որ ջուր խմըն, հաց օտն, Արշի Մուսու ասալ ա.- Հնգերս, դու քու մեզարը ետ մա արիլ: Եք միասին իմ միզարեն հացն օտնք, քու հացը պահնք: Իմ հացը որ կպրծնի, այտս քու բերած հացը կօտնք:

Մուսի ուլխացալ ա, համաձայնվալ:

Եկալ ա մի օր, Արշու միզարեն հացը պրծալ ա: Մի տեղ նստալն հաց ուտիլու: Արշի ուզեցալ ա Մուսու միզարեն նան մի թիքյա հաց կտրի, Մուսի թուղեցա չի: Արշի ինդի յա գիդացալ՝ հընգերը հանաք ա ըրիս: Նորից ձեռքը մըկնալ ա, որ մի կուտուր հաց եր օնի, Մուսի կզնված ասալ ա.- Ասա՞ չըմ, ձեռքտ ետ քաշի: Իս քի հաց տվող չըմ:

Արշի ասալ ա.- Արա Մուսի, հանաք ըս ըրիս, քա՝ ղորքս ըսիս:

Մուսի ասսլ ա.- Տեղս շենը չի, որ հանաք արմ: Հղե յընք գինիս, ղորքմ ըսիս:

Արշի ասսլ ա.- Որ իտի լալ, դու իմ հացը խե՞յս կերալ: Օտի չըս լալ:

Մուսի ասսլ ա.- Դու անխըլքս: Թողալս կերալմ: Քլենը թողի չըս լալ:

Արշի տըսալ ա՝ չի՛, Մուսի հղուցու նանե դուս ա եկած: Օմեն հինչ մուռցած ա: Ասալ ա.- Մուսի, որ իտի ա, ալ մըր հնգրեթունը պռնի չի: Տեղես նանե սորին տեղ կավչնի: Հղեն բուժինվիս ա էրկու տեղավ: Եք մընք ալ բուժոնվնք: Մոռնանք մըր խուխեթունը, մըր հնգրեթունը: Մի հղոք դու գինի, մի հղոք ալ՝ իս, Աստվա՜ծ-Աստվա՜ծ:

Մուսի համաձայնվում ա: Հացը կպիս ա մաշկը, մի հղե փռնիս գինիլիս:

Մուսու անշնորք խասիյաթեն երե Արշի մնալիս ա զարմացած: Նստիս ա, պատառ խիյալ-խիյալ ըրիս, տըսնալիս ա, օրը նայե մթնիլիս: Եր ա կնալիս պատառ դիբ դես, դիբ դեն վարավուրդ ըրիս, տըսնալիս ա՝ պատառ դիվեր, գետեն կողքեն ծորմը մի ջեղաց ա ըրվալիս: Ուլխնալիս ա, իրան մաչեն ըսիս. «Գինմ քիշերը ջղացմը կանամ: Հալբաթ մարթ կինի, մի կուտոր հաց կտա»:

Գինիս ա տըսնալիս՝ ջղացեն դուրքը բեց ա: Համա մարթ կավչնի: Մի բեն ճրիլու, ուտիլու հետե դես-դեն ջղացմը շոռ ա գյոլիս: Տըսնալիս ա՝ քարեն պկոմը էրկու հափոռ քիմի ցորեն կա: Դուս ա տալիս, մի հափուռը ուտիս, մի հափուռն ալ նի ա ըծիս ջուբը:

Օրը մթնիս ա: Ջեղացն եկուղ չի ինիս: Եր ա կնալիս նի մտիս ջղացեն ցուռնա տոնը, կոչ գյուլիս: Միհ ալ էն ա տըսնալիս մի առջ, մի գյուլ, մի աղվես իրար հետնաց եկալն նի մտալ ջեղացը, ուջաղեն կողքեն նստալ, իրաց հետե, դեսեն, դենեն սոհբաթ արալ: Արշի նափասը պահած սուսփուս լսալ ա:

Գյուլը ասալ ա.- էկեք նաղլը արնք, տըսննք երգիրեն նանե հու շատ սորին բենու նանե խաբեր օնի: Հո՞ւ շատ բեն գիդա:

Սիվթա աղվեսը ըսիս ա.- Թաքավերեն պալատեն ըռշկավը մի գետ ա գինիս: Գետեն էն միհ ղոլեն մի մըծ դուզ տեղ կա, երե թիրափըմ ալ՝ մի մըծ ճղպորի ծառ: Ծառեն տակեն մի տափակ քար կա: Քարեն տակեն մի կարաս վըսկե կա թաղած, մըռցված:

Գյուլը ըսիս ա.- Թաքավերեն անմը տվալս, մըննս ա ինգյալ: Պա դուք գիդալի՞ս եք, որ թաքավերեն իլած, չիլած այսլը մի թաք-մադար աղչիգ յա: Ես ա մի տարե յա, աղչիգը ալուզ ա: Ոչ մի հաքիմ կրիս չի մի ճար արի, թաքավերեն աղչիգը առողճանա: Թաքավերը խոսք ա տված, որ հու վեր իրան ըղչիգյանը ցավեն նանե ազադի, թաքավերութունեն կեսը կտա ընդուր: Ես երե սարմը մի չորբան վըչխար ա պհիլիս: Ընդուր մի պուզավր մըծ ղոչը օնի: Քշանաց շուդավ գիննականմ իմ ասած ղոչը օտմ: Ղոչեն գյլխեն հղողը թաքավերեն ըղչիգյանը փրկիլեն ճարն ա: Օրեշ իլլաջ կավչնի:

Արչը ծծղիս ա, ըսիլիս.- Դուք նաղդը թողած, նիսիա բեննք եք ըսիլիս: Հեսի՝ ջղացեն կողքեն մի մըծ տափակ քար կա: Մի ուռնատ քարեն տակեն բուն ա դիրած: Մի մըծ քսակ վըսկե, արծաթ փող ա ճարած: Օմեն քշանաց փողրը բիրիս ա բունեն ըռշկին վեր ըծիս, արվ տալիս, խաղ ըրիս, այտս ալլա հվքիս քսակը, տնիս բունը: Մի մարթ ջհհիս չի, հվաքի, տանի ապրի:

Վիրուննի հեյվաննեն իրաց սոհբաթը վերչացըրիսն, պատառ քոն ինիս, լուսը բեցեն եր կնալիս, գինիլիս: Արշի ալ ցուռնըտանը նանե դուս ա գյոլիս, որոշիս, թա. պետք յա հըրթեն փորձըմ, տըսնամ հեյվաննեն հինչքան ղորթն խոսեցալ:

Արչեն ասածը գյորա գինիս ա ջղացեն կողքը յիշիս, տսնալիս ղորթավ, ուռնոտը նայե վըսկեն, արծաթը նայե վեր ածած խաղ ըրիլիս: Քարեն մուտուալիս ա, ուռնոտը վխութունեն թուղիս ա, փխչիլիս: Արշի ուլխացած վըսկե, արծաթ փողրը հվքիս ա, նի ըծիս ջուբրը, գինիս գյլխյեր՝ դիբի սարը: Պատառ տեղ գինիս ա, տըսնալիս ա չորբանը վըչխրնեն դեմ ա արած

սարեն՝ ցրվածն ըրծիլիս: Ինքյն ալ նստած ա մի քարու երե, շվե ա ըծիլիս:

Արշի մին ալ էն ա տըսնալիս՝ չոբանը շվե ածիլը թողալ ա, եր կացալ, հարայ-հրոց տալավ, վազ տվալ դիբի վըչխռնեն: Գինիս ա տըսնալիս գյուլը մի ղոչու պոկ ծակած ա, խըղդած, դմակը բուք տված կերած: Չուբանեն սասեն, թողած ա փախած:

Արշի չուբանեն ըսիս ա.- Ղոչեն գյուլոխը ծախի, օնմ: Ինձ շատ պետք ա:

Չոբանը ըսիս ա.- Կարի չըմ ծախիլ: Պետք ա տանմ տըռնը նշանց տամ, որ հվատա գյուլ ա կերած: Թա չի, ղոչեն արժեքը ինձանե կօզի: Իս ալ քյասիբ մարթմ, կարի չըմ տալ:

- Ղոչը հի՞նչ աժի,- հրցրիս ա Արշի:

- Մի վըսկե,- ըսիս ա չոբանը:

Արշի ծծղիս ա, ձեռքը տնիս ջուբը, իրք վըսկե դուս ունիս, տալիս չուբանեն, ըսիլիս.- Մի վըսկեն ղոչեն հախը, էրկուսն ալ քի փեշքեշ:

Այտս ղոչեն գյուլոխը եր ունիս, միզարմը կպիս, գինիս դուս գյուլիս թաքավերեն նստիս քաղաքը:

Քաղաքեն մի ջոնդմը Արշի տըսնալիս ա մի տոն կա, դուրքն ալ վըտանը երե բեց: Նի ա մտիս տոնը, տըսնալիս ա մի պառավ կնեգ նայե ուջաղեն կողքեն կոչ եկած նստած: Չուբեն նանե դուս ա ունիս մի վըսկե, տալիս պռավեն, ըսիլիս.- Այ մար, քողցածմ: Շուդ արի, մի ուտիլու բեն ճարի, բեր:

Պառավը եր ա կնալիս, տանը իլած-չիլածեն նանե ճաշ իփիս, հաց բիրիս, սուփրա բինալիս: Արշի ուտիս ա, քուշտունալիս, պռավեն ըսիս ա.- Այ մար, կկարս ինձ տանս համ դեղ ծխողու դուքյան, համ ալ տղըմարթու շորր ծխիլիս դուքյան:

Պառավը ըսիս ա.- Խե չըմ կարի: Լա էս մոտե տեղը մի դարվիշ ճարու դուքյան օնի: Կողքեն ալ շորերու դուքյան ա:

Արշի գինիս ա դարվիշեն նանե մի քանե նախշուտ կուճի ղութի ա իք ունիս հաբու հետե: Աղայանու շորր, չմոշկ, փափաղ ա ունիս: Գինիս ա համամ, լընալիս, տակնուց դիյեր շորրը փուխիս, դըռնալիս ա ինդի մի տղա, որ եշուղը ասիլ լալ, լա մորից ծնված ա՝ հաքիմ:

Արշի այտս գյալիս ա նորից պռավեն տոնը: Ղոչեն գյուլոխը կուտուրիլիս, հղողը դուս ունիս, ալուրու մաչե շղխիլիս, գերմակ կուլուլիս՝ նմնցրիս հաբու: Նի ըծիս դարվիշեն նանե կալած ղութվոտանցը մաչը: Մի նախշուտ ալ հաբգյա յա ինիս կալած: Դիրիս ա հաբգյոմը: Այտս թաքավե-

րեն ըղչիգյանը նաեե մի խաբար գիդալու հետե, պռավեն ըսիս ա.- Այ մար, ախր քաեե օր ա քաղաքմը շոռմ գյոլիս, ոչ մի տեղ մի օրախութնու սաս լսիս չըմ: Օրախ մարթ տըսնալիս չըմ: Ես հի՞նչ բեն ա:

Պառավը ըսիս ա.- Այ տղա ջան, պա խի դու բենե խաբե՞ր չըս: Ասի՞ չըս, որ մըր թաքավերեն ախչիգը ծանդր ալուզ ա: Ոչ մի ճար, իլլաջ կավչնի: Մռնիլու երե ա: Իդուր հետե ալ սաղ քաղաքը սուք ա մտած: Օրախեթունը վերացած ա:

Արշի պռավեն լսիլեն ետը, եր ա կնալիս, գինիս թաքավերեն պալատը: Տըսնալիս ա երգիրեն օմեն մըծամըծրը հվաքվածն, թեխյա տխուր նստածն թաքավերեն քուշտեն: Ոչ մինը խուսիս չի:

Արշի գյոլոխ ա տալիս թաքավերեն, ըսիլիս, որ.- Իս հայտնի հաքիմմ: Եկածմ ըղչիգյանտ պիժիշկմ:

Թաքավերը իրավունք ա տալիս, տանն ըղչիգյանը օթախը: Էտ օրը Արշի ըղչիգյանը իրք հատ հաբ ա տալիս: Ըրկոնաց երե աղչիգը աշկրը բինալիս ա:

Էքսի օրը նալա իրք հաբ տալիս: Աղչիգը եր ա կնալիս, նստիլիս:

Իրքմինջի օրը աղչիգը եր ա կնալիս, շոռ գյոլիս, թիաթավ խուսիլիս:

Տասըմինջին օրը աղչիգը ինդի ա սուրինննալիս, որ կասս թա ըսկի ուլուզացած չի լալ:

Աղչիգը սուրիննալեն հետե թաքավերը մըծ մատաղ ա կտրիս, քեփ ըրիլիս, այտս Արշու ըսիլիս.- Իս իմ խոսքեն տարնմ: Թուղիսմ քու մասլահաթեն: Ուզիսս իմ աղչիգը տամ քի, համ ալ իս հիլիվերածմ, թաքավերութունս ալ նհետը: Յա թաքավերութունես կեսը տամ, հինչ ուզիսս, ինդի ալ արի:

Արշի մի օր գենցած ա ինիս, աղվեսեն ասած տեղը ճարած: Տըսած լալ, որ ճըղըպորի ծառն ալ կա, տակեն տափակ դիրովի քարն ալ: Թաքավերեն ըսիս ա.- Ինծ ոչ մի բեն պետք չի: Թա ինծ հարգմս, գետեն էն ղոլեն ճղպորի ծառեն կուշտեն դուզ տափը տոր ինծ, գինմ ինծ հետե շինութին գիծմ, տոն դըռնմ:

Թաքավերը ծծղիս ա, ըսիս.- Այ տնշենու տղա, ճղպորուն կողքեն դուզն ալ. երգիրեն կեսն ալ քի յըմ տալիս: Գինի հինչ ուզիսս, ինդի ալ արի:

Արշի գինիս ա սիվքա դուզ տափեն չորք թարափը իրք-չորք գեզ բեցուր հասար ա քշիս: Մի ճոնդմը թիթվ տոն ա շինիս: Մի քիշեր մանակ գինիս ա, ճղպորուն տակեն քարը եր գիծիս, տսնալիս ա, ղուրթավ՝ վըսկավ լիգը կարաս կաննի: Վըսկեն նի ա ըծիս պարկրը, դիրիս տանը: Ըսկսիս պալատնե, շինութուննե սարքիլը:

էտ վահդոմը էտ թաքավերեն երգիրեն կողքեն երգիրեն թաքավերը գիդալիս ա, որ իրան հրևան թաքավերեն տղա չօնի: Իլածը մի աղչիգ ա, էն ալ ալուզ ա: Թաքավերեն գյուլոխը խառն ա: Ղոշուն ա կապած, գյոլիս ա թաքավերեն վեր գիծի, երգիրեն տըրանա:

Արշի լսիս ա, փիսն ա գյոլիս: Գինիս ա թաքավերեն ըսիս.- Ինձ իրավունք տոր, իս ալ ղոշն կապմ, գինմ դուշման թաքավերեն երե կըռըվ:

Թաքավերը ուլխնալիս ա: Օմեն իրավունք տալիս ա Արշու:

Արշի իրան ղոշունավը գինիս ա, դուշման թաքավերեն ղոշունը կուտորիլիս, խռեք տալիս, տնիս սադդավը անց կցրիս: Ետ դըռնալիս, գյոլիս:

Թաքավերը որ լսիս ա, Արշու կնչիս ա կոշտը, ճակատը պչիս, ըսիս.- Մհեգ ալ խուսիլու տեղ չօնս: Եք, աղչիգս օգի, փսակմ, թաքավերութունս ալ տամ քի:

Արշի ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա: Դու ինձ հալա մոհլաթ տոր, ինձ մուրազ օնմ, կադարմ: Այտս իմ փսկվիլեն հետե կմտածնք:

Արշի գյոլիս ա իրան կեսատ թողած շինութունը ավարտիլիս: Ինդի պալատնե ա շինիս, որ քշանքը իրքննակը դուս գյոլուց թաքավերեն պալատեն երե շողք ա գիծիս:

Մի ըրկոնաց Արշի նայե ինիս պալատեն ըռշկին վըտը: Մին ալ էն ա տսնալիս՝ հես ա, Մուսի խլուշկուտալավ նայե գյոլիս: Արշու ճնչիս չի: Հո՞ւր մթկավ անց կկանա, որ Արշի թաքավերու նման մարթ կինի դըռած: Մուսու մտքովն ալ անց չի կնալիս: Յիշիս ա, գյուլոխը կախ գիծիս, գինիս: Արշի ճնչիս ա: Մուսի որ պատառ հըռընալիս ա, հենտաց կնչիս ա.- Հընգերս, ետ եք, հընգերս, ետ եք:

Մուսի մնալիս ա քար կտրած: Զարմացած ըսիս ա ինքը իրան. «Տեր Աստուծ, էս հինչ մարթ ա, որ ինձ հնգեր ա ըսիս, կնչիս իրան կոշտը»: Խյալ-խյալ ըրիլավ ետ ա դըռնալիս, գինիս քուշտեն վըտ կնալիս:

- Քու անմը Մուսի ա՝ մթնըշինացե:

Մուսի նորից գյուլոխ ա տալիս, ըսիս.- Հա, աղա ջան: Իս մթնշինացե Մուսի յըմ: Շատ կներես, աղա, ինձ ըշտեղե նհետս ճնհչիլիս,- ըսիս ա մնալիս վըտը:

- Իս քի ճնչիսմ էն ջողխթ հղցին նհետ, որ հացը կերալս, մըր կերած հացը միտեղ մռացալ, մեզարը հացավ լիգը կապալս մաշկտ, գենցալ, ինձ թողալ քողցած վըտը:

- Վա՜յ, Արշի ջան, դո՞ւ վըս, ինձ շատ կներես: Իս շատ մըծ ղալաթմ արած,- ըսիս ա Մուսի, լեց ինիլավ նի ինգիս Արշու վըտըրը:

- Ամոթ ա, իտի բեն հարկավոր չի: Եր կաց, գինիք տոն, նոր կխոսնք,- ըսիս ա Արշի, իրան քյոհնա հնգորը՝ Մուսու, տնիս տոն:

Նստիսն, դեսեն-դենեն սոհբաթն ըրիս: Մուսի նաղլ ա ըրիս իրան գյլխեն եկածը, որ շատ տեղ ա գենցած, շատ տըղ շոռ եկած, ոչ մի տեղ գործը հաջողված չի: Ջոռավ գյուլոխը պահած ա: Քյոհնա շուրերավը, ջուբը դեռտակ գինիս ա տոն:

Արշի ալ նաղլ ա ըրիս, թա հունչոր ա գենցած քիշերը ջղացմը մանցած: Քիշերը մի առջ, մի գյուլ, մի աղվես եկածն նստած, հինչրն նաղլը արած: Ընդուց ըսածավը գենցած ա հարուստութուններեն ճարած, դըռած նման մըծ փառք ու պադիվու տար մարթ:

Էքսի քշանաց Արշի բիրիս ա Մուսու թինգյանուց շորերավ գեյինմիշ ըրիս, մի քիսա վըսկե տալիս, մին ալ մի սորին յիհարած ձի, ըսիլիս.- Մուսի, էս հինչ տալիսմ, փեշքեշմ տալիս: Էրկու մարթ ալ քի հնգերմ տալիս: Կտանս մըր շենը: Էրկու ձի կօնս: Իմ հոր նա մոր կնստցրս ձիանցը երե, կտաս, էս մարթինքը կբերն: Շենմը իմ հոր իլած, չիլածն ալ թող քի փեշքեշ ինի:

Արշի հունչուր Մուսու թափշուր ա արած ինիս, ինդի ալ կադարիս ա: Արշու ծնողներեն դիրիս ա ձիանցը երե, նհետը էկած մարթունցը նհետ հղե դիրիլիս:

Մի քանե օր անց Մուսի ինքն-իրան որոշիս ա, թա. «Պետք ա Արշու ասածը փորձմ: Տըսնամ ինձ դուզ ա ասսլ իրան հարուստանալեն հետե, թա՝ խափալ ա»:

Եր ա կնալիս, գինիլիս Արշու ասած ջեղացը ճրիլիս: Նի մտիս ցուռնատոնը, կոչ գյուլիս, սուս ըրիլիս: Մթենը հնգիս ա, տըսնալիս ա՝ ըհը՞, առջը, գյուլը, աղվեսը եկալն: Մուսի ինքն իրան ուլխնալիս ա, ըսիլիս. «Մհեգ ալլա սորին բեներ նաղլը կարն: Իս ալ Արշու նման կգինմ տար կկանամ, հրուստանամ, հացու տար դըռնամ, ինձ հետե հանգիստ ապրմ»:

Վիրուննի հիյվննեն նստիսն, պատառ տեղես, տեղեն խուսիլեն ետը, արջը ըսիս ա.- Այ հնգրոտենք, մի բեն ասմ, համա ինձ երե ծծաղեք վեչ: Կարուղ ա մզա կման էս ջղացմը օրեշ մարթ ալ ա ըպրիլիս, մընք խաբեր չընք:

- Հինչո՞ւ հետե,- հրցրիս ա աղվեսը:

- Ընդուր հետե,- ըսիս ա առջը,- որ մըտըռնո՞ւտ ա, որ մհետ ալ հվաքվածնք լալ տեղս, ասալնք՝ եկեք տըսնանք ըշխարքեն նաևե հո՞ւր սորին խաբար օնի: Այտս օմեն մինս մի բեն ասալնք: Էտ օրվա ետը ալ ոչ ուռնոտնմ տսնալիս, ոչ ալ ընդուր վըսկե-արծաթեղենը:

- Հվտալիսմ,- ըսիս ա աղվեսը,- իս ալ էն ճղպորեն տակեն վըսկուն հետե, որ ասալմ, գենցածն, դուս կալած, մի թաքավերութունուն պալատնե շինած:

Գյուլն ալ ըսիս ա.- Իս ալմ հվտալիս: Ձեր ասածը գյորա, իս ալ էն օրը գենցալմ իմ ասած ղոչը փռնալ, խըղդալ, չոբանը գիդացալ ա, եկալ ա հետես արալ, փախալմ, հռացալ, վըտ կացալ, տըսալմ, որ մի մարթ եկալ ա չուբանեն նանե ղոչեն գյուլոխը կալալ, տարալ:

Աղվեսը ըսիս ա.- Ուրեմը ջղացմը մարթ ա գյող կնալիս, մըզ լսիլիս: Եր կացե՛ք, միետ շոռ գյոնք, տըսնանք հինչ կճարնք:

Երն կնալիս, շոռ գյուլիս, ցուռնըտանը Մուսու ճրիլիս, ճաշը իփիլիս: Բրիսն Մուսու իրք փայ ըրիս: Մըծ փայը առջն ա եր ունիս: Առջեն նանե պատառ խրեգ տալիսն գյուլեն: Գյուլեն փայեն նանե պատառ ալ խրեգ ըղվեսեն ա հսնիլիս:

Մուսու ուտիսն, պռուշնեն լուզիլավ գինիլիս:

Արշու ծնողնեն գյոլիսն տեղ հսնիլիս: Արշի թաքավերեն, նազիր-վազիրներեն ղոնաղ ա կնչիս, մըծ քեփ ըրիլիս: Այտս թաքավերեն ըսիս, որ իրան մուրազեն հասած ա: Նոր ուզիս ա փսակվի:

Թաքավերը ախչիգը տալիս ա Արշու: Բիրիսն օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիս, ուտիս խմիս քեփ ըրիլիս:

Երգիրեն նազիր-վազիրնեն, թաջըրնեն, հաքիմնեն հաշիվի յըն ունիս, որ իրաց թաքավերը հիլիվերած ա: Արշի ալ թա երգիրեն հետե, թա թաքավերեն հետե շատ սորին բենըր ա արած: Բիրիսն երգիրեն թաքավերեթունն ալ տալիս Արշու:

Մհեգ ըշխարքմս հինչքան չար սըրտու տար, չար մթկու տար մարթ կա, թող լա միշտ Մուսու նման վիրունի հեյվանների փայ դըռնան հանդմ, չոլում, մնան անմուրազ:

Հինչքան ալ Արշու նման պարի սըրտու տար, պարի մըթքու տար մարթինք կա, ծեռքեն թիքան հնգերեն նհետ բուժոնող կա, թող Աստուծ ալ նման մարթկանց պարին տա: Արշու նման ծլըն, ծաղկն, ըշխարքավըս մին տարածվն, հասնն իրանց նպատակեն, մուրազեն:

20 (20). ԳԻՐԱԾԸ ԻՆԱ ՉԻ ԳԻՆՋԻ

Աստված մի մարթու մի ծմռան քիշեր մի տղա խոխա յա տվալ: Դեչանը էտ, էտ մարթեն խոխա չի լալ: Էտ առաչին խոխան լալ:

Աստծեն սըրտը խղճմտանք ինգիլու հետե, առաչին տղա խոխա տալու հետե, մարթը շատ ա ուլխացալ, որոշալ ա լուսըբեցեն դուս գյո դուրքը՝ աղոթք արի, փառք տա Աստուծեն՝ իրան մտաբիրիլու հետե:

Ծմռան քիշեր ա ինիս: Լուսըբեցեն մարթը դուս ա գյուլիս դուրքը, մնալիս զարմացած: Տըսնալիս ա՝ քիշերը մի թիթվ ծուն ա եկած, ետ կալած: Չունը ետ ունիլեն ետը մի մարթ եկած ա իրաց դուրքը, ետ դըռած:

Մարթը մտածմունքի մաչ ա ինգիս, խյալ-խյալ ըրիս, ինքը իրան ըսիլիս. «Թա պարի մարթ ա եկած, խե՞ տոն նի չի մտած: Թա չար մարթ ա, հինչո՞ւ վա եկած, ետ դըռած»:

Նորից խյալ ա ըրիս, որոշիս, թա՝ պետք ա էս հետը եր օնմ, գինմ ճարմ, տըսնամ հո՞ւ վա, հի՞նչ մարթ ա: Հինչո՞ւ հետե յա եկած, ետ դըռած:

Մարթը օմեն հինչ թողած, էտ խորհուրթավր մարթեն վընննահետը փռնիս ա, գինիս: Շատ ա գինիս, թա խրեգ, գինիս ա տըսնալիս մի ծմակմը մի տոն կա: Թաքուն բիցիրնալիս ա տանը կտորը հուրդնվեր խալվաթ յիշիլիս: Տըսնալիս ա՝ իրք սիպտակ մրքավր հիլիվր մարթինքն, նոր ծնվող խոխոնցը ճակատագիրնն գիրիլիս:

Մարթը հուրդեն քուշտեն որ պատառ նըստիս ա, օմեն հինչ տըսնալիս ա: Գիդալիս ա, որ հիլիվրնոն առաչինը խուխեն ծնվիլը գիդալիս ա: Աստվածանից հի՞նչ բախտ, հի՞նչ ճակատագիր ա հսնիս, ըսիս ա: Ըրկումինջինը գիրիս ա, իրքմինջինն ալ տնիս ա տալիս, գյուլիս:

Մարթը կտրեն նաեե վեր ա գյուլիս, գինիս նի մտիս տոն, խնթրիս, որ իրան ասն, թա իրան ծնված տղեն հետե հինչ բախտ, ճակատագիրն գիրած: Խուխեն հորը ըսիսն.- Քու խուխեն ճակատագիրը գիրված ա՝ «Փսակված քիշերը գյուլ ա ուտլական»:

Մարթը լեց ա ինիս, ղանչանք, պաղատանք ըրիս, որ խոխեն ճակատագիրը փոխն: Հիլիվրնեն ըսիսն.- Առաչինը՝ Աստվածանից մըզ բույթուղ կա, որ ոչ մի մարթու գիրված ճակատագիրեն հետե ոչ մի մսւրթու ասն վեչ: Պընդ գաղտնիք ա: Գիրածը՝ ինա չի ճինջի, փոխիլ: Ըրկումինջինն ալ իրաք Աստուծեն ծառա մարթն, խոխա տվողն ալ ա Աստուծը, խուխեն ճակատագիր տվողն ալ ա Աստուծը: Դու ալ էսքան տըղ որ քյոռուղս քաշած եկած, հարգալնք, քի ասալ:

Խուխեն հարը ետ ա դըռնալիս, գինիս տոն, խյալ ըրիս, սրտըհովանքա հետե ինքը իրան ըսիլիս. «Դե, ճակատագիրը որ փոխա չըն, հի՞նչ արմ: Մի բեն, որ գիդացալմ, ալլա օքութ ա: Վախտը որ գյո, մի քիշերը հի՞նչ ա: Կդիրնք միր տան, տասը իգիթ մարթկանց ալ ղարավուլ վընը կարմ: Գյուլը հուևչո՞ւր կգյո փակ տանը մաչեն տղես օտի»:

Դե օրենք ա: Տարեն տարուն նհետ շոռ ա գյուլիս: Խոխան մըծնալիս ա, դըռնալիս նշան դիրիլու՝ փսկիլու տղա: Բիրիսն փսկիս, հարսանը նհետ դիրիս մի տան: Դուրքը պընդ փկիս: Տանը երե ալ տասը մարթ ղարավուլ դիրիս:

Էքսի քշանոց շուդավ գինիսն տանը դուրքը բինալիս, տըսնալիս տանը նաներ մի գյուլ դուս ա եկալ, փախալ: Փըսոն գյուլը խըղդած ա, վերգիցած տափեն: Հառսանն ալ օշը տարած ա, նայե թախտեն երե խտորու ինգյած:

Հարսանը օշը բիրիսն տեղը, հրցրիս թա՝ էս հի՞նչ հրաշք ա, էս հի՞նչ բեն ա:

Հառհինը նաղլ ա ըրիս, որ.- Հալա ըրկոնաց նստած, մըզ հետե սոհբաթնք լալ ըրիս: Մի մոկնը քյունջեն նաներ դուս ա եկալ, դես-դեն վազվազ արալ, դըռալ մի կատու: Կատուն դըռալ ա մի աղվես: Աղվեսն ալ գյուլ ա դըռալ, տղեն խըղդալ: Իս վխեցալմ, օշս տարալ ա, այտս հինչ ա դըռալ, ոչ մի բեն գիդացա չըմ:

Տղեն հարը վըտ ա կացալ, ասալ.- Ժողովուրթ, մարթեն ճկատեն հինչ գիրված ա պետք ա, կադարվի: Գիրածը ինա չի ճինջի:

21 (21). ԱՐԱՋԸ ԿԱԴԱՐՎԱԼ Ա

Ըսիսն՝ իլալ ա, իլա չի, մի շատ հարուստ թաջր լալ: Էտ թաջրը իրան քյարվանավը գինիս ա առուտորի: Հղեց՝ մի մըծ շենու կոխկե, մի մըծ չինարի ծառու տակը, մի սառը ըխպիրու կուշտե քյարվանը վեր ա գյուլիս, դինջինալիս: Քիշերը քոն տեղը թաջրը ըրազի տըսնալիս ա. սիպտակ մրքավր մի հիլիվր մարթ եկալ ա աշկալուսանք տվալ, ասալ. «Տասը տարե յա փսակվածս, քի այալ չի լալ: Վերչապես Աստուծեն մըննս ինգյալ: Աս քիշեր Աստուծ քի մի աղչիգ այալ ա տվալ: Համա դե փսացուտ էս շինացե ա: Էն ալ ա աս քիշեր ծնվալ»: Հիլիվրը էսքանը ըսիս ա, անհայտանմ:

Թաջրը քոնից զուրթնանմ ա, տըսնալիս ա հալա կեսքիշեր ա: Ալ մշտլղչի արազեն նաներ քոնը տնիս չի: Խիյալ-խիյալ ըրիլավ դես ա շոռ գյուլիս, դեն ա շոռ գյուլիս: Դեչանը լուսինալիս ա:

Լուսբեցեն նոքյարնեն երն կնալիս, որ քյարվանը բեռնն, գինն, թաջրը թուղիս չի: Ըսիս ա.- Մըր գինիլը անորոշ ետմ գիցիս: Դուք գենցեք էս շենը: Տնառտոն շոռ եկեք, տըսեք աս քիշեր քանե խոխա յա ծնված, գիրեցե՛ք, բերե՛ք, տվե՛ք ինձ:

Թաջրը ուզիս ա արազը փորձի, տըսնա հինչքանավ ղորթ դուս կգյո, հինչքանավ սոտ:

Նոքյարնեն գինիսն: Ըրկոնաց երե գյուլիսն խաբեր բիրիս, որ էտ քիշերը շենմը իրք խոխա յա ծնված: էրկուսը աղչիգ, մինը՝ տղա: Թաջրը գինիս ա տղա խոխա ծնված շինացուն տոնը: Տըսնալիս ա խուխեն հարը ըշխարքեն ամենաքյասիբ մարթոնցը մինն ա, նայե օրեն հացեն կարոտ: էտ խոխան ալ օխտըմինջին խոխան ա, որ ծնված ա:

Թաջրը վըտ ա կնալիս, պատառ խյալ ըրիս, ինքը իրան ըսիս. «Լավ, իս ըշխարքեն ումնոց հարուստ մարթը... պետք ա գյոմ էս աղքատ մարթեն նհետ նստմ, եր կանամ, խնամեթուն արմ: էս դըռնուղ բեն չի»: Պատառ ալ խյալ ա ըրիս, խուխեն հորը ըսիս.- Հի՞նչ տամ, իս նորածին խոխան տաս ինձ:

Խուխեն հարը սիվթա պատառ չեմուչում ա ըրիս: Վերչը մի քսակ վըսկե, մի ձի, մին ալ մի բեռնը ճուրեղեն թաջրը տալիս ա շինացուն, խոխան տընիլիս:

Թաջրը խոխան բիրիս ա տալիս էրկու հավատարիմ նյուքյարու, ըսիս.- Տարե՛ք ծմակմը մի տեղ վեզը կտրեցե՛ք, թղեցե՛ք, շուդ եկեք: Ընդի կարեք, ոչ մինը գիդա վեչ:

Իրաք ալ քյարվանը բիռնիսն, հղե ինգիս:

Թողնք թաջրը գինի իրան առուտորեն: Մընք ալ տըսնանք խոխան հի՞նչ ա դըռնալիս:

էտ շենմը մի պառավ կնեգ ա ինիս: Պռավեն իլած, չիլածը մի թաք էծ ա ինիս: Մի քանի օր պառավը տըսնալիս ա էծը գյուլիս ա կործը դերտակ: Գինիս ա չուբանեն ղանչաք ըրիս, որ իրան ապրուստը էտ մի էծեն կաթն ա: Խնթրիս ա, որ հանդմը կթի վեչ:

Չոբանը ուրթումնա ուտիս, ըսիս, որ ինքը խաբեր չի: Թա հավատ չի ըրիս, էքսի օրը իրան նհետ գյո, գինն հանդը, փորձն:

էքսի օրը պառավը շենեն չուբանեն նհետ գինիս ա հանդը: Կեսօրեն մոտե մին ալ ինն տըսնալիս, պռավեն էծը մկմկալավ շենեն իծերեն նանե ջոկվալ ա, նի մտալ ծմակը: Չոբան նա պառավը էծեն հետեն գինիսն: Հինչ որ տսնալիսն, ըշկռնոն հվտալիս չըն: Տըսնալիսն էրկու ծառու նհետ մի նեննի յըն կապած: Մի խոխա նայե նեննը քոն: էծեն սասեն խոխան զուրքննալիս ա: էծը մուտնալիս կաթն ա տալիս:

Պառավ նա չոբանը Աստուծեն չափ ուլխնալիսն: Պառավը ըսիս ա.- Ըշխարքմը ինձ ոչ մինը օնի չըմ: էս խոխան Աստված տված ա, որ տանմ,

պահմ, մծըցրմ, որ իմ ետե օրն ալ ինքը ինծ պահի: Մըռնիլուց ալ տանի թաղի:

Պառավ նա չոբանը խուխեն անմը դիրիսն Աստվածատուր, եր ունիս տնիս տոն:

Միեգ ալ թողնք պառավը Աստվածատուրեն տանի, պահի: Խաբար տանք թաջրեն նանե:

Դե աշխարք ա, ժամանակ ա, շոռ ա տալիս, անց ա կնալիս մի տաս-տասներկու տարե: Թաջրը ալլա մի օր իրան քյարվանը համան շենեն, համան ըխպրին երե վեր գյոլիս՝ ըշտեղ որ մշտլղչի արազը տըսած լալ:

Դիբի ըրակու վա ինիս: Շենեն նհետ մի տասը տղա խոխենք՝ տասը-տասներկու տարեկան, եկածն ինիս ըխպրին կողքեն իրաց հետե խաղ ըրիլիս:

Թաջրն ալ իրան խուխեթունը մըտը բիրիլավ, գինիս ա խուխենցը խաղեն թիմիշա ըրիս: Տըսնալիս ա էտ խուխենցը մինը շատ հուշիյար ա: Հինչ խաղ ըրիսն, միշտ ալ հաղթուղը էտ տղան ա դուս գյոլիս: Թաջրը մտածմ ա, որ էտ տղեն տըրեթուն արուղ ինի, մծանա, պետքական մարթ կդըռնի: Իրան ալ լա իտի հուշիյար մի տղա շագիրդու հետե պետք ա ինիս:

Խոխոնքը որ խաղը վերջացրիսն, ցըրվիսն: Օմեն մինը գինիս իրաց տոն: Թաջրն ալ Աստվածատուրե հետեն գինիս ա պռավեն տոնը:

Պռավեն նհետ պատառ տեղես-տեղեն սոհբաթ ա ըրիս, մի քիսա վըսկե տալիս ա պռավեն, ըսիս.- Իս թաջր մարթմ: Ինծ շագիրդու հետե մի հուշիյար տղա յա պետք: Քու թոռնը ինծ շատ տոր ա եկած: Իրավունք տոր ինծ նհետ տանմ: Ուխսումի տամ, թաջրեթուն սվրցրմ: Որ ետ դըռնամ, գյոմ, մըր քաղաքը գինիս տեղը, քի կտանմ իմ էմարաթմը իմ մոր նման կպահմ:

Պառավը ուլխնալիս ա, համաձայնվմ: Թաջրը Աստվածատորե եր ա ունիս, տնիս:

Աստվածատոր զարմանալի հյուշիյար տղա յա դըռնալիս՝ թա ուսում սվրիլը, թա առուտրմ: Մի քանե նհետ թաջրը իրան մթկոմը ըսիս ա. «Ներակ կինի, որ Աստոր մի ընմավր մարթու տղա դուս գյո, տանի իրան հետե փըսե արի»:

Ալլա անց ա կնալիս մի տասսը տարե: Միետ մի քաղաքմ թաջրեն հաջողվիս ա շատ օքութներավ առուտոր ա ըրիս: Քաղաքեն նանե որ դուսն գյոլիս, գինիս հսնիս մի տեղ վեր գյոլիս՝ դինջանան: Շատ մըծ օքթավր առուտորեն հետե թաջրեն քոնը տնիս չի: Եր ա կնալիս, շոռ գյոլիս, մտքոմը հաշիվնե ըրիս: Աստվածատոր տըսնալիս ա, որ թաջրը անհանգիստ ա, գինիս ա կոշտը: Քյարվանեն նանե պատառ հըռե նստիսն սոհբաթ ըրիլիս:

Թաջրը հրցրիս ա.- Պռավեն նանե քի շագիրդ եր օնիլը շատ թայդի բեն ա դըռալ: Վախտը չի իլալ, որ հրցրմ, քու հար հո՞ւ լալ, հի՞նչ փեշակի տար լալ: Մհեգ կա՞, կավչնի:

Ասատոր ասալ ա.- էտ հարցը ինձ հետե յալ մթեն ա մանցած: Ինձ պահուղ պառավը ըսիս ա՝ քու հար, քու մար քի թողածն պահմ, իրաք գենցածն ղարիբեթուն: Մեր տանը կողքեն մի օրեշ պառավ կնեգ ալ, մհետ ինձ նաղլ ա արալ, որ՝ քի հար-մար օնի չըս: Քի պահող պառավը մի օր գենցած լալ ծմակը փադ բիրիլու, քի տեղը ճարած ա, եր ա կալած բերած տոն: Իդուր հետե յալ անմս դիրած ա Աստվածատոր: Մհեգ վըրն ա ղորթ, կարի չըմ գիդալ:

Աստվածատոր որ էսքանը նաղլ ա ըրիս, ինդի գիդաց, որ օխտը կեծակ մի դոնա երգինքից թխեն թաջրեն գյլխեն: Սուս ու փուս նստած տեղեն եր ա կնալիս, գինիս էն էրկու նյուքարնուն քոնե եր կցրիս, ուրթունմը տալիս, թա. տարիներ առաչ, որ մի տղա խոխա տվալմ ծեզ, որ տարեք մուրթեցե՛ք, թըղեցե՛ք, դուզը ըսեցե՛ք՝ հի՞նչ եք արալ:

Նյոքարնեն դուզը ըսիսն, որ.- Մխկռնես ա եկալ՝ անմեղ, արթար խոխան մորթնք: Մտածալնք, որ Աստուծեն նախոշն ալ կգյո: Տարալնք, թողալ ծմակմը: Ասալնք մի գյուլեն, փալանգեն կջհի, կոտի, մըր աշկեն նանե հըռի:

Տեղս թաջրը հարուրից-հարուր համոզվում ա, որ Աստվածատոր իրան կալած խոխեն ա:

Էտ գաղտնիքից ոչ միհը, ոչ մի բեն գյուլոխ չհնգյալու հետե, թաջրը մի վախտ սուս ա ըրիս, ոչ միհեն ոչ մի բեն ըսիս չի:

Մի վախտ անց ա կնալիս: Մի օր թաջրը բիրիս ա մի նամակ գիրիս, տալիս Աստվածատորե, ըսիս.- Նամակը տար մըր տոն, տոր կնգանս: Ասի՝ նիգյարան վեչ մնա: Իս սաղ-սալամաթմ: Առուտորն ալ հաջող: Մի ամսեն ետը կգյոմ տոն:

Աստվածատոր եռ ա ինիս ծիյանը, իրք օրմ գյոլիս, դուս գյոլիս թաջրեն տոնը: Ջհն հիյթամը կպիս ա, ինքը բիցիրնալիս երե հարկը, դուրքը թկիս: Թաջրեն աղչիգը դուրքը բինալիս ա, Աստվածատորե տսնալավ, այիլ-մայիլ ա դըռնալիս: Խրեգ ա մնալիս վըտը տըղը օշը տանի: Ջոռավ իրան պհիս ա: Աստվածատոր ալ թաջրեն աղչիգը, որ տըսնալիս ա, ինդի գիդաց լուսլոնգյան՝ իրինընակեն տըսնի: Ջոռռավ հուշը գյուլոխը հվքիլավ, ըղչիգյանը պրվիս ա, նամակը տալիս թաջրեն ըղչիգյանը:

Աղչիգը հորը գիրած նամակը կրթիլավ՝ մնալիս ա քար կտրած: Նորից ա կրթիս: Նամակը աղչիգը կրթիլավ ինդի յա գյուղոխ ինգիս, որ էտ բեմնը դուշմանու ծեռք կա խառնված:

Աստվածատորե նանե հրցրիս ա.- Քանե օրմն ա եկած դուս եկած տեղս:

- Իրք օրմնմ եկած,- ըսիս ա Աստվածատոր:

Նմակմը թաջրը կնգանը երե գիրած ա ինիս. «Խանմ, առուտորես մանեն չտըսնված մըծ հաջողութուն օնմ: Մի ամսեն ետը կգյոմ տոն: Կաշխադս, դեչանը իմ տոն գյուղը նամակ բիրողուն փինըհան արս: Իս գյոմ, սաղ տըսնմ վեչ»:

Ախչիգը ինդի յա գյուղխու ինգիս, որ Աստվածատոր գյուղիս տեղը մի դուշմանու տան ղոնաղ ա ինգյած: Նամակը փոխածն: էտ նամակը ճղիս ա, իրիս: Բիրիս մի թազա նամակ գիրիս, տալիս մորը: Նմակմը գիրիս ա. «Խանմ, առուտորս հաջող չի գինիս: Մըծ հրսանեք կարի չըմ արի: Թիթվ հրսանեք ալ արմ, ամոթ կինի: Դեչանը իմ գյուղը մըր աղչիգը կփսակս նամակ բիրողն նհետ»:

Խանմը նամակը կրթիս ա, շատ ա ուլխանալիս: Բիրիս ա ըղչիգյանը փսկիս Աստվածատորե նհետ:

Մի ամես անց ա կնալիս, խաբեր ա գյուղիս, որ թաջրը նայե գյուղիս: Բենից բեխաբար Աստվածատոր, թաջըրեն ըղչիգյանն նհետ եռն ինիս ծիանցը, գինիս թաջրեն առաչը:

Թաջրը որ Աստվածատորե տըսնալիս ա իրան ըղչգյանը նհետ ծիանցը երե, ըշկերեն հվտալիս չի: Ինդի գիդաց մի կեծակ նի գյո գյլխեն: Թաջրը խուսիս չի: Գյուղիս ա տոն, կնգանը ըսիս.- Իմ ղորկած նամակը բեր տըսնմ:

Կնեգը նամակը բիրիս ա տալիս թաջրեն: Թաջրը տըսնալիս ա իրան ձեռքեն գիրը չի, ըղչիգյանը ձեռքեն գիրն ա:

Թաջրը օմեն հինչ կնգան նա ըղչիգյանը նանե թաքուն պիհլավ, ոչ մի բեն ըսիս չի: Մի քանե օր անց կնալեն ետը, մի ըրակու թաջրը մի գիրած թոխտ տալիս ա Աստվածատորե, ըսիս.- Քշանաց շուդավ կգինս քաղաքեն հաց թխողուն կոշտը, մի քանե օրվա սորին թազա հաց կօնս, որ մի քանե օրավ հղե յընք գիննական: Հացու հետե քյոռուղ վեչ քաշնք:

Թաջրը օր առաչ հաց թխող ուստեն ասած ա ինիս, որ՝ մի տղա ղուրկլալանմ քշանաց շուդավ հացու, որ կգյո, առանց խուսիլու նի կգիցս թուրոնը, մոխարատս:

Էքսի քշանաց Աստվածատոր եր ա կնալիս, որ գինի հաց բերի: Լա տանը նանե դուս ա գյուղիս, տըսնալիս ա դերը գյղեցուն զանգիրը թխալ ա:

Աստվածատոր որոշիս ա, որ հալա շուդ ա, հացը թխած չըն ինի: «Գինմ գյղեցեն, աղոթք արմ, նոր գինմ հացեն»:

Հաց թխող ուստան ալ յիշիս ա, տըսնալիս ա թաջրեն ասած մարթը եկա չի: Ինքն ալ որոշիս գինի գյղեցեն աղթոքի: Համա իրան քյոմագչուն ըսիս ա.- Մի թաջր մարթ ա գյուլական հացի: Որ տեղ կհասնի, առանց խոսիլու կփռնս, նի գիծս թուրոնը:

Թաջրը տըսնալիս ա Աստվածատոր ետ ա ինգյալ: Ինդի յա գիդալիս, որ նի յըն գիցալ թուրուևը, վառալ: Եր ա կնալիս, գինիս մի խաբեր գիդա, ալխայինն դըռնի: Հաց թխողուն քյոմագչին տսնալիս ա, որ մի թաջր մարթ ա եկալ: Թոռնեն ալ թիժ վախտն ա հնիս: Առանց խոսքի թաջրեն փռնիս ա, գյլխեն երե նի գիցիս թուրուևը:

Տեղս նաղլը պրծնիս ա:

Թաջրեն արազը կադարվիս ա:

Աստվածատոր դըռնալիս ա թաջրեն փըսան: Թաջրը իրան կոռեզքունավ ոչ ու փուչ ա դըռնալիս, գինիս մոխար դըռնալիս:

22 (22). ՕԽՏԸ ԱԽՊԵՐ, ՄԻ ՔՈՒՐԸ

Նաղլն ըրիլիս, որ իլած ա, իլած չի, մի շինացե մարթ ա իլած: Էտ մարթեն օխտը ջահիլ տղեք ա իլած: Օխտը ախպերն ալ որոշալն գինն ղարիբքուն, աշխադանք արն, փող բերն, որ փսակվն: Իրաց հարը քյասիբ մարթ լալ: Օժը հղթիս չի լալ, որ տղեցը փսակի: Տղեքը որ հազրվալն հղե հնգյն ղարիբքուն, էտ վախտը իրաց մարը վընըծանդր լալ: Տղեքը ուզիսն լալ, որ իրաց մարը ազադվի, աղչիգ բերի: Աղչիգ խոխա շատն լալ ուզիս, հանցունը օխտը ախպուրը լա մի քուր ինի:

Ղարիբքոն հղե ինիս տեղը տղերքը իրաց ծնողներեն ըռշկին պայմանն դիրալ, ասալ.- Մըզ որ ալլա ախպեր ծնվի, լուծն նա ալաթը կդիրեք տանը կտրեն հուրդեն կողքեն. թա աղջիգ կծնվի, չխարակը կդիրեք հուրդեն կողքեն:

Ասալն, օխտը ախպեր մի տեղ հղե հնալ ղարիբքուն:

Դե, ըշխարքեն օրենքն ա: Որ հնն ամեսը, հնն օրը, հնն սհաթը թմամալ ա, Աստուծեն հոքմավը շինացոն կնեգը ազադվալ ա, մի նախշուտ աղչիգ խոխա բերալ:

Շինացեն իրան տղեցը նհետ իրանց կապած պայմանը գյորա, տարալ ա չխարակը դիրալ տանը կտրեն հուրդեն կողքեն: Դու մի ասի, էտ մարթեն դուշման հըրևան օնի: Խաբար ա իլած հրվանեն նա տղեցը կապած

պայմաներն նաներ: Գինիս ա չխարակը հուրդեն կողքեն նաներ եր ունիս, տըննիլիս լուծ-ալաթը դիրիս կտրեն:

Վահդա յա, շոռ ա տալիս, տարեն թմմիս ա: Շինացուն օխտը տղերքը ղարիբքոնից ետն դըռնալիս, գյոլիս իրաց շեներն ըռշկին թումբեն նհետ յիշիս, տըսնալիս, որ իրաց տանը կտրեն լուծալաթ ա դիրած: Որոշիսն, որ Աստուծ ալլա իրաց ախպեր ա տված, քուր չի տված:

Օխտը ախպերներն որոշիսն, որ Աստուծ իրաց մի քուր կամեցա չի տա: Իրաց ալ տոն գինիլը հադար բեն ա: Էտ թումբեն նհետ ետն դըռնալիս, գինիս ալլա ղարիբեթուն:

Վախտը վախտեն նհետ, տարեն տարուն նհետ, գյոլիսն, գինիլիս:

Աշունք ա գյոլիս: Հնդերմը մոշը հսնիս ա, ճիթը ճիրավ ինգիս: Շեներն ըղչգերքը ղըզղաները, ջամրը երն ունիս, գինիս մոշ հվիքիլու, օխտը ախպուր քվորը ծնողներն թուղիս չըն հնգրոնացն նհետ գինի մոշու: Ըսիսն, որ.- Մոշու գենցուղ ըղչգերքը օմեն միներ իրան ախպուրը նհետ ա գինիս: Քի ախպեր չօնս: Հասած, փիսած աղչգյս, առանց ախպեր հանդ գինիլը, մոշ հվաքիլը ամոթ բեն ա:

Աղչիգը տանը նաներ դուս ա գյոլիս, դըրքեն պատեն տակեն նստիս, լեց ինիս:

Մի հըրևան պառավ կնեգ, քյուչավը անց կնալիս տեղը, տըսնալիս ա՝ պատեն տակեն նստած լեց ինիս ըղչիգյանը, հրցրիս ա.- Բալա, հի՞նչ ա պդահած: Խե՞ յըս լեց ինիս:

Աղչիգը պռավեն պատճառը ըսիս ա:

- Վըղը գյլխետ, անբախտ աղչիգ,- ըսիս ա պառավը,- հո՞ւ վա ըսիս, որ քի ախպեր չօնս: Քի օխտը ախպեր լալ: Քու գյլխետ հետե մի մարթ դուշմանութուն ա արալ, օխտը ախպերտ ալ գյուղխ երն կալալ, գենցալ կորալ:

Պռավեն նաներ աղչիգը էսքանը լսիլեն ետը, եր ա կնալիս գինիս տոն, պռավեն ասածը ծնողներեն նաղլը ըրիլիս: Ծնողներն ալ խոսք չըն ծրիս ըղչիգանը ասն: Ճարներն կտրած լեցն ինիլիս:

Աղչիգը ըսիս ա.- Որ իտի ա, իս պետք ա գինմ, ինձ հետե կորած ախպրտանցս ճարմ:

Աղչիգ մարթ ա, հո՞ւ վա գիդալիս ըշտեղրանք ա գինիս, լեց ինիլավ պադահած մարթկանց նաներ հարցուփորձ ըրիս, թա՝ ղարիբքունմ հու վա պդահած օխտը ախպերու: Ոչ միներ մի խեր խաբեր ըսիս չի:

Մի օր, տափը մքնիլեն նհետ, հսնիլիս ա մի քաղաք: Տըսնալիս ա մի տան դուրք նայե բեց: Նեսի ղոլնուց ճրեգյու լուս ա ըրվալիս: Աստուծեն

անմը տալիս ա, նի մտիս տոն: Տըսնալիս ա՝ մի հիլիվր մարթ, մի պառավ կնեգ նայեն ուջաղեն կողքեն սուս նստած: Աղչիգը իրան դարդը լեց հնի-լավ նաղլ ա ըրիս:

Հլիվրը ըսիս ա.- Աղչիգ ջան, իտի շոռ գյոլավ դու քու կորուստը կարի չըս ճարի: Քու բախտիցը մըզ մըծ ղունուղատոն օննք: Օմեն օր երգիրեն տարբեր տեղարքից մըր տանը ղոնաղ ա ինիս: Սորին կարս մնաս մըր տանը հինչուր մըր աղչիգը: Եկած մարթկանց նանե հարց ու փորձ կարս: Գենցուղնուն դարդտ կասս: Իտիթունավ բալքյա կորուստտ ճարս: Թա չի, աղչիգ մարթ, մանակ շոռ գյոլավ դու նպատակետ կարի չըս հասնի: Շատ դիժեր բեն ա: Աղչիգյը տըսնալիս ա, հիլիվրը խելոնք բեն ա ըսիս, համաձայնվում ա, մնալիս տեղը:

Աղչիգը մի ըրակու տսնալիս ա օխտը ծիավր տղերք եկալն ղոնաղ ինգյալ: Օխտն ալ էնքան մինը միներն նման, հունչուր մի ծառու խնձոր:

- Կարո՞ւղ ա դուք օխտը ախպեր ինեք, որ էտքան մինը միներտ նման եք,- հրցրիս ա աղչիգը:

- Հա, մընք օխտը ախպերնք,- ըսիս ա մըծը:

- Աստուծ ձեզ պարին տա, իտի օխտը ախպեր ըշտե՞ղ եք գինիս, հի՞նչ բենու:

- Մընք շատ տարե առաչ մի սխալ բեննք արած, մեզ ուզիսնք սխալը դուզգրնք, էն ալ Աստված-Աստված, հո՞ւ վա գիդալիս, կհաջողվի, թա՝ չի,- ասալ ա մըծ ախպերը, այտս ինքը հրցրալ,- իմ վըննս էս ղունուղատոնը մի քանե նհետ ինգյած ա, քի տեղս տեսած չըմ: Դու վալ ղարիբս ըրվալիս: Նաղլ արի, գիդանք՝ դու հո՞ւ վըս, հի՞նչ ըս ըրիս տեղարս:

Աղչիգը նաղլ ա ըրիս, որ.- Ինձ օխտը ախպեր լալ: Գինիսն լալ ղարիբթուն: Իմ մար ինծնավ վընըծանդըր լալ: Ասալն՝ «Որ ազադվի, տղա բերի, լուծ նա ալաթը կդիրեք կտրեն: Որ աղչիգ բերի, չխարակը կդիրեք կտրեն»... Իմ մար ազադվալ ա, ախչիգյ ա բերալ: Իմ հար տարալ ա չխարակը դիրալ կտրեն:

Աղչիգը որ ըստի նաղլ ա արալ, օխտը ախպերնեն քար դընռած, զարմացած յիշիսն լալ մինը միներն իրեսեն, սուս արած լսիլիս:

Աղչիգը նաղլը շարունակալ ա.- Մըզ դուշման հըրևան ա իլած: Իմ հար գիդացած չի: Եկած ա չխարակը եր կալած, կտրեն լուծ-ալաթ դիրած: Ախպրտանքս ղարիբթունից եկածն, շեներն ընշկին թումբեն նհետ եշած, տըսած, որ կտըրեն լուծ-ալաթն դիրած: Խընռավածն Աստուծեն նանե, որ իրաց քուր չի տված: Ետն դընռած, գենցած: Էտ բենը մի քանե տարե առաչ ինձ նաղլ ա արած մըր հըրևան մի պառավ կնեգ: Մեզ իս նի յըմ ինգյած,

երգիրից-երգիր իմ խաթրու դուշամանու ըրածավ, իմ կորած օխտը ախպերներեն հետեմ շոռ գյուլիս, որ ճարմ:

Աղչիգը էտքանը որ իտի նաղլ ա ըրիս, տղերքը ալ գիդալիս չըն ուլխուբուննոն հինչ արն: Օմեն մի դոնա, լեց հնիլավ, ըղչիգյանը խտտիսն, ըսիս.- Վա՜յ քուր ջան, մընք հալա Աստուծեն մտեննք, մընք քու կորած օխտը ախպերն ենք, դու ալ՝ մըր հալալ քուրը:

Աղչիգը տեղետ նհետ ախպրտանցը հվիքիս ա, եր ունիս, գինիս տոն:

Շինացոն տղերքը մըծ հարուստեթոն հնիս բերած: Բիրիս ա դասավրիս՝ օխտը տղեքն ալ մի դոնա փսկիս, օխտը օր օխտը քիշեր հրսանեք ըրիս: Շեննեն պարի մարթիք հվաքմն՝ ուտիս, խմիս, ուլխանալիս, քեփ ըրիս: Հու վեր ալ դուշման լալ, նախանձիս ա, խյալ-խյալ ըրիս, քուռուննալիս, մննալիս տափրը տըփտփիլիս:

Երգինքից օխտը անմահական խնձոր ա վեր ինգիս, նի ինգիս նոր փսակված հռհներեն գյուրգը: Խնձորը կտրիլիսն, բուժինիս պարի մարթկանց, որ օտն, իրաց պարի փռնած բենավ անմահաննան: Մի խնձոր ալ հսնիս ա մըր նաղլը լսուղնուն: Օտն, միշտ պարի բեն փռնն:

23 (23). ԱՂՋԻԳՅԸ ՀՈ՞ՒՐ ԿԸՀԱՍՆԻ

Շատ-շատ տարենե առաչ, քյոհնա դովրեն իրըք հալալ ախպեր ըն հնիս, իրեքյան ալ հասած, փիսած. իրըքնուց ալ փըսակվելեն վախտըն ա հնիս, իրեքյան ալ ուզիս ըն փըսակըվըն:

Էտ տըղերցը մի հըրևան ա հնիս, ըտուր ալ մի շատ նախշուտ, հասած, փիսած աղջիգյ ա հնիս: Հակառակու նման, էտ իրըք ախպըրտանց ալ էտ հըրվանեն ըղջիգյանը ըշկըդիրածն հնիս: Աղջիգյը, հուսցուր առակըն ա ըսիս. «Մննալիս ա էրկու քարու արանքըմ»: Գիդալիս չի, որ տըղեն խոսքը տա, որ ախպեր ախպուր նանե խըռավեն վեչ՝ դուշման դըռնըն: Ճարը կըտըրած, աղջիգյը իստի մի պայման ա դիրիս իրիք ախպըրտանց ըռշկիհն, ըսիս ա.- Գենցե՛ք, միալից մըհալ, շհարից շհհար, շոռ եկեք, մարթա մի անամ բերեք հնձ հետե: Հուր բերածը ավելի նախշուտ, դուրեկան բեն հնի, աշխարքըմս չըտըսնված, չը լըսած, էն տըղան ալ կըդըռնի իմ փըսացուն:

Իրըք ախպըրտանքն ալ համաձայնվըմ ըն, միասին հըղե ինգյիս, գինիլիս շոռ գյուլիս: Իրըք ախպեր մի տեղ, թա հինչքան վախտը, հինչքան մըհալ, շհարներ ըն շոռ գյուլիս, էտ ալ Աստուծ գիդա: Մի օր ալ, մի շըհարի

մեյդանչեն երե տըսնալիս ըն մի դարվիշ կա, ծըլպատակ նըստած, ըռըշկին ալ մի քանե անթիկա բեներ կա դիրած:

Մըծ ախպերը մուտանալիս ա, մի պըսպղան բեն եր ա ունիս, յիշիս, բեն չի գյուլխու ինգյիս, դարվիշեն նանե հըրցըրիս ա.- Դարվիշ բաբա, էս հի՞նչ բեն ա:

Դարվիշը ըսիս ա.- էտ հիլիլի ա: Աշխարքըմս էրկու տըսակ հիլիլի կա: Մի հիլուն եշած տեղը՝ մարթ իրան նկարըն ա տըսնալիս: Համա էտ հիլիլին թիլիսիմ օնի: Հինչքան հըռի տեղ, հո՞ւր որ քու մըթկավըտ օզըս տըսնիլը, էտ հիլիլին նշանց կտա: Հիլիլին քի նըշանց կտա, թա քու օզած մարթը էտ սհաթեն նըստած ա, քոն ա ինած, թա ալուզ ա, հունչուր որ կա:

Մըծ ախպերը ըսիս ա.- Դարվիշ բաբա, հիլիլուն արժեքը ասի:

- Հարուր վըսկե,- ըսիս ա դարվիշը:

Մըծ ախպերը հարուր վըսկե տալիս ա դարվիշեն, հիլիլին եր ունիս:

Մաչնակ ախպերը մի նախշուտ խալիչու վա հավան կընալիս՝ բուրուշումու նանե գյործած:

- էս խալիչուն մանին ալ ասի,- հըրցըրիլիս ա մաչնակ ախպերը:

- էտ խալիչան էլ թիլիսիմ օնի: Խալիչեն երե, որ նըստըս, աշկըրըտ փակըս, մին, էրկուս, իրըք հըմբարըս, մտըքոմըտ հինչ տեղ որ օզըս, աշկըրըտ բենըս, կըտըսնաս նայես քու օզած տեղը նըստած: Արժեքն ալ հարուր վըսկե ա,- ըսիս ա դարվիշ բաբան:

Մաչնակ ախպերն ալ հարուր վըսկե տալիս ա, խալիչան ծըլիս, դիրիս կուռնուտակեն:

Կուճի ախպերն ալ, դես ա յիշիս, դեն, տըսնալիս ա մի խընձոր կա դիրած, որ մարթ իշիս ա, շաքիլը խընձորեն երե շափաղ-շափաղա ըրիս: Կուճի ախպերեն ալ նախշուտ խընձորը ձեռքեն պար ըծիլավ, հըրցըրալ ա.- Դարվիշ բաբա, էս խընձորը հի՞նչ մանի օնի:

- էտ խընձորը սովորական խընձոր չի: Երգինքից ա վեր ինգյած: Անմահական խընձոր ա: Հինչ մարթ, որ ալուզ ինի, նա ինի մըռնիլիս, էտ խընձորը որ օտի, նորից կսուրինանա, ալուզեթոնը անց կկանա, հարուր տարե ալ կապրի: Խընձորը փըչանալ չի: Որ հարուր տարե յալ պահըս, իտի նախշուտ, իտի անթառամ ալ կմընա: Արժեքյն ալ հարուր վըսկե յա,- ասալ ա դարվիշը:

Կուճի ախպերն ալ խընձորն ա կալալ: Իրըք ախպերնեն որոշալ ըն, որ իրաց օզած չճարվուղ անթիկա բենըրը ճարալ ըն: Մի քանե օր ետ շիհարըմը կմնան, պատառ շոռ կգյոն, կըդինջանան, ետ կըդըռնն, կգինն իրաց շհարը:

Էտ անթիկա ապրանքնեն կալած օրվա ըրկոնուն մըծ ախպերը ինքը իրան ըսիս ա. «Պետք ա փորձամ, տըսնամ դարվիշեն ասած խոսքըրը հինչքա՞ն ա ղորթ»:

Մըծ ախպերը յիշիս ա հիլիլուն, ըսկսիս լեց ինիլը:

- Խե՞ յըս լեց ինիս,- զարմացած հըրցըրիս ըն ախպըրտանքը:

- Հիլիլին նշանց ա տալիս, որ մըր ըշկըդիրած ախչիգյը ծանդըր ալուզ ա: Պարիկամեն հըվաքված ըն չորք թարափավը նըստոտած, ումուդնեն կըտըրած լեցըն ինիլիս:

Մաչնակ ախպերը ըսիս ա.- Դե որ իտի ա, ալ մըր տեղարքըս մնալը սազի չի: Եր կացեք, նըստընք խալուն երե, գինընք:

Դարվիշեն ասածը գյորա, իրըք ախպըրավ նըստիս ըն բուրուշըմ խալուն երե, ըշկըռնեն հոպունիս: Մաչնակ ախպերը հըմբրիս ա՝ մին, էրկու, իրըք, համ ալ ըսիս. «Խալի ջան, խալի, մըր ամանի գյունի ա խընթըրիս ընք, մըզ հըսցըրըս մըր տոնը»:

Ըսիս ա, պըրծընիս, ըշկըռնեն բինալիս ըն՝ տըսնալիս, նայեն իրաց տանը նըստած: Իրըք ախպերավ ալ, եր ըն կընալիս, գինիլիս ըղչըգյանը հորը տոնը: Տըսնալիս ըն, որ հիլիլին շատ դուզ նշանց ա տըված: Աղչիգյը շատ ծանդըր ալուզ ա, համարյա հոքին տալու երե ա: Ծընողնեն, պարիկամնեն, հըրվանըրը օմեն հվաքված ըն, ծըռքյըրնեն դիրած ծոցըռնոմը, ումիդնեն կըտըրած լելիս ըն:

Կուճի ախպերը մուտուևալիս ա ըղչիգյանը, անմահական խընձորն նա դենակը ջուբեն նանե դուս ունիս, խընձորը դիլիմ-դիլիմ կուտուրիս, ուտուցըրիս ըղչիգյանը:

Ախչիգյն ալ խընձորը ուտիլավ, կամանց-կամանց աշկերը բինալիս ա, եր կընալիս տեղաշորումը նըստիլիս: Իրըք օրեն ետը աղչիգյը տեղաշորը թողած՝ առողչանըմ ա, դըռնըմ ալլա համան աղչիգյը, հուևցուր առաչ իլալ լալ:

Իրըք ախպըրտանցը մաչեն խոսք ա բինվալիս:

Մըծ ախպերը ըսիս ա.- Աղչիգյը ինձ կըհասնի: Որ իմ հիլիլիս չիլալ ինի, գիդայ չընք լալ, թա աղչիգյը ալուզ ա, ետ ընք լալ ինգյլական, գյոնք տըսնանք՝ աղչիգյը մըռած ա:

Մաչնակ ախպերն ըսիս ա.- Աղչիգյը ինձ կըհասնի: Շատ ալ քու հիլիլին նշանց ա տըվալ, որ աղչիգյը ալուզ ա: Իմ խալիչան չիլալ ինի, մի ամսըմը կարիլ չընք լալ գյոլ հասնիլ տոն: Ըտուր հետե յալ աղչիգյը իմըն ա, ինձ ա հըսնընիլիս:

Կուճի ախպերըն ալ իրան խոսքըն ա առաչ քըշիս, ըսիս.- Շատ ալ որ հիլիլին ա նշանց տըվալ, որ աղչիգյը ալուզ ա, խալին ալ բերալ ա: Իմ բերած անմահական խընձորըն չի լալ ինի, աղչիգյը մըռնիլ լալ: Ըղչիգյանը մահից փըրկողը իմ բերած անմահական խընձորըն լալ, ինձ կըհասնի:

Աղչիգյը տըսնալիս ա իրըք ախպերնեն հա կըռվըմ ըն, հաշտըվըմ չըն, իրքնուց ալ իս ա կոշտը, հիլիլին նա խալիչան ծըռքըրնուն նանե իք ունիս, հըրթեն պադասխընիս:

Ամենից առաչ մըծ ախպուրը ըսիս ա.- Իմ ուլուզնալես հետե հիլիլին ա խաբեր տըված, իս շատ շունուրհակալ ըմ: Եր կալ քու հիլիլին՝ քի յըմ տալիս: Աշխարքըմս ամեն մի մարթու շընորքը էն ա, որ նեղը ինգյած մարթուն սուրուներթուն արի, նըղ օրեն հասնի,- ըսիս ա, հիլիլին տալիս մըծ ախպուրը ծեռքը:

Մաչնակ ախպուրը ըսիս ա.- Շատ շնուրհակալ ըմ քու շնորքեն նանե, քու կալած խալիչավը, որ շատ տեղեն ծեզ բերալ, ա տեղ հըսցըրալ: Հա, քու խալիչան ալ քըզ ըմ տալիս,- ըսիս ա, խալիչան դիրիս մաչնակ ախպուրը կուռնըտակեն:

Աղչիգյը ետ ա դըռնալիս՝ հըվաքված ժողովըրդեն ըսիլիս.- Այ ժողովուրթ, կուճի ախպերը անմահական խընձոր լալ բերած, կերած ըմ, մըռնիլուց պըրծած, նոր գյանք կալած: Մըծ ախպուրը իրան հիլիլին տըվալ ըմ, խաթըրը խոշարալ, շնորհակալոթուն հայտնալ: Մաչնակ ախպուրը բերած խալիչան ալ տըվալ ըմ իրան, իմ շնորհակալոթունը հայտնալ: Դե, ըսեցե՛ք տըսնամ, կուճի ախպուրը հի՞նչ տամ, որ խաթըրը խոշ դըռնի, ինծանե նըղանա վեչ: Բերած անմահական խընձորը կերած ըմ, կավըչնի: Օզըմ, չօզըմ, ինձ պետք ա տամ իրան: Չի՞ որ խընձորըն ա ինձ գյանք տըված, մեգ իս խընձորըն ըմ,- էսքանը աղչիգյը ըսիս ա, մուտունալիս կուճի ախպուրը ծեռքը փըռնիս, պըչիս, կողքեն վըտ կընալիս:

Մըծ ախպերը, մաչնակ ախպերը, հըվաքված ժըղովուրթը շատ ըն հավան կընալիս աղչըգյանը կըդարած արթար դադեն հետե: Օմեն ալ միաբերան ըսիս ըն.- Ափարիմ շընորհքը շատ աղչիգյ, քու արած դադավը, չըտըսնված խըլքավը: Տղան քի հալալ ինի, Աստուծեն օրհնանքը ձըզ երե ինի, երգինքից եկուղ կընընչկարմուրըն ալ ձեր ուսսերեն:

Ախպերտանքը իրար նըհետ հաշտվըմ ըն: Բիրիս ըն իրըք օր, իրըք քիշեր հըրսանենքըն ըրիս, զուռնա-դհոլը ըծիլիս, ուտիս, խըմիս, երքիս, պար գյոլիս, քեփ ըրիս:

Հարսանիքեն վերչին քիշերը երգինքից իրըք հատ անմահական խընձոր ա վեր ինգիս:

Մինը տալիս ըն նորափըսակ թաքավորեն նա թագուհուն:

Մինը տալիսըն էս պընգըլու նմանուղ նաղլը կապուղ աշուղեն:

Էն մինն ալ հըռնքեն քավորը եր ա ունիս, դիլիմ-դիլըմ ըրիս, բուժունիս հըռհընքավըր մարթունցը, որ օտըն, բիրնեն քըղցրանա, ըշտեղ որ գի ըն, նաղլը արըն, զարմացըրըն լըսող մըծ-կուճի մարթկանցը:

24 (24). ԵՂՆԸ ԱՂՉԻԳՅ

Նաղլ ըն ըրիլիս, որ քյոհնա այամեն մի մըծ շենմ մի տղա լալ, անըմը Սարու: Սարու շատ կուճի խոխա լալ, որ հարը գենցալ ա ղարիբեթուն, ալ եկա չի... Հու վա՞ գիդալիս հինչ տըղ, որ քաղաքմ մըռալ ա, անտեր, անտիրական կորալ, գենցալ:

Սարոե մարն ալ ջահել կնեգ լալ, եշալ ա, եշալ, տսալ ա մարթը ղարիբթունից եկա չի, մի հըռի շենում գենցալ ա մի օրեշ մարթու: Սարովե պահուղը՝ տատը, տրեկանը մանցալ ա պառավ նանան՝ հորը մարը:

Նաղլն ըրիս, որ Սարու չտըսնված բոյավ, նախշուտ, թիգյունքավ, համ ալ շատ ղվաթի տղա լալ: Իրան հնգեր մի քանե տարավ իրան նանե մըծ տըղեցը նհետ որ կոխուլ լալ կնալիս, ումունուց թեգյունքը թխիս լալ տափեն:

Սարու որ դռնալիս ա տասը տրեկան, շենեն ժողովուրթը նշնկիս ա իրաց գյուռներեն գյուռնարած:

Մի քանե տարե Սարու գյուռները հնդի ա պիիս, որ ոչ մի գյոռնը ոչ կուրչիս ա, ոչ ալ ոչ մինը գյուլ ա ուտիս: Ըդուր հետե ալ շինացեք տսնալիսն Սարու խելուն օյաղ տղա յա, բիրիսն նշանակմ շենեն վըչխռնուն չոբան:

Էտ վախտը Սարու ղալին մծացած ա հնիս, համ ալ սորին շվե ածիլ ա հնիս սվըրած: Ամեն օր՝ քշանաց, շվեն ըծիլավ նի ա հնգիս հղին, գհնիս հանդը: Վչխռնեն ալ, շիվուն քաղցր սասեն, Սարոյե հետնաց շարված գհնիս ըն:

Ըրակունն ալ, ալլա Սարու շվեն ըծիլավ նի ա հնգիս հղեն, ըրծեցած, քուշտացած վըչխըռնեն ալ շրվիս, գյոլիս ըն շենը:

Ըսիս ըն, որ Սարու հնդի ղվաթի պընդ սաս լալ, որ չոլում սաս լալ ըրիլիս, էտ քյավշանմը հինչքան արջ, գյուլ, աղվես և նման վնասատու հեյվանները լալ հնիս, ահից, վախից զարզանդմն լալ, փախչմ, կորչում:

Համա դե չոլումը վչխռնեն ըրծիս տեղը հնքը նստիս լալ մի բեցուր քարու երե, շվեն կըլկլցնիլավ ըծիլիս: Չուլուտնոմը հինչքան չոլու վըչխար,

էծ, լպրաստակ, ալլա նման հեյվաննե յըն լալ ինիս, հվաքվմ, գյոլիսն լալ խռնվիս Սարովե վչխռնան, ըրծիս, անջուկ դիրիս շվուն քաղցր սասեն: Ըրկոնաց, Սարու որ վչխռնեն հվքիս լալ բերի շենը, չոլեն հեյվանեն ալ ջուկվիսն լալ, ցրվիս, գինիս իրաց տեղերը:

Սարու որ չոբան ա դըռալ, շինացեք ասալե.- Սարու, վըչխռնեն որ հանդը, որ սարը կօզըս տար, արուտ տոր, քու բենն ա: Մինչա շենեն դիբի աղոթարանեն թարափեն սարերեն էն կմե թարափը գինս վեչ: Տեղարը խաթալու ա, դևու երգիր ա, որ գինս, համ քու գյուլոխը կօտն, համ ալ՝ վչխռնուն:

Սարու շինացուց նասիյաթը լսալ ա, էն թարափեն գենցա չի:

Մի տարե շատ արաշտ տարե ա դըռալ, հանդերեն խոտը չուրացալ ա: Սարովի պահած վչխռնեն օրբաօր լըղըրիսն լալ՝ քողցածթունից: Հըռե տեղեն նհետ եկուղ մարթինք Սրովե խաբարն տալիս, որ շենեն աղոթարանեն թարափեն սարերեն էն ղոլեն, դևերեն երգիրը թուռութաց ա խոտու բոլլուղ ա:

Սարու ինքն իրան որոշիս ա, ըսիս. «Աստված, Աստված հինչ ուզիս ա, թող դըռնի, վչխռնեն պետք ա տանըմ դևերեն երգիրը»:

Մի քշանաց շուդ վըչխըռնուն բոլիգյը քշիս ա, տնիս դևերեն երգիրը... Տըսնալիս, ղուրթավ թուռային ա, չտըսնված կանեչ խոտ կա: Վչխռնեն ըսկսիսն էխշավ ըրածիլը, ինքն ալ բիցիրնալիս ա, մի բեցուր քարու երե նստիս, շվե ըծիլիս:

Մին ալ դեմի սարեն դոշեն նանե Սարոյե անջուկեն մի շատ ուժեղ սաս ա հսնիս, որ ոչ մարթու սասու ա նման հինիս, ոչ ալ՝ հիյվանու: Սասեն օժից ձուրուտնեն զնգզնգալիսն: Հու վեր էն սասը լսիլ լալ, վխթունեն լուզին կապ լալ ինգիլ, ջանը փուշքաղիլ:

Սարու որոշիս ա. կա, կավչնի, էս դևու սաս ա, վըխիս չի, ինքն ալ ձեռքրը դիրիս ա ընջուկնուն երե ինդի ա սաս ըրիս, որ սարը, ձորրը ավելի պընդն ուրուտալիս: Սարու մին ալ էն ա տսնալիս՝ մի գյլխանե դև, մի բյոլիգ վըչխար առաչն արած, բիրիս ա խըռնիս Սարու վըչխռնուն, եշիս Սարուն, ծծղիս, ըսիլիս.- Այ տղա, դու մի թիքա մարթս, համա ինդի սասս ըրիս, հանցա կասս օխտը գյլխանե դև ինս... Քանե քի փռնած չըմ կոլ տված, եր կաց փախի, գինի տեղը, ըշտեղե նհետ եկած ըս: Վըչխռնեն ալ, որ բերածս իմ քյավշանը, թողի չըմ տանս, կմնաև ինձ հետե, որ մին ալ տեղարս գյոս վեչ:

Սարու քարեն երե վըտ ա կնալիս, դևեն ըսիս.- Դև ախպեր, իդի հաթաթան կգինս ձեր հավերեն կտաս: Իս թողի չըմ դու ոչ մի գյուլոխ վըչխար

տանս... Ղոչաղս, եք կըռըվ արնք: Հու որ հաղթի, էն ալ թող վըչխռնուն տար կանա:

Սարու ասածնեն դևեն շատ պընդն ա գյուլիս, կըզնվիս ա, ծեռքեն մի մըծ մըհակ ա ինիս ըրկաթե: Մուտունալիս ա, որ թխի Սարովե կուտուր-կուտուր անի: Սարու մհակավ կռվելու սորին փանդ ա ինիս գիդալիս դևը դեչանը ըրկաթի մհակը բիցրցրիլը, Սարու իրան կաղնե մհակավը ինդի ա թխիս դևեն օջի կուռանը, որ կոռնը կուտուրվիս ա, կախ ինգիս, ըրկաթե մհակն ալ վեր ա ինգիս: Դե, կռվոմն ալ բեն տըսնուղը աջի ծեռքն ա: Դևեն կոռնը, որ կուտուրվիս ա, խըղճանմ ա: Սարու լոք ա տալիս, ըրկաթե մհակը եր ունիս, ինդի ա թխիս դևեն մաշկավը, որ կուտուրվիս ա: Դևը խուտուրու ա ինգիս տափեն, գյուռգյուռալիս:

Սարու վխիս չի, ըսկսիս ա ըրկաթի մհակավը դևեն գյուլոխը ճիճեխիլը: Դևը ըստկիս ա: Սարու տսնալիս ա՝ դևը ըստակալ ա, յամաջ տեղ ա ինիս, կուփե ա տալիս, թոլ ըրիս, գինիս ա նի ինգիս դըվեր՝ ծորը ղուզղունունու նա գյուլերեն հետե կեր դռնալիս:

Դևեն նհետ կռվոմը Սարու շատ ա ինիս ինջինմիշ ինած: Նստիս ա պատառ դինջանա, տըսնմ ա, որ օրը մքնիս ա: Եր ա կնալիս, վըչխռնեն հվքիս, քշիս դիբի շենը: Շինացեք տսնալիսն, որ մըղիբը ինգյալ ա, Սարու վըչխռնեն բերա չի: Գիդացալն, որ գյուլոխը մի օյն ա եկած: Մի ութընտասը ջահիլնե որոշիսն գինն, տըսնան՝ հի՞նչ ա պդահած: Լա էն ա ինիս, ուզիսն հղի ինն, հըռանց լսվիս ա Սարոյե շիվուն քաղցր սասը: Գյուլիս ա շենը, գյլխեն եկած օյնը նաղլ ա ըրիս շինացուց: Այտըս հմբրիս ա, տըսնալիս, որ դևեն վըչխռնեն հարուր գյուլոխ ա. բիրիս ա հիցուն գյուլոխ վըչխռնեն բուժունիս շենեն քյասիբնուն՝ հուր որ ոչխար չօնի, հիցուն գյուլոխ վըչխռնեն ալ պիիս իրան հետե:

Սարու գիդալիս ա, որ ալլա կարուղ ա դևու նհետ կըռըվ արի, բիրիս ա ավելի մի մըծ չոմբաղ մհակ ա սրքիս, գյլխեն ալ ըրկաթու կուտրտանք ա թըխիս, դիրիս օսսեն, վըչխռնեն նի ըրիս առաչը, քշիս գինիս հըսնիլիս ալլա դևեն քյավշանը: Նստիս ա մի քարու երե, ըսկսիս շվեն ածիլը: Մինալ էն ա լսիս, որ ալլա մի դև ավելի պընդ գյուռգյուռալիս ա, հարբա յա գյուլիս, որ վըչխռնետ իմ օրիշեն նաեն հըռե գինի: Սարու ալ ավելի բեցուր ա սաս ըրիս, ըսիս, որ.- Սաստ կտրի, օրիշը իմն ա, քունը չի:

Պատառ վախտ անց ա կնալիս, Սարու մին ալ էն ա տսնալիս, էրկու գյլխանե մի դև մի մըծ բոլիգ վըչխար բերալ ա, խառնալ իրան վըչխռնուն, ասալ.- Մեխկ ըս, քաեե մըծ կուտուրտ անջուկտ չըմ թողած, վըչխռնետ թող տըղս, եր կաց, գինի կորել:

Սարու ծծղիս ա դևեն ըսածին երե, ըսիս.- Եք կըռըվ արնք: Հու հաղթի, էն ալ տար դըռնի թա՝ հանդեն, համ ալ վըչխռնուն:

Սարովե պատասխանը դևեն կըզնվիքը բիրիս ա: Մուտունալիս ա, որ ըրկաթե միակավը թխի Սարովե կուտուր-կուտուր արի, վըչխռնուն տար դըռնի: Դե, Սարու կըռվիլեն փանդը գիդալիս լալ: Ալլա իրան չոմբաղ մահակավը ինդի ա թխիս դևեն աջի կուռանը, որ դևեն կոռնը օխտը կուտուր ա դըռնալիս: Դևը մնալիս ա մաթալ, ըսկսիս ա գյուռգյուռալը: Սարու վխիս չի: Միակավը թխիս ա դևեն մաշկը կուտուրիս, վեր գիծիս, վեր թակում, էրկու գյլխնեն ալ ծիճըխիս, թոլ ըրիս, նի գիծիս ներքե ծորը, ջամդաքը ղուզղունննուն, գյուլերն փայ ըրիս, վըչխռնեն հվաքըմ, տանըմ շենը: Հընմբրիս ա, տըսնալիս դևեն վըչխռնեն էրկու հարուր գյուլոխ ա: Սարու ալլա բիրիս ա հարուր գյուլոխ վըչխար բուժունիս քյասիբ շինացուց, հարուր գյուլոխն ալ պիհս իրան հետե:

Սարու ալլա նորից ա վըչխռնուն բոլիգը քշիս, տընիս դևերեն քյավշանը: Էս դոնում ջիհիս ա մի իրըք գյլխանե դևու մի մըծ բոլուգ վըչխար արուտ տալուց: Սարու նա դևը ալլա բհասն ըրիս, կըռվիլիս, միևը-միևեն թակմ: Վերչապես Սարու դևեն հաղթմ ա, թակմ, ըսպանմ, թուլ ըրիս, նի գիծիս ծորը, ղուզղունննուն, գյուլերեն փայ ըրիս:

Դիբի ըրկոնաց Սարո ուզիս ա վըչխռնեն հվաքի, քշի տանի շենը, չոլեն էն հեյվաննեն, որ հվաքված, եկածն լալ օմեն օրվա նման Սարովե շիվուն քաղցր սասը լսիլու, ցրվիսն, գինիս իրաց տղըրնեն:

Սարու միև ալ էն ա տսնալիս, չտըսած մի նախշուտ եղան ջահիլ հերընջ նա է վըչխռնուն բուլուգյումը վըտը: Սարու իրան գյանքմը էտքան նախշուտ, թա տընու, թա չոլու հալա տըսած չի լալ: Ինքն իրան որոշիս ա. եղանը հերընջը փռնի, տանի տոն՝ տնու հեյվան արի: Եղանը հերենջը վըտ չի կնալիս, փխչիս ա: Սարու վըչխռնեն թողած՝ շատ ա փարեկնալիս, քռնոք ջանը կուխիս ա, կրիս չի եղանը փռնի: Միև ալ էն ա տըսնալիս եղանը հերենջը գենցալ ա, նի մտալ մի քրատակ:

Սարու ուլխանմ ա, որ եղնը ալ կարի չի փախչի, կգինի, հանգիստ կփռնի: Սարու նափասը պահած՝ թիաթավ գինիս ա, քրըտակեն ըռշկին վըտ կնալիս, իրան ըշկերավը տսածեն հվատամ չի: Մնալիս ա մաթալ, լուզին կապ ինգյած:

Քրըտակեն մի չտըսնված նախշուտ, հուրի-փարի աղչիգ ա ինիս նստած՝ գյուլբաք գյուրծիս: Ըղչիգյանը տըսնուղը կասի. «Էս մարթ արարած չի, երգինքից ա վեր եկած»: Աղչիգյը տըսնալիս ա՝ իրան նախշուտ-

թունից տղան հմնչիս ա, խուսիս չի, ինքն ա խոսք բինալիս, ըսիս.- Ասի, լըսմ, իգիթ տղա, հինչ ը՞ս ուզիս...

Ըղչիգյանը խոսքեն երե Սարու զարմանմ ա, լուզին բեն ա ինգիս, ըսիս ա.- Նախշուտ աղչիգ, պա դու հինդա՞ս, որ իս իգիթ տղա յըմ:

Ախչիգյը ըսիս ա.- Դու իմ աշկեն ըռշկին իրըք դևս ըսպանալ... Պա էտ իգիթ տղու բեն չի՞:

Ըղչիգյանը նման խոսքեն երե Սարու ռիսկի ա գյուլիս, ըսիս.- Նախշուտ աղչիգ, պատառ առաչ մի եղան նախշուտ հերենջ եկալա նի մտալ էս քրատակը: Իս էն հերենջնմ ուզիլիս:

Աղչիգյը ծծղիս ա, ըսիս.- Տեղս եղնը կավիչնի, եղնը լա իս ըմ, որ նստածմ տեղս:

- Դու հինչո՞ւ հետեյս լալ եղնը դըռած, հունչո՞ւրս նորից աղչիգ դըռալ,- զարմացած հրցրիս ա Սարու:

- Կողքես նստի, նաղլը արմ,- ըսիս ա աղչիգյը:

Հմնչիլավ Սարու նստիս ա ըղչիգյանը կողքեն:

Աղչիգյը ըսկսիս ա իրան գյլխեն եկածը մինի-մինի նաղլը արիլը.- Իս մի հարուստ չոբան մարքու ախչիգյմ լալ: էն իրըք դևրը, որ ըսպանալս, եկալն, որ ինձ փախցնն, տանն: Իս փախալմ, եկալ նի մտալ էս քրատակը, ինձ ըստեղծող Աստուծեն դանչանք արալ, որ ինձ դևերեն ձեռքեն փրկելու հետե յա ըսպանի, յա մի ճար արի: Աստուծեն դուրքը բեց լալ: Իմ սասը լսալ ա, եղն ա արալ: Դևերը տըսալ ըն, որ ինձ կրեցա չըն փռնիլ, տանիլ, այտըս իմ հորս ըսպանալն, ունեցած հարստեթունը, վըչխռնեն հվաքալ, տարալ: Մհեգ, որ տըսալմ դու դևերեն ըսպանալս, վերչերնեն տվալ, իս ալ իմ Աստուծեն դանչաքմ արալ, որ նորից ինձ աղչիգ արի: Աստուծ ալլա իմ սասը լսալ ա, աղչիգ ա արալ:

Էս նաղլը Սարու, որ լսիս ա, ըղչիգյանը ըսիս ա.- Նախշուտ ախչիգ, քու նաղլեն նանե պարզվիս ա, որ ըշխարքմս ոչ մի հարազատ օնիչըս, մանակս: Իմ ալ ըշխարքմս իլած-չիլածս նանաս ա՝ հորս մարը: Եք, իս նա դու քուր-ախպեր դըռնանք, գհննք նանուս շվաքմը մըզ հետե ապրընք:

Աղչիգյը ըսիս ա.- Իգիթ տղա, հիբ մընք մի հոր, մի նոր նանե ծնված չընք, քուր-ախպեր ալ կարի չնի դըռնիլ: Համա քի նման իգիթը ինձ ըշտըղ ալ որ տանի, կգհնմ:

Ըղչիգյանը ըսածեն երե Սարու շատ ուլխնալիս ա: Եր ա կնալիս, ըղչիգյանը եր ունիս, վըչխռնեն հվաքըմ, նի արմ հղեն՝ շվեն ըծիլավ գյուլիս շենը: Բերած վըչխռնեն հնբրիս ա, տսնալիս, որ իրըք գլխանե դևեն իլած վչխռնեն իրըք հարուր գյուլոխ ա: Ալլա հարուր հիցուն գյուլոխ վըչխռնեն

բուժինիս ա շենեն քյասիբ մարթունցը, հարուր հիցունեն ալ ինքը տար կնալիս:

Էքսի օրը սաղ շենը սաս ա ինգիս, որ Սարու մի աղչիգյ ա ճարած, բերած, հի՞նչ աղչիգյ՝ երգինքից վեր եկած, մի հուրի-փարի: Շինացեք հվաքվմն որոշում, որ Սարու ղուրթավ իգիթ տղա յա: Մանակ կրեցալ ա իրըք դև ըսպանիլ, ընդունց վըչխռնեն հվաքիլ, բերիլ բիժոնիլ քյասիբ շինացուց: Ինքն ալ հասած-փիսած տղա յա դըռած, փըսակվիլեն վախտն ա: Հռհնացուն ալ ճարած ա:

Շինացեք խըլք-խըլքիյն տալիս, սիվթա Սարոյի հետե սորին տներն սրքիս, վըչխռնուն հետե լեն-բոլ գյում ու հայաթ, սրահ՝ օմեն հինչ: Այտս շինըհավան հվաքվմն, իրըք օր, իրըք քիշեր հրսանեքն ըրիս, ուտիս, խմիս, երքիս, պար գյոլիս:

Հռհնքեն վերչին ըրակունը երգինքից իրըք խնձոր ա վեր ինգիս՝ անմահական:

Մինը տալիսն նորափսակներեն, մինը դիլիմ-դիլիմ բուժինիսն հրսանեք եկած ժողովրթեն, մինն ալ նման քաղցր նաղլը կապողեն:

25 (25). ՓԱՆԴԱԼ ԳՅՈՒՔԻ

Նաղլն ըրիս, որ քյոհնա այամեն, մի հայու մըծ շենում մի մարթ լալ ա ըպրիս, անմը՝ Գյուքի: Գյուքի շատ հունարավ մարթ լալ: Սանադն ալ վըրսականերթունն լալ: Գյուքի շատ փանդ-փել գիդալու հետե, շինացեք ըսիսն լալ Փանդալ Գյուքի:

Փանդալ Գյուքու մի անսովոր խասյաթ լալ: Օմեն քշանաց քոնե եր լալ կանալ, շորրը գենիլ, իրսը լվանալ, Աստուծեն պարիլոս տալ, նիստիլ լալ հացն օտիլ, ետ դըռնիլ կնգանը նստցրիլ տան ցըվքեն երե: Այտս մի խնձորու երե մի ասղ լալ քաղիլ, դիրիլ կնգանը գյլխեն, ինքը մի գյուլլա մանձիլ հըռե վըտ կանալ, երի արիլ: Թա գյուլլան նի լալ գյոլ ասղը թռցրիլ, էտ օրը գինիլ լալ վըրս, թա ասղեն նի չի լալ գյոլ՝ էտ օրը վըրսու գինիլ չի լալ: Տանը նստիլ լալ: Իտի մի օր, մի ամես, տարիներ շարունակ Փանդալ Գյուքի իրան վըրսու գինիլու հաջողութունը օմեն օր փորձիս լալ կնգանը գյլխեն երե դիրած խնձորեն երե տնգած ասղը գյուլլավ թռցրիլավ:

Մի օր հրևան կնանեքը հվքվիսն, Փանդալ Գյուքու կնգանը ըսիս.- Այ վըղը գյլխետ, անխըլք կնեգ, դու օմեն օր հի՞նչս ռիսկ ըրիս գինիս գյուլլեն ըռշկեն նստիս: Գյուլլա յա, մի օր ալ կտըսնս նի ա եկալ ճկտմաչետ,

ըսպանալ նհախ տեղը: Ըրակու որ մարթտ կգյո տոն, նստի լեց-շիվան արի, ասի՝ ալ քու գյուլլեն ըռշկին նստող չըմ: Սաղ շենը քի Փանդալ Գյուքի ա ըսիս: Իտի հուևարու տարս, ըսիսն, որ շենեն աղոթարանեն թարափեն հըռե ծմկնեն լիգը դևրն ըպրիս: Իրաց ալ կարասներավ վըսկե օննն: Գինի մի դև ըսպանի, վըսկեղենը բեր ապրնք: Մարթ ա, սըրտը խըղճեթուն կինգի, կգինի: Դևրը կփռնն կօտն, քու ալ յախան կազադվի, նհախ տեղը գյուլլու փայ չըս դըռնի: Հի՞նչ ա, ջահիլ կնեգյս, վխիսս կարս վեչ մի օր մի կնգա հաց թխիլեն քյոմագ արս, միներն հետե բուրթ գիզս, միներն հետե չխարակ մանս, խըղճտ դինջ ապրս:

Ըրկոննն Փանդալ Գյուքի վըրստեղե որ գյուլիս ա տոն, հրևան կնանեքը հինչ որ կծկած, դիրածն ինիս Փանդալ Գյուքյու կնգանը գյլխոմը, կնեգն ալ լեց հնիլավ մարթեն ըռշկին ըսկսիս ա կծեգը ետ տալը: Փանդալ Գյուքի քթեն տակեն ծծղիս ա կնգանը ըսածնոն երե, այտս պատասխան տալիս.- Այ կնեգ, բեյթան տեղը լեց մա հնիլ: Էտքանը, հինչ որ ասալս, ըտուց մաչեն ոչ միննը քու գյլխեն խոսքը չի: Իս գիդալիսմ հրվններեն կնանեգննն քի սվրցրած: Քեփտ քյոք պահի: Էքուց կգինմ դևերեն նհետ կռըվ:

Էքսի քշանաց Փանդալ Գյուքի թվանգն ալ եր չի ունիս, տանը նանե եր ա կնալիս գինիս:

Պատառ տեղ գինիս ա, տըսնալիս ա մի ջոխտ տրխետան կա հղցոմը վեր ինգյած: Եր ա ունիս, դիրիս ծուցըջբոմը, ինքը իրան ըսիս. «Բեն ա, կարող ա պետքի գյո»:

Պատառ տըղ ալ գինիս ա, տըսնալիս ա մի բղչոտու չփրտակե մի հավ կա նստած: Ուհգիս ա հավը փռնի, փխչիս ա: Տըսնալիս ա տակեն էրկու ձու կա: Էտ ձվանքն ալ եր ա ունիս դիրիս ջուբոմը, ըսիս. «Հղե գենցուղ մարթմ, կարող ա պետքի գյո»:

Պատառ տեղ այլա որ գինիս ա, տըսնալիս ա մի գյոռխնակ նայե հղցոմը: Գյոռխնակն ալ ա փռնիս դիրիս ջբոմը, ըսիս. «Շնչավր հեյվան ա, իս ալ հղե գենցող մարթ, կարող ա պետքի գյո»:

Դե Աստուծ գիդա, մին ալ Փանդալ Գյուքի, թա հինչքան հղե յա գենցալ, հինչ տեղ ա հասալ, մին ալ էն ա տըսալ՝ մի հըռե խոր ծմակմ մի ծոխ ա բիցիրնալիս: Գինիս ա հսնիս ծոխեն տեղեն, տըսնալիս ա, հի՞նչ՝ չուրքը բուլուր հասար քաշած, բեցուր պատերավ մի ըմարաթ ա: Նեսի ղոլից մի օրախ սաս ա լսվիլիս: Մուտուկնալիս ա դարբազեն բիլոլուն տեղավը յիշիս, տսնալիս ա՝ մի իրք գյլխանե դև ինքը-իրան խուսիլավ գյոլիս ա դիբի դըրբզան՝ երքիլավ.

Մարթու-վարթու հոտմ լսիս,
Թազա մարթու հոտմ լսիս:

Փանդալ Գյուքի որ լսիս ա, ինքը ավելի բեցուր սասով, առանց վխիլու, ըսիս ա.

Դևու-մեվու սասմ լսիս,
Վախկոտ դևու սասմ լսիս:

Դևը գյուլիս ա դարբազան բինալիս, աշկավ-օնքավ միետ մի Փանդալ Գյուքյու վըտանը նիետ դեչանը գյուլոխը չփիս, ըսիլիս.- է՛յ հե՛յ, անխելք մարթ, դու հո՞ւվս, հինչ ռիսկ օնս, հի՞նչ բենավս եկած, դուս եկած տեղս, ինձ ալ վախկուտ դևս ըսիլիս:

Փանդալ Գյուքի ավելի սըրտկալած պատասխանիս ա.- Իս կարող ա քու աշկեն կուճի ըրվամ, համա դե շատ օժու տար, աժդահա մարթմ: Քու հարը իմ հորը մի ջվալ վըսկե ա պարտք... Եկածմ տանմ:

Դևը ծծղիս, ըսիս ա.- էս ա մի տարե ա իս մարթու մըս չըմ կերած, մհեգ պետք ա քի հոմ-հոմ օտըմ: Դու կկարս իմ ձեռքեն պրծնիլ փախի՞լ, որ հա-լա ուզիսս մի ջվալ վըսկե ալ տանիլ:

Փանդալ Գյուքի ըսիս ա.- Եք ուժռնես փորձնք, տըսնանք մըզանե հու վա ղվաքի: Դու ղվաքի դուս գյոս, ինձ կեր: Իս ղըվաքի դուս գյոմ, մի ջվալ վըսկեն տանմ:

Փանդալ Գյուքու խոսքեն երե դևը կզնվիս ա, ձեռքը տնիս ա կուռնա-տակը, իրք գեզուչափ երկար մի հափուռ մազ բուք տալիս, շպրտիս Փան-դալ Գյուքյու երե: Փանդալ Գյուքի ծծղիս ա, ձեռքը տնիս ծուցաջուբը, ճա-րած տրխտնեն դուս ունիս, շպրտիլիս դևեն երե:

Դևը զրմնալիս ա: Կուռնուտակեն նանե մատան միչի մի հուջոլ ա դուս ունիս, շպըրտիս Փանդալ Գյուքյու երե: Փանդալ Գյուքի ալլա յա ծծղիս: Ջեռքը տընիս ա ծուցաջուբը, գյոռհնոկը դուս ունիս, բեց թուղիս: Գյոռհ-նուկը որ լոք-լոք ըրիլավ գինիս ա դիբի դևը, դևը վխեցած մի քանե անդմ ետ ա գինիս, հըրսեն մի քար եր ա ունիս, հափռեն մաչեն հղղիս, վըղ շի-նիս, վեր ըծիս:

Փանդալ Գյուքի իրան ինդի ա նշանց տալիս, որ ինքն ալ ա կզնված, հըրսրը եկածն: Ջեռքը տնիս ա ջուբը՝ մի ծու նշանց տալիս դևեն: Այտս հոպ ա տալիս ծուն, ճճխիս, մաչեն սպիտակոց նա դղնոցը ծլծլցինիլավ վեր ըծիս:

Դևը ինդի ա գիդալիս, որ քարեն հոպ ա տվալ, քարը ջուր ա դըռալ, վեր դըռալ:

Դևը էտ բենը որ տսնալիս ա, վընները դող ա ինգիս՝ վխութունեն: Տալիս ա ծմակեն մաչավը, փխչիլիս: Փանդալ Գյուքի հետնաց կնչիս ա.- Վըտ կաց, փախչիլ մա, մըզ պայման օննք:

Դևը ըսիս ա.- Ինծ հենգ, օխտը գյլխանե էրկու ախպեր օնմ: Գինիսմ բերմ, քու օժը, ղվաթը տըսննն:

Փանդալ Գյուքի տսնալիս ա դևը փախալ ա, հռացալ: Նի ա մտիս դևեն ըմարաթը, աշկե ինգյող թնգյանուց հինչ ապրանք, տնամաչ, վըսկեղեն օնի, հվքիս ա, լցրիս մի ջվալ, շլկիս, հղե ինիս դիբի տոն:

Թող Փանդալ Գյուքի իրան փանդերավը դևեն խափի, հարուստ շիլակավ գինի դիբի տոն, տըսննք դևը հինչ ա դըռալ:

Մի չոլախ աղվես տըսնալիս ա իրք գյլխանե դևը ծմակավը փխչիս ա: Մնալիս ա զարմացած: Վազ ա տալիս, գինիս առաչը կտրիս, հարցուփորձ ըրիս:

Դևը իրան գյլխեն էկածը նաղլ ա ըրիս: Չոլախ աղվեսը ծծղիս ա, ըսիլիս.- Այ քու տոնը շեն, էտ մարթեն իս ճնչիսմ: Իմ վընն ալ ա էն կոտրած: Ընդուր Փանդալ Գյուքիյն ըսիս: Քի օժավ չի տարած: Փանդուփել ա արած, քի խափած: Մհեգ իլած-չիլածտ ալ կիվաքի, կտանի: Եք գինննք փռննք՝ կեր, վախլ մալ:

Աղվեսեն խոսքը դևը հվտալիս ա: Ետ ա դըռնալիս, աղվեսեն նհետ գինիլիս: Գյոլիս'ն տսնալիս Փանդալ Գյուքի էն ա դևեն տանը իլած-չիլածը հվաքած ա, շլակած, նայե տնիլիս:

Փանդալ Գյուքի ետ ա յիշիս տսնալիս, որ դև նա մի կաղ աղվես հետնաց նայե գյոլիս, շելակը վեր ա դիրիս, ըսիլիս.- Այ իրք գյլխանե դև, մռացելմ, որ ասմ, ախր քու հար օխտը աղվես ալ լալ պարտք իմ հորը: Էտ հալա մի կաղը բիրիսս, պա էն վեցը հի՞բս բիրլական,- ըսիս ա, ջուբոմը մանցած էն մի ձուն ալ նեստի տալիս, դևեն մաչտեղեն գյլխեն ճկտմաչեն:

Ջուն ցըրև ա գյոլիս, իրսը նիմշտիլիս: Դևը սրտաճաք ա դըռնալիս: Աղվեսեն հագվեն նհետ փռնիս ա նեստի տալիս հղցին կողքեն քարեն: Աղվեսը օխտը կուտոր ա դըռնալիս: Դևը լղըպատառ նորից ետ ա դըռնալիս, փխչիլիս:

Փանդալ Գյուքի ջվալը շլկիս ա գյոլիս տոն, կնգանը ըսիլիս.- Այ կնեգ, հրվններեն կնանոցը խոսքավը ինծ ղորկալս, որ դևու փայ դըռնմ, իրաք ալ ծծաղն քի երե, տնազ տան: Ինծ Փանդալ Գյուքի որ ըսիսն, նհախ տեղն չեն ըսիս: Գենցալմ իմ փանդերավ դևեն ալ խափալ, հինչ որ պետքն լալ սաղ-սալամաթ բերալ: Համա դե գիդաց՝ քանե սաղմ, քանե աշկմս լուս կա, վընններս՝ օժ, իս վըրսկնեթուն ըրլականմ: Թվանգես օժն ալ ըս-

տուր ետը օրական էրկու հետմ փորձլական, մհետ քշանը, վըրսու գինիլուց առաչ, մհետ ալ վըրսըտեղե ետ դըռնալուց:

Փանդալ Գյուքի լալ իրան խոսքեն տարը: Թա դեչանը դևեն կոշտը գինիլը օրը մհետ լալ կնգանը սրտածաք ըրիս՝ խնձորը դիրիս գյլխեն, ասղն ալ տնգիս երե, թվանգեն օժը փորձիս, իտոր ետը մհետ քշանաց լալ փուրձիս, մհետ ալ՝ ըրակոնը:

ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1 (26). ՋՈՒԼՀԱԿԸ

Նաղլն ըրիս, որ մհետ մի ղարիբ մարթ եկալ ա մի թաքավերու պալատեն դըրբզեն ըռշկին մի կուլուր ջղըզ քաշալ, սուս ու փուս նստալ:

Թաքավերեն երգիրմը հինչքան իմաստուն մարթ լալ, հվաքվալն եկալ, ոչ էտ ղարիբ մարթեն լուզինն գիդացալ, ոչ ալ քաշած ջղզենու մանեն նանե յըն մի բեն գյուլխա ինգյալ: Թաքավերեն հետե մըծ ամոթ բեն լալ, որ իրան դուրքը եկած ղարիբ մարթեն լուզինննա մանին գիդա վեչ: Իրան հինչքան վազիր, նազիր լալ, հոքմ ա արալ, որ գինն իրան երգիրը շոռ գյոն, հինչ գինավ ալ որ ինի, մի մարթ ճարն, բերն՝ ղարիբ մարթեն նհետ խոսի:

Վազիր-նազիրները շատ քաղաքնե, շինթկնե շոռ գյոլեն ետը, մհետ մի շենու մաչավ անց կնալիս տեղը տըսալն մի տան հուրդավ մի միակ կա հանած, միակեն երե շորու նանե մի կուճի խոխա կա սարքած, տանը կտրեն ցորեն կա փռած: Էդ միակը ինքը-իրան դուռուվ ա գյոլիս, ծըտրը վխիսն գյոն ցորենը օտն: Վազիր-նազիրնեն տսնալիսն, մնալիս զարմացած: Իրաք իրաց որոշիսն, որ կա, չկա, էս տանը մի գախտնիք կա: Գինընք մանին գիդանք:

Գինիսն նի մտիս էտ տոնը, մնալիս զարմացած: Տըսնալիսն մի հիլիվր մարթ ա ջլկվըրմը նստած կտավ ա գյուրծիս: Էդ հիլիվր մարթը մի դոնա՝ չորք բեն ա ըրիս: Առաչինը՝ կտավ ա գուրծիս: Ըրկումինջինը՝ կտավ գյործուղ սընդերքեն երե մի երկար ճպատ ա կապած, հուրդավը հանած՝ սանդրքը, որ տնիս ա, բիրիս, ճպատը դուռուվ ա գյոլիս, թուղիս չի ծըտրը գյոն, կտրեն մըլկնած ցորենը օտն: Իրքմինջինը՝ վտերավը, որ հենքեն հինվածքը փուխիլուց, մի քող կա կապած, ճոնդը տարած, կապած տանը մաչին դիրած օրորոնցեն՝ վըտրը որ դուռավ ա տալիս, ուրուրոնցը դուռուվ ա գյոլիս, ուրուրանցըմը դիրած խոխան քոն ա ինիս: Չրուքմինջինը՝ հիլիվներեն մաշկեն թուլող կա կապած: Որ մուքրը տնիս ա բիրիս, քշըբեցուր ըրիս, թուլուղը խնեցա նման հրվիլիս ա:

Նազիր-վազիրնեն ուլխանալիսն, որոշիսն որ ջուլհակը անպայման ղարիբ մարթեն գաղնտիքը կգիդա:

Ջուլհակը տսնալիս ա տոնը թաքավերական մարթիքն եկալ: Չկվերեն նանե եր ա կնալիս, պադիվ, հուրմաթ տալիս, հրցրիլիս իրան տոնը գյոլեն հետե: Հինչ որ պետքն ա, վազիր-նազիրնեն ջուլհակեն նաղլն ըրիլիս: Ջուլհակը եր ա կնալիս չալեգը ծերքն ունիլիս, եռ ինիս ծիանը, գինիլիս:

Ջուլհակը եկած ղարիբ մարթեն լուզինն գիդիլիս չի: Չեռքավ հասկացրիս ա, թա՝ հի՞նչ ա ուզիս, հինչո՞ւվս եկած: Ղարիբ մարթը ծեռքեն մհակովը տափեն երե մի կուլուր ջղզ ա քշիս:

Ջուլհակը իրան չիլիգավը ջղզը մաչավը կես ա ըրիս: Ղարիբը ջուբեն նանե մի քանե գյուլոխ սողան ա դուս ունիս, դիրիլիս իրան թրափեն ջղզմը:

Ջուլհակն ալ մի քանե գյուլոխ սխտոր ա բիրիլ տալիս, դիրիս իրան թրափեն ջղզմը: Ղարիբը ջուբեն նանե մի հափուռ կորոկ ա դուս ունիս շաղ տալիս ջղզեն մաչեն:

Ջուլհակը մի հավ ա բիրիլ տալիս, դիրիս ջղզմը: Հավը ըսկսիս ա կորոկը օտիլը: Ղարիբը պատառ խիյալ-խիյալ ա ըրիս, գյուլոխը քուրիս, եր կնալիս մհակը դիրիս օսսեն, թուղիս, գինիլիս:

Ջուլհակեն նա ղարիբ մարթեն կատարած անխոս խաղեն նանե թաքավերը, վազիրնեն, հվաքված ժողովուրթը, ոչ մինը մի բեն ոչ հասկացալն, ոչ ալ գյուլխավն ինգյալ:

Ղարիբը որ թողալ ա գենցալ կզնված, վազիր-նազիրնեն ջուլհակեն խստալն, գյովդա բեցուր պահալ, թա՝ խնթրիսնք նաղլ արի գիդանք էտ հի՞նչ մարթ լալ, հի՞նչ լալ ուզիլիս, հի՞նչու լալ եկած:

Ջուլհակը նաղլ ա ըրիս.- Ղարիբ մարթը մըր հրեվան թաքավերոթունից ղորկած ղասիդ լալ: էն կուլոր ջղզը, որ քաշալ ա, ըսիս լալ, որ մըր թաքավերը ուզիս ա ըշխարքեն տրանա: Իս ջղզը կեսմ արալ, ասալմ՝ ձեր թաքավերը հինչքան ղոչաղ ինի, կեսեն կարա տար կանալ, կեսն ալ մըրն ա:

էն սողան ա դուս կալալ դիրալ իրաց թիրափմը, ասալ ա, որ թողեք վեչ ձեր երգիրեն տրանանք, մըզանե փիս վըտ կգյո, կըռըվ կդըռնի: Իս ալ մըր թրափմը սխտորմ դիրալ, ասալմ՝ մընք ալ պակաս պտողն չընք: Կռվեն նանե վխիս չընք: Մընք ալ պակաս կռվողն չընք:

Ինքը կորուկը շաղ ա տվալ, ասալ, որ մընք ղոշուն շատ օնընք, մըր ղոշունով երգիրեն կտիրանանք: Իս ալ հավը բերալմ բեց թողալ, կորուկը հվաքալ ա կերալ, ասալմ՝ մընք ալ պակաս ղոշուն չօննք, կարողնք մըր

օժավը ծեր դոշունը կտորնք: Սոտ ղարիբը տըսալ ա, որ մընք ալ մըծ օժու, խըլքու տար մարթինքնք, կզնված թողալ ա, գենցալ:

Ջուլհակը, որ իտի նաղլ ա ըրիս, թաքավերը առաչ ա գյուլիս, ջուլհակեն ճակատը պչիս, ըսիլիս.- Դու որ իմ պադեվս բեցուրս պահալ, իմ երգիրը փրկալս կռվեն նանե, լա դու իմ երգիրեն ամենամըծ, ամենախելունք մարթնս: Ասօրաց նհետ կդըռնս իմ վազիրների գյլխավրը, կապրս իմ պալատմը, իմ կողքեն:

Ջուլհակը ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա իր մծեթունավ: Իս շատ շունուրհակալմ քու հարգանքավ: Իս տարիքս առած մարթմ, ըստոր ետ կարի չըմ իմ պապական տոնը, տեղը, դովրաբարս թողի, գյոլ պալատմ ապրի: Թա նորից իմ կարիքը ինի, ալլա կգյոմ իմ դունլողը կարմ: Իրվունք տոր, գինմ իմ տոնը:

Թաքավերը մըծ անոմներավ հղե ա դիրիս:

2 (27). ԱՆՎԱԽՏ ՊՈՒ-ՊՈՒ ԿԱՆՉՈՒՂ ՂՈՒՇԸ

Կասի իլալ ա, իլա չի, էրկու ախպերն լալ, մին ալ իրաց մարը: Իտուք շատ քյասիբն լալ ըպրիլիս:

Մի օր մըծ ախպերը կուճի ախպուրը ըսիս ա.- Այ ախպեր, դու մըր մոր պահի, իս գինըմ մի հարուստ մարթու նոքյար դըռնմ, պատառ դեսեն-դեսեն իք օնմ, բերմ գյլխնես պահնք, տըսննք վերչը հինչ կգյո գյլխնուս:

Կուճի ախպեր նա մարը համաձայնվմն: Մըծ ախպերը գինիս ա մի հարուստ մարթու տան նոքյար ա դըռնալիս: Հարուստ մարթ նա նոքյարը պայմանն կպիս:

Հարուստը ըսիս ա.- Դու մի տարե ժամանակով իմ տանը նոքյար կդըռնս: Հացը կօտս, ջուրը՝ կխմս: Մի տարմ քի էրկու ձեռք շոր կտամ իմ գեցած քյոհնա շուրերեն նանե: Քու պարտականութունը որ խելունք կդարս, տարեն որ թմամի, մի ջոխտ լծկան եզնը կտամ, էրկու էծ՝ հոլրը տակեն:

Երկրորդը՝ թա խելունք նուքյարեթուն վեչ արս, ինծ լսըս վեչ, ժամանակից շուդ թողս, փախչս, իս քու մաշկեն նանե մի ջոխտ տրխացու կաշի կհանմ:

Իրքմինջինը՝ պետք ա կզնվիլ ինի վեչ: Հու կզնվի, էն մըր պայմանավը տարված կինի:

Չուրիքմինջինը՝ մըր պայմանը սորուն վախտնք կպիլիս, տըս գյորունք ա, ղուշուրը բունն շինիս: Պու-պու կանչուղ ղուշն ալ «պու-պու» վա

կնչիս: Ղուշը որ միեւտ ալ «պու-պու» կանչի, ուրեմը նոքյարոքունետ տարեն թամամ ա:

Տղան համաձայնվում ա, ըսկսիս խելունք, խունարի իր նուքրեթունը արիլը:

Դու մի ասի, էտ հարուստը մի անխիղճ, անաստված մարք ա: Խըղճ նուքյարեն գյլխեն շան օյն ա դիրիս: Գինիսն արտը հնձիլու: Հնձիսն: Իրիննակը մար ա մտիս:

Նոքյարը ըսիս ա.- Աղա, իրիննակը մար ա մտալ, տափը մքնալ ա, ետ դըռննք գինք:

Աղան ծծղիս ա, ըսիս.- Ա շան տղա, իրիննակը մար ա մտալ, թող մար մտնի: Հեն ա լուսլոնգյան բուլորած դուս ա եկալ: Հինչ պակաս լուս օնի: Արտը թուղլական չնի կեսատ: Գյուլոխտ կախ գիծի, հնձի: Մտետ պահի, որ մըր պայմանը պայման ա: Թա կզնվի՞ս, դուվս գիդալիս:

Նոքարեն ճարը կտրած քիշեր-ցիրկ գյուլոխը կախ գիծած անաստված աղեն հետե մի վեց ամես բեն ա ըրիս: Օժե ինգիս ա: Ալ նստած տեղեն կրիս չի եր կանա: Ուզիս ա թողի գինի տոն: Անխիղճ աղան թուղիս չի, թա՝ մըզ պայման օննք: Փռնիս ա խըղճեն մաշկեն նանե մի ջոխտ տրխացու կաշի դուս ունիս: Լեցավ, մռմռալավ նուքարեն հղե գիծիս:

Տարեն շոռ ա տալիս, ալլա գյորունք ա գյոլիս: Էս դոնում կուճի ախպերը նա մըծ ախպուրը ըսիս.- Դու մըր մորը քուշտեն մնա, իս գինմ նուքյուրեթուն արմ:

Կուճի ախպուրը անմը Սայադ ա ինիս: Սայադ գինիս ա համին էն հարուստեն տոնը նոքյար, ըշտեղ իրան մըծ ախպերն լալ գենցած:

Սայադ աղեն ըսիս ա.- Իս էն տղեն կուճի ախպերնմ, որ քու տանը վեց ամես նուքրեթուն ա արալ: Կրեցա չի պայմանեն դմանալ, թողալ ա եկալ տոն: Միեգ համան պայմանավ եկածմ, իս նուքուրեթուն արմ:

Տարուն ալ սորուն վախտն ա: Ղուշրը բունն սրքիս: Պու-պու կանչուղ ղուշն ալ իրան «պու-պուն» ա կնչիս: Մին ալ որ պուպվեն սասը լսնք, ուրեմը վահդան թամամ ա: Օժու մաչե յա մնալիս՝ «հո վեր կզնվի, էն տարված ա» պայմանը:

Քու դիրած պայմանմ, պետք ա մի բեն փոխնք: Իս մի ջոխտ լծկան եզնը ուզիս չըմ: Տարեն որ կթմամի, դու ինձ կտաս մի կավ՝ վըրթը տակեն, էրկու էծ հոլրը տակեն, մին ալ էրկու վըշխար՝ գյոռնրը տակեն:

Հարուստը տսնալիս ա, որ Սայադ շատ ըշկաբեց, ասուղ-խոսող տղա յա ըրվալիս, ըլխունալիս ա, համաձայնվում պայմանեն:

էքսի քշանաց քիշերով աղան եր ա կնալիս Սայադե կնչիս, որ՝ եզնրը դուս արի գինն արտը վարն:

Սայադ ըսիս ա.- Աղա, ոչ մի հրևան հալա քոնե եր չի կացած: Պա ամո՞ք չի մընք էսքան շուդ արտ գիննք: Տըսնուղը մըզ երե կծծաղի: Համփերի՝ լուսը բենվի: Հրվաները կգինն, մընք ալ կգիննք:

Աղան մանը կծիս ա, ինքն իրան ըսիլիս. «Օհո՜, էս նոքյարը իմ գյլխեն քյալագ ա բրիլիական»:

Գինիսն արտը: Սայադ նստիս ա հաց ուտիս: Աղան կզնվիս ա, ըսիս.- Այ տղա, հինչ հացու վախտ ա: Եր կաց, եզինքը լծի, վար արնք: Օրը կեսօր ա դըռալ: Խալխը վրիսն:

Սայադ ըսիս ա.- Աղա, էտ քու աշկեն ա ըրվալիս: Հալա եզնը լծող չկա: Դու ալ եք նստի, հաց կեր:

Ըրկոնաց հալա իրիննակը մար վեչ մտած, Սայադ եզնրը դուս ա ըրիս: Աղան տսնալիս ա, ըսկսիս ա նղանալը, ըսիս ա.- Այ տղա Սայադ, ախր հալա օրը կեսօր ա: Արտը մանցալ ա կեսատ: Եզնրը խե՞ յըս դուս արալ:

Սայադ ըսիս ա.- Աղա, օմեն հըրվաները դուսն արալ, իս ալ դուսմ արալ: Հրվներեն նաեե ետ ինգիլը սորուն բեն չի: Մըզ երե կծծաղն:

Ալ հինչ գյուլոխ ցվցրմ: Աղան հինչ օյին դիրած ա ինիս Սայադե մըծ ախպուրը գյլխեն, Սայադ ալ ընդուր նաեե շատ զուլում դիրիս ա աղեն գյլխեն:

Աղան տսնալիս ա՝ փորձանքա մաչ ա ինգյած, ճարը կտրած ինքն ա քշանուց շուդավ եր կնալիս եզրնքը դուս ըրիս, որ գինն արտը:

Սայադ գինիս ա նի մտիս գյղեցեն, դուս չի գյոլիս: Աղան նղացած կնչիս ա.- Այ տղա, Սայադ, ախր քի եգեղեցմը հի՞նչ բեն օնս, օրը կեսօր ա դըռալ, եք գիննք արտը:

Սայադ եգեղեցուց դուս ա գյոլիս, ըսիլիս.- Աղա ջան, հո՞ւ վա տըսած, որ հայ քրիստոնյան առանց եգեղեցե մտնիլու, առանց աղոթքի բեն գինի: Չէ որ Աստուծ եռնանց կտըսնի կզարմանա, կանիծի: Մին ալ իս աղոթքմ ըրիս, որ քի նման աղա մարթու, որ քի նման Աստծու օրհնած աղա մարթու ձեռքմ ինգյած, ըպրիլիս:

Աղան ճարը կտրած սուս ա ըրիս:

Մի ըրակու ալ արտեն նհետ բիզարած գյոլիսն տոն, տսնալիս՝ հրըվան շենեն նհետ աղեն կնգանը ախպերը, իրաց շենեն դերեն, բյուխվեն, մին ալ մի քանե ընմավր մարթկանց նհետ եկալն ղոնաղ: Աղան կնգանը ըսիս ա, որ յուղծու սարքի ղունողնուն հետե:

Կնգանը ախպերը ամոթանք ա տալիս աղեն, ըսիս.- Աղա փըսե, քու ընմեն ամոթ ա, ղոնաղը յուղծվավ հարգիլը: Շենբաշեն ընմավ մարթիք քի աղա մարթն գիդացած, եկած տեսութունտ: Լա իսկի բեն վեչ, մի վըչխար մորթի:

Աղեն նափասը բիրանմը չուրունալիս ա: Ճարը կտրած, ամոթու ըսիս ա.- Ադա Սայադ, գինի վըչխար մորթի, վըչխար մորթի:

- Ո՞ր մինը մորթմ, աղա ջան,- հրցրիս ա Սայադ:

- Լա որը կջհիի, մորթի:

Սայադ գինիս ա նի մտիս գյումը, որ վըչխարը ջհիիս ա, մուրթիս ա:

Սայադ որ ետ ա ինգիս, աղան գիդալիս ա, որ ալլա գյլխեն մի քյալագ ա խաղ ըրիս: Եր ա կնալիս, գինիս կնչիս.- Ադա Սայադ, հի՞նչս ըրիս, գյոլիս չըս:

- Վըչխարմ մուրթիս, աղա ջան, վըչխարմ մուրթիլիս,- սաս ա ըրիս Սայադ:

- Խե, քանե՞նս մորթած,- սրտաճաք դըռած հրցրիս ա աղան:

- Աղա ջան, մի ութն-տասը հատ մորթածմ:

- Այ քի ղուրկողուն տոնը Աստուծ քանդի, ինձ ջհիած օրը սըվ լալ ինի... Մինը մուրթիլեն տեղը ութն-տասնս մորթած:

- Դե աղա ջան, դու ասալս վըրը կջհիի, մորթի: Իս ալ վըրը ջհիած ա, մուրթիսմ: Քու ասածնմ ըրիս: Թա կգնվիս ըս, դու գիդաց, որ մըր պայմանը պայման ա:

- Դե, կգնվիս չըմ: Համա դե, սորուն բեն չըս արած,- խղդվիլավ ըսիս ա աղան:

Ղունղնեն հղե դրելուց ետը, աղան կնգանը նհետ սթնջամ ա ըրիս, որ ալ կարի չն Սայադե նհետ յոլա գինի: Հարկավեր ա մի բեն արիլ: Խիյալխիյալն ըրիս: Մի բեն որոշիս, քոն ինիս:

Քշանաց շուդավ որ քոնե երն կնալիս, աղան Սայադե ըսիս ա.- Այ տղա, էս քիշեր սորուն արազմ տըսած, օրեշ բեն չօնմ ըրիլու: Եք գիննք վըրս, բալքյա հաջողվի մի խոզու վարազ վեր գիծնք, բերնք տհալ արնք:

Աղան թիվանգը եր ա ունիս Սայադե նհետ գինիսն դուս գյոլիս ծմակը, տըսնալիս՝ մի ծառու նանե մինը «պու-պու» վա կնչիս:

Աղան ուլխացած ըսիս ա.- Սայադ, աշկտ լուս, գյորունք ա դըռած, «պու-պուն» կնչիս ա՝ վահդատ թմամած ա: Գիննք տոն, հախը տոմ, գինի:

- Աղա,- ըսիս ա Սայադը,- դու սորուն իս գիդալիս, որ վըրծակը օրենքավ կնչիս ա քիշերվա կեսեն նհետ՝ դեչանը արևմտոց: Արևմտոցեն ետը, դեչանը կես քիշեր հի՞նչ վըրծակ որ կանչի, ընդուր ըսիսն «չար խաբար»

վըրծակ ա: Յանի քի տըռնը հետե մի փիս փորձանք կաև: Էտ վըրծակը դնակավ մուրթիս չըն: Փռնիսն, վեզը դիրիս սատորեն երե, կացնավ թխիս, գյուլոխը թռցրիս, որ Աստվածանից չար փորձանքը անց կենա, կտարվի վեչ:

- Հա, իտի բեն կանի,- ըսիս ա աղան:

- Դե մհեգ հալա շատ շուդ ա,- ըսիս ա Սայադ,- հալա գյորոնք չի, ոչ մի ծառ տիրևած չի, ոչ մի ղուշ բուն չի շինիս: Կա-չկա էս «պու-պու» կանչողն ալ «չար խբիրորու» ա, հարկավեր ա ըսպանիլ,- ըսիս ա Սայադ, աղեն ձեռքեն նանե թվանգը իք ունիս, երի ըրիս:

Մին ալ հինչն տսնալիս, ծառեն նանե ղուշեն տեղը, աղեն կնեգն ա վեր ինգիս:

- Վա՜յ, էտ հի՞նչս արալ, այ քու տոնը Աստոծ քանդի: Դու իմ տոնը խե՞յըս քանդալ,- լեց ինիլավ, ծունգնը ծափեն տալավ ըսիս ա աղան, վազ տալիս, գինիս կնգանը խտտիլիս:

Ճարը կտրած աղան բիրիս ա մի ծնած կավ՝ վըրթը տակեն, մի ջոխտ էծ՝ հոլրը տակեն, մի ջողտ վըչխար՝ գյոռները տակեն, տալիս Սայադե:

Սայադ ապրանքը նի ա ըրիս առաչը, իրան հետե շվշվցինիլավ, «մըր պայմանը պայման ա» յրքիլավ գինիս տոն: Չար աղեն նանե ախպուրը մուռը դուս բիրիս:

3 (28). ՆՈՔՅԱՐԸ ԴԸՌԱԼ Ա ԱՂԱ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի կուճի քյասիբ շենում ըպրիս լալ մի քյասիբ մարթ իրան կնգանը նհետ: Իտուց իլածը էրկու տղա լալ:

Դե, ըշխարքեն օրենքն ա: Էտ մարթը ծանդր ուլուզացալ ա: Կանչալ ա տղեցը, ասալ.- Իս մռնիսմ: Կրեցա չըմ ձըզ հետե մի հարուստեթուն, մի ապրուստ ետ գիձիլ: Գիդալիսմ, դուք պետք ա գինեք հարուստ մարթկանց հետե նոքարեթուն արեք, գյլխնետ պահեք: Ինձանե ձեզ ամանաթ՝ հինչ որ ըսիսմ, ընջուկնոմտ կպահեք, հինչ թահրը մարթու հետե նոքրեթուն կարեք, ձեր բենն ա, ըրեցեք: Մինջա քոսա մարթու տան նոքար վեչ ինեք:

Էսքանը հարը ըսիս ա տղեցը, ինքը մռնիլիս ա:

Տղեքը նիյն ինգիս ապրիլա հետե շատ նեղութունու մաչ:

Տղեցը մըծեն անմը Կեծքար ա ինիս, կուճինենը՝ Կեծակ:

Մի օր Կեծքարը Կեծակ ախպուրը ըսիս ա.- Ախպերս, տան իլած-չիլածավը մըր մոր նհետ յոլա գենցեք, իս գինմ մի տեղ նոքարութուն արմ,

գյուլոխս պահմ, թա կարմ՝ ձեզ ալ մի բեն կօքնմ: Թա չէ, Աստված-Աստված…

Կիծաքարը գինիս ա հսնիլիս մի մըծ, ավադ շեն: Մի քյուչավ գինիս տեղը մի մարթ դուս ա գյոլիս առաչը, հարցըփորձ ըրիս.- Հո՞վս, հի՞նչ տեղս գինիս, ըշտղացե՞ յըս:

Կիծաքարը իրան նպատակը ըսիս ա:

Էտ մարթը շատ ա ուլխնալիս, ըսիլիս, որ.- Իս ալ լա քի նման մի տղուվմ շոռ գյոլիս: Եք տանմ ինձ նոքյար:

Կիծաքարը յիշիս ա, տըսնալիս էտ մարթը քոսա յա: Գյուլոխը ուրուրիս, ըսիս ա.- Չէ, իս քի նոքյար դըռնի չըմ:

Ըսիս ա, հղեն փուխիս, մի օրեշ քյուչավ գինիլիս:

Ալլա մի մարթ Կիծաքարեն առաչը կտրիս, հարցուփորձ ա ըրիս: Կիծիքարեն մըտքը գիդալավ, ղանչաք ա ըրիս, որ տանի իրան նոքյար: Կիծաքարը յիշիս ա՝ տսնալիս էտ մարթն ալ ա քոսա: Գյուլոխը ուրթիս, ա ըսիս.- Չէ՛, իս քի նոքյար դըռնի չըմ:

Ըսիս ա, ալլա հղեն փոիխիս, մի օրեշ քուչավ գինիս:

Կիծիքարեն առաչը ալլա մի մարթ ա դուս գյոլիս, հարցուփորձ ըրիս: Գիդալավ նպատակը, խնթրիս ա, որ իրան նոքյար դըռնի, ինքը պարի մարթ ա: Կիծաքարը յիշիս ա՝ տըսնալիս ալլա մի քոսա մարթ ա: Զարմացած ըսիս ա.- Մեղա Աստված, խե մի շենմ քանե՞ քոսա մարթ կինի:

- Հունչո՞ւ հետե,- հրցրիս ա մարթը:

- Ասօր էս շենմը իրք մարթուվմ ջիհած, իրեքան ալ քոսայն լալ:

Մարթը ծծղիս, ըսիս ա.- Տղա ջան, էս շենեն օմեն մարթինք ալ քոսա յըն: Բեյթուն տեղը չրչարվմ ալ, դես ու դեն ինգիլ: Ինձանե խելոնք մարթ ճարի չըս: Լա քու օգած աղան իսմ, որ կամ:

Կիծաքարը ալլա համաձայնվմ չի:

- Ախր պատճառը հի՞նչ ա, ասի գիդամ,- հրցրիս ա քոսա աղան:

Ճարը կտրած Կիծաքարը ըսիս ա.- Իմ հար մռնիս տեղը վասիա ա արած, որ հինչ մարթու նոքար դռնալու կինի՝ դըռնաս, քոսա մարթու նոքյար դըռնս վեչ:

Քոսա աղան ծծղիս ա, ըսիս.- Քու հար մըծ մարթ ա լալ, ինքն ալ ալուզ: Մի խոսք լալ ասալ ա, մըռալ: Մհեգ դու քու բախտետ քար չըս գիձիլական, մնաս քողցած: Իս խելոնք մարթմ, եք գիննք իմ տոնը:

Քոսա աղան վերչը կլըկապ ա ըծիս, Կիծըքարեն գյուլոխը կպիս՝ տնիլիս:

Դու մի ասի, որ էտ շենմը քոսա մարթ լա էտ միննն ա: Լա իրք հետ ալ էտ համան քոսան ա իլած, սհաթտա շորրը փոխած ա, եկած Կիծիքարեն առաչը կտրած, խափած, որ լա մըր շենեն թեխյա մարթինքը քոսայն:

Քոսա աղան Կիծըքարեն տնիս ա, հաց ա տալիս, ջուր ա տալիս, նհետը պայման կպիս, ըսիս ա.- Ինձ խոխա չօնմ: Մի տարե, որ իմ սրտավս ինձ հետե նոքյարութուն արս, հինչուր որ պետքն ա, իս քի փսակմ, տնատար արմ: Թա չէ, տարեն չթմամած թողս գինս, իս քու մաշկեն նանե մի ջոխտ տրխու կաշի կհանմ, հղե դիրմ:

Կիծաքարը խյալ-խյալ ա ըրիս, ինքը իրան ըսիլիս. «Լավ, էս մարթը հինչքան փիս մարթ պետք ա ինի, որ իս մի տարե կարմ վեչ յոլա գինի»: Համաձայնվիս ա՝ մնա, նոքյար դըռնի:

Կիծաքարը որ նոքյար ա դըռնալիս, տարուն գյորունք վախտն ա ինիս:

Դե մի օր սորուն, մի օր փիս, մի օր քողցած, մի օր կոշտ, ջանը դիրած կըռքնոն տակեն, յոլա յա գինիս:

Տարեն շոռ ա տալիս, գյոլիս աշունք: Քոսա աղան մի օր Կիծաքարեն ըսիս ա.- Աշունք ա, վարու վախտ ա, պիտի գինս արտը վարս:

Բիրիս ա մի քսակմ հաց ա դիրիս, պանր ա դիրիս, օրեշ ուտլեղեն ա դիրիս, քսակեն բերանը փկիս, երե փեչադ դիրիս, ըսիս.- էս օմենը քի հետե յա: Համա դե պետք ա ինդի օտըս, որ քսակեն բերանը բենըս վեչ: Փիչատեն նի վեչ գյոս: Թա քսակեն փիչատեն նի ինս եկած, գիդաս, որ մըր պայմանը քանդած կհնս:

Կիծաքարը գինիս ա արտը վրիս: Կրիս չի մի ամալ արի, քսակեն նանե մի թիքա հաց հանի, օտի: Ճարը կտրած քողցած, ծարավ, քսակը եր ա ունիս, բիրիս:

Էքսի օրն ալլա Կիծքարեն ղուրկիս ա արտը վրիլա, փիչատած քսակը տալիս ձեռքը, հղե դիրիս:

Կիծաքարը արտը ալլա վրիս ա, ետ դըռնալիս խիյալ-խիյալ ըրիս, կրիս չի մի ալամաթ արի, քսակեն նանե մի թիքա հաց հանի, օտի: Ալլա քողցած, ծարավ գյոլիս ա տոն:

Մի օր, հենգ օր... Կիծաքարը տըսալ ա, չէ՞... Քողցած ինա չի մնալ, խանմեն թաքուն տված մի թիքյա հացավ ինա չի ապրի: Կա-չկա քոսա աղան ուզիս ա գյլխեն մի քյալագ գյո:

Ախրը մի օր իրեսավըտ ա կնալիս, ըսիս, որ.- Քողցած ինա չի ապրիլ: Քու խըղճըգյորա ինձ մի բեն տոր, գինմ:

Քոսա աղան խըղճը կուրցրած ըսիս ա.- Մըզ պայման օննք: Վախտը չթամամած, որ քու բենը թուղիսս կեսատ գինիս, քի ոչ մի բեն հսնիս չի: Դուվս ինձ պարտք մնալիս:

Փռնիս ա խըղճ Կիծըքրեն մաշկեն նանե մի ջոխտ տրխացու կաշի կտրիս, հղե դիրիս: Կիծաքարը լեցավ, մխկտալավ ետ ա դըռնալիս գինիս տոն, գյլխեն էկածը նաղլ ըրիս մորը, ախպուրը:

Կեծակը ախպուրը ըսիս ա.- Շատ սորուն: Դու տան մնա, իս գինմ նոքարեթուն արմ:

Կեծակը հարցուփորձավ գինիս ա, քոսա աղեն ճրիլիս: Համա դե, ըսիս չի, որ ինքը Կիծըքարեն ախպերն ա:

Քոսան հինչ պայմանավ նոքար լալ եր կալած Կիծըքարեն, համան պայմանավ ալ նոքյար ա եր ունիս Կիծակեն:

Մի օր քոսա աղան բիրիս ա սրմացուն նի ըծիս խուրջունը, եզնըը նի ըրիս Կիծակեն առաչը: Մի քսակմ հաց-ուտիլեղեն դիրիս, քսակեն բերանը կպիս, փեչատը դիրիս երե, ղուրկիս արտը վրիլու:

Կեծակ, դու Կեծակ, արտը գինիս տեղը հղեց ջհհիս ա իրաց շինացե էրկու քյասիբ մարթու: Բիրիս ա խուրջինը կտրիս, էրկու կուտր ըրիս: Սրմացու ցորենը կես ըրիս էրկու տեղ: Խուրջինեն մի աշկը շելակ տալիս մի շինացուն, մինն ալ՝ էն մինեն: Եզինքն ալ նի ըրիս ըռչնեն, ըսիլիս.- Սրմացու ցորենը ծեզ հալալ: Եզինքն ալ կտանեք տաք իմ ախպուրս, թող վար անի, դեչանը իմ գյոլը:

Քյասիբ շինացեք շատն ուլխնալիս: Կիծակեն հազար ու մի օրհնանքն տալիս, գինիս:

Կեծակը գինիս ա մի սառնը ըխպիրու կողքե նստիլիս, յիշիս՝ տսնալիս քսակեն տակը կար օնի: Կարը քնդիս ա, քսակմը հինչ կա՝ ուտիլիս, սառնը ըխպիրին ջուր խմիս, քսակեն տակը կրիլիս, խուտուրա ինգիս մի սազ քոն հնիս, եր կնալիս դերտակ քսակը գիծիս օսսունքը, իրան հետե խաղ ըսիլավ գինիս տոն:

Քոսա աղան յիշիս ա նոքյարեն ռանգեն-ռուշտեն, ըսիլիս.- Կեծակ, աս ըրակու աշկես բեհալս ըրվալիս: Հի՞նչ ա պդահած: Բալքյա քեփ չօնս:

- Հի՞նչ պետք ա պդահի,- կզնված ըսիս ա Կեծակը,- սարու նման ծին թուղիսս գյումմը կապած, սրմացուն լցնիս, տալիս շելակս, թա՝ տար արտը վարի: Շլակավ դեչանը գենցալմ հասալ արտը, քռհնոք ջանս կոխալ ա, ինջըմիշմ իլալ: Ասալմ եզնըը պատառ ըրածն, դինջանամ, քոհնոքս ցմաքի, նոր եր կանամ, վարը արմ: Երմ կացալ, որ եզինքը լծըմ, տըսալմ եզինքը կավչնըն: Դեսմ շոռ եկալ, դեն, ըրվացալ չըն: Մի քիքա եղուտ

հացն դըռալ կորալ: Ետմ դըռալ եկալ, որ սրմացոն շլակմ գյոմ տոն, տըսալմ սրմացուն ալ չկա, տարածն:

Քոսա աղան էսքանը որ լսիս ա, գյլխեն խելքը թռիս ա: Վըտանը նհետ դեչանը գյուլոխը չփիս ա Կիծակեն, տըսնալիս ա՝ չէ՞, կարի չի մուռը հանի, իրան նանե ջանավ, իրան նանե շատ ղվաթի ա : Ճարը կտրած, տանը մաչավը զարգյան ա գինիս: Խանմը գիդալիս ա, որ մի փիս բեն ա դըռնլական, վխըթունեն կոչ ա գյուլիս տանը մի քյունջում, սուս ըրիլիս:

Վըչխրնոն կթիլեն վախտն ա ինիս, ըսկսիսն բիջիլը: Աղեն փիսն ա գյուլիս: Կզնված, նոքյարեն ըսիս ա.- Ադա, եր կաց գինի վըչխրնեն խլաս արի[5]:

- Գինմ, աղա,- թիաթավ ըսիս ա Կեծակը, նի մտիս գյումը, օմեն վըչխրնեն մուրթիլիս, գյուլիս նստիս:

Դե որ վըչխրնեն մուրթիս ա, այտս գյուռներնն ըսկսիս զիրզոնք տալը, բիջիլը:

Աղան, ալլա կզնված, ըսիս ա.- Ադա, լա օմեն բեն պիտի ասմ: էն գյուռներեն սասը պա դու լսիս չը՞ս, գինի ընդոց ալ խյաս արի, թող սիսռնեն կտրըն: Ախր գյուլոխս նայե ցվիս:

Կեծակը սուսուփուս գինիս ա օմեն գյուռներն ալ մուրթոտիս:

Մի վախտ անց տսնալիս ա ոչ վչխարու սաս ա գյուլիս, ոչ ալ գյոռան՝ հազրի յա գյուլիս, որ կա-չկա Կեծակ ալլա գյլխեն մի քյալագ ա եկած: Գինիս ա նի մտիս գյումը, տըսնալիս, հի՞նչ՝ օմեն վըչխըրնեն, գյուռները մրթոտած նայե լաշ-լաշու գիցած: Վայ ա կնչիս, թխիս ծունգներեն, ըսկսիս Կիծակեն անեցք տալը՝ վայ քու դեսը ղըրկողուն տոնը քանդվի, հղեն խարաբա դըռնի, տըսնմ, քի Աստուծեն կեծակը տանի:

Լա էս խոսքեն երե Կեծակը ըռնոտ դենակը ձեռքեն նի ա մտիս գյումը, աղեն ըսիս.- էս հի՞նչ ղլմղալս դիրած, էս հի՞նչ անեծքս տալիս, հի՞նչ սխալ բենմ փռնած, ասի գիդամ:

Աղան Կիծակեն ձեռքեն ըռնոտ դենակը որ տսնալիս ա, օմեն հինչ ալ մըռնալիս ա: Վխիս ա որ յադ տղա յա, կարող ա իրան ալ մորթի: Ճարը կտրած, սուս-փուս գինիս ա տոն, կնգանը ըսիս.- Ա կնեգ, նոքյարեն աշկրը արունը փռնած ա, դենակն ալ ըռնոտ նայե ձեռքեն վըտը: Մըր գյլխեն որ մի ճար վեչ արնք, աս քիշեր մըզ ալ կմորթի: Եր կաց հինչ որ կարևոր ա հվաքի ջվլնեն, հինչ որ թիթվ ա, եր օննք, հինչ որ ծանդր ա, թողնք մնա:

[5] Այստեղ՝ տեղավորել (ծան. բանահավաքի):

Գիննք քո հոր տանը մի քանե օր մնանք: Դեչանը էս Աստուծու կեծակը մըր տանն նայե ձեռք կքաշի, գինի:

Կնեգը եր ա կնալիս, տանը իլած-չիլած աշկե ինգյող ապրանքը հվքիս. դըռնալիս ա չորք ջվալ: Սուսն ըրիս, որ Կեծակը քունավ ընցնի, իրաք էրկունոն հղե ինգն: Հակառակ, կնեգն ալ ղալին հըռե շինացե յա ինիլիս: Քիշերեն մի վախտ մարթը կնեգ երն կնալիս էրկու ջվալ այննոյնը բռնիլիս ծիյանը, մի ջվալը աղան ա շլկիս, ծիանը գյամը փռնիս, մի ջվալն ալ խանմն ա շլկիս՝ ծիանը հագին փռնիս, հղե ինգիս:

Պատառ տըղ որ գինիսն, քոսան կընգանը ըսիս ա.- Այ կնեգ, ջվալմը հի՞նչս դիրած, մաշկս թրջիվալ ա:

Եղեն օշնակն ա,- ըսիս ա կնեգը:

Քոսան ձեռքը տնիս ա մաշկեն թրջված տեղը, լուզիլիս, այտս կնգանը ըսիս.- Այ կնեգ, եղու համ չկա, համ ալ աղի ա:

- Աս տարե եղը պատառ աղի յըմ արած, որ համ վեչ գյո,- ըսիս ա կնեգը:

Գինիսն, գինիս, հսնիսն մի ղարիբ շեն: Լուսը հալա նոր լալ բինվալիս: Շինացեք քոնն լալ: Շենեն շները տըսնալիսն շենը ղարիբ մարթինքն գյոլիս, հվքվիսն գյոլիս հջիլավ քոսեն նա կընգանը չորք թարափը կտրիլիս:

Վախից քոսի ջանը դող ա ինգիս, կնգանը ըսիս ա.- Այ կնեգ, հալա լուսը բեցված չի, շինացեք քոնն: Շները դեն արուղ չի իննական: Էսքան շներ որ հվաքվածն, մըզ կօտն, ցըրըվ տան:

- Հի՞նչ արմ...,- խըղճ-խըղճ ըսիս ա կնեգը,- տեղս մըր նոքյար Կիծակեն տեղըն ա՝ շներեն քարավ տա, խոռեք տա:

Խանմեն էս խոսքեն երե, մին ալ էնն լսիս, որ Կեծակը քոսեն շլակած ջվալեն մաչեն նետ սաս ա ըրիս.- Խանմ, իսկի վախլ մա, իս նայեմ տեղս:

Քոսան ջվալը վեր ա դիրիս: Կեծակը ջվալեն մաչեն նետ դուս ա գյոլիս, շըներեն քրըպրանին ա ունիս, խոռեք տալիս: Խնմեն ալ թողիս չի ջվալը շլակի: Կեծակը ինքն ա շլկիս:

Դու մի ասի, ըրկոնն, որ մարթ նա կնեգ որոշիսն տանը նանե փախչն, Կեծակը գիդալիս ա: Խալվատ ա գիծիս, եղեն օշնակը ջվալեն նանե դուս ունիս, ինքը նի մտիլիս ջվալեն մաչը: Հղեց ալ որ քոսան ըսիս ա. «Մաշկս թրջիվալ ա», եղն չի ինիս վեր դեռած, Կեծակն ա ինիս գյուզած, Քոսան ալ կնգանը խոսքավը եղու տեղ լուզած լալ:

Իրք հոգվով գինս, գինիս, տափը մքնած հսնիսն մի մըծ վարար գետու: Քոսան կնգանը թաքուն ըսիս ա.- Այ կնեգ, էս սորին ա դըռալ: Աս քիշեր գետեն կողքեն կմնանք: Կեծակը որ քունավ կանցնի, կփռննք նի գիցնք

գետը, կտանի, մըր հոքին ալ կազադվի, խղճռնես հանգիստ ետ կդըռննք գննք մըր տանը տար կանանք:

- Սորին արազս նաղլ ըրիս, թա՝ Աստուծ օրեն կդարի,- ըսիս ա կնեգը:

Քոսեն որոշածը լսիս ա Կեծակը:

Խտուրովն դըռնալիս, որ քոն ինն: Դե, քոսան նա կնեգը ավելի շատն ինիս բիզարած, շուդն քունավ ընցնիս:

Կեծակը եր ա կնալիս, քոսեն քաշ տալիս, տնիս գետեն կողքը, տսնալիս ա, քոսան մըծ քունուվ ա եկած, զուրթունալիս չի: Վընուք մի քանե քացե թխիս ա փորեն՝ քոսան վխեցած եր ա թռիս, նստիս:

Կեծակը ասալ ա.- Քոսա, գիդաց, իս Կիծիքարեն կուճի ախպերնմ: Դու հինչ օյին դիրածս լալ իմ ախպուրը գյլխեն, իս եկալմ աջալը հանալ: Մհեգ քի նիյմ գիծիս գետը, որ ինձանե պրծնս, վերչին դվանը ալ Աստուծ արի:

Ըսիս ա Կեծակը, մհետ ալ քոսի գյլխեն գյոլիս, թոլ ըրիս, նի գիծիս գետը:

Գետը քոսին խղդիս ա, քշիս, տնիլիս:

Կեծակը գետեն կողքեն նանե ետ ա դըռնալիս, գյոլիս մի ջվալ դիրիս գյլխը տակեն, խըղըճը հանգիստ քոն ինիս: Լուսբեցեն եր ա կնալիս, տըսնալիս հեն ա՝ խանմը եր ա կացած, ծափ ա տալիս, համ ալ պար գյոլիս:

- Խանմ, հի՞նչ ա պդահած, որ իտի ուլխացածս, ծափս տալիս, պար գյոլիս:

- Խի՞ վեչ ուլխանամ: Հինչքան մուռ քի լալ քոսեն երե, էրկու էնքան ալ ինձ լալ: Իմ հար քոսեն փող լալ պարտք: Վախտը թմամալ ա, կրեցա չի պարտըքը փակի, քոսեն կնեգմ դռած լալ: Իս ալ ջահիլ աղչիգմ լալ: Այտս անհամենջը եկալ ա, ինձ տարալ պարտքեն տեղը: Դե, մհեգ հինչ ասմ, Կեծակ ջան,- խոսքը առաչ տնիլավ ասալ ա խանմը,- քոսեն նանե դու ալս պրծալ, իս՝ ալ: Դու վալ ջահիլ, իս ալ ջահիլ: Դու դըռ աղա, իս ալ դըռնմ խանմ, ետ դըռննք գիննք մըր տունը, դըրքեն տըրեթուն արնք, մըզ հետե ապրնք:

Կեծակը խնմեն խելունք խոսքը ընթունալ ա: Ետն դըռալ, գենցալ տոն:

Կեծակը այտս գենցալ ա իրան մոր նա ախպուրն ալ բերալ, տընվըրվալ, քոսեն իլած, չիլածեն տար կացալ, գյանք արալ:

4 (29). ՀԱԼԱԼ ԿԹՆԱԿԵՐԸ

Կասի՝ միետ էրկու մարթ հնգերն դըռալ, նպատակ դիրալ, առուտոր արն, հրուստանան, թաջր դըռնան:

Դե, բախտու բեն ա, Աստված հաջողութուն ա տվալ, մի վախտ անց էտ մարթիքը էն հաջողութունն ունեցալ, որ ալ ըտուց իլած փողեն հաշիվ չի լալ: էտ վախտըրըն ալ օրենք լալ. հինչ մարթու փողեն որ հաշիվ չի լալ հնիս, թաքավերը էտ մարթեն գիրիս լալ թաջրնուն դավթարմը, կտրեն ալ բեյրաղ լալ վընը ըրիլիս:

Մի օր էրկու հնգեր մասլահաթն ըրիս, բուժունվիս, որ օմեն մարթ իրան հախ, հաշիվը գիդա:

Հնգրոնացը միներն էրկու տղա յա հնիս: Միներն ալ՝ մի թաք աղջիկ:

էրկու տղա ունեցողեն կնեգը մռնիս ա: Կնգանը հետե էնքան լեց ա հնիս, որ աշկիրը ջոխտավ քուռունալիս ա: Բիրիս ա մըծ տղեն փսկիլիս, որ տան-տեղեն տրեթուն անի, հվաքի իրար երե, թողի վեչ տոնը ցրըվ գյո:

Հառհնը հարամ կթնակեր ա դուս գյոլիս: Մի վախտ որ անց ա կնալիս, իրեսու վընն ա կնալիս, ըսիս ա.- Իս ոչ քոռ պահուղմ, ոչ ալ՝ եթիմ խոխա: Հնձ ապրիլ ա պետքի,- ըսիս ա, ասածն ալ՝ ըրիլիս:

Իրան հինչ որ պետքն ա, մարթեն նհետ եր ա ունիս, գինիս մի օրեշ քաղաքմ ըպրիլիս:

Քուռացած թաջրեն հնգերը մի օր քյուչավը գինիս տեղը, տսնալիս ա դիվանեն մարթիքը հվաքվածն հնգորը տանը ըռշկին: Հրցրիս ա, թա.- էս հի՞նչ խաբար ա, հի՞նչն ըրիլիս:

Ըսիսն, որ էս թաջրը կոտր ա հնգյած իրք տարի ա, որ թաքավերեն հարկը տալիս չի, թաքավերն ալ հոքմ ա տված, անմը թաջրներեն դավթարից հանի, բեյրաղն ալ կտըրեն նանե վեր բերնի:

Թաջրը իրան հնգորը իրք տարվա պարտքը տալիս ա, համ ալ ըսիլիս.- Իս քանե սաղմ, բեյրաղը էս կտրեն նանե վեր չի բերվի: Օմեն տարե թաքավերեն հարկը կգյոք հնձանե կօզեք:

Դիվանեն մարթիք գինիսն, թաջրը նի ա մտիս հնգորը տոնը, տըսնալիս հի՞նչ՝ քասիբեթուն, իլած-չիլածն ալ եխտու մաչեն կորած, անտերութուն:

Գինիս ա մի պառավ կնեգ բիրիս, ղալիճ փող տալիս, որ՝ էս տոնը, մարթեն, խուխեն թամուզ սորուն կպահս, որ եկուղը տըսնի տեղս մարթ ա ըպրիս, տոն ա: Իս ալ քի էնքան փող կտամ, որ խանումու նման կապրս: Վերչին օրն ալ քու գյլխեն հալալ տղու նման վըննը կկենամ:

Կուճի տղուն ալ վարժատոն գինիլու վախտն ա ինիս: Մի վարժապետու փող ա տալիս, որ խուխեն գիրիլ, ճինջիլ սվրցնի:

Մի վախտ անց ա կնալիս, թաջրը գյոլիս ա տըսնալիս՝ պառավը օմեն հինչ տեղը-տեղեն սարքած ա: Տղան ալ շատ սորոն հուշիյար ա, դասրը սըվըրիս ա, հունչոր որ պետքն ա:

Մի վախտ ալ որ անց ա կնալիս, թաջըրը հնգորը տղեն տնիս ա իրան մաղազինը, առուտոր արիլը սվրցրիլիս: Թաջրը տըսնալիս ա, որ հնգորը տղան շատ ըշկաբեց, հուշիյար ա, մի օր բիրիս ա հարուր թիման փող ա տալիս, ըսիս ա.- Տար առուտոր արի, տըսնմ կկա՞րս էս հարուր թիմանը էրկու հարուր թիման շինս, թա կտանս կկուրցնս:

Մի վախտ անց ա կնալիս: Մի օր տղան գյոլիս ա թաջրեն կոշտը, փողը նշանց տալիս, որ հարուր թիմանը հազար թիման ա շինած: Թաջրը տսնալիս ա տղան խըլքը գյլխեն տղա յա, բիրիս ա մի դուքան ա բինալիս, ղալին ալ ապրանք տալիս, որ՝ քի հետե առուտոր արի, ապրի:

Դե աշխարիք ա, տարեն-տարուն երե շոռ ա գյոլիս: Տղան հորը տեղը պիհս ա: Թաքավերից թաջրա հոքմ ա ըստընալիս: Թազա շինութուն ա սրքիս, բեյրաղը կտըրեն վընը ըրիս, գյոլիս հորը հնգեր թաջրեն կոշտը, օմեն հինչ նաղլը ըրիս, համ ալ խնթրիս ա, որ հորը հետե, իրան հետե հինչքան փող ա ծախսած, հաշիվ արի, ինքը պարտքը փակի:

Տղան հոր պարտքը փկիլեն ետը, խյալ ա ըրիս, որ փսակվի տոն դըռնի: Գինիս ա մի շատ թինգյանուց մտանե ա սարքիլ տալիս, դիրիս ջուբոմը:

Տղան մհետ հորը հնգեր թաջրեն ախչգյանը տըսած ա ինիս: Մի օր թաջըրեն շինութունեն կուշտավը գինիս տեղը, տըսնալիս ա, որ թաջրեն ախչիգը հաքած, կապած նայե երկրորդ հարկեն, փանջարոմը նստած, նայե մի կուտուրու երե ըսըղավ նաղշ ա ըրիս:

Տղան ջուբեն նանե մտանեն դուս ա ունիս շպրտիս՝ նի ա ինգիս ըղչգյանը գյուրգը: Մտանեն ինդի շափաղ ա տալիս, որ աղչիգը աշկրը փկիս ա: Աղչիգը դեչանը աշկրը բենալը, տղան անց ա կնալիս, գինիս:

Ըրակունը թաջրը որ գյոլիս ա տոն, աղչիգը մտանուն նաղլը ըրիլիս ա: Թաջրը պատառ խիյալ-խիյալ ա ըրիս, որոշիս, որ ղարիբ մարթը իտի բեն արի չի: Կա, չկա, էտ իրան հինգեր թաջրեն տղեն բենն ա: Էքսի օրը մարթ ա ղուրկիս, տղեն կնչիս իրան տոնը: Տղան գյոլիս ա թաջրեն տոնը: Նստիսն, պատառ դեսեն-դենեն խուսիլիս, իրաց հետե ծծղիս, ուտիս, խմիս:

Թաջրը խոսք ա գիծիս, տղեն ըսիս.- Սորուն ապրուստ ա սարքած, տոն-տեղ դիրած, հասած հորտ առաչվա փառքեն: Դու ալ հասած-փիսած տղամարթս դըռած: Ասի գիդամ, հինչո՞ւ հետե չըս փսակվմ:

Տղան գյուղոխը կախ ա գիծիս, պատառ խիյալ ըրիս, ըսիլիս.- Միեգ այամը շատ ա փիսացած: Աշխարհը լցված ա հարամ կթնկերով: Հալալ կթնակեր շատ խրեգ ա ծրվիլիս: Մըր պապական խոսքը ըսիս ա. «Օղծեն կծած մարթը չալ չաթվեն նաեե կվախե»[6]: Ղորմացիգի իմ մար որ մըռալ ա, իմ հար բերալ ա մըծ ախպուրս փսակալ, որ համ իրան պահի, համ ալ տոնը տրեթուն արի, իլած-չիլածը թողի վեչ ցըրըվ գյո: Հառնը հարամ կթնակեր ա դուս եկալ: Հորս պահալ չի: Տան իլածն ալ հվաքալ ա, ախպուրս ալ եր կալալ անհետտ տեղավ գենցալ: Սորուն ա, որ դու քու աշկավը եկալս տըսալ:

Թաջրը ըսիս ա.- Իս խաբերմ, որ դու ըրկե մի ըղչիգյան փանջարավը մտանե յըս տված: Իս գիդալիսմ, որ քու բագյան կացած աղչիգը, լա քու սրտավ օզած հալալ կթնակեր կինի: Հորտ ալ կպահի, տոն ալ կդիրի:

Մի քանե օր անց ա կնալիս, տղան թաջրեն ըղչգանը նհետ փսկվիս ա:

Ղուրթավ աղչիգը հալալ կթնակեր ա դուս գյոլիս: Քուռացած թաջրեն խուխու նման պիս ա: Օմեն թամոզեթուն ըրիս ա: Տղան օմեն օր բինի տեղե որ գյոլիս լալ, առաչ նի լալ մտիս հորը օթախը, քեփը, հալը, թիմիզեթունը հրցրիս, նոր նստիս հացը ուտիլիս:

Մի օր ալ տղան գյոլիս ա տըսնալիս, որ հարը լեց ա ինած: Կնգանը նաեե հրցրիս ա: Կնեգը մնալիս ա զարմացած, ըսիս ա.- Իս խաբեր չըմ:

Հարը տղեն սասը որ լսիս ա, ըսիս ա.- Հառհնը բենե խաբեր չի, իսմ լեց ինած: Պատճառը էն ա, որ ասօր քու ախպերտ մուրացկան դըռած, եկալ ա, մզանե փայ օզալ: Սըրտս դըմացալ չի, լեցմ ինալ:

- Պա դու հի՞նդաս իմ ախպեր լալ:

- Սասեն երե յըմ ճնչեցալ,- ասալ ա հարը,- մի մարթ հիցուն տարուն ետն ալ որ սասեն երե իրան զավակեն ճնաչի վեչ, ուրեմն էտ զավակեն հալալ հար չի:

- Դե կանչիլս լալ տոն, իս ալ գյոլում լալ գաղտնիքը պարզինք լալ,- ասալ ա տղան:

- Հառհնը որ տարալ ա փայ տալու, ասալմ ասի, որ էքուց ալ գյո: Դու էքուց տոն մնա, հալբաթ կգյո:

[6] Օձից խայթվածը գույնզգույն պարանից կվախենա (ծաս. բաս.):

Էքսի օրը տղան գենցա չի բեն: Կեսօրեն մոտ, մինը դուրքը թակալ ա: Տղան գենցալ ա տըսալ եխտմ-լըլմ, քյոհնա շուրերու մաչե կորած մի մարթ ա: Կուռանը փռնալ ա բերալ տոն, ասալ.- Խնթրիսմ նաղլ արս, գիդամ դու հո՞վս:

Մուրացկանը իրան գյլխավը անցածը դուզբադուղ մինի-մինի նաղլ ա արալ: Տղեցե հարը փարդեն ետքեն նստած լսիս լալ, համ ալ լեց ինիլիս:

Տղան մուրացկանեն ասալ ա.- Միեգ մի մարթու նշանց տամ կարող ա ճնաչես:

Ասալ ա, փարդան ետ քաշալ: Մուրացկանը սհաթտա ճնեչալ ա հորը, գենցալ ա, նի ինգյալ խտետը, ինքն ալ լեց ինալ:

Տղան տըսալ ա, որ իրան հալալ ախպերն ա, տարալ ա համամ, լղցրալ, գեցեն շորրը դեն գիծալ, իրան ամենաթինգյանուց շորրը գեց տվալ: Իրանը գյորա մի հալալ կթնակեր աղչիգ ճարալ, իրք օր, իրք քիշեր հրսանեք արալ: Իրան շինոթունուն կեսն ալ տվալ ախպուրը: Իրան մաղազինմն ալ սորուն աշխադանք տըվալ: Էս օմենը հալալ կթնակեր մարթիք տըսալն, ուլխացալ, կուճի ախպուր արարմունքը նաղլը շինալ, աշխարքավը մին տարածալ:

Հարամ կթնակեր, հարամզադա մարթիք ալ տըսալն, լսալն, զարմացալ, խայինթունից փքվալ, օռռալ, տրաքալ, ըշխարքեն իրեսեն նանե չքվալ, վերացալ:

5 (30). ՅԱՄԱՆ ԿՆԵԳԸ

Աստված ամեն մի մարթու թող հըռե պահի յաման կնգան նանե:

Մարթեն կնեգը որ յաման ինի՝ էն մարթեն օրը սըվ կինի, գյանքը՝ տխուր: Ըշխարքմս օմեն հինչեն ճար կինի, օմեն հինչից պրծնում, համա դե, յաման կընգանը՝ ոչ ճար կինի, ոչ ալ պրծում[7]:

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի յաման կնեգ լալ, անմը Մալագ: Էտ Մալագ էնքան յաման լալ, որ ոչ մարթեն նհետ լալ յոլա գինիս, ոչ խուխենց նհետ, ոչ ալ մի պարիկամա, հըրվանա նհետ: Տարեն տրսներկու ամեսն ալ կռվու մաչե լալ:

Խըղճ մարթը սորուն ալ լալ ըրիս՝ հավան չի լալ կնալիս: Շատ ալ լաց ըրիս դժգոհիս լալ, սուս ալ լալ ըրիս՝ ալլա երե խոսիս լալ:

[7] Հեքիաթը այսպես էր սկսում Մարտիրոս Բադալյանը (ծան. բանահավաքի):

Մարթը ամոթու, ճարը կտրած, քշանաց՝ տափը մթեն, գինիլ լա բեն, տափը մթեն ալ՝ գյոլ տոն, որ ոչ մի հնգեր, հրվանու իրս տըսնի վեչ, խաջալաթ քաշի:

Էտ մարթեն մի արտ լալ: Մի գյորունք արտը վըրիս տեղը տըսնալիս ա՝ արտեն կողքեն մի բաբաթ տափակ քար կա: Հանց ա կասս էտ քարը մարթու ձեռքավ տաշցած ինի: Քարը բիցրիցրիս ա, յիշիս տսնալիս՝ քարեն տակը մի շատ խոր, դերտագ վըր ա: Մի բեն խիյալ ա ըրիս, ալլա քարը դիրիս իրան տեղը, թուղիս գինիս տոն:

Յաման կնեգը էտ ըրակունը տըսնալիս ա, որ մարթը շատ օրախ ա: Հրցրիս ա, թա.- Հի՞նչ ա պդահած, որ արտեն նհետ էտքան օրախս եկած:

Մարթը ըսիս ա.- Ա կնեգ, ասի՞ չըս ասօր արտեն կողքեն մի վըրմ ճարած, մաչը լիգը վըսկեղեն: Քշանաց շատ շուդով, տափը մթեն, որ ոչ մի հըրևան գիդա վեչ, իս նա դու պետք ա գինընք, հվաքընք, բերընք:

Մարթեն ըսածեն երե կնեգը շատ ա ուլխնալիս: Ալ թուղիս չի, որ մարթը քոն ինի, ըսիս ա.- Քանե շուդ ա, պրծեր, գինընք բերընք: Քանե օրեշ մարթ գիդացած չի:

Մարթը եր ա կնալիս, խուրջունը գիծիս օսսուքը, մի քող ալ եր ունիս, կնգանը նհետ հղե ինգիս, գինիս դիբի արտը: Լուսըբեցեն տեղն հսնիլիս: Մարթը բիրիս ա, որ քողը մաշկավը կապի, նի մտնի վըրը, կնեգը թուղիս չի, թա.- Դու բեն-մեն կթողս մաչեն: Իս նի մտընմ վըրը, որ հիչ կա՝ թամմուզ հանմ:

Մարթը մթկոմը ըսիս ա. «Լա իմ փուրացավն ալ էն ա՝ դու նի մտըս վըրը»:

Կնեգը քողը կպիս ա: Մարթը կախ ա տալիս վըրեն մաչը:

Կնեգը վըրեն տակեն նհետ սաս ա ըրիս.- Ա մարթ,, պա տեղս վըսկեղեն չըմ ճրիլիս, ոչ մի բեն կա վչնի:

Մարթը եռնոց ըսիս ա.- Դու ոչ մի բեն ճրիս չըս: Համա իս մըծ բենմ ճարալ՝ քիանե պրծալմ, հոքիս ազադալ:

Ըսիս ա, քարը դիրիս վըրեն բիրանեն երե, թուղիս, գինիլիս:

Դե վահդա յա, գյոլիս ա ամռնը: Շինացե մարթը գինիս ա արտը հնծիս: Յաման կնեգը մընն ա ինգիս: Խղճալիս ա, ըսիս ա. գինմ եշմ, տըսնամ սա՞ղ ա, մըռա՞ծ ա, կան նի, կավչնի:

Գինիս ա վըրեն ըռխեն դիրած քարը եր ունիս, տըսնալիս հի՞նչ՝ մի սըվ նախկա օղնը փաթե յա կնալիս, որ վըրեն նաևե դուս գյո: Մարթը էտ որ տսնալիս ա, ինդի ա գիդալիս, որ իրան կնեգն ա սըվ նախկա դըռած: Ուզիս ա, որ քարը վեր գիծի, փախչի:

Նախկան մարթա նման լուզի ա ունիս, շինացուն ըսլիս.- Ինծանե դու վախը մա: Եք քյոմագ արի էս վըրեն նանե դուս գյոմ: Քի շատ լավեթուն կարմ:

Շինացեն ետ ա դըռնալիս, գինիս քարը բիցիրցինիս, նախկա օղծը դուս ա գյոլիս, ըսիս.- Իս հարուր տարե լալ էս վըրմը ինծ հետե հանգիստ ըպրիսմ լալ: Մի քանե ամես առաչ մի յաման կնեգ եկալ ա, նի մըտալ իմ վըրը: Ինծ ինդի նադինջեթուն ա տվալ, որ ըստիպվածմ իլալ իմ հարուր տարվա բունս թողմ, փախչմ: Դու որ էս լավեթունը արալս, ինծ վըրեն նանե դուս բերալ, յաման կնգան ծեռքեն նանե ազադալ, պետք յա քի մի լավեթուն արմ: Գիննականմ էս երգիրեն թաքավերեն ըղչիգյանը փթաթավմ: Հինչ ալ որ արն, ըղչիգյանը բեց չըմ թուղլական: Դու կգյոս կասս որ՝ իս օղծերեն թաքավերնմ, կարուղմ աղչիգը օղծեն նանե ազադիլ: Դու որ նի մտս ըղչիգյանը պալատը, իս ըղչիգյանը կթողմ, կգինմ: Թաքավերը քի մըծ հարուստեթուն կտա, կգինս սորուն կապրս: Համա դե մտետ պահի: Տեղեն նհետ գիննականմ մի օրեշ թաքավերու ըղչիգյան փաթաթվմ: Քու անմը գիդիլականն գյոն ղանչաք արն, որ գյոս ըղչիգյանը ազադս: Գյոս վեչ: Ալ քի լսիս չըմ:

Նախկա օղծը էսքանը ըսիս ա, հղե ինգիս, գինիլիս:

Շինացեն ալ գյոլիս ա տոն, իրան բենեն կնալիս, խիյալ-խիյալ ըրիս, թա իրան կնեգը հինչ յամանն ա, որ սըվ օղծը իրան տոնը թողալ ա փախալ:

Մի քանե օր անց.ա կնալիս, սաղ երգիրը սաս ա ինգիս, որ մի սըվ նախկա օղծը գենցած ա փթաթված թաքավերեն ըղչիգյանը, ձեռք չի քշիս: Թաքավերը ասսծ ա՝ հու մի ճար արի, աղչիգս ազադի օղծեն նանե, թաքավերութունես կեսը կտամ իրան:

Մալագե մարթը գինիս ա պատառ փող ա պարտք ըրիս, թաքավերական շորր ա կարիլ տալիս, գինալիս: Մի ծի ալ ա ունիս եռ ինիս, գինիս հսնիս երգիրեն թաքավերեն պալատը, ըսիս.- Իս օղծերեն թաքավերնմ, ինծ տարեք ըղչգյանը պալատը, օղծեն հղե դիրմ, գինի:

Մալագե մարթը նի ա մտիս թաքավերեն ըղչիգյանը պալատը, նախկան սուս-փուս ըղչիգյանը թուղիս ա, պալատեն նանե դուս գյոլիս: Թաքավերը, վազիրնեն, հվաքված ժողովուրթը մնալիսն զարմացած:

Թաքավերը Մալագե մարթեն խընթրիս ա, որ մնա իրան պլատմը, ախպուր նման միասին ապրն: Մալագե մարթը ըսիս ա, որ իրան տոն օնի, տեղ օնի, խոխենք օնի, պարիկամ, հնգեր հրևան օնի, էտ օմենը թողած

կարի չի գյո թաքավերեն պալատմը ապրի: Շունուրհակալ ա թաքավերեն հարգանքի հետե:

Թաքավերը ըսիս ա.- Պա քու լավութունեն գինը հի՞նչ ա:

Մալագե մարթը ըսիս ա.- Թաքավերը իրան սրտեն հինչ որ կամենա, ինքը ըռազի կինի:

Թաքավերը բիրիս ա օխտը ձի, օխտը ջորե վըսկեղեն, արծաթեղեն, օրեշ հարուստութուն բիռնիս ա, օխտը նոքար ալ հնգեր ա տալիս Մալագե մարթեն, տնիսն, տեղ հսցրիլիս:

Մալագե մարթը թաքավերեն տված հարուստութունավը բիրիս ա պալատնե յա սրքիս, թաքավերական ապրուստ սրքիս, իրան խոխենցը նհետ գյանք ըրիլիս:

Մի օր ալ Մալագե մարթը տըսնալիս ա օխտը ձիավ նազիր-վազիր մարթինք եկալն, իրան դրքեն վեր եկալ:

Եկողնեն խաբարն տալիս, որ իրանք հըրևան երգիրի թաքավերեն նազիր-վազիրնեննն: Մի սըվ նախկա օղձ եկած ա փթաթված իրաց թաքավերեն ըղչիգյանը: Ոչ մի ճար, իլլաջ կավիչնի: Խաբերն կալած, որ իտի մի օղձ ալ փթաթված լալ ձեր թաքավերեն ըղչիգյանը, դուվս ազատած: Միեգ մըր թաքավերը մըզ ղորկած ա, որ քի տաննք, մի ճար արըս:

Մալագե մարթը օղձեն նհետ իրաց պայմանը գյորա վխիս ա խոսք տա: Չեմ-չում ա ըրիս: Դըռնալիս չի: Վերջը մի բեն ա խյալ ըրիս, եր կնալիս շորրը գինալիս, եռ հնիս ձիայնը, նազիր-վազիրնան նհետ գինիս:

Նախկա օղձը Մալագե մարթեն որ տըսնալիս ա, կզնվիս ա, փշշացրիլավ ըսիլիս.- Հի՞նչ ա: Խե՞ յըս եկած: Դու մըր պայմանը մռացածս: Կարո՞ւղ ա էն թաքավերը քի ապրուստ չի տված:

Մալագե մարթը ըսիս ա.- Մըր պայմանը մտես ա: էն թաքավերն ալ սորուն ապրուստ ա տվալ: Իմ գյուլը օրեշ նպատակ օնի: Իս եկածմ նախկեն երկար, ազատ գյանքի հետե:

- Հի՞նչ ա դըռած,- հրցրիս ա նախկան:

Մալագե մարթը ըսիս ա.- Գիդալիս չըմ հունչուր ա դըռած, քու հորեն բերանը բեցածն, էն յաման կնեգը դուս ա եկած, քու հետետ շոռ ա գյուլիս: Լսած ա, որ նայես տեղս: Ասօր որ հասնի վեչ, քշանաց տեղս կինի: Էտ խաբերը իս գիդալավ, քու արած լավութունետ հետե, եռըմ ինալ ձհանս, եկալ, որ քի խաբեր տամ, քանե ինքը տեղ չի հասած, քի ճարած, որ դու քու գյլխեն ճարը տըսնս, տեղես նանե հռանաս:

Մալագե մարթեն ասածենը նախկան հվտալիս ա: Սհաթտա թաքավերեն ըղչիգյանը թուղիս ա, գյուլոխ եր ունիս, գինիս կուրչիս:

Թաքավերը մըծ պադիվ ա տալիս Մալագե մարթեն: Էն մին թաքավերեն նման բիրիս ա օխտը ծի, օխտը ջորե վըսկեղեն, արծաթեղեն, շատ հարուստութուն բիռնիս, օխտը նոքար ալ հնգեր տալիս, սաղ-սալամաթ տնիսն տեղ հսցրիս:

Մալագե մարթը էտ հարուստութունավ մըծ ապրուստ ա սարքմ դեչանը իրան օխտը պոռտեն հետե, առոք-փառոք ըպրիլիս: Ոչ մի օր ալ Մալագե մըննն չի բիրիս:

Ըսիսն, որ Մալագ ալ դեչանը ասօր հղե յա յիշիս, որ մարթը վերչը կխղճա, կգինի իրան հորեն նանե դուս կօնի, կտանի:

Սըվ նախկա օղծն ալ, ըսիսն, որ դեչանը ասօր հալա փխչիս ա, որ նորից յաման կնգա՝ Մալագե մետ ալ ձեռքը վեչ հնգի:

6 (31). ԳՅԼԽՑԱՎԵՆ ճԱՐԸ

Մի մըծ քաղաքմ, անմավր մի հաքիմու տան մի հիլիվր մարթ պահակ լալ ըշխդիս: Հիլիվր մարթեն բեննն էն լալ, որ սաղ օրը հաքիմեն տանը՝ դիրբզին ըռշկին նստի, եկուղ, գենցուղ մարթկանց ջուղաբ տա, թա հաքիմը տան ա, տան չի, հիբ տանը կինի: Պարապ վախտըն ալ եր լալ կնալիս դիրքը-վարքը սիրբիս, տան ըռշկին կուճի բաղ լալ, ծառ-ծաղեգնեն ջիրիս, բիջիրիս, օրը մթնցրիլիս:

Պահակ հիլիվրը ըշխարքմը օմեն հինչ տըսած լալ, օմեն հինչ իլած լալ, օմեն հինչ ալ կուրցրած լալ: Մանցած լալ ման-մանակ ինքը: Հաքիմեն տան դարբազեն եթկեն մի կուճի հոլիգն լալ սարքած: էտ ալ պահակ հիլիվերեն տոնն լալ: Քիշերներն ալ տեղտ լալ կնալիս:

Մետ, մի քիշերվա կեսեն հաքիմեն դարբազան թկիսն: Պահակ հիլիվրը եր ա կնալիս դուրքը բինալիս: Տըսնալիս ա՝ թաքավերեն վազիրնեննն: Հրցրիսն.- Հաքիմը տա՞ն ա:

Պահակը ըսիս ա.- Հա, տաննն ա:

Էրկու հուգի գինիսն հաքիմեն կոշտը: Մինը մնալիս ա պահակեն կուշտեն:

Պահակը հրցրիս ա.- Վազիրը ապրած կենա, հի՞նչ ա պդահած, որ էս կես քիշերեն եկած եք հաքիմեն հետեն, տա Աստված պարին կադարվի:

Վազիրը ըսիս ա.- Թաքավերեն գյլխացավ օնի: Պալատեն հաքիմնեն կրիս չըն մի ճար աննն, որ թաքավերեն գյլխացավը կտրի: Մեեգ թաքավերը հոքմ ա արած, որ երգիրմը հինչքան հաքիմ կա, հվաքն օխտը օր մոհլաթ տան: Թա կրեցալն մի ճար արն թաքավերեն գյլխացավը կտրի, ում-

նոց մըծ անամ ա տլական: Թա կարն վեչ, ումնաց գլխնեն կտրիլ ա տլական՝ հաքիմնեն վերացնի:

Վազիրնեն հաքիմեն բիրիսն, որ տանն: Պահակը իրան քուշտեն մանցած վազիրեն ըսիս ա.- Իս քի մի բեն խնթրըմ, կարս:

- Ասի, տըսնամ,- ըսիս ա վազիրը:

- Բեն ա, հաքիմնեն որ կարն վեչ մի ծար արիլ թաքավերեն գյլխացավեն հետե, խնթրիսմ թաքավերեն իմ հետե տեղյակ պահեք, թա թուլ կտա, եկեք ինձ ալ տարեք:

- Աշկես երե,- ըսիս ա վազիրը, գինիլիս:

Իրք օր, իրք քիշերմ սաղ երգիրեն հաքիմնեն հվիքիսն, բիրիլիս: Օմենը մի տեղ գյուլոխ-գյլխավն տալիս, խըլք-խըլքու, հարուր մի տեսակ ծարն սրքիս: Ոչ մինը թաքավերեն գյլխացավեն օքութ չի տալիս:

Մի օր ա ինիս մանցած, որ թաքավերեն հոքմեն վախտը թմամի, վազիրեն մըտն ա գյոլիս, որ հաքիմեն պահակը իրան բեն ա թափշուր արած: Գինիս ա, թաքավերեն խաբար տալիս: Թաքավերը ըսիս ա՝ գենցեք, բերեք:

Մարթ ա, որ օքուտ տա վեչ, վնաս ալ չի տա:

Պահակեն գեցեն կրկտոտած, քյոհնա շորր ա ինիս: Վազիրնեն ըսիսն.- Թաքավերը քի կանչած ա: Եր կաց շորրտ փոխի, գիննք թաքավերեն կոշտը:

Պահակը ըսիս ա.- Իմ իլած-չիլած շորրս լա էս ա, որ գեցես ա: Հինչ թահրը թազա շոր ալ որ բերեք, իս իմ գեցեն շորրը փոխի չմ: Մինչա թաքավերական մի փառաջա բերեք գենմ, իմ շորրը ծածկվի, տըսնն վեչ, գյոմ, գիննք:

Վազիրնեն պահակեն խնթրիսն, որ եք տանընք համամ, թաքավերական թազա շորր գեց տանք, տաննք:

Պահակը ըսիս ա.- Իս թաքավերոթուն ալմ տըսած, թաքավերական շորր ալ, համամ ալ: Եկեք մընք ալ գյլխացավանք վեչ սարքնք: Բերեք մի փառաջա տվեցեք ինձ՝ շոռ օնմ, գիննք: Իմ հաքիմութունը էս շուրերեն մաչեն ա:

Բիրիսն մի փառաջա տալիս պահակեն: Պահակը փառաջան գինալիս ա, գինիս թաքավերեն կողքեն նստիս, ըսիլիս.- Թաքավերը ապրած կենա, քու գյլխըցավեն ծարը իսմ ըրլական: Խընթրիսմ հոքմը տաս՝ էս հվաքված հաքիմնեն ցըրվն, գինն իրաց տները:

Թաքավերը հոքմ ա տալիս, օմեն հաքիմնեն թուղիսն, գինիս, զարմացած, թա՝ էս հինչ հաքիմ ա, որ թաքավերեն գյլխըցավեն ծար ա ըրլական:

Հաքիմնեն որ ցրվիսն, գինիս, պահակը պալատը ղեկավարուղ վազիրեն ըսիս ա.- Գինի մի հերենջ մորթիլ տոր, թաքավերական ճաշտ իփիլ տոր, քյոհնա գինիներավ սուփրա բեց: Կանչի՛ բեր ծեր թառ-քյամանչա ըծղնուն: Ուլխացնող-ծծղցնող մութրոբնուն, մի խոսքավ ինդի մի քեփուրախութուն, որ թաքավերը հալա տըսած վեչ ինի:

Հաքիմ դըռած պահակեն ասածեն նման թաքավերական սուփրա յըն բինալիս: Չըտըսնված ուտելեղեն, գինի, ծարսզեղենն բիրիս: Ուտիսն, խմիսն, նվգիսն, պարն գյուլիս, մութրոբնեն օյիննե յըն դուս բիրիս, ծծղցըրիլիս: Քեփեն թունդ վախտը թաքավերն ալ օմեն հինչ մռացած ըսկսիս ա ուլխանալ, ծափ տալ ծծաղիլ: Էտ մոմենդեն պահակը բերանը մուտցրիս ա թաքավերեն ընջուկեն ըսիլիս.- Հը՞, ալլա ցվիս ա, թա անցած ա:

Թաքավերը ըսիս ա.- Հաքիմը ապրած կենա, հինչ գյլխացավ, հինչ բեն, հանց ա կասս, մորից նոր ծնված ինմ:

Հաքիմը վազիրեն ըսիս ա.- Թաքավերեն գյլխացավը անցած ա: Օմեն հինչ հվքեցեք, վերջացրեցեք: Թաքավերեն տեղաշորը սրքեցեք, քոն ինի:

Մի քանի օրեն ետը, էտ մըծ քեփեն թողած ուրախութունեն ազդեցութունը որ անց ա կնալիս, թաքավերը հաքիմեն կնչիս ա կոշտը, գենգյատ ըրիլիս, որ ալլա գյուլոխս ցվիս ա:

Հաքիմը կնչիս ա վազիրեն, որ ալլա կերուխոմի, քեփ-ծծաղի սեղան բենի: Օմեն հինչ կադարվմ ա առաչվա նման, ալլա քեփեն թունդ վախտը, որ թաքավերը օմեն հինչ մռացած ուլխնալիս, ծափ ա տալիս, ծծղալիս, հաքիմը բերանը մուտուցրիս ա թաքավերեն ընջուկեն, հրցրիլիս.- Թաքավերն ապրած կենա, գյլխացավ օ՞նս, թա վերացած ա:

- Հինչ գյլխացավ, հինչ բեն,- ըսիս ա թաքավերը,- մորից նոր ծնվածմ դըռած:

Միետ, հենգ հետ, տաս հետ, քսան հետ: Թաքավերն ըսիս ա գյուլոխս ցվիս ա, հաքիմը ըսիս ա՝ թաքավերական սուփրա բեցեք, կեր-խոմ արնք:

Թաքավերը միետ ալ խյալ ա ըրիս, տսնալիս սուփրա բինալավ, կերուխումավ, քեփ նա սազանդարավ, օրը օրեն երե կարասնեն, ամբարնեն դրտակվմն: Հերինջնեն պկասվմն: Խազինոմը փող չի մնալիս: Համա դե գյլխացավն ալ մնալիս ա համան գյլխացավը, համան գյլխացավը:

Մի քեփու թունդ վախտը, էս դոնում ալ թաքավերն ա բերանը մուտուցրիս հաքիմեն անջուկեն ըսիս.- Հաքիմը ապրած կենա, ըստութունավ որ շարունակվի, հի՞բ ա մշտական իմ գյլխեն ցավը կտրլական:

Հաքիմը ծծղիս ա, ըսիլիս.- Թաքավերը ապրած կենա, քու գյլխացավը էն վախտը մշտական անց կկենա, հիբ որ դու ալ գյոս հասնս ինձ,- ըսիս

ա, թաքավերական փառաջան հնիս, իրան քյոհնա, ճրղոտված, կրկտոտած շուրերավը վըտ կնալիս թաքավերեն ըռշկին:

Թաքավերը յիշիս ա, մնալիս զարմացած: Ըշկերեն հվտալիս չի: Խոսք չի ճրիս որ մի բեն հրցնի:

Հաքիմը խոսքը շարունակիս ա, ըսիլիս.- Մի վախտ իս ալմ լալ քի նման մըծ թաքավեր: Մի մարթ որ նստիս ա առողջ գյլխավ իրան տանը ի-լած-չիլածեն հետե խիյալ ըրիս, գյուլոխը ցվիս ա: Դու թաքավերս, ամբողջ երգիրեն պակասեթունը, ժողովրթեն հանգիստ պահիլը, դուշման թաքավերնուն նհետ գյուլոխ դիրիլը, օմենը-օմենը ծնդրացածն քու էտ գյլխեն երե: Իս ալ մի վախտ որ թաքավերմ լալ, իմ ալ գյոլոխս քիշեր-ցիրկ ցվիս լալ: Հասալմ էս օրեն, օմեն հինչ թողալ, հռացալ, գենցալ մի հաքիմու տան պահակ դըռալ: Իմ գյլխացավը մշտական հռացած ա: Գյլխացավ չօնմ: Միեգ քու ըռշկին էրկու հղե կա: Առաչինը՝ թա ուզիսս մշտական գյլխըցավից ազադվս, պետք ա իմ նման օմեն հինչ թողս, գյոս ինձ նման պահակ դըռնս: Ըրկումինջինը՝ թա պահակ դըռնիլ, գյլխացավանքից ազադվիլ ուզիս չըս, ուզիսս թաքավեր մնալ, հաստատ գիդաց, որ ըշխարքմս կարի չըս ճարի մի հաքիմ, որ ինդի մի ճար սարքի, որ քու գյուլոխը ցավի վեչ, գյլխացավը հնիլական ա: Գյլխացավը մնլական ա:

7 (32). ԲԱԽՏԵՆ ՇՈՌ ԵԿՈՒՂԸ

Նաղլն ըրիս, որ քյոհնա դովրիհ մի քյասիհբ մարթ լալ: էտ խըղճը հինչքան աշխադմ լալ, քիշեր-ցիրկ լալ ըրիս, որ մի ապրուստ ըստեղծի, բենը գյուլոխ չի լալ գյոլիս:

Ալլա մնալիս լալ համան քյասիհբը՝ չարչարանքի նա տանջանքի մաչեն:

Մի օր եր ա կնալիս, գհնիս իրաց շենհն դերեն կոշտը՝ իրան անհաջողության, քյասիհբության հետե գենգյատ ըրիս:

Դերը ըսիս ա.- Օրհնյալ, Աստծու կամքը քի հետե իտի ա որոշված: Օրեշ ոչ մի բեն կարի չս արի: Պետք ա հաշտվս Աստծո որոշած ճակատագրի հետ՝ քի տված բախտեն նհետ յոլա գհնս:

Քյասիհբ մարթը նղնալիս ա դերեն տված մասլահաթեն երե: Կզնվիս ա, մի էրկու հաց դիրիս միզարմը, նի կպիս մաշկը, միակը եր ունիս, մի թիրափու երե հղե ինգիս, գհնիլիս, թա պետք ա գհնմ Աստուծեն ճարմ, տըսնմ մանհն հի՞նչ ա, որ ինձ չարչարանք նա քասիհբեթուն ա տված:

Քյասիբ մարթը քշանաց քիշերավ որ հղե ա ինգիս, գինի Աստուծեն գենգյատ, լուսըբեցեն մի ծմակավ գինիս տեղը, մի գյուլ դուս ա գյուլիս հղեն կտրիս, ըսիլիս.- Փառք Աստուծեն, քշանաց շուդավ ղսմաթ ա պդահալ, ալ ուտիլու հետե չրչարվի չըմ: Էս մարթեն կոտմ, կքոշտանամ:

Մարթը ըսիս ա.- Այ գյուլ, հինաքու վախտ չի: Իս բախտս կուրցրած մարթմ: Գինիսմ Աստուծեն կոշտը գենգյատ: Եք իմ հղեն փակ մա: Դեն կաց, գինմ:

Գյուլը ըսիս ա.- Դե որ իտի ա, իս ալ Աստուծեն գենգյատ օնմ, թա իմ գենգյատն ալ Աստուծեն կասս, հղե տամ՝ գինի: Թա ասի չըս, պետք ա քի օտմ:

Մարթը ըսիս ա.- Աշկիս երե: Ասի, լսըմ:

Գյուլը ըսիս ա.- Աստուծեն կասս, որ շատ շնորհակալմ, ինձ գյուլ ըստղծիլու հետե: Դե մհեգ շատմ պռաված: Ալ կրիս չըմ վըրս արի: Ըռխոմս ալ կըռենք չկա: Փռնած հեյվանն ալ կրիս չըմ ըսպանիլ, խժռիլ: Թող յա առաչըվա օժս նա կռքնես տա, յա չէ՝ հոքիս հանի, էս տանջանքից պրծնմ:

- Շատ պարի, ալխայինն կաց, անպայման կասմ,- ըսիս ա մարթը, հղեն շարունակմ, գինիլիս:

Գինիս ա գինիս, տափը մթնած հսնիս ա մի շեն: Բախտինա մի դուրք թկիս ա, ըսիս.- Անծանոթ, ղարիբ մարթմ: Ինձ ղոնաղ կարեք:

- Ղոնաղը Աստուծեն ա,- տանը ներսից սաս ա ըրիս տնատարը:

Բախտեն շոռ էկուղ մարթը նի ա մտիս տոն: Տըսնալիս ա՝ մի քոռ մարթ նայե օջաղեն կողքեն նստած: Ինքն ալ օջախեն էն մին կողքեն ա նստիս: Ըսկսիսն տեղես-տեղեն, դեսեն-դենեն սոհբաթ արիլը:

Տնատարը որ գիդալիս ա՝ ղոնաղը գինիս ա Աստուծեն կոշտը գենգյատ, ըսիս ա.- Որ Աստուծեն ճարս, խնքրիսմ էրկու խոսք ալ ինձ հետե ասս, որ իս իմ բախտից գոհմ լալ: Հնչուր պապական խոսքն ա ըսիս, որ՝ մարթեն պետք ա ախրը պարի ինի: Համա դե իմ ախրը պարի չի դըռալ: Կնեգյս շուդ ա մըռալ: Իմ աշկրս քուռացալ ա: Մի հասած-փիսած աղչիգ օնմ, օգուղ չկա: Տոնս, տեղս, բաղ-բաղարս մանցած ա անտեր, տրեթուն արուղ չկա: Մի խոսքավ, իմ ախրը հի՞նչ ա իննական:

- Աշկես երե, կասմ, ալխայինն կաց,- ըսիս ա ղոնաղը, քոն հնիս, ալլա քշանաց շուդավ եր կնալիս, իրան հղեն շարունակիս:

Էտ օրն ալ հղե յա գինիս դեչանը տափը մթնիլը: Ալլա հսնիս ա մի շեն: Մի ղարիբ տան ղոնաղ ա ինգիս:

Տնատարը գիդալավ, որ ղոնաղը գինիս ա Աստուծեն կոշտը գենգյատ, ըսիս ա.- Խոնախա, բեն ա, բալքյա մուրազետ հսալս՝ Աստուծեն ճարալ:

Քու դարդը ըսիլեն երը, էրկու խոսք ալ ինձ հետե կասս: Իմ իլած հարուստեթոնը, իմ ապրուստեն ուռուզին մի ճղպորի ծառ ա: Ամեն տարե ըտոր տված բարիքը՝ ճղուպուրը, հվքիսմ, ծխիս ինձ հետե ապրուստ սրքիլիս: Միեգ մի էրկու տարե կա, որ ծառը ալ առաչվա նման բերք չի տալիս: Համ ալ կամաց-կամաց չուրունալիս ա: Պա որ ծառը չուրանա, իմ ախրը հինչ կդըռնի: Իս հինչա՞վ պետք ա ապրմ:

- Քու թամբահը՝ իմ աշկես երե: Ալխային կաց, անպայման կասմ,- ըսիս ա ղոնաղը:

Լուսը բինվալուց առաչ, բախտեն շոռ եկուղը, ալլա եր ա կնալիս իրան հղեն փռնիս, գյուլոխը կախ գիծած գինիս: Էտ օրն ալ տափը մքնիլեն նիետ, երգինքը թուղբիս ա, ըսկսիս ա կծկեծուն տալը, ուրոտալը: Յիշիս ա տսնալիս հղցին ղրաղեն մի քյոհնադան խարաբա դըռած շեն կա: Համա դե ոչ մի դալդալղ տեղ չօնի շուդավ նի օնուղ շառռափից պաշտպանվելու հետե:

Դիբի դես, դիբի դեն յիշիս ա, տսնալիս՝ խարաբա շենեն գյլխես թումբեն երե, մի կուծի գիղեցե կա: Վազ ա տալիս, գինիս նի մտիս գյղեցեն: Փափաղը դիրիս գյլխըտակեն, կոչ գյոլիս, քունավ ընցնիս:

Քիշերվա մի վախտ, բախտեն շոռ եկուղ մարթը ըրազի տսնալիս ա, մի սպիտակ մրքավր, հիլիվր մարթ եկալ ա կողքեն նստալ, ըսկսալ հարցուփորձ անիլը.- Հի՞նչ մարթս, հի՞նչ տեղս գինիս, հի՞նչ ցավ ու դարդ օնս:

- Անբախտ մարթմ, գինիսմ Աստուծեն գենգյատ:

- Էս Աստուծեն տոնն ա, եկածս ճարած: Իս ալ Աստվածնմ, ասի տըսնմ հի՞նչ գենգատ օնս, քի լսիսմ:

- Գյանքմս միշտ քիշեր-ցիրեկմ արած, աշխադածմ, ուզեցածմ սորին ապրուստ ըստեղծիլ, հանգիստ ապրիլ: Գյուլոխ չի եկած: Մանցածմ ալլա էն ետ ինգյածը, էն քյասիբը: Հինչո՞ւ հետե: Իմ մեղքը հինչո՞մն ա, որ կրիս չըմ հարուստանալ,- Աստուծեն գենգյատ ա ըրիս քյասիբ մարթը:

- Էտ օմենը քու խըլքից ա: Ղորթ ա՝ շատ աշխադիլ, շատ չարչարվիլ գիդաս, համա աշխադանքտ կարիս վարիլը ծախսիլեն թահրը գիդալիս չըս: Պետք ա սվըրս: Օրինակ, քշանաց եր կկանաս, եկած հղոքտ ետ կգինըս տոնտ: Դեչանը տոն հասնիլտ էրկու տեղ բախտտ կբենվի, քի հետե հարուստեթուն, հանգիստ ըպրիլու միջոց կստեղծի: Մի բեն ալ մտետ կպահս, որ խըլք նա բախտը՝ ախպերն: Թա մինը-մինեն կրեցալն հասկանալ՝ կապրն հինչուր պետքն ա, թա կրեցա չըն՝ տեղտ ալ Աստուծ բեն չօնի,- էսքանը Աստուծ ըսիս ա գենգյատավր մարթեն:

- Մի տեղ ղոնաղմ ինգյալ, տնատարը ասալ ա՝ իմ ուռոզին մի ճղպորի ծառու բերք ա: Սհեգ էտ ծառը ըսկսած ա չուրանալը, բերք չի տալիս, հինչ արմ:

- Էտ մարթեն կասս, որ ճղպորուն տակեն մի կարաս վըսկե կա թաղած: Ճղպորոն տկռենեն գենցածն հասած կրասեն, ալ կրիս չըն վըղեն նաեե սննունդ եր օնն: Թող քանդի, կարասը հանի: Ճղպորին ալլա կածի, բերք կտա:

- Աստուծեն տոնը շեն կենա, ախր մի տեղ ալմ ղոնաղ ինգյած: Տնատարը իրան առաչին բախտեն նաեե շատ գոհ լալ: Ասալ ա՝ ետերը կնեգս մըռալ ա: Աշկրս քուռացած ա, աղչիգս մծացած, ա օգուղ չկա: Տոնս տրեթուն արուղ չկա: Գինմ էն մարթեն հի՞նչ ասմ:

- Ընդոր ալ կասս, որ մի խըլքը կուրցրած մարթ կգյո քու տոնը: Խըլքը կհվաքս գյուլոխը, օմեն հինչ կկարքավըրվի:

- Դե մի նեղուբուն ալ տամ,- ըսիս ա մարթը Աստծուն,- պա ասի՞ չըս, գյուլիս տեղը մի քողցած գյուլովմ ջհհալ: էն ալ իրան շատ ապրելուն երե, շատ մծնալուն, քողցած մնալուն հետե յա գենգյատ արալ:

- Գյուլեն ալ կասս, թող էտ հղցին երե նստի: Կպդահի, որ մի օր մի անխելք մարթու կջհհի, թող փռնի օտի:

Աստուծեն նհետ իստի երկար սոհբաթ ըրհլեն ետը, մարթը քնից զուրբնաեե ա: Տսնալիս ա նայե օրը բհնվալիս: Եր ա կնալիս, մհակը դիրիս օսսեն, եկած հղոքը գինհիս դիբի տոն:

Աստծոն ճարած մարթը գյուլիս ա քիշերը ղոնաղ ինգիս ալլա ճղպորի ծռատար մարթեն տոնը: Նաղլ ա ըրիս, որ գենցալ ա Աստուծեն ճարալ, Աստուծ ասալ ա, որ ճղպորուն տակեն վըսկավ լիգը մի կարաս կա: Ծառեն տկռենեն հասածն կրասեն, ալ կրիս չըն վըղից սննունդ եր օնն: Թող ծառեն տակը քանդի, կարասը դուս օնի: Ծառն ալլա գյանք կոնի, բերք կտա:

Քշանոց շուդավ տնատարը տսնալիս ա ղոնաղը ուզիս ա գինի: Թուղիս չի, ըսիս ա.- Ծառեն տակեն պահված վըսկուն նաեե քի ալ փայ օնս, գհնենք միասին ծառեն տակը քանդհնք, վըսկեն հաննք, կես արնք: Դու քու փայեն տար կաց, իս ալ՝ իմ փայեն:

. Ղոնաղը ծծղիս ա, ըսիս.- Տնաշեն, ծառեն տակեն իս ոչ վըսկե յըմ թաղած, ոչ ալ գինմ հանմ, փայ եր օնմ: Ծառը քունն ա, վըսկեն ալ քունն ա: Դու գինի քու վըսկուն տրեթուն արի: Իս ալ գինմ իմ բախտես հետե,- ըսիս ա ղոնաղը, մհակը եր ունիս, հղե ինգիս:

Մի օր հղե գինիլեն ետը, ղոնաղ ա ինգիս հասած-փիսած նախշուտ ղեչիգյան տար մարթեն տոնը: Տնատըռնը ասալ ա, որ Աստուծ ասալ ա. «Թող շատ խիյալ վեչ անի: Մի օր մի բախտը կուրցրած մարթ կգյո կբախտավորացնի: Օմեն հինչ ալլա սորին կինի»:

Տնատարը ըսիս ա.- Քի անե սորին մարթ չկա: Աղչիգս օզի, լիգը տանս տըրեթուն արի, բաղ-բաղարս ալ բիջարի, հանգիստ համ դու ապրի, համ ալ իս:

- Չէ՛, Աստուծ քու իլածը քի ղսմաթ արի, իս գինիսմ իմ բախտեն հետեն,- ըսիս ա ղոնաղը, մհակը դիրիս օսսեն, հղե ինիս:

Խըլքը կուրցրած, բախտեն նանե փոխչուղ մարթը գյուլիս ծմակմը ալլա ջհհիս ա գյուլեն, տսնալիս ա նայե հղցին երե նստած:

Գյուլը հարցուփորձ ա ըրիս, թա՝ գենցա՞լ ա Աստուծեն ճարալ, թա չի:

Բախտեն հետեն գենցուղ մարթը գյուլեն մինի-մինի նաղլ ա ըրիս գյլխեն եկածնեն նա Աստուծեն ըսծնեն:

- Պա ինձ հետե հի՞նչ ա ասալ,- հրցրիս ա գյուլը Աստուծեն տըսած մարթուց:

- Քի հետե ալ ասալ ա, թող ումուդը կտրի վեչ: Հղցին երե նստի, մի օր մի անխելք մարթ կջհհի, փռնի օտի:

Մարթը որ իտի ա ըսիս, գյուլը լոք ա տալիս մարթեն փռնիս, դիրիս տակեն՝ պկեն հրիս: Մարթը խռխռցնիլավ ըսիս ա.- Անաստված, խե՞ յըս ինձ խղդիս, իս քի հի՞նչմ արած:

Գյուլը ըսիս ա.- Քու խոսքը գյորա Աստուծեն տված բույրողնմ կադարիլիս, օրեշ ոչինչ:

Մարթը զարմացած ըսիս ա.- Խի՞, իս անխըլք մա՞րթմ:

Գյուլն ըսիս ա.- Պա աշխարքմ քիանե անխըլք մարթ ալ ըշտեղ կաննի: Ճղպորի ծռատըռնը նհետ գենցած չըս, վըսկեն հանած, կես արած, տարած հանգիստ ապրած: Նախշուտ ղեչիգանը օզած չըս, լիգը տանը բաղ-բաղարեն տրեթուն արած: Ուրեմը դու լա իմ ղսմաթնս, ըշխարքեն անխելք մարթը:

Ըսիս ա գյուլը, անխելք մարթեն խժռիս, ուտիս:

8 (33). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԹԱՆԳ ԲԵՆԸ

Միետ մի վըրսկան ծմակմը երի ա ըրիս, մի եղնը՝ յարալու ըրիլիս:

Դե ջանը ազիզ կինի: Եղնը փխչիս ա հռնալիս, մի քուլոտում գյող կնալիս:

Վըրսկանը շոռ ա գյուլիս, յարալու եղանը կրիս չի ճարի: Ջեռք ա քշիս, թուղիս գինիս:

եղանը կողքեն նիետ արունը թիաթավ կթկթիս լալ: Սղնալու ումիդ չի լալ: Ջանը դող լալ ինգյած: Յիշիս լալ մահեն գյուլեն, որ ըշտեղ որ ա, կգյո հոքին կտանի:

Դե դունյես հեյվանարը ըստեղծուղ Աստուծը, հեյվանարը հետե տար ալ ա ըստեղծած, հաքիմ ալ: Հեյվանարեն տըռնը անմը Փիրում ա, հաքիմեն անմը՝ Վհուկ ա:

Յարալու եղնը մին ալ էն ա տսնալիս՝ ըհը՞, հաքիմ Վհուկը եկալ ա ըռշկին վըտ կացալ, ասալ.- Դու նախշուտ եղնը, ինձ տոր էն բենը, որ ըշխարքմ ամենաթանգն ա: Քի փրկըմ մահից:

Եղնը խիյալ-խիյալ ա արալ, ինքը իրան ասալ, թա. «Ըշխարքմ հի՞նչ բեն պետք ա ինի, որ գյանքից ալ թանգ ինի: Ամենաթանգ բենը գյանքն ա: Վհուկը հի՞նչ բեն պետք ա օգի, որ գյանքից թանգ ինի»:

Եղնը խյալ-խյալ ա ըրիս, կրիս չի վհուկեն ասած խոսկեն մանին ճարի: Ճարը կտրած ըսիս ա.- Համաձայնմ, հաքիմությունտ, օքնութունտ նա շնորքըտ նշանց տոր:

Հրահաս հաքիմը եղնեն յարան սըղցրիս ա: Եղնը դըռնալիս ա առաչվա առողչ եղնը: Կասս ոչ վըրսական ա տըսած, ոչ ալ գյուլլա լալ նի էկած:

Եղնը ըսիս ա.- Շնորքաշատ հաքիմ, իս հինչքան գիդսմ ըշխարքմս ամենաթանգը գյանքն ա, որ դու տվալս ինձ: Գյանքից թանգ բեն չկա: Միեգ իս հի՞նչ տամ քի, որ գյանքից թանգ ինի, դու ինձանից ըռազի մնաս:

Հաքիմ Վհուկը ծծղիս ա նախշուտ եղանը խոսքեն երե, ըսիլիս.- Ըշխարքես շատ աշղնե իրաց կապած խաղերմ թարիփն ըրիս եղանը աշկրը, իրաց անասելի նախշուտ հնիլու հետե: Իրաց թարիփ արած ըղչգերանցը աշկրը համեմատմն եղանը ըշկերեն նիետ: Քեզանե օրիշ բեն չըմ ուզիս... ինձ տոր քու աշկրը: Քիզանե շատ գոհ կգինմ:

Հաքիմ Վհուկը որ ըստի պահանջ ա դիրիս, եղնը խիյալ-խիյալ ա ըրիս, ըսիլիս.- Դու պարի հաքիմ, խնքրիսմ ետ եր օնս քու տըված գյանքը, իմ մահը տաս ինձ:

- Մընք առաչավր պայմանք դիրած: Դու մըր կապած պայմանից հինչո՞ւ հետե յըս հրաժարվմ,- զարմացած ըսիս ա հարքիմ Վհուկը:

- Առանց աշկի իս կարի չըմ օզած ժուլաղավը գինիլ, իմ սիրած խոտը, ծաղեգը ըրածի, իմ հվանած ախպիրը ճարի ջուր խմի, իմ հնգրոնացը նիետ վազ տալ, խաղ արիլ: Էս օմենը կադարվմ ա աչքի միջոցավ: Տըս-

նալիսմ, որ առանց աչքի կյանքը պետք չի: Նորից խնթրիսմ՝ տված գյանքտ ետ եր օնս, որ պետք ա ապրմ առանց աշկերի:

Հաքիմ Վհուկը նորից ծծղիս ա, ըսիլիս.- Իմ նախշուտ եղնը, քու աշկրը ինձ պետք չի: Իս ուզեցալմ, որ դու գիդաս՝ ըշխարքմը շատ բեն կա, որ գյանիքց էլ թանգ ա: Գինի ապրի քո նախշուտ ըշկերավը, իս ալ գինմ իմ բեներն:

9 (34). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԹԱՆԳ ԲԵՆԸ

(*տարբերակ*)

Ղարադաղում հեքիաթ պատմողները «Աշխարքեն ամենաթանգ բենը» հեքիաթը պատմում էին երկու տարբերակով: Առաջինում որսորդը վիրավորում է եղնիկին: 2 -րդ տարբերակում պատմում են, որ որսորդը վիրավորում է «մի թվավր ղուշու»:

Ընդհանուր առմամբ սյուժեն մնում է նույնը: Այսպես օրինակ՝

...որսորդի գնդակից վիրավոր թռչնակը թփուտի թաքստոցում սպասում է մահին: Եվ ահա նրա դիմաց կանգնում է երկնային հեքիմ-վհուկը ու նրան ասում.- Տուր ինձ աշխարհի ամենաթանկ բանը, փրկեմ քեզ վերահաս մահից:

Թռչնակը նույնպես միտք է անում ինքն իրեն, զարմացած, թե՝ միթե աշխարհում կա այնպիսի նի բան, որ թանկ լինի կյանքից: Աշխարհում ամենաթանկը կյանքն է թռչնակի հասկացողությամբ և համաձայնվում է հեքիմ վհուկի առաջարկին:

Հեքիմ-վհուկը բուժում է թռչնակի վերքը: Թռչնակը առողջանում է, կյանք առնում, սկսում թռվռալ ուրախ այս ու այն կողմ:

Վերադառնում է ուրախացած բարի վհուկի մոտ, խնդրում՝ ի՞նչ է ցանկանում իրենից որ կյանքից թանկ է:

- Տուր ինձ թևերդ, հեզությամբ ասում է վհուկը:

Թռչնակը մի պահ խորհում է, երկար մտածում: Նրա դեմքի վրա ուրախ ժպիտը փոխվում է թախիծի: Ապա մոտենալով բարի վհուկին, կամաց շշնջում.- Խնդրում եմ բարի եղեք, ետ վերցրեք ինձ տված կյանքը... Ես իմ մահն եմ ուզում:

- Ի՞նչ պատահեց քեզ, ինչո՞ւ հուսալքվեցիր մեր պայմանից,- ասաց վհուկը:

- Ինչի՞ս է պետք այն կյանքը, երբ չպետք է թևեր ունենամ, թռչեմ իմ երամի, իմ ընկերների հետ: Գնամ իմ ցանկացած վայրերը, թռվռամ ջինջ

երկնքում: Ինձ համար ավելի լավ է մահը, քան թե ունենամ կյանք, զրկվելով այս բոլորից ու ապրեմ կարոտով: Կրկին խնդրում եմ ետ վերցնեք առանց թևերի կյանքս:

Հեքիմ վիուկը շոյելով գեղեցիկ թռչնակին, ասում է.- Ինձ հարկավոր չեն քո թևերը, սիրուն թռչնակ: Ես կամենում էի որ դուք իմանաք և շատերին էլ սովորեցրեք, որ աշխարհում կա բան՝ կյանքից էլ թանկ է:

10 (35). ԻՐԱՆ ԼՈՒՋՎԱՎԸ ԹԱԼԱ ՅԱ ԻՆԳՅԱԼ

Կասի՝ քյոհնա այամեն իլալ ա, իլա չի, մի շատ քյասիբ մարթ նա մի կնեգն հնիլիս: Ըտուց օխտը խոխա յա հնիս:

Քյասիբ մարթեն տանը կողքեն՝ պատը պատեն կպած, մի շատ հարուստ մարթ լալ ըպրիլիս, իրան կնգանը նհետ: Իրաց ալ ոչ մի խոխա իլա չի՝ սոնգսզն լալ:

Քյասիբ մարթը հարուստեն նոքյարն լալ: Չհն լալ թիմիրիս, բաղ-բաղչեն բիջիրիս, օմեն մհն բեներն օքնիլիս: Կնեգն ալ հարուստեն կնգանը հետե ղարավաշոթուն լալ ըրիս՝ շոր լալ լվնալիս, տոնը սիրբիս, ջուր բիրիս:

Հարուստը էտ մրթը-կնգանը օրական էնքան փող լալ տալիս, որ օրեն ապրն: Ինդի լալ ըրիս, որ օմեն օր գյոն բեն արն, կարն վեչ մի օրվա ապրուստի փող ետ գիձի, օմեն օր բեներ հնն:

Դե աշխարք ա, վախտ ա, մարթ ա, մարթու բախտ ա: Գյուլիս ա մի վախտ՝ քյասիբ մարթը ուլուզնալիս ա: Հարուստը նոքյարթունից դուս ա ըրիս, ընդուր տեղը մի օրեշ ջահիլ մարթ ա բիրիս:

Քյասիբ մարթեն ապրիլը դիժիրնալիս ա: Քյասիբ մարթեն տանը դիբի հարուստեն տան թարափեն պատմը մի կուճի պըտըռհան ա հնիս, իրան նման մի կուճի դուրք ալ երե: Քյասիբ մարթը հինչքան ալ քյասիբ լալ ըպրիս, ալլա օրական մի քանե շահի փող ետ լալ գիձիս իրան եդե օրվա հետե, դիրիս պտռհանմը, դուրքին ալ բիլալավ փկիլիս:

Քյասիբը օրեշ տեղ կրեցա չի բեն ճարի, մանցալ ա պարապ: Ըսկսալ ա ետ գիձած շահեներն ծախսիլը: Էն ալ ա պրծալ: Մանցալ ա օրվա հացեն կարուտ:

Քյասիբը գիդալիս լալ, որ պտռհանմը շահի չի մանցած: Շատ քյոռուղ քաշիլեն ետը, մի օր պտռհանեն դորքը բեցալ ա, կասի՝ տըսնմ հո շահի մանցած կավիչնի: Պտռհանեն դորքը բհնալիս ա, մնալիս զարմացած, ըշկերեն տսածեն հվտալիս չի: Ինդի ա գիդալիս, որ ալուզ ա, համալ քողցած, հինչ որ տսնալիս ա, սոտ բեն ա՝ աշկեն ա ըրվալիս: Մի քանե նհետ

աշկրը փկիս ա, բինալիս, տըսնալիս չէ՝ դուրթավ պըտըռհանմը երկ վըսկե կաննի:

Ձեռքը մկնիս ա, եր ունիս, տըսնալիս ա՝ դուրթավ վըսկյն: Մնալիս ա զարմացած, քար կտրած, թա՝ դուրքը փակ, բիլալավ, վըսկեն հի՞նչ բեն օնի պտռհանմը: Հինչքան խյալ ա ըրիս, կրիս չի մի մանի ճարի: Վըսկեղեն դրիս ա ջուբոմը, պտռհանեն դուրքը փկիս, գինիս: Համա դե շուդ-շուդ ձեռքը տնիս ա ջուբը, ըստուգիս, թա՝ մի բիրդամ սուտի վեչ, վըսկեղեն ջուբոմը կորի:

Մի օր վըսկեննեն ջուբոմը պիիս ա, տըսնալիս ա՝ խոսուղ չկա, տար դուս եկուղ չկա, տնիս ա ծխսիլիս:

Էքսի օրն ալլա գինիս ա պտռհանեն դուրքը բինալիս, տսնալիս ա ալլա էրկու վըսկե նայե դիրած պտռհանմը: Վըսկեննեն եր ա ունիս, դուրքը փկիս, գինիս:

Ալ հինչ գյուլոխ ցվըցրմ, մի օր, հենգ օր, մի ամես, մի տարե շարունակ, քյասիբը օրական էրկու վըսկե դուրքը փակ պտռհանեն նանե եր ա ունիս:

Տարեն տարոն երե շոռ ա եկալ: Վըսկեն եկալ ա: Քյասիբը հուրստացալ ա: Խոխենքը մըծմծացալն, ուսումի ա տվալ: Էրկու-իրք հրկանե շինութունե ա սարքալ, բաղ-բաղար գիծալ: Խալի-խալիչենի, տնամաչ կալալ: Մի խոսքավ, դըռալ քաղաքեն առաչավեր մարթկանցը միննը:

Հարուստը տսնալավ իրան կողքեն օրվա հացեն կարոտ քյասիբ մարթեն իտի մի բիրդամ հարուստութուն ճարիլը, աշկը եր չի կալալ, քիշերը քոնը տարալ չի: Խիյալ-խիյալ ա արալ, եր կացալ գենցալ քաղաքեն հաքիմեն կոշտը՝ քյասիբեն իտի մի բիրդամ հարուստ դռնալեն հետե նաղլ արալ:

Հաքիմը հարուստեն ասալ ա.- Դու էտքանը որ նաղլս արալ քյասիբեն հարուստնալեն հետե, պետք ա անպայման գիդաս, թա էտ փողը ըշտեղե յա ճարալ, հինչուր ա հարուստացալ: Կարող ա քու ունեցվածքից ա գյուղացած, դու բեխաբարս,- ասալ ա հաքիմը:

- Չէ, հաքիմը ապրած կենա, իտի բեն կավչնի: Իմ ունեցվածքից կասկած չօնմ:

- Քու իտի ասիլը ինձ հետե բոլ չի,- ասալ ա հաքիմը: Եր կաց գինի տոնստ: Քու կնգանստ նհետ մասլահաթ արի: Հինչ տեղ, հինչ ապրանք պահած օնեք, ըստուգեցեք: Հաստատ գիդաց ունեցվածքիցտ բեն-մեն պկասմ ա, պկասմ չի՞, նոր էքուց եք ինձ ասի: Սորին կինի կնգանստ ալ բերս:

Էքսի օրը հարուստը կնգանը նետ գինիս ա հաքիմեն կոշտը: Խաբար տալիս, որ իրանց իլած-չիլած օմեն հինչ իրաց տեղնն: Տանը ունեցվածքից ոչ մի բեն պկասած չի: Քյասիբ հրվանեն հրուստանալը իրան ունեցածեն նետ ոչ մի կապ, ոչ մի կասկածանք չօնի:

Հաքիմը ըսիս ա.- Դե որ իտի ա, ձեր էրկուսեն լուզվեն նանե քու ձեռոքը մի թոխտ գիրի տոր, որ ետնե չգյոք գենգյատ արեք, որ մըր տանը նանե էս ա պակաս, էն ա պակաս:

Հարուստը թոխտը գիրիս ա, տալիս:

Էքսի օրը հաքիմը մարթ ա ղուրկիս հարուստացած քյասիբեն կնչիս իրան կոշտը, հրցրիլիս, թա.- Լսածմ, որ դու մըր քաղաքեն ամենաքյասիբ մարթնս իլած: Մհեգ ալ օրախմ, որ դըռածս քաղաքեն հարուստ մարթոնցը միճը: Նաղլ արի գիդամ, էս մի տարմ հի՞նչ ա պդահալ քի, որ էտքան հարուստացալս, միճջա դուզը պետք ա ասս:

Քյասիբը նաղլ ա ըրիս տանը պատեն պտռհանեն հրաշքեն նանե:

Հաքիմը փեչատը տալիս ա իրան ըռշկին էրկու մարթու, թամբահ ըրիս, որ կգրեք էն հարուստ հրվանեն ալ եր կօնեք, կտանեք պտռհանեն դուրքը կփիչադեք, իրք օր իրք քիշեր պտռհանեն ըռշկեն ղարավուլ կնստեք: Օրը մհետ դուրքը կբենեք, կտեսենք հի՞նչ ա կատարվում, կգյո՛ք ինձ խաբեր կտաք: Էրկու հրվներեն նհետ մի տեղ:

Իրք օրը որ թմմիս ա, հաքիմեն մարթինքը, էրկու հրվանրը մի տեղ գինիսն հաքիմեն կոշտը: Հաքիմեն մարթինքը խաբարն տալիս, որ.- Հաքիմը ապրած կենա, գենցալնք պտռհանը ըստուգալ էրկու հրվներեն նհետ մի տեղ: Պտռհանը դերտակ լալ: Դուրքը փակալնք, փիչատալ, ըռշկին դեչանը լուս նստալ: Քշանաց երնք կացալ, դուրքը բեցալ, տըսալ՝ ղուրթավ, էրկու վըսկե կա պտռհանմը: Իրք օրն ալ շարունակ, համան բեն չընք տըսալ:

Հաքիմը հարուստացած մարթեն ըսիս ա.- Դե էտ Աստվածանե հրաշք ա: Հինչ որ տալիս ա, թող քի հալալ ինի:

Մհեգ խաբերը տանք հարուստ հրվանեն նանե: Դու մի ասիլ, որ էտ հարուստը իրան գյանքմը հինչքան վըսկե թուփ ա արած, նի ա ածած մի մըծ կճոճու մաչ, իրան տանը տակեն մի կուճի զիրզամբի ա սարքած, դիրած զիրզամբմը, դուրքը փակած, բիլալին դիրած ջբոմը: Տարունը մհետ զիրզամբուն դուրքը բինալիս ա: Էտ մի տարմը հինչքան վըսկե իվիլցիրած ա, նի ա ըծիս կճոճը, ալլա զիրզամբուն դուրքը փկիս, բիլալին դիրիս ջբոմը: Էտ զիրզամբոն վըսկուն տեղը ինքը գիդա, մին ալ Աստուծ: Իրան կնեգն ալ խաբեր չի էտ բենեն:

Տարե ա, շոռ ա տալիս, թմմիլիս: Հարուստը իվիլցիրած վըսկեն տնիս ա, նի ածի կճոճը: Ջիրզամբոն դուրքը բինալիս ա, մին ալ էն ա տսնալիս էրկու մոկնը մի-մի վըսկե ըռխնոմը, կճոճեն նաեե դուսն եկալ, փախալ մտալ պատը: Եշմ ա տսնալիս՝ հո՞ր ա, կուճիճեն վըսկեն կեսն ա ինգյած: Սհաթտա գյուլխավ ա ինգիս, թա հրվանեն պտռհանեն հրաշքը հինչ բեն ա: Էրկու մոկնը արսա յըն եկած, վըսկեն կրիս, տընիլիս պտռհանմը խաղ ըրիս:

Հարուստը մնալիս ա մաթալ: Հաստադելու հետե ոչ մի բեն կարի չի լալ արի: Հաքիմեն իրան լուզվավը թոխտ լալ տված՝ նի ինգյած թալա: Խյալ-խյալ ա ըրիս, մռնիլիս:

Վըսկուն կեսը քյսիբեն քռնոքն լալ: Ուտիս ա, իրան հետե գյանք ըրիս:

11 (36). ԱՐԹԱՐ ՓԱՓԱՂԸ

Նաղլըն ըրիս, որ քյոհնա ըյամեն մի թաքավեր իրա նազր-վազիրնուն նհետ մի շենու մաչավ գինիս տեղը, տըսսլ ա մի մարթ իրան տանը ըռշկին սրահմը նստած ա: Չեռքրը դուռուզ ա տալիս՝ դիբ դես, դիբ դեն, մի բեն սղլիս ա, յանի քի մի բեն կրիս ա: Համա դե ոչ ձեռքեն ա բեն ըրվալիս, ոչ ըռշկին, ոչ ալ հար-հաջաթ ա ըրվալիս:

Թաքավերը նազրեն ըսիս ա.- Էս մարթը յա պըլ ա, յա շատ գիդ ա: Հարկավոր ա գիդալ՝ հի՞նչ ա ըրիս, հի՞նչ բենե յա:

Մուտանալիսն, թաքավերը պարև ա տալիս, հրցրիլիս.- Էտ հի՞նչ բենե յըս:

- Ըշխարքեն թաքավերնաե հետե արթար փափաղմ կրիլիս, թաքավերը ապրած կենա,- աշկը առանց ըռշկին նաեե հռցնիլա, ըսիս ա շինացեն:

Թաքավերը յիշիս ա, ախր ոչ մի բեն տըսնալիս չի: Մնալիս ա զարմացած: Նորից հրցրիս ա.- Ուստա, էտ հունչո՞ւր, էտ հունցո՞ր փափաղս կրիս, որ ոչ մի բեն տըսնալիս չըմ, աշկես ոչ մի բեն ըրվալիս չի:

Ուստան ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա, իմ փափաղ կարիլը Աստվածատուր ա: Խե՞ յըմ ըսիս «Արթարութան փափաղ», որովհետև իմ կարած փափաղը էն մարթկանց աշկեն ա ըրվալիս, հու վեր արթար ա, գյանքըմ անարթար բեն արած չի: Հու վեր արած ա, ընդոր աշկեն իմ կարած փափաղը ըրվալիս չի,- ըսիս ա ուստան, ալլա ձեռքըրը դեսուդեն տնիս, բիրիս, յանի քի՝ փափաղը կրիսմ:

Թաքավերը կրակու մաչ ա ինգիս: Խիյալ ա ըրիս: «Ախր, ասմ՝ տսնալիսմ, փափաղ չի ըրվալիս, հունչուր ասմ, ասըմ՝ տըսնալիս չըմ, պա նա-

զիր-վազիրնեն կասն՝ թաքավերը անարթար մարթ ա, որ աշկեն արթարության փափաղը ըրվալիս չի, տըսնալիս չի»:

Վազիր-նազիրնեն կողքեն խայտառակ չդռնալու հետե, ճարը կտրած ըսիս ա.- Հա, ղուրթավ, շատ սորին, նախշուտ փափաղս կրիս: Ղուրթավ շահայարաշան ա[8]:

Թաքավերը հուլուրվիս ա, նազր-վազիրնան հրցրիլիս.- Հը, հունչո՞ւր փափաղ ա, դուք ալ հավան եք կնալիս, ո՞ր մինը օնմ:

Դե նազր-վազիրնեն ալ յիշիսն, ոչ մի բեն տըսնալիս չըն: Ասն՝ տըսնալիս չընք, թաքավերը իրաց նազիր-վազիրթունից կազատի: Կասի՝ անարթար մարթիք եք: ճարնեն կտրած ըսիսն.- Թաքավերը ապրած կենա, շատ սորուն, թաքավերի արժան փափաղ ա, թող Աստված շնհավր անի, մինը եր կալ:

- Փափաղեն մինը հի՞նչ արժի,- հրցըրիս ա թաքավերը:

- Մի փափաղեն արժեքը հարուր վըսկե յա,- ըսիս ա փափաղ կարող ուստան:

- Դե մինը փթատի, կապի, տաննք,- ըսիս ա թաքավերը:

Ուստան մի կուճի սինի յա բիրիս, դիրիս մի շորա մաչե, կպիս, տալիս նազրեն: Հարուր վըսկե թաքավերն ա տալիս: Թաքավերեն նհետ տասը ծիյավն հնիս: Թաքավերեն սազական՝ արթար փափաղ կրիլու հետե, մարթա տասը վըսկե ալ իրսին անամ տալիս ուստեն: Շորավ կապած սինիհ եր ունիս, գինիս:

Դե թաքավերեն պալատը, սաղ քաղաքը սաս ա ինգիս, որ՝ ասի չե՞ք, թաքավերը ինդի մի փափաղ ա կալած, որ հու վեր արթար ա, տըսնալիս ա: Հու վեր անարթար ա, մեղք ա արած, փափաղը աշկեն ըրվալիս չի:

Դե շատ մարթ վխիս ա գինի «արթարության փափաղը» տըսնալու, վխիսն, որ կարող ա պդահի, փափաղը տըսնի վեչ, թաքավերը կգիդա, որ արթար մարթ չի, կփռնի կախաղան կարի: Շատն ալ որոշիս ա, որ՝ տըսնամ վեչ, լա կասմ տըսնալիսմ: Թաքավերը հի՞նդա, թա՝ տըսնալիսմ, յա տըսնալիս չըմ: Դե մըծամըծրը հվքվիս, գյոլիսն, ոչ մինեն աշկեն չըրվացուղ փափաղը թարիփ ըրիս, ըսիս. Աստուծ շնհավր արի, թուղիս գինիլիս:

Թաքավերեն հորը վազիրը՝ մի սիպտակ մրքավր, հիլիվր մարթ ա հնիս: Հալա սաղ ա հնիս, թաքավերեն քուշտեն ալ մըծ հարգանք, պադեվ ա հնիս: էտ հիլիվր վազիրն մնալիս ա զարմացած: Տըսնալիս ա ղուրթավ՝ փափաղ գոյութուն չօնի: Ախր հունչո՞ւրն ըսիս, թա՝ տըսնալիսնք, Աստ-

[8] Թագավորին սազական է (թուրք. թարգմ. բանահավաքի):

ված շնհավր արի: Պա իս խե չըմ տըսնալիս: Ռիսկի գյոլավ, գիդալավ, որ էտ բենմը մի քյալագ կա, թաքավերեն նանե հրցրիլիս ա.- Թաքավերը ապրած կանա, ասի գիդամ, դու փափաղը տըսնալի՞սս:

- Պա հի՞նչ, տըսնալիսմ,- ըսիս ա թաքավերը:

- Դե որ տըսնալիսս, ասի տըսնըմ՝ փափաղը հի՞նչ ռանգի ա:

Թաքավերը մնալիս ա մաթալ: Ճարը կտրած կանչիլ ա տալիս իրան նհետ փափաղ օնուղ նազիր-վազիրներին, հրցրիլիս.- Ըսեցե՛ք, գիդանք, դուք «արթարությանը փափաղը» տըսնալի՞ս եք:

- Հա՛, տըսնալիսնք,- միաբերան ըսիսն նազիր-վազիրնեն:

- Դե որ տըսնալիս եք, ըսեցեք, գիդանք, փափաղը հի՞նչ ռանգ օնի, սըվ ա, սիպտակ ա, կնեչ ա, կարմուր ա, թա կապուտ ա:

Փափաղն տըսնալի՞ս, որ ըռանգն ասն:

Օմեն մնալիսն լալկված, բիրինննեն փակ: Վերջը, նազիրը ռիսկի ա գյոլիս, ըսիլիս.- Թաքավերը ապրած կանա, ախր փափա՞ղնք տըսնալիս, որ ըռանգն ալ ասնք:

- Պա որ փափաղը տըսնալիս չեք, հինչուր եք հավան կացալ, դիրալ գյլխես:

- Աստված երկար գյանք տա թաքավերեն, սիվթա դու վըս ասալ՝ տըսնալիսմ, նախշուտ փափաղ ա, թաքավերեն սազական: Մընք ալ վխեցալանք ասնք, փափաղ չկա: Որ մընք ասիլնք լալ չկա, դու առաչ ա, վեր ասածս լալ կա, այտս մըզ ումունուց անարթար մարթս լալ ճնաչիլ, տանիլ կախաղան արի: Մընք քու խոսքը գյորա յընք ասալ՝ տըսնալիսնք:

Թաքավերը մաննը կծիս ա, ըսիս.- Ուրեմը էս բենեն մաչեն մի մանի կա: Հարկավեր ա մանին ճարիլ, գիդալ:

Հոքմ ա ըրիս, որ փափաղ կարուղ ուստեն գինն բերն պալատ: Գինիսն փափաղ կարուղ ուստան բիրիլիսն:

- Ասի գիդամ, քու կարած փափաղը հի՞նչ ռանգի յա,- հրցրիս ա թաքավերը:

- Տեղս փափաղ հո՞ր ա, որ իս ռանգը ասմ,- շատ հանգիստ ըսիս ա ուստան:

- Պա որ տեղս փափաղ կավչնի, դու հի՞նչս դիրալ իմ գյլխեն,- պատառ կըզնըված ասալ ա թաքավերը:

- Թաքավերը ալլա ապրած կանա, իս օխտը խուխատար մարթմ, ինքս ալ շատ քյասիբմ ըպրիլիս, խոխենքս պահելու հետե ոչ մի ճար, իլլաջ օնի չըմ: Գինիլ իմ լալ գյուղեթուն արիլ, փռնիլ իք լալ ինծ կախաղան արիլ: Խոխենքս մորթիլ կարի չըմ լալ: Որոշալ ըմ մի ունևոր մարթու գյլխե

մի փափաղ դիրմ, պատառ փող իք օնմ, ապրուստ ըստեղծմ, խոխենքս սովից փրկմ, դեչանը տըսնմ գյուլոխս հիճ ա գյոլիս: Բախտի բիրիլավ, առաչինը դու վըս պդահալ ինձ: Իս ալ մի փափաղ լալ, դիրալմ գյլխետ, քիյանե ապրուստու հետե պատառ փող եր կալալ, փառք Աստծու, խոխենքս սովից փրկալ,- շատ հանգիստ, համեստ, առանց վխիլու ասալ ա ուստան:

Թաքավերը տըսնալիս ա խայտառակ կարքավ իրան մի շինացե մարթ խափած ա, իրան խոխենքը սովից փրկիլու հետե, ըսիս ա.- Ա շան տղա, ինձանե հիճ որ երս կալած, թող քու հալալը ինի: Մինչա իտի բեն ալ արըս վեչ, որ օրեշ մարթիք ալ սվըրն վեչ իտի փափաղնե կարն: Ըրկումինջինն ալ՝ ինձ հետե կարած փափաղեն հետե օրեշ տեղ ասս վեչ, ինձ աշխարքավը մին խայտառակս:

Դե մըր պապերեն չափած, ձևած, իփած, թխած խոսքո շատ օնն: Մեր պապական խոսքերեն մինը ըսիս ա. «Տանը՝ պատ օնի, պատը ծակ օնի, ծակմը մոկնը կա, մոկանն ալ անջուկ օնի»: Ղորթ ա, փափաղ կարող ուստան սուսուփուս թուղիս ա գինիս իրան տոնը: Համա դե թաքավերեն գյլխեն փափաղ դիրիլը մնալիս չի չորք պատեն ըրանքըմը: Դուս ա գյոլիս, խաբեր տալավ գինիս տոնբատոն, քաղաքից քաղաք, մհալից մհալ՝ աշխարքավ մին տարածվիլիս:

Մհեգ ալ, որ մինմը մի բենմ խփվիս ա, ըսիսն՝ գյլխետ փափաղն դիրած:

Մինը մի բենմ մինեն խփիլիս ա, ըսիսն՝ գյլխեն փափաղը դիրած[9]:

12 (37). ՊԸՆԳԼԸ ճԱՐԱԼ Ա ՀԱՌՆԸ

Կասի՝ մհետ մի շենա նհետ գենցալն հրըվան շենեն նհետ հառհինը բիրիլա:

Հառհինը երն կալալ եկալ, շատ թա խրեգ, Աստոծ գիդի, տըսալն մի աշըղ սազը դիրած ա հղցին մաչեն, հղեն կտրած: Ինքն ալ մի ջահիլ տղու նհետ կողքեն նստած ա:

---

[9] Փափաղ դիրիլը Ղրդաղն ալ լալ հասած: Օրինակ՝ խնգիհեցե Դադունց Ալիքսան ասիլ լալ.- Իս շատ միալմ շոռ եկած, շատ մարթկանց նհետմ նստած, եր կացած: Հուր հետե, հուռնցուր փափաղ խըլքս կտրած ա, կարածմ, դիրած գյլխեն: Համա դե մինչու իմ հըրևան Հաթունց Թաթավեսե հետե կրեցա չըմ փափաղ կարիլ: Լա քիշերը խյալմ արած հիճ փափաղ կարած, որ քշանաց դիրմ գյլխեն, քշանաց հիլիլուն եշածմ, տըսած, Թաթավես ավելի սորինը դիրած ա իմ գյլխեն (ծան. բանահավաքի):

Դե քոհնադան աթա-բաբադան օրենք կար, քանե աշղեն խաթրը օնես վեչ, իրավունք չկա սազը կոխ տալ, գինիլ:

Հռնքեն տարը ձին առաչ ա քաշալ, աշղեն պարի օր տվալ, ասալ.- Աշըղ, հի՞նչ ա իմ ջարման, քո սրտեն օզածը, ասի՝ տամ, հղեն բեց արի, գիննք:

Աշղը ասալ ա.- Իս մի պընգլ կասմ: Ճարեք, ձեր հղեն կբենմ, կգինեք: Կարեք վեչ ճարիլ, էս տղան տսնալի՞ս եք,- նշանց ա տալիս կողքեն նստած տղեն,- իմ տղաս ա: Քյասիբ մարթմ: Կրիս չըմ տղես փսակիլ: Պետք ա հառհնը տաք իտ տղեն:

Հռնքավրը հինչքան ղանչաքն ըրիս աշըղեն, որ բեն տան իրան, հղեն բենի՝ գինն, դռնալիս չի: Վերչը որոշիսն, որ քսան մարթնք, աշղը հի՞նչ պընգլ պետք ա ասի, մընք կարնք վեչ ճարի: Թող ասի:

Աշղը սազը ձերքն ա ունիս, ըծիլավ ըսիս.

Աշղեն սոհբաթը սազավը կինի,
Աշխարիս չտըսած շատ բեն ալ կինի,
Քառասուն գյուղոխ՝ ութանասուն վընննը,
Իս մեղա Աստոծ՝ իտի բեն կինի:

Իրան պընգլը ըսիս ա աշղը, սազը ալլա դիրիս, հղեն կտրիլիս:

Հռնքավրը շատն խիյալ-խիյալ ըրիլիս, կրիս չըն պատասխան տան:

- Դե,- ըսիսն,- որ լսածնք, որ Նոհի ըյամեն իտի գյլխանե, հենգ գլխանե, օխտը գյլխանե դևրըն իլած: Պա քառասուն գյլխանե, ութանասուն վընանե հեյվանի լսած չընք:

Դե աշղն ալ սոտ բեն ասի չի: Ուրեմը մի բեն կաննի, մընք կրիս չընք ճարի:

Հարսանը կողքեն, ծիանը երե, իրան ախպերն ա ինիս: Թընք ա ինգիս ախպորը անջուկեն, ըսիս.- Այ ախպեր, դու իմ պըտրունա, մին ալ քավերես նանե ուռուսխատ կալ, իս աշղեն ջուղաբը տամ:

Հռնախպերը քվոր ասածը խաբար ա տալիս: Քյոհնա վախտին ալ շատ մըծ ամոթ բեն լալ՝ հարսանը սասը պատրոնեն նա քավերեն լսիլը: Դե շատ նըղը ինգիլու հետե ուռուսխատն տալիս, որ խոսի, իրաց աշղեն թալին նանե ազատի:

Դո մա ասիլ, հառհնն ալ աշուղու աղչիգ ա: Ինքն ալ գիդա սազ ածիլ, խոսք կապիլ:

Հառհնը սազը եր ա ունիս, ըծիլիս, համալ երքիլավ ըսիլիս.

Մի քաս գինիհ հալալ ա, տվեցեք աշղը խմի,
Սազը եր օնի, հղեն բենի՝ հրսանեքը գինի,

Աշղեն կապած դիժեր պընգլը,
Աստված վկա յա՝ մըր հռնքեն թողբանը կինի:

Հռնքավրը սհաթտա խըլքի են գյոլիս, տըսնալիսն, որ իրանք քսան ձիավրն: Ուրեմն աշղը հաշիվ ա արած՝ քսան ձիավորներեն գյլխնեն, քսան ձիանցը գյլխնեն՝ հավասար ա քռառսունեն: Մարթկնացը վըտրը հաշիվ չի: Ձիանցը երե ա քսան ձիանցը վըտրրն ալ դռնալիս ա ութանասուն:

Աշղը գինին խմիս ա, ըսիլիս.- Ինձ շատ կներեք: Աշուղնան օրենք օնն. վըր տընվիսն, ալ սազը եր ունիլու իրավունք չօննք: Աֆարիմ հարսեն, աֆարիմ:

Եր ա դըռնալիս, տղեն ըսիս.- Տղա ջան, ալ մըզ տեղս բեն չօննք, եք թողնք գինննք:

Հռնքեն տարը աշղեն ըսիս ա.- Աշղնեն իրանց օրենքն օնն: Իս ալ իմ օրենքս օնմ: Առաջինը՝ սազդ եր կալ, գիծի օսստ: Երգրորթն ալ՝ քու տըղետ աղվայիշը իմ շատ խոշս ա եկալ: Որ տեղս ա հասալ, այ աշըղ, որոշածմ մի հրսանեքը էրկու արնք: Ինձ մի հասուն, նախշուտ աղչիգ օնմ: Գինիսնք մըր տոնը: Աղչիգս տալիսմ տղետ, միասին հրսանեքնք ըրիս:

Աշըղը գլոխ ա տալիս, սազը եր ունիս, գինիս հարսանը ձիանը հագին փռնիլիս: Աշղեն տղան ալ գինիս ա, հռնքատըռնը ձիանը հագին փռնիլիս թուղբոնավ գինիսն հռնքատըռնը ըղչիգանը հարսան շորր գեց տալիս: էրկու հառհնը, էրկու փըսի նստցրիս իրար կողքը, իրք օր, իրք քիշեր հրսանեքն ըրիս, ուտիս, խմիս ուլխնալիս: Հռնքեն վերջմը տանը հուրդավը անմահական իրք խնձոր ա վեր ինգիս: Մի խնձորը աշըղն ա նաղլ ասուղնն կես ըրիս: Մինը էրկու փըսեն նա էրկու հառհնրը: Մինն ալ դիլիմդիլիմն ըրիս բոժունիս հրսանեք եկած ղոնաղնուն, մինն ալ՝ նաղլը լսուղնոն:

13 (38). ՄՈՒՍԻ ԴԵՐ Ա ԴԸՌԱԾ

Իլալ ա, չի իլալ, Նոհի ըյամեն մի շատ խըղըճ մարթ լալ, անմը Մուսի:

Մուսու իլած-չիլածը մի նախշուտ կնեգ լալ, մին ալ մի քյամար էծ: Դու մի ասի շենեն դերը Մուսու կնգանը ըշկդիրած ա:

Դերը Մուսու կնգանը շատ ա ղանչաք ըրիս, որ՝ մի ճար արի, մի քիշեր գյոմ ծոցմտ մնամ: Մուսու կնգանը ճարը կտրած մի քշանաց շուդ մարթեն ըսիս ա.- էքոց բզարա օր ա, էծն երկալ տար ծախի: էրկու ջոբ չամեչ կօնս: Մի ջոբեն չամիչը ուտիլավ կգյոս, մի ջոբինտ ալ կպահս, կբերս ինձ

հետե: Մանցած փողն ալ խզքոռ վեչ անըս: Կպահս, կբերս, որ ցորեն չօննք, հաց չօննք:

Դունյից բեխաբար Մուսի քշանաց շուդավ եր ա կնալիս, էծեն վեզվը մի չաթո կպիս, նի գիծիս առաչը, գինիլիս:

Օրը մթնած հսնիլիս ա մի շեն: Ղոնաղ ա հնգիս մի բազզադ մարթու տոն:

Տնատարը Մուսա նանե հարց-փորձ ա ըրիս: Մուսի ալ նաղլ ա ըրիս, որ.- Քյասիբ մարթմ, տոնը հաց չկա: Էծը տնիսմ բզարմը ծախմ, էրկու ջոբ չամենչ օնըմ: Մինը ուտիլավ գինըմ տոն, մի ջոբն ալ տանմ կնգանս: Մանցած փողն ալ տանմ տոն, որ ցորեն օննք:

Աշխարքեն անտեղյակ Մուսի շորրը հնիս ա, միամիտ՝ հանգիստ քոն ինիս:

Տնատարը եր ա կնալիս իրան շորրը հնիս, դիրիս Մուսու կողքեն, Մուսու շորրն ալ ինքն գինալիս: Մուսի քշանաց շոդավ, տափը մթեն, եր ա կնալիս, որ էծն եր օնի գինի բազար: Տըսնալիս ա մի մարթ էծը սռնեն նանե ետ ա արալ, տարալ: Մուսի մնալիս ա զարմացած, ինքն իրան ըսիս ա. «Էն թա իսմ, պա ի՞նս հուվմ... կարող ա իս արազմ: Հա, էն է իսմ որ կա: Իմ փափաղը, իմ խըլղը, իմ երիշը, իմ քյամար էծը: Հետնաց թիաթավ գինմ: Թա էծը տարալ ա բազար, ծախալ, չամենչը կալալ, իսմ որ՝ կամ: Իս ալ՝ հի՞նչ կա որ, հալբաթ արազմ, նի յըմ ընգյած, իմ հետը գինիլիս»:

Բազզադ մարթը էծը տնիս ա բազար, ծխիս, էրկու ջոբ չամենչ ա ունիս, մանցած փողը դիրիս ջուբոմը:

Մուսի պատառ հըռե վըտ կացած, էս օմենը տսնալիս ա, ինքն իրան ըսիլիս.«Դե իմ հոքուն մեղքմ արալ, ասալմ՝ էծս օրեշ ա տարալ: Հեն ա՝ էն լա իսմ: Էծը բերալմ բազար, ծախալ, չամենչը կալալ: Օրեշ մարթ չի, իսմ որ կամ, իս ալ արազմ դըռած տեղս վետը ետ դըռնմ գինմ տոն: Իս ալ կգյոմ»:

Որոշիլիս ա Մուսի, թքիս հափռմը, փռնիս տան հղեն: Ըրակոնը մթնած գյոլիս հսնիս տոն:

Դե Մոսու կնեգը ալխային ա հնիս, որ Մուսի գենցած ա բազար, էրկու օրեն ետը կգյո: Դերեն բերած ա հնիս տոնը, քոն արած:

Կես քիշերին Մուսի ալ գյոլիս ա տոն: Կնեգը տըսնալիս ա Մուսու գենցեն օրիշ մարթու շոր ա: Զարմացած հրցրիս ա, թա.- Հո՞ր շորս գեցած:

Մուսի ըսիս ա, որ ինքը արազ ա դըռած: Ինքն ալ էծը ծախած ա, չամենչը կալած, քշանաց շուդավ կգյո:

Կնեգը համոզում ա, որ ինքը Մուսի ա, համա օրիշ մարթու շոր ա գեցած, փոխս ինգած, ետ դըռնի գինի իրան շորրը ճարի, գենի, գյո:

Մուսի ըսիս ա.- Ինջինմիշմ, համ ալ շատ մթեն ա, պատառ քոն ինմ, շուդով գինմ բերմ:

Մթեն տոն ա ինիս: Մուսի գիդալիս չի, որ դերը նայե իրաց տոն քոն: Կնեգը ջոկ տղեր ա բինալիս: Մուսի շատ ա քոն ինիս, թա խրեգ, Աստոծ գիդի: Քիշերեն մի վախտ եր ա կնալիս, հղե ինգիս:

Լուսը բինվալիս ա, Մուսի հսնիս ա մի ախպիրու: Կռնալիս ա, իրիսը լվանա, մնալիս ա զարմացած: Տսնալիս ա ջրին մաչին մի սադանու շոխկը կա:

- Յա՛, էս հինչ սադանա յա քշանաց, քիշերով եկած ա, նի մտած ջրին մաչը,- ըսիս ա Մուսի, ջրին նանե ետ քշվիս, յիշիս իրան գեցեն շորերեն, տըսնալիս հինչ՝ լա սադանան ինքն ա:

Դու մի ասի, որ տոնը մթեն ա ինիս, Մուսի շորուրը թողած, դերեն շորրրն ա գեցած ինիս:

- Յա՛, էս իս չըմ: Իս ալլա արազմ դըռած: Մհեգ իս հասածմ տոն, նայըմ կնգանս կողքեն նստած չամենչը ուտիլիս, ուլխնալիս: Սորինը էն ա ետ դըռնամ, գինմ տոն:

Մուսի դերեն շորրը գեցեն դեչանը տոն հասնիլը, օրը բինվալիս ա, արևը ինգիլիս: Մին ալ շենեն ժողովուրթը տսնալիս ա հ՞ինչ՝ Մուսի դեր ա դըռած: Մուսի դեչանը հասնի տոն, սաղ շենը սաս ա ինգիս, որ Մուսի դեր ա դըռած: Երն կնալիս կոճի-մըծ զոռնա-դհոլավ, երքավ-պարավ շենըհավան հվքվիս, գյոլիս Մուսու դրեթունը շնորհավորելու:

Զոռնա-դհոլեն սասեն դերը քոն տեղը եր ա կնալիս, որ շորրը գեցի, փախչի: Տսնալիս ա շոր կավիչնի: Խայտառակ չդռնալու հետե, ճարը կտրած մտակ հլավավ դերը ուզիս ա փախչի, սվերես ինիս: Սաղ շենեն ժողովուրթը տսնալիս ա: Մուսու դեր դռնալեն գաղտնիքը բինվալիս ա:

Ըսիսն՝ դեչանը ասօր դերը ամոթա փխչիլիս ա:

Մուսի ալ դերեն շորր գեցած, նստած յիշիս ա, որ էսա բզարեն նհետ գյոլական ա՝ ջոբըրը չամենչավ լիգը:

14 (39). ՔԱՇԿԵՆ ՓԱՆԴԸ ՊԵՏՔԻ Ա ԵԿԱԼ

Նաղլն ըրիս, որ մի շենմ մի քյորփա եթիմ տղա յա ինիս: Տղան մի օր մի պարիկամու տան, մի օր մի հրվանու տան՝ գյուղոխը պիհս լալ: Ըշտեղ մթնիս լալ, տեղն ալ քոն լալ ինիս: Դե եթիմ, անտեր խուխեն օրը հինչ կի-

նի: Մի օր ալ էտ խոխան եր ա կնալիս, լելավ նի ինգիս մի հղե, գինիլիս: Շատ ա գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա: Ըրկոնաց մքնած հսնիլիս ա մի շեն: Շեներն ըխպրին գյլխեն պատառ բեցուր քար ա ինիս: Նստիս ա քարեն երե, ջիրու եկուղ-գինցողեն թիմիշա ըրիս: Դե վընուք երկար հղե գենցած խոխա յա, բիզարած, քողցած, ծարավ, քարեն երե որ պատառ նստիս ա, լինջիս ա, լա քարեն երե յալ քունավ ա ընցրիս:

Մի կուճի աղչիգյ իրաց ձին բիրիս ա ըխպիրին ջուր տալիս, գինիս ա տոն, հորը խաբար ա տալիս, թա.- Մի կուճի ղարիբ տղա նայե ըխպրին գյլխեն՝ քարեն երե նստած, քունավ անցած:

Ըղչգյանը հորն ալ էտ մի թաք աղչիգյն ա ինիլիս: Օրեշ խոխա ինիս չի: Գինիս ա, քարեն երե քոն ինած տղան բիրիս տոն: Մի վախտ պիս ա: Տըսնալիս ա՝ տղեն տար-տրեկան դուս չի գյոլիս: Հետեն շոռ եկուղ կավիչնի: Գիդալիս ա, որ եթիմ, անտեր տղա յա, ինքն ալ շատ ըշկաբեց, խելունք, բինարար, հինչ որ ըսիս լալ, լսիլ լալ, սվըրիլիս, սհաթտա ըրիլիս:

Տղան պատառ որ մծնալիս ա, խըլքը բեն ա կտրիս: Էս ու էն հըրևան սվըրցրիսն, որ էտ մարթը իրան ծրի ա պիիս: Որ դուս դյո, գինի իրաց կոշտը՝ իրաք իրան համ հախ կտան, համ ալ ավելի սոչրն կպահն:

Տղեն պահուղ մարթեն ընջուկեն հսնիս ա հրըվներեն խայինեթուն: Մի օր տղեն ըսիս ա.- Դու օրեշ մարթկանց տված խրատնեն լսիս վեչ: Օմենը խայինեթուն ա, ինծ տղա խոխա չօնմ: Դու որ իտի խելունք մնաս իմ տանս, ջիգյարով բեն արս, մի քանե տռնուց ետը իմ ըղչիգյանս նհետ կփսակմ, իմ մըռնիլեն ետն ալ տոնս, տեղս իլած-չիլածս ալ կմնա քի հետե: Մի խոսքով, դու կդըռնս իմ տղան:

Տղան ուլխանալիս ա, համաձայնվմ:

Տղան մի օր վըչխրնեն տնիս ա հանդը՝ արուտ տալու: Կեսօրեն թողրը հվաքմն, հավան մքնիս ա, Աստոծը ուրուտալիս ա: Տղան գիդալիս ա, որ շառափ ա գյուլական: Վըչխրնեն թուփ ա ըրիս, շորրը հնիս, դիրիլիս մի տափակ քարու տակե: Ինքն ալ տկլվազի նըստիս քարին երե: Գյուռ չար ա ըրիս, շառափ ա գյոլիս, սելսու ըրիս: Պատառ անց հավան ալլա բինվալիս ա, թողբրը քշվիսն, արվը ինգիս ա, օրը բինվալիս: Տղան քարեն տակեն նհետ շորրը հնիս ա գինալիս, քարեն երե նստիս, շվե ըծիլիս: Վչխարնեն ցրվիսն, ըրծիլիս: Տղան մին ալ էն ա տըսնալիս՝ մի քաշք եկալ ա խվալ, ըռշկին վըտ կացալ, ասալ.- Այ տղա, քաշքը իսմ, էս գյուռչաթեն նաևե կրեցա չւմ պրծնի, թրջվալմ: Դու հի՞նչ փանդս արալ, որ թրջված չըս, չորս մանցած:

Տղան ասալ ա.- էտ իմ փանդն ա, ուրեշու ասի չըմ, որ ինքն ալ սվըրի:

Քաշկը ըսիս ա.- Չոբան ախպեր, որ քու փանդը ինձ սվըրցրս,՝ իս ալ քի սորուն փանդ կսվրցնմ, կարուղ ա քու գյանքմը պետքի գյո:

Տղան ըսիս ա.- Դե մի փանդ արի:

Քաշկը ըսիս ա.- Ուզի՞սս ինդի արմ, էս ցրված վըչխռնեն իրաք իրաց հվաքվն, նեստի կանան մին-մինու:

Տղան համաձայնվմ ա, ըսիս ա՝ արի՛:

Քաշկը ըսիս ա.- էրկու, էրկու, ալլա էրկու: էրկու, էրկու՝ ալլա էրկու:

Վըչխըռնեն հվքվիսն, նեստի կնալիս մին-մինու:

Քաշկը նորից ըսիս ա.- Ուզի՞սս ալլա վըչխռնեն ցըրմ հանդավը:

Տղան ըսիս ա.- Ցրի, տըսնամ:

Քաշկը ըսիս ա.- Մին, մին, ալլա մին: Մին-մին, ալլա մին:

Վըչխռնեն բուժինվիս, ցըրվիս հանդավը մին դըռնալիս:

Տղան ալ քաշկեն ասածը փուրցիս ա: Տըսնալիս ա՝ ղորթ ա: Այտս քաշկեն ըսիս ա.- Իմ փանդը էն ա, որ տըսալմ հավան մքնալ ա, թողբը հվաքվալն, շառափ ա գյուլական, շորրս հանալմ, դիրալ էս տափակ քարեն տակեն, իս ալ երե նստալ: Շառափը եկալ ա, պրծալ, արվը ինգյալ ա: Իս ալ երմ կացալ, քարեն տակեն նանե շորրս հանալ, գեցալ:

Քաշկը պատառ խիյալ-խրիյալ ա արալ, ասալ.- էտ փանդ չի դըռալ, իտի բեն, իտի փանդ օմեն մարթ ալ կարի արիլ: Պետք ա մի օրեշ բեն ալ սվըրցրս:

Տղան ըսիս ա.- Իս օրեշ բեն գիդալիս չըմ: Իմ գիդացած փանդը լա էտ մինն ա,- ըսիս ա, ըսկսիս շվեն ածիլը:

Քաշկը գյուլոխը քուրիլավ գինիս ա:

Մի վախտ անց ա կնալիս: Տղան մի ըրակու հանդեն նհետ գյոլիս ա տոն, տսնալիս իրաց դրքեն զուռնա, դհոլու սաս ա գյոլիս, հրսանեքն ըրիլիս:

- Էս հի՞նչ հրսանեք ա,- զարմացած հըրցըրիս ա տղան:

- Էս մոտե շենեն նհետ մի շատ հարուստ մարթ եկած ա աղչիգյս օզած տղեն հետե: Հրսանեքնք ըրիս,- ըսիս ա ըղչիգյանը հարը:

Տղան շշմած ըսիս ա.- Պա չի՞ որ խոսքս տված, որ աղչիգյտ ինձ տաս:

- Հա, խոսքմ տված, պայման ալ կապած չըմ: Գինի աշխարհ շոռ եք, հարց ու փորձ արի, տըս, որ պըլ հարուստը իրան ախչիգյը կտա իրան տանը նուքյարեն, որ իս ալ հարուստ փսացոն թողմ, տամ իմ անտեր, անտոն նյուքարեն,- ըսիս ա ետ դըռնալիս, մի սորին ալ ծծղիլիս:

- Շատ լավ,- ըսիս ա տղան,- բեննեն ըռշկին ծըծաղը, ծըծաղ չի: Մարթ էն ա, որ բեննեն վերչմը ծծաղի,- ըսիս ա, գինիս եռ ինիս մի ծառու, հըչմը

նըստիս, քաշկեն սվըրցրած փանդը բինիցրիլիս. «էրկու, էրկու, ալլա, էրկու»:

Ըստի որ ըսիս ա, հինչքան մարթինք որ եկածն ինիս հրսանեք, օմմեն նեստեյն կնալիս մին-միևու՝ մնալիս վըտը:

Ըղչիգյանը հարը մնալիս ա զարմացած: Շենեն դերը հալա եկած չի ինիս հրսանեք: Վազ ա տալիս, գինիս, որ դերեն խաբեր տա, բալքյա գյո մի բեն արի: Դերը տոն չի ինիս: Հրաշք բենեն հետե խաբեր ա տալիս դերեն կնգանը: Դերեն կնեգը զարմացած գյոլիս ա, հրաշք բենը տըսնի, ինքն ալ ա չուրունալիս, նեստե կնալիս ղունաղնան:

Դերը գյոլիս ա տոն: Տըսնալիս ա կնեգը տոն չի: Խոխենքը խաբարն տալիս, որ գենցած ա հրսանեք: Դերը մնալիս ա զարմացած, թա. էտ հի՞նչ հրսանեք ա, որ իրան թողած, կնգանն կանչած, տարած: Եր ա կնալիս գինիլիս: Դերը լա տեղ ա հսնիս, ինքն ալ ա նեստի կնալիս ղունողնան:

Ըղչիգյանը հարը էտ որ տսնալիս ա, կուռները խտտիս ա, լեց ինիս:

Դերը վխեցած, սրտաճաք դըռած ըսիս ա.- Այ անիծված մարթ, լեց ինիլու վախտը չի: Քի քաշկա պարիկամ, դուշման օնս: Ընդոր շոռ եք ճարի, ղանչանք, պաղատանք արի, թող գյո մըզ ազադի: Թա չէ, կոչ կգյոնք, քար կդըռննք:

Ըղչիգյանը հարը խիյալ ա ըրիս, նոր մըննա ինգիս, որ նոքյարը ասալ ա. «Մարթ էն ա, որ բենեն վերչըմն ա ծծղիլիս»: Կա-չկա ընդուր սարքած բենն ա: Դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, տըսնալոս ա՝ նոքյարը նայե մի ծառու երե նստած, վըտըրը կախ տված, իրան հետե շվե ա ըծիս: Մուտնալիս ա, ղանչաք ըրիլավ ըսիս, որ ղունողնոն ազադի գինն, աղչիգը անպայման կտա իրան:

Տղան ծառեն նանե վեր ա գյոլիս, գինիս, ըսիլիս.- էս հռնքեն տարը հո՞ւ վա, թող սաս արի, խոսի:

- Իս ըմ,- կմկմալով ըսիս ա մի հիլիվր:

- Ասի, տըսնըմ, ձեր քար դըռնիլն եք ուզի՞ս, թա հառհնը տանիլը:

- Մըզ աղչիգ տանիլը ուզիս չընք: Քու ձերքրը պաչմ, մըզ ազադի, գիննք,- ըսիս ա թազա փսացվեն հարը:

- Դե հվատմմ ձեզ, մինի-մինի ազադմմ: Հու վեր կազադվի, վըտ կնալու իրավունք չօնի: Պետք ա դեչանը իրաց շենը, իրաց տոնը առանց ետ յիշիլու, վազ տալով գինի: Հու վեր վըտ կանա, ետ եշի, քար կդըռնի:

Տղան ըսկսիս ա մթկոմը ասիլը. «Մին-մին, ալլա մին»:

Օմեն մհետ ըսիլավ, մի ղոնաղ բեց ա ինգիս: Առանց վըտ կնալու, առանց ետ յիշիլու ինդիյն փխչիս, գինիս, հունչոր կետ կպած դանան նախիրեն նանե:

Վերչմը ըղչգյանը հարը առաչ ա կնալիս, ըսիս.- Հու վեր իմ պարիկամս ա, իմ լավ օզողը, թող գինն վեչ: Հրսանեքը, հրսանեք ա: Աղչիկգյս փսկիսմ, տալիս իմ տանը պահած, մծցրած տղեն:

Քաշկեն սվըրցրած փանդը տղեն պետքի ա գյոլիս: Օխտը օր, օխտը քիշեր հրսանեքն ըրիս: Հու վեր պարի մարթ ա, տղեն պարին ա կամենմ, ուլխնալիս ա, ուտիս, խմիս, քեփ ըրիս:

Հու վեր ալ չար մարթ ա, նախանձիս ա, իրան չկամեթունից քուռունալիս ա, մնալիս տափրը տրփտրփիլիս:

Էտ օրեն երը ըշխարքմը ղայդա յա դըռնալիս: Խելունք նոքյարն ալ հարուստեն աղչիգյն ուզիս ա, ինքն ալ ընմավր մըծ մարթ դըռնալիս:

15 (40). ԻՐՔ ՀԱՓՈՒՌ ՎԸՂԸ

Քյոհնա թաքավերներեն վախտը մի վազիր շոհրաթ լալ արած: Օմեն օր քշանաց շուդավ գինիս լալ քղաքից դուս իրան հետե վարգյան ըրիս: Վազիրը տըսնալիս լալ, օմեն օր քշանաց-քիշերավ, մի սիպտակ մրքավ հիլիվր դարվիշ մի սինու մաչե առանձին-առանձին իրք հափուռ վըղ թուփ արած, դիրած ա ինիս ըռշկին, սուս ու փուս նստած:

Մի քշանաց վազիրը մուտնալիս ա դարվիշեն, հրցըրիլիս.- Դարվիշ բաբա, էտ խե՞ յըս գյոլիս քշանոց-քիշերով տեղս նստիլիս:

- Վազիրը ապրած կենա, վըղմ ծխիլիս,- հանդարդ ըսիս ա դարվիշը:

- Օմեն մի հափուռ վըղը հի՞նչ աժի,- հըրցըրիս ա վազիրը:

- Մի վըսկե աժի,- ըսիս ա դարվիշը:

Վազիրը մի վըսկե տալիս ա դարվիշեն, ըսիս.- Մի հափուռ վըղ տոր ինձ:

Դարվիշը սինուն մաչեն իրք հափուռ վըղեն մինը եր ա ունիս, շաղ տալիս, ըսիս.- Էս վըղը էն մարթեն գյլխեն, որ սրտեն թաքուն խոսքը կնգանը կասի...:

Վազիրը պատառ խիյալ ա ըրիս, դուս անիս ալլա մի վըսկե տալիս դարվիշեն:

Դարվիշը ըրկումինջին հափուռ վըղը եր ա ունիս, շաղ տալիս, ըսիս.- Էս վըղը էն մարթեն գյլխեն, որ տղան իրան մաշկեն նանե չի ինի արսա եկած:

Տեղտ վազիրը կուճի մաննը կծիս ա: Դու մի ասի, վազիրեն տղա չօնի: Գենցած ա եթիմխանից մի տղա բերած պիհլիս: Վազիրը խյալ ա ըրիս, խյալ, մի վըսկե ալ տալիս դարվիշեն:

Դարվիշը իրքմինջի հափուռ վըղը շաղ ա տալիս, ըսիլիս.- Էս վըղը էն մարթեն գյլխեն, որ իրան աշխադանքը, արամունքը արածը գյորա գնահատիչն, ինքը ալլա կշարունակի աշխադիլը:

Վազիրը գինիս ա տոն, որոշիս, որ. «Պետք ա դարվիշեն ասած իրք խոսքն ալ փորձըմ: Տըսնամ հինչքանավ ա ղորթ ասած: Իրք վըսկե տալն արժե՞ր, թա՝ չէ»:

Քիշերվա կեսեն հինչ որ պետքն ա ինիս, որ պետք ա արի, վազիրը օմեն հինչ որոշիս ա, քոն ինիս:

Վազիրը էն թաքավերեն հետե, որ ղունլուղլալ ըրիս, էտ թաքավերը չտըսնված մարալու սեր լալ: Մի մարալ լալ պիհիս, որ ըշխարհքըմը նմանը իլա չի: Հինչ թաքավերութունից, հինչ ընմավր մարթ լալ գյոլիս ղոնաղ, ըռշկեն հըրթեն ուզիս լալ թաքավերեն մարալը տըսնի: Թաքավերն ալ օմեն քշանոց քանե գինի չի լալ մարալը տըսնի, հաց չի լալ օտի:

Կնգանը փորձիլու հետե, դարվիշեն ասած խոսքը գյորա, վազիրը մի քիշեր կնգանը քունե եր ա կցրիս, ըսիս.- Այ կնեգ, սըրտս մի բիրդամ մարալու մըսու խըրաված ա օզալ: Խյալմ արալ, որ օտըմ վեչ, կարող ա մըռնմ: Ճարս կտրած գենցածմ մըր մարալը մորթած: Եր կաց, մըսը շարի շիշրը: Իս ալ գինմ կրակը վառմ, խրավնք, օտնք:

Մըսը խրվիսն, ուտիս: Վազիրեն կնեգը տըսնալիս ա վազիրեն քոնը տնիս չի: Տանը մաչավը դեսուդեն ա շոռ գյոլիս: Հրցրիլիս ա.- Պա մրալեն մսեն խրավածը կերալս, խի չը՞ս քոն ինիս:

Վազիրը ըսիս ա.- Այ կնեգ, պա ասի չըս, մի մըծ սխալ բենմ արած: Թաքավերը որ գիդա, ինձ կախաղան կանի:

- Հի՞նչ սխալ բեն ա,- վըխեցած հրցրիլիս ա կնեգը:

- Պա ասի չըս, ա կնեգ, քիշերը մթեն լալ: Մըր մրալեն տեղը թաքավերեն մարալննմ մորթած:

Դե, հի՞նչ մարալ մորթիլ՝ վազիրը կնգանն ա փուրծիլիս:

Կնեգը յորղանը գիցալ ա գյլխեն, սուս արալ:

Քշանոց լուսը բինվալեն նիետ վազիրեն կնեգը եր ա կացալ կուռները խստալ, դըրբըզին ըռշկին նստալ: Հինչ կնեգ քյուչովը անց ա կացալ, զարմացած հըրցրալ ա, թա.- Խեր ինի՞: Քշանաց քիշերավ հի՞նչ ա պդահած, որ կուռներտ խստած, նստածս քյուչոմը:

- Պա ասի չեք, աս քիշերը վազիրեն սըրտը մարալու խրաված մըս ա օզալ: Սթեն քիշեր լալ: Վազիրը մըր մարալը մուրթիլեն տեղը, թաքավերեն մարալն ա մորթած:

Քաղաքեն կնանուհնոցը ըռշկին դարդահան ա դըռալ վազիրեն կնեգը:

Դե կնանուհցն ալ իտի մի բեն լալ պետքի: Հալա լուսը բեցված վեչ, խաբերը հըսցրալն թաքավերեն:

Թաքավերն ալ առանց սոտը, ղորթը պարզիլու, հոքմ ա ըրիս, որ՝ գենցեք վազիրեն բերեք կախաղան ըրեցեք: Թաքավերեն նոքյարնեն որ գյուլիսն վազիրեն տնիլու, վազիրը տղեն քունե եր ա կցրիս, ըսիս.- Այ տղա, եր կաց էս, նուքյարնան համոզի, ինձ տանն վեչ կախաղան արն: Թողն պատառ անց կանա, դեչանը մի մարթ ճարնք, ղաթ ինգի, թաքավերեն վնասը տանի, հոքմը փոխի:

- Թաքավերեն հոքմն ա, տընիսն, գինի: Բեյթուն տեղը քոնս խնգարմ ա,- ըսիս ա եթիմխանից բերած վազիրեն տղան:

Վազիրը նոքյարներն ըսիս ա.- Օմենը սոտ բեն ա: Մարալը նայե իրան տեղը: Գիննք ձեր աշկավը տըսեք: Այտս գիննք թաքավերեն կոշտը: Թաքավերեն խափածն:

Վազիրը գինիս ա թաքավերեն ըսիս.- Արևշատեթուն մըծ թաքավերեն, էս ի՞նչ հոքմս տված:

- Մարալս գյուղացածս, մորթած,- ըսիս ա թաքավերը:

- Տըսա՞ծս՝ ըսիս, թա ուրեշու խոսքավս ըսիս,- հանգիստ հրցրիլիս ա վազիրը:

- Սաղ քաղաքեն կնանենքնն ըսիս,- ըսիլիս ա թաքավերը:

Այտս կզնվիս նոքյարնան երե, որ խե չըն տարած կախաղան արած, որ բերածն իրան կոշտը: Նոքյարեն ըսիսն, որ գենցածն իրաց աշկավը տըսած, որ մարալը նայե իրան տեղը

Թաքավերը խյալ-խյալ ա ըրիս, վազիրեն ըսիս.- Տեղս մի մըծ գաղտնիք կա, եք էտ գաղտնիքը դու ինձ ասի:

Վազիրը նստիս ա նաղլ ըրիս, ըսիլիս.- Թաքավերը շատ ապրած կենա, մի քանե օր առաջ մի դարվիշա նանե իրք հափուռ վըղմ լալ կալած, ուզեցալմ էտ իրք հափուռ վըղեն դուզեթունը, օժը փորձմ, տըսնամ ղորթ լալ, թա՝ սոտ: Առաջի հափուռ վըղը դարվիշը ցըրվ ա տվալ, ասալ՝ «էս վըղը էն մարթեն գյլխեն, որ սրտեն գաղտնիքը կնգանը կասի»: էս խոսքը փորձիլու հետե մարալետ մորթիլը ինձանե սազմ արալ, կնգանս խափալ, ասած, որ տըսնմ կնեգյս հունչուր գաղտնիք իրան մաչեն քանե օր կկարի պահի: էն ալ հալա լուսը բեցված վեչ, սաղ քաղաքը տարածալ ա, եկալ

հասալ քի: Առաջին խոսքը դուզբադուզ կադարվալ ա: Ըրկումինջինը[10] ասալ ա՝ «էս մի հափուռ վըղը էն մարթեն գյլխեն, որ մի տեղ հալալ բեն կարի, ղադրը գիդա չըն: Ալլա կշաորւնակի բեն արիլը»: Էս խոսքն ալ ա դուզբադուզ կադարվալ: Եռեսուն տարե ա, որ քի հետե հավադարիմ, արթար վազիրեթունմ ըրիլիս: Շոռտ՝ դուզ կըրիսմ, օմեն բենմ օքնության հասնմ, օմեն մի նըղ տեղոց քյոմագ ըրիս, դուս բիրիս: Համա դու իմ անմից մի բեն լսալս, փոխանակ նշանց տաս քու մծեթունը, ըստուգս՝ սոտ ա, ղորթ ա, սհաթտա հոքմս արալ, որ վազիրեն կախաղան ըրեցեք: Դու որ եռեսուն տարվա աշխադանքս մի սոտ խոսքավ տափավնս տվալ, ալ իմ քու կուշտեն խթմաթ արիլը հադար ա: Լա էս օրվանից քի հետե վազիր ճարի: Պապական խոսքը ըսիս ա՝ «Ճուրը մի տեղ որ գյոլ տա, տար վեչ կենաս, կվըտի»: Դարվիշը իրքմինջին հափուռ վըղը կը ցըրըվ ա տվալ, ասալ՝ «էս մի հափուռ վըղն ալ էն մարթեն գյլխեն, որ տղան իրան մաշկեն նաեե ծնված չի ինի»: Էս խոսքն ալ շատ դուզ ա դոս եկալ: Իմ տղան ինձանե չի ծնված, եթիմխանուց եր կալած տղա յա: Ինձանե որ ծնված լալ ինի, նոքարնետ որ եկալն ինձ տանն կախաղան արն: Ղղա լալ: Եր լալ կանալ ձըրքը-վըննը ինգիլ, թա՝ իմ հոր ըշտեղե՞ք տնիս, դմացեք, տըսննք էտ բենը սո՞տ ա, ղո՞րթ ա: Համա քոնե երմ կցրալ, որ թողի վեչ, ասալ ա՝ «Ինձ բեն չօնմ: Գինի՛, քոնս խնգարլ մա»:

Վազիրը էսքանը ըսիս ա, գյոլիս տոն, պատառ վըսկե ա ինիս պահած, եր ունիս, տոն-դըրքու նաեե ձեռք քշիս, գինիս մի օրեշ քաղաքմ մի դուքան բինիլիս, առուտոր ըրիս, գյուլոխը պիհս:

16 (41). ԱՇԽԱՐՔԸ ՄԻ ՓԻԼԻՆՔՅԱՆ Ա

Մեր պապրը նաղլն լալ ըրիս, որ քյոհնա դովրումը մի թաքավեր ա ինիս: Էդ թաքավերեն ժառանգ չի ինիս: Վերչը Աստուծ խղճալիս ա՝ հիլիվր վախտը մի տղա ժառանգ ա տալիս:

Թագավերը պարի մարթ ա ինիս, ժողովըրթեն միշտ պարի աշկավ ա եշած ինիս: Երգիրեն ժողովուրդն ալ որ լսիս ա, թա թաքավերեն Աստուծ ուլխցրած ա՝ վերչը տղա ժառանգ ա տված, որոշիսն իրանք ալ գինն թաքավերեն աշկալուսանք տան՝ ուլխցըրն:

[10] Հեքիաթի սկզբում այս պատվիրանը երրորդն է (ծան. կազմ.):

Դե ժողովուրթն ալի՛: Երիննան-դուրան հուր օժ հինչ պատալ ա՝ մինը մի հոլ, մինը՝ մի գյոռնը, մինը՝ մի դանա, մինը՝ մի բեռնը երըմիշ, երն կալալ, գենցալ, թաքավերեն աշկալոսանք տվալ:

Մի քյասիբ շինացե գինի գիծիլում շատ սորին ուստա լալ: Էտ ալ եր ա կացալ, մի չորք տեգ գինի լցրալ, բեռնալ էշեն, գենցալ աշկալուսանք: Դե մարթու բախտեն հաջողութունը որ գյուլիս ա, գյուլիս ա: Էն վախտն ա հսնիս թաքավերեն պալատը, որ քեփեն թունդ վախտն ա հնիս, կարսնան գինին ալ պրծած ա հնիս:

Դե թաքավերեն հինչ վեջն ա, որ գինին պրծած ա: Վազիրներեն հոքմ ա ըրիս, որ ըշտեղ որ է ա, գինի ծրեցեք:

Էտ նըղ միջալեն մի վազիր գյուլիս ա թաքավերեն ընջուկեն հնգիս, ըսիլիս.- Թաքավերը ապրած կանա, մի շինացե ա եկած ըշկլուսանք, չորք տեգ գինի ա բերած:

Թաքավերը շատ ա ուլխնալիս, ըսիլիս.- Գենցեք շինացոն ալ բերեք, գինին ալ:

Աշկալուսանքի կերուխումը, քեփ-ուրախեթունը որ վիրջինալիս ա, թաքավերը բիրիս ա գինի բերուղ շինացուն մի քիսա վընսկե տալիս, ըսիլիս.- Էս նըղ մաջալեն որ էտ լավեթունը արալս, գինին բերալ հնսցրալ, թողա չընս իմ ղուևողնոն քուշտեն բիաբուռ դընռնմ, քի հալալ ա, տար ծախսի: Մին ալ իս քանե սաղմ, դու թաքավերական ոչ մի հարկ, ոչ մի տուրք տալ չընս: Ազադս:

Շինացեն շնորհակալութին ա հայտնիս: Իրան առանձին տեղն հնիս տված: Գինիս ա քոն հնիս: Քշանոց շուդավ եր ա կնալիս, եռ հնիս էշեն, հղե հնգիս դիբի տոն:

Թաքավերեն մի լղար, չիլիմսընզ վազիր ա հնիս: Շատ ա նախանձիս, որ պատառ գինու հետե մի քյասիբ շինացե կրեցալ ա թաքավերեն նանե մի քիսա վընսկե իք օնիլ, տանիլ:

Եր ա կնալիս նստիս ծին, գինիս շինացուն առաչը կտրիս, կռվու մահնա սրքիլու հետե, շինացուն ըսիս.- Խոնախա, դու շատ գիդ մարթս ըրվալիս, պատառ գինի բերալս տվալ թաքավերեն, խափալ, մի քիսա վընսկե իք կալալ, ուրեմն դու շատ բեն կգիդաս: Ասի, գիդամ՝ աշխարքը հի՞նչ ա:

Շինացեն գյուլխավ ա հնգիս, որ վազիրը կռվիլու մինուվ ա շոռ գյուլիս, որ վընսկուն քիսան ձեռքեն իք օնի:

Շինացեն ջանավ, բոյավ, շատ ղվաթի լալ: Տեղը հնգի՝ վազիրեն վեզը ջանեն նանե ծընտուծոտու վիզու նման կքաշի՝ բուք տա: Համա դե հի՞նչ

արած, իրան ձեռքեն կռվիլու հետե ոչ մի բեն կավչնի: Վազիրն ալ թաքավերական թորը դուս ա կալած, ձեռքեն հազր պահած:

Շինացեն պատառ խիյալ ա ըրիս, էշեն նաեն վեր գյուլիս, ըսիլիս.- Աղա վազիր, որ ուզիսս գիդաս ինձանե՝ աշխարը հի՞նչ բեն ա, խնքրիսմ, դու ալ ձիյանտ նաեն վեր գյուս:

Վազիրը ձիանը նաեն վեր ա գյուլիս:

Շինացեն ջուբին նաեն վըսկան քիսան դուս ա ունիս, տընիս, դիրիս պատառ հըռե մի քարու երե, ըսիս.- էս թաքավերեն տված անամն ա, դիրիսմ տեղըս: Քի ալ թաքավերեն տված անամը՝ թորն ա: Դու ալ թորը տար դիրի քարեն երե:

Վազիրը թորը տնիս ա դիրիս քարեն երե:

Այտս շինացեն գեցեն շորրն ա հնիս, տընիս, դիրիս քարեն երե, գյուլիս էշեն կողքեն վըտ կնալիս, վազիրեն ըսիս.- Աղա վազիր, խնքրիսմ, դու ալ քու շորրը հանս, դիրս քարեն երե:

Վազիրն ալ զարմացած, շորրը հնիս ա, տընիս, դիրիս քարեն երե:

Էտ մաջալեն շինացեն լոք ա տալիս, վազիրեն թորը ձեռքն ունիլիս, վազիրեն ըսիլիս.- Թա ուզիսս դերտակ գյուլոխտ լղար ջանետ երե մնա, սուսուփուս եք, իմ շորրը եր կալ գեց:

Վազիրեն լուզին վախութունեն կապ ա հնգիս: Շինացուն շորրը սուսուփուս գինալիս ա, վըտ կնալիս: Շինացեն նորից ըսիս ա.- Դե, եք եռ հնի իմ էշեն, քշի գինի, մի քսան գեզ հըռե վըտ կաց:

Ճար հինչ, վազիրը գյուլիս ա եռ հնիս էշեն, քշիս, գինիս պատառ հըռե վըտ կնալիս: Շինացեն մուտուննալիս ա, վազիրեն շորրը գինալիս, թորը կողքավը կախ ըրիս, վըսկուն քիսան դիրիս ջուբոմը, եռ հնիս ձիանը, այտս ըսիլիս.- Աղա վազիր, սորին գիդաց, մտետ պահի, որ աշխարքը մի փիլինքյան ա, մինը եռ ա հնիս, մինը վեր ա գյուլիս: Աշխարքեն էս օրենքը գյորա ասօր իս եռմ հնալ, դու վերս եկալ: Դե էշը քշի, գինի: Քու գյանքմը ըշտեղ քու մտածածը կասս, տեղն ալ իմ գիդացածեն հետե յալ կխոսս:

Էսքանը վազիրեն խրատ ա տալիս շինացեն, ձին քշիս, գինիս հղցին երե մի տեղ քյարվանսարա յա հնիս, վեր գյուլիս, նստիս, իրան հետե հաց ոտիս, դինջհնալիս:

Խաբեր տանք չըլմըսըզ վազիրեն նաեե:

Թաքավերեն խասյաթ ա հնիս: Օմեն քշանաց շուդավ էրկու վազիրու նհետ գինիս ա քաղաքից դուս՝ պատառ շոռ գյուլու:

Թաքավերը մին ալ էն ա տըսնալիս, որ մի մարթ էշեն նստած գյուլիս ա: վազիրնոն ըսիս ա.- Հալբաթ ըրկոնոց շինացեն ա՝ հղեց չար մարթինք փըռնած ու իմ տված վըսկեն իք կալած, գյուլիս ա գենգյատ:

Գինիսն մուտնալիս, տըսնալիսն իրան չըլըմսզ վազիրն ա, մնալիսն զարմացած: Հրցրիսն՝ պա էս հի՞նչ բեն ա:

Վազիրը ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա, «Աշխարքը մի փիլինքյան ա, մինը եռ ա ինիս, մինը վեր ա գյուլիս»:

Թաքավերը վազիրնոն ըսիս ա.- էս խոսքմը մի բեն կա: Շուդ գենցեք, շինացուն ճըրեցե՛ք, բերե՛ք:

Վազիրնեն գինիսն հսնիս շինացուն, ետ բիրիս թաքավերեն կոշտը: Շինացեն գյլխեն եկածը նաղլ ա ըրիս:

Թաքավերը հոքմ ա տալիս.- Անխըլք գյուլոխը չըլըմսզ ջանեն երե թողնիլը մեղքը բեն ա: Տարե՛ք, գյուլոխը կտրիլ տվե՛ք, թողեք ջանը ազադվի:

Շինացուն ալ ըսիս ա.- Քի ալ վազիրեթունը սզիս ա: Ասօրվա նհետ դու վազիրս, որ կաս: Բալի, ղուրթավ՝ «Աշխարքը մի փիլինքյան ա»:

Անխըլք վազիրը վեր ա եկալ, անտեղի գյուլոխը կտրիլ տվալ, խելոնք շինացեն ալ բիցիրացալ ա փիլինքյանը երե՝ վազիր դըռալ:

17 (42). ԹԱՔԱՎԵՐԵՆ ԴԱՎԱՆ

Մըր մըծրը նաղլն լալ ըրիս, որ քյոհնա այամեն իլալ ա, իլա չի, իրք տղամարթ ախպերն լալ: Ըտուց մի պառավ մար լալ:

Իրք ախպերը միասին մի ըրկոնն իրաց մորը նհետ դեսեն, դենեն պատառ սոհբաթ ըրիլեն ետը, հրցրիսն.- Այ մար, հալա մի սորին, տեղը տեղեն նաղլը արի գիդանք, մըր հարը հի՞բ ա մըռալ, հինչո՞ւ հետե յա մըռալ, պատճառն հի՞նչ լալ, որ ջահիլ, ջիվան մըռալ ա:

- Ձեր հար իմ կարճ խըլքավն ա մըռալ,- ասալ ա պառավ մարը, սուս արալ:

- Սուս մա արիլ, պատճառն ասի, գիդանք,- խոսքը առաչ ա տարալ մըծ տղան:

Մարը նաղլը իստի ա ըսկսալ.- Քուղցծ տարե լալ, հաց չի լալ ճրվիս: Օմեն մի հացը դըռած լալ մի մարթու գին: Քյասիբ մախլուղը քողծու կուտուրվիս լալ: Երգիրեն թաքավերը փոխանակ մտածի քյասիբ մախլուղը սովից փրկիլու հետե, անջաղ մի սորին դավա բազաքլամիշ լալ արած, օմեն օր քշանաց շուդավ ըղչիգյանը նսցրիս լալ դիվին, մի քանե մարթ շիվե ըծիլավ, դհոլ թկիլավ, քեփ-օրախթունավ գյուլիսն լալ քաղաքը շոռ

գյուլիս, քողծու կուտուրվիս ժողովուրեն ալ կըզնվցրիլիս: Թաքավերեն նման վերաբերմունքը ծեր հար կրեցա չի տանի: Մի քիշեր գենցալ ա դավան գյուղացալ, բերալ մորթալ, նի ածալ կարասը՝ դվին տհալը, որ դուք օտեք, սովից փրկվեք, մըծանաք: Թաքավերեն վազիրնեն նի յըն ինգյալ քաղաքը շոռ եկալ՝ գյուղացած դիվին հետե: Կրեցա չըն ճարի: Եկալան ինծանե ալ հրցրալ: Դե, դավին տհալը մըր տան, վազիրնեն քիշեր-ցիրկ շոռն լալ գյուլիս: Մեղքսն եկալ: Խիյալմ արալ, որ մի դավան հի՞նչ ա երգիրեն տար թաքավերեն հետե: Խըղճ մարթը խազինա չի լալ կտրած, մարթ չի լալ ըսպանած, թալանած, որ թաքավերը տանի կախ տա: Մի դավա լալ բերած մորթած, իրան խոխենքը սովից փըրկիլու հետե: Իստի խյալմ արալ, ասալ: Վազիրնեն ծեր հոր փռնալն տարալ մի դավու հետե կախաղան արալ:

Տղեցը մարը որ իտի նաղլ ա ըրիս, դու մի ասի երգիրեն թաքավերը հալա համանն ա: Ալլա, օեմն օր աղչիգյանը դիրած բազաքլամիշ արած դիվու երե, շվե ըծիլավ, դոմբի թկիլավ, խաղավ, պարավ բիրիսն քաղաքեն քյուչենավը շոռ ըծիս:

Տղերքը որոշիսն իրաց հորը քինը թաքավերեն նանե հնիլու հետե, գինն դավան գյուղանան:

Քիշերեն մի վախտը տղեցը մարը քոնից եր ա կնալիս տըսնալիս տղեքը բենե յըն:

Հրցրիս ա.- Օղուլ, բալի յա դուք ալ եք գենցալ թաքավերեն դավան բերած, մորթած:

Տղերքը մինը միներն ըսիս ա.- Ախպեր, մըր մար բենեն խաբեր ա դըռած: Վայ թա ալլա շոռը հանի: Խաբեր տա, մըզ ալ փըռնըն, տանն կախաղան արն: Քանե շուդ ա, հարկավեր ա մի փանդ արիլ:

Մըծ ախպերը ըսիս ա.- Դուք դավան պըտրկեցեք, իս գինմ մըր մոր մի բենավ խափմ:

Մըծ ախպերը բիրիս ա տանը մաչավը մի փարդա կպիս, որ մարը տըսնի վեչ, թա էն ղոլեն տղեքը հինչն ըրիս: Ինքն ալ մի շվե եր ա ունիս, մորը կողքեն նստիս, ըսկսիս շվեն ածիլը, խաղ ասիլը, պար գյուլը:

Մարը ըսիս ա.- Օղուլ, էս հի՞նչ եք ըրիս: Պա իս գիդա՞մ վեչ, մըր տան հինչ ա կադարվիս:

Տղան ըսիս ա.- Սուս արի, նստի: Աս ըրակու դու թազգա հառհնս: Քի հետե հըրսանենք ըրիլիս: Քեփնք արմ, ուլխանմ:

Էրկու ախպերն ալ դավան մուրթիսն, վընննը, գյուլոխը, փորը, տղորենքը հվքիսն նի ըծիս կաշվեն մաչը, քաղաքեն կողքավը վարար գետ լալ

գինիս, տընինսն նի գիծիս գետը՝ քշիս ա տնիս: Հետքը կուրցրիլիս: Մընն ալ տհալն ընիս, նի ընծիս մի կարաս: Քշանաց շուդավ օմեն մինը թուղիս, գինիս իրան բենեն: Տհալն ալ փափուկ-փափուկ ուտիլիս:

Էքսի քշանաց, շվե ընծիլավ, դոմբի թկիլավ, գինիսն դավան որ բերեն, թաքավերեն աղչիգը նստի, քաղաքը շոռ գյո: Գինիսն տընսնալիս դավան կավիչ:

Մի քանի օր, քիշեր-ցիրկ սաղ քաղաքը տակն ու վերն ընիս: Դավին հետքը կրիս չընն մի տեղ ճարին: Անհետ կուրիս ա:

Թաքավերը վազիրներին ըսիս ա.- Կա, չկա կարուղ ա էն առաչի դոնուն դավան գյուղընողուն տղեցը բենն ինի: Գենցեք շոռ եկեք:

Թաքավերեն վազիրնեն սիվքա գինիսն մըծ ախպուրը կոշտը: Տսնալիսն նայե ջըլկվըրմը նստած, կտավ ա գյուրծիս: Հրցրիսն.- Թաքավերեն դավան գյուղացածն: Կարո՞ւղ ա տըսած ինս, խաբեր ինս:

Մըծ ախպերը իրան քառու տեղ ա դիրիս, ըսիլիս.- Իմ փեշակը կտավ գյործիլն ա: Թա քիլը սորին ա ինիս, օրական մի տասը գեզ գյուրծիսմ: Թա յավա քիլ ա ինիս, կրիս չըմ:

- Այ մարթ, մընք կորած դիվին նանե յընք հրցրիս: Դու կտավեն նանե յըս խաբեր տալիս,- ըսիս ա վազիրնոն մինը, իրան հարցը կրկնիս:

- Դե Աստուծ բարաքյաթ տա: Կտավը ծխիսմ, խուխենցս հետե օրվա ապրուստ ըստեղծմ,- պադասխնիս ա ջուլիակը:

- Ըստուր նանե դավա գյուղանուղ չի դուս գյո,- որոշիսն վազիրնեն, ձեռք քշիս գինիս:

Վազիրնեն գինիսն, տընսնալիս մաչնակ ախպերը նայե եգինքը լծած արտ ա վրիլիս: Հրցրիսն.- Թաքավերեն դավան գյուղացածն: Կարո՞ւղ ա խաբեր ինըս:

Մաչնակ ախպերն ալ ա իրան քառու տղղ դիրիսմ ըսիս.- Այ ձեզ մատաղ, իս սխալ բեն չըմ փռնած: Էս արտը աթա-բաբադան մըրն ա: Միեգ ալ իս վըրիսմ:

Վազիրնեն ըսիսն.- Այ մարթ, դու պը՞լս: Մընք դավին նանե յընք հրցրիս: Խաբերս, ասի:

Վառնուրթը ըսիս ա.- Այ ձեզ մատաղ, արտը ջիրովի չի: Թա թուռըթաց տարե յա ինիս, սորին ցորեն ա տալիս: Թա արաշտ ա ինիս, զոռռավ սրմացու վա դըռնալիս:

Վազիրնեն որոշիսն, որ ըտուր նանեյ ալ դավա գյուղացող չի դուս գյո: Թուղիսն, գինիս:

Վազիրնեն գինիսն, տսնալիս մի քանե ճըղպորի ծառրն: Կուճի ախպերը ճըղուպուրը թափ ա տված: Նայե հվքիս պըրկերեն մաչը: Հրցրիսն.- Թաքավերեն դավան գյուղացածն: Կարո՞ւղ ա դու խաբեր ինըս:

Կուճի ախպերն ալ ա իրան քառու տեղ դիրիս, ըսիլիս.- Սորին ծառրն: Աստուծ օմեն տարե սորին բերք ա տալիս: Տընիսմ ծխիս, ինձ հետե ապրուստ ըստեղծըմ:

Վազիրնեն նորիցն հրցրիս.- Այ մարթ, դու դավին նանե խոսի: Թաքավերեն դավան որ գյուղացալ եք, հի՞նչ եք արալ:

Ճղուպուր թափուղը մի պարկ լիգը ճղուպուր մուտցրիս ա վազիրնուն ըսիս.- Շատ խիճիճ ճղուպուր ա: Չեզ փեշքյաշ: Կուտրտեցե՛ք կերե՛ք:

Վազիրնեն որոշիսն, որ ըտուր նանե յալ դավա գյուղանուղ չի դուս գյո: Թուղիսն հռնալիս:

Հղեց վազիրներեն միևը ըսիս ա.- էն դոնում ալ որ թաքավերեն դավան գյուղացալն, էս տղեցը որ մարը չի լալ ինի, դավան կարի չընք լալ ճարի: Գիննք ըտուց մորը նանե ալլա հրցրնք:

Տղեցը մարը ըսիս ա.- Հա, դավան իմ տղեքնն բերալ, մորթալ:

- Հի՞բ ն բերալ, հի՞բն մորթալ,- հրցրիսն:

- էն վախտը, որ իս թազզա հառհն ըմ լալ, փիրդին եթկեն նստած: Իմ հրսանեննքն լալ: Բերալն մորթալ, կերալ, հրսանեք արալ:

- էս կնեգը մծացած ա, խըլքը թռցրած,- ըսիսն վազիրնեն, ծծղիս պառավ կնգանը ըսածեն երե, դավին նանե ձեռք քշիս, գինիս:

Ըսիսն, որ թաքավերեն փիսն ա եկալ՝ դավան որ գյուղացալն կերալ, կրեցա չի ճարի: Դեչանը ասօր ալ գյուղերեն հետեն շոռ ա գյոլիս: Ախպրտանքն ալ իրաց քառու տեղն դիրալ, դավան մորթալ, կերալ: Իրաց հոր ղասսը հանալն:

18 (43). ԱՇԽԱՐՔԵՆ ՆԱՆԵ ԱՆԿՈՇՏԸ

Իլալ ա, իլա չի, մի թաքավեր լալ: Էտ թաքավերը խասյաթ լալ արած: Ըրակոնը որ մթենը ինգիս լալ, դարվիշու շոր գեցած, գինիլ լալ քաղաքը շոռ գյոլ: Թա տըսնի ժողովուրթը հի՞նչ ա ըրիս, հի՞նչ ա խուսիս, հունչո՞ւրն ըպրիս:

Մի քիշեր քաղաքեն նանե ղոլին հըռե տըսնալիս ա մի ծմակմ լուս ա ըրվալիս: Ինքը իրան ըսիս ա. «Պետք ա գինմ տըսնամ հո՞ւ վընն, հի՞նչ մարթն: Կես քիշերեն ծմակըմը հի՞նչ բեն օննն»:

Գինիս ա, տըսնալիս ա իրք ջահիլ մարթն: Կրակը վառածն, կողքեն սուս-փուս նստած:

Հրցրիս ա.- Ախպեր տղերք, ամոթ չինի հրցրիլը, դուք հո՞ւ վեք, հի՞նչ եք ըրիս տեղս: Հի՞նչ սանադու տար մարթ եք:

Առաչինը ըսիս ա.- Բախտս կուրցրած գիտնականմ: Օրինակ, հինչ շոն որ հաչի, իս կգիդամ էն շոնը հինչ ա ըսիս:

Ըրկումինջինն ըսիս ա.- Ինծ մի կախարդական կուճի չագյուջ օնմ: Հինչուր փակ դուրք ինի, մհետ որ թխկցրմ, կբենվի:

Իրքմինչինը ըսիս ա.- Իս ըշկածակ մարթմ: Ըշխարքեն հարուստեթունը հվաքն տան ինծ, քուշտանա չըմ ունեցվածքից: Հա կօզմ ալլա շատ ինի, ալլա շատ ինի:

Թաքավերը մտածմ ա, թա՝ «Պետք յա իրքնոց ալ տանմ, փորձմ: Տըսնմ ըսծնեն հինչքանավ ա ղորթ»:

Դարվիշը ըսիս ա.- Իս թաքավերեն նհետ շատ մոտմ: Պալատը մտնիլեն թաքուն դըրքեն տեղը գիդալիսմ: Եկեք, գիննք, խազինան կտրնք, տաննք ապրնք:

Գինիսն թաքուն դրքեն մուտուննալիս, շները գիդալիսն, ըսկսիսն հաչիլը:

Գիտնականը ըսիս ա.- Դարվիշ բաբա, էս դըռա չի: Վայ թե դու մըզ տանս փռնիլ տաս: Շները որ հչիսն, ըսիլիսն՝ «Պալատը գյող ա նի մտիս: Համա դե տարը նհտնուն ա»: Եք դուզը ասի, տեղս մի գաղտնիք կա:

- Շանը հաչոցեն օմեն վախտ հվատա չըն, շուդ արի, ներս մտիր:

Գինիսն հասնիս խազինեն դըրքեն: Ըրկումինչի գյողը կախարդական չագյուջավը թխիս ա դըրքեն: Դուրքը ինքը իրան բինվալիս ա: Չորք հուգյավ նի յըն մտիս ներս:

Դարվիշը մի քսակ վըսկե եր ա ունիս, ըսիս.- էս մի քսակը իմ բոլն ա:

Գիտնականն ա չագյուջեն տարը նմանապես մարթա մի քսակ վըսկե երն ունիս, ըսիս.- Դեչանը մըր գյանքեն վերչը էս մի քսակ վըսկեն բոլ ա: Իվիլ ուզիս չընք:

Ըշկածակը ծծղեցալ ա, ասալ.- Մի քսակ վըսկավ բեն չի ինի: Հինչքան խազինա կա, պետք ա հվաքմ, տանմ:

Դարվիշը, գիտնականը, չագյուջեն տարը թուղիսն գինիս: Ըշկածակը մնալիս ա խազինոմը:

Էքսի քշանոց թաքավերը նազիր-վազիրներեն նհետ գյոլիս ա նի մտիս խազինան, տըսնալիս ըշկածակ մարթը հինչքան վըսկե կա հվաքած ա պարկրը լցրած, այտս ետ ա դըռած արծաթ փողն ա նի հնիս պարկրը:

- Էտ հի՞նչս ըրիս,- հրցրիս ա թաքավերը:

- Խազինա յըմ գյուղնալիս,- ըսիս ա ըշկծակը:

- Ջարմանալի ա,- ըսիս ա թաքավերը,- քիշերը դուք չորք հուգյավ եկած եք: Էն իրքը մի-մի քսակ վըսկավ կուշտացալն, գենցալ: Պա դու հինչքանա՞վ պետք ա քուշտանաս,- ասալ ա թաքավերը:

- Ըշկածակ մարթեն կշտանալ չօնի: Կօզս աշխարքն ալ տաս,- պադասխանալ ա ըշկածակը:

- Իս շատմ լալ լսած աշկածակությանն հետե: Հվտալիս չըմ լալ, մհեգ հվտալիսմ: Մի փոս քնդեցեք, սաղ-սաղ թղեցեք: Թողեք վըղից կուշտանա,- ասալ ա թաքավերը:

19 (44). ՄՏԱՆՈՒՆ ԾՆԴՐԵԹՈՆԸ

Միետ մի դարվիշ գենցալ ա մի թաքավերու կոշտ, կողքեն նստալ, ջուբեն նաեն մի բրուշում յայլխ դուս կալալ, թաքավերեն ըռշկին փռալ, մի մտանե դիրալ երե: Մտանուն աշկը ինդի լալ շփղ-շափաղ տալիս, հանց լալ կասս իրիննակու շողեր ինի:

Թագավերեն կնեգը, հառհնը, աղչիգը եկալն տըսալ, զարմանքից բիրիննեն մանցալ ա բեց:

- Մտանեն հի՞նչ աժի,- հրցրալա ա թաքավերը:

- Իրան քաշավը մին վըսկե,- կարճ ասալ ա դարվիշը:

Դարվիշեն խոսքեն երե թաքավերն ալ ա զարմացալ: Եշալ ա տըսալ՝ մտանեն հարուր վըսկե աժի: Համա դե որ քշեռք դիրս՝ երկու վըսկու քաշ անջաղ ինի:

Թաքավերը պատառ խիյալ, խիյալ ա արալ, դարվիշեն ասալ.- Մհեգ խոսքետ տա՞րնս:

Դարվիշը ասսլ ա.- Իմ խոսքը՝ խոսք ա:

Թաքավերը քշեռքը բերիլ ա տվալ: Մըտանեն դիրալ քիշեռքեն մի աշկմը, էրկու վըսկե յալ մի աշկմը, քշռալ: Մտանուն թարափը մանցալ ա տափեն: Վըսկուն թարափը բիցիրացալ ա գյովդա փըռփռացալ: Էրկու վըսկե յալն իվիլցրալ: Տասը վըսկե ալն իվիլցրալ: Քշեռքեն աշկը դուզվալ չի: Մանցալ ա գյովդա:

Դարվիշեն հրաշք մտանուն բենը սաղ երգիրը սաս ա գիցալ: Հինչքան հաքիմնե, բաջրներ կար, հվաքվալն եկալ, մտանուն գաղտնիքը կրեցա չըն ճարի: Քշեռքեն մտանոն թարափը մանցալ ա տափեն: Վըսկեն լիգը լցրած թարափը գյովդա վըտը:

Դարվիշը տըսալ ա մտանոն գաղտնիքը կրիս չըն ճարիլ, թաքավերեն ըռշկին պայման ա դիրալ, ասալ.- Օխտը օր քի մոհլաք: Մտանուն գաղտնիքը ճարալս՝ քի փեշքյաշ, ճարս վեչ, պետք ա թաքավերութունետ տաս ինձ: Հի՞նչ թաքավեր, որ մի մտանու գաղտնիք ճրիլու խըլք չօնի:

Օխտը օրը հալա չթմամած մի վարնուրտ մարթ վըրըտեղեն նհետ գյուլիս լալ տոն: Տըսալ ա թաքավերեն պալատեն ըռշկին հվաքված ժողովրթեն՝ տխուր վըտը, զարմացալ ա: Տղեն ասալ ա.- Դու եզինքը քշի, տար տոն: Իս գինմ գիդամ հի՞նչ ա պադահած, որ ժողովութը հվաքված ա:

Վարնուրտը գինիս ա մուտունալիս: Ըստուր, ընդուր նաներ խաբեր ունիս, մանին գիդալիս: Գինիս ա ուռուսխաթ ունիս, վազիրնոն նաներ, գինիս թաքավերեն գյուլոխ տալիս, ըսիլիս.- Թաքավերը ապրած կանա, ինձ թուլ կտաս քու նա դարվիշեն առուտորեն ծանոթանամ:

- Իրավունք օնս,- ասալ ա թաքավերը:

Վարոնուրթը մտանեն եր ա կալալ, պատառ վարավուրդ արալ, ալլա դիրալ քշեռքեն աշկմը: Քշեռքեն վըսկավ լիգը էն մին թիրափեն վըսկեն դրտակալ ա, թողալ մի ջոխտ վըսկե: Նստալ ա տրխնեն հանալ: Թափ ա տվալ, մի կուճի հափուռ վըղ ա բհամ եկալ: Վըղը երի ա ածալ մտանոն աշկը ծածկալ: Այտս քշեռքեն քյաքյուլը փռնալ զիք տըվալ: Քշեռքեն ջոխտ թարափն ալ տափեն կտրվալն, գյովդա հավասար վըտ կացալ:

Դարվիշը որ էս բենը տըսալ ա, կզնված, սուս-փուս եր ա կացալ թողալ, գենցալ:

Թաքավերը հրցրալ ա, թա՝ էս հի՞նչ հրաշք ա:

- Հրաշք բեն չկա,- ասսլ ա վարոնուրթը: Մտանուն աշկը մարթու աշկու նաներ յա սարքած: Մարթեն աշկը մինջու վըղից ա քուշտնալիս:

20 (45). ԴԱՅԻՆ ՆԱ ԲԱՋՕՂԼԻՆ

Նաղլն ըրիս, որ ըմռան մի օր, մի մարթ գենցալ ա իրան քվորը տղեն ասալ.- Բաջօղլի, իս չըտըսնված կարողմ գյուղեթուն արիլ: Կարողմ գինիլ, թաքավերեն խազնան գյուղանալ, ինձ կարն վեչ փռնիլ: Համա դե, հնգեր չօնմ: Ինձ որ մի հնգեր ինի, թեգյունք դըռնի, պատառ յարիքար դըռնի, կգինմ թաքավերեն իլած, չիլածը հվաքմ, բերմ:

- Դայի, նա ենք ընջուկնես դինջ ըպրիլիս, քող վեր ինգյնք, կորչնք: Քիանե գյող չի դուս գյո,- ասալ ա բաջօղլին:

Բաջօղլուն ասածը դասստ ա եկալ դայուն: Դես, դեն եշալ ա, տըսալ բաղմը՝ մի ծառու երե, մի քչեղակ բուն ա դիրած, ծու ածած, թոխս նստած:

Ասալ ա.- Բաջօղլի, տըսնալի՞սս ծառեն երե բունմը թոխս նստած քչղակեն: Միեգ գինմ, եռ ինմ ծառեն, քչղակեն տակեն նաեե ծուվանքը եր օնմ, քչեղակը գիդա վեչ, կիվատա՞ս, որ հայտնի գյողմ:

- Փորձի տըսնանք,- ասալ ա բաջօղլին:

Դային եռ ա ինալ ծառեն, քչղակեն ծուվանքը բերալ, բաջօղլուն նշանց տվալ, ասալ.- Դե տըս, քչեղակը նայե բունմը նստած: Իս ձյուվանքը հանածմ, բերած, գիդացած չի,- ասալ ա դային:

Բաջօղլին ասալ ա.- Դայի, տըսնալիսմ, համ ալ հվըտալիսմ: Պա տնաշեն, տղամարթը առանց շալվար գինալու, փուխանավ դուս կգյո մրթամա՞չ:

Դային եշալ ա, տըսալ շալվարը գեցեն չի:

Դու մի ասի, դային որ եռ ա ինած ծառեն քչղակեն տակեն ծուվանքը եր ունիլիու, բաջօղլին ալ հետեն բիցիրացած ա ծառը: Դայուն շալվարը հանած, դային գիդացած չի: Բենից պարզվմ ա, որ բաջօղլին դայուն նաեե ղոչաղ գյող ա:

Դային յիշիս ա, տըսնալիս գեցեն շալվար չկա, մնալիս ա զարմացած: Մին ալ էն ա տըսնալիս, շալվարը նայե բաջօղլուն ձեռքեն: Մուտունալիս ա բաջօղլուն, ճակատը պչիս, ըսիս.- Լա իմ օզած հնգերը դու վըս, որ կաս: Աս քիշեր գիննականք թաքավերեն վըսկեղենը գյուղանանք, բերնք:

Դու մի ասի, դային մի վախտ թաքավերեն պալատմը նոքյար ա իլած: Պալատը օմեն գաղտնի ծակ-ծուկեն, հղցկնեն գիդալիս ա:

Օրը որ մթնիս ա, քիշերվա կեսեն, դային բաջօղլուն նետ գինիս ա նի մտիս վըսկան ամբարը, մարթա մի շելակ վըսկե շլկիսն, բիրիլիս: Ոչ մինը գիդալիս չի:

Էքսի օրը սաղ քաղաքը սաս ա ինգիս, որ անհայտ մարթինք թաքավերեն վըսկոն խազինան գյուղացածն տարած: Ոչ մինը խաբեր չի իլած: Գյողրը փռնված չըն:

Մի վախտ անց ա կնալիս, դայուն ջանը ալլա քոր ա գյոլիս: Բաջօղլուն ըստիպիս ա, որ.- Գիննք թաքավերեն թինգյանուց քարեղենեն խազինան կտըրնք: Տեղը գիդալիսմ:

Բաջօղլին ըսիս ա.- Այ դայի, էնքան վըսկեյնք բերած, որ մըր օխտը պոռտեն ալ բոլ ա ըպրիլու հետե: Էտ մթկետ նաեե ձեռ քաշի: Քարեղենը

մըր հինչե՞ն ա պետք: Կփըռնվնք, խայտառակ կդըռնանք: Վըսկեն ալ մըր գյլխեն կհարամվի:

Դային լսիս չի: Ալլա մի մթեն քիշեր բաջօղլուն եր ա ունիս, գինիս թաքավերեն թինգյանոց քարեղենեն խազինան գյուղանալու:

Թաքավերը տըսնալիս ա, որ վըսկոն խազինան տարալն, գյողը կրեցա չի ճարի, գիդացալ ա, որ գյողը իրան նանե ձեռք չի քշլական: Հարկավեր ա մի փանդավ գյողեն փռնիլ: Բերալ ա քարեղենեն խազինեն, դրքեն ըռշկին մի խոր վըր քանդալ, մի մըծ կարաս դիրալ վըրմը: Այտս կոպուր հալալ, տաք-տաք նի ածալ կարասը:

Դային նա բաջօղլին որ գինիսն քարեղենեն խազինան կտըրն, դային ըռշկին ա ինիս: Նի ա ինգիս կոպրեն կարասը, դեչանը օսսրը թղվիլիս: Դե մունքյոնա կոպրեն մաչեն նանե մարթ դուս օնիլը, դային իրան կուրցըրիս չի: Բաջօղլուն ըսիս ա.- Իս ինդի մի թալակմ ինգյալ, որ ալ պըրծնիլ չօնմ: Դու տղամարթ կաց: Մըզ որ ճնաչն վեչ, գյուղեթունը ճարն, մինչու մի հղե օննք փըրկվիլա: Ռիսկ արի, գյուլոխս կտրի, եր կալ, փախեր: Մի բեն, որ ինձ փրկվելու ճար չկա: էտ բենավը դու կփրկվս, համալ գյուղութունեն իզը կարի չըն ճարի:

Բաջօղլին դայուն վեզը կտրիս ա, գյուլոխը եր ունիս, փխչիլիս:

Լուսըբեցեն վազիրնեն թաքավերեն խաբերն տընիս, որ՝ ձուբեն կարասը մի մարթ ա ինգյած, գյուլոխ չկա երե:

- Միեգ գյողեն ճարիլը հիշտացալ ա,- ասալ ա թաքավերը,- բենից հասկնալի ա, որ գյողը մանակ չի, հնգեր օնի, անգյուլոխ գյողեն կրասեն նանե դուս կալեք, տարեք քաղաքեն մեյդանմը վեր գիծեցեք, թաքուն բուսխան պիեցեք: Հու վեր գյո մեյդը տանի, կպարզըվի գյողեն տարը: Կփռնե՛ք, կբերեք, դադ, դիվանը կարնք:

Դայուն կնեգը որ գիդալիս ա մարթեն մեյդը տարածն մեյդանմը դիրած, թաքուն ղարավուլ դիրած երե, որ մեյդեն տարը ճարն, գինիս ա բաջօղլուն ըսիս.- Պա հինչ արմ, որ գինմ մեյդեն երե, միետ լաց ինմ, սըրտըս հուվանա: Համ ալ կարն վեչ ինձ ճնաչիլ, որ փռնն:

Բաջօղլին ասալ ա.- Գինի քյոհնա շորր գեց, մի կավե կոժ դիրի օսսետ, հասաբալի գինիսս ախպիրը ջուր բիրիլա: Կոժը ջիրավ կլցնս, կգյոս մեյդեն կոշտը, սոտ տեղը սութ կտաս, վեր կինգիս, կոժը կկոտրիս: Այտս մեյդեն կողքեն կնստըս, մի սորին լեց կինս: Թաքավերեն վազիրնեն որ կգյոն, կիըրցնն, թա՝ էտ մեյդը քու հինչն ա, որ լեցս ինիս, կասս՝ «Մեյդեն ետե չըմ լեց ինիս, քյասիբ կնեգմ, մեյդը տըսալմ, վխեցալմ, վերմ ինգյալ,

կոժս կոտրվալ ա: Փող չօնմ, որ կոժ օնմ: Կոժես հետե յըմ լեց հինիս, որ մանցալմ առանց կոժի»:

Բաջօղլին հինչ որ ասած ա հինիս, դայուն կնեգն ալ հնդի ըրիս ա: Մեյդեն կուշտեն լեց հինիս տեղը, գյոլիսն փռնիս, տընիս թաքավերեն կոշտը: Թաքավերեն ալ դայուն կնեգը ըսիս ա.- Գենցալմ ախպիրը ջիրու: Եկալմ մեյդը տըսալ, վխեցալ: Վերմ հնգյալ կոժս կոտրալ: Քյասիբ կնեգմ, փող չօնմ թազա կոժ օնմ: Իս մեյդեն երե չըմ լալ լեց հինիս, կոտրած կոժես հետե յըմ լալ լեց հինիս:

Կոժը կոտրած, մեյդեն նանե վխեցած, քյասիբ կնեգը թաքավերեն մեխկն ա եկալ, մի թազզա կոժ ա բերել տվալ: Կոժը տվալ ա քյասիբ կնգանը, համ ալ հոքմը տվալ, որ մեյդը թողն վեչ մեյդանմը տափեն դիրած, որ անցնող կնանենքը տըսնն, վախն: Մեյդը մեյդանմը կախաղան արն, որ բալքյա տըռնը մեխկը գյո, կօզի գյո տանի, էտ վախտը մեյդեն տըռնը կարողն փռնի:

Դայուն մեյդը հենգ օր, տասը օր մնալիս ա մեյդանմը կախաղանեն երե, մոտե եկուղ չի հինիս: Թաքավերը հոքմ ա տալիս, որ գյողեն մեյդը կախաղանեն նանե վեր բերն, մեյդանմը կրակ տան: Բալքյա տըռնը սըրտը խըղճ հնգի, գյո թողի վեչ, փռնն:

Դե որ լսիսն անգյուլոխ գյողեն մեյդը մեյդանմը կրակն տալիս, քաղաքեն օմեն ժողովուրքը հվքիվիս ա, գինիս քիմեշա արի:

Մեյդը կախաղանից վերն բիրիս, տըսնալիս՝ հի՜նչ... մեյդեն տեղը մի դոդի ա:

Սաղ քաղաքեն ժողովուրքը ծծղիսն թաքավերեն երե, որ մի գյող կրիս չի փռնի:

Բաջօղլին լավ գիդալիս լալ, որ հինչքան ղոչաղ, զորքոն մանցուղ մարթ հնի, լուսըբեցեն մոտե միետ կլինջի: Դայուն մեյդը որ կախն տալիս, լուսըբեցեն գինիս ա վեր բիրիս, տընիս թղիս: Մեյդեն տեղը, շատ նման մի դոդի ա սարքած հինիս, տեղը կախ տված:

Դովրըբարեն թաքավերն ալ շատ փիս դասատնեն ա գյոլիս, որ իրաց հըրևան թաքավերը էնքան անզոր ա, որ մի գյող կրիս չի փըռնի: Գյողը մտերեն երե թաքավերեն պար ա ըծիս, ծծղիս: Իտի բենը պատիվ չի բիրիս իրաց թաքավերութիւննան: Որոշիսն էտ թաքավերութիւնը վերացնն, իլած հարստութիւնը, երգիրը իրաց մաչեն փայփուշկ արն: Մըծ ղոշունավ դուսն գյոլիս թաքավերեն երե կըռըվ, մինը մինենը մհալնեն եր ունիս: Թաքավերեն օժը հաղթմ չի, դուշման ղոշունը ետ տա: Խրեգ ա մնալիս, որ թաքավերեն նստած քաղաքը եր օնն:

Բաջօղլին տըսնալիս ա, որ դուշման ղոշունը խրեգ ա մնալիս իրաց երգիրեն տըրանա, շատ դասատն ա գյուլիս, ինքը շատ ղվաթի տղամարթ ա ինիս: Եր ա կնալիս թորը կպիս, նստիս ծին, անց կնալիս իրաց ղոշունեն գյուլոխը, մինը-մինեն ետը ըսկսիս դուշման ղոշունը կտորիլը, ետ տալը:

Բաջօղլին որ դուշմաններուն հաղթ ա, երգիրը ազադմ, խաղաղութուն գիծմ, իրաց երգիրեն թաքավերը կնչիս ա, իրան վըսկե թորը, վըսկե քյամարավը կպիս բաջօղլուն մաշկը, ըսիս.- Իս հիլիվերածմ: Շուդավ կմըռնմ: Իմ ջանես որ դարդ վեչ մնաց, որ կարս ճարիլ, թա իմ գյողն ալ հուվ ա, իմ իլած իմ աղչիգն ալ կտամ քի, թաքավերութունն ալ:

Բաջօղլին թաքավերեն մինի-մինի նաղլ ա ըրիս, որ խազինեն տանող գյողեն մինը ինքն ա: Իրան էտ ծոռ հողքն իրան դայինն ա տարած՝ անգյուլոխ մեյդը: Այտս գյուլոխը կախ ա գիծիս թաքավերեն ըռշկին, ըսիս.- Թաքավերեն երկար գյանք: Օմեն հինչ՝ դուզբադուզ ասալմ: Կօզս՝ գյուլոխս կտրիլ տոր, կօզս՝ ների:

Թաքավերն ըսիս ա.- Քու տղմրթկեթունը որ կռվոմը նշանցս տվալ, ինձ հետե շատ-շատ ա: Օմեն հինչ ներմմ:

Այտս բիրիս ա օխտը օր, օխտը քիշեր հրսանեք ըրիս, աղչիգ նա թաքավերոթունը տալիս բաջօղլուն:

Երգինքից իրք անմահական խնձոր ա վեր ինգիս: Մինը նաղլը կպողուն, մինը ըսողուն, մինն ալ նաղլը քաղցր լսողներեն:

21 (46). ԻՐԸՔ ԱԽՊՈՒՐԸ. ԷՐԿՈՒ ՓԱՅ

Նաղլն ըրիս, որ շատ քյոհնա դովրին, մի շատ գիդ մարթ ա ինիս:

Էտ մարթը ինդի մի հաշիվ լալ ըրիս, գիդալիս, թա տարվա որ ամսեն, որ քիշերեն, որ սհաթեն կնգանն նհետ ապրած տեղը՝ տղա խոխա կծնվի:

Էտ հաշվավ՝ էրկու հետ փորձած լալ՝ էրկու դոնմն ալ տղա յըն լալ ծնված:

Իրըքմինջի դոնմը էտ մարթը, կես քիշերեն գինիս ա նի մտնի կնգանը ծոցը, կնեգը հրաժարվըմ ա, ըսիս.- Տնաշենու տղա, էտ հինչ ը՞ս ըրիս: Դու նոր չը՞ս ծոցես նաեե եր կացալ, իս ալ մեխկմ չէ՞:

Էտ մարթը մնալիս ա շըվարած, ինքը իրան ըսիս ա. «Տանը տղամարթը իսըմ, իս կնգանս կոշտը գենցած չըմ: Իմ տանս ալ օրըշ մարթ կավչնի: Մինչա նյոքարս ա... Կարող ա՞ նյոքարեն բենն ինի»: Որոշիս ա, գինիս, տըսնալիս նյոքարը իրան տեղըմը չի: Դես ա շոռ գյուլիս, դեն, նյոքարեն քըթիս չի: Նյոքարը վընդնավ, գյլխավ կուրչիս ա:

էտ մարթը կնգանը ոչ մի բեն ըսիս չի: էտ օրվա թարղը գիրիս ա, ծոցումը պհիլիս:

Վախտը որ գյուլիս ա թմմիս, էտ կընեգյը ազադվմ ա, ալլա մի տղա խոխա բիրիլիս: Դըռնալիսն իրըք ախպեր: Մըծանմն, հաշտ, համերաշխ իրաց հորը նհետ ըպրիլիս:

Վախտ ա գյուլիս, տղեկը հարը ուլուզնալիս ա: Կնչիս ա իրըք տղորցը, ըսիլիս.- Իմ վահդան թմամած ա, նայեմ մըռնիլիս: Ձեզ վասիայմ ըրիլիս, քանե կկարեք, միասին կապրեք: Դե, աշխարքեն օրենքյն ա, որ կօզեք բիժոնվելը, իմ թողած հարստութոնը էրկու տեղ կբուժոնեք: Ձեր իրըք ախպրտանցը միներն փայ չեմ հըսցրիլիս:

Էսքանը ըսիս ա տղերցը հարը՝ մըռնիլիս:

Թա իրըք տղերցեն որ միներն ա, որ փայ չի հսնիս, հինչո՞ւ հետե, մանին հի՞նչ ա, ոչ մի բեն ըսիս չի: Տղերանցը հետե մնալիս ա անլուծելի գաղտնիք:

Դե, աշխարքեն օրենքն ա: Թա իրըք ախպերը հինչքա՞ն վախտըն միասին ըպրիս, էտ ալ Աստուծ գիդա: Մի օր ալ վըտն կընալիս, թա՝ բիժոնվմնք:

Դե, եք դու գիդաց, թա իրըք ախպրտանցեն որ միներն զըրկն հոր ունեցածից, փայ չտան: Տղեցը մարն ըսիս ա.- Նման վասիյեն մանին երգիրեն թաքավերը կգիդա: Գենցեք թաքավերեն գենգյատ ըրեցեք: Թաքավերեն ասածը օրենք ա: Հինչ որ կասի, ինդի ալ կարեք:

Իրըք ախպրավ նի յըն ինգիս, գինիս դիբի թաքավերեն նստած քաղաքը:

Հղեց մի տեղ տըսնալիսն՝ մի մարթ կուռները խըտտած, վըր ա կցած, լեց ա ինիս: Հըրցրիսն.- Դու հո՞ւվ ըս, հի՞նչ ա պդահած, հինչո՞ւ հետե յըս լեց ինիլիս:

Անծանոթ մարթը ըսիս ա.- Շինացե մարթ ըմ, դավաս բեռնած քաղաքմ լալ գինիս: Տեղըս պատառ նըստալ ըմ, որ դավաս ալ դինջանա: Դե հոքնած մարթ ըմ, քոնըս տարալ ա: Քունավմ ինգյալ: Երըմ կացալ, տըսալ դավաս չկա, գյուղացածն, տարած: Շոռըմ եկած, կըրեցալ չըմ ճարի,- լեց ինիլավ ըսիս ա անծանոթ մարթը:

Մըծ ախպերն ըսիս ա.- Քու դավան ետքեն աչի վընննավը կղալիս ա՞:

Դիվա տարը ուլխացած ըսիս ա.- Հա՛, հա՛:

Մաչնակ ախպերը ըսիս ա.- Քու դավին ձեխե աշկը քոռ լա՞լ:

- Հա՛, հա՛, դուզս ըսիս,- ըսիլիս ա դիվատարը:

Կուճի ախպերը ըսիս ա.- Քու դավեն բեռանը մի հակը մըղր լա՞լ, մի հակը՝ ե՞ղ:

- Շատ դուզս ըսիս, դավին եղն ու մըղրմ լալ բեռնած: Պա մհեգ դավան հոր ա՞, ըշտեղ ա՞:

- Մընք քու դավան տըսածը՞նք, որ գիդանք հոր ա՞, հի՞նչ տեղ ա,- ըսիսըն ախպերները:

- Պա որ դուք իմ դավան տըսած չեք, հին դա՞ք, որ իմ դավան ետքեն աչի վըտանը երե կըղալիս ա, ձեխը աշկը քոռ ա, բեռնը եղնա-մըղր լալ:

Մեծ ախպերն ըսիս ա.- Քու դավատ հղոքը գինիս տեղը սութ լալ տված դիբի հղցին տակ: Ըտուր երե ալ գիդալիսմ, որ դավատ կաղ լալ:

Մաչնակ ախպերն ըսիս ա.- Դավան հղոքը գինիս տեղը միշտ հղցին աջի թարափեն խուտերեն նաեե լալ ըրծեցած: Հղցին ձեխե թարափեն խոտրն սալամաթն լալ: Ուրեմը դավեն ձեխե աշկը քոռ ա:

Կուճի ախպերն ըսիս ա.- Հղեն գյուլիս տեղը իս տըսնալիսմ լալ՝ աջի թարափավը տըղ-տըղ ճանջըրը հվաքվածն լալ՝ բեռնեն նաեե մըղր լալ կթկաթած: Հղցին ձեխե թարափավը տեղ-տեղ մոծակնեն լալ հվաքված: Ուրեմը էն մին հակն ալ եղ ա իլած:

- Չէ, իտի բեն չի ինի, ինձ խափիս եք: Իմ դավեն գյողը դուք եք: Տալիս եք, իմ դավան՝ տվեք... Չէ, կգինմ թաքավերեն գենգյատ կարըմ, դավան ձգանե իք կօնըմ:

- Դե, որ մըզ հավատամ չըս, անծանոթ ախպեր, մընք ալ ընք գինիս թաքավերեն կոշտը՝ գենգյատ: Եք, միասին գիննք:

Գինիլիսն: Թաքավերեն խաբարն տալիս, որ չորք մարթ գենգյատ օնն: Եկածն կոշտտ:

- Թողեք նես գյոն,- ըսիս ա թաքավորը:

Իրըք ախպերնեն իրաց գենգյատն ըրիսն, իրաց հորը թողած զարմանալի վասիյեն հետե:

- Շատ սորին,- ըսիս ա թաքավերը,- դուք նստեցեք:

Դավաչուն ըսիս ա.- Դու քու գենգյատը արի, լըսմ, տըսնամ՝ հինչս ըսիս:

Դավաչին ըսիս ա, որ իրան դավան եղնա մըղր բեռնած կուրցրած ա: էտ իրըք ախպերնեն գյուղացածն, տալիս չըն:

Իրըք ախպերնեն նաղլն ըրիս, թա իրաք հինչ խաբարեթուն օնն դավին նաեե:

Ախպրտանցը արած նաղլեն երե թաքավորը համ շատ զարմանմ ա, համ ալ՝ ծծաղմ:

Վազիրեն ըսիս ա.- Էս տղեցն նաեե գյող չի դուս գյո: Գինի իմ դավանեբից միևը եղ նա մըղր բեռնի, տոր էս մարթը թող եր օնի, գինի: Էս իրըք ախպրտանցն ալ տար թաքավորական պադև տոր, թող օտըն, խըմն, քոն ինն, ըտուց պատասխանն ալ էքուց կտամ:

Համ ալ վազիրեն թաքուն ըսիս ա.- Մի մարթ ալ կդիրս մի թաքուն տեղ՝ էտ իրըք ախպերնեն հաց ուտիս տեղը հինչ կխոսն, մտեն պահի, գյո, ինձ խաբար տա:

Իրըք ախպեր, որ նստիսն հաց ուտիլու, մըծ ախպերը ըսիս ա.- Շատ սորին, թազա հաց ա, համա մղափուն, որ հացեն նաեե տվարու թրքու համ ա գյոլիս:

Մաչնակ ախպերը մի թաս գինի ա խմիս, ըսիս ա.- Չտըսնված գինի ա, համա մարթու արինու համ ա տալիս:

Կուճի ախպերը գյոռանը մսից սարքած խրըվածեն նաեե մի կուտուր ուտիս ա, ըսիս.- Շատ սորին խրավածա, համա դե՝ շան մսի համ ա տալիս:

Իրըք ախպերները իստի ըսիլավ, խուսիլավ, հացը ուտիսն, գինիս իրաց հետե առանձին օթախմ քոն ինիս:

Իրըք ախպերնեն հաց ուտիլուց հինչ որ ասածն լալ, խուսեցածն լալ՝ թաքուն անջուկ դիրած վազիրը գինիս ա, թաքավերեն մինը-մինի խաբեր տալս:

Թաքավերը կանչիլ ա տալիս հաց թխող կնգանը, ըսիլիս.- Ասօրվա քու թխած հացեն նաեե խե՞ պետք ա տվարու թրքու համ գյո:

Հաց թխողն ըսիս ա.- Թաքավորն ապրած կենա, կավերը կթիս տեղը մընս ա ինգյալ, որ հացը պրծած ա, պետք ա հաց թխեմ: Եկալմ, թայդի խմորը հոնցալ, կարող ա շըշկռվածմ, ձերքրս թամուզ չըմ լվացած, ըտուր հետե լալ հացեն նաեե թրքու համ ա եկած:

Թաքավորը կանչիլ ա տալիս գինի գիծողուն, ըսիս.- Հինչո՞ւ հետե քու գիծած գինուն նաեե մարթու արինու համ ա գյոլիս:

- Թաքավորը ապրած կենա,- ըսիս ա գինի գիծողը,- խաղուղը վընննուք ծմրթիս տեղը մի դընակ լալ նի ինգյած խաղողեն մաչը, տըսած չըմ լալ: Վընննս կտրալ ա, ղալին արուն ա գենցալ: Ըտուր հետե յալ, կարուղ ա գինին արունու համ տա:

Թաքավերը բերիլ ա տալիս չոբաներն ըսիս.- Աս օրվա մորթած գյոռանը մսեն նաեե հինչո՞ւ հետե յա շան մընսու համ տրված:

Չոբանն ասալ ա.- Թաքավորը ապրած կանա, կարող ա պդահի: Իս պարզ հիշմմ, աս օրվա մորթած գյոռնը չոլում ա ծնվալ, գյոռանը թողալմ

մորը կուշտեն, իս գենցալ վըչխարնեն հվաքալ, որ բերմ տոն: էտ օրերեն մըզ մի շոն ալ լալ ցիյնած: Շոնն ալ նայ լալ ծնած, վըչխարեն կողքեն խուտուրու ինգյած: Որ գենցալմ վըչխարնեն հվաքալ, բերալ, եկալմ տըսալ նոր ծնված գյոռնը գենցած ա նի ինգյած շանը տակը՝ ծրծը բերանը կալած, շանը կաթնը ծծիս ա: Խոսք չկա, կարող ա գյոռանը մսեն նանե շան մըսու համ գյո: Օրեշ կասկածանք կավչնի:

Մտածմունքը թուղիս չի թաքավորը քոն ինի: Սաղ քիշերը հազար տըսակ խիյալ ա ըրիս. «Կարող ա էս իրըք ախպերնեն եկածն ինծ փորձիլու հետե: Հունցո՞ւր կարուղ ա պդահի, որ դավան չտըսած՝ գիդան, որ դավան կաղ ա իլած, մե աշկը քոռ ա իլած, բեռնեն մի հակը եղ ա իլած, մի հակը՝ մըղըր, դուզ, բա դուզ գիդացալն, որ հացեն նանե թըրքու համ ա գյոլիս, գինում նանե՝ մարթու արունու համ, գյոռանը նանե սարքած խըրվածեն նանե՝ շան մըսու համ... Համա կրիս չըն գիդալ, բա իրաց հարը խե յա վասյա արած, որ ունեցվածքը էրկու ախպուր մաչե փայ արըն, ոչ բա՝ իրըք: Կա-չկա եկածն իմ թաքավորական խըլքը գիդալու»: Իստի տարբեր տեսակի բենըր լալ խյալ ըրիս:

Թաքավերեն մի շատ խելունք, հասունացած ախչիգյ լալ: Ախչիգյը քիշերը տսնալիս ա, որ թաքավորը շատ անհանգիստ ա, քոնը տնիս չի: Եր ա կնալիս, գինիս հորը կոշտը, հրցրիս, բա հինչ ա՞ պդահալ, որ անհանգիստ ա:

Թաքավերը իրըք ախպրտանց հոր թողած վասիյեն մանին ըխչգյանը նաղլ ա ըրիս:

Ախչիգյը ըսիս ա.- Իմ հար, դու ալխայիս կաց, քոն ինի: Իս էքուց էտ վասիյեն մանին կճարմ, ախպրտանցը կհայտնմ, իրաք ալ, դու ալ, մըր նազիր-վազիրնեն ալ կհամոզվն, որ շատ դուզ, տեղեն պադասխանմ տված, գոհ կմնան:

Էքսի օրը թաքավերեն աղչիգյը մըծ դադ ա բեցալ թաքավորեն պալատմը, ըսկսալ առակներավ իրըք ախպուրց հոր թողած վասիեն մանին բացիլը:

Դադը իստի ա ըսկսալ: Մի թաքավոր լալ, էտ թաքավորեն մի ախչիգյ ա ծընվալ: Համան տարեն ալ թաքավերեն ծիապահեն մի տղա յա ծնվալ: Թաքավերեն ըխչիգյանը, որ տասնըչորս տարեն թմամալ ա, մի վազիր եկալ ա նշան դիրալ իրան տղեն: Դե հի՞նչ խոսք, որ տասնըչորս տարե թաքավերեն աղջիգյն նա ծիապահեն տղան միասին մըծացածն լալ: Իրաց սըրտոմը, մինը-մինեն ըըշկըդիրածն լալ:

Վազիրը տղեն, որ փսակալ ա, թաքավորեն աղչիգյը առաչին քիշերը փըսացուվեն իրան սրտեն գաղտնիքը բեցալ ա, ասալ.- Իս որ քի յըմ ղսմաթ դըռալ, իմ սըրտոմս ահդմ արալ, որ իմ առաչին ըշկդիրած տղեն սըրտը չկուտրիլու հետե թողնըմ ինձ առաչին դոնմը մհետ պաչի: Մհետ հի՞նչս ասըմ, իրավունք տալիսս, որ գինըմ իմ սրտեն, հոքուն պարտքը տամ:

Փըսացուն պատառ խյալ ա արալ, պադասխանալ.- Դու որ էտքան մաքուր, զուլալ ախչիգյս, ինձանե թաքուն բեն չըս փըռնած, սըրտետ գաղտնիքը ինձ ասալըս, իս քի արգելըմ չըմ, որ դու գյանքըմ քու սըրտեն, հոքուն պարտք չմնաս, Աստուծ քի նըհետ, գինի, թող պաչի, ետ դըռ եք:

Աղչիգյը կես քիշերեն օրախ-օրախ, մանակ գենցալ ա:

Թաքավերեն աղչիգյը իրան առակը թողալ ա կեսատ, իրըք ախպուրցը մըծեն հարց տվալ.- Ինձ պադասխան տոր՝ վազիրեն տղան իրան հարսնացվեն խոսքեն հետե դո՞ւզ ա վերաբերվալ, թա՞ չի:

Մըծ ախպերը պադասխանալ ա.- Վազիրեն տղան շատ մըծեթուն ա արալ, որ թուղեց ա չի իրան հռհնացուն իրան գյանքի ընթացքմ սըրտեն, հոքուն պարտք մնա: Տըսալ ա, որ հալալ կթնակեր ա, իրան նանե թաքուն բեն չի փռնալ, ինքն ալ նշանց ա տվալ իրան սրտեն մաքրութունը:

Թաքավորեն աղչիգյը առակը շարունակալ ա, ասալ.- էն քաղաքմը, որ երգիրն թաքավորը ըպրիս լալ, քառասուն հոգյուց մի դաստա գյողն լալ արսա եկած: Իրանք ալ շատ սայաղ ըն լալ, թաքավերը կրիս չի լալ փըռնոտի, վերացնի: Ըրակունը մթնելուց՝ քաղաքեն մարթինքը վխիսն լալ քյուչա դուս գյոն, մինը միներն տոնը գինի. գյողերը առաչնեն կտրիսն լալ, պուլուկիս: Վազիրեն հռհնացուն ծիապահեն տըղեն կոշտը գինիս տեղը, գյողրը փռնիսն, տընիս իրաց մըծավորեն կոշտը: Հռհնացուն, իրան մանակ կես քիշերեն պատճառը գյուղերեն մըծեն նաղլ ա ըրիս:

Մըծավրը իրան հնգյունացը ըսիս ա.- Տղերք, էս հառհնը, էս կես քիշերեն մանակ գինիս ա իրան սրտեն, հոքուն պարտքը տա, ոչ մի տարբերեթուն չկա սրտեն-հոքն մուրազ արածեն նա Աստուծեն դուրքը մուրազ արած գենցողուն մաչըն: Հարսանը սրտեն նի մեք գյո, Աստուծեն ալ խոշը չի գյո, որ պլոկնք: Բեց թուղեցեք, գոնե իրան մուրազը օրախ կադարի:

Վազիրեն հարսնացվեն բեցըն թուղիս, գինիս ա:

- Մաչնակ ախպեր,- ըսիս ա թաքավորեն աղչիգյը,- եր կաց պադասխանի՝ գյուղերեն մըծեն վերաբերմունքը հինչքա՞ն մարթկային լալ, սորին ա՞ արալ, որ բեց ա թողալ, թա՞ պետք ա պլոկիլն լալ, հղե դիրիլ վազիրեն հըռհնացուվեն:

Մաչնակ ախպերը եր ա կնալիս, ըսիս.- Շատ ալ որ գյողն լալ... գյողեն ալ սըրտ, հոքի, մուրազ, Աստուծ օնի: Գյողն ալ ա մարթ: Տեսալն, որ վազիրեն հառհնը դուզ սըրտավ գինիս ա իրան մաքուր սրտեն մուրազեն հասնի, արունը պղտորա չըն, մըծ տղամարտկեթունն արալ հղե տիրալ:

- Դու ալ նստի քու տեղը,- ասալ ա թաքավորեն աղչիգյը մաչնակ ախպուրը, առակը շարունակալ:

- Վազիրեն հառհնը գենցալ ա, տըսալ ծիապահեն տղան նայե իրաց տանը ըռշկին ծառեն տակեն գյուլոխը կախ գիծած, նըստած: Ինքն ալ նստալ ա կողքեն, սըրտոմը պահած գաղտնիքը նաղլ արալ. ասալ ա.- Դե հի՞նչ ասըմ, ամեն հինչ քի ալ ա պարզ, որ իս նա դու միննս միներն ըշկդիրածնք լալ, որ մըծանանք, փըսակվընք, տոն դըռննք: Մըր մուրազը կադարվալ չի: Իս ուրեշուվըմ արժան դըռալ: Իս իմ սըրտոմս ահդըմ լալ արած, հոքուս պարտք թողած, որ ուրեշուն նհետ փսակվելուց առաչի դոնումը իրավունք տամ ինձ պաչի էն տղան, հու վեր ինձ ումունուց առաչ ա ըշկըդիրած. իմ առաչին ըշկըդիրողը տուվ ըս, եկած ըմ, որ ինձ պաչըս, հոքուս պարտքը տամ, սըրտըս դինջանա, գինըմ:

Ձիապահեն տղան ասալ ա.- էտքանը, որ մտածածս, ինձ մոռացած չըս, իս շատ շունուրհակալմ: Հիբ դու ինձ արժան չըս դըռալ, իս քի պաչի չըմ: էտ իմ թարափից գյուղեթուն, հարամեթուն, ուրեշու ծառեն բարը գյուղանալ՝ Աստված քի հուր արժան ա արած, գինի առաչին պաչիլն ալ տոր ընդուր:

Աղչիգյը, ըրտասունքը ըշկերեն, եր ա կացալ գենցալ:

Հաքիմ նըստած թաքավորեն աղչիգյը խոսքը տըվալ ա կուճի ախպուրը, ասալ.- Եր կաց, ինձ ջուղաբ տոր, տըսնամ, ծիապահեն տղան հի՞նչքան սորին բեն ա արալ, որ իրան ըշկըդիրած աղչիգյը կես քիշերեն գենցալ ա կոշտը, պաչա չի:

Կուճի ախպերը վըր ա կացալ, ասալ.- Խանըմ հաքիմը ողջ մնա, իս խընթրիսմ իրավունք տաս պատառ շատ խոսում. առաչինը՝ վազիրեն տըղան ա սխալ թուլ տըվալ, որ իրան հռհնացուն ասալ ա՝ ինձ ըշկդիրած տղա օնըմ, թուլ տոր գինըմ, առաչի պաչիլը տամ իրան, թուլ ա տըվալ: Հռհնացուն, որ էնքանը ասալ ա, պետքյ ա ղաման դուս լալ օնի, նի կոխի հըռհնցուվեն սըրտը, ըսպանի: Էրկումինջին, անխըլքը քառասուն գյողերեն մըծավորն լալ, որ քառասուն տըղամարթ ամեն քիշեր նի լալ գիծիս քաղաքը, մարթկանց թըլանըմ: Համա խափվալ ա վազիրեն հարսանը խոսքերեն, վըսկեղենը, թինգյանուց զիսկեղենը պլոկա չի, հղե տիրալ: Ամենից անխըլքն ալ ծիապահեն տղան լալ, որ իրան ըշկդիրած աղչիգյը

կես քիշերեն գենցալ ա կոշտը, թուղեցալ ա, ետ գինի: Պետք ա՝ եր լալ կանա, հորը ծիանցը մինը գյումեն նանե դուս քաշի, ըղչիգյանը դիրի ծիանը երե, քշիլ, գինիլ մի օրեշ քաղաքըմ իրաց հետե ապրիլն լալ:

Էսքանը կուճի ախպերը, որ ըսիս ա նստիս, հաքիմ նըստած թաքավերեն աղչիգյը ըսիս ա իրան վերչին խոսքը.- Իմ հար թաքավոր, նագիր-վագիրնե, երգիրեն հաքիմնե, իմ կատարած դատից, իրըք ախպրտանցը ինձ տըված պադասխաններից իս գյուլիս ըմ էն մտքեն, որ տղեցը հարը շատ խելունք, բենեն տեղյակ մարթ ա իլած, որ վասիյա ա արած իրան ունեցած հարստեթունը բիժոնն էրկու ախպուր մաչե, իրըքեն միհեն փայ վեչ տան: Իս եկալ ըմ էն համոզմունքեն, որ մըծ ախպերն նա մաչնակ ախպերը մի հոր, մի մորից ծընված ըն: Կուճի ախպերը խորթութոն օնի՝ ջոկ արունից ա: Իմ ասած խոսքեն հու որ հըվատըմ չի, կարող ա գինի ախպըրանցը մորից հըրցըրի: Թող ձեռքը դիրի սըրտեն, դուզը ասի: Իմ որոշած դադը կարող ըմ հաստադի մի օրեշ բենավ: Մուտացեք տըսեք կուճի ախպերը իրաց հոր ունեցածից մի անգին քար գյուղացած ա, թաքուն պըհի՞ս ծոցաջուբոմը:

Վազիրնեն մուտունալիսն կուճի ախպուրը ջուբեն նանե մի անգին քար դուս ունիս դիրիս սըղանեն երե:

Կուճի ախպուրը ջուբեն նանե որ անգին քարը դուսն ունիս, ալ ամոթու վըր չի կընալիս, գյուլոխ եր ա ունիս, անհայտ մի տեղավ թուղիս, գինիլիս:

Մըծ ախպերն մուտունալիս ա, դադը կադարող խանըմ ըղչիգանը ըսիս.- Մընք շատ շունուրհակալ ընք էսքան նեղութուններն հետե, որ պարզալ ըս մըր հոր թողած վասիյեն գաղտնիքը: էս անգին քարը, որ մըր կուճի ախպուրը ջուբեն նանե դուսն կալալ, մըր տոնը տանիլ կարի չընք՝ էս արդեն մըզ հետե հըրամված ա: Քու տարած չարչարանքըն հետե, թուղիս ընք քեզ հետե անամ:

Էսքանը ըսիս ա, մաչնակ ախպուրը նհետ գինիս իրաց հորը թողած հարստեթունը կես ըրիս էրկու տեղ:

Նագիր-վագիրնեն, երգիրի հաքիմնեն երըն կնալիս թաքավերեն ըղչիգյանը գյուլոխ տալիս՝ նման արթար, իմաստուն դադ կատարելու հետե: Թաքավորեն ալ ըսիսն.- Դու շատըս մըծացած, հարկավոր ա թաքավորութունը տաս իմաստուն ըղչիգյանըտ:

Թաքավորը համաձայնվմ ա, գյլխեն թագը դիրիս ըղչիգյանը գյլխեն, նըստեցրիս իրան տեղը:

22 (47). ՉՈԲԱՆԸ ԴԸՌԱԼ Ա ԹԱՔԱՎՈՐԵՆ ՎԱՋԻՐԸ

Նաղլ ըն ըրիս, որ քյոհնա դովրին մի մըծ հայ շենըմ մի քյասիբ հայ մարթ լալ ըպրիս: Էտ մարթեն տոնը շենեն ղըրաղեն լալ: Տանը կողքեն սառնը ախպիր լալ, ըխպիրին կողքեն ալ մի շատ մըծ կաղնե ծառ լալ:

Էտ քյասիբ մարթեն տանը կողքավն լալ անց կընանլիս մի լեն, մըծ ջահդա հըղե, էտ կողմերով հինչքան քյարվան լալ անց կընալիս, գյոլիսընը լալ էտ կաղնե ծառեն տակեն վեր գյոլիս, ջուր խըմիս, դինջհինալիս, ալլա իրաց հղեն շարունակըմ, գինիլիս:

Մի օր ալ մի վաճառական ա գյոլիս, իրան քյարվանավը էտ ըխպիրին կողքեն՝ ծառեն տակեն վեր գյոլիս:

Քյասիբ շինացեն նայե ինիս իրան դըրքեն վընը կացած:

Վաճառականը շինացուն կընչիս ա կոշտը, ասալ.- Նեղութուն քաշի, մի վընսկու արժեքյը գյորա ինձ հետե ուտելեղեն բեր:

Շինացեն ալ գինիս ա, իրան տանը իլած-չիլածեն նանե մի քանե հաց, էրկու կուտուր պանըր, տասսը հատ ալ հավու ձու վա իփիլիս, բիրիս, տալիս վաճառականեն:

Հինչուր ա դըռնալիս, շինացեն վընսկեն ուզիս չի: Վաճառականն ալ քյարվանը բիռնիս ա, թուղիս, գինիս: Մընռնալիս ա, վընսկեն տալիս չի:

Էտ օրեն նիետ անց ա կընալիս հինգ տարե:

Մի օր ալ, համին վաճառականը, իրան քյարվանավը, գոլիս ա ալլա էն շինացուն տանը կողքեն՝ ծառեն տակեն վեր գյոլիս. տընսնալիս ա՝ էն շինացե քյասիբ մարթը ալլա նայե դըրքեն վըտը:

Վաճառականը շինացուն կընչիս ա կոշտը, ըսիս ա.- Ինձ շատ կներես, հենգ տարե առաչ եկալ ըմ տեղս, քի անե մի վընսկու արժեքյը գյորա հաց, ուտելեղեն ըմ եր կալալ, վընսկեն դու օգալ չընս, իս ալ մոռացալ ըմ, գընցած: Դե, մհեգ քի մի վընսկուն տեղը հենգյ վընսկե յըմ տալիս, որ դու քու տընված հացը ինձ հալալ արընս:

Շինացեն ուլխունալիս ա, շընորհակայութուն հայտընընմ, վընսկենեն հափռեն մաչեն չընխկչընխկցրիլավ գինիս դիբի իրան տոնը:

Դու մի ասիլ էտ շենեն քյոխվան շատ մարդիմազար մարթ ա: Էտ քյոխվան հըռնաց տընսնալիս ա, որ վաճառականը շինացուն վընսկենե ա տալիս: Շինացուն կընչիս ա կոշտը, բենեն տեղեկանըմ, թա՝ վաճառականը հինչո՞ւ հետե յա շինացուն վընսկենե տընված: Քյոխվան շինացուն ըսիս ա.- Վաճառականը քի խափած ա: Պետք ա շատ վընսկե տա: Եք, գիննք, իս շատ վընսկերք օնընմ, այտընս բերընք, էրկու տեղ փայ արընք:

Քյոխվան վաճառականեն ըսիս ա.- Հենգ տարուց ետը, դու ոչ թա պետք ա հենգ վըսկե տաս շինացուն, պետք ա հիցու վըսկե տաս, էն բենեն հետե, որ տասսը ծուն դիրիլ լալ մի հավու տակե, տասսը ճոտ լալ դուս արի: էն մի տարեն տաս ճոտը հավ ըն լալ դըռնիլ, ամեն մինը հարուր ծուվն լալ ածիլ: Նորից լալ թողս դիրիլ, նորից շատացըրիլ: Իստի որ հաշիվ արընք, պետք ա քու քյարվանը տաս շինացուն, թողըս, գինըս: Համա դե սորինը էն ա, եք հիցուն վըսկե տոր, ձեռք քաշընք, գիննք, թա չի՝ կգիննք թաքավերեն գենգյատ կարընք, քյարվանըտ իք կօննք, քի դերտակ հղե դիրընք:

Վաճառականը համաձայնվըմ չի, ըսիս ա.- էտ անարթար դատ ա: Եկեք գիննք թաքավորեն կոշտը՝ գենգյատ:

Բիրիս ըն որոշիս շենեն քյոխվան նա վաճառականեն մի նոքյարը դուրկիս երգիրեն թաքավորեն կոշտը՝ գենգյատ ըրիլու:

Թաքավորեն քուշտեն նհետ քյոխվան նա նոքյարը գյուլիս ըն խաբար բիրիս, որ թաքավորը քյոխվեն արած դատը արթար ա ճընըչեցալ: Վաճառականը պետք ա հիսյուն վըսկե տա:

Վաճառականը ալլա չի համաձայնվալ, ասալ ա.- Անարթարեթոն ա, իտի բեն չի ինի:

Շինացուն ասալ ա.- Եք, իս նա դու գիննք թաքավորըն կոշտը:

Համաձայնվալ ըն: Շինացեն նա վաճառականը նըստալ ըն մարթա մի ձի, գենցալ:

Կեսօրեն մոտը վաճառականն նա շինացեն, մի յուրդատեղի քուշտավ անցկընալիս տեղը, տըսնալիս ըն շատ տավար, վընչխար ցըրված ըրծիս ըն, մի տեղ ալ շատ մախլուղ ըն հավաքված: Մի մարթու մուտացալ ըն, հըրցըրալ, թա՝ էսքան մարթ խեյ ը՞ն հըվաքված տեղըս:

Մարթը պատասխանալ ա.- Տեղըս մի շատ գիդ չոբան կա, թաքավորից ալ սորին շատ արթար դադ ա ըրիս: Ըտուր հետե ալ մըր միալից ոչ մի թաքավորու, հաքիմու կոշտ գենգյատ գենցուղ ինիս չի, ամեն մի գենգյատ հաքիմ չոբաներն ըրիս: Չոբանն ալ՝ ամեն մի գիրագի, տեղըս, յուրդումը դադ ա կադարըմ: Ասօր գիրագի ա, ժողովուրթը հվաքված ըն՝ դադ լըսըն:

Վաճառականը շինացուն ըսիս ա.- Եք, մընք ալ գիննք չուբաներն ըրիս դադը լըսընք, տըսնանք, թա՝ ղուրթավ, արթար դադ ա ըրիս, խընթըրընք, մըր գենգյատն ալ լըսի:

Շինացեն համաձայնվմ ա, ձիանցը նաներ վեր ըն գյուլիս, առաչանըմ դադեն տեղը:

Տըսնալիս ըն՝ մի աղալըմ, քարին հվաքած, թախտը կապած: Քարե թախտըն երե չոր խոտըն փըռած, կարպետավ ծացկած: Հաքիմ չոբանը նստած ա կենդրոնըմը, էրկու չոբան ալ նըստած ըն. մինը՝ աչի թիրափըմը, մինը՝ ձեխե թիրափըմը:

- Գենգյատ ուներցուղ Դովի հո՞ւվ ա, թող գյո առաչ,- ասալ ա հաքիմ չոբանը:

Մախլուղեն մաչեն նանե մի շինացե մարթ առաչ ա եկալ, փափաղը գյլխեն նանե եր կալալ, գյուլոխը կախ գիցած վըտ կացալ:

- Նաղլը արի, լըսընք քու գենգյատը,- իրավունք ա տըվալ հաքիմ չոբանը:

- Հաքիմ չոբանը ապրած կենա,- ըսկըսալ ա նաղըլ արիլը Դովի,- իմ հարևան Մանցու նետ շատ սիրավ հընգեր ընք իլած մըր խոխա վախտուց: Մի տեղ խաղ ընք արած, քոն ընք իլած, արտ ընք գենցած, վար ընք արած, հաց ընք կերած՝ հալալ ախպուր նման: Մի քանի օր առաչ հանդըմը ալլա մըր եզները արուտ ընք լալ տալիս՝ Մանցու յիզանցը մինը գենցալ ա դիբի մոտե ցորեն արտը, որ ըրածի, կոխ տա: Իս ալ միամիտ տեղը մի քար շըպըրտալ ըմ, որ եզնը ետ դըռնա, գինի վեչ արտը ինգի: Հակառակու նման, քարը նի ա եկալ, եզանը աշկը վեր ածալ: Միեգ Մանցի վըտը նա, թա՝ պետք ա եզանըս աշկը սըղըցըրըս: Իս ալ ըսիս ըմ. «Ախպեր Մանցի, եզանը աշկը ինա չի սըղըցրիլ: Եք, իմ էրկու եզանցը՝ որ մինը հավան ըս կընալիս, տար: Աշկը դուս եկած եզանը իս տար կկանամ»: Մանցի համաձայնվըմ չի: Լա վըտընա, թա՝ իմ եզանըս աշկը պետք ա սըղըցըրըս... Իմ խոսքես մաչեն, թա սոտ ինի, թող Աստուծ իմ տոնը քանդի, իմ խուխենցը խերը վեչ տըսնամ,- լեց ինիլավ ուրթումն ա կերալ Դովի:

- Հըրըվան Մանցին հո՞ւվ ա, թող գյո առաչ,- կանչալ ա հաքիմ չոբանը:

Մանցի առաչ ա եկալ, հաքիմեն ըռշկին գյուլոխը կախ գիծած, վըտ կացալ:

- Դովու ասածնեն դու ունթունում ը՞ս, սոտ բեն հո ասա չի,- հըրցըրալ ա հաքիմ չոբանը:

- Ամենն ալ դուզ ա ասալ,- պադասխանալ ա Մանցի:

- Պա հընգորըտ՝ Դովու նետ խի՞ չըս բարիշվըմ, հաշտըվըմ:

- Իս, իմ աշկը սաղ եզն ըմ ուզիս,- ասալ ա Մանցի:

- Եզանը աշկը սըղըցըրիլը հընարավոր չի, Դովու եզանցը մինեն նետ փոխիլեն ալ համաձայն չը՞ս: Բենը որ տեղըս ա հասալ, իս ալ դադը իստի յըմ որոշում՝ մի եզնը տարեք էն դուզ տեղը վընընը արեք, Մանցի՝ իրան խըղճը, հինչքան հըռե տեղեն նետ կօզի, թողեք մի քար եր օնի, նեստի

տա եզանը. թա՝ քարը նի կգյո եզանը աշկը վեր ածի, ուրեմը Դովի մախուսան ա քարը նեստի տըված, եզանը աշկը վեր ածած: Աշկը վեր դըռած եզնըրը կտաք Դովու, աշկըրը սալամաթ եզնըրը՝ Մանցու, հաշիվը փակեք: Թա Մանցու նեստի տըված քարը նի վեչ գյո եզանը աշկը վեր ածի, ուրեմը Մանցի նահախ տեղն ա Դովու նետ կըռըվ ըրիս: Կփըռնեք, Մանցու ձեռքը կկտրըք, հղե դիրեք:

Հաքիմ չոբանը որ դադը իստի որոշիս ա, Մանցի համփերըմ չի, մուտունալիս ա, Դովու խտըտիս, լեց ինիլավ ըսիս.- Դովի, իմ ախպեր, հինչ որ դըռած ա, ընթունիս ըմ, հաշտվմմ: Քարը միամիտ տեղն ա նի եկած եզանըս աշկեն, ինձ ների, գիննք ալլա մըր ախպերութոնը արընք:

Դովի ալ ա լեց ընիս: Մանցի նի ա մտիս Դովու կոռնը, եր ունիս գինիս:

Էս դադը, որ վաճառականը տըսնալիս ա, շինացուն ըսիս ա.- Եք, մըր գենգյատն ալ արընք չոբան հաքիմեն, տըսնանաք՝ հի՞նչ կորոշի:

Շինացեն համաձայնվմ ա: Վաճառականը մուտունալիս ա հաքիմ չոբանեն, գյուղոխ տալիս, ըսիս.- Հաքիմեն արըվը միշտ վառ մնա, մի գենգյատ ալ մըզ օննք, խընթրիլիսընք լըսեք:

- Կըլըսընք, նաղլը արի,- ըսիս ա հաքիմը:

Վաճառականը նաղլ ա ըրիս հինչ որ դըռած ա:

Հաքիմը շինացուն հըրցըրիս ա.- Դու տասը ծուն հոմ ը՞ս տարալ տըվալ վաճառականեն, քա՞ իփած:

- Հաքիմը ողջ մնա, իփած ըմ տարած, տըված:

Հաքիմը հվաքված մախլուղեն ըսիս ա.- Այ մարթինք, հալա մի մըտածըք, ինձ ըսեցեք, իփած ծուն հինչո՞ւր կարուղ ա ծոտ դըռնի, մըծանան, հավ դըռնըն, ծու ածըն, մինը հազար դըռնն: Պա էտ խըլքը գյլխեն մարթու որոշում ա՞, արթար բեն ա՞... Այտըս,- հաքիմը ըսիս ա,- խընթրիս ըմ, մի գիր գիդացուղ, ղալամ փըռնող մարթ առաչ գյո:

Մի տիրացու առաչ ա գինիս: Հաքիմը ըսիս ա.- Գիրի թաքավորեն, որ հո՞ւվ ա տըսած իփած ծուն դիրըն թուխցուկանեն տակեն, ծոտ դուս արի, հավ դըռնն, ծու ածըն, այտըս՝ մինը հազար դըռնի: Քյոխվեն գյըլխեն խըլք չկա, որոշած ա: Պա դու թաքավորս, պետք ա բենը խորը մտածըս նոր քու խըլքավը արթար դատ արըս:

Տիրացուն հաքիմ չոբանեն որոշած դադը գիրիս ա: Հաքիմ չոբանն ալ իրան բութ մաննը թանակ ա նի քըսիս. տիրացվեն գիրած թոխտը մաննավը փիչիտիս, տալիս մի չուբանու, թա՝ տար տոր թաքավերեն: Էրկու չուբանու վալ թափշուր ա ըրիս, որ գենեցեք վաճառականեն քյարվանը բիռ-

նեցեք, թողի, գինի: Հու որ օգի թողի վեչ քյարվանը գինի, ձեռքըրը երկեն կկապե՛ք, կբերե՛ք իմ կոշտը:

Շինացուն ալ ըսիս ա.- Դու վալ վաճառականեն շնորհակալութուն հայտնի, որ հենգ տարուն ետը եկած ա, պարտքը մռացած չի, մի վըսկուն տեղն ալ իրան խըղճավը հենգ վըեսկե ա տըված:

Շինացե մարթը գաղտնիքը կըրիս չի պահի, ըսիս ա, որ ինքը վաճառականեն նանե շատ ըռազի յա: էտ ամեն չարչարանք սարքուղը իրաց քյոխվան ա իլած, որ արանքից մի բեն ալ ինքը օքըթվի: Հաքիմ չոբանեն էտ օրվա արած էրկու դադից ալ շատ գոհն մնալիս հըվաքված մախլուղը, հայտնըմ ըն իրանց շնորհակալութունը:

Էտ օրից մի էրկու օր անց հաքիմ չոբանեն կոշտնն գյուլիս թաքավորեն ղորկած էրկու վազիր, ըսիլիս.- Հաքիմ չոբանը ողջ մնա, մըզ թաքավորն ա ղորկած: Քու գիրած թոխտը կըրթեցալ ա, մանցալ զարմացած: Ասալ ա՝ էսքան խըլքու տար մարթը չպետք ա չոբան ինի, պետք ա իմ պալատըմը վազիր ինի: Միեգ, մըզ ղորկած ա, քի տաննք:

Չոբանը միետ մին հրաժարվալ ա, որ իր սերտը ինձ նետ կապված մախլուղը թողի գյուլ:

Համա դե թաքավորեն հոքըմն լալ, հի՞նչ արած, թողալ ա, գենցալ:

23 (48). ԹԱՔԱՎՈՐԵՆ ՊՈՉԸ

Քյոհնա դովրին մի թաքավորու նազիրը մըռնիլիս ա: Թաքավորը, մի առ վախտ անց կընալեն ետը, հվիքիս ա իրան վազիրներին, երգիրեն հաքիմներին, որ նազիր նշանակի:

Հըվաքված մարթկանցը թաքավորը ըսիս ա.- Իս մի պընգըլ ըմ ըսլական: Հու որ պընգըլեն մանին ճարի, էն մարթըն ալ կըդըռնի իմ նազիրը:

Թաքավորը ըսիս ա, բիրիս մաչտըղ մի ղոչ վընննը ըրիս, պընգըլը ըսիս.- Առաչինը՝ հու որ կարի էս ղոչը տանի ծախի, արժեքը բերի տա ինձ, էրկուսինջինն՝ ղոչեն մըսեն նանե մի շիշ խըրավաձ բերի տա ինձ, իրըքսինջինն ալ՝ ղոչն ալ սաղ-սալամաթ բերի տա ինձ, էն մարթը, ուրեմը, իմ երգիրեն ամենախելուկը մարթն ա:

Վազիրնեն, հաքիմնեն հարչան խիյալ-խիյալ ըն ըրիս, կըրիլիս չըն թաքավերեն առաչարկած պընգըլելն մանին ճարիլ: Վերչը ամենատարիքավըր, սպիտակ մըրքավըր մի հաքիմ, ըռիսկի ա գյուլիս, ըսիս.- Արըվշատեթուն ինի թաքավորեն, ախըր քու ասած մանին ճարելու ըսկի հղե չօնի: Հունչո՞ւր թա՝ ղոչը տար ծախի, փողը բեր, մորթի, մի շիշ խըրավաձ մըսը

բեր, ղոչըն ալ սաղ-սալամաթ բեր տոր ինձ, իտի նաղլը ինի չի, գյլոխ եկուղ բեն չի:

Թաքավորը ըսիս ա.- Հլիվըր հաքիմը ողջ ինի, կարուղ ա՞ իս անխըլք ինըմ, ձեզ հըվաքած ըմ բերած՝ պար ըծիլու: Խըլքավ գյուլոխ ունեցողը մանիհ հիշտ կըճարի, իրըք օր ձեզ ժամանակ: Ճարալ եք, ճարածլեք, ճարա չեք՝ ամենիտ գյուլոխը կըտրիլ կըտամ, գինըմ օրեշ երգիրից նազիր, վազիր, հաքիմնե բերիլ տամ:

Էտ օրըրը թաքավորեն շհարեն մոտե մի շենու նհետ մի չոբան մարթ եկած ա ինիս շհարը՝ իրան տանը հետե առուտոր ըրիլու: Լսիս ա, որ թաքավորը մի պընգըլմանի ա ասած, երգիրեն հաքիմներին, ոչ մինը կըրիս չի պադասխան տա: Չոբանը գինիս ա թաքավորեն ըսիս.- Թաքավորը ապրած կենա, ինձ մի օր մոհյաթ տոր, ղոչը տանըմ, քու պահանջը կադարըմ:

Թաքավորը իրավունք ա տալիս չոբանեն: Չոբանը ղոչը տընիս ա, էքսի օրը ետ գյուլիս, ջուբեն նանե մի վըսկե դուս ունիս, տալիս թաքավորեն, ըսիս.- Թաքավորեն երկար գյանք ինի, ղոչը ծախած ըմ, ես մի վըսկեն ղոչեն արժեքյն ա, եր կալ:

Մաշկը կապած մեզարը բինալիս ա, լավաշ հացըմ փըթաթած մի շիշ խըրավաձ մըս դիրիս ըռշկին, ըսիս.- ես ալ քու ղոչը մորթած ըմ, մի շիշ մըսեն նանե խըրավաձ, ես ալ քու օզած խըրավածը: Իրըքմինջինն ալ, քու համան ղոչը, անջուկնուն քու մոհրը թխած՝ սաղ-սալամաթ բերած ըմ, տըրեթուն արի:

Թաքավորը եշալ ա վազիրնուն, հաքիմնուն, ասալ.- Դե մհեգ պատասխան տըվեցեք, ինձ բացատըրեցեք՝ չոբանը հինչո՞ւր ա պընգըլեն մանիհ դուզբադուզ կատարած:

Վազիրնեն, հաքիմնեն ալլա բեն չըն գյուլխու ինգյալ: Մանցալ ըն մինը-մինեն իրեսեն յիշիլիս, սուսը-փուս նըստած:

Թաքավորը ալ համփերըմ չի: Չուբանեն ըսիս ա.- Հաքիմ չոբան, նաղլը արի, թա իմ ասած պընգըլեն մանիհ դու հունչո՞ւր ըս ճարալ:

Հաքիմ չոբանը ըսիս ա.- Թաքավորը ապրած կանա, դըժեր բեն չի լալ: Ղոչը տարալ ըմ իմ տոնը: Տըսալ ըմ երե սորին բուրթ կաննի: Բուրթը խոզալ ըմ, տարալ ծախալ: Դիմարը մի վըսկե լալ, բերալ ըմ տըվալ քի: Եշալ ըմ, տըսալ ղոչը կռըտված չի, սորին պըլըլնե օնի: Ղոչեն պըլըլնեն ալ կըտրալ ըմ, խըրավալ, լավաշ հացըմը փքատալ, բերալ տըված քի, էտ ալ քու օզած ղոչեն խըրավածը: Դե ղոչն ալ, ես ա՝ սաղ-սալամաթ, բերած ըմ տեղըս վընը արած:

Չուբանեն նման խըլքեն երե օմեն ալ մընալիս ըն զարմացած:

Հաքիմ չոբանը ուզիս ա գինի, թաքավորը թուղիս չի: Ըսիս ա.- Դու լա իմ նազիրն ըս, որ կաննըս: Նըստի իմ աջի կոխկեն: Էրկու վազիր կըղորկըմ, կգինն, քու քյուլփաքը, իլած-չիլածըտ կիվաքըն, կըբերըն:

Թաքավորու հոքյմ ա: Հաքիմ չոբանը գյուլոխ ա տալիս, նըստիս թաքավորեն կողքեն:

24 (49). ՔՅՈՆԱՋ ՔՅՈԽՎԱՆ ՆԱ ՀԱՔԻՄ ՆԱԽԸՐՉԻՆ

Նաղլ ըն ըրիս, որ մհետ մի թաքավոր գինիս ա մի շենըմ ղոնաղ ինգիս: Ըրկուն թարափ թաքավորը շենեն քյոխվեն ըսիս ա.- Երե՛ք, գինընք ձեր շենեն տավար-ապրանքեն առաչը, տըսնամ հի՞նչ հարստեթուն օնեք:

Թաքավորը, նըհետը եկած վազիրնեն, քյոխվան, դերը, շենեն աշկի ընգյնող մարթինք եր ըն կընալիս, գինիս շենեն նաեն դուս, էն հըղոքը, որ տավար-ապրանքը գյուլիս ըն շենը, հըղըցին երե վըր կընալիս, եկած ըպրանքեն թիմիշա ըրիս: Քյոխվան յիշիս ա հըղոքըն անց կանուղ մի կըվու, ըսիս.- էս մարալ կավը, որ անց ա կընալիս, յըղե ա, փորեն վըրթը կարմուր ըռանգե յա, ճակատը՝ ըսպիտակ՝ ղաշղա:

Քյուխվեն ասածը նախըրչին լըսիս ա: Մուտուննալիս ա թաքավորեն, հըվաքված ժողովուրթոն գյուլոխ տալիս, պատիվ իլիս, ըսիս.- Թաքավորը ապրած կենա, թող քյոխվան ինձանե նըղաննա վեչ, սորին չի տըսնալիս: Ոչ թա կըվեն փորեն վերթեն ճակատըն ա ղաշղա՝ սպիտակ, վերթեն հագյվեն պտըկեն մազեն փոնջըն ա սպիտակ: Հագին ծալված ա, եկած ճկատեն երե: Մելիք-քյոխվա, նորից սորին եշի, կըտըսնաս, որ իմ ասածըն ա ղորթ:

Դե թաքավորեն էտքան հըվաքված ժողովուրթեն քուշտեն որ նախըրչին խոսք ա բիրիս քյուխվեն ըսածեն երե, քյուխվեն շատ փիս պընդըն ա գյուլիս, ըսիս ա.- Էսքան մարթու քուշտեն ասած խոսկետ տար ը՞ս կընալիս, մարջ կգյո՞ս:

Նախըրչին ըսիս ա.- Համաձայն ըմ, մելիք քյոխվա: Մի քանե օրեն ետը կավը ծնըլական ա: Քու ասածը ինի, իմ գյուլոխը կտըրի: Թա չի իմ ասածը ինի՝ կավը վըրթեն նհետ տոր ինձ:

Նախըրչուն նման խոսքը ավելի շատ պընդ ա եկալ քյոխվեն: Քյոնազեթուն ա արալ, ասալ ա.- Որ իդի ա, կավեն տարը իս ըմ, լա մըր մարջեն երե պետք ա մըհեգ կավը մորթընք, հաստադընք, տըսնանք իմ ասածն ա՞, թա՞՝ քու ասածը:

Քյոնազ քյոխվան զոռավ յղե կավը մորթիլ ա տալիս, փորը ճըղիս ըն, տըսնալիս նախըրչուն ասածն ա՝ վըրթեն ճակատը սիպտակ չի, հագվեն պըտկեն մազեն փոնջըն ա սպիտակ: Ղուրթավ, վըրթեն հագին ծալված ա, եկած նըստած ճակատեն երե:

Նախըրչուն նման հաքիմեթուներն երե հունչուր հըվաքված ժողովուրթըն ա մանցալ զարմացած, ինդի ալ թաքավորն ալ ա զարմացալ, հըրցըրալ.- Նման գաղտնիքը հունչո՞ւր կինա բացատըրիլ:

Հաքիմ-նախըրչին ասալ ա.- Թաքավորը ապրած կենա, գաղտնիքը էն ա, որ մելիք-քյոխվան որ ծընվալ ա մորից, բախտեն ղոչը գյուլոխը թըքալ ա, պոզավը դըմակը քորալ: Այտըս, մելիք-քյոխվեն գյանքըմը դըմակու վա ըռաստ եկալ: Իս ալ, որ մորից ծընվալ ըմ, բախտեն ղոչը ետքեն վընը տարալ ա անջուկը քորալ: Ինձ ալ նախըրչեթունն ա ղըսմաթ դըռալ:

Թաքավորը ասալ ա.- Մհեգ որ իս օգըմ, էտ բախտեն ղոչը կարի չի՞ քի հետե ալ դըմակը քորի:

- Էտ Աստված կգիդա, հի՞նչ ասըմ,- ասալ ա նախըրչին:

Էս խոսակցութոնից մի քանի օր անց, թաքավորեն էրկու վազիր գյուլիս ըն հաքիմ-նախըրչուն ըսիս.- Աշկըտ լուս, հաքիմ-վազիր, թաքավորը քի վազիր ա նշանակած, իրան ուներցած ամեն տավար, ապրանքեն երե: Շենըմը հուր նհետ պարտք, պահանջ օնըս, փակի՝ քյուլփատըտ եր կալ, գինանք:

Թաքավորեն հոքմը նախըրչի-հաքիմը կդարալ ա:

25 (50). ՊԱՐԻԿԵՆԹԱՆԸ

Պարիկենքան, պարկենքան ասածը քյոհնա դովրին լալ, որ մըծ-կուճի, ահիլ-ջահիլ, շինըհավան խըռնըվիսն լալ մինը-մինեն՝ զուռնա ըծիս, դոմբի թըկիս, պար գյուլիս, խաղ ըսիս, ուտիս, խըմիս, շենեն կըտուրնուն, կալերըմը խաղեր խաղ ըրիս, բեցուր ծըղըպորի ծառերից ճինջի գիծիս, խաղ ըրիս: Ամենն ալ ուլխանըմն լալ, հինչ պասուց ուտելեղեն լալ ուտիս ըն լալ, որ ալ ըռշկնես Մըծ պաքըն ա գյուլիս, պետք ա՝ հիցուն օր հայ քրիստոնյան պաք (պաս) պահի: Հիլիվըր մարթինք, պառավ կընանենքը պասեն վերչին շափաքը ծումն լալ պիհս, գինիս եգեղեցեն աղոթք արըմ, մասունք ստանում, իրաց սուրփ հոքով մխիթարվըմ:

Մհեգ ա, որ օմեն հինչ մոռացած ըն, ոչ մի բենու հըվատամը չըն, ամեն հինչ մոռացած ըն: Պարիկենքանից առաչ, մըհալեն հարուստ, առուտուրական թորքերը բերիլն լալ հայերեն շինիթկընոմը եղ, կըտըվհատու ձեթ,

բըրինձ, պանըր, ալլա նման օրեշ բենըր ըն լալ ծախիլ: Հայըրըն ալ օգիլ ըն լալ պահիլ, պարիկենթանի օրերեն բինիցիրիլ:

Մի տարե ալլա մի հայու շենըմ, բիրիս ըն եղ, բըրինձ ըն ծըխիս:

Մի մարթ մի կուճի օշնակ եղ ա ունիս մի պըրպոճակ ալ բըրինձ ա ունիս, տընիս տոնը: Կընեգյը հըրցըրիս ա.- Ա մարթ, էտ հինչը՞ս կալած, բերած:

Եղն նա բըրինձը, որ հանցուրը կնեգյը բինիցիրի վեչ, մնա պարիկենթանի օրերեն բինիցըրըն, մարթը ըսիս ա.- Ա կնեգ, եղ ա, բըրինձ ա, բինիցորս վեչ, պարիկենթանինն ա, ձեռք վեչ տաս:

Դու մի ասի, էտ մարթը կընգանը նանե խայ ա, կընեգյն՝ մարթեն նանե:

Մի քանե օր անց ա կընալիս, էտ խայ կընեգյը մի օր նայե ինիս իրաց տանը ըռընշկին նըստած, տըսնալիս ա, որ մի ղարիբ մարթ, քյուչավը դեսդեն յիշիլավ, թիաթավ գինիս ա: էտ կընգանը մտքավը անց ա կընալիս, որ կա, չկա, էս մարթը պարիկենթանն ա, եկած ա եղը-բըրինձը տանի: Ղարիբ ա, իրաց տոնը ճընչիս չի: Եր ա կընալիս, հերընաց կընչիս.

- Ախպե՜ր, այ ղարիբ ախպեր, դու պարիկենթանն ը՞ս:

էտ ղարիբ մարթը գյուլխուվ ա ինգյիս, որ մի գաղտնիք կա: Ետ ա դընալիս, ըսիս.- Հա, բաջի ջան, իս պարիկենթանըն ըմ: Հի՞նչ կաննի, բեն օնը՞ս ըսիլու:

Խայ կընեգյը ըսիս ա.- Պա որ դու պարիկենթանն ըս, խե չը՞ս գյուլիս ձեր եղը, բրինձը տընիլիս: Դեչանը հի՞ր պետք ա պահինք:

- Բաջի ջան, դի կըներեք, ղարիբ ըմ, ձեր տոնը ճընանչըմ չըմ լալ: Ըտուր հետե յա տըսալ ըս, որ քյուչենեն շոռ ըմ լալ գյուլիս: Ղորմա սորին հորըտ, Աստուծ բալենքյըտ պահի, գինի բեր, տանըմ:

Խայ կընեգյը գինիս ա եղըն նա բրինձը եր ունիս, բիրիս տալիս պարիկենթանեն: Պարիկենթանեն ձեռքեն մի տերտակ հաբգյա յա ինիս, եղեն օշնակը դիրիս ա հաբգեն մի աշկըմը, բըրինձեն պըրպոճակն ալ մի աշկըմը, գիձիս օսսուքը, հղե ինիս, գինիս:

Բախտի բերմամբ, թա չըբերմամբ, էտ խայ կընգանը, խայ մարթը ընշտեղ ա ինիս գենցած, գյուլիս ա տոն:

Կնեգյը օրախ-օրախ ըսիս ա.- Այ մարթ, աշկըտ լուս, գյլխըցավանքից պըրծալ ըմ: Լա պատառ առաչ պարիկենթանը եկալ ա, իրան երե պատառ ալ նըղացալ ըմ, եղը նա բըրինձը տրվալ ըմ շելակը, եր ա կալալ, օրհնանք տալավ, հըղե ինալ, գենցալ:

Խայ մարթը, որ էսքանը լըսիս ա, խըրեգ ա մնալիս սըրտը ճաքի, քըխի կընգանը ըսպանի: Մարթը կըզնըված ըսիս ա.- Այ խայ կընեգ, հի՞նչ պա-

րիկենքան, հի՞նչ բեն, էտ հո՞ւ լալ, եկած ա խափած, գյուղոխըտ կապած, եղ նա բրինձը տարած:

Կընեգյը ըսիս ա.- Խայը դուվ ըս, դու քու բերանավը ասալ ըս՝ եղեն նա բըրինձեն ձեռք չըտաս, պարիկենքանեննն ա: Դե պարիկենքանն ալ եկալ ա, իս ալ տըվալ ըմ իրան, տարալ ա: Հավատ չըս ըրի՞ս հեն ա, հա՜... Շենեն ըռշկին հըղոքն նայե իրան հետե խաղ ըսիլավ, թիաթավ գինիս, որ ղեյրաթ արըս, վազ տաս, կգինըս, կըհասնըս:

Խայ մարթը նի ա ինգյիս հըղեն, վազ տալիս, որ գինի հասնի պարիկենքանեն, եղը նա բըրինձը իք օնի, բերի: Պատառ տեղ վազ ա տալիս, իրաց շենեն դերը, նըստած ծիանը երե, դուս ա գյոլիս պարիկենքանուն հետեն վազ տըվող մարթեն առաչը: Չին վըննա ըրիս, զարմացած հըրցըրիս.- Այդա, Հաթամ, էտ հինչ ա՞ պըդահած, ըշտեղ ը՞ս գինիս՝ իտի վազ տալավ (դու մի ասի, էտ խայ մարթեն անըմը Հաթամ ա ինիս):

Հաթամ թայդնի, գյլխեն եկած փորձանքը դերեն նաղլ ա ըրիս:

Դերը ծիանը նանե վեր ա գյոլիս, ըսիս.- Այ տընաշեն, էն մարթը ղալիս հըռացած ա, վընննուք գինըս, կարի չըս հասնի: Եք եռ ինի իմ ծիյանը, խըռեք տոր, գինի հասեր:

Հաթամ ուլխանալիս ա, եռ ինիս դերեն ծիյանը, խըռեք տալիս, գինիս:

Եղը նա բըրինձ տանուղը ետ ա յիշիս, տըսնալիս, մի մարթ ծիյանը անջուկը մտած, էն ա հետնանց գյոլիս ա: Ինքը իրան որոշիս ա, որ. «Կարուղ ա եղեն նա բըրինձեն տարը ինի»: Բիրիս ա օսսեն հաբգյան վեր դիրիս, մի քոլու ետքե պըհիլիս, ինքն ալ հըղըցին կողքեն նըստիս, չուբուղ քըշիս:

Հաթամ ծիյանը երե գյոլիս ա, իրան անծանոթ մարթեն կուշտեն վընննը կընալիս, հըրցրիս.- Ղարիբ ախպեր, էս հըղոքը տըսա չը՞ս մի մարթու, որ օսսեն մի հաբգյա լալ գիծած, մի աշկըմը մի կյուճոճ՝ եղավ լիգյը, մի պըրպոճակ ալ բրինձ:

- Տըսալ ըմ,- չուբուղեն ծոխը յըրկընցնիլավ ասալ ա եղն նա բըրինձ տանուղը:

Հակառակու նման հըղեն տեղըտ էրկու տեղ լալ բյուժենվըմ:

- Պա ո՞ր հըղոք ա գենցալ,- հըրցըրալ ա հավատը մորե խայ Հաթամ:

- Գյըլխըվեր գենցուղ ներքե հըղոքը:

- Չին, որ խռեգ տամ, գինըմ, կկարը՞մ հասնի:

- Չէ՛,- գյուղոխը դուռու տալավ ասալ ա պարեկենքանը, ըսիլիս,- դու ծիավ, էն վընննանի: Քու ծին դեչանը մին, էրկու, իրըք, չորքը՝ վըտըրը փոխիլը, էն մարթը էրկու վընննանե յա՝ մին-էրկու, մին-էրկու, վազ կըտա, թո-

ղի գինի, հունչուր քի հետե ախպեր, իս ինդի յըմ մասլահաթ գիդալիս, որ ծին թող իմ քուշտեն, դու վազ տոր գինի հասեր էն շանը տղեն, թքի իրեսեն, աբուռը եր կալ, եղն նա բըրինձըտ իք կալ, եր կալ, եք: Այտըս դու ալլա եռ ինի քու ծիյանը, գինի ձեր տոն, իս ալ իմ հըղեն շարունակըմ:

- Ղորմա հորըտ, ախպեր, շատ սորին մասլահաթըս արալ: Թող Աստուծ ալ քի երկար գյանք տա,- ըսիս ա խայ Հաթամ, ծին տալիս պարիկենթաներն, ինքը նի ինգյիս հակառակ հըղեն՝ վազ տալավ գինիս:

Խայ Հաթամ որ պատառ հըռընալիս ա՝ պարիկենթանը, Աստուծը մոռացած մարթու նման եր ա կընալիս, հաբգյան քոլեն երկեն նանե բիրիս, դիրիս ծիյանը երե, ինքն ալ եռ ինիս, իրաց շենեն հողոքը խաղ ըսիլավ քըշիս, գինիս:

Խայ Հաթամ գինիս ա, գինիս, պարիկենթաներն ճըրիս չի: Ետ ա դըռնալիս, գյոլիս տըսնալիս՝ ջոխտ հըղըցին երե ալ ո՛չ ղարիբ ախպեր կա, ո՛չ ալ՝ դերեն ծին:

- Հալբաթ իս ետ ըմ ինգյալ, ղարիբ ախպերըս եռ ա ինալ ծիյանը, գենցալ մըր շենը,- որոշիս ա խայ Հաթամ, նի ինգիս հըղեն, գինիս տոն:

Տըսնալիս ա՝ ղարիբ ախպերը ո՛չ իրան տոնն ա գենցած, ո՛չ ալ՝ դերաց տոն: Գյլխեն եկածը կընգանը նաղլ ա ըրիս: Կընեգյը ծծղիս ա, ըսիս.- Այ մարթ, դու ինձ խայ ըս ըսիս: Մրիեգ տըս, խայը իս ը՞մ, թա՞ դու:

Ըսիս ըն՝ դեչանը ասօր ալ կըռվիս ըն, մարթը կընգաննն ա ըսիս՝ խայ ըս, կընեգյը՝ մարթեն:

26 (51). ԷՐԿՈՒ ԵԹԻՄ ԱԽՊՈՒՐՑԸ ԲԱԽՏԸ

Նաղլն ըն ըրիլիս, որ քյոհնա այամեն էրկու եթիմ տղա յըն ինիս՝ տասնչորք, տասնըհենգ տըրեկան: Ըտուց հարը, մարը մըռածն ինիս: Օրեշ հարազատ ինիս չի: Մանցած ըն ինիս դըրքերը ինգյած՝ մուրացկանութուն ըրիլիս: Մի խըղճմըտնքավ մարթ էտ եթիմներեն տընիս ա, տըրեթուն ըրիս: էտ մարթը եթիմնուն ըռշկին պայման ա դիրիս: Մըծ ախպուրը ըսիս ա.- Քսան գյուլոխ վըչխարնե օնըմ: Քու բենը էն կինի, ամեն օր վըչխըրնեն տանըս հանդը, արուտ տաս, բերըս:

Կուճի ախպուրն ալ ըսիս ա.- Դու կըմընաս տանը: Կընեգյս հինչ որ կասի՝ կըլըսս: Կըգինըս ախպիրին նըհետ ջուր կըբերս, տոնը, գյումը կըսիրբըս, փեհնը կըտանըս նի կածըս փողը ալլա նման բենըր: Իս ալ ձեր բոյավը մին շոր գեց կըտամ, փորներավըտ մին հաց կըտամ, կըպահըմ:

Եթիմնեն համաձայնըվըմ ըն, բենե կընալիս:

Մի վախտ որ անց ա կընալիս, կուճի ախպերը մըծ ախպուրը ըսիս ա.- Ապի, եք մըր աշխադանքը մի քանե օրավ փոխընք: Մի քանե օր դու մընա տանը, տան բենըրը արի, իս ալ վըչխընռնեն տանըմ պահմ:

Մըծ ախպերը համաձայնվըմ ա: Մընանլիս ա տանը: Օրվա բենը որ պըրծըցրիս ա, սըրտը շաքյ ա ինգիս: Խիյալ ա ըրիս, ըսիս ա. «Ախպերըս խամ խոխա յա, քունավ կընցընի, գյուլուրը կըգյոն վըչխընռնուն կըկտորընք: Գինըմ տըսնամ հինչ ա՞ ըրիս»:

Մըծ ախպերը գինիս ա՝ տըսնալիս կուճի ախպերը նայե մի տանձի ծառու տակե քոն ինած: Վըչխընռնեն ալ օմմեն թակած ա մըհակավ, կըտորած, մինչա մի ղոչ ա սաղ մընալիս: Ախպուրը քունե եր ա կըցըրիս, հըրցըրիս.- Այ ախպեր, էս հի՞նչ բեն ա, էս վըչխընրնեն խի՞ յընս կըտորած, վըչխընռնուն տըռնը հի՞նչ պատասխան պետք ա տանք:

Կուճի ախպերը ըսիս ա.- Եկալ ըմ, տըսալ էս տանձի ծառը նայե հասած, տանձավ լիգյը: Վըչխընռնուն նետ պայմանավորվալ ըմ, որ իս եռ ինըմ ծառեն, տանձը թափ տամ, իրաք ալ հըվաքընը, թուփ արընը: Այտըս ծառեն նանե վեր գյոմ, նըստընք, միասին օտընք: Տանձը թափ ըմ տըվալ: Ծառեն նանե վեր եկալ, տըսալ՝ ինձ հետե տանձ չընը պահած, թեխտա կերածընը: Մինջա մի չափպուլ տանձ՝ ղոչը նի ա գիծած պուզերեն ղաթը, պահած: Իս ալ ղոչը թողալ ըմ, մնացած վըչխընռնեն կըտորալ:

Մըծ ախպերը ըսիս ա.- Շատ սըխալ բեն ըս արած: Վըչխընռնուն տարը, որ գիդա, մըզ ալ կըսպանի: Քանե շուդ ա, եք փախըչընք, մի տեղավ գյուլոխ եր օնընք, կորչընընք:

Էրկու ախպեր լեց հինիլավ, քողցած, ծարավ մի անծանութ հըղե փըռնիս ըն, գինիս: Ըրկոնաց մի ծըմակու մաչավ գինիս տեղը մի արչ ըտուց լեցեն սասը լսիս ա, գյուլիս հըղըցին երե վըտ ա կընալիս, հըրցըրիս, թա.- Դուք հի՞նչ խոխենք եք, էս մթանը ծըմակըմը հի՞նչ բեն օնեք:

Եթիմնեն իրաց գյլխեն եկածնեն արչեն նաղլ ըն ըրիս մինի-մինի:

Արչը ըսիս ա.- Վախիլ մեք, ինձ ալ էրկու կուճի քոթեթներ օնըմ: Եկե՛ք ձեզ ալ տանըմ իմ ըղանը, ձեզ ալ իմ քոթոթնուն նետ պահըմ:

Արչը եթիմնուն տընիս ա իրան ըղանըմը պիհս: Քըշանաց, որ լուսինալիս ա, մըծ ախպուրը ըսիս ա.- Դու կըմընաս տանը, ծըմակեն նետ փադ կընբերընս, կըրակը վառ կըպահս, ղզղանը ջուր նի կածընս, կըտաքացընընս, քոթոթնեներեն կըլըղըցըրընս, տոնը ավիլավ կըսիրբընս, կմաքրընս: Իս ալ կուճի ախպուրըտ նետ կգիննք ծըմակը վըրս կարընք, ուտիլու հետե պտող-մտող կճարընք, կընբերընք:

Եթիմ տղերքը արջեն քուշտեն իտի մի վախտ յուլա յըն գինիս, ըպրիլիս: Մի օր ալ, ալլա կուճի ախպերը մըծ ախպուրը ըսիս ա.- Ապի, ցիրըկը ծմըկնոմը շատ ընք շոռ գյուլիս, ինջինմիշ ըմ ինիս, վըտըրըս ցվիս ա: Մի քանե օր ալ դու արչեն նետ գինի ծըմակը՝ ուտիլու բեն բիրիլու: Իս տան մընամ, տանը բեն արըմ:

Մըծ ախպերը համաձայնվըմ ա: Ինքը արչեն նետ գինիս ա վըրս, կուճի ախպուրը թուղիս տանը:

Առաչին օրը ծըմակըմը, որ շատ ըն շոռ գյուլիս, ինջինմիշ ըն ինիս: Արչը տղեն ըսիս ա.- Եք, պատառ քոն իննք:

Արչը քունավ ա ինգյիս: Տղեն քոնը տընիս չի: Ալլա սըրտը շյաք ա ինգիս, որ՝ ախպերս խամ տղա յա, կարուղ ա սխալ բեն արի: Արչեն ծըմակըմը թուղիս ա քոն, ինքը գյուլիս ա տոն... Տըսնալիս հի՞նչ: Ախպերը ջուրը հըռ ա ածած, արչեն քոթոթնեն նի կոխած հըռ եկած ջիրին մաչը, խըղդոտած, տարած դիրած ըրևեն տակեն, որ չուրանան:

Մըծ ախպերը, որ տըսնալիս ա, աշխարքը գյլխեն բիլբիլալիս ա: Ախպուրը ըսիս ա.

- Այ պըլ մըռած, եր կաց փախչընք: Արչն, որ գյո տըսնի, մըզ կըսպանի:

Էրկու ախպերավ, ալլա երըն կընալիս, լեց ինիլավ մի հղե փըռնիս, գինիս: Արևմտոցեն տըսնալիսըն մի ծորու նանե ծոխ ա բիցիրնալիս: Գինիս ըն, տըսնալիս մի ջեղաց ա: Չըղըցպանն ալ մի հիլիվըր մարթ ա: Եթիմ տըղերքը իրաց գյլխեն եկածնեն նաղլ ըն ըրիս ջըղըցպանեն: Չըղացպանը ըսիս ա.

- Տղերք ջան, ինձ աշխարքըմը ոչ մի տղա, աղչիգ, հարազատ օնի չըմ: Ձեզ Աստուծ ա ղրկած իմ կոշտըս: Հինչուր հալալ թոռնըր՝ ձեզ տըրեթոն կարըմ, կպահըմ, կըփըսակըմ, կըտընըվըրըմ: Իս ալ, որ մըռնըմ, ինձ տըրեթուն կարեք՝ ձեր հալալ պապուն նման ինձ կթաղեք:

Եթիմ տղերքը ճըրիս ըն իրաց կորած բախտը:

Չըղացպանը պիհս ա, մըծըցըրիս, փըսըկիս, տանտար ըրիս էրկու ախպուրնն ալ: Իրաք ալ ջըղըցպանեն տըրեթունն ըրիս, պիհս, հինչուր իրաց պապը:

27 (52). ՔԱՋ ՆԱՉԱՐԸ

Նաղլ ըն ըրիս, որ քյոհնա դովրում, մի հայ շենըմ իլալ ա, իլա չի մի շատ բեղեյրաթ մարթ ա իլալ, անըմը՝ Նազար: Նազարե իլած-չիլածն ալ

մի թաք կընեգ լալ, անըմը՝ եղսա: Նազար էնքան քյուռ, բեղեյրաթ մարթ լալ, որ նմանը աշխարքըմը ճարվի չի լալ:

Կընեգյը ղանչաք լալ արի, քողցած լալ պահի, թակիլ լալ, որ գինի բեն, գինիս չի լալ:

Պըդահած, կընգանը նայնե թաքուն, աշկյար, գյուղունվե մի բեն ձեռք լալ գիձի, օտիլ լալ: Կարի չի լալ ճարի, սուս-փուս պատեն տակեն նստիլ լալ: Էնքան բեղեյրաթ լալ, որ նըղանալ լալ, որ լա պատառ ջուր եր օնի, իրըսը լվանա: Սաղ օրը սըվըճանջիրը զիրավն լալ դըռնալիս, իրըսը լուզիլիս:

Նազարե արած բենն էն լալ, որ նըղանալ չի լալ, ձեռուք թըխիս լալ, օրական մի քանե սըվաճանջ ըսպնիս: Նազարե բախտեն իրաց շենեն դերը իրան հերըվանն լալ: Նազար ամեն օրվա ըսպանած սըվըճանջիրը հըվըքիս լալ փառակը, տընիս դերեն ըռշկին վեր ըծիս, ըսիս.

- Ադեր, ամեն օր կնեգյս ինձ թըկիս ա, հաց չի տալիս, ըսիս ա՝ բեղեյրաթըս: Պա էս բեղեյրաթ մարթու բեն ա՞: Օրական էսքան սըվաճանջ ըսպընողուն կասըն՝ բեղեյրաթ ա՞:

Վերչը մի օր դերը բիրիս ա մի գեզ կըտավու երե կյապուտ թընակավ գիրիս.

Անհախտ իգիթ, քաջըն Նազար,

Որ մհետ թըխի՝ կըսպանի հազար:

Կըտավը կըպիս ա մի փադու երե, շինիս բեյթաղ, տալիս Նազարե ձեռը, ըսիս.

- Նազար, իմ էշն ալ քի կըտամ: Եռ ինի էշեն, բեյթաղը եր կալ ձեռքըտ, գինի երգիրեն թաքավորեն կոշտը: Թաքավորը էս բեյթաղը որ քու ձեռքեն տըսնի, կարթի, կըզարմանա, կընշանակի իրան վազիրը, կգինըս քի հետե աղա մարթու նման կապըրըս, համ ամեն օրվա կընգանըտ թակեն նանե կըպըրծընըս, համ ալ իս կըպըրծընըմ քու ամեն օրվա գյլխացավանքից:

Նազար լըսիս ա դերեն պարի խըրատը, եռ ա ինիս էշեն, բեյթաղը ձեռքը ունիս, գինիս: Նազար էշեն երե նըստած, բեյթաղը ձեռքեն բեցուր պահած՝ շատ ա գինիս, թա խըրեգ, էտ ալ Աստուծ գիդա: Հըսնիս ա մի ճըրքարուտ, ծըռոտ, մըթեն ծմակու: Մին ալ էն ա լըսիս, որ դիմացի քըրծեն նըհետ մի անմարթկայինն գյուռ սաս ա գյոլիս, որ ըսիս ա.

- Ադա, դու հո՞ւվ ըս հե՞յ, էշեն երե նըստած ինսան... էտ ըշտեղ ըս գինի՞ս... Ետ դըռ կորե:

Նազար լըսիս ա, համա խուսիս չի, առաչ ա գինիս: Դու մի ասի, Նազար գենցած ա հասած մի երգիր, որ մարթ կավըչնի, դևըրըն ըպրիս:

Իրան սաս արուղըն ալ դևերեն երգիրեն սահման պահուղ ղարավուլչին ա: Ղարավուլչին տըսնալիս ա սահմանը մըտած ինսանը իրան բենու տեղ չի դիրիս, կըզնըվիս ա, գերանու միչըք մըհակը դիրիս օսսեն, գյուլիս, որ սահմանը խաղտուղ ինսաներն թըխի, ըսպանի: Գյուլիս ա մուտունալիս, որ բեյթաղեն երե կըրթիս ա՝ սիպտակ բեյթաղեն երե գիրած՝

Անհախտ իգիթ՝ քաջըն Նազար,

Միետ թխի՝ կըսպանի հազար:

Դևը որ էտ կըրթիս ա, վըխութունեն ջանը դող ա ինգիս, ըսկսիս ա դուղ-դուղալը:

Դե, Նազար ալ գյանքըմը դև տըսած չի ինիս, սարու նման դևը, ծառու միչըք միակը օսսեն, որ տըսնալիս ա, վախից ջանը դող ա ինգիս: Դևն ալ ինդի ա գիդալիս, որ Նազար իրան երե կըզնըված ա, որ եկած ա հըղեն կըտըրած: Կարուղ ա իրան ալ թըխի՝ սըվըճանջու նման ըսպանի: Ջոռ-ռավ լուզին բեն ա ինգիս, խուսիս ա, ըսիս.

- Նազար իգիթ, ինծ ըսպանիլ մա, եք քի տանըմ մըր տոն, մըր քաղաքը՝ ղոնաղ:

Դևը Նազարե տընիս ա իրաց քաղաքը: Հու վեր գյուլիս իգիթ Նազարե բեյթաղեն երե գիրած գիրը կըրթիս ա, բեյթաղեն տակեն չուքիս ա, թաբեհ դըռնալիս Նազարե՝ գյուլոխը կախ գիծիս: Նազարե բախտը գյորա, դու մի ասի մի քանե օր առաչ դևերեն թաքավորը մըռած ա ինիս: Դևըրը տըսնալիս ըն, որ Նազար շատ իգիթ, ղոչաղ մարթ ա, բիրիս ըն իրաց երգիրեն երե թաքավոր նըստըցըրիս:

Դու մի ասի, էտ դևերեն երգիրեն կողքեն մի օրեշ ալ դևերի թաքավորութուն կա, մինը-մինեն նետ ալ դուշմանն: Ըտուք, որ լըսիս ըն իրաց հըրևան դուշման երգիրեն թաքավորը մըռած ա, ղոշունն կըպիս, գյուլիս կըռըվ: Խաբեր ըն բիրիս հըսցըրիս քաջ Նազար թաքավորեն: Քաջ Նազարը ըսիս ա.- Իմ օմբիրը լա կըռվըների մաչավ ա անց կացած, իս կըռըվու նանե վըխիս չըմ: Դուք ալ ղոշուն կըպեցե՛ք, գինընք կըռըվ՝ շատեն նանե շատ կկտորվի, խըրիգին նանե՝ խըրեգ:

Քաջ Նազարը իրան ղոշունավը գինիս ա հըսնիս մի բունդուպըտոկ: Տըսնալիս ա՝ էրկու թաքավորության սահմանավը մի վարար գետ ա գինիս: Դուշման թաքավորեն ղոշունը էնքան շատ ա, որ ջուր ըն խըմած՝ գետեն ջուրը կըտըրված ա, ցըմաքած: Էտ բունդեն երե մի մըծ կաղնե ծառ ա ինիս, Քաջ Նազար թաքավորը եռ ա ինիս կաղնե ծառեն՝ իրան ղոշունեն ըսիլիս.- Չըվախե՛ք, ղըլմըղալ ըրիլավ, հարայ-հըրոց տալավ, երե տըվեցե՛ք դուշման ղոշունեն, գյըլխըրնեն խըռնեցե՛ք, թողե՛ք վախըն: Իս

ալ հետնանց էս կաղնե ծառը բուք կտամ հետնանց քարշ կըտամ, բերըմ ամեննեն կըտորըմ, նիածըմ գետը:

Ղոշունը որ հահրայ-հրոցավ գինիս ա դիբի դուշման ղոշունը, ըտուց սասեն ծըմակըմը մի փալանգ ա ինիս, դուս ա գյուլիս փըխչիս, գյուլիս Քաջ Նազարե եռ ինած կաղնե ծառեն տակեն նըստիլիս: Քաջ Նազար, որ ծառեն տակեն նըստած փալանգեն, որ տըսնալիս ա, վախից ջանը դըղդողուց ա ինգիս: Վըտըրը, ձերքըրը թուլինալիս ա, ծառեն նանե վեր ա ինգիս փալանգեն մաշկեն երե:

Փալանգյըն ալ վըխութունեն եր ա կընալիս, վազ տալիս դիբի դուշման ղոշունը: Քաջ Նազար տըսնալիս ա հըղըցին կողքեն մի թիթը կաղնե ծառ կա: Որոշիս ա, ձեռքը գիծի կաղնե ծառը փըռնի, փալանգեն նանե ազատվի: Դու մի ասի, ծառեն տակռեննեն չուրացած ա, բուք ա գյուլիս, փալանգեն հետեն քաշ ինիս, թոզաղան ըրիլիս:

Դուշման ղոշունը որ էտ տըսնալիս ա, սըրտաճաք ըն դըռնալիս, փըխչիլիս:

Դևըրը տըսնալիս ըն ղուրթավ իրաց թաքավորը կըռվարար, ղոչաղ, իգիթ մարթ ա, իրաց ազգըմը մի նախշուտ աղչիգ ա ինիս, բիրիս ըն Քաջ Նազար թաքավերեն նետ փըսկիս, օխտը օր, օխտը քիշեր հըրսանեք ըրիս, որ օխտը ղոչաղ տղաներ արսա գյոն, իրաց հորը նման անվախ ինն, մըծմըծանան, իրաց հորը մըռնիլեն ետը, իրաց երգիրեն տըրեթուն արըն:

Դե, աշխարքեն բենն ա, անց ա կընալիս մի վախտ: Քաջ Նազար թաքավորը նա գինիս իրան պալատըմը քոն ինած՝ ըրազի իրան առաչվա կընգանն ա տըսնալիս՝ եղսու: Տըսնալիս ա՝ կընեգյը գյուլոխը թկիս ա, ըսիս. «Թաղըմ քի նման մարթը, բոլ ա պարապ-սարապ նըստըս, եր կաց մի բեն արի»:

Քաջ Նազարը ուզիս լալ կընգանն ասի, որ ինքը դևերեն աշխարքեն թաքավորն ա, ալ առաչվա վախկուտ Նազարն չի... Մին ալ մի բեցուր սասից եր ա քըռնիս, տըսնալիս իրան վազիրն ա, որ վըխեցած ըսիս ա.- Թաքավորը ապրած կանա, քոն ինիլու վախտ չի, եր կաց, դուշման թաքավորը ալլա ղոշուն ա կապած, եկած կըռըվ անի:

- Գենցե՛ք իմ փալանգ ձին փըռնեցե՛ք, բերե՛ք, որ եռ ինըմ, գինըմ,- ըսիս ա Քաջ Նազարը:

- Մընք փալանգ ձին ընշտեղե՞ ճարընք, բերընք,- վըխվըխիլավ ըսիս ա վազիրը:

- Դուք փալանգ ձի ճարուղ, բերուղ չիք, իս ալ կըռըվ գենցուղ չըմ: Իմ օմբիրը կըռըվների նետ ա գենցած: Ալ հիլիվերած ըմ, կարի չըմ կըռվի: Հու կըռվեն պատճառ ա դըռած, թող էն ալ գինի կըռվի, դուշմանեն պատասխան տա:

28 (53). ԹԱՔԱՎՈՐԸ ՄԱՆՑԱԼ Ա ԽԱՋԻԼ

Նաղլն ըրիս, որ մինետ Հիսուս Քրիստոսը իրան տասնըերկու շագիրդնուն նետ մի շենու կողքավ գինիսն լալ: Մոտե մի տան նանե Քրիստոսը լսալ ա մի քանի գերմակ խուխու լեցու սաս: Քրիստոսը վըտ ա կացալ, շագիրդնուն միներն ասալ.- Ծարավմ, գինի էն տանը նանե պատառ ջուր օզի, բեր խմըմ, համ ալ գիդաց, թա էն տան խոխենքը խեյն լելիս:

Շագիրդը գենցալ ա, եկալ ասալ.- Տեր իմ, տնատարը հրաժարվալ ա, ջուր չի տվալ:

Քրիստոսը մանցալ ա զարմացած: Շագիրդեն նանե հրցրալ ա.- Դու ասալ ը՞ս, որ ջուրը Տիրոջը հետեյմ ուզիս՝ Քրիստոսեն:

Ծառան պադասխանալ ա.- Այո, Տեր իմ, ասալմ՝ ջուրը Տիրոջ համարմ ուզիս... Տանտերը ասալ ա. «Մի քանե օր առաչ երգիրեն թաքավորը իրան նազիր-վազիրնուն նետ վըրսը տեղից եկալն իմ տանս ըռշկին վըտ կացալ... Ծարավն լալ, կնգանս նանե ջուրն օզալ: Կնեգյս սարին ջուր ա տվալ, խմալն: Կնգանս նախշուտեթունը, ջահիլ ինիլը թաքավորեն շատ տոր ա եկալ: Էքսի օրը էրկու վազիր ղորկալ ա, եկալն կնգանս տարալ նի գիձալ թաքավորեն կանանոցը: Իմ հընգ գերմակ խոխենքս թողալ եթիմ, քիշեր-ցիրըկ լեց ինիս, զիլզիլալիս, մամա կնչիլիս: Իդուր հետե յալ ուրթումնմ կերած, որ ոչ մի մարթու ջուր վեչ տամ»:

Շագիրդեն ասածը Քրիստոսը որ լսալ ա, շատ ա տխրալ: Պատառ խիյալ ա արալ, շագիրդնուն ասալ.- Ջուր խմիլը հարկավոր չի: Եկե՛ք գինընք:

Լսած տխուր բենեն հետե Քրիստոսը հանգիստացա չի, տեղեն նետ թուշ գենցալ ա երգիրեն թաքավորեն կոշտը: Թաքավորը որ Քրիստոսեն տըսալ ա, շատ ա ուլխացալ, նստած տեղեն նանե եր ա կացալ, Քրիստոսեն ձեռքը փռնալ, առաչարկալ, որ նստի իրան տեղը:

Քրիստոսը նստա չի, հրաժարվալ ա, մանցալ վըտը լալ գենցած՝ ըսիլավ, խուսիլավ, ծծղիլավ... Թաքավորը տըսալ ա Քրիստոսը շատ ա տխուր, գիդացալ ա, որ մի փիս բենու նանե շատ նղացած ա: Հրցրալ ա.- Տեր իմ, տըսնալիսմ, որ շատ խումարս... նաղլը արի, իս ալ գիդամ, բալքյա քի օքնմ:

Քրիստոսը պադասխանալ ա.- Իս խումարմ մի չտըսնված փիս բենու հետե... Սրանից մի քանի օր առաչ հազար գյուլոխ վըչխար ունեցող մի հարուստ մարթ մի շենու մաչով անցկնալիս տեղը տըսնալիս ա մի քյասիբ մարթու մի սորին վըչխար օնի: Աշկը փըռնիս ա, իրան չոբանուն կարքադիրիս ա՝ էն մի գյուլոխ ոչխարը զոռավ տնիսն խռնիս իրան հազար գյուլոխ վոչխառնուն: Էտ մի ոչխարեն կաթնավը հենգ խոխայն լալ ըպրիլիս: Մհեգ խոխընքյը մանցածն քողցած, քիշեր-ցիրըկ լեց հնիլիս:

Թաքավորը գյուլխու չի ինգիս, որ Քրիստոսը առակավ ա խուսիս: Լսածեն հետե շատ ա կըզնվիս, որ իրան երգիրըմը իտի փիս բեն ա կադարված: Քրիստոսեն ըսիս ա.- Ասի, գիդամ, հուվ ա՞ քու քեփեն կպած, իս ընդուր դըվանը արըմ, բերմ գյուլոխը կտըրմ, հազար վըչխռնեն ալ բուժոնմ քյասիբնուն:

- Թաքավորը ապրած կանա, կասմ: Համա դե դու քու խոսկետ տար չըս կանա, էն մարթեն գյուլոխը կտրիլ չըս տալ:

- Պա, ինձ հետե ամոթ չի՞, որ իս իմ խոսքեն տար վեչ կանամ,- ըսիս ա թաքավորը:

- Լավ, մի հարց տամ քեզ, դուզը ինձ ասի, նոր իմ խոսքը քի կասմ,- ըսիս ա Քրիստոսը:

Թաքավորը առանց հասկանալու Քրիստոսեն հարցեն խոր իմաստուբունը, ըսիս ա.- Քրիստոսն ապրած կենա, հրցրի, դուզը կասմ:

- Դու հարեմմտ քա՞նե կնեգ օնս:

- Կա, դեչանը մի հազար հուգի,- միամիտ ըսիս ա թաքավորը:

Քրիստոսն հրցրիս ա.- Թաքավորն ապրած կենա, մտետ ա՞, որ մի քանե օր առաչ քու վազիրերեն նհետ գենցածս լալ ջեյրանի վըրսի:

- Շատ սորին,- ըսիս ա թաքավորը:

Քրիստոսը խոսքն առաչ տնիլավ ըսիս ա.- Վըրստեղեն նհետ գյուլիս տեղը ծրաված եք լալ, մի շենու կողքավ անցկնալիս տեղը մի տան նանե ջուր եք օգած: Տնատըռնը կնեգը ձեզ ջուր ա տված: Ջուր տվող նախշուտ, ջահիլ կնգանը քու աշկը հավան ա կացած: Էքսի օրը էրկու վազիր ղորկածս, գենցածն, էն կնգանը բերած գիձած քու հազարանուց կնանուց հարեմը: Էն կնգանը հենգ խոխենք օնի: Մհեգ խոխենքը մանցածն առանց մար: Մհեգ էն խոխենքը քիշեր-ցիրըկ մամայն կնչիս, լեց հնիս, գիլգիլգլիս...

Թաքավորը հասկացալ ա Քրիստոսեն ասած առակեն մանին, գյուլոխը կախ գիձած, անխոս լսիս լալ:

Քրիստոսն ալլա խոսքը շարունակիլավ ասալ ա.- Թաքավորն ապրած կենա, ըրկե իս ալ էն շենավը գինիսմ լալ: Իս ալմ լալ ծարավ: Հակառակ, համան տանը նանե ջուրմ օզալ, տվա չըն, ասալն.- «Մի քանե օր առաչ երգիրեն թաքավորն ալ իրան վազիրներեն նիետ տեղավս գինիս լալ, ջուր ա օզալ, ծարավ լալ: Ջուրնք տվալ խմալ ա: Ջուրը խմիլեն հետե շնորհակալութին ըսիլեն տեղը ջուր տվողեն ալ նիետը տարալ ա, որ Տիրոջն ալ ջուր տանք հի՞նչ օգուտ եր օննք»: Ժողովուրթեն սորին խոսք օնի, ըսիս ա. «Մախաթը ինաչի պարկմը պահիլ»: Թաքավորն ապրած կենա, քու արարմունքը ինա չի թաքուն պահի, անց կկանա բերանից-բերան, շենից-շեն, երգիրավը մին կտարածվի: Այտս մարթկանց մաչեն էհդիբարը կկորի. ծարավ մարթկանց Աստուծեն տված մի աման ջուրը տալ չըն:

Քրիստոսեն ասածեն երե թաքավորը մանցալ ա խաջիլ: Պարզ գիդացալ ա, որ հազար վըչխարատարն ալ ա ինքը, քյասիբեն իլած մի գյուլոխ վըչխարը տանուղն ալ:

Էս ամենից ետը թաքավորը եր ա կնալիս, ըսիս.- Իս սխալ բենմ փռնած, շատ մեղավորմ, իմ խոսքեն, մեղքեն տարնմ: Կանչեցե՛ք ջալլադեն, թող գյո գյուլոխս կտրի:

Քրիստոսը թուղիս չի, թաքավորեն ձեռքը փռնիս ա, նստցրիս թաքավորական թախտեն երե, ըսիսլիս.- Մինչա Աստուծն ա, որ իրան արած բենը անսխալ ա: Թաքավորն ալ ա մարթ՝ սխալը կինի: Իս քու սխալը ներմմ: Դու ալ քու հոքմը փոխի:

Ջանը քռնոք կոխած՝ թաքավորը հոքմ ա տալիս, վազիրնուն ըսիս ա.- էս սհաթեն մի քիսա վըսկե եր կալեք, տասը գյուլոխ ծնած վըչխար, էրկու գյուլոխ ծնած կավ, կնգանը նիետ տարեք, դիրեցեք իրաց տանը:

Վազիրնեն սհաթտա թաքավորեն հոքմը կադարմն:

29 (54). ԻՄԱՍՏՈՒՆ ԿՆԵԳՅԸ

Քյոհնա այամեն իլալ ա, իլա չի մի մարթ ա իլած: Էտ մարթեն իլած-չիլածը կնեգն լալ, մի տղան, մին ալ մի ջոխտ եզնը: Վախտ ա եկալ, որ էտ մարթը ուլուզացալ ա: Գինալավ, գինալավ էտ մարթեն առողջութունը լավանալեն տեղը ավելի ծնդրացել ա: Հաց ուտիլուց, ջուր խմիլուց նանե յալ ա ինգյալ: Էտ մարթեն կնեգյը, տղան ամեն օր հրցրիսն լալ, թա.- Սըրտդ հինչ ա՞ ուզիս՝ ուտիլու, խմիլու հետե:

Ալուզը միշտ մի քյալմա ըսիս լալ.- Մըր եզանցը միևը որ մորթեք, թուքեն նանե խրավեք, մի թիքյա կոտըմ... օրըշ ոչ մի բեն:

Ալուզեն տղան նա կնեգյը նստիսն խիյալ ըրիլիս, թա մի թիքյա թուքու հետե հունչո՞ւր մի գյուլոխ եզնը մորթնք... Պա որ էքուց, էլօր վարը, ցանքը սկսվի, մընք հի՞նչ կարնք... ո՛չ փող օննք, մի եզն օննք, ո՛չ ալ կինի մի եզնավ վար արիլ:

Դե շեն տեղ լալ, պադահած տավար ապրանքն լալ մուրթիս, մըսը ծխիս: Տղան գինիս լալ թուքն ունիս, բիրիս խրվիս, տալիս ալուզ հորը:

Հարն ուտիս չի լալ, ըսիս լալ.-Իս գիդալիսմ, էտ մըր եզանը թուքը չի:

Վերչը մի օր ալուզեն կնեգյը տըղեն ըսիս ա.- Տղա ջան, ճար կավ չնի: Քու հարտ ա, օրեշ մարթ չի... բեր եզանցը միևը մորթնք, հորտ սրտեն օզածը կադարնք: Բալի յա ճար ա դռնալիս, ուտիս ա, առողջանմ: Կգյո վարեն-ցանքեն վախտը, էն վախտն ալ Աստուծ մըծ ա, մի բեն կարնք:

Տղան լսիս ա մորը նասիյաթը, բիրիս ա եզանցը միևը մուրթիս, թուքեն նանե մի կուտուր խրիվիս, տալիս հորը: Խրաված թուքը ալուզ հարը ուտիս ա, գյուլոխը վեր ա դիրիս: Դե ալ եզնը մորթածն լալ: Բերալն մռնողուն հետե ժամ-պատարաք արալ, տարալ հանձնալ հողեն:

Շոռ ա տվալ, գյորունքը եկալ ա: Ամեն մի շինացե եզնրը լծալ ա, իրան վարը, ցանքը ըսկսալ: Տղեն վարեն լուծը մնալիս ա տափեն. ո՛չ փող ա ինիս՝ եզնը օնի, ո՛չ ալ փող պարտք տվող ա ինիլիս:

Տղեն մարն ըսիս ա.- Տղա ջան, դու լուծ, ալաթը եր կալ, իս ալ սրմացուն շլակմ, գիննք մըր արտը վարնք, հրվներերեն նանե ետ վեչ ինգնք: Համա ալ մըզ ապրիլ ա պետք:

Տղան զարմացած ըսիս ա.- Ա մար, մի թաք եզնավ արտը հինչո՞ւր կվարնք:

Մարն ըսիս ա.- Գիննք հասննք արտը, Աստուծ մըծ ա, մի բեն կարնք:

Գինիսն արտը, տղան սըրմը շաղ ա տալիս, մարը մի եզնը լծիս ա, լուծեն մի թարափն ալ դիրիս ա իրան օսսեն, եզան տեղ, ըսկսիսն արտը վարիլը: Հակառակու նման արտը հղուցու շատ մոտե ա ինիս: Հուղոքը գեն-ցուղ-եկուղնեն որ տսնալիսն տղան մորը լծած ա, վար ըրիս, մնալիսն զարմացած: Օմեն ալ մեղայն գյուլիս, ըսիս.- Մեղա քեզ, Աստուծ, պա տղան ալ մորը եզան տեղ կլծի, վար կանի՞:

Էս բենը բերանից-բերան անցկընալավ՝ խաբերը գինիս ա, հասնըմ երգիրեն թաքավորեն անջուկեն: Թաքավորը էրկու վազիր դուրկիս ա, թա.- Գենցեք տղեն ալ, մորն ալ բերեք:

Թաքավորը տղեն նաեե հրցրիս ա.- Մորտ հի՞նչ մեղք օնի, որ եզան տեղ լծած՝ արտըս վրիս:

Տղան մինի-մինի նաղլ ա ըրիս իրան գյլխեն էկածը:

Թաքավորն ըսիս ա.- Այ խելունք տղա, առաչավտ գյուլս լալ ինծ նաղլը արիլ, իս մի եզնմ լալ տալ, տանիյս լալ վարտ արիլ: Պա մարթ ալ իրան ծնող մորը տանի եզան տեղ լծի՞:

Թաքավորեն էտ խոսքեն երե տղեն լուզին կապ ա ինգիս, կրիս չի պատասխանի: Տեղտ, տղեն մարը առաչանմ ա, թաքավորեն գյուլոխ տալիս, ըսիս.- Թաքավորեն արևշատեթուն, խնթրիսմ թուլ տաս էտ մի խոսքեն ալ իս պատասխանմ:

- Լավ, ասի, լսըմ,- ըսիս ա թաքավորը:

Տղեն մարն ասալ ա.- Թաքավորեն արևշատութին ինի, ղորթս ըսիս, որ գյուլնք լալ աղաչի, մի եզնը մըզ տալս լալ: Համա դե բենը իտիթունավ վերչանա չի լալ: Երգիրմ քյասիթ մարթինք շատ կանի, որ լսիլն լալ, թա մի քյասիթ մարթու եզնը չի լալ, գենցալ ա թաքավորեն խնթրալ, թաքավորն ալ եզն ա տվալ, այտս տեղեն նիետ երկանուղ քյասիթը գյոլ լալ, մինը ասիլ լալ՝ կավ չօնմ, մի կավ տոր, մի օրեշն ալ կգյո կասի խոխենքս քողցածն, հաց տոր, մի օրեշն ալ կասի՝ էծ տոր, վըչխար տոր: Դե ամեն մինեն օզածն ալ որ տաս, այտս դու ալ կքիսիթանաս, ալ կարի չըս թաքավոր դըռնիլ, երգիրը կառավարիլ, ղոշուն պահիլ: Երգիրեն ամեն մի մարթ պետք ա մտածի, աշխադի մի բենավ թաքավորեն օքնի, օքուտ տա, որ թաքավորն ալ օժժավ ինի՝ ղոշուն պահի, օրեշ թաքավորնուն նիետ քյալլա տա երգիրը, մախլուղը պահի:

Թաքավորը էտ կնգա խոսքեն, խըլքեն երե շատ ա զարմանում: Գնահատմ ա՝ ոչ թա մի հասարակ շինացե կնեգ ա իրան ըռշկին վըտը, վընննա կացած մի շատ գիտ կնեգ, որ նմանը իրան պալատըմը կավ չնի: Թաքավորն ըսիս ա.- Որ դու էտքան շատ խըլքու տար կնեգյս, ասօրվանից կմնաս իմ պալատմը, կդըռնս իմ կնգանս մասլահաթչին: Տղատ ալ կմնա պալատմը, կդեռնի իմ մեհքարը:

Թաքավորեն ասածը կադարմն:

Էն օրվանից անց ա կնալիս մի քանի տարե: Մի օր իմաստուն կնեգյը գինիս ա թաքավորեն ըսիս.- Արևաշատ թաքավորն ապրած կենա, ախր իմ տղաս մծացած ա, փսկիլեն վախտն ա: Հի՞նչ մասլահաթ կարողս արիլ:

Թաքավորն ըսիս ա.- Ղորթս ըսիս, էտ իմ պարտքն ա:

Վազիրներից միներն մի նախշուտ հասած-փիսած աղչիգ ա ինիս: Բիրիսն մեհքար տղեն նհետ նշան դիրիս, փսակմ, օխտը օր, օխտը քիշեր թաքավորական հրսանեքն ըրիս, ուտիս, խմիս, զուռնա-դհոլ ըծիս, աշղնեն ալ խաղն ըսիս, պար գյուլիս: Ինդի մի քըփ-օրախթունն ըրիս, որ սասըռնեն գինիս ա հասնըմ երգինքըմը Աստուծեն: Աստուծն ալ ա ուլխնալիս, եռնաց օխտը անմահական խնծոր ա վեր գիծիս: Խնծորնեն փայփայն ըրիս, ուտիս, օրհնանք տալիս նորափսակներեն:

30 (55). ԽՐԱՏ ՏՎՈՂԵՆ ԼՍՈՂ Ա ՊԵՏՔ

Մի հետ, մի շինացե մարթ, հալա լուսը բեցված վեչ, քշանաց-քիշերավ գինիս ա երգիրեն թաքավորեն գենգյատ ըրիս, ըսիս ա.

- Թաքավորն ապրած կենա, իմ մըծ ախպերս էս քաղաքմն ա ապրմ: Իս ալ շենմմ ըպրիլիս: Ըրկե պարապմ լալ: Նստալմ ծիյանս, եկալ ախպուրս տըսալ: Մինը-մինես հալս, ավհալս հրցրալնք, կերալ, խմալ, ուլխացալ: Օրը մթնալ ա: Եր ըմ կացալ, որ նստըմ ծիյանս, գինըմ տոն, ախպերս թուղեցա չի: Ասալ ա. «Այ ախպեր, մթենն ինգնիս ա, գինըս, կարուղ ա փորձանքի ջիհըս: Եք ինձ լսի, աս քիշեր մնա իմ տանը, քշանաց-քիշերավ սարինքյան կգինս»: Ախպերս շատ ա խրատ տվալ, լսա չըմ: Ասալմ. «Ախպեր ջան, տանը էքուց շատ փարզ բեն օնըմ: Աստված-Աստված, քիշերը հղես կգինմ, քշանաց շուդավ ալ իմ բեներս գյլխեն կինըմ»: Ասալ ըմ, նստալ ծիյանս, հղե ինգյալ: Մըթնըքիշեր լալ, համարյա հըղցին կեսը գենցածմ լալ, մին ալ իրըք հուգի հղես փակալն, ինձ ծիյանս նահե վեր բերալ, մի քանե նհետ գյլխես եկալ, աշկիրս, բերանս, ծըրքը-վըտրս կըպկըպորալ, ծիս եր կալալ, տարալ:

- Մհեգ պահանջտ հինչ ա՞,- ասալ ա թաքավորը:

- Թաքավորն ապրած կենա, իմ պահանջն էն ա, որ մի ճար արըս, գյողրը ճարըս, ծիս իք օնս՝ տաս ինձ, իս առանց ծի կարի չըմ յօլա գինի:

Թաքավորը պատառ խիյալ ա արալ, հրցրալ.- Կրեցալ ը՞ս գյուղերեն մինը ճնաչիլ, յա ծիտ, որ հղոքն տարալ:

- Թաքավորն ապրած կենա, մթեն քիշեր լալ, աշկրս ալ կապած ա... ո՛չ ճնչեցալմ, ո՛չ ալ՝ գիդացալ:

Թաքավորն ալլա պատառ խիյալ-խիյալ ա արալ, գենգյատ արուղ շինացուն ասալ.- Դու կկարը՞ս ասի՝ թաքավոր մարթեն նա շինացե մարթեն տարբերեթունը հինչոմ ա՞:

Շինացեն պատառ խիյալ ա արալ, ասալ.- Թաքավորը երգիրեն տարև ա, շինացեն ալ իրան տան տարև ա: Իս իդիյմ գիդալիս:

- Էտքանեն ետը պետք ա էն ալ գիդաս, որ թաքավորն ալ, շինացեն ալ, համան մարթիքնե: Թաքավորն սովորական մարթեն նանե տարբեր ա իրան նստած թախտավը, մին ալ գյլխեն երե դիրած վըսկե թագավը: Մեզ մի սհաթավ թախտն ալմ քի տալիս, թագս ալ: Մի գենգյատմ ըրլական, հինչուր շինացե մի մարթ, թա կրեցալս պադասխանիլ, թա կրեցալս դուզ պադասխանիլ, իս ալ քու ձի գյուղացողնուն կճարմ:

Ասալ ա թաքավորը, նստած տեղեն նանե եր կացալ, շինացուն նըստըցրալ թախտեն, թագն ալ դիրալ գյլխեն:

- Թաքավորեն Աստուծ երկար գյանք տա, ըրկե իմ հըրվըներեն նհետ միասին մի հանդմ արտնք լալ վըրիս, դիբի ըրկոնաց, հըրվանրս եզինքը լծից դուսն արալ, հղե ինալ դիբի շենը: Իս եշացմ, շարունակալմ արտս վարիլը: Մոտե հըրըվանես ասալ ա. «Ադա, Սավադ, մըթենը ինգիս ա, եզինքն ալ մեխկն, դուս արի, սոհբաթ ըրիլավ գիննք տոն»: Հըրըվանես լսաչմ: Ասալմ. «Իմ արտս խրեգ ա մնալիս, որ վարմ պրծնի: Աժմունք չի, որ թողնմ էքյուցած հետե: Պետք ա ասօր վարմ, պրծնի, որ էքյուց ալ օրեշ արտ գինմ»: Հըրըվանրս գենցալն: Իս ալ արտը վարալմ, վերչացրալ: Մըթենը ինգյած լալ: Լա ուզեցալմ եզինքյը դուս արըմ, գինըմ, մինալ իրըք հուգի գյող եկալն, մի քանե նհետ գյլխես եկալ, աշկրս, բերանս, ձեռքրս, վըտըրս կպոտալ, եզինքս տարալ: Մթեն լալ, գյուղերեն կրեցաչմ ճնանչի: Թաքավորն ապրած կենա, խնթրիլիսմ գյողրը ճարս, եզինքս իք օնս: Քյասիբ մարթմ, փող չօնըմ լծկան ունիլու:

Թաքավոր դըռած շինացեն պատառ խիյալ-խիյալ ա ըրիս, պադասխանիս, որ.- Արտդ թողիլս լալ թերատ, հըրվանետ նհետ քաղցըր սոհբաթ ըրիլավ՝ եզնրտ քշիլս լալ գինիլ տոն, կարո՞ւղ լալ պդահի, որ եզնրտ գյուղանաև:

Թաքավոր դըռած շինացուն ասած նման խելունք խոսքեն երե շինացե դըռած թաքավորը ծծաղըմ ա, ըսիլիս.- Պա որ դու քու մըծ ախպուրտ պարի խրատը լսիլս լալ, քիշերը մնալս լալ դոնաղ, հանգիստ քիշեր տանը քնիլիս լալ, կարո՞ւղ ա պդահիլ լալ քու ձին գյուղանաև... Ուրեմն իմ ասածը անջուկետ կինդ արի, մշտական պահի, որ հիբ մի մարթու խըլք մի բենու հասնմ չի, հընգեր կինի, թա՝ ախպեր, հըրըվան, որ պարի խրատն տալիս, պետք ա լսիլ: Պարի խրատ լսողը փուշմանի չի, վընննը նի չի գյո քարու, ձին եզնրը գյուղանալ չի տա, երգիրեն թաքավորեն ալ գյլխըցավանք չի պատճառի:

Շինացե դըռած թաքավորեն խրատներեն առաչը օրեշ ոչ մի խոսք կրիս չի ասիլ թաքավոր դըռած շինացեն: Սուս-փուս թախտեն նանե եր ա կնալիս, տընիս թագը դիրիս թաքավորեն գյլխեն, նստցրիս թաքավորական թախտեն երե:

Թաքավորը տըսնալիս ա, որ շինացեն խելուևք մարթ ա, սխալված ա, իրան տված խրատնեն ալ լսալ ա, վազիրեն կարքադիրիս ա մի սորին ձի յիհարի, տա շինացուև, նստի, գինի:

Շինացեն շատ ա ուլխնալիս, խոսք ա տալիս, որ հինչ տեղ գինի՝ թաքավորեն պարի խրատեն նաղլը արի, շատերեն սըվըրցնի:

31 (56). ԹԱՔԱՎՈՐԵՆ ԱՆՋՈՒԿԸ

Քյոհնա այամեն իլած ա, իլած չի, մի պառավ կնեգ ա իլած: Պառավ կնգանը մի տղա թոռն ա իլած: Մի օր պառավը թոռանը տնիս ա շենեն մդդուսու կոշտը, ըսիս.- Աստուծ քու բլորենքը պահի, իմ թոռանս բախտեն եշի, տըս որ մըծանա, տղամարթ դըռնի, հի՞նչ բախտու, հացու տար մարթ պետք ա դըռնի:

Մդդուսին աղոթք ա արալ Աստուծեն, խուխեն կոռնը փռնալ, աշկերեն մաչեն եշալ, ասալ.- Խոխան, որ մըծանա, տղամարթ դըռնի, առանց ըսպասելու Աստծուց թաքավորություն կստանա, մըծ հարստութուն կինի, երգիր կկառավարի:

- Թող Աստուծ քու սասը լսի, քու խուխեցն ալ մըծեթուն տա,- ասալ ա պառավը, թոռանը ձեռքը փռնալ, գենցալ:

Տարիներ ա անցկացալ: Պառավեն թոռնը մծացալ ա, դըռալ տղամարթ, նշան դիրիլու, փսկիլու տղա: Խըղըճ պառավեն օժումն իլա չի թոռանը փսակի, տընըվըրի: Հինչուր շատ-շատրը, ինդի ալ պառավը, որոշալ ա թոռանը ղորկի ղարիբեթուն, փող աշխադի, բերի հրսանենք արի:

Պռավեն թոռնը շատ ըչքաբեց լալ: Երգիրից, դիվանից, օրենքներից շատ բեն տեղյակ լալ, համա խոխա վախտուց մի հնգեր լալ՝ շատ միամիտ տղա լալ: Դունյից ոչ մի բենից խաբար չի լալ: Հացը որ ձեռքեն նանե իքս լալ օնի, մի փադու կուտուր դիրիլ ձեռքեն, խոսի չի լալ: Էտ տղեն ալ փսկվիլու վախտն լալ:

Օրերից մի օր, պառավեն թոռնը, դունյից բեխաբար հնգորը նետ փըռնիսն ղարիբքունեն հղեն: Էրկու հնգեր գինիսն, գինիս հատեղս, հատեղը, գինիսն հսնիս Բաղդադ: Բաղդադ մըծ շիհար ա ինիս: Մի օր մի հարուստ մարթու խալիներնն թափ տալիս, մի օր մինեն հետե պատն շրիս,

մի օր միներն բաղնն ջիրիս, իտի օրական մի բեն ճրիլիսն, աշխադմ, մի քանե շահի փող ձեռք բիրիս, օրրը մթնցրիս, ըրակունն ալ գինիս մի քյարվանսարու մի քյուղջմ, մաշկ մաշկու տալիս, քոն ինիս, քիշերը լուսիցինիս:

Մի քշանց շուտավ ալ տըսնալիսն, որ շիհարեն չավուշչենքյը նիյն ինգյած քյուչենեն, հարայ տալավ կընչիս ըն, որ. «Երգիրեն մահացած թաքավորեն տեղը նոր թաքավորն նշանակմ: Շհարեն մախլուղը թող հվաքվն, գինն թիմիշա արն»:

Էրկու ղարիբ հնգերներն ալ էտ օրը գինիս չըն աշխադանքի: Իրաք ալն գինիս թաքավորը որոշելու մեյդանը թիմիշա ըրիս:

Թաքավորական էմարաթեն ըռշկինՙ մըծ մեյդանըմը երկար թախտրն լալ դիրած, խալիներ փռած: Թաքավորեն նազիր-վազիրները, երգիրեն թաջրնեն, աղա մարթիք, թինգյանուց շորր գեցած նստոտածն լալ ծըլպատակՙ թախտերեն երե:

Շիհարեն մախլուղը էնքանն լալ հվաքված, որ մըծ մեյդանմը ասղ վեր գիծիլու տեղ չի լալ: Թաքավորական իրըք մարթ վըննր նհետ, դեչանը գյլխնեն կարմուր շորր գեցած, եկալն մեյդանեն մաչտեղը վըննը կացալ: Միներն ձեռքեն փռնած մի նախշուտ ղզըլղուշ լալ: Չավուշնեն ըսկսալն սաս արիլը, ըսիսն լալ. «Ղզլղուշը բեցն թուղլական... հուր գյլխեն երե վըտ կանա, էն մարթն ալ պետք ա թաքավոր դըռնա»:

Ղզլղուշը բեցն թուղիս, թռիս ա գյովտա փարվազ ա ըրիս, փարվազ ա ըրիս, գյոլիս, պռավեն թոռանը գյլխեն երե վեր գյոլիս: Ղզլղուշը թռցնուղնեն գյոլիսն պռավեն թոռանը տնիս թաքավորական մարթկանց կոշտը հարցուփորց ըրիս, տըսնալիսՙ էտ տղան ղարիբ մարթ ա, օրեշ երգիրից եկած, իրաց շհարըմը փահլեթուն ըրիս:

էտ ալ ասմ, օրենք լալՙ ղզլղուշը իրըք հետ թռցրիլու:

Պռավեն թոռանը տնիս նի գիծիս մի տոն, դուրքը փկիս, գյոլիս ղզլղուշը նորից թռցրիս: էն տանը, ըշտեղ պռավեն թոռանը նստցրածն լալ, դուրքը փակած, կտրեն երե հուրդ լալ: Ղզլղուշը փարվազ ա ըրիս, գինիս հուրդավը նի մտիս, նստիս ալլա պառավեն թոռանը գյլխեն երե վեր գյոլիս:

Ղզլղուշը բեց թուղուցնեն գյոլիսն, պռավեն թոռանը թկիլիս, ըսիս.- Դու մըր երգիրի մարթ չըս, հինչ տեղե նհետ եկածս, թողի, գինի ձեր երգիրը:

Պռավեն թոռնը շհարից հռանըմ ա, գինիս:

Բիրիսն ղզլղուշն իրըքմինջին դոնըմը թռցրիս: Ալլա փարվազ ա ըրիս, շհարից դուս հղոքն գենցուղ պռավեն տղեն գյլխեն նստիս:

Դե, օրենքեն համաձայն ալ կրիս չըն խոսի: Երգիրեն թաքավորութունը տալիսն պռավեն տղուն:

Նոր թաքավորը իրան հնգորն նշանակմ ա իրան հետե վազիր, թափշուր ըրիս.- Ղարիբ տեղը երգիր ղեկավարիլը շատ ծանդր բեն ա: Թաքավորեն հարկավոր ա թեգյունք, հավատարիմ մարթինք: Դու պետք ա դըռնս իմ անջուկը: Ամեն տեղ անջուկ դըրըս, թա հի՞նչն խուսիս, որ իս կարողանամ ճնաչիլ իմ դոստը, դուշմանը:

Հնգեր վազիրը ամեն ըրակու գյոլիս ա, թաքավորեն խաբար բիրիս, որ ըսկի մի բեն լսիս չի:

Անջուկ վազիրը մի օր ալ ուլխանալավ գյոլիս ա թաքավորեն խաբար իրիս, ըսիս.- Աս օր թազա բենմ տըսած... Նիյմ լալ մտած զիրզամբին, տըսալմ կատուն մի մոկն ա փռնած խաղըրիս: Մոկնը իրան սատկածու տեղ լալ դիրած, մի բիրդամ կատվեն թաթերեն նանե բեց ա ինգյալ, փախալ, նի մտալ իրան բունը: Կատուն մոկնը կուրցրիլեն հետե ինդի ա կլվնջալիս, որ սաղ զիրզամբենքը զընգզընգալիսն:

Անջուկ վազիրեն բերած խաբարեն երե ծծղիս ա, ըսիս.- Շատ ապրս, վազիր, մըծ խաբերս բերած... Քի նման մի խաբեր բերուղ վազիրս ալ որ ինի, իս ղարիբ տեղը կկարըմ ապահով, առանց դուշմանի մի հարուր տարե թաքավոր դըռնամ, երգիր կառավարմ:

32 (57). ԱՐԹԱՐ ՀԱՔԻՄԸ

Նաղլն ըրիս, որ մի երգիրու թաքավորը շատ լալ հիլիվերած: Գիդալիս չի լալ երգիրեն ցավը-դարդը քաշի՞, թա՞ ժողովրթեն գենգյատնեն լսի: Ըդուր հետե ալ վազիրնուն ասալ ա.

- Գենցեք երգիրը շոռ եկեք, մի արթար դադ անուղ հաքիմ ճրեցեք, բերեք իմ կողքես նստի, արթար դադ անի:

Վազիրնեն մի հաքիմն բերալ թաքավորեն կոշտն, ասալ.- Թաքավորեն երկար գյանք ինի, երգիրը ճոնդից ճոնդ, շհարից շհիար շոռնք եկած, ամենաարթար դադ անուղը էս հաքիմն ա, որ բերածնք:

Հաքիմն ասալ ա.- Թաքավորն ապրած կենա, ղորթ ա, իս իմ շհիարեն արթար հաքիմնմ, համա թաքավորեն պալատմը արթար հաքիմեթուն արիլը դիժեր ա: Իմ արած հաքիմթունից, որ ոչ թաքավորը նղանա, ոչ ալ գենգյատ արուղը, հարկավոր ա, որ իմ աշկերը հանեք, որ տըսնամ վեչ գենգյատ արուղնեն հինչ մարթինքն՝ բենեն հավասար եշըմ:

Թաքավորը շատ խելունք լալ, պատառ խիյալ ա արալ, ասալ.- Վեչ մի վախտ մընք քու աշկրը հանի չընք: Գենգյատ արուղ, որ ինի, առաչավոր քու աշկրը կկապնք, այտս գենգյատ ըրողուն դու տըսնա չըս: Դադը լսիլեն, արիլեն ետը, գենգյատ ըրողն հղե կդիրնք, կգինի, նոր քու աշկրը կբեննք: Պա մղափուն չի՞ քի նման հաքիմեն աշկրը հաննք:

Հաքիմը տըսալ ա թաքավորը սորին խոսք ա ասալ, համաձայնվալ ա:

Մի օր էրկու մարթն գյոլիս արթար հաքիմեն կոշտը գենգյատ: Ըսիսն.- Մընք ղարիբ մարթինքնք, օրեշ երգիրից եկածնք էս շիհարմը փահլեթուն արած: Գյանքնք մաշած, քրտինք թափած, անքոն քիշերներ անցկցրած՝ փողնք հվաքած, մըր տանը հետե ապրանք կալած: Մհեգ ուզիսնք գիննք մըր երգիրը, մըր քյուլփաթեն կոշտը, մըր տները: Մհեգ թաքավորեն մարթինքը շիհարեն դըրբազան փակածն՝ թուղիս չընն գիննք: Մըր քրտինքավ աշխադած ապրանքը թուղիս չընն տաննք: Ըսիսն. «Թաքավորեն հոքմն ա, ղդղա ա արած, որ ղարիբ մարթինք շհարից ապրանք տաննն օրեշ երգիր»: Մհեգ մըր այննոյնը ձռքնուս նաներ իքն կալած, մըզ ըսիս. «Դերտակ թողե՛ք, գենցե՛ք ծեր երգիրը»: Հաքիմը ապրած կենա, ասի գիդանք թաքավորեն հոքմը հինչքա՞ն արթարացի ա:

Հաքիմը թաքավորեն նաներ հրցրիս ա.- Գենգյատ ըրուղնեն դուզն ըսիս, սոտ խոսք կա՞, թա՞ կավչնի:

Թաքավորը պադասխանմ ա.- Դուզն ըսիս, պա որ օրեշ երգիրից եր կանուղը գյո իմ երգիրիս իլած-չիլածը հվաքի, տանի, իմ երգիրեն մախլուղը հինչո՞ւր պահմ:

Հաքիմն ըսիս ա.- Թաքավորն ապրած կենա, դու հոքմտ դուզ չըս տված: Իդի բենը խիյալ արուղը պետք ա հոքմը տա, որ ղարիբ երգիրից իմ երգիրը գյոլը, աշխադիլը ղդղայմ ըրիս:

Հաքիմը ղարիբնուն նաներ հրցրիս ա.- Դուք քանե՞ տարե ա, որ էս երգիրմը քռնոնք եք վեր ածած, ըշխադած:

- Քսան տարե, անմետ ղուրբան:
- Քանե՞ տըրեկան եք լալ, որ եկալ եք:
- Ալլա քսան տրեկաննք լալ:

Հաքիմը թաքավորեն ըսիս ա.- էս մարթինքը ջահիլ տղայն լալ, որ եկածն քու երգիրն աշխադանքի: Մհեգ, որ թուղիս չըս իրաց քսան տարվա աշխադանքն տաննն, մծացած մարթինքն, իրաց ջահիլեթունը տոր, թող գիննն իրաց երգիրը:

Թաքավորն տսնալիս ա հաքիմը արթար դադ ա արալ: Կարի չի ղարիբնուն ջահելեթունը տա, վազիրնուն հոքմ ա ըրիս, որ ղարիբնուն ապրանքը ետ տան իրաց:

Ղարիբենեն հաքիմեն արթար դադեն հետե շնորհակալութունն հայտնմ, իրաց ապրանքը ետ ստանմ, գինիս օրախ-օրախ իրաց երգիրը:

33 (58). ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՆԵԳԸ

Մի թաքավերե խասյաթ լալ. ըրակոնը դարվիշու շորր լալ գինալիս, քաղաքմն շոռ գյոլիս, թա տըսնի ժողովուրթը հինչո՞րն ըպրիլիս, հի՞նչն խոսիլիս:

Մի ըրակու մի քուչավ գինիս տեղը, տսնալիս ա էրկու մարթ մի պատա տակե նստած, իրաց հետե սոհբաթն ըրիլիս: Թաքավերը անջուկը կապ ա գիծալ, թա տըսնմ հինչն խոսիլիս:

Մինը ասսլ ա.- Գյանքմ շատ բարոթուն, լավեթունմ արած շատ մարթու: Համա դե Աստուծ իմ արարմունքը գյորա ինձ տվա չի՝ փող չօնմ: Գիդամ, որ թաքավերը ինձ պատառ փող կտա, իս կգինմ Երուսաղեմ, Աստուծեն տոնը, բալքա տեղն ինձ ասն, թա իմ մեղքը հինչո՞մ ա, որ իստի քայսիբմ մանցալ:

Էն միհն հնգերը ծծղիս ա, ըսիս.- Այ քու տոնը շեն, հինչ-հինչ՝ գինմ թաքավերեն նանե փող օզմ, թա՝ գինիսմ Երուսաղեմ: Իս մհետ թաքավերեն կնգանը տըսածմ: Նախշոտ է, նախշոտ: Իրինննակեն կասի՝ դու դոս մա գյո, իս դուսմ եկած: Դու ասի՝ մարթ մի քիշեր թաքավերեն կնգանը ծոցմը քոն ինի, որ գիդա աշխարք ա եկած, բեն ա հսկացած: Թա չէ՝ Երուսաղեմ գինիլավ բեն չի դոս գյո:

Էքսի օրը թաքավերը վազիրեն ղորկիս ա, գինիս ա էն էրկու մարթկանց բիրիլիս: Ըսիս ա.- Ըրկոնե հինչ խոսեցած եք, տեղս ալ դոզը ըսեցեք: Թա չէ՝ ջալլադեն կասմ, գլխնետ կկտրի:

Առաչինը իրան խոսքն ըսիս ա:

Թաքավերը մի քսակ վըսկե ա տալիս, ըսիս.- Աստուծեն տոնը գինցոդուն հղեն փակի չըն, բեց կթողն: Դու գինի:

Էն մի մարթն ալ վըխվըխիլավ իրան ասածն ա ըսիլիս:

Թաքավերը հավու էրկու ձու ա բերիլ տալիս, դիրիս էտ մարթեն ըռշկին, ըսիլիս.- էս ձուվանքը վը՞րն ա նախշոտ:

- Ըրկոքան ալ մինն,- ասսլ ա մարթը:

Թաքավերը ծովանցը միևը ներկալ ա տվալ, միևը թողալ, հրցրալ.- Վը՞րև ա նախշոտ:

- Էս նըրկածև նախշոտ ա,- ասալ ա մարթը:

Թաքավերը ներկած նա սիպտակ ծվանքը քիչիվալ ա, ասալ.- Վը՞րև ա նախշուտ:

Մարթը եշալ ա, ասալ.- Համանև, տարբերութոն կա վչևի:

Թաքավերը ծուվանքը մաչմը կես ա արալ, հրցրալ.- էրկու ծուվանցը մաչեև հի՞նչ տարբերութուև կա:

- Ըրկոքև ալ համանև,- ասսլ ա մարթը:

- Ուրեմև էրկու ծվեև տարբերեթոն իլա չի՞:

- Չի:

- Միևը նըրկալնք, միևը՝ թողալ: Միևը նախշոտ ա դըռալ, միևը՝ համանը:

- Հա, ղորթ ա,- ասսլ ա մարթը:

- էրկու ծոն կլպալնք, տարբերեթուև իլալ լա՞լ:

- Չի՛:

- էրկու ծուև մաչնը ծոթնք արալ, տարբերեթուև իլալ լա՞լ:

- Չի՛, համանև լալ:

- Ուրեմը տեղս տարբերեթունը միևջա մի ծվեև կլեպը նրկիլեև երե լա՞լ:

- Հա՛,- ասալ ա մարթը:

- Ուրեմը գիդացալս, որ իմ կնգաևս նա քո կնգա իլած տարբերոթունը էև ա, որ իմ կնեգս իրիսը նրկիս, նխշուտնալիս ա, քո կնեգը նրկիլիս չի իրիսը:

- Դե էս մի բթոլ ներկը տար, թող քու կնեգտ ալ նըրկվի: Օմեև քիշեր դու ալ ինձ նման ներկավ նախշուտ կնգաև ծոցմը քոև ինի: Ալ աշկտ մնա վեչ թաքավերեև կնգանը երե: Այտս գիդաց՝ կնեգը կնեգ ա, տարբերեթունը նըրկեև մաչեև ա:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

1 (59). ՇԱՀ ԱԲԲԱՍԵ ՊՈՁՐ ՕՆԻ

Շահ Աբբասե նստած շհարմը սըվ-շիվան լալ եր կալած: Միևը-միևեն հետեն շհարեն դալլաքնեն կուրիսն լալ: Ըշտե՞ղն լալ գինիս, հի՞նչն լալ դըռնալիս, հո՞ւ լալ տնիս, ոչ մի մարթ ոչ խաբար լալ, ոչ ալ տեղյակ:

Դու մի ասիլ, շահ Աբբասե գյլխեն սըվ տվարու նման պոզր կաննի: էտ բենը ոչ մի մարթ չգիդալու հետե, հինչ դալլաք որ գինիս ա գյլխեն մազրը սրքիլիս, էտ դալլաքեն գյուլոխը կտրիլ ա տալիս:

Վերչը՝ մի օր ալ վազիրնեն մի դալլաք բիրիսն, ըսիս.- Շահը ապրած կենա, շհարմը ալ դալլաք չկա: էս վերչին դալլաքն ա, որ բերածնք:

Շահ Աբբաս ըսիս ա.- Դե որ իտի ա, ըտուր գյուլոխը կտրի մեք, ոչ ալ թուղեցեք էմարաթից դուս գյո: Առանձին մի օթախ տվեցեք, ապրի: Մի մարթ ալ ղարավուլ դիրեցեք, որ թողի վեչ թաքուն տեղ գինի, յա օրեշ մարթու նետ խոսի:

Դե, դալլաքն ալ մարթ ա, հազար թահրը մարթ ա տըսած, հազար թահրը գյուլոխ ա սարքած: Համա մարթ ինսանե գյլխեն եզան նման պոզր ոչ տըսած լալ, ոչ ալ լսած: Դիլլաքեն սըրտը ճաքմ ա՝ հունչո՞ւր թա՝ շահեն գյլխեն պոզր տըսնաս, այտս իտի նոր խաբերը կարս վեչ մի մարթու ասիլ:

Մի վախտ անց ա կնալիս: Մի քշանաց շուդավ դալլաքը եր ա կնալիս, տըսնալիս իրան երե վըտը ղարաղուլչին նայե քաղցր քոն ինած: Թաքուն էմարաթից դուս ա գյոլիս, գինիս գետեն կողը, տըսնալիս ա մարթ-ինսանաթ չկա, որ մի խոսք ասի, սըրտը դինջանա: Մին ալ յիշիս ա տըսնալիս ըռշկին՝ գետեն կողքեն մի խոր վըր կաննի: Երի ա ինգիս վըրեն, ըսիլիս. «Շահ Աբբասն բույնզի վար, շահ Աբբասն բույնզի վար»[11]:

Դալլաքը հորեն իտ խոսքը որ ըսիս ա, սըրտը թիթիվնալիս ա: Ետ ա դըռնալիս, գյոլիս իրան տեղը հանգիստ նստիլիս:

[11] Շահ Աբբասը եղջյուրներ ունի (թուրք. թարգմ. բանահավաքի):

Մի վախտ անց ա կնալիս, հորեն մաչեն նհետ մի ծղլղի ղամիշ ա կնչիս, դուս գյոլիս: Մի չոբան գետեն ղրտնուն վըչխըրնեն արուտ տալիս տեղը ղամիշը կտրիս ա, շվե սրքիլիս:

Չոբանը հինչ հավա ուզիս ա շվավ ածի, դըռնալիս չի: Շվեն ինքը իրան հավան ա փչիս. «Շահ Աբբասն բույնզի վար, շահ Աբբասն բույնզի վար»:

Շիվուն սասը քամեն տնիս, օմեն տեղ տարածմ ա, օմեն մարթ լսիս ա, օմեն քաղաքմ տարածվիս ա, որ «Շահ Աբբասե պոզր օնի, շահ Աբբասե պոզր օնի»:

Ըսիսն, որ դեչանը ասօր ալ շահ Աբբաս իրան վազիրնուն նհետ խյալ ա ըրիս, կրիս չըն ճարի, թա՝ էտ գաղտնիքը հուննչո՞ւր ա բեցվալ:

2 (60). ՇԱՀ ԱԲԲԱՍԵ ԱԼԼԱՀՎԵՐԴԻ ԽԱՆ ՎԱԶԻՐԸ

Ալլահվերդի խան վազիրը շահ Աբբասե աջի կոռնը լալ: Շահ Աբբաս հինչ բեն որ փռնիլ լալ, առաչին հըրթեն Ալլահվերդի խան վազիրեն նանե լալ մասլահաթ արիլ:

Շահեն կնգանը շատ փիսն ա գյոլիս, որ շահը իրան թողած, վազիրեն նհետ ա օմեն մի բեն փռնիլիս, մասլահաթ ըրիլիս: Շահեն կնեգը որոշիս ա, որ ինդի մի բեն արի, որ Ալլահվերդի խան վազիրը խայտառակ կարքավ պալատը, շահը թողնի հռանա, որ շահ Աբբաս իրան ճնանչի, օմեն մի մասլահաթ իրան նհետ արի:

Դե Ալլահվերդի խան վազիրը խըլքը հացու նհետ կերած չի լալ: Շահեն կնգանը սրքիս քյալագեն նանե խաբեր լալ:

Մի օր գինիս ա շահ Աբբասե ըսիլիս.- Շահը ապրած կանա: Պապական խոսքը ըսիս ա. «Ձիրին նանե սորին բեն չկա: Համա դե մի տեղ որ շատ ա մնալիս, վըտ ա տալիս»: Մընք իրար նհետ շատ քաղցր մանցածընք: Եք ինձ վազիրութունից ազադի, քաղցր բիժոնվմ, թողմ, գինմ:

Դե շահ Աբբաս ալ ըշխարքեն տակը, իրսը գիդացուղ թաքավեր լալ: Գիդացալ ա բենը հինչոմն ա: Կնգանը փռնած բենն ա: Ալ խուսեցա չի: Սուս, փուս ազադալ ա Ալլահվերդի խանը վազիրութունից, թողալ ա գենցալ:

Ալլահվերդի խանը գենցալ ա մի շատ հըռե քաղաք, մի մըծ ընմավր հաքիմու հետե բաղվանչի դըռալ: Հաքիմեն բաղը նայ լալ քաղաքեն նանե ղըրաղ, մըծ հղցու երե: Օրական մի քանե տըսակ քյարվան լալ գյոլիս, բաղեն քուշտավը անց կնալիս, Ալլահվերդի խանե նանե ջուր ուզիլիս: Բաղեն մոտե խմիլու ջուր չի լալ:

Մի վախտ անց ա կնալիս, բաղեն տարը՝ հաքիմը, գյուլիս ա բաղը տըսնալիս, մնալիս ա բերանը բաց: Բաղը ինդի ա բիջարած ինիս՝ տեղեն-տեղեն, որ ոչ մի թաքավերու իտի նախշուտ գյուղի բաղ իլած չի:

Ալլահվերդի խանե հաքիմը ըսիս ա.- Իմ մի թալաքյա բաղը որ շինածս գյուղի բաղ, հի՞նչ անամ տամ քի, որ քու սրտավը ինի:

Ալլահվերդի խանը ըսիս ա.- Իմ սրտավ անամը էն կինի, որ ինձ պատառ փող տաս, մոտե տեղը մի սառնը ախպիր կա, ըխպիրին ջուրը գյունգյավ բերմ բաղեն դըրբզին ըռշկին հսցրմ, մին ալ մի սորին էրկու հարկանե շինութին սարքմ, բաղեն երե թիրափավը, որ քու տոնը էկուղ հաքիմնեն, թաջրնեն, թաքավերնեն բերըս տըսնան, մնան արմացած:

Հաքիմը հինչքան փող պետքի լալ, տալիս ա: Ալլահվերդի խանն ալ օզածը տեղեն սրքիս ա:

Հաքիմը ալլա գյուլիս ա տսնալիս, էնքան ա ուլխնալիս, որ թըվ չի ճրիս որ թռի:

Ալլահվերդի խանե ըսիս ա.- Սրտանց մի թինգյանոց անամ օզի, տամ, որ իմ խըղճը հանգիստ ինի քու արած լավութունեն հետե:

Ալլահվերդի խանը ըսիս ա.- Քու սրտավ էս բաղեն նանե մի ծառ իմ ընմավ՝ բախշի ինձ:

Հաքիմը պատառ նղացած ըսիս ա.- Պա էս բաղը տվածմ քի: Ինդի յըմ գիդալիս, որ իս ղոնաղմ գյուլիս քու բաղը: Միեգ քու բաղեն նանե հինչո՞ւր անամ տամ քի:

Ալլահվերդի խանը ըսիս ա.- Բղատըռնը Աստված երկար գյանք տա: Ինձ բաղը պետքը չի: Բաղեն նանե մի ծառ ա պետքի անամ:

Ըխպիրին կողքեն մի չտըսնված թալվար ճղպորի ծառ ա ինիս: Հաքիմը անամ ա տալիս սրտանց Ալլահվերդի խանե, գինիս:

Հաքիմը ըշռնքռն գյուլիս ա, տըսնալիս ճըղըպորին չուրացած ա: Մնալիս ա զարմացած:

Ալլահվերդի խան ըսիս ա.- Իս որ ըսիսմ լալ մի ծառ իմ ընմավը տոր ինձ, ըտուր հետե յըմ լալ ուզիս, որ տըսնամ իմ բախտը զորթո՞ւն ա, թա քոն ա: Միեգ գիդացալմ, որ բախտս հալա քոն ա: Հաքիմը ապրած կենա, մարթեն բախտը որ քոն ա ինիս, ինքն ալ քոն ինի, սորին կանի:

Հաքիմը մաննը կծիս ա, ինքը իրան ըսիս. «Էս խոսքմը մի բեն կա: Դմանանք, տըսնանք վերչը հինչ ա դըռնալիս»:

Տարեն շոռ ա տալիս, գյորունք ա գյուլիս: Հաքիմը գյուլիս ա տըսնալիս չուրացած ճղպորին շոշ ա տված, կնեչած, ուլխանալիս ա, նորից զրմնալիս:

Ալլահվերդի խանը ըսիս ա.- Հաքիմը ապրած կենա: Զարմանալու բեն չկա: Իմ քոն ինած բախտս արդեն զուրքնացած ա: Ըշտեղ որ ա, իմ տարը կգյո, ինձ կճարի:

Հաքիմը ըսիս ա.- Ալլահվերդի խան, քու էտ խոսքմը գաղտնիք կա: Եք ասի, գիդամ:

Ալլահվերդի խան ըսիս ա.- Հաքիմեն երկար գյանք: Շատը գենցած ա, խրեգն ա մնալիս: Ումիդ օնըմ, որ շուդավ օմեն հինչ կգիդաս:

Համաև տըռնան, ըմռանը մի տաք օր, օրը կեսօրեն Ալլահվերդի խան տըսնալիս ա շահ Աբբաս իրան վազիրնոն մին ալ հաքիմեն նետ եկալ ըն, բաղեն ըխպիրին քուշտեն ծիանցը նանե վեր եկալ, իրիսնեն լվացալ, ջուր խմալ: Նի յըն մտալ գյուլլի բաղը շոռ եկալ, ուլխցալ, բիցիրացալ շինոթունը, մի ութախմ նստալ, հաց կերալ, չայ խմալ, իրաց հետե սոհբաթ արալ, խուսեցալ, ծծղեցալ, վերջմ շահ Աբբաս ասալ ա.- էս թաքավերական տեղը սըզհս ա մի ղալյան ալ քաշիլ:

Մռանանք վեչ ասնք, որ Ալլահվերդի խանը շահ Աբբասե քուշտեն վազիր ինիլու վախտը միշտ շահ Աբբասե ղլյանը ինքն լալ սարքիլ: Ալլա բիրիս ա ղլյանը սրքիս, տընիս դիրիս շահ Աբբասե ըռշկին:

Էս ալ ձեզ ասմ. Ալլահվերդի խան շահ Աբբասե ճնչհս ա, շահ Աբբաս Ալլահվերդի խանե ճնչհս չի: Ղլյանը քաշմ ա, համեն հոտեն երե մի բեն հազրի ա գյուլհս, ըսիլհս.- Ինձ շահ Աբբաս կասն: Աշխարք քանդվի, ինձ կարի չըն խափիլ: էս ղլյան սարքողը իմ Ալլահվերդի խան վազիրն ա: Թող գյո մեյդան:

Ալլահվերդի խան գյուլհս ա շահ Աբբասե գյուլոխ տալհս, փաթաթվիսն մին-մինու, լեց հինիս:

Շահ Աբբաս ըսիս ա.- Ալլահվերդի խան վազիր, տըղս մըզ ոչ մի խուսիլու բեն չկա: Մըր բուժինվիլեն պատճառը իմ կնեգյս ա դըռալ: Շահից դեչանը նախրչուն թող Աստուծ հըռե պահի շեյթան կնգանը նանե: Պալատս առանց քի յոլա չի գինիս: Եր կաց, եռնք ծիանը գինք, ալլա իս շահ Աբբաս, դու ալ Ալլահվերդի խան վազիրս:

Շահ Աբբասե ծիավեն դաստան Ալլահվերդի խան վազիրեն նետ որ հղե յա ինգյալ, գենցալ, հաքիմը գյուլոխը քուրիլավ, զարմացած մանցալ ա հետնաց յիշիլավ:

3 (61). ՏՎԸՐԱԾԵՆ ԱՂՉԻԳԸ

Շահ Աբբաս մի հետ վազիրներեն նհետ վըրսի գինիլուց մթավն ինգյալ: Մոտե տեղ մի շեն լալ: Որոշալն գինն քիշերը մնան էն շենմը: Ջիանքը քշալն, հասալ շենը, տըսալն լա շենեն ղրաղեն տանը ծրեգը նայե վառ: Որոշալն ուրեշու նեղութուն վեչ տան: Լա էտ տոնը հարուստու կինի, թա քյասիբու, իրաց բախտեն մնան, քշանաց շուդավ իրաց հղեն շարունակն, գինն:

Գենցալն տըսալ մի թաք հասած նախշուտ աղչիգ ա՝ օջաղը վառած, կողքեն նստած:

Հրցրալն.- էս հո՞ւր տոն ա:

- Շենեն նախրչոն տոնն ա,- ասալ ա աղչիգը:

- Նախրչին հո՞ր ա,- հրցրալն ըղչիգյանը նանե:

- Մըր շենմը քյոհնա ղայդա յա: Նախրչին հուր տավար որ պիհս ա, տըվըրատարը նախրչուն օրը մի հաց ա տալիս: Գենցած ա հացը հվաքի: Ըշտեղ որ ա մհեգ կգյո: Մըր աշկռնոն երե դուք տեղ օնեք: Եկեք նստեցե՛ք:

Շահ Աբբաս վազիրնոն նհետ ծիանցը նանե վերն գյոլիս, նստիլիս:

Նախրչին դեչանը հացը հվաքիլը, գյոլը, աղչիգը ջուր ա բիրիս, ղունուղնոն վըտըռնեն լվնալիս, սուփրա բինալիս, հաց, չայ դիրիլիս, ինդի հուրմաթ ա տալիս, որ շահ Աբբասե նա վազիրներեն բիրինեն բեց ա մնալիս:

Ըղչիգյանը աշկրը պատառ չափ ա ինիս: Համա դե ըղչիգյանը վերաբերմունքը շահ Աբբասե շատ ա դոր գյոլիս: Ըղչիգյանը ըշկերեն չափոթյոնը հետե շահ Աբբասը առակավ նախրչուն ըսիս ա.- Լավ տոն օնս, լավ օջախ օնս: Համա մղափոն, որ բուխարուն ծուռեթուն օնի:

Նախրչին հալա խոսեցած վեչ, աղչիգը պատասխանմ ա.- Կարևորը օջախն ա, շահը ապրած կենա: Բուխարոն ծուռեթունը ծոխեն դուզ դուս գյոլեն խնգարմ չի:

Շահ Աբբաս գինիս ա վըրս: Ետ ա դըռնալիս գինիս տոն, կնչիս ա Ալլահվերդի խան վազիրեն, ըսիլիս.- էն խըլքի, շնորքի տար նախըրչուն աղչիգը իմ պալատեն կսազի: Մի քիսա վըսկե տար, տոր նախրչուն, ըղչիգյանը բեր պալատը:

Ալլահվերդի խան վազիրն ալ մի քիսա վըսկե տնիս ա, տալիս նախրչուն, ախչիգը բիրիս:

Անցա ա կնալիս մի վախտ, շահ Աբբասե կնգանը շեյթանութունը փռնիս ա: Շահեն նհետ կռվիս ա, ըսիս, որ.- Քու մասլահաթչին նսխրչուն

աղչիգն ա: Սոտտ, ղորթտ ընդուր նհետ ա: Քու կնեգյտ իսմ, ինձ բենու տեղ չըս դիրիս:

Շահ Աբբաս տըսնալիս ա կնեգը իրան ուզիս ա խայտառակ անի, կնչիս ա Ալլահվերդի խան վազիրեն, ըսիս.- Նախրչուն աղչիգը տար դիրի հոր տանը, քանե խայտառակ չըմ դըռած:

Ալլահվերդի խան վազիրը նախրչուն ըղչիգյանը տնիս ա, դիրիս հորը տանը, գյուլիս:

Մի վախտ անց ա կնալիս: Մի ըրակու նախըրչուն տոնը մի ղարիբ ղոնաղ ա գյուլիս: Ղունաղեն հինչ պատև տալիսն, հինչքան քաղցր սոհբաթն ըրիս, ղոնաղը մնալիս ա խումար՝ ունքամաչը բինվալիս չի: Վերչը, նախրչուն աղչիգը ըսիս ա.- Այ ղոնաղ, նաղլ արի գիդանք քու ցավը, դարդը հի՞նչ ա, որ էտքան խումարս: Բալքյա մընք մի ծար արնք:

Ղոնաղը ըսիս ա.- Իս քյասիբ մարթմ: Ինձ մի հնգեր օնմ շատ հարուստ ա: Մի քանե օր առաչ միասին գինիսնք լալ քաղաք: Մի տեղ ղոնաղնք հնգյալ: Իմ ձին մայդան լալ էր, հնգերես ձին վըրծ լալ: Քշանոց երնք կացալ տըսալ իմ ձին ծնած ա: Համա դե քոռակը նայե հնգորս վըրծ ձիանը կողքեն վըտը: Հնգերս վըտ ա կացալ, ասալ՝ քոռակը որ իմ ձիանս կողքեն վըտն ա, ուրեմն իրանն ա: Իս ինդի յըմ գիդացալ, որ հանաք ա ըրիս: Տըսալմ չի, իրան խոսքեն երե վըտ ա կացալ, իմ ձիանը քուռռակեն տար կացալ: Գենցալնք հասալ քաղաք: Գենցալնք շահ Աբբասե գենգյատ արալ: Շահ Աբբաս տըսալ ա հնգերս հարուստ ա, իս՝ քյասիբ, ասալ ա՝ «Քուռակը լա որ ձիյան կողքե վըտն լալ, քուռակն ալ էն ձիանը տըռնը կհսանի»: Դե որ մի հաքիմ լալ իտի անարթար դատ անի, իմ դասատս չի լա՞լ գյո: Զարմանալի ա իմ հարուստ հնգերես խղըճմտանքը, թա մըռնիլուց հինչո՞ւր հոքի պիտի տա, որ իմ ձիանը քուռռակեն անտեղի տեղը տար ա կացալ: Դե իլածը սորին մի մըծ բեն չի: Համա հարուստ-քյասիբ մարթկանց հետե տարբերեթուն դիրիլը, հոքին էրիլը, ըսկի որ դիյեր Աստուծ լսի, Աստուծեն ալ տոր չի գյո: Գենցալմ մի հայտնի հաքիմե ալ գենգյատ արալ: Հաքիմն ալ ա ասալ, որ շատ սխալ, ծծղիլու բեն ա արած շահը: Օրեշ մի հաքիմու արած բեն լալ ինի, իս թողի չըմ լալ արթարութունը կորի: Դե որ սխալը երգիրեն շահն ա արած, գինի ումուդտ կապի Աստուծեն: Շահ Աբբասե նման անարթար դադեն հետե մանցածմ իստի վեզս կոտրած:

- Շատ սորին,- ասալ ա նախրչուն աղչիգը,- էքուց շահ Աբբաս գյուլական ա տեղավս գինի վըրս: Իս քի մի փանդ կսըվրցրմ, կարս: Քանե քի մի ձի խոստանա վեչ անամ տա, ասս վեչ թա էտ փանդը հով ա սվըրցրած:

էքսի քշանոց նախրչու աղչիգը ծուկնը փըռնիլու մի թոռ տալիս ա ղունաղեն, ղուրկիս հղցին երե մի չոր պառակ տեղ վըտ ա կնալիս: Տըսնալիս ա, շահ Աբբաս իրան վազիրնոն նհետ հեն ա գյոլիս ա: Ղոնաղը ըսկսալ ա թոռը չոր պռակավը բենիլը, հվաքիլը:

Շահ Աբբաս մուտացալ ա, հրցրալ.- Այ խըլքը հացեն նհետ կերած մարթ, էտ հի՞նչս ըրիլիս, դու բալքյա պըլս:

- Շահը ապրած կենա, ծուկնմ փռնիլիս:

- Ծուկնը ծովըմն ա ինիս: Չոր պռակմը ծո՞ւկն ա ինիս,- ծծղիլավ ասսլ ա շահ Աբբաս:

- Շահը ապրած կանա,- ասսլ ա ղոնաղը,- պա վըրծ ծիանը քոռա՞կ ա ինիս:

Շահ Աբբաս հազիր ա եկալ, որ բենը հինչոմ ա: Ասսլ ա.- Եք շատ խոսենք վեչ: էտ քու խըլքեն խոսքը չի: Մի ծի կտամ, ասի տըսնամ, էտ քի հուվ ա սվըրցրած: Դուզն ասի:

- էս խոսքեն փանդը ինձ սվըրցրած ա շենեն նախրչուն աղչիգը,- ասսլ ա ղոնաղը:

- Մի սորին ծի տվեցեք էս մարթեն,- ասալ ա շահ Աբբաս:

Մի ծի տվալն ղունաղեն: Եր ա ինալ, ունքամաչը բեցալ, օրախ-օրախ գենցալ: Շահ Աբբաս որ վըրստեղե ետ ա դըռալ գենցալ տոն, կանչալ ա Ալլահվերդի խան վազիրեն ասալ.- Շեյթան կնգանը շատ դովրան տալն ալ սորին բեն չի: Նախրչուն ըղչիգյանը կարիքը ալլա իմ պալատը օնի: էն հալա մըզ շատ պետքի կգյո: Ալլա մի քիսա վըսկե տար տոր նախրչուն: Քյասիբ մարթ ա, թող իրան հետե իրաց շենմը ապրի, ըղչիգյանը եր կալ, բեր:

Ալլահվերդի խան վազիրը շահեն հոքմը կադարալ ա: Ալլա մի քիսա վըսկե տարալ ա տվալ նախրչուն, ըղչիգյանը դիրալ ծիյանը երե, փառքավ, պադիվավ բերալ պալատը:

4 (62). ՇԱՀԸ ՀՈՔՄԸ ԵՏ Ա ԵՐ ԿԱԼԱԼ

Նաղլն ըրիս, որ շահ Աբբասե խասյաթ լալ՝ Ալլահվերդի խան վազիրեն նհետ դարվիշու շորրն լալ գինալիս, քիշերները քաղաքեն քյուչենավը շոռ գյոլիս, թա տըսնըն քաղաքմը հի՞նչ ա կադարվիս, ժողովուրթը հի՞նչ ա ըրիս, հունչո՞ւր ա ըպրիլիս:

Մի քիշեր ալ, որ քաղաքեն ժողովուրթը քոն ա ինիս իլած, մի քյուչավ գինիս տեղը տըսալն մի տան նանե ճիրիգյու լուս ա ըրվալիս: Որոշալն

գինն տըսնաւ էտ հի՞նչ մարթու տոն ա, որ կես քիշերեն հալա ծրեգը վառ ա:

Տանը մի կուճի փանջարա լալ: Մուտացալն փանջարեն, եշալ, տըսալ, որ մի ջահիլ տղա, մի ջահիլ ըղչիգյան նետ սեյրն ըրիլիս: Վերչը աղչիգը տղեն մոտ չի թողալ: Տղան հոքնալ ա, քունավ անցալ: էտ վախտ ալ տանը հորդավը մի քողն կախ արալ: Մի տղա քողը փռնած վեր ա եկալ, նի մտալ տոն: Ըղչիգյանը նետ միասին քոն ինած տղեն խըղդալն, ըսպանալ: Տանը երե քյունջմը մի խոր վըրն լալ քանդած: Տղեն տարալն նի գիձալ անտակ վըրեն մաչը, իրաք գյոլիս, օրախ-օրախ սեյր ըրիլիս:

էտ բենը շահ Աբբասե շատ փիսն ա գյոլիս:

էքսի քշանաց Ալլահվերդի խան վազիրը որ գինիս ա պալատը, շահը հոքմ ա տալիս, որ տասը օրում քաղքմը հինչքան իգեղեն կա՝ մըծեն նետ փռնած դեչանը ուրուրունցեն խոխենքը, ումունոնց գյլխնեն կտրըն:

Ըրկոնոն Ալլահվերդի խան վազիրը գինիս ա տոն, քիշերը քոնը տնիս չի: Եր ա կնալիս, ութախավը դես ու դեն շոռ գյոլիս:

Տեղյակ պահմ նաղլս լսողներեն, որ շահ Աբբասե հոր գյլխավր վազիրը՝ Ալլահվերդի խան վազիրեն հարը լալ: էտ վախտը հալա սաղ ա ինիս: Տըսնալիս ա՝ տղան անհանգիստ ա, քոնը տնիս չի: Գիդալիս ա, որ մի ծանդր բեն ա պդահած: Մուտունալիս ա, տղեն նանե հրցիլիս: Ալլահվերդի խան վազիրը շահեն տված հոքմեն նաղլը ըսիս ա հորը:

Հարը ըսիս ա.- Դու շատ մտածիլ մա: Գինի հանգիստ քոն ինի: Իս քշանոց քի նետ կգյոմ, հինչուր որ պետքն ա, շահ Աբբասե պատասխանը կտամ:

էքսի քշանաց մըծ վազիրը իրան տղեն՝ Ալլահվերդի խան վազիրեն նետ գինիս ա շահ Աբբասե կոշտը, ըսիլիս.- Շահը ապրած կենա: Լսածմ, որ կնանունցը նսալը կըտըրիլու հետե հոքմս արած: Թա ինծ թուլ տաս էրկու խոսք օնմ քի ըսիլու, ասմ:

Շահ Աբբաս ասալ ա.- Մըծ վազիրեն երկար գյանք: Ասի, կլսըմ:

- Իմ լավ ջահիլ վախտս լալ,- իստի ա ըսկսալ իրան նաղլը մըծ վազիրը,- մի մթեն քիշեր քոնմ լալ: Լսալմ, որ էմարաթեն դարբազան թկիսն: Երմ կացալ, շորրս գեցալ, թորս կապալ, գենցալ դրբզան բեցալ: Տըսալմ մի թաք ձիավր ա, թորը ծեռքեն: Ինծ ասալ ա՝ «Հա՞զրս հղե գինիլու»: Իս ալ առանց կարճ ու երկար մտածելու, անծանոթ մարթեն ասալմ՝ «Հա, հազրմ»: Ասալ ա՝ «Շուդավ նստի ձիտ, հետես եք»: Իլբիհալ ձիանս յիհարը դիրալմ երե, եռ ինալ, ձիավորեն հետեն գենցալ: Հղեց խիյալմ արալ, որ էս մարթը դուշման ինի, ինծ նի կգիձի առաչը, ինքը հետես կգյո: Ինքը

որ ըռշկին ա գինիս, ինձ ետնանց տնիս, ուրեմը պարի մարթ ա: Սուս-փուս ձին քշալմ, գենցալ: Քիշերվա մի վախտը գենցալնք հասալ մի արքու: Անծանոթ մարթը ձիանը նանե վեր ա եկալ, գյամը տվալ ինձ, ասալ՝ «Դեչանը լուսըբեցեն մոտե տեղս ինձ կեշս: Եկալմ՝ միասին կգիննք, եկա չըմ՝ ալ լուսինալեն եշս վեչ, իմ ձին ալ եր կօնս, կգինս քու տոնը»: Ասալ ա, թորը ձեռքը կալալ, արքեն պատավը բիցիրացալ, նի մտալ նես: Լուսըբեցեն մոտե տըսալմ ղլեն դըրբզան բեցվալ ա: Անծանոթը եկալ ա, մի շելակ թոր շլակեն: Թորրը բեռնալ ա ձիանը, եռ ինալ, ձիանը՝ թուրերեն իրեսսավը, ինձ ալ թա՝ ձիտ քշի գիննք: Դե, հի՞նչ ասմ: Տեղտ, վա՜յ ինձ, իս մի բեն գյլխավմ ինգյալ, որ ձիավորը պետք ա որ կնեգ ինի՝ տղմարթու շուրերավ: Լուսաբացին հասալնք մի հանգիստարան: Համարյա մի թազզա գերեզմանու կողքե ձիանցը նանե վերնք եկալ: Հնգերս գերեզմանի վըրը պատառ ետ ա տվալ մի բեհ, միհ ալ մի քյուլունգ դուս կալալ: Քլունգը տվալ ա ինձ, ասալ՝ «Մի գերեզմանատեղ քանդի»: Իս քանդալմ: Ինքը վըրը բեհավ դուս ա տվալ: Գերեզմանը որ հզրալ նք, հնգերս իրեսած գեցած տղմարթու շորրը հանալ ա: Տըսալմ, որ իս սխալված չըմ: Մի չըտըսնված, նախշուտ թիգյունքավ կնեգ ա: Ինձ ասալ ա՝ «Դե դու նստի դինջաց, իս մի նաղլ արմ՝ լսի»: Մըր քանդած գերեզմանեն կողքեն նստալմ, անջուկ կալալ:

Անծանոթ կնեգը սըկսալ ա նաղլ արիլը՝ «Իս մի շատ անվախ, իգիթ մարթու կնեգմ լալ: Իմ մարթես քառասուն հուգի հնգեր լալ: Էտ մարթինքը թա հի՞նչ բենե յըն լալ, հինչավն լալ ըզբաղվմ, ինձ խաբեր չի լալ: Մինջա էնմ լալ գիդալիս, որ մարթես հնգրնեն դուզ մարթիք չըն լալ: Ամեն կերպ ուզիսն լալ մարթես ըսպանն, ինձ տար կանան: Էտ մասեն իմ մարթեն դուլղմ արալ: Մարթս հավատ չի արալ: Իմ ըսածեն երե ծծղեցալ ա, թա՝ իտի բեն կարուղ չի պդահի: Վերչը մարթես հնգրոտանքը հաջողվալ ա նահախ տեղը իմ իգիթ մարթեն ըսպանալն: Համա ոչ մի կերպ հաջողվալ չի ինձ տրանան: Էս թազզա գերեզմանը որ կա՝ իմ մարթես գերեզմանն ա: Իս ահդմ արալ, որ մարթես դուշմաննուն նանե իմ քինը հանմ, մարթես կողքեն գերեզման մտնմ: Ինձ էս բենմը մի սրտապընդ, հավատարիմ մարթ լալ պետք, որ ինձ թիկունք վըտ կանա: Մարթես թաղումից ետը օմեն քիշեր ձիս նստած գենցածմ մի մարթու դուրք թակած: Դուս էկուղ մարթը միշտ ալ հալավ, փուխանավ ա եկած դուրքը բեցած: Իս ալ հալավ, փուխանով կեսքիշերեն դուրք բենող մարթեն տղամարթ չըմ հաշիվ արած: Կզնվածմ, թորավ թխած, գյուլոխը թռցրած, գենցած: Դու առաչին մարթնս, որ դուրքս բեցալ՝ շորրըտ գեցետ, թորտ կապած: Որոշալմ որ

դու տղամարթ մարթս: Քի նհետ կինա տղմարթու բեն փռնիլ: էն ղալան որ գենցալնք, տեղը մարթես հնգրոնենքընն՝ քառասուն հուգավ ըպրիլիս: Նիյմ մտալ նես, քառասուներն ալ սպանալ: էտ ալ մարթես վկա՝ քառասուն հոգուն թորրնը հվաքած բերած: Մհեգ իս իմ տըղըմրթեթուընը արալմ: Հասալմ մուրազես: Ալ ինծ աշխարքմը մնալը, ապրիլը առանց իմ մարթես, հադատ բեն ա: Քի ինծ նհետ բերածմ, որ դու ալ նշանց տաս քու իգիտութունը, տղամարթկեթունը, կադարս իմ վերչին նիյաթը: էն ա, որ դու ինծ սպանես, էտ թորերեն նհետ մարթես կողքեն թաղս, որ իմ հոքին դինջանա»:

Իգիթ կնգա նաղլը գյուլոխս կախ լսիսմ լալ: Վերչին խոսքերեն երե գյուլոխս բիցիրցրալմ, իրեսեն եշալ, մանցալ զարմացած: էտ կնեգը վերչին խոսքրը ինդի լալ ըսիս, հունչուր մի պառավ նանա իրան թոռանը պընգալ ասի: Տնաշենի կնգա իրեսեն ոչ մի վախի, որ մի ահի նշան իլա չի: Իս շատմ ղանչաք արալ, մասալնե ասալ, խըրատնե տվալ, որ իրան չար մտքից հըռանա: Դըռա չի: Մուրազը կադարալմ: Մհեգ շահը ապրած կենա: Դու ջհհածս կնգա տականքու: Մի փչացած կնգա հետե ինա չի երգիրեն իգեղենը կտրիլ տալ: Քի ալ պարզ ա, որ առանց իգեղեն մարթկութին ալ ինի չի: Քու տըսած կնգանը պետք ա քաղաքեն մեյդանմը սաղ-սաղ կաշին հանս, դերման լցրս, կախ տաս:

Շահը լսիս ա, հոքմը ետ եր ունիս, մըծ վազիրեն ձեռքը պչիս, հղե դիրիս:

Մհեգ դուք սորին գիտացեք, կնեգ կա իգիթ ա, կնեգ կա տականք ա:

5 (63). ՄԱՐԹԵՆ ԻՇՏԱՀԸ

Նաղլն ըրիս, որ շահ Աբբաս վըրս անիլը շատ լալ սիրիս: Մհետ իրան նազիր-վազիրներեն նհետ գինիս ա եղան վըրսու:

էտ օրը հաջողվմ չի վըրս արն: Հակառակու նման օրը թուղբիս ա, թոռը նի ունիս, մթենը ինգիս, շշկռվիսն, հղեն կուրցըրիս, մնալիս ծմակմը: Բախտի բերմամբ մի մըծ ծառն ճրիս, մաչը՝ տոն: Շահ Աբբաս նա Ալլահվերդի խան վազիրը նի յըն մտիս, ծառեն փչակմը մաշկ-մաշկու տալիս, սուս ըրիս: Վազիրնեն ալ մշկռնեն դեմն տալիս ծառեն, մընալիս վըտը:

Պատառ վախտ որ անց ա կնալիս, շահ Աբբաս ըսիս ա.- Ալլահվերդի խան վազիր, իս շատ, անչափ քողցածմ: Դու քու Աստուծ, մի կտոր հաց ճարի, տոր օտըմ, թա չի՝ քուղցու աս քիշեր իս կմըռնմ:

Ալլահվերդի խան վազիրը ձեռք տնիս ա, հաբգյան մի կուտր հաց, մի կուտր պանր դուս ունիս, տալիս շահ Աբբասե: Շահ Աբբաս ուտիս ա, ըսիս.- Վազիր, էս հինչ համավ հաց-պանր լալ: Հավու ճոտավ, սադիրի բրինձավ փլավ լալ ինի, իստի իշտահավ օտի չըմ լալ, որ էս պանր հացնմ կերալ: Դուզը ասի, էսքան համեղ հաց նա պանրը ըշտեղե յըս եր կալած:

- Ըրկե քիշերոն որ էն չուբանեն տանը ղոնաղնք լալ ինգյած, էհդիբաթա հետե չուբանեն կնգանը նանե յըմ լալ իք կալած:

- Պա գիդացա՞լս հացը հինչ ալուրիցն թխած, պանրը հի՞նչ ապրանքու կաթնա նանե յա, որ էսքան ինձ տոր ա եկալ:

- Շահը ապրած կենա, հրցրածմ, գիդալիսմ:

- Դե որ գիննք պալատ, մռանաս վեչ, կսվրցըրըս, որ համան հացեն, համան պանրեն նանե թխըն, սարքն, շափաթը մի էրկու հետ օտըմ:

- Աշկես երե,- ասալ ա վազիրը, սուս արալ:

Ծմակմը քիշերը լուսցրալն, վըրս արալն, արալ չըն, էտ ալ Աստուծ գիդա: Որ ետն դըռալ գենցալ պալատը, շահ Աբբաս Ալլավերդի խան վազիրեն ասալ ա.- էն ծառեն փչակմը կերած հացից, պանիրիցմ ուզիլիս:

Ալլահվերդի խան վազիրը հաբգեն նանե դուս ա կալալ մի կուտր գյորե հաց, մի կուտր էծու կաթնու պանր, դիրալ շահ Աբբասե ըռշկին:

- Էս հի՞նչ ա,- նղացած ասալ ա շահ Աբբաս:

- Համին քու կերած հացեն նա պանրեն կեսն ա, դու քողցածս լալ, իշտահավ կերալս: Ուտիլու հետե մարթեն իշտահ ա պետք: Իշտահավ կերած ամենահասարակ ճաշը, առանց իշտահի կերած ճոտավ, բրինձավ փլավից շատ համեղ ա:

Շահը լսալ ա, սուս արալ: Գյուլոխը քորալ:

6 (64). ԱԼԼԱՀՎԵՐԴԻ ԽԱՆԵ ԿՆԱՆԵՆՔԸ

Միետ շահ Աբբաս, Ալլահվերդի խան վազիրեն նհետ, ձիանցը երե նստած մի հղոք գինիսն լալ, ըշունք օր լալ: Տըսալն մի շինացե խաղ ըսիլիավ վար ա ըրիս:

Շահ Աբբաս ասալ ա.- Վազիր, էս հի՞նչ հաշիվ ա: Տըսա՞ծ կաս, խաղ ըսիլավ վար արն:

Վազիրը ասալ ա.- Շահը ապրած կենա, մարթեն օրախեթունը իրան կնեգն ա: Կա-չկա, էս մարթեն համեստ, բինարար, նամուսավ, օրախ կնեգ օնի, որ ինքն ալ իստի օրախ ա:

- Վազիր, հարկավեր ա փորձիլ,- ասալ ա շահ Աբբաս:

Մուտացալն վար ըրողուն, ասալ.- Աս քիշեր ուզիսնք ձեր շենմը ղոնաղ մնանք: Ծանոթ օնի չընք: Հո՞ւր տոն գիննք, որ հարմար ինի:

- Իմ տանս նանե սորին տեղ կավչնի: Տոնս նայե շենեն կողքեն՝ ըխպիրին քուշտեն: Կնեգս տանն ա: Դուք գենցեք, իս ալ հես ա, խրեգ ա մնալիս, արտը պրծնմ, շուդ կգյոմ,- օրախ-օրախ ասալ ա շինացեն:

Շահն նա վազիրը գենցալն վար ըրողն տոնը: Շահը տըսալ ա, որ վազիրը սխալված չի. շինացոն մի կնեգ օնի, որ ոչ օտըս, ոչ խմըս, վըտ կանաս թիմիշա արս: էտ կնեգը օրախ-օրախ ընթունալ ա ղունողնուն: Չմուշկնեն, գյուլբքնեն հանալ, ջուր բերալ, վըտրնեն լվացալ:

Այտս մարթն ա եկալ: Մարթեն ալ տրխնեն, գյուլբքնեն հանալ ա, վըտրը լվացալ ա: Ասիլավ, խոսիլավ, ծծղիլավ, ինդի հարգանք, պադև ա տվալ, որ շահեն նա վազիրեն բիրինննեն մանցալ ա զարմանքից բեց:

Վազիրը իրան կրեցա չի պահի, շահեն ասալ ա.- Շահն ապրած կենա, տըսալս, իմ ասածը ղորթ դըռալ: էս մարթեն օրախ, շնորքավ, ասուղ, խոսուղ կնեգ օնի, որ ինքն ալ օրախ ա, սըրտը, ճակատը բեց ա:

Այտս վազիրը շինացոն ասալ ա.- Ախպեր, քի մի բեն ասմ, նղանս վեչ:

- Հինչո՞ւ հետե նղանամ, վազիրը ողջ մնա: Ասի, իս քաղցրութունավ կլըսմ քի:

Վազիրն ասալ ա.- Քու էս կնեգը իրան հարգանքավը, դիրիլ-երունիլավը իմ շատ տորս ա բերալ: Ինձ իրք կնեգ օնմ: Իմ իրեքքուն կնանեքս տամ քի, դու քու էս մի կնեգը տոր ինձ:

Շինացեն ասալ ա.- Վազիրը ողջ ինի, քու խաթրը կոտրի չըմ, համաձայնմ:

Վազիրը շինացուն կնեգը տարալ ա: Շինացեն գենցալ ա, վազիրեն իրք կնեգը բերալ:

Հղցին երե մի վարար գետ լալ: Գետեն երե կարմունջ չի լալ: Շինացեն պետք ա կնանունցը մինի-մինի շլկիլ լա գետավը անց կցրի:

Շինացեն առաչին կնգանը շլակալ ա, բերալ գետեն մաչտեղը վըտ կացալ, հրցրալ.- Քու ո՞ր խասյաթը վազիրեն տոր չի լալ գյոլիս:

- Օմենը գիդալիսն, որ մընք հարուստնք: Գյոլիսն լալ մի բեն ուզիլիս, կրիս չըմ լալ տալ: Վազիրը բիլալավ դուրքը փակ լալ պիհս: Մնալիսմ լալ հմնչիս: Ճարս կտրած գյուղնալիսմ լալ, տալիս: Վազիրը գիդալիս լալ, տոր չի լալ գյոլիս իրան,- ասալ ա կնեգը:

- Քո նհետ կինա յոլա գինիլ,- ասալ ա շինացեն, կնգանը գետը անց կցրալ, դիրալ էն ղոլեն:

Ետ դըռալ, եկալ ըրկումինջի կնգանը շլակալ, բերալ ալլա գետեն մաչ-տեղը վըտ կացալ, հրցրալ.- Քու ո՞ր խասյաթը վազիրեն տոր չի լալ գյո-լիս, դուզը ասի գիդամ:

- Իս ասիլ-խոսիլ սիրուղ խասյաթ օնմ: Վազիրեն տոր չի լալ գյոլիս: Դուրքը ինձ երե փկիս լալ, որ ոչ մի մարթ տըսնմ վըչ, ասմ-խոսմ: Իմ ալ ճարս կտրած փանջարավնը լալ դուս գյոլիս, գինիս միներն նհետ պատառ խոսիս սըրտս բինալիս,- պատասխանալ ա կնեգը:

- Լավ, քի նհետ ալ կինա յոլա գինիլ,- ասալ ա շինացեն, կնգանը գետը անց կցրալ:

Ետ դըռալ գենցալ իրքմինջի կընգանը շլակալ բերալ, գետեն մաչտեղը հրցրալ.- Ասի գիդամ, քու ո՞ր խասյաթեն նաեե վազիրը դժգոհ լալ:

- Իս լուզվանեգ կնեգմ: Հու վըր ինձ մի խոսք ասի, իս պետք ա տասը պադասխանմ, որ մի խոսքեն տասը ասմ վեչ, սըրտս կճաքի:

Շինացեն ասալ ա.- Ըշխարքմս օմեն հինչեն ճար կինի, օմեն հինչու հետ մարթը կկարի յոլա գինի, համա Աստուծ հըռե տանի լուզվանեգ կնգանը նաեե: Լուզվանեգ կնգան նհետ ո՛չ Աստուծ, ոչ մի փեյղամբար, ո՛չ մի մարթ կարի չի յոլա գինի, ճար չի ինի: Լուզվանիգ կնգա ճարն էն ա, որ նի գիծս գետը, տանի: Համ իրան հոգին ազատվի, համ ալ՝ մարթեն:

Ըսիս ա շինացեն, լուզվանիգ կնգանը նի գիծիս գետը: էն էրկու կնգա-նը եր ունիս տընիս տոն:

Առաչի կնգանը տարալ ա իրան իլած, չիլածը նշանց տվալ, կշեռքը դի-րալ դրքեն ըռշկին, ասալ.- Դու քու Աստուծը, հուր վեր հինչ կտաս, կշեռ-քավ կտաս, որ համ դու գիդաս հուր հինչքանս տված, համ ալ տանողը գիդա հինչքան ա տարած, որ ետերը խոսք, նղանալ ինի վեչ: Համ ալ գյուղեթոն դըռնի վեչ:

Ըրկումինջի կնգանն ալ դիրալ ա մի էրկու դըրքանե օթախմ, ասալ.- Նեսի դուրքը իմն ա, ետքեն դուրքը թուղիսմ քու խըղճեն: Հուր կօզս բեր, տար, ետքեն դրքավը կարս: Իմ աշկը տըսնի վեչ: Համ ալ փանջարավը նես-դուս վեչ արս, համ ինձ, համ քի խայտառակս:

Մի վախտ անց ա կնալիս: Կուճի կնեգը մըծ կնգանն նաեե հրցրիս ա.- Թազզա մարթետ նհետ հուչո՞ւրս յոլա գինիս: Խասյաթը քի տո՞ր ա գյո-լիս: Սիրիսս, թա՝ չէ:

- Շատ սորին ա: Խե պետք ա չսիրմ: Հինչ որ օնի, դիրած ա իմ ձեռքեն: Հինչ ուզիսմ, ինդի յալ ըրիսմ: Գյուղութունես թարգն ալ տվածմ: Պա դու հուչո՞ւրս յոլա գինիս,- մըծ կնեգը հրցրիս ա կուճի կնգանը նաեե:

- Իս ալ շատ գոհմ: Ամեն ըրակու գյոլիս ա կոշտս, ըսիս, խոսիս, ծծղցրիս: Իս ալ օրիշ մարթա նհետ խուսիլու, տսնալու կարիք օնմ վեչ: Հալա պետք ա ասմ, ութաղեն եթկեն դուրքը դուս օնի, պատ շարի,- ըսիս ա ծծղիլավ կուճի կնեգը:

Ժամանակ ա, տարե յա, շոռ ա տալիս: Ալլա աշունք ա գյոլիս: Շինացեն գինիս ա, խաղ ըսիլավ արտը վրիլիս:

Շահ Աբբաս ալլա Ալլահվերդի խան վեզիրեն նհետ գյոլիս ա արտեն քուշտավը գինիս: Տըսնալիսն, որ ալլա շինացեն ուրխ-օրախ, խաղ ըսիլավ նայե արտը վրիլիս: Վազիրը մնալիս ա զարմացած:

Շահեն ըսիս ա.- Շահը ապրած կենա, էն իրք տարբեր խասյաթու տար կնանենքը հինչ մարթու ծեռքե յալ որ ինն, ընդուց դարդից մարթու բերան բենվի չի, որ խոսի: Հինչքան զարմանալի ա, որ էս մարթը ալլա առաչվա նման քեփը տեղն ա, խաղ ալ ա ըսիս: Պետք ա հրցրըմ, տըսնմ հունչո՞ւր ա յոլա գինիս:

Շինացեն եզինքը վընն ա ըրիս, նստիս մաչեն երե, մինի-մինի նաղլը ըրիս, քա հունչուր ա յոլա գինիս կնանունցը նհետ:

Ալլահվերդի խան վազիրը գյուղոխը քորիս ա, ըսիս.- Իս վազիրմ, համա պարզվմ ա՝ կնգան նհետ յոլա գինիլու մի շինացու խըլք չօնմ: Որ իտի ա, խնքրիսմ, ախպեր ջան, իմ էրկու կնանենքը տանս, դիրս տանս: Քու կնեգը եր օնս, գինս: Իս քի անե շատ բենմ սըվըրալ:

Շինացեն էրկու կնեգը տնիս ա, թուղիս վազիրեն տանը: Իրան կնեգը եր ունիս, օրախ-օրախ, խաղ ըսիլավ բիրիս տոն:

7 (65). ՀՈՌԵ ԾԱՌՐԸ ՇԱԴԱՐՆ ԴԸՌԱԼ

Միետ շահ Աբբաս իրան նազր-վազիրնեն, Ալլահվերդի խան վազիրեն նհետ վըրսի լալ գինիս: էտ դոնում իրաց նհետ տնիսն լալ Ալլահվերդի խանե ջահիլ տղեն:

Գետեն շրըտնեն լիգը հոռե ծառր լալ: Ալլահվերդի խանե տղան դաստին նանե ետ ա ինգյալ, հոռե ծըռերեն վարավուրդ արալ, մանցալ վըտը:

Հարը հրցրալ ա.- Տղաս, խե՞ յըս ետ ինգիս, ծիտ քշի, եք:

Տղան ասալ ա.- Ա հար, էս հոռե ծառրը տըսալմ, քեփս եկալ ա: Ղարաչիները որ էս հոռտանցը տեղը գիդան, հու գիդա, հինչքան մաղու սախնախնե կկարն սարքի:

Շահ Աբբաս լսալ ա, մրոքը փռնալ, եշալ Ալլահվերդի խան վազիրեն իրեսեն: Ալլահվերդի խան վազիրը հասկացալ ա շահը հինչ ա ասալ: Սուս ա արալ, խյալ-խյալ արալ, մանցալ տափեն յիշիլիս:

Վըրսըտեղից որ ետն դըռալ, գենցալ տոն, Ալլահվերդի խան վազիրը կանչալ ա կնգանը, ասալ.- Մի բենմ հրցիլական քի անե: Թա դուզը ասս, կներմ, խոսի չըմ, թա օզս խափիլը, քի սաղ-սաղ կաշիտ վեր արիլ կտամ, մեյդանմը կախ տամ: Ասի, գիդամ, կարո՞ւղ ա դու գյանքմտ ղարաչու նետ ապրած ինըս:

Կնեգը Ալլահվերդի խանե ըռշկին ծոնգ ա չոքյալ, գյուլոխը կախ գիծալ, դուղդուղալավ ասալ.- Միետ դու տանը չըս լալ: Օրը մքնած լալ, փիս քամե լալ եր կացած, թոռ լալ գյուլիս: Էտ փիս վախտը մի ղարաչի եկալ ա դուրքը թակալ, լեց ինալ, որ անմ Աստուծեն իրան ղոնաղ արմ: Մեղքս ա եկալ. ղոնաղմ արալ: Դե, Աստուծեն նանե պահմ, քիյանե թաքուն կարի չըմ պահի: Էտ քիշերը մի բեն դըռալ ա:

Ալլահվերդի խան վազիրը խյալ-խյալ ա արալ, կնգանը ասալ.- Գինի, ազադս:

Պատառ ետը Ալլահվերդի խան վազիրը ինքը իրան ասալ ա.- Մըր պապրը փորցածն, ասած՝ «Ասլի իրիթան, հարամզադա դըր»[12]:

8 (66). ԱՐՈՒՆԸ ՆՇԱՆՑ ԿՏԱ[13]

Նաղլն ըրիս, որ շահ Աբբասե Ալլահվերդի խան վազիրեն մի քյուռ, բեդովլաթ տղա լալ: Հարը հինչքան փարե ա կալալ, չարչարվալ ա, որ տղան ուսում առնի, սվըրի մի մարթ դըռնա, կրեցա չի բիհամ բերի: Վերչը մի օր կանչալ ա տղեն իրան կոշտը, նազիաթ տըվալ, ասալ.- Տղաս, դեսդեն ինգիլավ բեն չի դուս գյո: Իս կմըռնմ, քողցած կմնաս պտըտկերեն: Համ ինձ հետե ամոթ կինի, համ քի հետե: Ուսում որ սվերս չըս, գինի մի փեշակ սվըրի: Փեշակ ունեցողն ալ քողցած մնա չի: Իս ալ տըսնամ, ուլխանամ:

Տղան համաձայնվալ ա: Գենցալ փեշակ սվիրիլու:

---

[12] Նախնիքը կորցնողը հարամ ժառանգ է (թուրք., թարգմ. բանահավաքի):

[13] Շահ Աբասին և Ալլահվերդի խանին վերաբերվող այս հեքիաթային արկածը լիովին համընկնում է մեր կողմից գրի առված 64-րդ՝ Շահ Աբբասին և Ալլավերդի խանին վերաբերվող արկածին: Բովանդակությունը նույնն է: Սակայն սյուժեի մեջ կա արմատական տարբերություն (ծան. բանահավաքի):

Մի օր շահ Աբբաս իրան նազիր-վազիրներեն նհետ գինիս ա քաղաքը շոռ գյո, տըսնա ժողովուրթը հուսիչուր ա ըպրս, հինչն ըսիս, հինչն խոսիս: Մի ղարաչու դռքյանու կուշտավ անց կնալիս տեղը, տըսնալիսն Ալլահվերդի խանե տղան նայե ղարաչորանցը նհետ նստած մաղ ա գյուրծիլիս:

Վազիրնեն տըսնալիսն ծծղուտիսն: Շահ Աբբաս կզնված, մրոքը փռնիս ա յիշիս Ալլահվերդի խան վազիրեն իրեսեն: Վազիրը հմնչութունեն տափը ճղվիս չի, որ նի մտի մաչը: Մնալիս ա խաջիլ վըտը:

Ալլահվերդի խանը գյուլիս ա տոն, կնգանը կնչիս, հրցրիլիս.- Ա կնեգ, դու քու Աստուծը, դուզն ասի, կներմ: Կարո՞ղ ա պադահած ինի, որ դու ղարաչի մարթու նհետ ապրած ինըս:

Կնեգը ըսիս ա.- Աստուծեն նանե պահմ, քիանե հի՞նչ պահմ: Միետ, մի ցորտ, մթեն քիշեր մի ղարաչի եկալ ա ղոնաղ ինգյալ: էտ քիշերը ինծանե անկախ մի բեն պդահալ ա:

Վազիրը ասալ ա.- Ալ հի՞նչ արմ, գինի: Ներալմ:

Պատառ անցալ ա, վազիրն ինքն իրան ասալ ա.- Մըր պապրը օմեն խոսք փորձածն ասած՝ «Մարթեն հու ինիլը արունը նշանց կտա»:

9 (67). ՆԱԽՐՉՈՒՆ ԽԸԼՔԸ

Նաղլն ըրիս, որ շահ Աբբաս իրան վըրսըտեղեն ծմակեն կողքեն մի տոն ա սարքիլ տըվալ, որ մթեն ինգյած տեղը, թուռ ու թողբ իլած օրը էտ տանը յոլա գինն, պետքի եկած վախտը, քիշերն ալ մնան:

Տոնը որ սարքալն պրծալ, շահ Աբբաս եկալ ա նի մտալ թազզա սարքած տոնը, դես-դեն վարավուրդ արալ, մի բեն տըսալ, մանցալ զարմացած: Հարչան խիյալ ա արալ, տըսած բենեն նանե մի բեն գյուլոխ չի ինգյալ: Իստիպված կանչալ ա տոնը սարքուղ ուստենուն, հաքիմ մարթկանց, վազիրներեն, բերալ լցրալ թազզա տոնը ասալ.- Տըսնալիս եք տանը մաչտեղեն կոճեն կպած տավարեն չուրացած թրեքը: Հանցա կասս լա ղուրթավ կոճեն երե փիսած ինի, մարթու ձեռքավ կպցրած չի: Ճրեցեք էտ հինչ բեն ա, հունչո՞ւր ա դըռած: Տանը գիծած կոճեն երե, մարթու ձեռք նի չի եկած տվարեն թրեքը հի՞նչ բեն օնի:

Շահ Աբբասե ասածը ղորթ լալ: Հվաքված օմեն մարթիքն ալ մանցալն զարմացած: Հարչան խիյալն արալ, կրեցա չըն որոշի, թա թըրեքը առանց մի մարթու ձեռք կպնիլու հի՞նչ բեն օնի կոճեն նախշուտ կպած:

Օրը դիբի ըրակու լալ: էտ ծմակեն մոտե ալ մի հայու շեն լալ: Շենեն տըվարածը տավարը բիրիս լալ շենը: Տըսալ ա որ երգիրեն շահը, վազ-

իրնեն, հաքիմնեն հվաքվածն, վըրսկանու հետե շինած տանը վըտ կացած խյալ-խյալն ըրիս, ինքն ալ ա գենցալ, որ տըսնի մանին հինչ ա:

Տվարածը որ մանին գիդացալ ա, ծծղեցալ ա, ասալ.- Ձեր հոր տոնը շեն մնա, տեղս հի՞նչ կա անհասկանալի: Էտ կոճը կտրածն ծմակմը, վեր գիծած, որ չուրանա: Իս ալ տավարը տարածմ լալ էն ծմակը արուտ տալու: Մի դանա թրքած ա կոճեն երե: Արվը տված ա, չուրացած ա, նեստի կացած: Տոն սարքող ուստան ալ ըշկաթող ա արած, չուրացած թրեքը կոճեն նանե բուք չի տված: Տեղս խյալ ըրիլու բեն չկա: Պարզ բեն ա:

Շահ Աբբաս ասալ ա.- Նախրչի ախպեր, էսքան հաքիմ, վազիր մարթինքը մի հայ նախրչու խըլք չօնն:

Մի քիսա վըսկե տվալ ա նախրչուն, ասալ՝ գինի ապրի:

10 (68). ԽՈՒՄԱՐ ՄԱՐԹԸ

Նաղլն ըրիս, որ մհետ շահ Աբբաս, Ալլավերդի խան վազիրեն նհետ երգիրմը շոռ գյոլիս վախտը գենցալն հասալ մի մըծ շեն: Տըսալն շենեն ժողովուրթը հվաքվածն մաջիթեն առաչը, իրաց հետե օրախ-օրախ սոհբաթն ըրիս:

Իրանք պատառ հըռե վըտն կնալիս հավաքված ժողովրթեն թիմիշա ըրիս:

Տըսնալիսն, որ ժողովրթեն մաչեն մի մարթ սորին հաքված ա՝ աղա մարթ ա ըրվալիս: Համա դե շատ խումար ա ո՛չ ըսիս ա, ո՛չ խուսիս ա, ո՛չ ալ ուլխունալիս ա: Հանցա կասս ժողովրթեն մաչեն վեչ ինի, մանակ ինի վըտը:

Շահ Աբբաս վազիրեն ըսիս ա.- Հարկավեր ա մի ըստաքան չայ խմիլու հետե մահնա փռնիլ, գինիլ ընդուր տոնը: Տըսննք նման աղա մարթը խե՞յա ինդի խումար, դարդը հինչո՞մ ա:

Խումար մարթը մըծ հարգանքավ ընթունիս ա երգիրեն շահեն նա վազիրեն, տընհիլիս տոնը մըծ պադև տալիս:

Հացը ուտիլեն, չայը խմիլեն ետը, վազիրը ասալ ա.- Տընատարը ողջ ինի: Էս մի կուտր հացը, մի ըստաքան չայը, օմեն տեղ ալ կարիլնք լալ ճարիլ: Քու տոնը գյոլու մըր նպատակն էն ա, որ գիդանք, դու էտքան հարգանքավ մարթ, ունեցվածքի տար, հի՞նչն ա պատճառը, որ իտի խումարս:

Տնատարը ա՜խ ա քաշալ, ասալ.- Իմ խումար ինիլու պատճառը իմ հարն ա, իմ մարն: Դուք որ նես եք մտալ առաչին օթախը, տըսալ եք չէ, որ

մի տարեց մարթ, միհն ալ մի կնեգ կապվածն լալ սունեն երե: Տղամարթը հարս ա, կնեգը՝ մարս: Հարս միշտ տվարած ա իլած, շենեն տավարը պիհս լալ: Ըրակունը գյուլիս տվըր-տըռնանցը նաեե տոնը մի հաց հվաքմ, բերմ գյուլոխը պիհս: Մարս ալ ղարաչու աղչիգ լալ: Դըրքերը ինգյած փայ լալ հվքիս, ըպրիլիս: Շենեն նախրչին նա ղարաչուն աղչիգը փսակվալն, տընըվերվալ: Իս ալ իրաց նաեե ծնվածնմ: Դե, Աստուծ ա շնորք տվալ, թա բախտս ա բերալ, ինդի յըմ հարուստացալ, որ միեգ էս շենեն տարնմ, իմ սեփականն ա շենը:

Դե, հարս, մարս հասակնեն կալած մարթինքն: Ըսիսմ՝ սըրտրնետ հի՞նչ ուզիս ա, կերե՛ք, խմե՛ք, մըր տանը նստեցեք պադիվավ: Ծնողնես ինձ լսիս չըն: Հարս գինիս ա տոնբատոն ինգիս, հաց հվքիլիս: Մարս ալ գինիս ա քյուչենեն ինգիս, փայ հվքիլիս՝ ինձ շինամաչ խայտառակ ըրիս: Իս ալ՝ տափը ծղվիս չի, նի մըտմ մաչը: Ճարս կտրած, խայտառակ չդըռնալու հետե, փռնածմ, կապած: Այտս մանցած՝ քիշեր-ցիրկ իստի խումար:

Շահ Աբբաս եշալ ա վազիրեն, ասալ.- Խումար մարթեն դարդեն պատասխան տոր:

Ալլահվերդի խան վազիրը պատառ խիյալա արալ, ասալ.- Շահը ապրած կենա, մեղադիրիլու չի: Աշխարքը ստեղծողեն դիրած օրենքն ա, ո՛չ մի մարթ կարի չի փոխի: Խասիյաթ ա, կաթնեն նհետ ջանը նի մտածը, մինջա հոքուն նհետ դուս կգյո: Մեղադիրիլու չի: Տվարածը պետք ա հացը հվաքի: Ղարաչուն աղչիգն ալ դըրքերը ինգյած՝ փայը:

11 (69). ՀՂՑԻՆ ՄԱՉԵՆ ՔԱՐԸ ԿՈՐԱԼ Ա

Նաղլն ըրիս, որ շահ Աբբաս իրան էմարաթեն նաեե ղալիհ հըռե մի չտըսնված բաղ-բաղաթ լալ գիծած: Իրան խասյաթ լալ, օմեն քշանաց, լուսըբեցեն գինիս լալ բաղմը սեյր ըրիլիս, գյուլիս պալատը:

Շահեն պալատեն նհետ սեյրեն բաղը տանուղ հղեն շատ նա ըռհաթ լալ:

Մի օր կանչալ ա վազիրներեն, ասալ, որ.- Պալատես նհետ դեչանը սեյրես բաղը պետք ա ինդի հղե գիցեք, հունչուր մարթու հափռեն մաչը, որ մարթինք ըշկռնեն հոպ ալ գինն, գյոն:

Դուզ հղեն ըսկսալն սարքիլը: Հղցեն կեսմը դեմն ինգյալ մի քարու: Ո՛չ կրեցալն կուտրատիլ, ո՛չ ալ՝ թուլ արիլ: Հղեն ծռըցրիլն ալ հնարավոր չի լալ: Մանցալն մաթալ: Գիդացա չըն, հի՞նչ արն:

Մի հայ գաղթական եկալ ա, հղե սարքուղ վազիրեն ասալ.- Մի քիսա վըսկե տոր, իս էս քարը վերացնմ հղցին նանե: Ինդի հանմ, կուրցրմ, որ տեղն ըրվա վեչ:

- Իմ աջե աշկես երե,- ասալ ա վազիրը:

Օրը որ մթնալ ա, հայը գենցալ ա մի տասը հուգի ջանավ, ղվաթի հայ տղերք հվաքալ, բերալ: Առաչ քարեն ըռշկին թարափը քանդալ ա, մի կաղնե կոճ տակավը անց կցրալ: Իտի քանդալ ա մի կաղնե կոճ, մաչտեղավը անց կցրալ, միևն ալ՝ քարեն եթկեն թիրափավը: Այտս քարեն մծութունեն չափը եր ա կալալ, ըսկսալ քարեն տակը, պատառ ալ մըծ մի վըր քանդալ: Մի էլմավ քարեն տակեն կոճրը դուս ա կալալ: Քարը դրումբացալ ա, նի ինգյալ վըրը, կորալ: Պատառ ալ վըղ զիրավն արալ, կոմբալ քարը անհետ ծածկվալ ա, կորալ:

Էքսի քշանաց հղե սարքուղ վազիրը իրան հարուր հուգի փահլենավը եկալ ա, տըսալ՝ քարը հղցոմը կավչնի: Հայեն կդարած հրաշք բեներն հետե գենցալն շահ Աբբասե խաբեր տվալ:

Շահ Աբբաս ասալ ա.- Պա իս նհախ տեղը՞նմ իմ զորքը կտորիլ տվալ, հայերեն տեղահան արալ բերալ: Իս շատ շուդանմ լալ գիդալիս, որ մի հայը հարուր իմ մախլուղեն խըլքն օնի:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1 (70). ՂՐԴԱՂԵՆ ԳՅՈՒԼԸ[14]

Նաղլն ըրիս, որ մհետ Ղրդաղու մի գյուլ գենցալ ա դուս եկալ Ուզունդուլ[15]: Գյուլը գենցալ ա ջիհալ մի էծու: Ասալ ա.- Ա էծ, քողծածմ, պետք յա քի օտըմ:

Էծը ըսիս ա.- Ա գյուլ, իս որ ուտիլ ուզմ լալ ինի, լա իմ տարը ինձ օտիլ լալ: Բերի չի լալ բեց թողի էս չոլ-յաբան տեղը: Իս պառավմ: Ինձ երե ուտիլու բեն չկա: Բեյթան տեղը անմտ քյատառակ մա՝ թա մի էծմ կերալ: Քողցածս, գինի էսկմե ձորը, տեղը մի սուրու վըչխար կա: Կուշտռնուն ալ չոբան չկա: Գինի մի քյոք վըչխար փռնի, կեր, քուշտաց:

Գյուլը հվտալիս ա էծեն: Էծը թողած գինիս ա վըչխռնան բոլիգը ճարի:

Գյուլը պատառ որ հռնալիս ա, էծը եր ա կնալիս, փխչիս, գինիս տըռնը տոնը: Գյուլը գինիս ա դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, վըչխարու բոլիգ չի տըսնալիս: Մի տեղ, քարու տակե մի թաք վըչխար ա ճրիլիս: Ուլխացած ըսիս ա.- Ա վըչխար, շատմ քողցած, քի պետք ա օտըմ:

Վըչխարը օնքրը երի ա բիրիս, ըսիլիս.- Իս ալուզմ, նայեմ ըստկիլիս: Իմ մըսը ուտիլու հետե պետք չի: Իմ մըսը որ ուտիլու լալ ինի, իմ տարը ինձ բերի չի լալ բեց թողի էս քարուքարափը, թողի գինիլ: Մորթիլ լալ օտիլ: Իմ մըսը հու օտի, ինքն ալ կուլուզանա, կստակի: Թա քի ըստիկիլու մըտք օնըս, կեր, իս հազրմ: Համա, դե մասլահաթմ գիդալիս, որ գինս էն թումբեն երկը, տեղը մի չիման կա կնչկոտ, մըր միալեն աղեն ձին չիմանմը նա է ըրծիլիս: Ջահիլ, քյոք ձի ա: Մի ամես օտըս, պրծնի չի: Գինի էն ձիանը կեր:

Գյուլը հվտալիս ա վըչխարեն, հղե ինգիս գինիս որ աղեն քյոք, ջահիլ ձին ճարի: Գյուլը ալլա պատառ որ հռնալիս ա, վըչխարը եր ա կնալիս, փխչիս տըռնը տոնը:

---

[14] «Ղրդաղեն գյուլը» հեքիաթը ունի նույնությամբ թուրքերեն տարբերակ (ծան. բանահավաքի):

[15] Ղարադաղի հարավում գտնվող գավառ (ծան. բանահավաքի):

Գյուլը գինիս ա դուս գյոլիս վըչխարեն նշանց տված թումբը, յիշիս, տսնալիս, որ վըչխարը ղորթ ա ասած: Չիմանգյահ տեղ ա, մի թաք ձի ալ նայե ըրծիս: Գլուլը ուլխացած վազ ա տալիս, գինիս հսնիս ձիանը, ըսիլիս.- Ա ձի, իս շատ հըռե տեղեն նհետմ գյոլիս: Քողցածմ: Պետք ա քի օտըմ:

Չին ծծղեցալ ա, ասալ.- Ա գյուլ, էտ հո՞ւ չի գիդալիս, որ ըշխարքես օեմն մի հեյվանար, որ ծնված ա, պետք ա մըռնի ալ: Իմ պապ գիրըճանեչ լալ: Իս որ ծնվալմ, իմ վըտանս տակեն համ իմ ծնված օրեն թարխն ա գիրած, համ ալ՝ իմ մըռնիլեն օրվա թարխը: Իս շատմ լսած, որ գյուլրն ալ գիրըճանեչ հեյվանն: Վընս բիցրցրմ, տըս մռնիլես թարղը թմամա՞ծ ա, կեր, իս բեն չըմ ըսիլիս:

Չիանը քաղցր խուսկերեն նանե գյուլը փքվիս ա, ուռռիս, իրան գիրըճնելու տեղ դիրիս, մուտնալիս ծիանը ետքեն վընններեն: Չին ջոխտ վընններավ ինդի մի քացե ա թխիս գյուլեն ըռխեն, որ օմեն մի ժինը օխտը կուտի ա դըռնալիս, նի դռնալիս փորը: Կունծկունծանքըն ալ դեչանը ասօր միալմը լսիսն: Օշն ալ տնիս ա ցավեց, վեր ա ինգիս: Չին փխչիս, գինիս ա տըռնը տոնը:

Պատառ վախտ որ անց ա կնալիս, գյուլեն խըլքը, օշքը գյոլիս ա տեղը, յիշիս ա տըսնալիս մի դավա հեն ա շենը տանող հղցին կողքեն նստած: Եր ա կնալիս կունդի-կոնդի ըրիլավ գինիս հսնիս դավին, ըսիլիս.- Ա դավա, ալ ճար չօնմ, քողցած նայե ըստիկիս: Աստուծեց վերչին ղսամքս դուվս, պետք ա քի օտըմ:

Դավան հանդարտ գյուլեն ըսիս ա.- Իս որ ուտիլուվմ լալ ինի, մհեգ ինձ շատ շուդ կերած: Քի չըմ լալ ղսմաք դըռնիլ: Իս շատ մըծմ: Ինձ երե հալ չկա: Մնալիս ա կաշիս նա վըսկռնես: Տըսնալիսմ, որ դու պարի գյուլս: Համալ նասե ալուզ, յինտտ կուտրատած: Ուզիսմ քի մի լավեթուն արմ: Ասօր մըր շենմը հրասնեք կա: Օրն ալ նայե մքնիլիս: Մհեգ օմեն շինացեք իրաց տնհավան գիննականն հըրսանեք: Եք եռ ինի մաշկես, քի տանմ շենը: Մի հարուստ մարթու դրքե վեր դիրմ: Օմեն ալ հարուստ մարթիքն, հարուրավր գյուլոխ վըչխար օնն: Ինդի քյոք վչխրնե կան, որ օմեն միննեն դմակը մի փութից պակաս չի: Քու ճարը, քի մահից փրկողը վչխարեն դմակը կինի: Եք եռ ինի մաշկես, կոզ կաց, սուս արի: Շեննեն շները ինձ ծանոթն: Ինդի կգիդան դավաչի յըս: Քի տանմ, քու ուզածեն նման հարգմ, պադվմ, հղե դիրմ, գինի, ինձանե յալ թարիփ արի:

- Ասօր ինձ շատն խափած, վընխիսմ դու ալ խափս,- ըսիս ա գյուլը:

Դավան ծծղիս ա, ըսիլիս.- Այ քու տոնը շեն, տեղս հի՞նչ կա խփիլու: Քի մանակ չըմ ղուրկիս, որ կասկածս խփիսմ: Վխիլա ալ բեն չկա, իս քի

նհետ, գյուլը էտքան վախկոտ չի ինի: Կտըսնս խփիսմ, նա կինս մեշկես երե նստած, պկես փըռնի, խըղդի կեր:

Գյուլը հվտալիս ա դավեն խուսկերեն: Եռ ա ինիս մաշկեն, կոչ գյոլիս: Դավան նստած տեղեն նանե լընգ-լընգալավ գինիս շենը: Հսնիլավ շենը, դավան վազ տալավ գալիս ա քյոչենավը գըռմըռալիս, սաս-սուս ըրիս, վազ տալիս, գինիս շենեն մեյդանոմը նստիլիս:

Շենեն շները դիվին սասը լսիլավ, հչիսն, մինը մինեն դույուղ ըրիս, հըվըքվիս գինիս մեյդաննան, տըսնալիս հի՞նչ՝ մի գյուլ նայե դավեն մաշկեն երե կոչ եկած: Դե ալ հի՞նչ՝ ծմռան օր, կերած-խմած շներ, ըսկսիսն գյուլեն՝ դավեն մաշկեն նանե վեր բերիլ, բուրթը գիհիլ: Գյուլը տըսնալիս ա, որ խափված ա, շները իրան ըսպննականն, պրծում չօնի, ճարը կտրած աղվեսու նման իրան սոտ տեղը ըստկածու տեղ ա դիրիլիս: Շները քարշ տալավ, տղղիցավ տընիսն, շենեն կողքեն մի յամաջ տեղ ա ինիս, թուլն ըրիս, նի գիցիս ծորը:

Քիշերը անց ա կնալիս, լուսը բինվալիս ա: Գյուլեն օշքը գյոլիս ա տեղը: Նստիս ա խյալ-խյալ ըրիս, իրան անխելքութունեն երե, թուլ տված սխալնուն հետե ինքը իրան հաշիվ տալիս, ըսիլիս.

Գենցալս տըսալ՝ մի էծ,
Էծեն կեր, թող վըտրը ցեց:
Որ փորտ քողցած արի վեչ վեց-վեց,
Միեգ ալ բեյթան արսվեչ, շիվան նա լեց:
Գենցալս տըսալ մի վըչխար,
Օտիլս լալ, փորետ արիլ ճար,
Հինդաս վըչխարը ինգյած լալ ազար,
Որ նստալս նհետը արալ բազար:
Գենցալս տըսալ մի ձի,
Ձին կեր, թող փորտ պնդի,
Դու միրզա՞յս լալ, դե՞րս լալ,
Որ թարղս լալ կրթիս, քի ու քի:
Գենցալս ջիհալ մի դավի,
Դավան կեր, որ փորտ չցավի,
Դու աղա՞յս լալ, դավաչի՞յս լալ,
Որ եռս ընիս դավին, գինիս շենը՝
Բուրթտ գիզն, ըսպաննն շները:

- Չէ,- ըսիս ա գյուլը,- էս մըծ անխելքութուն ա, որ Ղըրդաղը թողած, եկալմ դուս եկալ Ուզոնդալ, էսքան-էսքան փորձանքի եկալ: Լա իմ տեղը

Ղրդաղն ա, որ կա: Քանե լուսը բեցվալ չի, իմ տեղը գիդալիս չըն, օրեշ փորձանքի հասած չըմ, սորունը էն ա հինչուր եկածմ, ինդի ալ իմ եկած հղոքը ետ դըռնմ, գինմ:

2 (71). ՄԱՐԹՆ ՆԱ ՕՂՋԸ

Նաղլն ըրիս, որ քյոհնա այամեն մի մարթ ծիյանը նստած, նիզակը ձեռքեն, իրան հետե մի հղոք գինիս լալ: Միհն ալ էն ա լսալ՝ մի հեյվան խուխու նման լեց ա հնիս, քյոմագ կնչիլիս:

Էտ մարթը եշալ ա, տըսալ հղցին կողքեն մի մըծ, թիժ կրակն վառած: Կրակեն մաչտեղը մի մըծ քար կա: Մի նոխկա օղնը բիցիրացած ա քարեն երե, որ էրվի վեչ, այտս իրան կրակից ազադվելա հետե քյոմագ ա կնչիս:

Օղնը մարթեն մեքն ա եկալ, նիզակը մըկնալ ա դիբի քարը: Օղնը նիզակեն փաթաթվիլավ, կրակեն մաչեն նանե դուս ա եկալ: Փոխանակ մարթեն շնորհակալութուն հայտնի՝ իրան կրակեն նանե ազադիլու հետե, եկալ ա պնըդ փթաթվալ մարթեն:

- Էտ հի՞նչս ըրիս,- վխեցած ասալ ա մարթը:

- Քի խըղդիս իմ, ըսպանմ,- ասալ ա օղնը:

- Պա քի կրակեն նանե ազադալմ, որ ինձ ըսպանս,- խղդվիլավ ասալ ա մարթը:

Օղնը ծծղեցալ ա, ասալ.- Ըշխարքմս հո՞ւ վա հուր լավաթունից ա շնորհակալ իլած, որ իս ալ քու լավութինից շնուրհակալ ինմ: Միշտ ալ լավությանը դեմը վատութունն ըրիս: Հվտալիս չը՞ս, եք իտի տեղ գիննք գենգյատ: Իմ ասածը դուզ ինի, քի պետք ա խըղդմ, կոլ տամ: Քու ասածը դուզ ինի՝ շնորհակալ կինմ, կթողմ կգինմ:

- Լավ, գիննք,- համաձայնվում ա մարթը:

Գինիսն, գինիս, տըսնալիսն հղցին կողքեն մի ճըղնկուտար խնձորի ծառ կա: Մարթն նա օղնը իրաց պայմանը նաղլն ըրիս խնձորի ծառեն:

Խնձորի ծառն ըսիս ա.- Իս օմեն տարե տիրիվիսմ, ծղկիլիս, բարլամիշ հնիս: Մարթունցը հետե քաղցր խնձորմ հսցրիլիս: Մարթինքը փոխանակ սալղեն քանդն խնձորնեն, ինձանե յալ շնորհակալաթուն հայտն, անջաղ տալիս ալ կուտրտիլիսն, ինձ թուղիս յարալու, գինիլիս: Մարթեն ոչ մի լավեթուն: Ինգյած ա ձեռքտ, խըղդի՛, ըսպանի,- ըսիս ա խնձորին:

Խնձորուն խոսքեն երե, օղնը պատառ ալ սխմիս ա մարթեն: Հղեն գինիսն:

Գինիսն, գինիս, տըսնալիսն հղցին կողքեն մի սառնը, սորին ախպիր կա: Մարթն նա օղնը իրաց պայմանը ըսիսն:

- Ա՜խ,- ըսիս ա,- իս մի սառնը ախպիրմ հղցին երե: Հղոքը գենցուղ, բիզարած, քռնքած, ծարավ մարթեն ջուրմ տալիս, խմիս ա, իրսը լվնալիս, դինջինալիս: Ինձանե շուրիակալ հնիլա տեղը, ջուրս լըլ ա ըրիս, թքիս իրեսես, գինիս: Մարթեն ոչ մի լավեթուն: Ինգյած ա ձեռքտ, խըղդի, ըսպանի,- ըսիս ա ախպիրը:

Օղնը ավելի ա մարթեն սխմիս: Հղեն շարունակիսն գինիս: Մին ալ մի աղվես ա դուս գյուլիս ըռշկնեն:

Մարթը ըսիս ա.- Վըտ կաց, խելոնք աղվես, մըզ պայման օննք: Լսի, տըս մըր էրկուսեն վըրն ա արթար, վըրը՝ մեղավեր: Դու հի՞նչ որ որոշս, մընք կընթուննք:

- Ըսեցեք, լսըմ,- ըսիս ա աղվեսը:

Մարթը գյլխեն եկածը նաղլ ա ըրիս:

- Ուրեմն դու իրան կրակից ազադածս, ինքը քի խղդի՞ս ա,- զարմացած հրցիս ա աղվեսը:

- Հա՛, տըսնալիսս, որ խղդիս ա, ըսիս ա՝ աշխարքմը օմեն տեղ ալ իտի ա: Միշտ լավութունեն դիմացը վատութինն ըրիս:

Աղվեսը պատառ խիյալ ա ըրիս, յիշիս տըսնալիս հղցին կողքեն մի մըծ տափակ քար կա, ըսիս ա.- Ասընք թա էս էն քարն ա, որ չորք թարափը կրակ փռնած իրիս լալ: Օղնն ալ նա լալ քարեն երե նստած: Դե նշանց տոր, տըսնմ, դու հունչուրս օղնեն կրակեն նաներ ազադալ:

Մարթը նիզակը մընկնալ ա, դիրալ քարեն երե:

- Դե վեր եք, գինի քարեն երե նստի,- օղնեն ասալ ա աղվեսը:

Օղնը փթատվալ ա նիզակեն, վեր եկալ, գենցալ քարեն երե ծիլծալվալ:

Շատ գիդ աղվեսը օղնեն ասալ ա.- Դուք՝ օղնրտ, ներ պապական իրընք նոհլաթ օնեք, կարո՞ղս ասիլ:

- Շատ սորուն,- ասալ ա օղնը, ըսկսալ նոհլաթնեն հընրթեն ասիլը,- առաջին նոհլաթը՝ ինձ, որ ըստեղծվածմ: Ընկումինջին նահլաթը՝ ինձ տըսնուղ չսպնողեն, իրիքմինջինն ալ՝ ըսպանուղ չիդողեն:

Աղվեսը մարթեն ըսիս ա.- Ալ հինչո՞ւվս մանցած մաթալ: Օղնեն հի՞նչ լավեթուն: Տըսալս, ըսպանի, թաղի, հղետ գինի:

Մարթը թխիս ա նիզակով օղնեն գյուլոխը էրկու կուտր ըրիս, թղիլիս, ազատ նափաս քշիս, իրան հղեն գինիս:

3 (72). ՄԱՐԹՆ ՆԱ ՕՂՋԸ

(տարբերակ)

Նաղլն ըրիս, որ շատ քյոհնա ըյամեն մի քղաքմ, մի շատ քյասիբ մարթ լալ ըպրիլիս: Էտ մարթը օմն օր գինիս լալ քաղաքեն նաներ վըչ շատ հըռե ծմակմ, մի շելակ չոր փադ բիրիս, ծխիլիս, քաղաքեն հարուստ մարթկանց, մի քանե շահի փող իք ունիս, խոխենքը պիհլիս:

Մի օր ալ գինիս ա ծմակը, տըսնալիս ա ծմակեն մի թարափը կրակ ա ինգած: Ծմակեն կրակ փռնած տեղը, մի մըծ ծառու մի սըվնախկա օղձ ա եռինած, որ էրվի վեչ: Օղձը որ մարթեն տըսնալիս ա, լուզու վա ունիս, խոսիս, մարթեն ղանչանք ըրիս, որ իրան ազադի:

Օղձը մարթեն մեղքն ա գյոլիս: Մի երկար փադ ա կտրիս, կրակեն իրեսավը մկնիս դիբի ծառը: Օղձը եր ա ինիս փադեն, գյոլիս, վերգյոլիս, փթթվիս մարթեն:

- Էդ հի՞նչս ըրիս,- ըսիս ա մարթը,- իս քի կրակից ազադալմ, որ դու ինձ խը՞ղդս:

- Աշխարքեն օրենքը իդի ա,- ըսիս ա օղձը,- միշտ ալ լավութունեն առաչը վատեթունն ըրիս: Հըվատ չըս ըրի՞ս ինձ, եք գինինք մի իրըք տըղ հըրցրնք, տըս դուզմ ասիս, թա՝ չէ:

- Գինինք,- ըսիս ա մարթը:

Գինիսն-գինս, տըսնալիսն՝ մի պառավ եզնը նայե հղցին կողքեն նստած: Օղձը իրաց պայմանը ըսիս ա եզանը:

Եզնը ըսիս ա.- Իս տասը տարե մի մարթու հետե արտմ վարալ, կյալմ թակալ, հաց սարքալ, կերալ ա, ապրալ: Միեգ, որ օժե ինգյածմ, պռաված, ալ տըրեթուն չի ըրիս: Բերած ա ինձ թողած չոլումը, որ գյուլը օտի ինձ: Մարթեն հի՞նչ լավեթուն: Ինգյած ա ձեռքըտ, խըղդի, ըսպանի:

Եզնը որ իստի ա ըսիս, օղձն ալ պատառ ալ պընդ ա փթթվիս մարթեն, գինիսն:

Գինիսն-գինիս, տըսնալիսն մի պռաված ձի նայե գյուլոխը կախ գիծած, հղցին կողքեն վըտ կացած: Օղձը իրան պայմանը ըսիս ա:

Ձին ալ պատասխանը տալիս ա.- Մի վախտ իս ալ ջահիլ, նախշուտ ձիյմ լալ: Մի մարթու հետե տասը տարե հինչ նեղութուն, հինչ չարչարանք ասս, որ քաշացմ: Ըշտեղ որ սըրտը օզիս լալ, սհաթտա հսցրիլմ լալ: Անմս դիրած լալ «Մուրազ»: Դե մհեգ պռավածմ: Ալ աշկավ աշկը չօնի, որ տըս-

նի: Բերած ա էս հանդմը բեց թողած, որ գյուլ օտի: Մարթեն հի՞նչ լավեթուն: Ինգյած ա ձեռքտ, խըղդի:

Օղնը մարթեն ավելի ա հոպ տալիս: Գինիսն առաչ, մին ալ մի աղվես ա դուս գյոլիս ըռշկնեն: Աղվեսը որ տսնալիս ա սըվ նախկա օղնը փթաթված ա խըղճ մարթեն, մնալիս ա զարմացած: Հրցրիս ա.- էս հի՞նչ բեն ա:

Քյասիբ մարթը գյլխեն էկածը նաղլ ա ըրիս:

Աղվեսը ըսիս ա.- Իս էտ նաղլեն նանե բեն չըմ գյուլոխ ինգյալ: Ասնք թա էս հղցին կողքեն մըծ ծառը կրակեն մաչեն ծառն ա: Նշանց տոր գիդամ, կրակեն մաչեն նանե, օղնեն հինչո՞րս ծառեն նանե վեր բերալ:

Մարթը ձեռքեն մհակը մկնիս ա, դիրիս ծառեն ճեղանը երե: Օղնը եր ա ինիս, մհակավը գինիս եռ ինիս ծառեն:

Աղվեսը օղնեն ըսիս ա.- Դու ձեր իրըք նահլաթը գիդա՞ս, կարո՞ւղս ասիլ:

- Շատ սորին,- ըսիս ա օղնը: Առաջին նահլաթը մըզ՝ աշխարք գյոլու հետե: Ըրկումինջինը՝ օղնը տըսնող չսպնողուն: Իրքմինջինն ալ՝ օղնը սպանող չքողողուն:

Աղվեսը յիշիս ա խված, շշմած, տանջված մարթեն, ըսիլիս.- Օղնը՝ ինքը որ իրան հետե իստի պարզ նահլաթ ա դիրած, պա քու խըլքեն հի՞նչ ա էկած, որ լավութինս արած՝ իրան կրակեն նանե ազադածս, ինքտ նի ինգյած կրակը: Թխի ըսպանի, թաղի, քող գինի:

4 (73). ՓԱԼԱՆԳՆ ՆԱ ԿԱՏՈՒՆ

Մի հետ մի փալանգ ծմակեն մաչավ գինիս տեղը տըսնալիս ա մի կատու նայե հղցին մաչեն նստած, կլզնջուլիս: Փալանգը վըտ ա կացալ եշալ կատվեն, եշալ, ինքը իրան ծծղեցալ:

- Խե՞ յըս ծծղիս,- խըղճ-խըղճ հրցրալ ա հղցոմը կոչ եկած կատուն:

- Պա հինչ արմ, որ ծծաղմ վեչ, տըսնալիսմ՝ քու քեթ-մռութեթ նհետ դեչանը հագիտ շատ նմանս ինձ: Իս ամենաղվաթի հեյվաննմ, ծմկնուն, սարերեն տարը, համա դու էտքան կուճի, խըղճ,- ասալ ա փալանգը:

- Դե դու ծնվածս ազադ ծմկնոմը, քի հետե կերած, խմած, շոռ եկած: Ըդուր հետե ալ դու մըծս, ղվաթի: Իս ալ ծնված, ապրածմ մարթու ձեռքեն տակեն, ըդուր հետե ալ մանցածմ քնշված, կուճացած:

- Մարթը հո՞ւ վա, կարո՞ղ ա ինձանե ղվաթի, մըծ արարած ա,- զարմացած ասսլ ա փալանգը,- Տար էտ մարթեն նշանց տոր, քաշմ մաչավը, ճոթ արմ, որ իմ ազգականես իտի խըղճ ա թողած:

- Խե, դեչանը միետ դու մարթ արարած տըսած կավչը՞ս,- հրցրալ ա կատուն:

- Չէ՛,- գյուլոխը թփհրիլավ ասալ ա փալանգը:

- Դե լա նոր մի մարթ նի ա մտալ ծմակը փադ կուտրատի: Ե՛ք, տանմ նշանց տամ:

Կատուն ըռշկեն, փալանգը ետքը գիծած, տարալ ա, որ մարթեն նշանց տա:

- Իմ ազգական, հալա ասի գիդամ, քի հի՞նչ բեն լալ մարթեն կուշտեն, որ իտի խըղճըցրի, կուճցրի,- հղեց հրցրալ ա փալանգը:

- Մարթեն ապրիլիս տանը միշտ շատ մոկն ա արսա գյուլիս, վնաս տալիս: Ինձ պիհս լալ, որ տանը մոկնը վիրցրմ: Հացը հալալ ինի: Միեգ մծացածմ: Ալ կրիս չըմ մոկնը փռնիլ: Բերած ա տեղս ինձ կուրցրած, որ ըստակմ:

Էտ խոսքեն երե տըսալն մի պառավ եզնը նայե հղցին կողքեն նստած:

- Է՞ս ա մարթը,- հրցրալ ա փալանգը:

- Չէ՛, էտ եզն ա: Ըտուր ալ ա մարթը էտ օրը գիցած: Քանե ջահիլ լալ, լծած ա վար արած, կալ թակած, բինիցրած, չրչարած: Միեգ որ մծացած ա, կրիս չի բեն արի, բերած ա թողած տեղս, որ գյուլ օտի,- ասալ ա կատուն:

Պատառ տեղ ալ գենցալն, ջիհալն մի ծիան: Նայ լալ հղցին կողքեն վըտ կացած, գյուլոխը կախ գիցած, հագին բուլդի-բուլդի ըրիս, ճանջրը քշիս:

- Մարթը է՞ս ա,- հրցրալ ա փալանգը:

- Չէ՛, էտ մարթ չի, ծի ա: Էտ խեղճ հիյվանեն ալ մարթն ա էտ օրը գիծած: Քանե ջահիլ լալ, բինիցիրած ա, բեռնած ա, եռա ինած օգած տեղը գենցած: Միեգ որ պռաված ա, բերած ա, թողած տեղս, որ գյուլ օտի:

Պատառ տեղ ալ գենցալն, տըսալ մարթը մի մըծ ծառ ա կտրած, ուզիս ա ճղի, կես արի:

- Իմ ազգականեն խե՞ յըս ճնշած կուճցրած,- կզնված մարթեն ասալ ա փալանգը:

- Աստուծ քի շատ օժ տա, փալանգ: Եք թաթրտ դիրի էս ծառեն ճեղքվածմը, կացնավ թխմ ըրկու կուտր արմ, այտս քի պատասխան տամ,- ասալ ա մարթը:

Փալանգը մուտացալ ա, թաթրը դիրալ ծառեն ճեղքմը: Մարթը կացենը ճեղքեն նանե դուս ա կալալ: Փալանգեն թաթրը ճեղքվածքը հոպ ա տըվալ: Ցավից փալանգը ըսկսալ ա մռնչալը:

Մարթը մի մհակ եր ա կալալ, փալանգեն թակալ:

- էտ հի՞նչս ըրիս,- կոչ էկած հրցրալ ա փալանգը:

- Կատուվմ սրքիս,- ասալ ա մարթը:

- Պա քե խղճմտանք չօ՞նս,- ասալ ա փալանգը:

- Ինձ որ խղճմտանք ինի վեչ, կացնավ կթխըմ, քյալատ շաղ տամ, խըղճալիսմ, կատուվմ սրքիս:

Կատուն ծծղիլավ ասալ ա.- Ազգականս տըսալ ա մարթեն:

5 (74). ՇԻՆԱՑՈՒՆ ՆԱ ԱՐՋԵՆ ՇԱՐԻՔԵԹՈՒՆԸ

Շատ քյոհնա դովրին, որ շինացեն կըրիս չի լալ լուծ-ալաթ սարքիլ, եզնը լծի, վար անի, ցանքը ըրիս լալ թոխուրավ:

Նաղլ ըն ըրիս, որ մհետ, մի շինացե մարթ թոխուրավն ա լալ իրան բիհիրը թուխրիլիս:

Մի արջ՝ շենեն կողքեն հըղոքը գինիս տեղը, տըսնալիս ա, որ շինացեն մանակ նայի փարե կընալիս:

Արջը մոտե յա գյուլիս, ըսիս.- Պարի օր, այ ախպեր, Աստուծ քի ղըվաթ տա, էտ մանակ հինչ ը՞ս փարե կընալիս:

- Աստծու պարին, պարով ըս եկալ, արջ ախպեր, բիհիրըսմ, թուխըրհըրիսմ,- ըսիս ա շինացեն:

- Տըսնալիս ըմ, ծանդըր բենե յըս: Ինձ շարիք կարըս գյոմ քի քյոմագ արըմ, միասին վարընք:

- Իմ աշկես երե,- ըսիս ա շինացեն:

- Պա պայմանը,- ըսիս ա արջը:

- Պետք յա բեխկը վարըմ: Հինչ որ վըղեն տակեն բհամ գյո՝ ինձ: Հինչ որ վըղեն իրեսեն բհամ գյո՝ քի,- ըսիս ա շինացեն:

Արջը ուլխացալ ա, համաձայնվալ, թոխուրը եր կալալ, ըսկսալ շինացուն նհետ թոխրիլը:

Բեխկը կընեչալ ա: Ամեն մի գյուլոխը դըռալ ա մի եզան գյուլուխու միչըք: Թըրըրըն ալ բիցիրացալ ա՝ մի գեղ քիմի գյոզդա վըտ կացալ: Շինացեն խուտհարեն եր ա կալալ, բեխկեն թըրըրը հարալ, խոռհնը կապալ, տըվալ արչեն շելակը: Ինքն ալ բեխկեն գյըլխնեն նի ա տըվալ չըվալը, շըլակալ, տարալ տոն:

Արջը տըսալ ա, որ շինացեն իրան խափած ա: Բեխկեն թըրըրը ոչ մի բենու պետքը չի: Պատառ ինքը իրան փընթփընթացալ ա, կըրեցա չի խոսի: Առաչավոր կապած պայմանը պայման լալ: Ինքը իրան սըրտ ա տը-

վալ, ասալ. «Շատ սորին, թա մըհետ ալ շարիքբեն կինի, կըգիդամ հինչ կարըմ: Այտըս իս շինացուն կը խափըմ»:

Աշքունք օր ա ինիս: Ալլա արջը, շենեն կողքավը անց կընալիս տեղը, տըսնալիս ա շինացեն նայե բիհիրը թուխրիս: Մուտացալ ա, ասալ.- Շինացե ախպեր, կթողըս ալլա շարիք մի բեն վարընք:

- Խի՞ չըմ թողի, իմ աշկես երե: Եք, քյոմագ արի: Հինչ որ կընենչի, ալլա ախպուր նըման կես արընք:

- Համա էս դոնում հինչ որ կընենչի վըղեն տակեն՝ ինձ: Հինչ ալ որ կընենչի վըղեն իրեսեն՝ էն ալ քի հալալ ինի,- ասալ ա արջը:

- Համաձայն ըմ: Թող քու ասածը ինի, մինչա մինըս-մինեն նաեե նըղանանք վեչ,- ուլխացած ասալ ա շինացեն, բերալ ա բիհիրըմը ցորեն վարալ:

Տարեն շոռ ա տըվալ, եկալ, ցորենը կընեչալ ա, բիցրացալ, հասկըկալալ, դըղնալ, ցոռնավ լիգյը հասկըրը կախ տըվալ:

Շինացեն չինը եր ա կալալ բիհիրը հընձալ, խոռհնը կապալ, շընլակալ տարալ, այտըս արչեն ասալ.- Քու կապած պայմանը գյորա, տակեն հինչ մանցած ա, քի հալալ ինի: Հավաքի տար, ինձաեե նըղանաես վեչ:

Արջը տըսալ ա տակեն տընհիլու բեն չկա՝ քյուլաշընը ա, մին ալ՝ չոր տըկըռենեն: Արչը տըսալ ա, որ ալլա շինացեն իրան խափած ա: Դե, իլած պայմանը գյորա, կըրեցա չի շինացուն մի բեն ասի: Խըռավալ ա, թըքալ շինացուն նհետ կապած շարիք բենեն երե, թողալ գենցալ՝ մըրթմըրթալավ ծըմակը մտալ:

Էտ օրեն նհետ դեչանը ասօր արջը շինացուն նհետ շարիք փըռնած բենը, խափվիլը, մոռացած չի: Մհեգ ալ ըշտեղ շինացու վա ջհիհիս, թըքիս ա, հըռընալիս:

6 (75). ՇԱՆԸ ՆԱ ՈՒՍՏԱ ԿԱՏԸՎԵՆ ՆԱՊԸԼԸ

Դե, նաղլ ա, ըրիս ըն: Հո՞ւվ ա գիդալիս, թա դորթ ա, յա սոտ ա: Էտալ Աստուծ գիդա:

Նաղլ ըն ըրիս, որ քյոհնա այամեն, մի հետ մի կատու ուստա յա դըռնալիս, գյոռան մորթու նաեե փափաղ ա կըրիս:

Մի տարե պընդ ձմեռն ա ինիս: Շատ ձյուն ա գյոլիս: Օրըրը քամուտ ըն ինիս, համ ալ՝ ցորտ: Մի քյոփագ քավքառ շոն ա ինիս, գյլխեն մազըրը վեր տըված՝ քաչալ: Էտ ծանը գյուլոխը, որ շատ ա մըրսիս, եր ա կընալիս, գինիս շինամաչ, դես-դեն շոռ գյոլիս, մի տըղ մի գյոռան մորթե

յա ճըրիս: Ուլխունահիս ա, մորթեն եր ա ունիս, գինիս ուստա կատվեն դուքյանը, ըսիս.

- Պարի օր, ուստա կատու, ղորմա ծընողանցըտ, ցորտ ա, գյուլոխըս մըրսիս ա: Աստուծեն հետեն, մի փափաղ կարի, դըրիմ գյլխես:

- Աստուծու պարին, իմ պարի հըրևան, մի փափաղ կարիլը հի՞նչ ա որ, շատ սորին կարըմ:

- Պա հի՞բ կկարըս, հազըր կինի,- հըրցըրիս ա շոնը:

- Աս օր ուրկուշափտի ա: Շափաթ օրը կգյոս, կըտանըս,- չուբուղը թուքթուն լըցըրիլավ՝ ըսիս ա կատուն:

Շափաթ օրը՝ քըշանաց շուտավ, շոնը եր ա կընալիս, հոստ-հոստ ըրիլավ գինիս ուստա կատվեն դուքյանը, տըսնալիս ա, կատուն նըստած, չայ ա խըմիս, չուբուղ ա քըշիս: Հըրցրիս ա.- Ուստա, փափաղըս կարած ը՞ս, հազը՞ր ա:

- Չէ, հըրևան: Մորթեն շատ չոր լալ: Ջուր ըմ շաղ տըված, պատառ փըփուկի,- չուբուղեն ծոխը երկարացըրիլավ՝ ըսիս ա կատուն,- եկուղ շափաթ օրը հազըր կինի: Կգյոս կըտանըս:

Էն մին շափաթ օրը շոնը ալլա գինիս ա կատըվեն դուքանը՝ փափաղը ուզիս:

- Մորթեն շատ լալ թիրչըված, հըրևան: Կախըմ տըված պատառ չուրանա: Նըղանա մա, գինի, եկուղ շափաթ կարած, հազըր կինի:

Դե, ոչ տարուն շափաթ օրըրընն պըրծընիս, ոչ ալ ուստա կատվեն՝ սոտ խոսիլ-խափիլը:

Մի օր ալ շոնը գենցալ ա տըսալ մի քանե կատու հըվաքված ըն ուստա կատվեն դուքյանը, նըստոտած չուբուղ ըն քշիս, սոհբաթ ըրիս: Հավան ալ տըքացած լալ, գյորունքը բինվալիս լալ:

Ուստա կատուն տըսնալիս ա, որ շոնը եկալ ա, լեղ ա ըրիս, ըսիս.- Հըրևան, կըներես, եկուղ շափաթ օրը հաստատ փափաղըտ պատրաստ կինի: Կըգյոս, կըտանըս:

Շոնը ալ համփերըմ չի: Կզնվիս ա, ըսիս.- Գյող կատվեն նանե փափաղ կարուղ ուստա չի ինի: Բեր մորթես տոր, տանըմ, քու կարած փափաղը քու գյլխեն տըված:

Շոնը որ էսքանը ըսիս ա, կատվեն տուր չի գյուլիս, հընգըրոնացը քուշտեն խայտառակ ա դըռնալիս: Ալ կատուն ալ համփերըմ չի, ինքն ալ շանն ա անպատվիս, ըսիս.- Պա, քաչալ շոնը հո՞ւ, փափաղը՝ հո՞ւ: Դե, որ իտի ա, եկուղ շաբաթ օրը կգյոս գյոռանը մորթեն կըտանըս:

Կատվեն տըված անպադև պատասխանեն երե, շոնը ավելի շատ ա կըզնըվիս, ուզիս ա կատվեն փըռնի, ըսպանի: Կատուն փըխչիս ա, դուս գյուլիս դյուքանեն կըտորը: Շոնն ալ ա բիցիրնալիս դուքյանեն կըտորը: Կատուն կըտըրեն նետ լոք ա տալիս դըվեր, փըխչիս, կուրչիլիս:

Մի փափաղ կըրիլու հետե էրկու հըրևան՝ շոն նա կատուն, որ շատ տարենե հաշտ, համերաշխ իրար նըհետ ապրածն լալ, դըռնալիս ըն թըշնամի: Դեչանը ասօր ալ շոնը էտ մորթեն մըռընալիս չի: Ըշտեղ կատվեն ջիհիս ա, վազ ա տալիս մորթեն ուզիս: Կատուն ալ վախեցած փըխչիս ա, ըսիս.- Շափաթ օրը կըգյոս, կըտանըս:

7 (76). ԱՂՎԵՍԵՆ ՆԱ ՕՂՉԵՆ ՀՆԳՐԵԹՈՒՆԸ

Կասի՝ մի հետ մի աղվես նա մի օղնը հնգերն դռնալիս, պայման կապ'մ, որ միշտ իրար նետ դուզ բեն բռնն, դուզ հղե գինն, ծուռեթուն արն վեչ:

Դե պայմանեն խաթր աղվեսը միշտ հղեն դուզ լալ գինիս: Համա դե յիշիս ա տսնալիս, որ օղնը հղեն միշտ կռմկըռ ա գինիս, իսկի մհետ դուզցիս չի:

Վերչը, մի օր աղվեսն օղնեն ըսիս ա.- Հնգերս, հինչո՞ւ հետե հղեն ինձ նման դուզ չըս գինիս: Չէ՞ որ մընք պայման օննք:

Օղնը պատասխան ա տալիս.- Հի՞նչ արմ, Աստուծ ինձ իստի ա ստեղծած:

Աղվեսն մի վընն դիրիս ա օղնեն գլխեն, մի վընընավ ալ հագին բռնիս, ձիք տալիս՝ դուզըցրիս, ըսիլիս.- Մըզ պայման օննք, իս աստուծ-մաստուծ գիդալիս չըմ: Թա ինձ նետ իստի դուզ հղե կգյոս, քի նետ հնգրեթուն կարմ: Թա ալլա կռմկըռ ըս ըրլական, դու՝ քի հետե, իս՝ ինձ հետե:

8 (77). ՔԱՇԵՆ ԽՐԱՏԸ

Կասի՝ մհետ մի քաշ բուն ա դիրալ, թոխս նստալ. ճոտ դուս արալ, պահալ, մծցրալ, թռցրալ, տարալ կեր ճարիլն սվրցրալ, այտս ասալ.- Դե, Աստուծ ձեզ հետ, գենցեք ձըզ հետե ըպրեցեք:

Մի ճոտ մորն ասալ ա.- Ա մար, դե մի քանե ալ խրատ սվրցրի:

Մարն ասսլ ա.- Դե հի՞նչ ասմ, որ շինացեն արտը սրմիլիս կինի, կգինաք սերմերն ուտիլու, կտեսնեք շինացեն կռացալ ա, դուք գիդացեք, որ քար ա եր ունիս, նեստի տա ձեզ, կթռեք, կհռանեք, քարը ձեզ նի վեչ գյո:

Մի ճոտ ծծղեցալ ա, ասալ.- Ա մար, բալքա շինացեն կռացա չի, քար եր կալալ, քարը ջուբոմն լալ պահած:

Մար քաշն ուլխացալ ա, ասալ.- էն ա դուք ինձանե շատ գիդաք: Հույս օնմ, որ ինքնագլոխ կապրեք:

9 (78). ԼՊՐՍՏԱԿԵՆ ՆԱՆԵ ՎԱԽՈՒՂԸ ԿԱ

Կասի՝ մի հետ քիվշանեն լպրստակըրը հվաքվալն, ժողով արալ, որ. մընք աշխարքեն ամենավախկուտ հիյվնն ենք՝ մարթից, շանից, գյուլից, աղվեսից, ղուզղունից, ամեն մի չախկ ու չընխկից վախմնք, սրտաճաք դընռնմ: Եկեք գիննք նի դեռննք Արասխը, կտորվնք:

Որոշիսն, հղե ինգիս դիբի Արասխը: Գինիսն Արասխեն մուտանալիս, տսնալիսն, որ գյռտխնակնեն հեննն Արասխեն կոխկեն իրաց հետե հրսանեքն արմ, յրքիս, պար գյուլիս: Լա որ լպրստակնուն վընննասասը լսիսսն, թեխյա սրտաճաք դընռած լոքն տալիս, նի դռնալիս Արասխը:

Լպրստակնեն ուլխնալիսն ծծղոտում, թա.- Ջանմ, աշխարքը մզանե շատ ալ վախկոտնեն կան: Մըր կտորվիլը նհախ ա: Եկեք ետ դընննք, գիննք նի մտննք մըր քուլուտակրը, գյլխնես պահնք:

10 (79). ՄԻՇՏ ՈՒՄՈՒԴՏ ՔԻ ԵՐԵ ՊԱՀԻ

Կասի՝ միետ մի կաքավ մի շինացու արտեն մաչեն բուն ա դիրալ, ճոտ դուս արալ: Էտ տարեն շինացեն արտը ցորեն լալ վարած: Կաքավն ճուտերեն ասալ ա.- Գենցե՛ք, ցորնեն հասկրը կտուցեցեք, ցորենը կերեք, ձըզ հետե ապրեցեք, համա դե արտեն քուշտավը անցուղ-գինցուղ մարթկանցը նանե հինչ որ լսեք, կգյոք ինձ կասեք:

Մի ըրակու ճոտրը գյուլիսն իրաց մորը խաբար տալիս, թա.- Ասի չըս, ասօր արտեն տարը իրան տղեն նհետ եկալն, արտը տըսալ, ուլխացալ: Հարը տղեն ասալ ա, որ. «Արտը սորին հասած ա, էքուց մըր շինացոց հավաքնք, գյոնք արտը հնձնք»:

Կաքավը ծծղեցալ ա, պատասխանալ, որ.- Իմ նախշուտ ճոտր, քանի որ շինացուն ումուդը իրաց շինացուց երե ա, արտը հընձվի չի: Գենցեք ձըզ հետե ցորենը կերեք, մծմծացեք:

Մի քանե օր անց, ալլա ճոտրը եկալն մորը հետե խաբար բերալ, որ.- Ասօր ալ շինացեն իրան տղեն նհետ եկալ ա, արտեն եշալ, ասալ, որ՝

«Արտեն հնձիլեն սորին վախտն ա: Շինացեք եկալն, որ հնձնք: Գիննք, էքուց մըր պարիկամնուն հվաքնք, գյոնք արտը հնձնք»:

Կաքավը հանգիստ ճուտերեն ասալ ա.- Իսկի վախմեք, իմ ազիզ ճոտր: Շինացոն ումուդը որ պարիկամնոն երե ա, արտը հնձվի չի, կմնա մըզ: Ալխային գենցե՛ք ցորենը կերեք, մծմծացեք:

Ալլա անցալ ա մի քանե օր: Ճոտրը վխեցած վազն տվալ, եկալ իրաց մորը ասալ, որ շինացեն իրան տղեն նետ եկալն արտեն եշալ, ասալ, որ. «Տղա ջան, արտը ձեռքե գինիս ա: Հրվանեն, պարիկամեն երե ումուդ կապիլը հեչ ա: Քշանաց շուդավ եր կանանք գյոնք՝ հար, տղա մըր արտը հնձնք»:

Մար կաքավը ասսլ ա.- Իմ նախշուտ ճոտր, ըրտատարը որ հնգեր, հրվանեն նանե ումուդը կտրալ ա, դիրալ իրան երե, ուրեմն հաստատ էքուց կգյոն, արտը կհնձն: Մեզ հարկավոր ա արտեն նանե թողնքն, գիննք:

11 (80). ՂՈՒՇԵՆ ՎԱԹԱՆԸ

Կասի՝ մեետ մի տեղ մի երքուղ նախշուտ ղուշն փռնալ, բերալ տվալ թաքավերեն:

Թաքավերը մի ղափազ ա սարքիլ տվալ ոսկու նանե, ղուշը դիրալ մաչեն: Ըշխարքես իրեսեն հինչքան թինգանոց կեր կա՝ բերալն տվալ էտ ղուշեն. ոչ կերալ ա, ոչ ալ՝ երքալ: Լա խումար դըռած ասալ ա.- Ա՜խ, վաթան-վաթան, ա՜խ, վաթան-վաթան:

Վերչը թաքավերը կզնվալ ա, ասսլ ա.- էտ ղուշեն բեց թողեք, թող գինի տըսննք ուդուր վաթանը հունչոր սորուն տեղ ա, որ մըր ոսկի ղափազին հավան չի:

Ղուշը բեցն թողալ, հետեն գենցալ, տըսալն՝ ղուշը գենցալ ա մի պառակ տեղ, մի ցաքե քոլու երե նստալ, գյուլոխը, թըվերը նի քսալ քոլեն, ըսկսալ օրախ-օրախ իր քաղցր երքը երքիլը:

12 (81). ՊՍՊՂԱՆ ՀՈԼՈՆՔԸ

Մեետ մի վըրծակ փողումը՝ քջուջ-մջուջ ըրիս տեղը, իրիննակեն նման մի շատ փսպղուն հոլունք ա ճարալ:

Հոլոնքը կտցալ ա, ինքը-իրան խոսեցալ. «Էս հինչ բեն ա, տըսնը՞ս կինի մինը, որ գիդա ըստուր գինը: Ինձ որ հարցնն, ինձ հետե մի թաք գյորեն աժի իստի հազարեն»:

13 (82). ԾԸՏԵՆ ԳՅՈՒԼԲՔՆԵՆ

Մի տարե շատ ցորտ ծմեռնը լալ:

Մի կչեղակ ծառեն ճեղնեն երե նստած լինջիս լալ:

Մի ծըտ ալ ցորտեն կրիս չի լալ դմանա, դես լալ թռչիս, դեն լալ թռչիս, որ բալքա պատառ թքանա:

Կչեղակը գյուլոխը բիցրցրալ ա, ծըտեն ասալ.- Պարիկամս, խե՞ յըս էտքան թռվռալիս:

- Մրսիսմ, շատ ա ցորտ: Համա դե կչեղակ բաջի, որ գյորունքը գյո, պետք ա շատ բուրթ հվաքմ, որ գյուլբաք գյործմ, որ եկուղ ծմռանը տաք-տաք գենմ լալ, մրսըմ վեչ:

Ծմեռնն անցալ ա: Եկալ ա գյորունքը: Բեցվալ ա ծառն, ծաղեգը: Ծըտը իրան հնգրոնացը նետ սկսալ ա խաղն, պարն:

Կչեղակը մի օր ջիհալ ա ծըտեն, հրցրալ ա.- Գյուլբաքա հետե հինչքա՞ն բուրթս հվաքած:

- Ահ, իս՝ հո՞ւ, բուրթն հո՞ւ,- ասալ ա ծըտը:

14 (83). ԷՇԵՆ ԽԸԼՔԸ

Մի հետ մի էշ, հունչուր ա դռնալիս, մի փալանգու մորթե ա ճրիլիս:

Մորթեն գիծիս ա մաշկեն, գյլոխն ալ ծցկիլիս, գյուլիս շենեն մաչեն քյուչենավը դիբի դես, դիբի դեն վազ-վազ ըրիլիս:

Շենեն ջամիաթը փալանգը տսնալավ, օմեն ալ վխիսն, փախչմ, նի դըռնմ տները, դրքերը պընդ փակմ:

Փալանգ դըռած էշը տսնալիս ա, որ սաղ շինացեք վխեցալն, փախալ: Ինքն ալ գինիս ա նի մտիս մի սորուն գյորե արտ՝ ըրծիլիս:

Փալանգ դըռած էշը, որ գյորեն ուտիս ա, քուշտունալիս, քեփը գյուլիս ա տեղը: Որոշիս ա, որ մետ ալ պընդ զռզռա, որ շենեն մախլողը ավելի շատ վախըն, ոչ մինը մոտե գյո վեչ:

Դե որ էշը զռզռալիս ա, շինացեք գյուլխուվն ինգիս, որ էն փլանգու սաս չի, էշու զռզռոց ա: Վազն տալիս գինիս փլանգեն մորթեն էշեն մաշկեն նանե եր ունիս, մի սորուն գլոխը թկիս, տնիս փադ բռնիլիս:

15 (84). ՓԻԼԱՆԳԵՆ ԽԸԼՔԸ

Կասի՝ միետ մի փալանգ ծմակեն մաչեն ուռուջահ ա եկալ մի կատվու, մանցալ զարմացած:

Կատոն ասսլ ա.- էտ հի՞նչ ա պդահալ, այ ջանգալոթեն տար ու տրեկան:

Փալանգն ասալ ա.- Հի՞նչ պետք ա պդահի, յիշիսմ տսնալիս, որ վըտանետ նհետ դեչանը քեթ-մռոթդ, հագվեն նհետ՝ գյուլոխտ, շատ ու շատ ինձ նմանս: Համա դե, համ շատ խըղճս, համ ալ՝ շատ կուճի:

Կատուն ասսլ ա.- Ախր դու ազատ ապրածս էս լեն-բոլ ծմկնոն մաչիս: Համա իս ապրած ըմ մարթու ձեռքեն տակեն:

Փալանգը ասսլ ա.- Իմ ցեղակից, կկարս էտ մարթեն ինձ նշանց տաս, տըսնամ էտ հինչ օժու տար ա, որ քի էտքան կուճցրած ա:

Կատուն թա.- Եք տանմ նշանց տամ:

Մի մարթ մոտե ծմակմը մի ծառ լալ կտրած: Ուզիս լալ սըպավ ճղի, էրկու կուտր արի:

- Այ մարթ, դու հի՞նչ օժու տարս, որ իմ ազգականեն էսքան խըղճս պահած, կուճըցրած, շինածս մի հափուռ,- ըսիս ա փալանգը:

- Բենես փիս վախտն ա, եք, նեղոթուն քաշի, քու էտ հաստ թաթրը դիրի ծառեն ճեղքվածքմը, իս սըպը դոս օնըմ, առաչ տամ, ծառը ճըղմ, նոր խոսնք,- ըսիս ա մարթը:

Փալանգը մուտուռնալիս ա, թաթրը դիրիս ճեխքմը, մարթը սըպը դոսա ունիս, փալանգը ցավից մռնչամ ա:

Կատուն ըսիս ա.- Հը՞, տըսա՞լս մարթեն:

16 (85). ԿՈՉՆԵՆ ՆԱ ԼՊՐՍՏԱԿԵՆ ՄԱՐՉԸ

Մի վախկուտ լպրստակ միետ գենցալ ա մի ձորում իլած ախպիրից ջուր խմի:

Տըսալ ա մի կուճի կոզնը նա է ախպիրին կողքեն նստած: Լպրստակը եշալ ա կոզնեն, ծծղեցալ, ետ դըռալ, ասալ.- Կուճի ախպեր, իս զարմանըմմ, թա դու էտ գերմակ, բարակ վըննեռավտ հինչուրս շոռ գյոլիս, բինմեն ճրիս ուտիլիս, դուշմանետ ըռշկին փխչիլիս:

- Հինչ ա, դու քու երկար վըննեռա՞վս ուլխնալիս, փորձի մարջ կտրընք, հղե գիննք, տըսննք հու շուդ տեղ կհասնի:

էդ ախպրին նանե ղալին հըռե բեցուր մի սար ա ինիլիս: Սարեն գյլխեն ալ մի մըծ կաղնե ծառ: Որոշիսն, թա՝ հու կկարի քշանաց շուդավ, հալա իրինննակը դուս վեչ եկած, կգինի հասնի կաղնե ծառեն:

Լպրստակը ումուդ դիրիլավ իրան երկար ջալդ վընններեն երե, որոշիս ա գինի պատառ քոն ինի, եր կանա, հղեն շարունակի:

Կոզնն ալ ըրկանոց նի ա ինգիս հղեն, իրան երիշավը թիաթավ գինիլիս:

Էքսի քշանոց՝ իրինննակը հալա դուս վեչ էկած, լպրստակը գինիս ա տսնալիս, որ կոզնը նայե սարեն գյլխեն, կաղնուն տակեն, իրան հետե խաղ ա ըրիլիս:

17 (86). ԱՄԵՆԱՆԱԽՇՈՒՏ ՃՈՏԸ

Կասի՝ մհետ ղուշերեն թաքավերը՝ ղզղունը քաշեն կանչալ ա, թափշուր արալ, որ.- Գինի աշխարհը շոռ եք, ամենաանախշուտ ղուշեն ճոտը բեր, տըսնամ՝ ճոտն ալ մորը նման նախշուտ ա ինի՞ս, թա՝ չի:

Քաշը գինիս ա, դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, վերչը իրան ճոտը եր ունիս գյոլիս:

Դե, ըշխարքեն ղուշերեն ճուտերեն մաչեն ամենագեշ ճոտը քաշեն ճոտն ա ինիլիս:

Ղուշերեն թաքավերը յիշիս ա քաշեն սըվ, բեջուռա ճոտեն, ծըծաղը կրիլիս չի պահի: Քաշեն ըսիս ա.- Ղուշ, քի ասլմ գինի ըշխարքեն ամենանախշուտ ղուշեն ճոտը բե՞ր, թա գինս քու էտ սըվ, գեշ անճոռնի ճոտը բերս:

Քաշն ասալ ա.- Թաքավերն ապրած կենա: Շատմ շոռ եկալ, համա իմ ճոտեն նանե նախշուտ ճոտ ճարալ չըմ:

18 (87). ՉՂՋԻԿԸ ՄԱՆՑԱԼ Ա ԱՋԱՏ

Մի օր ղուշերեն թաքավերը չղջիկեն կանչալ ա իրան կոշտն, ասալ.- Դու իմ թաբեհնս, պետք ա ինձ հարկ տաս:

Չղջիկը լախ-լախ ծծղեցալ ա: Թաքավերը զարմացած հրցրալ ա.- Խե՞ յըս ծծղիլիս:

- Թաքավերը ապրած կենա, ծծղիլու բենս ըսիլիս, իս ալ ծծղիլիս ըմ: Եք գիննք բութթուն դոնյան շոռ գյոնք, թա ինձա կման մի ղուշ ճարս՝ առանց թըփռի, համալ բիրանմը կռնքնե ինի, իմ աշկես երե, իս ալ քի

թաբեի դըռնմ: Իս կռնքավըր հեյվանմ, թաբիմ կըռենք ունեցող հեյվանութեն թաքավերեն:

Մի քանե վախտ անց, չղջիկեն իրան կոշտն ա կնչիլիս հեյվանութեն թաքավերը, որ.- Դու կըռենք ունեցող հեյվան, պետք ա դու ինծ թաբեի դըռնես, հարկ տաս ինձ:

Չղջիկը ալլա ծծղեցալ ա: Թաքավերն ալ զարմացած հրցրալ ա.- Հինչո՞ւ հետե յըս ծծղիլիս:

Չղջիկն ասալ ա.- Թաքավերն ապրած կենա, ծըծաղ խոսքեն երե կծծաղն: Եք գինենք բութթոն դունյան շոռ գյոնք, տըսնմ ըշտեղ կկարս ճարի մի հեյվան քու թաքավերությանը տակեն, որ համ էրկուվըննաեե ինի, համ ալ թըվր ինի:

Թաքավերը մանցալ ա լալկված, չղջիկն ալ՝ ազադ:

19 (88). ԱՍԼԱՆԵՆ ՃԱՐԸ ԱՂՎԵՍԸ ՃԱՐԱԼ Ա

Միետ հեյվանարեն թաքավերը՝ ասլանը, պընդ ուլուզացալ ա: Կանչալ ա՝ բերիլ տվալ աշխարքմ հինչքան հեյվաննար կա: Օմեն ալ եկալն թաքավերեն չորք թրափավը նստալ, տափեն կացալ: Ոչ մինը մի ճար կրեցա չի արի:

Ախրը թաքավերեն աչքեն քաղցր դռնալու հետե, գյուլը մոտացալ ա, ասալ, թա.- Թաքավերն ապրած կենա, մըր մաչեն մի բաբատ հաքիմ աղվեսն ա, էն ալ տսնալիսս քի բենու տեղ չի դիրած, եկած չի:

Ասլանը հոքմ ա ըրիս, որ՝ սհաթտա աղվեսեն ճրեցեք, բերեք: Գյուլը կողքեն նստիս ա: Մանցած հեյվննեն գինսն աղվեսեն հետեն:

Լպրաստակը աղվեսեն ճրիս ա, ըսիս.- Պա ասի՞ չըս, գյուլը քու մասետ իստի բեն ա գենգատ արալ թաքավերեն:

Աղվեսը գենցալ ա ասլաեն չորք թրափավը շոռ տվալ, ասալ.- Թաքավերն ապրած կենա, որ լսալմ ալուզս, աշխարքը գլխես շոռ ա եկալ: Դես իմ ընգյալ, դեն ըմ ինգյալ, վերչը ճարալմ քու գյլխցավեն դեղը: Պետք ա գյուլը մորթնք, սըրտը, ջիգարը տաք-տաք օտս, մորթեն ալ քաշս գյլխետ, այտս քոն ինս: Կտըսնս, որ քռնքալս, գյլխետ ցավն ալ անց ա կացալ:

Դե, լա աղվեսեն խոսքեննն լալ մաթալ: Գյուլեն սհաթտա վերն կոխալ, մորթալ: Աղվեսը հինչուր ասած լալ, ինդի ալ արալն: Ասլաեն գլխեն ցավն անցալ ա: Գյոլն ալ իր լուզվոցը կորալ ա:

20 (89). ՕՈՒԿՆԵՆ ՆԱ ՔԻՐԺԱՆԳԵՆ ԽԱՍԻԱԹԸ

Մի հետ մի ծուկնը մի վարար գետա մաչե իրան հետե խաղ լալ ըրիլիս, համ ալ կեր ճրիս, ուտիլիս: Ծուկնը տսնալիս ա, որ մի քյարժանգ գետեն ղրաղավը դես ա գինիս, դեն ա գյոլիս, վըտ ա կնալիս գետեն յիշիս, ալլա դես-դեն գինիլիս:

Ծուկնը մոտոնալիս ա գետեն ղրաղեն քիրժանգեն ըսիլիս.- Պարիկամ, էս սաղ օրը իմ աշքը քի երե յա: Ասի գիդամ, հի՞նչս կուրցըրած, հինչո՞ւվս շոռ գյոլիս:

Քյառժանգն ըսիս ա.- Ոչ մի բեն ալ կորցըրած չըմ: Գետեն էն ղոլեն պարիկամ օնըմ, ուզիլիսմ գինմ մհետ տըսնմ: Դե, գետը վարար ա, աշկս ուտիլիս չի նի մըտնմ գետը, վխիլիսմ ջրին նաեե:

Ծուկնը ծծղիս ա, ըսիս.- Վախիլու բեն չկա: Եք, եռնի իմ մաշկեն տանմ:

Ծուկնը մուտնալիս ա գետեն կողքեն: Քյարժանգը եռ ա ինիս ծոկնեն մաշկեն: Հասնիլիսն գետեն մաչտեղը, քյարժանգը ծուկնեն մաշկը կծիլիս ա:

- Այ տնաքանդ, էտ հի՞նչս արալ,- ըսիս ա ծոկնը:

Քյարժանգն ըսիս ա.- Դե, ների, պարիկամս, մըր ազգեն խասիաքը իտի ա:

- Շատ պարի,- ըսիս ա ծոկնը,- մըք ալ օննք ազգի խասիաք:

Ըսիս ա, նի մտիս ջրիրին տակը: Քյարժանգը խղդվիս ա մնալիս գետմը:

21 (90). ՄՈԿՆԸ ԱՍԼԱՆԵՆ ՊԵՏՔԻ Ա ԵԿԱԼ

Կասի՝ մի հետ մի մոկնը մի ծմակմ բուն լալ դիրած, ճոտ դուս արած:

Մի օր գինիս ա որ պատառ կեր ճարի, բերի տա ճոտերեն: Ծմակմը մի բիրդամ մոկանը ասլանը փռնիլիս ա: Մոկնը ղանչանք ա ըրիլիս, որ ասլանը իրան օտի վեչ, բեց թողնի:

Ասլանը լսիլիս չի, ըսիս ա.- Ասօր իս ալ բեն չըմ ճարած, որ օտմ: Քողծածմ, պետք ա քի օտմ:

Մոկնը ըսիս ա.- Ինձ օտս, քու կռնքնուն տակեն ըրվա չըմ: Իս օխտը ճոտա մարմ: Բեց թող գինմ: Մի օր քի պետք կգյոմ:

Ասլանը ծծղիս ա, ըսիլիս.- Վայ աշխարք, ուրեմը պետք ա էն օրն ինգմ, որ աշխարքեն հեյվանուբեն թաքավերը մոկանը մոհդաջ մնա:

Ասլանը մոկանը բեց ա թողիլիս:

Մի վախտ անց ա կնալիս: Մոկանը ճոտրը մծմծնալիսն: Մոկնը ճուտերին ըսիս ա.- Եկեք գիննք ծմակը, շոռ գյոնք:

Ծմակմը լսիսն, որ մի գյոռգյոռուց ա գյոլիս: Գինիսն տսնալիս վրսականը հաստ քողից թալա յա դիրած, ասլանը նի ա ինգած թալան, կրիս չի դուս գյո: Մոկնը ճուտերեն նետ ըսկսիսն ամենը մինը մի քող կործիլ, կտրիլ: Ասլանը քռնոք կոխած ազադվմ ա:

Մոկն ըսիս ա.- Դե, գինի գիդաց, որ մոկնն ալ ասլանեն պետքի կգյո:

22 (91). ԳՅՈՒԼԵ ՆԱ ՂՈՒՋՂՈՒՆԵՆ ՄԱՐՋԸ

Մի տարե մետ մի գյուլ նա մի ղըզղուն մինը մինեն նետ բհասն արալ, մարջն կտրալ, քա՝ հուր աշկեն լուսն ա սոր:

Ղուզղունը առաչ գյոլեն ասսլ ա.- Դե դու ասի, իս լսըմ:

Գյոլն ասսլ ա.- Մի թռըթողը օր մի սարու դոշավ նայմ լալ գինիլիս: Մինն ալ էն ըմ տըսալ, որ դեմի սարի դոշըմը մի սվավըղ թագա ցիլած արտ կա: Արտեն մաչեն մի սըզըցաքե քոլ կա: Քոլեն տակեն մի սվաբուրթ գյոռնը նայե նստած՝ արոճ ըրիլիս: Վագմ տվալ, գենցալ գյոռնը փռնալ, կերալ:

- Էտ հվըտալու բեն ա: Իս հվըտալիսմ,- ասալ ա ղուզղունը:

- Դե դո ասի, իս լսըմ,- ասալ ա գյոլը:

- Իս մետ մի քշանաց շոդավ մի շենա իրիսավ թռիլիսմ լալ: Եռնաց եշալմ մի հորդավ, տըսալ մի թագա հառհնը ուջաղեն երե ղզղանը դիրած թանավ ճաշ ա իփիլիս: Մի սիպտակ մազ նի փթաթված լալ չամչիգեն կոթեն: Իս եռնաց տըսալմ: էն թագա հառհնը տսնալիս չի լալ մազը, որ եր օնի:

Գյոլը խիյալ-խիյալ ա արալ, գենցալ, չոբանեն ըռշկին նանե մի գյոռնը բերալ, տվալ ղուզղունեն:

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1 (92). ՇԱՏ ԳԻԴ ԱՂՎԵՍԸ

Կասի՝ իլալ ա, չի իլալ, մի շատ գիդ աղվես լալ: Ծմռան մի օր էտ աղվեսը քողցած ա ինիս: Դես ա շոռ գյուլիս, դեն ա շոռ գյուլիս, մհետ ալ տսնալիս ա, որ շենեն ղրաղեն մի չփառատակե մի սորուն կտոր դմակ կա դիրած: Դե, աղվեսը շատ գիդ ա ինիս: Գիդալիս ա, որ դմակը նհախ տեղը դիրած չեն ինի: Կա-չկա, մի վրսական թալա յա սարքած, որ մի միամիտ հեյվան բռնի:

Աղվեսը պատառ դես ու դեն շուռ ա գյուլիս, միհն ալ մի բիրդամ ուռուջահ ա գյուլիս մի քողցած գյուլու:

Գյուլը ուլխնալիս ա, ըղվեսեն ըսիս.- Այ աղվես, իս շատ քողցածմ, Աստուծ քի ղորկած ա, որ օտմ:

Դե, աղվեսը շատ գիդ ա, ծծղիս ա, գյուլեն ըսիս.- Քու գյանքը երկար ինի, իս մի լղար հեյվանմ, ինձ որ օտս, հի՞նչ կհասկանաս: Իս մի մըծ դմակու տեղմ գիդալիս: Եք գիննք նշանց տամ, կեր, որ աշկդ կուշտանա, փորդ ալ մի բեն ինգի:

Գյուլը զարմանմ ա, աղվեսեն ըսիս.- Պա որ դու դմակու տեղս գիդալիս, խե՞ չըս դու ուտիս, որ քողցած շոռս գյոմ:

Աղվեսը ըսիս ա.- Գյուլն ապրած կենա, էս ամեսը մըզ՝ աղվեսնուս հետե պաք ամես ա: Մսեղեն օտիլը շատ մեղք ա:

Գյուլը հվատմ ա աղվեսեն: Աղվեսը տնիս ա, քիլոմը դիրած դմակը նշանց տալիս: Քողցած գյուլը առանց կարճ ու երկար մտածելու, ըռեխը զախ ա տամ, որ դմակն օտի: Թալան չրխկալիս ա, նի ինգիս գյուլեն վեզը՝ ըսկսիս խըղդիլը: Աղվեսը սհաթտա լոք ա տալիս, դմակը եր ունիս ուտիլիս:

Գյուլը խռխռացնիլավ ըսիս ա.- Այ շատ գիդ աղվես, պա կասս՝ «էս ամեսը պաք ա, մըննք մըս ուտիս չըննք, մեղք ա»:

Աղվեսը պռոշնեն լիզիլավ պատասխանմ ա.- Դու ալ մսակեր հեյվանս, պաքն քի հետե ալ ա: Դու օրենքն հարգա չըս, էտ ա՝ պաքեն մեղքն ալ նի ա ինգալ քու վեզը, նա է քի խղդիլիս:

2 (93). ՄԱՐԱՆԸ

Կասի՝ իլալ ա, իլալ չի, շինացե մի մարթ լալ: Էտ մարթեն կնգանը անմը Մարան լալ:

Մի քշանաց Մարանը մարթեն ըսիս ա.- Ա մարթ, հացը պրծած ա, դու գինի ծմակեն նհետ փադ բեր, իս ալ երկանամ, տոնը հվաքմ, սիրբմ, ալորը մաղմ, խմորը հոնցմ, դեչանը քու գյուը:

Մարթը եր ա կնալիս, քողը նի կպիս մաշկը, կացենը դիրիս օսսեն, գինիլիս:

Մարանն ալ տանե բենը ըրիս ա, պրծնիս, խմորը հոնցիս, յիշիս-յիշիս՝ մարթը գյուլիս չի:

Մարանը խիյալ ա ըրիս, որ. «Մարթ ա, հալբաթ հըռե տեղ ա գենցած, չոր փադ բերի, շելակն էլ ծանր կինի, ըդոր հետե ալ ետ ա ինգած: Սորունը էն ա, որ քանե խոխենքը քոն ին ինած, իս գինըմ մարթես առաչը, շելակը բերմ»:

Մարան մի քող եր ա ունիլիս, էսկմե հղոքը գինիս ծմակը: Դո մա ասի, մարթը էնկմե հղոքն ա գենցած: Մարթը փադը շլակեն գյուլիս ա տոն: Տսնալիս՝ խմորը հոնցած ա, ինքը տանը չի: «Հալբաթ ջիրու կինի գենցած, յա մի հրվանու տոն: Իս ալ թորոնը վառըմ, Մարան գյո տըսնի՝ օմեն հինչ հազր ա, նստի հացը թխի»:

Վախտ ա անց կնալիս, Մարան գյուլիս չի, խոխենքը քոնե երն կնալիս, լեց ինիս՝ հաց ուզիս: Խմորը տաշտմը թթվիս ա, թոռնեն կրակը ընցրիս ա: Հավրը քողցած-ծարավ ըսկսիսն կչկչալը: Մարթը հազրի ա գյուլիս, որ կաչկա իս որ փադ բիրիլուց ետ ըմ ինգյած, Մարանը գենցալ ա ծմակը:

Խըղճ մարթը եր ա կնալիս, գինիս ծմակըմը եռ ինիս մի քարա՝ կնչիլիս.

Մարան-Մարան, տոն-տոն,
Խոխենքտ քողցած զիլզիլալիս,
Խմորտ տաշտմը ճլճլալիս:
Մարան-Մարան, տոն-տոն,
Թորոնտ վառած վռվռալիս,
Հավրտ քողցած կչկչալիս,
Մարան-Մարան, տոն-տոն:

Դե, սաղ շենն ալ սաս ա ինգիլիս, որ Մարան գենցած ա ծմակը փադու, եկած չի, կորած ա: Շենեն սաղ մախուլըը՝ մըծ, կուճի երն կնալիս, գինիս նի դռնալիս ծմակը Մարանե կնչիլիս:

Դու մա ասիլ, Մարան գինիս ա ծմակմ, մարթեն ջիհլիս չի, տըսնալիս ա սորուն շատ չոր փադ կա, փադա հվիքիլիս: Մի արջ Մրանե տնսալիս թաքուն գյոլիս ա մտանե փռնիս, շլկիս տնիլիս իրան ըղղանը:

Արջեն էրկու կուճի քոթոտ ա ինիլիս: Արջը Մրանե ըսիս ա.- Դու քոթոտնեն պահի, իս գինմ ուտիլա բեն ճարմ, բերմ:

Մարանը պատառ քոթոթնոն քոշտեն նստիս ա, մին ալ անջուկը սաս ա ինգիս, որ շինացեք իրան կնչիլիսն:

Մարան եր ա կնալիս, փխչիլիս, վազ տալավ գյոլիս հսնիս տոն: Շոդավ խմորը բոնիս ա, հացը թխիլիս, խոխենցը հաց տալիս, ախոռ ըրիլիս: Օմեն հինչ տեղպատեղ ա ըրիս, պրծնիս, մին ալ էն ա տըսնալիս՝ սաղլամ շինացեք հվաքվալն, եկալ:

Մարան նստիս ա իրան գյլխեն եկածը նաղլը ըրիլիս: Շինացեք օմեն զարմացած, բիրինենն բեց արած լսիլիսն:

3 (94). ԿՈՒՃԻ ՄՈԿՆԸ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի կուճի մոկն ա իլալ: Մի ըրակու եր ա կացալ, նի ինգյալ հղեն, թա՝ գինիսմ իմ պապոնց տոն՝ ճղոպուր ուտիլու:

Պատառ տըղ գինիս ա, մի վըրծակ ա դուս գյոլիս առաչը: Հրցրիլիս ա.- Կուճի մոկնը, ըշտե՞ղս գինիլիս:

- Գինիսմ իմ պապոնց տոն, ճղոպուր օտմ,- ըսիս ա կոճի մոկնը:

- Պա ինձ տանի՞ չըս,- ըսիս ա վըրծակը:

- Խե՞ չըմ տանի, մինակ վեչ ինըմ, էրկուսավ իննք:

Վըրծակը վազ ա տալիս, գյոլիս ա մոկանը հագին փռնիլիս: Էրկո հոգվավ պատառ տըղ գինիսն, մին ալ մի շան կոճի թոլա յա ջիհլիս: Հրցրիլիս ա.- Կուճի մոկնը, էտ վրծակեն նհետ ըշտեղե՞ղ եք գինիլիս:

- Գինիսնք իմ պապոնց տոն, ճղոպուր ուտիլու:

- Պա ինձ տանի՞ չեք ձըզ նհետ:

- Խե՞ չընք տանի, էրկուսը վեչ իննք, իրքը իննք:

Թուլան վազ ա տալիս, գյոլիս վրծակեն հագին փռնիլիս, իրար քմակե շարված գինիսն:

Ալլա պատառ տըղ հալա գենցած վեչ, մի կուճի կատու ա ջիհիս, հրցրիս ա.- Կուճի մոկնը, էտ իրք հուգվավ հի՞նչ տըղ եք գինիս, մին մինա հագի փռնած:

- Գինիսնք իմ պապունց տոն, ճղուպուր ուտիլու,- ըսիս ա կուճի մոկնը:

- Պա ինձ տանի չե՞ք,- ըսիս ա կուճի կատոն:

- Կտաննք, դու ալ եք, իրիքս վեչ իննք, չորքը իննք:

Կուճի կատուն վազ ա տալիս, գյոլիս թուլեն հագին փռնիս, գինիլիսն:

Գինիսն հսնիլիս կուճի մոկանը պապունց տոն: Ալ օրը մքնած ա ինիլիս: Կուճի մոկանը պապոն տոն չի ինիս: Նանան ալ դուրքը թողած ա ինիս բեց, քոն ինած ինիս: Դրքեն արանքավը սուս-փուս նի յըն մտիս տոն:

Կուճի մոկնը վրծագեն ըսիս ա.- Դու հի՞նչ կօտս:

- Իս ցորեն կօտմ,- ասալ ա վըրծագը:

- Ցորենը հեն ա էն պարկմը: Գինի անխոս թիաթավ կեր, որ իմ նանա գիդա վեչ: Դու հի՞նչ կօտս, թուլա:

- Իս քողցածմ, հացմ ուզիլիս,- ասալ ա թոլան:

- Հացը էն ա տաշտմը, գինի մի հաց եր կալ, շուդ-շուդ կեր, քանե նանան քոն ա: Կուճի կատու, պա քո սըրտն հի՞նչ ա ուզիս:

- Իս ալոզմ, կաթենմ ուզիլիս:

Կատվեն ալ կաթնեն կճոճն ա նշանց տալիս, ինքն ալ գինիս նի մտիլիս ճղպորեն քսակը:

Պառավ նանան մին ալ քունե զուրթնալիս ա, տըսնալիս տանը մաչեն նետ չխչխկոց, կտկտոց ա գյոլիս: Եր ա կնալիս ձրքըճրեգը վռիս, չալիգը եր ունիս, տսնալիս հի՞նչ՝ տոնը մոկնավ, վրծակավ, շան թոլավ, կատվավ նայե լիգը: Չեռքեն չիլիգավը օմեն միննեն մաշկավը միետ որ թխիս ա, թեխյա դոսն գյոլիս, փխչիլիս: Պառավ նանան դորքը պընդ փկիս ա, գյոլիս ալլա քոն ինիս:

4 (95). ԽԱՓԼԱՆ ԱՂՎԵՍԸ

Իլալ ա, իլա չի, մի շատ խփիլատու աղվես ա իլալ: Էտ աղվեսը մի ծմռնը շատ քողցած ա ինիս: Ուզիս ա գինի մի շենմ մի հավ գյողանա, օտի:

Իրան բունումը էնքան կնալիս ա, որ օրը մքնիս ա: Եր ա կնալիս, նի ինգիս հղեն, գինիս:

Հընդեց մի քողցած գյոլ ա ջհհիլիս: Գյուլը ըսիս ա.- Աղվես ախպեր, էս կես քիշերեն ընշտե՞ղս գինիս:

- Գինիսմ էս մոտե շենը իմ պապունց տոն: Իմ դայու հրսանենքն ա:

Գյոլը ուլխնալիս ա, ըսիս ա.- Աղվես ախպեր, ուտիլու շատ բեն կինի: Ինձ ալ տար:

- Մանակ վեչ ինմ, էրկու հոգի իննք: Եք գիննք:

Պատառ տըղ ալլա գինիսն, ըռչնեն մի քողցած արջ ա դոս գյոլիս: Հրցրիս ա.- Աղվես ախպեր, խըր ինի: Գյուլեն նհետ ըխպր դըռած ըշտե՞ղ եք գինիլիս:

- Էս մոտե շենմը իմ դայու հրսանենքն ա: Գինիսնք հրսանեք,- օրախ-օրախ ըսիս ա աղվեսը:

- Իս ալմ քողցած: Հի՞նչ կինի, ինձ ալ տար:

- Եք գինենք, արջ ախպեր: էրկուսն վեչ ինընք, իրիքը իննք:

Դե, ծմռնը քիշեր ա: Օմեն հիյվաննեն ալ քողցածն ինիս: Օմեն ալ դուսն ինիս եկած՝ մի բեն ճարն, օտն: էտ չուլերմնը հինչքան քողցած չախկալ, փորսող, օրեշ հեյվաննե որ ինիսն, տըսնալիսն աղվեսեն դաստան, գիդալիսն, որ աղվեսը հվաքած ա տնիլիս իրան դայուն հրսանեքը, իրաք ալ խռնվիսն, գինիլիս:

Շենեն կողքեն ջրի մի մըծ գյոլ ա ինիս: Գյոլեն իրիսը սառն ա կապած ինիս: Աղվեսն հեյվաննոն ըսիս ա.- Դոք էս սառնեն երե նտեցեք, մաշկ-մաշկու տվեք, դինջացեք: Իս գինմ զուռնը-ղավալը բերմ, զուռնա ըծիլավ, պար գյոլավ տանմ իմ պապուցց տոն:

Հեյվաննեն հվտալիսն, նստիսն սառնեն երե, մաշկ մաշկու տալիս, որ մրսըն վեչ:

Աղվեսը թաքուն գինիս ա, շենմը նի մտիլիս մի հարուստ մարթու գյոմ, մի չաղ վըրծակ փռնիլիս, ուտիս: էտ հարուստեն ծիանցը զնգլկնեն բոք տալիս, կպիս իրան հագվեն, զնգզնգցնիլավ տալիս շենեն քուչենավը: Գյոլեն երե նստոտած հեյվաննեն զնգլկնոն սասը որ լսիսն, ուլխնալիսն, ըսիսն.- էս ա, աղվեսը զուռնաչենցը բիրիս ա, որ մըզ տանի: Գիդալիս չըն, որ աղվեսը սըվ քիշեր ա բիրիլական իրաց գյլխեն:

Շենեն շներն ալ զնգլկնոն սասը լսիսն, զրմնալիս, թա՝ էս կես քիշերեն հի՞նչ քյարվան ա նի մտած շենը: Երն կնալիս տսնալիս՝ աղվեսն ա, հետենն ըրիս: Աղվեսը փխիս ա, գյոլիս գյոլեն չորք թիրափավը շոռ գյոլիս, շները զիրավ ըրիս գյոլեն երե սառած-կպած հեյվաննոն ջանավը, ինքը փխչիս, կորչիլիս:

5 (96). ԳՅՈՂ ԱՐՋԸ

Կասի՝ մը հըռե ծմակմ մի էծ լալ ըպրիլիս: էտ էծեն էրկու կուճի հոլ լալ, մինը՝ տղա, մինը՝ աղչիգ: Տղեն անմը Բախշի լալ, ըղչիգանը անմը՝ Նախշի:

Մի օր էծը հուլերեն ասալ ա.- Դե, դուք տանը դուրքը փկեցե՛ք, նստեցե՛ք էրկու հուգվավ խելոնք խաղ ըրեցեք, իս ալ գինմ խոտ արածմ, ձզ հետե կաթնը բերմ: Նորից ըսիսմ,- ասալ ա էծը,- տան դուրքը թողեք վեչ բեց, մըզ դուշման շատ օննք՝ վրսականն ա, արջի պապուն ա, գյոլն ա, աղվեսըն ա, կգյոն ձեզ կտանն:

Էծը թուղիս ա, գինիս ըրիծիլու, Բախշի նա Նախշի ինգիսն խաղավ, մռնալիսն տան դուրքը փակն, մնալիս ա բեց:

Էտ ծմակմն ալ մի գյող արջի պապ լալ ըպրիլիս: Հակառակու նման ալ էտ վախտը արջի պապոն ալ իրան տանը նանե դուս ա գյոլիս, գինիս ծմակմը մի բեն ճարի, օտի: Պատառ դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, մին ալ գյոլիս ա, տսնալիս հի՞նչ՝ Բախշի նա Նախշի խաղն արած, քոշտացած, քունավ անցած, տան դուրքն ալ թողած բեց:

Արջի պապուն դես ա յիշիս, դեն ա յիշիս, տսնալիս ա՝ էծը ըրվալիս չի, սուս-փուս Բախշու նա Նախշու խտտիլիս ա, տընիս դիրիս իրան տոնը: Էծն ալ գյոլիս ա, տըսնալիս հի՞նչ՝ տան դուրքը բեց, Բախշին նա Նախշի կավչնըն: Գիդալիս ա, որ ծմակմը մի գյող արջի պապի կա, ընդոր արած բենը կինի:

Եր ա կնալիս, Բախշի, Նախշի կնչիլավ նի ինգիս ծմակը, շոռ գյոլիս: Դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, արջի պապու տոնը ճրիլիս ա: Կնչիս ա.- Արջի պապի, իմ Բախշի նա Նխշին, դո՞ւ վըս գյողացած: Բեր տոր, տանըմ, թա չէ՝ իմ սոր պուզերավը քի կսպանմ:

Արջի պապուն դոս ա գյոլիս, ըսիլիս.- Հի՞նչ Բախշի, հի՞նչ Նախշի: Թողի գինի իմ դրքեն նանե, քանե քի փռնած չըմ կերած:

Էտ սհաթեն Բախշի նա Նախշի իրաց մորը սասը որ լսիսն, ըսկսիսն լեց ինիլավ կանչելը.- Մամա, մընք տեղս ենք, մընք տեղս ենք:

Էծը, որ Բախշու նա Նախշու սասն լսիս ա, հըրսրը գյոլիսն, իրան սոր պոզերավը թխիս ա արջի պապուն փորը ծկիլիս: Արջի պապուն վա՜յ-վա՜յ ըրիլավ թոլ ա ինիս, նի ինգիս ձորը, ըստիկիլիս:

Էծը իրան հուլերեն ըսիս ա, որ.- Մին ա, իս տանե վեչ ինմ, առաչ դորքը կփակեք, ետնե խաղ կարեք:

6 (97). ԸՇԽԱՐՔԵՆ ՈՒՄՄՈՒՆՈՑ ՈՒԺԵՂԸ

Կասի՝ իլալ ա, չի լալ, մի էծ լալ: Մի ծմռնօր էծը գինիս ա սառնեն երե խաղ ըրիլիս, վեր ա ինգիս վընը կուտորիս ա:

Եր ա կնալիս, ըսիլիս.- Ա սառնը, դու շատ օժավս:

- Հի՞նչս գիդացալ,- հրցրալ ա սառնը:

- Պա հալա իս վեր վեչ ինգած, դու իմ վընենը կոտրալս:

- Ահ, իս որ օժավմ լալ ինի, արվը ինձ հիլիցրի չի լալ, ջուր սարքի: Օժավը արվն ա,- ասալ ա սառնը:

Էծը գենցալ ա արևեն կոշտն, ասսլ.- Արվ, արվ, դու շատ օժավս:

- Հի՞նչ գիդաս,- ասալ ա արվը:

- Պա որ օժավ վեչ ինըս, սառնեն դու հունչո՞րս հիլիցրիս, ջուր ըրիս:

- Օժավը թողբն ա, թողբը, որ գյուլիս ա նի մըտիլիս, իմ իրիսը ծծկիլիս, կրիլիս չըմ աշխարհը տըսնիլ,- ըսիս ա արվը:

Էծը գինիս ա թողբեն կոշտը, ըսիլիս.- Թո՛ղբ, թո՛ղբ, դու շատ օժավս:

- Դու հի՞նչ գիդաս,- հրցրիս ա թողբը:

- Պա որ օժավ վեչ ինըս, հունչո՞րս արևեն իրիսը ծծկիլիս, թուղիս չըս աշխարհը տըսնի:

Թողբը ծծղիս ա, ըսիլիս.- Օժավը քամեն ա, որ փչիս ա, ինձ հազար կոտոր ըրիս, կուտորտնես լցրիս սար, ձոր:

Էծը գինիս ա քամոն կոշտն, ըսիլիս.- Քամե՛, քամե՛, դու շատ օժավս:

Քամեն զարմացած ըսիս ա.- Պա դու հինդաս, որ իս շատ օժավմ:

- Օժավ վեչ ինս, թողբեն հինչո՞րս խռեք տալիս, կտոր-կոտր ըրիս, նի գիձիս սար-ձոր:

Քամեն ըսիս ա.- Ամենաօժավը պատն ա, որ իմ առաչն փակմ ա, ինձ օժե գիձիս ա, թուղիս չի իմ օժը գյորա իմ գիդացածը արմ:

Էծը գինիս ա պատեն կոշտն ըսիլիս.- Պա՛տ, պա՛տ , դո շատ օժավս:

- Դու հի՞նչ գիդաս,- ըսիս ա պատը:

- Դու որ օժավ վեչ ինըս, քամուն առաչը փակի չըս, օժեն թափը կոտրիլ:

- Օժավը մոկնն ա, որ էն կոճի տեղավը իմ մաչը քնդիս ա, իրան հետե բուն սրքիս, ճոտ հնիս,- ըսիս ա պատը:

Էծը գինիս ա մոկնանը կոշտը, ըսիլիս.- Կուճի մոկնը, դու շատ օժավս:

Մոկնը հրցրիլիս ա.- Պա դո հինդա՞ս:

- Ենքան գիդամ, որ դու կրիլիսս էտ կուճի տեղավտ էն մըծ պատը քանդիլ, ծակիլ, մաչեն քի հետե բոն դիրիլ:

- Իս օժավ չըմ,- ըսիս ա մոկնը,- օժավը կատոն ա, կատոն: Ընդոր ահից վախմնք մհետ մըր բոնեն նանե դուս գյոնք, մի ազատ շոռ գյոնք, միշտ ըպրիսնք գյող կացած: Լա որ տսնալիս ա, լոք ա տալիս, թաթը դիրիս գյլխնուս երե, տնիլիս խաղալու տեղ խաղ ըրիս, ուտիս:

Էծը գինիս ա կատվեն կոշտն ըսիլիս.- Կատո՛ւ, կատո՛ւ, դու շատ օժավըս:

Կատուն բեղրը սրիս ա, իրսը թաթավ լվնալիս, օսսրը բիցրցրիս, էծեն ըսիս.- Հա, դու դոզս ըսիս՝ իս օժավմ: Ըշխարքըմը շատ օժավմ: Հալա մուկներեն հետե ալ գազանմ: Ամռնը ծառեն շվաքմնմ, ծմեռնն ալ տաք ուջաղեն կողքեն: Մոկնը փռնիլս իմ սանադես հետե ոչ միևը իմ խաթրեն կպըմ չի: Ուրեմը դու շատ դուզ ըս ըսիս, որ իս ըշխարքմը շատ օժավմ:

7 (98). ՉԱԼ ՀԱՎԵՆ ՆԱՂԼԸ

Իլալ ա, չի լալ, մի չալ հավ լալ: Էտ հավը մի օր պտռոց ըրիս տեղը մի ցորեն ա ճրիլիս: Ցորենը եր ա ունիս, վազ տալով տընիս վրծակեն կոշտը, ըսիլիս.- Էս ցորենը քի տամ, տար վարի:

- Իս կարի չըմ,- ըսիս ա վըրծակը:

Ցորենը տնիս ա կչկչան հավեն կոշտն, ըսիլիս.- Ցորենմ ճարած, քի տամ, տար վարի:

- Իս հո՞ւ, ցորեն վարիլը հո՞ւ,- ըսիս ա կչկչան հավը:

Ցորենը տնիս ա շանը թուլեն կոշտը, որ պարապ-սարապ խտորու լալ ինգած ծառեն շվաքմը, ըսիլիս.- Դու պարապս, ցորենը քի տամ, տար վարի:

- Թխած հաց ինի, կօտմ: Իս ըշաշպա՞ր չըմ, որ ցորեն վարմ,- ըսիս ա շան թուլան:

Ցորենը տնիս ա կատվեն կոշտըն, ըսիլիս.- Կատու, դու շատ ղոչաղս: Ցորենը տամ քի, տար վարի:

- Իս ղոչաղմ մոկնը, ծըտ փռնիլու հետե, ցորեն վարիլը իմ փեշակը չի,- ըսիս ա կատուն:

Դե լավ, որ ոչ միևտ ուզիս չեք ցորենը վարեք, իս կվարմ,- ըսիս ա չալ հավը, տնիս արտմը ցորենը վրիլիս:

Թոռ ա գյուլիս, ցորենը արտմը կնիչիս ա, բոյ քշիլիս, մծընալիս, հսկկիլիս, դըղնիս, վըսկու ըռանգ հասկրը կախ ըն ինգիլիս: Գյուլիս ա արտեն հնծիլեն վախտը:

- Արտը հասած ա, պետք ա հնծվի,- ըսիս ա չալ հավը վրծակեն:

- Իս հոնծ արող չըմ,- ըսիս ա վըրծակը:

- Իս ալ կարի չըմ,- ըսիս ա կչկչան հավը:

- Իս ալ չըմ կարի,- ըսիս ա շան թուլան:

- Իմ ալ փեշակը չի,- ըսիս ա կատուն:

- Դե լավ, որ ծեր բենը չի, իս կհնձըմ,- ըսիս ա չալ հավը, գինիս արտը հնձիս, բիրիս կալմը աշան ըրիս, քմիս՝ ցորենը դրմանեն նանե քմիս, ջոկցրիլիս, նի հանմ ջվալը, բիրիս տոն:

- Ցորենը պետք ա տաննք ջեղաց, աղանք, ալոր արընք,- ըսիս ա չալ հավը վրծակեն:

- Իս ցորենը ջեղաց տանող չըմ,- ըսիս ա վերծակը:

- Իս ալ չըմ կարի,- ըսիս ա կչկչան հավը:

- Իմ բենն ալ չի,- ըսիս ա շան թուլան:

- Իմ փեշակն ալ չի,- ըսիս ա կատուն:

- Լավ, իս կտանմ, կաղամ, կբերմ,- ըսիս ա չալ հավը, ցորնեն ջվալը շլկիս, տնիս ջեղաց, ըղալիս, ալուր ըրիս, շլկիս, բիրիս տոն:

- Ցորենը ըղացածմ՝ ալոր արած: Պետք ա խմոր հոնցվի, թորոն վառվի, հաց թխվի,- ըսիս ա չալ հավը վրծակեն:

- Հաց թխիլը իմ բենս չի,- ասսլ ա վըրծակը:

- Իս ալ չըմ կարի,- ասալ ա կչկչան հավը:

- Թող մըրափմ,- ասալ ա շան թուլան:

- Թող իմ վըրսը արմ,- ասսլ ա կատուն:

- Լավ, իս կարմ,- ասալ ա չալ հավը, բերալ տաշտը դիրալ տանը մաչտեղը, ալորը նի ածալ ալրամաղը, մաղալ, գենցալ ախպրին նետ ջուր բերալ, խմորը հոնցալ, փադ բերալ, նի տվալ թուրոնը, վառալ, խմորը բոլալ, գիրթանակը եր կալալ, բուլորը բեցալ, դիրալ, լվըշթխոն երե, թխալ թոռնեն պտերեն: Լավաշ հացեն խոնգահամ վըտը սաղ շենավը մին տարածվալ ա: Թազա լավաշեն վըտը հասալ ա վըրծակեն, կչկչան հավեն, շան թոլեն, կատվեն քթռնուն: Երն կացալ, վազ տալավ եկալ թոռնեն կողքեն վըտ կացալ:

- Էս թազա լավաշը հո՞ կօտի:

- Իս կօտմ,- օրախ-օրախ ասալ ա վըրծակը:

- Իս ալ կօտմ,- կչկչալավ ասալ ա կչկչան հավը:

- Իս ալ կօտմ,- ըռըխն բեցած ասալ ա թուլան:

- Իս ալ ըմ ուզիս,- պռոշնեն լուզիալավ ասալ ա կատուն:

- Չէ՛, աշխարքմ օրենք կա, իմ պարիկամներ: Խոսքը ըսիս ա. «Հու աշխադի, էն ալ կօտի»: Իս մանակ ըշխադածմ, իս ալ մանակ կօտըմ,- ըսիս ա չալ հավը, լավաշ հացը ուտիլիս:

8 (99). ԻՐԻՆՆԱԿՆ ՆԱ ԼՈՒՍԼՈՆԳԱՆ

Իրիննակեն նա Լուսլոնգին մարը մի օր կանչալ ա ըրկոքոց իրան կոշտը, ասալ.- Աշխարքս մքնեն մաչեն կորած ա, Իրիննակ, աղչիգս, դու շատ նախշոտս, համ ալ շատ լուս օնս: Դու գինի աշխարքեն ցիրեկավ լուս տոր: Լուսլոնգան ալ տղա յա, գինի քիշերը աշխարքեն լոս տա:

- Իս կարի չըմ գինի: Իս նախշոտ աղչիգմ, ըշխարքեն մարթիքը կյեշն իմ իրեսեն, իս կհմանչմ,- լեց հնիլավ ասալ ա Իրիննակը:

- Խնգարի չի, աղչիգս: Իս քի մի հափոռ ասըղ կտամ, հու կյեշի իրեսետ, դու ալ ընդոր աշկրը կծկոտս:

Լուսլոնգան ասալ ա.- Չէ, իս կարի չըմ մշտական քիշերը գինիլ, լոս տալ: Թող հըրթ դիրնք՝ մի օր ցիրկը իս գինմ, քիշերը Արևը, մի ցիրիկ ալ՝ Արևը, քիշերը՝ իս:

- Արևը աղչիգ ա, քիշերը կվախի: Իս ծնողմ, ծնողեն խոսքեն նանե խոխան իրավունք չօնի դուս գյո,- ասալ ա մարը:

Լուսլոնգան մորը ըսածեն ենքարկվա չի: Էս սհաքեն մարը խմոր լալ հունցիլիս, խմորոտ ձեռքավ մի սիլլա թխալ ա Լուսլոնգին իրեսեն... Լուսլոնգան սուս ա արալ, միշտ քիշերը դոս եկալ խմորոտ իրեսավ: Արևն ալ ասղնեն ձերքեն պահած ա, յիշիս ա իրան աշկըրը ծկոտիս ա:

9 (100). ԾԸՏԵՆ ՆԱՂԼԸ

Իլալ ա, իլա չի, մի ծըտ լալ: Էտ ծըտը մի օր իրան հնգրոնացը նհետ խաղ ըրիս տըղը վըննը փոշ ա նի մտիս:

Ծըտը թռիս ա, գյոլիս պառավ նանան կողքեն նստիս, լեց հնիլիս:

Պառավ նանան ըսիս ա.- Նախշոտ ծտիկ, լեց մա հնի: Իս խմորմ հոնցած, որ հաց թխըմ: Փադ չօնմ, որ թուրոնս վառմ: Վընտանտ փոշը կհանմ, թուրոնս կվառմ, դու ալ կգինս, քի հետե խաղ կարս:

Պառավ նանան ասղը բիրիս ա, ծըտեն վընեն փոշը հնիս, ծըտը թռիս ա, գնհիս:

Պառավ նանան ալ փոշավը թորոնը վռիս ա, հացը թխիս, ուլխնալիս:

Պատառ վախտ անց ա կնալիս, ծըտը ետ ա դըռնմ գյոլիս, պառավ նանան ըսիլիս.- Նանա ջան, նանա, իմ փոշը տոր:

Պառավ նանան ալ ըսիս ա.- Ծտիկ ջան, փոշտ ըշտեղե՞ տամ: Փոշավը թուրոնս վառածմ, հաց թխած:

Ծըտը ըսիս ա.- Դե մի հաց տոր ինձ:

Պառավ նանան բիրիս ա մի լավաշ հաց տալիս ծըտեն: Ծըտը լավաշը եր ա ունիս, թռիս, գինիս մի տեղ, տսնալիս՝ մի չոբան վըչխարնոն նանե կաթն ա կթած, դիրած կողքեն: Ուտիլիս չի:

Ծըտը ըսիս ա.- Չոբան պապա, կաթը կթածս, խե՞ չըս ուտիս:

Չոբանը ըսիս ա.- Ախըր հաց չօնմ:

Ծըտը իրան լավաշը տալիս ա չուբանեն, թռիս, գինիլիս: Չոբանն ալ լավաշը եր ա ունիս, կաթնավ ուտիս:

Պատառ վախտեն ետը ծըտն ետ ա դռնալիս, գյոլիս, չոբանեն ըսիս.- Չոբան պապա, իմ հացը տոր:

Չոբանը ըսիս ա.- Ծտիկ ջան, հացը կերել եմ:

Ծըտն ըսիս ա.- Դե իմ հացեն տեղը մի գյոռնը տոր, տանմ:

Չոբանը բիրիս ա մի գյոռնը տալիս ծըտեն, ծըտը եր ա ունիս, գինիս:

Ծըտը գինիս ա մի տըղ տսնալիս ա՝ հրսանեք կա, համա օրախեթոն չկա: Հրցրիս ա.- Պա խե՞ օրախեթուն չեք ըրիս:

- Մսացու չօննք, որ մորթնք, օտնք, խըմնք, քեփ արնք,- ըսիսն ծըտեն:

- Դե իմ գյոռնը մուրթեցեք, օրախոթեն, հրսանեք արեք,- ըսիս ա ծըտը, թռիս գինիս:

Պատառ վախտ անց ա կնալիս, ծըտը ետ ա դըռնմ, գյոլիս, ըսիս.- Իմ գյոռնը տվեցեք:

- Գյոռնը մորթալնք, հրսանեք արալ,- ըսիսն ծըտեն:

- Դե որ իտի ա, իմ գյոռանը տըղը հարսանը կտանմ,- ըսիս ա ծըտը, հարսանը եր ունիս, գինիս:

Ծըտը հարսանը նհետ գինիս ա, տսնալիս՝ մի ջահիլ աշըղ, մի պատա տակե նստած իրան հետե նայե սազը ծընգ-ծընգցրիլիս:

Ծըտը ըսիս ա.- Աշըղ ախպեր, որ էս հառհնը տամ քի, էտ սազը կտա՞ս ինձ:

- Կտամ,- ուլխացած ըսիս ա աշըղը:

Ծըտը հառհնը տալիս ա աշողեն, սազը իք ունիս, թռիս գինիս ծմակը, մի ծառու երե նստիս, սազը ըծիլիս, նհետն ալ երք ըսիս՝ ծլվլալավ.

Փոշը տվալմ, հացը իք կալալ,
Հացը տվալմ, գյոռնը իք կալալ,
Գյոռնը տվալմ, հառհնը իք կալալ,
Հառհնը տվալմ, սազը իք կալալ,
Սազը բերալմ, աշողմ դըռալ,
Ծընգլմ-մնգլմ, ծի՛վ-ծի՛վ,
Ծընգլմ-մնգլմ, ծի՛վ-ծի՛վ:

Ղորթ ա, ծըտեն սազը քյոհնացալ ա, կոտրվալ, գենցալ, համա դե ծըտը դեչանը ասօր ալ աշըղ դըռած, ծմակներմը նայե երք ըսիս՝ ծիվ-ծիվ, ծիվ-ծիվ:

10 (101). ՋՂԱՑՊԱՆԸ ԹԱՔԱՎԵՐ Ա ԴԸՌԱԼ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի խելոնք եթիմ տղա յա իլալ: Էտ տղան հացփոր մի հարուստ մարթու հետե ջղցպենեթոն լալ ըրիս: Պդահած ալ դան աղացողնեն ըտոր հետե հաց, ուտլեղենն լալ բիրիլիս: Հացը ուտիս լալ, հինչ իվիլցնալիս լալ, տընիս լալ ջղացեն եթկեն մի թամուզ տըղ վեր ըծիլիս:

Մի ծմեռնը շատ ձյոն ա եկալ, սար, ձոր, քար՝ օմեն հինչ ծածկալ, չոլու շատ հիյվնե քողծա ըստկոտալն: Մի աղվես տեղը սըվերած լալ՝ ջղացպանը հացեն մանցածը որ տնիս, վեր լալ ըծիս, աղվեսը գյոլիս, ուտիս լալ: Էտ պընդ ծմռանը աղվեսը կրեցալ ա ապրի:

Գյորոնքը որ բեցվալ ա, աղվեսը մարթու նման լուզվավ ա եկալ: Եկալ ա մի օր ջղցպանեն ասալ.- Այ ախպեր, որ դու էս պընդ ծմռանը ինձ պահալս, իս պետք ա գինմ թաքավերեն աղչիգը օգմ քի հետե:

Ջղացպանն ալ ասսլ ա.- Միեգ շենեն չորանը, նախրչին ինձ ղաչիգ չըն տալիս, իս շատ քյասիբմ, ինձ ոչ մի բեն չօնմ, հի՞նչ ա մանցալ թաքավերը ինձ աղչիգ տա:

Աղվեսն ասալ ա.- Դո խոսքը տոր, մանցած բենը թող ինձ երե: Ինձ շատ գիդ աղվես կասն:

Ասալ ա, հղե ինալ, գենցալ նստալ թաքավերեն էմարաթեն դըրբզին ըռշկին դիրած տափակ քարեն երե:

Գենցալն թաքավերեն ասալ.- Մի աղվես եկած ա, դրբզին ըռշկին նըստած:

Ասսլ ա.- Գենցեք, տըսեք հի՞նչ ա ուզիս:

Եկալն, ըղվեսեն նանե հրցրալ:

Աղվեսն ասսլ ա.- Իս օխտը ախպեր մարթկանց նոքյարմ: Միեգ էտ մարթինքը բուժունվիսն: Գյոշ չօնն, որ արծաթ փողը չափն, կես արընն: Եկածմ թաքավերեն արծաթ փող չափելու արծաթե գյոշը տանմ, որ արծաթ փողը կես արն օխտը տըղ:

Բերալն արծաթե գյոշը տվալ աղվեսեն, աղվեսը գյոշը տարալ ա: Էքսի օրը մի մըծ արծաթի փող ալ նիետը բերալ:

Հրցրալն.- Պա էս փողը հի՞նչ ա:

Աղվեսն ասալ ա.- էտ ալ գյոշեն հախն ա: Մի օր պա գյոշը բինիցրածընք:

Էրկու օրեն ետը աղվեսն ալլա գենցալ ա, թաքավերեն դրբզին ըռշկին քարեն երե ղաշանգ նստալ:

Եկալն, հրցրալ.- Հի՞նչս ուզիլիս:

Ասալ ա.- Ասօր ալ ուզիսընք վըսկե փողը կես արնք: Եկածմ թաքավերեն վըսկե գյուշը տանմ, վըսկե չփիլու:

Վըսկե գյոշը բիրիսն, տալիս աղվեսեն: Աղվեսը վըսկե գյոշը տնիս ա: Ալլա էքսի օրը մի մըծ, վըսկե փողուն նհետ բիրիլիս:

Անց ա կնալիս ալլա էրկու օր, աղվեսը գյոլիս ա, համան տեղը նստիլիս:

Գինիսն հրցրիս.- Աղա աղվես, մհեգ հի՞նչս ուզիլիս:

- Թաքավերեն նհետ խոսիլու փարզ խոսք օնմ խոսիլա,- ըսիս ա աղվեսը:

Գինիսն թաքավերեն խաբար տալիս, որ արծաթե, վըսկե գյոշ տանողբերող աղվեսը եկած ա, ըսիս ա՝ թաքավերեն նհետ ինծ շատ փարզ խոսելու բեն օնմ:

Թաքավերն ըսիս ա.- Գենցեք, բերեք:

Գյոլիսն ըղվեսեն տնիս թաքավերեն կոշտը:

Աղվեսն ըսիս ա.- Թաքավերը ապրած կենա, իս օխտը ախպեր մարթկանց նոքարնմ: Վեց ախպերը փսակված, տընվըրվածն, կուճի ախպերը ազափ ա: Հինչոր քի հետե ալ մի նոքար: Եկածմ ախչիգտ օզըմ իմ կուճի աղեն հետե:

Թաքավերը ուլխացած ըսիս ա.- Դու իմ աշկես երե տըղ օնս, աղվես աղա: Գինի տղեն բեր, տըսննք: Այտս կբարշնք:

Աղվեսը ուլխնալավ գյոլիս ա ջղացեն ըռշկին պար գյոլիս: Ջղացպանը հրցրիս ա.- Հի՞նչ կա, աղա աղվես:

Աղվեսն ըսիս ա.- Օմեն հինչ գյոլոխ ա եկած: Մհեգ պետք ա քի տանմ, թաքավերը տըսնի:

Ջղացպանը ըսիս ա.- Այ հորտ տոնը շեն, պա մի ծեռք շոր ալ չօնմ գինոլու, ինծ հինչո՞րս տնիս թաքավերեն կոշտը:

- Օմեն բեն արող շատ գիդ աղվեսը էտ ալ կարի, քո բենը չի: Դո եք, գիննք:

Աղվեսը ջղցպանեն տնիս ա թաքավերեն էմարաթեն նաեն պատառ հըռե տեղ պհիլիս: Ինքը գինիս թաքավերեն նոքարնոն ըսիս, որ.- Թաքավերեն փսացոն բիրիս տեղը հղեց ուժեղ թոռ ա նի կալալ, փսացոն

թրջիվալ ա, շորրը խարաբն դըռած: Միհ ալ ետ դըռնիլ, տոն գինիլ, շորրը փոխիլը, սագի չի: Մի ձեռք թաքավերական շոր, միհ ալ մի ձի տվեցեք, տանմ շորրը փոխի, նստի ձիհ, եր օնմ, բերմ:

Աղվեսը հինչոր ուզիս ա, տալիսն: Բիրիս ա ջղցպանեն սորին շորրը գեց տալիս, տնիլիս թաքավերեն պալատը:

Թաքավերը յիշիս ա փսացվեն բոյեն, բոսաթեն, թիգունքեն, իրեսեն, նիշոտթոնեն, ինքը իրան ըսիս ա. «էս տղան ինձ հետե ոչ մանակ փսացու ա սզիլիս: Իստի տղեն սզիլիս ալլա թաքավրեթոն»:

Թաքավերը հրաման ա տվալ՝ իրեն երգիրեն օմեն քաղաքմ, օմեն շենմ թաքավերեն խազնեն հաշիվեն օխտը օր, օխտը քիշեր հրսանեք արն, օտն, խմն, երքն պար գյոն, քեփ արն: Թաքավերեն հրամանը կդրիսն: Էմարաթմն ալ մըծ սեղանն բինալիս: Աղվեսն ալ հինչոր մըծ խնամե, բիրիսն թամադա յըն տալիս: Աշխարքավը միհ ուլխանալիս, հրսանեք ըրիս, ջզցապանեն նա թաքավերեն ըղչգանը փսկիլիս:

Հրսանեքը որ պրծնիլիս ա, աղվեսը գինիս, ջղցպանեն ըսիս ա.- Իմ պարիկամ, դո մի ծմեռնը ինձ հացս տվալ, պահալ, թողա չըս քողծա մըռնմ, իս ալ քի բերալ, թաքավերոթոնմ տվալ, բախտավորացրալ, փսակալ, ապրուստի, էմարաթե տար արալ: Դե, դո քու բախտավը ուլխացիր, իս ալ գինմ ծմակը, իմ հնգրոնոցը ճարմ, իմ նաղլս արմ, զարմանան:

Թաքավերեն փըսեն շատ ա ղանչաք ըրիս, որ մնա էմարաթմը՝ իրան քոշտեն: Աղվեսը խոսք չի տալիս, ըսիս ա.- Ինձ հետե մի օր ծմակմը ապրիլը հավասար ա հարոր տարվա էմարաթմ ըպրիլեն:

Ըսիս ա, գինիս...

11 (102). ՎԸՍԿԵ ՁՈՒՆ

Իլալ ա, իլա չի, մի պապ ա լալ, միհ ալ մի նանա: Ըտաց իլածը մի թոռնը լալ, միհ ալ մի չալ հավ:

Մի օր չալ հավը մի վըսկե ձու ա ածալ:

Պապոն վըսկե ձուն եր ա կալալ, տըսալ՝ ուլխացալ:

Նանան վըսկե ձուն եր ա կալալ, տըսալ՝ ուլխացալ:

Տըվալն թոռանը, վըր ուլխանա, վեր ա գիձալ ձուն, կոտրալ:

- Մղափոն, մղափոն,- ասսլ ա պապոն:

- Մղափոն, մղափոն,- ասսլ ա նանան:

Թոռնիկն ալ նստալ ա, լեց ինալ:

Չալ հավը կչկչալով ասալ ա.- Լել մա պապու: Լել մա նանա: Իս ալլա շատ ծու կածմ ձըզ հետե: Համա հինչքան որ շատ ծո ածըմ, ալ վըսկե ծու կարի չըմ ածի:

12 (103). ՄՂՐԱճԱՆՁՆ ՆԱ ՂՈՒՄՐԻՆ

Իլալ ա, իլա չի, մի մղրաճանջ ա իլալ: Մի օր մղրաճանջը թռալ ա գենցալ հանդեն ծաղեգնոն նանե մըղր հվաքի, բերի: Օրը տաք լալ, ծրավալ ա: Գենցալ ա մոտե գետեն նանե ջուր խմի: Քամեն փչալ ա, մղրաճանջը նի ա ինգալ գետը: Գետը մղրաճանջեն քշալ ա, տարալ:

Մի ղումրի ալ՝ էն ալ լալ ծարավ: Եկած լալ ջուր խմի: Տըսալ ա, որ գետը մղրաճանջեն տնիս ա, մի փադու չոփ եր ա կալալ, նի գիձալ գետը: Մղրաճանջը եռ ա ինալ չոփեն, գետեն նանե դոս եկալ: Շատ ուլխացալ ա: Ղումրոն շունուրակալոթուն ա ասալ՝ իրան գետեն նանե դուս բիրիլուն հետե, թռալ գենցալ:

Մի քանե օր անց ալլա մղրաճանջըն ա լալ հանդմը ծաղեգներից մըղր հվիքիս: Ղումրին ալ մի ծառու երե նստած իրան հետե երք լալ ըսիլիս: Մղրաճանջը մին ալ տըսալ ա մի վրսական թվանգը ձեռքեն թաքոն գյուլիս ա, որ ղումրոն սպանի: Մղրաճանջը տըսալ ա, որ ղումրին վըրսկանեն տսնալիս չի:

Վըրսականը էն լալ ուզեցալ ա թվանգը դոզալմիշ արի, որ տրըքցրի, ղումրոն վերի գիծի, մղրաճանջը հասալ ա, վըրսկանեն ձեռքը կծալ: Մղրաճանջեն կծիլուց վըրսկանեն ձեռքը ցվեցալ ա, ձեռքը թափ ա տվալ, թվանգեն լուլան ծոռ ա տրաքալ:

Թվանգեն սասեն վխեցած ղումրին թռալ ա, գենցալ մի օրեշ ծառու երե նստալ: Մղրաճանջը գենցալ ա ղումրուն կողքեն նստալ, ասալ.- Ղումրի բաջի, էն օրը դու ինծ ազադալս գետեն նանե, ասօր ալ իս թուղեցա չըմ վըրսականը քի ըսպանի:

ՋՐՈՒՅՑՆԵՐ

1 (104). ԿՈՒճԻ ԲԵՆԻՑ՝ ՄԵԾ ԲԵՆ

Իլալ ա, իլա չի, մի թազա հառհն ա իլալ: Էտ հառհնը մի օր ղզղանմը ջուր ա թքցրալ, տարալ գյումմը որ գյուլոխը լվանա: Ըտուց իլած, չիլած հեյվանն ալ էրկու էծ լալ, միհ ալ մի թաքյա: Հունչուր ա դըռնալիս, հառհնը ջուրը գյլխեն եր ըծիս տեղը, մի սասավ քամե ա բեց թողիս: Հմնչութունից դես-դեն ա յիշիս, տըսնալիս ա՝ մարթ չկա: Գյումմը լա ինքն ա, էրկու էծրը, միհ ալ թաքան:

Հառնը իծերեն ըսիս ա.- Ա էծր, իմ քամե թուղնիլուս հետե պատրունես, ըսկեսորես ասեք վեչ, ամոթ ա: Գյուլոխս լվանամ, պրծնմ, ձեզ յոնջա կտամ կօտեք:

Հառհնը գյոլոխը լվնալիս ա պրծնիս, յիշիս տըսնալիս էծրը սուս-փուս, գյլխնեն կախ գիցած նստածն: Համա դե թաքան արուճ ա ըրիս, գյուլոխը ուրուրիս, մրոքը թափ տալիս:

Հառհնը ինդի ա հազրի գյոլիս, որ թաքան ըսիս ա. «Իս համաձայնվըմ չըմ, պետք ա քու պտրունու խաբար տամ»: Հառհնը նստիս ա լեց ինիս, թաքեն ղանչաք ըրիս, որ մի բեն լալ, պդահալ ա: Ասի վեչ, իրան խայտառակ անի, ամոթ ա: Իրան շատ յոնջա կտա: Դե թաքեն հինչ, որ հառհնը լեց ա ինիս, ղանչաք ըրիս: Գյուլոխը լա թփհրիս ա, արուճ ըրիս:

Հարսանը մարթը տըսնալիս ա, որ հառհնը ետ ա ինգյալ եկա չի, նիգյարան ա մնալիս: Եր ա կնալիս գինիս գյումը, տըսնալիս՝ հառհնը նայե նստած լեց ինիս: Զարմացած հրցնիս ա, թա.- Հի՞նչ ա պադահած, խե՞ յըս լեց ինիս:

Հառհնը գյլխեն եկածը նաղլ ա ըրիս, թա էծրը համաձայնն տնեցուց ասն վեչ: Համա թաքան համաձայն չի:

Հարսանը մարթը կզնվիս ա, մուտունալիս մի քանե բուռնացե թխիս թիքին գյլխեն: Բուռնացոն ցավից թաքան ալլա գյուլոխը թփըհրիս ա, մրոքը տմբցրիլիս:

Հառհնը ավելի բեցուր սասավ ա ըսկսիս լեց ինիլը, համ ալ ասիլիս.- Տըս, թաքան խոսկեն տարև ա: Ալլա գյուլոխը թփհրիս ա, մրոքը տմբտմբցրիլիս, յանի ըսլականմ:

Հարսանը մարթը չարանմ ա, դենակը ջուբեն նանե դուս ունիս, խըղճ թաքեն մուրթալիս:

Հարսանը պատրուն նա ըսկեսուրը տսնալիսն, որ ջահիլնեն գենցալն գյումը, ետն ինգյալ: Նիգյարանն մնալիս: Երն կնալիս գինիս գյումը, տըսնալիս, թաքան մորթածն տեղը վեր գիծած, հառհնն ալ նստած լելիս ա:

Հրցրիսն.- Պա էս հի՞նչ խաբեր ա:

Տղան հարսանը գյուլոխը եկած օյնը մինի-մինի նաղլ ա ըրիս: Տղեն հարը ըսիս ա.- Այ ծեր տոնը շինվի, պա գիդալի՞ս չեք, որ թաքան մտղացու լալ: Դե բեն ա, որ իստի ա դըռած, իս թիքին մորթեն հանմ, մըսը կտորմ: Քու մարթ նա հառհնը սուփրա բենն, դու ալ գինի պարիկամնոն, հրվներեն, շենեն քյոխվեն նա դերեն խաբեր արի, թող հվաքվն գյոն՝ մատաղ օտըն:

Շինացեք, օմեն որ հվքվիսն գյոլիս, դերը ըսիս ա.- Քանե որ ասեք վեչ թա մատաղը խե գիրագի օրը չեք մորթաց՝ հունչուր որ կարքն ա, ասօր օրփաթ ա՝ օրփաթ եք մորթաց, իս թուլ չըմ տա ոչ մինը մատաղեն նանե օտի, օրինի չըմ:

Հինչ թահր հառհննա ինիս ըշխարքեն թուլի-միամիտ հառհնը, ինդի ալ իրան պատրոնն ա ինիս: Կրիս չի մի սոտ սազ անի ասի: Հինչ որ դըռած ա՝ ինդի ալ դոզ-բա-դոզ նաղլ ա ըրիս, ըսիլիս.- Ա դեր, այ հրվանի, ասօր քշանաց հառհնը պատառ ջուր տքցրիլիս ա, տընիս գյումումը որ գյլոխը լվանա: Հունչուր ա դըռնալիս, բեխաբար հառհնը մի քամե յա բեց թուղիս: Մտղացու թաքան լսիս ա, ծծղիլիս, թա՝ քու պատրունու ըսլականմ: Հառհնը հինչքան ղանչաք ա ըրիս, լեցնիս որ ասի վեչ, թաքան համաձայնվմ չի: Այտս տղաս ալ փռնիս ա թաքան մուրթիլիս: Բենը իստի ա դըռած:

Տեղսն ասած, որ «կուճի բենեն նանե մըծ բեն դուս կգյո»: Հառհնը ուզիս չի լալ, որ պատըրոնն նա ըսկեսուրը գիդան, այտս սաղ շենեն մախլուղնն գիդացալ, ասալ, ծծղեցալ, ըշխարքովս մին տարածալ, դունյից բեխաբար հարսանը թողալ հմչիլիս:

2 (105). ԽՆՁՈՐԸ ԳՅԱՆՔ Ա ՏՎԱԼ

Իլալ ա, իլա չի, ըսիսն՝ մի շատ խելունք մարթ լալ: Մըծ տան տար լալ, իրան դովրըբարմը մըծ հարգանք, պադև լալ: Համ ալ շատ խոխատար լալ:

Մի ուլուզեթուն էտ մարթեն ճարալ ա: Դե գյանքը քաղցր ա ինիս: Ալ հաքիմ չի մանցալ, որ կոշտը գինի վեչ: Ալ ճար չի մանցալ, որ խմի վեչ: Ուլուզեթունը ձեռ չի քաշալ՝ խըղճ մարթեն հիլիվրցրալ, շինալ ա մի չոփ: Իլած-չիլածեն նանե ալ ոչ մի բեն մանցալ չի: Մանցալ ա օրվա հացեն կարոտ, օմեն հինչից հասրաթ:

Մի օր էտ մարթը լսիս ա, որ երգիրեն թաքավերեն մի շատ գիդ հաքիմ օնի, որ մըռած մարթեն օմբիր ա տալիս: էտ մարթը գինիս ա թաքավերեն նանե ուռուսխաթ ա եր ունիս, գինիս թաքավերական հաքիմեն կոշտը:

Հաքիմը էտ մարթեն հարցուփորձ ա ըրիս, դեսեն-դենեն յիշիս, ըսիլիս.- էտ ուլուզութունեն ըշխարքմը ոչ ճար կա, ոչ ալ փրկութուն: էտ ըլուզթունեն նանե փրկվիլը մանակ օլըմն ա:

Թաքավերեն հաքիմը որ իտի ա ըսիս, էտ մարթը օմեն հինչից ումիդը կտրած. ալ տոն ալ չի գինիս: Նի ա ինգիս մի հղե, գյլոխ եր ունիս, գինիս:

Շատ ա գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա: Հսնիս ա մի սառնը ըխպիրու: Նստիս ա ըխպիրին կողքեն, իրիսը լվնալիս, պատառ ջուր խմիս, դինջինալիս: Յիշիս ա տըսնալիս հղցին ներքե թիրափմը, ըխպիրին ջրին երե մի չտըսնված խնձորոտ բաղ-բաղար կա: Օմեն ծառին ալ ինդի բարն փռնած, որ օմեն մի ճեղանը մի քանե խիչակն դեմ տված, որ ծառերեն ճղները ծանր բարից կուտրոտն վեչ:

Լա էն լալ, մարթը ուզիս ա եր կանա գինի, մին ալ էն ա տըսնալիս բաղեն նետ մի հիլիվր մարթ ա դուս եկալ, մի քանե խնձոր ձեռքեն: Հիլվրը խնձորնեն տալիս ա ըխպրին կողքեն նստած մարթեն: Տեղեն ադաթը գյորա ըսկսիս հարցը-փորցը, թա՝ հո՞ւվս, հի՞նչ մարթս, հի՞նչ տեղս գինիս, հի՞նչ ցավ ու դարդ օնս:

էտ մարթը իրան դարդրը մինի-մինի նաղլ ա ըրիս հիլվերեն:

Հիլիվրը ըսիս ա.- Որ իտի ա, ինձ ալ ըշխարքմս ոչ մի մարթ չօնմ: Իմ ալ իլած-չիլածս էն խնձորոտ բաղն ա, եք, դու տեղես դենը գինիլ մա: Մնա իմ կուշտեն, Աստուծեն տված էս խնձորեն բարեն նանե կօտնք, ծախածն ալ կծախնք մըզ հետե ապրուստ կստեղծնք: Իս հիլիվրմ, իս շուդ կմըռնմ, դու ինձ կթաղս: Դու ալուզ մարթս, թա դու կմըռնս, իս քի կթաղմ:

Ալուզ մարթը պատառ խիյալ-խիյալ ա ըրիս, համաձայնվում, մնալիս հիլվերեն կուշտեն:

Ամեն օր հիլիվր նա ալուզ մարթը մի ճվարան խնձոր քնդիսն լալ բիրիս, դիրիս ընպիրին կողքեն, նստիս, իրանց հետե սոհբար ըրիս, հողքը եկուղ-գինցողուն երե խնձոր ծխիլիս, իրաց օրը անց կցրիլիս: Մռանանք վեչ ասնք, որ ալուզ մարթը օմեն օր չտըսնված խնձոր լալ ուտիս:

Մի վախտ անց ա կնալիս, ալուզ մարթը տսնալիս ա օրբաօր ցավրը թիթինվալիս ա, օժը գյոլիս ա տեղը, դիբի լավն ա գինիս, կարքին ուտիս ա, ջահիլ վախտեն նման քոն ա ինիս:

Բաղեն խնձորը որ պրծնիս ա, մի օր ալուզ մարթը բաղվանչուն ըսիս ա.- Պարիկամս, քու քուշտեն մնալու իմ վահդան թմամալ ա: Միեգ իս ալ էն առաջվա ալուզը չըմ: Միեգ ոչ մի ցավ չօնմ: Դե քի կարի չըմ մռանալ: Ալլա կգյոմ: Իս կնգատար, խուխատար մարթմ: Գինիսմ իմ տոնը, խոխենցը տրեթուն արմ: Միեգ ընդուք ալ նիգյարան կնըն: Կասն՝ տըսնս էս մարթը հի՞նչ տեղ ա գենցալ, հի՞նչ ա դըռալ:

Էտ մարթը տոն գինիս չի: Ամենից առաչ գինիս ա թաքավերեն կոշտը, ըսիլիս.- Թաքավերը ապրած կենա, խնթրիսմ քու գյլխավր հաքիմեն կանչս, գյո տեղս, ինձ արզ օնմ:

Թաքավերը հաքիմեն կնչիս ա բիրիս: Էտ մարթը մին-մին իրան գյլխավը անցածը նաղլ ա ըրիս, վերչմը ըսիլիս.- Թաքավերը ապրած կենա, որ իմ ցավեն դարման լալ, կարուղմ լալ պիժիշկվիլ, առողջանա, մարթ դըռնիլ, քու շատ գիդ հաքիմը խե՞ յա ինձ ասալ, որ՝ քու ցավեն ճար-դարման կավչնի: Քու դարմանը մահտ ա, որ տանի, պրծնս:

Թաքավերը եշալ ա հաքիմեն, ասալ.- Մարթեն խոսքեն պատասխան տոր:

Հաքիմն ասալ ա.- Թաքավերը ապրած կենա, էս մարթեն ճարը մի բաղու խընձոր լալ: Իրան խնձորու բաղ չի լալ: Քյասիբ լալ: Կարի չի լալ խնձորու բաղ օնի, որ մի քանե ամես խնձոր օտի, փրկվի: Ըստուր փրկողը մի բաղու խնձոր ա իլած:

3 (106). ՎԽԻՍՄ ԻՆՁ ԱԼ ՏԱՆՆ

Կասի՝ իլալ ա, իլա չի, մի շենացե քյասիբ մարթ լալ: Տարուն աշունք վախտը լալ: Ապրիլու ապրուստ չի լալ: Իրան իլածը մի էշ լալ, մին ալ մի էծ:

Մի օր բերալ ա էծեն վեզը մի զնգյակ կապալ: Էծն ալ կապալ էշեն հագվեն երե, ինքն ալ եռ ինալ էշեն, որ էծը տանի քաղաք, ծախի, մի քանի օրվա ուտիլու հաց օնի, բերի: Զնգյակը էծեն վիզավը կապած լալ, որ զնգլակեն սասը լսի, գիդա որ էծը էշեն հետեն գյուլիս ա:

Դու մա ասի, իրք գյող էտ մարթեն հիտիվիսն:

Դե միամիտ մարթ ա ինիս, նստիս ա էշեն, մտքոմը՝ առուտոր ըրիլավ գինիս: Շատ ա գինիս, թա խրեգ, Աստուծ գիդա, մին ալ մի մարթ ա գյուլիս առաչը, ըսիլիս.- Այ մարթ, դու պըլս, թե խելուկք: Զանգյակը էշեն վիզինն կպի՞ս, թա հագվեն:

Էտ մարթը ետ ա յիշիս, տսնալիս էծը՝ կավչնի: Զնգյակը նայե կապած էշեն հագվեն: Շինացեն մնալիս ա խյալ ըրիլիս: Դու մա ասի գյուղերեն մինը ետնաց եկած ա զնգլակը էծեն վիզեն նանե ետ արած, կապած իշեն հագվեն, որ զնգնգա, շինացեն գիդա, էծը էշեն հետեն գինիս ա: Ինքը էծեն տարած ա:

Ըրկումինջին գյողը տըսնալիս ա շինացեն մանցալ ա մաթալ, հրցրիս ա.- Քու էծը հինչուր էծ լալ՝ ռանգը, ասի:

- Սիպտակ մզավր՝ ջեյրան էծ լալ,- խղճացած սասավ ըսիս ա շինացե մարթը:

- Պա քո հոր տոնը շինվի, քյասիբ մարթ, իս էսկմե հղոքը գյուլիս տեղը տըսալմ, որ մի մարթ քու ասած էծը նի գիծած առաչը, գինս լալ: Ալ ետ գինիլու բեն չի, էշավ գինիս՝ կարի չըս հասնի: Մեխկս, իս էշը կպահմ: Դու վազ տոր գինի էծը բեր:

Շինացեն հավատ ա ըրիս սուտախոս մարթեն: Էշը թուղիս ա, նշանց տված հղոքը վազտալավ գինիլիս: Գինիս ա գինիս, ոչ մարթ ա տըսնալիս, ոչ ալ էծ: Ումուդը կտրած ետ ա դռնալիս, գյուլիս տըսնալիս՝ ոչ մարթ կա, ոչ ալ էշ:

Ճարը կտրած ետ ա դըռնալիս դիբի տոն:

Հղեց տըսնալիս ա մի մարթ նայե հղցին կողքեն մի վըրու երե նստած լեց ա ինիս, ծույները թկիլիս: Դու մա ասիլ, էտ ալ իրքմինջի գյողն ա:

Էշն նա էծը կուրցրած մարթը մուտուռնալիս ա, հրցրիս, թա հի՞նչ ա պդահած, որ լեց-շիվան ա ըրիս:

Գյողը ըսիս ա.- Հըռե տեղե նհետ եկուղ մարթմ: Օրավածմ լալ: Կռացալմ տըսնամ՝ էս վըրմը ջուր կինի, որ խմըմ: Մատանս անգին մտանեն դուս ա ինգյալ, նի ինգյալ վըրեն մաչը: Իս կրիս չըմ նի մտնըմ, դուս օնմ: Դու որ նի մտնս, մտանես հանս, քի շատ փող կտամ:

Շինացեն իրան մաչեն ուլխնալիս ա: Թա՝ էս լա Աստվածանից լալ, որ ինձ պադահալ ա, ղորթ ա, էշս նա էծս կուրցըրալմ, համա դե տեղս բախտս կբերի:

Շորրը հնիս ա նի մտիս վըրը: Դես ա շոռ գյոլիս, դեն ա շոռ գյոլիս, մտանեն ճրիս չի: Դուս ա գյոլիս տսնալիս՝ վըրեն կողքեն ոչ շորրը կա, ոչ ալ մարթ:

Յիշիս ա տըսնալիս կողքեն մի բերակ ճպատ կա վեր ինգյած: Ճպատը եր ա ունիս, չորք թիրափավը բուլդի-բուլդի ըրիլավ գինիս դիբի տոն:

Հղեց մի մարթ ա դուս գյոլիս առաչը, զարմացած հրցրիլիս.- Այ մարթ, էտ խե՞ յըս տկյվազի: Էտ ճպատը խե՞ յըս բուլդի-բուլդի ըրիլիս:

- Հինչ որ ինձ իլալ ա, գյուղացալն տարալ: Միեգ վխիսմ, որ ինձ ալ տանն:

4 (107). ԳԵՆՑԱԼ Ա, ԻՆԱ ՉԻ ԱՍԻ

Նաղլն ըրիս, որ մի մըծ քաղաքու առուտորեն մեյդանեն մի քյունջում, մի մարթ դուքյան լալ բեցած, փալան կրիլիս: Օրվա աշխադած փողը ըրակունը հսաբ լալ ըրիս, էքսի օրվա տան ծախսը առանձնացրիլիս, մնացած փողը վըսկե փող լալ ըրիս: Էշու մի քյոհնա փալան դիրած լալ պատեն թիրափմը, մաշկը դայաղ ըրիլիս: Փլանեն մի կողքը ճղած լալ, թաքուն մի տեղ սարքած: Վըսկե արած փողը նի լալ գիծիս մի քիսու մաչ, դիրիս փլանեն ծկոռումը: Փալանդուզը շատ հըռեն լալ խյալ ըրիս: Աշխադած վըսկեն փըլանեն ծկոռումը թաքուն հվքիս, պիհս լալ ետե օրաց հետե, որ օմեն մարթու պետք ա:

Քաղաքմը սանադքյար մարթկանց մաչեն ժողովրթական սովորոթուն կար: Օմեն մի մարթ, իրան դուքյանմը կես օրվա հացն ուտիլեն ետը հվքիսն լալ մի չայչիխանա: Մի սհաթ քիմի նստիսն լալ դինջինալիս, մի ըստաքան չայ խմիս, մինը-մինեն նանե օրվա առուտորեն, թազա խաբարեն, եկուղ-գինցողուն մասեն մի տեղեկություն գիդալիս, այտս ցրվիս, օմեն մինը գինիս իրան դուքանը, իրան բենեն:

Փալանդուզեն դուքյանը տանը մոտեկ ա լալ: Ամեն օր, կեսօրեն կնեգը ճաշ լալ իփիս, հաց սրքիս, բիրիս դուքյանը ուստեն հետե:

Մի կեսօրե ալ կնեգը հացը բիրիս ա, ուստան հացը ուտիս ա, կնգանը ըսիս.- Ա կնեգ, դու նստի դուքյանմը, իս գինմ հնգրոնացս նհետ պատառ սոհբաթ արմ, գյոմ:

Ուստան գինիս ա: Պատառ վախտ անց ա կնալիս, մի հիլիվր մարթ ա գյոլիս, մի անփալան էշու երե նստած: Հիլիվրը էշեն նանե վեր ա գյոլիս,

նի մտիս դուքյանը, կարած-հագր փալաննան յիշիս, ուստեն կնգանը ըսիլիս.- Քյասիբ մարթմ: էշը նորմ կալած, փալան չօնի: Ինձ ալ փող չօնմ, թազա փալան օնմ: Իլածս էրկու ղռան արծաթ ա: Տոմ քի, էս քյոհնա փալանը տանմ:

Ուստեն կնեգը բարշիս ա: էրկու ղռան արծաթ փողը եր ա ունիս: Հիլիվրն ալ ուլխացած, փալանը դիրիս ա էշեն երե, եռ ինիս, թուղիս, գինիլիս:

Ուստան հնգրոնացը քուշտեն նանե գյուլիս ա: Կնեգը օրախ-օրախ փողը տալիս ա, մարթեն ըսիլիս, որ քյոհնա փալանը ծախած ա: Փլանեն արժեքն ա:

Ուստան որ տսնալիս ա քյոհնա փալանը կավեչնի, տարածն, գյլխեն խաչը թռիս ա: Դես ա վազ տալիս, դեն ա վազ տալիս: Ըստոր, ընդուր նանե ա հրցրիս, ոչ մինը խաբեր չի տալիս: Հիլվր մարթը, իրան էշեն նետտ մի թիքա եղուտ հաց ա դռնալիս, կուրչիլիս:

Ուստան գյուլիս ա կնգան երե կզնվիս, թա էսքան թազզա փալաննեն թողած խե՞ յա քյոհնա փալանը ծախած:

Կնեգն ալ բենեն բեխաբար ըսիս ա.- Ա մարթ, դե հի՞նչ արմ, տալիս չըմ լալ: Հիլիվր մարթ լալ, շատ ա ղանչաք արալ: Ասսլ ա հըռե շինացե յըմ: Ուստան կարողա ետ ինգի, օրը կմքնի, կմնամ հղեց: Դե իմ ալ մեղքս ա եկալ, տվալմ իրան: Համ ալ դե հի՞նչ ա պդահած, որ իտի ձըռքը-վընննս ինգյած: Տարածը մի քյոհնա փալան լալ: էրկու ղռան արծաթ ա տված: Դու ալ էն քյոհնա, թոզում կորած փլանեն տեղը մի թազա փալան դիրի, թեհնը տոր: Հի՞նչ ա, դիմիշ չը՞ս իրիս:

Ուստան երկար յիշիս ա, յիշիս բենից բեխաբար կնգանը, ըսիլիս.- է՝, ա կնեգ, տարալն, կարի չըմ ասի:

Վախտ ա, անց ա կնալիս: Տարե ա, շոռ ա գյուլիս, դըռնալիս աշունք: Ալլա մի կեսօր ուստեն կնեգը հաց ա սրքիս բիրիս դուքյանը: Ուստան հացն ուտիս ա, կնգանը ըսիս.- Դու նստի դուքյանմը, իս մի սհաթ գինմ հնգրոնացս կոշտը սոհբաթ ըրիլու:

Ուստան գինիս ա: Պատառ վախտ հալա չանցած, ուստեն կնեգը տըսնալիս ա քյոհնա փալանը տանուղ հիլիվրը եկալ ա էշեն երե նստած: էշեն նանե վեր ա գյուլիս, քյոհնա փալանը բիրիս դիրիլիս համան տեղը, մի հենգ ղռնանուց արծաթ փող տալիս ուստեն կնգանը, մի թազա փալան տընիս դիրիլիս էշեն երե, ետ դըռնալիս ուստեն կնգանը ըսիս.- Շատ շնորհակալմ ձեր լավութունեն հետե: Քյոհնա փալանը մի տարե իմ բենս յոլա յա տարալ: Աս տարե ինձ հետե հաջող լալ: Ղալին ապրանքմ ծա-

խած: Չեռքս տաք ա: Քյոհնա փալանը մնա ծեզ, թազա փալանը տարալմ,- ըսիս ա հիլիվրը, նստիլիս էշեն երե, գինիլիս:

Ուստան սոհբաթեն տեղեն նհետ գյոլիս ա: Կնեգը հենգ ղռնանոց արծաթ փողը տալիս ա մարթեն ըսիլիս.- Անցած տարվա հիլիվրը եկալ ա: Քյոհնա փալանը բերալ դիրալ իրան տեղը: Հենգ ղռանը տվալ, մի թազա փալան դիրալ էշեն երե, ետ դըռալ գենցալ:

Ուստան օմեն հինչ մռացած ծերքը տնիս ա քյոհնա փլանեն ճեղքը, տսնալիս ինքը հինչուր վըսկուն քիսան դիրած ա փլանեն մաչեն, ինդի ալ նայե մնալիս:

Ուստան ալլա դես ու դեն վազ ա տալիս, որ հիլիվրեն ճարի, իրան կորուստը ճրիլու հետե հիլիվերեն մի լավութուն արի, հիլիվրը գենցած, հռացած ա ինիս, ճրիս չի:

Բենից բեխաբար կնեգը ալլա հրցրիս ա.- Այ մարթ, խե՞ յըս ծրքը-վընը ինգյած: Հի՞նչ ա պդահած: Սխալ բեն չըմ արած:

Ուստան ալլա յիշիս ա կնգանը, յիշիս, օրախ-օրախ ըսիլիս.- Այ կնեգ... «Եկած ա, կարի չըմ ասի»:

5 (108). ՄԻ ՀԱՓՈՒՌ, ԿԵՍ ՀԱՓՈՒՌ

Քյոհնա ըյամեն որ ըշխրքմը հալա միամըտ մարթինք շատն լալ, կնանենքն ալ ըսկսածն լալ բազադանալ:

Կասի՝ մի խըղճ մարթու կնեգ ըշկըդիրած մարթ ա ունիլիս:

Էտ կնեգը մի գիրագի օր ըշկդիրածեն խոսք ա ինիս տված, որ գյո տոն: Հակառակու նման էտ օրն ալ իրան մարթը բեն չի գինիս, մնալիս ա տուն:

Մարթեն բեն դիրիլու հետե կնեգը ըսիս ա.- Այ մարթ, աղ չօննք: Երկաց գինի պատառ աղ ճարի բեր, քի հետե բիրինձավ փլավ իփմ:

Մարթը ուլխացած ասալ ա.- Աղը հինչք՞ան ինի:

Կնեգը ասալ ա.- Մի հափուռ, կես հափուռ:

Մտքեն նանե, որ դուս վեչ գյո, թա կնեգը հինչքան աղ ա օզած, էտ դունյադան բեխաբար մարթը եր ա կնալիս գինիս, ըսիլավ. «Մի հափուռ, կես հափուռ, մի հափուռ, կես հափուռ»:

Գինիս ա տըսնալիս՝ մի պատա տակե մի հինգ-վեց հուգի կոչ եկած հինչ որ մի բենն ըրիլիս: Դու մի ասիլ, գյող մարթինքն: Թաքավերեն խազինան կտրածն, եկած նստած փողրնն կես ըրիս: Էտ մարթը գինիս ա, կուղքուռնոն վըտ կնալիս, ըսիլիս՝ «Մի հափուռ, կես հափուռ...»:

Գյուղերեն միևը ինդի ա գիդալիս՝ եկած ա փող ա ուզիս: Եր ա կնալիս գյուլոխը թկիս, ըսիս.- Այ շան տղա, հալա գիդալիս չընք մըզ մարթա մի հափուռ կհասնի, հասնի չի, դու եկածս, ղըլմղալտ դիրած: Ասի՝ «Աստուծ բարաքյաթ տա: Աստուծ բարաքյաթ տա»:

Էտ խեղճ մարթը «Մի հափուռ, կես հափուռ» ասիլը մռնալիս ա, «Աստուծ բարաքյաթ տա» ըսիլավ գինիլիս:

Գինիս ա մի տեղ, տըսնալիս շատ մախլուղն հվաքված: Դու մի ասի, մարթ ա մըռած: Էտ քյասիբն ալ վըտ ա կնալիս հա ըսիս՝ «Աստուծ բարաքյաթ տա...»: Մըռլատարը լսիս ա, գյոլիս գյուլոխը թկիս, ըսիլիս.- Շան տղա, միևը բո՞լ չի, ըսիսս՝ «Աստուծ բարաքյաթ տա»: Ասի՝ «Ողորմի իրան, ողորմի իրան», թող գինի:

Խըղճ մարթը աղը մռացած, «ողորմի իրան, ողորմի իրան» ըսիլավ, գինիս ա տըսնալիս... ալլա մի տեղ շատ մախլուղ ա հվաքված: Դու մի ասիլ, տեղտ ալ հրսանեգ ա: Ուտիսն, խմիս, քեփ ըրիս: Էտ մարթը գինիս ա վըտ կնալիս, ըսիլիս՝ «Ողորմի իրան, ողորմի իրան...»:

Մի հարփած մարթ լսիս ա, եր ա կնալիս քյասիբ մարթեն գյուլոխը թկիս, ըսիլիս.- Շան տղա, տեղս մռլատոն չի, որ վըտս կացած ըսիլիս՝ «Ողորմի իրան, ողորմի իրան»: Հրսանենք ա, ասի՝ «Տաշի, տուշի», պար եք, փափաղտ զախ տոր գյովդա, փռնի, ուլխաց:

Քյասիբ մարթը իտի ալ ըրիս ա: Բաղ-բաղար ա ինիս, տալիս ա էտ բղերեն ղաթեն հղոքը, փափաղը գյովդա զախ տալիս, փռնիս, «տաշի տուշի» ըսիլավ գինիլիս:

Միև ալ մի բաղու չփրտակու նհետ մի վըրսական մարթ ա դուս գյոլիս, թվանգը ձեռքեն: Հսնիս ա խըղճ մարթեն թկիլիս:

- Իմ մեղքը հինչո՞մ ա, որ ինձ թկիսս,- ըսիս ա քյասիբ մարթը զարմացած:

- Չոռ, զահրմար ա,- ըսիս ա վըրսականը,- սաղ օրը մըռալմ տեղս նստիլավ, որ մի ղուշ գյո, ծառեն երե նստի, երի արմ, վեր գիծմ, դու եկածս «տաշի, տուշիս» դիրած, ղուշուրը թռցրիլիս:

- Պա հի՞նչ արմ,- վխվխիլավ ըսիս ա կնգանը հետե աղու գենցած մարթը:

- Չոռ ու զահրումար արի,- ըսիս ա վըրսականը,- փափաղտ դիրի կուռնտակետ, կուզկոզ ըրիլավ թողի, գինի, կորել:

Հակառակը, հակառակ ա ինիս: Թաքավերեն վազիրնեն եկածն ինիս տեղարքը շոռ գյոլիս, որ խազինան կտրող գյուղերեն ճարն: Տըսնալիսն՝ ըհ՛ը, էն ա մի մարթ, փափաղը կուռնտակեն դիրած, կուզկոզ ըրիլավ, նայե

գինիս: Ըսիսն՝ կա, չկա լա խազինակտըրող գյողը էս ա: Փռնիսն, տնիլիս թաքավերեն կոշտը: Թաքավերը հրցրիս ա, թա՝ դու հի՞նչ մարթս:

Քյասիբ մարթը օրվա գյլխեն եկածը նաղլ ա ըրիս, թա՝ հինչուր մի հափուռ աղ կընգանը հետե ճրիլու հետե, քանե-քանե տեղ փորձանքի ա եկած, թակ կերած: Օմեն հինչ թաքավերեն հետե բալլազա դըռնալիս: Բիրիս ա մի պարկ աղ ա տալիս քյասիբ խըղճ մարթեն, ըսիլիս, որ.- Ալ ըստուր դենը կնգանը խոսքավը տանը նանե դուս վեչ գյոս, գյուլոխտ անտեղի թակիլ տաս, կնեգյտ ալ տանը ալխայիս օյնաշմիշ ինի:

6 (109). ՄԻ ԿՈԼԱ ՋՈՒՐԸ

Կասի՝ քյոհնա դովրումը մի թաքավեր լալ: Հորը մռնիլեն ետը, որ ինքը թաքավեր ա դըռնալ, ժողովուրթեն երե շատ մըծ հարկ-տուրք ա դիրալ, թաքավերեթոնը հրուստցրալ՝ ժողովըրթեն քյասիբցրալ:

Էտ թաքավերը որ հիլիվերալ ա, մի օր նստալ ա, խիյալ արալ, թա հարկավեր ա գիդամ, իս իմ հոր երը, ժողովուրթեն երե էսքան-էսքան հարկ-տուրքը որ շտցրալմ, մհեգ ժողովրթը հի՞նչ աշկավն յիշիս ինծ:

Խիյալ ա արալ, խիյալ, մընն ա ինգյալ, որ ինքը թաքավեր ա նստալ, միետ մի շենմ ղոնաղ ա օնգյալ, էտ շինացեք օմեն մարթա մի կոլա գինի երն կալալ գենցալ իրան տեսութուն: Հարկավեր ա ալլա գինիլ էտ շենը, տըսնի շինացեք ալլա ինդի օրախ, կուլենեն գինավ լցրած կգյո՞ն շինիհավան իրան տեսութուն, թա՝ չէ:

Իստի որոշիս ա ագահ թաքավերը, եր կնալիս, իրան նազր-վազիրներեն նհետ գինիս համան շենը:

Էտ շենեն քյոխվան ալ շատ գիդ ա ինիս: Թաքավերեն շատ հարգանքով ընթունիս ա: Իրան իլածը գյորա թադարիք տըսնալիս, քեփ սրքիլիս: Համա գիզիրեն ըսիս ա.- Գինի օմեն շինացոց ալ իմաց տոր, թող գյոն թաքավերեն տեսութունը: Համ ալ ումուննուց մին-մինի կասս, հուր որ գինի օնի, թող կոլան ջուր լցնի բերի: Հուր որ ալ չի, թող ալլա կոլան ջուր լցնի բերի: Մի խոսքավ գինի բերուղ ինի վեչ:

Դե որ զուռնա-դհոլեն սասը եր ա ինիլիս, շինացեք բենեն բեխաբար, վըխվխիլով երն կնալիս, մարթա մի կոլա ջուր եր ունիս, գինիս քյուխվեն տոնը՝ թաքավերեն տեսութուն:

Քյոխվեն տանն ալ մի մըծ դերտակ կարասն ինիս դիրած: Գենցուղ շինացեն կոլան դըրտկիս ա կրասեն մաչը, գյուլոխ տալիս թաքավերեն,

նստիլիս: Սուփրան բերմն գիձիս, հացը վեր թուղիս, կրասեն նաեե շինացուց բերած գինի լցրիս թասրը, խմիս թաքավերեն կենացը:

Թաքավերը շնորհակալութուն ա հյտնիս իրան հարգանքեն հետե քյոռուղ քաշած, հվաքված շինացոց նաեե, ինքն ալ դրտկիլիս գինուն թասը, մնալիս զարմացած՝ մին քյուխվեն իրեսեն ա յիշիս, մին շինացոց, տըսնալիս ա օմեն ալ լուռն: Խոսող կավըչնի:

Թաքավերեն ճարը կտրած քյուխվեն ըսիս ա.- էս թամուզ զուլալ ջուր լալ, ըսկի գինու համ կավչնի:

Քյոխվան պատասխնիս ա.- Թաքավերը ապրած կենա. էն վախտը, որ ջահիլս լալ, նոր թաքավերս լալ նստած, եկալս ղոնաղ, շինացեք սորինն լալ ըպրիս, ողորմածիկ քու հար շինացոց նաեե շատ խրեգ հարկ-տուրք լալ եր ունիս: Շինացոն օժն ալ մնալիս լալ տեղը, գինի լալ գիձիս, գինի խմիս, եկած ղունաղեն ալ գինավ պադև տալիս: Դու շինցոց երե շատ հարկ ու տորքս դիրած: Շինացեն փարե ա կնալիս սաղ տարեն, անջաղ ըշխադածը տալիս ա թաքավերեն: Ալ օժ չօնի գինի գիձի: Մհեգ շինացեն ջուր ա խմիս, եկած ղունաղեն ալ Աստուծեն տված ջիրավ ա հարգմ:

Քյոխվան որ էսքանը ըսիս ա, թաքավերը մաննը կծիս ա: Նազիր, վագիրներեն ըսիս.- Ինձ լա էսքանն լալ պետք: Երեք, գիննք:

Թաքավերը գինիս ա, շինացոց հարկը, տուրքը թիթիվցըրիլիս, պկսցրիլիս: Նաղլն ըրիս, որ էտ օրեն նհետ դեչանը ասօր էտ շինացեք օմեն տարե մարթա մի կոլա գինի տնիսն, երի ըծիս քյուխվեն գերեզմանեն, օրհննանք տալիս շատ գիդությանը հետե:

7 (110). ՉՈԲԱՆՆ ՈՒ ՆԿԱՐԻՉԸ

Մի հլիվր չորան, մի ըշնքօր եռ ինած էշեն, չոմբաղը օսսեն, գենցալ ա քաղաք առուտորի:

Հասալ ա քաղաքեն դարբազեն, տեսալ ա դարբազեն կողքեն մի մըծ ծառն նկարած, պատնիյեր ցեց դիրած, ղալին մարթիք հվաքված նկարեն թիմիշա յըն ըրիլիս: Չոբանը հվաքված մախլուղեն նաեե հրցրալ ա, գիդացալ ծառ նկարողը հուվ ա, մուտացալ ծառ նկրողեն ասալ.- էս հի՞նչ բեն ա, էսքան մախլուղ խե՞ յըն հվաքված:

Ծառ նկարողը ասալ ա.- ծառը իսմ նկարած: Ժողովրթը հվաքվածն իմ նկարածես երե մի այիբ ճարին: Հու վեր մի այիբ ճարի, ասի, օմեն մին ասած այիբեն հետե, մի վըսկե կտամ:

Չոբանը նկարեն տակնուց-դիյեր մի սորին վարավուրդ ա արալ, ծծղեցալ. ասալ.- Աղա, տըսնալիսմ քու նկարած ծառը պետք ա որ մի քանե հարուր տըրեկան ինի: Նման ծառը հինչուր տըղ ալ աճած ինի, համանն ա, կարի չի իստի կոկլեգ, դիք բիցրացած ինի: Առաչինը՝ էտ տարիքեն ծառեն տակեն մի քանե տեղ գերմակ քոլեն, ալաղեն պետք ա փիսած ինի: Թա շատ ալ վեչ, պատառ պետք ա ներքե թիրափմը մամուռնը ինի: Ըրկումինջինը՝ նման քյոհնա ծառեն նանե մի ճեղնը կտրված կինի, չուրացած կինի, յա մի տալ կտրած կինն, բինջա կինի: Իրքմինջինը,- մհակը յրկրցրիլավ ասալ ա չոբանը,- ծառեն պտկեն բերակ ճեղնու երե մի բաբաթ ղուշա նկարած: Լա հինչքան թիթվ ղուշ ինի, էն ճեղնը պետք ա պատառ կռացած ինի ղուշեն տակեն: Համա դե ճեղնը մանցած ա դուզ: Էտ ալ նկրողուն հետե մի այիբ ա:

Չոբանը այտս ծառ նկարողեն մաշկը թփթփցրալ ա, ասալ.- Ծառ նկարուղը պետք ա գյո, մըր ծմկնեն մի քանե օր շոռ գյո, հարուրավըր ծառ տըսնի, նոր մի ծառ նկարի, որ ծառու նմանի: Ծմակ չտեսած, քղաքմը մծացած մարթեն նկարած ծառը իսկական ծառու նման չի ինի:

Չոբանը էսքանը ասալ ա, ուզեցալ ա էշը քշի, գինի, նկարիչը թուղեցա չի: Չուբեն նանե մի հափուռ վըսկե դուս ա կալալ, տվալ չուբանեն, ասալ.- Քի հալալ ա:

Ինքն ալ նկարը դիրալ օսսեն գենցալ:

8 (111). ԿՆԳԱ ԽՈՍԿԸ

Մի մարթ փսակվմ ա, որ տոն-տեղ դըռնա, իրան հետե ապրի:

Դե եք տըս, որ մարթեն նա կնգանը կապած ջուրը մի արխավ գինիս չի: Կրիս չըն խուսկռնեն մին արիլ, իրաց հետե ապրիլը, հինչուր որ պետքն ա: Մարթեն արածը կնգանը չի տոր գյուլիս, կնգա արածն ալ՝ մարթեն:

Մարթը ըսիս ա.- Տան տղամարթը իսմ: Պետք յա իմ ասածն ինի:

Կնեգն ալ ըսիս ա.- Իս ալ տան կնեգնմ, իմ ասածն պետք յա ինի:

Տղամարթը տսնալիս ա, որ կրիս չի կնգանը հղե բերի, հաշտ, խաղաղ ապրի: Օրվա իսդար գյլխըցավից պրծնիլու հետե, մարթը կնգանը ըսիս ա.- Իստիթոնավ ինա չի ապրի: Հունչոր բերածմ, եք ինդի ալ տանմ, դիրմ քո հոր տանը, դու՝ քի հետե, իս՝ ինձ հետե:

Դու մի ասի կնեգն հրըվան շինացե ա:

Մի օր քշանաց շուդավ մարթը ըռշկին, կնեգն ալ հետեն հղե յըն ինգիս, գինիս: Հղցին կեսեն, ծմակավը գինիս տեղը, մի չոլու հեյվան ծմակեն նաե դուս ա գյուլիս, հղեն կտրիս, փխչիս գինիլիս:

Մարթը վըտ ա կնալիս, ըսիլիս.- Այ կնեգ, տըսալս գյուլը հո՞ւնչոր ա եկալ՝ հղոքը գենցալ:

Կնեգը ըսիս ա.- Գյուլ չի լալ: Աղվես լալ:

Մարթը ծծղիս ա, ըսիլիս.- Այ հորտ տոնը շեն մնա, իս տարեն բուլուր նայեմ ծմկնոմը ամեն օր գյուլ ալմ տըսնալիս, աղվես ալ: Մագյար իս գյուլն նա աղվեսը կրի՞ս չըմ ջուկուցրիլ: Հաստատ գյուլ լալ: Աղվես չի լալ:

Կնեգն ալ ըսիս ա.- Իմ հար վըրսական լալ: Ամեն օր գյուլ լալ վերգիցիս, բիրիս, աղվես ալ: Խե իս գյուլն նա աղվեսը ճնչի՞ս չըմ: Հաստադ աղվես լալ, աղվես լալ, աղվես լալ:

- Դե որ ինձ հվտալիս չըս,- ըսիս ա կնեգը,- իս հղցոմը նստիսմ: Դու գինի էն հեյվանը փռնի, բեր նշանց տոր, հաստադի, որ գյուլ լալ:

Մարթը տըսնալիս ա, որ կնգանը նհետ բաշար չի ըրիս: Հնարավոր չի գինիլ, չոլեն հեյվանը ծմակմը ճարիլ, բերիլ հաստադիլ, որ աղվես չի, գյուլ ա, ճարը կտրած ըսիս ա.- Հա, այ կնեգ, քու ասածն լալ, աղվես լալ:

Կնեգը ուլխացած ըսիս ա.- Այ մարթ, տըսալ ը՞ս, որ կնգա ասածը՝ ասած ա, խոսքը՝ խոսք: Դու քու աշկավը հաստադ տըսած գյուլը թողած, վերչը եկելս իմ սոտ խոսքեն երե վըտ կացալ, ասալ՝ հա, աղվես լալ:

Խոսքեն տար կնգանը նանե թող Աստուծ մարթեն հըռե պահի: Իննադ ինգյած կնգանը նհետ Ափյաթանն ալ կարի չի գյուլոխ դիրի: Էս բենը իս սարքալմ ընդոր հետե, որ դու գիդաս, որ՝ իննադու տար կնգանը, Աստուծ ոչ մի տղմարթու ռաստ վեչ բերի: Կնեգը որ իննադ ա ինգյալ, ընդոր ըստըղծող Աստուծն ալ կարի չի նհետը բաշար արիլ, ասածը՝ ասած ա, խոսքը՝ խոսք:

Կնգանը ըսածեն երե մարթը մանցալ ա շշմած՝ վըտը: Գիդացա չի, որ հինչ արի: Կնեգը տըսալ ա, որ իրան ըսածեն մարթը մանցած ա շշմած՝ վըտը, ասալ ա.- Այ մարթ, ալ ինձ իմ հոր տոն տանիլը քի սազի չի: Ետ դըռ, գինք մըր տոն, դու ջան ասի, իս՝ հաջան: Թեգյոնք-թեգյոնքի տանք, տոն սարքնք, ապրնք: Համա դե, պետք յա մոռնաս վեչ, որ կնգա խոսքը՝ խոսք ա:

Ճարահատված մարթը գյուլոխը քորալ ա, կնգանը եր կալալ, գենցալ տոն:

9 (112). ՏԱՆԸ ԿՈՓՐԸ ՀԱՑԵ ՅԱ

Քուղծծեթուննը շատ փիս բեն ա: Թող Աստուծ քուղծծ տարեն ամեն մի երգիրից հըռե պահի:

Կասի մի քուղցծ տարե մի մարթ գինիս ա մի ղարիբ տեղ ղոնաղ ինգիս:

Դե քուղցծեթուն ա: էտ քյասիբ մարթեն տանը մի ճոթ հաց չի ինիս, որ դիրն ղունաղեն ըռշկին: Ղոնաղն ալ երկար հղե եկած, շատ քողծած ա ինիս: Շատ ա նստիս, տըսնալիս ա՝ չի, տնատարը հացու անմ չի տալիս:

Ճարը կտրած, ղոնաղը որոշիս ա մասալավ տնատըռնը ղանդուր արի, որ քողծած ա: Բալքյա մի բեն ճարն, տան իրան, օտի:

Յիշիս ա դիբի տան օճռոքը ըսիս.- Խոնախա, ձեր տան կոճրը հացե ա՞...

Տնատարը դե խոխա չի, գյուլխով ա ինգիս, քա ղոնաղը հինչ ա ըսիս: Պատասխնիլիս ա.- Չի՛, խոնախա, մըր տան կուճըգերանը դմացե յա:

Ղոնաղը տսնալիս ա ուտիլու ումիդ կավչնի, միակը եր ա ունիս, հղե ինգիս:

10 (113). ՄԸՃ ԱԽՊԵՐ, ԱՂՎԵՍ ԱԽՊԵՐ, ՋՈՒՌՆԱՉԻ ԱԽՊԵՐ

Մի հայ մարթ գինիս ա ղարիբեթուն: Հըղեց՝ օրը մըթնիս ա: Մոտե տեղը մի հայու շեն ա ինիս: Գինիս ա էտ շենը, պատահական մի տան դուրք թըկիլիս:

- Ներս մտի, մըծ ախպեր,- լսվիս ա տանը ներսից:

- Իս ղարիբ մարթ ըմ, անծանոթ, ղոնաղ կարե՞ք,- դուրքը բինալավ ըսիս ա ղարիբ մարթը:

- Ղոնաղը, ղարիբը Աստուծենննա, աշկուրնուս երե տըղ օնըս, առաչ եք նստի, տըսնանք հո՞ւվ ըս, հո՞ւ չըս, ըշտղե նհետ ըս գյուլիս, ըշտեղ ը՞ս գինիս,- օրախ-օրախ ըսիս ա տընատարը՝ նես կընչիլավ ղարիբեն:

Ղարիբը նես ա մտնիս տոն, օջաղեն կոխկեն նըստիլիս, դեսեն-դենեն քաղցըր սոհբաթ ըն ըրիս, հաց ըն ուտիս. գյուլիս ա քոն ինիլեն վախտը, տընատարը ղարիբ ղունաղեն ըսիս ա.- Աղվես ախպեր, դու քշանաց շուդավ հըղեյս գինննական, տըղերտ բեցած հազր ա: Եր կաց խուտուրու ինգյի, դինջաց:

Ղոնաղը նի ա մըտիս տըղերը, քոն ինիս: էքսի քշանաց, լուսը որ բինվալիս ա, Աստուծեն պարլուսը բենվի ձըզ երե, տընատարը ալլա հինչուր որ պետքն ա, ղարիբ ղունաղեն հարգըմ ա, պադև տալիս, ըսիլիս.

- Իմ զուռնաչի ախպեր, մըր շենմը ղայդա չկա, որ շըները կապըն: Եր կաց, տանըմ շըներեն նանե սաղ-սալամաթ անցկըցըրըմ, գինի:

Շենեն ղըրաղեն, տընատարը, որ ձեռքը մըկնիս ա ղուռաղեն պարի ճանապար ասի, ղոնաղը ձեռքը փըռնիս չի, ըսիս ա.

- Աշխարքեն պարի մարթ, մի բեն ինծ գաղտնիք ա մանցալ, ինծ շատ կըներըս, քանի էտ գաղտնիքը ինծ ասս վեչ, գիդամ, իս կարի չըմ հղես շարունակիլ, կըմնամ տեղըս վըտը:

- Ասի, լըսըմ,- համաձայնվմ ա տընատարը:

- Իս որ ըրկոնուն քու տանը դուրքը թակալ ըմ, դու ասալ ըս՝ համեցեք, ներս մտեք, իմ մըծ ախպեր: Առաչինը ինծ դիրալ ըս մըծ ախպուր տեղ: Քոն ինիս տեղը ինծ աղվեսս արալ, ասալ ըս՝ աղվես ախպեր: Միեգ ալ հըղեյս դիրիս, ասալ ըս՝ զուռնաչի ախպեր: Խընթըրիս ըմ, ինծ ասա էտ իրըք խոսկերեն գաղտնիքը հինչա՞, իս կրեցա չըմ գիդալ:

Տընատարը ծծղեցալ ա, ասալ.- Դե, միեգ քի ասըմ, գիդաց, ալխայինն գինի: Առաչինը՝ մըր միալմը ղայդա յա, ղարիբ մարթեն ընթուընըմ ընք մըծ ախպուր տեղ, որ ղարիբը սըրտավ նի մըտնի տոն, ռիսկավ հաց օտի: Երկումինջինը՝ Աղվես ախպեր ընք ըսիս էն բենեն հետե, որ ղոնաղը նի ա մըտիս տղերը, յուրղանեն տակեն անջուկ ա ունիս, թա՝ տընեցեք հինչ ը՞ն խուսիս, հինչ ը՞ն ըսիս, հինչ ը՞ն ըրիս: Ոուկի ա տալիս, թա՝ տանը հի՞նչ կա, հի՞նչ չկա: Դըռնալիս ա աղվես: Իրըքմինջինն ալ՝ զուռնաչիյնք ըսիս էն բենեն հետե, որ, օրինակ, ղարիբ ղոնաղը թա իրան հինչուրո՞ւն ընթունալ, պադն, հարգանք տըվալ, էտ տանը հինչ ը՞ս տըսալ, էտ ամենըրեն մասին հինչ տեղ որ գինի, մինի-մինի նաղլ ա ըրլական, դիրլականա զուռնոմը միչին՝ դըռնա զուռնաչի: Միեգ քի պարզ ա՞,- ասալ ա տընատարը:

Իմաստուն խոսքերեն շնորհակալութուն ա հայտնալ ղարիբը, հղե ինգյալ:

11 (114). ՎԸՐԸ ԼԱԼ ՏՂԱՆ, ՎԸՐԸ ԼԱԼ ՔԱՇԿԸ

Մի մարթու տղա փըսակված ա ինիս հըրևան շենեն մի ըղչիգյան նետ: Դե հայու ադաթ ա. հառինը տընիս ըն հերանց: Մի վախտ, որ անց ա կընալիս, տղան գինիս ա իրան կընգանը հերանց տանը նանե բիրիլու: Հըղեն սարու, ձորու, ծմակու մաչավ լալ անցկընալիս: Մի տեղ ծըմակըմը տղան կընկանը ըսիս ա.- Դու թիաթավ առաչացեր, իս թըք տամ, պատառ ջուր վեր ածեմ, գյոմ:

Տըղան գյուխս ա, ըշկերեն տըսածեն հավատամ չի: Տըսնալիս ա՝ մի տըղա իրան կընգանը կոռնը մըտած, իրաց հետե սոհբաթ ըրիլավ գինիս ըն: Տըղան զարմանքից մնալիս ա քար կըտըրած, ինքը իրան ըսիս ա. «Թա էն իս ըմ, նի ինգյած կընգանըս կոռնը գինիլիս, պա իս հուվ ո՞ւմ տեղըս վըտը, թա արագ ա, արագ չի, թա աշկես ա ըրվալիս, իստի բեն չինի: էն լա իս ըմ, որ կաննմ. շորրըս, փափաղըս, ղայիշըս, բոյս-բուսաթըս լա իսըմ, որ կամ: Պա ախր իս հո՞ւվ ըմ, որ նայեմ տեղըս վըտը»: Իստի խյալ-խիյալ ըրիլավ՝ տղան կընգանը հետնաց գինիս ա: Վերչը, տըսնալիս ա կընեգյը էտ տղեն նհետ գենցալ ա իրաց տոնը: Ինքն ալ ա գինիս, գյլխեն եկածը հորը նաղլը ըրիս:

Տղեն հարն ալ ա յիշիս, մնալիս զարմացած, կըրիս չի ջուկըցըրի՝ վըրն ա իսկական տըղան, էնքան միևը-միևեն նմանն ինիս: Հանցա ինիս՝ կասս մի մազը կես արած ինըս: Ճարը կըտըրած՝ տղեն հարը գինիս ա իրաց շենեն դերեն գենգյատ ըրիս:

Դերըն ալ գյուխս ա, յիշիս, մընալիս զարմացած: Կըրիս չի տարբերի, թա իսկական տըղան վըրըն ա: Դերը ըսիս ա.

- Կա-չկա ըդուց միևը քաշկ ա: Դե, միևը միևեն էնքանն նըման, որ ոչ մի մարթ, ոչ մի հաքիմ կարի չի տարբերի, ջուկուցըրի: Տղամարթ հաքիմու բեն չի: Պետք ա կընեգ հաքիմ ճարըս: Քաշկեն բենը կընեգը կգիդա:

Ճարը կըտըրած՝ շինացեն գինիս ա մըհալից մըհալ, երգիրից երգիր շոռ գյուխս, որ կընեգ հաքիմ ճարի: Կըրիս չի ճարիլ:

Վերչը մի տեղ էտ մարթեն խաբար ըն տալիս, որ երգիրեն թաքավորը մըռած ա, երգիրեն թախտեն թաքավոր ա նըստած թաքավորեն կընեգը՝ թագուհին: Հարկավոր ա՝ գինիլ, կընեգ թաքավորեն գենգյատ արիլ, կարուղ ա գաղտնիքը գիդա:

Շինացեն գինիս ա կընեգ թաքավորեն ճըրիս, գյլխեն եկած փորձանքը նաղլը ըրիլիս:

Կնեգ թաքավորը ըսիս ա.- Գինի էրկու տըղերցն ալ երկալ, բեր իմ կոշտը:

Շինացեն գինիս ա՝ էրկու տղերին ալ տընիլիս թաքավորեն կոշտը:

Թաքավորը վազիրնուն ըսիս ա.- Բերեք պալատեն ըռըշկին թոռնու (թոնիր) նման կուլուր, իրըք ջարգեն նհետ, առանց ցըխի, շաղախի, չոր քարավ պատ շարեցեք:

Վազիրնեն բերըմն, կուլուր պատը շարըմ:

Թաքավորը տըղերցը միներն ըսիս ա.- Եր կաց, շարած պատեն իրեսավը իրըք հետ ինդի պըտտվի, որ ոչ մի քար վեր վեչինգի, պատը սալամաթ իրան տեղը մնա:

Է՜, չոր քարավ շարած պատեն իրեսավը շոռ գյոլ կինի՞: Տըղան վընը որ քարու երե դիրիս ա, պատը փըլվիս ա:

Թաքավերրը ըսիս ա.- Ծաղեգներ բերե՛ք տափեն շաղ տըվե՛ք: Ծաղեգնուն երե ինդի շոռ գյո, որ ոչ մի ծաղեգ ո՛չ ծըմըրթվի, ո՛չ ալ մի թըր բուք գյո:

Է՜, հունչո՞ւր կինի, որ մարթը ծաղեգեն երե շոռ գյո, տըրորվի վեչ, թըրթրը բուք վեչ գյոն: Տըղան ծաղեգներեն երե շոռ ա գյոլիս, թեխտա, տըրորվըմ ըն, կուտըրատըվըմ:

Թաքավորը էտ տղեն ըսիս ա.- Լավ, դու ղրաղ վըտ կաց, թող էն մին տըղան մուտանա, պատեն իրեսավը իրըքպատ շոռ գյո:

Էն մին տղան գյոլիս ա, բիցիրնալիս պատեն երե, իրըք նհետ պտըտվիս, ոչ մի քար տեղեն դուռու չի գյոլիս, ոչ մի քար վեր չի ինգյիս:

Թաքավորը ըսիս ա.- էտ կոխ տըված ծաղեգները հըվըքեցե՛ք, նոր, թազգա տըղան երե շոռ գյո, տըսնանք կկարի՞ ինտի շոռ գյո, որ ծաղեգնեն փըչանան վեչ:

Թազա ծաղեգներն շաղ տալիս, տըղան հինչքան ծաղեգնեն կոխ ա տալիս, ոչ մինը փըչանըմ չի: Հանցա ինըս, կասս, որ ծաղեգներեն երե մարթ վեչ ինիս՝ վընը դիրիլիս:

Թաքավորը վազիրնուն ըսիս ա.- Գենցե՛ք ղազիլու նանե գյործած մի մըծ ջըվալ բերե՛ք, ըրկումինջին տըղեն նի գիծեցե՛ք ջըվալը, բերանը պընդ կըպեցեք:

Վազիրնեն թաքավերեն հըրամանը կադարըմընը:

Թաքավորը շինացոն ասալ ա.- Կողքետ վըտը տղան քու հալալ տղան ա, եր կալ գինի քու տոնը: Ջըվալը գիծած տղան քաշկը լալ: Տըսալ ընք, որ չոր քարից շարած պատեն երե ինդի ա շոռ եկալ, որ ոչ մի քար վեր չի ինգյալ: Ծաղեգնեն կոխ ա տըվալ՝ փըչացալ չընն: Ուրեմը էտ մին տղան քաշք լալ: Քաշկը կկարի իտի բեն արի:- Այտըս վազիրներեն ասալ ա.- Մըծ-մըծ մախաքնե նի քաշեցեք ջըվալը, որ քաշկը մըռնի, ջըվալավ տարեք, նի գիծեցեք գետը:

Շինացեն կնեգ թաքավորեն ձեռքը պաչալ ա, տղեն եր կալալ, գենցալ:

12 (115). ԼԱԼԵԳ ՀԱՌՀՆԸ

Քյոհնա վախտը, հիբ աշխարհըմը պարին շատ լալ չարեն նաևե, մի շեևըմ մի հիլիվըր մարթ լալ ըպըրիս՝ իրան պառավ կընգաևը նըհետ: Ըտուց մի թաք հասած-փիսած տըղա յա ինիս, բիրիս ըն փըսըկիլիս: Հառհնը մի չըտըսնված հալալ կաթնակեր ա դուս գյուլիս: Ինդի արարմունք ա ինիլիս, ինդի ղեյրաթի բինարար, որ տըսնողուն, լըսողուն բերաևը բեց ա մընալիս: Մըր պապըրը խոսքըն կապած, ասած. «Նախշուտ հառհնը առաևց էյբ ինի չի»: էտ հարսաևը էյբը էն ա ինիս, որ խուսիս չի, լալ ա ինիս:

Ղորթ ա, թազա հառհնըրը պատրունեն, ըսկեսուրեն նըհետ չխոսկաննն ինիս: Համա դե ուրեշու նըհետ ըսիս, խուսիս ըն: էտ տնաշենի աղչիգյը լալ լալ, ոչ մի մարթ ըտուր բիրաևեն նաևե մի խոսք լըսած չի լալ: Օմեն ալ ըսիս ըն լալ՝ լալ ա:

էտ հիլիվըրը նա պառավը որոշում ըն տըղեն նորից փըսակեն: Գինն մի ասուղ-խոսուխ հառհնը բերըն, որ մըհետ սասը լըսըն, ուլխաևան: Գինիս ըն մոտե շեևեն նհետ մի աղչիգյ ուզիս, զուռնա-դհոլավ, երքավ-պարավ եր ունիս, բերիս:

Նոր բերած հարսաևը ասած ըն ինիս, որ մըզ հառհնը օննք: Շատ շնորհքավ, բինարար, նախշուտ հառհն ա: Համա դի մի էյբ օնի՝ լալեգ յա, խուսիս չի: էտ էյբեն հետե յալ եկած ընք քի տընհիլիս:

Հըրսաևեքը, որ գյուլիս ա հըսնիս տըղատըռնը դուրքը, թազա հառհնը մի ձեռքը դեմ ա տալիս կողքեն, մի ձեռքը դիրիս ճկատեն, բեցուր սասավ ըսիլիս.

- է՛յ, լալեգ հառհնը, դուս եք տաևը նաևե, գինի հորըտ տոնը: Դիլի-դիլբար հառհն ա եկած:

Լալեգ հառհնը լըսիս ա, զարմանալիս, ինքը իրան սըրտ տալիս, ըսիս. «Վա՛յ իմ հոքուն, էս աղչիգյը հալա ծիյաևը նաևե վեր չի եկած, հալա հառհնը չի դըռած, իրան շնորհքը, ձըտի-արմունքը ոչ մինը տըսած չի, դըռած ա դիլի-դիլբար, սաղ շեևեն ժողովուրթեն մաչեն առաևց քաշվելու, առաևց հըմանչիլու, ինձ ալ տաևը նաևե դուս ա ըրիս: Պա իս խե, իմ մորըս մի խըրատու հետե, լալկըված ըմ, ինձ խայտառակ ըրիս: Սորինն էն ա, խոսըմ, ժողովուրթը սասըս լսի, նոր եկուղ հըռնըցվեն ալ պատասխան տամ, թողի, գինի»:

Էսքաևը ինքը իրան ըսիս ա, որոշիս, սըրտապընդվիս, դուս գյուլիս դուրքը, շինացուց մաչեն թազա հըռհնըցվեն ըսիս.- Այ դիլի-դիլբար աղ-

չիգյ, հալա մի ձիանը նանե վեր եք, մի հըռհնեթուն արի, շընորքտ, արարմունքըտ նըշանց տոր, ետնե բուլբուլ կըտըրի:

Լալեգ հառհնը, որ խուսիս ա, սաղ ժողովուրթը մընալիս ա զարմացած: Իրանց ընջուկնուն շատըրը հըվըտալիս չըն, թա՝ ես հի՞նչ հըրաշք ա, լալեգյը կկարի՞ մի բիրդան խոսի:

Պատրունն նա ըսկեսուրը մուտունալիս ըն հարսանը խըտտիս, պուչպուչիս, ըսիս.- Ա հառհնը, պա որ իտի քաղցըր լուզի օնըս, խի՞ չըս լալ խուսիս, մանիհ հինչոմ լա՞լ:

Հառհնը գինիս ա նի մըտիս տոն, մի կապած բուրուշում յալլըխ բիրիս, ետ ըրիս, մաչեն նանե մի ձեռքու միչըք սովորական, հասարակ քար դուս ունիս, նշանց տալիս հըվաքված ժողովուրթեն, ըսիս.- Իմ մար, որ ինձ մարթու վա տըվալ, հըղե դիրիս տեղը էս քարը դիրալ ա յալլըխեն մաչեն, կապալ, տըվալ ինձ, ասալ թա. «Դու իմ հալալ կաթընըկերած, մըծացած աղչիգյն ըս, խընթըրիս ըմ կադարըս իմ մորական տըված նասիյաթը: Էս քարը քի նհետ տար: Էն տանը հիթ էս քարը լուզի կունենա, կըխոսի, դու ալ՝ կըխոսս: Դե, տոնա, սորին կինի, փիս կինի, խոսք-զուրից կինի, պըկըսեթուն կինի, կըեշըս էս քարեն, կխոսի՝ կխոսս, խոսի չի, դու ալ, փորըտ խատատ կարըս, ընջուկնետ, շընտարատ, կըմընաս լալեգ»: Մորըս տըված խըրատը գյորա իս ալ յիշիս ըմ լալ քարեն: Քարը խուսիս չի լալ, իս ալ չըմ լալ խուսիս: Մանցած ըմ լալ՝ լալեգ: Դե, տըսալ ըմ՝ թազա հառհնը հալա ձիյանը նանե վեր չը եկած՝ բուլբուլ ա դըռած, ժողովուրթեն նանե, առանց հըմընչիլու, բիլդի-բիլդի յա ըրիս, իս ալ ճարըս կըտըրած իստիպված ըմ լալ բերանըս բենամ, խոսըմ:

Լուզհն բեցված հարսանը պատրունն նա ըսկեսուրը որոշիս ըն, որ թազա հառհնը հալա ձիյանը նանե վեր չհեկած՝ էսքան երկար լուզի օնի, էտ որ նի մըտնի տոն, մըզ տանը նանե դուս կարի: Որոշիս ըն՝ սուս-փուս, ետ ղուրկիս հորը տոնը:

13 (116). ԱՌԱՆՑ ՀՈՒՆԳՅՈՒՍՏՆԵ ՇԻՀԱՐԸ

Նաղլ ըն ըրիս, որ քյոհնա դովրհն, մի շահարըմ մի զարգյար մարթ լալ ըպրիլիս: Չեղած, որ Աստուծ սորին ապրուստ լալ տըված, համա հունչուր մըր պապըրընն ասած՝ «էրկու ներակ մի մարթու ինգիս չի»: Աստված էտ մարթեն մի չար-սուտանա կընեգ լալ թուշուրթմիշ արած: Ամեն օր էտ չար-սուտանա կընեգյը մարթեն ըսիս լալ.

- Աշխարքըմըս անկարելի բեն չկա, ամեն մի բեն որ կա, ուրեմը՝ անմահութուն ալ կինի: Եք, գիննք, շոռ գյոնք, ճարընք, մըզ հետե անմահ ապրընք: Էս նախշուտ, լուսավոր աշխարհը թողած՝ խի՞ գիննք նի մըտննք վըղեն տակը:

- Պա հունչո՞ւր կարուղ ընք գիդալ ճարիլ անմահության շհարը,- ըսիս ա մարթը:

- Պա՛հ, հորըտ տոնը շեն մնա, էտ հի՞նչ դիժեր բեն ա: Խըլքըտ էտքանը կըտրիս չի՞... կըգինընք ամեն մի շհարու դովրիբարը, շոռ կգյոնք: Կըտրսննք, որ մի շհարու կողքեն հնգյուստնե կավըչնի, ուրեմը գիդաց, որ էն շհարըն ալ մահ չկա, մարթինքը անմահն:

Ճարը կըտըրած՝ զարգյարը իլած-չիլածը ծխիս ա, կընգանը եր ունիս, գինիս, միալից միալ, շիհարից շհար շոռ գյոլիս, անմահության ըպրիլու շհարը, որ ճարի: Շատ ըն շոռ եկալ, թա՝ խըրեգ, էտ ալ Աստուծ գիդա: Վերչը, մի օր, հասալ ըն մի ծովու: Տըսալ ըն ծովեն կողքեն մի նախշուտ բաղ-բաղաթավ կուճի շհար կանի: Շհարեն չորք թարափը շոռ ըն եկալ, տըսալ ըն՝ հընգյուստնե կավըչնի: Կնեգյը ուլխացած ասալ ա.

- Ա մարթ, տըսալ ը՞ս, որ իմ ասած շհարը ճարալ ընք: Ալ տեղես դենը մըզ գինիլու, շոռ գյոլու բեն չօննք:

Զարգյարը տոն կալալ, զիրգյարու դուքյան ա կալալ, իրան բենեն կացալ:

Մի գիրագի օր, զարգյարը կընգանը ասալ ա.- Ա կընեգ, մի էրկու ջոխտ շամ եր կալ, գինընք եգեղեցեն, աղոթք արընք, շամ վառընք, որ Աստուծ մըզ մըր նպատակեն հըսցըրալ ա:

Կընեգյը մի էրկու ջոխտ շամ եր ա ունիս, գինիս ըն դիբի գյղեցեն: Հղեց ջհիհսն մի դաստա ժողովուրթ է, որ զուռնա ըծիլավ, դոմբի թկիլավ, պար գյոլավ գինիսն լալ: Զարմացած, մի մարթու նանե հըրցըրիսըն, թա.- Ասօր գիրագի ա, գյղեցե գինիլու, աղոթք ըրիլեն տեղը, էս հի՞նչ հըրսանենքն ըրիս:

Անծանոթ մարթը ծրծըղեցալ ա, ասալ.- Այ տնաշեն, խի, դու էս քաղաքեն մարթունցըն նանե չը՞ս: Հըրսանեք չի: Մարթ ա մըռած, տընիս ընք թաղընք,- ըսիս ա անծանոթը:

- Խի, մըռած մարթեն հետեն լեց ըն ինի՞ս, թա՞ զուռնա-դըհոլ ըն ըծիլիս,- զարմացած հըրցըրիս ա զարգյարը:

- Մըր շհարեն ադաթը ինդի ա, որ մի խոխա ծնվիս ա, հըվընքվիս ընք լեց ինիս, թա որ մըծանա, պետք ա ապրիլու հետե չարչարվի, տանջվի, մինեն խափի, մինեն վեզը ծռի՝ յոլա գինի: Համա որ մըռնիլիս ա, ուլխու-

նալիս ընք, որ մըռալ ա, աշխարքեն տանջանքեն, չարչարանքեն նանե պրծալ ա, հոքին ազատվալ:

- Պա ծեր հանգիստարանը հի՞նչ տեղ ա: Մընք շոռ ընք եկած, ճարած չընք,- ըսիս ա զարգյարը:

- էս ա կգիննք, կըտըսնանք,- ըսիս ա անծանոթը:

Զարգյարն նա կընեգյը ալ գինիս չըն գիղեցեն: Իրանք ալ ըն մըռալեն հետեն գինիս:

Մըռալը տընիս ըն ծովեն կոխկը: Մի քար կըպիս ըն մըռալեն վեզը, մի քար ալ վըտերեն: Մի կուճի գյամի ա ինիս: Դիրիս ըն գյամուն մաչեն, էրկու մարթ տընիս ըն նի գիծիս ծովեն խոր տեղը, գյուլիս:

Զարգյարը յիշիս ա կընգանը, ըսիս.- Ա կընեգ, ըռազի չընս լալ՝ արժան դըռննք մըր շհարեն վըղեն, մըհեգ արժան կըդըռննք անտակ ծովեն:

14 (117). ՀԻԼԻՎԻՐԸ ՀԻ՞ՆՉ Ա ԱՍԱԼ ՉԻԱՎՈՐՆՈՒՆ

Նաղլ ըն ըրիս, որ շատ տարիներ առաչ էրկու ախպեր տըղերք ըն ինիս, էրկու հուգի ալ մի ըղչիգյան ըշկըդիրած ըն ինիս: Մըծ ախպերը ըսիս ա.- Իս պետք յա օզըմ:

Կուճի ախպերն ալ ըսիս լալ.- Չէ՛, աղչիգյը իմն ա:

Աղչիգյն ալ մանցած լալ էրկու քարու արանքըմ: Տըղերքը մինը միներն նանե բոյավ, խելունք, նախշուտ, բինարար ըն լալ: Կըրիս չի լալ որոշի, որ տըղեն գինի, հինչ արի, որ էրկու ախպեր մինը-միներն նանե նըղանան վեչ, խըռավըն: Շատ խիյալ ըրիլեն ետը, աղչիգյը իստի մի պայման ա դիրիս տղերցը ըռշկին: Ըսիս ա.- էրկու հուգի ալ եռ ինեցեք ծեր ծիանցը, քըշեցե՛ք, գենցեք հասեք շեներն ըռշկին՝ բունդեն երե իլած մըծ կաղնե ծառեն տեղեն նիետ, ետ դըռեք, ծիանքը քըշեցե՛ք, եկե՛ք իմ կոշտըս: Հո՞ւր ծի ետե գյո հասնի, իս էն տըղեն կօզում:

Տըղերքը համաձայնվըմ ըն ըղչիգյանը դիրած պայմաներն: Եր ըն կընալիս՝ նստիս ծիյանը, քըշիս, գինիս հըսնիս կաղնե ծառեն: Ետ դըռնալուց տըղերքը հաշտըվմ չըն, որ գյոն: Ամեն մինը մի քանե մահնայն ճըրիս, ետ ինգյիս, որ էն մինը առաչ ինգի, գինի, ինքը ետ ինգի:

Մի շինացե հիլիվըր մարթ գենցած ա ինիս ծըմակը մի շելակ փադ կըտորած, շըլակած գյուլիս: Հըռնաց տըսնալիս ա, ճընչիս, որ իրան հըրևան տըղերքընն: Մնալիս ա զարմացած, որ էրկու ախպեր մինը միներն նըհետ բհաս ըն ըրիս հաշտըվըմ չըն, որ իրաց հըղեն հանգիստ գինըն: Հլիվըրը շելակը հըղըցին երե վեր ա դիրիս, նըստիս, որ էրկու ախպեր տղերքը

գյոն, հըրցըրի, տըսնի մանիհ հիհչո՞ւմ ա, որ ղըլմըղալ ըն ըրիս, իրաց հողոքը անհաշտ ըն գյուլիս: Տըղերքը, որ հըսնիս ըն հիլիվերեն, հըրցըրիս ա.- Ազիզ տըղերք, ինձ ասեցե՛ք, գիդամ, թա մանիհ հիհչում ա՞, որ էտ հըրեղեն ծիանքը ձեր տակեն քըշիս չիք գինիս, մուլի-շուլի եք ըրիս: Էտ բենըմը հաստադ մի մանի կա: Ինձ ըսեցեք, բալքյա կարողանամ ձեզ օքնիլ:

Էրկու ախպերն ալ ծիանցը նանե վեր ըն գյուլիս, իրաց նշանվելուն հետե ըղչիգյանը դիրած պայմանը նաղլ ըն ըրիս փորձված հիլիվերեն: Հիլիվըրը պատառ խյալ ա ըրիս, ծըծղիս, տըղերցը ըսիս.- Ազիզ տըղերք, դուք ըղչիգյանը դիրած պայմանեն մըտքը դուզ գիդացած չեք: Ըտուր հետե յալ չարչարվըմ եք: Մոտե եկեք, խոսքեն պարզը ձեզ ասըմ:

Տըղերքը մուտունալիս ըն հիլիվերեն: Հիլիվիրը ըղչիգյանը դիրած պայմանեն մանիհ բացատրիս ա տըղերցը: Տըղերքը հիլիվերեն խոսքեն երե, եր ըն կընալիս, եռ ինիս ծիանցը, խըռեք տալիս: Դեչանը հիլիվերեն կոշտը, որ ծիավորնեն ուզիս ըն լալ մինը մինեն նանե ետե հասընըն ըղչիգյանը: Հիլիվերեն ասած խոսքը գյորա, ամեն մինը ծին խըռեք լալ տալիս, որ ինքը շուդ հասնի ըղչիգյանը:

Դե ըսեցե՛ք, գիդանք, հիլիվըրը հիհչ ա՞ ասալ տըղերանցը, թա տըղայս, ճարի մանիհ:

Հիլիվերը տղերցն ասալ ա.- Ըղչիգյանը դիրած մանուն պայմանը դուք դուզ չեք գյուլխու ինգյած: Աղչիգյը ոչ թա ասած ա, որ տղան ետե գյո, ընդուր կօզում: Ասած ա հուր ծին ետե գյո ընդուր կօզում: Ըտուր հետե յալ եր կացեք, ծիանքը փոխեցեք, խըռիք տըվեք, գենցեք: Հու շուդ հասնի ըղչիգյանը, էն ալ կտանի:

15 (118). ԽՆՁՈՐԸ ՓՍՈՐԱՎ ԾԱԽՈՒՂԸ

Մի մարթ թամիզեթուն շատ սիրուղ լալ, իրան տղեն ուզիս լալ փսակի, ինդի մի հառհնը բերի, որ տոնը, դուրքն ինդի թամուզ պահի՝ եղը վեր ածս տափեն, ինա հվաքի:

Իդի թամիզեթուն սիրուղ աղչիգ հինչուր ըշտեղե կինա ճարի. խիյալ ա արած տղեն հարը, խիյալ, իրան մաչեն մի բեն որոշալ՝ գենցալ իրան բաղը, սորին խնձոր լալ, քանդալ, լցրալ ճվարաննեն, բեռնալ էշեն, տարալ շենեն մաչեն մեյդանմը դիրալ, բեցուր սասավ կանչալ.- Խնձորմ ծխիս, խնձոր, էն ալ տան մաչե փսորավ:

Շինացեք լսալն, մանցալ զարմացած, թա՝ խնձորը բիրիսն ծխիս փողավ, ցոռնավ, գյորավ, էս հի՞նչ բեն ա, որ խնձորը բերած ա տան մաչե փուսուրու նետ փուխիլիս:

Շեննեն կնանենքյը, հառհնրը, ղոչգերքը երն կնալիս, իրաց տները քյունջ-պուճախ սիրբիլիս, փեշկիրնեն փսորավ լցրիս, տընիս խնձորավ բարաբար փուխիս, խնձորն ուտիս, ուլխնալիս:

Խնձոր ծխողուն կոշտը մի նախշուտ աղչիգյ ա գյուլիս, մի ըրծաքի փող ձեռքեն: Փողը տալիս ա խնձոր ծխողուն, ըսիս.- Դայի, խնքրիսմ, ինձ էրկու խնձոր տաս, իմ մարս ալուզ ա, խնձոր ա ուզիս:

Խնձոր ծախուղն ըսիս ա.- Քվոր աղչիգյ, խե, ձեր տանը մի հափուռ փսոր չկա՞, որ փողս բերած:

- Հարչան տանը քյունջ, պուճախ հվաքալմ, սիրբալ մի հափուռ դուզվա չի: Որ ինիլ լալ, բերիլ չը՞մ լալ:

- Հվատմ չըմ,- ըսիս ա խնձոր ծախուղը,- եք գիննք ձեր տոնը, տըսնամ:

Խնձոր ծախուղը գինիս ա էն ըղչիգյանը հորը տոնը տըսնալիս, բերանը մնալիս ա բեց: Էնքան թամուզ ա ինիս, ամեն հինչ սալղեն, տեղը-տեղեն, որ ղուրթավ՝ եղ վերածս տափեն, կինա հվաքի:

Ջուբոմը մի քանե հատ խնձոր ա տարած ինիս, տալիս ա աղչիգյանը ալուզ մորը, ետ գինիս տսնալիս հի՞նչ. կնեգ, հառհնը, աղչիգյ ա, որ փեշկիրնեն տան փսոր լցրած եկածն խնձորավ փուխիլու հետե հըրթ վըտկացած՝ փսորը բարաբար խնձորավ փուխիլու:

Խնձոր ծախուղը տեղ ա հասնմ, ծվըրաները բիռնիս էշեն, հղե ինգիս: Խնձոր ունիլու եկած կնանենքը զարմացած ըսիսն.- Պա, հալա ղալին խնձոր կա, խի չը՞ս ծախմ, ըշտեղ ը՞ս տնիլիս:

- Ալ իս իմ մուրազեն հասալմ, մնաք բարով, փսորավ խնձոր չօնմ ծխիլու:

Էքսի օրը գյուլիս ա տղեն նշան դիրիս:

16 (119). ՊՌԱՎԵՆ ԴԱՆԱՆ

Մի շենմ մի պառավ կնեգ ա ինիս: Էտ պառավն իրան հըրվանեն նանե մի էրկու տարեկան դանա ունիս ա, ինքն իրան որոշիս, թա. «Մի քանե տարե ապրմ, դանան կմծանա, կավ կդըռնի, կծնի, կկթըմ, կաթնավը կապրմ, թա չի՝ կմըռնմ, կմորթն, ժամ-պատարաք կանն, հոքուս հացը կտան»:

Մի օր պռավեն կնչիսն ժողով: Պառավը զարմացած գինիս ա ժողով:

Քյոխվան ըսիս ա.- Պառավ, շինըհավան հվաքվածնք նախրչի նշանակելու: Լսածնք, որ դու մի դանա յըս կալած, տվրատար դըռած: Քի կանչածնք, որ տըսնանք մըր որոշած նախրչուն դու համաձայն ը՞ս, թա՞ չի:

Պառավն ըսիս ա.- Խի՞ պետք ա համաձայն վեչ ինմ: Հինչուր էլեն նախիրը, ինդի ալ իմ մի դանան:

17 (120). ՀՈՒ ՎԵՐ ԷՇ, ԻՄ՝ ՓԱԼԱՆ

Մի շենու ժողովուրթ հվաքվածն լալ, որ շենը ղեկավարիլու հետե քյոխվա նշանակն: Հվաքված, տըսալ՝ շենեն ամենաքյասիբ մարթը՝ Մակի, եկած չի ժողով: Փեքյարեն ղորկալն, թա՝ գինի Մակու լալ կանչի, բեր ժողով:

Մակի զարմացալ ա, որ իրան ալն մարթու տեղ դիրած, կանչած ժողով:

Գենցալ ա ներկայացալ ժողովին, հըրցրալ, թա.- էս հի՞նչ ժողով ա, ինձ հինչու հետե եք կանչած, բերած

- էլեն ժողով ա, հվաքվածնք շենեն, էլեն ղեկավարելու հետե քյոխվա նշանակնք: Քի ալ մարթու տեղնք դիրած, կանչած,- ըսիս ա ժողովը ղեկավարողը,- ուզիսնք գիդանք մըր որոշածեն համաձայնը՞ս:

- Ինձաևե էշ դըռնող չի ինի,- ըսիս ա Մակի,- հու վեր էշ, իս՝ փալան:

18 (121). ՔԱՌԸ, ՄՈԼԼ Ը, ՉՈԼԱԽԸ

Նաղլ ըն ըրիս, որ իլալ ա, իլա չի, իրըք հնգերն լալ: Մինը քառ լալ, մինը՝ քոռ, մինն ալ չոլախ լալ:Էտ իրըք հնգերնեն ամեն օր գինսն լալ շենեն կողքեն՝ մի ծառու տակե նստիլիս, իրաց հետե դեսեն-դենեն սոհբաթ ըրիս:

Մի օր քառը սոհբաթ ըրիս տեղն ասալ ա.- Տղերք, հալա սուս ըրեցեք: Հըռնանց ղլմղալու սասն լսվիլս:

Քոռն ըսիս ա.- Ղորթ ա, հենի, ութն-տասն հուգիյն, մահակնեն դիրած ուսուռնուն, գյոլիսն դիբի մըզ:

Չոլախը վխեցած ըսիս ա.- Տնշենու տղերք, հինչո՞ւ հետեյնք նստած, եր կացեք փախչընք:

19 (122). ԷՇԵՆ ՀԱԳԻՆ ԿՏՐԱՉՆ

Մի օր մի շինացե գենցալ ա շենեն դերեն կոշտը գենգյատ: Վըտվըտացալ ա, ասալ.- Ա դեր, իմ էշը շատ ա զըռզռալիս, հրվըներես զահլան տնիլիս, հրվընրս ալ գենցածն քյոխվեն գենգյատ արած: Քյոխվան ալ որոշած ա, որ գյոն էշես հագին կտըրըն: Էշս մեխկ ա, որ հագին կտըրն, խըղճ հեյվանը ամռնը կարի չի իրա արուևը ծծող ճանջ, մոծակ, բըռրը դեն արի, որ հագի վեչ ինի, մի տեղ ցըխը նի խրելուց՝ կարի չըմ առանց հագին փըռնիլու ցըխեն նաեե հանըմ: Ա դեր, խնթրիսմ մի ճար, մի օքնութուն արս:

Դերը պատառ խյալ-խյալ ա արալ ասալ.- Որոշած ը՞ն քանե հուգվով գյոն էշեն հագին կտրն,- հրցրալ ա դերը:

- Որոշածն, գյոն իրըք հուգի:

Դերը ծծղեցալ ա, ասալ.- Գինի ալխայիս կաց: Հիբ որ գյոն քու էշեն հագին կտըրն, դու ալ կգյոս, իմ անջուկնեն կկտրս: Գինի, ալխայիս կաց:

- Հինչո՞ւ հետե,- զարմացած հրցրալ ա շինացեն:

Դերն ասալ ա.- Լսա՞ծս մըր պապերեն էն մասալան, որ ըսիս ա. «Արկաթը տաք-տաքն թկիլիս»: Որ որոշածն լալ ինի մի մարթ գյո, էշեն հագին կտրի, էն մարթն ալ գյոլ լալ՝ իրան խըլքը գյորա՝ պատառ երկան, պատառ կարճ, մի տեղեն նհետ կտրի, գինի: Համա որ իրիք հուգիյն, սաղ չըն գյուլական: Մինը ըսլական ա. «Ասօր գիննք կտրնք»: Մինն ըսլական ա. «Ասօր ինձ բեն օնմ, կարի չըմ գյոլ, թողեք մնա էքուց գիննք»: Վերչը մի օր ալ որ գյոն, մինն ըսլական ա. «Պետկ ա հագին բերեք տակնաց կտըրնք»: Մինն ըսլական ա. «Չէ՛, էշեն տարը մեղք ա, սորին մարթ ա, էշեն հագվեն նաեե պատառ թողնք, որ մի տեղ ցըխը խրվիլուց, կարողանա փռնի, ցըխից հանի»: Լա իտի բհասն ըրլական, սազ չըն գյուլական, մինը, մինեն նաեե նղացած էշեն հագին առանց կտրելու, թուղլականն, գինն: Որովհետև խոսքը մինենը չի, իրըք հուգյունն ա: Այտս իտի, մինը՝ հա, մինը՝ չէ, ասօր, էքյուց գիձիլավ, մի օր ալ կմոռանան, անց կկենա, կգինի:

Դերեն ասածը կադարվալ՝ա:

Էշեն հագին կտրաչն, քանի որ խոսքը մի մարթու չի լալ, իրըք մարթու լալ:

20 (123). ԻՍ ՄԻ ԱՍԼԱՆ, ԴՈՒ ՄԻ ԱՍԼԱՆ ԲԱԼԱ

Մի շինացու հասած ցոռնու արտ լալ: Մի մեզար հացավ լցրալն, հար նա տղա գենցալ արտը հնձիլու: Արտեն կողքեն մըծ կաղնե ծառ լալ, կող-

քեն ալ՝ սառնը ախպիր: Նստալն ծառեն շվաքմը, հացը կերալ, սառնը ջուրը խմալ, սորին քուշտացալ:

Տղան ասալ ա.- Ա հար, մի մեզար հացը մի դոնա կերալնք, պրծցրալ:

Հարն ուրախ-ուրախ ասալ ա.- Տղա ջան, մի մեզար հացը մըզ հետե հինչ ա՞, իս մի ասլան, դու մի ասլան բալա:

Այտս հարն ասալ ա.- Տղաս, սորին կերածնք, խմած՝ սարին ջուրը: Սըզիս ա, որ էս ծառեն շվաքմը մի պատառ ալ քոն իննք, դինջանանք, նոր եր կանանք, կպննք արտեն՝ ըսկսնք հինձիլը:

Դե կոշտ կերած, խմած մարթինք, կաղնե ծառու քամհար շվաք... Քոնն ինալ, քոն ինալ... Մին ալ զուրբնացալն տըսալ՝ հի՞նչ... օրը դիբի ըրակու ա դըռած, իրքննակը խրեգյ ա մնալիս, որ մար մտնի: Հըրըվան արտերեն հընձվորնեն ալ նայեն ետ դըռնալիս, գինն տոն:

Տղան ասալ ա.- Ա հար, էս դըռա չի... Քունավնք անցալ, արտը մանցալ ա հնձիլու:

Հարն ասալ ա.- Տղա ջան, պա հինչ ը՞ս ուզիս... Արտը հո՞ւ հնձի, հունչո՞ւր հնձի, իս մի հիլիվր մարթ, դու ալ մի կուճի խոխա... օզի, չօզի, արտը պետք ա մնա հնձիլու:

21 (124). ԲԱՋԱԴ ՀԱՌՀՆԸ

Իլալ ա, իլա չի, մի հիլիվր մարթ ա ինիս, մին ալ մի պառավ կնեգ, ըրկոքան ալ ձըրքըվընննե նանե ինգյածն ինիս: Կրիս չըն մի բեն արն, մի տեղ գինն: Իտուց մի տղա յա ինիս: Որոշիսն տղան փսակն, հառհնը բերըն, որ տանը բեննն անի. գինի ախպիրը ջուր բերի, տոնը հվաքի, սիրբի, ճաշ իփի, ըմննքն լվանա՝ պառավ ըսկեսուրեն բենը թիթվցրի: Տղեն փսկիսն, հառհնը բիրիս տոն: Հառհնը, դու հառհնը, ըրկոնաց նհետ քոն ա ինիս, դեչանը էն մի օրվա կեսօրը:

Ամեն օր կեսօրեն հառհնը քունե եր ա կնալիս, տանը մաչավը շոռ գյոլիս, դեսեն-դենեն մի բեն ճրիս, բիրիս, նստիս ուտիս, ցորտ ջուրն ալ իրեսսավը խմիս, գինիս, նի մտիս տղերը, յորղանը քաշն գյլխեն, իրան հետե ալխային ալլա քոն ինիս:

Իստի անց ա կնալիս մի ամես, էրկու ամես, տըսնալիս չէ՞, հառհնը իրան խասիյաթը փուխիս չի: Լա ամեն օր ուտիս ա, խմիս, խուտուրու ինգիս, քոն ինիս ալխային:

Մի օր հիլիվրը պռավեն ըսիս ա.- Ա պառավ, եք իս նա դու սոտ տեղը կըռվնք, իս ասմ ջուր կավչնի, կոժն եր կալ, գինի ախպիրը՝ ջուր բեր, ճաշ

իփի: Դու ալ ասի. հմնչիսմ կոժը շլակմ, գինմ ախպիրը: Շենեն կնանեքյը ինձ ամոթանքն տալիս, ըսիս. հառհնը օնս, խե՞ հառհնը չի գյուլիս ջուր տնիս, որ դուվս գյուլիս:

Հիլիվր նա պառավը իստի որոշիսն, գյուլիս հարսանը տեղաշորեն քուշտեն սոտ կռվիլիս: Բազադ հառհնը յուրղանեն տակեն նանե գյուլոխը բիցիրցրիս ա, ըսիս.- Իսկի ջանա բեյթուն տեղը կըռըվ մեք սարքիլ, ղըլմղալ արիլ, գյուլոխս ցվցրիլ, իս վըչ կոժ շլակուղմ, ոչ ալ ջիրու գենցուղը, իս որ բեն արուղմ լալ ինի, մնալմ լալ իմ հոր տանը, իմ հոր տան բենն ալ արի, աշկու լուս դըռնիլ: Հըրթ դիրեցեք, հըրթավ գենցեք ջիրու: Մի օր մինտ գինի, մի օր ալ՝ մինը:

Խըղըճ հիլիվր նա պառավը մնալիսն փոշման:

22 (125). ԲՌՈՒՇՆԻ ՓԱՂԵՆ ԶՈՐՈՒԹՈՒՆԸ

Մի քանե տղամարթիք իրար նհետ մի հղոք գինիսն լալ: Եշալն տըսալ՝ իրաց դիմացի սարեն դոշեն հղոքը մի մարթ, մի չտըսնված տղամարթ՝ ջանավ, ծիյան շատ ծանդր բեռնած ա, հագին փըռնած, իրան հետե խաղ ըսիլավ գինիլիս:

Էտ տղամարթինքյը վըտն կացալ, թիմիշա արալ ծիյանը, ամենը մինը իրան խըլքն կտրած, զարմացած մի բեն ասալ:

Մինը թա.- Հալա ինդի ղոչաղ ձի տըսած չըմ, առաչի դոնմն ա:

Մինը թա.- Ղորթս ըսիս: Ընդուր բեռնը օրեշ էրկու ձի կարի չի տանի:

Էտ մարթունցը ամենեն մինը մի բեն զարմանքով ասալ ա:

Ըտուց մինը, որ սուս արած լսիս լալ հնգրոնացը ըսծնուն, վերչմ ծծղեցալ ա, ասալ.- Տղերք, դուք հի՞նչ մարթինք եք, էտքան չարակամ բեներ եք ասալ՝ ծիյանը ոչ մի բեն դըռա չի: Հունչո՞ւր եք, իս թաք մհետ թարս-թարս եշըմ ծիյանը՝ ծիմ բուդուրմիշ ինի թուլ ինի, գյո նի ինգի ներքե ծորը, ըստակի:

Հնգերնեն զարմացալն, ասալ.- Չեշած ձիատարը մեխկ ա, համա դի փորձի, տըսնանք աշկերետ օժը:

Էտ մարթը վըտ ա կացալ, եշալ ծիյանը: Չհին մի բիրդամ բուդուրմիշ ա ինալ չոքյալ, խրեգ յա մանցալ, որ թոլ ինի, զոռավ իրան պահալ ա, թարազու դըռալ, եր ա կենմ, վըտ կնալիս, շարունակմ իրան հղեն:

Աշկավ տվողն ասալ ա.- Տղերք, ինդի որ իսմ եշալ ծիյանը, պետք ա յա՛ ծիմ լալ թոլ ինիլ ըստակիլ, յա՛ իմ աշկրսն լալ քուռանալ: Էրկուսեն մինը,

որ դըռա չի, ուրեմը՝ էն ծիյանը ճակատեն երե բռուշնի ծառու փադից իրբիթավթ կա կապած: Մարջու հետե, խնդրիսմ գինեք, ստուգեք:

Տղերքը նղացա չըն: Փորձու հետե գենցալև ստուգալ, տըսալ, որ դուրթավ, ծիյանը ճկատեն բռուշնի փադից նախշած իրբիթավթ կա: Զարմացած եկալն, իրաց հնգրոնացն նաղլ արալ:

23 (126). ՓԱԴԵ ԱՄԱՆԸ

Մի շինացե մարթ ա ինիլիս: Ամեն օր գինիս լալ հանդը, կալը յա բոստանը, իրան բենն ըրիլիս, ըրակունը ետ դռնալիս գյուլիս տոն, նստիս լալ, որ կնեգը մի կուտուր հաց դիրի ըռշկին: Հացեն տեղը ըսկսիս լալ զահլան տանիլը, թա.- Քու հար ասօր ճաշը թափալ ա, ջուրը վեր ա ածալ, ամանը կոտրալ ա, ալ աման ալ չկա քի հետե ճաշ գիձմ:

Մարթն ասսլ ա.- Ա կնեգ, պա հի՞նչ արմ:

Կնեգը թա.- Չեռոքտ գյուլիս ա, հորեգը եր կալ, մի փադե աման սարքի, որ հինչքան ալ վեր գիձի, դես գիձի, դեն գիձի, ալ կորտրվի վեչ:

Մարթը կնգանը խոսքը լսիլավ, բիրիս ա հիլիվր հորը հետե ճաշ ուտիլու մի աման սրքիլիս:

Մի քանե օր անց ա կնալիս, էտ մարթը բինի տեղեց գյուլիս ա, տսնալիս՝ իրան մի տաս-տսներկու տրեկան տղա օնի, հորեգը եր ա կալած մի փադ՝ տշտուշերիլիս:

Ասսլ ա.- Ա բալա, էտ հի՞նչս ըրլիլիս, վընտ կկտրըս: Քու հալա հորեգ բինիցիրիլետ վախտը չի:

Խոխան ըսիս ա.- Ա հար, փադի ամանմ սրքիլիս, որ դո ալ մամուն ալ իմ պապու նման որ հիլիվերեք, ծեզ ճաշ տամ, օտեք:

Խոխան որ իտի ըսիս ա, մարն ալ ա լսիլիս:

Մարթը ըսիս ա.- Ա կնեգ, խայտառակնք դըռալ: Քանե հնգեր-հրըվան լսած չի, ամանը բեր կոտրմ:

Դե ղորթ ա, փադի ամանը կոտրալն, ըսկսալ հիլիվերեն առոք-փառոք պահիլը, հունչոր որ պետքն ա: Էտ բենը ոչ մի հնգեր, հրըվան գիդացա չի: Համա դե խոխան էտ բենը մռացա չի: Հիբ որ ձեռքը մի փադու կուտուր նա հորեգ ա հնգալ, եր ա կալալ տշտշորալ: Յու որ հրցալ ա.- Բալա, էտ հի՞նչս ըրիլիս, խոխան ասալ ա.- Փադե ամանմ սրքիս, որ իմ հար, իմ մար մծացած վախտը իրաց ճաշ տամ:

Խոխան էտ գաղտնիքը բեց ա արալ, տարածվալ ա շենավը մին, միալովը մին, դեչանը վըր եկալ ա հասալ մըզ:

24 (127). ԱՐՋԵՆ ԽՐԱՏԸ

Էրկու հնգեր խոսք մինն ըրիլս, որ գինն ծմակմ արջ վեր գիձն, տանն մորթեն, մըսը ծախն, հուրստանան:

Գինիսն հսնիս ծմակը: Արջը դուս ա գյուլիս, հնգրոցնացը մինը վխոթունեն փխչիս ա, գինիս եռ ինիս մի ծառու:

Էն մի հնգերն ալ լսած ա ինիս, որ արջը մըռած մարթեն վնաս չի տալիս: Ինքն ալ խոտորու ա ինգիլիս, նափասը փորը գիծիս:

Արջը գյուլիս ա խոտորու ինգյած մարթեն վթվըթս, անջուկ դիրիս, տսնալիս, որ նափաս չօնի, գյուլոխը կախ գիծած, մրթմրթալավ թուղիս, գինիլիս:

Ծառեն եռնած հնգերը թայդի գյուլիս ա հնգորն նանե հրցրիլիս, թա.- Արջը քու անջուկեն հի՞նչ ա ասալ:

Հնգերն ըսիս ա, որ.- Արջն էրկու խրատ ա տվալ: Ասալ ա՝ մին վախ մարթու նետտ հնգրեթուն վեչ արս: Մին ալ՝ քանե արջը վեր չըս գիծած, առուտոր վեչ արս:

25 (128). ՀԵՆԳ ՓԱՓԱՂ ՄԻ ՄՈՐԹՈՒՑ

Աշխարքեն մի թուլք-թավաքի մարթու ծեռք մի գյոռան մորթե ա ինգիլիս:

Մորթեն եր ա ունիս, գինիս մի ուստու կոշտ: Փափաղ կարուղ ուստան յիշիս ա մորթուն, յիշիս մորթե տանուղ մարթեն գիլխեն, ըսիս ա.- Քու գյլխեն հետե մի վչխարու մորթե ա պետք, էս կուճի ա:

Շինացեն նղացած մորթեն եր ա ունիս, գինիս մի օրեշ ուստու կոշտ: Էտ ուստան ըսիս ա.- Շատ սորուն, քի հետե քու օզած փափաղը կկարմ:

Էս շինացեն դուս ա գյուլիս, քյուչան վըտ կնալիս, պատառ խիյալ ըրիս, որ՝ կա-չկա, էս մորթուն նանե իվիլընական ա, որ ուստան օրախ-օրախ ա իրան հղե դիրալ: Ետ ա դռնալիս, գինիս ուստեն կոշտը, ըսիլիս.- Ուստա ջան, թա մորթուն նանե կիվիլանա, մի փափաղ ալ իմ հոր հետե կարի, լա սհաբ ա, մըծ մարթ ա, նայե գյուլոխը բեց, քի հետե շատ աղոթք կանի:

- Շատ պարի, մինն ալ քու հոր հետե կկարըմ,- օրախ-օրախ խոսք ա տալիս ուստան:

Շինացեն վըտ ա կնալիս պատառ խիյալ-խիյալ ըրիս, ըսիլիս.- Ուստա ջան, մի բեն ալ ասմ:

- Ասի, կլսըմ,- նորից համեստ ըսիս ա ուստան:

- Դե, հի՞նչ ասմ, մի ախպեր օնըմ, ունդուր գյլոխն ալ ա բեց, թա դուս կգյո՞ մինն ալ ախպուրս հետե կկարս:

- Դուս կգյո, կարող ա դեռ մի կուտուր ալ իվիլանա,- միամիտ գյուղացուն պատասխանում ա փորձված ուստան:

Ուստի ջուղաբեն երե մուրթատարը ռիսկի ա գյոլիս, հմնչիլավ ըսիս.- Ուստա ջան, դե որ իտի շնորք օնիս, վնաս չօնի, օմեն մինը պատառ ալնըղ արս, յոլա կտանի, մի տղա օնըմ, մինն ալ տղես հետե կարի, թող էն ալ ուլխանա, հալա փափաղ դիրած կա վչնի:

- Կկարմ, իմ պարի հրևան, տղետ հետե յալ կկարմ: Թա թոռնը օնս, ուզիսս մինն ալ թոռանտ հետե կարմ:

Ուստեն պարի խոսքեն երե շինացեն շատ ուլխնալիս ա, աղոթք ըրիլավ գինիլիս:

Պայման դիրած օրը շինացեն գյոլիս ա դուքանը: Ուստան ըսիս ա.- Դե մատըրտ ցեց կալած, ձեռքդ դիք պահի:

Շինացեն ուստեն ասածը կդրիս ա: Ուստան շինացուն օմեն մի մատանը երե մի փափաղ ա դիրիլիս: Շինացեն զրմացած հրցրիլիս ա.- Ուստա, էս հի՞նչ'ս արած:

Ուստան հանգիստ պատասխանիս ա.- Աչքը չօ՞նս, տսնալի՞ս չըս, որ մի գյոռան մորթա նանե հենգ փափաղմ կարած:

26 (129). ՉՈՒԲԱՆԵՆ ՀՐՍԱՆԵՔՆ ԿԱՆՉԱԼ

Մի շենու չոբան մի ըրակու գյոլիս ա տոն, տսնալիս՝ կնեգը ինքն-իրան ծափ ա տալիս, ուլխնալիս, պար գյոլիս:

- Հի՞նչ ա պդահած, ա կնեգ,- զըրմացած հրցրիս ա չոբանը:

Կնեգը օրախ-օրախ ըսիս ա.- Շենմը աւսօր հրսանեք կա: Քի ալ մարթն հսաբ արած, հրսանեք կանչած:

Չոբանը խոսիս չի: Նի ա մտիս տոն, նստիլիս, կնգանը ըսիս, որ՝ քողցածմ, հաց բեր օտմ:

Էս խոսքեն երե չոբանեն կնեգը մնալիս ա մաթալ, ըսիլիս.- Ա մարթ, պա հռնքատարը բրինձավ փլավն իփած, եզնն մորթած, յախնի իփած: Պա որ տան հաց օտս, քուշտանաս, հռքնատանը հի՞նչ պետք ա արս:

Չոբանը ծծղիս ա, կնգան ըսիլիս.- Ա կնեգ, ինձ որ հրսանեքն կանչած, տննական չըն դերեն, քյուխվեն կողքեն նստցրն, փլավ, յախնի ուտըցըրն: Հռքնատանը յա ջուր կա կրիլու, յա փադ կա ճրղատիլու:

27 (130). ԱՆՄԸ ՓՈԽԱԼՆ

Քյոհնա այամեն մի շենու դեր, թա մի մարթու կնքիլիս հինչ անմ լալ դիրած, կարի չըմ ասի: էն գիդամ, որ էտ խելունք, անշառ մարթեն շինացեք ըսիսն լալ Վըչխար:

էտ խըղճ մարթեն իլած-չիլածը մի թաք գլոխ եզն ա հնիլիս:

Մի գիրագի օր բիրիս ա էզնը մուրթիլիս, սաղ շենեն ջամիաքը կընչիս, բիրիս իրան տոնը, քեփ սրքիլիս, ուտցրիս, խմցրիս, համալ խնքրիս, որ ամոթ ա, ալ իրան վըչխար վեչ ասն, փոխն, մի սորուն անմ դիրն:

Շինացեք խյալ-խյալըն ըրիս, որոշիս. «Որ էս մարթը էսքան խելունք, անշառ պարի մարթ ա, ալ վըչխար վեչ ասնք: Եկեք ըստուր ետը գյոռնը ասնք»:

էքսի օրը էտ մարթեն կնեգը կոժն եր ա ունիս, գինիս ախպիրը ջուր բերի: Շենեն կնանենքը հվքվիսն, հրցրիլիս, թա.- Մարթետ թազա անմը հի՞նչն դիրած:

Կնեգը օրախ-օրախ ըսիս ա.- Գյոռնը:

Հրցրող կնանոնցը մինը ծծղիլավ ըսիս ա.- Քյոլը գյլխետ, ալլա մի տարոց ետե գյոռնը դռնական ա վըչխար:

28 (131). ԱԽՊՈՒՐԸ ՍԸՐՏԸ

Էրկու ախպեր ըն հնիլիս: Փսակվմն, դռնալիս խոխատար:

Գյոլիս ա ժամանակը, ախպեր ախպուր նանե բուժոնվմն, իրանց հետե առանձին-առանձին տոն դռնալիս:

Ըմռանը ամեն մինը իրան փայ արտը հնձիս ա, իրան արթակ աշան ըրիս, ցորենը կալմը թիղիլիս: Քիշերը ետի ա հսնիս, կրիլս չըն ցորենը կրըն, տաննն տոն:

Էրկու ախպերն ալ քիշերը մնալիսն կալերմը:

Մըծ ախպերը խիյալ ա ըրիս, որ. «Իմ ախպերս խուխատար ա: Տարեն ալ պատառ քյասադ ա: Քանի քիշեր ա, ոչ մի օրեշ մարթ կա վըչ նի, մի ջվալ ցորեն լցնըմ, տանմ իմ ախպուր կալմը խառնմ թեղեն»:

Համաս էտ վախտն ալ կուշի ախպերը իրան կալմն ա խիյալ ըրիս, որ. «Իմ մըծ ախպուր ղունուղնեն շատն հնիլիս, տարեն ալ քյասադ ա: Մի ջվալ ցորեն տանըմ վեր ածըմ իմ ախպոր ցոռնեն երե»:

Կլմաչեն իլած հղցին կեսմը, մթեն կեսքիշերեն, էրկու ախպեր ցոռնավ լիգը ջվլնեն շլակած ուռուջահն գյոլիս:

Ջվլնեն վեր ըն դիրիս, օմեն միննը իրան սրտեն խոսքն ըսիս ա, խստիլիս, լեց ինիս:

29 (132). ՔԱՆԴԻԼԸ՝ ՔԱՆԴԻԼ Ա

էրկու ախպեր ըն ինիլիս: Մըծ ախպերը շատ ղեյրաթի ա ինիլիս: Քիշեր-ցիրկ բեն ա ըրիս, տոն դիրիս, որ հընգեր-հրվանա նաեե ետ վեչ մնա:

Կուճի ախպերը հակառակն ա ինիլիս: Գինիլիս չի բեն: Ուտիս ա, խմիս, իրան հետե պարապ շոռ գյոլիս: Պդահած ալ՝ իրան խըլքեն թայ-թուշ տղեք ա հվքիս, բիրիս տոն, քեփ սրքիլիս:

Մի ըրակու ալ մըծ ախպերը ինջինմիշ իլած արտեն նհետ գյոլիս ա, տսնալիս՝ իրաց տանը նաեե զուռնա-դհոլա սաս ա գյոլիս: Զրմացած, կնգանը նաեե հրցրիլիս ա.- Ա կնեգ, էտ հի՞նչ հրսանեք ա:

Կնեգը՝ օնքրը ետե տված, ըսիս ա.- Հրսանեք չի, ախպերտ ա, ալլա ըսկսած ա քանդիլը:

Մըծ ախպերը, սալամաթ նստիս ա դրքեն շունքփադեն երե, կզնված ըսիլիս.- Դե որ քանդիլ ա՝ քանդիլ ա, ա կնեգ, գինի պատառ մածուն կոկե, նի ածի մի ջամ, բեր խմըմ:

30 (133). ԷՐԿՈՒ ՋՈՒ

էրկու ախպերն ինիս: Օմեն միննեն օխտը խոխա յա ինիս: Իտունք էնքան սերովն ինիս, էնքան յոլարար, որ սաղ շինացեք ըսդոց ներակն տալիս:

Մի օր էրկու տաքիրկնաննենք խոսք միննն ըրիլիս, թա՝ եք մի սոտ կռըվ սարքնք, տըսնընք մըր տան յոլայաթրեթունը մզանե ա, թա չէ՝ իրանց նաեե:

Մի ըրակու մըծ ախպերը արտեն նհետ գյոլիս ա տոն թա չէ, կնեգն ըսկսիս ա լեց-շիվանը դիրիլը, թա. «Ըխպրակենը իրան լսիս չի: Օմեն օր էրկու ծու ուջաղեն մուտմուտմը խրվիլիս ա, ուտիս, իրան տալիս չի: Մի բերան ասած տեղն ալ մի կռըվ ա սրքիլիս, իրան վեր թկիլիս: Ճարը կտրած, դոստ ու դուշմանի խաթր, լալեգմ մնալիս: Իստիթոնավ ալ կարի չըմ դմանալ, պետք ա բուժոնվնք»:

Մըծ ախպերը կնգա ասածնուն, լեցեն ալ կրիլս չի դիմանալ: Եր ա կնալիս, ախպուրը կնգանը ուշունց տալավ վեր թկիլիս:

էտ սհաթեն կուճի ախպերն ա գյոլիս տոն: Տեղեկնալիս ա, որ կռըվը էրկու ծվա գյլխոմ ա, ավելի մըծ ղալմաղալ ա դուս գյոլիս:

Վերչը բենը հսնիս ա տեղը, որ էրկու ախպեր որոշիսն նման խայտառակութունը քանի ոչ մի դոստ ու դուշման լսած չի, սուսուփուս բուժոնվն, օմեն մարթ իրան հետե գինի ապրի:

էրկու ախպեր նստիսն, որ տան իլած-չիլածը բուժոնն, էդ սհաթեն ծծղիլավ նի յըն մտիս տոն, ըխպիրկնաենքը ծծղիլավ ըսիլիս.- Գիդացեք, որ տան յոլայաթրեթունը մանակ ծզանե չի, մզանե ալ ա:

31 (134). ՊԱՐՏՔՍՄ ՏԱԼԻՍ

Ըշխարքի օմեն վատն նան պարին տըսած մի հիլիվր մարթ բարատու ծառու շեվըր լալ տնգիլիս:

- Քի ումո՞ւդ օնս, որ էտ շեվերեն բարը կարողս օտիլ, որ տնգիսս,- հրցրիլիս ա հղոքն անցուղ մի ջահիլ մարթ:

- Իս բարն ուտիլու հետե չըմ տնգիս, իմ պարտքնմ տալիս: Ինծանե առաչ եկողնեն տնգած լալ, իս կերալմ, մհեգ ալ իս տնգիսմ, որ ինծանե ետե եկողնեն օտն:

32 (135). ՕՄԵՆ ՕՐ ԻՄ ՕՐԸ ԷՍ Ա

Կասի՝ մհետ մի իրփիվերի կնեգ ա ինիս: էտ կնգանը էրկու տղա խոխա յա ինիլիս: Ար ա ըրիս, քիշեր-ցիրկ ա ըրիս, խոխենքը պհիս, մծցրիս, փսկիլիս, տնատար ըրիլիս:

Մի օր տղեքը մորն ըսիսն.- Ա մար, քանե մընք կուճի ինք իլալ, քու շելակը ծանդր լալ, դու շատ օրախս լալ: Մհեգ որ էրկու հռնատարս, օրբաօր խումարս դռնալիս, լղրիսս, ալ ծըծաղ ալ գյոլիս չի բերանետ:

Մարը կարճ ըսիս ա.- Մըծ աշխարք ա, իդի ալ կինի:

Մի քիշեր տղեքը տանը մի քյունջմ գյողն կնալիս՝ յանի շուդավ գենցածն բեն, որ տըսնան տանը հի՞նչ ա կադարվիլիս:

Քշանաց շուդավ հառնրը երն կնալիս, տղերեն մաչեն նստիս, ըսկեսուրեն ըսիս, որ շուդ անի, օմեն օրվա բենը արի:

Ըսկեսուրը տոնը սրբիս ա, օջաղ վռիլիս, ձու իփիս, սուփրա բինալիս, ջուր ա բիրիս հառնրը իրիսնեն լվնալիսն, նստիս հաց ուտիլիս: Ըսկեսուրն ալ՝ ձեռքրը խտտած, մնալիս ա վըտը:

Հառնրը հացն ուտիսն, ըսիս.- Դե մընք ծափ տանք, դու պար եք, պատառ ուլխանանք:

Ըսկեսուրը համ պար ա գյուլիս, համ ալ լեց ինիլավ, ձեռքրը բիցրցիրալ ա, երքիլավ ասալ.- Օմեն օր իմ օրը էս ա, օմեն օր իմ օրը էս ա:

Հառհնրն ալ ըսկեսուրեն երքեն նա պարեն երե ըսկսալն հռհռալավ ծափ տալն:

Էտ վախտը մի բիրդոմ, տանը քյունջեն նանե ջոխտ ախպերը դուսն եկալ, չումբղնեն ծրռքըռնան: Ըսկսալն հռհներեն հասիլիլը: Մի սորին թակիլեն ետը, իրաց կնանոնցը ասալն. տանը մաչեն հարսանը պարտքն, անելիքն վըրն ա, ըսկեսուրեն պարտքն, անելիքն վըրը:

Էտ օրվա նհետ էտ տան կարքն ու կանոնը փոխվալ ա: Հինչ որ քյոհնադան ղայդա կար, էտ ղիյդավըն ալ հառհնրն ըսկսալն խիտմար անիլ իրաց ըսկեսուրեն:

33 (136). ԳՅՈՂԵՆ ՋՈՒՌՆԵՆ ՍԱՍԸ

Միետ մի գյող գենցալ ա մի մարթա տոն թլանի: Ըրկոնա մթնեն լալ: Գյողը ըսկսալ ա ծեռքեն մշառավը տան դրքեն փականքը կտրիլը:

Տնատըռնը՝ դունեն նանե բեխաբար, մի թոլի-թավաքի հրևան լալ: Տանը քուշտավը անցկնալիս տեղը գյողեն տըսալ ա, հրցրալ.- էտ հի՞նչս ըրիս:

- Ջուռնա յըմ ըծիս,- ասսլ ա գյողը:

- Պա զուռնա յըս ըծիս, զուռնեն սասը խե՞ չի լսվիլիս:

- Իմ ածած զուռնեն սասը դու էքուց կլըսս,- ասալ ա գյողը:

Միամիտ մարթը բեն չի գյուլխու ինգյալ: Թողալ ա, գենցալ:

Էքսի քշանաց շենը սաս ա ինգյալ, որ փլան մարթեն տոնը գյող ա նի մտած, թլանած, տարած:

Սասը հասնմ ա թոլի-թավաքի հրվանեն: Հրևանը գյոլոխը քորիս ա, ինքը իրան ըսիլիս. ընդուր հետե յա էն շան տղան ասալ՝ «Իմ ածած զուռնեն սասը էքուց կլսըս»:

34 (137). ՋՂՑՊԱՆԵՆ ՕՂՈՐՄԻՆ

Մի ջղացպան իրան տղեն նասիաթ լալ տալիս՝ նաղլ ա արալ, որ.- Իմ հար ալ լալ ջղացպան: Շինացեն որ դանը բիրիս լալ ըղալու, իմ հար շհադը էր լալ ունիս՝ դանեն կեսն ըղալեն ետը: Իմ հոր որ միշտ օղորմի տան

շինացեք, դանը որ բիրիսն լալ ջղացմը իս սհաթտա ջվալեն ըռըխը բենմմ լալ, շհադը եր օնըմ: Այտս անջուկս կախմ լալ գիծիս, թա տըսնամ դինատարն հի՞նչ ա ըսիլիս: Դե, լսիսմ լալ, որ դինատարը քթեն տակեն թիաթավ, քրմնջալավ ասիլ լալ. «Ղորմա հորը: Հարը դանեն կեսը ըղալեն ետն լալ շհադ եր ունիլիս, ինքը՝ հալա չղացած: Պա դու հի՞նչ կարս, որ իմ մռնիլեն ետը շինացեք ինձ ալ օղորմի տան»,- հարը հրցրիլ ա տղեն:

- Այ հորդ օղորմի, տեղտ հինչ դիժեր բեն կաննի: Շինացեն որ դանը կբերի ջղացեն դրքեն վեր դիրի, իս ալ շհադը դրքեն եր կօնմ: Ինձ ալ կասն. «Ղորմա հորը, հարը նեսմն լալ շհադ եր ունիս, ինքը՝ դրքեն»:

35 (138). ՏԸՂԵՆ ՋՈՒՂԱԲ

Կասի՝ մհետ մի տղա ուզեցալ ա նշանվի: Հինչ տեղ գենցալ ա, հինչուր աղչիգ նշանցն տըվալ, ոչ մինեն բագան չի արալ: Օմեն մինեն երե մի փոթ ա դիրալ, ծծղեցալ:

Վերչը մի օր էտ տղեն խաբարն տվալ, որ քու ուզածեն նման մի աղչիգ փլան շենմը կա:

Տղան գենցալ ա, կապալ եռ ինալ ծիյանը, գենցալ դուս եկալ նշանց տված շենը: Տըսալ ա՝ աղչիգը նայե էրկու հրկանե օթախեն փանջարեն ըռշկին նստած նաե գյուլբաք գյուրծիլիս:

Տղան ծին վընն ա արալ, աջ ձեռքը դեմ տվալ չինին, ձեխե ձեռքն ալ կողքեն այտս ըղչիգյանն ասալ.- Այ աղչի, քու հար տա՞ն ա:

- Չէ,- ասալ ա աղչիգը:

- Պա ըշտե՞ղ ա գենցած,- ալլա հրցրալ ա տղան:

- Գենցած ա էրկու հաչա կտրի, բերի, որ մինը դեմ տա չնիտ, մինն ալ՝ կողքետ, որ դու սորուն դուզվս, խոսիլեն թահրը գիդաս...

Տղան պատառ խիյալ-խիյալ ա արալ, ծիյանը գյուլոխը շոռ տվալ, գենցալ:

36 (139). ՎԸՍԿԵՆ ԱԼԼԱ ՄԱՆՑԱԼ Ա ԱՆՏԵՐ

Մհետ իրք ջահիլ որոշալն գինն ղարիբեթուն, փող աշխադն, բերն փսակվն, տոն-տեղ դըռնան:

Գենցալն շատ տեղն շոռ եկալ, շատ քաղաքներ նի մտալ, դուս եկալ, իրաց հետե հարմար բեն չըն ճարալ, որ աշխադն:

Թա հինչքան վախտ ա անցկացալ, գենցալ, Աստուծ ա գիդացալ: Ախրը քոռուփեշման ետն դըռալ, որ գյոն տոն:

Մի ծմակավ գյոլիս տեղը ջիհալն մի սառը ախպիրու, կողքեն մի նախշուտ յալլխ փռած, երե ալ՝ վըսկե փողավ լիգը մի քիսա դիրած:

Տղեքը շատն ուլխացալ: Որոշալն՝ էտ լա Աստոծ ա ղորկած իրաց հետե, իրաք հալալ-զուլալ մտքի, սրտի տեր մարթիքն:

Համա դե հի՞նչ արած, շատն լալ քողցած: Բերալն մի վըսկե տվալ կուճի ընգորը, որ գինի մի շեն ճարի, պատառ հաց օնի, բերի:

Կուճի հնգերը գենցալ ա մի շեն ճարալ, հաց ա կալալ, կերալ, կուշտացալ, այտս խյալ արալ, որ հնգրոնացը փայ հացը զհարլամիշ արի, տանի օտն՝ մըռնն, վըսկեն թեխյա մնա իրան:

Էն էրկու հնգերն ալ որոշալն, որ կուճի հնգորը սպանն՝ վըսկեն մնա իրանց:

Հնգերը եկալ ա, հացը բերալ, երն կալալ սպանալ: Հացը կերալն իրաք ալ մըռալ: Վըսկեն ալլա մանցալ ա անտեր:

37 (140). ՄԻՆԸ՝ ՇԻՆԻԼԱՎ, ՄԻՆԸ՝ ՔՆԴԻԼԱՎ

Կասի՝ մհետ մի պարի ժառանգ մարթ ըշխարքմը հիշատակ թողնիլու հետե իրան դովրիբարեն հղթկնան երե բերալ ա քռասուն կարմունջ կապալ: էտ մարթեն անմը երգիրավ մին տարածվալ ա, իրան կդարած մըծ շնորքեն հետե:

Մի բադ ժառանգ մարթ ալ լսալ ա, նախանձալ: Նստալ ա, խիյալ-խիյալ արալ, թա. «Իս հի՞նչ արմ, որ աշխարքմս մի անմ թողնմ»:

էտ շառանգազ մարթը բերալ ա կազմակերպալ, էն պարի մարթեն շինած քռասուն կարմունջնեն քարուքանդ արալ:

Դե, դեչանը ասօր ալ էն պարի մարթեն անմը հիշվիս ա՝ իր արած պարի բենեն հետե:

Էն բեդասիլ մարթեն անմն ալ հիշվիս ա՝ իրան կատարած չար, նախանձ, լավը չկամեցող, չար բենեն հետե:

38 (141). ՆԱՆԱՆ ԼՈՌՆ ՈՒՏԻ

Կասի՝ մի կնգան օխտը խոխա լալ:

էտ կնեգը բերիլ լալ չորք ձու իփիլ՝ օմեն մի խուխեն մի ճոթ ձու լալ տալիս, մի ճոթն ալ՝ ինքն լալ ուտիլիս:

Խոխենքը նղնալիսն լալ, ունքռնեն երի տալիս, թա՝ մըր մար ղիմիշ չի ըրիլիս մարթս մի ձու տա, մի ճոթ ա տալիս:

Պդահիլ լալ, որ հարսանը բենը շատ լալ ինիլիս, խոխենցը հետե ձուն ըսկեսուրն լալ իփիլիս՝ խուխենցը նանան: Նանան բիրիս լալ, օխտը ձու իփիս, օմեն մի թոռանը մի ձու տալիս: Խոխենքը ուլխնալիսն լալ, ըշխարքավը մին դռնալիս, որ. նանան մըզ մարթա մի ձու ա տվալ:

Լա որ խոխենքն ուզիսն լալ ձուն օտն, նանան ըսիս լալ.- Չեր նանան չոռն օտի, այ խոխենք: Իս ինձ հետե ձու չըմ իփած: Դե որ մարթա մինը տվածմ ձեզ, դուք ալ մարթա մի ճոթ ձու տվեցեք ինձ:

Խոխենքը վրազ ձուն ճոթն լալ ըրիս, կեսը տալիս նանան:

39 (142). ԴՈՒ ՇՎԵՆ ԱԾԱԼՍ

Մի մարթ ձիյանը երե նստած շենեն մաչավը գինիս լալ: Շենեն մեյդանոմը հվաքված, նստոտած պարապ-սարապ մարթիք ձիավորեն հրցրալն, թա.- Հրըվան, ըշտե՞ղս գինիլիս՝ իտի ձիավորված:

- Գինիսմ քաղաք,- ասսլ ա ձիավորը:

էտ պարապ մարթունցը մինը, թա.- Իմ տղես հետե մի շվե կբերս:

- Աչքես երե,- ասալ ա ձիավորը:

- Ադա, իմ տղաս ալ ա տզտզալիս շիվե հետե, ղորմա հորտ, մի շիվե ալ իմ տղես հետե կբերս:

Դե, շինացե մարթու խասյաթ ա, տեղեն եր կանողը մի բեն թափշուր ա արալ, համա ոչ մինը ձեռքը տարա չի ջուբը, մի ղռան փող դուս կալալ, տվալ:

Վերչմը մի ջահիլ տղա առաչ ա կացալ, ջուբեն նանե մի ղռննանոց դուս կալալ, տվալ ձիավորեն, ասալ.- Հրըվան, խընթրիսմ մի շվե ալ ինձ հետե բերս:

Ձիավորը ասալ ա.- Շատ ապրս, ախպոր տղա, էդքանեն մաչեն դու շիվեն ածալս:

40 (143). ՎԸՂԵՆ ՔՂՑՐԵԹՈՒՆԸ

Մարթը արսա յա էկած վըղից, ըպրիս ա վըղեն քաղցրութունավ, մռնիս ա վըղի քաղցրութինից անկոշտ[16]:

[16] Այսպես էր սկսում առակը Հարություն Աղաջանյանը (ծան.բանահավաքի):

Էրկու շենու ջամիաթ իրանց շնթկնոն արանքըմը ինգած վըղեն սադդեն հետե միշտ անբարիշտն լալ: Աջի թիրափեն շինացեք ըսիս լալ՝ սադդը տեղեն նհետ ա, ձեխեն թիրափեն մարթիք ալ ըսիս ըն լալ, թա՝ չի, դուք սխալ եք, տեղեն նհետ ա: Մնալիսն լալ միշտ անհաշտ:

Էտ էրկու շենեն ջամիաթեն մաչեն խելոնք մարթիքն դուս եկալ, որոշալն. Օմեն մի շենմ մի ջոկ վըրծակ պահն: Վրծկնուն կողքեն օմեն մի շենից մի մարթ նստի, որ խայինեթուն վեչ արն: Էտ վըրծկնեն քիշերը որ կանչն, ղասիդնեն հղե ինգին, հինչ տեղ որ իրարու ջհին, սադը դըռնք տեղը:

Աջի թիրափեն շենեն մարթիքը բազադն լալ: Իտոք իրաց վրծակեն քողցածն պահալ: Դե, հինչուր քողցած մարթեն քոնը որ տանի չի, ինդի ալ՝ քողցած վրծակեն քոնը տնիս չի: Կես քիշերեն ղի ա տալիս՝ ծուղրուղու կնչիս: Ղասիդը եր ա կնալիս հղե ինգիս:

Չեխե թիրափեն շինացեք վրծակեն սորուն կոտն տալիս քուշտցրիս: Լուսաստղը դուս ա գյոլիս, վըրծակը զոռավ քնից եր ա կնալիս, կնչիլիս:

Իտուք տսնալիսն որ տարվածն, ղասիդը թքիս ա հափռըմը հինչքան օժ օնի, վազ տալիս: Միս ալ էն ա տսնալիս՝ էն միս շենեն ղասիդը եկալ ա առաչը: Ճարը կտրած խուտուրու ա ինգիս, ձերքրըն ալ յրկնցնիս, նափասը կտրած ըսիլիս. դեչանը տեղս մըրն ա...

41 (144). ԴԵՐԵՆ ՄՐՈՔԸ

Մի տարե գյորոնքը շատ թուռութաց ա իլալ: Մի ամես քիմի միալեն մախլուղը իրիննակեն իրիսը տըսա չըն:

Դե քյոհնա ըյամեն մարթինքը միեգուց մարթկանց նման օյաղ չըն լալ, թուլի, թավաքի, միամիտ մարթիքն լալ: Թոռութողբը որ շատ ա յրկննալիս, իրիննակը ըրվալիս չի, շենեն մախլուղը հվաքվմ ա, գինիս դերեն տոնը, դերեն նաներ հրցրիլիս.- Ա դեր, պա իրիննակը հի՞նչ ա դըռած, որ ըրվալիս չի:

Դերը միետ վեզն ա քորիս, միետ՝ մրոքը, պատառ խյալ-խյալ ըրիս, ըսիլիս.- Դե իրիննակ ա ալի, կարող ա Աստուծեն նաներ նղացած ա, խռռված ալ դուս չի գյոլիս: Կարող ա շատ ա ինջհնմիշ իլած, նայե սարեն եթկեն մի քրտակում խտուրու ա ինգած քոն ա իլած, դինջհնալիս: Իրիննակեն բենը հո՞ւ կգիդա:

Շինացեք ըսիսն.- Ա դեր, մըր ձեռքն ա՝ քու յախան: Մընք առանց իրինանակ կարի չընք ապրի: Ղորմա ծնողանցտ, եր կաց, ինգի մըր առաչը, մընք ալ քի նետ գինընք իրինանակը ճարնք:

Դերը ըռշկին, շինացեք հետեն՝ գինիս, գինիս, բեցուր սարեն դոշումը մի խոր քրատակն ճրիլիս: Յիշիս տսնալիս՝ քրտակեն խորքմը մի բեն ա փսպղալիս: Շինացեք ուլխնալիսն, հարայ-հրոց տալիս, որ իրիննակը ճարալնք:

Իրիննակը դուս բիրելու հետե առաչ դերն ա նի մտիս քրատակը:

Մին ալ էնն լսիլիս, որ դերը ճղճղալիս ա: Շինացեք ուլխնալիսն, որ ըհը՛, դերը իրիննակը փռնած ա: Վըտերեն նետ փռնիսն, քաշիս, քրտակեն նանե դուս բիրիս, մնալիս զարմացած: Յիշիսն տսնալիս, որ դերեն իրիսկիարը ճրղոտած ա, մրոքն ալ կավչնի:

Պատառ խիյալ-խիյալն ըրիս՝ մի էրկուսն ըսիսն, թա էս մեր դերը չի: Թա մեր դերն ա, պա մրոքն հո՞ր ա: Մի քանե հուգի ալ ըսիսն.- Չէ, լա մըր դերն ա: Հալբաթ քշանուն մրոքը բերած չի, թողած ա տան:

Դերն ալ խոսիս չի, որ մի բեն գիդան: Լուզին կապ լալ ինգած:

Դու մի ասի, քրատակը առջ ա ըղղանա իլած: Պսպղու տվուղնեն արջեն աշկրնն իլած: Դերը որ նի ա մտած քրատակը, առջը թաթրը գիծած ա, դերեն մրոքը բուք տված:

Վերչը, քրտակեն նանե դուս կալած մարթը հաստատ որոշելու հետե գինիսն դերեն կնգանը հրցրիլին: Դերեն կնեգն ըսիս ա.- Քշանաց դերը շփոթ ուտիս տեղը, վհատաց իրեսեն երե մի բեն տմտմբալիս լալ:

42 (145). ՔՅՈՒԽՎԵՆ ՓՈԽԱՆԸ

Մի տարե մի շենու ջղացեն նավը խարաբ ա դըռալ: Շենեն մախլողը՝ օմեն մի մարթ իրան կացենը երն կալալ գենցալ, որ մի ծառ կտրընն, նավ սարքն, բերն գիծն ջղացեն: Դե, շինացե մարթիքն, օմեն մինը կացենը դիրած օսսեն, հղե ա ինգիս՝ ծառ կտրիլու: Հղոքը գինիս տեղը բուսույն մտնիլիս: էն ըսիս ա՝ իմ կացենս ա սոր, էն մինը ըսիս ա՝ իմ կացենս ա սոր: Ղլմղալ ըն ըրիլիս: Մին ալ էն ըն տսնալիս, հետնաց մի ղարիբ ձիյավր ա գյոլիս, ձիան քուռակն ալ հետեն: Ձիավրը գյոլիս ա, հսնիլիս էտ մարթկանցը: Իտուք ալ կացեննեն հվաքմն, տալիս ձիավըրեն, թա՝ խոնախա, եշի տըս վըրեն կացենն ա սոր:

Խոնախան տսնալիս ա, թեխիա թուլի-թավաքի մարթիքն: Կացեննեն հվաքմ ա, ձին խռեք տալիս, գինիլիս: Շինացեք ճարնեն կտրած, ձիանը

քուռակը փռնիսն, քյուխվեն կման թեխյա ջիվիլիադիյն դռնալիս, հինչքան շոր օննն, երիյն տալիս քուռակեն, պընդ կպիս, որ քուռակեն մաշկը կոտրի, ծիավըրեն վնաս դըռնի: Քուռակը բեցն թուղիս, փխչիս ա, գինիս հսնիլիս մորը: Մաշկը կուտուրվիլիս չի:

Շինացեք զիրավն դռնալիս քյուխվեն թկիլիս, քա՝ որ դու փոխանտ հանածս լալ, ինի քուռակեն մաշկը կոտրիլ լալ:

43 (146). ՉՈՒԲԱՆԵՆ ՓԱՓԱՂԸ

Մի շենմ մի չոբան լալ: Էտ չուբաներն գլխեն բագ յարսշան մի փափաղ լալ: Մի ըրակու չոբանը վըչխրնեն հանդեն նհետ բիրիս ա շենը: Շինացեք յիշիսն, տսնալիս չուբաներն փափաղեն կեսը էրած ա: Համա գյլխեն ոչ մի վնասված, էրած տըղ չօնի: Զարմացած, տեղեն նհետ եր կանուղը հրցրիլիս ա.- Չոբան ախպեր, փափաղետ կեսը՞ հունչո՞ւրս էրած: Չոբան ախպեր, փափաղետ կեսը հունչո՞ւրս էրած:

Չոբանը մնալիս ա սուս արած, խուսիս չի: Շինացեք ալ ձեռք չընն քշիլիս, հետեն գինսն, համ ալ հրցրիլիս:

Չոբանը գյոլիս ա շեններն մեյդանչոմը մհակը դեմ տալիս չընեն, վըտ կնալիս: Շինացեք ալ հվքվիսն չոբաներն չորք թարափը:

Չուբաներն լուզին բինվալիս ա: Ըսկսիս ա նաղըլ արիլը.- Ասօր հավան ցորտ լալ: Մրսալմ: Մի թիժ կրակմ վառալ, կողքեն խտուրու ինգալ: Վչխրնեն իրաց հետե ըրծիլիսն լալ: Իս ալ քունավմ անցալ: Այտս մի վախտ զուրթնացալմ, տըսալ փափաղս գլխես նաներ վեր ա ինգած, նի ինգած կրակեն մաչը, կեսն էրած: Դե իս ալ խոսիս չըմ լալ, որ օմեն հվաքվեք մի տեղ, միետ ասմ, օմեն ալ մի դոնա լսըն:

44 (147). ՈՒՍՏԵՆ ԲԵՂԵՆ ԵՂԸ

Քյոհնա վախտը մի մըծ հայ շենըմ, մի դուլգար ա ինիլիս: Դե, հասաբալի սանադքար՝ շինացեք ուստայն լալ ըսիլիս: Ղորթ ա, ուստան քյասիբ լալ: Համա դե շենեն հարուստ մարթկանց նհետ լալ նստիս, եր կնալիս:

Դե, շենեն հարուստ մարթինքը ուտիսն լալ, խմիս, գյոլիս, հվքվիս շենեն մաչեն, մեյդանչոմը նստիս, իրաց հետե սոհբաթ ըրիլիս, եղած բղրնեն սրիլավ:

Քյասիբ ուստան ալ, ճարը կտրած, մի կուտոր էծու փին լալ ճարած, դիրած մի կուճի միսի ջամը, լա որ ուզիս լալ գինի շինամաչ, մեյդանչոմը

հարուստ մարթկանց կողքեն նստի, սոհբաթ արի, էծեն փինը եր լալ ունիս, նի քսիս բեղրը պսպղցրիս, որ հարուստ մարթիքն ալ գիդան՝ ուստան ալ ապրուստ օնի, բեղրը եղուտ ա:

Մի հետ ալ ուստան մեյդանչոմն նստած, գյուլոխը թարիփ ըրիլած, թոռնը լեց հինիլավ գյոլիս ա, ըսիս.- Պապա, կատուն բեղետ փինը գյուղացալ ա, տարալ:

45 (148). ՔԱՐ ՏՈՐ, ՑԸԽ ՏՈՐ

Մի թաքավոր մի քշանաց քնած տեղեն եր ա կնալիս, վռազ կնչիս, հվքիս վազիր-նազիրներեն, ըսիլիս, որ.- էս քիշեր ըրազի տըսլմ գյովդա մի ըմարաթմ լալ սարքած: Աստուծն ալ երգինքից եկած լալ ինձ ղոնաղ: Օրախ նստած սոհբաթնք լալ ըրիլիս: Մհեգ արազս պետք ա կդարնք: Կանչեցեք, բերեք իմ երգիրիս օմեն ճարտարնեն գիտնականեն, թող որ գյովդա էմարաթը սարքն:

Երգիրի օմեն ճարտար, գիտնական մարթինք կան, գյոլիսն թաքավերեն գյուլոխ տալիս, ըսիլիս, որ՝ ըշխարքես իրեսեն չկա մի հնարք, գյովդա շինոթուն սարքելու հետե: Թաքավերը ձեռք չի քաշմ:

Մի բազգադ մարթ ա հնիլիս: Տըսնալիս ա, որ թաքավերը անխըլք ա, գյոլիս ա թաքավերեն ըռշկն պայման դիրիլիս, թա.- Թաքավերն ապրած կենա, դու ինձ մի քսակ վըսկե տոր, քռասուն օր ալ վախտը: Իս գինմ էրկու ճարտար բերմ, գյովդա վըտ կենան՝ էմարաթ շարն, էն պայմանավ, որ քար, ցըխ տվող փահլան ալ պետք ա դու տաս:

Թաքավերը ուլխնալիս ա, պայմանը հաստադմ:

Բազգադ մարթը գինիս ա էրկու թութիղուշ ունիլիս: Մինեն սվրցրիս ա՝ քար տոր, էն մինեն ալ սվրցրիլիս՝ ցըխ տոր:

Քառասուն օրեն ետը թութիղուշրը բիրիս ա թաքավերեն էմարաթեն ըռշկին թռցրիլիս: Ղուշը գյովդա թռիսն, կնչիլիս՝ «քար տոր, ցըխ տոր, քար տոր, ցըխ տոր...»:

Թաքավերը գյուլոխ ա հնգիլիս, որ խափված ա, հնարք չկա... Սուս ու փուս, վեզը քորիլավ, գինիս ա իրան թախտեն երե նստիլիս:

46 (149). ԹԱՔԱՎԵՐԵՆ ՉԻ ՕՆՈՒՂԸ

Օրերից մի օր մի թաքավեր իրան վազիր-նազիրնոն նհետ մի տեղ՝ մի շենու մաչավ անց կնալիս տեղը, գինի խմած, հարփած մի մարթ դուս ա

գյուլիս թաքավերեն առաչը, ծիանը գյամը փռնիլիս, ըսիլիս.- Ախպեր ջան, իս լա ծիուվմ լալ շոռ գյուլիս, պետք ա էս ծին ծախս, իս օնմ:

Թաքավերը տսնալիս ա՝ հարփած մարթ ա, գյլխեն խըլք չկա, ըսիս ա.- Ախպեր ջան, իս վրազ տեղըմ գինիս, ասօր ծիս կարի չըմ ծախի: Էքուց կգյոս, ծիս կծախմ, դու կօնս:

Էքսի քշանաց թաքավերեն վազիրնեն գյուլիսն, հարփած մարթեն փռնիլիս, թա.- Եք, գինինք թաքավերեն ծին կալ:

Էտ մարթը գյուլոխ ինգիլավ իրան արած սխալը, եր ա կնալիս մի բթուլ գինի դիրիս ջբոմը, նի ինգիս վազիրնոն առաչը, գինիլիս:

Թաքավերն ըսիս ա.- Հը՛, ասօր քեփտ հինչո՞ւր ա, կկա՞րս իմ ծին օնիլ:

Շինացեն ջուբեն նանե գինավ լիգը բութուլը դուս ա ունիս, դիրիս թաքավերեն ըռշկին, ըսիլիս.- Թաքավերն ապրած կենա, իս ծի օնղ չըմ: Մըր մաչեն առուտոր անուղը էս բութուլեն գինին ա: Գինուն նանե հրցրու:

47 (150). ԳԻԴԱՑԱԼՄ ԹԱՔԱՎԵՐԸ ՋՈՐԹՈՒՆ Ա

Մի շինացե մարթ մի օր արտը վրիս ա: Ըրկոնանց եզինքը դուս ըրիս տնիս մի ախպիրու երե ջուր տալիս, տսնալիս ա ախպիրին չորք թարափն ալ սորին կանեչ խոտ կա, թուղիլիս ա, որ եզինքը պատառ ըրածն, ինքն ալ դինջանա, եր կանա եզինքը եր օնի, գինի տոն:

Դե, ինջիմիշ մարթ ա ինիս: Խուտուրու ա ինգիլիս, թա չէ, քոնը տնիս ա: Մին ալ եր ա կնալիս, տսնալիս՝ եզինքը չկա: Գյողցածն տարած: Որոշիս ա գինի երգիրեն թաքավերեն գենգատ անի:

Թաքավերը շինացուն գենգատը լսիս ա, ետ դռնալիս, ըսիլիս.- Դու չոլ-յաբան տեղը խե՞ յս լալ քոն ինիս, որ եզինքնտ գյուղանան:

Շինացեն ըսիս ա.- Թաքավերն ապրած կենա, դե սաղ օրը աշխատած, բեզարած մարթմ լալ: Գիդացալմ, որ երգիրեն թաքավերը զորթուն ա իս ալխայինմ կացալ, քոն ինալ, որ պատառ դինջանամ: Համա դե որ գիդալմ լալ թաքավերը քոն ա, իս ղալաթմ լալ արի, քոն չըմ լալ ինի, իմ յիզանցը տարմ լալ կանալ: Չեռքս մնացի լալ ծոցմս, վեզս՝ թեք:

Թաքավերը շինացուն խելունք խոսքեն հետե փարման ա տալիս, որ ջոխտ եզնը բերն տան իրան: Համ ալ ըսիս ա.- Մի թաքավերեն զորթուն կնալով բեն չի ինի: Օմեն մի մարթ ալ իրան տեղը պետք ա զորթուն մնա:

48 (151). ՍԱՋԸ

Մի մարթ սազու շատ հավաս ա ունիլիս: Համա սազը ըծիլու շնորք ունիլիս չի: Դե իրան հավասը գյորա գինիս ա մի սազ ունիլիս, գյուլիս տոն, սազն եր ունիլիս, իրան հետե ճնգի-ճնգի ըրիլիս:

Էտ մարթեն կնեգը յիշիս ա սազեն, մնալիս զարմացած: Ըսիլիս ա.- Ա մարթ, ախր իս շատ սազ ածուղմ տըսած: Սազ ածուղ աշղը աջի ձեռքավ ճնգի-ճնգի ա ըրիլիս, ձեխե ձեռքն ալ սազեն երե գյլխիեր, գյլխվեր պար ա ըծիլիս: Համա դու քու ձեխե ձեռքտ ըսկի մի հետ դուռու չըս տալիս: Լա մի տեղ պահած ճնգի-ճնգի ըս ըրիլիս:

Կնգանը մարթը ծծղիս ա, սազը ածիլը թուղիս, ետ դռնալիս կնգանը ըսիս.- Ա կնեգ, էն աշղնեն, որ ձռքրնեն սազեն երե պարն ըծիլիս, ընդուք ճընգի-ճնգուն տեղը կուրցրած ինիլիս: Ձռքրնեն շոռն ըծիս, որ ճարն: Իս համա տեղը ճարածմ, ինձ հետե հանգիստ ճնգի-ճնգիմ ըրիլիս: Քու տըսած ըշղնեն, հալա շատ բեն կա, որ գյոն ինձանե սվըրն:

49 (152). ՁՈՒՌՆԱՆ

Դուներն նանե բեխաբար, Աստուծեն օրհնած մի մարթ ըպրիս լալ մի ծմակու մաչե, մի կուճի շեննմ: Էտ մարթը իրան գյանքմ ոչ զուռնա լալ տըսած, ոչ ալ՝ զուռնու սաս լալ լսած:

Էտ միամետ մարթեն մի հետ մի մըծ շեն հրսանեքն կնչիլիս: Եր ա կնալիս, գինիս հրսանեք: Հռնքոմը որ ըսկսիս զուռնեքն ածիլը, էտ մարթ մնալիս ա քար կտրած, աշկրը պլզած յիշիլիս, թա.- էն ծակ փադեն կուտորը հուչուր ա ինդի զիլ ուժեղ, քաղցր սաս ըրիլիս, որ շինացեք օմեն էն սասեն տակեն պարն գյուլիս:

Համ ալ խյալ ա ըրիս, որ զուռնեն էն նըղ տեղավն փչիսն, ինդի գյուռ սաս ա ըրիս: Պա էն լեն թրափավն փըչն, Աստուծ գիդա, հինչո՞ւր գյուռ սաս դուս կգյո:

Իրան կողքեն տեղացի մի մարթ ա ինիս վըտը, հրցրիս ա.- Այ խոնախա, էտ զուռնեն նըղ թիրափավն փչիլիս որ իտի զիլ սաս ա ըրիս, պա որ լեն թիրափավն փչըն՝ հինչուր սաս կարի:

Խոնախան ոտից-գյուլոխ չփիս ա միամիտ մարթեն, ըսիլիս.- էտ հարցը պետք ա զուռնաչուն տաս: Զուռնաչին կգիդա:

50 (153). ՋՂԱՑԵՆ ՋՈՒՐԸ-ՋՈՒՐԸ

Դե խոսք կավչնի, որ քյոհնա վախտըրը միամիտ մարթինք շատն լալ: Համա դե ինդի պարզ բիներմն լալ միամիտ ըրվալիս, որ լսող մարթն ալ մնալիս լալ զրմացած:

Կասի՝ մի մարթ ցորեն ա տնիս ջեղաց, ըղալիս: Ալուրեն նանե ջղացու պարղած ա թխիլիս, մի կոշտ ուտիլիս, ծրվիս ա:

Ջղցպանեն ըսիս ա.- Ախպեր, ծրավածմ: Պա պատառ ջուր ըշտե՞ղե ճարմ, խըմմ:

Ջղացպանը ծծղիս ա, ըսիլիս.- Այ քու հոր տոնը շեն կենա, պա ջեղացը նայե գետեն երա: Եր կաց, դուս եք, գինի սառը ջիրին նանե հինչքան կկարս, էնքան ալ խմի:

Էտ մարթը դոս ա գյոլիս յիշիս, տսնալիս, հի՞նչ՝ ղուրթավ, ջղացեն տակավը մի վարար գետ դումբ-դոմբալավ գինիս ա: Երի ա ինգիս գետեն ջրին, մի կոշտ խմիլիս: Եր ա կնալիս թրջցած բեղրը նա մրոքը սըղըլիլավ յիշիս դիբի երգինքն, ինքն իրան ըսիլիս. «Փառքտ շատ Աստուծ: Քյոհնա մարթիք հինդան, որ ջղացմը պարղած օտուղը կծրավի, որ ջեղացը բերածն գետեն երե սարքած»:

Ալ տնշեն, էն մարթեն խըլքը կտրիլիս չի, որ ջեղացը պարղած ուտողու հետե չըն գետեն երե սարքած, ջեղացը գետեն ջիրավն ա.բեն ըրիլիս:

51 (154). ՔՅՈՀՆԱ ԼՈՒՍԼՈՆԳԱՆ

Մի շինացու մարթու մի բեն շատ լալ տանջմ: Միշտ խիյալ-խիյալ լալ ըրիլիս, թա՝ որ լուսլոնգան որ նստիլիսի ա, Աստուծ քյոհնա լուսլոնգան հինչ ա ըրիլիս, որ ալ ըրվալիս չի: Էտքան քյոհնա լուսլինգենքը հի՞նչտեղ ա թուփ ըրիլիս, հունչո՞ւր տեղ ա պիհիլիս:

Էտ խըղճ մարթը որ դերու նանե, գիրըճանեչ մարթու նանե, որ հրցրիլիս լալ, ընդուք ալ պատառ խիյալ-խիյալն լալ ըրիս, ըսիլիս. «Բալամ, էտ մըծ բեն ա, ոչ միևը գիդա չի: Էդ բենը Աստուծենն ա, Աստուծ ալ կգիդա:

Պդահմ ա, միետ իրաց շենը հինչուր ա դռնալիս, մի վարթապետ ա գյոլիս: Դե, շենեն քյոխվան, աղսախկալնեն, օրեշ շատ մարթիք հվաքմն գինիս վարթապետեն կոշտը՝ հարց ու փորձն ըրիլիս, իրաց ցավեն, դարդեն մասենն խոսիլիս: Էտ քյոհնա լուսլոնգեն ցավավը տարված մարթն ալ իրան դարդն ա ըսիլիս վարթապետեն:

Վարթապետը լսիս ա շինացոն, պատառ խյալ ըրիս, ծծղիլավ պատասխան տալիս.- Այ հերն օրհնած, քյոհնա լուսլինգենքը տալիրքնե չըն, որ Աստուծ չինչինի, դիրի մի տեղ, պահի: Աստուծ քյոհնա լուսլինգենքը կուտրատիլ ա տալիս՝ աստղ, կեծակ, նման բեներ ա սարքիլ տալիս:

- Հը՞մ, էտ հավադեն մոտե ա,- ըսիս ա շինացեն:

52 (155). ՉԻԱՆԸ ԹՈՐԲԱՆ

Մի կհանա մի հետ նստիս ա ծին, գինիս հրևան շենը: Չին իրան խոնախեն դրքեն ծառեն երե կպիս ա, դրմանավ լիգը թորբան նի գիձիս ծիյանը գյլոխը, ինքը նի մտիս պարիկամեն տոնը:

Կհանան իրան խոսքը, զրոցը պարիկամեն նհետ պրծնիլեն նհետ գյուլիս ա, որ նստի ծին գինի, տսնալիս ա ծիյանը թորբեն կավչնի, գյուղացածն, տարած: Դես՝ թորբա, դեն՝ թորբա, կրիս չըն ճարի: Կուրցիլիս ա:

Չիանը թորբուն կուրցրիլը, կհանան իրան հետե անպադիվ բեն ա գիդալիս: Պատառ խիյալ ա ըրիլիս, որոշիս, որ. «Տեղս հարկավոր ա մի պիճեթուն արմ, թորբան ճարմ: Թա չի՝ էքուց ալ ծիս կգյողանան, էլօր ալ՝ ինձ»:

Կհանան բիցիրնալիս ա պարիկամեն կտորը, բեցուր սասով մի քանի հետ կնչիլիս.- Այ շինացեք, հու որ իմ ծիանը թորբան տարած ա, թող բերի: Թա չէ՝ Քրիստոսեն անմը վկա, կգինմ մըր շենը ինդի մի բեն կարըմ, որ աշխարքը լսի կզարմանա:

Թորբա տանողը լսիս ա, վխիլիս ա: Մտծիս ա, թա՝ կհանան կգինի ջադու կարի, կպլանամ: Թորբան տնիս ա տալիս դերեն, հրցրիլիս.- Թորբան որ բերի չըմ լալ, հինչս լալ արի, որ աշխարք լսիլ լալ, զարմանալ լալ:

- Այ հորտ տոնը շեն, տեղս զարմանալու հինչ բեն կա, որ դու զարմացածս իմ խոսքեն երե: Իս խիյալմ արած, որ ծիանս թորբան ճարվի չի լալ, գինիլականմ լալ մըր տոն, մըզ մի քյոհնա խուրջին լալ, կտըրմ, էրկու թորբա շինըմ: Միետ ալլա թորբան գյողցած տեղը, մի թորբա տանը հազր հնիլ լալ: Մինջատըղս թորբա գյողացողուն փիսեթունն լալ մննական:

- Այ քո հոր ալ տոնը շեն մնա, իս ինդի յըմ գիդացալ, որ դե դեր մարթ ա, թորբան որ ճարվի չի լալ, գիննականս լալ շենը ջադա արս, թորբա գյողացողը պլանա: Դուզը խոսի, պա գիդա՞լմ լալ քո ալամաթը էտ լալ, ըսկի իս թորբան բերիլմ լա՞լ:

53 (156). ԷՇԵՆ ՉՈՆ

Նոհի այամեն մի մարթ իրաց շենեն կման ոչ մի օրեշ շեն յա քաղաք գենցած տըսած չի ինիս: Մի ուշունք օր, մի էրկու հաց դիրիս ա միզարմը նի կպիս մաշկը, մհակն ալ ձեռքն ունիս, հղե ինգիս, գինիս դուս գյուլիս քաղաք:

Քաղաք, դես ա շոռ գյուլիս, դեն, տսնալիս ա բզարեն քունջումը մի տեղ ղալին մըծ-մըծ կուլուր-կոլոր բենն թայա տված: Ջարմացած վըտ ա կնալիս, յիշիս, նմնցրից ա բրանո: Դու մի ասի ծմերոկ ա: Դե սարու շինացե մարթ ա, հալա ծմերոկ տըսա չի ինիս:

Ծմերոկ ծախողը բազզադ մարթ ա ինիս: Տըսնալիս ա էտ մարթը միամիտ մարթ ա, ըսիս ա.- Էտ խե՞ յս վըտը:

- Էտ կոլոր-կոլոր բեները հի՞նչն,- հրցրիլիս ա շինացեն, մուտուննալիս մինը եր ոնիս:

- Էշու ձու ա,- ըսիս ա ծախողը:

- Խե էշը ձովա՞վ ա արսա գյուլիս,- զարմացած ըսիս ա շինացեն:

- Հա, քաղաքեն էշրը ձովավն արսա գյուլիս:

- Հի՞նչ աժի:

- Մինը մի ղռան:

Շինացեն ուլխնալիս ա: Մի ղռան տալիս ա, մինը եր ոնիս գինիս, հղե ինգիս դիբի շենը:

Մի տեղ ինջինմիշ ա դռնալիս: Ջուն դիրիս ա տափեն, որ դինջանա: Տեղն յամաջ ա ինիլիս: Ջուն թոլ ա ինիս, գինիս նի գյուլիս մի քոլու, կուտուրվիլիս: Դու մի ասի, էտ քոլեն մաչեն մի լպրաստակ ա նստած ինիս: Շխկոցեն նաներ լպրաստակը եր ա կնալիս, փխչիլիս: Խըղճ մարթը ինդի ա գիդալիս՝ էշեն քուռակն ա: Նի ա ինգիս հետեն, «չո՛ք» հա «չո՛ք» ըսիլավ վազ տալիս:

Լպրաստակը գինիս ա նի մտիս քուլոտնեն կուրչիլիս: Շինացեն ալ քռնոք ջանը կոխած, ետ ա դռնալիս, գինիս տոն:

Կնեգը տսնալիս ա, մնալիս ա զարմացած, հրցրիս ա.- Այ մարթ, քի հի՞նչ ա պդահած:

Մարթը նաղլ ա ըրիս գյլխեն էկածը:

Կնեգն ըսիս ա.- Մղափուն, մաղոլջա էշեն քուռուկը փռնածս լալ ինի, եռմ լալ ինի, գինի իմ պապոնց տոն:

Առանց էն ալ կզնված մարթը, լսիլավ կնգանը մըտքը, ավելի շատ ա կզնվիլիս: Եր ա կնալիս, մհակը եր ունիս, սկսիս կնգանը թակիլը, համալ

ըսիլիս.- Անխըլք կնեգ, պա որ եռս լալ ինի քուռակեն, մաշկը կոտրիլ լալ, ալլա մնալմ լալ առանց էշ:

54 (157). ՄԻՆԸ ԳԻԴԱԼԻՍ Ա, ՄԻՆԸ ԳԻԴԱԼԻՍ ՉԻ

Մի քյասիբ թորք, մի ուշունք օր գինիլիս ա մի հայու շեն իրան քիրվեն տոնը:

Հղեց վարար թոռ ա գյուլիս: Թորքը սորին թրջվիլիս ա: Գյուլիս ա հըսնիս քիրվեն տոնը, ըսկսիս ա դուղդուղալը:

Քիրվեն կնեգը սահաթտա բիրիս ա թուրունը վռիս, թորքեն թա.- Շորրտ հանի չրուցրի,- գինալիս:

Համա դե շալվարը հմնչիս ա հանի: Լա թրջված մնալիս ա թորնեն կողքեն վըտը:

Քիրվեն կնեգը ըստիպիս ա թորքեն, որ շալվարն ալ հանի, չրացնի գենի: Թորքը հմնչիս ա, հնիս չի շալվարը: Քիրվեն կնեգը որ թորքեն շատ ա իստիպիս, որ շալվարն ալ հանի, չուրըցրի, գենի, գեցեն չորանա չի, նամությունից կուլուզանա: Թորքեն ճարը կտրած ըսիս ա.- Ա քիրվա, ախր բիրի բիլիտսան, բիրի բիլմիրսան: Ալթդա գեյնիմդա թումանմ յոխտր («Այ բարեկամս, մինը գիդալիսս, մինն ալ գիդալիս չըս: Ախր տակնած փոխան կա վըչ գեցես»):

55 (158). ՃՂՈՒՊՈՒՐԵՆ ԾԱՌԸ

Դունյից բեխաբար մի մարթ, որ ծնված, մծացած, ապրած ա հնիլիս մի սարու շենմ, տըսած չի հնիս թա ճղուպուրը հինչուր ա արսա գյուլիս, խիյարը, բրանին հունչոր. օրերից մի օր մի բենա հետե գինիս ա աթան տեղերեն իլած մի շեն: Հալա շենեն չհասած, տըսնալիս ա հղցուն ղրտնոն շատ բեցուր, շատ հաստ ծառր կան: Ծռերեն տակեն մի քանե խոխա նստած խաղն ըրիլիս, համալ գյոռնն պիհիլիս:

Աշխարից բեխաբար էտ մարթը խոխենցը նանե հրցրիս ա.- Այ խոխենք, էս մըծ-մըծ ծառրը հի՞նչա ծառն:

- Պապո, ճղպորու ծառն:

Էտ մարթը զարմացած ըսիս ա.- Պա որ ճղոպուրը էնքան կուճի-կուճի հն, ծառրը էսքան մըծն, էնի գյորա բրանուն ծառը հինչքան մըծ կինի:

- Բրանին ծառու երե չի փիսնիլիս, պապո, բրանին տափավը յրկնացած չվանա նման երկար թաղու երա հնիլիս,- հասկացրիսն խոխենքը:

Խոխենցը ասածեն նանե մի բեն գյուլոխ չի ինգիս սարեցեն: Պատառ վըտ ա կնալիս, վեզը քորիլավ գինիլիս:

56 (159). ՄՈԹԱԼԸ

Ըմռան մի տաք օր էրկու հնգեր մի վարար գետու կողքավ հողք իրաց հետե սոհբաթ ըրիլավ գինիսիս լալ: Միհ ալ յիշիսն տսնալիս գետը մի մոթալ ա տնիլիս: Միհետ միհ զրմնալիսն:

- Ադա, կա-չկա, էն երե սարեն ուբեցուց կուշտեն նհետ եղու յա պանեբրու մոթալ ա թուլինած, նի ինգած գետը: Էս լա մըր ղսմաթն ա: Իս գետեն ջրին նանե վախի չըմ: Նի մտնմ, դուս օնըմ, տանք կես արնք: Մի տարվա ուռուզի ա,- ըսիս ա հնգրոնացը միհը, իրան նի գիծիս գետը:

Հարչան չլտարի ա ըրիս, մոթալե կրիս չի գետեն նանե դուս օնի: Գետն ալ թիաթավ-թիաթավ համ մարթեն, համ ալ մուբալեն քշիս ա տնիլիս:

Գետեն կոխկեն մանցած հնգերը կնչիս ա.- Ադա, որ կրիլիս չըս մոթալը հանիլ, բեց թող, թողի եք, բեց թող, թողի եք, օրը մթնիս ա թողնք, գիննք:

Գետեն մաչեն հնգերը պատասխնիս ա.- Իս բեցմ թուղիս, ինքը բեց չի թուղիս...

Հնգերը մնալիս ա զրմացած, թա մոթալը հունչուր ա մարթեն փռնած բեց չի թուղիս: Դու մի ասի, մոթալ չի... արջ ա ինիս գետմը լղացող:

57 (160). ՄՂԱՓՈՒՆ ԲՈՒԽԱՐԻՆ ԾՈՌ Ա

Մի մարթ միհետ գինիս ա մի տեղ իրան տղեն նշան տալու: Յիշիս ա տսնալիս ախչիգը լա նախշուտ ծրքեջիրավ, արուղ-դիրող ախչիգ ա: Համա դե աշկրը շաշ ա ինիս:

Ուզոնգանը ախչիգանը ըշկերեն շաշութունեն հետե ծնողներեն ղանդոր ըրիլու հետե, խոսքը մասալավ ա ըսիլիս: Ըսիս ա.- էս օջաղը սորուն օջաղ ա, համա դե մղափոն, որ բուխարիհն ծոռ ա:

Ըղչիգանը մարը սհաթտա գյուլխով ա ինգիս, թա ըղչիգանը հետե ուզոնգան եկած մարթը հինչ ա ուզիս ասած ինի, պատասխնիլիս ա.- Կարևորը օջաղն ա: Օջաղն որ տեղում հաստադ ա, բուխարոն ծոռեթունը խնգարմ չի: Մի բեն, որ ծոխն շատ դուզ դուս ա գյուլիս:

Ըղչիգանը մոր նման պատասխանեն երե, ուզնգանը մնալիս ա վեզը քուրիլավ խյալ-խյալ ըրիլիս:

58 (161). ԼՈՒՋԻՆ

Մի թաքավեր մհետ իր երգիրավն մին ջառա գիցիլիս, որ.- Իս մի նազրմ ուզիլիս, որ ինձանե խելուևք ինի:

Դե, շատ մարթ լսիս ա, զարմանմ ա: Շատ մարթ ալ ծծաղմ ա, թա՝ խ՞ի կարող ա ըշխարքմ ինդի մարթ ինի, որ երգիրի թաքավերից շատ գիդ ինի: Դե, խելուևք մարթիք ալըն ինիլիս, որ գինիսն թաքավերեն կոշտը, իրանց կամքը հայտնմ: Թաքավերը քննիլիս ա, բագան չի ըրիլիս:

Վերչը, մի շատ խըլքավ մարթ ալ ա գինիս թաքավերեն կոշտը, իրան կամքը հայտնմ: Թաքավերը էտ մարթեն ըսիս ա.- Գինի աշխարքեն ամենաքաղցր բենեն նանե մի ճաշ իփի, բեր օտմ:

Էտ մարթը գինիս ա բազար, վչխարու լուզի ունիս, բիրիս ճաշ իփիս տալիս թաքավերեն:

Թաքավերը ալլա էքսի օրը էտ մարթեն ըսիս ա.- Դե մհեգ ալ գինի աշխարքեն ամենադեռնը բենեն նանե մի ճաշ իփի, բեր:

Էտ մարթը գինիս ա ալլա վչխարա լուզվա նանե ճաշ իփիս, բիրիս տալիս թաքավերեն: Թաքավերը հրցրիլիս ա.- Ըրկե ճաշը հինչո՞ւ նանե յա լալ իփած:

- Վչխարա լուզվից:

- Ասօր ճաշը հինչո՞ւ նանեյս իփած:

- Ալլա լուզվու նանե:

Թաքավերը զարմացած հրցրիլիս ա.- Հունչո՞ւր կարող ա, որ լուզին համ աշխարքեն ամենաքաղցր բենը ինի, համ ալ՝ ամենադեռնը:

Ճաշ իփողը պատասխանում ա.- Թաքավերն ապրած կենա, լեզուն ինդի մի բեն ա, որ իրան քաղցր խուսիլավ կարող ա մի մարթու բիցիրցրի, հասցրի երգինք՝ թաքավորության: Համան լուզին համան մարթեն հետե դեռնը խուսիլավ, կարող ա թաքավորության հսցըրած մարթեն երգինքից վեր բերի, արի վըղեն հավասար: Ուրեմը հիբ լուզին խուսիս ա մի մարթու օգուտեն, ընդուր նանե քաղցրը չկա աշխարքմ, հիբ խոսում ա վնասեն հետե, հի՞նչ կա ընդուր նանե դեռնը աշխարքմ, հի՞նչ արմա, լուզին ա ըրիլիս: Մարթեն տոն շինողն ալ ա լուզին, տոն քանդողն ալ:

Թաքավերը պատառ խիյալ-խիյալ ա ըրիլիս, տսնալիս, որ էտ մարթը շատ տեղեն դոզ բեն ա ասալ, ըսիս ա.- Բարաքյալա: Դու որ էտ խըլքեն տարնս, իմ երգիրս կառավարելու հետե դու իդի խելոնք խոսկերավ ինձ շատ պետքի կգյոս: Իմ օզած նազիրը լա դուվս, որ կաս:

59 (162). ՄՈԿԱՆԸ ՃԱՐԸ

Կասի՝ քյոհնա այամեն մարթինքը շատ միամիտն լալ: Հու հինչ ըսիս լալ, հվտալիսն լալ: Օմեն բեն տկդիեր չըն լալ արի, երկար մտածիլ չըն լալ:

էտ այամեն միետ մի մարթ գյոլիս ա շենու մաչե մեյդանչոմ վըտ կնալիս ջառ կնչիլիս.- Մոկան ճարմ ծխիլի՞ս, մոկան ճարմ ծխիլի՞ս:

Շինացեք բոթթուն հվաքվալն, եկալ հըրթ վըտ կացալ, մարթա մի քիթոլ ճար կալալ: Դե էտ վախտրը օմեն տոն մոկնը ինիլիս լալ, եշած վեչ, որ շատ մարթ կատու լալ պիհլիս:

Ճար ծախողը իրան այնոյնը հվաքալ ա, հղե ինալ, գենցալ:

Շինացեք ալ որ ինգալն ցրվիլը, մչիրնոմը մի խելոնք մարթ լալ, ասսլ ա.- Այ հրվանր, մոկան ճարը կալալեք, սորուն եք արալ, պա հրցրա՞լ եք, թա հինչոր բինցրք:

Շինացեք մանցալն մաթալ: Ճար ծախողն ալ շենեն ըռշկին հղոքն գինիս լալ: Կանչալն, ետ ա դըռալ, եկալ: Հրցրալն.- Պա ճարը տվալս, բինիցրիլեն թահրը ասա չըս:

- Պահ, ձեր հոր տոնը շեն մնա: Տեղտ հինչ դիժեր բեն կա: Մոկնը փռնեցեք, ճարը լըցրեցեք ըռըխը... Կոտի՝ կստակի:

Շենեն խելոնք մարթը ասսլ ա.- Այ հորդ ողորմի, որ մոկնը որ փռնմ, կդիրիմ վըտաես տակեն, կըստկցըրմ, խե՞ յըմ մոկանը բերանը բինալիս, դեղը նի ըծիլիս, որ բերանը բինալուց ալ մաննս կծի՞, փորթս ե՞ր արի: էտ քո ծախածը դեղ չի: Շենեն մախլուղեն խայմ տըղ մա դիրիլ, սուսուփուս շինացոց փողըրը տոր, ծախած դեղտ հվաքի, ըշտեղավ եկածս, ետ դըռ էկած հղոքը թողի, գինի, քանե թակ չըս կերած:

Դեղ ծախողը տսնալիս ա՝ չի՞, էտ շենըմը խըլքը գյլխեն մարթ կա, ալ խուսիլիս չի, փողրը ետ ա տալիս, դեղը հվաքմ, գինիս մի օրեշ տեղ՝ անխըլք մարթկանց ճրիլու:

60 (163). ՇԱԴԱԹ ԾԱՌԸ

Մի հետ մի մարթ գինիս ա մհալին հաքիմեն գենգատ ըրիլիս, որ մի տարե առաչ մի ծանոթ մարթու նհետ գինիսն լալ մի տեղ: Հղցին կեսեն ջիհալն մի բազիրգյանու՝ իրան հարուստ քյարվանսավը, մի մըծ ծառռտակե նստած, դինջինալիս լալ:

- էտ իմ հնգերս բազիրգյանեն նանե շատ թինգյանուց ապրանք ա կալալ: Իրան ձեռքեն փողը հերիքա չի: Խնթրալ ա ինձ, որ հազար թիման իրան պարտք տամ, բազիրգյանեն նհետ հաշիվը փակի, մի քանե ամես ետնե իմ փողը տա: Հունչուր հնգեր, հավատմ արալ: Հազար թիման տվալմ: Մհեգ անց ա կացած մի տարե, էտ մարքը դանմիշ ա ինիս, որ ոչ քի ճնչիլիսմ, ոչ ալ փողմ պարտք:

Հաքիմը էտ մարքեն կնչիս ա, բիրիս: Ալլա առիրիս դանմիշ ա ինիս, որ՝ «ոչ էտ մարքեն ճնչիս, ոչ փողմ պարտք եր կալած, ոչ նհետը հղե յըմ գենցած, ոչ ալ ինդի ծառմ տըսած: Թեխյա սոտ ա»:

Հաքիմը գենգատ արուղ մարքեն ըսիս ա, թա.- Դու արթար մարքս, սոտ չըս ըսիս: Եք նի ինգի հղեն, գինի էդ ծառեն կոշտը, ծառը լուգի՝ կգյո իրան շադադեթունը կտա:

Էտ մարքը գինիս ա:

Հաքիմը բազիրգյանեն նհետ նստիս, երկար դեսեն դենեն սոհբաթ ա ըրիս: Մի վախտ անց կնալեն ետը, հաքիմը ըսիս ա.- Ներակ ընդուր, կգիդա, էն մարքը մհեգ ծառեն կոշտը հասած կինի՞:

Բազիրգյանը ըսիս ա.- Պետք ա որ հասած ինի:

Հաքիմը ըսիս ա.- Որ դու էտ հղոքը գենցած չը՞ս, ինդի ծառ տըսած չը՞ս, պա դո հինչո՞ւր գիդացալ, որ էն մարքը մհեգ ծառեն հասած կինի:

Տեղս բազիրգյանեն լուգին կապ ա ինգյալ: Ինքը իրան խոսկավը փռնվալ ա, շադեթունը տվալ:

Հաքիմն ասալ ա.- Դե սոս-փուս, առանց խուսիլու, բեր մարքեն փողրը հմբարի տոր:

61 (164). ԱՇԽԱՐՔԵՆ ՄԱՐԹԿԱՆՑ ԷՀԴԻԲԱՐԸ

Կասի՝ մի շինացե մարքու մի չտըսնված նախշուտ ձի ա իլալ: Տըսնողն ասիլ լալ. օտըմ վեչ, խմըմ վեչ, վըտ կանամ, թիմիշա արմ:

Միալմը հինչքան հարուստ մարթ լալ, էտ ձիանը մուշտարի ա դըռալ, տարը ծախալ չի:

Միետ էտ ձիատարը ձին նստած հրևան շենեն նհետ գյոլիս լալ իրաց շենը: Հղցին կեսեն տսնալիս ա՝ մի մարթ քյոհնա շուրերմ փթթորված, հղցեն երե խուտոր ա ինգյած, տնքտնքալավ քյոմագ ա ուզիս:

Ձիավրը ըսիս ա.- Դու հո՞ւ վըս, հինչ մարքս:

Ալուզը ըսիս ա.- Խուխատար, տըննատար մարքմ: Խնթրիլիսմ ինձ դիրըս ձիանը երե, տանս հսցրս իմ խուխենցը:

Չիավրը ըսիս ա.- Եր կաց, ձեռքտ փռնմ, նստի թարքես, տանմ:

Ալուզ մարթը տնքտնքալավ ըսիս ա. - Կրիլ չըմ եր կանալ: Դու նեղութուն քաշի, ինձ խտտի, դիր ձիանը երե:

Չիավրը ձիանը նաներ վեր ա գյուլիս, ալուզ մարթեն խտտիս, դիրիս ձիանը երե:

Ալուզը իլբիհալ ձին խռեք ա տալիս, քշիս, գինիս ղալին հռնալիս, նոր ձին վընը ըրիլիս, կնչիլիս ձիատըռնն ըսիլիս.- է-հե՜յ, գիդաց, իս փլան մարթնմ, որ քու ձիանը շատ մուշտաղ ըմ լալ: Հինչքան փողմ տվալ, ձին ծախա չըս, որ ինք օնըմ: Միեգ ձիտ ծրի յըմ տնիլիս:

Չիատարը ըսիս ա.- Լավ քի ճնչեցալմ: Ալլա խոսք օնս ըսիլո՞ւ, քա՞ ասալս պրծալ:

Ասլան դըռած ալուզը ասալ ա.- Օնի չըմ:

Չիատարն ասսլ ա.- Իմ ձին քի փեշքաշ: Խայիշտմ ըրիս, վըտ կանաս, էրկու խոսք ալ իս ասմ:

Չի տանողն ըսիս ա.- Լսիսմ, ասի:

Չիատարը ըսիս ա.- Իմ ձին հինչ տեղ որ տանս, ճնչլականն, որ իմ ձին ա: Կզըրմանան, կասն՝ «էն մարթը ձին ծխիս չի լալ, էտ հո՞ւնչոր ա դըռալ, որ ծախալ ա քի երե»: Դու գյուլոխտ թարիփ վեչ արս, որ իստի-իստի խափածս, ձին փխցրած: Կասս, որ՝ շատ փողմ տվալ, աշկրը կապալ, ձին կալալ:

- Հինչո՞ւ հետե,- զարմացած հրցրալ ա ձի տանողը:

- Ընդուր հետե, որ միետ ալ ղուրթավ մի ալուզ մարթ մանցած կինի հղեց: Մարթ ջիհիլուս ընդուր օքնի չի՝ հիշիլավ քու արարմունքը: Դու կդըռնս անեցքու տեղ, կկտրս աշխարքեն մարթկանց էյթիբարը:

Չի տանուղը սուս-փուս ձին ետ ա տալիս:

62 (165). ԷՐԿՈՒՍԵՆ ՄԻՆԸ

Մի մարթու էրկու աղչիգ լալ: Պահալ ա մծցրալ, ըրկունքան ալ մարթու տվալ:

Մի վախտ անցալ ա: Կնեգը մարթեն ասալ ա.- Այ մարթ, գինի միետ տըս մըր ըղչգնեն հինչուր տոնն ինգած, հինչուրն ըպրիլիս, հի՞նչ օնն, հի՞նչ չօնն: Մի խաբեր եր կալ, եք:

Էտ մարթը եր ա կացալ գենցալ սիվքա մըծ ըղչիգանը տոնը: Ապրուստեն նաներ հարց-փորձ ա արալ:

Աղչիգն ասալ ա.- Ա հար, մարթս վարնորթ ա: Ղալին արտ ա վարած, ցանած: Թա Աստուծ ղիսմաթ արի, տարեն թռուցաց, մըր հացը բոլ կինի, որ արաշտ արի՝ կորածնք:

Եր ա կացալ գենցալ էն միհ աղչգա տոնը: Կուճի աղչիգն ալ ասսլ ա.- Ա հար, իմ մարթես սանադը կոժ, կոլա, կճոճ սարքիլն ա: Ղալին սարքած ա: Թա Աստուծ տա, տարեն արաշտ ինի, տաք օրր անի, կոժ-կոլան սորին չուրանա, լեն ու բոլ կապրնք: Թա թուռուցաց ինի, մըր օրը կորած ա, կգինք կկորունք:

Ըղչգերանցը հարը հաբգան գիծիս ա օսսավը, ետ դռնալիս, գյոլիս տոն:

Կնեգը հրցրիս ա.- Հի՞նչ խաբարս բերած:

Մարթն ըսիս ա.- Ա կնեգ, միհեն մարթը վարնորթ ա, Աստուծ ա կնչիս՝ թոռ շատ գյո: Միհեն մարթն ալ կոժ, կոլա սարքուղ ա, Աստուծ ա կնչիս՝ արվ անի: Վերչը էրկուսեն միհը տակ ա ըրլական, միհը՝ գյլոխ:

63 (166). ՋԽԿԻ ԱՂԱՆ, ԽԵԼՈՒՆՔ ԾԱՌԱՆ

Մի զխիկի մարթ մի շատ խելունք ծառա լալ ուզիլիս: Հինչ մարթ գենցալ ա կոշտը, բագան չի արալ: Վերչը մի մարթ ալ ա գենցալ ծառա դրռնի:

Աղան մի ղռան փող ա տվալ, ասսլ.- Գինի ինդի մի բեն կալ բեր, որ համ իս օտըմ, համ իմ ձին օտի, համ ալ՝ հավրը:

Ծառան գենցալ ա բազար, մի մըծ ծմերուկ կալալ, բերալ կտրալ: Ծմերուկեն մաչը տվալ ա զխկի աղեն, կլըպը տարալ տվալ ձիուն, կռզնեն ալ տարալ նի ածալ հվերեն առաչը:

Աղան զարմացալ ա ծառայեն խըլքեն երե, նորից ա ցհոր լալ: Ասալ ա.- Որ ասմ՝ գինի ջան կալ բեր, հի՞նչ կարս:

- Կգինմ մըս կօնմ բերմ, աղա ջան:

- Ասմ՝ գինի յարմջան կալ, հի՞նչ կօնս:

- Յարմջանը հավեն ձուն ա, աղա ջան: Ջու կօնմ, կբերմ:

- Պա որ ղորկմ, ասմ՝ գինի զահրմար բեր:

- Զահրմարը օղձեն զհարն ա: Օղձը կծածեն ճարն ալ մածունն ա, աղա ջան, կգինմ մածուն կօնմ, կբերմ:

Ծառեն օմեն մի խոսքը զխկի աղեն շատ տոր ա եկալ, ասսլ ա.- Լա իմ ծառան դուվս, վըտ կաց:

64 (167). ՊԱՊԱ, ՎԽԻԼԻՍՄ

Մի հիլիվր մարթ մի օր իրան տասը-տասներկու տրեկան թոռանը եր ա ունիս. գինիս ծմակը փադա: Դե, հիլիվր մարթ ա, դեչանը դես, դեչանը դեն, փադը կտրտիս ա, շելակը կապմ, օրը գյուլիս ա մթնիլիս:

Հակառակա նման, մի ղոլնաց ալ քշաթողբն ա գյուլիս, նի մըտիլիս, սար-ձոր ծցկիլիս: Հիլիվրը հղեն շիլ ա ինգիլիս: Դեչանը հղեն ճարիլը, այտս մթնիլիս ա: Թոռնը նի ա ինգիլիս, թա.- Պապա վխիսմ, պապա վխիլիսմ:

Պապն ալ թոռանը սըրտ ա տալիս, թա.- Բալա ջան, վախիլ մա, լա էս թումբը որ անց կանանք, կհասննք շենը:

Թոռն ալլա կրկնիս ա.- Պապա, իս վխիլիսմ, պապա իս վխիլիսմ:

Պապան ալլա թոռանը սըրտ ա տալիս, ըսիլիս.- Բալա ջան, վախիլ մա: էս ձորն ալ որ անց կանանք, կհասննք շենը:

Թոռնը ալլա կրկնիս ա.- Պապա վխիլիսըմ:

Պապուն ճարը կտրած, շելակը վերա դիրիս մի քարու երե ըսիլիս.- Ա՛յ կուճի մըռած, էնքան ասսլս՝ վխիլիսմ, վխիլիսմ, որ մհեգ իս ալմ վխիլիս: Վախից վըտրս կոտրատվալ ա:

65 (168). ՔՅՈՆԱՋ ԷՃՐԸ

Կասի՝ մի վարար գետու երե մարթինք մի բերակ գերանն լալ գիծած՝ կրմունջու տեղ իրաց հետե դես-դեն գինն, ետ դըռնն. գիրանեն իրեսավը մի մարթ անջաղ լալ կրիլիս անց կանա:

Մի օր, հակառակու նման, մի էծ գետեն էն ղոլեն նհետ ուզիս ա անց կանա, գինի գետեն էս ղոլը: Մի էծ ալ՝ էս ղոլեն նհետ ուզիս ա անց կանա, գինի էն ղոլը: Ըրկոքան ակ եռն ինիս գիրանեն, գյուլիս գետեն մաչտեղը ջհհիլիս մինը մհնեն:

- Դու ետ դեռ, իս անց կանամ,- ըսիս ա իծերեն մինը,- առաջ իսմ եռ նալ գիրանեն:

- Չէ՛, իս քի անե մըծմ,- ըսիս ա էն մի էծը,- դու ետ դըռ, թող իս անց կանամ, ինձ փարզ բեն օնմ:

Դու մի ասի, էրկու էծրն ալ մինը մհնից քյոնազն: էս ա ըսիլիս, էն ա ըսիլիս, մինը մհնեն ըսածեն ենթարկվմ չըմ: Տալիսն, կռվիլիս...

Դե, բերակ գերան, վարար գետ: էծրը կռվիլիսն-կռվիլիս, ըրկոքան ալ վեր ինգիս, նի ինգիս գետը, խղդվիլիս:

66 (169). ՀԱՄԱՎ ՃԱՇԸ

Միետ մի քյասիբ շինացա մարթու կնեգ մռնիլիս ա: Դե, աշխարքեն օրենքն ա՝ մի վախտ անց ա կնալիս, էտ մարթը գինիս ա մի թազա կնեգ ուզիս, բիրիլիս:

Թազա կնեգն ալ շնորքավ, տնարար կնեգ ա ինիլիս: Ամեն օր շատ համավ-հոտավ սորին ճաշ ա իփիլիս: Մարթը բինի տեղե գյուլիս ա, ճաշն ուտիլիս, գյուլոխը դոռու տալավ, ըսիլիս.- Չէ՛, էն ողորմած կնգանս իփած ճաշեն համը-հոտը օնի չի: Ընդոր իփած ճաշերեն համը-հոտը օրեշ լալ:

Էտ խըղճ կնեգը հինչքան չարչըրվմ լալ, հինչքան հնարավոր լալ սորին, համեղ ճաշ լալ իփիս, ալլա մարթը իրան խոսքն լալ ըսիլիս. «էն ողորմած հոքու իփած ճաշեն համը-հոտն օնի չի»:

Մի օր ալ էտ կնեգը ճաշը իփիս ա, թուղիլիս օջաղեն երե, որ տաք մնա, ինքն ալ օրեշ բեն ա ըրիս: Մին ալ ետ ա դռնալիս, տըսնալիս կրակը թիժացած ա, ճաշը խնձրհամած ա: Խըղճը նստիս ա, լեց ինիս, թա՝ էն թահրը ճաշերես հավան չի լալ կնալիս, պա մեհգ տըսնըս էս խնձրհամած ճաշեն հետե հինչ ա ըսլական:

Մարթը գյուլիս ա տոն: Ճաշը գիծիս ա՝ վըխվխիլավ դիրիս ըռշկին: Մարթը ճաշն ուտիլիս ա, ուլխնալավ ըսիլիս.- Միեգ որ ճաշ իփիլեն թահրը ճարածս, ղորմացիգեն իփած ճաշեն համը տվալ ա: Ըստուր ետն իստի համավ ճաշ կիփս:

67 (170). ԿՏԱՂԱԾ ԿԱՑԵՆԸ

Քյոհնա այամեն կացենը հալա ղայդա չի լալ:

Կասի՝ միետ մի ալվերչի, գյուլիս ա, դոս գյուլիս Ղրդաղեն մի շեն, շենեն քյոխվեն ղոնաղ ինգիլիս: Ալվերչին գինիս տեղը մի կացեն ա անամ տալիս քյուխվեն:

Մի գիրագի օր քյոխվան շինացոց հվքիս ա, թա՝ եկեք գիննք տըսննք կացենը հունչուր ա ծառ կտրիլիս: Քյոխվան մի քանե նհետ թխիս ա ծառեն, մի բիրդամ հունչուր ա դռնալիս, կացենը նի ա գյուլիս, քյոխվեն վընը կտրիլիս: Շինացեք կզնվիսն, թա՝ էս կուծի արկաթը, որ մըր քյուխվեն վընը որ կտրալ ա, եկեք մի թիժ կրակ վառընք, կացենը դիրնք կրակմը՝ էրվի:

Կրակեն մաչեն կացենը կիրմիրիս ա, իրիննակու նման կծըպողուն ըրիլիս:

- Ադա, կացենը կտաղած ա, մհեգ մըզ կրակ կտա, կվառի,- ըսիսն շինացեք, դիբ դես, դիբ դեն փխչիլիս:

Մչրտնոմը մի էրկու խելոնք մարթ ա ինիլիս, ըսիսն.- Կացենը թողք տեղս, շատ վնաս կտա: Եկեք տաննք նի գիծնք քյոխվեն մարեգը, տեղը մնա, ըստակի:

Կտաղած կացենը տնիսն նի գիծիս մարեգը, կրակ տալիս:

68 (171). ԱՉՔԵՆ ճԱՐԸ

Մի ընմավր մարթու աշկրը ցվեցալ ա: ճար, մադատ կրեցա չըն արի:

Մի օր էտ մարթը տղեցն ասսլ ա.- Գենցեք, հաքիմ բերեք: Բեն ա, թա հաքիմը գյո վեչ, հինչ ճար կասի՝ էտ իրան տեղը, մինջա բիրաներն նաներ սիվթա դոս եկած խոսքը մտռնոտ կպահեք, գյոք՝ ինծ ասեք:

Տղեքը գինիսն հաքիմեն կոշտը, գյոլիս ըսիլիս.- Ա հար, գենցալնք հաքիմեն ճարալ: Հիլիվերած լալ, եկա չի: Ասալ ա՝ աշկացավեն փրկողն էս ճարրնն:

Հարն ասսլ ա.- Հա՛, շատ ապրեք: էտ գիդացալմ: Պա ձեզ բենմ լալ թափշուր արած, իտուր հետե հի՞նչ խաբեր եք բերած:

Մըծ տղան ասսլ ա.- Ա՛ հար, էտ ալ մտես ա, որ մընք աշկերետ հետե նաղլնք արալ, հաքիմը բերանը սիվթա որ բեցալ ա, ասսլ ա. «Աման-դադ, ծրքերեն՝ ձեռքից»:

Հարն ասսլ ա.- Դե, բերեք ձեռքրս կպեցեք:

Տղեքը զարմացալն: Հարն ասսլ ա.- Զարմնալու բեն չկա: Ալոզ աշկրը հըռն տամ, քորն գոմ: Ձեռքրն ալ օգիսն քորիլիս, տալիս աշկրը քուռուցրիս: Ձեռքրս որ կապեք, աշկրս կսորնանան:

69 (172). ՎԸՏՐԸ ՋԻՐՈՄՆ Ա

Կասի՝ միետ մի թաքավեր իրան նազիր-վազիրներեն նիետ ծի նստած գենցալն երգիրը շոռ գյոն, տըսնն հինչ կա, հինչ չկա ըշխարքմը:

Մի քիվշանավ գինիլիս տըղը, տըսալն մի մըծ արտ ցորենն վարած: Ցորենը բիցրածած ա հսկըհանած, դընած՝ ծերան դըռած: Ըրտատարը ջուրը կապած ա արտեն երե ջրիլիս:

Վազիրնան մինը ըսիս ա.- Յա, տեր Աստված, էս արտեն մի թոռ հասցրու:

Թաքավերը կզնվիս ա, ըսիլիս.- Անխըլք մարթ, թոռն արտեն հինչեն ա պետք, քո՞ռ ըս, տսնալիս չը՞ս, որ ջուրը կապած ա ջրիլիս:

Վազիրը խոսիլիս չի: Չիանքը քշիսն, գինիս հսնիլիս մի գետու: Օմեն ծիանքը ըսկսիսն ջուր խմիլը: Էտ վազիրը թուղիլիս չի, որ իր ծին ջուր խմի: Չլավը ծիք ա տալիս, պընդ պիիլիս:

Թաքավերը տսնալիս ա, կզնված վազիրեն ըսիս ա.- Վազիր, ասօր դու պըլացա՞ծս, թա գյլխետ ծի ա քացե տված: Խե՞ չըս թողիս ծին ջուր խմի:

Վազիրը ըսիս ա.- Թաքավերը ապրած կանա, ծին ջուր խմիլը հինչ ա ըրիս, տըսնալի՞ս չըս, որ չորք վըտն ալ նայեն ջիրին մաչեն:

Թաքավերը տեղտ գյուլոխ ա ինգիս, որ արտը ջրիլավ բոլ չի, թոռ ալ ա պետքի:

Գետն անցկնալիս, ծիանքը քշիս, գինիս մի տեղ, տսնալիսն մի մըծ արտ կա: Ցորենը հասած ա, խրեգ ա մնալիս վղհանի: Ըտրա տարն ալ մի հիլիվր մարթ ա, նայե կոչ-կոչ ըրիլավ հնձիլիս:

Թաքավերն ըսիս ա.- Ա հիլիվր, բեն ըրիս տեղը շատո՞ք ինս, թա՝ ուտիլոց:

Հիլիվրը պատասխանիս ա.- Թաքավերն ապրած կենա, սզիս ա ուտիլուց ալ շատվոր ինըս, բեն ըրիլուց ալ:

Թաքավերը նազիր-վազիրներեն ըսիս ա.- Չիանցը նանե վեր եկեք, մարթա մի խորհնը հնձեցեք:

Մարթա մի խորհնը հնձիսն, հիլիվներեն արտը պրծնիլիս ա:

Չիանցը նստիսն, քշիս գինիս-գինիս, տըսնալիս մի հասած արտա քուշտե մի պառավ կնեգ կա նստած: Կրիս չի արտը հնձի:

Թաքավերն ըսիս ա.- Ա պառավ, բեն ըրիլուց շատ ի՞նս, թա՝ ուտիլուց:

Պառավն ըսիս ա.- Բեն ըրիլով շատ ինս, ուտիլուց՝ մանակ:

Թաքավերն ըսիս ա.- Մարթա մի քար երի ըրեցեք պռավեն գյլխեն:

Մի-մի քար նեստ յըն տալիս, պռավեն ըսպնիլիս:

70 (173). ՄԱՐԵԳՆ ՆԱՆ ՔԱՄԵՆ

Մի տարե, մի ուշունք օր շատ ուժեղ քամե ա եր կացալ: Հինչ ինգյալ ա առաչը, հվաքալ ա, քշալ տարալ: Գենցալ ա հասալ մի մրեգու: Վըտը կացալ, կանչալ.- Մարեգ, մարեգ, դորքրտ սորին բեց արի քի հետե դերմանմ բիրիլիս:

Մարեգը ծծղեցալ ա, պատասխանալ.- Քամե, իս շատ շնորհակալմ քո բերած դրմանեն նանե: Իմ դերմանս դու տանիս վեչ, քու բերած դերմանը թող քի մնա:

71 (174). ՈՒԹԱՆԱՍՈՒՆԵՆ ՆԱՆԵ Ա

Միետ մի հիլիվր մարթ գենցալ ա հաքիմեն կոշտը գենգատ:

Հաքիմը հրցրալ ա.- Հի՞նչ տեղտ ա ցվիլիս:

- Վըտրս ինձ ենթարկվմ չըն, կրիս չըմ նստի, եր կանամ, շատն ցվիլիս,- ըսիս ա հիլիվրը:

- Քանե՞ տրեկանս,- հրցրիս ա հաքիմը:

- Կինմ ալի, մի ութանասուն տրեկան:

- Նղանա մալ, ութանասունեն նանե ա:

- Ախր աշկրս ալ թրումորն ըրիլիս, սորուն տսնալիս չըն,- իվիլցրիս ա հիլիվրը:

- Նղանա մա, էտ ալ ութանասունեն նանե ա:

- Ախր բիրանմս կըռենք չկա, կրիլիս չըմ հաց օտի, փորս ցվիս ա, մի ճար ասի՝ արմ,- խղճացած ալլա ըսիս ա հիլիվրը:

- Իտոր ճար չօնի, որ ասմ, այ հիլիվր: էտ օմեն ալ ութանասունեն նանե ա:

Հիլիվերեն հըրսըրը գյոլիս ա: Ճարը կտրած ըսիս ա.- Ութանասունեն նանե ա, ութանասունեն նանե ա, ութանասունեն նանե ա:

Հաքիմն ըսիս ա.- Այ հիլիվր, իս քի անե նղնալիս չըմ: էտ գա, չգա, հինչ անիլտ ալ ալլա ութանասունեն նանե ա:

72 (175). ԱՍՏՈՒԾ ԹԱԿԻ ԹԱՅԴԻ ԲԵՆԸ

Մի կնեգ մի օր քշանաց շուդավ եր ա կնալիս, կոժը շլկիլիս, դանան ալ նի գիծիս առաչը, որ դանան տա շեներն դնարածը տանի պահի, ինքն ալ կոժը ըխպիրին լցնի, շուդավ գյո տոն, իրան տան բենավը կանա: Դե, կնեգ ա ալի՞... Ջրին հղեց հինչ կնգան որ ջհիս ա, վըտ ա կնալիս, պատառ գյալաջի ըրիլիս, դե, կնեգ մարթն, մի հրվանու սորինն ըսիս, մի հրվանու՝ փիսը: Մինը գինիս ա, մինը գյոլիս ա, էտ կնեգը լա իտի տարվմ ա գիլեյ-ղիյբաթավ, մին ալ էն ա լսիլիս, որ դնա բիլոց ա գյուլիս: Ետ ա յիշիս տսնալիս, հի՞նչ՝ իրիննակը երի ա դըռած, օրն նայե մքնիլիս, դնոտենքը նայեն գյոլիս տոն: Ինքը նայե ջրին հղեց: Շըխ ա ինգիս, որ ինքը

դնոտանցը նաեե շուդ գյո տոն: Վըննը նի ա գյուլիս քարեն, վեր ա ինգիս, կոժը կուտրիլիս: Եր ա կնալիս, ըսիլիս.- Աստուծ կտրի թայդի բենը, ըսկի իմ խոշն չի գյուլիս:

73 (176). ՑԽԻՎԻԼԵՆ ՕԺԸ

Մի մարթ օխտը տղա յա ինիլիս: Օմեն ալ ըպրիլիսն մի տեղ սերավմիաբաե: Դռնալիսն շենեն ումնուց օժավ համփան: Դե, աշխարք ա ալի, վախտ ա գյուլիս, որ էտ մարթը ուլուզնալիս ա, ինգիլիս տեղաշոր: Գիդալիս ա, որ իրաե մըռնիլեն վախտն ա:

Կնչիլիս ա տղեցը, թա.- Մի ցխավիլ եր կալեք, եկեք իմ կոշտը:

Տղեքը ցխավիլը բիրիլիսն:

Հարը ըսիս ա.- Հընրթավ փուրծեցեք տըսնմ, ձզաեե որ մինը կկարի կոտրի ցխավիլը:

Տղեքը հընրթավ ուժռնեն փորձիսն, կրիլս չընն ցխավիլը կոտրիլ:

Հարն ըսիս ա.- Դե, քնդեցեք ցխավիլեն կապրը, տըսնամ հո՞ կկարի կուտրատի ցխավիլեն չոփրը:

Տղեքը բինալիսն ցխվիլեն կապրը, օմեն ալ հանգիստ կուտորտիլիս ցխավիլե չոփրը:

Հարն ըսիս ա.- Տղեք ջան, իս մռնալիսմ: Դուք ցխավիլեն նման եք: Թա կրեցալ եք միասին ապրիլ, մինտ-մինեն խուսքավը, ձեզ ոչ մինը կարի չի ասի՝ ընշկռնոտ երե օնք կա, յա՝ տեղս ծոխ ա, տեղտ նստի: Թա չէ, բիժռնվեք, օմեն մինը առանձին, ինքնագյլոխ ապրեք, ցխվիլեն չուփերեն նման ձեզ ալ հիշտ կկուտրատն:

74 (177). ԽԱՋԻՆԱՆ ՃԱՐԱԼՆ

Մի մարթու իրք տղա յա ինիլիս, իրեքքաե ալ մինը մինեն նաեե բեղեյրաթ:

Էտ մարթը նամուսա խաթրե աշխատմ լալ, տղեքն ալ ուտիս, իրաց հետե ըպրիսն լալ:

Ժամանակը գենցալ ա: Հարը հիլիվերալ ա: Եկալ ա մահվան վախտը:

Մի օր կանչալ ա տղեցն, ասալ.- Իս մռնիլիսմ, դուք որ նեղութունա մաչ կինգնեք, կարի չեք ապրի, ումուդնատ կտրի չեք: Տաեը կողքեն մըծ արտմը խազինա օնմ պահած: Արտը ներքնած դեչանը դիեր որ սորին քանդեք, իմ պահած խազինաե կճարեք, կապրեք:

Հարը մըռալ ա: Տղեքը մարթա մի բեհ, թոխար երն կալալ, արտը լրիվ տկըհրիս արալ քանդալ, վըղը շոռ տվալ, ոչ մի բեն ճարալ չըն:

Ըտոց մի պարի հրըվան լալ, ասսլ ա.- Տղերք, ձեր աշխատանքը որ կորչի վեչ, բերեք արտը ցորեն վրեցեք:

Բերալն արտմը ցորեն վարալ: Տարեն նհետ ա եկալ, արտեն ցորենը կենենչալ ա, բիցրացալ, հասկըկալալ, շուրուրալավ դղնալ, ծերան կտրալ: Տղեքը տըսալն, ուլխացալն...

Պարի հրըվանը տըսալ ա, ասալ.- Ահս ձեր հոր պահած խազինան: Հնձեցեք, վայելեցեք:

75 (178). ՂՎԱԹՈՒՆ ՆԱՆԵ ՂՎԱԹԻՆ ԱԼ ԿԱ

Մի մարթ մի հատ էշեն ցորեն ա բռնիլիս, գինիս ջեղաց: Հսնիլիս ա ջեղացը, տըսնալիս ա, հի՞նչ՝ շատ հըրթ ա, որ հըրթա եշի էրկու օր կմնա ջղացմը: Էտ մարթը շատ ղվաթի ա ինիլիս: Խյալ ա ըրիլիս, որ ժողովրթեն կուշտեն իրան ղվաթը նշանց տա, կվախն, հըրթ կտան, ինքը ըռշկին դանը կաղա, կգինի: Բիրիս ա էշեն նանե բեռնը երունիս, ջվալնան խուրջունա նման գիծիս օսուքը, նի մտիլիս ջեղացը, բեցուր սասավ ըսիլիս.- Առաչի հըրթը իմն ա, առաչին հըրթն իմն ա:

Ժողովուրթը տըսնալիսն էն մարթեն էշու ղվաթը, վխրութունան սուսն ըրիլիս:

Էտ վախտը ջղացպանը ջղացմը մի քանե մարթա նհետ նստած, քաղցր սոհբաթն լալ ըրիլիս: Տսնալիս ա, որ էտ մարթը իրան օժն ա նշանց տալիս, ինքն ալ աչի ձեռքը դեմ ա տալիս ջղացեն քարեն, քարը վըտ ա կնալիս: Չեխե ձեռքը դիրիս ա ընջոկեն, ըսիլիս.- Ջղացեն սասը թուղեցա չի լսըմ: Նորից ասի տըսնմ հի՞նչս ըսիլիս:

Ղվաթի մարթը տըսալ ա ջղացպանը իրան նանե ղվաթի ա, ասալ ա.- Հեչ, իմ հըրթմն լալ հրցրիլիս:

76 (179). ՉԵՇՄԱԳԸ

Դունյից բեխաբար մի միամիտ մարթ գինիս ա մի չեշմագ ծխողու կոշտը, չեշմագ ուզիլիս: Չեշմագ ծախողը մի քանե չեշմագ տալիս ա իրան: Էտ մարթը չեշմագնեն հըրթավ դիրիս ա ըշկերեն, յիշիս ձեռքեն գիրքեն, ոչ մի բեն կրիլիս չի կարթիլ: Ետ ա դռնալիս, չեշմագ ծխողան ըսիլիս.- Իս մի ինդի չեշմագմ ուզիլիս, որ դիրմ ըշկերես, կարմ գիր, ավետարն կարթիլը:

- Դու վարժարան գենցած, գիր սվերած կա՞ս,- հրցրիլ ա չեշմագ ծախողը:

- Չէ, ոչ վարժատոնմ գենցած, ոչ ալ գիրմ սվըրած,- ըսիս ա չեշմագ օնուղը:

- Պա որ սավադ չօնս, հունչո՞ւրս ուզիս գիր կարթիլ,- ըսիս ա չեշմագ ծախուղը:

- Այ քու տոնը շեն, պա մըր շենեն դերը առանց չեշմագի կրիլիս չի ավետարանը կարթի: Լա որ չեշմագը դիրիս ա, ըսկսիս ա ջիրու նման կարթիլը:

- Չեշմագը մարթիք դիրիս չըն սավադ ստանալու հետե: Էն մարթիք որ սավադ օնն, ըշկրնան լուսը պկասած ա, գիրը կրիս չըն տըսնան, չեշմագը օքնմ ա գիրը տսնալուն:

77 (180). ՉՈՐԱՆ ՆԱ ՍԱԽՍԵՆ

Մի խեղճ գյուղացի, ըմռան մի օր էշին սախսե յա բիռնիլիս, Աստուծեն անմը տալավ հղե ինգիլիս, որ տանի քաղաքմը ծախի, իրան քյասիբ ապրուստը հոքա: Քաղաքեն մոտե, հոցին երե ջհհիլիս ա մի զըռ չուբանե, իրան նանե զըռ չոմբաղը դիրած օսսեն:

Չորանը տնիս ա բիրիս չունբաղավը մհետ թխիլիս էշեն բեռանը մի թայեն, ըսիլիս.- Ախպեր, էս հի՞նչս տնիլիս քաղաքմը ծխիլու:

Դե, զըռ չորան, չոմբաղ միակ, որ թխած ա ինիս էշեն բեռանը հակեն, մաչեն սաղսե ըմննելնքը թեխյա կուտրատվածն ինիլիս:

Քյասիբ շինացեն խըղճ-խըղճ ըսիս ա.- Չորան ախպեր, էտ չումբաղավտ մհետ ալ թխես էշեն բեռանը էն միհն թայեն, ոչ մի բեն ալ տնիս չըմ քաղաք:

78 (181). ԹԱՔԱՎԵՐԵՆ ՀԵՏԵ ՏՈՆՆ ՇԻՆԱԼ

Մի թաքավերու էրկու տղա լալ:

Մի օր թաքավերը կանչալ ա տղեց, ասալ.- Իս ուզիսմ մհետ գինմ իմ երգիրս շոռ գյոմ, տըսնմ հի՞նչ կա, հի՞նչ չկա աշխարքմս: Դեչանը իմ գինիլս, դուք գենցեք քաղաքնեն շոռ եկեք, օմեն մի տեղ ինձ հետե մի տոն սրքեցեք, որ իմ գենցած վախտը քիշերը մնամ, դինջանամ: Չըզ մի տարե վախտմ տալիս:

Թաքավերեն տղեքը մարթա մի խուրջին վըսկե լցրալն, գիծալ ծիանցը երե, մինը միներն նաներ ջոկ հողք թողալն, գեներցալ:

Տարեն շոռ ա տվալ, թմամալ: Տղեքը եկալն:

Թաքավերն առաչ կանչալ ա մըծ տղեն: Տղան օրախ-օրախ գյուլոխ ա տվալ, ասալ.- Թաքավերը ապրած կենա, այսինչ քղաքմը սիպտակ մարմարից մի պալատմ շինած, էնիհինչ քղաքմը մի պալատ կարմիր մարմարիցմ շինած: Հիբ որ գինս դրքերը, քի հետե բեց ա:

Թաքավերը հրցրալ ա.- Պա էտ պալատնոմը մի մարթ կա՞, որ գենցած տեղը գյո ծիանս գյամը փռնի, մի թիքա հաց, մի ստաքան չայ դիրի ըռշկիս:

Տղան գյուլոխը կախ ա գիծալ, սուս արալ:

Կուճի տղան թաքավերեն մի դավթար ա տալիս, ըսիլիս.- Իս հինչ տեղ գենցածմ, կերածմ, խմած, մըծ շրջապատ ըստեղծած, անմ դուս բերած, հիմնական տոն շինած, էտ դիվթարմը գիրված ա իմ շոռ եկած քաղաքնումը ապրուղ մըծ-մըծ մարթկանց անըմնեն: Գենցած տեղը, խոխեն նիետ փռնած՝ դեչանը հիլիվր մարթը, որ հրցրս, տնռնեն նշանց կտան: Կօզս հարուր ծիավր գինի, իմ անմես խաթր ումնոց ալ կիարգն, պատիվ կըտան՝ հինչ սազմ ա թաքավերեն:

Թաքավերը կուճի տղեն ճակատը պչիս ա, ըսիլիս.- Իմ մռնիլեն ետը թաքավեր դըռնալու իրավունքը քի յըմ բխշիլիս:

79 (182). ՋԻՆ ՀՈ՞Ր ՓՈՂԱՎՍ ԿԱԼԱԾ

Մի հիլիվր մարթո տոն շենեն մաչավը անցնող հղցին երե ա ինիլիս:

Մի օր տանը ըռշկին նստած ա ինիս, տսնալիս ա մի ջահիլ լոթիյանա տղա գյոլիս ա քուշտեն վըտ կնալիս, հրցրիլիս,- Խոնախա, տեղես նիետ դեչանը էն երե շենը քա՞նի սիաթվա հղե ա:

Հիլիվրը ըսիս ա.- Ախպոր տղա, էրկու սիաթվա:

Ջիավրը նղացած ըսիս ա.- Խե՞, էս հրեղեն ծիավը կարի չըմ մի սիաթմ հասնի:

Հլիվրը ըսիս ա.- Թա էտ ծին քու աշխադանքի, քռնքած փողովնս կալած, էրկու սիաթվա հղե ա: Թա չէ, օրիշ մարթու քռնքած փողովնս կալած, կարելի ա մի սիաթմ չի, կես սիաթմը ալ հասնս:

80 (183). ԼՈՒՍԱՎ ԿԼԸՑՐՄ ՔՈ ԱՄԲԱՐԸ

Կասի՝ միետ մի թաքավեր մի շատ մըծ ամբար ա սարքիլ տվալ: Իրան ալ իրըք տղա լալ: Կանչալ ա տըղեցը, մըծ, խոր մթեն ամբարը նշանց տվալ, ասալ.- Իրք ախպեր եք, նստեցեք ձեր ձիանցը, մարթա մի խուրջուն վըսկե եր կալեք, ամեն միևտ ալ առանձին-առանձին գենցեք ջոկ-ջոկ երգիրներ, շոռ եկեք, ետ դըռռեք եկեք, ինձ ըսեցեք, թա որ միևը հինչավ կարող եք լցրի իմ էս ամբարը: Մի տարե ալ ձեզ ժամականմ տալիս:

Թաքավերեն տղեքը մարթա մի խուրջուն վըսկե երըն կալալ, նստալ ձիանցը, գենցալ:

Տարեն թմամալ ա, ետ ըն դըռալ եկալ:

Թաքավերը տղեցը եր ա կալալ, տարալ ամբարեն դուրքը բեցալ, մըծ տղեն ասալ.- Դե, ասի գիդամ, դու հի՞նչավ կարս լցրի ամբարը:

- Իմ հար, քու պահեստը իս փողով կլցրմ: Քանի որ հինչ երգիր գենցալմ, հինչ մարթկանց ջհիալմ, օմեն ալ փողու պակասեթունն լալ քաշումմ:

- Դու հինչա՞վ կլցըրս ամբարը,- թաքավերը հրցրալ ա մաջնակ տղեն:

Մաջնակ տղան ձեռքը տարալ ա ջոբը, մի հափուռ ցորեն դոս կալալ, շաղ տվալ ամբարմը, ասալ.- Իմ հար, իս ցոռնավ կլցրմ քու ամբարը: Իս շատ երգիրմ շոռ եկալ, շատ ժողովուրդմ տըսալ: Ամեն տեղ ալ հացի պակաս կար, ամեն մի մարթ հաց լալ ուզիլիս:

- Դու հինչա՞վ կլցրս իմ պահեստը, տղաս,- թաքավերը հրցրալ ա կուճի տղեն:

Կուճի տղան նի ա մտալ ամբարը, ջուբեն նանե դոս կալալ չխմխքարեն քիսան, կիծըքարեն երե դիրալ ա մի կուտուր հաբաթ, չխմախավ թխալ, հաբաթը նի կցրալ, այտս ջուբեն նանե մի շամ ա դուս կալալ, շամը վառալ, ամբարը լուսավորալ, ասալ.- Թաքավերն ապրած կենա, իս քու էս մըծ մթեն ամբարը լուսավ կլցրմ: Շատ երգիրներմ շոռ եկալ, շատ բենմ տըսալ, եկալմ էն մտքեն, որ աշխարքեն ամեն մի արարած լուսիցն ծնված: Առանց լուսի ոչ մարթ կինի, ոչ աշխատանք, ոչ փող, ոչ ալ հաց: Ամեն հինչ լուսիցն գյանք առած:

Թաքավերը մոտացալ ա, պաչալ կուճի տղեն ճակատն, ասալ.- Ապրըս, տղաս: Իս որ մըռնմ, քի հալալ ա, իմ թախտեն երե նստս, երգիրը կառավարս:

81 (184). ՀՈՐԸ ՀԵՏԵ ՏՈՆՆ ՇԻՆԱԼ

Կասի՝ մհետ իր էլը, ազգավլադը կուրցըրած մի մարթ գենցալ ա դուս եկալ մի ավադ շեն: Էտ շինացոց նախրչի չի լալ: Ինքը դըռալ ա նախրչի: Մի վախտ անց ա կացալ, մի դուլ կնգա հետ տնվըրվալ ա, դըռալ տան տեր: Դե, աշխարհք ա՝ տարեն-տարուն երե շոռ ա եկալ, էտ մարթեն էրկու տղա յա ծնվալ:

Տարիներն ալլա անցալն, տղեքը մծացալն: Մի օր նախրչին տղեցն ասալ ա.- Տղերք ջան, դուք ալ մծացած եք, պետք ա աշխադանք արեք, ապրեք: Ինձ արտ չօնմ, վըղ չօնմ, մի օրեշ հարստութուն չօնմ, որ աշխադեք ապրեք: Շենմն ալ մնեք, պետք ա ինձ նման յա նախրչի դըռնեք, յա՝ չոբան: Իս պատառ փող օնմ հվաքած, պահած ետե օրաց հետե: Եկեք էտ փողն եր կալեք, գենցեք մի քաղաքմ մի արհեստ սվրեցեք, ձեր գյուղոխը պհեցեք:

Տղեքը լսհսն իրաց հորը: Գինհսն դոս գյոլհս մի մըծ քաղաք: Դե, ղարիբ տեղ, իրաք ալ խամ խոխենք, մի քանի օր դես-դեն շոռ գյոլուց ետը գյոլհսն մի դուլգյարու դոքանու ըռշկին վըտ կնալհս, թիմիշա ըրհլհս: Դուլգյարը տսնալհս ա, որ խամ տղեքն, կընչհլհս ա դոքանը, դես-դենեն հարց ու փորձ ըրհլհս, ամեն հհնչեն երի հսնհս, այտս տղեցն ըսհլհս.- Տղերք ջան, իս Աստուծեն նանե մի տղա յըմ լալ օզած, Աստուծ էրկուսն ա ղորկած: Ինձ խոխա չօնմ: Դուք կմնաք իմ տանը, կըշխադեք իմ դոքանմը, ետերն ալ՝ Աստված գիդա:

Կարճ վախտմ մըծ տղան սվրհլհս ա դուլգրեթունը, ուստեն նհետ բարաբար ըշխդհլհս: Կուճի տղան պատառ աջհզ ա ինհս, համա՝ շատ ըշկաբեց: Ոհստան կուճի տղեն ուսումի ա տալհս: Կուճի տղան ալ ուսումը ավարտմ ա, դռնալհս հաքիմ: Էրկու ախպերն ալ դռնալհսն տնատար: Փսկվհսն:

Մի օր մըծ տղան իրան ուստեն, կուճի ախպորը եր ա ունհս գինհս իրաց շենը: Տըսնալհսն նախրչին ալ ձըրքը-վընննեց ինգած ա, կրհս չի ալ գինի նախիրը պահի: Ջոռավ, մի թահրավ ըպրհսն:

Նախրչուն նա կնգանը տնհսն քաղաք: Մի քանե ամես մնալեն ետը, նախրչին տղեցն ըսհս ա.- Դե դուք թաքավերու ապրուստ եք ըստեղծած: Օրախնք: Մըզ ալ թաքավերու նման պհիլհս եք: Համա դե, մընք շենմ ապրած, մծացած մարթհնք ընք, մընք առանց մըր շենի, մըր տըսուծանանչ հրվանների, մըր ձեռոքը իփած կերած ճաշերի, յոլա չընք գինհս: Սորուն կանեք, մըզ տանեք շենը:

Օմենը նստիս ըն խյալ-խյալ ըրիլիս: Կուճի տղան ըսիս ա.- Այ ախպեր, իս իստի յըմ մասլահաթ գիդալիս: Ուստան մըզ հետե ծնող ա դըռած, տար ա կացած, հացատար արած մըզ: Դու մնա քաղքմ, ուստեն հետե տղա դըռ, ապրի: Իս ալ իմ հաքիմթունավ մըր շենեն ժողովրթեն շատ պետքի կգյոմ: Մըր ծնողնեն եր օնըմ, գինըմ շենը, մըզ հետե ապրնք:

Կուճի տղեն մասլահաթը ումնաց տոր ա եկալ:

82 (185). ԴՈՒ ԳԻՆԻ ՋԵՂԱՑԸ ՍԱՐՔԻ

Մի մարթու տղա յա ինիլիս: Տըսնալիս ա էտ տղեն նանե քյար չկա: Էտ ոչ աշխադող ա, ոչ ալ՝ տոն դիրող: Մի օր կնչիս ա, ըսիս.- Տղա ջան, իս մի քսակ փողմ ետ գիծած: Եր կալ տար մի ջեղաց սարքի, թող դըռնի աշխատանքիտ ախպիր, կարըս գյանքմ հաց ըշխդիլ, ապրիլ:

Տղան փողը եր ա կալալ, գենցալ: Մի վախտ անց եկալ ա:

Հարը հրցրալ ա.- Տղա ջան, ջեղացը սարքա՞լս:

- Չէ, հի՞նչ ջեղաց,- ասալ ա տղան:

- Պա մի քսակ փողը հի՞նչս արալ:

- Գենցալմ տասը հոգի սորին տղեց հետ շրջապատ ըստեղծալ, կերալ, խմալ, մըզ հետե շոռ եկալ:

- Էտ տղեքը մի նըղ օրում քի պետքի կգյո՞ն,- հըրցրալ ա հարը:

- Հա, հինչ նըղ օրի, իմ գյանքմ որ աշխադմ վեչ, ինձ կպահն,- ասալ ա տղան:

Մի ըրակու տղան եկալ ա տոն, տըսալ հարը տխուր նստած ա:

Հրցրալ ա.- Ա հար, հի՞նչ ա դըռած:

Հարը, թա.- Տղա ջան, ձեռոքս խաթա յա անցած: Նայմ տան նստածմ, մի տղա եկել ա խանչալը ձեռքեն, թա՝ հինչ փող օնս՝ տոր, թա չէ՝ խանչալը փորտմ կոխլական: Իս ալ սամթմ գիծալ, թխալ ըսպանալ: Դե, եք գինընք քու տասը հընգրոնացը կոշտը, տըսննք որ մինը ռիսկ կանի գյո, տաննք թաղնք: Թա չէ՝ լուսը բենվի, ինա չի, կգյոն մըզ ալ կսպանն, մըր տոնն ալ կրակ կտան:

Հար ու որթի գենցալն հըրթավ տասը հնգրոնացը դուրքը թակալ, հըրթավ տասեն ալ քունտեղե եր կցրալ, տասեն ալ նաղլ արալ իրանց գյուլոխ էկածը: Տասը տեղ ալ մի պատասխանն ստացալ. «Գենցեք ձեր արունոտ ձեռքրը ձեր դրքեն լվացեք»: Տղան մանցալ ա խաջիլ, գյուլոխը կախ գիցած...

Հարը տղեն ըսիս ա.- Տղա ջան, ինծ իմ գյանքմ թաք մի հնգեր օնմ: Եք գիննք, տըսննք էն հի՞նչ կասի:

Գինիսն հոր հնգերեն դորքը թկիս, դըռածը նաղլ ըրիլիս: Հընգերը ծըրքըվըն ա ինգիս, շորրը գինալիս, նի ինգիս հտղնեն, սըրտ ա տալիս, գյոլիս տոն, թա.- Շուդ ըրեցեք բեհ, քյոլոգնը բիրեցեք, քանե մթեն ա, տաննք տեղպատեղ արընք:

Տղան որ կապած մեշոկը տանը նանե դուս ա բիրիս դուրքը, հարը ըսիս ա.- Ադա, կարող ա սորուն վեչ թխած ինըմ, մհեգ սղացած ինի: Միշոկեն բերանը բեցեք, մհետ տըսննք:

Միշոկեն բերանը բինալիսն տսնալիս, հի՞նչ տղա, հի՞նչ բեն՝ մի գյոռն ա մորթած, դիրած միշոկմը:

Տղան զարմացած հրցրալ ա.- Ա հար, էս հի՞նչ օյն ա:

Հարը ասսլ ա.- էս օյնը քո հնգրոնեքը փորձիլու հետե լալ, ուզեցալմ գիդամ, նըղ օրը պետքի եկո՞ղն, թա՝ քո քսակեն եշուղ: Գյանքմ մի հնգեր թող ինի իմ հնգոր նման, ոչ թա՝ տասը, տասն ալ՝ բենամուս: Դե, մի քսակ ալ փող օնըմ, եր կալ, տար ջեղացը շինի, գյանքմտ ալ միշտ դոստ ու դուշմանը ճնաչի:

83 (186). ՔԱՎԵՐ, ԻՆՁ ԻՇՏԱՀ ՉՕՆՄ

Մի տղա հըրըվան շենմը նշնված ա ինիլիս: Մի օր իրան քավերեն եր ա ունիս, գինի նշնծատըս:

Էրկու հայա շենեն ըրանքմը մի թորքու շեն ա ինիլիս: Էտ թորքեն շենեն գյոռոտեն քուշտավը անց կնալիս տեղը նշանված տղան ըսիս ա.- Քավեր, էս շենեն թորքրը մըզ շատ քյոռողն տված: Դու սայաղ կաց թորք վեչ գյո, իս յխտոտիմ:

Հակառակը հակառակ ա ինիլիս: Նշանած տղան լա յխտոտիս ա, թա՝ չի, էրկու թորք գյոլիսն կոխկեն վըտ կնալիս: Քավերը տսնալիս չի:

Թուրքերեն մինը ահիլ ա ինիս, մինը ջահիլ: Ջահիլը ըսիս ա.- Հայը որ մըր գյոռոտը յխտոտած ա, պետք ա ըսպանմ:

Ահիլ թորքն ըսիս ա.- Չէ, ըսպաննք վեչ: Եք մի սորին պատիժ տանք, որ իրաց գյանքմ մուռնան վեչ, մին ալ իստի ղալաթ արընք:

Վընը կացած հայեն ըստիպիսն հնգորը եղտը օտի, ինքն ալ յխտոտի՝ հնգերն օտի, որ դըռնի մըծ պատիժ, գյանքմ մռանան վեչ:

Յխտը ուտիլեն հըրթը որ հսնիս ա հնգորը, ըսիլիս ա.- Քավեր, դու խրեգ կյխտոտս, ինծ ուտիլու իշտահ չօնմ:

84 (187). ՔԹՈՑԸ ՏԱՐ ՊԱՀԻ ՊԵՏՔ ԿԳՅՈ

Մի մարթ շատ ա ապրալ, տըսալա ա աշխարքեն սորինը, փինը, լավը, վատը, շատը, խրեգը, վերչը ծրքը-վընննա ինգալ ա, պռավալ, նեստի կացալ օջաղեն կոխկեն...

Դե շատ ալ, ինքը օլումը օզում լալ, Աստուծ հալա օլոմը տալիս չի լալ:

Էտ շատ ապրող մարթեն մի տղա լալ: Տղեն ալ սատանեն նանե փոխ կալած մի կնեգ լալ: Էտ տղան վախիլ լալ, որ բինի տեղե գյո տոն: Կնեգը՝ թոր-թիվանգ ալ դըռնի, կպի մարթեն յախան, որ.- Մի ճար արի, քո հոր ձեռքեն ինձ ազադի: Իս մի կնեգմ, տոն պահմ, խոխա պահմ, թա՝ խոխա դըռած քո հոր պահմ: Մի բեն ըրիսս՝ արի, թա չէ՝ յա ինձ կսպանմ, յա խոխենքը վեր կածըմ, գինմ իմ հոր տոնը:

Էտ տղան ճարը կտրած, մի քշանաց շատ շուդ եր ա կնալիս, հորը դրիս մի քթոցում, տնիլիս, որ շեներն կողքեն քըրծնվեր թոլ արի ըսպանի: Յանի՝ խըլքը կուրցրած մարթ ա, ինքն ա գենցած քըրծնվեր վեր ինգած:

Տղան որ հսնիս ա քըրծեն, հարն ըսիս ա.- Տղա ջան, ինձ թոլ արի, քթոցը մղափոն ա, տար տոն: Էքուց ալ որ դու նա կընեգըտ մծանեք, թոռնս տարե վեչ կենա քթոց սարքի, թող հազր ինի:

Տղան հսկանմ ա իրան սխալը, սուս-փուս հորը բիրիս ա տոն:

85 (188). ԼՈՒՍԼՈՒՆԳԻՆ ՍՈՒՆԸ

Մի քյասիբ մարթա տղա մի հարուստ մարթա ըղչիգան աշկադիրած ինիլիս:

Դե քի ասմ, որ աղչիգն ալ տղեն երե ա աշք ինիլիս:

Հարը ըղչիգանը ըսիս ա.- Մին ալ տըսնմ վեչ դու էն տղեն նհետ խոսս: Հո՞ւ վա տըսած հարուստեն աղչիգը քյասիբ տանը հառհնը ինի,- ըսիս ա, դորքը երե փկիլիս:

Մի վախտ անց ա կնալիս, աղչիգը իրաց բղչոտը ջյիրիս տեղը տղան գյոլիս ա ջհիս: Տղան ըսիս ա.- Պա հունչուր արք, որ քիշերները գյոմ ծեր տոն, պատառ խոսնք:

Աղչիգն ալ ըսիս ա.- Այ հորտ տոնը շեն, ամեն քիշեր լուլոնգան իրան սոնը մըր հուրդավը կախ ա ըրիս: Մըր տընեցեք քոնն ինիս: Իս զերքոն կնստմ, դու եք մըր հուրդավը նի մտի, լոսլոնգեն սունը խստի, նի մտի տոն:

Տըղեն խըլքեն գյոլիս ա, գինիս ա հուրդնվեր յիշիս, տըսնալիս լուսլոնգեն նախշուտ սոնը դուրթավ նայե հուրդավը կախ ինգած, ինքն ալ լուսլոնգեն շոխկը խտտիլիս ա, կախ ինգիս, վեր ինգիս կոտռրտվիլիս:

86 (189). ԷՍՕՐ ԱԼ ԸՆՔ ՎՆԱՍ ԱՐԱԼ

Մի քաղաքմ սովորութուն լալ. ամեն օր թաջրները օրվա առուտուրի աշխադանքը պրծնիլեն ետը, ըրակոնը հվաքվմն լալ քաղաքեն մեյդանը, իրաց հետե զրուցիլը լալ, օրվա թանգութունից, էժանթունից, լավից, վատից, դեսից դենից, ասիլ-խոսիլ, ծծաղիլ, թողիլ գինիլ իրաց տները:

Ըտուց մաչին մի թաջր լալ: Ամեն ըրակու գյոլ լալ հնգրոնացը կոշտը, սիվթա բերանը բեցած ասիլ լալ.- Էսօր ալ ընք վնաս արալ:

Հնգրոնացը փիսն լալ գյոլ, ասիլն լալ.- Էս հի՞նչ բեն ա, մընք օմմեն օքըտնք ըրիս, էս մարթը վնաս ա ըրիս:

Մի ըրակու թաքուն որոշոմն, որ էքուց ոչ մինը դոքանը բենի վեչ: Թողնք սաղ քաղաքեն առուտորը էս մարթն արի: Ըրակու գյոնք տըսննք ալլա հի՞նչ կասի:

Էքսի՝ ըրակոնը ալլա էտ թաջրը գյոլիս ա իրան քյոհնա խոսքն ա ըսիս.- Էսօր ալ ընք վնաս արալ:

Թաջրնեն ըսիսն.- Այ քո տոնը շինվի, օմեն դոքաննեն ասօր փակածնք լալ, սաղ առոտորը մանակ դու վըս արած: Ալ հունչո՞րս վնաս արած:

Էտ մարթը ծծղիս ա, ըսիս.- Աշխարքեն ապրանքը աշխարքմն ա մնլականն... Մըր գյանքից մի օր ալ ա պկասալ, գենցալ:

87 (190). ՔՇԱՆԱՑ ՇՈՒԴ ԵՐ ԿԱՑ՝ ՆՊԱՏԱԿԵՏ ՀԱՍՆՍ

Մի թաքավերե վազիրներից մինը ամեն քշանաց շուդավ գյոլիս լալ պալատը, առաչին խոսքը թաքավերեն էս լալ ասիլ.- Քշանաց շուդ եր կաց՝ նպատակետ հասնս:

Թաքավերեն տոր չի լալ գյոլիս՝ ամեն քշանաց վազիրեն կրկնող նազիյաքը: Թաքավերը մի ըրակու վազիրեն մի էրկու անծանոթ մարթկանց սվրցրիս ա, թա՝ քշանաց շատ շոդ կգինեք վազիրեն հղեն կկտրեք, որ կգյո, գեցեն շորրը կհանեք, բեց կթողեք:

Անծանոթ մարթիք թաքավերեն հրամանը կդրիսն:

Էքսի քշանաց վազիրը գյուլիս ա, ալլա թաքավերեն համաև խոսքն ըսիլիս. «Թաքավերը ապրած կենա, քշանաց շուդ եր կաց՝ նպատակետ հասնս»:

Թաքավորը ըսիս ա.- Վազիր, դու ասօր ետե յըս եկած: Հի՞նչ ա պդահած:

Վազիրը գյլխեն եկածը նաղլ ա ըրիլիս:

Թաքավերը ծծղիս ա, ըսիս.- Պա դու օմեն քշանաց ինձ ըսիսս՝ շուդ եր կաց, որ նպատակետ հասնս: Դու շուդս լալ եր կացած, պա խե՞ նպատակետ հասա չըս:

Վազիրը ըսիս ա.- Թաքավերը ապրած կենա, շուդ երկանողնեն գյողերնն լալ, որ շուդավ եկածն լալ իմ հղես կտրած, իրաց ալ նպատակեն հասալն: Որ իսմ լալ ինի շուդ եր կացած, գյոլմ լալ՝ իմ նպատակեն հասնիլ, գյողրը իրաց նպատակեն հասնիս չըն լալ:

88 (191). ԴԵՐԸ ԳԵՆՑԱԼ Ա ԵՐՈՒՍԱՂԵՄ

Մի մըծ հայաշատ շենա ժողովուրթեն ցավ ու դարդ շատ լալ, որոշալն մի նամակ գիրն, ղորկն Երուսաղեմ: Շենեն դերեն կանչալն, որ նամակը գիրի: Դերը ծափ ա տվալ, ուլխացալ, պար եկալ:

Շինացեք զարմացալն, ասալն.- Ա դեր, մընք քի կանչալնք նամակ գիրը՞ս, թա՞ ծափ տաս, պար գյոս: Բալքա պըլացա՞լս:

Դերը ըսիս ա.- Իս ուլխնալիսմ ընդուր հետե, որ ինձ կհաջողվի գինմ Երուսաղեմ տըսնմ:

Շինացեք ըսիսն.- Ա դեր, մընք նամակն ընք ղորկլական, քի Երուսաղեմ ղորկուղ չկա:

Դերը ըսիս ա.- Իմ գիրած գիրը մանակ իս կկարմ կարթիլ, ինձանե սովա ոչ միհը կարի չի: Դե որ նամակս հասնի Երուսաղեմ, գիրս կարթող վեչ ինի, ինձ կկանչն:

Դերը նամակը գիրիս ա, ղորկիլիսն:

Մի վախտ անց ա կնալիս: Երուսաղեմեն հետ խաբեր ա գյոլիս, որ ձեր նամակը կրիս չընք կարթիլ, գիդա չի, հինչու հետե եք ղորկած, ձեր ցավը, դարդը հինչո՞մ ա: Նամակ գրողն ղուրկեցեք, գյո կարթի:

Դերեն ղուրկիսն Երուսաղեմ:

89 (192). ԱՐՈՒՆԵՍ ՄԱՉԵՆ ԿԱՆՆԻ

Մի մարթու հետե խասյաթ լալ դըռած՝ հինչ տեղ գինիլ լալ, հինչ տոն մտնիլ լալ, պետք ա մի բեն գյողանալ լալ:

Միետ գինիս ա հրըվան շենը՝ ղոնաղ ինգիս մի շատ հարգանքավ հնգոր տոնը:

Դե, պապական խոսքն ըսիս ա. «Ամեն հինչեն թազան, պարիկամեն՝ քյոհնան»:

Էտ հնգերը իրան աշկեն լոսեն չափ հրգիս ա, պատիվ տալիս: Էտ ղոնաղն ալ հմնչիլիս ա, որ մի բեն գյողանա: Բիրիսն սորին տղերն բինալիս: Ղոնաղը նի ա մտիս տղերը, ջանը քոր ա ինգիս, քոնն ալ տնիս չի: Ճարը կտրած կեսքիշերեն եր ա կնալիս, դոս գյոլիս դորքը: Տսնալիս ա ծըրքըտրկննեն նայե դրքեն ետքեն դիրած: Շլակիլիս ա տնիս հնգորը տանը ըռշկին, բաղեն ներքե ղոլեն մի խոր փոս ա ինիս, տընիս ա նի գիծիս փոսեն մաչը, գյոլիս, նի մտիս տղերը: Այտս ջանեն քորը կտրիս ա, քոնն ալ տնիլիս:

Քշանաց եր ա կնալիս, իրաց տոն գինիս տեղը հղեց ջհհիս ա հնգորը հրվանեն: Խըղճ տընիլիս չի, հրվանեն ըսիս ա.- Խնթրիսմ, իմ հնգորը ասա, որ՝ ծրքըտրկննան շոռ վեչ գյո, տարածմ նի գիծած բաղեն ներքե ղոլեն փոսը:

- Հինչո՞ւ հետե,- զրմնալիս ա հնգոր հրըվանը:

- Իմ արոնմս կա: Արուննն ա արալ:

90 (193). ՄԻ ԹԻՔԱ ՋԻԳԱՐՄ ՈՒՋԻՍ

Մի շատ ունեցվածքա տար հարուստ մարթու կնեգը ուլուգնալիս ա:

Ալուզ կնգանը հրցրիսն.- Հի՞նչ կօտս: Սըրտըտ հի՞նչ ա ուզիլիս:

Ըսիս լալ. «Մի թիքա ջիգար ինի, կօտմ»:

Էտ հարուստ մարթեն հազար գյոլոխ վըչխար ա ինիս, ղիմիշ չի ըրիս, որ միևը մորթի:

Ըտոց շենեն կողքեն մի մըծ շեն ա ինիս: Ամեն օր էտ շենմը ապրանքն մուրթիլիս: Հարուստ մարթը մի ըրակու եռ ա ինիս ծիանը, գինիս էտ շենմը մի ծանոթ մարթու տան կնալիս, որ քշանաց շուդավ գինի բազարը, մի վըչխարա թոք օնի, տանի կնգանը հետե:

Ծանոթեն կնեգը բիրիս ա սուփրեն վեր քղիս, որ հաց դինի, մարթեն ըսիս ա.- Անե՞ծք տանք, հացը օտնք, թա օ՞տնք, ետնե անեծք տանք:

Մարթը ըսիս ա.- Ասօր ղոնաղ օննք: Բեր օտնք, ետնե անեծքը կտանք:

Հացը ուտիսն, սոփրան հվիքիս: Հարուստը ծանոթեն նաեե հրցրիս ա, թա.- Արա, էտ հի՞նչ հաշիվ լալ, որ կնեգտ ասալ ա՝ օտնք, անեծք տանք:

Ծանոթն ասալ ա.- Էս ապրուստը մի հարուստ մարթ ա լալ, թուփ ա արալ, կերա չի, կնգանն ալ օր չի լալ տալիս: Մըռալ ա, նհետն ալ ոչ մի բեն տարա չի: Իս էկածմ կնգանը օզած, ապրանքն ալ ուտիլիս: Միշտ ուտիլոց առաջ կամ ետը իրան ալ անեծք ընք տալիս:

Հարուստը որ լսիս ա, քիշերը քոնը տնիս չի, եր ա կնալիս, նստիս ձին, գնիս մի վըչխար մորթիս, թոքը տալիս կնգանը:

91 (194). ՄՈՐ ՍԸՐՏԸ

Մի հարուստ մարթու տղա մի քյասիբ մարթու ըղչգան երե սիրահարվիս ա: Աղչիգը էնքան նախշոտ ա ինիս, որ իրիննակը թողբեն տակեն իլած տեղը, ինքը իրիննակա նման շափաղ-շափաղ լալ տալիս:

Աղչիգը տղեն բագան չի ըրիս: Ըսիս ա.- Կարող չի պդահի, որ հարուստ տղան քյասիբ ըղչգանը սըրտանց սիրի: Իմ նխշոտեթոնեն հետե սիրող տղեն իս օգի չըմ:

Տղան ըղչգան նաեե ձեռք չի քշիս:

Աղչիգը վերչին խոսքը տղեն ըսիս ա.- Որ հավատամ ինձ սրտանցս սիրիս, գնի մորտ սըրտը հանի, բեր տըսնմ, որ հվատամ:

Տղան գնիս ա տոն, խյալ-խյալ ըրիս, քոնը տնիս չի: Կեսքիշերեն եր ա կնալիս, մորը սըրտը դուս ունիս, վազ տալով գնիս դիբի ըղչգանը հոր տոնը: Տղան որ շատ ա թայդի գնիս՝ քանե մթեն ա տըղ հասնի, օրեշ մարթ տըսնի վեչ, վընը նի ա գյուլիս քարու, վեր ա ինգիլիս: Մորը սըրտը լուգի ա գյուլիս, ըսիլիս.- Ախ, տղա ջան, կարո՞ղ ա վընտ ցվեցալ ա:

Տղան գնիս ա, տսնալիս աղչիգը նայե հորը տանը երկրորդ հարկեն փանջարոմը նստած: Օրախ-օրախ մորը սըրտը նշանց ա տալիս, ըսիս.- Մորս սըրտը բերածմ: Եր կաց, դուրքը բեց գյոմ:

Աղչիգը ըսիս ա.- Իմ հոր տան դուրքը քի հետե փակ ա: Մարթեն հետե հինչ կա ըշխարքմը ավելի թանկ՝ իրան ծնող մորից: Ասօր մորտ սըրտը բերածս ինձ հետե, էքուց ալ իմ սըրտը կտանս ինձանե մի նախշոտա հետե:

Տղան տսնալիս իրան սխալը, ղմավ թխիս ա իրան ըսպանիլիս:

- Ա՜խ, բալա ջան, հի՞նչս արալ,- լսվալ ա մոր սրտեն սասը:

92 (195). ԳՅՈԼ ՇԻՆԻ

Մի մարթ իրան մի մադար տղեն ղուրկիս ա քաղաք՝ իրան հետե մի արհեստ սվըրի: Քաղաքից եկողը ասալ ա.- Տղատ փող ա ուզիս:

Էը խըղճ մարթն ալ իլած, չիլած վերչին շահին ալ ղորկալ ա:

Դու մա ասի՝ հի՞նչ արհեստ, հի՞նչ բեն, տղան նի ա ինգած մի դաստա լոթ-լութու մաչ, հորը ղորկած փողըրը դեսուդեն ցըրըվ ա տալիս, վընչ մի բեն ալ սվրիլիս չի:

Տղան տըսալ ա՝ ալ հարը փող չի ղուրկիս, ետ ա դըռալ, եկալ շենը:

Հարը հրցրալ ա.- Օղլ, պա հի՞նչ արհեստս սվըրած:

Ասալ ա.- Ա՛ հար, դամիրչեթուն: Մի դուքան սարքի, հաջաթ կալ, իմ արհեստս բինիցրմ:

Հարը պարտքավ, դես-դեն տալավ դուքան ա սարքալ: Տղան ասալ ա.- Ա՛ հար, փոքսը փչի: Իս ալ բեն արմ:

Հարը փոքսը փչալ ա, քռնոք ջանը կոխալ ա:

Տղեն ասալ ա.- էտ հի՞նչս շինիս, գյուլոխ չի գյուլիս, դավայս սրքիս:

- Գյուլ սարքմ, թող ինձ օտի, քիանե պրծնմ,- ասալ ա հարը:

93 (196). ԴԵՐԸ ՍՐՄԱՑՈՆ ՕՐՀՆԱԼ Ա

Մի մարթու հըռե նի միալմ մի հընգեր ա ինիլիս: Մի օր էտ հնգերը գյուլիս ա հնգորը տոնը ղոնաղ:

Դե ղոնաղը Աստոծեն ա, եկած ա՝ հազար պարին ա եկած: Համ ալ դե, ղոնաղը կինի մի օր, էրկու օր, իրք օր: Ըտոր դենը ղուշաղեն մնալը անհամեթուն ա:

Անց ա կնալիս հենգ օր, տասը օր, մի ամես, էտ ղոնաղը գինիս չի:

Մի օր տնատարը ըսիս ա.- Հնգերս, եք կլպոնձի տանք, տըսննք հո՞ւ շուդավ տանը դրքավը դոս կգյո:

Տնատըռնը մըտքը էն ա ինիս, որ մի բենավ խափի, տոնը նանե դուս արի, դուրքը փակի, ասի՝ թողի քինի կորե, դու նհախ ջարմա յըս, եկած՝ ինգած գյլխես: Խաթա յըմ արալ, «պարի օրմ» տվալ:

Տնատարը կլպոնձի ա տվալ, եկալ դրքավը դուս եկալ: Ղոնաղը կլպոնձի ա տվալ դիբի տանը դիյերը:

Տըսալ ա մըթկը գինիլ չի: Մի օր ալ եկալ ա, ասալ.- Հնգերս, լսածմ, ձեր միալը սով ա ինգած, մահլողը քողցու կուտորվիսն:

- Ջհանդամը՝ սով ա: Մի բեն՝ իմ փորս կոշտ ա,- պատասխանալ ա ղոնաղը:

Մի օր ալ եկալ ա, ասալ.- Հնգերս, լսածմ, թաքավերը բերած ա ձեր միալմը ցորեն ա բուժինիս, գինի քո փայը եր կալ:

- Իտի բեն ինի, իմ հար տանն ա, ինքը եր կօնի,- ասալ ա ղոնաղը, կողքեն ինգյալ:

Տնատարը տըսալ ա՝ կրիս չի ղունաղեն տանը նանե դոս արի, գինիս ա շենեն դերեն գենգատ ըրիս:

Դերը ըսիս ա.- Աս քիշեր որ քոն կինի, մի սորին դոզ ճպատավ բոյը կչափս, կբերըս ինձ կտաս: էքուց ըրակու ալ քի նետ կբերս եգեղեցին աղոթքի:

Ժամը պրծնիս ա, դերը ըսիս ա.- Ժողովուրթ, թա հի՞նչ ա դըռած, հի՞նչ չի դըռած, ինձ պարզ չի: Թաքավերը ամեն մի շեն մի նշանովի ճպատ ա ղորկած: Ասսծ ա՝ հուր բոյ ճպատեն յրկնեթոնը ինի, ընդոր ձըրքը-վըննը կապած ղուրկեցեք քաղաք, գյուղոխը պետք ա կտըրմ:

Ըսիս ա, ճպատը եր ունիս, գյոլիս գյղեցոն դրքեն վըտ կնալիս:

Ճպատը դոզ ղունաղեն բոյեն ա ինիս:

Դերը տնըտրռնը մի բեն ալ ա ասած ինիս: էքսի քշանաց շուդավ տնատարը ղունաղեն ըսիս ա.- Եր կաց, նի մտի ջվալեն մաչը, դիրըմ էշեն երե, տանմ շենավը անց կցըրմ, գինի: Դերեն կասմ, քիշերավ փախած ա, գենցած, իս քոնմ լալ, գիդացած չըմ:

էքսի քշանաց շուդավ, տնատարը ղոնաղեն նի գիծած ջվալը, դիրած էշեն երե, քուչավը տնիս տեղը, դերը միակը ձեռքեն դուս ա գյոլիս առաչը, հրցրիլիս.- էտ հի՞նչս տնիլիս ջվալավ:

- Սրմացու ա, ա դեր, տնիսմ վարմ:

- Օրհնյալ, հո՞ւվ ա տըսած առանց օրհնիլու սըրմացոն տանն վարն: Ջվալը դիրի տափեն, օրհնմ, ետնե տար, վարի:

Ջվալը էշեն նանե վեր ա դիրիս: Դերը միակը եր ա ունիս, ջվալը թկիլավ ըսիլիս.

Թա ցոռնա սըրմ ա, թող մինը հազար դըռնի:
Թա գյորա սըրմ ա, մինը մի ամբար դըռնի:
Թա հաճար ա, տոնը լցվի՝ անճար դըռնի:

Դերը հըրթավ, օմեն մի սըրմացվի անում տալավ, մի սորին թկիս ա: Ղոնաղը վխթունեն սաս չի ըրիս:

Դերը մի սազ օրհնիլեն ետը, ըսիս ա.- Դե, օրհնյալ, տար վարի:

Տնատարը ղունաղեն տնիս ա շեներն ղրաղըմը ջվալեն նանե դոս ա ունիս:

Ղոնաղը ըսիս ա.- Հնգերս, սորին ա դըռալ, որ դերը մռացալ ա կտվիատեն նա կուրեկեն սրմացոն օրհնի: Ընդուք ալ որ օրհնիլ լալ՝ ալ կարի չըմ լալ դմանալ, մըռնիլմ լալ:

94 (197). ՇԱՏԱԿԵՐ ՀԱՌՀՆԸ

Մի հառհնը անչափ շատ հացակեր լալ, ըսկի քշտոմ իլա չի: Հացու նստած տեղը, ըսկեսորեն ճարը կտրած, եր լալ կանալ տանը նանե դոս գյոլ, որ տըսնի վեչ:

Մի օր ալ թազա հացն լալ թըխիլիս: Ըսկեսորն ալլա եր ա կացալ, գենցալ հրվանեն տոնը: Հառհնը հաց ուտիլավ ասալ ա.

Քողծածմ լալ, կերալմ օխտը հաց,
Օխտն ալ կերալմ՝ թազա հաց,
Տըսնս իմ իսկեսուր հիբ կգյո տոն,
Նստնք, օտնք հալալ հաց:

95 (198). ԹԵԳՈՒՆՔԸ

Միետ մի քանե մարթ զիրավն դըռալ մի մարթու գյոլոխ թակալ:

Էտ խըղճ մարթը վայ-վայ ըրիլավ ասալ ա.- Վա՜յ թեգունքս, վա՜յ թեգունքս:

Մի օրեշ մարթ մոտացալ ա ասալ.- Այ տնաշեն, պա գյուլոխստ թկիսն, դու «վա՜յ թեգո՞ւնքս» ըս հարայ տալիս:

Թակվողն ասսլ ա.- Ախպեր ջան, ինձ որ թեգունք լալ ինի, գյուլոխս կարի չըն լալ թակի:

96 (199). ՇԱՆ ԹՈՒԼԱՆ

Դե շեն տեղ լալ. պարապ վըխտըռնեն հվաքվիլն լալ մի տեղ, իրաց հետե դեսեն, դենեն գյալաջի արիլ:

Մի մարթ հինչ խոսիլ լալ, թեխյա սոտ լալ խոսիլ: Ընդոր ըսուծնան մաչեն ոչ մի ղորթ բեն իլա չի: Համա դե տեղն-տեղեն հնդի լալ սըզցրի ասիլ՝ օմեն ալ հվատալն լալ, որ թեխյա ղորթ ա:

Մի մարթ բենեն խաբեր լալ, որ էտ մարթեն նաղլ ըրծնեն թեխյա սոտ ա: Համա դե վախիլ լալ խոսի, քանի որ օմեն ալ հվտալիսն լալ:

Էտ մարթը՞ որոշալ ա մի սոտ ալ ինքը ասի, տըսնի իրան ըսածեն ալ կհվատա՞ն, թա՝ չի: Ասալ ա.- Տղերք, մի օր նա յըմ լալ վար ըրիս արտըմը: Մին ալ տըսալ գյոզդա՝ երգինքավը մի շան թոլա հջիլավ գինիս ա:

Հվաքված տղեքը օմեն ալ ծծաղից թուլացած վերն դըռալ, թա՝ շան թուլան երգինքմ հի՞նչ բեն օնի:

Օմեն օրաց սոտ խոսողը ասալ ա.- Տղեք, ծծաղ մեք: Հվտալու ա: Կարոող ա մի տեղ օբան քոչած ինի, մռացած ինն մի թոլա մանցած ինի, ղարաղուշը եկած եր կալած, գյովդա տարած ինի, թոլան ալ՝ հչելած ինի:

97 (200). ՀԱԼՎԱ ՅԸՄ ՈՒՋԻԼԻՍ

Մի շատ քյասիբ մարթ երկար վախտ ուլուզացալ ա:

Դե, հնգեր, հրևան, հու գենցալ ա տսնալու, հրցրալն, թա.- Սըրտտ հի՞նչ ա ուզիս, հի՞նչ կօտս:

Օմեն խոսքեն ալ ասալ ա՝ հալվա:

Շենեն դերեն ալ կանչածն լալ ալոզեն տըսնի, սուրբ հաղորդում տա ձեռեց գենցող ալոզեն:

Դերը ալոզեն կնգանը ասալ ա.- Օրհնած, բալքա հալվեն դեղ ա դռնալիս, էս մարթեն ետ ա բիրիս: Մի պատառ հալվա սարքի բեր տանք օտի:

Անճարագ կնեգն ասալ ա.- Ա՛ դեր, ախըր տանը ոչ մի բեն կավչնի:

Դերն ասալ ա.- Ա՛ օրհնած, վազ տոր գինի մըր տանե մի քիթոլ եղ օզի, էն մի հրվանեն նանե մի քիթոլ մըղր օզի, միներն նանե ալ մի հափուռ ալուր օզի: Բեր շղաղի, իփի, տոր օտի:

Կնեգը դեչանը տեղես, տեղեն հվաքալ ա, հալվան իփալ, բերալ, ալոզը մըռալ ա:

Կնեգը եկալ ա, թա.- Ա դեր, հալվեն բերալմ:

- Մըռնողս մռնիլեն ետը, հալվան բեր բերանս կոխի, փայդա չօնի,- ասալ ա դերը:

98 (201). ԱՇԿԸ

Մի շնորքըշատ մարթ ա հնիլիս: Վըչ մի վախտ, վըչ մի օր ձեռքը դերտակ տոն եկած չի լալ:

էրկու կուճի ճվարան լալ գյործած: Օմեն քշանաց ճվըրաննըը դերտակը, հետը տանիլ լալ բինատըդ: Ըրակունը դեսեն, դենեն հվաքիլ լալ լցրած բերիլ:

Օրերից մի օր հունչուր ա դըռնալիս, մըռնալիս ա ճվըրաննըը նհետը տանի: Ըրկոնոն տոն գյոլուց կնեգը յիշիս ա մարթեն իրեսեն, ըսկսիս ծույները թակիլը, լեց-շիվան արիլը:

Մարթը զարմացած հրցրիլիս ա.- Այ կնեգ, քի հի՞նչ ա պդահալ, խե՞ յըս լեց ինիս:

- Պա քի հի՞նչ ա պդահած: Աշկտ խե՞ ա դոս եկած,- ըսիս ա կնեգը:

Մարթը ծծղիլավ ըսիս ա.- Տասը տարե յընք փսակված, տասը տարե յալ փըսկվիլոց առաչ իմ աշկը դոս լալ եկած, տասը տարմ իս դերտակ եկած չըմ տոն: Դու միշտ իմ լիգը ծրքերենս եշած, մաջալ չըս արած իրեսես եշս: Մի ասօրմ դերտակ եկած, ալ ծրքերիս եշած չըս, նոր իրեսես եշած, տըսած, որ մի աշկս կավչնի:

Կնեգը մանցալ ա խաջիլ:

ԻՐԱՊԱՏՈՒՄ ԶՐՈՒՅՑՆԵՐ

1 (202). ՄԻ ՄԱՆԵԹԸ ՕՁԱ ՉԸՄ

Մի ութն-տասսը հուգի ղըդղեցե տըղերքյ ղարիբթունից Ղըրբաղեն նա-նե ետն դըռնալիս, որ գյոն Ղըրդաղը: Գյոլիսն Մըղրա ըռշկավը որ անց կանաս, տըսնալիսն՝ Արախսը շատ վարար ա: Ըշկռնեն ուտիս չի նի մըտնն գետը: Մնալիսն մաթթալ:

Մի մըղրեցե էն ա ինիս Արախսեն կողքեն իրան բաղմը բեն ըրիլիս: Տըսնալիս ա, որ հայ տղերք են, վըխիսն նի մտնն գետը, գյոլիս ըսիս ա.- Տըղերք, մարթա մի մանեթ փող տվեցեք ինձ: Իս ձեզ Արախսավը անցկցրմ:

Տղերքը ուլխնալիսն, համաձայնվում:

Մըղրեցեն նի ա մտիս Արախսը, ըսիլիս.- Տղերք, ինձ նման շորներտ հնեցեք, սորին կպըցեք ուսուռնուտ երե, մինը միհեն ձեռքը պընդ փռնած հետես եկեք:

Արախսեն կեսմը հինչո՞ւր ա դըռնալիս, մինը հնգոր ձեռքը բեց ա թու-դիս: Արախսը քշիս ա, տընիլիս: Տղերքը ըսկսիսն ղըլմղալ արիլը.- Ադա, Մանցու ջուրը տարալ ա, փռնեցեք:

Մըղրեցեն ըսիս ա.- Մղափուն իմ մի մանեթը: Համա դե ուզիս չըմ, եկեք գետը անցեք:

2 (203). ՄԻ ԳՅՈՒՇ ԿՈՐԿԸ

Իրգյուտնեցե Արտեմ, լա պատառ Աստըվածապաշտ, Աստվածավախ մարթ լալ:

Մի քիշեր դաղնուղ արազ ա տընսնալիս: Քունե զուրթնալիս ա, ալ քոնը տընիս չի: Խիյալ ա ըրիս, որ ասօր մնամ տանը, կարուղ ա ինձ մի փոր-ցանք պդահի: Սորինը էն ա, գինմ ծմակը փադու, բալքյա խաթան անց կանա: Կնգաննն ալ քունե եր ա կցրիս, արազը նաղլը ըրիս, ըսիլիս.- Այ կնեգ, էրկու հաց դիրի միզարմը, կացնեն նհետ նի գիծի խուրջունը, դիրմ էշեն երե, քանե շինացեք քոնն, գինմ ծմակը:

Արտեմ հղե ինիս տեղը, իրսը հլորալ ա դիբի աղոթարանը, եշալ դիբի երգինքը, ասալ.- Աստուծ ջան, աս քիշերաց արազս որ պարին կադարվի, փորցանքից հըռե մնամ, վըրծակ չօնմ մատաղ արմ, համա դե կորուկ օնմ, մտաղու տեղ մի գյուշ կորուկ կտամ դերեն:

Ըսիս ա, իրսը խաչակնքիս, խուրջինը գիծիս էշեն երե, եռ ինիս, քշիս, գինիս ծմակը:

Արտեմ որ իսնիս ա ծմակը, հալա տափը մթեն ա ինիս, կացենը խորջունեն նանե դուս ա ունիս, «Հիսուս Քրիստոս» ըսիս, լա ըռշկին դոնմը չափ ա ունիս ծառեն, կացնեն գյուլոխը կուտուրվիս ա, կոթը մնալիս ա ձեռքեն: Մթեն տեղը չոր խաշիմնը տըփտըփիլավ, շոռ ա գյոլիս որ կացնեն գյուլոխը ճարի, կացնեն գյլխեն տեղը փադե գյուշ ա ճրիլիս: Գյուշը եր ա ունիս, յիշիս դիբի երգինքը, ըսիլիս.- Փառքտ շատ Աստուծ, հի՞նչ անհամփեր մարթս: Դըմնալիս չըս, որ օրը բենվի, տըսնմ արազըս պարին ա կադարվմ, թա՝ չէ, թայդի քյուշնս ղորկալ, կորուկը ուզիլիս:

Արտեմ պատառ ալ ա շոռ գյոլիս, կացնեն գյուլոխը ճրիլու: Կրիս չի ճարի: Ճարած գյուշը կացնեն կոթեն նհետ նի ա գիցիս խուրջունը, եռ ինիս էշեն, գյոլիս տոն:

Արտեմ էշեն նանե վեր ա գյոլիս, տըսնալիս՝ կնեգը նայե կուռները խտտած, դըրքեն վըտը: Յիշիս ա Արտեմը, յիշիս, ըսիլիս.- Տընըշենու տղա, պա գիդալիսս գյուլոխս հի՞նչ օյն ա եկած:

Արտեմե սըրտը ջուր ա կտրիս կնգա ասած խոսքեն երե: Վըխիս ա: Ինդի ա գիդալիս, տըսած արազը գյորա, մի փիս բեն ա պդահած: Վըրազ հրցրիս ա.- Հի՞նչ ա դըռած, այ կնեգ: Շուդ արի, ասի:

Կնեգը ըսիս ա.- Այ յուրդաքոռու տղա, պա ասի չըս, քշանուն մթեն լալ, աշկրս սորին տըսած չըն: Կացնեն տեղը խուրջոնմը մըծ չամչլուգնմ դիրած:

Արտեմ գյուլոխը ուրորալ ա, ծըծղեցալ, ասալ.- Այ կնեգ, սուս արի, արազս կադարվալ ա:

- Խե, հի՞նչ ա դըռած,- թայդի հրցրալ ա կնեգը:

Արտեմ, խըղճը հանգիստ ասալ ա.- Այ յուրդաքոռու կնեգ, պա ասի չըս, իս ալ գենցալմ հասալ ծմակը, հալա տափը մթեն լալ: Իս ալ սորին տըսած չըմ: Կացնա տեղ չամչլուգինմ թխած ծառեն: Ուրեմն կացնեն գյլխեն տեղ, չամչլուգեն գյուլոխն ա կոտրված, կորած: Իս ալ չամչլուգեն գյուլոխը որ ճարլմ, ինդի յըմ գիդացալ՝ Աստուծ գյուշն ա ղորկած, որ մտաղու հետե վեզ կալած, մի գյուշ կորուկը տամ: Իս ալ Աստուծեն նանե նղացալմ, մեխկու տակավ ինալ:

3 (204). ԹԱՂՄԱՆ ԿԱՐՔԸ

Մի տարե ղուլուդեցե Բաբաջան մըծ ախպուրը նաևե նղացալ ա, թողալ, գենցալ Թավրիզ՝ աշխադանք արի, գյուլոխը պահի, որ ալ ախպերը երե միննաթ վեչ գյո, թա լա՝ քի իսմ պիհիլիս:

Բաբաջան մի քող գիծալ ա օսսավը, մի կացեն ձեռքը կալալ, մեյդանչոմը վըտ կացալ: Մի քշանոց մի պարոն եկալ ա Բաբաջանե ասլ.- Խոնախա, մեզ մի քիչ փայտ ունենք, կարո՞ղ ես գալ կտրտել, շնորքով դարսել:

Բաբաջան քմըծըծաղ ա տվալ, ասալ.- Իմ ջոխտ աշկես երե, աղա, պա լա փադ կտորիլը իմ փեշակն ա: Տարեն բուլուր նայենք ինիս ծմկնոմը փադ կուտուրիլիս:

Բաբաջան գենցալ ա, փադը կտորալ, շնորքավ հվաքալ, կուտալ, հինչուր որ պետքն լալ: Խանմը Բաբաջանե արած բենեն շատ ա հավան կացալ: Ըրկունուն պարոնը որ եկալ ա տոն, խանմը ասալ ա.- Բանվորը շատ լավ գործ արեց: Սոված է անշուշտ: Հրավիրիր ընթրիքի:

Դե քողցած ղրդղեցե, քաղաքացու փթատած գերմակ դոլմա: Բաբաջան դոնմը էրկունը, իրքը դիրալ ա մի ճոթ հացմ, ղրդղվարի, անուշ արալ, հոպ տվալ, կոլ տվալ: Քաղկենե պարոնեն փորը տարալ չի Բաբաջանե նման հաց օտիլը: Ասալ ա.- Խոնախա, Ղարադաղում մեռելները քանի-քանի են թաղում: Ինչպե՞ս է թաղման կարգը:

Դե ղորթ ա, Բաբաջան քյասիբ, անգրագետ մարթ լալ, համա դե շատ լալ մրթամաչ ինգյած, դուս եկած, խուսկա մաչ իփված մարթ լալ: Պարոնեն ասած խոսքեն նաևե բենու գյուլխա ինգյալ, քմըծըծաղ ա տվալ, ասսլ.- Դե հի՞նչ ասմ, աղա, եշած մըռալեն: Թա մռնուղնեն գերմակ խոխենքն՝ հինչոր ձեր դոլման, էրկունը, իրքը մի գիրիզմանմ ալնի թղիլիս: Թա չէ, աշկի ինգյող բաբաթ մարթինքն ինիս, մինի-մինի յըն թղիլիս:

Պարոնը տըսնալիս ա՝ չէ՜, ղորթ ա, Բաբաջան շինացե անգրագետ մարթ ա, համա դե խոսքմ ետ մանցուղ չի: Գյուլոխը քուրիս ա, Բաբաջանե կդարած օրվա աշխադանքեն հաշիվը փկիս, հղե դիրիս:

Բաբաջան դուս ա գյոլիս քյուչան, մհետ դիբդիբետ յիշիս, այտս, ինքն իրան ըսիս. «Դե գինի, շան տղա, ըշտեղ քու տըսածը որ ասս, տեղը մռանաս վեչ Ղըրդաղեն մըռալ թղոլեն կարքն ալ կասս»:

4 (205). ՋԱՌՈՒ ՓԱՆԴԸ

Ղուլդեցե Ջառի նոր լալ փսակված: Հալա մի ութն-տասը օրվա հառհնը լալ: Մի օր տնեցեք հացն թխալ: Հացը որ թխալն, վերջացրալ, ըրկոնանց երե Ջառի մի ղզղան ջուր դիրալ ա թոռնեն երե, որ տքանա:

Տնեցեք որ օմեն քոնն ինալ, Ջառի եր ա կացալ, թաքուն գեցեն փոխանը լվացալ, ծհանը դիրալ թոռնեն երե, փոխանը թոռնմը կախ արալ, որ քիշերը չուրանա, ինքը գենցալ քոն ինալ:

Տնեցեք հալա քոնե եր վեչ կացած, Ջառի շուդավ եր ա կացալ, գենցալ, որ թոռնեն նանե փոխանը եր օնի, գենի, որ տնեցուց նանե ոչ մինը գիդա վեչ՝ ամոթ բեն լալ:

Ջառի գինիս ա թոռնեն կողքը, մնալիս զարմացած վըտը: Ըշկերեն տըսածեն հվտալիս չի: Աշկրը պատառ ծիպծիպիս ա, բիցի-հոպ ըրիս, տըսնալիս հի՞նչ՝ լա փուխանեն էրկու փոխկն ա ծհանեն մի թիրափավը կախ: Փուխանեն երե թարափը կավչնի: էրած ա, վեր անցած: Ջառու ձեռքրը թուլինալիս ա, թըքը բիրանմը չուրունալիս, մնալիս մաթալ՝ դոդու նման վըտը: Դու մի ասի, յուրդաքոռեն հառհնը փոխանը որ լվացած ա, թոռնավը կախ արած, փուխանեն երե իլած բինբակե օխտը թիլուց գյործած երկար խոնջանը կախ ա ինգյած, հասած թոռնեն մաչեն կրակեն: Դե մթեն տեղ լալ: Ջառի տըսած չի ինիս: Խոնջանը որ չուրունալիս ա, դըռնալիս ա փիթելա: Նի ա կնալիս թոռնեն կրակեն նանե, իրիլավ, իրիլավ գյոլիս հսնիս փուխանեն, կեսն ալ իրիլիս: Ծհանը սադդա դըռնալիս, թուղիս չի, որ փոխկրնան ալ էրի:

Դե քյոհնա այամեն կնանենքը իրաց փուխանեն, տղամարթկանց շալվարնոն նման երկար փուխկերավն լալ կարիլ: Օրենք լալ՝ կնանունցը վըտերեն դեչանը բիլիգնեն պետք ա փուխանեն փոխկրը ծածկած լալ ի

նի: Մըծ ամոթ լալ, որ տղամարթը կնգա վըտրը բեց տըսնի:

Կնանեքն ալ փոխանեն երկար փոխկերավ կարիլն լալ: Այտս փոխկրը՝ կարմիր շիլավ իրսպատըլ: Երե թարափն ալ իրսպատիլն լալ կապուտ յա կանեչ շիլավ: Փուխանեն յրվհանն ալ ծալիլն լալ՝ ղլակ արի: Բինբակի յա կազի թիլից գյործած խոնջան անցկացրիլ, գյոխտու տեղ:

Հակառակու նման Ջառու ջհեզը հալա բերած չըն լալ, որ մի թազզա փոխան եր օնի գենի: Ըսկեսուրեն նանե փոխան օզիլը հմնչեցալ ա: Գիդալն լալ, որ Ջառի փոխանը էրած ա, մանցած առանց փոխան: Տընազն լալ տալ, ծծղոտիլ:

Ջառի որոշիս ա մի փանդ արի, որ իրան փոխանը էրիլը ոչ մինը գիդա վեչ: Բիրիս ա փուխանեն փոխկրը գյուլբաքու նման գինալիս, դիերքը ծուպավ կպիլիս: Ջառի ինքը իրան սըրտ ա տալիս, ըսիլիս. «Դե էն ա փոխկրս ըրվալիս ա, բոլ ա: Հուր ցավ ա կտրած գիդա՝ փուխկերեն դիյերը փոխան կա, թա կավչնի:

Ջառի առանց փոխան՝ փոխկրը վըտերեն կապած, թա քանի օր ա յոլա գինիս, Աստուծ գիդա: Իտի էնքան մնալիս ա, դեչանը ջհեզը բիրիսն: Նոր Ջառու վըտրը էրած փուխանեն փոխկերեն նանե ազադվիսն, թազա փոխան գինալիս:

Դե հինչուր պապական առակն ա ըսիս՝ «Շատ կնանեք կա, որ բիրնոմը ինա չի չիր թռչիլ»: Ջառի ալ կրիս չի էրած փուխանեն գաղտնիքը մշտական պահիլ: Մի քանե տարե անց իրան մարթեն՝ Մակու նաղլ ա ըրիս, գյլխեն էկած փորձանքը: Մակի ծծղիս ա, ըսիս.- Այ յուրդուքոռու ախչիգ, դե փորձանք լալ, պդահած լալ, ալ խե՞ յըս լալ առանց փոխան մնալիս: Ինձ ասիլս լալ, իմ փուխաննուն մինը տալմ լալ, գենիլս լալ:

Ջառի ըսիս ա.- Ախր քու փոխանեն փոխկրը սիպտակն: Տըսնալիլն լալ, հազրի յըն լալ գյոլ, ինձ խայտառակն լալ արիլ:

5 (206). ՀԱՐՈՒԹԵ ԴԱՎԹԱՐԸ

Խնգիհեցե Թուրուս ապերը քյասիբ մարթ լալ: Տղան՝ Հարութ, շատ հուշիյար խոխա լալ: Հորը շատ ա ղանչանք արալ, լեց ինալ, որ ղորկն վարժատոն, մի գիր ճնանչի, ղալամ փռնի, գիրըճանենչ մարթ դըռնի: Դե, հի՞նչ արած, Թուրուս ապրոն օժը հաղթա չի: Փող չի լալ, որ վարժարանը վարժապետեն ծախսը քաշի:

Հարութ գիրըճանեչ դըռնալուց ումուդը կտըրալ ա, դըռալ շենեն տվարածը:

Դե եք, քի ասմ, տնաշըննեն տղեն՝ Հարութե հուշյարութունից: Շենեն դերը հի՞նչ ժմագիր, հի՞նչ ավետարան՝ թաք մհետ որ Հարութե քուշտեն որ կարթիլ լալ, Հարութ տեղն ու տեղը բերանացի լալ ըրիս, դերեն կրթեցածը ինքը ըսիլիս:

Դերը որ տըսալ ա Հարութ էդքան հուշյար, շնորքավ մարթ ա, հիբ որ շենեն տիրացուն շենմ չի լալ ինիս, շենմը մի խեր, շառ բեն լալ ինիս, դերը Հարութե լալ իրան նհետ տնիս. տիրացվեն տեղը՝ տիրացու:

Դե աշխարք ա, Հարութ ալ ա մըծացալ, փսակվալ, դըռալ օխտը տղու, էրկու ըղչիգյան հար: Շենեն հետե՝ տվարած, դերեն հետե՝ տրացու: Աշ-

խարը տարեն-տարան նհետ շոռ տալավ, Հարութ ալ ա շոռ եկալ, մծացալ: Եկալ ա իրան վահդան հասալ ա, մըռալ ա:

Եղսա նանան՝ Հարութե կնեգը, վազ ա տվալ, գենցալ մի դավթար բերալ, դիրալ Հարութե ծոցումը: Շենեն կնանենքը տըսալն, զարմացած հըրցրալ.- Եղսա, էտ հի՞նչ դավթար ա:

- Հարութե դավթարն ա: Պա Հարութ գիննական չի էն դունյա ալ նախրչի դըռնի, դավթարը դիրիսմ, որ գիդան տիրացու վա՝ տիրացու դըռնի,- ասալ ա Եղսա նանան, այտս լեց ինիլավ թարիփ արալ.- Ընմետ մըռնմ, Հարութ ջան: Դավթարետ մըռնմ, Հարութ ջան: Ջեռքետ դիլամեն մըռնըմ, Հարութ ջան: Շենեն տիրացու Հարութ ջան, Հարութ ջան:

6 (207). ՀԻ՞ՆՉ ՈՐ ԱՍՄ, ՄԻ ԲԵՆ ԱԼ ԴՈՒ ԿԻՎԻԼՑՐՍ

Խնգիհեցե Մանցի մի շփթըրակու գենցալ ա հըրևան Խաչու տոնը, ասալ.- Հըրևան Խաչի, էքուց գիրագի օր ա: Հնգրեթուն կարս, գիննք Թագա շենը:

- Հինչո՞ւ հետե,- հրցրալ ա Խաչի:

- Էս անցած ըմռանը, Վըրթըվըրեն տղաս որ գենցած լալ Հուժե գիղեցեն, մի թագա շինացու ըղչիգյան բագան լալ կացած: Մհեգ օմեն օր ճոնդեն ա գյուլիս, որ գենցեք, ուզեցեք, ըտուր հետեյնք գինլական:

- Ըմուդավ կաց,- ասալ ա Խաչի,- իտի խեր բենու հետե հենգ օր ալ կգյոմ:

- Ախր, պա գիդաս շատը հինչո՞ւ հետե յըմ քի ուզիս ինծ նհետ տանմ,- խոսքը իվիլցըրալ ա Մանցի, դու գիդաս, որ իս քյասիբ մարթմ, տեղը իս հի՞նչ որ ասմ, մի բեն ալ դու կիվիլցրս, բալքյա բենը կարնք գյուլոխ բերնք:

- Իմ աջի աշկես երե, ասալ ա Խաչի:

Էքսի քշանաց Մանցու կնեգը՝ Ասլի բաջին, մի արծաթ մտանե տվալ ա Մանցու: Մանցի ալ մտանեն քշկռալ ա ծըրքըլխեն ճոնդմը, դիրալ ջուբոմը, հըրևան Խաչու նհետ, քաղցր սոհբաթավ, հղե ինալ դիբի Թագա շենը:

Թագա շենմը Մանցի ծլպատակ նստալ ա Աթե տանը, յալխը ջուբեն նանե դուս կալալ, մտանեն դիրալ յալխեն երե, մուտցրալ Աթե, ասալ.- Աթա խնամե, անցած ըմռնուն, Վըրթըվըրեն Հուժե գիղեցմը իմ տղան քու ըղչիգյանը տըսած ա, հավան կացած: Մհեգ մի մտանե բերածմ բարգյահ տամ: Հի՞նչ կասս:

- Ունեցվածք հի՞նչ օնս,- հրցրալ ա Աթա:

- Ունեցվածքից, որ ասմ, շենեն մի նախրը իմ տան ըռշակվն ա անց կնալիս, քի բո՞լ ա:

- Ղորթ ա ըսիս, մի դանա իրան օնի նախրեն մաչեն,- գյուլոխը քշըբեցուր ըրիլավ, ասալ ա Խաչի:

- Մի սուրու վըչխար իմ տան ըռշկավն ա անց կնալիս... քի բո՞լ ա,- ասալ ա Մանցի:

- Ղորթ ա, ղորթ ա, էրկու գյուլոխ էծ ալ ինքն օնի,- ուրախ-օրախ իվիլցրալ ա Խաչի:

- Խնամե Աթա, իմ դըրքես ըռշկավն ա անցկնալիս ծիանցը իլխին: Հվտալիս չը՞ս:

- Կիվատա, կիվատա, մի էշու քուռուկ ալ քունն ա,- իվիլցրալ ա Խաչի:

- Դե, հի՞նչ ասմ: Հավերեն հաշիվ կավչ: Որ իմ տանը ըռշկին կողմը ըրվակողն դըռնալիս, մինը մինեն նետ կռվիլիս:

- Ղորթ ա, ղորթ ա, էրկու ճոտ ալ իրացն ա,- ալլա գյուլոխը թփիրիլավ, իվիլցիրալ ա Խաչի:

- Իտուք մի ղոլ թող: Տղետ նանե ասի: Հունչո՞ւր տղա օնս,- խոսքը առաչ ա տարալ Աթա:

- Իմ տղան շնորքավ տղա յա: Արուղ, դիրող, լսող, բինարար: Համա դե ետերը խուսկուտեղ վեչ դըռնի, դուզն ասած, մի աշկը պատառ չափ ա,- տղեն նանե ասալ ա Մանցի:

- էտ ալ դուզ ա ասալ, խնամե Աթա: Համա մղափուն, որ մի աշկն ալ իսկի տըսնալիս չի,- գյուլոխը օրորիլավ իվիլցիրալ ա Խաչի:

Էս խոսկեն երե Մանցի մհետ մին Խաչու կողքեն ա եկալ:

Աթա տըսալ ա, որ Մանցու ածած զուռնեն հավան նա Խաչու թկիս դհոլեն հավան մինը մինեն փռնիս չի: Մտանեն դիրալ ա Մանցու ըռշկին, ասալ.- Չէ, խոնախա Մանցի, մըր խնամեթունը փռնի չի: Մտանետ եր կալ, գինի:

Մանցի նա Խաչի Թազա շենեն նանե որ պատառ դիյերն կացալ, Մանցի կզնված, Խաչու ասալ ա.- Իս հինչ ասալմ, դու իմ հակառակնս ասալ:

Խաչի՝ նղացած, ասալ ա.- Այ տնաշեն, դու հինչ ասալս սոտ տեղը, իս ալ մի բեն իվիլցրալմ: Իս պակաս բեն ասա չըմ: Խե՞ յըս նղնալիս:

7 (208). ՄԸՐ ճՐԵԳԸ ԸՆՑՐԱԼՆՔ

Մի շինացե իրան ծին ծախալ ա հըրևան մի շինացու երե: Փողը եր ա կալալ, դիրալ ջուբոմը, ծիանը լուկտան տվալ ունողուն, ասալ.- Մըր ճրեգը ընցրալնք, ձեր ճրեգը՝ վառալ:

Չի օնուղը շատ ա ուլխացալ: Ինդի յա գիդացալ՝ ծի ծախողը մի մըծ բեն ա կուրցրիս, ինքը՝ ճըրիս ա: Ալ խոսեցա չի: Չին եր ա կալալ, տարալ:

Քիշերվա մի վախտ շինացեն տըսալ ա՝ հի՜նչ... Չին կապը կտրած ա, գյումեն մաչավը չափ ինգյած: Եր ա կնալիս, ճրեգը նի կցրիս, նի մտիս գյումը: Չին ճրիգյեն լուսը որ տըսնալիս ա, հանգիստ գյոլիս ա իրան տեղը վըտ կնալիս: Շինացեն ճրեգը եր ա ունիս, գյումեն նաեե դուս գյոլիս: Չին ալլա կապը կտրիս ա, պլեթուն ըրիս, գյումեն մաչավը դես-դեն վազ տալիս: Շինացեն ալլա ճրեգը վռիս ա, գինիս գյումը: Չին հնդրտվիս ա, գյոլիս իրան տեղը՝ վըտ կնալիս:

Շինացեն հիշմ ա ծի ծխողուն ասածը՝ «Մըր ճրեգը ընցրալնք, ձեր ճրեգը վառալ»: Ճրեգը թուղիս ա վառ, դիրիս գյումումը, ինքը գինիս տոն: Չին ալ պլեթոն չի ըրիս: Նոր ծի օնուղը գյուլխով ա ինգիս՝ ծի ծխողուն ասած խոսքեն մանին:

8 (209). ՉԻ՛, ՉԻ, ԻՍ ԱԼ ՉԻ՛

Խնգիհեցե Աբունց Նաբու տղան՝ Հաբի, ըշկդիրած ա ինիս իրաց հըրևան Բալունց Մակու ըղչիգյանը՝ Շմամե: Հաբի շատ ա կմկմալիս, որ.- Քանե հալա օրեշ տղա օզած չի, տարեք մի մտանե տվեցեք, մըզնավ արնք, ալխայիս դըռնմ:

Հաբի որ օմեն օր կմկմալիս ա, վերչը մի օր հարը՝ Նաբի ըսիս ա.- Աս տարե մըծ արտը ցորեննք վարած: Ցորենը որ հնձըս, հոնձե պրծննք, կտանմ մի մտանե կտամ, նշան դիրմ: Ցիլա էտ, որ ըշունք ա վարն ալ պրծնըննք, այտս հրսանենք կարմ, կփսակմ, հառհնը բերմ տոն:

- Միեգ հվատա՞մ, ա հար, էտ խոսկմը հո սոտ բեն կավչնի,- խոսքը դաղ ա արալ Հաբի:

- Ոչ մի սոտ, քու արվըյանի,- ուրթունմ ա կերալ Աբունց Նաբի, Հաբու հավատացրալ:

Տարեն շոռ ա տվալ, եկալ ամռնը: Աբունց մըծ արտեն ցորենը հասալ ա, դղնալ, ծերան կտրալ: Հաբի ըսկսել ա խաղ ըսիլավ արտը չինավ

հնձիլը: Քիշերն ալ տոն չի լալ գյուլիս, մնալիս լալ արտըմը, որ շուդ անի հնձի, պրծցնի, ապերը՝ հայրը, որ գինի իրան նշան տա:

Մի օրվա հունձ լալ մնալիս, որ Հաբի արտեն պրծնի: Ըրկոնան էշեն խոռհնը բիռնիս տեղը, կուճի ախպերը՝ Դովի, որ խոռհն լալ կրիս, ասալ ա.- Ադա Դովի, ըրակու ապրուն կասս, որ Հաբի արտը հնձալ ա պրծալ: Սորին անջուկ կդիրս, կտըսնս կասն, թա՝ գիննք Բալուից ըղչիգյանը նշան դիրնք, թա՝ չի:

- Լավ, կասմ,- ասալ ա Դովի, էշը քշալ գենցալ:

Էքսի օրը, քշանաց, Դովի էշեն նստած եկալ ա արտը: Հաբի թայդի հրցրալ ա.- Դովի, ըրկոնե տանը ասա՞լս, որ Հաբի արտը հնձած ա, պրծած:

- Հա, ասալմ,- ասալ ա Դովի:

- Պա հի՞նչն խուսեցալ,- թայդի հրցրալ ա Հաբի:

- Ոչ մի բեն,- ասալ ա Դովի:

- Պա ասա՞լ չըն, որ արտը հնձիլեն պրծած ա, գիննք, Բալուց ըղչիգյանը նշան դիրնք:

- Չէ՛,- օսսրը զախ տալավ ասալ ա Դովի:

- Դե չի, չի, իս ալ՝ չի՛,- ասալ ա Հաբի, ձեռքեն չինը զախ տվալ արտըվեր, գենցալ կաղնե ծառեն տակեն նստալ:

9 (210). ՄՈՒՐԱԴԵ ՄԱՍՆԸ

Նաղլ ըն ըրիս, որ թազա շինացե ուստա Մուրադ եգեղեցե գինիս չի լալ: Հզետեգ օրը մասնը չի լալ ունիլիս: Իրան հընգրոնենքը հըրցըրիսն լալ.- Ուստա Մուրադ, դու հայ քրիստոնյա յըս, խե՞ չըս մըզ նըհետ գյուլիս եգեղեցե, մասնը ունիլիս:

Ուստա Մուրադ քըմըծըծաղ լալ տալիս, հընգըրտոնացը ըսիլիս.- Գյոմ եգեղեցին մասնը օնը՞մ: Իմ փայ մասնը հենի էն երգինքեն թողբըրըն ըն, որ երգինքից վեր ըն գյուլիս, նի մըտիս գետըրը, ծորրը, ջուր խըմիս, ջուր ծըծիս, նորից բիցիրնալիս երգինքը, եռնաց թոռ վերըծիս: Հանդըրը կընեչըմ ըն, տավար, ապրանք գինիս ըն ըրծիս, մխիթարվըմ: Արտըրըն ալ կընչիս ըն՝ հաց տալիս մըզ: Մընք ալ հացըն ուտիս ընք, Աստուծեն փառք տալիս՝ էտ դըռնալիս ա մասունք: Թա չէ, գինիս եք եգեղեցին, դերեն մանըրը լըպըստիս, քա հայ քրիստոնյա յընք, մասն ընք կալալ: Իս իտի մասնեն, մասնը ունիլեն հավատալիս չըմ, էտ հադաթ բեն ա:

Շինացեք վըտ ըն լալ կընալիս, ուստա Մուրադե պատասխանեն երե խյալ-խյալ ըրիլիս, ալ խոսք չըն լալ ծըրիս, որ ասըն:

10 (211). ՉՈԲԱՆ ԽԱՉԻ ՄԱՍՆ Ա ԿԱԼԱԼ

Հզետկեն իրան օրն լալ: Շենեն չոբաննեն տավարը, ապրանքը նիյն լալ արած շենեն ըռշկին պառակնեն, իրանք ալ մի բունդու երե կրակն լալ վառած. չորք թարափավը ջարգին նըստոտած, սոհբաթըն լալ ըրիս տեղես-տեղեն, օրը մըթընըցրիս:

Չոբան Խաչի ալ կըրակեն նանե պատառ հըռի, իրեսեն երե փըրսվեր լալ ինգյած, մաշկը տըված արևեն, անջուկ դիրած հընգրոնացը:

Չոբան Հարութ, որ ամենից մըծն լալ, ըսիս լալ.- Ամեն մի հայ քրիստոնյա մարթ պարտավոր ա ամենապակասը տարունը միետ հըզետկեն եգեղեցի գինի, ծոնգյը չոքի, ծոնըր դիրի, աղոթք արի, մասն օնի, որ մըռած տեղը, էն դունյա Քրիստոսը ընթունի, տանի դըրախտը: Աստուծեն օրենքներեն չենթարկվուղ հայ մարթեն հոքին նիյն գիծիս կոպրեն կարասը, կրակ տալիս:

Չոբան Խաչի, որ էսքանը լսիս ա, վախից ջանը դող ա ինգյիս, քանե որ ինքը համարյա քառասուն տըրեկան մարթ լալ, ո՛չ եգեղեցի լալ գենցած, ո՛չ աղոթք լալ արած, ո՛չ ալ մասնը լալ կալած: Սըրտեն այան ա դըռնալիս, որ մըռնի, էն դունյա՝ իրան հոքուն, դըրախտըմը տեղ չըն տըլական: Տընընականն դըժոխքը, նի գիծըն կոպրեն կարասը, կըրակ տան:

Էսքանը ինքը իրան որոշիս ա, չոբան Խաչի, հընգըրոնացը ոչ մի բեն ալ ըսիս չի: Չոնբաղը դիրիս ա օսսեն, հըղե ինիս դիբի շենեն եգեղեցեն, որ իրան գյանքըմը, առաչին դոնումը մասնը օնի:

Չոբան Խաչի գինիս ա հըսնիս եգեղեցեն, տըսնալիս ա ժամ-պատարագը վերչացած ա: Ժողովուրքը հըրքըն վըտ կացած, դերը մասն ա տալիս հըրթեն: Տըսնալիս ա հըրք վըտ կացած ժողովուրքը շատ-շատ ըն: Դերեն ձեռքեն մասնեն ամնն ալ շատ կուճի ա, խյալ ա ըրիս, որ ինքն ալ հըրք վըտ կանա, իրան մասնը հասնի չի, կըպրծընի:

Ճարը կըտըրած, ժողովուրքեն իրեսսավը երկար չոմբաղը մըկնիս ա դիբի դերը, ըսիս.- Ադեր, ադեր, էտ մասնեն նանե պատառ դիրի չումբաղես պտկեն՝ լըպըստըմ, համը տըսնըմ, թա չի, էն Աստուծըյանի, ինդի կքըխըմ, որ մասնեն ըմանավը կգինըս ետե Երուսաղեմ:

11 (212). ԻՆԳՅԱԼ Ա ԳՅՈԼԸ, ԱԼ ԵԿԱ ՉԻ

Ղըրդըղեցե Սահակ, իրան հընգեր Դովու նըհետ գենցալ ա Ղըրբաղը ղարիբեթուն: Մի վախտ անցկնալեն ետը, Սահակ ետ ա դըռալ եկալ շենը:

Դովու մարը՝ Եղսա, գենցալ ա Սահակե նանե հըրցըրալ, թա.- Պա Դովի հոր ա՞, խի՞ չի եկալ:

Սահակ ասալ ա.- Դովի ալ նայ լալ գյուլիս: Ինգյալ ա գյուլը, ալ եկա չի:

Դովու մարը գենցալ ա տոն, նըստալ լեց ինալ, շիվան արալ, «վա՜յ, բալա ջան» կանչալ: Մի սհաթում սաղ շենը սաս ա ինգյիս, որ Եղսու տղան՝ Դովի, Ղըրբաղեն նի ա ինգյած գյուլը, մըռած: Շենեն դերը, քյոխվան, աղսախկալենե հըվաքվըմ ըն, գինիս Սահակե տոնը, Սահակե նանե հըրցըրիս, թա.- Դովի խոխա չի լալ: Մըծ, եքյա տըղամարթ լալ: Հինչո՞ւր ա դըռալ, որ նի ա ինգյալ գյուլը: Պա այտըս գյուլումը խըղդվա՞լ ա, մըռա՞լ ա, թաղալ ը՞ն, վերչը հի՞նչ ա դըռալ, որ մանցալ ա տեղարը, ալ եկա չի:

Սահակ ասալ ա.- Այ ծեր հոր տոնը շեն, Դովի ջիրու գյուլ չի ինգյալ, որ խեղդվի, մըռնի: Ինգյալ ա գյուլը[17], ալ մըտքը փոխալ ա, եկա չի: Իրան թերատ բեն լալ: Իս ալ բենե պըրծած ըմ լալ, թողալ ըմ, եկալ: Մի քանե օրեն ետն ալ Դովի կգյո,- ծծղիլավ ասալ ա Սահակ:

12 (213). ՂՈՐԹ Ա, ՄԱՐԹ ԸՍ ԴԸՌԱԾ, ԷՇՈՒ ԽԱՍՅԱԹԸ ԹՈՂԱԾ ՉԸՍ

Ղըրդըղեցե մի մարթ գինիս ա Թարվիզ, մի էշ ա ունիս, մեյդանչոմը մի պատու երե, քյունջումը կըպիս, ինքյը նի մըտիս մի դյուքան, պատառ չայ, ղանդ օնի, հըղե ինգի:

Գիրագի օր ա ինիս: Մեյդանչոմը շատ մախլուղ ա ինիս: Էրկու ջահիլ ուզիս ըն ղըրդըղեցուն գյլխեն մի օյին սարքըն, հըվաքված մախլուղը պատառ ծըծաղըն: Մի տըղա էշը ետ ա ըրիս, տընիս պատեն ետքեն մի խալվաթ տեղ պհիլիս: Մի տղա լալ, էշեն լուկտան նի ա գիծիս գյուլոխը, էշեն տեղը վըտ կընալիս:

Ղըրդըղեցեն դուքյանեն նանե դուս ա գյուլիս, յիշիս տըսնալիս՝ էշը կավըչնի: Էշեն տեղը, լուկտան գյուլոխը գիծած մի տղա յա վըտը: Մուտունալիս ա՝ էշեն տեղը վըտը տղեն նանե հըրցըրիլիս.- Պա իմ էշը հոր ա՞:

[17] Ինգյալ ա գյուլը - մտադրվեց գալ (ծան. բանահավաքի):

Տղան ըսիս ա.- Քու էշը իս ըմ, ըստուր նանե օխտը տարե առաչիս մի չար տղայմ լալ, իմ հորըս լըսիլ չըմ լալ, քեփըս հինչ ուզիս, ինդիյմ լալ ըրիս: Այտըս իմ հար ինձ անիծալ ա: Աստուծ ալ իմ հոր անեծքը լսալ ա, ինձ էշ ա արալ: Մեգ վահդաս թմամած ա: Այտըս Աստուծ ալլա մարթ ա արած:

Հավատը մոտե ղըրդըղեցեն հվատըմ ա: Շատ ա լսած ինիս, որ պդահմ ա, Աստուծ մարթու գյուլ ա ըրիս օխտը տարավ, վահդան թըմըմիս ա, գյուլեն մորթեն հնիս ա, ալլա մարթ դըռնալիս: Հի՞նչ կա որ, հալբաթ էս տըղեն ալ էշ լալ արած, մըհեգ ալ վախտը թմամած ա, մարթ ա դըռած: Ղըրդըղեցեն մուտունալիս ա լուկտան ետ արի, տըղեն տանի:

- Էտ հինչ ը՞ս ուզիս արըս,- հըրցըրիս ա տըղան:

- Տանըմ քի տամ հորըտ, փողըս իք օնըմ,- ըսիս ա ղըրդըղեցեն:

Էտ խոսքեն երե տղան վըննուք մի քացե թըխիս ա ղըրդըղեցուն քմակեն:

Ղըրդըղեցեն պատառ հըռընալիս ա, ըսիս.- Տընաշեն, ղորթ ա, մարթըս դըռած, համա մըղափուն, որ էշու խասյաթտ թողած չըս:

Մեյդանըմը հվաքված մախլուղը ղալիհ ծըծըղոտըմ ըն, ուլխանըմ: Այտըս, էշը բիրիս, տալիս իրան:

Ղըրդըղեցեն Թարվիզու նհետ, դեչանը իրաց շենը, խյալ-խյալ ա ըրիս, որ էտ օյնեն մանիհ գիդա հինչո՞մ լալ, կըրիս չի ճարիլ:

13 (214). ԴԵՐԸ ՍՈՒՓՐԱ ՅԱ ԲԵՑԻԼ ՏԸՎԱԼ

Նաղլ ըն ըրիս, որ Խինգիհինե դերը[18] շատ համեստ, ժողովուրթական հոքևորական դեր ա իլած: Միշտ քյասիբ շինացուն դըրութունը մտած ա, իրան օքուտեն հետե մըտածըմ չի լալ: Տեր Եզնիկ լըսիս ա, որ շինացե Սավադե տըղա խոխա յա ծընված: Դե, հայու օրենք լալ, խոխան, որ դըռնալիս լալ օխտը ուրական, պարտադիր պետք ա կընքիլն լալ՝ մեռունիլ, հայացրիլ: Համա դերեն հաշիվավը Սավադի խուխեն քառասունքն ալ անց կացած, կընքած չի լալ:

Մի գիրագի օր՝ տեր Եզնիկ եր ա կընալիս, տիրացու Հարութե նընհետ, խաչը, ավետարանը, բուրվառը, պատառ ալ խոնգ, մեռունեն ամանը եր ունիս, գինիս Սավադե տոնը, տըսնի մանիհ հինչ ա՞, որ ինքը Սավադ՝ հայ

[18] Տեր Եզնիկը քահանա է եղել 1914-46թթ. (ծան. բանահավաքի):

քրիստոնյա, աստվածապաշտ մարթ, համա իրան խոխան վախտեն կընքիլ չի տալիս:

Դու մի ասի, Սավադ ոչ թա քյասիբ ա, տընըշենեն տըղան քյասիբից քյասիբ ա: Սավադ դերեն իրան տոնը գյոլեն, մանին գիդալավ, ըսիս ա.- Ա դեր, իս մեղավոր չըմ: Քյասիբբունեն վեզը Աստուծ կոտըրի: Քու ըռշկին, օրենքեն ըռշկին ինծ սըվիրըս թողնուղը քյասիբեթունն ա: Չեռքըս փող չի եկալ, որ կընքադըրամը՝ էրկու ղըռան տամ, խաջիլ չըմընամ: Ըտուր հետե յալ խոխան կըրեցա չըմ կընքիլ տալ:

- Իտի բենը ասի չըն, ամոթ ա, իս քիյանե կընքադըրամ ուզիս չըմ: Կընգանըտ՝ Վըսկու, ասի ղըզղանը ջուր ածի, տըքըցըրի, խոխան լըղցըրիլու, մեռոնաջիրիլու հետե: Դու ալ ղըրզախ գինի քավորիտ բեր:

Սավադ գենցալ ա իրան քավորեն՝ Վըրթանե, բերալ: Դերը Սավադե խոխան կընքալ ա, մեռոնալ, հայացըրալ: Քըրիստոնեկան կարքը կադարիլ են, վերկացըրիլ են ետը, դերը ձեռքեն խաչը, ավետարանը փիլումնեն մաչեն փըքատալ ա տըվալ տիրացուվեն, մեռոնեն ամանը դիրալ ծոցումը, օջաղեն կողքեն ծըլպատակ նըստալ: Դերեն կողքեն ծըլըպատակ նըստալ ըն տիրացու Հարութ նա քավոր Վարթանը: Էտ մի նշան լալ, որ տընատարը պետք ա իրան տանը իլած-չիլածեց, իրան օժը գյորա, սուփրա բենի՝ դերեն, քովորեն պադև տա:

Սավադ նա կընեգը մանցալ ըն միրը միներն իրեսեն յիշիս: Դերը գյուղխու վա ինգյալ՝ քյասիբութունու նշան ա, ասալ ա.- Ախչի, Վըսկե, գինի սուփրան բեր փըռի, աղամանն ալ բեր դիրի երե:

Վըսկե դերեն խոսքը կադարալ ա:

- Հաց օնե՞ք, էրկու հաց ալ բեր:

- Աստուծեն տոնը շեն մընա, որ քյասիբ ըմ, հո օրվա հացեն ալ կարոտ չը՞նք Հալա քի հաց օննք,- ծծղիլավ ասալ ա Սավադ:

Վըսկե մի քանե լավաշ հաց բերալ ա, դիրալ սուփրոմը:

- Ջուր, ջամ օնե՞ք, մի ջամ ալ ջուր լըցըրի բեր:

Չըխոսկան Վըսկե, քըմըծըծաղ տալավ, ջուրը բերալ ա:

- Էս ամըռնը ձեր բըղըչոտեն կողքավը գինիս տեղը տըսալ ըմ, որ սորին սողան լալ: Թա սողան կա, էրկու գյուղխ սողան ալ բեր:

Վըսկե, ալլա քըմըծըծաղ տալավ սողան ա բերալ:

Էս դոնում ալ դերըն ա ծըծըղեցալ, ասալ.- Դե սուփրան ալ իստի կինի:

Այտըս, փափաղը գյլխեն նանե եր ա կալալ, դիրալ ծունգյանը երե, սուփրան խաչակընքալ, օրհնալ, ջուբեն դենակը դուս կալալ, մի սողան կըտըրալ, դիրալ մի թիքա հացըմ, աղավ արալ, կերալ:

Տիրացու Հարութ նա քավոր Վարթան հետևալ ըն դերեն, իրաք ալ հացըն կերալ:

Դերն ալլա սուփրան խաչակընքալ ա, օրհնալ, տիրացու Հարութե նա քավոր Վարթանե նըհետ սոհբաթ ըրիլավ՝ գենցալ:

14 (215). ՊԱՀԱԾՄ՝ ԳԵՆԱՄ ՄՐԹԱՄԱՉ

Խինգիհիհնեցե Թուրուսաց Հարութե տղան՝ Վարթազար, Թավրիզ լալ ըպրիլիս: Մի ամռնը եկալ ա շենը՝ ամառանոց: Քաղաքը գինիս տեղը իրան մորը՝ եղսա նանուն, տարալ ա ղոնաղ:

Վարթազար Թավրիզում մորը հետե թազա չմոշկ, օժմա յա կալալ, գեց տվալ: Մի օր Վարթազար բինիտեղեն նհետ եկալ ա տըսալ, որ մարը գեցեն թազա շորրը հանած ա, շենեն քյոհնա շորրը գեցած, դըրբզին ըռշկին, քյուչեն քարեն երե նստած՝ գեցուղ, գենցուղ մարթունցը թիմիշա յա ըրիլիս:

Վարթազար զարմացած մուտացալ ա մորն, ասալ.- Այ մար, քու թազա շորրը հո՞ր ա, որ շենեն բերած քյոհնա շորրտս գեցած, եկած քյուչոմը նստած:

Մարը ծծղեցալ ա, ասալ.- Օղուլ, թազա շորրս դիրածմ բուխչամաչ, որ տանըմ շենմը մրթամաչ գենմ: Տեղս ինծ հո՞ւվ ա ճնչիլիս, որ թազա շորրս գենմ, մաշացրմ:

Վարթազար ասալ ա.- Այ մար, ղորթ ա, տեղս դու ոչ միհնեն ճնանչմ չըս, համա էս քուչավը ամեն գենցուղ-էկուղ մարթիքն ալ ինծ ճնանչմն, համալ գիդալիսն, որ դու իմ մարնս: Իդի քյոհնա շորերավ քեզ տըսնիլի, ինծ հետե շատ ամոթ ա: Ինդի կգիդան, որ իս քյասիբմ, կրիս չըմ քեզ հետե թազա շոր օնըմ: Թազա շորրտ գեց, որ կքյուհնանա, շենը գինիս տեղը ալլա թազան կօնում, կտանս մրթամաչ գենս:

15 (216). ՏԱՍԸ ՕՐՈՒՄԸ՝ ՈՒՏԱ

Ղրդղեցե Սիմոն իրան տղեն՝ Արսենե տարալ ա Թարվիզ, տվալ չմոշկ կարուղ Խոսրովե, որ չմոշկ կարիլու սանադը Արսենե սվըրցնի: Հալա տասն օրը չթամամած՝ Սիմոնե կնեգյը՝ Շուշի գիզան, լեց ա ինալ, Սիմոնե ասալ.- Գինի, գինի Թարվիզ, տըս խուխես օրը վեր ա գյուլիս, կըրի՞ս ա հաշտվի շիհարեն դիրվածքեն նհետ, թող մնա, թա յուլա չի գինիս՝ երկալ բեր:

Սիմոն գենցալ ա Թարվիզ՝ կընգանը խոսկավը: Գենցալ Արսենե կոշտը, պատառ դեսեն-դենեն նանե սոհբաթ արալ, այտս գենցալ ուստա Խոսրովե ասալ.- Ուստա Խոսրով, չնեղանաս, իմ տղաս սանադքար ա դըռած, եկած ըմ տանմ Ղրդաղը:

Ուստա Խոսրով լսալ ա, մանցալ զարմացած: Ասալ ա.- Պարոն Սիմոն, առնվազը երկու տարի է հարկավոր Արսենին՝ կոշկակարի արհեստին տիրապետալու: Դեռ տասն օր չկա, որ իմ մոտս է: Ինչպե՞ս կարող է, որ նա վարպետ դառած լինի, կարողանա կոշիկ կարել:

Սիմոն ասալ ա.- Հավատացի, ուստա Խոսրով, էն Աստուծը վկա, ըրկոնե Արսեն ինձ նաղլ ա արալ, թա չմոշկը հինչո՞ւրն կրիլիս, ասալ ա. «Մուշտարուն վընանը դիրիսն կաշվեն երե, մատիտով չորք թարափը գիծ քաշմ, դնակավ կտրիս, այտս իրիսացուն դիրիս երե, կրիլիս, գերմակ մեխերավ պնդցրիս, շոռ տալիս ղալիբեն երե, ձևավորում, դուզցըրում: Չմոշկը հազր ա ինիս, ղալիբից դուսն ունիս, տալիս մուշտարուն, փողն իք ունիս, դիրիս ջուբոմը»: Մեեգ ուստեն ասմ, որ Արսեն ըսիս ա. «Ինձ շագիրտ մնալու կարիք չկա: Կօզը՞ս՝ տեղս դուքյան բեց, մանակ, ինքս ինձ չմոշկ կարմ, ծախմ, կօ՞զս տար Ղրդաղը, մըր շենմը աշխադմ»: Դե նաղանաս վեչ, ուստա Խոսրով, տեղըս դուքյան բեցիլ կարի չըմ: Ինձ հետե շատ դժվար կինի, թանգ կնստի: Իս շենը տանիլնմ մասլահատ գիդալիս: Կօզըմ, որ դու ալ՝ տղես ուստտան, քու մասլահատն արս, ասս տըսնամ իս դուզ ը՞մ որոշում, թա՞ չէ:

Ուստա Խոսրով շատ լալ կզնված Արսենե ուստա դռնելուն երե: Համարյա շինացե Սիմոնե վերչին խոսքը լսա չի: Խիյալ-խյալ ա արալ, մի բիրդամ բեցուր սասավ ասալ.- Շան որդուն նայըք, տասն օրում ինքը վարպետ է դարձել բավական չի, հորն էլ է վարպետ դարձրել:

16 (217). ՓՈՂԵՆ ԱԽՐԸ

Ղրդղեցե Նաբի տարեն տասներկու ամեսը նախրչի լալ հնիլիս: Իրան ինդի խըղճ լալ պիհս, որ տըսնուղն ասիլ լալ. ըշխարքեն ամենաքյասիբ մարթն ա: Գեցեն շորրը, տրխնեն, մորթե փափաղը միշտ ճըղոտած, կրկտոտած լալ ինիս: Ըսիսն լալ, որ տնըքանդեն տղան ինդի քյասիբ, ամեն հինչից զուրկ լալ պիհս կնգան նա մի թաք մադար տղեն՝ Նաբու: Դու էտ մա ասիլ, որ շենմը հրվներեն մաչեն թաքուն խոսք լալ գինիս, որ Նաբի ոչ թա ըշխարքեն ամենաքյասիբ մարթն ա, ամենահարուստ մար-

թունցն նանե ա: Էնքան վըսկե, ըրծաթե, թողթ փող օնի, որ ինքն ալ հաշիվը գիդալիս չի լալ: Խոսք չկար, որ Նաբու փող պետք ա շատ լալ ինի:

Շեննեն տավարը որ պիիս լալ, ամեն ըրակու, ամեն մի տան նանե մի հաց լալ իք ունիս: Հացն ուտիսն լալ, հախն ալ՝ պիիլիս: Տավարեն հախն ալ հվաքմ լալ, պիիլիս, կողմնակի ծախսր ըրիս չի լալ: Իրան կնգանը, տղեն գինալիս շորրը, տրխնեն ա շինացուց քյոհնեննեն լալ հվքիս, բիրիս: Դե պարզ ա, որ նման մարթը օգի, չօգի փող պետք ա որ ինի առանց մի խոսքի: Անտեր մնա փողը: Փողը քաղցր բեն ա: Ապրողեն ալ ա փող պետք, մռնողուն՝ ալ:

Մըծ աշխարքմս շատ ա պադահմ, որ հվաքած փողը հվքողն արժան չի դըռնալիս, ինդի ա կուրչիս, գինիս, որ ինքն ալ չի գիդալիս, քա հինչ ա դըռալ:

Լա կըտըսննք, որ նման օյինն ալ գյոլիս ա Նաբու գյուլոխը:

Նաղլն ըրիս, որ նախրչի Նաբու տղեն անմը Հաբի լալ: Հաբի շատ ուսումնասեր լալ, ուզիս լալ գինի վարժատոն, գիր, ղալամ սվըրի, գիրըճանեչ մարթ դըռնի: Հարը թուղիս չի լալ, ըսիս լալ.- Աշխարքմս նախրչութունից սորին, օքտակար օրեշ բեն կավչնի: Նախրը պահմս, ըրակունը թխած հացը հվաքմ, տանմ ուտիս, հախն ալ հվաքմ, պահմ երե օրվա հետե, ալ ուսումս հինչո՞ւ ա պետքի: Իս նախրչիյմ, դու ալ իմ տղաս, պետք ա դու ալ նախրչի դըռնաս,- ըսիս լալ նախրչի Նաբի, տղեն ամեն օր զոռալ տնիս հանդը՝ էլեն նախիրը պիիլու:

Հաբի հորը լսիս չի լալ: Շատ վախտ հանդեն նհետ փխչիս լալ, գյոլիս գինիս վարժատոն:

Շեննեն վարժապետն Նաբու ըսիս լալ.- Նաբի, իս քիյանե փող չըմ ուզիս: Քու խոխեն ծրի դաս կտամ: Հազարից մի խոխա յա ինիս, որ ուսումն սիրիս... էտ հազարից մինն ալ քու տղան ա: Մեխկ ա, խուխեն հղեն փակլ մա, քար մա գիծի, թող գյո վարժատոն:

Վարժապետեն խրատնեն Նաբի լսիս չի: Լա իրան գիդացածն ա ըսիս.- Չէ՛, իմ տղես ուսում պետք չի: Իս նախրչիյմ, իմ տղաս ալ պետք ա նախրչի դըռնի:

Դե Հաբի ալ հորը ենթարկվըմ չի լալ, փխչիս լալ, գինիս վարժատոն: Նաբի յալ տըսնալիս ա տղան իրան ենթարկվըմ չի, հունչուր հանդեն նանե փախչուղ շանը թուլեն վեզը քուղավ կպիսն, տնիս հանդը, ինդի ալ տղեն վեզը քուղավ կպիս լալ, տնիս հանդը՝ նախիրը պիիլու:

Մի օր ալ Հաբի հաջողցրիս ա, որ հանդեն նանե փախչի, գինի վարժատոն: Հարը տըսնալիս ա, հետեն ա ըրիս, որ փռնի, թողի վեչ գինի, կըրիս

չի փըռնի: Կզնվիս ա, մի քար եր ունիս հետնաց ետի ըրիս Հաբու՝ քարը նի ա գյոլիս, Հաբու վընոը կուտորիս: Շեներն սնդչին Հաբու վեոը կպիս ա, ըռնիլիս ա, համա կղալիս ա, դըռնալիս ա չոլախ: էտ օրվանից Հաբու անմը մնալիս ա Չոլախ Հաբի:

Աշխարքեն օրենքն ա: Գյոլիս ա վախտը, նախրչի Նաբի մռնիս ա: Տնըքանդեն տղան մըռնիլիս վախտը կնգանը, տղեն փողեն տեղն ըսիս չի: Խըղըճնեն հինչքան քունջ, պուճախ կա, քարուքանդն ըրիս, պահած փողը կրիս չըն ճարի: Մնալիս ա կորած:

Նախրչի Չոլախ Հաբու ալ մի տղա յա ծնվիս, անմը դիրիս ա Կաբի: Կաբի որ դըռնալիս ա տասը տըրեկան, հարը՝ Հաբի, ըսիս ա.- Տղաս, ինձ մըծ նպատակ լալ, որ գինմ վարժատոն գիր, ղալամ սվըրմ, մարթ դըռնամ: Իմ հարըս առաչս փակալ ա, թուղեցա չի: Միեգ իս ուզիսմ դու գինս վարժատոն, գիր, ղալամ սըվըրս, իմ մուրազս կադարս:

Կաբի ալ հակառակն ա դուս գյոլիս, ըսիս ա.- Ա հար, իմ վարժատոն գինիլը պետք չի: Իմ պապս, հարս շեներն նախրչինն իլած ա, իս ալմ ուզիս նախրչի դըռնմ:

Նախրչի Չոլախ Հաբի տղեն ըսիս ա.- Տղաս, իս իմ մեղքը իմ վիզին նաեն գիծալմ: Եհետը փշմանս վեչ, ինձ մեղադիրս, որ. իմ հար ժամանակեն ինձ մի խրատ տվա չի: Դու քու Աստուծը, գինի, խըլքտ հինչ կկտրի, էն ալ արի:

Կաբի ալ ա դռնալիս շեներն նախրչի: Գյոլիս ա ժամանակը, Հաբի ալ ա մռնիլիս: Կաբի խելունք մարթ ա ինիս, անջուկեն հասած ա ինիս, որ. իրան պապը՝ Նաբի, շատ փող ա հվաքած ինիս, մռնիս վախտը ոչ մինեն տեղն ասած չի ինիս, իտի ալ փողը մնալիս ա կորած:

Կաբի ինքն իրան որոշիս ա, որ Նաբի փողը տարած չի ինի ծառու փչակմ, չոլում քրըտակե թըղած: Կա, չկա, էտ փողը պետք ա իրաց տանը, յա տան դովրըբարմը պահած ինի: Տանը օմեն քյունջ, պուճախ, օճոռքը մինի-մինի շոռ ա գյոլիս, ճըրիս չի: Տանը ըռշկին մի խարաբա տոն ա ինիս: Իրաց հետե ցախանոց ըն ինիս արած: Կաբի ըսկսիս ա ցախանոցումը հինչքան փադ, գիրթ-գիբիլ կա, քանդմ ա, դուս տալիս: Վերչը մի քյունջմ տախտակու նաեն սարքած մի թալաքյա ղութի ա ճրիս: Ղութին բինալիս ա, տսնալիս՝ հի՞նչ... թոխտ փողավ նայե լիգյը... համա հինչի՞ ա պետքը: Մոկները նիյն մտած ղութին, օմեն փողրը կուտր-կուտրն արած, բուն շինած: Կաբի տսնալիս ա ղութվեն ըռշկին պատմը ծակ կաննի: Ծակուռեն ըռշկին մի քաեե արծաթե փող կա վեր ինգյած:Կաբի լսած ա ինիս, որ. մոկնրը վըսկե, արծաթ փողերեն նետ հավես օննն, հվքիսն, տնիս

իրաց բունմը, թուփ ըրիս, խաղ ըրիս: Կաբի ըսկսիս ա պատը քանդիլը... Անօգուտ, բունեն հետքը կուրցրիս ա, բեն չի ճարմ: Տեղտ Կաբի հիշմ ա հորը խրատը, որ. «Մարթեն ուսում ա պետք, որ կարողանա խըլքավ ապրի, մնա վեչ Աստուծեն ումուդեն»: Ինքն իրան ըսիս ա. «Որ Նաբի պապես ուսում լալ ինի, կապեգ-կապեգ, շահի-շահի հվաքած փողը բերի չի լալ ցախանոցումը պահիլ՝ մուկներեն փայ անիլ: Մի նպատակի հետե օգտագործիլ լալ, տղան, թոռնը նի չըն լալ ինգի չուլրտնեն, նախրչի դըռնիլ»:

17 (218). ՏԱՔ ՋՈՒՐ ԳԵՆՑՈՒՂԸ

Ղրդղեցե Թառլան զիզան ալուզ լալ: Հընգեր, հրըվանու, որ ջհիիս լալ, ըսիս լալ.- Աս տարե պետք ա տղես փսակմ, հառհնս բերմ, տանս, դրքես տրեթուն արի, իս ալ աշունքը, Մորալուզեն տաք ջուրը գինցուղնուն նետ գինմ տաք ջուր, պիժշկվմ:

Աստուծ ամեն մի մարթու մուրազ կադարի, հաջողութուն տա պարի մարթկանց... Հաջողութունավ Թառլան զիզան տըղեն փսակալ ա, հառհնը բերալ տոն:

Աշունք ա եկալ: Շինացեք քյարվանն կապալ, որ գինն տաք ջուր: Թառլան զիզուն նանե հրցրալե.- Պա դու հզըրվածս, որ գինս տաք ջուր:

Թառլան զիզան օնքրը ետի ա տված, պադասխանալ.- Տաք ջուրն ալ եկած ա մըր տոն: Գինիսմ հի՞նչ արմ:

18 (219). ՄԱԿՈՒ ՆԱ ՋԱՌՈՒ ՆԱՊԼԸ

Դե մինն ալ նաղլը արըմ: Ղուլդեցե Մակի, Աստուծ ընդուր խասիյաթն ալ թակի, շաբաթ-գիրագի, քիշեր-ցիրկ, տարեն տասնը էրկու ամես բեն լալ ըրիս, դինջեթունը կտրած: Համա ոչ մի տարե հաջուղեթուն կրեցա չի ճարի: Միշտ ալ շենեն ամենաքյասիբն լալ:

Մակու հինչ մեղադրիս, որ իրան Աստուծը ըստեղծած լալ, մռացած, ո՛չ խըլք լալ տված, ո՛չ հաջողութուն, ո՛չ ալ՝ բախտ:

Մի տարե Մակի թոխրավ մի մըծ արտ ցորեն ա վրիլիս: Հունչո՞ւր ա դըռնալիս, Մակի Աստուծեն մընն ա ինգիլիս: Մակու թոխրավ վարած արտը ինդի ցորեն ա դըռնալիս, որ ամեն մի տըսնուղ մնալիս ա զարմացած:

Ըմռանը մի օր Մակի գինիս ա իրան արտը տըսնալիս, վըտըրը տափեն կըտրիս ա: Տըսնալիս ա՝ հի՞նչ, ցոռնեն քյուլաշը, վըտընա մարթաբոյ: Հասկերեն օմեն մինը գեղա: Ինդի ղալիճ ա, որ արտեն էս ղոլեն քյուլաշը

մի բուռ փռնես, դուռու տաս, սաղլամ արտը կդուղդողա: Ցոռնեն հասկրը հասածն՝ դեղեն ծերան կտրած, որ մի բիրնա փոր քամուց արտը օրոր-շորոր ա գյուլիս՝ «Լալա մեհրի» խաղ ըսիսլիս:

Մակի ուլխնալիս ա, արտեն ղրաղեն չուքիս, եշիս դիբի երգինք, Աստուծեն փառք տալիս, որ վերչապես իրամ մտաբերալ ա, անչափ շատ ցորեն տվալ:

Մակի գինիս ա տոն, կնգանը նաղլը ըրիս, թա Աստուծ հինչքան շատ ցորեն ա տված, որ հնձիլավ պրծնի չի:

Այտս Մակի կնգանը ըսիս ա.- Նաբու աղչիգ, իս մանակ արտը կարի չըմ հնձի: Քյասիբ մարթնք, կարիչնք հնձվոր փռնի: Պետք ա դու ինձ թեգյունք դըռնաս, էրկու հուգյավ արտը հնծնք, վերչացննք, որ Աստծուն ասածն ինի, արտն ալ անփորձանք հընծնք, աշան արնք, ցորենը անվնաս բերնք տոն, մի քանե մարզան ցոռնեն նանե կծախմ, կգինմ Թարվիզ, քի հետե թազա փոխան կօնմ, կբերմ կգենաս:

Մակու ասածեն երե Ջառի ուլխնալիս ա: էքսի քշանաց-քիշերավ Մակի նա Ջառի գինիսն արտը հնձիլու:

Գինիսն հասնմ արտը: Ջառի իրաց արտն ճնանչմ չի լալ, որ տսնալիս ա արտը սորին ցորեն ա փռնած, Ջառի վըր ա կնալիս, զարմացած ըսիլիս.- Ամա՜ն, Մակի, էս արտը հո՞ւրն ա... Տըս հինչ մըմ-մըծ հասկր օնի, հինչքան շատ ա, էս արտը գիլխակեր ա ըրվալիս, վայ թա՝ տըռնը գյուլոխն օտի:

Մակի ծծղիս ա, ըսիս.- Ա յուրդաքռռու այալ, պա իդի բենը կասը՞ն՝ առանց գիդալու՝ արտը մըրն ա:

Մակի, որ իդի ա ըսիս, կնեգյը վխեցած ըսիս ա.- Մեղա քի, Աստուծ, իս ղալաթմ արալ, իս ղալաթմ արալ՝ արտը կուճի ա, հասկրը գերմակն, որ հընծնք, անփորձանք պրծննք, մի վըրծակ կտանըմ մըր բռուշնուն փիրեն երե մատաղ կարմ:

Անփորձանք արտը հնձիսն, խոռհնը կրիս, տնիս կալը, աշան ըրիս, քմիլիս, ցորեն նա դերմանը ջուկցրիս, եկուղ տարվա սրմացուն եր ունիս, մի տարվա զումարն ըղալիսն՝ ալուր ըրիս, տակեն մանցած ցորենն ալ ծխիսն՝ նաղդ փող ըրիս:

Մակի օրր ա հմբրիս, որ շենեն նհետ քյարվան գինի Թարվիզ, ինքն ալ հետնան գինի, Ջառու հետե թազա փոխան օնի, կնգանը տված խոսքը կդարի՝ պարտք վեչ մնա:

Հակառակը, հակառակ ա ինիս... էն օրը, որ շենեն քյարվանը ուզիս ա հղե ինի Թարվիզ, էտ օրը Մակի մռնիս ա: Մակի որ մռնիս ա, խաբերը շե-

նավը մին տարածվիս ա: Սաղ շենեն տըղըմարթինքը, կնանենքյը հվաքվմն, գինիս Մակու տոնը շիվան ըրիլիս:

Տեղեն ադաթը գյորա, Ջառի ալ ըսկսիս ա լեց ինիս, շիվան ըրիս, Մակու նետ անցկցրած օրրը մըննը գիձիս, բեցուր սասավ բայաթի ըսիս:

Ջառու ասած բայաթին Մակու մեյդեն երե.

Վա՜յ, Մակի ջան, Մակի,
էս հինչ զուլում ա եկալ գյուլոխս, Մակի,
Իմ լուզիս լալեգ լալ մնալ, Մակի,
Ասի չըմ լալ արտը գյլխակեր ա, Մակի:
Մակի ջան, Մակի, ջանս քի ղուրբան, Մակի,
Աստուծեն դուրքը բեց լալ, Մակի,
Իմ սասը լսալ ա, Մակի ջան, Մակի,
Այտս քու գյուլոխը կերալ ա, Մակի:
Մակի ջան, Մակի, ջանս քի ղուրբան, Մակի,
Այ խփիլատու շոն Մակի,
Պա կասս գիննականմ Թարվիզ,
Քի հետե թազա փոխան օնմ:
Իս քու կալած փոխանն ուզիս չըմ,
Քու կալած փոխանը գենմ չըմ,
Մի տոն լիգյը եթիմ պահուղ չըմ,
Եր կաց, խուխենցը տար կաց, Մակի:
Ներակ լալ, որ թազա հառհնմ լալ,
Փոխանս լվացալմ, թոռնմը կախ արալ,
Փուխանես դիյերը էրվալ ա, մանցալ փոխկրը:
Որ դոստ-դուշման գիդա վեչ, Մակի ջան, Մակի,
Ջառի առանց փոխան ա, Մակի ջան, Մակի,
Փոխկրս երմ կալալ, կապալ վըտերես, Մակի:
Դեչանը ահվալնք արալ, Մակի ջան, Մակի,
Իմ մար թազա փոխան ա ղորկալ,
Գեցալմ, պարզիրս դըռալ, ջանետ ղուրբան, Մակի:
Ներակ լալ հռնե, իմ քաղցր Մակի,
Գենցալս արտեն մոշը կրակ տաս,
Տըսալս ղավլխտ մռացածս,
Եկալս շենեն ըռշկին նետ հայ արալ,

Իմ ազիզ Մակի, ջանս քի ղուրբան, Մակի:
Ադա Հաբի հե՜յ, այ Հաբի,
Չխմխքարեն ղավլխը մռացածմ,
Մանցած ա քու մոր երկեն ծկողում:
Ղավլխս մանցած ա քու մոր երկեն ծկողումը,
Երկալ, բեր արտեն մոշը կրակ տամ:
Իմ ազիզ Մակի, իմ ջիգյար Մակի,
Այտս շինացեք սաստ լսալն,
Ասած խոսքետ երե ծծղոտալն:
Մասալայն շինալ, միալավը միճ սաս գիծալ:
Ալ հի՞նչ ասմ, Մակի,
Աստուծ քու խասիյաթը թակի,
Էս վախտ տղամարթը մըռնի չի, Մակի,
Մի տոն լիգյը խոխենքյը թողնի եթիմ, Մակի:
Իմ մար մի ջոխտ գյուլբաք ա բերած,
Կտանս տեղը կգենաս, իմ ազիզ Մակի:
Քի տաք կպահս, ուլուզանաս վեչ, Մակի,
Իս առանց քի մնա չըմ, իմ ազիզ Մակի,
Իմ տոնս, դուրքս Մակի...

Շենեն կնանենքյը տըսալն Ջառի շատ ա լեց, շիվան ըրիլիս, ալ թուղեցա չըն Մակու մեյդեն քուշտեն: Երն կալալ, տարալ տոն՝ նասիյաթ տվալ, որ.- Աշխարքեն օրենքն ա: Միսը՝ շուտ, միսը՝ ետե, օմեն ալ մռնլականն: Մռնողուն հետեն գինիս չըն: Մի տոն լիգյը խուխատարս, դոստ օնս, դուշման օնս... Սուս արի, Մակու ղայիշը կապի մաչկտ, խըլքտ հվաքի գյուլոխտ, եթիմնուտ տրեթուն արի:

Շենեն մարթիքն ալ Մակու մեյդը երն կալալ, տարալ հունգյուստնեն, հանծնալ վըղեն, ղորմի տվալ տանջանքավ, չարչարանքավ ապրած Մակու, որ գինի վըղեն տակեն դինջանա: Աստված ղորմի Մակու:

19 (220). ԲԵՉԱ ԲԱԼԻ

1914 թիվից դեչանը 1919 թիվը Ղրդաղեն թորք խաները, քյուրդ բեգյրը շոնն կտրալ, գյուլ դըռալ, ինգյալ հայերեն ջանեն: Ամեն օր մարթն լալ ըսպնիս, ապրանք գյուղնալիս, հայերեն իլած-չիլածը թըլընիս, տնիլիս, մնալիս անպատիժ:

էն տրենեն պարսից հոքմաքը շատ անզոր լալ՝ երգիրեն նման հըռի քյունջումը շոն կտրած խաներեն վիզները կապի: Անտերութուն լալ, դարաբարլղ լալ, հու հինչ ուզիս լալ, ինդի ալ ըրիս լալ:

Հայըրը տըսալն իրաց տրեթուն արուղ չկա, գենգյատնեն լսող չկա, ըստիպված իրաց տոնը, ռեղը, պապական օջաղնեն, սրփութունները թողալն՝ շինըհավան քոչալ: Միալեն հայերեն կեսը գենցալ ա Բաքու, կեսն ալ՝ Թարվիզ:

Թավրիզում խնգիհեցե Վըսկանանց Վըսկե նա ղուլուդեցե Մեհրուց եղսա մի հայաթմն լալ քիրահավ ըպրիս, միևը միևեն կողքեն զիրզամում:

Մի քշանաց եղսա ուլխնալավ եկալ ա Վըսկու ասալ.- Վըսկե հաքուր, մի թորք ծեգյու մըղր ա բերած, նայե դիրբանդեն գյլխեն վըտը սաս ըրիս. «Բեչա բալի, բեչա բալի»[19]: Եք, գիննք մարթա մի փոնձա օննք, բերնք, տըսնանք մըր Ղրդաղեն մըղրեն համը կտա՞:

Մարթա մի ջամ երն կալալ, գենցալ տըսալ հի՞նչ ծեգյու մըղրը, հինչ բեն, պատառ գերմակ ջըռ թոթ ա ծխիս:

Այտս Վըսկե թորքեն ասալ ա.- Այ դու մըռնըս, իստի թոթը Ղրդաղեն մըր շներն ալ ուտիս չըն լալ: Պա որ էս բեչա բալի ա, մըր Ղրդաղեն քաղցր, սպիտակ բադանի թոթրը հի՞նչն լալ:

20 (221). ՂԱՍԻԴ ՊԸՏՐՈՒՍ

Հոքիս կարի չըմ էրի, դուզը գիդալիս չըմ, թա՝ որ թվից Ղրդաղեն ջահիլնեն հվաքվմ, գինիսն լալ Թիփլիս, Գյանջա, Բաքու, Ղափան աշխադանք ըրիս, ետ դըռնալիս, գյոլիս: Համա հաստադ կարուղմ ասիլ, որ նման գինիլ-գյոլը իլալ ա դեչանը 1920 թիվը:

Աշունքը որ դուսե բենեն պրծնիսն լալ, ծմռան թադարիքը տըսնալիս, ջահիլ, ջուհուլնեն հվաքվմն լալ, գինիս ղարիբեթուն՝ նոր ասածս շահարնեն:

Գյորունքն, որ բինվալիս լալ, հուր որ շենմը բեն լալ, ետն լալ դըռնալիս, գյոլիս իրաց տան բենավը կնալիս, խոտ հարալ լալ, հոնձ լալ, կալ լալ, ըշունքա վարն ալ ըրիս, ալլա ետ դըռնալիս, գինիլիս:

Էն ջահիլնեն, որ շատ քյասիբն լալ ինիս՝ վար, հոնձ չի լալ, տարիներավ գյոլիս չըն լալ: Էնքան մնալիսն լալ, որ պատառ փողն լալ դուզցըրիս, դե վաթանը քաղցր կինի, ետն լալ դըռնալիս, գյոլիս իրաց շենը,

[19] Ջագի մեղր, ծագի մեղր (թուրք. թարգմ. բանահավաքի):

փսակվմ, տընըվըրվըմ: Պդահմ լալ, որ ղարիբբունում փսակվուղ, մնող ալ լալ ինիս, մըռնուղ ալ լալ ինիս:

Ղարբբունում ջահիլնուն շատրը փահլեթուն ըն լալ ըրիս: Շատրը սըվըրածն լալ պատշարեթուն, ռանգսազեթուն, հաց թխող, նման օրեշ բենըր:

Սրդվեցե մելիք Խաչատորե էրկու տղերքը՝ Համբարծում նա Օհանջան, խուդոժնիկն լալ: Ըշխարքմը հայտնի հարուստ Մանթաշովեն տները Թիփլիսում ռեմոնդ ըրիլուց խանումեն նկարը օթախեն պատեն երե ինդիյն լալ նկարած, որ Մանթաշովը օթախը մտնելուց ինդի լալ գիդացած՝ խանմը ինքն ա նստած: Պարի օր լալ տված: Տըսած լալ խուսիս չի,մանցած լալ զարմացած:

Մանթաշովը մուտացած լալ, տըսած՝ հի՞նչ խանում, հի՞նչ բեն, նկարն ա ղալամով քաշած: Կանչած լալ Համբարծումե, մի քիսա վըսկե տված, ասած. «Իմ ութախմն ալ իստի իմ նկարը կքաշեք»:

Պարզ ա, որ Ղրդաղեն դեչանը ասօր ալ ոչ փոշտ կաննի, նամակ տանի, բերի, ոչ մի վագոնու, ավթոմաշինի հղե, գինիլ-գյոլու հետե, որ ղարիբնեն իրաց շենեն, տանը նանե խաբեր պահն: Ղրդաղը աշխարքեն նանե կտրված, ամենաետ ինգյած միալնուն նանե յա: Էտ բենեն հետե ալ ամեն մի շիհար գենցած ղարիբնեն մի ղասիդն լալ պիհս:

Ղասիդն ինիս լալ ամենաղոչաղ, սըրտապընդ, ղվաթի, ջալտ, հղթկնուն վալադ, անվախ ջահիլը, որ կարի ղարիբ շիհարեն նանե մանակ գինի Ղրդաղը, ամեն հինչ տեղն տեղեն տանի տեղ հասցրի, գյո:

Թիփլիսե ղասիդը շատ տարիներ աշխադալ ա Սրդվեցե Ղարիբանց Պըտրուս, մի շատ սըրտապընդ, անվախ ջահիլ, ղաման միշտ կոխկեն կախ արած, թափանչան ալ ալ թաքուն միշտ ծոցումն լալ ինիս, ծանութ թորքրը ըսիսն լալ՝ դալի Պեդրուս:

Ղարիբեթուն գենցած ջահիլնեն ալ ութըն-տասը հուգի միասին մի օթախն լալ քիրաի ըրիս, իրաց հետե ըպրիլիս: Շառ վախտ ալ՝ ըրակուրը հվքվիսն լալ մի տեղ, իրաց հետե սոհբաթ ըրիս, պնգլ ըսիս, գյլխնավը անցած-գենցած բիներիս խուսից, երկար քիշերնեն մաշացրիս, գինիս քոն ինիս:

Նաղլ ըն ըրիս, որ ղասիդ Պըտրուս մի ըրկոնն Թիփլիս գինիս ա տսնալիս՝ ղարիբականեն հվաքվածն մի տեղ, իրաց հետե սոհբաթ ըրիս: Պըտրուս ըսիս ա.- Տղերք, շինթկնեն գինիլու վախտս ա, հու փող ա ղրկլական, նամակ գիրիլու, բերանացի թափշուրմա օնի, ըրեցեք, որ էքյուց չի ալօր գիննականմ:

Պըտրուսե էս խոսկեն երե ղարիբնեն անցն կնալիս բենե:

Պըտրուս տըսնալիս ա իրաց շինացե Բադուց Հաթամե տղան՝ Արտեմ, տղերը բեցած ա, խուտուրու ինգյած, տեղեն դուռու չի գյոլիս: Պըտրուս ըսիս ա.- Արտեմ, բեն չօնը՞ս ըսիլու:

Արտեմ հանգիստ ըսիս ա.- Չէ՛, փող չօնմ:

Պըտրուս կզնվիս ա, ըսիս.- Ադա, ծնողնետ քի քսան տարե պահծն, որ աս օրվա օրը էրկու մանեք ղորկս՝ ապրն, քյասիբ մարթինքյն: Ինձ նհետ ալ ինդիյս խուսիս, հանցա կասս Մանթաշովեն տղան ինս:

Պետրուս տըսնալիս ա՝ նոթավ լիգյը մի բութուլ կա, ծրեգյը վռիլու հետե: Բութուլը եր ա ունիս, նոթը շաղ տալիս Արտեմե տեղաշորեն երե, քիմիրիրը քշիս, նի կցրիս: Արտեմ զոռավ տղերեն նանե եր ա կնալիս՝ փխչիս:

21 (222). ՍՈՆԱ ԲԻԲՈՒ ԳԵՆԳՅԱՏԸ

Ըմռան մի քշանաց շուդավ Սոնա բիբին գենցալ ա շենեն քյուխվեն գենգյատ արալ, ասալ.- Քյոխվան ապրած կենա, ըրկե իմ հառհնը գենցած լալ բոստանը ջիրիլու: Խրեգ լալ մանցած, որ ջրի, վերչացնի, օրը մթնած լալ: Ալ թողած չի լալ կեսատ... թամահ լալ արած, որ ջրի վերչացնի, միհն ալ ասօր վեչ գինի: Բոստանը որ ջիրիս ա, պրծնըմ, ալ տափը մթնած ա ինիս: Հղոքը գյոլիս տեղը մի մարթ առաչը կտրիս ա, հարսանս խայտառակ ըրիս, պադևե գիծիլիս:

- Հառհնը կրեցած ա՞ ճնանչի, թա իրան պատվազրկողն հո՞ւ վա,- զարմացած հրցրալ ա քյոխվան:

- Հառհնը ըսիս ա. «Մթեն լալ, կրեցաչմ ճնանչիլ: Համա գեցենը սըվ ըռանգի շալվար լալ, քաշածմ շալվարը ճղած, էտա նշանգյահմ»:

Սոնա բիբու ըսածեն երե քյոխվան ծծղեցալ ա, ասալ.- Այ հորտ տոնը շեն, մըր շենմը մարթինք կա՞ն, որ կարմուր, կապուտ ըռանգի շալվարն գինալիս: Օմենն ալ քյասիբ մարթինքյն, ումունուց գեցածնեն սըվ ըռանգի շալվար ա, ումունուցն ալ ճրղոտված, կրկտոտած: Միեգ իս հո՞ւր յախան փռնըմ, ասըմ Սոնա բիբու հարսանը փռնիլը քու արածն ա: Օրենք կա, կնեգյը, հառհնը, աղչիգյը, որ գինիսն բաղ, բոստան՝ մանակ, պարտավորն արվը մար չմտած գյոն տոն, որ նման փորձանք պդահի վեչ:

22 (223). ՄԱՐՋԱՆ ՁԻՁՈՒՆ ԽՐԱՏԸ

Խնգիհեցե Միրզուց Բաղդասարե տղան՝ Առաքել, մի տարե գենցալ ա Ղըրբաղը՝ Շուշի ղալան ղարիբեթուն: Էրկու տարե մնալեն ետը, ետ ա դըռալ, եկալ տոն:

Մարջան զիզան՝ Առաքելե մարը, տղեն նանե հարցըփորց ա արալ, ասալ.- Օղուլ, հինչո՞ւրս գենցալ, հինչո՞ւր տեղարս ինգյալ, հունչո՞ւրս եկալ հասալ տոն, մի բեն նաղլը արի, լսըմ:

Առաքել ասալ ա.- Ա մար, փառք Աստուծեն՝ սաղ-սալամաթ գենցալմ տեղ հասալ, գործրս ալ հաջողվալ ա, սորին բենմ արալ: Համա գյուլիս տեղը ղալին նեղութունմ քաշած... Գյուլիս տեղը մհետ օրը մթնել ա, հավան ալ ցորտ լալ, թոռ լալ գյուլիս: Մոտե տեղը մի հայու շեն լալ, թըքմ տվալ, որ ղոնաղ ինգյմ մի տան, քիշերը մնամ: Կհավատա՞ս, ա մար, որ քառասուն դուրքմ թակալ, ղանչանք արալ, մինը դուրքը բեցա չի՝ ղոնաղ արալ:

Մարջան զիզան տղեն խրատ տալավ, ասալ ա.- Իմ մար քի ղուրբան, պա իտի խամ բեն կարը՞ն, որ դուվս արած, կարուղ ա, որ մի դուրք թակիլս լալ, ասիլ. իս ղրդղեցե Բաղդասարե տղանմ, ընդունի, քի ըշկռնուն երե չը՞ն լալ ընթունի, ղոնաղ արի, հաց, չայ տան:

Բաղդասար, որ նստած լալ օջաղեն կողքեն՝ անջուկ դիրած կնգաննն նա տղեն քաղցր սոհբաթեն, ծծղեցալ ա, կնգանը ասալ.- Այ հորտ տոնը շեն, որ խընգհիհեցեք օմենը ճնչիսն, հարգմն Միրզուց Բաղդասարե, ինդիյս գիդալիս, որ Ղըրբաղն ալ մի թաք շեն ա՞, Բաղդասար ալ մի տասը հետ գենցած ա, եկած, ամենն ալ ճնչիսն... Ղըրբաղը Ղըրդաղեն նանե շատ մըծ մհալ ա, քանե-քանե շհարներ օնի, հարուրավր շինթկնե օնի: Տեղեն մախլուղեն շատրը իսկի մինը մհնեն ճնչիս չըն: Հինչ մնաց ղրդղեցե Միրզուց Բաղդասարե ճնանչըն, տղեն ալ տանն ղոնաղ արն, հաց, չայ տան:

Մարջան զիզուն տված խրատը իրաց տանը մանցա չի: Մասալա յա դըռալ, տարածվալ մհալավը մհն:

23 (224). ՄԵՐ ՇԵՆՄԸ ՄԻ ԲԵՆ ԿԱ

Ղրդաղեն ամենաանպադն, ամենաաննամուս բենն էն լալ ինիս, որ ազափ աղչիգյը առանց նշան դիրիլու հորը տանը խուխավ լալ մնալիս: Նման բենը Աստված մարթու տանեց, դրքեց հըռի պահի:

Հունչուր ա պդհիս, շինացե Հաթամե աղչիգյը՝ Վարսի, խուխավ ա մնալիս:

Չար խաբերը հսնիս ա շենեն աղսախկալնուն անջուկը:

Շենեն աղսախկալնեն թաքուն մասլահաթն ըրիս (խորհուրդ են անում), թա քանե էտ աղչգյանը փռնած խայտառակ բենը, քանե շենավը մին տարածված չի, մի միջոց ճարն՝ Վարսու փռնած աննամուսեթունը պրտակն:

Վարսու հորն ախպերը՝ Աղավել, էն ալ աղսախկալ ա ինիլիս: Շենեն աղսախկալնեն ուզիս չըն լալ Աղավել խաբեր ինի ախպուր ըղչիգյանը փռնած աննամուս բենեն: Ըդուր հետե ալ մասլահաթնեն Աղավելե նանե թաքունն լալ ըրիլիս: Համա դե Աղավել հազրի լալ եկած, որ շենեն աղսախկալնեն հինչ որ մի բեն կա կադարված շենմը, աղսախկալնեն իրան նանե թաքունն պիհս, ուզիս չըն, որ ինքը գիդա:

Աղավել աղսախկալնուն թաքուն խոսակցութունը աշկու տակ ունիլավ՝ մի քանե նհետ ասած լալ.- Տղերք, մըր շենմը մի բեն կա, դուք գիդալիս եք, ինձանե թաքուն եք պիհս: Ըսեցե՛ք, իս ալ գիդամ:

Աղսախկալնեն ուրունալիսն լալ, որ՝ իտի բեն կավչնի, որ ինի, քի կասնք, հինչո՞ւ հետե պետք ա թաքուն պահնք:

Շենեն աղսախկալնեն մի ըրակու, ալլա Աղավելե նանե թաքուն, Հաթամե կընչիսն ժողով, ըսիս.- Հաթամ, դու նամուսավ մարթս: Համա քու ըղչիգյանը փռնած բենամուսութունը ընթունիլու բեն չի: Առաչինը՝ պադիվ չի բիրիս քու օջաղեն, ըրկումինջինը՝ մըր շենեն հետե, իրըքմինջինն ալ՝ միալեն հայերեն հետե: Վարսու փռնած խայտառակչեթունը, քանե որ մինը գիդալիս ա, հենգյը գիդալիս չի, շենավը մին, միալավը մին տարածված չի: Մասլահաթնք գիդալիս, որ շուդ արա, ըղչիգյանտ տանս Թարվիզ, քվորտ տանը փրթակս:

Աղսախկալնուն մասլահաթը օրենք լալ: Համաև քիշերը Հաթամ Վարսու նստցրիս ա ջորուն՝ տնիս Թարվիզ:

Աղավել գիդալիս ա, գինիս ա աղսախկալնուն ըսիս.- Պա որ ըսիսմ լալ. շենմը մի բեն կա...

24 (225). ՆՈՒՇՈՒ ՏԵՂԸ՝ ՇՈՒՇԻ

Խնգիհեցե Մցկանաց Խալու տղեն՝ Հաբանե հրսանեքն լալ: Գենցածն լալ հառհնը բերն Ղշլաղից: էտ հռնքոմը Միրզունց Բաղդասարե տղան՝ Առաքել, մի շատ նախշուտ, ջահիլ ըղչիգյան ա հավան կնալիս՝ Նուշի ընմավ:

Առաքել գյուլիս ա տոն, հորը խաբեր տալիս, տըսած հվանած ըղչիգյաը նանե: Բաղդասար ալ եր ա կնալիս, մի էրկու պարիկամ մարթկանց նհետ գինիս Ղշլաղը: Տսնալիսն, որ Առաքելի հավան կացած աղչիգյը, ղուրթավ, հանցա կասս երգինքից վեր եկած մի հուրի, փարի ինի:

Նուշու նշանն դիրիս Առաքելե հետե, գյուլիս: Մի որոշ վախտ որ անց ա կնալիս, Խինգհհինե ջահիլ-ջիվաննեն զուռնավ-դհոլավ, խաղավ-պարավ, գինիսն Ղշլաղը Առաքելե փսակմ, հառհնը եր ունիս, գյուլիս:

Հրսանեքյը, որ վերչանմ ա, էքսի քշանաց Առաքել գյուլիս ա հորը կոշտը, գյուլոխը կախ գիձիս, հմնչիլավ ըսիլիս.- Ա հար, հառհնը մըր տըսած, հվանած աղչիգյը չի, մի սըվ իրկիշտ կնեգ ա:

Դե Ղրդաղեն քյոհնադան ղայդա լալ: Նորափսակ հարսենը իրիսը կարմուր, կանեչ ըռանգի բիրիշում չալղաթավ ծածկածն լալ ինիս: Հո՞ւր խըլքեն կգյո, որ նամուսը, աբուռ-հայան կուրցրած մարթինք՝ շենբաշեն՝ սուրփ օրենքը խաղտիլավ՝ մարթկանց քյալագի կբերեն:

Տընեցեք երն կնալիս, գինիս, փարդեն ետքեն նստած հարսանը իրիսը ծացկած բուրուշումը եր գիձիս... Տըսնալիսն, որ Առաքել դուզ ա ըսիս... հալա մի բեն ալ իվիլ՝ Աստուծ ալ մի ղոլից ա խըղճեն վեր տըսած՝ ծաղեգյավ որ ուլուզացած ա, իրիսը սաղլամ ծաղեգյը տարած ա՝ չիչուտ ա: Հի՞նչ թազա հառհնը՝ մի քաշկը:

Բաղդասարե պառավ մարը ծույները թակալ ա, լեց ինալ ասալ.- Ամա՜ն, մըր հառհնը, որ շատ նախշուտ, ջահիլ ա իլած, քըշկափոխ ա դըռած: Քաշկրը մըր նախշուտ հառհնը տարածն, իրաց իրկոշտը բերած դիրած մըր փիրդին երկեն: Հարկավոր ա քիշերը տանիլ, դիրիլ թուրքերեն գյուռոտումը նստցրիլ, գյոլ հըռնաց օխտը հետ սաս արիլ. քաշկը-քաշկը, մըր հառհնը բերեք, ձերը տարեք: Քաշկրը կլսն, կբեյրն, կփոխն:

Միրզունց Բաղդասար էնքան ալ հետամնաց մարթ չի լալ, որ մորը ըսածեն հավատա, նման խայտառակ բեն անի: Կանչիլ ա տալիս շենեն դերեն, քյոխվեն, աղսախկալնուն, գյլխեն եկած փորձանքը նաղլը ըրիլիս: Որոշիսն, որ էտ չտըսնված, չլսած բեն ա: Հունչուր մըր պապըրնն ասած. «Մախաքը ինաչի պարկմը պահի: Շուդ, ետե մի տեղավ կծակի, դուս կգյո»:

Միալըմը մըր շենը մըծ անմ օնի: Հինչ տեղ որ լսըն՝ մարթկանց իրեսեն կթքըն: Հարկավոր ա տաննիլ, դիրիլ հոր տանը, հռնքեն ծախսն իք օնիլ, ամոթանք տալ, թքիլ իրիսնուն:

Խնգհհինեցուց աղսախկալնեն, որ քշկափոխ հռհնացուն երն ունիս գինիս Ղշլաղը, բալլու վա դըռնալիս, որ ղշլղեցե Բաբախանաց Բարխու-

դար էրկու ախչիգ օնի, մըծը՝ իրկիշտ Շուշի ա, կուճինը՝ նախշուտ Նուշի: Տեղեն ադաթը գյորա շատ ամոթ ա մըծ աղչիգյը թողն տանը, կուճի ախչիգյը մարթու տյան: Ըդուր հետե ալ նախշուտ Նուշու թողածն լալ, իրկիշտ Շուշու հղե դիրած:

Խինգիհեցուց աղսախկալնեն նա ղշլաղեցուց աղսախկալնեն գյուլոխգյուլխուվն տվալ, ծանդր-թիթվ արալ, որոշալ, որ. սորին բենչն արած, շատ անշնորք բեն ա: Քանե շենմը, միալմը տարածված չի, հռնքանը շորրը իրկիշտ Շուշու գեցեն նանե հանն, գեց տան նախշուտ Նուշու, եր օնն տանն:

Իդի ալ արալն, համա դե շեն տեղ լալ... Ինալ լալ «Մախաթը պարկըմը պահիլ»: էտ բենը անցալ ա բերանից-բերան, տոնից-տոն, շենից-շեն, տարածվալ միալավը մին:

Ղշլղեցուց փռնած անշնորք բենեն երե մասալայն կապալ, տնազ տվալ, ծծղեցալ, միալմը դըռալ խայտառակ:

25 (226). ՔՇԿԱՓՈԽ ԽՈԽԱՆ

Աբունց Հարութե թոռնը՝ Ասլի, էրկու տրեկան խոխա լալ, համա դի ըսկի առաչ չի լալ գինիս: Ո՛չ մի կարքին ուտիս լալ, ո՛չ մի կարքին քոն լալ ինիս, քիշեր-ցիրեկ լեց լալ ինիս, նվնվալիս: Թա ըշտեղն լալ ցվիլիս, գիդվալիս չի լալ: Խուխեն ձեռքեն տնեցեք մանցածն լալ մաթալ:

Շենեն ծանութ տատմար Դաստագյուլ նանան եկալ ա, ալուզ խուխեն եշալ, տըսալ հի՞նչ, խոխան լըղըրած ա, սվացած, իրկիշտ դըռած: Խուխու ռանգ, սիփաթ կավչնի երե: Մարթու խուխու ալ նման չի:

Դաստագյուլ նանան Հարութե կնգանը ասալ ա.- Աղչի Եղսա, այ յուրդաքոռու աղչիգ, կաննի, կավչնի, էս խոխան քշկափոխ ա: Քըշկերեն ապրիլու տեղը թուրքերեն գյուռոտն ա: Հարկավոր ա քշկափոխ խոխան տաննք, փոխնք, բերնք:

Տատմար Դաստագյուլ որ իստի ա ասալ, Եղսա տանը հուրդնիեր եշալ ա դիբի երգինքը, իրըսը խաչակնքալ, մեղա եկալ, Հիսոս-Քրիստոսեն անմը տվալ, ասալ.- Դաստագյուլ բաջի, մեղա Աստուծ, իս նման բեներից վխիսմ:

Եղսու խոսքեն երե Դաստագյուլ ծծղեցալ ա, ասալ.- Աղչի, ամոթ ա, դու խոխա չըս, որ վխիսս... Քանե-քանե նման բեն պդահած ա, տարածնք փոխած, բերած: Բալունց Պըտրուսե թոռնը, Սիմունց Մալագե թոռնը, Մեշունց Սավգյուլե թոռնը, որ մինը ասմ...

Տատմար Դաստագյուլ քաշկերեն նհետ տարած, փոխած խոխենքյը հմբարալ ա: Համա որ պդահած ալ լալ, որ դեչանմ քաշկիրը խոխան բերիլ-փոխիլը գյուլրը եկածն լալ խոխան տարած, էտ մասին լալեգ ա մանցալ, ոչ մի բեն ասա չի:

Եղսա պատառ խիյալ-խիյալ ա արալ, ասալ.- Դաստագյուլ բաջի, ախր Հարուբ իդի բիներու հվատմ չի, որ գիդա, թողի չի խոխան տաննք թորքեն գյուռոտը:

Դաստագյուլ Եղսու ասածեն երե կըզնվալ ա, ասալ.- Կնեգյը օմեն բեն տղամարթեն խաբեր չի տա: Ըրակու, որ Հարուբ հացն կօտի, կգինի հրվանանց տոն՝ սոհբաթ ըրիլու, իս կգյոմ, խոխան եր կօնմ, կտաննք, կփոխնք, կբերնք:

Ըշունքան ըրակու լալ, թողբը կոխած, թոռն ալ թիթվ շղալիս լալ:

Դաստագյուլ եկալ ա, քշկափոխ խոխան խտտալ, Եղսու նհետ գենցալ դիբի մոտե խարաբա թորքեն շենեն գյուռոտը: Գյուռոտեն նանե ղալին հռացալն, վըտ,կացալ:

Դաստագյուլ ըսկսալ ա բեցուր սասավ կանչիլը.- Քաշկր, քաշկր, մըր խոխան բերե՛ք, ձեր խոխան տարե՛ք...

Դաստագյուլե ըսիլավը պետք ա օխտը հետ կրկնիլ լալ, որ նոր քաշկրը բերիլն լալ, խոխան փոխիլ: Համա դի իրըք հետ լալ կանչած, որ գյուռոտմը խուխեն լեց հնիլեն սասը եր ա ինալ:

Եղսա դմացա չի, ասալ ա.- Աստուծետ մըռնմ, Դաստագյուլ բաջի, էն մըր խուխեն լեցեն սասն ա, քաշկրը բերալն, փոխալ: Վազ տոր, խոխան եր օննք, ցորտ ա, կմրսի, կուլուզանա:

Էրկու հուգյավ վազն տալիս, գինիս հսնիս գյուռոտը, տըսնալիս հի՞նչ... Իրաց աշկերեն տսածեն հավատ չըն ըրիս... Էրկու գյուլ՝ խոխան միննը-մինեն ըռխեն նանե իք ունիլավ, ուտիլավ տնիսն:

Եղսա ծույները թկիս ա, գյուռգյուռալիս, հարայ տալիս.- Վա՜յ, դու կրակմ էրվըս Դաստագյուլ, էս հի՞նչ օյնս բերալ գյուլոխս... վայ իմ թոռնը, վայ իմ խոխան, վայ իմ Ասլիհ...

Ալ հի՞նչ հարայ, մթնեն մաչավը գյուլուրը խոխան ուտիլավ գինիսն:

Դե մհեգ ցավ էն չի: Դաստագյուլ վըտա կացալ Եղսու նհետ բհաս մտալ, թա.- Դու դմացաչս, որ իս օխտը նհետ քաշկերեն կանչմ, նոր գիննք խոխան բերնք, թայդիյս ինգյալ, շուտնք գենցալ: Քաշկրն ալ մըզ տըսալն, փախալ, խոխան գյուլուրնն տարալ: Քաշկրը միշտ մարթկանց աշկերեն ըրվալիսն գյուլու նման:

26 (227). ԵՂՍԱՊԵՏ ԱԼ ՂԱՐԱՎԱՇ ՈՒԶԵՑԱ ՉԻ

1919 թ. աշունքը, որ ղրդղեցեք շինըհավան քոչալն, գենցալ Թարվիզ, տեղը մի քանե տարե մանցալն:

Մի օր Դադունց Ալիքսան գյուլիս ա տոն, տսնալիս, որ կնեգյը՝ Եղսապետ, օնքրը երի ա տված, պռուշնեն կախ տված, նստած ա: Հրցրիս ա զարմացած.- Եղսապետ, էտ հինչ ա՞ պդահած:

Եղսապետ ըսիս ա.- Հի՞նչ պետք ա պդահի, քաղաքմն ապրուղ մըր ծանոթնեն օմեննն ալ իրաց տներմը ղարավաշ օնն: Հուր տոն գինիսնք, կնանեննքը խանմ, խաթուն նստիսն, կարքադրութուն ըրիս ղարավաշեն, ղարավաշնեն սեղաննն բինալիս, չայն դիրիս, ամաննեներնն լվնալիս, տոննն հվաքմ, սիրբմ, այտս կնանեննքն ալ խանմ-խաթուն դըռած դինջ ապրմն: Համա իս՝ բագյու աղչիգյմ, ղարավաշ չօննք... Համ իմ բենսմ ըրիս, համ ալ՝ ղարավաշեն... Քի իսկի խըղճմտանք օնիչս,- ըսիս ա Եղսապետ, ըսկսիս լեց ինիլը:

Ալիքսան պատառ խյալ ա ըրիս, ըսիս.- Եղսապետ, ղորթս ըսիս, մընք պարոն Մուշեղանց, Արմինականց, Սահականց նետ հավասար մարթինքնք՝ գինիլ-գյոլ օննք: Համա ունեցվածքավ հավասար չընք: Նրանք շատ շուտանցն քաղաքմ ապրմ: Խանութնե օնն, դուքաննե, արհեստանոցնե օնն, եկամուտ օնն, շատ փող օնն, այտս ղարավաշն պահմ: Մընք թալանված, գաղթած մարթինքնք, մըզ հալա օժ չօննք՝ ղարավաշ պահնք: Ղարավաշը գյոլ չի մըր տանը ծրի բեն արի: Ղարավաշը օտիլ ա ուզիս, շոր ա ուզիս, որ գենի, ռոճիկ պետք ա տաս: Մըր օժն ալ էտքանը պատմ չի: Դե որ որպես բագյու աղչիգ՝ ուզիսս քու թայ-թուշնուն նման դու ալ ղարավաշ պահս, ոչ խյալ արի, ոչ ալ լեց ինի... Իս ալ կմտածմ, քի հետե ղարավաշ կճարմ:

Ալիքսաննեն խուսկերեն ետե Եղսապետ ուլխանալիս ա, գինիս իրիսը լվնալիս:

Ալիքսան շատ բազադ մարթ լալ: Մի քանե օր անց օրախ-օրախ գյոլիս ա տոն, Եղսապետե ըսիլիս.- Եղսապետ, աշկտ լուս, քու նիյաթը Աստված տեղ ա հսցրած, հաց բեր օտնք, էրկու հուգյավ գինննք Առաչնորդարանը, ղարավաշը բերնք:

- Ղարավաշը Առաչնորդարանմը հի՞նչ բեն օնի,- զարմացած հրցրալ ա Եղսապետ:

- Հորտ տոնը շեն, պա գիդալիս չը՞ս, որ Արևմտյան Հայաստանմ հայթուրքական կռըվ ա գինիս: Վանի կողմերից մի հարուր հուգի հայ կնանեք

փախածն, եկած լցված Առաչնորդարանը: Առաչնորդն ալ ցուցակ ա արած, եկած կնանուցը բուժոնած իրան ծանութ մարթկանցը երե, որ մարթա մինը տանն, պահն: Ցուցակմը իմ անմն ալն գիրած: Տոն գյուլիս տեղը Առաչնորդարանե քարտուղարը՝ պարոն Արամ, ասալ ա. «Պարոն Ալեքսան, որ տուն ես գնում, քեզ հետ մի կին տար»: Իս ալ ասալմ. «Պարոն Արամ, օզմ, չօզում մի կնեգ պետք ա տանմ: Համա դե սորին կինի գնմ մըր Եղսապետե բերմ, տըսնանք, որ կնգյա բագյան ըրիս, վըրեն նետ յոլա կգինի, խասյաթնեն կփռնի, որ օրական մի կըռըվ սարքն վեչ, ինծ ալ իրաց նետ խայտառակ արն»:

Ալիքսանե էս խոսքերեն երե Եղսապետ խյալ-խյալ ա արալ, ասալ.- Ալիքսան, դու գիդալիս ը՞ս, որ իս իմ մըտքը փոխածմ: Ալ ուզիս չըմ ղարավաշ պահնի: Ախր ղարավաշը մըր հինչեն ա՞ պետքի, արտ, կալ չօննք, բաղ, բոստան չօննք, տավար, ապրանք չօննք: Մի տանը բեննն ա, էն ալ կամանց-կամանց իս կարմ: Ալիքսան,- ըսիլիս ա Եղսապետ,- իս որ ղարավաշ պահելուցմ հրաժարվմ, եք դու ալ Առաչնորդեն տված կնգանն նանե հրաժարվի: Էրկու կնեգ մի տան յոլա չըննք գինի, օրական խոսք, զրուց կինի, կըռըվ, կուտրատուց կդըռնա, քի ալ մըզ նետ խայտառակ կարնք:

Ալիքսան խոսքը պնդցրիս ա, ըսիս.- Ա կնեգ, պըլ ը՞ս, գիժ ը՞ս, իս հինչո՞ւր Առաչնորդեն խոսքը տափը գիծմ, չէ՞ որ աչքիցը կինգնմ, ալ ինծ աշխադանք չի տա, կմնամ պարապ:

Ալիքսանե էս խոսքեն երե Եղսապետ վխիս ա, ըսկսիս ա լեց հինիլը: Ալիքսան տսնալիս ա Եղսապետ խըղճացած ա, հրաժարվմ ա ղարավաշ պահելուց. լեց ա հնիս:

- Եղսապետ, օրեշ ճար կավչնի: Առաչնորդեն քուշտեն կնգա խոսքն անց ա կնալիս: Դու գիրիլ գիդալիսս: Եք իս ասմ, դու մի քանե տող քու ձեռքավը գիրի Առաչնորդեն, որ մընք գաղթած մարթնք, զոռավնք ապրմ, իմ մարթես օժ չօնի ոչ էրկու կնեգ պիիլու, ոչ ալ՝ ղարավաշ: Խնթրիսմ իմ մարթես անմը ցուցակեց հանեք:

Եղսապետ ուլխանմ ա, ղալամը եր ա ունիս, Ալիքսան հինչ ըսիս ա, գիրիս ա:

Եղսապետե ղարավաշ պահիլեն նանե հրաժարվելուն թոխտը Ալիքսան դիրիս ա ջուբոմը, ալխային գինիս իրան բեննեն:

Էն օրվանից ալ Եղսապետ ղարավաշ պահելու անմը տալիս չի: Ալիքսան ալ էտ փանդավը ազադվմ ա ղարավաշ ճարելուց:

27 (228). ՀԱՋԻ ԽԱՆ ՄԱՆՑԱԼ Ա ՄԱԹԱԼ

Խինգիհեցե Աղաջանանց Ուսուփե տղան՝ Հարութուն, մի չտըսնված մարթասեր, ղըվաթի, անվախ ջահիլ լալ, ընտուր կոռնը շենմը հուլորուղ իլա չի:

Խանից, բագից, զորբա մարթունցն նանե ոչ մի վախ իլա չի: Միակը դիրիլ լալ, նման մարթկանց հղեն փակիլ, իրան տղամարթ խոսքն ասիլ, նոր հղեն բենիլ: Միշտ քյասիբ, խըղճ մարթկանց թարափն լալ պահիլ, թեգյունք դըռնիլ:

1914-ից դեչանը 1920 թիվը շատ օքտակար բենր ա արած դովրիբարեն հայերեն հետե: Գյրող ինի, կինա էրկու գիրք գիրիլ:

Հարութին ասիլ լալ՝ տեղ կա, որ մահակը բազի թիվանգյու նանե ումուդավ ա: Հարութունե կուռանը ղվաթեն հետե նաղլն լալ ըրիս, որ միետ ջահել-ջուհլնեն գենցածն լալ առչավըրս: Յարալու արչը հուջում լալ արած Հարութունե երե: Հարութուն ձեռքեն ճապկե մհակավը ինդի լալ չափ կալած արչեն ճկտմաչավը, որ արչեն ջոխտ աշկիրը դուսն լալ եկած, քքըծկերավն ալ արունը վեր լալ դըռած: Արչը վեր լալ ինգյած, ըստակած:

Դե ինձ շատ կներեք, խոսքս ըդուր հետե չի լալ, որ պատառ երկարացրալմ: Ուզիսմ նաղլ արմ մի մազալու բենու հետե: Ինդի բեն, որ քանե հետ մընտ ինգի, ծծաղս:

Մի տարե Հարութուն շենեն տվարած ա ինիս: էտ տարեն ալ պարուն Երվանդ իրան քյուլփաթավը եկած ա ինիս շենը ամառանոց: Պարոն Երվանդե տղան՝ Արսեն, 14-15 տրեկան լալ: Ամեն ըրակու գինիս լալ շենետակեն բաղերեն քուշտեն տվարեն առաչը կտրիս, քարավ տալիս, ղոլղոլ ըրիս՝ իրան հետե ուլխունալիս:

Տվրածրն մի քանե նհետ Արսենե ըսիսն, որ նման խասյաթեն թարգյը տա: Մի օր ալ ղոլղոլ կդըռնն, մինը վեր կինգի, վընն կկոտրվի, խաթու մաչ կինգյն, էտ լակուտը լսիս չի: Գինիսն հորն ալ խաբեր տալիս տղեն արարմունքեն հետե: Ալլա դռնալիս չի:

Մի օր Հարութուն գյոլիս ա շուդավ բաղերեն ղաթմը մի չափարու տակե գյող ա կնալիս: Արսեն ալլա գյոլիս ա, տվարեն առաչը կտրիս, քարավ տալիս, ղոլղոլ ըրիս, ծծղիս, իրան հետե ուլխունալիս: Հարութուն չփարեն երկեն նանե թաքուն դուս ա գյոլիս, Արսենե խզակոթեն ինդի մի սիլլա յա թխիս, որ Արսենե օշը գինիս ա, վեր ա ինգին, քցըքացե ըրիս: Շենեն մոտե տներեն նանե Չուբանաց պառավը, Մինասաց պառավը տսնալիսն:

Մի ամաև ջուրն բիրիս, շաղ տալիս Արսենե իրեսեն, աշկըրը հղղիս, ետ բիրիս: Արսեն եր ա կնալիս, կունդի-կոնդի ըրիլավ, լեց հնիլավ գինիս, հորը ըսիլիս: Հակառակու նման էտ օրն ալ Հաջի խան շենմն ա ինիս՝ քյուխվեն տանը:

Պարուն Երվանդ գինիս ա Հաջի խանե արզ ըրիս, մի քանե թիման փող նի գիծիս Հաջի խանե ջուբը: Հաջի խան, որ արծաթ փողրը ջուբոմը տըսնալիս ա, հըրստը գյոլիս ա, հոքմ ա ըրիս, որ. «էս սհաթեն էտ նախրչուն բերեք տեղս, տըսնամ՝ էտ հի՞նչ ռիսկու տար ա, որ նախրչի հնիլավ՝ թխած ա աղա մարթու տղեն, օշը տարած ա: Ըդուր պետք ա նի գիծմ շլլաղես տակը, էնքան թխըմ, որ գյոռուցը երգինք հասնի»:

Շենեն փեյքարեն ղորկալն, որ Հարութունե կանչի, տանի: Հարութուն հրաժարվալ ա, գենցա չի: Աղսաղկալնեն, գիդալավ Հարութունե խասյաթը, էրկու հուգի գենցալն, որ համոզն, տանն: Հարութուն աղսախկալնուն ենթարկվալ չի, ասալ ա.- էն լակուտեն իմ բենես հետե չըմ թակած, որ գինմ պադասխան տամ: Շենեն տվարեն հետեյմ թակած:

Երգրորթն ալ, ըսիս ա.- Հարութուն, Դուք գիդալիս եք, որ դեչանն ասօր ինձ խանու, բեգյու շլլաղ հալա նի չի եկած: Հանկարծ, Աստված ոչ անի, խանը օգի ինձ թակիլը, էտ բենը հաջողվի չի... Երվանդե ալ կդիրմ խանեն երե, էն օրը կգիծմ, որ ըրկուքընուց ալ բինբակավ ջուր կտան: Օզում ա՝ ինձ տանն գյուլլն:

Աղսախկալնեն Հարութունե տնիսն քյոխվեն օթախը՝ խանեն կոշտը: Հաջի խան կզնված, հայհոյանք տալավ՝ շլլաղը եր ա ունիս, եր կնալիս, որ մուտանա Հարութունե թխի... Դե ըմռան օր լալ, խանեն գեցեն մի թաք կտավե փոխան լալ... Խանը նստած տեղեն եր կանալ-վըտ կանալն ալ փոխանեն խոնջանը կտրվիլը մին ա դռնալիս: Փոխանը վեր ա ինգիս, նի ինգիս վըտրը: Հաջի խանե «համեստութունը» բե ա դըռնալիս: Մի մոմենդ շշկռվիս ա, գիդալիս չի հինչ արի, Հարութունե զիրավ գյո, թա իրան բեց դըռած այիբը ծածկի: Վերչապես խանը հուշը հվաքմ ա, փոխանը եր ա քաշմ՝ այիբը ծածկի: Աղսախկալնեն ալ, էտ բենից ամոթու ո՛չ կրիսն ծծաղի, ո՛չ ալ ծծղնեն պահիլ: Վերչապես Հաջի խան փոխանը եր ա քաշըմ, ծըլպատակ նստիս, հոքմ ըրիս, որ նախրչուն տանն նի գիծն քյոխվեն գյումը՝ դեչանը խոնջանը կապիլը: Դե Հարութուն գյում նի մտնողը չի լալ՝ ծծղիլավ թուղիս, գինիս ա տոն: Քյոխվեն մարը՝ Մարջան բիբին, քյոխվեն փոխաններից մինը տալիս ա փեյքարին, բիրիս ա խանեն փոխանը փոխիլ տալիս:

Ամեն հինչ որ պատառ հնդերդվմա, աղսախկալնեն ծծղնեն պահած դուսն գյոլիս գինիլիս: Մարջան բիբին մի թազա խոնջան, մի ջոխտ բրթի թիլից գյործած նախշուտ գյուլբաք բիրիս ա դիրիս Հաջի խանե ըռշկին, ըսիս.- Խան ներող ինի, էն տվարածը ախպուրս տղան ա: Քի սխալն խաբեր տված: Հարութունե մեխկը օնի չի: Մեխկը Երվանդե տղենն ա: Ամեն օր գինիս ա շենեն տակեն տավարեն առաչը կտրիս, ղոլղոլ ըրիս, որ հանցունը միետ ալ մի տավար վեր ինգի, վընննը կոտրի, խարաբեն դընռնի:

Հաջի խան լսիս ա Մարջան բիբուն, օրվա շառը, փորձանքը վերչանմ ա, գինիս:

28 (229). ՄԱՆՑԻ ԱՊԵՐԸ ՉՈՒԽԱՆ ճԱՐԱ ՉԻ

Բալունց Մանցի Ղարաբաղեն նանե ղարիբբունից նոր լալ եկած տոն: Աշունք լալ, թուռը-թողը օր:

Մանցու տղան՝ Հարութուն, ջահիլ լալ՝ աշխարքես ամենավախկուտ տղերքից մինը: Քշանաց շուդավ դուս ա եկալ դուրքը, հավեն եշալ, ետ դընռալ նի մտալ տոն, հորն ասալ.- Ապեր, հավան խառն ա, ցորտ, համալ մարմանդ թոռ ա գյոլիս, տաք շոր ալ չօնմ, որ գենամ, մրսիսմ: Ասօր կարիչմ մըր տավարը տանիլ հանդը:

Հարն ասալ ա.- Ադա, տղան էտքան խըղըճ, վախկուտ չի ինի: Հենե թազա չոխայմ բերած, եր կալ գեց, ղայիշս ալ իրեսավը կապի, շոնն ալ քի նետ տար հանդը:

Հարութուն թազա չոխեն անմը որ լսալ ա, աշխարքավը մին ա դընռալ... եր ա կացալ չոխան գեցալ, ղայիշը կապալ, տավարը գյումեն նանե դուս արալ, իրան նանե վախկուտ մի շոն լալ, շոնն ալ հետը գիծալ, գենցալ, հնգրոնացը հասալ: Հանդմը փադն հվաքալ, թեժ կրակ վառալ, տքացալ, նստալ՝ հաց ուտիլու:

Հարութունե հնգրոնեքը տըսալն, որ Հարութուն նայե լեց հնիլիս, հաց չի ուտիս: Հրցրալն.- Արա, խե՞յս լեց հնիս:

Հարութուն ասալ ա.- Հե՜նե, էլեն չոբանննեն նայեն գյոլիս տեղս: Ընդունց շատ զալմ շներ օնն, կգյոն, իմ շանը կփղաղն, կսպանն:

Հնգրոնացն մաչեն ամենաբազադը Սինամաց Ղահրաման լալ: Ղահրաման ասալ ա.- Հարութուն, վախլ մա, իս մըռած ը՞մ, որ թողմ չոբանուն շները քու շանը փղաղն: Եր կաց, չուխատ հանի, գեց տանք շանը, ղայիշտ ալ կապնի փորավը, քու կողքետ նստցրնք: Չոբանուն շները ինդի

կգիդան, որ մարթ ա մըր կողքեն նստած, ճնաչի չն, որ քու շոնն ա: Անց կկանան, կգինն, չոխան շանը գեցից կհանինք, դու կգենաս:

Ղահրամանե ասածեն Հարութուն հվատացալ ա: Չոխան գեց ա տվալ շանը, ղայիշը փորավը կապալ, նստցրալ կողքեն: Էլեն չոբաննեն եկալն իրանց շներեն նհետ, կրակեն կողքեն վըտ կացալ: Ղահրաման թաքուն մհակավ պիզ ա տվալ Հարութունե շանը կողքեն: Չոխան գեցած շոնը վնգստալիս ա, եր կնալիս փխչիլիս: Չոբաննուն կտաղած շներեն ալ իդի մի բեն լալ պետքի... որ շոն որ հասնմ ա, ըռըխը զախ տալիս, չուխեն նաննե մի կուտուր բուք ա տալիս, վեր գիծիս: Հարութուն խուտուրու վա ինգիս քըցըքացե ըրիս, վայ-վայ ըրիս՝ վայ չոխաս, վայ շոնս ըսիլավ:

Չոբաննուն հինչ բեննն ա, որ թազա չոխան կուտուր-կուտր ա դռնալիս շներեն ըռխնոմը: Իրաք ծծաղոտմն, ուլխանմ, հռհռոց տալիս:

Ըրկոնուն Մանցի ապերը տսնալիս ա Հարութունե գեցեն չոխա չկա... Հրցրիս ա.- Օղուլ, պա չոխաս հո՞ր ա:

Հարութուն ըսիս ա.- Ապեր, չոխան թոռը թակած լալ, թրչած, ծնդրացած լալ, ուզեցա չըմ բերմ տոն: Մի մախե ծառավ կախմ տված, որ քամե թակի՝ չուրանա: էքյուց ալմ տավարը տընննական համան հանդը, էքյուց կբերմ:

Մի քանե ըրակու խըղըճմ մարթը լա հըրցրիս լալ.- Օղուլ, չոխաս հոր ա՞...

Հարութուն ալ համան խոսքն լալ ըսիս.- Ապեր, թրչված ա, մախե ծառավը կախմ արած, որ չուրանա, կբերեմ ալի:

Մանցի ապրուն սրտեն այան ա դըռնալիս, որ չուխեն գյլխեն մի փորձանք ա եկած... Հարութուն իրան խփիս ա:

Մի քշանաց գինիս ա, շենեն ղրաղեն Հարութունե հնգրոտացն նանե հրցրիս, թա՝ չոխան հինչ ը՞ն արած, որ բիրիս չըն տոն:

Ղահրաման ասալ ա.- Մանցի ապեր, Հարութուն չոխան օսսրը գիծած նա լալ, մըծ գետեն սըռոմը հղցին կողքեն վըտը:Հըռնաց տըսալնք, որ էրկու ծիավըր թվանգնեն ուսսռնոմը, հղոքն եկալն, Հարութունե ուսսերեն նանե չոխան եր կալալ, տարալ: Համա դե, գիդացա չընք ծիավորնեն թորք ըն լա՞լ, թա՞ հայն լալ:

Մանց ապերն աշխարքեն ամենամիամիտ մարթունցն նանե լալ: Ղահրամանե սարքած սոտեն հավատացալ ա: Այտս խըղըճմ մարթը եշալ ա դիբի երգինքը, մրմնջալավ աղոթք արալ, ասալ.- Փառքտ շատ ինի, Աստուծ, որ ծիավորնեն տղես թակած չըն, վըխցցրած, անփորձանք պրծած ա: Չոխան ջհաննամը, թող գյլխեն մատաղ ինի: Եկուղ տարե կգինմ ալլա Ղըր-

բաղը, չոխա յա, մի սորունը կօնմ, կբերմ: Պա, որ տղես գյուլոխը մի փորձանք լալ գյոլ, հինչ ը՞մ լալ արի:

29 (230). ԴՈՎԻ ԴԱՅՈՒՆ ԼՊՐԱՍՏԱԿԸ

Թազաշինացե Դուլխանաց Վըրթազար շատ հունարավ մարթ լալ: Իրաց կիլի մրեգեն դրքեն տակեն մի ծակուռ լալ սարքած: Ծմեռնը, որ իրան սիպտակ յորղանը փռիս լալ ամեն հանդ, չոլ ծցկիս, քավշանեն լպրստակրը կեր չեն լալ ծրիս, որ օտն: Գյոլիսն լալ Վրթզարե մրեգեն դրքեն տակեն ծուկոռավը նի մտիս մրեգեն մաչը, խոտեն, դրմանեն նանե ուտիլիս:

Վըրթզար քիշերեն մի վախտ եր լալ կնալիս, գինիս դրքեն տակեն ծակուռը քարավ, փալասավ պընդ փկիլիս: Օրն որ բինվալիս լալ, Վըրթզար գինիս լալ մարեգն, տսնալիս մի քանե լպրաստրակ նայեն մրեգեն էս քյունջումը, էն քյունջումը կոչ եկած՝ բղրնեն դուղդուղցրիս: Միակավ թխիս լալ լպրստրակնեն վեր գիծիս, մուրթուտիս, տնիս տոն:

Թազա շենմն ալ աշխարքից բեխաբար, միամիտ մի մարթ լալ: Թա քանե տրեկան լալ, ինքն ալ չի լալ գիդալիս: Անըմը՝ Դովի: Դովի շենեն ամենաքյասիբ մարթունցն նանե լալ: Շինըհավան՝ մըծ, թա կուծի, օմեն ալ Դովի դայիյն ըսիլիս:

Ծմռան մի օր Վրթզար Դովու կնչիս ա, ըսիս.- Դովի դայի, մի սաղ լպրաստակ դիրմ պարկըմը, տար Սարդու, տոր բաջանաղես՝ Մալիք Խաչու: Լպրաստակն որ տանս, գյոս, քի մի ղռան արծաթ փող կտամ:

- Գյուլոխտ ողջ մնա, աղա Վըրթզար, փողն հինչ ը՞մ արմ: Քու խաթրետ հետե լպրաստակն առանց փող ալ կտանմ.- օրախ-օրախ ըսիս ա Դովի դային, մի սաղ լպրաստակ դիրիս պարկմը, շլկիս, հղե ինգիս:

Թազա շենեն նա Սարդվե արանքմը Խինգիհին լալ: Խնգիհինե ըռշկավը քյասար հղե լալ Սարդու տանուղ: Դովի դային որ հսնիս ա հղցին խաչմերուկեն, վըտ ա կնալիս խյալ ըրիս. «Իմ քուր՝ Սոնա, Խնգիհին ա մարթու գենցած: Քվորս մարթը՝ Աղաջանանց Արզուման, շատ շնորքավ մարթ ա: Ամեն տարե սըվ խաղվու նանե սորին կարմուր գինի ա գիծիս: Սորին կինի, թըք տամ Խնգիհին, իմ քըվորս կտըսնամ, հաց կօտմ, պատառ ալ գինի կխմըմ, կդինջանամ, հղես կփռնմ, կգինմ Սարդու»:

Դովի դային որոշիս ա, հղեն ծռիս, գինիս Խինգյհին՝ քվորը տոնը: Ախպուրը տսնալավ՝ Սոնա բաջին ուլխունալիս ա: Հաց ա բիրիս, գինի ա դիրիս: Սունե մարթը՝ Արզուման, տեղեկանմ ա, որ Դովի դային լպրաստակ

ա տնիս Մալիք Խաչու հետե: Թաքուն եր ա կնալիս, լպրաստակը պարկեն նաեե դուս ունիս, իրաց կատուն փռնիս, դիրիս պարկմը:

Աշխարքից բեխաբար Դովի դային եր ա կնալիս, պարկը շլկիս, հղե ինիս դիբի Սարդու: Հղեց կատուն պարկը չնգուռտիս ա, լոք-լոք ըրիս՝ պարկեն նաեե իրան ազադի: Դովի դային ալ բենից բեխաբար, օրախ-օրախ ըսիս ա.- Ա հեյվան, հինչ ը՞ս բեյթուն տեղը պարկը չընգուռտիս: Գինին իսմ խմած, իմ տեղըս դուվս հարփա՞ծ: Պատառ ալ դմաց, հեսա կհասնմ Սարդու, վեզտ կկտրմ, մորթետ վեր կարմ, սըրտտ, թուքտ կհանմ, կխրավմ, կօտմ, ետ դըռնամ:

Մալիք Խաչի որ տեղեկանմ ա բաջանաղը լպրաստակ ա ղորկած, շատ ա ուլխանմ: Պարկեն բերանը բենմ ա, տըսնալիս՝ հի՞նչ, մի մըծ առջակատու ա... Մնալիս ա զարմացած, թա՝ էս հի՞նչ բեն ա, իստի հանաք չի ինի... Հունչո՞ւր թա կատուն դիրն պարկմը, շելակ տան միամիտ մարթեն, շենբաշեն ղորկն, թա լպրաստակ ա, մարթկանց խայտառակ ըրիլիս: Էս բենըմը մի գաղտնիք կա: Հարկավոր ա գինիլ, պարզիլ. ինքն իրան որոշիս ա Մալիք Խաչի, եր կնալիս, նստիս ծիյանը, պարկը շելակ տալիս Դովի դայուն, հղե ինիս դիբի Թազա շենը:

Գյոլիսն հսնիս Խինգհհիհնե կոշտը, Դովի դայուն մըտքը փուխվիս ա: Ըսիս ա.- Մալիք աղա, իս քողցածմ, համ ալ ինջինմիշմ իլած: Իմ քուր Սոնա Խինգհհին ա: Սորին կարմուր գինի ալ օննն: Եք թըք տանք, հաց օտնք, դինջանանք, նոր գիննք:

Մալիք Խաչի Դովի դայուն խնոսքը կուտրիս չի, գինիսն Խինգհհին: Աղաջանանց Արզումանե տանը նորից հաց ուտիս: Արզուման հաջողացրիս ա, ալլա թաքուն, կատուն պարկեն նաեե դուս ա ունիս, ալլա լպրաստակը դիրիս պարկմը:

Մալիք Խաչի նա Դովի դային հացն ուտիս, գինի խմիս, շնորհակալութուն ըսիս, հղե ինիս, գինիս հսնիս Թազաշենը:

- Տնաշենու տղա, պա մարթ իտի հանաք կանի՞, իս քու մասխարան ը՞մ: Երս կնալիս կատուն նի գիծիս պարկը, թա՝ լպրաստսակ ա, շելակ տալիս խըղըճ մարթեն, շենբաշեն ղուրկիլիս,- նղացած սրտավ, ծիյանը նաեե վեր գյոլավ՝ ըսիս ա մալիք Խաչի դրքեն վընննը կացած Վըրթզարե:

Վըրթազար զարմացած մուտունալիս ա Դովի դայուն, ձեռքեն նաեե պարկն իք ունիս, բերանը բինալիս, պարկեն նաեե լպրաստակը դուս ունիս, մալիք Խաչու նշանց տալիս, ըսիս.- Այ հորտ տոնը շեն մնա, խե էս մծեթուն ինտի կատու կինի՞... Դու խոխա յը՞ս, լպրաստակն ու կատուն միննը-միննեն նաեե ջուկեցրիս չը՞ս:

Մալիք Խաչի խըղճացած եշմ ա Դովի դայուն իրեսեն, ըսիս.- Դովի, դու մըր տանը պարկեն նանե հինչ ը՞ս դուս կալալ, դուզն ասի:

- Կատու լալ, Մալիք աղա, կատու,- խըղճ-խըղճ ըսիս ա Դովի դայինն:

- Պա էս հինչ ա՞, լպրաստակ ա՞, քա՞ կատու,- ծծղիլավ ըսիս ա Վըրթազար:

- Լպրաստակ ա, աղա, լպրաստակ,- ալլա խըղճացած ըսիս ա Դովի դայինն:

- Շատ սորին, Դովի դայի, պարկեն մաչեն, քու շլակեն հունչո՞ւր ա լպրաստակը դըռալ կատու, նորից կատուն ալ՝ լպրաստակ:

Դովի դայինն կրեցա չի խոսի... մեղավոր մարթու նման գյուլոխը կախ ա գիծալ, օսսուրը եր գիծալ: Վըրթզար հազրի ա եկալ, որ օքտվիլավ Դովի դայուն միամտութունից, պարկեն երե մի քյալագյն բերած:

Հրցրիս ա.- Դովի դայի, գինիս-գյուլիս տեղը հի՞նչ տըղս թըք տված, պարկտ վեր դիրած:

- Խինգհիհին, քվորս՝ Սունե տանը:

Խնգհեցե Աղաջանաց Արզումանե, Մալիք Խաչի ալ, Դուխանաց Վըրթազար ալ սորին ճնաչմն լալ, որ շատ հանաքչի մարթ ա: Լպրաստակը կատու արուղը՝ կատուն՝ լպրաստակ, Արզումանե արած բենն ա՝ ծծղիլու հետե:

Լպրաստակը մուրթիսն, իփիս, սուփրա բինալիս, նստիս, որ հաց օտն, մին ալ տսնալիսն Արզուման նես ա մտալ ծծղիլավ՝ մի տեգ գինի ձեռքեն: Արզուման պարյօր ա տալիս, պրվիս, ըսիս.- Իմ քաղցր պարիկամնե, էտ լպրաստակն եք իփա՞ծ, քա՞ արջակատուն:

- Այ տնաշենու տղա, իտի խայտառակ հանաք կարը՞ն, խրեգ լալ մանցած բաջանաղ, բաջանաղու նանե նղանանք, խռավնք,- ըսիս ա Վըրթզար, գինուն տեգեն բերանը բինալիս:

- Իս որ իտի հանաք չըմ լալ արի, ձեզ նման թնգյանոց պարիկամնեն հունչո՞ւրմ լալ կարի մի տեղ ճարի, պարիկենթանի էս ազիզ օրը միասին մի տեղ նստիլ, մի թիքա հաց օտիլ, քաղցր սոհբաթ արիլ,- ըսիս ա Արզուման:

Մալիք Խաչի մին եշիս ա Վըրթզարե, մին ալ՝ Արզումանե, ծծղիլիս:

Սրդվեցե Մալիք Խաչի, խինգհեցե Արզուման, թազաշինացե Վըրթզար միասին ուտիսն, խմիս, քաղցր սոհբաթ ըրիս, օրը օրախ անցկցրիս:

30 (231). ԿՌԸՎԸ ԿՌԸՎԵՆ ԵՐԵ

Միեւտ, մի օր, Դադուևց Ալիքսան ջիհիս ա իրան ղորփուրը աղչգյանը մարթեն՝ Պատվականե, ըսիս ա.- Փըսե Պատվական, դու իմ աշկեն շատ դուշկուևս ըրվալիս: Բալքյա Շուշի քի սորին չի պիհս, նհետտ կռվիս ա:

- էն ա, քու ազգետ աղչիգն ա, խասյաթը դու ինձանե սորուևս գիդալիս: Ալ խե յը՞ս հրցրիս մուլայ,- պատասխանալ ա Պատվական:

- Պատվական, որ իմ կնգանս, քու կնգանը դիրնք կշեռքմ, կշըռնք, իրաց խասյաթավը, վերաբերմունքավ ո՞ր մինը ծանդր կգյո, Եղսապե՞տ, թա՞ Շուշի:

- Ըրկոքան ալ մինն,- ալլա նղացած սրտավ ասալ ա Պատվական:

Ալիքսան ասալ ա.- Պատվական, մհեգ առաչվանը չի, այամն ալ ա փոխված, կնանուցը խասյաթն ալ: Հունչուր պապական մասալն ա ըսիս. «Խարաբա ջղացմն ալ մի չխկոց-թխկոց կինի»: Մհեգ ինդի ա դրռած, որ մի կնեգ կավչնի, սըրտը մարթեն երե տաք ինի, մարթեն ասածն լսի: Տղամարթ ալ պետք ա օզի-չօզի մի բեն ալ կնգանն նանե թաքուն բեն փռնի, գյուլոխը պահի: Մասալան, իս իմ կնգանը ըսիսմ. «Եղսապետ, մի քթոլ եղ դիրի լավաշ հացեն մաչեն՝ դումջակ արմ, օտըմ, սըրտըս ուզիս ա»: Եղսապետ ըսիս ա. «Եղ ինի, շորվա կիփմ, հացը նի՝ կփրթըմ, փափուկ-փափուկ կօտմ: Եղու անմ տալ մա: Եղը պրծած ա»: Կնգանս տված նման պադասխանեն երե որ խոսմ, գիդալիսմ՝ կըռըվ կդըռնի: Ճարս կտրած՝ սուսմ ըրիս, էնքան, որ Եղսապետ կոժն եր ա ունիս, գինիս ախպիրը՝ ջուր բիրիլու, յա մի հրվանու տոն՝ գյալաջի ըրիլու... Սուս-փուս երմ կնալիս, եղեն օշնակեն նանե մի քիթոլ եղ եր ունիս, դումջակ ըրիս, ուտիս՝ սուս-փուս նստիս: Քյասար ասսծ մըր տան եղը, կնգանս նանե թաքուն ուտիսմ՝ մըր տանը մաչեն գյուղեթունմ ըրիս: Մի օր ալ Եղսապետ ասալ ա. «Ալիքսան, հանց ա կասս եղեն նի եկուղ կա, աշկես խրեգ ա ըրվալիս...»: Ասալմ. «Եղսապետ, տանը սկեսուր չօնս, հառհնը չօնս: Եղեն հո՞ւ նի կգյո: Կասկածմ ը՞ս, նշան արի, փորձի»: Ասալ ա. «Հինչո՞ւր նշան արմ»: Ասալմ. «Եղեն իրսը քյութոլավ դուզըցրի, երե խզի, խաչ քաշի: Դե որ եղեն նի գյոն, եր օննն, նշանը կխաղտվի, կըրվա, որ եղը գյուղնալիսն»: Եղսապետ հավատ ա արալ՝ նշան դիրալ: Մհեգ, իս ալ ալլա օրական մի քյութոլ եղ երմ ունիս, ուտիս, նշանը դուզցրիս: Եղսապետ ալ գինիս ա ուշնակեն յիշիս, տըսնալիս ա՝ նշանը կա, սուս ա ըրիս: Եղեն պկասիլը գյուլոխ չի ինգիս: Դե սորինն էն ա, որ գիդալիսս կընանեքը օմեն ալ մինն մի խասյաթու տար, իրար նման: Տսնալիսս, որ Շուշի եղ չի տալիս օտըս, դու ալ

ինձ նման օրական մի քյութոլ գյուղաց, կեր, բողազտ պահի: Թա չի, կլղըրս, կուլուզանաս, օժից կինգյս՝ տար կանուղ ինի չի:

Ալիքսանե տված խրատներեն Պատվական ոչ մի բեն ասա չի, սուս ա արալ: Ալիքսան Պատվականե խրատ տալուց մի քանե օր անց, ալլա Պատվական նա Շուշի իրաց տանը խոսքուվ ըն գյուլիս, մինը-մինեն նանե նըղըննալիս, սըրտնղվիլիս:

Էտ խոսկմը Պատվական Շուշու ըսիս ա.- Լա սորինը քու ղուրփուրտ տղան՝ Ալիքսան ա ըրիս, որ կնգանը բենու տեղ չի դիրիս, ամեն օր թաքուն եղը գյուղանալիս ա, ուտիս, բողազը պիհիս:

Տեղես նհետ ալ կռըվը-կռվեն հետեն ըսկսվիս ա:

Շուշի, դու Շուշի, էսքանն որ լսիս ա, ալ դիմանմ չի, փոխկրը եր ա քաշմ, գինիս եղսապետե երե կըռըվ, ըսիս.- Մարթետ ասի պատառ խըլքը գյլխեն պահի... ինքը քիանե թաքուն եղը գյուղանալիս ա, ուտիս, բոլ չի, եկած ա իմ մարթես ալ եղը գյուղանալեն թահրը սվրցրած:

Ըրկոնուն Ալիքսան որ բինհետեղից գյոլիս ա, այտս Եղսապետ ա կըռըվը ըսկսիս, ըսիս.

- Տնշենու տղա, դու եղը գյուղանմս ուտիս բոլ չի, գինիսս Պատվականե ալ եղ գյուղանալը սվրցրիլիս: Շուշի նա Պատվական կըռվածն: Պատվական ալ քու տված խրատը՝ եղը գյուղանալու հետե, մինի-մինի Շուշու նաղլ ա արած: Շուշու խասյաթն ալ գիդաս, ալ համփերած չի, եր ա կացալ, եկալ ինձ երե կըռըվ, հազար թահրի ամոթանք տվալ:

Եղսապետ, որ էսքանն ըսիս ա, այտս Ալիքսան չի դմնալիս... գինիս ա Պատվականե երե կըռըվ, ըսիլիս.- Այ տնաքանդու տղա, պա տղամարթը մի գաղտնիք կարի չի՞ կնգանն նանե թաքուն պահիլ: Իս քի մի բեն սվրցրալմ, որ օրական մի քիթոլ եղ գյուղանաս օտս, բողազտ պահս, լղըրիս վեչ մըռնը՞ս, թա՞ գինս կնանուցը բերանը գիձս, կըռըվ սարքս, իմ հացն ալ կտըրս:

Պատվական ալլա լալ կցալ ա, խուսեցա չի:

Եղեն գյուղեթունը մասալա յա դըռալ, տարածվալ:

31 (232). ՍՈՆԱ ԳԻԼԵՅԸ ԹԱՐԳՅԱԼ Ա

Գիրագի օր լալ, վարժապետ Արսենը տանը ուջաղեն կողքեն խտուրու լալ հնգյած՝ պատառ դինջոնա: Արսենե կնեգյը՝ Սոնա, օջաղեն երե թանավ ճաշ լալ իփիս, համ ալ իրան հետե խասյաթ արած, տեղես, տեղեն գիլեյ լալ ըրիս.- Ներակ Վընեսաց Երվանդե կնգանը՝ Նազլուվե... Միեգ

Երվանդ հանդեն նաներ կգյո՝ էշեն չոր փադ բեռնած, Նազլու ալ բոլ-բոլ կվառի, կմխիթարի: Ներակ Մեշունց Թաթոսե կնգանը՝ Մարյամե: Մարթը շեներեն տվարածն ա: Ամեն ըրակու տվարեն տըռնացն նաներ թազա հաց ա հվաքմ, կուռնատակը լցրիս, տնիս ա, Մարյամ բոլ-բոլ լավաշ հացն ուտիս ա, ջանը դինջ պիհլիս, ո՛չ ալուր ա մաղմ, ո՛չ խմոր ա հունցիս, ո՛չ թուրուն ա վռիս... Սաղ օրը իլիգյը ձեռքեն նայե տեղս-տեղը նստած՝ սոհբաթ ըրիս:

Վարժապետ Արսենը գիդալիս լալ կընգանը խասյաթը: Մախուսան, գիլեյ լալ ըրիս, որ մարթն ալ մի բեն ասի, անտեղի տեղը սըրտնեղութուն սարքի:

Ճարահատված՝ Արսեն ըսիս ա.- Աստված ողորմի ծնողներետ ազիզ մըռըլնուն... Սոնա ջան, խրեգ խոսի: Սաղ օրը վարժատանը խուխենցը նհետմ գյուլոխս ցվցրիս, գյոլիսմ տոն, որ պատառ դինջանամ, դուվս խուսիս, գենգյատ ըրիս, գյլխացավս շտցրիս... Մըծ աշխարք ա, շատ ժողովուրթ: Ամեն մի մարթու մի բախտ, մի ղսմաթ, մի սանադ օնի, ըշխադմն՝ ապրըմ: Դե իս ալ վարժապետմ: Մհեգ այամն հնդի ա, որ շատ մարթ կրիլիս չի իրան խուխենն խրատի, մարթ արի: Համա իս ամբողջ շեներն խուխենցը խրտիսմ, դաս տալիս, գիր, ղալամ սվրցրիս: Հի՞նչ պակաս բենմ ըրիս: Այ կնեգ, որ մհեգ իմ սանադեն նաներ անգոհս, կարիչմ սանադս փոխիլ: Ե՛ք, գինի, սըրտդ հուր որ կօզի, մինչա թող իմ գյուլոխը հանգիստ մնա: Կօզս փադ բիրողու գինի, հաց հվքողու գինի, վար արողու գինի... Քու բենն ա, հղետ փկիս չըմ... Համա մի պայմանմ դիրիս: Բեն ա, ոչ մինեն որ հավան վեչ կանաս, յա տոն վեչ թողն, տար կանուղ հնի վեչ... Հմանչըս վեչ, ետ կդըռնաս, կգյոս ալլա իմ տոնս: Իս քի կունքունմ,- վարժապետ Արսենը էսքանը ըսիս ա կնգանը՝ Սունե, այտս կուռանը փռնիս, տանը նաներ դուս ըրիս, դուրքն ալ նեսի ղոլեն նհետ փկիս, ալլա ուջաղեն կոխկեն խուտուրու հնգիս:

Ըրկուն թարափ վարժապետ Արսեն տսնալիս ա դուրքը թկիսն: Եր ա կնալիս, գինիս բհնալիս, տսնալիս ա կնեգյն ա՝ Սոնա յա: Ըսիս ա.- Ախչի, էտ խե յը՞ս իտի շուդավ ետ դըռալ եկալ: Հազր գենցածս լալ, քու հավանած մարթունցը քուշտուռնուն մի քանե օր մնալիս լալ:

Սոնա ծծղեցալ ա, ասալ.- Մի քանե տոն գենցալմ: Քիյանե հի՞նչ թաքուն պահմ: Լա որ տոն նիյմ մտալ, տըսալմ մարթեն նա կնգանը մաչեն մի խոսք, նղըսըրտեթուն, գենգյատ կաննի: Մըր պապական մասալը մընննս ա հնգյալ, որ ըսիս ա. «Դուրբան հնիմ մարթես ջանեն, քյասիբ տանեն»: Տը-

սալմ, որ քիանե խելունք, համեստ մարթ կավչնի, ուրթումն ըմ կերալ, որ ալ գենգյատ ըրիլես թարգյը տամ, թողմ գյուլոխտ դինջ մնա:

Էսքանն ասալ ա Սոնա, նի մտալ տոն, սուս արալ, ճաշն իփալ:

Վարժապետ Արսենե տանը դըռած էս խոսքը, զրուցը մանցա չի: Մասալա յա դըռալ՝ շենավը մին, միալավը մին տարածվալ:

Էս բենը միալմը օրինակ ա դըռալ: Հուր կնեգ որ մարթեն նանե նատացի լալ ինիս, գիլեյ լալ ըրիս, գյլխըցավանք սարքմ, վարժապետ Արսենի նման կնգանը կուռանը փռնիս, դուս լալ ըրիս, ըսիս.- Այ կնեգ, գյուլոխս դադի մա արիլ, գինի, հուր որ հավանս, աշկ օնս երե բեզարելուց հմանչս վեչ, տանս դուրքը բեց ա, կգյոս:

32 (233). ՀՈՒՐՉԱԴԵ ԳՅԼԽԱՑԱՎԵՆ ՃԱՐԸ

Մի քշանաց Վանուց Վարթան նստած հաց լալ ուտիլիս: Տըսալ ա՝ կնգանը՝ Վարթու, օնքըրը հվաքած ա, խումար ա: Հրցրալ ա.- Ակուփե աղչիգյ, հինչ ա՞ պդահած, խե յը՞ս օնքրտ երի տված:

Ակուփե աղչիգյը՝ կնեգյը, ասալ ա.- Իմ մարս շատ փիս ալուզ ա, գյուլոխը կրիս չի տեղաշորից բիցրցրի: Ըրկեցա խուտուրու վա ինգյած:

Վարթան քըմծըծաղ ա տվալ, ասալ.- Ակուփե աղչիգյ, բեյթուն տեղը խիյալ մա արիլ, ընդուր Հուրզադ կասն: Թա սուտանուն բեն կպդահի, Հուրզադե ալ կպդահի: Ընդուր պիժիշկը իսմ, մհեգ կգինմ, դեղ, ճար կարմ, կսուրուննա:

- Դու հի՞նչ ճար կարուղս արիլ,- զարմացած հրցրալ ա Վարթի:

Վարթան սասն ավելի ա բիցրցրալ, ասալ.- Ախչի, էն Աստուծն յանի, քու մարտ ամեն օր պետք ա նա ինի էս տաք թոռնու, էն տաք թոռնու կողքեն նստած, թազա լավաշը դումջակ արած պներավ, դեսեն-դենեն մասալա ըսիս, հաց թխուղնուն ծծղցրիլիս: Օրն ուրախ մքնցրիլիս: Մհեգ էրկու օր ա մըր մահլոմը հաց թխող կավչնի, Հուրզադե թազա լավաշ տվող կավ չնի, ըդուր հետե յալ ուլուզացած ա: Մհեգ գինմ ասմ. Հուրզադ խանմ, Նայեննի հաց թխիս: Տըս հունչո՞ւր ա ծիավորվում, գյուլիս թոռնեն կողքեն նստիս:

Հուրզադ տըսալ ա փըսեն գյուլիս ա, յուրղանեն տակեն ըսկսալ ա տնքտնքալը:

- Ա մար, հինչ ա՞ պդահած, խե յը՞ս ուլուզացած,- հրցրալ ա Վարթան փըսեն:

- Գիդալիս չըմ, օղուլ, մրսածմ, ջանս ցվիս ա: Հանցա կասս մհակավ թակած ինըս՝ անջին արած: Գյուլոխս ալ ինդի ա ցվիս, հանցա կասս ինձ երե վեչ ինի, կրիս չըմ եր կանալ:

- Բեն չկա, իդի ալ կպդահի: Վախլ մա, եկածմ տանմ պիժիշկեն կոշտը, որ մի ճար արի:

Հուրզադ որ պիժիշկեն անմը լսիս ա, խրեգ ա մնալիս սըրտը ճաքի, ըսիս ա.- Փըսե ջան, Աստուծետ մըռնմ: Սորին ա ինձ հնգյուստնեն տանս, պիժիշկեն կոշտը տանս վեչ,- ղանչաք, պղատանք ա ըրիս փըսուն:

- Խե, վխիսս պիժիշկը քի օտի՞,- հանաքյավ ըսիս ա Վարթան փըսեն:

- Օղուլ, ընմետ մըռնմ, պիժիշկը մարթ օտուղ չի... Համա ըսիսն, որ պժիշկը ալուզեն շորրը հնիս ա, տկըլվազի ըրիս սաղ ջանեն ծրքհարիս, որ ցվիս տեղը ճարի: Պա իս հունչո՞ւր գինմ շորրս հանմ, ղարիբ տղամարթեն քուշտեն բեց ջանավ վըտ կանամ, ինքն ալ ջանս ծրքհարի... Չէ՛, չէ՛, ջանա, իս պիժիշկու կոշտը գենցուղ չըմ:

Չեմքուչեն ըսածեն երե Վարթան փըսեն մի կոշտ ծծղիս ա, ըսիս.- Ա մար, քի ղարիբ պիժիշկու կոշտը տանուղ չըմ: Քու մշտական պիժիշկը տաք թուրնն ա, ճարն ալ՝ թազա լավաշ հացը: Էրկու օր ա թոռնու նանե կտրվածս, ըդուր հետե ալ ուլուզացածս: Իմ մար խմորը հոնցած ա, թուրունը վառած, նայե խմորը բուլիս: Քյոմագ արուղ ա պիտքս, որ հացը թխի: Ըդուր հետե էկածմ, որ քե տանմ:

Հուրզադ որ վառած թոռնեն անմը լսիս ա, ամեն ցավը, չոռը մոռնալիս ա... Տըղերեն նանե սհաթտա եր ա կնալիս, շորրը գինալիս, հղե ինիս գինիս, խնամուց տոնը:

Պատառ վախտ անց, Հուրզադ նստած լալ խնամուց տաք թոռնեն կողքեն, թազա լավաշ հացը թազա պնըրավ դումջակ ըրած, էխշավ ուտիս, մասալանե ըսիս, հաց թխողնուն ծծղցրիլիս:

Ինդի օրախ, բեցուր սասավ լալ ըսիս, որ լսողն հավատ չի լալ արի, թա մի սհաթ առաչվա յուրղանեն տակեն տընքտընքող Հուրզադ ա: Սասը հասնմ լալ ասմանեն:

Վարթան եշալ ա ունքամաչը բեցած Վարթու, ասալ.- Ակոփու աղչիգյ, տըսալ ը՞ս հունչուրմ գիդացալ քու մորտ պիժիշկն ա գյլխըցավեն ճարը: Վարթի սուս ա արալ, ծծղեցալ:

33 (234). ԻՄ ՀԱՄՆ ԱԼ ՏԸՍԵՔ

Դրդաղեն ամեն մի շենմ, ամեն մի հայու տան բացի օջաղից, պարտադիր թուրուն ալ լալ: Օքուտեն կման, թուրուն շատ վնաս լալ տալիս շինացուն: Շատ ա պդահած, որ թիժ թուրունը խոխա, վըտը գյոռնը, հավ ա ինգյած, էրված:

Նման վնասներից հըռի մնալու հետե, էս ետե վախտրը խինգիհեցեք բերալն տանը թուրուն վառիլը վերացրալ: Բերալ օմեն մի մահլոմ էլլիգյանա մի թուռնատոն սարքալ, թուրուն դիրալ, այտս հըրթավ իրաց հացը թխալ:

Մի տարե՝ ծմռան մի օր, ներքե միհլին թուռնըտանը հացն լալ թխիս: Մի քանե ջահիլ-ջուհիլ հվաքվածն լալ, նստոտած թուռնըտանը՝ սաքյուվեն երե, իրաց հետե տեղես, տեղեն սոհբաթն լալ ըրիս:

Էտ օրը ետնատոր արուղ շատ լալ: Հու վեր ետնատորը թխիս լալ, մի թազա հաց տալիս լալ սաքվեն երե նստոտած ջահիլնուն: Մի ջահիլ, նախշուտ հառհն ալ բերալ ա մի քանե բուլ ետնատոր թխալ: Թխած հացն որ ջահիլ, նախշուտ հառհնը հվաքալ ա, մի թազա հաց դեմ ա կալալ ջահիլնուն, ասալ. տղերք, մի իմ համն ալ տըսեք:

Նախշուտ հարսանը ասած սխալ խոսքեն երե ջահիլնեն կրեչա չըն ծծղնեն պահիլ: Փրթփրթցրալն, ծծղոտալ: Նախշուտ հառհնը հասկացալ ա, որ ինքը սխալ խոսք ա ասալ... Պետք ա ասիլ լալ. տղե՛րք, իմ թխած թազա հացեն համն ալ տըսեք:

Նախշուտ հառհնը իրան ասած սխալ խոսքեն հետե հմնչեցալ ա, կարմուր խնձոր դըռալ, ամոթու գիդացա չի, թա հունչուր ա թուռնըտանն նաննե դուս եկալ, գենցալ:

Տղերքն ալ, ետերը հմնչեցալն, որ մի սխալ խուսքու հետե հարսանը հմնչցրալն:

34 (235). ՀԱՐՈՒԹ ԲԵԼՈՒՆ ՉԱԲՈՒՋՆԵՆ

Իս մեղա, Աստուծ, ղալաթմ ըրիս, որ Աստուծեն բիներեն խառնվիսմ: Համա դե որոշ բեներ ալ կա, որ Աստված անխղճեթուն ա ըրիլիս: Մի մարթու օխտը տղա յա տալիս, մի աղչիգ տալիս չի: Մի մարթու օխտը աղչիգ ա տալիս, ոչ մի տղա տալիս չի: Մի մարթու ալ ոչ մի տղա յա տալիս, ոչ մի աղջիգ: Ըրկուքնաց նաննե ալ թուղիս ա հասրաք:

Խնգիհեցե Բալուց Հարութե Աստուծ օխտը աղչիգ լալ տված, միևը միևեն նանե համ նախշուտ, համ ալ՝ ղեյրաթի: Աղչըգերանցը անմնեն լալ՝ Անայի, Խաթայի, Հուրի, Փարի, Նանագյուլ, Դաստագյուլ, Նախշում:

Մի տարե՝ գյուրունիդեմ մի քշանաց Ըռքյալաց Ղազար Հարութե ըսիս ա.- Հարութ բելի, էրկու օր ա քի տսնալիս չըմ: Աստված պարին կդարի, օրեշ տե՞ղս լալ գենցած, որ աշկավս ինգյալ չըս:

- Չէ՛, Ղազար բելի, օրեշ տեղ գենցած չըմ լալ: Տաննմ լալ չաբուջենեմ լալ խուզիս:

Ղազար մանցալ ա զարմացած:

- Հարութ բելի, հալա շուդ ա... «Պռավեն գյուռներեն օրրը» նոր ա անցած: Կարուղ ա հալա հավան փոխվի, ցորտ արի, չալղուն արի, չաբուջենեն մեղքն, կստկոտն:

Հարութ ասալ ա.- Ղազար բելի, հինդամ, տարեն հաջող ա ըրվալիս: Համ ալ ամեն տարե էս օրերենմ չաբուջենեն խոզած, հալա վընաս տըսած չըմ:

Ղազար բելին հավատմ ա Հարութ բելուն ասածեն, գինիս ա տոն, իրան իլած հենգ-վեց հատ չաբուջենեն խուզիս: Հակառակը, հակառակ ա ինիլիս... էրկու օրեն ետը հավան թուղբիս ա, ցուրտիս, չալղուն ա գյուլիս, Ղազարե էրկու չաբուջ ըստկիսն:

Էքսի քշանաց, Ղազար գենցալ ա Հարութե ասալ.- Այ տնաշեն,, պա որ ասալմ՝ շուդ ա, հալա չաբուջ խուզիլու վախտ չի: Ասալս. չէ, լա իս ամեն տարե էս վախտմ խուզիս: Իս ալ գենցալմ մըր չաբուջենեն խոզալ: Ըրկեց չալղունեն էրկուսը մրսածն լալ, ըստակած: Ասի գիդամ, ձեր խոզած չաբուջենեն չալղունից հունչո՞ւրն պրծած... ըստակուղ իլած ա՞, թա՞ չի:

Ղազարե ըսածեն երե Հարութ լախ-լախ, երկար ծծղեցալ ա, ասալ.- Այ տնշենու տղա, իս հանաքվարիյմ ասալ, որ չաբուջենեննմ լալ խուզիլիս: Չաբուջ ըսիլավ իս հաշվիյմ կալալ իմ օխտը գերմակ ըղչգերքը: Իմ ըղչգերանցը գյլխնենմ լալ խուզած, որ նադան ախչիգ խոխայն, գլխնեն հուչուլ, հանեծ վեչ ինգի: Պա դու հասկացուղ մարթս, հունչո՞ւրս գինիս խըղըճ իծերեն չաբուջենեն խուզիս, չալղունավ գիծիս, կուտուրիս:

Ղազար բելին Հարութ բելուն արած հանաքից շատ նղացած՝ թուղիս ա, գինիս տոն:

Հարութե արած հանաքյը իրան տանը կուճը գիրանեն տակեն թաքուն մնալիս չի: Դե տոն ա, դուրք օնի, հուրդ օնի, գենցուղ-եկուղ կաննի, անց ա կնալիս բերանից-բերան, տարածվիս շենավը մին, դըռնալիս մասալա:

Լսողը մի բոլ ծծղիս ա Ղազարե միամտութենեն երե:

35 (236). ՂՐԴՂԵՑԵՆ ՆԱ ԱՋԱՆԸ

Ղրդղեցե Թումաս էշեն քյոմիր ա բեռնալ, տարալ Թարվիզ ծախալ, պատառ չայ, ղանդ կալալ: Էշը քյարվանսարեն նաեե դուս ա բերալ, որ հղե ինի դիբի Ղըրդաղը, մի բիրդամ էշեն առաչը էրկու թորք գադանե կըտըրալն, Թումասե ըստիպալ, որ էշը տա իրանց, տանն եռ ինն, դեսուդեն խռեք տան: Թումաս հինչքան ղանչաք ա արալ, որ թորք գիդոտենքը իրան նաեե ձեռք քաշն, դըռա չի:

Թումասե նեղութուն տալը բոլ չի լալ, գիդոտանցը մինը մուտացալ ա մի սիլլա թխալ Թումասե իրեսեն, զոռ արալ՝ էշն իք օնի: Թումաս կզնվալ ա, ձեռքը գիծալ ա լակուտեն վիզեն նհետ, փռնալ, ուզեցալ ա պկեն հարի, խըղդի, մին ալ Թումասե ձեռքը մի աջան փռնալ ա, ասալ.- Դու մարքը՞ս, թա՞ քյափուր: Անմեղ տղեն խե յը՞ս խըղդիս, քի խըղճմտանք չօնը՞ս:

Թումաս աջաեեն ղանչաք, պաղատանք ա արալ, ուրթումնը կերալ, որ իրան մեխկ օնի չի: Գադենեն իրան քյոռուղն ըրիս, որ էշը իք օնն: Էտքանը բոլ չի, հալա մի սիլլա յալ իրան թխած ա, անպատված:

Աջանն ըսիս ա.- Դու մըծ մարթս, քի հվատմմ: Էտ տղեն բեց թող, գինի, էրկու ղռան փող բերի, տա քի սիլլա թխիլու հետե:

Թումաս թորքեն գիդին բեց ա թուղիս: Պատառ վախտ, որ անց ա կնալիս, աջանը Թումասե ըսիս ա.- Դե, իս բենեյմ, գինիսմ, դու վենը կաց, դեչանը փողը բերն:

Թումաս հազրի ա գյոլիս, որ աջանը գյլխեն քյալագյ ա գյոլիս, գյադան եկուղ, փող բերուղ չի: Տնիս ա բիրիս աջաեեն իրեսեն ինդի մի սիլլա յա թխիս, որ աջաեեն աշկրը կծըպողունն տալիս, իրիսն կրմրիս ա, լուզին կապ ինգիս: Այտս Թումաս ըսիս ա.- Աղա աջան, իս հղցիս նաեե ետմ ինգիս, գինիսմ, դու վըտ կաց, իմ տեղը փողն եր կալ:

36 (237). ԽՈՍՔԵՆ ԴՈՒՋԸ

Միետ խնգիհեցե Արզուման գինիս ա Մրդնեմ: Տսնալիս ա՝ թորքրը հվաքվածն մի բեցուր կտրու երե, հայ-հույն ըրիս, հարայ տալիս, ծծղուտիլիս, ուլխընալիս: Արզուման ալ բիցիրնալիս կտորը, տըսնա թորքրը հինչո՞ւ հետեյն հարայ-հրոց տալիս, ծծղոտմ: Արզուման տսնալիս ա՝ մի չոլու մըծ վարազ շենեն ըռշկին բաղերավը փխչիս ա, մի քաեե շոն ալ հետենն ըրիս՝ հչիլավ փխցրիս:

Թուրքերեն մինը՝ Հասան Ալի, Արզումանե ըսիս ա.- Արզուման, հալա տըս շները հուչո՞ւրն ծեր դերեն նի արած ըռշկնեն դիբի դես, դիբի դեն խռեք տալիս:

Մի քանե անհասկացուղ թորքր Հասան Ալու ասածեն երե հռհռալիսն:

Դե Արզումանե ալ, մարը չմըռնի, վախ չի լալ, խոսքու տակե մնացուղ չի լալ, գյուղլան երիյս լալ արի ճկտմաչեն, աշկրը թարթիլ չի լալ:

Արզուման քյասար ըսիս ա.- Հասան Ալի, խոսք չկա, տեղն ա: Ախըր մի դեր հի՞նչ բեն օնի էնքան մոլաներեն մաչեն, որ խուսկռնեն չափ ինգի, յոլա վեչ գինն, հետեն արն:

Արզումանե ասածն շատ ծանդր ա նստալ թուրքերեն երե, ուզեցալն պադիվեն կպնն:

Թուրքերեն մաչին խելունք մարթ լալ: Մաշադի Իսմայիլ ասալ ա.- Օմմեն ալ խելունք կացեք, ծեր պադևը ճնչեցեք, ծեր ասած խոսքը քշռեցեք: Մի մարթ Արզումանե խաթրեն կպնի, իմ ծեռքեն նանե պրծնի չի: Ձեր ըսածեն Արզուման շատ դուզ պադասխան ա տվալ: Խե յե՞ք ասալ, որ խե յալ լսեք... Մոլլան ձըզ հետեյ ա ազիզ, դերն ալ Արզումանե հետեյ ա ազիզ: Առաչ անպադիվ խոսքն դուք եք ասալ: Պա գիդալիս չե՞ք, որ Արզուման խոսքու տակե մանցուղ չի:

Օմեն թորքրը սասռնեն կտրալն: Արզուման, գյուլոխը դիք պահած, գենցալ ա:

37 (238). ՌՁԱ ԽԱՆ ՀԱՅ Ա ԴԸՌԱԼ

Մի տարե թարվիզեցե Հաջի խան, Միրզա Խալիլ աղեն նանե Խինգիհինե մասիլը իջարա յա եր կալալ: Հաջի խան հիլիվորած լալ: Իրան ջահիլ տղան՝ Ռզա խանե էրկու նոքյարու նետ բերալ ա դիրալ Խինգիհին, որ բահրան հվաքն, ամբար տան, որ ինքը՝ Հաջի խան, աշունքը գյո, մասիլը ծախի:

Է՜, խըլքտ հինչ ա՞ կտրիս, Խինգիհինե ջահիլնեն՝ թարվիզեցե ջահիլ տղա Ռզա խան... Մի քանե օրում Ռզա խանե համ գինի խմիլնն սվրցրալ, համ ղումարբազեթուն, համ ալ զուռնա-դհոլավ ամեն ըրակու քեփ անիլը, պար գյուլը:

Ինդի օր պդհիս լալ, որ կալերեն նետ եկած, ամբարը լցրած ցոռնեն բահրան Ռզա խանե օրվա արած քեփեն նա ղումարեն ծախսրը անջաղ լալ ծսկիլիս: Ետե օրեն հետե խյալ չիլալ ըրիս: Դե հունչուր պապական մասալն ա ըսիս. Հաջի խան ալ Թարվիզ նստած ումիդ օնի, որ. «տղաս

հարուստ շենու բահրա յա հվաքմ, իս ալ կգինմ, կծախմ, կմխիթարվմ, մըծ օքուտ եր կօնմ»:

Ալ խաբեր չի, որ Ռզա խան ամեն օր բահրան ծխիս ա, ուտիս, խմիս, ղումարբազեթուն ըրիս, զուռնա-դհոլավ քեփ ըրիս:

Աշունի թարափ Հաջի խան խաբար ա ստանմ, որ խինգիհեցեք կալից-կոտից պրծածն, նայեն վար-ցանք ըրիլիս:

Հաջի խան իրան մի քանե հավատարիմ մարթկանց նետ նստիսն ձիանցը, գյուլիս Խինգիհին՝ հարուստ բերքից ամբարած բերքը՝ հացահատիկը, ծախի, շատ եկամուտ ըստանա: Հաջի խան Ռզա խանե ծանոթներեն, Խինգիհինե քյոխվեն, աղսակալնուն նետ գինիս ա, նի մտիս ամբարը, աշկրը շաղվմն, գյուլոխը շոռ ա տալիս, որ տըսնալիս ա ամբարն համարյա դերտակ ա, իրան օզած բերք-բարիքը կավչնի: Հաջի խան զոռավ իրան պատառ հվքիս ա, դուղդուղալավ ըսիս.- Ռզա խան, օղլմ, ամբարը դերտակ ա, ըստուր քյոհնա Խինգիհին կասն, պետք ա մհեգ մասիլից ամբարը տրաքմ ինի, էս հի՞նչ խայտառակ բեն ա:

Ռզա խան հանգիստ պատասխանմ ա.- Աղա, էս տարե արաշտ լալ, համարյա մասիլ իլա չի: Տըսալմ քյասիբ, քյուսիբ ռայաթն, դուզն ասած շատ հետևաչմ բահրա հավաքելուն: Ասալմ՝ մեղքն, թող սրմացու արն, վար արն, իրաց հետե ապրն:

Դե, քաղցր լուզվենեն ամեն հինչ մինի-մինի խաբերն լալ տված Հաջի խանեն, թա տղան հինչ քյալագ լալ խաղ արած ամբարեն գյլխեն: Հաջի խան եշալ ա տղեն, արտասունքնեն մըրքավը վեր ըծիլավ, ասալ.- Ռզա խան, էրմանի ա դոնուփ սան, բաշմաքյուլ թոքուփ սան[20]:

Հաջի խան էսքան ըսիս ա տղեն, լեց ինիլավ, արտասունքնեն մրոքնըվեր վեր ըծիլավ, նստիս ձիյանը, հղե ինիս դիբի Թարվիզ:

Ռզա խանե էտ օյնը կատարելուց ետը, Հաջի խան ալ թարգիս ա Խինգիհենե մասիլեն բահրան իջարա եր օնիլը:

Ռզա խանե կադարած փորձանքը հորը՝ Հաջի խանե գյլխեն, մասալա յա դըռնալիս, տարածվմ միալավը մին:

Ամեն տեղ նաղլն ըրիս, ծծղիս, իրանց հետե ուլխնալիս:

---

[20] Ռզա խան, հայացել ես, գլխիս մոխիր լցրել ես (թուրք. թարգմ. բանահավաքի):

38 (239). ՄԱՇԱԴԻ ՕՌՈՒՋԻ ԳԵՆԳՅԱՏԸ

Քիռինգյան շինացե թաթար Մաշադի Օռուջ դոստ լալ դըռած ղուլուդեցե զուռնաչի Խաչատորե նետ: Խաչատոր քանե հետ գինիս լալ Քիռինգյան, Մաշադի Օռուջ գյոռնը լալ մուրթիս, սիմավար գիծիս, հունչուր մըծ պատվարժան ղոնաղ՝ չտըսնված հուրմաթ տալիս: Մաշադի Օռուջ դովրիբարըմը մըծ ունեցվածքի, հարգանքի-հուրմաթի ճանաչված մարթունցն միննն լալ:

Միետ հունչուր ա դռնանլիս, Մաշադի Օռուջ գյոլիս ա Ղուլուդի: Հակառակու նման, էտ օրը Ղուլուդի հրսանեք ա ինիս: Հռնքեն ալ թունդ վախտն ա ինիս: Կտրեն երե սինոտանցը մաչեն, գյուլխնուն երե դիրած ջահիլ կնանենքյը հարսանը ջհեզն լալ պար ըծիս:

Մաշադի Օռուջ ձիյանն նանե վեր ա գյոլիս, ձին մի չփարու բիհրու երե կպիս, հռնքեն թիմիշա արուղ ժողովրթեն դիբ դես, դիբ դեն կուփե տալավ առաչանմ՝ Խաչատորե դիմացը վըտ կնալիս, յիշիս Խաչատորե: Խաչատոր ալ զուռնան ըծիլավ՝ մի էս ղոլեն մարթունցն ա յիշիս, մի էն ղոլեն, թա տըսնի հո՞ւ վա պար գյոլիս, հո՞ւ վա մի էրկու շահի շաբաշ տալիս: Խաչատոր հինդա, թա Մաշադի Օռուջ էկած ա էտքան մախլուղու մաչեն վըտը իրանա թիմիշա ըրիս:

Մաշադի Օռուջ ալ ինդի ա գիդալիս, որ ինքը Խաչատորե տսնանլիս ա, Խաչատոր ալ իրան ա տըսնալիս, մախուսան ծանոթեթուն տալիս չի: Մաշադի Օռուջ շատ փիս նղնալիս ա Խաչատորե երե, ինքն իրան խռվիլիս, գյուլխովը դուռու տալավ ըսիս.- Վա՜յ, դադամ, վա՜յ նանամ, վա՜յ Մաշադի Օռուջ, քուլ բաշնա օլսն... Քիմինա՞ն օթրփ, դուրութսան, զըռնաչի Խաչադուրն նան... էվմա գյալանդա գուզի քյասիթամ, սամավար սալրամ, փադշահ հուրմաթ վերիթամ: Համա ման գյալտշայ բիր քյալմա դեմտ, Մաշադի Օռուջ խոշ գյալփ սան, աթն հարդա բաղլեյփ սան, գեդախ բիր չայ-չորաք գոյում, նո ուզուն գյոլփսան: Անջաղ զռնանի բիր բու դաղա թաթր, բիր ուդաղա թաթր դիասան զռնա սասն ա հասրաթամ... վայ դադամ, վայ, Մաշադի Օռուջ, քիմնան օթրփ դուրթ սան զռնաչի Խաչատուրն նան[21]:

---

[21] «Վայ, վայ, հայրս, վայ մայրս, վայ... Մոխիրը գլխիդ, Մաշադի Օռուջ, ո՞ւմ հետ ես նստում, վեր կենում՝ զուռնաչի Խաչատուրի հետ: Տունտ գալուց գառն ես մորթում, հեշտաեռ գցում, թագավորական պատիվ տալիս: Մի անգամ եմ եկալ՝ ծանոթություն չի տալիս: Մի բերան չի ասում՝ բարով ես եկել Մաշադի Օռուջ: Ձիտ որտե՞ղ ես կապել, գնանք թեյ խմենք, ի՞նչ գործով ես եկել... կասես թե զուռնի ձայնին եմ կարոտ: Մի էս սարին է պահում, մի էն սարին... Վա՜յ, հայրս, վա՜յ»: (թուրք. թարգմ. բանահավաքի):

39 (240). ԲԱՔԻ ՇԵՅԹԱՆ ՇԻՀԱՐԻ ՕԼՈՒՓ[22]

Թարվիզեցե Հաջի Խալիլ աղան գենցալ ա Բաքու՝ իրան ախպուրը՝ Հաջի Մուրադե ղոնաղ: Բաքու հղե ինիլուց մի օր առաչ, Հաջի Խալիլ աղեն հինչքան ազգական, պարիկամ, հնգեր, հըրըվան լալ, հվաքվալն անամներավ հղե դիրին: Հվաքված մախլուղեն շատերեն Բաքու ազգական, պարիկամ, հնգեր-ծանոթներ շատ լալ:

Ամեն մինը իրան հըրթեն մի նամակ ա տված, տանի պարիկամեն, մինը բերանացի պարվ ա ղորկալ, մինը մի թափշուրմա յա արալ, իստի օրախ, ասիլավ, ծծղիլավ Հաջի Խալիլե հղեյն դիրած:

Հաջի Խալիլ աղան Բաքու պետք ա մնալ լալ մի ամես, հալա տասն օրը թմամված վեչ, ետ ա դըռալ, եկալ Թարվիզ:

Ալլա հինչքան ազգական, պարիկամ, հնգեր, հըրևան լալ, հվաքվալն եկալ Հաջի Խալիլ աղեն գյորիշմ: Հարց, փորցն արալ, թա հունչուր ա գենցալ, հունչուր եկալ, Բաքու հունչուր շհար ա, հուր ա տըսալ, հուր չի տըսալ, նամակնեն տեղ ա հսցրալ, հուր նանե յա նամակ բերած, նման շատ բեներ: Ամենից շատ հրցրալն, թա ախըր պետք ա Բաքու մի ամես մնալ լալ... Խե՞ շատ շուդ ա ետ դըռալ, եկալ: Վերչին հարցեն պադասխան տալու հետե Հաջի Խալիլ աղան կողքեն դիրած ղալյանը մըհետ կուշտ ծծալ ա, պատառ օնքրը ետի տվալ, ասալ.

- Սիրելի աղաներ, ճիշտ է, ես նախկինում էլ եղել եմ Բաքվում: Այն ժամանակ Բաքուն էլ մեր Թավրիզի նման մի քաղաք էր: Այս անգամ ես Բաքու չտեսա, մի սատանայի քաղաք տեսա: Օրինակ, մի քաղաքում՝ վաղ առավոտյան, մոլան միներեթից վաղորդյան ազան չտա, մուսուլման մարդիկ օրը երեք անգամ չհիշեն իրենց ստեղծող Աստծուն, աղոթք կատարեն, ասացեք, խնդրեմ, ի՞նչ քաղաք: Այս բոլորը թողնենք մի կողմ: Երեկոյան պառկեցի քնելու: Մեկ էլ ինձ թվաց, թե գետինը շարժվում է, երկրաշարժ է և ինչ-որ գազանների փընչոց ու ոռնոց էր լսվում: Վեր թռա անկողնուցս, լարեցի լսողությունս... Եղբայրս, նկատելով իմ անհանգստությունը, ասաց. «Անհանգիստ մի եղիր, երկաթգծով սուրացող գնացքների թրխկոց-շրխկոցներն են և շոգեքարշի սուլոցները: Դեռ չէի քնել, որ ականջիս առավ երկաթու զիլ մի սուլոց: Նորից անհանգիստ ելա անկողնուց, լարեցի լսողությունս: «Ի՞նչ կա անհանգստանալու, Աստրախանից ժամանած շոգենավի սուլոցն է, հանգիստ քնիր»: Դեռ քուն չէի մտել, որ ծայն լսեցի: Որոշեցի՝ ամպերն են որոտում, երևի անձրև է տեղում: Մոտեցա պատուհանից դիտեցի...Աստղապատ գիշեր էր, ամպի ոչ մի ծվեն:

---

[22] Բաքուն սատանայի քաղաք է (թուրք. թարգմ. բանահավաքի):

«Շատ անհանգիստ ես երևում: Ոչ մի վտանգ չկա: Մոսկվայից ինքնաթիռն է ժամանում: Դա նրա որոտի ձայնն է»:

Տեսա, որ մնալը հնարավոր չի, եղբորս ասացի.- Ես սխալ եմ եկել: Սա իմ տեսած Բաքուն չէ: Սա սատանայի քաղաք է... Մնալ, հաշտվել չեմ կարող, ցըտեսություն:

Հաջի Խալիլ աղան մեծ հաճույքով ավարտեց իր ճամբորդության երկար ու հետաքրքիր պատմությունը՝ մեծ տպավորություն թողնելով տեսության եկած մարդկանց վրա:

Այցելուները միաբերան ստեղծող Աստծուց խնդրեցին՝ շեյթաններից փրկի մուսուլմանների Բաքու քաղաքը:

40 (241). ԴՎԵՐԸ՝ ՇԻԼԱ, ԴԻԵՐԸ՝ ԱԲԻ

Խինգիհին մի քշանաց շուդավ հայ ա ինգյալ շենը, որ՝ Ամի ապրաց եզինքը գյողրը տարալն: Դե, տեղեն ղայդան գյորա՝ մըծ, կուծի, թվանգ, մհակ փռնողը եր ա կացալ գենցալ:

Լուսը բինվալեն նհետ հայը եկալ ա, որ եզինքը ճարածն: Հայեն գենցուղ մախլողը հվաքվալն շենեն նանե դիյեր ըխպրին կոշտը: Լուսը պատառ բեցված լալ: Թևան ապերը իրիսը լվացալ ա, գյլխյեր եշալ, տըսալ Արզումանաց Քյարամ նա է ըխպիրին գյլխեն վըտը, եշալ ա Քիրամե գենցեն փոխանեն, զարմացած ասալ.- Այդա Քյարամ, էտ հի՞նչ օյին ա:

Վըչ պակաս զարմացած՝ բեննեն անտեղյակ Քյարամ ասալ ա.- Հի՞նչ ա դըռած, Թևան ապեր:

- Առաչի դոնմնմ տսնալիս տղամարթը փոխան գենի «նրքվանը՝ շիլա, դիերը՝ աբի»:

Դու մա ասիլ, եզանցը գյողնալեն հայը որ ինգած ա, մթեն տոն լալ Քյարամ եզինքը գյողնալեն հայը որ լսիս ա, խըղըճը թայդի ա ինգիս, իրան փոխանը թողած, կնգանը փոխանն ա գինալիս:

Քյոհնա այամեն ադաթ լալ: Կնանեքն ալ տղամարթունցը նման երկար փոխկերավ փոխանն լալ գինալիս: Փոխանը սիպտակ կտավա նանե կրիսն լալ: Ետ դըռնալիս փոխկրը կարմուր շիլայավ իրիսպտիլիս, դյերն ալ կապուտ շիլա քշիլիս:

Լուսը բեցված ա ինիս: Հայեն գենցած մախլուղը հվաքված ա ինիս ըխպիրին երե: Օմեն ալ յիշիսն Քյարամե փոխանեն, ծծղիս-ծծղիս, ջոր դռնալիս:

Հակառակու նման ալ էտ օրը թազաշինացե Աթա ապերը գենցած ա ինիս Խինգիհին: էտ ալ լսիս ա Քիրամե փոխանեն մասալան, գինիս իրաց շենմը նաղլը ըրիլիս:

Այտս Քիրամե փոխանեն մասալան զանգա սասու նման զնգզնգալավ տարածվիս ա սաղլամ միալը:

41 (242). ԱԿՈՒՓՋԱՆԵ ՊԱՄԱԴՈՐԸ

Թազաշինացե Ակոփջան պամադոր սիրող մարթ լալ: Հիբ որ մի խնգիեցու խոխա լալ տսնալիս, ըսիս լալ.- Ադա, քո մոր կասս, ինձ հետե պամադոր ղորկի:

Մի գյորունք օր ալ մի քանե հրվանու նհետ գյուլիսն Խինգիհին: Հալա շենը չհասած, հանդեն կըռեն նհետ յիշիս ա դիբի Կարմուր քարեն պըռկնեն, տսնալիս ա պառակը կիրմիրե ա տալիս: Միամիտ մարթը ինդի ա գիդալիս՝ պամադոր ա:

Վըտ ա կնալիս հնգրոտանցը ըսիլիս.- Խոխենք, հալա դիմացի պառակնոն յիշեցեք, է՞: Մընք բղչարնոմը պամադորնք վըրիս, կրիս չընք արսա բերի, որ կիրմիրի, համա դե խնգիհեցեք դեմի պռկնոմն ալ պամադորն վարած, կիրմիրած ա, պրըկնեն նի կալած: Ձեր հոր մըռալն չվայ տամ, խնգիհեցեք, հի՞նչ բազգադ մարթն է:

Հնգրոտենքը ծծղիս, ըսիսն.- Ակոփջան, էն կիրմիրե տվողնեն պամադոր չի, լալա յա, կարմոր լալա:

42 (243). ԱԹԱ ԱՊՐՈՑ ՔԱՇԿԸ

Աթա ապրոն կնեգը՝ Թամամ բիբին, կրկենե շատ լալ սիրիլիս: Օմեն ըրակու տնեցեք որ քոն ին լալ հնիլիս, բիրիս լալ պատառ ալուր թայդի շղղիլիս, մի թիթվ կրկենե սրքիլիս, ուջաղեն մուրմորմը թղիս, կրկենե թխիլիս, տնեցոց նաևե յալ թաքուն ուտիլիս:

Աթա ապերը գյուլխու լալ հնգյած, համա դե չգիդալու տըղ լալ դիրիլիս:

Մի տարե հացեն վընը կարճ լալ: Աթա ապերը խիյալ ա արալ, որ իրան կնեգը՝ թա օրական մի կրկենե թաքուն թխի օտի, խոխենքը ծմռանը կեսեն քողծած կմնան: Որոշիս ա մի փանդ արի՝ Թամամ բիբին կրկենե թխիլեն թարգը տա: Մի ըրակու ալ կրկենեն թխիս ա, Աթա ապերը եր ա ունիս, թաքուն տեղ պհիլիս: Թամամ բիբին զարմացած շոռ ա գյուլիս՝ մնալիս մաթալ:

Աթա ապերը հրցրիս ա.- Կնեգ, հի՞նչս կուրցրած:

Թամամ բիբին ճարը կտրած ըսիս ա:

Աթա ապերը ըսիս ա.- Ա կնեգ, էտ քաշկա բեն ա, քաշկրնն տարած: Թարգը կտաս, թա չէ, մըր տոնը քշկանոց կդըռնի:

43 (244). ԼՈՊՊԱՋ ՄԱՐԹԸ

Ղրդաղեն քյոհնադան ադաթ լալ: Օմռան օրերեն ջահիլ-ջուհուլնեն պարապ իլած վախտը, հըրթավ հվաքվըմն լալ մինեն տոնը, իրաց հետե դեսեն, դենեն խոսիսն լալ, ուտիս, խմիս, իրաց հետե քեփ ըրիլիս:

Իտի մի դաստա հնգեր լալ Աբունց Նաբի. մի՝ շատ ինքը իրան հավան մարթ, իրան ինդի միս շնորքով բեն չի լալ, ուրեշեն իլածեն ալ հավան չի լալ կնալիս:

Մի օր ալ հնգրոնեքը ասսլն.- Նաբի, էքուց հըրթը քունն ա: Գյուլականնք ձեր տոն:

Նաբի ուզիս չի լալ հնգրոնենքը գյոն իրաց տոն՝ իրան պակասպռտնեն տըսնան: Իդոր հետե տանը նանե դուս չի գյոլիս, որ հնգերնեն ալ գյոն վեչ:

Հնգերնեն յիշիս չըն: Գյոլիսն, տսնալիս Նաբի տան չի: Մարը ըսիս ա.- Քորը ալոզ ա: Գենցած ա քվոր տոնը:

Նաբու հնգերնեն նի յըն մտիս տոնը, տսնալիս՝ աշկի ինգնող մի բեն չօնի, իրան դերտակ լոպպազեթունն ա:

Տանը նանե դուսն գյոլիս, նի մտիլիս գյոմը, թա՝ տըսննք հեյվան-մեյվան, հի՞նչ օնի: Տըսնալիսն դերտակ գյոմ ա, Նաբի ալ նայե ուխոռումը կոչ եկած, գյող ա կացած: Ումուևոնց ծըծաղ ա փռնիս: Մի կոշտ ծծղարիլիսն, ըսիլիս.- Ա մըռած Նաբի, պա դու է՞շս, նի յըս մտած ախոռը: Քու իլած-չիլածը, քո ապրուստը որ թեխի յա, էս ա, մըր իլածեն խե՞ չըս հավան կնալիս: Մի չխմազ խոսքս ըսիս, մըր սըրտրն ալ նղցրիլիս:

Կասի՝ լա էն ա դըռնալիս էր, որ Նաբի հնգրամաչ դոս գյո, լոպպազլոպպազ խոսի:

44 (245). ՂՈՒԼՈՂԵՑԵ ՄԱԿԻ

Դե, միննն ալ ասմ Ղուլողեցե Մակի, Աստուծ ընդոր խասյաթն ալ թակի, մորից ծնվալ ա, թա՝ չի, դեչանը մըռնիլը ո՛չ տարեն ա գիդացալ, ո՛չ ամե-

սը, ո՛չ շափաքը, ո՛չ ալ գիրագին: Տարեն տըսնըէրկու ամեսը ջղցաքարա նման բեներ լալ:

Հունչուր ա դըռնալիս, մի գիրագի օր մնալիս ա տան: Կրիս չի դինջանա, ջանը քոր ա ինգիլիս: Որոշիս ա շեներն ըռշկին արտը՝ որ վարած ա, պատառ մոշու քոլ կա քանդած, գինի մոշը դոս տա, կրակ տա, գյո տոն, բալքա ջանը դինջանա:

Մակի գենցալ ա արտեն մոշը հվաքալ, զհմանմը թոփ արալ, ձեռքը տարալ ա խլըղեն ջուբը, որ չխմղքարեն քիսան դուս օնի, կրակը վառի, մոշը կրակ տա, տըսալ ա ջուբը դերտակ ա: Քիսան մռացած ա, թողած տան:

Ալ նղացալ ա ետ դըռնի գինի տոն, արտեն զհմանմը նստալ ա, ձեռքը դիրալ անջուկեն, բեցուր սասավ կանչալ.- Հաբի հե՛յ, ա՛յ Հաբի, ա՛յ Հաբի:

Հաբի Մակու տղան լալ՝ ութն-տաս տրեկան խոխա: Հորը սասը որ լսալ ա, նայ լալ մի կտրե՝ իրան հնգրոնացը նհետ խաղ ըրիլիս: Հորը սասը որ լսալ ա, վըտ ա կացալ, հորը սաս արալ.- Ապեր, հի՞նչ ա:

Մակի ասալ ա.- Ադա, ղավլխս մռացածմ, մանցած ա քո մոր ետկեն ծկոռումը, ղավլխս մռացածմ, մանցած ա քո մոր ետկեն ծկոռումը... Շուդ արի բեր, մոշը կրակ տամ:

Դու մա ասի, էտ քյասիբեն կնեգը տանը ուջաղեն կողքեն որ նստիս ա, պատըմ մի կուճի պտռհան կա: Կուճի պտռհաներն ալ ղրդղեցեք ծակոռ լալ ըսիլիս, Մակի ալ օմեն օր բինի տեղե որ գյուլիս ա, ղավլխը ջուբեն նաներ դոս ա ունիս, դիրիս ծկոռումը՝ որ ծնդըրեթուն վեչ արի, քշանաց ալ եր ա ունիս, նի գիծիս ջոբը, գինիս իրան բեներ:

Էտ օրը մռացած ա ինիս, որ ղավլխը եր օնի: Դե որ Հաբի շատ դես-դեն շոռ վեչ գյո՝ ղավլխը ճրիլու հետե, այստ իտի ա ըսիս, թա. «Ղավլխս մռացածմ, մանցած ա քո մոր ետկեն ծկոռումը», դե Մակի էտ բենը միամիտ տեղն ա ըսիս, համա դե շինացեք լսիլիսն, շինիլիս մասալա, շենավը մին, միալավը մին սաս գիծիս, ըսիս, ծծղոտիս:

45 (246). ԹՈՒՐՈՍ ԱՊՐՈՆ ՄՐՈՔԸ

Խինգիհեցե Թուրոս ապերն ալ իրան տղան՝ Հարութե, փսակալա ա: Տեղեն ղայդան գյորա, հառհնը առաչին քիշերը մարթեն խափմ լալ՝ քոնավ ըրիլիս, ինքը գինիս տանը մաչեն մի քյունջմ գյող կնալիս: Խափված մարթը պետք ա շոռ լալ գյո, ճարի, անամ տա, բերի քոն արի:

Դե, հառհնը՝ եղսա, բազադ լալ: Հարութե քոն ա ըրիս, ինքն ալ գինիս տանը մի պուճախմ գյող կնալիս:

Հարութ քիշերեն մի վախտ քոնե եր ա կնալիս, տըսնալիս ա հառհնը կավչնի:

Դե, հի՞նչ ասմ: Խնգհեցոց տներն ալ տոն չըն լալ՝ օմենը մինը, քի ներակ, մի միսա մադան: Էն մասալեն ասած՝ ճոնդ լա, պուճախ չի լալ: Դե, տղա՞ յըս, եք էդ միսեն մադանմը դու հառհնը ճարի, մի տեղ, որ ոչ լուս կա, ոչ՝ ճրեգ:

Հարութ պատառ խյալ-խյալ ա ըրիս, նոր մըննն ա ինգիս, որ իրան մարը օջաղմը խանծող ա թղիլիս, կրակ պհիլու հետե: Եր կանա, խանծողը եր օնի, կուրի-մուրի ըրիլավ գինի, հարսանը ճարի:

Թուրոս ապերն ալ նա է ինիս օջաղեն կողքեն քոն: Էտ տնըշենեն տղան որ խնծողա կոթը կրակը երե ձեռքն ա ունիս, կուրի-մուրի ըրիլավ գինիս, հարսանը ճրիլա, հակառակի նման խանծուղից մի կրակու կուտր վեր ա ինգիս Թուրոս ապրոն մրքեն երե, խըղճ մարթեն մրոքը կրակ տալիս:

Կասի՝ մի վախտ Թուրոս ապերը հմնչիս ա տանը նանե դոս գյո, տըսնուղը հրցնլական լալ՝ Թուրոս ապեր մրոքտ խե՞ յա կրակ ինգյած: Խըղճ Թուրոս ապերը հի՞նչ ասի, վըրեն պադասխան տա: Իտի տանը էնքան մընալիս ա, որ մրոքը մի բաբաթ դոզալմիշ ա ինիլիս, նոր Թուրոս ապերը դուս ա գյոլիս մրթամաչ:

ՁՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁՎԱՐՃԱԽՈՍՆԵՐ

1 (247). ԲԵՐ ԿԱՊԻ ԼՈՒՁՎԵՍ

Մի հիլիվր մարթ, չալիգը դեմ տված չանեն, նստած լալ տանը ըռշկին՝ հղցին կողքեն: Դիբի ըրակու լալ: Մին ալ էն ա տըսալ՝ իրան ջահիլ վախտեն մի հնգեր մարթ, ծիանը երե նստած, հղոքը նայե գինիս:

Հիլիվրը ծիավորեն կանչալ ա, ասալ.- Մըր պապրը խամ խոսքը չըն թողած: Ասածն՝ «Օմեն հինչեն թազան, ծանոթեն՝ քյոհնան»: Եք նստի պատառ սոհբաթ արնք, այտս կգինս:

Չիավրը ծիանը նանե վեր ա եկալ, նստալ քյոհնա հնգորը կողքեն, ըսկսալ հարց-փորց արիլ, անցած, գենցած օրրը հիշիլ, ներակ տալը, սրտրնեն բենիլը:

Չիավորը մի քանե նհետ ուզեցալ ա գինի, հիլիվրը թուղեցա չի: Ասալ ա.- Անջաղնի միևը-միևնե ջհիած, հալա մնա, պատառ ալ սոհբաթ արնք:

Նստալն սոհբաթ արալ, օրը մթնալ ա:

- Դե գիննք տոն,- ասալ ա հիլիվրը հնգորը:

- Պա գյուս օ՞նս, ծիս ըշտե՞ղ կապմ:

Հիլիվրը եր ա կացալ, վըտ կացալ, լուզին դուս կալալ, ասալ.- Պարիկամս, գյուս չօնմ: Չիտ բեր կապի լուզվես: Լուզիս ա արալ, որ դու վախտավ գենցա չըս:

Մթենը ինգյած, հնգերը գենցալ ա:

2 (248). ԻՆՁ ԱԼ ՓԱՅ ՕՆՄ

Մթեն քիշեր լալ: Մի քյասիբ մարթ, մի փալասմ փթատված, տանը մի քյունջում կոչ լալ էկած քողցած փորավ: Քյասիբեթունը մի թարափ, քողցածթունն ալ մի թարափից, խըղճ քյասիբեն քոնը տնիս չի լալ:

Քյասիբ տնատարը միև ալ էն ա տըսալ, տոնը մի գյող ա նի մտալ: Դեսդեն տանը մաչավը շոռ ա եկալ, ձեռքը ոչ մի բեն ինգյա չի: Սուս ու փուս, քուռըփեշման եկալ ա, որ դյուս գյո, գինի... Տընատարը քյունջեն նհետ

գյողեն երե ծծղիլավ ասալ ա.- Ադա, էտքան հի՞նչս հվաքած տնիլիս: Իս տըսալմ, ինձ ալ փայ տոր:

Գյողը տըսալ ա, որ տնատարը իրան երե ծծղիս ա, ասալ ա.- Ղորթ ա, իս մի բեն ճարա չըմ, որ տանմ: Կգինմ մի օրեշ մարթու տանը նանե կտանըմ: Համա դե, քու մարիփաքը ասի, որ էս լիգյը, շեն ըշխարքմը լութ, քողցածս ըպրիլիս:

3 (249). ՕԽՏԸ ԲԱՋԱՆԱՂՆԵՆ

Մի շենմ օխտը ջահիլ, ազափ տըղերք որոշալն փսակվն: Գենցալն մի հրևան շենմ տըսալ մի մարթ օխտը հասած, փիսած ըղչգերք օնի: Օխտը հնգեր էտ օխտը քվորտանցը՝ մարթա միևը օզալն, դըռալ օխտը բաջանաղ:

Եկալ ա մի վախտ, լսալն, որ իրաց հանրը ուլուզ ա: Որոշալն օխտը բաջանաղ մի դոնա գինն իրաց հանրեն տըսնն:

Հանրեն կնալիս շենն իրաց շենեն նանե ղալին հըռե տեղ լալ:

Օխտը բաջանաղ, սուսուփուս, սվըտվարու նման իրար նհետ հղոքը շարվալն, գենցալ: Հղեց օխտենեն միևը մի խոսք բեցա չի, մի բեն խուսեցա չի: Հասալն հաներանց շենը, մըծ բաջանաղը ասալ ա.- Էս հի՞նչ ծանդր հղե յալ: Էսքան տըղ եկալնք, մի մարթ ջիհա չի, որ մի բերան խոսընք:

4 (250). ՉՈԲԱՆ ՆԱ ԴՈՒՔՅԱՆՉԻՆ

Քաղաք չտըսած ղրդղեցե մի զըռ չոբան, մի ըշունք օր, չոմբաղը օսսեն, գինիս ա դուս գյոլիս Թավրիզ: Չոբանը զրմնալիս ա, թա էսքան շատ մարթիք ըշտեղեյն արսա եկած, հվաքված Թավրիզ: Էտքան մարթկանց հետե հո՞ւ վա հաց թխիս, փափաղ, չմոշկը կրիլիս: Ումունուց շատ զարմանք ա բերալ մի երմիշ ծախուղ դուքյանչի: Դուքյանե մաչտեղը ծլպատակ, սուս-փուս նստած լալ: Չորք թարափավը լիգը յաշիկնեն՝ տանձ, խնձոր, խաղող, չամեն լցրած: Ըստիչի լալ ըրիս, մի բեն եր ունիս ուտիս:

«Հալբաթ քոռ ա,- որոշալ ա չոբանը,- պա թա քոռ չի, էտքան միրքից խե՞ չի մի բեն ուտիլիս: Հարկավեր ա փորձիլ»:

Իստի խյալ ա արալ չոբանը, միակը մըկնալ դուքյանչուն:

- Էտ ի՞նչ ես անում չոբան, դու քոռ ես, քիչ մնաց, որ աշկս հանես,- մահակը ետ հրիլավ, նղացած ասալ ա դուքյանչին:

- Քոռը դու վըս, որ էտքան միրքեն նանե մի բեն ուտիս չըս,- պադասխանալ ա չոբանը, մի կարմուր խնձոր եր կալալ, կուծուտիլավ գենցալ:

5 (251). ՀՈ՞Ւ ԿԵՐԱԾ Ա ԲՐԻՆՁԱՎ ՓԼԱՎԸ

Աթա ապերը տղեն՝ Բաբաջանը, փսակալ ա: Դե, քյասիբ մարթ լալ: Կրեցա չի էնքան շատ բրինձավ փլավ իփի, որ օմեն հռնքավրը օտի, կուշտանա: Հակառակու նման փսացվեն՝ Բաբաջանե, փլավ չի հասալ:

Հրսանեքը որ վերջացալ ա, ղունղնեն ցըրվալն, օմեն մարթ գենցալ ա իրաց տոն: Մին ալ էնն տըսալ՝ Բաբաջան կավչնի, կորած ա: Շոռն եկալ, դես՝ Բաբաջան, դեն՝ Բաբաջան, գենցալ, տըսալ՝ նայե գյումումը, էշեն ըխոռումը նստած, վըտըրը կախ տված, իրան հետե շվշվցրիլիս:

- Այ յուրդաքոռ, տեղս հի՞նչս ըրիս, մի սհաթ ա քի յնք շոռ գյոլիս: Հինչո՞ւ նանե յս խոռալած: Ետե յա, երկաց գինի նի մտի հարսանը ծոցը,- կզնված ասալ ա Աթա:

- Իմ բենս չի, հու կերալ ա բրինձավ փլավը, թող էն ալ գինի քոն ինի հարսանը ծոցմը,- ասալ ա Բաբաջան, ընոռավը կախ գիցած վըտրը պար ածալ:

6 (252). ՀՈ՞ՒՐ ԷՇ Ա ՋԱԼԴ

Ղրդղեցե Դովի նա Նաբի աթա-բաբադան քյոհնա հըրվանրն լալ: Մինը մինավ շատ սերավ, ախպուր նման: Իրաց գյանքմ մի թթո, մի կծո խոսք ասած չըն լալ, նղացած չըն լալ:

Դե եք տըս, որ իրաց խոխենքյը՝ Պակի նա Սոկի, օխտը-օթ տրեկան վախտուց մինը միներն նհետ յոլա չըն լալ գինիս: Օրական շան թուլու նման կռվուտիսն լալ:

Եկալ ա հասալ մի օր, որ էրկու հաշտ, ախպուր նման հըրվանրը խուխենցը գյուլխոմը կռվալն, խռովալ, խոխենցը շլակալ, որ գինն շեներն քյոխվեն կոշտը գենգյատ, որ տըսնան մեղավերը որեն խոխան ա:

Խոխենքյը շլակած, պատառ տեղ գենցալն, մին ալ դովու խոխան Նաբու խուխեն ասալ ա.- Արա Սոկի, եք մըր էշրը չափ թողնք, տըսնանք հուր էշ ա ջալդ, սորին վազ տալիս:

Խուխեն էս խոսքեն երե Դովի ասալ ա.- Ադա, Նաբի, հալա վըտ կաց: Կըռըվ արուղ, խռավ գիծուղնեն խոխենքնն, մհեգ ալ մըզ էշն արած, եռ

ինած, ուզիսն չափ թողն: Ըստուց հերն անիծված: Ետ դըռ գիննք մըր քաղցր հըրվընեթունը արինք: Խե մըզ մի խուխու խըլք չօ՞ննք:

7 (253). ԿՈՒճԻ ԲԻԼԻԹԸ

Նաղլն ըրիլիս, որ մհետ թինգիտարե լալ: Թինգիտարեն գինի, ետ վեչ գյո: Աստուծ հըռե տանի:

Մի մարթա վալ օխտը խոխա լալ: Խուխենցը մարը բերալ ա օխտը բլիթ թխալ, մարթա մինը տվալ խուխենցը:

Վեցը խոխենքյը ուլխացալն: Օմենը մինը իրան փայ բիլիթը եր ա կալալ, սուս արալ, նստալ, կերալ:

Խուխենցը կուճինը յաման խոխա լալ: Խռավալ ա, բիլիթը զախ տվալ: Թա՝ կուճի ա, ուզիս չըմ:

Շոնը նա լալ դըրքեն ըռշկին նստած, բիլիթը եր ա կալալ, տարալ: Խռովուղ խոխան վայ-վայ ա արալ, լեց ինալ:

Մարը կզնվալ ա, փռնալ խուխեն մի լավ թակալ, թա՝ հա, կուճի լալ, կուճի լալ: Խռավալս, ալ խե՞ յս զախ տվալ, որ շոնը տանի, դու վալ մնաս քողցած:

Ըտուր ետը խոխան խրատվալ ա: Մարը հինչ որ տալիս լալ՝ էն մին խուխենցը նման սուս լալ ըրիս, ուտիս:

8 (254). ՂԻՂԱՆ ՋՈՒՐ Ա ԴԸՌԱԼ

Կասի՝ մի տարե, մի ծմռն օր, Խինգիհին ղիդա յըն բերալ ծախալ:

Կևի ապրոն պառավը՝ Շահում նանան, գենցալ ա պատառ կալալ, բերալ նի ածալ մի կուճի կուճոճ, բերանն ալ սիրիկավ պընդ փակալ: Կևի ապերը հարչան ղանչաք ա արալ, որ՝ «Այ կնեգ, էդ ղիդեն նանե պատառ տոր օտըմ», Շահում նանան տվա չի, թա՝ «Կալածմ, որ Սուրփ Սարքիսե տարմը շղաղած սարքմ: Խրեգ ա, կարի չըմ տալ»:

Դե, Շահում նանան ամեն օր իլիգը եր լալ ունիս, գինիս էս հրևանեն տոնը, էն պարիկամեն տոնը, իլիգը մնիս, սոհբաթ ըրիլիս: Կևի ապերն ալ եր լալ կնալիս, ղիդեն կճոճեն բերանը բինալիս, պատառ ղիդա խմիլիս: Հինչքան ղիդա խմիլիս լալ, էնքան ջուր լալ նի ըծիս, որ կճոճը լիգը մնա:

Շաղաղուկեն օրը Շահում նանան բիրիս ա կճոճեն բերանը բինալիս, որ շղաղուկ սարքի: Տսնալիս ա հի՜նչ՝ ղիդեն տըղը կճոճա նայե, ղիդեն տեղը ջիրավ լիգը: Մնալիս ա զրմացած:

Կևի ապերը կզնված ըսիս ա.- Այ կնեգ, սորին ա դըռալ: Մի թիքա օզալմ, տվա չըս: Մանցալ ա, մանցալ, թթվալ ա՝ ջուր կտրալ:

9 (255). ՄԱՆՑԱԼ Ա ԿՃԸՍ, ԴՈՒՍ ՕՆՍ

Սրդվեցե Արտեմ շատ խուխատար մարթ լալ: Իլած-չիլածն ալ թաք մի արտ լալ:

Էտ խըղճ մարքը ցորեն ա վարալ՝ կարկուտ թակալ ա, գյորե ա վարալ՝ կարկուտ թակալ ա, հաճար ա վարալ՝ կարկուտ թակալ ա: Ետե տրենեն Սարդու ղայդա յա դըռալ կարտոլ վարիլը: Արտեմ ալ ա բերալ արտը կարտոլ վարալ: Կարտոլեն քոշտը ամալն արալ, քոլ տվալ արտը նի կալալ: Արտեմ գենցալ ա եշալ, տըսալ, ուլխացալ:

Հակառակու նման էտ սհաթեն թողբըրը հվաքվալն, կուտակ-կուտակ դըռալ, իրինննակեն առաչը փռնալ, ըսկսալ գյուռգյուռալը, կծկեծան արիլը:

Արտեմ եշալ ա դիբի երգինքը, ծծղիլավ ասալ.- Հինչքան ուզիսս գյուռ-գյուռաս, հինչքան ուզիսս կարկուտ եք... Ալ քու տըսած արտը չի, որ դիեր վըտ կանաս, վեր թակս տափավն մին արս: Աս տարե մանցալ ա վեր գյոս դվեր, կզանաս, կծըս դուս օնս:

10 (256). ՔԱՉԱԼ ԽԱՉԻ ՈՒՌՈՒՍ Ա ԴԸՌԱԾ

Կասի՝ խնգիհեցե քաչալ Խաչի գենցալ ա Բաքու, մի վախտ մանցալ:

Ետ ա դըռալ եկալ շենը, ջիրին հըղցին երե ջիհալ ա մի քանե կնգա, որ կոժրը եր կալած գինիսն լալ ախպիրը ջուր բերն: Քաչալ Խաչի կնա-նունցը վընն ա արալ, հրցրալ.- Գդե՞ նաշի դոմը:

Կնանեքը մին-մինու իրեսե եշալն, թայդի գենցալ, շենը սաս գիծալ, որ.- Ասի չեք, քաչալ Խաչի ուռուս ա դըռած, եկած:

Դե շեն տեղ ա, հալա Խաչի հասած վեչ իրաց տոն, շենեն ջամիաքը թեխյա հվաքվալն, եկալ նի դըռալ Խաչունց տոնը, թա՝ տըսննք Խաչի հունչուր ա ուռուս դըռած, ուռուսը հինչուր մարթ ա:

Եշալն տըսալ Խաչի համան քաչալ Խաչի ա, որ կար, սուս-փուս նայե իրաց տանը ծլըպատակ նստած:

Շինուցուց միևը հրցրալ ա.- Խաչի, որ դու ուռուսս դըռած, ասի գիդամ ուռուսը հացեն հինչ ա ըսիլիս:

- Լեփ,- պադասխանալ ա Խաչի:

Շինացոց նանե մի քանեսը մի թալաքա ուռուսեվար գիդալիսն լալ: Ըդոց միևը ասալ ա.- Ա մըռած Խաչի, լե՞փն ըսիս, թա՝ խլեբ:

- է, օմեն տըղ հայրը հացեն լա հացն ըսիս: Ինդի տեղ հայ կա, որ հացեն՝ խացն ըսիս: Միեգ կարող ա քու տըսած ուռուսներն խլեբն ըսիս: Իմ տըսածներս ալ լեփ ըսիս:

Մի կնեգ հրցրալ ա.- Խաչի, պա ջրին հի՞նչն ըսիս:

- Նանաջան բաջի, ջրին ըսիսն կում-կում:

Նանաջան բաջին ձեռքը դիրալ ա բիրաներն, գյուլոխը տմբտմբցնելավ ասալ.- Հա յե՜, ղորթ ա ըսիս, յանի ջուրը պետք ա կում-կում խմըս:

- Գյուռխնեգեն հի՞նչն ըսիս, օղուլ,- հրցրալ ա Խաչու հարը:

- Գյոռխնագեն ըսիսն՝ լոք տամ գյոլա:

- Դե ղորթ ա, ալի, գյոռխնագը վըր մարթ ա տըսնալիս, լոք ա տալիս գյոլը:

- Օղուլ, պա խլազներն հի՞նչն ըսիս:

- Ապեր, խլազներն ալ ըսիսն՝ փախչըս չոլա:

Խաչու հարը չուբողը զիք տալավ հստդիս ա տղեն ասածը, ըսիլիս.- Ղորթ ա ալի, խլազնը մարթ տսնալոց փխչիս ա դիբի չոլը:

Խաչու հնգրոնացը միևը հրցնիս ա.- Խաչի, ուռուսը դավին հի՞նչ ա ըսիս:

Խաչի խեթ-խեթ եշալ ա հնգորը, ասալ.- Ա շան տղա, պա ուռուսեն դավա օնի՞, որ իս գիդամ, թա հինչ ա ըսիս:

- Դե ասի տըսնմ, մորեխեն հի՞նչն ըսիս,- ալլա հրցրալ ա հնգերը:

- Ուռուսացտան պա մորուխ կանի՞, որ իս գիդամ մորախեն հինչն ըսիս: Տեղարքը իդի գերմակ հիյվննե ինիս չի:

- Օղուլ, պա ուռուսը իրիննակեն հի՞նչ ա ըսիլիս,- նորից հրցրիս ա Խաչու հարը:

Խաչի շատ նղացած ըսիս ա.- Տնշենու մարթ, ինդի բենս հրցրիլիս, որ իփած հավը լսի, կծծաղի: Խե Ուռուսացտան իրիննակ կա՞, որ գիդամ ուռուսը իրիննակեն հինչ ա ըսիս: Ուռուսացտան դոզլամա վեր ինգած երգիր ա, քիշեր-ցիրկ թողբմ նիմլատած: Տեղը ոչ իրիննակ կա, ոչ ալ լոսլոնգա:

Շինացոց մաչեն մի աղլքասան մարթ ըսիս ա.- Ա մըռած Խաչի, քիյանե ուռուս չի դոս գյո: Սաստ կտրի կորե: Դու եր կաց, ծեր տան բենեն կաց, մընք ալ գինընք մըր բենեն:

11 (257). ՆԱԲԻ ՆԱ ԿԱԲԻ ՋԻՀԻԼԱՑԱԼՆ

Կասի՝ վիչեցե Հարութե տղան՝ Սարքիս, գենցալ ա դուս եկալ Ուռուսացտան մի մըծ քաղաք, ուսում առալ, դոխտոր դըռալ, եկալ Բաքու աշխադալ: Հարութ որ լսած ա տղան դոխտուր ա, եր ա կացալ գենցալ Բաքու:

Տղան բերալ ա հորը գեցեն Ղրդաղեն շորրը հանալ, տարալ համամ, վըտանը նետ դեչանը գյուլոխը քաղաքի ղայդավ թազա շորր կալալ գեց տվալ, տարալ դալլաքխանան իրեսեն, գյլխեն մազրը սարքիլ տվալ, շնորքի բերալ, մի ամես ալ ղոնաղ պահալ, հղե դիրալ շենը:

Դե Ղրդաղեն ղայդան ա՝ շինացեք հվաքվալն գենցալ Հարութե գյորաշլղը, հարց-փորձ արն, գիդան հինչ նորութուն կա աշխարքմը: Գենցալն Հարութե տըսալ, մանցալ զարմացած: Հի՞նչ Հարութ՝ վաթսուն տրեկան գենցած լալ Բաքու, քսան տրեկան դըռած, եկած ա շենը:

Հնգրոնացն նանե հրցրալն.- Հարութ, էտ հինչո՞ւրս իդի ջհհիլացալ, գաղտնիքը մըզ ալ ասի, մընք ալ գիննք ջհհիլանանք:

Դե Հարութ ալ ասալ ա.- Տղերք, Աստուծեն նանե պահմ, ծզանե կարի չըմ պահի: Դոզն ասած, իմ տղես սանադը էն ա, որ հիլիվր մարդկանց ջհհիլցրիս ա: Ինձ ալ ջհիլցրալ ա, ղորկալ:

Հարութե հնգրոնանցն նանե Նաբի նա Կաբի կպալն Հարութե յխեն, որ՝ տղետ ադրեսը տոր, մընք ալ գիննք ջահիլանանք, գյոնք: Հարութ ադրեսն ասալ ա: Շենեն դերը մի թխտու կուտուրա երե գիրալ ա, տվալ իրանց:

Քիշերը Նաբու նա Կաբու քոնը տնիս չի: Երն կնալիս, թքիս հփռնոմը, գինիս դոս գյոլիս Բաքու, դոխտուր Սարքիսե ծրիլիս:

Դոխտոր Սարքիս բիրիս ա ըտոց մի բոթուլ ճար ա տալիս, ըսիլիս.- Ըրակու քոն հնիլուց առաչ էս դեղը կես կարեք խմեք, քոն հնեք: Քշանաց շուտավ կգյոք իմ կոշտը:

Էքսի քշանոց շուտավ տղերեն մաչեն նետ Նաբի սաս ա ըրիլիս.- Ադա Կաբի, հինչո՞րս, ըրկոնաց խմած ճարը քի ջհհիլցրա՞ծ ա, թա՝ չի:

Կաբի ըսիս ա.- Դե, հալա եր չըմ կացած: Համա դե հանցա կասս ջհհիլացած հնըմ: Դե ասի տըսնմ դո հինչո՞ւրս:

Նաբի ըսիս ա.- Հնգերս, քի անե հի՞նչ թաքուն պահմ: Ըրկոնա թամահմ արալ, իս պատառ իվիլ ըմ խմալ: Դե, հի՞նչ ջհհիլանալ: Իս լափ դըռածմ ուրուրոնցու կուճի խոխա՝ փորս գենցած ա, տակս խարաբ արած:

12 (258). ԿԱՑՆԵՆ ՔՍԱԿԸ

Շատ տարե առաչ, քյոհնա այամեն, ուռուսաց թաքավերը կռըվ ա արալ պարսից շահի նհետ:

Ուռուսաց թաքավերեն զորավարները հայն լալ՝ Լորիս Մելիքով, Բեյբութով: էտ զորավարները իրաց զորքը բերալև Խադափիրհնե կարմունջավը անց կցրալ՝ Քեյվանե մհալավը գենցալ դհբի Շահսուվարեն թարափը:

Հունչուր ա դըռնալիս Սղընե քուշտեն հղցին երե մի ուռուսա սալդաթու սապոգ ա վեր ինգիլիս: Սղընեցեք ճրիսն, մնալիս զարմացած: Գիդալիս չըն, թա էտ հինչ բեն ա:

Դե էտ այամեն բեյթուն ղրդղեցոց գեցածը տրեխ լալ: Հուր խըլք կկտրի, որ էտ վընամաև ա՝ ուռուսա տրեխ: Դե, շհնացե մարթիքն, հվքվիսն ղլմղալ ըրիլիս, միևը ըսիս ա՝ ուռուսու ըղըքսակ ա, միևը ըսիս ա՝ չի, ուռուսա ծիյան թորբա յա:

Շհնացոց ղլմղալը շենեն քյոխվան լսիս ա, կնչիս ա, թա.- Եկեք տըսնմ էտ հի՞նչ եք ճարած, գիդալիս չեք հինչ բեն ա:

Քյոխվան սապոգը եր ա ունիս, պատառ դես-դեն յիշիս, ըսիլիս.- Ախմախ շան տղեք, օմեն ալ կնգա-խոխատար մարթ եք, գիդալի՞ս չեք էս հինչ բեն ա: Էս ուռուսու կացնաքսակ ա: Ուռուսնեն կացնավ ալն կըռըվ ըրիլիս: Կացիննեն շատ սոր ա ինիս, դիրիսն ըստի քսակմ, որ իրաց վնաս վեչ տա:

13 (259). ՂՈՒՆԱՂԵՆ ՈՍՊԱՎ ՃԱՇՆ ՏՎԱԼ

Մի քիյվհնեցե մհետ գինիս ա մի դզմարեցու տոն ղոնաղ ինգիլիս:

Հակառակու նման էտ տանը էտ օրը ոսպավ ճաշհն ինիս իփած: Ոսպավ ճաշը ղունաղեն դոր ա գյոլիս: Մի էրկու աման ուտիլիս ա, ետնե ծրվիս ա: Մի կոշտ ալ սառը ջուր ա խմիլիս: Քիշերեն մի վախտ ղունաղեն փորը քյոռող ա ըրիս: Տնաշենը հմնչիս ա խոնախեն ասի՝ ինձ տար դուրքը: Ինքն ալ մանակ վխիս ա գինի դուրքը՝ տընըտըռնը մի ալա կծոտող

շոն ա ինիս: Շոնը քիշերը օրիշ շներու նետ չկռվիլու հետե, տնատարը շոնը բերած ա ինիս դրքեն կողքեն կապած:

Տոնը մի կոճի խոխա յա ինիս ուրորոցումը: Ղունաղեն փորը որ շատ ա քյոռուղ ըրիս, եր ա կնալիս խուխեն մի շորու երե թիթվնալիս, դիրիս ուրորոցեն մաչմը:

Քշանաց խոխեն մարը ուզիս ա խոխան եր օնի, տսնալիս ա, հինչ՝ խոխեն տակը նայե ոսպավ լիգը: Տոնը շխուր ա ինգիս:

Ղոնաղը գյոլոխը յորղանեն տակեն նանե բիցրցրիլիս ա, ըսիս.- Բեյթուն ղլմղալ մեք արի: Դոք ալ որ մի տեղ գինեք ղոնաղ, ոսպավ ճաշ օտեք, շոնն ալ բերն դրքեն կապն, տանը խոխան հալա ոսպալ չի, սիսռն ալ կլցրի տակը:

14 (260). ՏՂԱՆ ԳԵՆՑԱԼ Ա ՆՇՆԾԱՏԸՍ

Մի տղա հըրևան շենմը նշանված լալ: Մի օր եր ա կացալ գենցալ նշնծատըս:

Տեղեն ադաթը գյորա, տնեցեք մի մհնավ երն կացալ, տանը նանե դոս եկալ, որ փըսեն նա հռհնացոն իրար նետ խոսն: Փըսեն իրան աղա մարթու տեղ դիրիլավ, մի բերց դիրալ ա գյլխտակեն, մաշկեն երե բոյավը միհն խոտոր ա ինգալ, վըտրը ալ վեր հանալ:

Հռըհնացուն ալ տոնը սիրբիլա մհնավ մի ավիլ եր ա կալալ նի մտալ տոն: Տանը մաչավը դես ա գենցալ, դեն ա գենցալ, տըսալ ա նշանածը խոսցրիս չի: Ճարը կտրած ինքն ա խոսքը բեցալ: Մուտացալ ա նշնածեն, ավելավ թխալ վեր հանած վընններեն ասալ.- Հի՞նչս էծու նման խտորուվս ինգած, գեփրտ վեր հանած: Եր կաց մարթու նման նստի ծլպատակ, իս ալ որ տոնը եր հվաքմ, սիրբմ:

Փըսեն տըսալ ա ինքը բեշնորք ա խտորու ինգած, եր ա կացալ, վընրը հվաքալ, ծըլըպատակ նստալ, մանցալ խված, կրեցա չի մի բեն ճարի նշնածեն պատասխան տա:

Հառհնը ըսկսալ ա տոնը հվաքիլը, սիրբիլը:

Փըսեն պատառ խիյալ-խիյալ ա արալ, իրան նանե անկախ ասալ.- Իս քու ձեռքեն ավիլը որ օտըմ, հի՞նչ կդըռնի:

Հառհնը մուտացալ ա, ավիլով թխալ նշնածեն գյլխեն, պատասխանալ.- Խե՞, դու մըր քյամար է՞շնս, որ ուզիսս ավիլս օտըս:

Փըսեն ալլա մանցալ ա մաթալ: Պատառ խիյալ ա արալ, ասալ.- Պա դու գիդալիսս, որ գենցածմ լալ դոս եկած Գյանջա: Քիշեր-ցիրկ փարե յըմ

կացած, քռնքած, փող ըշխադած, բերած, որ հըրսանեք արընք, փսակվընք: Համալ քի հետե նախշուտ-նախշուտ կամփետմ բերած, եք կողքիս նստի, մի հափուռ տամ, քաղցր-քաղցր կեր:

Հռհնացուն ծեռքեն ավիլը վեր ա դիրիս, գյուլիս նշնածեն կողքեն նըստիլիս:

Փըսեն մի հափուռ կամփետ տալիս ա նշնածեն, համալ ըսիլիս. – Կթողըս միհետ քու թոշը պաչմ:

Հռհնացուն նղացած եր ա կնալիս, վըտ կնալիս, ըսիլիս.- Խե՞ իս վարթա փոնջմ, կարմուր խնձորմ, հի՞նչ ըմ, որ տեղեն երենողը ինձ ըսիս ա՝ թող միհետ թոշտ պաչմ:

- Ինձա կման հո՞ւ իրավունք օնի քու թոշը պաչիլու,- վերծակ դըռած ըսիս ա փըսեն:

- Դե գինիսմ գղեցեն մասնը եր ունիլա, դերն ըսիս ա՝ թող թոշտ պաչմ: Գինիսմ ջիրու, պառավ կնեգ ա ջիհիս: Կոժը իքմ ունիս, լցրիլիս, շելակ տալիս, ըսիս ա՝ թող թոշտ պաչըմ: Չոբան Հաբի մի ավիլ ա բիրիս, ըսիս ա՝ թող թոշտ պաչմ: Դու էրկու կամփետս տվալ, ըսիսս՝ թող թոշտ պաչմ: Խե՞ մի թոշը քանե մարթ կպաչի: Պա իս մեխկը չը՞մ,- ըսիս ա հռհնացուն, ավիլը եր ունիս, դուս գյուլիս տանե:

Փըսեն ինքը իրան հաշիվ տալավ հմբրիս ա նշնածեն թոշը պչողնեն, գյուլոխը քորիլավ ըսիլիս.- Պա ալ տակեն ինձ հետե հի՞նչն թողած:

15 (261). ԱԿՈՒՓՋԱՆԵ ԳԵՆԳԱՏԸ

Մի տարե Թավրզու նհետ հայոց առաջնորթը եկալ ա դուս եկալ Դրդաղը՝ տըսնի հի՞նչ կա, հի՞նչ չկա, դովրիբարեն հայրը հինչո՞րն ըպրիս, հի՞նչ գենգյատ օնն, հի՞նչ չօնն:

Առաջնորթը մի օր Թազա շենմն լալ: Դուլխանաց Հարաբետ մասխարաչի մարթ լալ: Խյալ ա արալ, որ հարկավեր ա մի բեն արիլ, առաջնըվըրթեն պատառ ծծղցրիլ: Հակառակու նման էտ օրերեն ալ Ակոփջանե էշը գյոլ կերած ա ինիս: Ակոփջան ալ աշխարքեն միամիտ մարթն ա լալ:

Հարաբետ կնչիս ա Ակոփջանե, ըսիլիս, որ.- Գինս առաջնվըրթեն գենգատ արա, որ իմ էշը գյոլ կերած ա: Քի մի էշու արժեք փող կտա, կգինս մի էշ կօնս:

- Պա իս կարի չըմ առաջնորթեն նհետ գրափառ խոսիլ,- ըսիս ա Ակոփջան:

- Հինչ պետք ա իս քի կսվրցրմ, դու հուշյար մարթս, մտետ սորին կպահըս:

Ակոփջան համաձայնվում ա: Հարաբեթ ալ տնիս ա, մի քանե քյալմա խոսք սվըրցրիլիս, դուրկիս առաջնորթեն կոշտը:

Ակոփջան գինիս ա նի մտիլիս առաջնորթեն նստած օթախը, ըսիլիս.- Սրփազան հայր, ի վերին սարեն, ի վերին ծորեն, ծախկաթավալն իգյալի, իմ մոխրաթավալին մաքրազարթյալս քեզ:

Առաջնորթը խիյալ-խիյալ ա արալ, Ակոփջանե ըսածեն, նանե բեն չի գյուլոխ ինգյալ, ասալ ա.- Ակոփջան, նորից ասա, չհասկացա:

Ակոփջան իրան ասածն ալլա կրկնալ ա:

Առաջնորթը ալլա բեն չի հասկացալ: Ասալ ա.- Ակոփջան, ծեր ղրդղվարի բառբառով խոսի, տըսնմ հի՞նչս ըսիլիս:

Ակոփջան ասալ ա.- Սրփազան հայր, էշս գյոլ կերած ա: Քյասիբ մարթըմ, կրիս չըմ էշ օնիլ: Մանցածմ շլակա տակե:

Առաջնորթը ըսիս ա.- Այ ավանակ, դե շոդ ասի՝ էշս գյոլ կերած ա: Ինծ մե բեն օքնի, իս ալ հենգ դռան տամ, եր կալ գինի կորե: Ալ հինչո՞ւվս մի սհաթ ինծ չարչարած, քոշնան կերած դոնու նման կմկմալիս:

Ըսիս ա, ջոբեն նանե մի արծաթ հենգ ղռնանոց դոս ունիս տալիս Ակոփջանեն: Ակոփջան ուլխնալավ եր ա ունիս գինիս:

Առաջնորթը ծծղիլավ գյուլոխը դոռե ա տալիս, ըսիլիս.- Էս Դուլխանի սարքած օյինբազեթունը կինի:

16 (212). ԿՌՎԸ ՅՈՒՐԱՆԵՆ ՀԵՏԵ ԼԱԼ

Մի շենմ մի քյասիբ մարթ ա ինիս: Հինչուր ա դռնալիս էտ մարթեն կնեգը դես տալավ, դեն տալավ մի թազա յորղան ա սրքիլիս: Գյողըրը տսնալիսն:

Քիշերը քոն ինած տեղը էտ մարթ նա կնեգը լսիսն, որ իրաց տանը կտրեն ղալմաղալ ա գյոլիս:

Կնեգը մարթեն ըսիս ա.- Ա մարթ, եր կաց տըս հու վըն, հինչու հետե յըն ղլմղալ ըրիլիս:

Մարթը ըսիս ա.- Ա կնեգ, քիշերվա կեսեն մըր հինչն ա մանցած, որ իս գինմ, տեսնամ հուվն, հինչն ըրիլիս, անցավ գյուլոխս դիրմ ղլմղալու մաչե: Հու վեր որ կանն, թող ինն: Մի բեն, որ մըզ վնաս չըն տալիս, թող ղլմղալ արն, թողն գինն, կորչն: Մըզ խնգարմ չըն:

Կնեգը մարթեն օդդղ չի տալիս, թա.- Լա դու իտիյս: Վախկոտս: Ըտոր հետե յալ իստի մանցածնք քյասիբ: Բալքա գողն բին-մենն գյողացած, բերած, որ կես արն յոլա չըն գինիս: Մարթս, գինի կես արի, հալբատ մի բեն ալ քի կտան:

Խըղճ մարթը ճարա կտրած, յորղանը գիծիս ա ուսերեն, դուս գյոլիս: Ցորտ քիշեր ա ինիս, գյողրը յորղանը թռցրիլիսն տնիլիս: Խըղճ մարթը ետ ա դռնալիս, նի մտիս տոն:

Կնեգը վրազ հրցրիս ա.- Այ մարթ, ղլմղալը կտրվալ ա, գիդացա՞ս հինչ ղլմղալ լալ:

Թա.- Հա, մըր յուրղանեն գյլխումն լալ:

17 (263). ՄՈՒՐԱԴԵ ՀՈՒՋԱԹ ԿԱՐԹԻԼԸ

Թազաշինացե Մուրադ մհետ գենցալ ա Խինգիհին: Մի հիլիվր մարթ մի գիր տվալ ա Մուրադե, ասալ.- Ղորմի հորտ, Մուրադ, էս գիրը կարթի տըսնմ հի՞նչ ա գիրած:

Դե, Մուրադ անգրագետ մարթ լալ, ոչ վարժատոն լալ գենցած, ոչ ալ՝ գիր լալ ճնչիլիս: Հիլիվերեն ձեռքեն գիրն իք ա ունիլիս, ըսկսիս կարթիլը. «Ապեր ջան, ջան դու ջան, իմ մար: Իս սորինմ, բենս հաջող ա: Շենը եկուղ ինի, շուդավ փող կղորկմ»:

Մուրադե գիր կրթիլեն երե հիլիվիրը զրմացած ըսիս ա.- Մուրադ, էտ հի՞նչս կրթիլիս: Ախր էտ նամակ չի, հուջաթ ա:

Մուրադ նղացած պատասխանմ ա.- Այ հարն օրհնած, դե շուդ ասի հուջաթ ա, իս ալ հուջաթվարի կարթմ: Պա ինդի իմ գիդացալ, տղատ ղարիբբունոմ ա, նամակ ա ղորկած, իս ալ նամակավարի յըմ կրթեցալ: Դե, մեղքը քունն ա: Ինձանե նղանաս վեչ:

Մուրադե խոսկերեն երե խինգիհեցե հիլիվիրը մնալիս ա զարմացած: Ալ կրիս չի մի բեն ճարի ասի:

18 (264). ՄԻ ՉԱՄՉԻԳ ԻՍ ՇՈՒՊՄ ԿԵՐԱԾ

Կասի՝ թազաշինացե Բաբաջան շենեն ամեն տան հաց լալ կերած: Ծմռան մի օր շինացեք հվաքվալն Բաբաջանե ասալ.- Ասօր խաշիլ ուտիլու օր ա: Դու շատ տըղս հաց կերած: Գինընք ձեր տոն, Սանդուխտ զիզան խաշիլ իփի, օտնք:

- Աշկես երե,- ասալ ա Բաբաջան, շինացոց հետն արալ, հվաքալ տարալ տոն:

Սանդուխտ զիզան որ խաշիլը իփալ ա, ուզեցալ ա ըմնեքը գիծի, Բաբաջան գենցալ ա կնգանը կոշտը, որ ասի, թա հուր ամանը եղը շատ արի, հուր աման խաշիլը խրեգ անի, վըրեն թանը խրեգ անի, որ խաշիլի օնմեց հերիք տա: Խըղճը հալա խոսքը թմամած չի լալ, որ կնեգը կզնված չամչիգավ թխկցրիս ա Բաբաջանե քաչալ գյլխեն, ըսիլիս.- էտ քու բենը չի: Դու սուս արի, գինի մարթունցը կողքեն վեր ինգի քու տեղը:

Բաբաջան սուս-փուս գյոլիս ա իրան տեղը նստիլիս, խիյալ-խիյալ ըրիլիս, թա կնեգը հինչու հետե յա չամչուգով թխալ գյլխեն: Շինացեք որ խաշիլը ուտիսն, օմեն ալ ջամրը մկնիսն դիբի Սանդուխտ զիզան ըսիլիս.- Համավ խաշիլ լալ, մի չամչիգ ալ նի գիծի:

Տսնալիսն Բաբաջան սոս ա արած: Ըսիսն.- Բաբաջան, պա դու մի չամչիգ ուզի՞ս չըս:

- Իս մի չամչիգ շուդմ կերած,- գյուլոխը քորիս ա Բաբաջան:

19 (265). ՃՂՈՊՈՒՐ ՕՏՂԸ ՃՈՒՂՈՒՊՈՐ ՕՏԻԼԸ ՀԻՆՉՈ՞Ր ՂԱԴՂԱՆ ԱՆԻ

Կասի՝ մի խոխա ճղոպուր շատ լալ ուտիլիս: Ամռնը-ծմռնը կերածը ճղուպոր լալ: Խոխեն մարը շատ ա վխիս, ըսիս ա որ՝ էսքան շատ ճղոպուր օտիլը խոխեն երե ուլուզեթոն կբերի: Սորունը էն ա, մհետ խոխեն տանմ հաքիմեն կոշտը:

Մի օր խոխեն տնիս ա հաքիմեն կոշտը, խոխան շատ ճղոպուր ուտիլեն երե գենգատ ըրիլիս:

Հաքիմը ըսիս ա.- Ասօր խոխան տար, էքուց բեր:

Էտ կնեգը խոխան տնիս ա: Էքսի օրը բիրիլիս նորից հաքիմեն կոշտը:

Հաքիմը հինչ որ պետք լալ, խոխեն խրատ ա տալիս: Մորն ալ հինչ որ պետք լալ, ըսիլիս: Խոխեն մարը մնալիս ա վըտը:

Հաքիմը ըսիս ա.- Խե՞ յըս վըտը, ալ բեն չօնմ ըսիլա: Կարողս խոխատ եր օնիլ, գինիլ:

Խոխեն մարն ըսիս ա.- Իս մի բենու երե զրմացածմ, ընդուր հետե յըմ մանցած վըտը: Էտ մի-էրկու խոսքը խի՞ ըրկե չըս ասսլ, մին ալ ասօր ըս ինձ բերիլ տվալ:

Հաքիմը ասալ ա.- Ըրկե իս ճղոպորում լալ ուտիլիս, իս ճղոպոր ուտիլուց խոխեն հինչո՞ւր ճղոպոր օտիլը ղդղան արմ:

20 (266). ԹՈՒԹՈՒՆԵՆ ՄԱՆԻՆ ԳԻՂԱԼԱՑԱԼՆ

Մի քշանաց, մի շենա մարթիք, մի ղարիբ մարթու սասից հվաքվալն շենեն մաչեն մեյդանչան:

Ղարիբ մարթը ըսիս լալ.- Թութունմ ծխիլի՞ս, թութո՞ւն... Հու որ էս թութուն քաշիլը սվըրի, էն մարթը ջահիլ կմնա, ընդուր ետե շոն չի հաջի, տոնը գյող չի մտի:

Շենեն շատ մարթ մի-մի քիսա մի չուբուղու նետ կացալն, ըսկսալ ծոխ անիլը:

Շենմը մի խըլքը գյլխեն մարթ լալ: Չուբուղ քաշողնուն կանչալ ա մի տեղ, հրցրալ, որ.- Թութուն ծախող մարթեն խոսկերեն մանին դուք հասկացալ չեք, ըսկսած եք չուբուղը քաշիլը, չեշած, որ շատ դուզ խոսկր ա ասալ:

- Հունչո՞ւր,- զարմացած հրցրալն քաշողնեն:

- Մասալան, ասալ ա. «Չուբուղ քաշուղը միշտ ջահիլ կմնա», յանի՝ քի յաշանմիշ չի ինի, կուլուզանա, ջահիլ կմըռնի»: Ասալ ա. «Չուբուղ քաշողուն երե շոն չի հաջի», յանի քի շուդ կպռավի, միակ եր կօնի ծեռքը: Դե պարզ ա, որ միկավր մարթեն երե շոնը դիժեր կհաջի: Մին ալ ասալ ա. «Չուբուղ քաշողեն տոնը գյող չի մտնի»: էտ ալ ա դոզ ասալ: Դե, մարթ որ չոբող քաշիլը սվըրալ ա, ալ կարի չի թարգի, այտս իլած-չիլածը կծախի, կտա թութունու, տոնը դերտակ կմնա, գյող չի մտնի:

21 (267). ՔՅՈՒԽՎԵՆ ԱՐՏԸ ԾԱԾԿԱԼՆ

Մի տարե մի ըմռնոց ըրկուն թարափ, մի շենա մախլուղ իրաց տան կտուրնան նստոտած, հացն լալ ուտիլիս: Մին ալ մարմանդ մի քամե ա եր կացալ: Շենեն ըռշկին ցորնեն արտըրը, որ հասածն լալ դղնոտած, ծեռնու ռանգ դեռած, ըսկսալն օրորվիլը, հասած հասկերեն ծնդուրթունից քշըբեցուր արիլը:

Դե ավալ թուլք-թավաքկի մարթինք շատն լալ: Մանցալն խիյալ-խիյալ ըրիլիս, թա.- էս ա արտրը փախալն, մընք կմնանք առանց հաց:

Վերչը որոշալն, որ՝ մընք ջհանդամը, հինչուր ինի մի թահրավ յոլա կգհննք: Քյուխվեն ղոնաղնեն շատն ինիլիս, քյուխվեն արտը որ փախչի, քյոխվան ղունուղնոն ըռշկին սվիրիս կմնա:

Բերալն որոշալ, որ.- Եկեք մարթս մի կարպիտ եր օննք գհննք քյուխվեն արտը ծածկնք, քամեն տանի վեչ: Քյոխվան մեղք ա:

Շինացուց ըսծնեն նա ըրծնեն մին ա դռնալիս: Մարթա մի կարպիտ եր'ն ունիս, գինիս շոռ ըծիս քյոխվեն արտը ծցկիլիս, իրաք ալ կարպետնոն երե խուտուրա ինգիս, քունավ ընցնիլիս:

Էքսի քշանոց քոնե երն կնալիս, տսնալիս, հի՜նչ...՝ օմեն արտ իրան տեղը նայե վըտը, քամեն կտրած ա: Մինջա քյուխվեն արտնն կոխ տված, քոռ արած՝ վեղեն հավասար արած:

Էս դոնոմ ալ որոշիսն.- Փառք Աստուծեն... Մըր արտրը որ մանցածն: Կալեն երե մարթս մի ջվալ ցորեն կտաննք տանք քյուխվեն:

22 (268). ՄԵՂՔԸ ԴԵՐԵՆ ՄԱՍԱՆՆ ԼԱԼ

Կասի՝ մի տարե ըշունք դեմ թողբը եկալ ա նի մտալ սար-ձոր ծածկալ: Ոչ թոռ ա եկալ, ոչ ալ քաշվալ ա, գենցալ: Մի քանե շափաթ մանցալ ա նի խցալված: Թողբեն ձեռքեն շինացեք զարն եկալ. որոշալն գինն թակն, թողբը խռեք տան՝ քաշվի գինի, կորչի:

Շենեն դերը նի ինգալ առաչ, շինացեք ալ հետեն, մարթա մին ավիլ, ծխավիլ, միակ՝ հուր ձեռք հինչ որ ինգալ ա, երն կալալ գենցալ թողբեն վեր թակալ: Շինըհավան, սաղ օրը հինչքան թակալն-թակալ, թողբը փախա չի, մանցալ ա իրան տեղը:

Շինացեք խիյալ-խիյալն արալ, ասսլ, որ.- Իստի բեն չի ինի: Տեղս մի մանի կա, որ էսքան թկիլեն ետը թողբեն փախալ չի:

Եշալն տըսալ, որ դերը ավիլ-ծխավիլի, միակեն տեղը ալաթեն մասանն ա բերած թողբը թկիլիս: Դե, դերը որ մսանավը թխիլիս ա թողբեն, թողբը մսանեն ծկերավը քլքոլա դուս ա տալիս, իրան հետե խաղ ըրիս:

Որոշիսն, որ դերեն մասանն ա մեղավոր, որ թողբը փխչիս չի: Ջիրավն դռնալիս դերեն, էնքանն թկիս, որ խըղծեն ոչ գեցեն ա շոր մնալիս, ոչ ալ՝ մրքոմը մազ:

23 (269). ՏՀԱԼՆ ՎԱՐԱԼ

Կասի՝ մի տարե մի շինացե մարթ իրան տղեն նհետ իրաց արտը վրիսն լալ: Կեսօրեն ետն դըռալ, հաց կերալ, դինջացալ: Հացեն նհետ տհալն լալ տարած, արտմը կերած, վսկռնեն ալ ծրոմը վեր ածած:

Մին ալ էնն տսնալիս, որ օմեն մի վսկոռու երե հազար միրջիմն ա հվաքված:

- Պա որ արտը տհալ վարնք, մի տարմ քանի հազար գյլոխ հեյվան արսա կգյո: Ալ խե՞ յընք ցորեն վրիս, մի տարե յիշիս, որ էրկու հասկ արսա գյո: Սորունն էն ա՝ ցորենը թարգնք, իլած հիյվնեն մորթնք, տհալ արնք, բերինք վարնք:

Էտ տարեն էտ շենեն օմեն հրվանն ալ աչքն տալիս իրաց տհալ վարող հըրվանեն, իրանք ալ հինչքան տավար-ապրանք օնն, մուրթուտիսն, տհալ ըրիս, թեխյա արտրը ցորնեն տեղ տհալ վրիս, էն ումուդավ, որ գյորունքը օմեն մինը անթիվ, անհամար տավարի, ապրանքի տարն դռնլական:

Տարեն նհետ ա գյոլիս, գյորինք ա գյոլիս, ոչ մի արտմ ոչ մի բեն ալ կնաչիս չի:

Սաղ շինացեք մնալիսն քողցած, բիրաննեն գյլխյեր արած: Էտ օրվանից դեչանը ասօր էտ շինացոց անմը մանցալ ա տհալ վարողնե:

24 (270). ՂԵՎԻ ՆԱ ԿԵՎԻ

Կասի՝ ղրդղեցե Ղևի նա Կևի լա խոխա վխտուց պընդ հնգերն լալ: Հինչ արիլն լալ, հինչ օտիլն լալ, մի տեղ լալ հնիս:

Մհետ մի հղոք գհնիս տեղը տըսալն մի ղուշ մի ծառա երե բուն ա սարքած, ինքըն ալ մաչեն նստած:

Կևի ասսլ ա.- Ղևի, դու ղանշար կաց, իս գինմ ղուշը փռնմ:

Կևի որ եռանհնալ ծառեն, ղուշը թռալ ա, նի մտալ ծառեն տակեն պնդոցը: Կևի ասսլ ա.- Այ ղուշ, դո քի էտ կուծի տեղավը կրեցալս թռի, նի մտի պնդոցը, գիդալիսս իս կարի՞ չըմ:

Ասսլ ա, ինքն ալ ծառեն նհետ լոք տվալ նի հնգալ պնդոցը:

Պնդոցը շատ բեթահր լալ: Կևի կրեցա չի դոս գյո: Ըսկսալ ա լեց հնիլը:

Ղևի ասսլ ա.- Կևի, լեց մա հնի: Դու դմաց, իս գինմ շենեն նհետ կրակ բերմ, պընդոցը կրակ տամ, հղե բենմ, դոս եք:

Ղևի վազ ա տալիս, գհնիս իրաց տուն, օջաղեն նանե մի խնձղակոթ եր ունիս բիրիս, պնդոցը կրակ տալիս, իրիլիս: Յիշիս ա տսնալիս Կևի կռնքնեն բեց արած, կոչ ա եկած ծառեն տակեն: Կզնված ըսիս ա.- Կևի, պա լա քու հնընգրեթոնտ է՞տ ա: Դու ղուշը խրավալս կերալ, մի թիքա ինձ հետե պահած չըս: Բոլլի, մհեգ ալ կրքնետ բեցս արած ծծղիս, ինձ տնազ տալի՞ս:

25 (271). ՇԱՏԸ ՀԱԼԱ ՆԱՅԵ ԾԻԼԸՄԱՆՄԸ

Կասի՝ քյոհնա վախտը Ղրդաղեն Դզմար միալմը ղայդա լալ: Տղմարթկանց փոխանը կրիլուց էրկու փոխկրը մին-միհնու նհետ կպցնող ըղվեսանքը կարմոր, կապուդ, կանաչ ըռանգի մախմուրիցն լալ կրիլիս:

Միհետ մի դզմրեցե տղա նշանված ա իհիլիս Քեյվանեն միալմը մի ըղչիգան նհետ: Մի օր եր ա կնալիս, գհնիս նշնծատըս:

Դե հղեն շատ երկար ա իհիս: Գհնիս ա քիշերը ղոնաղ իհգիլիս Վհնան շենմը մի քյոհնա ծանոթ մարթու տան: Դե բիրիս ա ղունաղեն սորուն հորմաթ տալիս, տղեր բհնալիս: Ղոնաղն ալ շորրը հնիս ա՝ քոն իհիս: Քշանաց շուդավ եր ա կնալիս, շորրը գհնալիս, հղե իհգիս, գհնիս դուս գյոլիս նշնածեն տոնը:

Նշնածեն մարը բիրիս ա փըսոն ըռշկհն սոփրա բհնալիս, որ հաց դիրի: Մի բիրդամ յիշիս ա փըսոն ըղվըսանքեն, մնալիս զարմացած: Հրցրիս ա.- Փըսե, էտ ըղվեսանքտ էտ հի՞նչ ա:

Փըսեն ալ իհդի ա գիդալիս՝ հասհն մախմուր ըղվեսանքն տըսած, հրցրիս ա.- Մանակ էտ չի, շատն նայե ծիլըմանմը:

Հասհն զրմացած տսածեն նանե, ըսիս ա.- Այ տնշենա տղա, էտ ըրվալիսը խրեգ ա, հալա շատն ալ ծիլըմա՞նմն ա:

Բենեն բեխաբար փըսեն մին ալ յիշիս ա ըղվսանքեն, տսնալիս հի՞նչ՝ մախմուրից ըղվսանքը փոխանեն երե չի: Իրան համեստությոնը նայե բեցբիցի հար: Մնալիս ա գյուլոխը կախ՝ խաջալաթ:

Դու մա ասիլ, որ էտ միամիտ տղան որ առաչհն քիշերը եկած ա Վհնա ղոնաղ իհգած, էտ տնըտրռնն ալ նշանլու աղչիգ ա իլած: էտ տղան որ շորրը հանած ա քոն իհած, ըղչիգանը աչքը մախմուր ըղվեսանքեն փռնած ա: Եր ա կացած, ըղվեսանքը բուք տված, այտս ըսեղակարավ մի թալաքա փոխանը բանդ տված, այտս խըղճ նշանլու տղեն խայտառակ արած:

Փըսեն հասոն ուզիս լալ ասի, որ ըղվեսանքեն մահուդեն նանե շատ օնն, իրաց ծիլըմանմը պահած:

26 (272). ԱՌԱՉ ՎԸՆՆԱՎՐԸ ԿԵՐԵՔ

Կասի՝ միհետ քյոհնա ըյամեն Քեյվանե միալեն նհետ մի ութն-տասը մարթինք գյոլիսն Ղըզմարեն միալմը աղչիգ ուզիլու մհնավ ղոնաղ իհգիլիս:

Տնատըռնն ալ մարթու տալու աղչիգ ա ինիլիս: Բիրիսն ղոնողնոն հունչուր պետք ա հրգիս, պատիվ տալիս: Հացն ուտիլեն ետը որ ըսկսինն դեսեն-դեներն սոհբաթ արիլը, տնատըռնը կնեգը ղունողնուն աշկեն քաղցր ըրվալու հետե բիրիս ա ղունուղնան ըռշկին մի քանե տեղ բուշհաբավ չամենչ ա դիրիլիս՝ չարազու հետե:

Դե, էտ չամենչը հի՞բն լալ կալած, նի ածած մի պտպոճակ, դիրած տանը քյունջումը, Աստուծ գիդա: Դու մի ասի, տեղտ միրջիմն ա արսա յըկած ինիս, քողցած նի դըռած չամենչեն մաչը: Միրջիմնը, հինչ միրջիմնը՝ օմեն մի չամենչեն երե ութն-տասը հատ: Տան քյոնջմն մթեն ա ինիս, էտ կնեգը միրջոմնը տսնալիս չի:

Ղունողնոն ըռշկին տալիրքնան նանե մրջիմնեն ըսկսիսն փախչիլը: Ղունղնեն ինդի յըն գիդալիս, որ չամենչը էրկու թահր ա, մինը՝ վընավր ա, մինն ալ՝ առանց վընննե:

Ըսիս ա.- Ադա, առաչ վնավր չամենչը կերեք, ետնե՝ առանց վընննե:

27 (273). ՀԱՄԱ ԽԱՓԱԼՄ Է՞...

Միետ մի արանա մարթ, միհն ալ մի սարեցե մարթ եկալն մի շենմ մի քյասիբ մարթա տոն ղոնաղ ինգալ: Ըրկոնուն պատառ դեսեն-դենեն իրաց հետե սոհբաթ ըրիլեն ետը, տնատարն ասալ ա.- Խոնախա, ձեր քոն ինիլու տեղը կողքեն ութախմը հազր ա, երեք, գենցեք քոն ինեցեք, դինջացեք:

Խոնախենքը գենցալն նի մտալ իրաց տղերը, սուս արալ: Սարեն շինացեն միհն ալ լսալ ա, որ արանոցոն գյլխտակեն մի բեն չխչխկալիս ա:

Հրցրալ ա.- Խոնախա, էդ գյլխտակենտ հի՞նչ ա:

- Ճղոպուր ա, պետք ա քշանոց տանմ սարեն շինքրկնոմը բրթա նհետ փոխմ:

- Պա քո գյլխըտակենը հի՞նչ ա,- հրցրալ ա արանեցեն:

- Պա՛հ, քու տոնը շեն մնա, էս լա ըստուծանաց լալ, որ մընք տեղս ջհհալնք: Իս ալ բուրթմ տնհս ճղոպուրու նհետ փոխիլա:

- Դե որ իստի հաջողվալ ա, եք լա բարաբար շելակնես փոխնք:

Ըսիսն, համաձայնվիս: Սարեցեն արանցոն շելակն ա քշանաց շուդավ եր ունիս գինիս, էն խոնախան ալ՝ էն միհնհ շելակը: Ըրկոքան ալ իրաց մտքոմը օրախ-օրախ ըսիսն՝ համա խափալմ է:

Լուսը որ բինվալիս ա, արանցին մի տեղ պարկը վեր ա դիրիլիս, թա տըսնի հունչուր բուրթ ա կալած: Պարկեն բերանը բինալիս ա, տսնալիս,

հի՞նչ բորթ՝ մամուռն ա: Ըշկերեն հվտացա չի: Պարկը թափա տվալ, աշկրը բիցի-խուփ արալ, տըսալ ա՝ չի, բուրթ կավչնի, մամուռն ա:

Սարեցեն ալ շատ ա գենցալ, թա խրեգ, Աստուծ գիդա: Որ ինջիմիշ ա ինալ, պարկը մի տեղ վեր ա դիրալ, որ մի էրկու ճղոպուր կոտրի օտի, սըրտը թոռանա, պարկեն բերանը բինալիս ա, մնալիս քրացած: Հի՞նչ ճղոպուր, հի՞նչ բեն, պարկը թեխիա ճղոպորու քչիվ ա:

Դու մա ասիլ, էտ քյասիբ տնատարը բերց չի իլած, որ դիրի խոնախեցը գյլխըրկռնան, բերած ա մի պարկա մաչ մամուռն ա լցրած, մի պարկ ալ՝ ճղպորու կլեպ՝ բերցատեղ դիրած խոնախենցը գյլըխկռնան: Խոնախենքն ալ բենից բեխաբար, իրանց հետե բիրցերեն երե առուտորն արած, քասիբեն պարկրը եր կալած, տարած:

28 (274). ՄԻՆԸ՝ ԻՍ

Կասի՝ միետ մի ըրակու, մի հարուստ մարթ իրան խոխա-խիզանավ, նստոտած իրաց հետե սոհբաթն լալ ըրիլիս, ուլխնալիս, ծծղիլիս, քիշերը մաշացրիլիս:

Մին ալ բիրդամ տան դուրքը բինվալիս ա, տոն ա նի մտիլիս Գափրել հրեշտակապետն, ըսիլիս.- էկածմ, որ աս ըրակու ծեր տանը նանե էրկու մարթու հոքի տանմ: Շոդ ըրեցեք, հգրվեցեք, գիննք:

էտ հարուստ մարթեն մի նոքյար ա ինիլիս: Օմենը վխեցած յիշիսն նոքյարեն իրեսեն: Նոքյարը սուս-փուս եր ա կնալիս վըտ կնալիս, ըսիլիս.- Հրեշտակապետը էրկու մարթա հոքի ա ուզիլիս: Մինը՝ իս: Պա պետք ա մինն ալ ձգանե ինի: Ինձ էրկու հոքի չօնմ: Ինձ էրկու մարթա տեղ կարի չի տանի:

29 (275). ՔԱՐՈԶԻՉ ՆԱ ՂԶՂՆԱՏԱՐԸ

Կասի՝ միետ ըշխարքեն հըռե երգիրներից մի աստուծապաշտ քարոզիչ եկալ ա հասալ Ղրդաղեն մի շեն:

Շենեն ջամիաթը հվաքվալ ա եգեղեցեն, որ քարոզիչը քարոզ կարթի:

Քարոզիչը կուճի մարթ լալ: Շինացեք որ հվաքվալն գյղեցեն, ալ ինքը մարթունցը մաչեն ըրվացա չի: Ասսլ ա. դե, մի մարթ գինի, մի բեն բերի, իս երե վըտ կանամ, հանցնու ժողովուրդը ինձ տըսնի, իս ալ՝ ժողովըրդեն, որ մինս մինեն նանե մի բեն հսկանանք:

Դե, շեն տեղ լալ, աթոռ չի լալ, մի օրեշ բեն չի լալ: Մի մարթ ճարը կըտրած գենցալ ա իրաց տանը նանե մի ղզղան բերալ, փրսվեր դիրալ: Քարոզիչը եռ ա ինալ ղզղանեն երե վըտ կացալ, քարոզ կրթեցալ:

Շինացեք քարոզիչեն խոսկերեն նանե մի բեն գյոլոխ չըն ինգյալ: Քոնռնեն տարալ ա: Երն կացալ, գենցալ: Քարոզիչը միհն ալ ա տըսալ, որ մի թաք մարթ ա մնալիս: Ասալ ա՝ շնորհակալմ, որ դեչանը վերչ ինձ լսալըս:

Մարթն ասալ ա.- Իս քի չըմ լալ լսիլիս, վըտմ կացալ՝ ղզղանս տանմը:

30 (276). ԱՍՏՈՒԾ ԿԱՆՉՈՒՂԸ

Մի մարթ մի հղոք գինիս տեղը հասալ ա մի վարար գետի: Գետը անց կնալա հետե, գետեն իրեսավը մի թաք բերակ գերան կար գիծած: Էտ մարթեն աշկը կերա չի, որ բիցիրանա գիրանեն երե, գետն անց կանա:

Գետեն կողքեն նստալ ա, Աստուծեն ղանչաք արալ, աղոթք արալ, որ Աստուծ իրան քյոմագ արի՝ գետն անց կցրի:

Միհն ալ էն ա տըսալ՝ մի մարթ եկալ ա գիրանեն կողքեն վըտ կացալ, իրեսեն խաչակնքալ, եռ ինալ գիրանեն, գետը անց կացալ:

Էտ մարթը ռիսկի ա եկալ՝ ինքն ալ եռ ա ինալ գիրանեն, հասալ ա կեսը, մի բիրդամ աշկրը շաղվալ ա, գիրանեն նանե վեր ա ինգալ, նի ինգալ գետը: Ջոռավ գյուլոխը ջրին նանե դուս ա կալալ, գերանը փռնալ, դիբի երգինք յիշիլավ ասալ.- Աստված ջան, Աստված, երգինքմ քանի՞ աստված կա...

- Մի աստված,- լսալ ա երգինքից:

- Պա որ մի աստված ա, խի՞ էն մարթը միհետ աստուծ կնչիլավ գետն անց ա կցրալ, համա իս հարուր հետմ ասալ, ինձ նի յըս գիծալ գետը:

- Ընդուր հետե, որ էն մարթը ամեն օր միհետ Աստուծ ա կնչիս: Մտես ա: Համա դու նըղը ինգած տեղը հիշմս, լեն ինգած տեղը՝ մռնալիս:

31 (277). ԱՍՏՈՒԾԵՆ ՆԱՆԵ ՓՈՂ ՕՁՈՒՂԸ

Մի աստվածապաշտ, աստվածասեր մարթ էն հավատքեն լալ, որ «Աստուծ մարթեն ստեղծած ա, պարտավոր ա իրան ըստեղծած մարթեն պահի՝ հինչուր հարը իրան տղեն: Մարթն ալ ըպրիլու հետե հինչ որ Աստուծեն նանե օգի, անպայման կտա»:

Մի վախտ ա եկալ, որ էտ մարթը շատ նըղն ա ինգյալ: Իստոր, ինդոր նանե փող ա պարտք արալ, կրեցա չի տա: Ըսկսալ ա ամեն օր աղոթք անիլը, Աստուծեն նանե փոխ խնթրիլը: էտ մարթը էն ումիդին էր, որ եր կանա մի հղոք գինի, Աստուծ փողը կդիրի հղցին երե, ինքն ալ եր կօնի, կբերի պարտքը կփակի:

Մի ամես քիմի, խըղճ մարթը էս հղոքն ա գենցալ, էն հղոքն ա գենցալ, դեսուդեն աշկ ըծիլավ, բեն չի դուս եկալ: Աստուծ փողը տվալ չի:

Մի օր ալ մի երյամաջ տեղավ գինիս տեղը վըտ ա կացալ, Աստուծ կանչալ, ասսլ.- Աստուծ, ալ ասօր վերչին օրն ա, ալ կարի չըմ շոռ գյոլ: Յա օզած փողս տոր, յա մի քար գիծի գյլխես:

էտ ըսիլեն նիետ քըրծեն նանե մի մըծ քար բոք ա գյոլիս, թոլինիլիս: Մարթը զոռավ փխչիս ա, ղրաղ կնալիս, ըսիլիս.- Աստուծ, քո ըստեղծած մարթը պիիլու հետե խիյալ չըս ըրիս, համա ըսպնիլա հետե՝ մի հատս:

ՊԱՏԱՌ ԱԼ ԾԸԾԱՂԱՆՔ

32 (278). ՂՐԴԱՂԵՆ ԱՐՋԸԸ

Մի ղրդղեցե Թավրիզա մեյդաննավը գինիս տեղ, մի թավրիզեցի հրցրալ ա.- Ղարադաղցի, ձեր ծմակներեն արջրն ա՞լ քեզ նման փոքր են ու կոլոտ:

Ղրդղեցեն պատասխանալ ա.- Չի՛, պարոն քաղաքացի, Ղրդաղեն ծմկնոմը իմ բոյես արջ կավիչնի: Արջ կա քու բոյետ ա, արջ կա՝ քո հոր բոյեն, արջ ալ կա քու պապու բոյեն:

33 (279). ԻՍ ՄԱՐԹՄ

Մի անհասկացող թավրիզեցե միետ մի ղրդղեցու ըսիս ա.- Էշ ղարադաղցի:

Ղրդղեցեն պդսխնիս ա.- Իս մարթմ: Էշրը թարվիզեցենքն: Համա դե, պատրը բեցուր ա, ըրվալիս չընն:

34 (280). ԷԾԵՆ ԾԸԾԱՂԸ

Կասի՝ միետ մի էծ, մի վըչխարա նիետ հղե յընն լալ գինիս: Հասալն մի արխու:

Վըչխարը լոք ա տվալ, արխավը անց կացալ: Ետ ա դըռալ, տըսալ ա էծը վըտ ա կացած, ծծղիլիս: Հրցրալ ա.- Ա էծ, խե՞ յընս ծծղիս:

Էծն ասալ ա.- Որ լոքս տվալ, արխավը անց կացալ, գիփերտ բեց ա դըռալ, իմ ալ ծըծաղը եկալ ա:

Վըչխարն ասալ ա.- Այ անտեր, պա լա տարեն տըսնըներկու ամես նայե քո կճիպը ցեց, գփերտ ալ բեց: Պա խե՞ միետ մընք ծծղիլիս չընք:

35 (281). ԿՈՒճԻ ԲԻԼԻԹԸ

Մարը բերալ ա խոխենցը բլեթ բոժոնալ: Մի խոխա լեց ա ինալ, թա՝ իմ բլիթը կուճի ա:

Կերա չի:

Կատոն եկալ ա բլեթը եր կալալ, փախալ:

36 (282). ԱՊՐԻԼ

Մի ցորտ, թռութղը օր, մի չոբան վըչխըրնեն արած լալ հանդը, ինքն ալ մհակը դեմ լալ տված չնեն, հղցին կողքեն կոչ եկած, ցուրտից դողդողալիս:

Չոբանը մին ալ էն ա տսնալիս, հղոքը մի թրջիված, ցըխմ կլորված դեր ա գյոլիս:

Չոբանը չանան դողդողցրիլավ հրցրիլիս ա.- Ա դեր, էս ո՞ր ամեսն ա:

Դերը ըսիս ա.- Օրհնյալ, ապրիլ ամեսն ա:

Չոբանը կզնվիս ա, մհակը քաշմ, դերեն թկիլավ ըսիլիս.- Շան տղա հայ, որ էս ապրիլ ամեսն ա, պա մռնիլեն ամեսն վը՞րն ա:

37 (283). ԴԵՐԸ

Մի դեր խելոնք չի կացալ: Բերալն դիրաթոնեն նանե դոսն արալ:

Շինացեք, հնգեր, հրևան՝ ալ ըդոր պարև, պարլոս, պարիօր չըն տվալ:

Ասսլ ա.- Ա շան տղեք, ինձ դերոթունեն նանե յըն դոս արած: Պա մարթկոթոնեն նանե ալ հո դոս չը՞ն արած: Աստուծեն պարի լուս, պարի օր խե՞ չեք տալիս:

38 (284). ԿՈՒճԸԳԵՐԱՆԸ ՀԱՑԵ Ա

Մի ղարիբ մարթ, քյասիբ տոն ղոնաղ ա ինգյալ: Շատ քողցած լալ: Նստալ ա եշալ-եշալ, հաց չըն բերալ: Ճարը կտրած յիշիս ա տանը կուճըգերանեն, տնատըռնը ըսիլիս.- Խոնախա, ձեր տան կուճըգերանը հացե՞ ա:

Տնատարը գիդալիս ա ղոնաղը հինչ ա ուզիս, ըսիլիս.- Չի՛, խոնախա, դմացե ա:

39 (285). ՏՂԵՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Խինգիհեցե Հարոթ ապերը Առաքել տղեն փսակալ ա: Համա դե մըծը Նեսի լալ: Օրենքավ պետք ա առաչ Նեսա լալ փսակի:

Նեսի շատ խըղճ լալ, աշխարքից բեխաբար միամիտ տղա:

Նեսի իրեսանց վըտ ա կացալ, պահանջալ՝ իրան ալ փսակն:

Հարութ ապերը Նեսու ասալ ա.- Այ տղա, մըզ հալա մի հառհնը լալ պետքի, բերալնք Առաքելե հետե: Պա դու կնեգ հի՞նչս ըրիլիս:

Նեսի պատասխանալ ա.- Առաքել կնգանը հինչ ա ըրիս, իս ալ ինդի կարմ:

40 (286). ՊՈՒՂՈՒՍ-ՊԸՏՐՈՍ

Մի տղա ինչ կամենում է ձեռնարկել, ինքնուրույն մի գործ անել, հայրը արգելում է ու ասում.- Այ բալամ, քի անե Պուղուս-Պետրոս չի դուս գյո, ձեռք քաշի, թող վեր ինգի կորչի:

Վերջապես տղան զայրանում է, թողնում տուն ու տեղ, գնում քաղաք: Նրան քաղաքում լավ գործ է հաջողվում, ամուսնանում է: Երկու տղա է ունենում: Մեկի անունը դնում է Պողոս, մյուսինը՝ Պետրոս:

Մի քանի տարի անց վերադառնում է գյուղ, երեխաներին ներկայացնում հորն ու ասում.- Ա հար, ըսիս լալ, որ քի անե Պուղուս, Պըտրոս չի դոս գյո: Պա խե՞ յա դոս եկալ: էս՝ Պուղուս, էս ալ՝ Պըտրուս:

41 (287). ԴՈՎՈՒ ՆԵՏԸ, ՄԱՆՑԱ ԵՍՏԸ

Վինեցե Դովի նա Մանցի խոխեց պընդ հնգերներն լալ: Հինչ բեն արիլեն լալ, հինչ տեղ գինիլիս լալ, լա ջոխտն լալ հնիս:

Մի աշունք երն կացալ, գենցալ Ղրբաղը աշխադանքի: Քշանոց շուդավ երի յըն տալիս Արախսը անց կնալիս: Մի պատառ տըղ գինիսն, մի ուռուսու սալդաթ թվանգը ձեռքեն ըռշկնեն կտրիս ա, հրցրիլիս՝ հո՞ւ վեք, հի՞նչ մարթ եք, հի՞նչ տեղ եք գինիս, դակումենդ օնե՞ք:

Դովի ըսիս ա.- Նետ, նետ:

Սալդաթը ըսիս ա.- Դե նետ, նետ, նի հնգեցեք առաչս, տանմ կազարման:

Մանցի գյոլխով ա հնգիս բենը հինչմ ա, ձեռքը տնիս ա ծոցաջուբը, ըսիլիս.- Եստ, եստ:

Սալդաթը տսնալիս ա շինացե անշառ մարթիքն, ըսիս ա.- Լավ, թողեք, գենցե՛ք:

Պատառ որ սալդաթեն նանե հռնալիսն, Մանցի Դովու ըսիս ա.- Ա մըռած, որ իմ եստն չի լալ ինի, քու նետը մըր գյլխնեն բալա լալ բրիլական:

ՂԱՐԱԴԱՂԻ ՁՎԱՐՃԱԽՈՍ ԴՈՎՈՒՆՑ ԱՎՈՒ ՄԱՍԱԼԱՆԵՐԸ

42 (288). ԱՎԻ ՆԱ ԳԻՐՔԸ

Նաղլն ըրիս, որ Ավի շատ գիրքասեր լալ: Ուզիս լալ ինքն ալ իրան մըծ ախպուրը՝ Թումասե նման գիրք կարթի: Ալ տնշեննեն տղեն խըլքը կտրիս չի լալ, որ գիրք կրթիլու հետե մարթեն սավադ ա պետք: Պետք ա վարժատոն գինիս, վարժապետը այիփ, բեն սվրցնի:

Մի օր ախպերը՝ Թումաս, տըսնալիս ա՝ Ավի մի գիրք դիրած ա տափեն, մհակը եր ա կալած գիրքեն թկիլիս: Հրցրիս ա.- Ավի, գիրքեն խե՞ յըս թըկիս:

- Սորունմ ըրիս, աշկն ալմ հնիս, խե՞ յա քի նհետ խուսիս, բիլի-բիլի ըրիս... համա ինծ նհետ խուսիս չի, լալեգյ ա մնալիս՝ մի խոսք ասի, հանցա կասս ինծ հետե չխոսկան հառհնը ինի:

43 (289). ԱՎԻ ՆԱ ՉԵՇՄԱԳՅԸ

Ավի վարավուրդ ա ըրիս, տըսնալիս ա ախպերը՝ Թումաս, գիրքը կրթիլուց ըշկերեն երե չեշմագյ ա դիրիս, նոր գիրքը կրթիլիս: Հազրի ա գյոլիս, որ կաննի, կավչնի, գիրքը կարթիլեն մանհն չեշմագեն մաչեն ա: Ինքը չեշմագ չի դիրիս աշկերեն, ըդուր հետե յալ գիրքն իրան նհետ խուսիս չի:

Մի օր հաջողացրմ ա ախպուրը չեշմագյը թոքուն եր ա ունիս, դիրիս ըշկերեն... Գիրքեն թըրթրը դես ա շոռ տալիս, դեն... Ալլա գիրքն Ավու նհետ խուսիս չի:

Ավի կզնվիս ա, ալլա միակն եր ունիս գիրքեն թկիս, ըսիս.- Այ անտեր, էն օրը չեշմագյ չըմ լալ դիրած, խուսիս չըս լալ... Պա ասօր չեշմագյմ դիրած, խե՞ չըս խուսիս:

44 (290). ՅԱ՝ ՄԱՇԿՄՍ, ՅԱ՝ ՓՈՐՄՍ

Ըսիսն՝ շատ վախտ Ավի իրաց տավարը որ տնիս լալ հանդը՝ արուտ տալու, լա շեներն նաներ պատառ հռնալիս լալ, տավարը թուղիս լալ հղցոմը վըտը, ինքյը մեզարը ետ լալ ըրիս, հինչքան հաց որ տարած լալ ինիս, միդոնա ուտիս լալ, դերտակ մեզարը կպիս մաշկը, տավարը քշիս տնիս ըրուտատեղ:

Հնգրոտենքյը ասիլն լալ.- Ավի, պա հալա օրը բեցված չի, հացտ կերալս, պրծցրալ... Պա սաղ օրը հին չը՞ս ըրլական, մնա չը՞ս քողցած:

Ավի ծծաղմ լալ, ըսիս.- Խոխենք, հի՞նչ տարբերութուն, յա՝ մաշկմս, յա՝ փորմս: Միզարըմը թողնմ մնա, կարող ա մեզարս մաշկես նաներ ինի, կորչի, մնամ քողցած: Համա միեգ դիրած ըմ փորմս, ալ կորչի չի, իս ալ քուղցանա չըմ:

45 (291). ԱՎՈՒ ԹԱՑԱՆԸ

Էն տարիներին, ընդհանրապես Ղրդաղեն մախլուղը շատ քյասիբն լալ ըպրիլիս: Տղերքը որ իրաց տավարը տնիսն լալ հանդը՝ արուտ տալու, պհիլու, մարթա էրկու հացն լալ տնիս ուտիլու հետե: Կեսօրեն կրակն լալ վըռիս, հացրը դիրիս կրակեն, քքցրիս, ուտիլիս:

Նաղլն ըրիս, որ Ավի հացը ցամաք ուտիս չի լալ: Իրան թացանը իլալ լա... Շոռ լալ գյոլիս մի քանե խոզասունք, արչախաթու ճրիս, հվիքիս, բիրիս նի տալիս կրակը, խրվիս, ուտիս:

Հնգրնեն ասիլն լալ.- Ավի, խոզասունքը, գիդալիսնք, հալալ ա: Պա արչախաթուն հարամ ա, հունչո՞ւրս ուտիս:

Ավի ըսիս լալ.- էտ հի՞նչ բեն ա, որ ամեն մի եխտ օտուղ հավեն մըսն ուտիս եք՝ հալալ ա, կանեչ ըրածուղ արչախաթուն հարամ ա:

46 (292). ԱՎՈՒ ԿՌՎԸ ԷՇԵՆ ՆՀԵՏ

Մի օր Ավու ղուրկիսն, որ գինի արտը վարի: Ավի, դու Ավի, սրմացուն նի ա ըծիս խուրջունը, դիրիս էշեն երե, եզինքյը նի ըրիս հղեն, ինքն ալ լուծը, ալաթը շլկիս, եռ ինիս էշեն: Խըղըճ էշը կրիլիս չի տանի, ճըկըռճըկըռ ա ըրիս, վեր ինգիս:

Ավի ըսկսիս ա էշեն նհետ կռվիլը, մհակը քշիս ա՝ էշեն գյուլոխը թկիս, ըսիս.- Այ անտեր, ծանդրը լուծն ա, ալաթ նա, որ իսմ շլակած, դու խե յը՞ս ըստկիս, գինիս չըս:

Տնաշենեն տղեն խըլքն ալ կտրիս չի լալ, որ օմեն ծնդրեթունը խըղըճ էշեն երե յա:

47 (293). ԱՎԻ ԽԵԼՈՒՆՔ ՎԸՐՍԱԿԱՆ

Ղրդաղեն ղայդա լալ: Շենեն վըրսկաները որ ուզիսն լալ գինն խոզու, քրէծու, արջու, օրեշ նման հեյվանու վըրս, ըրկոնուն հվաքվիլն լալ մինեն տոնը, որոշիլ, թա ըշտեղ գինն վըրս: Համ ալ պայմանավորվիլն լալ, թա քշանաց շուդավ շենեն նանե մի ղրաղ տեղ ըշտեղ հվաքվն, որ միասին հղե ինն:

Մի քշանաց ալ շուդավ վըրսկաները հվքվիսն որոշած տեղը, տսնալիսն հեսա Ավի հացեն մեզարը մաշկը կապած, մի ջամ մհակ ալ ծեռքեն՝ նայե որոշած տեղը վըր կացած: Հրցրիսն.- Ավի, իստի քշանաց-քիշերավ ըշտեղ ը՞ս գինիս:

- Իս ալմ գյուլիս վըրսու,- ըսիս ա Ավի:

- Պա քու թվանգյը, շոնը հոր ա՞:

- Հի՞նչ պարտադիր ա, որ թվանգ, շոն ինի վըրս գինիլու հետե: Էս ղոլնաց վըրսկննուն հացրը կշլակմ, կտանմ: Վըրսկննեն թիթվ կինն, ինջինմիշ չըն ինի, ըռըհաթ, թիթվ կինն վըրս ըրիլու: Էն ղոլնաց գյուլիս տեղն ալ վեր գիծած վըրսը կշլակմ, կբերմ: Վըրսկննեն ինջինմիշ իլած կինն, այտս իրանք թիթվ, հանգիստ կգյոն, իմ արած բենը վըրսկնուն հետե խրեգ բեն կինի,- օրախ-օրախ ըսիս ա Ավի:

Վըրսկաները գիդալիսն լալ, որ Ավի ըշխարքեն ամենամհամհիտ մարթունցը մինն ա, համա շատ խելունք, մտածած բեն ա ասալ: Իրաց նհետ հընգերն ըրիս, հացեն մեզարնե տալիս Ավու շելակը, հղե ինիս:

48 (294). ԱՎԻ ՏՔԱՑԱԼ Ա

Մի ծմռնը օր լալ: Ավի տարալ ա տավարը պհիլու: Հավան շատ ցորտ լալ: Ուզեցալ ա կրակ վառի՝ տքանա, տըսալ ա չըխմըխքարեն քիսան մռացած ա, թողած ա տանը: Ցուրտու կրեցա չի պատառ նստի, դինջացա: Սաղ օրը վըտանը երե դես ա շոռ եկալ, դեն ա շոռ եկալ, մի շելակ չոր փադ ա հվաքալ, շլակալ, տըսալ ա՝ օրն ալ մթնիս ա: Տավարը հվաքալ ա,

նի արալ հղեն, եկալ շենեն ըռշկին թումբը, եշալ, տըսալ՝ շենեն օմեն տնե-
րեն բուխարենցը նաեե ծոխ ա բիցիրնալիս: Ավի օրախ-օրախ ձեռքրը
պահալ ա դիբի շենը, հղաղալ, ասալ.- Ջան Աստուծ, ջանս, ձեռքրս
տքացալն:

49 (295). ԱՎԻ ՈՒԼԽԱՑԱԼ Ա, ՊԱՐ ԵԿԱԼ

Ավի մըծ, եքյա տղա լալ: Նայ լալ շենեն ըռշկին հանդմը հնգրոնացն
նհետ տավար պհիս, խաղ ըրիս: Շենեն նհետ հայն արալ, ասալ.- Այդա,
Ավու ըսեցեք, որ հարը մըռալ ա, տավարը թողնի, գյո տոն:

Ավի, հորը մռնիլեն խաբարը որ լսալ ա, ուլխացալ ա, դիլ-դիլ արալ,
պար եկալ:

Հնգրոտենքյը զարմացալն, ասալ.- Ավի, այ յուրդա քոռու տղա, ախր
հարտ մըռած ա, լեց ինիլեն տեղը, պա՞րս գյոլիս:

Ավի պատասխանալ ա.- Շատ ալ սորինմ ըրիլիս: Մհեգ ինձ մարթու
տըղ դիրող կավըչնի: Էս ա կգինմ, իմ հոր չոխան կգենամ, ղայիշը կապմ,
փափաղն ալ կդիրմ գյլխես, այտս, շենմը կգիդան մարթմ, աղչիգ կտան,
հրսանեք կարմ, փսակվմ:

50 (296). ԱՎԻ ՄԱՋԼԻՍ ՇՐԱԿՈՒՂ Ա ԴԸՌԱԼ

Նաղլն ըրիս, որ Ավու դովրին Խնգիհիհնե էլեն ամեն մի մաջլիս
շրակուղը, ամեն մի մարթու իրան տեղը նստցրողը, սուփրան բենուղ-
հվաքուղը Բալունց Հաթո լալ: Ըսիսն, որ համ ալ Հաթո շատ հանաք ա-
րուղ, մասալա ասուղ, ժողովրթեն ծծղցրող, շլուղչի մարթ լալ:

Ավու մըծ ախպուրը՝ Թումասե հրսանիքն լալ: Հառհնը փսակած-բե-
րածն լալ տոն: Էլեն մաջլիսը հվաքված, նստածն լալ, որ սուփրա բենան,
օտըն, խմըն, քեփ արն: Տեղեն ղայդան գյորա, դեչանը սուփրեն բենիլը
ըրթվավ ջուրն լալ տնիս, մաջլիսեն մարթիք ծոքրնեն լվընալիսն լալ, նոր
սուփրան բինալիս, հաց դիրիս:

Հաթո, օքտվիլավ Ավու միամտութունից, կնչիս ա կոշտն, ըսիս.- Ավի,
դե դու ալ մըծ տղա յըս: Շուդավ պետքյ ա քի ալ փսակնք, տնավորնք:
Շենեն ժողովուրթը քանի քու շնորքը տըսան վեչ, քի աղչիգ տվող ինի չի:
Մհեգ պետք ա դու ինձ օքնս, մաջլիսը շրակնք, էլն ալ քու շնորհքը
տըսնի, հավանի:

- Իս հի՞նչ կարմ արիլ,- հրցրիս ա Ավի:

Հաթո բիրիս ա ջրին ըրթվան տալիս Ավու աջ ձեռքը, լագյանը՝ ձեխե ձեռքը, մի ձեռքա սրփիչ ալ գիձիս ձեխե օսուքը, ըսիս.- Ավի, առաչ կգինես Տեր Առաքելե ըռշկին կչոքյս, ծրքերեն ջուր կգիձս, սրփիչն կտաս՝ ձերքերը կչորի: Այտս, Ակուփ քյոխվեն, իդի հըրթեն շարքավը ումունուց:

Դու մի ասի Հաթո փորձանք ա բիրիս Ավու գյլխեն. ըրթվան դերտակ ա ինիս, ջուր չի ինիս լցրած: Ավի գինիս ա չուքիս Տեր Առաքելե ըռշկին, լագյանը դիրիս տափեն: Տեր Առաքել թըվքրը կշտիս ա, ձերքրը պիիս լիգյանեն երե: Ավի ըրթվան շոռ ա տալիս, ջուր չի վեր դըռնալիս: Խըղըճը մնալիս ա մաթալ: Դե մաջլիս, նստած օմեն ժողովուրթը ըշկռնեն չորք արած՝ յիշիսն Ավու:

Հաթո էս ղոլեն նհետ սաս ա ըրիս, ըսիս.- Ավի, կարող ա ըրթվեն տուտուգյը բեն-մեն ա ինգյած, թուղիս չի ջուրը վեր դըռնա: Միհետ տուտուգյավը փչի, հինչ որ խանգարմ ա, դուս կգյո:

Խըղըճ Ավի դերտակ ըրթվեն տուտուգյը դիրիս ա բիրանեն՝ փո՜ւ հա, փո՜ւ, փչիս, ըրթվան ալլա կռըցրիս ա, ջուր չի վեր դըռնալիս:

Հաթո ալլա յա ըսիս.- Ավի, այ տնըշենու տղա, դու հաց չը՞ս կերած, պատառ պընդ փչի, որ տուտուգը բենվի:

Բենիցը բեխաբար՝ միամիտ Ավի դերտակ ըրթվեն տուտուգյավը հա փչիս ա: Մաջլիս նստած ժողովուրթը հազիր ա գյուլիս, որ ծրծաղ սրքիլու հետե Հաթո միամիտ Ավու գյլխեն փորձանք ա սարքած: Մաջլիս նստած ժողովրթեն ընթհանուր, երկար ծրծաղ ա փռնիս:

Տեր Առաքել գիդալիս ա, որ Հաթոյե սարքած օյինբազեթունն ա՝ ծծղիլու հետե:

Խըղըճ Ավի տսնալիս ա՝ օմեն ծծըղիսն իրան փռնած բենեն երե, եր ա կնալիս, ըրթվան նա լագյանը եր ունիս, Հաթոյե նանե խռվիս, գինիս:

51 (297). ԱՎՈՒ ՓՍԱԿԱԼՆ, ՏՆԸՎԸՐԱԼ

Ավու փսակալն, հառհնը բերալ, տընըվըրալ: Ավու հարը, մարը մըռածն լալ, գենցած: Փսակուղը ախպերն լալ՝ Թումաս: Դե քյասիբ օջաղն լալ: Անջաղ մի ման[23] պարտքավ բրինձ լալ կալած, էրկու փոնչա եղ, փլավ քամիլ տված, հրսանեքյը յոլա տարած:

Ավի յիշիս ա, յիշիս, իրան հետե փլավ բերուղ չի ինիս: Ըսիսն. «Փլավը խրեգ լալ, ժողովուրթը՝ շատ, հերիք չի տվալ: Ավի կզնվիս ա, մաջլիսից

[23] Ման՝ մոտ հինգ կիլոգրամ (ծան. բանահավաքի):

դուս գյուլիս, գինիս: Շոռն գյուլիս, դես Ավի, դեն Ավի, գինիս տսնալիս նայե գյումումը էշեն ըխոռումը նստած, վըտըրը կախ տված՝ պար ա ըծիս:

Ըսիսն.- Ավի, հառհնը քու տղրն ա յիշիս, եր կաց, գինի կոշտը:

Ավի ըսիս ա.- Հու վեր բրինձավ փլավը կերած ա, թող էն ալ գինի, իմ բենս չի:

52 (298). ԱՎՈՒ ՋԱՄԸ ՔԱՇԿՐԸ ՏՆԻՍՆ

Կինալ լալ ասիլ, որ Ավի շենմը ամենաքյասիբ մարթունցը մինն լալ: Խըղըճեն աման ասած իլածը թաք մի միսի ջամ լալ:

Ամռն լալ: Ավի գինիս ա հոնծ: Արտեն կողքեն մի ցորտ ախպիր լալ: Ավի ջամը տնիս ա դիրիս ըխպիրին կողքեն: Ծրաված տեղը ջամը ջուր ա լցնիս, խմիս:

Ըրկոնուն տոն գյուլիս տեղը նղնալիս ա՝ ջամը իրան նհետ բերի տոն: Ինքն իրան որոշիս ա, որ էքյուց ալ պետք ա գյոմ արտը հնծմ, ալ հի՞նչ կարիք կա ջամը շլակմ, տանմ, մին ալ էքյուց ետ բերմ՝ սորինն էն ա, թողմ ըխպիրին կողքեն մնա, դեչանը արտը պրծնըմ:

Էքսի օրը Ավի գյուլիս ա, տըսնալիս՝ ջամը ըխպրին կուշտեն չի, տարածն:

Շենեն մըծերեն նանե լսած լալ, որ. քաշկրը ամեն մի ախպիրու տարնըն, համ ալ իրանք ըպրիսն ըխպրին ըշկերմ»: Հալբաթ ջամը քշկերեն պետք ա եկած, տարածն: Քաշկրն հո՞, էնքան անխըլք չըն: Կտըսնան, որ եկածմ արտը հնծիլիս, ջուր խմիլու հետե ջամն ինծ պետք ա, կբերն, կդիրն ըխպիրին կոխկեն:

Խըղըճ Ավի էտ օրը էնքան հոնծ չի ըրիս, որ աշկրը նի թողած ըխպիրին ա յիշիս, թա.- Տըսնմ՝ քաշկրը ջամը հիբն բիրիս:

Միամիտ Ավի, տըսնս հո՞ւ վա եկալ, տըսալ՝ անտեր ջամ ա, ըխպիրին դիրած, եր ա կալալ տարալ:

53 (299). ԱՎԻ ԼՊՐԱՍՏԱԿ Ա ՓՌՆԱԼ

Մի ծմռնը օր Ավի եռ ա ինիս էշեն,գինիս ծմակը՝ փադ բիրիլու: Փադ ըրիս տեղը Ավի տսնալիս ա՝ մի լպրաստակ նայե մի մախե քոլու տակե նստած, աշկրը տոզ տված, բեղրն ալ դուղդուղցրիլիս: Ավու հաջողվում ա, լպրաստակը փռնիս ա: Դե լպրաստակ ա, փռնալ ա, շատ սորին ա արալ: Փոխանակ լպրաստակը մորթի, փադն ալ բեռնի էշեն, եր օնի, գյո

տոն, արած փադը, էշը թուղիս ա հղցին կողքեն ծմակմը, ինքը լպրաստակը խտտիս, գյուլիս տոն, տնիս լպրաստակը բեց թուղիս գյումմը, նըստիս պատառ դինջինալիս, նոր գինիս, որ փադը բեռնի էշեն, եր օնի բերի:

Ավի որ լպրաստակը բիրիս ա տոն, էտ մաջալեն Ավու խըլքեն մի ղարիբ մարթ, մի քանե գյուշ գյորե նիածած մի ջվալ, շլակած գյուլիս ա, հղոքը գինիլիս, տընալիս ա՝ մի էշ նայե հղցին կողքեն կապած: Շելակը վեր ա դիրիս, դես-դեն յիշիս, տսնալիս՝ մարթ չի ըրվալիս, որոշիս ա, որ Աստուծ եռնաց տսնալիս լալ, որ քյասիբ մարթ ա՝ շելակը շլակեն, քռնոք ջանը կոխած, էս էշը տված ա Մոսես մարքարեյեն, բերած ա տեղը կապած, որ ինքը շելակը դիրի երե, տանի: Շատ շնրհակալ ա դռնալիս Աստուծեն նանե, գինիս ա էշը բիրիս, ջվալը դիրիս երե, տնիլիս:

Ավի գյուլիս ա, տսնալիս էշը կավչնի: Որոշիս ա, որ ինքը՝ լպրաստակը որ տարած ա տոն, հալբաթ էշն ալ հետըն գենցած ա, ինքը տըսած չի: Դերտակ ետ ա դռնալիս, գինիս:

54 (300)։ ԱՎԻ ԹՈԹ Ա ԿԵՐԱԼ

Ըմռնամոտ լալ: Ավի մի ջոխտ տըրըխ լալ կարած խոզու կաշվե նանե: Թազա տրխնեն գեցալ ա, հացեն մեզարը նի կապալ մաշկը, խուտհարեն նի քաղալ գյոխտեն, գենցալ խոտքաղ:

Շենեն ներքե ղոլեն՝ ջղացեն ըռշկին, մի քյոհնա մըծ թութի ծառ լալ: Ավի տըսալ՝ ա՝ թոթը հասած ա. օտուղ հայ ա ըրիս: Ավի տրխնեն հանալ ա, դիրալ թթուն տակեն, եռ ինալ թթուն, ըսկսալ թոթ օտիլը: Թոթը կերալ ա, քուշտացալ, ծառեն նանե վեր եկալ, տըսալ տրխնեն կավչնի: Դես ա շոռ եկալ, դեն ա շոռ եկալ, տրխնեն ճարա չի. կորալն, որ կորալն:

Ավի որոշիս ա, որ ինգյած ա մտքեն նհետ, մռացած ա տրխնեն գենի, թողած ա տան, տեպեգ ա եկած: Ետ ա դըռնալիս, գինիս տոն՝ տրխնեն գենի:

Ավի որ տանն ալ տրխնեն ճրիս չի, որոշիս ա, որ ջեղացն կա, տեղից քաշկու տոն ա; Կաննի, կավչնի՝ ջղացըմը ապրուղ քաշկրնն տարած, թա չի՝ մարթ յա շոն լալ ինի տարած, ինքը ծառեն նհետ տըսնիլ լալ տրխնեն տնողուն:

Էտ մտքեն նհետ համոզվմ ա Ավի, մի փոր թոթու հետե տրխնեն կուրցրիս, մեղքը գիծիս քաշկերեն երե, եր կնալիս տեպեգ գինիս՝ խոտը հրիլու:

Դու մի ասի, ջղացպան Ափի ջեղացը գինիս տեղը տսնալիս ա ծառեն երե գյուլոխը խառնված թոթավ Ավու. ինքն ալ տեպեգ ա ինիս, Ավու տրխնեն գինալիս ա, գինիս:

55 (301). ԱՎԻ ԹՈՒՍ Ա ՆՍՏԻՍ

Օրը գիրագի ա ինիս: Ավի մանցած ա ինիս տան, դինջանա: Կնեգյն ալ գենցած ա ինիս հրվանաց տոն՝ հաց թխիլեն օքնի: Ավի գինիս ա, գյումեն հավերեն բուներն նանե էրկու ձու բերի, օջաղեն մոխրմը թաղի, խրավի, օտի: Գինիս ա, շոռ գյուլիս, ձու չի ծրիս: Տսնալիս ա՝ մի տեղ մի հավ կա նստած: Մուտուլալիս ա հավեն, հավը կըչկըչալավ, կըրթկըրթալավ եր ա կնալիս, փխչիս: Ավի գիդալիս ա, որ թուխսըդիրած հավ ա: Ինգիս ա թուխսեն հետը, կրիս չի փռնի, բերի դիրի ծվանցը երե, որ ծվանքը սառն վեչ: Ճարը կտրած՝ ինքն ա նստիս ծվանցը երե:

Ըրկոնուն կնեգյը գյուլիս ա տսնալիս՝ թուխծըկանը նայե դրքեն կըրթկըրթալիս: Թուխծկանը փռնիս ա, գինիս գյումը, տըսնալիս Ավի նայե թուխծկանեն տեղը նստած:

Ավու կնեգյը՝ Ջավի, տսնալիս ա՝ Ավի նայե թուխծկանեն տեղը, ձուվանցը երե նստած. մնալիս ա զարմացած, հրցրիս ա.- Այ յուրդաքոռու տղա, տեղս քի հի՞նչ բեն օնըս:

Անմեղ մեղավորի նման՝ Ավի գյլխեն եկած փորձանքը կնգանը նաղլ ա ըրիս: Կնեգյը մի կոշտ ծծղիս ա մարթեն միամտութունեն երե, թուխծկանը դիրիս ձուվանցը երե, Ավու տնիս տոն, գինիս էրկու ձու բիրիս, մոխրումը թղիս, խրվիս, տալիս Ավու:

56 (302). ԱՎԻ ՑԵՑ ՔԱՐԵՆ ԳՅԼԽԵՆ

Ավի մհետ գինիս ա ծմակը՝ փադ բիրիլու: Հունչուր ա դռնալիս, էշը բեռան տակեն թուլ ա ինիս, նի ինգիս ծորը՝ ըստկիս: Ավի գինիս ա էշեն փալանը շլկիս, գյուլիս տոն:

Հղեց գյուլիս տեղը մի հըրըվան տսնալիս ա փալանը Ավու շլակեն, հըրցրիս ա.- Ավի, լսածմ, որ էշտ թուլ ա ինած ըստակած, ղորթ ա՞, քա՞ սոտ:

Էշեն փալանը շլակեն՝ Ավի ըսիս ա.- Հոր ա՞, տեր Աստուծ, թող սոտ ինի: Հոր ա՞, տեր Աստուծ, թող լա սոտ ինի...

Էշեն փալանը Ավի շլակեն նանե վեր ա դիրիս, նստիս, դինջինալիս չի, ու ինքը իրան ըսիս ա. «Իս ոչ Աստուծենմ մի փիսեթուն արած, ոչ ալ՝ մի

հըրվանու: էշս նհախ տեղը խե՞ պետք ա ըստակի: Բալքյա էշեն օշը գենցած լալ, ինդիյմ գիդացալ՝ ըստակած ա: Հալա գինմ, տըսնամ, գյոմ»:

Էշեն փալանը նորից շլկիս ա, գինիս, որ տըսնի՝ էշը սղացած ա, փալանը դիրի էշեն երե, փատը բեռնի, բերի: Գինիս ա տսնալիս՝ էշը ղորթից ստակած ա: Գյոլիս տեղը մթենը ինգիս ա: Ցեց քարեն քուշտեն մի բյոլիգ գյուլ գիրավն դռնալիս Ավու, որ օտն: Ավու խըլքը կտրիս ա, եռ ա ինիս Ցեց քարեն, հինչքան օժ օնի՝ շենեն հարայ տալիս:

Շինացեք Ավու սասը լսիսն, երն կընալիս հարայ-հրոցով, թվանգյավ, շներավ գինիս Ավու գյուլերեն ըռխնուն նաեե սաղ-սալամաթ ազադիս, բիրիս տոն:

57 (303). ԱՎՈՒ ՀԱճԱՐ ՎԱՐԻԼԸ

Մի տարե Ավի արտը հաճար լալ վրիս: Էշը տարալ ա, արտեն մաչտեղը կապալ, հաճարը նի ածել մեզարը, ըսկսալ էշեն յիշիլավ՝ սըրմիլը:

Մի մարթ, արտեն քուշտավը գինիս տեղը, տսնալիս ա Ավի սըրմը էնքան ղալին ա սրմիլիս, որ հըռանց յիշիսս, սպիտակեն ա տալիս հճարեն սըրմը:

Հըրևանը ըսիս ա.- Ավի, սըրմը շատ ղալինս գիծիս:

Ավի ըսիս ա.- Չէ, կարուղ չի պդահի, որ ղալին ինի: Իս մըր մծերեն նաեե լսածմ, որ հաճարը պետք ա ինդի սըրմս, որ էշը սըրմը հվաքի: Թա ղալինմ սրմիս, պա հեեա էշը արտմն ա, խե չի՞ սըրմը հվըքիս:

58 (304). ԱՎՈՒ ՄԻ ԳՅՈՒՇ ԿՈՐՈՒԿԸ

Ավու դովրին Խինգիհին օխտը թեյփա լալ: Օմեն մի թեյփա իրան առանձին ջեղացն լալ:

Թինգյըտարե լալ, ամեն մի հացը դըռած լալ մի մարթու արժեք:

Ավի մի գյուշ կորուկ լալ ճարած: Նի ածալ մի պարկ, որ տանի ջղացմը աղա, շինացեք ալ, որ տըսնաև, ասըն. Ավի քողցած չի, դաև ա ըղալիս:

Ավի կորուկը որ ջեղաց տարալ ա, ըղացա չըն: Օմեն ջղցպանեն համաև խոսքնն ասալ.- Ավի, մի գյուշ կորուկը ինա չի ջղացմն աղալ... Պատառ կտա շրտնավը, պատառ քարեն պկոմը, որ շհադալ եր օննք, պարկտ դերտակ կմնա: Սորունը էն ա, տանս ձեր տանը ձըրքըըրկանավ աղաս, բարաքյաթն ալ մնա ձեր տանը:

Պարի խրատ Ավի լսալ ա, կորուկը շլակալ, գենցալ:

59 (305). ՕԽՏԸ ԹԱՀՐԻ ՍԸՐՄԸ ՄԻ ԱՐՏՄ

Ավու մի արտ լալ: Հինչ սըրմը շաղ լալ տալիս, կնչիս չի լալ: Ավու սըրտըն ալ էտ արտեն նանե կտրվիս չի լալ: Վերչը, որ Ավի շատ ա ջանու եկալ, այտս, մի տարե բերալ ա օխտը տըսակ սըրմըր՝ ցորեն, գյորե, հաճար, կորուկ, սիսըռնը, ոսպը մին ալ կտվհատու սըրմըրը խառնալ մինը-մինեն, տարալ արտը վարալ:

Հըրըվաները տըսալն, մանցալ զարմացած... Հրցրալն.- Ավի, էտ հի՞նչ բեն ա, հո՞ւ վա տըսած՝ օխտը տըսակ սըրմը մի դոնա մի արտմ վարն:

Ավի ասալ ա.- Ինձ մեղադիրիլ մեք... Հի՞նչ սըրմը շաղմ տվալ, կնեչա չի... Ըսիսն լալ. էտ սըրմեն տարեն չի լալ: Իս ալ օխտը սըրմը մի դոնա յըմ շաղ տված, որ հալբաթ Աստուծ կտա, օխտեն միչեն տարեն կինի, կըկնեչի:

60 (306). ԱՎԻ ՄԻ ՔԻՍԱ ՓՈՂ Ա ՃԱՐԱԼ

Աշունք լալ, օրը գիրագի: Ավի մանցած լալ տան՝ դինջանա: Մի քանե օր առաչ թոռ լալ եկած: Ավի գենցալ ա, տըսնի՝ արտը կնեչած ա՞, թա՞ չէ: Արտեն կողքեն, հղցին մոտե մի ախպիր լալ: Արտեն յիշիլեն ետը, Ավի գենցալ ա ախպիրին նանե ջուր խմի, որ դըռնի գինի տոն: Տըսալ ա ախպիրին կողքեն փողու մի քիսա կա՝ տռըզած: Քիսան եր ա կալալ, տըսալ ա՝ թեխյա արծաթ փող ա՝ պսպղե տալիս: Ավի խյալ ա արալ, որոշալ, որ էսքան շատ փող շենմը մի քյուխվեն կինի, մին ալ՝ դերեն: Մոտե տեղը քյուխվեն արտ օնի, հալբաթ եկած ա, տըսնի արտը կնեչած ա, թա չէ, թըք ա տված ըխպիրին ջուր խմած, քիսան մոռացած ա, թողած տեղս, գենցած: Յա դերն ա տեղավս միշտ գինիս Ղուլուդի շենը, գյոլիս... դերենը կինի: Դե, տանմ, քյուխվենը կինի յա դերենը, կտամ, ըշկռնուն ալ կքղցրանամ:

Ավի փողեն քիսան դիրիս ա ջուբոմը, գյոլիս տսնալիս Տեր Առաքել նայե գյղեցուն ըռշկին մանակ նստած: Փողեն քիսան դերեն նշանց տալավ՝ Ավի ըսիս ա.- Ա դեր, էս քիսան ջահդին կողքեն ըխպիրիննմ ճարած, կարուղ ա՞ քունը ինի:

Տեր Առաքել, փողավ լիգյը քիսան որ տըսնալիս ա, աշկրը շաղվմն: Ըսիս ա.- Ավի, Ղուլուդի Ղզարանց Բարսի մըռած լալ, գենցալմ թաղալ, եկալ ըխպիրին մի չուբուղ քաշալ, քիսան մռացալ, թողալ տեղը: Շատ ապրս, որ ճարածս, բերած,- ըսիս ա դերը, քիսան դիրիս ջուբոմը:

61 (307). ԱՎՈՒ ՋԱՐՄԱՆ

Ղահրաման խան շատ օրախ մարթ լալ, ծըծաղ բերուղ մասալնե շատ լալ սիրմ: Օմեն տարե պարիկենքանեն օրրը գյոլիս լալ Խինգիհին, շենեն ջահիլնուն նետո օրախեթուն ըրիս: Խանը Ավու մասալնան նանե շատ լալ լսած, ծըծղեցած:

Մի օր ալ ասալ ա.- Գենցե՛ք, Ավու բերեք տըսնամ, հինչո՞ւր մարթ ա:

Շենեն փեյքարը գենցալ ա Ավու բերալ:

Խանն ասալ ա.- Ավի, քի հենգ ղռան ջարմայմ արած, փողը բեր, տոր:

Ավի զարմացած ասալ ա.- Խանը ապրած կանա, հի՞նչ սխալ բենմ արած, որ ինձ ջարմայս արած:

Խանն ասալ ա.- Իս որ գյոլիսմ շենը, օմենը շինըհավան գյոլիսն իմ գյորիշը: Դու քի շատ մըծ մարթու տեղս դիրիս: Լայաղ չըս ըրիս, գյոս իմ գյորիշլըը:

Ավի խանեն ըսածեն երե ծըծղեցալ ա, ասալ.- Խան, խանեն գյորիշը, խան, հարուստ, աշկե ինգյող մարթիքենն գինիս, իս քյասիբ մարթմ, շորրս, տրխնես ճըղոտած: Իտի կսազի՞ գյոմ քու գյորիշը: Հինչ վերաբերվմ ա ջարմեն, սորինս արած, իմ աշկեն երե, էս ա կգինմ, փող ունեցուղ մի մարթու նանե հենգ ղռան պարտք կարմ, կբերմ կտամ: Իս ալ ավազը կգինմ քու տափեն, վըղեն ջարմա կարմ:

- Դու իմ տափեն հունչո՞ւր ջարմա կարս,- զարմացած հրցրալ ա խանը:

- Մի խամ արտմ մի գյուշ գյորե իվել կվարմ: Մասիլը կծախմ, ջարմեն պարտքը կփակմ,- օրախ-օրախ ըսիս ա Ավի:

Խանը տսնալիս ա, որ ղուրթավ, Ավի թամուզ սրտու տար մարթ ա, ըսիս ա.- Ավի, հանաքյմ արալ, շատ ապրս, քի ջարմա արած չըմ: Գինի աշխադի, իդի հալալ ապրի:

ՊԸԼ ՊՈՒՂԻ

62 (308). ԻՐՔ ՕՐ ՊՈՒՂԻՆ ՄԵԼԻՔ Ա ԴԸՌԱԼ

Կասի՝ մհետ մելիք Շահնազարը Պուղու կանչալ ա իրան կոշտն, ասալ.- Պուղի, իս իրք օրավ մի տեղ ղոնաղմ գինիս: Քիանե հավադարիմ մարթ օնի չըմ: Դու նստի իմ թախտեն, ժողովութեն յոլա տար, դեչանը իմ գյոլը:

Մելիքը եռ ա ինալ ծիանը, գենցալ: Պուղին ալ նստալ ա մելիքեն թախտեն:

Ժողովուրթը որ լսալն Պուղին մելիք ա դըռած, եկալն Պուղու մելիքութունը շնըվերն:

Պուղի ուլխացալ ա, ասալ.- Ժողովուրթ, որ դուք եկած եք իմ մելիք դըռնալս շնվըրիլիս, եկեք ձեզ տանմ մելիքեն խազնոմը հինչքան վըսկե կա թոփ արած՝ ձեր հալալ քռնոքն ա, բյոժոնմ ձեզ:

Պուղի խազնեն դորքը բեցալ ա, ասալ.- Ժողովուրթ, մհեգ վըսկեն աստոծավարի բոժոնմ, թա՝ մարթավարի:

Ժողովուրթը ուլխացած ասալն.- Աստոծավարի:

Պուղի ալ մի մարթու հափռմ մի վըսկե ա դիրալ, մինեն հափռմը՝ հենգ:

Ժողովուրթը զարմացած ասալն.- Մելիք Պուղի, պա խե՞ մինեն մի վըսկե յըս տալիս, մինեն՝ իրք, մինեն՝ հենգ:

Պուղի ասալ ա.- Իս սիվթա ձըզանե հրցըրալմ՝ վըսկեն մարթավարի բուժոնմ, թա՝ աստոծավարի: Դուք ալ ասալ եք՝ աստոծավարի: Իս ալ ձեր խոսքը գյորա աստոծավարմ բուժոնմ: Շան տղեք, պա տըսնալիս չե՞ք, որ Աստուծ մի մարթու մելիքութուն ա տված, մի մարթու՝ աղայութուն, մի մարթու՝ նոքյարութուն, մի մարթու ալ՝ օրվա ապրուստ չի տված, որ կարի ապրի, խոխենքը պահի:

Ժողովուրթը նոր գյուղոխն ինգյալ, որ մելիք Պուղի շատ խելոնք մարթ ա, սաս-սասա տված ասալն.- Մելիք Պուղի ջան, մարթավարի բուժոնի, մարթավարի:

Մելիք Պուղի ասալ ա.- Դե հուր հինչքան վըսկե տվածմ, ետ տվեք ինձ, այտս իս ալ մարթավարի բուժոնմ:

Իրք օրը որ թմամալ ա, մելիք Շահնազար եկալ ա: Գենցալն տըսալ խազնեն դորքը բեց, մաչեն շահի-բիստի ալ չկա:

Կզնված Պուղու ասալ ա.- Ա՛ մըռած Պուղի, իմ խազնեն վըսկեն հո՞ր ա:

Պուղի ասալ ա.- Մելիքը ապրած կենա, վըսկեն ժողովրթի քռնոքն լալ: Տըսալմ, որ նեղոթյան մաչե յըն, իս ալ բոժոնալմ ժողովրթեն, որ տանն ապրն:

63 (309). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԱՆԽԸԼՔ ՄԱՐԹԸ

Մի օր մելիք Շահնազարը Պուղուն կնչիս ա, ըսիլիս.- Պուղի, մի տարե առաչ մի դարվիշ ա եկալ կոշտս: Ասալ ա՝ մելիք, հի՞նչ թնգանոց քարեղեն օնս, բեր տըսնմ: Իս ալ իմ իլած-չիլած քարեղենս բերալմ, դարվիշեն նը-

շանց տվալ: Դարվիշը ասսլ ա՝ մելիք, իս քարեղենը քուհնացած ա: Տանըմ, թազա քարեղենու նհետ փոխմ, բերմ: Իս ալ խոսքեն անց չըմ կացալ, տվալմ, տարալ ա: Մի տարե յա տարած, բերա չի: Խըլքտ հի՞նչ ա կըտրիլիս:

Պուղի ասսլ ա.- Մելիք, էտ դարվիշեն անմը, ադրեսը, տան տեղը գիդալի՞սս:

- Չէ՛, ոչ մի բենա խաբար չըմ,- ասսլ ա մելիքը:

- Ամենաանխելք մարթնս,- ասսլ ա Պուղին:

- Պա որ բերի, տա,- ասսլ ա Շահնազարը:

- Որ բերի տա, մելիքը ապրած կենա, ուրեմը աշխարքեն ամենաանխելք մարթը էն դարվիշն ա:

64 (310). ՄԵԼԻՔԸ ՊՈՒՂՈՒՆ ՂՈՐԿԱԼ Ա ԿԱԽԱՂԱՆ

Միետ մելիք Շահնազարը Պուղու կանչալ ա, ասսլ.- Պուղի, դու իմ հոքին կերալս: Քիանե պրծնիլու հետե որոշածմ կախաղան: Գինի մըր ներքե բաղը, տեղը մարթիքն որոշված, քի կախաղան կարն:

- Աշկես երե, մելիք,- ասալ ա Պուղի, հղե ինգալ:

Գենցալ ա իրաց տոն, կնգանը ասսլ, որ Մելիքը իրան կախաղան ա որոշած, գինիս ա, որ իրան կախ տան:

Կնեգը մի չաթո բիրիս, տալիս ա Պուղու, ըսիլիս.- Պուղի, էս չաթոն տար: Գյուլիս տեղը մի շելակ փադ կբերս, որ էքոց հաց թխըմ:

Պուղին չաթոն փորովն ա տալիս, գինիս տըսնալիս՝ տղան մելիքեն վըչխրնեն արած ա սարեն դոշավը, ինքն ալ նստած ա հղցին կողքեն մի քարու երե, շվե ա ըծիս:

Պուղու տսնալիս ա, հրցրիս ա.- Ա հար, ըշտե՞ղս գինիս:

Պուղին գյլխեն եկածը նաղլ ա ըրիս:

Տղան ըսիս ա.- Ա հար, իս նախրչի Մանցու ըղչիգանն երե աշք օնմ: Լսածմ, որ էքոց ըրակու օրեշ տեղե նհետ գյուլիսն նշան տան: Դե դու շուդ կգյոս տոն, որ գիննք նշանդրեք:

Պուղի պատառ խիյալ ա ըրիս, ետ դռնալիս գինիս մելիքեն կոշտը:

Մելիքը հրցրիս ա.- Պուղի, խե՞ յըս եկալ:

Պուղի նաղլ ա ըրիս՝ կնգանն, տղեն ասածնեն:

- Պա հի՞նչս որոշում,- հրցրիս ա մելիքը:

- Հի՞նչ ասմ,- ըսիս ա Պուղին,- տսնիսմ, որ քո, կնգանս, մին ալ տղես խըլքը՝ դուզ մի կոտր ա:

65 (311). ՂԶՂԱՆԸ ԾՆԱԼ Ա

Մի օր Պուղի գինիս ա Շահնազարե կնգանը ըսիլիս.- Խանմ, տղես հետե նշանդրեքմ ըրիլիս:Մի մըծ ղզղան տոր՝ փլավ իփիլու հետե:

Խանմը բիրիս ա մի քյոհնա ղզղան տալիս: Պուղի խոսիս չի: Ղզղանը տնիս ա:

Մի վախտ անց ա կնալիս: Պուղի մի կուճի փիյալա դիրիս ա ղզղաներն մաչեն, տնիս, տալիս խնմեն:

Խանմը զարմացած հրցրիս ա.- Պուղի, պա էս փիյալան հի՞նչ ա, դու մի ղզղանս լալ տարած:

Պուղի ըսիս ա.- Խանմ, ղզղանը ծնալ ա: էտ ծեր ղզղաներն գյոռնն ա:

Խանմը զարմացած ասալ ա.- Պուղի, խե ղզղանը կծնի՞:

Պուղին ասսլ ա.- Հա՛, խանմ, մըր տան ծնիսն:

Անցալ ա մի վախտ, Պուղին ալլա գեներցալ ա մելիքեն կնգանը ասսլ.- Խանմ, միեգ ալ տղես հրսանեքն ա, մի ղզղան տոր՝ փլավ իփիլու հետե:

Խանմը օրախ-օրախ բերալ ա ամենամըծ, ամենաթազզա ղզղանը տվալ Պուղու:

Անց ա կացալ մի վախտ, խանմը Պուղու ասալ ա.- Պուղի, պա մըր ղզղանը խե՞ չըս բիրին:

Պուղի ծծղեցալ ա, ասսլ.- Խանմ, ղզղանը ըստակալ ա:

- Հավատ չըմ ըրիս, Պուղի, խե ղզղանը կստակի՞:

- Խե՞, խանմ, էտ ծնիլեն հավատս արալ, ըստակիլեն հվատամ չը՞ս:

66 (312). ՊՈՒՂԻ ԲԱԽՏՈՒ ԵՇՈՂ Ա ԴԸՌԱԼ

Մելիք Շահնազարեն հարը նոր լալ մըռած: Մելիքն ալ թազա գինի լալ գիծած: Գինոն մաջառ վախտը լալ: Պուղին ալ գինու մաջառը շատ լալ սիրիլիս: Եր ա կնալիս, գինիս մելիքեն ըսիլիս.- Ղորմացիգի իմ հար սորուն բախտաեշուղ լալ: Իմ հոր նանե բախտա եշիլը իս ալ սըվըրածմ: Թազա գինոն նանե մի թաս բեր խմմ, տըսնմ ղորմացիգի քու հար ըշտեղ ըն տարալ՝ դրախտը, թա՝ դժոխքը:

Մելիք բիրիս ա, մի թաս գինի տալիս Պուղու: Պուղին մաջառը խմալ ա, ասսլ.- Մելիք, մի ղլմղալմ լսալ: Քո հոր սասն լալ, մի թաս ալ բեր, տըսնմ ըշտեղ ա:

Պուղին մի թաս ալ խմալ ա, թա.- Մելիքը ապրած կենա, քո հորտ մազի կրմունջեն երե վընն արած, խոսցրիս՝ տըսնն դրախտը տանն, թա դըժոխքը: Շուդ արի, մի թաս ալ բեր:

Մելիքը իրքմինջի մաջառեն թասն ա տալիս: Պուղին խմիս ա, թասը ձեռքեն նանե վեր գիծիս, ըսիս.- Մելիք, մի դմբոցմ լսալ: Քո հար մազե կրմունջեն նանե վեր ա ինգալ: Գիդացա չըմ, դրախտն ա ինգալ, թա՝ դժոխքը: Գինին լըլ լալ: Աշկրս պարզա չի:

67 (313). ՊՈՒՂՈՒ ԼՊՐՍՏԱԿԵՆ ՃՈՏՐԸ

Պուղի մհետ իրան բոստանմը լպրստակու էրկու ճոտ ա ճրիլիս: Փռնիլիս ա, էրկու ճոտրն ալ տնիլիս տոն, պհիլիս:

Մհետ մելիք Շահնազարի տոնը մի քանե մելիքներ եկածն ինիս ղոնաղ: Պուղի խիյալ ա ըրիս, որ էսքան մելիքների մաչեն մի անխըլքը կինի, հարկավեր ա մի փանդ արիլ, միներն նանե մի քանե հատ վընսկե իք օնիլ:

Պուղի ղոնախլղու հետե կնգանը բին-մեն ա թափշուր ըրիս, լպրըստակեն ճուտերեն միրը եր ա ուսիս, գինիս մելիքեն տոնը:

Ղոնաղ եկած մելիքնեն Պուղու ձեռքեն լպրստակեն ճոտը որ տըսնալիսն, մնալիսն զարմացած: Հրցրիսն.- Պուղի, լպրստակեն ճոտը խե՞ յըս խտտած շոռ գյոլիս:

Պուղի ըսիս ա.- Մելիքները ողջ ինն, էս գիտնական լպրստակ ա:

- Հունչո՞ւր թա՝ գիտնական լպրստակ ա,- ալլա զարմացած հրցրիլիսն մելիքնեն:

- Հա՛, գիտնական ա: Հվտալիս չե՞ք, ուզիս եք փորձմ, տըսեք,- ըսիս ա Պուղին:

- Փորձի, տըսննք,- ըսիսն մելիքնեն:

Պուղի լպրստակեն ճոտեն մաշկը սղլիլավ ըսիս ա.- Իմ գիտնական լպրստակ, վազ տոր, գինի մըր տոն, կնգանս ասի, որ տոնը շատ ղոնաղ ա գյոլիս, մի վըրծակ մորթի, բրինձավ փլավ իփի, սուփրան հազր պահի, նայենք գյոլիս:

Պուղի թաբահ ըրիս, բեց թողիլիս: Լպրստակեն ճոտը փխչիս ա, մի տեղավ գինիլիս:

Պատառ սհաթ ետը մելիքնեն գինիսն Պուղու տոնը՝ մնալիս զարմացած: Տըսնալիսն լպրստակեն ճոտը նայե ղփազմը նստած, Պուղի ալ՝ հինչ որ թամբահ լալ արած, կնեգը օմեն հինչ հզրցրած ա:

Մի անխելք մելիք կպիս ա Պուղու յխան, որ լպրստակը պետք ա ծախըս, օնմ:

Վերջը, դիյեր, դիվեր, տասը վըսկե տալիս ա, օրախ-օրախ լպրստակեն ծոտը տնիլիս:

Անց ա կնալիս մի վախտ: Մելիքների մեկեն տանը քեփ ա ինիս: էտ անխըլք մելիքն ալ լպրստակեն ծոտը նհետը տնիս ա, հրաշքներ նաղլ ըրիս՝ գիտնական լպրստակեն նաներ:

Չհավատացող մելիքներեն նհետ մարջ ա կըտըրիս, դեսեն-դենեն բինմեն թափշուր ըրիս, բեց թողիս: Լպրստակեն ծոտը ուլխացած թողիս ա գինիս մի տեղավ:

Մելիքնեն մի վախտ անց, գինիսն անխըլք մելիքեն տոնը կերուխում արն: Տըսնալիսն ոչ մի բեն ալ կավչնի: Մելիքեն կնեգը մնալիս ա խաջալաթ, ղոնաղ եկած մելիքնե ալ մի բոլ ծծղոտիսն անխըլք մելիքեն նա իրան գիտնական լպրստակեն երե:

68 (314). ՊՈՒՂՈՒ ԲՈՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՔԸ

Մի տարե Պուղի մի մըծ տուզ բոստան ա դիրալ: Եմիշ, ծմերուկ, խիյար՝ աշխարհը նի ա կալալ, գենցալ:

Պուղի բոստանեն չորք թարափը չափար չի քաշալ, հունչոր օմեն տըղ չփրիսն, որ հեյվան նի վեչ մտի բոստանը, մինջա հղցին թրափավը բերալ ա մի դորք վընն արալ:

Մի օր՝ ծմերուկեն էն սորին վախտը, մելիք Շահնազար իրանն մի քանե ծանոթ մելիքներին նհետ գենցալ ա Պուղու բոստանը ղոնաղ:

Մելիք Շահնազար եշալ ա Պուղու բոստանեն չորք թարափը, ծծղիլավ ասալ.- Պուղի, որ բոստանետ չորք թարափը չափար չըս արած, պա ալ բեյթուն տեղը էն դուրքը խե՞ յըս վընն արած:

Պուղի պատասխանալ ա.- Մելիքը ապրած կանա, դուրքը վընննմ արած, որ բոստանս եկող մարթն նա հեյվանը մին-մինա նաներ ջոկոմ:

Դե, մելիքը իրան հնգրոտանցը նհետ դրքավն չին լալ նի մտած բոստանը:

Պուղու ըսածեն երե, մելիքեն ընջուկնեն կրմրիս ա, յըրկնալիս՝ դըռնալիսն էշու ընջուկնե:

ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆ

69 (315). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԵ ՏԱՐԱԼՆ ԿԱԽԱՂԱՆ

Մի քանե մոլլա հվքվիսն Մոլլա Նասրեդինե փռնիլիս, տնիս կախաղանե սուներն տակեն վըռը կցրիլիս, մեղադիրիսն, որ՝ Մոլլա Նասրեդինը հայ ա, գինի ա խմիլիս:

Սաղ աշխարքը սաս ա ինգիլիս: Ժողովուրքը հվքվիսն, գյուլիսն քիմիշա:

Մոլլա Նասրեդինը ըսիս ա.- Ինձ իրավունք եք տալի՞ս էրկու խոսք ասմ, թա առանց խոսք տալու կախաղան եք ըրիլիս:

Մոլլաները ասալն.- Իրավունքնք տալիս, խոսի:

Մոլլա Նասրեդինը ասալ ա.- Ինձ մի ճիթ խաղու տվեցեք, մի հատ ալ թաս:

Խաղոն ալ, թասն ալ բերալն տվալ:

Խաղողեն ճիթը բեյցուր պհիլավ Մոլլա Նասրեդինը ասալ ա.- Ժողովուրթ, էս հի՞նչ ա:

Ժողովուրքը սաս-սասա տված ասսլն.- Խաղող:

- Մըր փեյղամբարը խաղու օտիլը արգելա՞ծ ա:

- Չէ՛, չէ՛,- պատասխանալն ժողովուրքը:

- Այ ժողովուրթ, այ ձեր ցավը տանմ, մհեգ էս խաղողը իս ուտիս չըմ, ճզմիսըմ էս թասեն մաչը, ոչ մի բեն ալ խըռնիլիս չըմ: Պհիսմ օխտը օրեն ետնա խմիլիս: Էս բենավը Աստուծեն օրենքեն յա փեյղամբարեն վնաս տալի՞սմ:

- Չէ՛, չէ՛,- սասն ըրիս ժողովուրքը:

- Դե՝ չէ - չէ, էտ մոլլաները, որ իմ արթար տեղը մեղավորն ըրիլիս, ինձ հայ ըսիլիս, հու որ իմ թարափս ա, թող մի-մի քարեն, փադեն եր օննն, նեստի տան, էդ մոլաներեն գյլխնեն կոտրն, ինձ ազադն, եր օննն տանն:

Մոլլա Նասրեդինե էս խոսքեն երե, սաղ ժողովուրքը վերն թփիս մոլաներեն երե՝ որը քարավ, որը մհակավ վերն թկիս, խռեք տալիս, Մոլլա Նասրեդինեն եր օնիս, տնիլիս:

70 (316). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԵ ԴՆՈՏԵՆՔԸ

Մոլլա Նասրեդինե էրկու դանա լալ: Մի օր դնոտենքը տարալ ա, որ բաղմը արոտ տա: Հղեց դնոտանցը մինը բեց ա ինգալ, փախալ: Մոլլան ըսկսալ ա վըտը դնին թակիլը:

Մի մարթ եկալ ա տըսալ, Մոլլին ասսլ.- էտ դանան խելոնք ա, նայե վըտը: Մեխկ ա, խե՞ յըս թկիլիս:

Մոլլան պատասխանալ ա.- Դո գիդալիս չըս, էս որ բեց ինգի, ընդոր նանե հըռե կփախչի:

71 (317). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆ ՎԸՐՉԱԿ Ա ԴԸՌԱԼ

Մոլլա Նասրեդինը մի օր ժողովրթեն հվաքալ ա մաջիտը, որ քարոզ կարթի:

Ասսլ ա.- Ժողովուրթ, գիդալիս եք հի՞նչ կա:

Դե, սովորությանը համաձայն, ժողովուրթը ասսլն.- Հա, Մոլլա գիդալիսընք:

Մոլլան ասսլ ա.- Դե որ գիդալիսեք, ալ հի՞նչ ասմ,- պատասխանալ ա Մոլլան, թողալ, գենցալ:

Էքսի օրը ժողովուրթը որոշում ա.- Թա Մոլլան կհրցնի՝ «Գիդալի՞ս եք, հինչ կա», կեսն ասի գիդալիսնք, կեսն ալ ասի՝ գիդալիս չընք: Տըսննք Մոլլան հի՞նչ կասի:

Ժողովուրթը հվաքվմ ըն: Մոլլան գյոլիս ա: Իրան խասյաթը գյորա, ալլա հրցրիս ա.- Ժողովուրթ, գիդալի՞ս եք հինչ կա:

Ժողովուրթեն կեսն ըսիս ա՝ հա, մոլա, գիդալիսնք, կեսն ալ ըսիս ա՝ չի, գիդալիս չընք:

Մոլլան ըսիս ա.- Դե, թող գիդացողնեն չգիդացողնն ասն,- ըսիս ա Մոլլան թողիս, գինիլիս:

Ժողովուրթը մինը միներն ըսիս ա.- Կա-չկա մոլլան մըզ ձեռք ա ունիս, ծծղիլիս: Եկեք էքոց ալ մընք Մոլլին ձեռք օննք: Տըսննք հի՞նչ կըղըռնի:

Ժողովուրթը որոշում ա, որ. էքուց մարթա մի հավու ծու դիրընի ջոբռռնոմս, գյոնք: Տըսննք մոլլան հինչ կարի:

Էքսի օրն ալլա գյոլիս ա մաջիտը: Ժողովրթից մինը ջուբեն նանե մի ծու դոս ա ունիս, բեցուր պիհս, ըսիս.- Ժողովուրթ, հո՞ւ կկարի մի ծու նշանց տա:

Ժողովուրքը օմմեն՝ մարքա մի ձու ջբոռնոն նանե դոս ունիս, բեցուր պիիլիս:

Մոլլին հրցրիլիսն.- Մոլլա, պա քո ձուն հո՞ր ա:

Մոլլան մաջտեղ վըտ ա կնալիս, վըրձակո նման կնչիլիս՝ կի-կլի-կի:

Ժողովուրքը զարմացած հրցրիս ա.- Մոլլա, էտ հի՞նչ ղայդա յա:

Մոլլան պատասխանմ ա.- Շան տղեք, պա էտքան հավեն մի վըրձակ չի՞ ինի:

72 (318). ԷՇԵՆ ՈՒՍՈՒՄԸ

Մոլլան մի օր տասը վըսկե բերալ ա տըվալ կնգանը:

Կնեգը հրցրալ ա.- Մոլլա, էս վըսկենեն ըշտեղե՞ յա:

Մոլլան ասալ ա.- Մի հարուստ մարթու նետ պայմանմ կապած, որ մի տարմ իրան էշեն ուսում սվըրցըրմ: Ինքն ալ տասը վըսկե ա տվալ:

Մոլլեն կնեգը զարմացալ ա, ասալ ա.- Մոլլա, պա էշը ուսում կսվըրի:

Մոլլան ասալ ա.- Ա կնեգ, դու ալխային տար, վըսկենեն խարջի, իս ալ էշը բինիցիրիմ: Մի տարվա մաչեն յա էշը կստակի, յա իշատարը, յա իս:

73 (319). ՄՈԼԼԵՆ ՋԱՀԵԼՈԹՈՒՆԸ

Միետ Մոլլան մի հղոք գինիս տըղը, մի վարար արխավ ա ջիհալ: Լոք ա տված, որ անց կենա, վըննն նի ա ինգյալ արխը, թրջիվալ ա: Ինդի ա գիդացալ՝ հետնաց օրեշ մարթ ա գյոլիս, ասալ ա.- էհե՜, ջահելութուն:

Ետ ա եշալ, տըսալ ա՝ չի, հետնաց օրեշ եկող չկա, վըտ ա կացալ, գյուլոխը քորալ, ինքն իրան ասալ. իսկի ջահիլ վախտս ալ մի բեն չըմ լալ:

74 (320). ՄՈԼԼԱՆ ԳԵՆՑԱԼ Ա ՂԱՐԻԲԵԹՈՆ

Միետ Մոլլա Նասրեդինը կնգանը ասալ ա.- Ա կնեգ, մի հավ մորթի, պատառ ալ պարղաճ թխի՝ իս գինիսմ ղարիբբոն:

Կնեգը բերալ ա հավն ալ մորթալ, պարղաճն ալ թխալ, հվաքալ, միզարմ կապալ, տվալ Մոլլեն:

Մոլլան մեզարը եր ա կալալ, տարալ տանը մթեն քունջոմը նստալ, իրան հետե կամանց-կամանց կերալ:

Կնեգը հրցրալ ա.- Մոլլա, պա ասալս՝ գինլականմ ղարիբբոն, տանը քյունջումը հի՞նչս ըրիլիս:

Մոլլան ասսլ ա.- Ա կնեգ, իս քի տըսնալիս չըմ, դո ալ ինձ չըս տըսնալիս: Հի՞նչ տարբերոթուն, դռնալի՞ս չի ղարիբթոն:

75 (321). ՄՈԼԼԵՆ ԿՆԵԳՅԸ

Մոլլա Նասրեդինեն ասալն. «Մոլլա, կնեգտ գյազագյան ա»:

Մոլլան ծծղեցալ ա:

Ասալն.- Մոլլա, խե՞ յըս ծծղիլիս:

Ասսլ ա.- Հվտալիս չըմ: Պա որ կնեգս գյազագյան ա, խե՞ միետ մըր տոն գյոլիս չի:

76 (322). ՄՈԼԼԵՆ ՀԱՎԱՏԱԼԻՍ ՉԸՆ

Մի քյասիբ մարթ գինիս ա Մոլլա Նասրադինե տոնը, ըսիլիս.- Մոլլա, խնթրիսմ, էշտ տաս, գինմ մի բեռնը փադ բերմ:

- Այ քո տոնը շեն, պետք ա քշանաց շուդավս լալ գյոլ: Քիանե առաչ մի օրեշ հըրըվան եկալ ա, էշն օզալ, տվալմ, տարալ ա:

Էտ սհաթեն Մոլլեն էշը գյոմոմը զըռզռացալ ա:

Հրըվանը ասսլ ա.- Մոլլա, պա կասս էշը տարածն: Պա հեն ա գյոմոմը զըռզռալիս:

Մոլլան կզնված ըսիս ա.- Աստված, էս ժողովուրթը հի՞նչ հավատքա տարն: Մոլլան ըռշկին նստած, ըսածեն հվտալիս չըն, էշեն զըռզռոցենն հվտալիս:

77 (323). ՄՈԼԼԱՆ ԹԱ ՍԱՂ ԻՆԻ

Մոլլան միետ մի հողք գինիս տեղը տըսնալիս ա մի սորին կնչկոտ տեղ կա, մին ալ մի մըծ շուքավր ծառ: Էշեն բեց ա թողիս, որ ըրածի, ինքն ալ ծառեն շվաքմը խոտոր ա ինգիս՝ պատառ դինջանա:

Հակառակը հակառակ ա ինիս, Մոլլան քունավ ա ընցնիս: Եր ա կնալիս, տըսնալիս էշը գյոլրը կերածն: Գյոլոխը քորիս ա, ինքը իրան ըսիլիս. «Մոլլան թող ըստակած չի լալ ինի, տըսնմ գյոլրն կարի՞ն լալ էշը օտիլ»:

78 (324). ՄՈԼԼԵՆ ԷՇԵՐԵՆ ՀԱՇԻՎԸ

Մոլլա Նասրադինե հրըվան շենմը տասը մարթ պարտք ըն ինիլիս: Մի ըշունքան օր գինիս ա պարտքը հվաքի:

Դե, ըշոնքան էտ շինացոն էշը պետք չի ինիս՝ դեչանը գյորոնք: Մոլլան հուր նանե պարտքը ուզիս ա, ըսիս ա՝ փող չօնմ, էշս պարտքեդ տեղը եր կալ տար:

Մոլլան տասը էշ հվիքիս ա, մինեն եռ ինիլիս, ինն ալ՝ նի ըրիս առաչը, գյոլիս:

Հղեց մի տեղ էշրը վընն ա ըրիս, հմբրիլիս, թա՝ տըսնմ էշրը ականն:

Հմբրիս ա, տսնալիս ինն գյուլոխ ա: Մինը պկսիլիս ա: Էշեն նանե վեր ա գյոլիս, ետ դռնալիս, գինիս կորած էշեն շոռ գյոլիս: Հղեց իրաց շինացե մի խելոնք մարթ ա ջհհիլիս: Մոլլեն ետ ա տալիս, գյոլիս էշրը հմբրիս, տսնալիս՝ տասը գյուլոխ ա:

Մարթա մի էշու եր ըն ինիս, իրաց հետե սոհբաթ ըրիլավ, գյոլիս: Շենեն որ մոտանալիսն, Մոլլան էշրը նորից հմբրիս ա, տսնալիս ա՝ օթ գյոլոխ էշ ա: Հրվանեն ըսիս ա.- Տըսնալի՞սս, սոհբաթավնք ինգյալ, էրկու էշ կորցրալ:

Հրըվանը հմբրիս ա, տսնալիս ա տասը էշ ա: Դու մա ասիլ, Մոլլան իրաց եր ինած էշրը հմբրիս չի: Հրըվանը գյոլխ ա գիծիս: Մոլլան մնալիս ա գյուլոխը քորիլավ:

79 (325). ՄՈԼԼԵՆ ԷՄԱՄԱԹԸ

Մոլլա Նասրադինե կնալիս ա քաղաքմը: Միետ մոլլաների ժողով ա ինիլիս: Մոլլան ինքը իրան խյալ ա ըրիս, որ՝ հարկավեր ա մի բազադեթուն արիլ, մի անխըլք մոլլա նանե մի քանե վընկե իք օնիլ:

Դե սաղլամ քղաքմը Մոլլեն ճնչիսն լալ: Գինիս ա մի քանե չայչիխանե, աշպազխանեյի տըռնացը նիետ խոսիս, որ. «Իս մի քանե մոլլաների նիետ գյոլականմ օտընք, խըմնք, վերչըմը որ եր կկանամ էմամաթս եր օընմ, ասըմ՝ աղա, հաշիվը փակվա՞ծ ա, կասս՝ հա՛, իս էտերը կգյոմ, հաշիվը կփակմ»:

Մոլլաների ժողովը ըսկսիս ա: Գյոլիս ա հաց ուտիլու, չայ խմիլու վախտը, Մոլլա Նասրադին մի տասսը մոլլա հետն ա գիծիս, տնիս ուտցրիս, խմցրիս: Վերջմը էմամաթը գյլխեն նանե եր ա ունիս, ըսիս.- Աղա, մըր կերած-խմածեն հաշիվը փակվա՞ծ ա:

Ըսիսն.- Հա՛, աղա Մոլլա, փակված ա:

Մոլլաները մնալիսն զարմացած: Մի ջահիլ մոլլա ըսիս ա.- Մոլլա Նասրեդին, տասը վըսկե կտամ, եք էտ էմամաթետ գաղտնիքը ասի, մընք ալ գիդանք:

Մոլլա Նասրադինը տասը վըսկեն դիրիս ա քիսոմը, ըսիլիս.- Իմ էմամաթը սորփ Միամադ Փեյղամբարը օրհնած ա: Իտոր հետե հինչ տըղ գինըմ, օտըմ, խմմ, օմեննն ալ ծրի ա, ոչ մի շահի փող չըս տալիս:

Էտ անխըլք ջահիլ մոլլան ըսիս ա.- Հիցուն վըսկե որ տամ, էտ էմամաթը տալ չը՞ս ինծ:

Մոլլա Նասրադինը հիցուն վըսկավ իրան էմամաթը ծխիս ա:

Մի վախտ անց ա կնալիս, էտ ջահիլ անխըլք մոլլեն կնալիս քաղաքմն ա մոլլաների ժողով դըռնալիս:

Ջահիլ մոլլան լոպազնալիս ա, մի տասը մոլլա հետը ըրիլիս, տնիս մի աշպազխնոմ իրաց հետե ուտիս, խմիլիս: Վերջմ ջահիլ մոլլան եր ա կնալիս, էմամաթը գյլխեն նանե եր ունիս, աշպազխնեն տըռնը ըսիլիս.- Աղա, մըր հաշիվը փակվա՞ծ ա:

- Չի՛, փակված չի,- ըսիս ա աղան:

Մոլլան հվտալիս չի: Էմամաթը մի քանե նհետ դիրիս ա գյլխեն, եր ունիս, հա ըսիլիս.- Մըր հաշիվը փակվա՞ծ ա:

Ալլա համան պատասխանն ա ըստնալիս:

Աշպազխանեն տարը տըսնալիս ա մոլլան շատ ա զահլան տնիլիս, մուտուննալիս ա էրկու նհետ մոլլեն գյլխեն գյուլիս, ըսիլիս.- Էմամաթը քըշը-բեցուր ըրիլավ հաշիվ չի փակվի: Փողետ քիսան հանի, կերածետ հաշիվը փակի:

80 (326). ՄՈԼԼԱՆ ՓԼԱՎ Ա ԿԵՐԱԼ

Մի օր Մոլլա Նասրադինը մեջիտից գալիս ա տոն, տընսալիս կնեգը ճաշ չի իփած: Ըսիս ա.- Այ կնեգ, պա հի՞նչմ ուտլական:

Կնեգը ըսիս ա.- Հրվանաք սորին փլավն իփած: Կգինընք մընք ալ կոտընք:

- Մըզ ղոնաղ կանչա՞ծն,- հրցրիս ա Մոլլան:

- Մընք մի բազզադեթոն կարընք,- ըսիս ա կնեգը,- իս լելավ կգինմ հրվանանց տոն, դու ղամատ եր կօնս հետես գյոս, կասըս՝ «Կնեգս ճաշ չի իփած, քողցածմ: Եկած ա ձեր տոն, տվեցեք սպանմ»: Հրվանաք կիվատան, թողի չընն: Կնընստցրն հաց ուտիլու:

Կնգաան ասածը Մոլլեն խոշն ա գյուլիս:

Կնեգը հինչ որ որոշած ա ինիս, ինդի ալ ըրիսն:

Հրըվանը եր ա կնալիս, Մոլլեն ձեռքեն նաեե ղամաե իք ունիլիս, ըսիլիս.- Պա Մոլլաե մի ճաշ չիփիլու հետե կնգաանը ըսպանի՞: Էնի գյորա ժողովրթը հի՞նչ կասի: Ամոթ ա, թող ոչ միննն ալ գիդա վեչ: Իմ կնեգս սորուն փլավ ա իփած, կնգաանտ նհետ բարիշի: Նստեցեք, մի տեղ փլավը օտրնք, քշտանանք, կնգաանտ եր կալ գինի ձեր տոն:

Մոլլաե համաձայնվիս ա: Փլավը ուտիսն, գինիս տոն, միամիտ հրվնեն երե ծծղիլիս:

81 (327). ՄՈԼԼԵՆ ԵՐԵ ԿՐԵՑԱ ՉԸՆ ԳՅՈՒՂԵԹՈՒՆԸ ՀՍՏԱԴԻ

Մոլլա Նասրադինեն հըրըվանը իրաե բոստանմը լաբլաբի լալ վարած: Չտըսնված լաբլաբի լալ դըռած՝ օմեն միննը մի եզաե գյուլոխ: Մոլլա Նասրադինե կնեգյը հըրվանեն բոստանմը լաբլաբին տսնալիս ա, թամահը տնիս ա, ուզիս ա լաբլաբի օտի: Մոլլեն ըսիս ա, որ գինի հըրվանեն նաեե էրկու լաբլաբի օզի, բերի: Մոլլաե գինիս չի:

Կնգաանն ըսիս ա.- Ամոթ ա... գինմ հըրվանեն նաեե հի՞նչ օզմ, հի՞նչ՝ էրկու լաբլաբի:

Մի ըրակու ալ Մոլլաե գյուլիս ա տոն, կնեգյը ալուզ ա: Հրցրիս ա.- Ա կընեգ, հի՞նչ կօտս, սըրտտ հինչ ա՞ ուզիս, գինմ հի՞նչ բերմ:

Կնեգյն ըսիս ա.- Մինջա՝ լաբլաբի:

Էքսի քշանաց, տափըմթեն, Մոլլաե մի ջվալ եր ա ունիս, գինիս նի մտիս հըրվանեն բոստանը, մի քաեե լաբլաբի դուս ունիս, դիրիս ջըվալմը, լա ուզիս բոստանեն նաեե դուս գյո, բոստանչին առաչը կտրիս ա, ըսիս.- Մոլլա, էտ լաբլաբին խե՞ յըս գյուղացած:

Մոլլաե ըսիս ա.- Գյուղացած չըմ, հղոքն գինիսմ լալ, քամե յա եր կացալ, բուդուդ ա արալ, ինձ եր ա կալալ, նի գիծալ բոստանը:

- Պա լաբլաբին խե յը՞ս քանդած:

- Իս քանդած չըմ, ձեռքս գիծածմ կութերեն նաեե փռնած, որ քամեն ինձ քշի վեչ տանի, դուսն եկալ:

- Պա խե յը՞ս նի տված ջվալը, շլակած:

- Վըխեցալմ նորից քամեն եր կանա, ալլա բուդուդ անի, ինձ տանի, նի գիծի մի հըռե տեղ: Այտս իս ալ լաբլաբին նի յըմ տվալ ջվալը, շլակալ, որ ծանդրանամ, ալ քամեն քշի վեչ տանի:

Բոստանչին տըսալ ա՝ ոչ մի կերպ կրիս չի գյուղեթունը Մոլլեն երե սաբութ արի, ճարը կտրած՝ սուս ա ըրիս:

Մոլլան արթար դուս գյոլավ՝ լաբլաբին տնիս ա տոն, իփիս ա, կնեգյը ուտիս ա, ուլուզեթունը անց ա կնալիս:

82 (328). ՄՈԼԼԱՆ ՀՎԱՏԱՐ Ա ԴԸՌԱԼ

Մի օր Մոլլեն տոնն եկալ էրկու կնանեք՝ նիտնուն մի հավն լալ բերած: Կնանունցը մինն ասալ ա.- Աղա Մոլլա, մընք էրկու հըրվան կնանեք, մինս-միներն կըռվիսնք: Իս ըսիսմ՝ հավն իմն ա, էս հըրըվանս ըսիս ա՝ չէ, իմ հավն ա... Դու կկարս որոշիլ, թա հավը որ միներսն ա:

Մոլլան թաքուն կնգանը ըսիս ա.- Եր կաց, պատառ ցորեն մըր դրքեն շաղ տոր:

Այտս հավը բերուղ կնանուցն ըսիս ա.- Տեղտ կռվիլու բեն կավչնի: Հավը խելունք ղուշ ա, տարեք մըր դըրքեն ըռշկին բեց թուղեցեք, հավը իրան տըռնը դուրքը կճնանչի, որ միներտ տոնը գինի, ուրեմը ընդուրն ա:

Հավը Մոլլեն դըրքեն բեցն թուղիս: Հավը տսնալիս ա՝ դըրքեն ցորեն կա շաղ տված, ոչ մի տեղ գինիս չի, վետ ա կնալիս հընդրիլիս: Դեչան հավեն քիշի-քիշի յըն ըրիս, հավը Մոլլեն դըրքեն նաներ ձեռք չի քշիս:

Մոլլան ըսիս ա.- Այ տնաշեներ, էս հավը լա մըրն ա, որ կաչնի: Տըսնալիս եք, որ մըր դըրքեն նաներ ձեռք չի քշիս: Բեյթուն տեղը կըռըվ արիլ պետք չի, գենցեք ձեր տները, ձեր բեներն կացե՛ք:

Հըրըվան կնանեքյը սուսն ըրիս, գինիս, հավը թուղիլիս Մոլլեն դըրքեն:

83 (329). ԳՅԼԽԸՑԱՎԵՆ ԴԵՂԸ

Մի օր շեներն քյոխվան գյոլիս ա Մոլլեն կոշտն, ըսիլիս.- Մոլլա, գյուլոխս ցվիս ա, հի՞նչ ճար արմ:

Մոլլան ըսիս ա.- Քյոխվա, գինի գյուլոխտ սորին թրչնի, մոխար շաղ տոր երե, շորավ կապի, թող օխտը օր մնա, ցավն անց կկանա:

Օխտը օրեն ետը քյոխվան գյոլիս ա, Մոլլեն ըսիս.- Տնաշեն, գյլխես մազըրը թեխյա վեր ա տվալ, համա գյլխացավս կորա չի:

Մոլլան ծծդիս ա, ըսիս.- Տնաշեն, սաղ շեներն գյլխըցավանքն նայե քու գյլխեն, պա քու գյուլոխը ցավի վե՞չ, իմ գյուլո՞խս պետք ա ցավի:

84 (330). ՄՈԼԼԵՆ ՂԱՐԻԲԵԹՈՒՆ ԳԻՆԻԼԸ
(տարբերակ)

Մի օր Մոլլան կնգանն ըսիս ա.- Այ կնեգ, իս երկար հղե, ղարիբեթուննմ գիննական: Բեր կաթնահոնց՝ եղավ, ծվավ, սորին պարղաճնե թխի, որ փափուկ մնա, տանմ, հղեց օտմ:

Մոլլան հինչուր ասած ա ինիս, կընեգյն ալ օգած պարղաճնեն թխիս ա: Մոլլան պարղաճնեն եր ա ունիս, տանը մթեն քյունջումն նստիս, պարղաճնեն ուտիս:

Կնեգն ըսիս ա.- Մոլլա, պա պետք ա ղարիբեթուն գինս, պարղաճնեն խե յը՞ս տանը քյունջումն ուտիս:

Մոլլան ծծղիս ա, ըսիս.- Այ կնեգ, այ կնեգ, հինչ թոփավուտ կա, իս քի տսնալիս չըմ:

85 (331). ՀԱ՛Յ ԳԻԴԻ ՋԱՀԵԼՈՒԹԻՆ
(տարբերակ)

Մոլլան հիլիվր վախտը մհետ մի վարար արխավ անց կնալիս տեղը կրիս չի, նի ա ինգիս ջրին մաչը, վըտըրը թրջիս: Ինդի ա գիդալիս՝ հետնաց տըսնուղ կա: Արխեն նաներ դուս ա գյուլիս, ըսիս.- Հա՛յ գիդի ջահիլեթուն...

Այտս տըսնալիս ա՝ տըսնուղ չկա, ինքն իրան ըսիս ա. «Ջահիլ վախտս ալ մի բենու պետքի չըմ լալ: Համա բախտմս իլալ ա. մոլլա յըմ դըռալ, անըմ հանալ, գյուլոխս պահալ: Ամեն մի մարթու իմ բախտեն նման հաջող բախտ ինի չի: Ղուրբան ինգյմ ինձ բախտ տվող Ալլահին»:

86 (332). ՄՈԼԼԵՆ ՆՅԱԹԸ

Մի օր Մոլլան եկալ ա տոն՝ մի կուճի, նախշուտ, թազա խալիչա դրած կուռնուտակեն:

Կնեգը հարցրալ ա.- Մոլլա, բազարս լա՞լ գենցած:

Մոլլան ծիծղեցալ ա, ասալ.- Չէ՛, այ կնեգ, մաչիթնմ լալ գյենցած:

Կնեգը ասալ ա.- Պա էտ կուռնուտակեն խալիչան ըշտեղե յա՞:

Մոլլան ասալ ա.- Տանը իլած իմ տակս գիծելու խալիչան տսնալիսըս, որ քյոհնա յա, ծկծկոտված, դեն գիծելու ա դեռած: Որ գինիսնք մաջիթը՝

նամազ ըրիլու, տեղը թազա խալիչա յըն տալիս, որ չոքնք երե, նամազ արընք: Դե իմ մաջիթ գինիլես նյաթը Աստուծեն հետե աղոթք արիլը չի լալ, որ իմ տանս իլած խալիչան քյոհնա լալ, դենը գիծելու, այտս մաջիթումը աղոթք անելու խալիչան դիրալմ կոռնուտակես բիրալ:

Կնեգը զարմացած ասալ ա.- Այ տնըքանդու տղա, պա վըր մոլլան մաջիթի նանե գյողութուն անե, պա ժողովուրթը հի՞նչ կանի:

Մոլլան ասալ ա.- Գյուղացած չըմ, պիտք ի լալ, բերալմ:

ՍՏԱՊԱՏՈՒՄ

ՊՈՒՂՈՒՋ ԱՊԵՐ

1 (333). ՀՈՐԸՍ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ

Տըղերք, որ մհեգ ասըմ, իմ հոր հըրսանենքյը աս օրվա նման մտես ա, հըվատալ չեք, կըծծաղեք, կասեք.- Ալլա Պուղուզ ապերը սուտերեն պարկեն ըռըխը բեցալ ա:

Դե, դուք հինչ ուզիս եք, ըսեցե՛ք: Իս իմ աշկավը տըսած բենը պետք ա նաղլը արըմ:

Իս մըծ, եքքա տղայմ լալ, հնհլիմ լալ օխտը տըրեկան, որ իմ պապ Նաբի իմ հոր փըսակալ ա: Իմ պապու օխտը տղա լալ: Ամենակուճինը իմ հար լալ՝ Սիմոն:

Ղըրդաղեն ադաթ լալ: Հըրսանենքյը ըրիսն լալ իրըք օր, իրըք քիշեր: Համա իմ պապս որոշալ ա.- Սիմոն իմ կուճի տղան ա, պետք ա ինդի մի հըրսանեք արըմ, որ միալեն մախլուղը տըսնն, լըսըն, զարմանան:

Պապըս իրան ըսածեն տար մարթ լալ: Բերալ ա օխտը օր, օխտը քիշեր հըրսանեք արալ. իս եքքա խոխայմ լալ՝ հնհլ ըմ լալ օխտը տըրեկան: Օխտը օրն ալ, օխտը քիշերն ալ քոն չըմ հնալ, կերալ ըմ, խըմալ, պար եկալ: Պապըս իրան խոսքեն տար ա դըռալ: Օխտը հայ, օխտը թուրքու շհնհթկըննոմ հինչքան պարիկամ, խոնախա, քիրվա լալ, կանչալ ա, բերալ հըրսանենք: Էտքան մարթունցը կուշտուցընհլու հետե քիշեր-ցիրըկ օխտը թոռնու երե լավաշ հաց ըն լալ թըխիս, պարիկամ կընհանենքյը օրական օխտը մըծ-մըծ ղըզղան, օխտը տըսակ ճաշ ըն լալ իփիս օրական օխտը աչըռնը, օխտը ղոչ, օխտը էծըրն լալ մուրթիս:

Քիշեր-ցիրըկ շհնթկընուն նըհետ եկած օխտը դաստա զուռնը-ղավալ վետը զուռնա յըն լալ ըծիս, դոմբի թըկիս: Ամեն ըրակու մաջլիսըմը օխտը աշըղնե թառ, սազ ըն լալ ըծիս, նաղլըր ըրիս, իմ պապու թարիփ ըրիս:

Եգեղեցըմը փսակդիրըմը օխտը դեր ա կադարալ:

Նման մըծ, չտըսնված հռնքեն հետե յալ իմ մարըս օխտը տղա յա բերալ, օխտը աղչիգ:

Իմ պապու մուրազը կադարվալ ա: Հու եկած լալ հըրսաեենք՝ տըսալ ա, զարմացալ: Հու վեր ալ որ եկած չի լալ, լըսալ ա, զարմացալ:

2 (334). ՕԽՏԸ ԱՐՋԸՐԸ

Մըծ գետեն կողքեն մըր արտը միշտ յոնջա յընք վարած: Մի տարե իմ պապա գենցալ ա, որ յոնջան ջրի, տըսալ ա արջըրը դադանղուվ ըն դըռած, գյոլիս ըն յոնջան ըրծիս, կոխ տալիս, քոռ ըրիս: Էտ վախտը իս հնիլ ըմ 14-15 տըրեկեն տըղա:

Իմ պապ եկալ ա, ինծ ասալ.- Պուղուզ, արջըրը յոնջան քոռ ըն ըրիս, պետք ա գինընք քիշերը արտըմը մընանք, յոնջան պահընք:

Օրը մըթընհլեն նհետ՝ իս մըր «չախմախլու» թիվանգը նի յըմ գիծալ օսս, իմ պապա յալ մի քող գիծալ ա օսսուքը, գենցալ ընք հասալ յունջատեղը: Յոնջըտեղեն կողքեն մի մըծ ճըղըպորի ծառ լալ, իմ պապա ծառեն ճըղներեն նանե ցըկատավ կտորալ ա, ծառեն հըչոմը մի թախտաջան ա սարքալ, թախտաջանեն երե նըստալ ըն, նըստալ, արջըրը եկա չըն:

Պապս ասալ ա.- Պուղուզ, դու պատառ քոն հնի, իս զարթուն մընամ, սայաղ կանամ:

Իս քոն ըմ հնալ: Մի վախտ անցալ ա, պապս ինծ զուրթընըցըրալ ա, ասալ.- Պուղուզ, տարը մըռած արջըրը եկա չըն, իմ քոնըս տընհիս ա: Միեգ ալ դու զորթուն կաց, իս պատառ քոն հնըմ:

Իմ պապա քունավ ա անցալ թա՝ չի, միհ ալ լուսնհնգյանը լուսավը տըսալ ըմ՝ արջըրը եկալ ըն, արտեն չափարը ճըմռալ, նի դըռալ յոնջան, ըսկսալ ըրածիլը: Հընմբարալ ըմ, տըսալ՝ օխտը արջըր ըն: Մինը արջերեն հարն ա, մինը՝ մարը, էրկուսը՝ էրկու տըրեկան քոթոթներ ըն, իրըքը՝ մի տըրեկան: Իմ պապու բեն չըմ ասալ, թողալ ըմ քոն, իս քողը եր ըմ կալալ, սուս-փուս, փուրսող տալավ, գենցալ արջերեն մուտացալ: Ուզեցալ ըմ քողը գիծեմ վըրծ արջեն վեզը փըռնըմ: Անտերը գիդացալ ա, փախալ ա: Ինծ հաջողվալ ա փըռնհլ էգ մըծ արջեն: Քուղավ վեզը կապալ ըմ, հենգ քուբութնեն ալ իրար քամակե կապալ, բերալ ճըղըպորուն տակը: Իմ պապա արջերեն զըռզըռոցից զուրթնացալ ա, ծառեն նանե վեր եկալ, տըսալ, մանցալ զարմացած: Փախած մըծ արջն ալ տըսալ ա, որ իրան հընգորը, քոթեթնուն փըռնած ընք, տընհիլիս, ինքն ալ եկալ ա մըր քուշտեն վըտ կացալ:

Մըծ արջերեն միներն իմ պապա յա եռ հնալ, միներն ալ՝ իս, օխտը արջըրը հըվաքալ ընք, բերալ շենը, նի արալ մըր վըչխըռնուն արխաջը;

Դե, հալա քըշանաց շուդ լալ: Շինացեք գենցած չըն լալ աշխադանքի: Սաղ՝ շինըհավան, մըծ, կուճի, հավաքվալ ըն, եկալ, զարմացած թիմիշա արալ:

Իմ պապ ինծ ասալ ա.- Ադա, Պուղուզ, էս արջըրը, որ մըզ վընաս չըն տըվալ, մըզ խելունք ենթարկվալ ըն, տար Շավլու ծըմակըմը բեց թող, եք:

Եռ ըմ ինալ մըծ արջերեն միներն, մանցածն ալ հետնաց շարալ, տարալ Շավլու ծըմակըմը բեց թողալ, ինդի մի հըռի տեղ, որ արջըրը օխտը օր, օխտը քիշեր շոռ գյոն, մըր յոնջեն տեղը կարըն վեչ ճարիլ:

Մըհեգ որ Շավլու ծըմակըմը արջըրը էնքան շատ ըն, իմ բեց թողած արջըրընն: Ամեն տարե արսա յըն եկած՝ շըտացած:

Դե, տղերք, էս ալ ասըմ, քա հայ եք՝ հըվըտացեք:

Էտ արջըրը տեըսալ ըն, որ մընք իրաց ըսպանա չընք, քակա չընք, քյոռուղ չընք տըվալ, տարալ ընք ամեն հինչից հարուստ ծմակըմ բեց թողալ, իրաց սիրունեթուն արալ, իրաք ալ, արջ կինի, հինչ կինի, ախըր քյոհնա դովրին արջը հնսան ա իլած, մարթու նման օմեն բեն հըսկանըմ ա: Էտ արչըրընն ալ մըր արած լավեթունը մոռացա չըն: Իմ պապ քանե սաղ լալ, օմեն տարե, աշունքը, որ Շավլու ծըմակեն ճըղըպորանցը պուպուն հըսնիս լալ, օխտը պարկ կարմուր պուպու լցրիս ըն լալ, շըլակիս, գյոլիս մըր տոն, իմ պապու գյորիշը: Իմ պապ ալ բիրիս լալ հինչ որ պետքի լալ՝ էտ արջերեն պատև տալիս, հըղե դիրիս:

Մի տարե յալ, եկալ ըն, տըսալ՝ իմ պապը մըռած ա: Ալ իտա ետը՝ եկա չըն:

3 (335). ՕԽՏԸ ԳՅՈՒԼՈՒՐԸ

Իմ քըվորտանցըս մըծը՝ Նախշում, փըսակված լալ հուժեցե խաչու նհետ: Հակառակու նըման իմ մարս՝ Նուբար, օխտը ընխչըգերընցը ամենաշատը էս Նախշում է լալ շատ ուզիս: Լա որ մընն լալ ինգիս, լեց լալ ինիս, ըսիս.- Աշկըրըս քուռանա, իմ խոխան խի՞ յըմ հըռի տեղ մարթու տըվալ, մանցալ կարոտ: Յարաբ, տըսնաս մըհիգ հինչ ա՞ ըրիս, հունչո՞ւր ա ըպրիլիս:

Մի օր ալ, որ իմ մար, իմ բաջու մընն ա բերալ, ըսկըսալ լեց ինիլը, ասալ ըմ.- Ա մար, բեյթուն տեղը լեց մա ինի: Իս մըծ տղա յըմ, ոչ մի բենից վըխիս չըմ: Կգինըմ իմ բաջու կտըսնամ, կգյոմ:

Իմ մար ուլխացալ ա: Եր ա կացալ թուրունը վառալ, խըմոր հունցալ, օխտը պարղաճ յա քըխալ, դիրալ միզարըմը, նի կապալ մաշկըս, հըղի դիրալ դիբի Հուժ շենը:

Ինձ հետե խաղ ըսիլավ, լալա մեհրի կընչիլավ, գենցալ ըմ հասալ Հուժե ծըմակը: Միև ալ էն ըմ տըսալ՝ օխտը գյուլ եկալ ըն իմ չորք թարափը կըտըրալ: Իս ինձ կուրցըրալ չըմ: Մի մըծ կաղնե ծառ լալ, եռ ըմ ինալ ծառեն, բեցուր հըչոմը նըստալ: Գյուլուրն ալ եկալ ըն ծառեն տակեն նըստոտալ՝ ըռխնեն բեցալ, եշալ դիբի ինձ: Տըսալ ըմ օրը մքնիս ա, գյուլուրն ալ գինիս չըն: Ճարըս կըտըրած՝ ծառեն ճըղներեն նաևե կուտրատալ ըմ, հըչոմը մի թախտաջաև սարքալ, որ քոն ինած տեղը վեր վեչ ինգյըմ, սուս արալ նըստալ: Օխտը օր մանցալ ըմ ծառեն երե: Օխտը գյուլուրըն ալ ծառեն տակեն: Հակառակու նման էտ օխտը օրումը մի մարթ էտ հըղոքըն եկա չի, որ գյուլուրը խըռնեք տա, իս ծառեն նաևե վեր գյոմ, գինըմ: Դե, մըր տաև ալ ինդի յըն գիդալիս՝ նայեմ իմ բաջու տանը: Իմ բաջի ալ գիդալիս չի, որ գենցած ըմ, մանցած հըղեց՝ գյուլերեն ըռխոմը: Իս ալ օրական մի պարղաճ ուտիս ըմ՝ ծառեն երե նստած, խաղըր ըսիս:

Օխտը օրը որ թմըմիս ա, իմ հար նիգյարաև ա մընալիս: Ըսիս ա.- էս խոխաև խի՞ յա ետ ինգյած, գինըմ, տըսնամ հինչ ա՞ դըռած:

Գյոլիս ա տըսնալիս, նայեմ Հուժե ծմակըմը կաղնե ծառեն երե նըստած խաղ ըմ ըսիս, օխտը գյուլ ալ ծառեն տակեն նըստոտած իմ խաղերեն անջուկ ըն դիրած, լըսիլիս: Դե, իմ հորս թվանգյ լալ: Առանց թըվանգյ տեղ չի լալ գինի: Թվանգյը հուլուրիս ա՝ դիբի գյուլուրը, երի ըրիս ամենամեծ գյուլը վեր գիծիս: Մընացած գյուլուրը վըխեցած փախչըմ ըն: Իս ծառեն նաևե վեր ըմ եկալ, գյլխես եկած փորձանքը հորըս նաղլ արալ:

Այտըս, միասին գենցալ ընք իմ բաջուից տոն, մի քիշեր ղոնաղ մանցալ, էքսի քշանաց, սաղ-սալամաթ եկալ մըր տոն:

4 (336). ՕԽՏԸ ԹՈՐՔ ՏԸՂԵՐՔԸՍ

Մի աշունք իմ մար ուլուզացալ ա: Օխտը օր լալ տեղաշորում խուտուրու ինգյած: Օխտը օրում ոչ մի թիքյա բեն ա դիրալ բիրանըմը, ոչ ալ մի կում ջուր ա խըմալ: Իմ հար գենցալ ա օխտը շենու նաևե օխտը հաքիմ ա բերալ՝ մորըս ցավը գիդալու հետե: Օխտը հաքիմնեն օխտը օր, օխտը քիշեր նըստալ ըն խիյալ-խիյալ արալ՝ մորըս ցավեն ճարը որոշալ:

Ասալ ըն.- Պետք ա օխտը տեսակ ծըռըպտող ճարեք, օխտը օր, օրական օխտը հետ օտի, որ սուրինանա:

Իմ հար խիյալ-խիյալ ա արալ, ինձ ասալ.- Պուղուզ, օխտը տեսակի պըտող Մըրդընեմ շենըմը կճարվի, միև ալ՝ Մըղրի: Մըրդընեմ մոտի ա,

գինի առաչ Մըրդընեմ, որ կարըս վեչ ճարի, ջահիլ տղա յըս, ետի տոր Արախսը անցեր, գինի Մըղրու նանե բեր:

Իմ հոր խոսքը լըսալ ըմ: Եր ըմ կացալ, պատառ արծաթ փող նի ածալ մի քիսա, դիրալ ջըբոմըս, մահակըս դիրալ օսսես, Աստուծեն անըմը տըվալ ըմ, նի ինգյալ հըղեն, ինծ հետե խաղ ըսիլավ՝ գենցալ: Հալա Մըրդընեմ նի վեչմըտած, բաղերեն ղաթըմը օխտը թորք առաչըս կըտըրալ ըն, ասալ.- Պուղուզ, յա պետք ա թուրքանաս, յա պետք ա քի ըսպանընք: Խիյալ արի, տըս, որ միներն համաձայն ըս, խոսի:

է՜, օխտը թորք, իս մանակ մի հայ տըղա, ասալ ըմ.- Այ թորքըր, խի՞ եք ինծ ըսպընիս: Թորքն ալ մարթ ա, իս ալ թուրքունալիս ըմ:

Դե, օրենք ա, հայ մարթը որ թուրքեթոնը ընթունիս ա, ամեն մի թորք իրան իլածեն նանե հինչոր կամենըմ ա, բիրիս ա տալիս ջադիդ հայեն: Ջադիդն ալ հինչ որ տըսնի, հինչ որ սըրտը օգի, ասիրգյամիշ արիլ կավըչնի, կըճարընն կըբերընն, կըտան: Դե թորքերը ուլխանալավ ինծ տարալ ըն իրաց շենը, մի սորին տոնն տըված: Հինչ թորք որ լըսալ ա՝ Պուղուզ եկած ա թուրքացած, սըրտեն օգած մի անամ եր ա կալալ բերալ, խալի, կարպիտ, տեղաշոր, ուտելեղեն: Մի խոսքավ՝ մարթեն հինչ պետք ա ապրիլու հետե հըվաքալ ըն, բերալ: Ըրկոնուն ալ օխտը հասած, փիսած, նախշուտ ըղըչիգներ ըն բերալ, ասալ.- Պուղուզ, ըստուք ալ քու կընանեքընն ըն:

Մի օրումը դըռալ ըմ հարուստ մարթ, օխտընն ալ նախշուտ, ջահիլ կընգատար: Իմ հար ալ բենե խաբեր չի: Ինդի ա գիդալիս, Մըղընեմ պտող ճարածը չըմ, գենցալ ըմ դուս եկած Մըղրի՝ Արախսեն էն թարափը: Օխտը օր Մըրդընեմ մնալեն ետը, մի քիշեր եր ըմ կացալ, փախալ, եկալ մըր տոն, գյլխես եկած փորձանքը իմ հոր նաղլ արալ: Իմ հար ալ թողա չի իս տանը նանե դուս գյոմ, ինքընն ա գենցալ Մըղրու նետ պտող բերալ իմ մոր հետե: Մի տարե անց, մըզ մըրդըմնեցե մի ծանոթ թորք լալ, եկալ ա, խաբեր բերալ, որ իմ օխտը թորք կընանենքյս ազատված ըն, ամեն միներն մի տղա խոխայն բերած, նայեն իմ հըղեն յիշիս:

Ասալ ըմ՝ ինծ մեխկը չօնըմ: Մեղավորը ծեր շինացեքյն, ուզեցալ ըն զոռավ ինծ թուրքը կըրընն, իս ալ իրաց խափալ ըմ, փորձանքի բերալ, փախալ:

5 (337). ՕԽՏԸ ԳՅՈՂՈՒՐԸ

Մի աշունք օր, օխտը թայ-թուշ տղերք մըր տավարնեն տարալ ընք դիբի Քըմաջրին ըռշկին պըռըկննեն արուտ տալու: Թուռ ու թողբ օր լալ:

Մի թումբու երե կըրակ ընք վառալ, գենցալ ներքը ծորեն նըհետ ղամիշ բերալ, շըվի, պզան սարքալ, տըզտըզացրալ, խաղ արալ, նըստալ հաց կերալ, այտըս ծըրավալ ընք: Եր ընք կացալ գենցալ Քըմըջրին ախպրին ջուր խըմալ, որոշալ, որ մըթենը ուզիս ա ինգի, գիննք տավարը հըվաքընք ըկաննք գիննք տոն: Էտ վախտը մին ալ էննք տըսալ, օխտը թորք գյողըր, շափաղ-շափաղ տըվող ղամեներն ծըռքըրնուն, եկալ ըն մըր չորք թարափը կըտըրալ, ասալ.- Ո՛չ կըփախչեք, ո՛չ ալ սաս կիաներ: Թա ուզիս չեք ձեզ ըսպաննք, սուս-փուս վըտ կացեք:

Դե ճար հի՞նչ, սուս ընք արալ, վըր կացալ: Գյողըրը մըզ փըռնոտալ ըն, իրըսնես մըր միզերնենրավը ծածկալ, ծըռերեն երե կըպոտալ, գենցալ: Պատառ վախտ որ անց ա կացալ, իս չալօշմիշ ըմ ինալ, ինձ ետ արալ: Այտըս, հընգըրտոնացըս ալ ազադալ ըմ, գենցալ ընք տավարը հըվաքալ, ըկանալ, տըսալ օխտը ջոխտ եզնըր կավչնն: Գյողըրը ջոկած ըն սորին եզնիքը, տարած ըն: Գենցալ ընք տոն, գյուլուխունուս եկածը նաղլը արալ: Շեներն ջահիլներն օխտը օր, օխտը քիշեր նիյն ինգյալ միալեն շինըթկըրնեն, կըրեցա չըն գյուղերեն տարած եզնիքը ճարիլ:

Էտ վախտը մըհալեն մըծ խանը Սամանդ խան լալ: Մըծ գյողըրըն ալ իրան նոքյարներնն լալ: Իմ հորս խաներն քուշտեն մըծ պադիվ լալ: Գենցալ ա խաներն արզ արալ: Խանը հարգալ ա հորըս մըծեթոնը, բերալ ա օխտը ջոխտ եզնըրը տըվալ, եր ա կալալ բերալ:

Սաղ շինացեք մանցալ ըն զարմացած՝ խաներն քուշտեն հորըս իլած հարգանքեն հետե:

6 (338). ՂՈՒՉՂՈՒՆԵՆ ՕԽՏԸ ՉՈՒՆ ՆԱ ՕԽՏԸ ԽԸՐՎԱՍՈՒՆՔԸ

Ալլա ջահիլ վախտըրնես լալ: Օխտը հընգերավ մըր տավարը տարած ընք լալ Կարմուր քարեն պառակներն՝ արուտ տալու: Եշալ ըմ դիքի երգինքը, հընգըրոտանցըս ասալ.- Տղերք, ղորթ ա, հավան պարզ ա, համա կըտըսնեք, կեսօրեն կարկուտ ա գյուլական:

Հընգըրոնեքյս ծծղոտալ ըն, իմ գյուլոխըս հանաքվարի թակալ, ասալ.- Սայաղ կաց, կարկուտը քու գյուլոխը թակի վեչ կոտրի: Մընք մըր գյլխըներն կարուղ ընք պահիլ:

Դե, մհեգ հի՞նչ ասըմ, որ հավատ արեք: Էն օրվա օրը չի, համա էն օրվա Աստուծն ա: Հավատացեք: Կես օրեն ետը հավան ըսկսալ ա փոխվիլը, թողբը եկալ ա կոխալ, երգինքը ըսկսալ ա ուրուտալը, կըծկեծուն

տալը: Ըսկըսալ ա կարկուտ գյոլը: Կարկուտ, հի՞նչ կարկուտ, ամենակուճինը հավու ծըվու նանե մըծ-մըծ ըն լալ: Եշալ ըմ գյլխըներ, տըսալ քըրծըմը մի ղուզղունու բուն կա, դըժվարթունավ նի յըմ մըտալ, բիրցըրացալ քըրծը, հասալ ղուզղուներն բուներն, տըսալ օխտը ծու կա: Ղուզղունը որ ծակած ա ճոտերը դուս արած, քիչիվներն սալամաթ նայեն մընալիս: Ջու, հինչ ծու, ամեն մինը մի մըծ կուժու միչըք: Ջեռքես քող լալ, ծուվանցը քիչիվներն միհի-միհի կապալ ըմ, վեր բերալ: Ամեն մինըս նիյնք մտալ մի ծվու քիչիվու մաչ՝ կոչ եկալ, սուս արալ, դեչանը որ կարկուտը ետ ա կալալ:

Իս ծըվեն քիչիվներն նանե դուս ըմ եկալ, եշալ դիբի մըր դիմացեն՝ երկար արտըրը, տըսալ զարմանալի օխտը բեներր ա սիպտակեն տալիս: Հընգըրոնացըս ասալ ըմ.- Տղերք, մըր բենը խարաբ ա: Քոչվոր թորքըրը եկած ըն մըր հըղըցին երե օբա սարքած: Գինիս տեղը շըները մըզ կկծըն:

Տղերքը ասալ ըն.- Որ օբա ինի եկած, տեղարքը մարթ կըրվա, շները կհաչըն: Կա-չկա էն մի չըտրսնըրված բեն ա, գինընք, տրսնանք: Գենցալ ընք, տրսալ՝ հի՞նչ օբա, հինչ բեն, խըռվասունք ըն: Հինչ խըռվասունք, ամեն մինը մի կալու միչընք: Կարկուտը որ ետ լալ կալած, այտրս վարար թոռ լալ գյոլիս:

Ամեն մինըս նըստալ ընք մի խըռվասունքու տակե, էնքան, որ թոռը ետ ա կալալ: Եր ընք կացալ կացեննեն քաշալ խըռվասունքնեն տակնաց կըտրրալ, տավարը նի արալ հըղեն, խըռվասունքնեն դիրալ ուսուռնուս, զոռռալ, տընքտընքալալ բերալ շենեն մաչտեղը վեր դիրալ:

Շենեն մախլուղը՝ կուճի-մըծ հվաքվալ ըն, թիմիշա արալ, մանցալ զարմացած: էտ վախտը մըր շենը օխտը մահլա լալ: Ամեն մի խըռվասունքը տարալ ընք մի մահլոմ կըտուր-կուտուր արալ, կացնավ հավասար բուժոնալ տրներեն երե:

Շինացեք օխտը օր շարունակ էտ խըռվասունքնեն գյոռան դըմակու նման խըրավալ ըն կերալ, պըրծա չի:

Մհեգ այամը փոխված ա, ամեն հինչ ալ փոխված ըն: Ալ ինդի մըծ-մըծ խըրվասունքնե դուս չըն գյոլիս, որ տրսնաք, հավատաք: Իս ալ, որ իմ տրսածնես նաղլ ըմ ըրիս, հըվատըմ չեք: Ծըծըղիս եք, ըսիս, թա՝ Պուղուզ ապերը սոտ ա ըսիս:

7 (339). ՕԽՏԸ ԷՇՈՒ ԲԵՌՆԸ ՄՈՐԵՆ

Մի գիրագի օր նըստած ըմ լալ մըր տանը ըռըշկին՝ տըրըխ ըմ լալ գյուրծիլիս: Մինալ եշալ ըմ, տըսալ շենեն ըռըշկին՝ սարեն դոշումը, մի չըտըսնըված մըծ բեն կըրմըրի ա տալիս: Զարմացալ ըմ, թա էն հի՞նչ բեն ա: Տըրըխ գյուրծիլը թողալ ըմ, կացենը դիրալ օսսես, գենցալ, դուս եկալ սարեն դոշը, տըսալ, հի՞նչ, մի մորե ա: Ախըր հինչ մորե, քի ներակ, մի հազար տըրեկան ճըղըպորի ծառ: Կացենը քաշալ ըմ, տակնաց կըտըրալ, թոլ արալ, բերալ գիծալ շենեն ըռշկին մըծ գետը:

Էտ վախտըրը համարյա շենըմը էնքան ծի, ջորե իլա չի: Շատերենը էշ լալ: Դե, ասալ ըմ, որ գիրագի օր լալ, շինացեք բեն չըն լալ գենցած, նայն լալ պարապ պըտըտըկերեն նըստոտած:

Շինեն ըռշկին նըհետ, սաս ըմ արալ, ասալ, որ քողուրը դիրըն էշերեն երե, շուդավ գյոն մըծ գետը:

Իմ սասեն շինացեք էշըրը եր ըն կալալ, եկալ: Ըշկըռնուն տըսածեն մանցալ ըն զարմացած, քար կըտըրած: Շինացեք ասալըն.- Քո հոր տոնը շեն մնա, Պուղուզ, խի էս մըծեթուն ալ մորե կինի՞:

Կացեննեն քաշալ ընք մորեն կըտուր-կուտուր արալ՝ դըռալ ա օխտը էշու բեռնը: Մորուն ծողըն ալ էնքան հաստ լալ, որ ճըրղոտալ ընք տախտակ արալ, դըռալ ա օխտը ջոխտ աշան ըրիլու կամնըր: Շինացուց հուր որ կամնը չի լալ, մարթա մի կամնը տըվալ ըմ փեշքեշ իրաց: Մորեն ալ բեռնալ ընք օխտը իշու, բերալ շենը: Ամեն մի բեռնը մորեն տըվալ ըմ մի մահլու մախլուղին: Տարալ ըն կես-կես արալ՝ տան երե բուժոնալ:

Օխտը օր շարունակ սաղ շինըհավան էտ մի մորեն կըրեցա չըն օտի, պըրծըցնիլ:

Դե, մեզ այամը փախված ա, մարթիք ալ ըն փոխված: Աստուծ ալ նըման նամաթ տալիս չի: Իս ալ քյոհնա այամեն, որ իմ աշկավըս տըսալըմ, նաղլ ըմ ըրիս՝ հավատամ չեք, ծրծըղնիս եք, ըսիս.- Պուղուզ ապերը սոտ ա ըսիս:

ՈՒՍՏԱ ՄՈՒՐԱԴԻ ՍՏԵՐԸ

8 (340). ՄՈՒՐԱԴԵ ՀՈՒՋԱԹ ԿԱՐԹԻԼԸ

Մի տարե եկալ ըմ Խինգիհին: Քյուչավը գինիս տեղը, առաչըս ա դուս եկալ Թուրուսանց Հարութ՝ մի թոխտ ձեռքեն: Թոխտը տըվալ ա ինձ, ասալ. «Ուստա Մուրադ, կարթի տըսնամ՝ էս թոխտըմը հինչ ա՞ գիրած»:

Է՜, ուստա Մուրադ վարժատոն ա՞ գենցած. այփ-բեն ա՞ կըրթեցած, ղալամ ա՞ փըռնած, որ գիր կարթի: Դե, գիդալիս ըմ լալ, որ Հարութե տըղերքը ղարիբբուընըմ ըն: Կասըմ՝ բաց, տըղերքընն պըրըվաթոխտ ղորկած: Խաթըրեն անց չըմ կացալ; Թոխտը իք ըմ կալալ, կըրթեցալ, «Պարև, ապեր: Մընք շատ սորիննք: Բեննք ճարած, ըշխադըմ ընք: Մըզանե նիգյարան վեչ մնաք: Փող պարտք արի, խոխենքը պահի: Շուդավ եկուղ ինի, փող կըղորկընք»: Իստի որ կըրթեցալ ըմ, Հարութ ծըծղեցալ ա, ասալ.- Ուստա Մուրադ, ախըր էտ պըրըվա թոխտը չի, հուջաթ ա:

Իս ալ ասալ ըմ.- Այ հորըտ տոնը շեն, շուդ ըս լալ ասի հուջաթ ա, իս ալ հուջաթվարի յըմ լալ կարթի:

9 (341). ԱՐՋԵՆ ՔՈԹԵԹԸ

Մի տարե մըր շենեն վըրսըկաննուն նըհետ գենցալ ընք Շավլու ծըմակը՝ խուզավըրս: Մինալ էն ըմ տըսալ՝ ինիլ լալ էրկու տըրեկան մի արջու քոթոթ, նայե մի քըրըտակու խուտուրու ինգյած, խըռընմփալավ քոն ա ինած: Մեզարըս ետ ըմ արալ, ըռընխը կապալ, որ սաս վեչ արի, ղայիշըս ալ նիյ ըմ գիծալ վեզը, փըռնալ, բերալ դուքաննես մաչեն սուննեն երե կապալ: Ամեն օր հաց ըմ տըվալ, ճաշ ըմ տըվալ, ջուր ըմ տվալ, պահալ, մըծըցըրալ: Համ չագյուչ թըխիլընն ըմ սըվերցըրալ, համ ալ փոքսը փչիլը: Մի վախտ անց, ինդի ա համիլ դընռալ, որ բինաետ, խուխու նման գինիս լալ շինամաչ, քուչենըմը շեննեն տըղեցը նհետ խաղ ըրիս, գյուլիս դուքանըմը քոն ինիս;

Մի քանե տարուց ետըն ալ, բինայետ, քիշերները գինիս լալ ծըմըկննեն՝ շոռ գյուլիս, ետ դընռնալիս գյուլիս: Միետ ալ գենցալ ա ծըմակը, օթ օրեն ետըն ա եկալ, փըռնալ ըմ մի սորին թակալ, հաց ալ չըմ տըվալ:

էքսի քըշանաց եկալ ըմ տըսալ արչը կավըչնի: Եր լալ կացած, հինչքան հաջաթնե կար, նի լալ ածած քյուրան, անծուղը ետ ի ածած, փոքսը փըչած, ամենը հիլիյ իրած, թողած գենցած:

10 (342). ԹՈՐՔԵՆ ՀՈՒՋՈՒԼՆԵՆ

Քյոհնա դովրիհ, Մուսու շենը հայու շեն լալ: Ետերը խարաբա յա դըռալ: Միեգ յալ՝ թորքըրընն ըպրիս:

Մի օր, մի քանե հաջաթնե տարալ ըմ Մուսու շենըմը ծխիլու: Բենը ինդի ա դըռալ, որ կըրեցա չըմ օրեն ետ դըռնի, քիշերը մանցալըմ իմ ծանոթ թորքեն տանը:

Դե, միեգ հինչո՞ւր ասըմ, որ դուք հավատ արեք, ասեք վեչ՝ ուստա Մուրադ սոտ ա ըսիս: էտ քիշերը «սըվ օղծը կըծածեն ըշկերեն քոն ա եկալ, ուստա Մուրադի աշկերեն քոն չի եկալ»: Անտեր մանցած թորքեն հուջիլնեն դառըլ ըն եկալ ինձ կերալ, գյըլխես մի օյին դիրալ, որ ալ դըմացալ չըմ, լուսուբեցեն եռ ըմ ինալ ձիյանս, հըղե ինգյալ: Հասալ ըմ Հուժե ծըմակը, լուսացած ա: Չին բեց ըմ թողալ՝ ըրածի, իս շորրս հանալ ըմ, եշալ, տըսալ հուջուլ, հինչ հուջուլ՝ ամեն մինը գյուռհնուկու ճոտու միչըք:

Հըրթեն փըռնալ ըմ դիրալ տափեն, թափանչավ երի արալ, կըտորալ: Անտերնեն էնքան շատ ըն լալ, որ թափանչես գյուլլեքյը պըրծալ ա, հուջիլնեն պըրծա չըն: Ճարըս կըտըրած, թափալը տափեն, շորրըս գեցալ, եռ ինալ ձիյանըս, եկալ տոն:

11 (343). ԻՐԸՔ ԳՅՈՂԸՐԸ

Մի տարե իս նա Մուրութաց Վարթազար շենեն տավարընն ընք լալ պըհիլիս: Աշունք օր լալ, հավան ալ թողբ լալ: Տավարը տարած ընք լալ «Հաճար տեղերեն արտըրը»: Մի թումբու գյլխե կըրակ ընք լալ վառած, նըստած՝ սոհբաթ ըրիլիս: Վարթազար քունավ ա անցալ: Հակառակը հակառակ ա ինիս: Մինալ էն ըմ տըսալ՝ իրըք գյող թորքըր գյորգաները քաշալ ըն իմ չորք թարափը կըտըրալ, որ ինձ փըռնն, ըսպանըն, տավարը հըվաքըն քըշըն, տանըն:

Ասալ ըմ.- Ա թորքըր, ինձ ըսպանիլավ ձեզ օքուտ չի բերի: Ըսեցեք գիդամ՝ ձեր օգածը հինչ ա՞, տամ, երկալե՛ք, գենցե՛ք:

Ասալ ըն.- Մարթա մի ջոխտ եզնը, մի ծընած կավ:

Եր ըմ կացալ վեց եզնը, իրըք կավ ջոկալ, տըվալ իրաց, ասալ.- Ձեզ հալալ ինի, քըշեցե՛ք, տարե՛ք:

Գյողըրը, որ տըվարեն հետեն յուլաղավը իրար հետնաց որ շարվալ ըն, իս թիվանգյըս եր ըմ կալալ սըտորալ: Թիվանգյս ուրուտացալ ա, գյուլլեն իրըք գյուղերեն սըրտըմըչերավը ծակալ ա, անցալ, գենցալ օխտը գեզ ալ դենը, նի եկալ տափեն թոզաղան արալ:

Գյողըրը իրեքյըն ալ ըստակալ ըն: Տեղը մի քյոհնա վըրատեղ լալ, իրեքյան ալ նիյմ գիծալ վըրըվըղավ արալ:

Վարթազարե քունե երկըցըրալ, տավարը հըվաքալ, բերալ:

12 (344). ՔԱՇԿԵՐԵՆ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ

Գյուրունքդեմ լալ: Հակառակու նման ալ էտ օրը բենըս շատ լալ: Ետե յըմ եկալ տոն: Տըսալ ըմ տղուս՝ Առաքել, նայի դըրքեն վըտը՝ լեց ա ինիս: Հըրցըրալ ըմ.- Հինչ ա՞ պըդահած, հինչո՞ւ հետեյս լեց ինիս:

Ասալ ա.- Ասօր տավարը տարած ընք լալ դիբի ներքե չիմաննես: Մըր մի դանա կորած ա:

Օրը մըթնիս լալ: Մըտածալ ըմ՝ քանե մըթենը ինգյած չի, գինըմ շոռ գյոմ, ճարըմ: Գենցալ ըմ, դես ըմ շոռ եկալ, դեն ըմ շոռ եկալ, դանան ճարա չըմ: Թոռը ըսկսալ ա նի օնիլը: Մըր «Քաշկեն քըրատակը» տեղեն մոտե լալ: Խըլքես եկալ ա, որ կարուղ ա դանան գենցած ինի, քըրըտակեն նըստած:

Գենցալ ըմ նի մըտալ քըրատակը, տըսալ հի՞նչ. մի ութըն-տասը քաշկըր նայեն տեղը նըստոտած: Քաշկերեն մինը հայերեն խուսեցալ ա, ասալ.- Ուստա Մուրադ, քու դանան մընք ընք տարած պահած, որ դու գյոս, ճըրիլու հետե շոռ գյոս, մընք քի փըռննք, տաննք: Լըսած ընք, որ դու սորին պար գյոլ ըս գիդալիս: Մըզ ասօր հըրսանենք օնընք: Խընթրիս ընք աշկըրըտ փակըս:

Դե, ճար հինչ, քաշկու ձեռք ըմ լալ ինգյած, առանց խուսելու, սուսփուս, աշկըրըս փակալ ըմ:

Պատառ վախտ անց ա կացալ, ասալ ըն.- Աշկերըտ բեց:

Բեցալ ըմ, տըսալ, հինչ, նայեմ քաշկերեն հըռնըքոմը: Ինձ տարալ ըն իրաց գյլխավորեն կողքեն նըստըցըրալ, բերալ սուփրա փըռալ, թազա լավաշ հաց դիրալ, ջամերով լիգյը կարմուր գինի դիրալ, բրինձավ փըլավ ըն բերալ, որ եղը ամանուն մաչեն գյոլ լալ տըված: Ոչ մի բենու եշա չըմ,

ոչ վախեցալ ըմ, ոչ ալ հըմընչեցալ, կերալ ըմ, խըմալ, նհետնուն քեփ արալ, պար եկալ:

Մի վախտ, որ անց ա կացալ, գյլխավըր քաշկեն խընթրալ ըմ, որ մըր տան նիգյարան կինըն, իրավունք տոր, գինըմ մըր տոն:

Գյլխավըր քաշկը ձեռքը փըլավեն եղեն մաչեն թաթախ ա արալ, թըխալ մաշկես:

Հըրցըրալ ըմ.- էտ հի՞նչ բեն ա:

Ասալ ա.- էս նշան ըմ թխիս, որ դու գիդաս քի նըհետ պըդահածը իրգյուջի լալ, ոչ թա ըրազի:

Այտըս ասալ ա.- Աշկըրըտ փակի, բեց:

Աշկըրըս փակալ ըմ, բեցալ, տըսալ նայեմ մըր դըրքեն, կորած դանան ալ կողքես վըտը:

ՍԸՏԱՍԱՆ ՍՈՒՐԻ

13 (345). ԼԸՊԸՐԸՍՏԱԿՆՈՒՆ ՃՈՏԸՐԸ

Խոխենք, ամենըտ ալ գիդաք, որ մըր շենեն քիվշանըմը հինչ տեղ որ լըպըրաստակ ինի, ինի վեչ, մըր Խուբեն արտը լըպըրստակնուն վաքանն ա, տեղարը նա կինի լըպըրըստակավ լիգյը:

Մի գյորունք իս նա իմ դադա գենցալ ընք մըր խուբեն արտը վըրիլու:

Դե, մհեգ դուք ինծ ուրթումնը չեք տալիս: Համա իս ուրթումն ըմ ուտիս, որ հավատաք:

Էն գյղեցեն յանի, որ քոլու տակե որ եշալ ըմ, տըսալ ըմ լըպըրըստակու ճուտերավ նայե լիգյը: Անտերնեն ամեն մինը յա հենգ, յա օխտը ճոտն լալ դուս արած:

Իմ դադու ջուբեն դենակը եր ըմ կալալ ամեն ճուտերեն անջուկնեն կըտորալ, մանշուր արալ, որ ծըմեռընը հինչ վըրսական անջուկը կըտըրած լըպըրաստակ վեր գիծի, իս գիդամ, որ իմ նշան արած լըպըրըստակեն ա:

Էտ ծմեռընը, ամեն օր ըրկինաց երե, գինիս ըմ լալ շենեն գյլխեն բանդըմը վըտ կընալիս հինչ վըրսկան, որ գյոլիս լալ, տըսնալիս ըմ լալ անջուկը կըտըրած լըպըրաստակ ա վեր գիծած, բիրիս ըմ լալ հընգըրվարի կես ըրիս:

14 (346). ՏԱՍԸ ԳՅՈՒԼՈՒՐԸ

Ըշուևքդեմ լալ: Վըչխըռնեն հալա դուսի արխաջըմ ընք լալ պըհըլիս: Էնքան ցորտ չի լալ: Իս ալ մըր կըտրեն ըմ լալ քոն հնիս:

Մի քիշեր մին ալ էն ըմ տըսալ, որ վըչխըռնեն խըրտընալ ըն, եկալ արխաջեն լաստեն ըռըշկին թուփ դըռալ: Մըտըքավըս անց ա կացալ, որ կարող ա գյուլ ա եկած, նի մըտած վըչխըռնուն մաչը: Լուսլոնգյա ալ քիշեր լալ: Եր ըմ կացալ, տըսալ հի՞նչ... Դե դուք ինձ ուրթումնը չեք տալիս, իս ուրթումն ըմ ուտիս, որ հըվատաք՝ իմ դադու արըվը յանի, տասը գյուլըր ըն՝ ամեն մինը մի վըչխար փըռնած ա, դիրած տակեն, խըղդած, ուտիլիս:

Հակառակու նըման մըր շոնն ալ նայ լալ կըտըրեն իմ կողքես նըստած, թա խի՞ չի լալ գիդեցած, հըջեցած, մանցալ ըմ զարմացած:

Խուսեցա չըմ, ոչ մինեն ալ ասա չըմ: Սուս-փուս գենցալ ըմ նի մըտալ տոն: Մըզ մի երկար սիչիմնը լալ, եր ըմ կալալ, կըտորալ՝ շինալ տասը կուտուր: Փուրսող տալավ գենցալ ըմ, հասալ ըմ գյուլերեն: Դե, քողցած գյուլուր, ըշուևքան չաղ-չաղ վըչխըռնեն, անտերները հնդի ալխայինն լալ ուտիս, որ կասս տեղարքը ոչ մարթ կա, ոչ ալ տար կա:

Նափասս պահած, գյուլերեն հագվենեն մինի-մինի քուղավ պընդ կապալ ըմ, ջոնդըրըն ալ տարալ պընդ-պընդ կապալ արխաջեն սուներեն երե: Որ գյուլը փըռնած վըչխարը կերալ ա, պըրծըցըրալ, ուզեցալ ա երկանա փախչի, կըրեցա չի: Մանցալ ըն ժընգըռնած, ըռըխ-ըռխու տըված:

Մնացած վըչխըռնեն հվաքած ըմ լալ, նի արած գյումը, նի մըտած տըղերըս, սուս արած, յանի ոչ մի բենից իս խաբար չըմ:

Քըշանաց մըր տընեցեք եր ըն կընալիս, տըսնալիս, հի՞նչ, արխաջըմը վըչխըռնուն տեղը տասը գյուլ կա կապած: Մնալիս ըն զարմացած: Գիդալիս ըն, որ իմ արած բենըրըն ա:

Այտըս եր ըմ կացալ, իմ դադու թվանգյը եր կալալ, ամեն մի գյուլեն ճըկըտմաչեն մի գյուլլա երի արալ, ըսպընոտալ, մուրթենեն վեր արալ:

Իմ դադա գյուլերեն մորթենեն տարալ ա Թարվիզում ծախալ: Քըսան վըչխարու արժեք փող լալ հանած:

15 (347). ԻՐԸՔ ՕՐՎԱ ՀԸՂԵՆ ՄԻ ՍՀԱԹԸՄ

Մի տարե գյորունքը նոր լալ բինվալիս: Հակառակու նման, տարեն ալ շատ քամուտ լալ: Հունչո՞ւր ա դըռալ միբիրդամ իմ մարս ուլուզացալ ա:

Դե, էտ ալ ասըմ, դուք ալ գիդաք, որ մըր տանը հինչ պկասի, չպըկասի, չայը, ղանդը միշտ անպակաս ա ինիս: Իմ մորըս ուլուզանալը նա չայ-ղանդեն պըրծընիլը մին ա դըռալ: Հակառակու նման ալ իմ հորըս թու-թունն ալ ա պըրծալ:

Իմ հար սորաշըղա արալ՝ տըսնա Թարվիզ գենցուղ կա, որ չայ, ղանդ, թութուն բերիլ տա, էն ալ հակառակու նըման, էտ օրրը Թարվիզ գենցուղ չիլալ:

Ալ ճար չի լալ, մի շատ քամե օր լալ: Իմ հար բերալ ա էրկու ջուրենուն քյոմիր բեռնալ, նի արալ առաչըս, ասալ.- Սուրեն, Աստված, Աստված, ումուդ ըս դուվ ըս, քշի տար Թարվիզ, անծուղը ծախի, պատառ չայ, ղանդ, թութուն կալ, բեր:

Ջոխտ ջորենեն նի յըմ արալ առաչըս, քըշալ: Քամեն ալ էնքան ուժեղ լալ, որ ուրուտոց լալ տալիս:

Հասալ ըմ մըր «Ճանջեն հիշտեն» դուզը, տըսալ ըմ քամեն շատ ուժեղ ա: Ջուրենուն կապըրը փըռնալ ըմ, որ ետ դըռնըմ: էտ մոմենտին քամուն բուդուդը ինծ ջուրոտանցը նըհետ պտտալ ա, բիցիրցիրալ գյովդա, քըշալ երկալած տարալ:

Խոսկեն դուզը, վըխութոնից աշկըրըս փակալ ըմ: Մի վախտ անց, տը-սալ ըմ վըտըրըս նի ա եկալ տափեն: Աշկըրըս բեցալ ըմ, տըսալ հասած ըմ Թարվիզ: Ջուրենուն բեռնըրը վեր ըմ կալալ, անծուղը ծախալ, չայ, ղանդ, թութուն կալալ, դիրալ ջըվըլնոմը, շենեն հըղեն առաչըս կալալ: Լա շհարից դուս ըմ եկալ, հասալ «Անախաթունե դուզը», քամեն ալլա վըրա-րալ ա: Մի վարար բուդուդ ալլա եկալ ա ինծ ալ, ջըրորունցըն ալ եր կա-լալ, բիցիրցըրալ, գյովդա քըշալ, բերալ մըր շենեն ըռշկին վեր դիրալ: Ըր-կոնուն հալա տափը մըթնած վեչ, եկալ ըմ հասալ տոն:

Իմ հար տըսալ ա, մանցալ զարմացած: Հըրցրալ ա, թա.- էս հի՞նչ հը-րաշք բեն ա:

Գյլխես եկածը նաղըլմ արալ, իմ հար հըվատացա չի; Չայ, ղանդը, թու-թունը, որ ջվալեն նանե դուս ըմ կալալ, իմ հար մանցալ ա քար կըտրած:

Հըվըտացեք, որ Աստուծեն հըրաշկավը, օխտը օրվա տեղը մի օրումը գենցած ըմ Թարվիզ, եկած: Հըվատըմ չեք, գենցեք իմ դադու նանե հըրցը-րեցե՛ք:

16 (348). ՎԵՑ ԲԵՌՆԸ ԱԼՅՈՒՐԻՑ՝ ՎԵՑ ՊԱՐՂԱԾ

Մի աշունք իմ հարըս վեց ջորե ցորեն ա բեռնալ, նի արալ առաչս, ասալ.- Սուրեն, ցորենը կըտանըս Ամունց ջըղացըմը կաղաս: Ամունց ջըղացեն ջուրը վարար ա: Ալյուրը գերմակ ա ըղալիս, սորին լավաշ հաց ա դըռնալիս:

Գենցալ ըմ, տըսալ ջեղացն ալ հըրթ ա: Ըսկըսալ ըմ ցորենը աղալ: Մին ալ եշալ ըմ, տըսալ ջըղացեն ըռըշկին՝ ծորեն էրկու թարափեն, քըրծերեն քարըրը շատ կոկլեգ, թամուզ քարըր ըն: Խիյալ ըմ արալ, որ ալուրը տանըմ տոն, պետք ա իմ մար ամեն ամեսը միետ փարե կանա, թա մի բեռնը ալուր խըմոր ա ըրիս, թուրուն վըռիս, թա հաց ըմ թխիլիս: Ինձ ալ քյոռուղ տա, թա՝ «Գինի ծըմակեն նըհետ չոր փադ բեր՝ հաց թըխիլու հետե»:

Սորին չի, մոտե ծըմակեն ծառըրը կըտորըմ, նի ածըմ ծորը լըցըրըմ, կըրակ տամ, վառըմ, սակուլեգ քարըրը տըքըցըրըմ, վեց բեռնը ալուրն ալ խըմոր արըմ, պարղաճ թըխըմ, տանըմ: Ո՛չ իմ մար նըստի ամեսը մըհետ մի բեռնը ալուր մաղի, խըմոր հունցի, բուլի, թուրուն վառի, թա՝ հաց ըմ թըխիս, ո՛չ ալ ինձ ամեսը մըհետ քյոռլուղ արըն, թա գինի ծըմակը՝ փադու:

Տըղերք, թա հայ եք, հըվըտացեք, մըտածիլըս նա բենե անցնիլըս մինըմ արալ:

Ջըղըցպանեն կացենը եր ըմ կալալ, ըսկսալ ծըմակը կըտորիլը: Ծառըրը հըվաքալ ըմ, նի ածալ ծորը լըցըրալ, կըրակ տըվալ: Ըղացած ալուրըն ալ նի յըմ ածալ ըլուրատոնը՝ խըմոր հունցալ, վեց պարղաճ սարքալ: Պարղաճ, հի՞նչ պարղաճ, ամեն մինը մի ջըղացու քարու միչըք: Կըրակը որ նըստալ ա, ծորեն քարըրը կիրմիրած ըն լալ: Հունցած պարղաճներս նեստի յըմ տըվալ ծորեն քարերեն, թըխալ, իփալ, բերալ բեռնալ ջուրերանցը, բերալ տոն:

Իմ հար, իմ մար պարղաճներն, որ տըսալ ըն, համ զարմացալ ըն, համ ալ՝ ուլխացալ: Պաղրաճներն տանը պատնիյեր շարալ ընք, ամեսը մինը կերալ: Վեց ամես ո՛չ իս ըմ գենցալ ծըմակը՝ փադու, ո՛չ ալ իմ մար հաց ա թըխալ: Պարղաճներն կերալ ընք, լազաթ արալ:

17 (349). ՀԸՐՎԱՆ ԽԱՉԱՆԵ ԹՈՒԹՈՒՆԸ

Մըր հըրվան Խաչանե նըման չուբուղ քաշուղ աշխարքըմը շատ խըրեգ մարթ կըճարվի: Օրվա լուսըբեցեն նըհետ դեչանը կես քիշեր չուբուղը

ձեռքեն վեր չի դիրիս: Էնքան արաշի չուբուղ քաշուղ ա, որ չուբուղեն կըրակը վեր ա ըծիս, նոր թութուն լըցըրիս, համան կըրակավը կըպցրիս:

Հըրըվան Խաչան մըր տանը կողքեն մի բըխչոր օձի: Ամեն տարե թեխյա թութուն ա վըրիլիս: Բըղչորըն ալ փեհինվըղ ա, ինդի թութուն ա արսա գյոլիս, քի ներակ չինարի ծառըր: Հունչուր յոնջան կըհարըն, հըրվան Խաչան թութունը ինդի քյալանքըվավ հնծիս ա, խուրսան նըման կըպուտիս, բիռնիս ջորուն, տընիս կալըմը շաղ տալիս, տանը նանե մի քանի կարպիտ տընիս, թութունը ծըցկիլիս:

Մի քանե օր թութունը որ կարպետեն տակեն մընալիս ա, հավասար դընիս, դըռնալիս ա դեղեն խոնգու ռանգ; Այտըս կամնը դիրիս ա, եզինքը լըծիս, ցոռնու քյուլաշու նման աշան ա ըրիս: Թութունեն տիրվը, ծողըրը, ծաղեգյը խըռնիս միևը-միևեն:

Թութունը աշան ըրիլեն ետը, հըվըքիս ա, նի հընիս մըծ-մըծ ջվալնեն, տընիս տոն: Հըրըվան Խաչան տարվա վեց ամեսը նայի ինիս քյաղըմը իրան տավար-ապրանքըն ա պըհիլիս: Իս հինդամ ամեսը միետ տոն գյոլիս ա, թա՝ չի: Հըրըվան Խաչանե չուբուղեն ղըթարը շափարը մի լիգյը խուրջուն թութուն ա: Ամեն գիրագյուց գիրագի խուխենցը միևը մի մըծ խուրջունու էրկու աշկըրն ալ թութունավ պընդ լըցիս ըմ բիռնիս ջորուն, տընիս քյաղը, տալիս իրան: Հըրըվան Խաչան մի սաղ բուլուր տարե էտ բըխչորեն թութունը քըշիս ա, լազաթ ըրիս:

Մըհետ հըրցըրալ ըմ.- Խաչան հըրըվան, աշխարքես ամենաքաղցըր, ամենասորիհ բենը հինչըն ա, ասի՝ իս գիդամ:

Առանց խիյալ-խիյալ ըրիլու ասալ ա.- Հըրըվան Սուրի, մըր բըխչոտեն թութունն ա:

18 (350). ՋԱՌՋԱՄՈՒ ՔԱՇԿԸՐԸ

Տըղերք, դուք ալ շատ քյոհնա մարթունցը նանե լըսած կինեք, որ մըր Ջառզամու ըխպիրին քուշտեն քըրծերըմը, մին ալ մոտե մըթեն ձորեն քըրըտըկերեն, քյոհնադան դովրից քաշկըր ըն ըպրիս: Դե օրենքյ ա, մի անհավատալի բեն, որ մարթ իրան աշկավը տըսած չի ինիս, ուրեշեն տըսածեն, ըսածեն ալ, հավատ չի ըրիս:

Դե, քըշկերեն մասեն իս իմ աշկավըս տըսածեն նանե մի բեն նաղլը արըմ, կըհավատա՞ք: Հըվըտացեք: Հավատա չե՞ք, գենցեք իմ հոր նանե հըրցըրեցեք, տըսեք սոտ ըմ ըսի՞ս, թա՞ ղորթ:

Մի աշունք, մըր տավարը, ապրանքը տարած ընք լալ Թուռուդուշե քյաղըրը: Մի ըրակու, տափը մթընած, շենեն նհետ խաբեր ա եկալ, որ իմ հորըս վըրազ շենըմը կընչիս ըն՝ փարզ բենավ:

Իմ ապու թողալ ընք քյաղըմը, իս նա իմ հար հըղե ինգյալ դիբի շենը: Մըթեն լալ, կես քիշեր, որ մաննըտ մըկնիլըս լալ, աշկ լալ վեր ածիլ: Իտի մըթընավ եկալ ընք: Հալա Ջառզամու ախպիրը չհասած, պատառ հըռի, զուռնու սաս ըմ լըսալ: Ջարմացալ ըմ, վեր կացալ զուռնեն սասեն:

Իմ հար գիդացալ ա, ասալ ա.- Սուրեն, Ջառզամին քաշկըրը հըրսանենք ըն ըրիս: Ջառզամու ախպիրը քըշկերեն սուրփատեղըն ա: Հառհինը բիրիս ըն ըխպիրին երե փըսըկիլիս: Իս մըհետ ալ ըմ պըդահած, վախըս վեչ, ծանոթ ըն, մըզ վընաս չըն տա:

Հասալ ընք ախպիրին, տըսալ, ղուրթավ, քաշկու հըրսանեքյ ա, նայեն հառհինը փըսըկիլիս:

Մըզ որ տըսալ ըն, ուլխունալավ եկալ ըն մուտացալ: Շատերը իմ հորըս ծընըչեցալ ըն, եկալ ըն պըրավալ, մըզ ալ իրաց նհետ տարալ հռհինքեն մաջլիսը:

Քաշկերեն մաջլիսը նայ լալ Մըթեն ծորեն մըծ քըրըտակեն: Բերալ ըն սուփրա գիծալ, հաց, գինի, բրինձավ փըլավ վեր քաղալ: Կերալ ընք, խըմալ: Ջուռնա-դըհոլ ըն ածալ: Իմ հորըս նըհետ եր ընք կացալ պար եկալ, քաշկերեն ուլխըցրալ, ծծղըցրալ: Լուսըբեցեն մոտե իմ հարըս քաշկերեն մըծեն խընթըրալ ա, որ շենըմը փարզ բեն օննք, իրավունք տա գիննք:

Իրավունք ըն տըվալ: Եկալ ընք հասալ տոն[24]:

---

[24] Գիրքը գրելիս նկատի եմ ունեցել ոչ միայն Ղարադաղի բարբառը այլև պատմողների լեզվական ոճերը՝ աշխատելով ընթերցողին հանձնել այնպես, ինչպես լսել ու գրառել եմ:

Բարբառային շատ բառեր ընթերցողին հասկանալի դարձնելու համար օգտագործել եմ «Ը» հնչյունը:

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԳԵՐ

1 (351). ՃՈՐԱ-ՃՈՐԱ[25]

Ճորա-ճորա, ճար չօնըմ,
Տոնըս կըթիս ա, տեղ չօնըմ,
Խավեծ կօզըմ, եղ չօնըմ,
Եղըմ ուզիս հըվաքըմ,
Նըստըմ ծառեն շվաքըմ,
Ջեյրան եզանը օսսը քըսըմ,
Մարալ կըվեն կործը քըսըմ,
Ճորան շըլակըմ, տանըմ,
Ծովեն խոր տեղը գիձըմ:
Թողբը, որ տըսնի՝ վախի,
Սար, ձոր թողնի՝ փախի,
Օրը բենվի, տըքանա,
Արըվը տըսնա, ուլխանա,
Տավարն ըրածի, քուշտանա,
Ճորա-ճորա, ճար չօնըմ,
Ճորա-ճորա, ճար չօնըմ:

---

[25] Գարնան ամիսներին մեգը պատում էր սար ու ձոր, անդադար տեղում էր ձյուն-ախառն անձրև:

«Ճորա-ճորա» հմայիլ երգը հիշում էր խանագահցի ժենիկ Դանիելյանը, գրի եմ առել 1985թ.՝ Երևանում (ծան. բանահավաքի):

2 (352). ԱՍՏՈՒԾ-ԱՍՏՈՒԾ[26]

Աստուծ, Աստուծ, իմ Աստուծ,
Աստուծ, Աստուծ, ջան Աստուծ,
Ջանըս քի ղուրբան, Աստուծ,
Թողբը երկնաց կախ-կախ, Աստուծ,
Թողբը սար, ծոր փակած ա,
Մարալ կավըս կորած ա,
Կանեչ չիմանըմ խըրված ա,
Հո՞ւ կգիդա՝ ծընած ա,
Բալիյա գյուլը կերած ա:
Աստուծ խոսքըս լըսալ ա,
Ջորեն թողբը փախալ ա,
Սարեն գյլխեն նըստալ ա,
Կարմուր արըվը ինգյալ ա,
Գյուլը բունըմը ցիյնալ ա,
Մարալ կավըս ծընալ ա,
Սուրմա վըրթը բերալ ա:
Նանան կավը կըթալ ա,
Կաթնավ ճաշը խենալ ա,
Պապան ճաշը կերալ ա,
Աստուծեն փառք տըվալ ա:
Աստուծ, Աստուծ, իմ Աստուծ,
Ջանըս քի ղուրբան, Աստուծ:

---

[26] Գարնանը օրեր շարունակ «քըշաթողբը» պատում էր ծորերն ու սարերը:

Ժողովրդական առածն ասում է. «Գայլը ամպ օրը կուգի, գողը՝ մութ գիշերը»: Գյուղացիները նման չարաբաստիկ եղանակը վերագրում էին Աստծու բարկությանը: 10-16 տարեկան տղաներն ու աղջիկները, որոնք այդպիսի օրերին անասուններն էին արածեցնում դաշտերում, համոզված էին, որ Աստված կլսի իրենց անմեղ ձայնը, կթողնի բարկությունը, կգրի ամպը: Այդ նպատակով էլ հորինել էին «Աստուծ-Աստուծ» երգն ու պարը: Նրանք մի բլրի վրա թեժ կրակ էին վառում, իրար ետևից տղա-աղջիկ շարվում, երգով ու պարով խարույկի շուրջը պտտվում: Գրի եմ առել 1945թ. Նորաշենում, Հասմիկ Գրիգորյանից (ծան. բանահավաքի):

3 (353). ԲԱԼԱՏ ՄԸՌՆԻ, ԴԸՆԱՏԱՐ[27]

Բալատ մըռնի, դընատար,
Ղուզիտ մըռնի, դընատար,
Ալ կարի չըմ դըմանալ,
Նայեմ գինիս Քըլալա,
Ղազախ բերըմ, որ այտըս,
Ջարմա արի, խըրատվըս:
Տըս՝ կերած ա մաշըրը,
Թողած մուշու փաղըրը,
Ըրկե ալ էն օլանջան՝
Կերած ա հանդեն յոնջան:
Ասօր ալ գենցած ա բաղըրը,
Կերած ա խյարիս թաղըրը,
Աբուռ արի՝ հմանչի,
Հարգանք, պադեվ ճընանչի,
Աստուծ խասիյաթտ թակի,
Դանատ բեր դըրքետ կապի:
Ալ թողած չի իմ մաշըս,
Շուդ բեր տոր իմ վընասս:
Դըռած ըս խաթա-բալա,
Տըս՝ գինիս ըմ Քըլալա,
Ղազախ բերըմ, որ այտըս,
Ջարմա արի՝ խըրատվըս:
Բալատ մըռնի, դընատար,
Ղուզիտ մըռնի, դընատար:

---

[27] Ղարադաղում մարդիկ աշխատում էին, որ իրենց երեխաները և անասունները, հարևանին վնաս չտան: Խանագահցի Մանցուց Շուշանը, խախտելով հասարակական կարգը, հորթը ո՛չ հորթարածին է հանձնում՝ պահելու, ո՛չ էլ ինքն է հետևում: Հորթը մտնում է հարևանների բոստանները ու փչացնում, որը վեճեր է առաջացնում:

Այդ առիթով եղբայրս՝ Ժորան, Շուշան զիզու անտարբերության, նրա հորթի պատճառով հարևան կանանց վեճերն ու անեծքները ի մի բերելով՝ հորինում է «Բալատ մըռնի, դընատար» չափածո երգիծանքը:

Հայրս՝ Հարություն Աղաջանյանը, որդու հորինած երգիծանքը վերածում է երաժշտության ու նվագում զուռնայով (ծան. բանահավաքի):

4 (354). ԳՅՈՒԼՈՒ ԽԱՂԸ[28]

Գյուլու մարը. Բենչակըտ տոր մի ջուբ կարըմ,
Գինըմ տիրըմը շամ վառըմ,
Իմ Գյուլուն, որ դու օզըս,
Ջանըս քի ղուրբան կարըմ:

Փըսացուն. Գյորունքը գյո, էծըրը խոզում,
Կըգյոմ ծեր Գյուլու կօզըմ,
Գյուլի կարի վեչ ղազիլ մանի,
էն վախտը իս քի նըհետ կխոսըմ:

Գյուլու մարը. Իմ Գյուլիս ծաղկած ծառ ա,
Հազար թահըրը փիշակու տար ա,
Իմ Գյուլուն, որ դու օզըս,
Կըտըսնաս, որ շատ բինարար ա:

Փըսացուն. Ջիռզառուտ ղադաք կը ճարըմ,
Գյուլու հետե շոր կկարըմ,
Տըսնամ Գյուլու ղեյրաթ օնի,
Դոշավը վըսկի կըշարըմ:

Գյուլու մարը. Գյուլի կըկարի տոնըտ պահի,
Գինի ջիրու, խըմեցե հարի,
Ճաշը իփի, հացը թըխի,
Այտըս, նըստի՝ լվացք արի:

Փըսացուն. Քու ասածնեն իս կըփորձըմ,
Իմ մոր ղորկըմ, Գյուլու օզըմ,
Նիշան դիրըմ, փըսակ արըմ,
Օմբուրըս Գյուլու ղուրբան արըմ:

---

[28] Պատմում են, որ մոտավորապես 1910թ. Խանագահում ապրել է Շուշան անունով մի կին, որն ունեցել է յոթ աղջիկ: Նա այնպիսի ճարտար լեզու է ունեցել, որ կարողացել է նրանց ժամանակին ամուսնացնել:Դրանցից գրի են առնել «Գյուլու խաղը» 1944թ. Խանագահում՝ Ժորա Հովսեփյանից (ծան. բանահավաքի):

5 (355). ՋՂԱՑԵՆ ԳՅԼԽԵՆ

Ջղացեն գյլխեն օխտը գյուլ,
Օխտըն ալ տըղըմը բուլբուլ:
Նանա, նանա դուրքը բեց,
Դովի եկած ա՝ գյլխըբեց:
Մի հավ օննք կըչկըչան,
Մի ծու կածի չըդըղնոց,
Դօվի կօտի, գինի հոնծ,
Արտը հընծի, կապի փոնջ:

ԽԱՂԻԿՆԵՐ

1 (356). Թոռը կըգյո, արըվ կարի,
Մուշահավը քըջոճ կարի,
Ղուրբան ինգյըմ էն ախպուրը,
Կորած քըվորը ուրուն կանի:

2 (357). Տըղա օնըմ փըսացու,
Աղչիգ օնըմ հըռհնացու,
Ղուրբան ինգյմ էն օրեն,
Եզընը կըմորթըմ՝ մըսացու:

3 (358). Խաղ օնըմ՝ խաղես գյլխեն,
Տունտըրեց բաղեն գյլխեն,
Աղչիգ չըմ, որ հըմանչըմ.
Տղա յըմ՝ զիլ կկանչըմ:

4 (359). Ներակ ինծ,
Կաթնավ բըրինծ,
Իմ բաջի գենցալ ա մարթու,
Հընթը հասալ ա ինծ:

5 (360). Ասօր մի հայտնի օր ա,
Կոչընս եկած, դընռած մի կորա,
Աշխադանքըտ ասընք թա կերածընս,
Ա շան տղա, պա մայատ հո՞ր ա:

ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ղարադաղի հայերի հոգևոր գանձարանը հարուստ է եղել նաև առածներով, ասացվածքներով, չափված, ձևած, համեմատված ծանրակշիռ խոսքերով, որոնք ստեղծվել են դարերի ընթացքում՝ նրանց կյանքի դառն անցյալից, փորձություններից, իրենց գլխովը անցած փորձանքներից:

Ճիշտ է, Ղարադաղում գրագիտությունը տարածված չէր, երբեք գրի չէր առնված նրանց գոհարների շարանները, բայց ամեն մի տարեց ղարադաղցի հայ մի գանձարան էր՝ դարերից եկած ժողովրդական խոսքն ու ստեղծագործությունը բանավոր կարգով սերնդից սերունդ հաղորդելու համար:

Երբ խորապես ուսումնասիրում ենք ամեն մի առածի, ասացվածքի գողտրիկ բովանդակությունը, տեսնում ենք, որ նա իր մի քանի բառով մի պատմության, անցուդարձի վառ վկան ու անջնջելի դրոշմն է կրում տխուր անցյալի:

Բերենք մի քանի փաստեր առածների ու ասացվածքների վերլուծությից:

«Նանան մանի, թորքը տանի»:

Այս առածից պարզ հասկանալի է, որ եղել է ժամանակ. հայ կնոջ քրտնաջան աշխատանքի պտուղները հափշտակել, տարել է թուրք ավազակը, որից ելնելով հայ ստեղծագործ շինականը հիշատակ է թողել այս առածը:

Ղարադաղցի հայը միշտ էլ կեղեքվել, կողոպտվել, զրկվել է ունեցվածքից թուրք և քուրդ խաների, բեկերի կողմից, որոնք՝ օգտվելով պետության թույլ հսկողությունից, գավառում միշտ էլ եղել են ինքնիշխան:

Հայ շինականը իր կարիքների, հոգսերի փարատման, ընտանիքի պատիվն ու գոյությունը պահպանելու համար, միշտ էլ եղել է օտարության մեջ, կրել բազմաթիվ զրկանքներ, տանջանքներ՝ մի քանի կոպեկ վաստակելու համար: Օտարություն մեկնող երիտասարդներից ոմանք մահացել են, անհայտ կորել, կամ օտարացել, չեն վերադարձել:

Ղարադաղցի հայ կինը տարիներ շարունակ արցունքն աչքերին սպասել է օտարության մեջ գտնվող որդուն, որը չի վերադարձել: Նմանապես, ո՞վ գիտե, քանի-քանի հայ աղջիկներ սպասել են իրենց սիրած երիտասարդի օտարությունից վերադարձին, որոնք այդպես էլ չեն վերադարձել և դրա համար բանահյուսել են հետևյալ ասացվածքը. «Պառավ ըղչիգանը մարթ ա հասալ, ասլ ա՝ բրթբրթոտ ա»:

- Ա -

1 (361). Ա կոլա, քի ասմ, ա կոժ, դու գիդաց:
2 (362). Աբոռը պահած մարթեն բիաբոռ չըն անի:
3 (363). Աղեն տված ծիյանը կռքնոն եշի չըն:
4 (364). Աղվեսեն հավեն բոնեն երե պահակ չըն դիրի:
5 (365). Աղուհաց մռացողը՝ կմոռանա:
6 (366). Աղվեսեն ըռըխը հասալ չի խաղվեն, ասլ ա՝ խակ ա:
7 (367). Ամեն հինչեն թազգան, պարիկամեն՝ քյոհնան:
8 (368). Ամեն մի խոսք իրան ջուղաբն օնի, ասման, որ լսըս վեչ:
9 (369). Ամեն մի ծառու շըվաքըմը ինա չի նըստիլ:
10 (370). Ամեն մի մարթու քուղավ շիլակ չըն շըլակի:
11 (371). Ամեն մի մարթու քուղավ վըտ չըն նի մըտնի:
12 (372). Անաստված տեղը կինա ապրիլ, անսաբաբ տեղը՝ ինա չի:
13 (373). Անհամենչ մարթեն իրեսեն թքըս, կասի՝ թոռ ա գյոլիս:
14 (374). Անմը տոր, սոփրան գիձի:
15 (375). Աշխարքեն ղուշրը իմ հավրսն, որ մի ծու տսնալիս չըմ, հի՞նչ - փայդա:
16 (376). Աշխարքը ըրողաց ա պրտական:
17 (377). Աշխարքս մի փիլինքյան ա, մինը եր կընցնի, մինը վեր կգյո:
18 (378). Ապրանքը մի տեղ ա կուրչիս, հոքին՝ հազար տեղ:
19 (379). Ապրանքը որ փող դըռնի, մոխար կդըռնի:
20 (380). Ապրուստ կա՝ դենակ ա, դմակ, ապրուստ ալ կա՝ քար ա, արկաթ:
21 (381). Առաչ մհակը եր կալ ծեռքըտ, ետնի կընգաևըտ խուսուցըրի:
22 (382). Ասալն՝ դերեն երե լոս ա վեր եկալ:
Հրցրալն՝ հո՞ւ վա տըսալ:
Ասալն՝ դիրացուն:
23 (383). Ասլը կուրցնողը հարամզադա յա:
24 (384). Ասողեն լսող ալ ա պիտիլիս:

25 (385). Ասսլն՝ աշուղ, հինչո՞ւ նանեյս վխիլիս: Ասալ ա՝ աչքավս տըսածեն:

26 (386). Ասսլն՝ քուխվեն երե լոս ա վեր եկալ:
Հրցրալն՝ հո՞ւ վա տըսալ:
Ասալն՝ գիզիրը:

27 (387). Աստոծ սարը տսնալիս ա, ծոնը դիրիլիս:

28 (388). Աստուծ ալ մին-մին չգիդացած բեն ա ըրիս:

29 (389). Աստուծ Եվայե ըստեղծալ ա, տըվալ Ադամե, ասալ.- Ադամ, քանե կըկարս լուզի կըճարըս Եվայի նըհետ, կապըրըս: Լուզի, որ կարըս վեչ ճարիլ, հակառակըս վեչ, կըթողըս, կըփախըս:

30 (390). Աստուծ հինչ աշք տված ա քոռեն, քոռն ալ էն աշկավը յիշիս ա Աստուծեն:

31 (391). Աստուծ որ մի ճիրեգ ընցըրիս ա, մի ճիրեգ ալ վըռիս ա:

32 (392). Աստուծեն պահած գյոռնա գյուլ օտի չի:

33 (393). Արածը գյորա մարթեն բերանը փակի չըն:

34 (394). Արի հուրի՝ ծաղկի փարի:

35 (395). Արըվը նի մտած տոնը՝ հաքիմը մտնի չի:

36 (396). Արխը քանե պողս վեչ, ջուրը վրարի չի:

37 (397). Արկաթը տաք-տաքն թկիլիս:

38 (398). Արջեն մաշկը թակալն, ասսլ ա՝ էս հի՞նչ դմդմբոց ա:

39 (399). Արտը որ հնձվալ ա, ծյունը կդիրվի:

40 (400). Արոնը առնավ չըն լվանա, արոնը ջիրավ կլվանան:

- Բ -

41 (401). Բախտը որ բիրիս ա, մարթ ղեյրաթի ա դըռնալիս:

42 (402). Բախտ որ քոն ա ինալ, դու ալ քոն ինի:

43 (403). Բաղդատ ալ խուրմա շատ կա, ինձ հի՞նչ:

44 (404). Բաղեն բարը բաղվանչոնը չի, բաղեն կողքավը հղե գինցողն ա:

45 (405). Բեղը պիիս չըն շնորքա հետե, բեղը պիիսն նամուսա հետե:

46 (406). Բեն արուղ խոփը ժինգոտի չի:

47 (407). Բեն չգիդացուղ մարթը բեն ալ չի հավան կանալ:

48 (408). Բենբակը կրակեն դեմ չըն օնի:

49 (409). Բենեն նանե բեն չի իվիլանա, համա բուղազեն նանե՝ կիվիլանա:

50 (410). Բենը ինդի կփռնն, որ Աստոծեն ալ խոշը գյո:

51 (411). Բենը որ թողալս կեսատ, արալ չըս՝ երե ծուն կգյո:

52 (412). Բեր՝ որ տանս:
53 (413). Բերանը փակ մարթեն գյուլոխը թակ չի օտի:
54 (414). Բիրանեն նանե վեր ինգյած բրինձը ալ դիրի չըն բիրանմը:
55 (415). Բիրանով որ օզըմ, պա հիչա՞վ օտմ:
56 (416). Բիրդան տըսնողը եր ա թռիլիս:
57 (417). Բրատո ծառը գյուլոխը կախ ա պիհիլիս:
58 (418). Բրինձավ փլավը սորին բեն ա, էրկու օր մըր տան, մի օր՝ ձեր տան:
59 (419). Բուխարին հինչքան ալ որ ծոռ ինի, ծոխը դուզ ա դուս գյուլիս:
60 (420). Բուն քնդողան տոնը Աստուծ կքանդի:

- Գ -

61 (421). Գաղտնի խոսքը յա կընգանը ասած, յա թամամ աշխարքին, մին ա:
62 (422). Գենցալս մի տեղ, տըսալս՝ թեխյա քոռն, դո ալ քուռաց:
63 (423). Գետեն չհասած, փոխկրը ետ չըն քաշի:
64 (424). Գետեն մոտե տոն չըն սարքի:
65 (425). Գետը նի մտնողը փոխկրը թրջվիլեն նանե վախի չի:
66 (426). Գետը օմեն վախտ գերան չի բերի:
67 (427). Գետմը խըղդվուղ մարթը ձեռքը ջիրին փրփորեն ալ ա գիծիլիս:
68 (428). Գյամի նստողը գյամոչուն նետ կարի չի կռվի:
69 (429). Գյոլը հինդա, ջորեն թանգ ա:
70 (430). Գյողեն տեղում կրեցալս փռնի՝ գյող ա, կարս վեչ փռնի, կասի՝ իս չըմ, դո վըս գյողը:
71 (431). Գյողը գյողեն նանե գյուղացալ ա, դիեր Աստուծ տըսալ ա, զարմացալ ա...
72 (432). Գյողը հինչքան ալ որ գյող կանա, քառասուն օրում կճարվի:
73 (433). Գյողը մթեն քիշերը կօզի, գյուլը՝ թողբ օրը:
74 (434). Գյողը որ տանը նանե ինի, եզնը հուրդավը կտանն:
75 (435). Գյոռնը գյուլեն պահ չըն տա:
76 (436). Գյուլբաքը չոր պիողուն վըտրը մրսի չըն:
77 (437). Գյուլեն բունը առանց վըսկռ ինի չի:
78 (438). Գյուլեն գյլխեն ավետարանն կրթեցալ, ասալ ա՝ շուդ արե՛ք, վըչխար սարավը անց ա կացալ:
79 (439). Գյուլերեն անմը դոս ա եկալ, աղվեսնեն աշխարհն քանդալ:

- Դ -

80 (440). Դավան հինչքան ըստակած ինի, կաշին ալլա մի էշու բեռնը կինի:

81 (441). Դավեն քթոլավ ջուր չըն տա:

82 (442). Դավի խաղը կարմոնջեն երե կփռնի:

83 (443). Դավին ասալը՝ հինչ սանադ օնըս, ասսլ ա՝ զարգյարմ: Ասալը՝ հա՛, ծրքը վենետ երե մանշուր ա:

84 (444). Դավին ասսլը՝ վեզտ ծոռ ա, ասալ ա՝ հի՞նչս ա դոզ՝ վեզս դուզ ինի:

85 (445). Դարդ ունեցողը յանշաղ կինի:

86 (446). Դենակը թողի չըն վսկեռեն հասնի:

87 (447). Դեռնող բենեն ճար չի ինի, դըռնալու բենը կդեռնի: Դենակը թողի չըն վսկեռեն հասնի:

88 (448). Դերտակ կրասեն սասը զրինգ կինի:

89 (449). Դիժեր բենեն նանե աշկը կվախի, համա ծեռքը կարի:

90 (450). Դիվին եռըս ինալ, կոզկանալ պետքը չի:

91 (451). Դնակավ ինա չի ծառ կտրի:

92 (452). Դու քու հաշիվը դիրի մի ղոլ, տըս քու բախտը հինչ ա հաշվիս:

93 (453). Դուզ խոսուղ մարթը դոզոմը կմնա:

94 (454). Դուզ խուսողուն գյուլոխը ծակ ա ինիլիս:

95 (455). Դուրքը եկած ապրանքը ետ չըն տա:

96 (456). Դուրքը յկողուն նստավի չըն թողնի:

97 (457). Դուրքտ փակ պահի, հրվանետ գյող մա ասի:

- Ե -

98 (458). Եգեղեցուց իսմ գյուլիս, «ղորմի Աստուծ» դո՞ վըս ըսիս:

99 (459). Եզնը եր ըն կցրիլիս, տակից վըրթ ուզիլիս:

100 (460). Եթիմեն «վա՜յ-վա՜յ» ասող շատ կինի, համա հաց տվողը խրեգ կինի:

101 (461). Եղը իժան ա, ճմոռը՝ թանգ:

102 (462). Եվան որ Ադամեն խափալ ա, օմեն կնեգ ալ կարի իրան մարթեն խափի:

103 (463). Ետ ինգիս՝ վարար գետ ինգիս:

104 (464). Երգինքից հի՞նչ ա եկալ, երգիրը ունթոնալ չի:

- Զ -

105 (465). Զաղզը որ շատ ծամս՝ կշաղի:

106 (466). Զանգը կախ տալեն ետը, զնգզնգցրիլ պետքը չի:

107 (467). Ջառ ունեցողեն՝ օժ ալ կինի:
108 (468). Ջառեն արժեքը զարգյարը կգիդա:
109 (469). Ջորբաթոնավ կարի չըս բենը առաչ տանի:
110 (470). Ջուռնեն սասը հըռնոց քաղցր ա:

- է -

111 (471). Էծը էծեն հետե սորին ա, քան մի սուրու վըչխարը:
112 (472). Էծը մկկալավ գյորունք ա ինգյալ, համա վըչխարը՝ սուս-փուս ըստակալ ա:
113 (473). Էծը ջանեն դարդմն ա, ղասաբը տինով ա շոռ գյոլիս:
114 (474). Էլը որ վըտ կանա՝ գերան կկոտրի:
115 (475). Էշեն նանե մրթեթուն՝ հո՞ւ կիվատա:
116 (476). Էշը էշեն տեղավը մի տեղ որ նի ա խրիս ցըխը, ետնե գյուլոխն ալ թակս՝ ցըխը նի չի մտի:
117 (477). Էշը ընջակավը կաղալ չի:
118 (478). Էշը ինա չի մատաղ արիլ, համա էշը կծախն, գինավը մատաղ օնն:
119 (479). Էշը իրան ըստակիլը կօգի՝ թաքլա տըռնը վնաս ինի:
120 (480). Էշը հինդ ա՝ նուշը հինչ ա:
121 (481). Էս օրվա բենը՝ էքոցած հետե թողի չըն:
122 (482). Էրկու գյուլոխ մի ղզղանմ ինա չի իփի:
123 (483). Էրկու թիրիփանե եշողը շաշ կինի:
124 (484). Էրկու ծմերուկ մի ձեռքավ ինա չի փռնի:
125 (485). Էլեն նախիրեն անմը մի լղար դանան խայտառակ կանի:
126 (486). Էրկու ներակ մի տեղ ինի չի:
127 (487). Էրկու պըլեն մի խելոնք ա պիտիլիս:
128 (488). Էրկու վընննանուն էրկու հետ փորձի՝ չուրքի վընննանուն՝ չորք հետ:

- Ը -

129 (488). Ըշխարքեն ապրանքը կմնա ըշխարքեն:
130 (490). Ըշտահ օնուղ մարթեն քացախ տալ պետք չի:
131 (491). Ըռընխը հի՞նչ ա, որ գյլխեն թակիլ տա:
132 (492). Ըռշկին գենցուղ հիյվանեն գյլխեն թխի չըն:
133 (493). Ըսիսմ՝ խոսք ա դըռնալիս, ըսիս չըմ՝ դարդ ա դըռնալիս:
134 (494). Ըստակ մա էշս՝ գյորունք կգյո, յոնջա կտամ:
135 (495). Ըստակած ըպրանքեն գինը թանգ կինի:
136 (496). Ըստակած կովը կթնատու կինի:

137 (497). Ըպրանքեն տարը, տղան ալ վեչ՝ հարը:
138 (498). Ըուզողուն մի իրիսն ա սըվ, չտվողուն՝ էրկու:

- Թ -

139 (499). Թակմ ա ուրեշեն փադե դուրքը, որ թակն վեչ քու ըրկաթե դուրքը:
140 (500). Թայդի ինգյողը թուրոնը կինգի:
141 (501). Թանգ բենեն նանե իժանը չկա:
142 (502). Թաքուն բեր եկած կավը՝ աշկար կծնի:
143 (503). Թոռ փադը չորեն ճոնդավը իրիլիս ա:
144 (504). Թորքն կասի՝ հայեն ետե խըլքը իմս ինի:
145 (505). Թռցրած ղոշը ինա չի փռնի:
146 (506). Թուլան հիչիլավ ա շոն դըռնալիս:
147 (507). Թուրոնը առանց սունդուն ինի չի:

- Ժ -

148 (508). Ժամեն նհետ իսմ գյուլիս, «օրհնյա տեր» դուվս ըսիլիս:
149 (509). Ժինգյանե շան նանե հըռե գինիլը օքութ ա:

- Ի -

150 (510). Իգիթը մըռնի, անմը կմնա, եզնը ըստակի, կաշին կմնա:
151 (511). Իգիթը մռնիլիս ա, անմն ա մնալիս, եզնը ստկիս ա կաշին ա մնալիս:
152 (512). Իժան մըսեն նանե շորվա չի դոս գյո:
153 (513). Իս աղա, դու աղա, պա մըր աղունը հո՞ւ աղա:
154 (514). Իս ըսիս ըմ՝ քոռ-քոռ, ինքը ըսիս ա՝ տըս-տըս:
155 (515). Իս նշանցմ տալիս՝ արջը-արջը, ինքը ըսիս ա՝ հես ա հերը:
156 (516). Իրան աշկեն գերանը թողած ուրեշեն աշկեն չոփը չըն նշանց տա:
157 (517). Իրան շողկեն նանե վխեցողը պետք ա տանը նանե դոս վեչ գյո:
158 (518). Իրիննակը մըծ ա, թողբը՝ կուճի: Թողբը իրիննակեն իրիսը ծսկիս ա:
159 (519). Իրիսատեղը կտրիլն:
160 (520). Իփած ծվեն նանե ճոտ չի դուս գյո:

- Լ -

161 (521). Լակ-լակ, գյուլոխը ծակ-ծակ:
162 (522). Լավեթոն արի նի գիձի ծովը, ծովը գիդա վեչ, ծովումը ծուկնը կա, ծուկնը կգիդա:

163 (523). Լեն օրեն՝ ընդ օր ալ կա:
164 (524). Լուգիտ կարճ պահի, խըլքտ՝ երկար:

- Խ -

165 (525). Խազ պտողեն համ չի ինի:
166 (526). Խազ տանձը կծըս՝ կմնա պկետ:
167 (527). Խաթան լա մհետ ա դըռնալիս:
168 (528). Խամ նա քոռը՝ մին կինն:
169 (529). Խայինը էն ա, որ սրտեն խոսքը հնգերեն ըսիս չի:
170 (530). Խաչեն իրան տարը զորավոր կանի:
171 (531). Խարաբա ջղացմն ալ մի չխկոց կինի:
172 (532). Խբիրբիզանը վերչը խայտառակ կդըռնի:
173 (533). Խելոնք գյոռնը էրկու մոր կաթնը կտան:
174 (534). Խելոնքը մըզ ճարի չի, պըլն ալ մըզանե հռանա չի:
175 (535). Խելուևք էշեն ջոխտ-ջոխտն եռ ինիս:
176 (536). Խեր բենն ալ, շառ բենը նստինն իրար նհետ տկըզգուլոխ ըրիս:
177 (537). Խմորեն ջուրը ալուրը գյորա նի կածն:
178 (538). Խոզեն ասալն՝ գյուլոխտ ծանդըր ա, ասալ ա՝ իսմ տնիլիս:
179 (539). Խոզեն մըտքը ղմիշոտն լալ, շոնն ալ խռեգ ա տվալ, տարալ ղմիշոտը:
180 (540). Խոխան ազիզ ա, խրատը՝ խոխեն նանե ազիզ:
181 (541). Խոխան բենավս ղորկալ՝ պետք ա հետեն գինս:
182 (542). Խոխան քանե լեց վեչ ինի, մարը ծըծ չի տա:
183 (543). Խոխեն հոքմը, թաքավերեն հոքմը՝ լա մին ա:
184 (544). Խոսքեն դոզը խոխան կասի:
185 (545). Խոսքեն տկըզգլխեն երի չհասած, կռըվ չըն սարքի:
186 (546). Խոսքը տեղը գյոլուց պետք ա ասս:
187 (547). Խոտը տալ չըն շանը, մըսը՝ ձիանը:
188 (548). Խոր ջիրոմը ինա չի ձեռքավ ծուկնը փռնի:
189 (549). Խրեգ կեր, որ միշտ օտրս:
190 (550). Խուփը քարեն թողի չըն դեմ ինգի:
191 (551). Խևեն խրատը հինչ անի, սըվեն՝ սապունը:

- Ծ -

192 (552). Ծախու ապրանքը ծախի դրքետ:
193 (553). Ծաղկած ծառեն նանե ծաղեգ կպկասի:
194 (554). Ծակ հոլունքը մնա չի տափեն:

195 (555). Ծամը երկար, խըլքը՝ կարճ, ասածն կնգանը:
196 (556). Ծառեն ասալն՝ կացենը գյուլիս ա քի կտրի, ասալ ա՝ կոթը մըզանե կինի:
197 (557). Ծառեն վըռհնը իրան նանե վեչ ինի, ծառը հազար տարե կապրի:
198 (558). Ծառը իրան սամթեն կտրիս:
199 (559). Ծըտը հի՞նչ ա՝ իրան եղը հինչ ինի:
200 (560). Ծըտը մի փոշ ա փանահս ըրիս, տակեն բոն դիրիս, ծոտ դոս ըրիս:
201 (561). Ծըրը ծռողը՝ մըծ եզնն ա ինիլիս:
202 (562). Ծմակ մտնողը առանց փադ դուս չի գյո:
203 (563). Ծմակը առանց չախկալ ինի չի:
204 (564). Ծոխը հինչքան բիցրանա, երգինք կարի չի հասնի:
205 (565). Ծոռն էն ա, որ դուզվիլ չի:
206 (566). Ծուկնեն նանե մըծը՝ ծովն ա:
207 (567). Ծուկնը գյլխեն նետ կվըտի:

- Կ -

208 (568). Կաթիլ-կաթիլ հվքվիս ա, գյոլ դըռնալիս: Կաթիլը կտրի՝ գյոլեն տեղը չոլ կդըռնի:
209 (569). Կալ թակող եզնը կալեն նանե կօտի:
210 (570). Կարաք օտղն ալ ա գյորունք ինգիս, կանեչ օտողն ալ:
211 (571). Կատվեն ասալն՝ կեղտտ դեղ ա, տարալ ա, խորն ա թաղալ:
212 (572). Կատվեն խաղը՝ մոկանը մահը:
213 (573). Կատվեն փախուստը դեչանը մարեգն կինի:
214 (574). Կըռենք ունեցողը օտիլ կօգի:
215 (575). Կճոճը թոլ ին՝ իրան խփեն՝ կճարի:
216 (576). Կընգա բիրանեն փըկը բիլասլի չի ինիս:
217 (577). Կընգա կերած ուրթոմնեն հվատա չըն:
218 (578). Կընգա ուրթումնը, յա էծեն սաբիր գյոլը՝ հավասար բեն ա:
219 (579). Կընգա հոքյմը նա թաքավորեն հոքյմը քըշեռքեն թայերեն նման հավասար ըն:
220 (580). Կընգանը խըրատուղը հունի մըհակն ա:
221 (581). Կընգանը թակածը կորած բեն ա:
222 (582). Կընգանը հղե բերուղը հունի մըհակն ա:

223 (583). Կընգաանը մտքոմն որ ինի, առանց քարի, առանց ցըխի տոն կըշինի: Կընգաանը մտքոմը որ ինի վեչ, իլած տոնն ալ մոխար կարի՝ քամուն կըտա:

224 (584). Կընեգյը որ կըրակ ա դըռնալիս, մարթը պետք ա ջուր դըռնի: Տըղամարթը կըրակ դըռնալուց, պետք ա կընեգյը ջուր բըռնի, որ տոնը տոն դըռնի:

225 (585). Կընեգյը որ նըստալ ա սատանուն ձին, տըղըմարթեն ձիանը հետնաց գինիլը նըհախ բեն ա:

226 (586). Կընեգյը որ սորին բեն լալ ինի, մի կընեգ ալ Աստուծեն լալ ինի:

227 (587). Կոզնը դիրըս խալուն՝ թոլ կինի:

228 (588). Կոժը ջրին հղեց կկոտրվի:

229 (589). Կոծկած կարասը գինի լցնիլը խաթալու բեն ա:

230 (590). Կոշտ կիրածեն հի՞նչ վեջն ա, որ կողքեն նստածը քողցած ա:

231 (591). Կոշտը քողցածեն գերմակ կփրթի:

232 (592). Կորած ապրանքը թինգանոց ա դըռնալիս:

233 (593). Կռվոմը չամենչ չըն բուժունիս, գյուլոխն թկիլիս:

234 (594). Կռունքնոն նանե ազիզ բեն չկա, որ ցվիս ա՝ դոս ըն ունիս, դեն գիծիս:

235 (595). Կրակեն նանե մոխար՝ մոխրեն նանե կրակ տըսածմ:

-Հ-

236 (596). Հալալ մարթը կբարիշացնի, հարամ մարթը՝ կկռվացնի:

237 (597). Հանդմը քաղցր սոհբաթ արիլը դանեն գյուլ կօտի:

238 (598). Համփերի, որ համ բերի:

239 (599). Համփերութունը գյանք ա:

240 (600). Հաշիվը արտմը պարզի, որ կալմը խոսք վեչ բիցիրանա:

241 (601). Հաչող շոնը կծող չի ինի:

242 (602). Հասկացող դուշմանը անհասկացող պարիկամեն նանե սորին ա:

243 (603). Հասկացողեն միետ ասնծ՝ չհասկցողեն՝ հազար միետ, լա մին ա:

244 (604). Հավը ջուր խմելուց միշտ կյեշի Աստուծեն:

245 (605). Հարամը կգյո հալալեն կտանի:

246 (606). Հարուստեն խոխան քոնե եր կանա, դիբի դոզլաթը կգինի, քյասիբեն խոխան քոնե եր կանա, դիբի տաշտը կգինի:

247 (607). Հացեն հոմը ցավ կբերի, մսեն հոմը՝ մըս կբերի:

248 (608). Հացը հաց թխողեն տոր, մինն ալ իվիլ տոր:
249 (609). Հացը տաք թոռնմն թխիլիս:
250 (610). Հեքալը կկապեն էն հիյվանեն վեզը, որ սազի:
251 (611). Հըռե խաբերը դուզ տեղ չի հասնի:
252 (612). Հըռե փախի քոռեն, քչալեն, չուլոխեն նանե:
253 (613). Հըրթը հասնի քոլնան վըրիլեն, եզանը գյուլոխը կցավի:
254 (614). Հինչ որ գինի, բաղեն նանե կգինի, բաղվանչուն հի՞նչը կգինի:
255 (615). Հինչ որ վարս, էն կինձըս:
256 (616). Հղե գենցողը պետք ա հղեց ինի:
257 (617). Հըղե գինիս տեղը, որ կընեգյը առաչ ա ինգյալ, տըղըմարթեն թողալ ետըքեն՝ հըղըցին կեսին նըհետ տըղըմարթեն ետ դըռնալը մասլահաթ ա:
258 (618). Հղեն թողած՝ տալ չըն քարեն-քոլեն:
259 (619). Հղոքն գենցողը ինջհնմիշ չի ինի:
260 (620). Հնձվորեն հախը կտրի չըն:
261 (621). Հո աշխատի, էն ալ կօտի:
262 (622). Հո-հո կա՝ վըչխարը դոս ա բիրիս սարեն գյուլոխը, հո-հո կա վըչխարը վեր ա բիրիս սարեն տակը:
263 (623). Հոռեն բար չի տալիս, համա սորին շվաքեն հետե կտրիս չըն:
264 (624). Հրսանենք նա մահը՝ քուր-ախպեր են:
265 (625). Հրսանեքը պրծնիլեն ետը, զուռնա-դհոլ ածիլը սազմ չի:
266 (626). Հրվանեն հառհնը միշտ հրվանեն աշկեն նախշոտ ա ըրվալիս:
267 (627). Հրվանեն ծիանը եռ ինողը շուդ վեր կգյո:
268 (628). Հրվանեն նեղ օրեն երե ծծաղ մալ՝ գյուլոխտ կգյո:
269 (629). Հրցնիլավ կարող ա հասնիլ Երոսաղեմ:
270 (630). Հո՛ւ արի, հո՛ւ՝ օտի:
271 (631). Հուր որ սորփք գիդացալ, տարալք երե շամի վառալ՝ փչալ ա ընցրալ:

- Ձ -

272 (632). Ձեռքը ձեռք ա լվնալիս, էրկու ձեռքն ալ՝ իրիս ա լվնալիս:
273 (633). Ձիանը յիշիսն՝ գյորեն տալիս:
274 (634). Ձին նա ջորեն կռվալն, էշը մաչ ա ինգյալ՝ վընուտակե ըստակալ:
275 (635). Ձու ածող հավը կչկչան կինի:
276 (636). Ձու գյողացողը ծի ալ կգյողանա:
277 (637). Ձունավ ծածկած բենը շուտ բեց կդըռնի:

- Ղ -

278 (638). Ղեյրաթի տղան հըռնացն նշանց տալիս:

279 (639). Ղզղանը ասսլ ա՝ տակըս վըսկե ա, չամչոգը ասսլ ա՝ իս ըշտեղե՞ յըմ գյոլիս:

280 (640). Ղորող քոռ արողը ղորողչին ա ինիս:

281 (641). Ղսմաթից իվիլ՝ ինա չի օտիլ:

282 (642). Ղուրբան ինգըմ քյասիբ տանս, կաղ կնգանս:

- Ճ -

283 (643). Ճոտրը աշունքնն հմբրլիս:

284 (644). Ճպատ ա պետքի՝ քու քոլեն կտրի:

285 (645). Ճրեգը իրան տակը լոս չի տա:

286 (646). Ճումբը նստած ա քարեն գյլխեն, լեց ինիլիս:

- Մ -

287 (647). Մազես հմբրանքավը սուրոնեթունմ արած, մտերես հմբրանքավը տըսած չըմ: Ղորող քոռ արողը ղորողչին ա ինիս:

288 (648). Մազըրը երկար, խըլքը՝ կարճ, էտ կընգաննն ասաց: Ղորող քոռ արողը ղորողչին ա ինիս:

289 (649). Մախաքը պարկմը ինա չի պահի: Ղորող քոռ արողը ղորողչին ա ինիս:

290 (650). Մածոն կերած չըմ, մածնոտ աման տըսածմ:

291 (651). Մահեն ասալը՝ ըշտե՞ղս գինիս, ասալ ա՝ տոն քնդիլու:

292 (652). Մարթ իլած տեղը հըմանչի չի, չիլած տեղը կըհըմանչի, սըվիրըս կմնա:

293 (653). Մարթ կա ջուրը երե ջեղաց ա, մարթ կա ջուրը կտրած ջեղաց ա:

294 (654). Մարթ յորղանը գյորա վընը կմըկնի:

295 (655). Մարթեն խըլքը չըն չըփիս, փողեն քիսանն չըփիս:

296 (656). Մարթեն տղան պետք ա մաշկեն ինի, հացը՝ տաշտեն:

297 (657). Մարթեն ցավը որ մինը ինի, մարթ համփերած կտանի:

298 (658). Մարթը թքածը ետ չի լուզի:

299 (659). Մարթը իրան լուզվավը կրակ կինգի:

300 (660). Մարթը իրան հնգերավնն ճնչիլիս, ասի՝ հո՞ւ վա հնգրետ, ասմ՝ հովս դու:

301 (661). Մեղավերը մեղավերեն նհետ քանե իրսպաիրս վեչ անս, մինը մինեն կախաղան կանի:

302 (662). Մեղկը՝ լելավ, պարտքը՝ տալավ կպրծնի:

303 (663). Մըզ էն բախտը չօննք՝ պապան գյո, պարկը շլակեն: Մըր տոն եկող պապան կգյո՝ պարկը ծեռքեն:
304 (664). Մըղըր կտրողը մաննը կլուզի:
305 (665). Մըռնիլը մըռնիլ ա: Պա խըռխըռալն հի՞նչ ա:
306 (666). Մի արխավ որ ջուր գենցած ինի, ալլա կգինի:
307 (667). Մի խոսք մի կնգան ասած, յա թեխյա աշխարքեն՝ մին ա:
308 (668). Մի խոսքավ որ քուշտննական չըս, ասիլ ալ մա՝ քողծածանս:
309 (669). Մի ծառու շվաքում հազար գյուղոխ վըչխար ա գյոնաշ տալիս:
310 (670). Մի ծղեգավ գյորոնք չի գյո:
311 (671). Մի ծեռք որ կրիս չըս կտրի, պետք ա պաչս, դիրըս ծկատետ:
312 (672). Մի ծեռքը ծափ չի տա:
313 (673). Մի ղռնանոց էշեն նանե տասը շհանոց քուռուկ կինի:
314 (674). Մի մարթ որ պլեթոն ա ըրիս, գինիսն դերեն կոշտը գենգատ: Պա որ դերն ա պլեթոն ըրիս, հո՞ր կոշտը գինս գենգյատ:
315 (675). Մի մարթա քանե տսնալու օր օնի, կարի՝ կտըսնք:
316 (676). Մի մարթեն մի կաթիլ բախտը մի կարաս վըսկոն նանե շատ ա:
317 (677). Մի փոր հացեն թամահ արողը մի քնդոց ցոռնեն նանե կինգի:
318 (678). Մինը ասի, տասը լսի:
319 (679). Մինը ինի՝ քաղցր ինի:
320 (680). Մոկանը գյոզը ջղացեն ջիրին փայդա յա:
321 (681). Մոկանը հետե՝ կատոն մի մըծ գազան ա:
322 (682). Մոկնը կարմ չի բոնը մտնի, ցխավիլն ալ կապալն հագվեն:
323 (683). Մոտե հրեվանը հըռե պարիկամից սորուն ա:
324 (684). Մորոխեն բերած սովը Աստուծ հըռե տանի:
325 (685). Մրթամաչ մարթս ինի, թող հազար թիման պարտքս ինի:
326 (686). Մրոք չօնմ, խոսկս անց չի կնալիս:

- Յ -

327 (687). Յալանչեթունն ալ մի փեշակ ա:
328 (688). Յուղծվեն խաթր քթըվերեն կոթը կպաչն:

- Ն -

329 (689). Նախշոտը առանց էյիբ ինի չի:
330 (690). Նաղդը թողած, նիսիյին շոռ չըն գյո:
331 (691). Նանան մանի, թորքը տանի:
332 (692). Նստի ինդի՝ քաշտ գյորա:

- Շ -

333 (693). Շան հաչիլն ալ մի արհեստ ա, թա որ մարթը գիդա:

334 (694). Շան հչիլավը քյարվանը վըննը չի կենա:
335 (695). Շան տղա յըմ, գյոլմ խղդիլիս, պա քի հի՞նչ:
336 (696). Շանը թակի Հարաբետ, ջարման քաշի Կարաբետ:
337 (697). Շանը հացն գիծիս, տըեռնը խաթրեն:
338 (698). Շանը նհետ հնգեր դընռ, միակը ծեռքետ պահի:
339 (699). Շատ ապրողը շատ չի գիդա, շատ շոռ եկողը շատ կգիդա:
340 (700). Շատ գիդացի՝ խրեգ խոսի:
341 (701). Շատեն նանե շատ՝ խրեգեն նանե խրեգ:
342 (702). Շոնը ծառեն տակեն քոն ա ինիլիս, ինդի ա գիդալիս՝ վընչախր պահիլն իրան հուռարն ա:
343 (703). Շոնը կհաչի, քյարվանը կգինի:
344 (704). Շոնը շանը թաթը կոխի չի:
345 (705). Շոռ եկող գյոլը քողցած չի մնա:
346 (706). Շորեն ճեղը խռավ ա գենցալ, ասղը եր ա տվալ:
347 (707). Շորն ասած ա՝ դո ինձ պահի բուխչամաչ, որ իս քի պահմ մրթամաչ:
348 (708). Շտանուց՝ շնանուց:

- Ո -

349 (709). Ողորմոթունը ինդի տոր, որ խընըղտ ալ ոչ գիդա:
350 (710). Ոչ հայա խոնգ ա, ոչ թորքա ուզառլիգ:
351 (711). Ոչ մինեն ճրեգը դեչանը վերջ վառ չի մնալիս:

- Չ -

352 (712). Չկանչած տեղը գինիլ մա՝ տեղները նղցրի: Կանչոծ տեղը գինի՝ սրտները ուլխցրի:
353 (713). Չմոշկ կարող ուստեն խոխան տեպեգ շոռ կգյո:
354 (714). Չորանեն մթկոմը որ ինի, թաքեն նանե կաթնը կկթրի:
355 (715). Չորանը կասի՝ օրը մթնի, հախս դուզզի:
356 (716). Չոր չիրը թրջիլ ա պիտիս:
357 (717). Չոր ցընխը մարթեն փռակեն կպի չի:
358 (718). Չուտողուն ապրանքը ուտողան հալալ ա:

- Պ -

359 (719). Պանիր-հաց՝ իշտահը բաց:
360 (720). Պապը շուլոր լալ կերած, թոռանը կռնքնեն առալ ա:
361 (721). Պառավ ընչիգանը մարթ ա հասալ, ասսլ ա՝ բիրթբիրթոտ ա:
362 (722). Պարիկամը չգինիլավ գյոլավ յադ կդընռնի, յադը գինիլավ-գյոլավ պարիկամ կդընռնի:

363 (723). Պետք ա ծնող դըռնս, որ ծնողեն ղադրը գիդաս:
364 (724). Պետք ա հիլիվերըս, որ հիլիվերեն պադևը գիդաս:
365 (725). Պըլեն աղոնը Աստուծ ա ըղալիս:
366 (726). Պըլեն ասալը՝ շենմը հրսանեք կա, ասսլ ա՝ ինձ հի՞նչ: Ասալը՝ քի ալը կանչած, ասսլ ա՝ պա քի հի՞նչ:
367 (727). Պըլեն գյլխեն պոզ չի ինիս:
368 (728). Պըլը ինդի ա գիդալիս՝ ծովը դեչանը ծնգները կինի:
369 (729). Պըլը որ հմանչի վեչ, պետք ա պլատարը հմանչի:
370 (730). Պըլը պըլեն տսնալուց ճակատը մի կեղ ետ կգինի:
371 (731). Պիզեն գյլխեն բուռնացավ ինա չի թխիս:
372 (732). Պտողը իրան ծառեն նանե հըռե չի վեր ինգի:

- Ջ -

373 (733). Ջհանդամ գենցողը հնգեր շատ կօգի:
374 (734). Ջորը որ թակս՝ չլմազ կարի:
375 (735). Ջուրը հրմեթոն եր չի օնի:
376 (736). Ջուրը մի տեղ որ շատ մնա՝ կվըտի:

- Ռ -

377 (737). Ռանգես եշի՝ հալս հրցրի:
378 (738). Ռաշպարեն տան հացը պակաս չի ինի:

- Ս -

379 (739). Սանադքար մարթը դեչանը կեսօր քողցած կմնա:
380 (740). Սար նա ծոր՝ դերու փոր:
381 (741). Սարդը թալա յա գյորցիս ճանջ փռնիլու հետե:
382 (742). Սարեն գյլխեն բեն արող տղան, սարեն տակեն ալ կարի:
383 (743). Սարը սարեն չի ջիհի, մարթը մարթեն՝ կջհհի:
384 (744). Սարր ուրոտալիս տեղը ծորորնն ուրոտալիս:
385 (745). Սըվ էծը սըվ օր կծնի:
386 (746). Սըրը սվըրը կօտի:
387 (747). Սըրտս մարթես երե շատ մի տա՞ք ա, տաքիրես հալնս հրցրիլիս:
388 (748). Սողան ինի, նաղդ ինի:
389 (749). Սողանը հինչքան սեյրաք վարս, էնքան մըծ-մըծ գյուլոխ կգիծի:
390 (750). Սողոմոն իմաստոնեն չմանցած աշխարհը ոչ միներ ալ մնա չի:
391 (751). Սոտ խոսողան տոնը կրակ ա ինգյալ, հվտացա չըն:
392 (752). Սոտ խոսողուն լոզին կարճ կինի:

393 (753). Սոտեն վըննը կարճ կինի:
394 (754). Սպիտակ ապրանքը պիիսն սըվ օրոց հետե:
395 (755). Սպիտակ շոնը բենբակ ծխողուն վնաս ա:
396 (756). Սուտանեն մահլոմը ինա չի քյանդիրբազեթոն արիլ:

- Վ -

397 (757). Վախի՛ մարմանդ գետից, ոչ կվըշա, ոչ կթըշա:
398 (758). Վախտ ա ինիս՝ ջղեցմն ալ խոնգն-մումը պկսիս ա:
399 (759). Վարթապետեն ասալ՝ տղատ մըռնի, ասալ ա՝ տղա չօնմ, համա փիս խոսքը՝ փիս բեն ա:
400 (760). Վարթը առանց վըտ ինի չի:
401 (761). Վըտը դանան կթրքի նստած դանեն գյլխեն:
402 (762). Վըր եկածս մըր մեշան,
Պետք ա սըվըրս մըր փեշան:
403 (763). Վըր քանդողը ինքը նի կինգի մաչը:
404 (764). Վըրծ գյոռնը պիիսն մտաղա հետե:
405 (765). Վըրծ էշը քուռակեն նհետ շոռ չի գյո:
406 (766). Վըրծակ դըռնող ճոտը ձվեն մաչեն ա ծըվծվալիս:
407 (767). Վնասեն կեսեն նհետ ետ դըռնիլն ալ մի օքութ ա:

- Տ -

408 (768). Տախտակը գյորա մեխը կթխըն:
409 (769). Տան մաչեն մըծն վեչ ինըս, հնգրմաչե՝ կուճինը:
410 (770). Տանը դերեն «օրհնյալ դեր» ասուղ ինիս չի:
411 (771). Տանը փըկըբիլալին որ հնգյալ ա կընգանը ծեռքը, վըղը տըղըմարթեն գյլխին ա:
412 (772). Տանծոն տակեն խտորու հնգիլավ բերանտ տանծ չի հնգի:
413 (773). Տաշտը խոխան կդրտակի, մարեգը՝ դանան:
414 (774). Տաշտմտ որ հաց չօնս, կծոճմտ որ եղ չօնս, ղոնաղը կանչիլ մա՝ մնալ սըվիրիս:
415 (775). Տար ունեցողը տարը կտանի, անտեր մանցածը գյոլը կտանի:
416 (776). Տարեն մհետ աղթոք չի անի, էն ալ կտըսնս՝ սուտանեն չի թողնի:
417 (777). Տասը հետ չափի, մհետ կտրի:
418 (778). Տաք-տաք ճաշը բերանը կերի:
419 (779). Տեղը նըղ, սրտոմը՝ տեղ:
420 (780). Տըղս-տըղենմ արալ, տղես հրսանեքը արալ:
421 (781). Տղան իրան վաթանեն մատաղն ա:

422 (782). Տղեն որ խըլք ինի, հինչ ա ըրիս հոր ապրանքը: Տղեն որ խըլք վեչ ինի՝ հի՞նչ արի հոր ապրանքը:
423 (783). Տղեն տանը բեխաբար, ըղչիգյանը տանը՝ հրսանեք:
424 (784). Տոնը պատ օնի, պատը ծակ օնի, ծակը մոկն օնի, մոկն ալ անջուկ օնի:
425 (785). Տոր՝ վախիլ մա, օգի՝ հմաչիլ մա:
426 (786). Տունը առանց հուտի՝ ինի չի:

- Ց -

427 (787). Ցորեն հաց որ օնի չըս, ցորեն լուզվեն հի՞նչ ա եկած:
428 (788). Ցորեն հացեն պոզր կինի:

- ՈՒ -

429 (789). Ուսում ունեցողը քողցած չի մնա:
430 (790). Ուստան հաջաթավ ա ուստա:

- Փ -

431 (791). Փալանգը՝ փալանգ ա, էգն վը՞րն ա, վըրծը վը՞րն ա:
432 (792). Փառակս որ բիցրցրմ, հի՞նչ տեղս կրվա:
433 (793). Փափաղը գյլխեն, բուրթը՝ ըռխեն՝ լա մարթ ա:
434 (794). Փիշանգ դավեն վերչը թորբի բեռնը տանիլն ա ինիս:
435 (795). Փիս խոսկը խե՞ ասս, խե՞ լսս:
436 (796). Փորձած թանը անփորձ մածունեն նանե սորուն ա:

- Ք -

437 (797). Քաղցր լուզին օղնը բոնից հնիս ա:
438 (798). Քամե արուղ (ստախոս) մարթեն նանե հըռե կգինն:
439 (799). Քամե տարեն հաց չի ինի:
440 (800). Քամոն բերած դրմանավ մարեգ չի լցվիլ:
441 (801). Քամոտ մի օր մի հիլիվր մարթ, պատառ չոր լավաշ հաց հափռեն մաչեն փշրիս լալ, զախ տալիս բերանը, քամեն թուղիս չի լալ:
Մի մարթ հրցրալ ա.- Ա մարթ. էտ հի՞նչս ուտիս:
- Քամեն որ ըստի փչի՝ ոչինչ:
442 (802). Քամուն բերածը քամեն կտանի:
443 (803). Քամուն նհետ ինա չի հանաք արի:
444 (804). Քամուն քանդածը վըչ մինը քանդի չի:
445 (805). Քաչալն դեղ անող ինի՝ իրան գյլխեն հետե կանե:
446 (806). Քասիբը որ քասիբ ա ինիս, իրան խըլքից ա ինիս:
447 (807). Քարավ ինա չի մհակ կտրի:

448 (808). Քարը էն ծառեն նեստի տոր, որ պտող վեր ինգի:
449 (809). Քարը իրան վեր ինգած տեղը ծանդր կինի:
450 (810). Քարը որ շատ թակս, կեծ կտա:
451 (811). Քյուրան քանե կրակ չըս գիծած, քյոմիր լցնիլը պետք չի:
452 (812). Քշանաց շուդ երկանողը մուրազեն կիասնի:
453 (813). Քշնա շառը ըրկոնաց խերեն նանե սորուն ա:
454 (814). Քոն ինած մարթ նա մըռած մարթը՝ մին ա:
455 (815). Քոնը եր ա կացալ, զորթանեն վխցրալ:
456 (816). Քոնը մարթեն դոշման ա:
457 (817). Քոռեն հետե քիշեր-ցիրեկ մին ա:
458 (818). Քոռն հինչ կօզի՝ էրկու աշկ, էրկուսն ալ՝ տռոզ:

- O -

459 (819). Օխտը ծորեն գյլխեն մի թոմբ ա ինիս վըտը:
460 (820). Օղնը դեսնեն նանե յա փխչիլի, դեսնն ալ օղնեն բոնեն երե ա կնչիլիս:
461 (821). Օղնը որ օղն ա, ջուր խմելուց մարթեն կծիլիս չի:
462 (822). Օղնը տքցնողին կկծի:
463 (823). Օղնեն գյոլոխը ղուզղունն ա ուտիս, մրսիլիս:
464 (824). Օղնեն լուզվին հըվատա, կընգան լուզվին հըվատալ մա:
465 (825). Օղնեն կծած մարթը չալ չաթվեն նանե ալ ա վխիլիս:
466 (826). Օղնեն մնա, իրան հալավը փոխի չի: Համա արարիչը փոխիլ ա տալիս:
467 (827). Օղնու ալ պետք օնըս՝ քո ծեռոքը փռնի:
468 (828). Օմեն երգիրըմ կընանենքը շատ ըն, հաշիվ ունիլավ, որ տըղըմրթինք կանն ըն, որ կընգա խասյաթ օնըն:
469 (829). Օմեն կընիգյ ալ քաշկու խասյաթ օնի:
470 (830). Օրդվեն սոտը կպահի, էշեն ալ՝ փալանը:
471 (831). Օրը՝ գենցած, խաթան՝ մանցած:
472 (832). Օրհընըված կընեգյը տըղամարթեն թեգյունքն ա:

ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

1 (833). Էշեն «չուվն» ասած

Մի մարդ որ լինում էր անտրամադիր, նոթերը կիտած, ծանծրանում էր ուրախ պատասխանի դիմացինի հարցերին, որն իրենից կախում ուներ, ասում էին. «Տըսնս ալլա հո՞ւ վա էշեն «չու» ասած»:

2 (834). Էշեն ընջոկոմը քոն ա

Մի մարդ որ միշտ անտարբեր էր լինում շրջապատի, բարեկամի նկատմամբ, չէր հետարքրվում հարազատի, բարեկամի, ընկերոջ ապրելակերպով, վարում էր մեկուսացած և ինքնուրույն կյանք, ասում էին. «Էշեն ընջոկոմը քոն ինած մարթ ա»:

3 (835). Ընդոր ըրվըմը չուրաթան չի չուրանա

Մեկը, երբ ի վիճակի է մեկին մի լավություն անի, մի նեղ օրի պետք գա, ինքն էլ զգում է իր օգտակար լինելը հարազատին, սակայն անտեսում է, ցուցաբերում անփութություն, ասում էին. «Ընդոր ըրըվմն ալ չուրաթան չի չուրանա»:

4 (836). Դևեն գիվաթմը հի՞նչ եք թողած

Ընկերական շրջապատում մի որևէ բան էին ուտում, կամ բաժանում, ընկերներից մեկը ուշացած էր գալիս, տեսնում էր անարդարություն են արել, ճիշտ չեն բաժանել, իրեն համար քիչ են թողել, նեղացած ասում էր. «Պա ալ դևեն գիվաթմը հի՞նչ եք թողած»:

5 (837). Գինմ պորտը տեղը գիծմ

Մեկը, երբ մի մարդու չարախոսում էր կամ ստեր հորինում, խոսքը գալիս տեղ էր հասնում, խոսքաբերին ասում էր. «Հի՞նչ արըմ, ասսլ ա, ասսլ ա: Սհեգ իս կգինմ ընդոր պորտը տեղը կդիրմ, կյոմ»:

6 (838). Մրթավըտ

Մեկը, եթե մի մարդու նկատմամբ հոգատարություն, բարեկամական մտերմություն չէր ցուցաբերում, դիմացինի նկատմամբ իրեն պահում էր մեծամիտ ու ինքնահավան, նրա՝ անսովոր, ոչ մարդկային վերաբերմունքի համար դիմացի մարդը գնում, գանգատվում էր իր մի մտերիմի, հարազատի, գանգատ լսողը ասում էր. «Մարթա նանե խոսի: Հո՞ւ չի գիդալիս, ընդոր նանե մրթավըտ չի գյոլիս»:

7 (839). Ծմեռնը ձուն չի տա

Մարդիկ էլ կային, որ փոքր-ինչ հացատեր դառնալով, մոռանում էին անցյալը: Նման մարդիկ գիտեին, որ ի վիճակի են դիմացինին օգտակար լինել, դուրս բերել նեղությունից, բայց չէին անում, կամ թե դիմացինը խնդրում էր օգնություն, մերժում էին, մոռանալով անցյալը, նման մարդկանց ժողովուրդը տալիս էր հետևյալ պիտակը. «Անցածը մռացած ա: Գինս ծմռանն ալ ձուն օզըս, տալ չի»:

8 (840). Մաննեն նանե փոշ հանուղ չի

Մարդիկ էլ կան, որ գոհ լինելով իրենց ապրուստից, հաջողությունից ու բախտի բերումից, մոռանում են հարազատին, հարևանին, ընկերոջը, կտրում են մտերմական հարաբերությունն ու կապերը, մոռանալով, որ «Աշխարքը մի փիլինքան ա՝ մինը բիցինալիս ա, մինը՝ վեր ա գյոլիս», նման մարդկանց մասին ասում էին. «Մարթու մաննե նանե փոշ հանուղ չի», կամ՝ «կտրած մատանը աղ չի գիծի»:

9 (841). Ջուրը կպիս ա, դերմանը իրեսավ շաղ տալիս

Դե մարդիկ էլ կան, որ միշտ աչք են ունենում ուրիշի ունեցածի վրա, չարախոսում են, վատաբանում, ուղիներ են փնտրում անմեղ մարդկանց մեղավոր ճանաչելու, հալալ հացը հարամ դարձնելու համար, գիշերը քնելուց էլ չեն մտածում իրենց երեխայի վաղվան հացը գտնելու համար: Մտածում են բազմաչարչար հարևանի երեխայի հացը կտրելու համար: Ապա երեսանց իրենց ցույց են տալիս բարերար, անմեղ, իր լարած թակարդից անտեղյակ: Նմանների մասին ասում էին. «Էն ինդի շատ աղվեսն ա: Ջուրը կպիս ա, դերմանը իրեսավը շաղ տալիս»:

10 (842). Ջղացեն պոկը գիծս, սաղլամ դուս կգյո

Լինում էին շատ աչքաբաց մարդիկ, որոնք քաջատեղյակ էին աշխարհի չարին ու բարուն: Գիտեին լավն ու վատը, վնասն ու օգուտը: Աղաների հետ աղա էին, չոբանի մոտ՝ չոբան: Կարեկցում էին բարեկամին, հարևանին, բարձրացնում նրանց զգոնությունը շրջապատի նկատմամբ: Չարագործ մարդիկ չէին կարողանում թելադրեն իրենց կամքը, գցեն իրենց որոգայթը: Ժողովուրդը նման մարդկանց մասին խոսում էր գովեստով, կատարում բարի մաղթանքներ ու ասում. «Էն ինդի շատ գիդն ա, նի գիծս ջղացեն պոկը, սաղլամ դուս կգյո»:

11 (843). Ընդոր քաշկր օնի

Մարդիկ էլ կան, որ միջոց ունեն բազմակողմանի օգնություն ցուցաբերելու կարիքավոր ծանոթ, բարեկամ մարդկանց, բայց կտրուկ հրաժարվում են: Մեկ էլ տեսնում են նույն մարդը փոխեց բնավորությունը, ցուցաբերեց մի անծանոթի համար առատաձեռնություն, օգնություն, լավություն, անշահախնդրություն: Նման մարդու բարերարության մասին լսելով, ասում էին. «Ընդուր քաշկր օնի: Քաշկրը որ գյոլիսն, բարոթունը նալ գյոլիս ա: Քաշկրը որ գինիսն՝ Աստուծ ալ իրիսը տըսնի վեչ»:

Նման մարդկանց վերաբերյալ կար նաև երկրորդ տարբերակը՝ ասում էին. «Էծըր օնի: Էծըրը որ գյոլիսն, բարութունն ալ նիըտնան գյոլիս ա: Համա որ էծրը գինիսն, Աստուծ ալ իրսը տըսնի վեչ»:

12 (844). Արանքավը սըվ կատու ա անց կացած

Քիչ չեն նաև այնպիսի մարդիկ, որոնք առանց որևէ պատճառի խռովում են մեկի հետ: Ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ է խռովել, չի ասում, չի խոսում:

Նման դեպքերում ասում են. «Ալլա արանքավը սըվ կատու ա անց կացած: Վըչ ըսիս ա, վըչ ալ խոսիս»:

13 (845). Ընդոր չվանը փթած ա

Շատերն էլ կան, որ մի գործի համաձայնվում են, մեկ էլ տված խոսքից ետ դառնում: Մեկ ասում են՝ «հա», մեկ էլ՝ «չէ»: Անհուսալի են տված խոսքի կայունության հանդեպ: Նման մարդկանց էլ ասում են. «Ընդոր չվանը փթած ա: Ընդոր չվանավը վըր մտնողը կմնա վըրըմը»:

Կա նաև երկրորդ տարբերակը: Ասում են. «Ընդոր չվանեն ինա չի ումուդ կապիլ, շելակ շլակիլ»:

14 (846). Սարա խոտ ա

Կան մարդիկ, երբ մեկը մի խոսք է ասում, ջերմորեն հավանություն են տալիս ու համաձայնվում: Մեկ ուրիշ մարդ առաջինի ասածի հակառակն է ասում, նա նույնպես հավանություն է տալիս ու համաձայնվում:

Նման մարդկանց հետևյալ կերպ են որակում ու ասում. «Սարա խոտ ա: Քամեն որ թրափնոց փչիս ա, դենն ալ գյուլոխը հուլուրիս ա»:

15 (847). Խբիրբիզան մարթ ա

Մարդիկ կան, երբ նրանց մոտ որևէ մեկի մասին մի բան ես ասում՝ ըստ նրա վերաբերմունքի կամ հասկացողության, շատ հեռու բամբասանքի ոլորտից, կտեսնես, որ լսող մարդը չի համբերում կողքիդ կանգնի: Կասես թե հրդեհվել է, հարկավոր է շտապ հրդեհը մարել: Մեկ էլ տեսար անհայտացավ, գնաց որոնեց, գտավ տվյալ անձին, ինչ որ լսել էր նրա հասցեին, գունավորեց, ծոխացրեց ու լիցքաթափվեց, մարեց իր մեջ բռնկված հրդեհը, ազատ շունչ քաշեց, հանգստացավ, ինչպես մի ծանր բեռից ազատված, հոգնած գրաստ:

Նման մարդկանց պիտակ որոնելով ասում էին. «Խբիրբիզան մարթ ա: Ընդոր քուշտեն ինա չի մի խոսք խոսիլ: Ընդոր պկոմը խուլ չկա՝ խոսքը պահի: Պետք ա սհաթտա խաբերը տանի, որ ջանը դինջանա»:

15 (848). Չրտըլուզի խոսուղ մարթ ա

Անդրկովկասի անտառներում տարածված թութակազգի թռչունների խմբում շատերին ծանոթ է բազմագույն փետուրներով չարտը: Չարտը բազմախոս է: Անտառում ինչ կենդանու ծայնը լսի, անմիջապես ընդօրինակում է ու պարզ ու գեղեցիկ կրկնում: Չարտը գիտե ուլի նման մկկալ, կատվի պես մլավել, շան նման հաչալ և այլն:

Այն մարդիկ, որոնք հաստատ չեն իրենց խոսքի մեջ, մեկ այսպես են ասում ու մեկ էլ խոսքը փոխելով՝ մի ուրիշ բան, ասում են. «Էն մարթը չրտիլուզի խոսուղ մարթ ա: Ընդոր ոչ մի խոսքեն ինա չի հվատա»:

ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ

1 (849). Մահմադի

Դարանի գյուղացի մի քուրդ ծանոթ ունեինք, անուն՝ Մահմադ: Կարտոֆիլ ուտելու մոլի սիրահար: Դարանե գյուղը մեր գյուղից գտնվում էր քսան կիլոմետր հեռավորության վրա: Ինչպես ասում են՝ երբ Մահմադի սիրտը կարտոֆիլ էր ուզում, գալիս հասնում էր մեր գյուղը: Մահմադը կարտոֆիլը լցնում էր կրակի մորմորի մեջ: Չէր համբերում, որ խորովի: Մի քանի րոպե անց, կիսախորոված, դանակով կտրտում, աղ ցանում վրան, ուտում մեծ հաճույքով: Ասում էին.- Մահմադ քիրվա, դեռ լավ չի խորոված: Համբերիր, թող լավ խորովի:

- Շատ լավ է: Էսպես էլ համեղ է, հաճելի,- պատասխանում էր Մահմադը հրճվանքով:

Կարտոֆիլի կիսախորոված վիճակում Մահմադ քիրվայի ուտելը մեզ մոտ դարձավ ասելիք, թևավոր խոսք՝ որևէ մի բան ուտելուց, խորովելուց ոմանք որ չէին համբերում, ասում էինք.- Արդեն «Մահմադի է», բերեք ուտենք:

Այսպիսով քուրդ Մահմադի կիսախորոված կարտոֆիլ ուտելը թևավոր խոսք դառնավ, տարածվեց գավառով մեկ:

2 (850). Դերունց բրանին

Ղարադաղի հայկական գյուղերի բոստանային կուլտուրաների մեջ իր պատվավոր տեղն ուներ բրանին:

Բոստանների արևահայաց տարածքների բրանին շատ համեղ ու քաղցր էր լինում, հով տեղի բրանին բավական անհամ ու պակաս քաղցրություն էր ունենում:

Խանագահ գյուղի տերտերենց բրանիները անհամ էին լինում: Տերտերակինը, հարսը միշտ բոլորից շատ էին հավաքում բրանին, բերում եփում ու մոտական հարևան կանանց պարտադիր հրավիրում բրանի ուտելու: Ըստ տեղի սովորության, որ հետագայում քաղցր բրանի ունեցողները

բրանի եփելուց՝ համաձայն գյուղի հասարակական օրենքի, իրենց պարտադիր կանչեն բրանու հյուրասիրության:

Գյուղում դառնում է ասացվածք: Մեկը եթե միասին ինչ-որ բանի համար պարտադիր հյուրասիրության էր հրավիրում, անմիջապես հիշում և ասում էին. «Հի՞նչ ա, Դերաց բրանին ա»:

Այսպիսով, նման բոլոր առիթներով հիշելով, Դերունց բրանին դարձել էր թևավոր խոսք:

3 (851). Հուժե ժամեն նանե ալ ա ինգյալ, Խինգիհինե ժամեն նանե ալ

Ղարադաղում հայերի մեջ պարտադիր օրենք կար, որ հանգուցյալի տերը պարտավոր էր իր հանգուցյալի համար հոգեհանգստի տուրք տալ: Դա կարող էր լինել հանգուցյալի թաղման օրը, յոթօրյակին, քառասունքին, մահվան տարելիցին, կամ հինգ, տասը, քսան տարուց հետո՝ երբ հանգուցյալի տիրոջ տնտեսական միջոցը ներում էր, հոգեհանգիստը կատարվում էր մեծ շուքով: Հրավիրվում էր ամբողջ գյուղի հասարակությունը, շրջակա հայ և թուրք բնակչությունը՝ ով կցանկանար: Ճաշկերույթի ժամանակ մորթում էին խոշոր անասուն՝ եզ կամ կով: Ճաշկերույթից առաջ ժողովուրթը հավաքվում էր գյուղի եկեղեցին՝ կատարվում էր հոգեհանգստի ժամերգություն:

Պատմում են, որ հնում, երբ Խանագահի մոտ գտնվող Հուժ գյուղը հայաբնակ էր, մի անգամ այնպես է պատահում, որ նույն օրը Խանագահ գյուղում էլ ժամ են անում (հոգեհանգստի ճաշկերույթին ասում էին՝ ժամ, նկատի ունենալով, որ ճաշկերույթը տրվում է ժամերգությամբ), Հուժ գյուղում էլ:

Հուժ գյուղացի մի միամիտ ծերունի որոշում է առավոտը վաղ գա Խանագահ, մասնակցի հոգեհանգստի ճաշկերույթին, հետո գնա, մասնակցի իրենց գյուղում տրվող հոգեհանգստին:

Ծեր մարդը Հուժից մինչև ոտքով գալիս հասնում է Խանագահ՝ արդեն ճաշկերույթը ավարտված է լինում: Խանագահից էլ մինչև վերադառնում, գնում է Հուժ, արդեն ուշացած է լինում, հոգեհանգստի ճաշկերույթը Հուժում էլ վերջացած է լինում:

Ծերունու գլխին եկած անհաջողությունը դառնում է թևավոր խոսք, տարածվում ամբողջ գավառում:

Հետագա տարիներին ում որ նման մի անհաջողություն էր պատահում, վռազ հիշում, ասում էին. Ղըռալ ա Հուժեցե հիլիվերեն մասալան. Հուժե ժամեն նանե յալմ ինգյալ, Խինգհինե ժամեն նանե յալ:

4 (852). Ափրամե տղեցը տոնը

Գյուղացի Աբրահամը քանի դեռ ողջ էր, ընտանիքում տիրում էր խաղաղ անդորր: Նրա մահից հետո երկու տղաների մեջ անհամերաշխություն առաջացավ: Ո՛չ բաժանվում էին, ո՛չ էլ համերաշխ ապրում: Ամեն օր, ամեն երեկո հարևանների հանգիստը խանգարող անտեղի վեճեր էին լինում:

Երկու եղբայրների նման անհամերաշխությունը դարձավ գյուղում ասելիք, թևեր առավ, տարածվեց գավառում: Ինչ ընտանիքում անհամերաշխություն էր ծագում, անտեղի վեճեր էին առաջանում, անմիջապես հիշում և ասում էին. «Օհո՛, մըր տոնը ղըռալ ա Ափրամե տղեցը տոնը»:

5 (853). Տինգա տըղ

Տանգ Ղարադաղի հայերը անվանում էին ջվալների եզրերին պատրաստած անցքերին, որոնք հիմք էին հանդիսանում պարանը անցկացնելու, ջվալները գրաստներին բարձելու համար:

Կյանքում կան շատ մարդիկ, որոնք որևէ մեկի հետ բանավեճ սարքելու առիթ են փնտրում, դա լինի ընտանիքի, հարևանի, ընկերոջ, կամ մեկ ուրիշի հետ:

Խուսափելով նման անտեղի, անիմաստ վեճերից, ղարադաղցի հայը ասում էր. «Ղորմա հորտ, դու տինգյոտեղավս շոռ գյուլիս: Համա դե ինձ գյուլոխ չօնմ: Ինձանե հըռե գինի»:

Այսպիսով, «տինգյատեղը» դարձել էր թև առած խոսք, տարածվել գավառով մեկ: Մարդկանց գլխացավանք պատճառող տհաճ խոսակցություններից հեռու վանող միջոց:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Ղարադաղի հայերը շուտասելուկների սիրահար են եղել: Նրանք հորինել ու տարածել են շատ ծիծաղաշարժ շուտասելուկներ:

Ղարադաղում տարածված շուտասելուկներից են հետևյալները:

1 (854) Չալ ծըտ,
Չլա ծըտ,
Չալ ծըտեն
Չալ ծըտաճոտ:

2 (855) Հոլը եռ ա ինալ,
Հոռե ծառեն:
Ասալմ.- Այ բարաքյալա հոլ:
Հոռե ծառեն երե՝
Հոռ հուլո՛րուղ հոլ:

3 (856) Փուկակապ Ակուփ ապեր,
Ինձ հետե մի փուկ կարս կապս,
Իս քի կասմ՝
Փուկակապ Ակուփ ապեր:

ԵՐԳԻՃԱԿԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐ

1 (857) Ներակ ինձ
Կաթնավ բրինձ,
Իմ բաջի նշանվալ ա,
Հերթը հասալ ա ինձ:

2 (858) Վա՜յ, լալա, անգըս,
Կտրալ ա տանգըս,

Մի նախշուտ աղջիգ,
Ինգալ ա ճանգըս:

3 (859) Քռակեն, քռակեն,
Օկլակե տամ չխրակեն,
Թա իմ դայուն հավան չըս,
Գինի մըր սըվ էշեն քուռակեն:

4 (860) Ապի ջան, ապի,
էշը տար, ծառեն կապի,
Որ կփախչի, կզըռզըռա,
Մըհկը եր կալ, գյլխավը թակի:

5 (861) Դիլ դիլ հըրսանեք,
Պապոնց տանե կնանեք,
Եկեք գինընք հրսանեք,
Հարսանը պա փոխան չունի,
Փեսու փոխանը գեց տըվեք, տանենք:

6 (862) Տաշ, տաշ Թամարա,
Դայիջանիս համար ա,
Դայիջանս թառ կածի,
Թամար կտրեն պար կածի:

7 (863) Սոնա զիզա, Սոնա,
Գիշերը զարթուն ա, ցիրեկը քոն ա,
Օգուտեն խոսըս՝ դիբի տոն ա,
Վնասեն խոսըս՝ կապը կտրած շոն ա:

8 (864) Կընեչալ ա Խինգիհինե պըռըկնեն,
Եղսապետ խալան թափ ա տվալ փըռըկնեն,
Հարսըն տարալ, տրաքիլ չի թվընգնեն,
Խինգիհին պարն ածալ իրգութենեցուց քուռակնեն[29]:

[29] Հորինված են իրական դեպքերի առթիվ (ծան. խմբ.):

9 (865) Ջահելները տարան, կերան Երվանդ ամու մեղրը,
Մի պատառ թողալ չըն, որ նի քսի բեղերը,
Կըզնըվալ ա, քամակը քսալ վըղըրը, Եկալ ա տոն,
Նազլու խալուն խտտալ, մտալ տեղերը:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1 (866) ա) Անի մանի,
Մի վըննանի,
Դուս գյո դուքը,
Տղան կտանի:

(*սունկ*)

բ) Բուլոր ծմակ,
Գյոռան դմակ:

(*սունկ*)

2 (867) Գյումաշը գյոլումը,
Հագին՝ չոլումը:

(*պղինձ ու շերեփ*)

3 (868) Դավից բոյավ,
Խնձորից կուճի,
Ձհարից զհար,
Քարա նման պընդ,
Եղու նման համեղ:

(*ճղպորի ծառը, ճղուպորը, ճղուպորեն քիչիվը, ճղոպորեն կլըպը, ճղոպորեն միջուկը*)

4 (869) Էն հի՞նչն ա.
Դիրիս կրակեն, որ թքանա,
Հինչքան թքանա,
Էնքան ըլ սառնը կկապի, կիըստանա:

(*կաթ*)

5 (870) Էն հինչըննը հի՞նչը.
Հայն ուտիս ա,
Թորքը խմիս ա:

(*երդում*)

6 (871) Էն հո՞ւ վա, հո՞ւ.
Տասնըհենգ օրումը մի պարղաճ ա ինիս,
Տասնհենգ օր ալ՝ նստիս, ուտիլիս:

(*լուսին*)

7 (872) Իրք գյլխանե, տասը վննանե,
Իրըսը տախտակ, տակը՝ քար նա արկաք:

(*կալ կալսող երկու եզը,*
կամ քշող տղաճ ու կամը)

8 (873) Իմ հար փանդ ա արալ,
Փանդ նա փել ա արալ,
Վեց աստղ բերալ ա,
Մի լուսլոնգյա բանդ ա արալ:

(*պայտ ու մեխ*)

9 (874) Խալին թափ տալ չի ինի,
Ոսկին հըմբարել չի ինի:

(*տիեզերք ու աստղեր*)

10 (875) Ո̄լծլան ջեղաց,
Ո̄կծկոտ պարղաճ:

(*մեղրաբլիթ*)

11 (876) Կապը ջիրըմ, դանան մծանա,
Պապուն օտի, կզզրճանա:

(*ծմերուկ*)

12 (877) Կոլա օնըմ մի պուճուր,
Մաչեն էրկու ռանգի ջուր:

(*հավկիթ*)

13 (878) Կվարըմ հաճար,
Դուս կգյա անճար,
Կերկնանա չվան,
Կբոլորի կճոճ:

(*դդում, սերմ և թաղ*)

14 (879) Հավաքըմ հափռավըս մին,
Բեց թողում՝ տանավը մին:

(*ծրագի լույս*)

15 (880) Հինչ որ տեղ գինըմ,
Ինձ նետ կգյո:

(*ստվեր*)

16 (881) Մաշկը քար ա, քար՝ չի,
Փորը քար ա, քար՝ չի,
Ջու կածի, հավ չի,
Կարածի, կավ չի:

(*կրիա*)

17 (882) Մըզ մինն օնընք.
Տասն ոտանի, իրեք գյլխանի:

(կալի զույգ եզներն ու կալվորը)

18 (883) Առանց դուրք, առանց հուրդ տոն,
Տոն սարքող ուստաև,
Տանը մաչեն քոն:

(*շերամի որդ*)

19 (884) Մինը օնընք, քոթը՝ կեռ,
Որ դու ճարըս, նստի կեր:

(*սիսեռ*)

20 (885) Նանաև նստի, ձեռքըրը խաղի,
Կուճի աստուծը ձյուն կմաղի:

(*ալրմաղ*)

21 (886) Նեղ մթեն տոն,

Սուտանաև մաչեն քոն:

(*հրացան*)

22 (887) Չորս կախե,
Չորս կոխե,
էրկու խիշտի,
Մի բուլդի:

(*կով*)

23 (888) Պընգըլ, մընգըլ մի շահի,
Կեսը կեր, կեսը՝ պահի:

(*Ճշխարք*)

24 (889) Սպիտակ հինըմ,
Կարմիր գյործըմ,
Սև կըտրըմ:

(*մոշ*)

25 (890) Տանը մաչեն կուճի սար ա՝ նախշուտ:
Մի թարափը ծուռ ա գյուլիս, մի թարափը կարկուտ:

(*մաղ*)

26 (891) Ցըխից լուլա,
Մսից՝ գյուլլա:

(*պատ և մուկ*)

27 (892) Փալաև օնի, էշ չի,
Եռ կինի ծառեն՝ մարդ չի:

(*խխունջ*)

28 (893) Փոշից կարած չոխա օնի,
Օղնը, պղոճից ալ, վախ չօնի:

(*ոզնի*)

29 (894) Քշանաց շուդավ,
Երկենավ տըսնամ,
Քաչալը օրախ,
Մորըտ ըռշկին
Կլպոնցի տալիս:

(*կավե խնոցի*)

30 (895) Օնընք նախշուտ մի խոխա,
Գեցեն օնի մի չոխա,
Չոխան հանըմ՝ լաց կինի,
Չոխան գեց տամ՝ քոն կինի:

(*քառ և պատյան*)

ԱՆԵՑՔ

1 (896) Օղնը իրք նահլաթ ա թողած: Առաչինը՝ ինձ, որ ծնվալմ, ըրկուսինջինը՝ ինձ տըսնող-չսպանողեն, իրքսինջինը՝ ըսպանողեն-չթաղողեն:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

ԲԱՌԱԽԱՂ

1 (897)
- Անըմըտ հի՞նչ ա,
- Մինաս ա,
- Շելակըտ հի՞նչ ա,
- Գյուլաս ա,
- Հի՞նչ տեղ ես գինիս,
- Պապունց տոն,
- Պապան կասի՝ քողծած շոն:

2 (898)
Իզա–զիզա,
Քեթա պիզ ա,
Մաշկտ ղուզ ա,
Մարթտ հի՞նչ տեղ ա,
- Թփլիզ ա,
- Հի՞նչ բենե ա,
- Կիլիկչի ա:

3 (899)
Հընգերըս, ասի՝ թութի:
Թութի:
Քու բաջիտանըմ, մըր կավը կթի:

4 (900)
Դե ասի՝ տանձի:
Տանձի:
Տանձը կեր, խանձողը տար,քու պապու բեղերը խանձի:

5 (901)
Ասի՝ ճըղպորի:
Ճըղպորի:
Ճղոպուրը կեր, փորտ քորի:

6 (902) Միեգ ասի՝ դամբուլի:
Դամբուլի:
Քու բաջի տանըմ մըր խմորը բյուլի:

7 (903) Դե ասի՝ սընջի:
Սընջի:
Քու ապի գյո, մըր արտը հնձի,
Քու բաջի ալ՝ հասկըրը փնջի:

8 (904) Կարա՞ս ասըս՝ ծեռնի:
Ծեռնի:
Իմ ապին ձեր էշեն եռնի, տանի փադ բեռնի:

9 (905) Ասի՝ բրանի:
Բրանի:
Քու նանա գյո մըր բուրդը մանի:

10 (906) Տղա յըս, ասի՝ զըղզի:
Զըղզի:
Քու ազի գյո մըր բուրդը գզի:

11 (907) Ասի՝ վարդի:
Վարդի:
Քու բաջի տանըմ, իմ գիրքը կարդի:

12 (908) Ասի՝ հաճարի:
Հաճարի:
Քու բաջի կորի, իմ ապի ճարի,
Տանի մըր բաղը ջրի, բեջարի:

13 (909) Դու ասի՝ չինարի,
Չինարի:
Չեր եզը կորի, իմ ապի ճարի,
Եր օնի տանի, մըր արտը վարի:

14 (910) Ասի՝ կարմիր լալա,
Կարմիր լալա:
Իմ ապի քու բաջու տանի Քլալա:

15 (911) Մնեշակ՝ աղջկա փեշակ:
Խնձաղե (ձնծաղիկ)՝ տղու խաղ է:
Դըռ նըդըռան (ծաղիկ)՝ կընգան դռան:
Խընջըլոզ՝ խուխու ճլոզ:

16 (912) Մին–կեր էծու փին:
Էրկու–նըստըմ ձեր էշեն, գինըմ ձմերկու:
Իրըք–բիրանետ դիրըմ օշնակու սիրեկ:
Չորք–գիլխետ դիրըմ թորք ու բյորք:
Հինգ–դու քընկոտ, իս՝ զըրինգ:
Վեց–օղնը կեր, հալավը գեց, հագվեն երե լեց:
Օխտը–կարթա հուջաթեն թոխտը:
Օթ-կեր մի ջամ թոթ:
Իննը–գյուլոխըտ կըտրըմ, տամ գինը:
Տասը–քու բաջի դեռնի մըր տան հարս:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԼԵԶՈՒ

Ղարադաղի հայերն առանձնապես ջերմ սեր ու գուրգուրանք ունեին նոր լեզու առած երեխաների նկատմամբ: Այդ սերն արտահայտելու համար նրանք ունեին հատուկ թոթովող բառեր, որոնցով երեխաներին օգնում էին ավելի հեշտ տիրապետել մայրենի լեզվին: Այդպիսի բառերը մեծ թիվ էին կազմում:

Օրինակ.

չաչ - ձեռք	տիտի - նստիր
տոտ - ոտք	փափա - ճաշ
կիժի - ատամ	բիչի - այծ
չուչ - հագուստ	գիդի - ուլ
կակա - հավկիթ	միմի - խմիր
շաշա - գեղեցիկ	մամի - կեր
լոլու - միրգ	վավա - հիվանդ
բիժի - եզ, անասուն	կուկու - երեխա

չոչոշ - ավանակ	գոշ - գլուխ
բզի - բզեզ	ճուկի - փոքրիկ
տիզի - ճրագ, լույս	ճուճու - հավ, ճուտ
զիզի - փայլուն զարդ	տատա - հաց

Նման բառերից կարելի է կազմել շատ հետաքրքիր նախադասություններ.

- Շաշա չուչը հաքի, գինընք պապունց տոն:
- Խելոնք տիտի, մամաս գինի բիժին կթի, կաթը բերի փափա իփի, օտընք:
- Սուս արի, որ գինըմ բաղը լոլու բերըմ:
- Տիզին վառընք, գինընք գյումը, տըսնընք ճիճուն կակա յա ածած, բերընք իփընք, օտընք:
- Կուճի կուկուն կիժի օնի:
- Չաչըտ տոր փըռնըմ, գինընք տըսնընք բիժին եկած ա:
- Չոչոշեն երե տիտի, գինընք կալը:

Շատ էին նաև երեխաներին զբաղեցնելու և քնեցնելու համար հորինված քառյակները: Օրինակ, փոքր երեխաներին, լուսինը ցույց տալով՝ ասում էին.

17 (913) Տիզի, տիզի,
Նախշուտ զիզի,
Բըռնըմ, բերըմ,
Բալաս լուզի:

18 (914) Էս պռակեն խոռնըննըմ,
Էն պռակեն խոռնըննըմ,
Ուսուփ պապի թոռնըննըմ,
Մարջան նանուն ծյոռնըննըմ:

19 (915) Լայ-լայ ասըմ,
Քոնըտ տանի,
Քի թողի չըմ թորքը տանի,
Քոննի, նանաս իլիգ մանի,
Որ քի հետե փոխան կարի,
Լայ-լայ, բալաս, լայ-լայ:

ՇԱՇԿԱԼԵՋՈՒ

Ղարադաղի հայերի մեծ մասը շատ լավ տիրապետում էր թուրքերենին: Շատ քիչ թուրքեր ու պետական պաշտոնյաներ կային, որոնք մասնակիորեն հասկանում էին հայերեն: Նման անձանց ներկայությամբ խիստ կարիք էր զգացվում խոսել այնպես, որպեսզի ասածի իմաստը չհասկանային: Այս անհրաժեշտությունից ելնելով, Ղարադաղի հայերը առանձին բառեր էին հորինել, որոնք օգտագործում էին նախադասության մեջ:

կծոտող - շուն (շան բնավորության մարդ)	
երկար հղե գենցուղ - հեռավոր ճանապարհ գնացող[30]	
Ճպատ բռնող - տանուտեր	մըրքավըր - քահանա
կապույտ շուրավոր - ժանդարմ	կանաչ շուրավոր - զինվոր
ծանի - թուրք ծանոթ	տիրըվ - հասկանալ
տկաքար - կին	ըրկթվնանե - ձի
ղլչըդավուն - գարի	կոնդ - մեկ թուման
ծըղ - հաց	ծըղիլ - ուտել
պլեկ - դրամ	կըկըդան - յուղ
մուկնկըռենք - բրինձ	բիրթավուն - ոչխար
ղլակ - քաղաք	մգավուն - այծ
պլաջուր - խմիչք	թփռավու - հավ
տըրըքան - հրացան	սպտակ–հավկիթ
կծո–սոխ	ծռեր–խոսքը փոխել:

Նման բառերի օգտագործումը անհրաժեշտ էր մի պատճառով ևս. թուրքերեն ու հայերեն որոշ բառեր համընկնում էին և թուրքը հեշտությամբ կարող էր կռահել խոսակցության իմաստը, օրինակ.

տանուտեր - հայերը՝ քյոխվա, թուրքերը՝ քյախվա

դրամ -	փող	փուլ
ինքնաեռ -	սիմավար	սիմավար
թեյնիկ -	ըրթվա	արաթավա
յուղ -	յուղ	յաղ
բրնձ -	բրինձ	բրունջ

Գաղտնի խոսքերով խոսակցությունները մեծ մասամբ տեղի էին ունենում՝ տանուտերի և գյուղի ղեկավար անձանց միջև:

---

[30] Մահմեդական ուխտավորները տարբեր տիտղոսներ էին ստանում, Իրանի Մեշեդ քաղաք գնացողը՝ մեշեդի, Մեքքա գնացողը՝ հաջի, Քաբուլ գնացողը՝ քյաբլաիի (ծաև.բանահավաքի):

20 (916) Տանուտերը, դիմելով գզիրին, ասում էր.- Այ տղա, կանաչ շուրավուր ա եկած, ասա թող սըվը դիրըն կրակեն, մի քանի հատ սիպտակ հըռ ածըն, մի էրկու հատ ալ կծո ճրեցեք, մըր ծըղընը ալ ծըղիս ա, որ օտի, թողի գինի կորչի:

- Այ տղա, մի քանի հոքի կապուտ շուրավուր ըն եկած, իրաք ալ ըրկըթվընավըրը: Պատառ ղլչղավուն բեր իրաց նշանց տոր, համա ախոռտնեն չըլրցնըս, մղափուն ա: Գյումումը կպահըս: Շուդ արի դեղենը կրակ գիծի: Մի գյուլախ մգավուն յա բրթավուն մորթիլ տոր: Իրաք ալ լակուղըն ըրվալիս, մի քանի շուշա պլաջուր ճարի: Թահրեն եշած քիշերը մնալու ըն: Ըրկունա հացեն հետե մուկնկըռենք թրջիլ տոր: Մըրքավուր մարդկանց դույուղ արի (տեղյակ պահիր), որ խոսքը շատ ծռյեր վեչ արըն, մըր լուզվեն տիրվըն: Եկուղնուն մթկոնեն էն ա, որ տղորցը զինվորագիրըն, հըվաքըն, տարըն ղլակը: Կծոտըղըն ըրվալիս մի քանե կոնդ պլեկ հվաքի, որ շնեթոն արած տեղը նի գիծընք ըռեխնեն, եր օնըն գինըն, կորչըն:

Այս անգամ գզիրն է հարցնում տանուտերին. - Էս եկած ծանին ինծ անծանոթ ա, հո՞ւվ ա, որ իս ճընչիսըս չըմ:

- Էտ ծանին ներքե շենեն ճպուտ բռոնողի տկըքարեն ախպերն ա: Խաբար ա բերած, որ մի քանե կապուտ շուրավուր ինգած ըն շընթըկնեն տըրքաճուվըն շորգյուլիս: Մըր շենն ալըն գյալական: Հուր տըրքան օնի, մի քանի օր ղանշար վեչ հանըք: Թաքուն տեղ պահեն, որ չբռնըվեն: Խաբար բիրիլու հետե, էրկու թփռավըն բեր, տոր իրան, թող թողի՝ գինի:

ՎԵՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

1 (917). ՂԱՐԱՋԸ

Լինում է, չի լինում, մի գյուղացի մարդ է լինում: Էս մարդը կոպիտ բնավորություն է ունեցել: Ասում են, որ ծմռանը գնայիր ծյուն ուզեիր, չէր տա, մատդ փուշ մտներ, չէր հանի: Համագյուղացիներից ոչ մեկի հետ հարևանութ յուն չէր անում: Պառավ կնոջ հետ նրանք ապրում էին հարեվանները ից անջատ:

Մի անգամ, աշնան մի օր, էդ մարդը մի օրով մի ավանակի կարիք է ունենում, որ իր ունեցած երկու պարկ ցորենը տանի ջաղաց, աղա, ալյուր դարձնի, բերի տուն, որ հաց թխեն: Գնում, որ հարևանին խնդրում է, չեն տալիս: Հուսահատ մարդը նստում. երկար մտածում է, որոշում, որ բարձի իր հսկա գամփռ շանը, տանի ջրաղաց: Ցորենը բարձում է շանը՝ Ղարաջին ու ճանապարհ ընկնում: Աղում է, ետ գալիս: Ճանապարհի կեսին մոտակա թփուտներից մի նապաստակ է դուրս գալիս: Տեսնելով նապաստակին, շունն ընկնում է ետևից, նապաստակն էլ մացառների միջով լեղապատառ փախչում է: Մացառների փշերը ծակծկում են պարկերը, ալյուրը թափվում է, փոշի բարձրացնում: Իսկ հիմար գյուղացին ոգևորում է շանը, ասելով.

Ղարաջ, հա ղարաջ,
Քու պարկերեն թոզեն ղուրբան,
Ղարաջ, հա ղարաջ,
Քու ոտերի օժին ղուրբան:

Սարսափած նապաստակը մտնում է անտառի խորքերը և անհետանում, Ղարաջն էլ, դատարկ պարկերով, ետ է դառնում:

Հարևանությունից կտրված հիմար գյուղացին զգում է իր սխալը: Վերադառնում գյուղ, շունը տալիս հովիվներին, սկսում իր հարևանների հետ լավ հարաբերության մեջ մտնել:

2 (918). ԲԵՂԵՅՐԱԹ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում, մի բեղեյրաթ տղա է լինում: Իր այդ անունը նա ստացել էր նրա համար, որ խուսափում էր գործից, չէր աշխատում: Ամբողջ օրը թրև էր գալիս ու քնում ցանկացած տեղում: Նրան հանդիպելիս, ծանոթ մարդիկ խրատում էին, որ քանի ամառ է, իր ապրուստի մասին մտածի: Իսկ տղան անհոգ պատասխանում էր.- Ինչի՞ս է պետք աշխատելը, ունեցած-չունեցածս մի ծեր մայր է, մինչև ձմեռ կմահանա: Մի քույր ունեմ, նա էլ աշնանը կամուսնանա: Ինձ էլ կմնա մի ավանակ, կվաճառեմ, նրա փողով կապրեմ:

Ամառն անցնում է, գալիս է ձմեռը: Աշխատասեր մարդիկ փակում են իրենց տան դուռը և վայելում իրենց մթերքները: Բեղեյրաթ տղայի մայրը չի մահանում, քրոջ հետ ամուսնացող չի լինում, ավանակն էլ գնող չի լինում:

Մի կերպ քարշ տալով ձմռան ծանր օրերը, բեղեյրաթ տղան խրատվում է: Լուռ ու մունջ, ծոծրակը քորելով, իր ընկերների հետ, անցնում է աշատանքի:

3 (919). ՄԱՐԱՆԸ

Հին ժամանակ, մի հայ շենում մի համեստ մարդ է լինում: Ունենում է մի կին՝ անունը Մարան: Մի առավոտ Մարանն ամուսնուն ասում է. - Ա մարդ, հաց չունենք, դու գնա անտառ, ցախ բեր, որ հաց թխենք: Ես ալյուրը մաեմ, խմոր հունցեմ, որ հացը շուտ թխենք, երեխաները սոված են

Ամուսինը վեր է կենում, պարանը կապում մեջքին, կացինը դնում ուսին ու գնում: Կինն էլ վեր է կենում, տան մանր մունր գործերը կարգավորում, ալյուրը մաղում, խմորը հունցում: Անցնում է բավականին ժամանակ, ամուսինը անտառից չի վերադառնում: Ստիպված, երեխաների համար աղանձ է անում ու ինքն էլ գնում ամուսնու ետևից, ինքը անտառ է մտնում մի ճանապարհով, ամուսինը վերադառնում է մյուսով և իրար չեն տեսնում: Ամուսինը, տեսնելով, որ Մարանը խմորը հունցել է, որոշում է ինքն էլ թոնիրը վառի, որ Մարանի ետ գալուց, թոնիրը պատրաստ լինի:

Օրը սկսում է մթնել: Խմորը թթվում է, թոնիրը հանգում, երեխաները սոված լաց են լինում, հավերը, մնալով անկուտ ու անջուր, կչկչում են: Մարանի ամուսինը, ճարը կտրած, հիմա էլ ինքն է գնում կնոջ ետևից: Գնում է, գյուղից դուրս, մի քարի վրա կանգնում ու ձայն տալիս.

Մարան, Մարան, եք տոն, եք տոն,
Խմորտ ճլճլալիս, թուրունըդ՝ վռվռալիս:
Մարան, Մարան, եք տոն, եք տոն,
Խոխեքդ զիլզիլալիս, հավերդ՝ կչկըչալիս,
Մարան, Մարան, եք տոն, եք տոն:

Դու մի ասա, Մարանը, որ գնում է անտառ, ամուսնուն չի գտնում, մըտքերի հետ ընկած, սկսում է ինքը ցախ հավաքել: Նրան մի արջ է տեսնում, բռնում՝ տանում իր որջը: Լսելով ամուսնու և գյուղացիների ձայները, ուշքի է գալիս ու դիմում փախուստի, թողնում է իր հավաքած փայտն ու վերադառնում տուն:

4 (920). ԽԵԼՈՔ ՏՂԱՆ

Մի մեծահարուստ գյուղացի մի որբ տղայի ծառա է ընդունում: Պայմանը հետևյալն էր. ծառան պարտավոր էր ամեն օր հարուստի ոչխարները տանել արոտ և, ետ գալուց, հետը մի շալակ չոր փայտ բերել: Հարուստի կինը պահանջում է, որ բերած փայտը այնքան չոր ու ընտիր լինի, որ իրար խփելուց աքլորի ձայն հանի: Եթե ծառան բարեխղճորեն կատարեր իր պարտականությունները, կստանար օրվա ուտելիքը և տարեկան մի ծեռք հագուստ՝ հարուստի հին շորերից:

Ծառան ամբողջ օրը հանգիստ ու դադար չուներ: Շրջում էր անտառում, ընտրում ամենաչոր ճյուղերը, կոտրատում, շալակ կապում և վերադառնում տուն: Բայց հարուստի ինքնահավան կինը ամեն օր դժգոհում էր, թե ցախը ընտիր չէ, լավ չի վառվում, լավ լույս չի տալիս:

Զայրացած ծառան մի երեկո տուն է բերում անտառի ամենադալար ու թաց ճյուղերից: Հարուստի կինն ասում է.- Վա՜յ, տնաքանդ, էս ի՞նչ ցախ ես բերել:

- Հանգիստ մնա, խանում, իզուր տեղը քեզ գետնով մի տա: Իսկական քո ուզած ցախն եմ բերել, որ ոչ վառվի, ոչ էլ լույս տա, օթախում թոթսաու ջուր դուս տա,- հանգիստ պատասխանում է ծառան:

5 (921). ՉԽՈՍԿԱՆ ԱԼԵՎՈՐԸ

Հին ժամանակներում մի հայաբնակ գյուղում մի ծերունի ու մի պառավ են ապրելիս լինում: Նրանց ունեցած չունեցածը մի հորթ է լինում: Գալիս են ձմռան ցրտաշունչ օրերը: Ծերունին պառավին է ասում, որ հորթը ջրի,

պառավը ծերունուն: Օրերն անցնում են, հորթը բառաչում է ծարավից, ջուր խնդրում: Ամենօրյա վեճին վերջ տալու համար, մարդ ու կին պայման են կապում. «ով խոսի, նա էլ հորթին տանի աղբյուրը, ջուր տա»: Պառավն ամեն օր վեր է կենում, իլիկը վերցնում, գնում հարևանի տուն, ասում, խոսում, ծիծաղում, իսկ երեկոյան սուս ու փուս վերադառնում տուն, քնում: Ծերունին էլ, հավատարիմ իրենց պայմանին, ամբողջ օրը լուռ ու մունջ հենվում է օջախի կողքին, օրը մթնեցնում:

Մի օր էլ տուն է մտնում մի դերվիշ: Տան մեջ ման է գալիս, մաղթանքներ կատարում, մոտենում ծերունուն, հարցեր տալիս: Սա, իհարկե, չի պատասխանում: Դերվիշը, մնալով անվարծ, ենթադրում է, որ տան տերը համր է կամ հիմար: Գրպանից հանում է ածելին ու նրա մորուքը կտրում: Ծերունին դարձյալ չի խոսում:

Այդ ժամանակ մորուք չունենալը համարվում էր մեծ անպատվություն: Երեկոյան պառավը գալիս է տուն, նկատելով ամուսնու կտրած մորուքը, զարմացած բացականչում է.- Կրակն ընկնես, այ մարդ, ի՞նչ է պատահել, ո՞վ է կտրել միրուքդ:

Ալևորը ուրախ բացականչում է.- Այ կնիկ, դու առաջինը խոսեցիր, դե հորթին տար, ջուր տուր:

6 (922). ՀԵՐԹ ՊԱՀՈՂ ՀԱՐՍԸ

Մի նորահարս է լինում: Սա ամեն ինչից ավելի գերադասում է քնելը: Երբեք չի մտածում, որ հարս է եկել, պետք է մի գործ էլ ինքն անի:

Սկզբում սկեսուրն ու սկեսրայրը ծայն չեն հանում, սպասում են, որ ինքը գլխի ընկնի, վեր կենա, գործ անի, բայց հարսը մնում է անկողնուն գամված: Մեկ մեկ վեր էր կենում, դեսից դենից ուտելու բան գտնում, ուտում, նորից պառկում:

Հարսին անկողնուց կտրելու համար, սկեսրայրն ու սկեսուրը որոշում են ձևական բանավեճ սարքել, իբր թե՝ ջրի գնալու համար: Գալիս, կանգնում են հարսի անկողնու մոտ ու բարձրաձայն վիճում:

- Բոբիկ եմ, տրեխ պիտի գործեմ, կուժը դատարկ է, գնա ջրի,- կնոջը դիմելով ասում է ամուսինը, ափերի մեջ փոկը տրորելով:

- Ես շտապ պետք է տունն ավլեմ, կարգի բերեմ, շուտով մեր տուն հյուր է գալու: Գան, տեսնեն որ տունը թափթփված է, ամոթ կլինի,- առարկում է կինը:

Լսելով նրանց վեճը, հարսը, գլուխը հանգիստ հանում է վերմակի տակից ու առաջարկում.- Իզուր տեղը մի վիճեք: Մի բան, որ ես աղբյուրը գնացողը չեմ: Քաղցր քունս էլ մի խանգարեք: Ջրի կարիք կա, մի օր մեկդ գնացեք, մի օր՝ մյուսդ: Եթե հերթը խառնվի, ես կկարգավորեմ:

7 (923). ՀԵՔԻՄՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Ծերացել էր գավառի հեքիմը: Նա լուռ ու մտախոհ նստած, վերհիշում էր իր կյանքի անցած ուղին: Անհնար էր մեկ առ մեկ հիշել իր ութսուն տարիների հրաշագործությունները: Քանի քանի գիշերներ էր անցկացրել հիվանդների մոտ, փրկելով նրանց կյանքը, իր իսկ պատրաստած դեղորայքով:

Գավառում «ամենափրկիչ» անունն ստացած հեքիմի մտատանջությունը, սակայն, մահից վախենալը չէր: Որտեղ ծնունդ, այնտեղ էլ՝ մահ, մտածում էր նա: Նրան տանջում էր մի ուրիշ հարց, կկարողանա՞ր արդյոք իր որդին, իր մահից հետո, շարունակել իր գործը:

Եվ ահա, մի օր հեքիմն իր որդու հետ, մեկնում է գավառի գյուղերը՝ վերջին անգամ շրջագայելու և որդու գիտելիքները ստուգելու համար: Նրաք լինում են շատ գյուղերում, այցելում շատ հիվանդների: Ամեն տեղ հեքիմը թողնում է, որ որդին բուժի կամ խորհուրդներ տա ու սրտանց ուրախանում իրեն փոխարինողի հմտության վրա:

Աշնանային մի առավոտ, մի գյուղի մոտով անցնելիս, հեքիմը ճանապարհին նկատում է բազմաթիվ ընկուզենիներ:

- Այս գյուղում մենք շատ փող կաշխատենք,- ընկույզի առատությունից հիացած, ասում է հեքիմը:

Տղան ծիծաղում է ու ասում.- Հայր իմ, դու չնկատեցի՞ր ընկուզենիների կողքին աճած հոնի ծառերը: Ընկույզ ուտողի խելքը կտրած կլինի օգտըվել նաև հոնից և ընկույզի պատճառած վնասից բուժվել:

- Վերադառնանք տուն,- ասում է հեքիմը,- ես այդքանին էի սպասում: Այժմ ես հանգիստ կարող եմ մեռնել:

8 (924). ԷՍ ԲԵՆԵՆ ԻՍ ՄԱԹԱԼ ԸՄ...

Մի համեստ գյուղացի, իր կյանքից ու ապրուստից գոհ, եզները լծած, արտում ցանք էր կատարում, հորովել երգելով՝ քաջալերում եզներին:

Երկու ավազակ, տեսնելով գյուղից հեռու, դաշտում աշխատող միայնակ գյուղացուն, որոշում են կողոպտել նրան: Ավազակներից մեկը գաղտագողի գալիս, թաքնվում է արտին մոտիկ ծորակում, մյուսը արտից մի քանի հարյուր մետր հեռու, ճանապարհի վրա, ինքն իր շուրջը պտտվելով, բարձրաձայն ու անընդհատ կրկնում է.- էս բենեն, էս մաթալ ըմ, էս բենեն, էս մաթալ ըմ...

Ցանք անող գյուղացին, նկատելով ճամփի վրայի շվարած մարդուն, որոշում է եզներին թողնել մի քիչ հանգստանալու, գնա՝ տեսնի, ո՞վ է անծանոթը, ինչո՞ւ է շվարած կանգնել, մնացել:

- Բարի օր, անծանոթ ախպեր, ասա իմանամ, ինչի՞ ես մաթալ, որ գործդ թողած, մնացել ես ճամփին,- հարցնում է գյուղացին:

Ես շատ տեղեր եմ ման եկել աշխարհում,- պատասխանում է ավազակը, շատ հրաշքներ եմ տեսել, բայց ոչ մի տեղ չեմ տեսել, որ մարդըն առանց եզների կարողանա ցանք անել:

- Բա որ ոչ տեսել ես, ոչ լսել, որ կարելի է առանց եզների ցանքս անել, էլ ինչո՞ւ ես ճանապարհիդ մնացել մաթալ,- հարցնում է միամիտ գյուղացին:

- Որովհետև ես այսօր տեսա, որ դու առանց եզների, արորի մաճը բռնած, ցանքս ես կատարում:

Գյուղացին ետ է նայում արտի կողմը և իրոք, տեսնում է, որ արտում միայն արորն է, եզները չկան: Մնում է քարացած, կանգնած: Մեկ նայում է արտին, մեկ ավազակին ու մնում զարմացած, թե եզներն ինչպես անհետացան:

Փորձառու ավազակը, մոլորված գյուղացուն ուշքի բերելու համար, ասում է.- Ախպերացու, միգուցե եզներդ տեղում՝ են, էս տեղերում էնպիսի հրաշք կա, որ եզներդ աչքիդ չեն երևում: Արի գնանք արտը, միգուցե եզները տեղում են: Երկուսով գնում են, տեսնում, որ արորի մոտ եզ չկա:

- Գուցե քեֆդ լավ է եղել, նստել ես ծիուդ ու եկել, եզներին մոռացել ես բերել:

- Չէ հաստատ բերել եմ, լավ հիշում եմ,- ասում է գյուղացին:

- Եզներիցդ մեկը սև էր, մյուսը սպիտա՞կ,- հարցնում է ավազակը:

- Հա ճիշտ ես ասում, իսկ դու որտեղի՞ց իմացար:

- Վերևից որ գալիս էի, մի մարդ աջևը գցած, դեսուդեն նայելով, քշում, տանում էր: Ուրեմն, դու ընկել ես քո հորովելով, էն մարդն էլ տարել է եզներդ, վազիր, գնա բեր:

Գյուղացին վազում է, որ գնա ծիուն նստի, հետապնդի եզները զողացողին, ավազակը չի թողնում: Ասում է, որ գողը ուղիղ ճանապարհով գնացած չի լինի, թեքված կլինի արահետները ու ծիով այնտեղ գնալը դժվար կլինի: Քանի որ ինքը ճանապարհից ուշացել է, կնստի արորի մոտ, կհանգստանա ու կհսկի ծիուն, մինչև գյուղացին եզները կգտնի ու ետ կդառնա:

Անփորձ մարդը, հավատալով նրա խոսքերին, ոտքով ճամփա է ընկնում: Օրը սկսում է մթնել, գյուղացին եզները չի գտնում, մտածում է, որ էն մարդուն էլ ճանապարհից ետ է գցել, ետ դառնա, ծին վերցնի, մարդուն էլ տուն հրավիրի, տված նեղության համար մի լավ պատիվ տա:

Գալիս է տեսնում՝ ոչ ծին կա, ոչ անծանոթը:

Ոչինչ չհասկանալով, այս անգամ էլ գյուղացին է դատարկ արորի շուրջը պտտվում, ինքն իրեն ասելով.- Էս բենեն իս ալ ըմ մաթալ, էս բենեն իս ալ ըմ մաթալ...

9 (925). ՄԱՐԻԱՄ ԲԱՋՈՒ ՀՐԱՇՔԸ

Ղարադաղցի հայ կանայք շատ հավատացյալ էին: Նրանք ջերմեռանդ էին ու հավատում էին, որ մարդիկ ծնվում են աստծո հրամանով, բախտն ու ճակատագիրն էլ իրենց հետ: Իր չար բախտի համար մարդ չպետք է դժոհի աստծուց, աստված կնեղանա և անդրշիրիմյան աշխարհում տեղ չես ունենա նրա մոտ: Միաժամանակ, կարծում էին, որ սուրբ մարդկանց հոգիներն ապրում են հավերժ, ծառայություն մատուցում աստծուն ու կատարում նրա հրամանները:

Հավատում էին, որ սուրբ Սարգիսը, անեն տարի, իր հիշատակման օրը, փետրվար ամսին, հրեղեն ծիուն նստած, գալիս, մտնում է հավատացյալների տները և նրա գալուստը հաջողություն ու երջանկություն է բերում տվյալ ընտանիքին: Տարեց կանայք, նրա գալուստը ըստուգելու համար, տան ներսում՝ շեմի մոտ, մեծ ծածկոց էին փռում, վըրան ալյուր մաղում կամ մոխիր լցնում, մոմ վառում ու դնում ծածկոցի կողքին: Հավատում էին, որ սուրբ Սարգսի ծիու ոտնահետքերը մնում են ալյուրի կամ մոխրի վրա:

Մարիամ բաջին տարեց կին էր, իր գեղդաստանի բոլոր մարդկանց կորցրել էր գաղթի ճամփաներին, գոյությունը պահում էր սրա-նրա համար բուրդ գզելով ու լվացք անելով: Մի տարի նա էլ է որոշում ստուգել սուրբ Սարգսի գալուստը, երեկոյան, քնելուց առաջ, դռան շեմի մոտ մի

հնամաշ սփռոց է փռում, վրան մոխիր շաղ տալիս, մի մոմ վառում, դնում սփռոցի եզրին ու աղոթելով մտնում անկողին: Հաջորդ առավոտ, քնից արթնանալով, գնում է դռան մոտ ու մնում քարացած, կանգնած: Մոխրի վրա պարզ երևում էին ծիու ոտնահետքերը: Դեռ ավելին, ծին փթրել էր մոխրի մեջ: Մարիամ բաջին խաչակնքում է երեսը, ծիու փթիրը հավաքում գլխաշորի ծայրի վրա, բարձրաձայն կանչում հարևաններին ու ցույց տալիս տեղի ունեցած հրաշքը: Հավաքված հարևաններին, Մարիամ բաջին համտեսի համար թրիք էր տալիս: Գալիս է նաև գյուղի քահանան, առաջարկում են գնալ ու տեսնել ծիու ոտնահետքերը: Քահանան, տեսնելով այն, բարկանում է և ասում, որ դա կատվի ոտնահետք է: Մարիամ բաջին առարկում է, ասելով, որ քահանան նախանձում է իրեն, դրա համար էլ ոտնատեղը վերագրում է կատվին:

Ասում են, որ մինչև հիմա էլ տերտերն ու Մարիամ բաջին վիճում են, թե՝ ինչի ոտնահետք էր սփռոցի վրա եղածը:

10 (926). ՈՐՈՆՈՒՄ ԵՆ

Մի մարդ, աշնանային մի ցուրտ առավոտ, փոխանի փողքերը մինչև ծնկները քշտած, մտել էր գետի սառը ջրի մեջ, տխուր ու մռայլ ինչ-որ բան էր փնտրում: Դիմացի անտառից նրան նկատում էմի անծանոթ ու ձայն տալիս.- Հե՜յ, ախպերացու, վաղ առավոտյան ի՞նչ ես փնտրում սառը ջրի մեջ:

- Գիշերվա անձրևից հետո առաջացած հեղեղը քշել, տարել է ջրաղացս, լավ չախչախ ուներ, շատ ափսոս էր, ման եմ գալիս, չեմ գտնում:

- Ուրեմն ջրաղացը՝ հեչ, չախչախին ե՞ս ափսոսում,- զարմանում է անծանոթը:

- Ջրաղացը պապս էր կառուցել, իսկ չախչախը իմ սարքածն էր,-պատասխանում է ջրաղացպանը: Իսկ դու ի՞նչ ես փնտրում առավոտ շուտ այս անտառում:

- Իմ հայրն էլ ինձ համար մի հրեղեն ձի էր գնել, երեկ էս կողմերում կորցրել եմ, երևի գայլերը հոշոտել են, բայց ծիու գլխին սանձ կար, իմ գնածն էր, ես էլ կորած սանձին եմ ման գալիս:

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ղարադաղի թուրք աշխատավոր գյուղացին հայ շինականից ավելի շատ էր կեղեքվում, շահագործվում, զրկվում աշխատանքի պտուղներից թուրք խաների, կալվածատերերի կողմից: Ապրում էին ավելի աղքատ ու ընչազուրկ: Հայ շինականն ու թուրք գյուղացին միշտ էլ եղել են մեկը մյուսին կարեկցող, նեղ օրին հասնող, ունեցածից մեկը մյուսին բաժին տվող, ուրախությանն ու տխրությանը մասնակից: Թուրքերն էլ են ունեցել հարուստ բանահյուսություն՝ առածներ, ասացվածքներ: Նրանցից շատերը չափածո են, որոնցից շատ են օգտագործել նաև հայերը:

Բերենք մի քանի օրինակներ:

1 (927). Արշինի գյոր բեզի ալ, Նանասի գյոր, գըզի ալ:
Մորը տես՝ աղջկանը առ, Արշինը տես՝ բյազն առ:

2 (928). Բիր օզոն ունում վար, Եդ դի գարա գյոնոմ վար:
Մի բուռ ալյուր ունեմ, Յոթը սև օր ունեմ:

3 (929). Բըզ գերմիշտդա գյալին գյորամաղա,
Մենք գնացինք հարսին տեսակցելու,
Գյալին դա գեդփ թարա յղմաղա:
Հարսն էլ գնացել էր բանջար քաղելու:

4 (930).
Գեթտի գյոլ, ուչտի բյուլբոլ, Իստիրսան աղլա, իստիրսան գյոլ:
Գնաց վարդը, թռավ սոխակը, Կուզես լացիր, կուզես ծիծաղիր:

Թուրք գյուղացին, հայ երեխա տեսնելիս, ուրախ ձայնով արտասանում էր.

5 (931).
Այ դղա, դղա, շան դղա, Դադան գեթտի փամըղա, Նանան մանի գյորանդա Գալդի, գիրդի սանդղա:
Այ տղա, տղա, շան տղա, Հայրդ գնաց բամբակի, Մայրդ, որ ինձ տեսավ, Փախավ, մտավ սնդուկը:

Թուրք կանայք, հայ երեխաների հանդիպելիս, ուրախ ձայնով արտասանում ու երգում էին.

6 (932). էրմանի ջան, էրմանի,
Դաղդա ղուրար խրմանի,
Արփանի աթտար յիյար,
Բուղդանի ջան դարմանի:

Հայ ջան, հայ,
Սարում կկանգնի կալդ,
Գարին ձիերը կուտեն,
Ցորենը կյանքի բարիք:

7 (933). Դղա, դղա էրմանի,
Գյալ աղլաթմա մանի,
Դին այրըլըղ օլմասա,
Օնդա ալարդըմ սանի:

Տղա, տղա, հայ տղա,
Արի, մի լացացրու ինձ
Կրոնի արգելքը չլիներ,
Այն ժամանակ կառնեի քեզ:

8 (934). էրմանի գյալըր յուլուննաև,
Դարաջա վըրըփ գոլոնա,
Օննաև բիլդըմ՝ էրմաի սաև,
Գըզօլոլ գյսւնըն խըրմանիսաև:

Հայ է գալիս ճամփով,
Թևին կապած է նշան,
Դրանից իմացա, որ հայ ես,
Ոսկի օրվա դարման ես:

9 (935). էրմանի սաև գյորում խաչըն,
Գյալ յախունա օփիմ սաչըն,
Չունքի սաև էրմանի սաև,
Դարդըմա սաև դարմանի սաև:

Հայ ես, տեսնեմ խաչդ,
Արի համբուրեմ ճակատդ,
Որովհետև դու հայ ես,
Իմ ցավերի դարմանն ես:

10 (936). էրմանի ղանըշաև օյանըմ,
Գյալըմ բաշվա դոլանըմ,
Ինդի բիլդըմ էրմանի սաև,
Գըզըլ գյու քիմի խալլի սաև:

Հայ ջան խոսիր, արթնանամ,
Գամ, գլխովդ պտույտ գամ,
Հիմա իմացա որ հայ ես,
Կարմիր վարդի պես խալով ես:

Ղարադաղի հայերի կողմից հորինված թուրքերեն լեզվով հանելուկներ.

11 (936). Բզըմ բիրի վար,
Յուզդաև չոխ դիլի վար,
Աղզի յոխտըր,
Համա ադամա թութար:

Մեզ մեկն ունենք
Հարյուրից շատ լեզու ունի,
Բայց բերան չունի,
Կծում է մարդուն:

(*եղինջ*)

12 (937). Դավա դա բանի,
Գյուզար օբանի,
Ալլահ յոլնդա
Գույրողի բենդա:

Ուղտի կճղակի
Ման կգա օբեն,
Արդարության ճանապարհին,
Պոչը՝ դրած մեջքին:

(*կշեռք*)

13 (938). Իլմ-իլմ-իլմասի,
Քյուլա սորդան ասմասի,
Հարքյաս ադմ թափ մասա,
Յուզ թիմանդր ջարմասի:

Պտույտ-պտույտ փաթաթված,
Հենակներից կախկխված,
Օվ անուս չգտնի՝
Հարյուր թումանով է տուգանված:

(*մով ու խաղող*)

14 (939). Իլմ-իլմ-իլբազ,
Փեհին լարդա օյնբազ,
Գյուլլա թիքիր օզչի դայլ,
Գանարլիդր, գուշ դայրլ:

Պտույտ-պտույտ թռիչքասեր,
Աղբանոցում՝ խաղասեր,
Գնդակ է սարքում՝ որսորդ չի,
Թռչում է՝ թռչուն չի:

(*թրիք գլորող սև բզեզ*)

15 (940). Ալ չաքմը բախտմնան,
Հարյանա գեթսամ,
Գյալար դալմնան:

Չեռք չի քաշում բախտիցս,
Ուր որ գնամ՝
Գալիս է ետևիցս:

(*ստվեր*)

16 (941). Դավադան բովիտ,
Ալմադան խրդա,
Ջհարդան աջի,
Դաշ քիմի բարիտի,
Յաղ քիմի թամ լի:

Ուղտից բարձր է,
Խնձորից՝ փոքր,
Թույնից դառն է,
Քարից պինդ է,
Յուղի պես համեղ:

(*ընկուզենի և ընկույզ*)

17 (942). Ուստի դաշտըր, դաշ դայիլ,
Ալթի դաշտը, դաշ դայիլ,
Օթտիյր ինատ դայիլ,
Յումութրանի, գուշ դայիլ:

Վերևը քար է, քար՝ չի,
Տակը քար է, քար՝ չի,
Արածում է, կով՝ չի,
Ջու է ածում՝, թռչուն՝ չի:

(*կրիա*)

18 (943). Աք տմ նոխուդ, Ցանեցի սիսեռ,
Չխըր սոյուդ, Աճեց ուռենի,
Յար տաղի թութ, Տերևը թթենու,
Բաշի արմուդ: Գլուխը տանձածև:

(*բամբակ*)

19 (944).
Բիթ գուշում զաթ բալաջա, Մի թռչուն ունեմ շատ փոքրիկ,
Չխփ, մի նար աղա ջան, Կհեծնի, կբարձրանա ծառը գեղեցիկ,
Աղաջտա բիթ դսմ թիքար, Ծառի վրա տուն կշինի,
Նա տառփսի զատ, նա բաջա: Ոչ դուռ կունենա, ոչ երդիկ:

(*շերամ*)

20 (945).
Գուրբան օլմ գասսաբ բաշի, Քեզ մատաղ լինեմ, մսագործ,
Մանա ահ վեր, Ինձ միս պիտի տաս անփորձ,
Նա էթ քյուչ օլսն, նա դիշի, Ոչ էգ լինի, ոչ՝ արու,
Նա յայ գյորմիշ օսլա, նա գիշի: Ոչ ծմեռ տեսած լինի, ոչ ամառ:

(*սունկ*)

21 (946).
Բիր գոնաղ գյալդի հախ տան, Մի հյուր եկավ օրենքով,
Բիր գուզի օլդրըխ նահսխտան, Մի գառ մորթեցինք անօրենք,
Գոնաղն նա դիշի վար իդի, Հյուրը ատամ չուներ,
Գուզուննդա սուն բու գի: Գառը՝ ոսկոր:

(*նորածին երեխան և մոր կուրծքը*)

22 (947).
Յորղա գեդար՝ թոզի յոխ, Սագով կերթա՝ փոշի չկա,
Օլդրասան գանի յոխ, Որ մորթես՝ արյուն չկա,
սոյասան՝ գյոնի յոխ: Եթե քերթես կաշի չկա:

(*մրջյուն*)

23 (948).
Բաշի գյոզալ, Գլուխը սիրուն,
Գույրուդի գեյչի, Պոչը մկրատ,
Ալրի՝ գոյուն, Փորը ոչխար,
Ուստի՝ գեչի: Մեջքը այծի:

(*ծիծեռնակ*)

24 (949).
Գովդան գյալիր բույրու չի, Երկնքից է գալիս հրամանը,

Եթա զրի յումբրու ղի, Երկրին խփում բռունցքը,
Ալլի բաթման արի դր, Հիսուն բաթման միսն է,
Օթուզ բաթման գույրու ղի: Երեսուն բաթման դմակը:

(*հայերի պասը՝ 50 օր, մահմեդականներինը՝ 30*)

25 (950).

Գյով դան գյալիր, Երկնքից կգա,
Դամիր, դամիր, Երկար, կարմիր,
Վըր դաշն ա, Ջարդիր քարով,
Օթըր- գյամիր: Նստիր՝ ծամիր:

(*ընկույզ*)

26 (951).

Ազիզը նավ յանդի, Սիրելիս նավը վառվեց,
Չախմախ զրդի գազ յանդի, Չախմախին խփեց՝ հաբեթը վառվեց,
Աշըղ բիր աջազ գյորդի, Աշուղը մի հրաշք տեսավ,
Սու ուսրուն դա նազ յանդի: Ծովի վրա նավը վառվեց:

(*կայծակ*)

ՀԱՆԵԼՈՒԿ-ԲԱՌԱԽԱՂԵՐ

27 (952).

Ազիզմ ալա թալա, Սիրելիս, սիրուն թփուտ,
Գյոգ թալա, ալա թալա, Կանաչ թփուտ, սիրուն թփուտ,
Ջութչինն խշի սինդի, Վար անողի «ջութը» կոտրվեց
Գեթտի ալար ալա: Գնաց որ մի ալաթ առնի:

(*Հայերը արորին ասում էին «ալաթ», իսկ թուրքերը՝ «ջութ»*)

28 (953).

Գյաջալա բուն ուստա, Կաչաղակը բույնի վրա,
Ջողալ չխար հուն ուստա, Հոնը աճում է հոնի վրա,
Դամն կոճ- գերանը, Տանը կոճերը, գերանները
Յղը լի սուն ուստա: Հավաքվում են սյունի վրա:

29 (954).

Պատմում էին, որ մի անգամ, Նորաշեն գյուղացի, կույր աշուղ Հակոբը, որդու հետ գնում է շրջագայության: Գյուղի մոտակայքում հանդիպում է

մի թուրք աշուղի, որն առաջարկում է հորինումներով մրցել: Աշուղ Հակոբը համաձայնվում է: Թուրքը, սազը նվագելով, երգում է.

Ես աշուղ եմ, կանաչ հորթ,
Կանաչը կերած, կանաչ հորթ,
Գլուխը՝ ոտքերի տակը,
Ոտքերը օդում, կանաչ հորթ:

Աշուղ Հակոբը մտածում է մտածում, չի կարողանում իմաստը գտնել, առաջարկում է մի «խոսք կապել» էլ ինքն ասի, ով չգտնի, պարտված ճանաչվի: Թուրք աշուղը համաձայնվում է: Հակոբը, դիմելով որդուն ասում է.- Այ տղա, տես շրջակայքում ի՞նչ կա, մի որևէ բան ասա:

Որդին դես ու դեն է նայում, ասում.- Ա հեր, հենա՝ մի «չարդ», մի կաղեն կտուցը առած, տանում ա:

- Ըհը, էդքանն էլ ինձ բոլ ա,- ասում է աշուղ Հակոբը և հայերեն ու թուրքերեն խոսքերով, խառը՝ թուրք աշուղին առաջարկում է հետևյալը.

Գշի մարդ ափարդի,
Աշղա դարդ ափարդի,
Աշղ բիր աջալ գյորդի
Կաղենի չարդ ափարդի:

Ջմեռը մարդը տարավ,
Աշուղին դարդը տարավ,
Աշուղը մի հրաշք տեսավ,
Կաղինը՝ չարդը տարավ:

Թուրք աշուղը մտածում է մտածում, չի կարողանում գաղտնիքը գըտնել: Նա առաջարկում է, ժամանակ չվատնելու համար, որ ամեն մեկը բացատրի իր ասածի իմաստն ու ճանապարհը շարունակեն:

Թուրք աշուղը բացատրում է.- Դու չես տեսնում, բայց քո տղան տեսնում է: Այստեղ առվույտի ցանք կա, տերը մի հորթ բերել, կապել է կողքի կանաչ տարածությունում, որ արածի: Հորթի կապը արձակվել է, մտել է առվույտի մեջ, արածել, ուռել ու ընկել՝ սատկել, գլուխը շրջված, ոտքերը դեպի վեր ցցած: Ահա իմ հորինած քառյակի գաղտնիքը:

Աշուղ Հակոբը ծիծաղում է ու թուրքին պատասխանում, որ ինքը չի տեսնում, դիմել է որդու օգնությանը: Տղան մի չարդ է տեսնում, որ կաղինը՝ կտցած տանում է, այդ մասին հայտնեց իրեն, ինքն էլ՝ երկու լեզուներով, խառը, հորինեց քառյակը: Երկուսն էլ մի կուշտ ծիծաղում են ու ամեն մեկն իր սազը վերցնում, շարունակում է ճանապարհը:

Հ.Հ. Հովսեփյանի համառոտ ինքնակենսագրությունը

Ես՝ Հովհաննես Հարությունի Հովսեփյանս, ծնվել եմ 1921թ. սեպտեմբերի 1-ին, Իրանի Ղարադաղ գավառի Դիզմար գավառակի Խանագահ գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում: Հայրս զբաղվում էր նաև երաժշտությամբ, գավառում ճանաչված զուռնաչի էր:

Մեր գյուղի Ազիզյան-Մնացականյան դպրոցը ավարտել եմ 1939թ. և նույն թվականին մեկնել Թավրիզ՝ ուսումս շարունակելու:

Մանկուց սիրել եմ լսել տարեց ու բանիմաց ծերունիների պատմած ժողովրդական հեքիաթներ ու տարբեր զրույցներ: Մեր օրերում ժամանցի հիմնական զբաղմունքները խաղերն էին և հեքիաթներ լսելը:

Ի տարբերություն մնացած գյուղերի, Խանագահում զարգացած էր ջուլհակությունը: Ջուլհակները հիմնականում տարեց կանայք էին, որոնք հանդիսանում էին հեքիաթների, առակների ու հանելուկների շտեմարաններ:

Գյուղի հեքիաթասեր պատանիներն ու աղջիկները աշնան ու ձմռան երեկոները անց էին կացնում ջուլհակներին օգնելով ու լսում նրանց պատմած հեքիաթներն ու զրույցները:

Մեզ հետաքրքիր հեքիաթներ պատմող ջուլհակները Անահիտ, Ոսկի, Նուբար, Մանուշակ տատիկներն էին:

Շատ հեքիաթներ եմ սովորել նաև Մարտիրոս, Ալեքսան և ուրիշ շատ պապիկներց:

Դեռ դպրոցական ժամանակ առանձին սիրով էի կարդում Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ավ. Իսահակյանի և մյուս հայ գրողների հեքիաթները, պատմվածքներն ու բանաստեղծությունները:

Ջարմանալի իմացություններ ուներ տատս՝ հորս մայրը: Նա պատմում էր գավառի գյուղերի կառուցման, սրբավայրերի, ուխտագնացության, տոների, գյուղերի հետ կապված ավանդությունների և այլնի մասին:

Պատանի տարիքից սեր եմ ունեցել մոտիկից ծանոթանալու Ղարադաղի տարբեր ազգությունների սովորություններին, նիստուկացին ու կենցաղին:

Մեծ սեր եմ ունեցել նաև դեպի ժուռնալիստիկան: 1943թ. Թավրիզում լույս տեսնող «Հակաֆաշիստ» շաբաթաթերթի թղթակիցն եմ եղել Ղարադաղուլմ: Հանդես եմ եկել «Հովհաննես ազատ», «Ազատ-մուրճ», «Անվարծ ճամփորդ» ծածկանուններով:

Թերթը 1946թ. լույս տեսավ «Արևելք» անունով: 1943 - 46թթ. Թավրիզի «Հեզբը Թու Դեհ» (ժողովրդական կուսակցության) և «ՍՍՌ Միության բարեկամների միության» հանձնարարությամբ, ուսուցչի անվան տակ, Ղարադաղում կազմակերպչական աշխատանք եմ ծավալել:

Այդ տարիներին հնարավորություն ստացա իրականացնել վաղեմի երազանքս՝ մոտիկից ծանոթանալ և ուսումնասիրել Ղարադաղի հայերի պատմությունը, կենցաղը, նիստուկացը, գրի առնել բանահյուսական նյութը:

1946թ. գարնանը Թավրիզի ներգաղթի կոմիտեն ինձ, ղուլուդցի, Թավրիզում բնակվող Սուրեն Մինասյանին և վինացի Սիմոն Նարինյանին հանձնարարեց կազմակերպել Ղարադաղի հայաբնակ բոլոր գյուղերի վիճակագրական հաշվառումը և նախապատրաստել ներգաղթը:

1946թ. օգոստոսին Խանագահ, Ղուլուդի, Սարդու, Լումա և Իրգութին գյուղերի հայերի մի մեծ քարավանի հետ՝ որպես քարավանապետ, գաղթեցի Սովետական Հայաստան:

Գաղթի ճանապարհին, դժբախտաբար, բանահյուսական ու ազգագրական հավաքածուս կորավ:

Գրեթե երեսուն տարի, կորցրածս վերականգնելու համար ոչ մի կիրակի օր կամ արձակուրդի ժամանակ չեմ հանգստացել: Մի քանի անգամ մեկնել եմ Բաքու, Ղափան, Գորիս, Չարենցավան, Աբովյան, Էջմիածին և այլուր, որտեղ կային Ղարադաղից գաղթած հայեր ու նրանցից նոր գրառումներ կատարել՝ նպատակիս հասնելու համար:

1963թ. ավարտել եմ Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի Եղվարդի բաժանմունքը: 1963 թվականից ՍՍՀՄ ժուռնալիստների միության անդամ եմ:

Երկարատև չարչարանքից հետո՝ 1983թ. հունիսին, հաջողվեց ավարտել «Ղարադաղի հայերի մասունքները» ազգագրությանը վերաբերվող գիրքս:

Հ. Հովսեփյան, Երևան, 1986թ.

ԲԱՆԱՍՏԱՑՆԵՐ

1. Աբունց Պուղուզ
(Սուտախոս Պուղուզ ապեր)

Աբունց Պուղուզ ապերը ծնվել է 1870թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Ժամանակակիցները (Հ. Հովսեփյան, Հ. Սեյրանյան, Մ. Սարգսյան, Ա. Բադալյան և ուրիշներ) պատմում էին, որ Պուղուզ ապերը կարճահասակ, դանդաղաշարժ, ժպտադեմ, ուրախ, հանաքչի մարդ է եղել: Նա երեխաներ շատ էր սիրում. որտեղ էլ հանդիպեր, գրկում էր ու հետաքրքիր բաներ պատմում:

Պուղուզ ապերը սուր արկածներ հորինող ու պատմող է եղել: Հետաքրքիրն այն է, որ նրա հորինածների հիմքը կազմված էր օխտը (յոթ) թվերով: Եվ այսպես էլ, մենք գրի ենք առել «օխտը» արկածներ:

Մեր օրերում, եթե մեկը անհավատալի մի բան պատմեր, անմիջապես ասում էին. «Էտ հըվըտալու բեն չի, էտ Պուղուզ ապուրը սուտերեն նանե ա»:

№№ 333, 336, 339.

2. Աղաջանյան Ալեքսան

Ալեքսան Հովսեփի Աղաջանյանը ծնվել է 1896թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Ըստ տեղի սովորության՝ պատանի տարիքից թողել է հայրենի օջախը, գնացել Բաքու՝ աշխատելու: Եղել է հացթուխ: 1936թ. ընտանիքով վերադարձել է Թավրիզ: Աշխատել է «Օմիդ» (հույս) կաշվի գործարանում որպես բանվոր: Ընկերական և բարեկամական շրջապատում մեծ հարգանք ուներ, ազնվությամբ ու ճշմարտությամբ օրինակելի էր շատերի համար:

1939-45 թթ. հաճախ եմ հանդիպել Ա. Աղա-

ջանյանի հետ, անց կացրել անքուն գիշերներ: Նա շատ էր սիրում պատմել հեքիաթներ, խոսակցության ժամանակ օգտագործել առակներ, ասածներ, Ղարադաղի գյուղերին վերաբերվող ավանդություններ, որ լսել էր իր մորից՝ Թամամ Աղաջանյանից:

Ա. Աղաջանյանը գրաճանաչ չէր, բայց շատ ճշգրիտ տեղեկություններ ուներ Ղարադաղում խաների ու բեկերի կողմից սանձազերծված ասպատակությունների, մարդասպանությունների, կողոպուտների ու թալանների վերաբերյալ:

№№ 31, 32, 33, 34, 107:

3. Աղաջանյան Հարություն (Ապեր)

Հարություն Հովսեփի Աղաջանյանը ծնվել է 1888թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Պատանի տարիքից սիրել է երաժշտություն: Նվագել է նախ ինքնաշեն եղեգյա շվի, ապա՝ զուռնա, բալաբան, դհոլ և այլ գործիքներ:

Երիտասարդ տարիներին եղել է Բաքվում: Աշխատել է որպես հացթուխ վարպետ: Հետագայում վերադարձել է հայրենի տուն և զբաղվել հողագործությամբ: Նվագող ընկերներից ամենատարիքովն ինքն էր, որի համար էլ ընկերները անվանում էին Ապեր՝ որպես ավագ ընկերոջ:

Միշտ կենսախինդ էր, կենսուրախ, զվարճախոս: Ինչպես ժողովուրդն է ասում՝ աշխարհի միամիտ մարդկանցից էր՝ պարզ ու հավատքով լի: Երբ լսում էր, որ մի մարդ ստել, կամ մեկին խաբել է, հուզվում էր, տխրում, թե ինչպե՞ս կարող է մարդը մարդուն խաբի կամ ստի:

№№ 85, 86, 143, 144, 145, 146, 147, 148, 149:

4. Առաքելյան Մկրտիչ (Զուռնաչի Մկրտեչ)

Մկրտիչ Նահապետի Առաքելյանը ծնվել է 1902թ. Ղշլաղ գյուղում: Գրագետ չէր: Նա գավառակում ճանաչված էր որպես զուռնաչի: Զբաղվում էր նաև հողագործությամբ:

Զուռնա նվագելը սովորել էր հորից, որը հայտնի էր ամբողջ գավառում: Ժամանակակիցները պատմում էին, որ՝ «Նաբին զուռնան նվագելուց, խաղացնում էր ամբողջ մարմինը: Տեսնողը կարծում էր, որ ամեն մի եղանակ նվագելուց ինքն էլ հետն է պարում»:

№№ 90, 171- 174:

5. Ավագյան Արշակ

Արշակ Ավագյանը ծնվել է 1922թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Հինգ տարի սովորել է գյուղի դպրոցում, ապա մեկնել է Թավրիզ՝ արհեստ սովորելու: Քաղաքի կյանքի հետ չի հաշտվել. մեկ տարի անց վերադարձել է գյուղ, զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ և ավելի շատ՝ մեղվապահությամբ:

Արշակը մանկությունից շատ էր սիրում հեքիաթներ, առակներ, հանելուկներ լսել և պատմել ընկերներին: Միշտ խնդրում էր ծնողներին, որ ինքը պատրաստ է իրենց առաջադրած ամեն մի աշխատանք կատարելու, միայն թե երեկոները իրեն տանեն հեքիաթ պատմողների տները կամ նրանց հրավիրեն իրենց տուն՝ հեքիաթներ լսելու համար:

Արշակը Անահիտ և Ոսկի տատիկների թելը կծկելիս, որոնք գյուղական ինքնաշեն դազգահների վրա զանազան կտորներ էին գործում և պատմում էին հետաքրքիր հեքիաթներ, հաճախ է կծիկը ձեռքին քնել, հեքիաթների հետ հեքիաթացել, դարձել նրանց հերոսներից, ճամփորդել «Մութ ու լիս» աշխարհում, կռվել «Յոթ գլխանի դևերի» հետ, «Հրեղեն ձին» նստած թռել երկնքում: Շատ ժամանակ էլ վախից վեր է թռել, ծիծաղ պատճառել իր ընկերներին:

1946թ. Արշակը ներգաղթեց Հայաստան:

1984թ. աշնանը հանդիպեցի Ա. Ավագյանին, հայտնեցի իմ այցելության նպատակը: Նա հուզվեց, հիշեց մանկության տարիները, թե ինչպիսի հափշտակությամբ էր լսում հեքիաթները. պատմեց ինչ որ հիշում էր:

№№ 3, 21, 42 - 44, 206, առած-ասացվածքներ:

6. Արզումանյան Արմենակ

Արմենակ Քյարամի Արզումանյանը ծնվել է 1907թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Գավառում նրան ճանաչում էին Զարգար Արմենակ մականունով՝ նկատի ունենալով նրա զբաղմունքը:

Գյուղում տարրական կրթություն ստանալուց հետո գնացել է Թավրիզ, սովորել ոսկերչություն: Վերադարձել է գյուղ. զբաղվել իր արհեստով, հողագործությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, բոլորից առավել՝ որսորդությամբ:

Սիրում էր շրջապատին պատմել առակներ, խոսել առածներով: Իր գիտելիքների ու համեստության շնորհիվ ընտրվում էր գյուղական խորհրդի անդամ. մեծերի հետ մեծ էր, փոքրերի հետ՝ փոքր, երիտասարդներին միշտ բարի խորհրդատու:

№№ 76 - 78, 126 - 128:

7. Բաբախանյան Արսեն

Արսեն Սավադի Բաբախանյանը ծնվել է 1917թ. Վինա գյուղում, հողագործի ընտանիքում: Մանկությունից օգնելով ծնողներին, զբաղվել է անասնապահությամբ և հողագործությամբ:

Արսենը պատանի տարիքից անչափ սեր է ունեցել դեպի ժողովրդական հեքիաթներ, առակներ, հանելուկներ լսելը, սերտելը և պատմելը: Նա հետաքրքրությամբ լսում էր ծերունիների և գյուղ եկած աշուղների պատմած հեքիաթները:

Ա. Բաբախանյանի հետ հանդիպեցի Գորիսում: Տեղեկանալով իմ հանդիպման նպատակի մասին՝ ամենայն սիրով ու վառ հուշերով պատմեց հեքիաթներ, հայերի մոտ տարածված, թուրքերեն հորինված հետաքրքիր չափածո հանելուկներ:

№№ 23, 46 - 50, 74, 75, 113 - 115:

8. Բադալյան Անահիտ

Անահիտ Հարութի Բադալյանը ծնվել է 1871թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Գյուղում նրան ճանաչում էին Անայի նանա անունով: Նա առակախոս էր և լավ լավաշ թխող: Հմուտ «տատմայր» էր. երկար տարիներ նրա օգնությամբ ծննդաբերած ոչ մի կին չէր տուժել: Զբաղվում էր հեքիմությամբ, ուժեղ ցրտահարված մարդկանց (սաթրջան) մեջքից սուր ածելիով արյուն էր վերցնում: Ուժեղ գլխացավ ունեցողների ճակատին խոշոր եղջերավոր անասունի եղջյուրից պատրաստած ինքնաշեն գործիքով «քամի էր հանում», մեղմացնում գլխացավը: Աչքի վարագուրման դեպքում (կատարախտ) աչքի վրա «լոխմահ էր թափում» (կայծքարից պողպատե գործիքով կայծեր թափում):

Անայի նանայի հիմնական զբաղմունքը ջուլհակությունն էր: Բրդից, բամբակից և մետաքսից նրա գործած որակյալ կտորների համբավը տարածված էր ամբողջ գավառում: Նրա տանը միշտ գործվածքեղենի համար հերթի էին սպասում տարբեր գյուղերից եկած հայեր, թուրքեր, քրդեր: Այդ էր պատճառը, որ Անայի նանան կարիք ուներ երեխաների օգնության՝ թելերը կծկելու, «մասրաներ» փաթաթելու, հենքը կապելու համար:

Զարմանալի է, թե Անայի նանան այդքան հեքիաթներ որտեղից գիտեր և ումից էր սովորել: Նա շրջակա մի քանի գյուղերից բացի, ուրիշ ոչ մի տեղ չէր եղել:

№№ 8, 9, 27, 29, 104:

9. Բադալյան Մարտիրոս

Մարտիրոս Բադալի Բադալյանը ծնվել է 1895թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում: Պատանի հասակում վայր էր ընկել և ձախ ձեռքը կոտրել: Անհաջող բուժում ստանալով, զրկվել էր ձեռքից: Մասամբ զբաղվում էր հողագործությամբ, գյուղի նախրապահն էր ու գգիրը: Շատ աշխատասեր էր, անչափ զգոն, ուշադիր շրջապատի նկատմամբ:

Աշխույժ մարդ էր, մշտաժպիտ, սիրում էր հեքիաթներ լսել և մեկ անգամ լսած հեքիաթը պատմել ամենայն ճշտությամբ:

Հոր և երկու եղբայրների անժամանակ մահը, չքավորությունը նրան զրկել էին դպրոց հաճախելու հնարավորությունից: Ընտանիքով ծանրաբեռնված լինելու և հաշմանդամության պատճառով օտարության չէր մեկնել:

№№ 30, 105, 106:

10. Բաղդասարյան Բագրատ

Բագրատ Արտեմի Բաղդասարյանը ծնվել է 1928թ. Սարդու գյուղում, հողագործի ընտանիքում:

Շատերի նման մանկությունից շատ է սիրել լսել հեքիաթներ, առակներ, հումորներ, առածներ ու հանելուկներ: Եղել է ժամանցի սիրահար: Պատանի տարիքից նա օգտված է եղել հեքիաթներ, առակներ պատմելու ընդունակությամբ: Հեքիաթների «հանրագիտարան» Պետրոս Ստեփանյանը եղել է նրա մոր՝ Շուշանի հայրը: Խանագահ գյուղում սովորելու ժամանակ նրա ուսուցիչն է եղել հայտնի առակախոս Արմենակ Արզումանյանը:

Ղուլուդի գյուղում ժամանակավոր բնակվել է հեքիաթների սիրահար Ալեքսան Հովհաննիսյանի տանը:

Բ. Բաղդասարյանը 1946թ. ներգաղթել է Հայաստան:

1984թ. հոկտեմբերին այցելեցի Բագրատին: Տեղեկանալով իմ այցելության նպատակին, ջերմորեն ընդունեց ինձ և պատանի տարիներին սովորած հեքիաթներից, առակներից, հանելուկներից, ինչ որ հիշում էր, սկսեց մեկ առ մեկ պատմել:

№№ 15, 16, 38, 39, 71 - 73:

11. Գալստյան Շուշանիկ



Ծնվել է 1903թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում: Մանկությունից եղել է հետաքրքրասեր: Շատերի նման սիրել է հեքիաթներ լսել մեծերից և սիրով պատմել ընկերներին: Միշտ եղել է կենսախինդ, իր առակախոսությամբ և հումորներով վայելել շրջապատի սերն ու հարգանքը:

1918թ. ընտանիքով գաղթել է Թավրիզ, ամուսնացել, ընտանիք կազմել, դարձել բազմազավակ մայր: Հետագա տարիներին նրա զավակները բոլորը էլ վերադարձել են հայրենի գյուղ:

№№ 195 - 198, 241 - 243:

12. Գրիգորյան Թովմաս (Գյուքոնց Թումաս)

Թովմաս Հայրապետի Գրիգորյանը ծնվել է 1892թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում: Նրան ճանաչում էին Գյուքոնց Թումաս անունով:

Երիտասարդ տարիքում մեկնել էր Բաքու, աշխատել որպես հացթուխ, վերադարձել հայրենի գյուղ, ամուսնացել ու զբաղվել հողագործությամբ:

Ձվարճասեր երիտասարդները հետևյալ երկտողն էին նվիրել Գյուքոնց Թոմասին.

Ղորթ ա, Գյուքոնց Թոմաս մաշկմ դուզ ա,
Համա դե խոսկմ դուզ ա՛:

Գյուքոնց Թումասը կատակասեր էր, զվարճախոս, կենսախինդ:

№№ 87, 162, 262 - 264:

13. Գրիգորյան Հովհաննես
(Թռանե տղան Օվանիս)

Հովհաննես Հակոբի Գրիգորյանը ծնվել է 1914թ. Իրգութին գյուղում:

Անվախ էր ու խիզախ, գաղտնի մարտական զենք էր պահում: Գավառի թուրք խաները և բեկերը սարսափում էին նրանից:

Ուներ տարրական կրթություն, խոսում էր բարձրաձայն, սիրում էր կատակներ, զվարճախոսություն, պատմում հետաքրքիր առակներ: Զարմանալին այն է, որ կարիքի դեպքում նման բարեսիրտ ու հումորասեր մարդը անմիջապես ստանում էր զարհուրելի հայացք, մարտական տեսք:

№№ 163 - 166, 254, 271, 272:

14. Դադյան Ալեքսան
(Դադոնց Ալիքսան)

Ալեքսան Մարտիրոսի Դադյանը ծնվել է 1891թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Պատանեկությունը անց էր կացրել Թավրիզ քաղաքում: Ուներ տարրական կրթություն: Թավրիզից վերադարձել էր հայրենի գյուղ. զբաղվում էր հողագործությամբ: Գավառի խաների, բեկերի, հողատերերի հետ միշտ առճակատման մեջ էր՝ պաշտպանելով գյուղացիների շահերը: Առակախոս էր, սիրում էր լսել հումորներ և ուներ հորինած ծիծաղաշարժ ստեղծագործություններ:

№№ 150 - 155:

15. Դանիելյան Գալուստ

Գալուստ Աբգարի Դանիելյանը ծնվել է 1924թ. Խանագահ գյուղում: Գյուղում ստացել է տարրական կրթություն: Շատերի նման սիրել է հեքիաթներ, առակներ, հումոր, առածներ լսել և պատմել:

1939թ. մեկնել է Թեհրան՝ արհեստ սովորելու նպատակով: 1946թ. տեղեկանալով, որ իր հարազատներն ու համագյուղացիները գնում են Հայաստան, ինքն էլ Թեհրանից վերադարձել է Թավրիզ, միացել հարազատներին ու գաղթել հայրենիք, մշտական բնակություն հաստատել Երևանում:

№№ 58, 199 - 201, 244 - 246:

16. Դանիելյան Ժենյա

Ժենյա Հարությունի Դանիելյանը ծնվել է 1930թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Ուներ 4-րդ դասարանի կրթություն: Անչափ սիրում էր լսել հեքիաթներ, հանելուկներ, շուտասելուկներ, բառախաղեր: Այնքան ուշիմ է եղել, որ մեկ անգամ լսած հեքիաթը, շուտասելուկը կամ հանելուկը կարողացել է պատմել իր ընկերներին: Նա իր Անահիտ տատի համար օրերով թել էր կծկում, որ տատը իրեն հեքիաթներ պատմի: Միաժամանակ սիրահար է եղել թևավոր խոսքերի, ծիծաղաշարժ հումորների, առածների, որոնք այժմ էլ օգտագործում է զրույցներում, պատմում թոռնիկներին:

№№ 278, 280 - 283, 351, 849 - 854, 856, 857, 864:

17. Դանիելյան Մարգար

Մարգար Զաքարիայի Դանիելյանը ծնվել է 1922թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Կյանքում միշտ եղել է խոհեմ, կենսուրախ, բարեկամասեր, հոգատար, սիրել հեքիաթներ, առակներ լսել: Դա նրան հաջողվել է, քանի որ ձմռան երկար երեկոներին իրենց տանն էին հավաքվում բարեկամները, ազգականներն ու մոտիկ հարևանները, անցկացնում հետաքրքիր ժամանց:

1946թ. Մ. Դանիելյանը գաղթեց Հայաստան: Մշտական բնակություն հաստատեց Երևանում:

1984թ. աշնանային մի օր, այցելեցի Մ. Դանիելյանին: Նա արդեն ալեհեր էր, աշխատանքի վետերան, թոշակառու:

Տեղեկանալով իմ այցելության մասին, ամենայն սիրով պատմեց այն բոլորը, ինչ որ հիշում էր՝ պատանի տարիքում իրենց տանը, ժամանցի համար հավաքված մարդկանցից:

№№ 22, 45, 207 - 290, առած-ասացվածքներ:

18. Դոլուխանյան Վոլոդյա

Վոլոդյա Աբգարի Դոլուխանյանը ծնվել է 1933թ. Բաքվում, բանվորի ընտանիքում: Ծնողները բնիկ ղարադաղցի են, 1933թ. նրանց ընտանիքը վերադառնում է հայրենի Նորաշեն:

Պատանի Վոլոդյան անչափ սեր է ունեցել՝ գյուղի տարեց մարդկանցից լսելու ժողովրդական հեքիաթներ, հումորներ, առակներ ու հանելուկներ:

1948թ. նրանց ընտանիքը տեղափոխվում է Թեհրան, իսկ 1952թ.՝ Բաքու:

Վոլոդյան մասնագիտությամբ լուսանկարիչ էր:

1985թ. աշնանը Վոլոդյայի հետ հանդիպեցինք Բաքվում: Տեղեկանալով իմ նպատակի մասին՝ ամենայն սիրով ու

ջերմեռանդությամբ պատմեց այն բոլորը, ինչ որ մնում էր իր հիշողության մեջ, որ պատանի տարիքում լսել էր գյուղի հեքիաթ պատմողներից:

№№ 51, 52, 116, 117, 210 - 214:

19. Դոլուխանյան Հայրապետ (Դոլուխան)

Հայրապետ Վարդազարի Դոլուխանյանը ծնվել է 1902թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում:

Ուներ տարրական կրթություն: Երիտասարդ հասակում եղել էր Բաքվում, ապա վերադարձել հայրենի գյուղ, որտեղ էլ զբաղվում էր հողագործությամբ: Շատ ազդեցիկ մարդ էր, մանավանդ հայապաշտպանության գործում: Հումորների, առակների սիրահար էր: Նրա տանը անպակաս էր գինին: Գյուղի միամիտ ու հավատքով լի մարդկանց մի երկու բաժակ գինի խմացնելով, հումորներ էր ստեղծում:

№№ 156 - 161:

20. Խաչատրյան Աղաջան (Ձի քշող Աղաջան)

Աղաջան Գրիգորի Խաչատրյանը ծնվել է 1902թ. Աղաղան գյուղում: Գրագիտություն չուներ: Դիզմար գավառակում հայտնի ձի քշողի համբավ ուներ: Նա ուներ ընտիր, արագավազ ձի և հպարտ էր, որ գավառում իրեն հաղթող չի լինում:

Հիմնական զբաղմունքը հողագործությունն էր: Առակների ու հումորների սիրահար էր: Ինչ որ պատմեր, պետք է ունկնդիրները ծիծաղեին:

№№ 89, 167 - 170, 255:

21. Հայրապետյան Գրիգոր

Գրիգոր Թովմասի Հայրապետյանը ծնվել է 1923թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում:

Եղել է հեքիաթներ, առակներ, հանելուկներ սիրող և զարմանալի հիշողությամբ լսածները նույն ճշտությամբ վերապատմող: Լինելով հոր ավագ որդին, պատանի տարիքից դարձել էր հոր օգնականը՝ մեծ ընտանիքի ապրուստը հոգալու համար:

Գրիգորը պատանի տարիքից շատերի նման բռնում է օտարության ճանապարհը՝ աշխատելու և ծնողներին օգնելու համար: Նա երկար տարիներ Թեհրանում աշխատել է որպես շինարար բանվոր:

Թեհրանում Գրիգորը ցերեկները աշխատել է, իսկ գիշերները հաճախել գիշերօթիկ դպրոց: Ստացել է 7-ամյա կրթություն:

1963թ. Գ. Հայրապետյանը իր մեծ ընտանիքով ներգաղթեց հայրենիք՝ բնակություն հաստատեց Լուսավանում, անցավ շինարարական աշխատանքի:

№№ 247, 248, 250 - 253, առած-ասացվածքներ:

22. Հայրապետյան Մարտիրոս (Պըտոց Մարդի)

Մարտիրոս Պետրոսի Հայրապետյանը ծնվել է 1914թ. Լումա գյուղում: Ուներ տարրական կրթություն: Զբաղվում էր հողագործությամբ: Սիրահար էր ծիծաղի, ծիծաղաշարժ հումորների:

Նրա պատմելու ժամանակ, եթե ասեին՝ «Մարդի, էտ սոտս ասալ, իդի բեն չի ինի, դու վըս հնարած», նա լսողներին կհամոզեր մի շարք երդումներով. «Հուժե գեղեցուն լոս տալիս շամրը վկա, էն մեռոնը Քրիստոսեն անմը վկա՝ իս սոտ չըմ ըսիլիս»:

№№ 88, 265 - 270:

23. Հարությունյան Թադևոս (Վըրսական Թաթավես)



Թադևոս Սարգսի Սարգսյանը, ծնվել է 1896թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում, ճանաչված էր Վըրսական Թաթավես մականունով՝ քանի որ որսի մոլի սիրահար էր:

Երիտասարդ տարիքում եղել էր Բաթումում և Թիֆլիսում: Հետագայում վերադարձել էր հայրենի օջախ, զբաղվել հողագործությամբ: Տիրապետում էր նաև վարսավիրի ու որմնադիրի արհեստներին: Կատակասեր ու առակախոս էր:

№№ 83, 130 - 135:

24. Հարությունյան Համբարձում



Համբարձում Թադևոսի Հարությունյանը ծնվել է 1891թ. Իրգութին գյուղում, հողագործի ընտանիքում:

Համբարձումի պապ Հարությունը շատ տարիներ եղել է գյուղի տանուտերը: Նրա մահից հետո գյուղում տանուտեր է դառնում որդին՝ Թադևոսը:

Թադևոս քյոխվի մահից հետո գյուղում տանուտեր է նշանակվում նրա ավագ որդին՝ Ղահրամանը: Համբարձումի մեծ եղբայրը, որն իր նախնիների նման մեծ ազդեցություն է ունեցել գավառի խաների ու բեկերի վրա, խիզախ ու անվախ ղեկավար էր:

Համբարձումը շատ էր սիրում ծիծաղաշարժ հեքիաթներ, առակներ, հումորներ պատմել և լսել: Զրույցների ժամանակ նա միշտ ասում էր. «Կյանքը մեկ է, այն էլ ոչ շատ տևական: Երբ կարելի է օրերը անցկացնել ուրախ, ծիծաղով, լավությունով, ինչո՞ւ իզուր տխրել, նեղանալ»:

№№ 40, 108, 109, 202, 203:

25. Հարությունյան Մնացական (Խաղ ասող Մցական)

Մնացական Հարությունի Հարությունյանը ծնվել է 1907թ. Խանագաի գյուղում, հողագործի ընտանիքում: Գավառում ճանաչում էին Խաղ ասող Մցական անունով: Ուներ կարկաչուն ու զուլալ ձայն: Երգում էր բոլոր խնջույքներում, տոնական ու հարսանյաց հանդեսներում, միշտ ուրախ ու ժպտադեմ էր: Երգում էր հայերեն ու թուրքերեն լեզուներով՝ միայն սիրո ու ժողովըրդական երգեր:

Պատանի տարիքում եղել էր Թավրիզում: Շատերի նման վերադարձել էր հայրենի գյուղ՝ ամուսնացել ու զբաղվել գյուղատնտեսությամբ:

Մնացականը զվարճախոս էր, գիտեր հայերեն ու թուրքերեն բազմաթիվ առակներ, հումորներ: Ցավալի է, որ նրա անսպառ գոհարների գանձարանից գրի է առնված միայն հինգ նմուշ:

№№ 79 - 82, 129:

26. Հարությունյան Վարդան

Վարդան Հարությունի Հարությունյանը ծնվել է 1918թ. Խանագաի գյուղում, հողագործի ընտանիքում: Ուներ տարրական կրթություն:

Պատանի տարիքից շատ էր սիրում սրինգ նվագել և երգել սիրային ու աշուղական երգեր: Բոլորից շատ սիրում էր Պըլը Պուղու արկածները, որոնք լսելով գյուղի կամ գավառի որևէ առակախոսից, անմիջապես սովորում և պատմում էր ընկերներին:

№№ 308 - 314:

27. Հովհաննիսյան Ալեքսան

Ալեքսան Հովհաննեսի Հովհաննիսյանը ծնվել է 1888թ. Ղշլաղ գյուղում, հողագործի ընտանիքում:

Հաշվի առնելով, որ Ղշլաղ գյուղի հողերը բերքատու չեն, ընտանիքով մշտական բնակության է տեղափոխվում Ղուլուդի:

Ալեքսանը անգրագետ է եղել, դպրոց չի հաճախել, բայց եղել է շատ աչքաբաց, պայքարել է խաների ու բեկերի դեմ, ժողովրդին պաշտպանել նրանց ասպատակություններից: Եղել է խիզախ, անվախ հայապաշտպանության գործում: Միշտ գաղտնի ունեցել է իր սիրած մարտական զենքը:

Գյուղի համայնքը բազմիցս նրան առաջարկել էր ընդունել գյուղի տանուտերի իրավունքը: Հրաժարվել էր, սակայն միշտ մնում էր գյուղական խորհրդի մշտական պատվավոր անդամ:

Ա. Հովհաննիսյանը՝ կարելի է ասել, որ գավառում ամենաշատ հեքիաթներ իմացողն էր և ամենահետաքրքիր պատմողը:

Նրա պատմածներից տպավորվել է հատկապես «Բախտիյարի» հեքիաթը:

№№ 17, 18, 41, 110, 111, 204:

28. Հովսեփյան Ժորա

Ժորա Հարությունի Հովսեփյանը ծնվել է 1928թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Ուներ 4 -րդ դասարանի կրթություն: Վաղ հասակից հորինում էր երգիծանքներ՝ գյուղի, գավառի տարածքում տեղի ունեցող հետաքրքիր անցուդարձերի վերաբերյալ: Դրա համար էլ ընկերները, համագյուղացիները առանձին հարգանք ու սեր ունեին նրա նկատմամբ: Եղել է մշտաժպիտ, սիրել է երգել, սրինգ նվագել:

№№ 315 - 326

29. Հովսեփյան Հասմիկ

Հասմիկ Թովմասի Հովսեփյանը ծնվել է 1922թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում: Հաճախել է դպրոց, սովորել է մինչև 4-րդ դասարանը: Մանկությունից շատ է սիրել հեքիաթներ, միշտ պատրաստ է եղել Հայրապետ պապի ու տատի հանձնարարությունները կատարելու, միայն թե իրեն հեքիաթներ պատմեն: Նա հաճույքով պատմում էր ընկերներին իր սիրած հեքիաթները:

№№ 92 - 103:

30. Ղասումյան Ջահանգիր (Դարզի Ջհանգիր)

Ջահանգիր Հայրապետի Ղասումյանը ծնվել է 1902թ. Ղասումաշեն գյուղում: Նրան ճանաչում էին Դարզի Ջհանգիր անունով՝ նկատի ունենալով այն, որ նա հմուտ դերձակ էր:

Նա ուներ համեստ ու մարդամոտ բնավորություն, համարձակ էր ու անվախ: Նա իր պատանեկությունը անց էր կացրել Բաքվում, Թավրիզում ու վերադարձել հայրենի գյուղ՝ զբաղվել դերձակությամբ:

№№ 189 - 194:

31. Մեսրոպյան Հովհաննես

Հովհաննես Հարությունի Մեսրոպյանը ծնվել է 1901թ. Բերդին գյուղում:

Հովհաննեսին պատանի տարիքում իր հորեղբայրը տանում է Էնզելի քաղաք և տալիս տակառագործ վարպետի մոտ աշակերտ:

Նա երկու տարի Էնզելիում մնալուց հետո վերադառնում է գյուղ և զբաղվում տակառագործությամբ:

1946թ. Հ. Մեսրոպյանը իր ընտանիքով ներգաղթել է

Հայաստան, մշտական բնակություն հաստատել Գորիս քաղաքում:

Հ. Մեսրոպյանը եղել է հեքիաթների սիրահար և սիրով էլ պատմել, զվարճացրել է ուրիշներին:

Նա ամենայն սիրով պատմեց Շահ Աբասին վերաբերվող հեքիաթացած տասը արկած: Ես էլ նույն սիրով ներկայացնում եմ ընթերցողներին:

№№ 60 - 69:

32. Նարինյան Սիմոն
(Խաղ ասող Սիմոն)

Սիմոն Բաբայի Նարինյանը ծնվել է 1914թ. Վինա գյուղում, հողագործի ընտանիքում: Նրան Խաղ ասող Սիմոն անունով էին ճանաչում, քանի որ ամբողջ գավառում ամենաճանաչված երգիչն էր: Երգում էր հայերեն և թուրքերեն:

Նրան լսելու համար հավաքվում էին գյուղերի տղամարդիկ ու կանայք, ողջ երիտասարդությունը, մինչև անգամ երիտասարդ հարսերը՝ երեխաները գրկած:

Ուներ տարրական կրթություն: Զբաղվում էր նաև խոզի կաշվի վաճառքով: Ս. Նարինյանը Ղարադաղի հայերի միամտությանը վերաբերվող բազմաթիվ հումորներ ուներ, որոնք աշխույժ ծիծաղ էին պատճառում լսողներին:

№№ 256 - 261, 287:

33. Ոսկանյան Ալեքսան
(Դուլգար Ալիքսան)

Ալեքսան Հովհաննեսի Ոսկանյանը ծնվել է 1906թ. Խանագահի գյուղում, հողագործի ընտանիքում: Նրան ճանաչում էին Դուլգար Ալիքսան մականունով:

Երիտասարդ հասակում երկար ժամանակ բնակվել ու աշխատել էր Բաքվում: Վերադառնալով գյուղ, զբաղվում էր հյուսնությամբ: Պատրաստում էր դռներ, պատուհաններ, գյուղատնտեսական գործիքներ:

Ալեքսանը առակախոս մարդ էր, գյուղական խորհրդի անդամ, ակտիվ մասնակցություն ուներ գավառի հայապահպանության գործում: Սիրում էր ամեն

խոսքից առաջ ասել մի առակ կամ խոսքին համապատասխան հումոր՝ ծիծաղ ու զվարճություն պատճառելով ունկնդիրներին:

№№ 84, 136 - 142:

34. Ոսկանյան Բեգլար

Բեգլար Գրիգորի Ոսկանյանը ծնվել է 1876թ. Խանագահի գյուղում, հողագործի ընտանիքում: Սովորել էր գյուղի ծխական դպրոցում, ուներ տարրական կրթություն: Պատանի տարիքից, որպես հացթուխ աշխատել էր Ղափանում, Շուշիում և Բաքվում, ապա վերադարձել հայրենի գյուղ:

1914թ. համայնքի կողմից ուղարկվել է Թավրիզ, Ատրպատականի Հայոց առաջնորդարանում ձեռնադրվել է քահանա: Ըստ եկեղեցական կարգի՝ անունը փոխել են, անվանել Եզնիկ: Ձեռնադրվելուց հետո վերադարձել է գյուղ և մինչև իր կյանքի վերջը մնացել քահանա:

Եղել է հեքիաթների «հանրագիտարան»:

№№ 1, 5 - 7, 26:

35. Ջավադյան Մարտիրոս

Մարտիրոս Գրիգորի Ջավադյանը ծնվել է 1900թ. Ղուլուդի գյուղում, հողագործի ընտանիքում:

Մ. Ջավադյանը հողագործությունից բացի, աշնանն ու ձմռանը, զբաղվել է արհեստով: Նա սովորել էր բամբակ գզելու արհեստը և ինքն էլ պատրաստում էր գզող գործիք:

Մ. Ջավադյանը անեղը ուսին, ման էր գալիս գյուղից գյուղ, տնից տուն, բամբակ գզում և հոգում իր բազմանդամ ընտանիքի կարիքները:

Մ. Ջավադյանը գրագետ չէր: Նա 1935-37թթ. մի քանի օր շարունակ՝ հյուրընկալվել է մեր տանը, բամբակ գզելու առիթով: Երեկոները նա շատ հետաքրքիր հեքիաթներ ու առակներ էր պատում: Նրա պատմածներից իմ հիշողության մեջ պահպանվածները ներկայացնում եմ ընթերցողներին:

№№ 4, 19, 20, 112, 205:

36. Սարգսյան Արմենակ
(Վաքիլ)

Արմենակ Հովակիմի Սարգսյանը ծնվել է 1897թ. Ղուլուդի գյուղում, հողագործի ընտանիքում: Գավառում ճանաչում էին նաև Վաքիլ (երաշխավորող) անունով, քանի որ հմուտ էր համայնքային տարբեր հարցեր լուծելու առումով:

Գրագիտություն չուներ, բայց քաջատեղյակ էր գավառի բոլոր անցուդարձերին, խաների կողմից կատարվող ասպատակություններին՝ ըստ տարեթվերի: Միաժամանակ գիտեր լավ առակներ պատմել:

№№ 273 - 277:

37. Սարգսյան Հովակիմ
(Ուստա Օվակիմ)

Հովակիմ Դադաշի Սարգսյանը ծնվել է 1917թ. Ողաո գյուղում, հողագործի ընտանիքում: Նա իր երիտասարդ տարիքն անց է կացրել Թավրիզում: Սովորել է հյուսնություն, ապա վերադարձել գյուղ, զբաղվել իր արհեստով: Աշխատել է նաև գավառի շատ գյուղերում:

Բարձրահասակ, լայնաթիկունք, թուխ ունքերով, սև, խոշոր աչքերով, արծվային հայացքով մարդ էր:

№№ 91, 183 - 188:

38. Սեյրանյան Սուրեն

Սուրեն Հարությունի Սեյրանյանը ծնվել է 1923թ. Խանագահ գյուղում, հողագործի ընտանիքում:

Սուրենը դեռ 13 - 14 տարեկանից հորինում էր հետաքրքիր արկածային պատմություններ ու մեծ հմտությամբ, համոզիչ ներգործությամբ, լրջորեն պատմում հասակակիցներին:

Նա հասակակիցների համեմատ բավականին ուժեղ էր, թիկնեղ, հաղթանդամ ու անվախ: Բավական էր, որ իր հորինած արկածային պատմություններ պատմելիս մի ունկնդիր քմծիծաղ տար կամ համարձակվեր

ասել, թե անհավատալի կամ սուտ է, Սուրենը հարձակվում էր նրա վրա և ասում. «Քուռակու տըղա, դե որ սոտ ըմ ըսիս, մի սոտ ալ դու հընարի ասի, ծծաղընք»:

Այդ պատճառով գյուղում նա հայտնի էր «Սոտ ասուղ Սուրի» անունով:

№№ 345 - 350:

39. Ստեփանյան Պետրոս

Պետրոս Առաքելի Ստեփանյանը ծնվել է 1876թ. Սարդու գյուղում, հողագործի ընտանիքում: Դեռ շատ փոքր տարիքում հայրը մահանում է: Մայրը ամուսնանում է մեկ ուրիշի հետ և ընդմիշտ մեկնում գյուղից:

Փոքրիկ Պետրոսին իր խնամքի տակ է վերցնում հորեղբայրը: Պատանի տարիքում Պետրոսը իր համագյուղացիների հետ մեկնում է Ղափան՝ պղնձի հանքերում աշխատելու:

Նրանց տունը գտնվում էր հարավից գյուղ մտնող ճանապարհի վրա: Գյուղը եկող գրեթե բոլոր օտարականները օթևանում էին նրանց տանը: Այդ առումով էլ ամբողջ գավառում Ստեփանյան ազգատոհմին ճանաչում և անվանում էին Ղարիբանք:

Գավառի շատ հայաբնակ և թրքաբնակ գյուղերից նրան հարսանիքի էին հրավիրում, իրենց ուրախացնելու համար:

Պ. Ստեփանյանը հեքիաթների, առակների, հումորների, հանելուկների, առածների ու ասացվածքների մի անսպառ «հանրագիտարան» էր:

Պ. Ստեփանյանը մորս հայրն էր: Պետրոս պապս գրկում էր ինձ ու սկսում պատմել կախարդական հեքիաթներ, առակներ, հանելուկներ:

Նա մահացել է 1948թ., թաղված է Օխչիի գերեզմանոցում:

№№ 11, 25, 35, 59:

40. Ստեփանյան Ռուբեն

Ռուբեն Վարդանի Ստեփանյանը ծնվել է 1932թ. Սարդու գյուղում, հողագործի ընտանիքում: Գրաճանաչ էր դարձել գյուղի տարրական դպրոցում:

1946թ. Ղարադաղից գաղթել էր ծնողների հետ, բնակություն հաստատել Ղափանի շրջանի Հանքավան բանավանում: Ուսումը շարունակել էր տեղի գիշերօթիկ դպրոցում՝ ստանալով 7 -ամյա կրթություն:

Ռ. Ստեփանյանը եղել է ջատագով իր Պետրոս պապի հեքիաթների: Չեռնարկել էր գրի առնել, սակայն վատառողջության պատճառով մնացել էր անավարտ:

1984թ. հոկտեմբերին այցելեցի Ռուբենին, երեք օր շարունակ մեկս մեկի պատմածը վերհիշելով, լրացնելով, հաջողվեց Պետրոս պապի հեքիաթների, առակների, հումորների, առածների, ասացվածքների ու հանելուկների մի քանի տասնյակ փրկել կորստից:

№№ 2, 12 - 14, 36:

41. Ստեփանյան Վարդան (Նհանգ Վարթան)

Վարդան Պետրոսի Ստեփանյանը ծնվել է 1903թ. Սարդու գյուղում, հողագործի ընտանիքում: Նրա մականունը Նհանգ (հսկա) էր: Նա միշտ ասում էր. «Մարդը ծնված ա բեն ըրիլու հետե: Բեն ըրիլավ, մարթը մըռնի չի: Բինասեր մարթը իրան տոնը եկած ղունաղեն ըռշկին հմանչի չի: Տոնը լիգը կինի»:

Երիտասարդ տարիներին եղել էր Թիֆլիսում, աշխատել որպես ներկարար վարպետ: Վերադարձել էր իր հայրենի գյուղ, զբաղվում էր հողագործությամբ:

№№ 175 - 182:

42. Վարդանյան Ղահրաման

Ղահրաման Վարդանի Վարդանյանը ծնվել է 1872թ. Հասանով գավառակի Թաշլու գյուղում: Նա հեքիաթների, առակների, բազմազան արկածային պատմությունների «հանրագիտարան» էր:

Նա ութ տարեկան էր, երբ թուրք խաների ասպատակությունների պատճառով գաղթեցին: Հետագայում նրանց ընտանիքը հաստատվեց Նորաշենում, որտեղից էլ 1918թ. ստիպված գաղթեցին Թավրիզ:

1921թ. Ղ. Վարդանյանի ընտանիքը վերադարձավ Ղարադաղ և բնակություն հաստատեց Խանագահում: Նա մահացել է 1938թ.:

Թիթի ծմեռանոց գնացողները հավաքվում էին մի կացարանում և հաճույքով լսում նրա բազմաթիվ հեքիաթները, առակներն ու հետաքրքիր պատմությունները:

№№ 10, 28, 70:

43. Տեր-Գրիգորյան Սամսոն

Սամսոն Թովմասի Տեր-Գրիգորյանը ծնվել է 1905թ. Ղշլաղ գյուղում, քահանայի ընտանիքում:

1946թ. մայիսին նրան խնդրեցի պատասխանել մի քանի հարցերի:

- Իս մըր շենեն շատ մարթկանց նման գենցած՝ քաղաքմ ապրած չկամ,- ասաց նա,-շատերեն նման ալ Թիֆլիս, Գյանջա, Ղըրբաղը աշխատանքի գենցած չըմ: Պդահած, թա մըր դովրիբարեն շինրկնեն բենավ թա գենցածմ, էտ ա: Սոտ տեղն ալ գյոլոխս թարիփ արմ, կարի չըմ, մեխկ ա: Մինջա ըստուր նանե տասը տարե առաչ ինձ նհետ մի բեն ա պդահալ, մռնալիս չըմ: էտ կարողմ նաղլը արի:

Ըշունք օր լալ: Մի փարզը բենավ գենցալմ թորքաբնակ Մարդանաղա շենը: Ինդի ա պդահալ, կրեցա չըմ օրեն վախտավ ետ դըռնիլ: Թորքեն տանն ալ անհարմար լալ մնալը: Շենը ետ դըռնալ ալ կարիչմ լալ, օրը մքնիս լալ, հըռե լալ: Որոշալմ գինըմ քիշերը մնամ Սարդա շենմը՝ ղոնաղես տանը: Մարդանաղա շենեն շատ մոտ է լալ: Նոր քշանաց գյոմ դուս, գյոմ տոն:

Սարդա ղոնաղմ ինգյալ Ղարիբանց Պըտրուսե տոնը: Մի շատ հարգանքավ ղունուղասեր, ասող-խոսող մարթ լալ: Ինքն ալ շատ ղարիբեթուն լալ քաշած: Թիփլիզ, Գյանջա, Ղափան, Ղրբաղեն թիրիփնոմը շատ երկար լավ մանցած, ջահիլ վախտը շատ բենր լալ սվըրած:

Դե հացն բերալ, կերալնք: Չայն բերալ, խմալնք: Տեղեն ղայդեն գյորա մի քանե հըրևան ալ եկալն, դեսեն-դենեն հարցուփորձն արալ՝ խոսեցալնք: Պըտրոս ինձ ասալ ա.- Դե, դու դերա թոռնս, դերա տղա: Մի նաղլը արի, լսընք, քիանե մի բեն սըվըրինք:

Ասալմ. - Խոնախա, ղորթս ըսիլիս: Համա դե իտի բիներից՝ իս խըղճմ: Դու աշխարհ տըսած, շոռ եկած մարթս, խնթրիլիսմ դու ասս:

Իմ էս խոսքեն երե, խոնախս եր ա կացալ մի մատիտ, միհն ալ մի թոխտ բերալ: Թոխտեն երե դոզբադոզ երկու գիծ ա քաշալ: Բուժոնալ ինն մասե, այտս ասալ.- Տըսնալիսս, էս ինննը ախոռ ա: Կկա՞րս էս ինննը ըխոռեն երե քառասուն ձի կապի: Համա դե պետք է ձիանքը ինդի կապս, որ օմեն մի ըխոռեն երե մի ձի ինի:

ՂԱՐԱԴԱՊԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԸ
(XX դ. սկիզբ)

Տըսալնք, որ մըր խըլքեն բենը չի: Խնթրալնք իրան, որ ինքը ծիանքը կապի:

- Դու գիրիլ, ճնջիլ գիդա՞ս,- խոնախս հրցրալ ա ինծանե:

Ասալմ.- Հա: Իմ հոր նանե մի թիթեվ սվըրածմ:

Խոնախաս թոխտնն ա մատիտը տվալ ա ինձ, ասալ.- Դե, հայերեն տառերով օմեն մի ախոռում մի-մի տառ գիրի՝ քառասուն ծի, տըս կդըռնի, քա՝ չէ:

Խոնախս տըսալ ա իրան գախտնիքեն երե շատնք ծըծղեցալ, ասալ ա. - Դե, մի պնգըլ ասմ, ծրեցեք. «էն հու վա, հու, որ տասնըհենգ օրմը մի պարղաճ ա թխիս: Տասնըհենգ օրումն ալ ուտիլիս»:

Ասալմ.- Խոնախա, էտ դիժեր պընգլ չի: Գիդալիս ըմ: Աստուծն ա, որ տասնըհենգ օրմ լուսլնգան բուլորիս ա, տասնըհենգ օրում ալ՝ մշցրիլիս:

Խոնախս ղալին ուլխացալ ա, որ պընգլը ճարալմ: Ասալ ա.- Դե մի պընգլ-հաշիվ ալ ասմ: Թա ճարեք, մի նաղլը կարմ ծըզ հետե:

Ասալնք ասի, կլսընք:

Ասալնք ասի, տըսննք հի՞նչս ըսլական:

Ինծ ասալ ա քո մթկոմը մի հաշիվ պահի, ասնք թա՝ տասը, քսան թիման փող: Յա տասը, քսան գյուղխ վըչխար: Յա մի օրեշ բեն, հինչ որ սըրտտ կօգի: Մինջա պահած բեներ մանակ անմը ասի:

Ասալ ըմ.- Լավ, պահալմ:

Հրցրալ ա.- Հի՞նչս պահած:

Ասալմ.- Վըչխարմ պահած:

Ասալ ա.- Հինչքան քո պահածն ա, գինի էնքան ալ քո հնգորը նանե բեր:

Ասալմ.- Բերալմ:

Ասալ ա.- Քսան գյուղխ ալ իսմ տալիս: Դե քու, հնգորտ, իմ տված օմեն վըչխրնեն գումարի, տըս քանե գյուղխ վըչխար կա գյումումը:

Իս մթկոմս քսան գյուղխ վըչխար ըմ լալ պահած: Քսան գյուղխ ալ հընգորան լալ: Քսան ալ ինքն լալ տված: Գումարալմ, գիդացալ՝ վաթսուն գյուղխ ա:

Ասալմ խոնախա.- Գումարալմ, գիդացալ:

Ասալ ա.- Դե էտքան վըչխարը մի գյոմում ինա չի պահի: Կես արի, կեսը թող գինն հանդըմը ըրածն:

- Կեսմ արալ, գենցալն:

- Դե հնգերեն պարտք մնալը սորին բեն չի, քանե գյուղխ բերածս լալ, էն ալ տար տոր հնգորտ: Թող խըղճտ հանգիստ ինի:

Ասալմ.- Տարալմ տվալ:

Ասալ ա.- Խոնախա, միեգ գյումումը տասը գյոլոխ վըչխար ա մանցած:

Ասալմ.- Հա՛:

Օմեն ալ մանցալև զարմացած, թա՝ էս մարթը ոչ իմ վչխրնան հաշիվն լալ գիդալիս, ոչ իմ հնգորա նանե բիրածեն հաշիվը լալ գիդալիս: Վերջմը հինչոր ա գիդացալ, որ տասը գյոլոխ վոչխար ա մանցալ:

Էտ հաշիվը մի քանե նհետ տարբեր բիներավ փորձալնք: Խոնախաս միշտ ալ տակեն մնցածեն հաշիվը դոզ գիդացալ ա:

Խոնախես հրվանրն ալ կրեցալ չըն հաշիվեն մանհն ճարիլ:

Խոնախաս լախ-լախ ծծղելավ ինձ ասալ ա.- Դու դերա տղա յըս, դերա ալ թոռնը: Կգինըս ծեր տոն, նաղլը կարս, դերը ուսում առած մարթ ա, կճարի: Միետ ալ որ գյոս ինձ ղոնաղ ինիս, էն վախտը կասս,- ասալ ա,- ետ դըռալ, թա՝ հրվանի, ձզանե հու վա լսած էն նաղլը, որ մի հռնքու թողբոն կրիս չըն մի աշուղե ջողաբ տան հառհնն ա ջողաբ տալիս:

Խոնախաս ըսկսալ ա նաղլը. «Պընգըլը ճարալ ա հառհնը»:

Քիշերան քոնս տարա չի: Խիյալ-խիյալ ըմ արալ, վերջը մանհն ճարալ:

Պարզվալ ա, որ իրքը մի տեղ գումարիլեն բաժանիլեն պարտքը ետը տակեն մնալիս ա իրան տվածեն կեսը:

№№ 37:

44. Ուստա Մուրադ

Ուստա Մուրադը ծնվել է 1890թ. Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում: Նրան Ուստա էին անվանում հմուտ դարբին լինելու համար:

Նրա մականունն էր «Քյուհչի Մուրադ», այսինքն՝ անչափ ստող, փչող, քամի անող: Նա սովորություն ուներ գովաբանել իր պատրաստած գործիքները, իր անասունները, ընտանիքի անդամներին. հորինում էր անհավատալի արկածներ իր կյանքից ու ամենայն համոզմունքով ու հավատքով պատմում զրուցակիցներին:

1935թ. աշնանային մի առավոտ հայրս գյուղատնտեսական գործիքները դրեց խուրջինում, բարձեց ջորուն ու ասաց. «Տըղաս, շատ էիր ցանկանում տեսնել Ուստա Մուրադին, լսել նրա արկածները: Հիմա կգնանք Մուրադ հաքրօղլու մոտ, կտեսնես, կծանոթանաս, կզրուցենք, հետագայում, կարիքի դեպքում, էլ ես չեմ գա, դու մենակ կգնաս, արդեն իրար կճանաչեք»:

Ուստա Մուրադը, տեղեկանալով մեր գնալու նպատակի մասին, գանգատվեց.- Դայօղլի, էլ առաչվանը չի, այամըն ալ ա փոխված, մարթինքն

ալ: Առաչ իմ քուշտեն բեն ըրիլու հետե շատ մարթ լալ ղանչանք ըրիս: Միեգ ալ օրվա մուզդը օրեն նաղդ տալիս ըմ, ղանչաք ըրիս, գյուլիս չըն բեն ըրիս: Ըստիպված հաջաթ բիրողուն ըմ քյոռուղ տալիս, բինիցրիս: Տը'ս, այամը հինչքան ա փոխված, հա՞:

Ընդմիջման ժամանակ Ուստա Մուրադը բացեց իր «քյուհերի» պարկի բերանը՝ մոտիկ հրավիրելով գնորդներին, մեկ առ մեկ ցույց տալով պատրաստի գործիքները, սկսեց փչել. - Էս խուփը տըսնալս ե՞ք, սա սովորական պողվատից չի հո՞, սա էլզուրումի փոլադից ա, ռաչպար մարթը կարուղ ա հարուր տարե սրանավ արտ վարի, ո՛չ մաշվիլ օնի, ո՛չ ալ՝ փըչանալ: Էս կացենը, ցակատը, հորեգյը, որ սարքածըմ, հո՞ սովորական պողվատից չի, խամ մարթը ամեն միներն մի վըսկե փող տա, տալ չըմ, մեխկ ա, կըտանի յա ծեռը կկտրի, յա՝ վըննը: Ուստա մարթ ա պետք, որ բնիցրի; էս ամենը կեծակու, պողվատու նանեյմ սարքած: Մի տարե ամըռնը լալ: Նիյ ըմ լալ մըր Սըլլի քարեն կողքեն արտըմը հոնձ ըրիս: Հավան փոխվալ ա, թուղբալ, երգինքը ըսկսալ ա ուրուտալը՝ կարկուտ գյուլը, կըծկեծուն արիլը: Էրկու մըծ կեծակնե նիյ ըն եկալ միներ-միներն, վեր ինգյալ Սըլլե քարեն երե՝ պողվատ դըռալ: Կըծկեծոնից բհամ եկած պողվատը ինաչի ծեռքավ փըռնիլ: Գենցալըմ տանը նանե մի քեչա բերալ ըմ, կիծակեն պողվատը քեչին մաչեն փըթատալ ըմ, բերալ էս հաջաթնեն սարքալ: Էնքան սորըն, որ կինա տըղըմարթու իրըս վեր արի: Տանըս դիրըս ծըմակըմը, մի սհաթ քաշած վեչ, ծըմակեն ամեն ծառըրը կկտորըն՝ վերածըն:

Ուստա Մուրադի դուքանը գտնվում էր իր տան կողքին: Օրվա աշխատանք ավարտվեց, երբ գյուղի նախիրը, ոչխարների հոտը հանդից վերադառնում էին: Ուստա Մուրադը, ցույց տալով իր եզներին, բացեց «քյուհերի» երկրորդ պարկի բերանն, ասաց. - Դայօղլի, տեսնում ե՞ս իմ եզներին: Սրանք հո սովորական եզնըր չե՞ն, ասլանն՝ ասլան: Լուծը դիրի ուսուռնուն, բեց թող, իրաք իրանց արտը կըվարըն:

Հանդից եկող կովը ցույց տալով՝ ասաց.- Էս Մարալ կավը տըսնալիս ը՞ս, սովորական տավարու ջինսը չի: Ծըմակում ապրուղ մարալների ցեղից ա: Մե տարե վըրսըմ լալ գենցած Հուժե ծըմակը, մի տըրեկան վըրթ լալ, փըռնալ ըմ բերալ: Ամեն մի կըթոց էրկու բիդյա կաթն ա տալիս:

Գյուղի հովիվը մի քանի գլուխ ոչխար բերեց: Ուստա Մուրադը համոզված ասաց.- Իմ ոչխարներն էլ սովորական չեն, արղալի են, արղալի: Մի տարե վըրսընք լալ գենցած Խոյնարու սարրը: Բախտի բերումով ջիհալ ըմ ծընոտած, գյոռնըրը հետեն շարված արղալիներեն սուրվեն: Հա-

ջողվալ ա, մի ջոխտ գյոռնը փըռնալ ըմ, բերալ: Արսայըմ բերալ, շըտըցրալ: Տարեկան էրկու նըհետ խուզիս ըմ: Ամեն մի խուզիլուց ամեն միևը մի ման բուրթ ըն տալիս: Դե, դու տըղայս, կընեգ ճարի, որ բուրթը գիզըն, մաննն, հիվսալա գիծըն: Իրաք ալ ինդի համիլ հեյվաննե յըն, որ չոբան ալ վեչինի, իրաք իրաց կըգինն չոլումը կըրածըն, ետ դըռնն գյոն: Հըրըվանու ոչ մի արտու, բըղչորու վընաս չըն տա:

Ուստա Մուրադը, հպարտորեն ցույց տալով իր շանը, ասաց.- էս շոննն ալ սովորական շոն չի: Փալանգ բալասի ա, փալանգ բալասի: Մի տարի էլ գենցած ընք լալ Մարու ծըմակը եղան վըրսու: Պատահական պդահալ ա, փըռնալ ըմ, բերալ՝ պահալ, մըծըցըրալ: Միեգ պարի սըրտավ հինչ մարթ գյո իմ տոնը, կգիդա, օզը՞մ ըս գինի կոխ տոր, ո՛չ կհաչի, ո՛չ ալ՝ կըկըծի: Համա դե, Աստված ոչ անի, մի մարթ ծոռ մտկավ, յա գյուղութունու հետե օգի գյո նի մըտնի տոնըս, եր կըկենա, կըփռնի թիքյա-թիքյա կարի. հասաբալի մի լըպրաստակ՝ կօտի: Քանե-քանե հետ պդահած ա՝ թորք գյողըր եկած ըն, որ ինծ վընաս տան, տոնըս հըվաքըն, տանըն: Ասլանըս եր ա կացած փըռնած, խըղդած, ինդի ա կերած, որ մի կաթ արուն թուղեցած չի կաթի տափեն, հետքը ըրվա: Ուրեմը, գիդաց, դայօղլի, որ քու հաքրօղլին հինչ հինարու տար ա, հինչո՞ւր չըտըսնված համ դամիրչի ա, համ ալ՝ վըրսկան:

Ուստա Մուրադը, մտնելով տուն, նկատեց պատին հենած հորս հրացանը, ուրախ-ուրախ վերցրեց, դեսուդեն շրջեց, նայեց ու ասաց.- Դայօղլի, շատ սորի թվանգյ ա, անըմը հինչ ա՞:

- «Ուստա Զալի»,- պատասխանեց հայրս:

- Ուստա Զալու կապած թիվանգնեն սորին անըմ օննն,- գովաբանեց ուստա Մուրադը, հրացանը նորից հենեց պատին, տան անկյունից բերեց նույնանման մի հրացան, ցույց տվեց հորս ու ասաց,- էս իմ թիվանգյն ա, անըմը «Շաբան» ա: Հո թիվանգյ չի՞, կեծակ ա, կեծակ: Եր կալ շենեն նանե դուս եք, լուլան պահի դիբի ծըմակը, երի արի, գինի տըս, քու օզած վըրսը վեր ա ինգյած, դի տըղայս շըլակի, եր կալ բեր,- ասաց ուստա Մուրադը, սկսեց հրացանի փողը անջատել ու ինչ-որ կոշտ հողով փողը տըրորել:

- էտ ի՞նչ ես անում,- հարցրեց հայրս:

- Շենմը իմ թիվանգյըն ա մանակ պըսպղու տալիս: Թամուզ կըրիս ըմ, որ վերսըտեղեն նհետ շենեն ըռշկին հողքը եկած տեղը, իրինննակեն լուսեն տակեն թըվանգյս պըսպղու տա, այտըս կընեգյս՝ եղսա, ճընանչի,

որ իս ըմ գյուլիս, օջաղը վառի, ըռթվան դրի կըրակեն, որ տոն հասած տեղըս չայը հազըր ինի,- առանձին հպարտությամբ ասաց ուստա Մուրադը:

№№ 340 - 344:

45. Գրիգորյան Հասմիկ

Հասմիկ Թովմասի Գրիգորյանը ծնվել է Հասանով գավառի Նորաշեն գյուղում:

Բանահավաք Հ. Հովսեփյանը «Աստուծ-Աստուծ» չափածո գործը նրանից է գրի առել 1945թ. Նորաշեն գյուղում:

№ 352:

Առածներն ու ասացվածքները հաղորդել են Սուրեն Բադալյանը, Վոլոդյա Բաղդասարյանը, Աշոտ Գյուլբուդաղյանը, Աշոտ Հակոբյանը, Մարիամ Հակոբյանը, Առաքել Հովհաննիսյանը, Աշոտ Միրզոյանը և Աշոտ Մնացականյանը:

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Բանահավաք Հովհաննես Հովսեփյանի գրառած Ղարադաղի բանահյուսական նյութերը ծանոթագրության աղյուսակում ներկայացված են ըստ ժողովածուի բաժինների հերթական համարների:

№	Նյութի գրառման վայրը, ծագումը	Գրառման ժամանակը	Վերապատում՝ բանահավաքի հիշողությամբ	Ումից է լսել	Ծննդյան տարեթիվը	Բանասաց	Ծննդյան տարեթիվը
1	2	3	4	5	6	7	8
Վիպական բանահյուսություն 1. Հրաշապատում հեքիաթներ							
1(1)	Երևան<Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Ոսկանյան Բեգլար (Տեր Եզնիկ քահանա)	1876	-	-
2(2)	Երևան<Սարդու	1984	-	-		Ստեփանյան Ռուբեն	1932
3(3)	Երևան<Խանագահ	-,,-	-	-		Ավագյան Արշակ	1922
4(4)	Ղուլուդի-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Ջավադյան Մարտիրոս	1900	-	-
5(5)	Երևան<Խանագահ	x	-,,-	Ոսկանյան Բեգլար	1876	-	-
6(6)	-,,-	x	-,,-	-,,-	-,,-	-	-
7(7)	-,,-	x	-,,-	-,,-	-,,-	-	-
8(8)	-,,-	x	-,,-	Բադալյան Անահիտ	1871	-	-
9(9)	-,,-	x	-,,-	-,,-	-,,-	-	-
10(10)	Թաշլու	x	-,,-	Վարդանյան Դահրաման	1872	-	-
11(11)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Ստեփանյան Ռուբեն	1932

1	2	3	4	5	6	7	8
12(12)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Ստեփանյան Ռուբեն	1932
13(13)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
14(14)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
15(15)	-- ,, --	-- ,, --	-	-	-	Բաղդասարյան Բագրատ	1928
16(16)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
17(17)	Ղշլաղ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Հովհաննիսյան Ալեքսան	1888	-	-
18(18)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
19(19)	Ղուլուդի-Դիզմար	-- ,, --	-- ,, --	Ջավադյան Մարտիրոս	1900	-	-
20(20)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
21(21)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Ավագյան Արշակ	1922
22(22)	-- ,, --	-- ,, --	-	-	-	Դանիելյան Մարգար	1922
23(23)	Գորիս<Վինա-Մինջևան	x	-	-	-	Բաբախանյան Արսեն	1917
24(24)	Երևան< x	-	-	-	-	-	-
25(25)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Ստեփանյան Ռուբեն	1932
2. Իրապատում հեքիաթներ							
1(26)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Ոսկանյան Բեգլար	1876	-	-
2(27)	Երևան<Խանագահ	-- ,, --	-- ,, --	Բաղալյան Անահիտ	1871	-	-
3(28)	Թաշլու-Հասանով	-- ,, --	-- ,, --	Վարդանյան Դահրաման	1872	-	-

1	2	3	4	5	6	7	8
4(29)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Բադալյան Անահիտ	1871	-	-
5(30)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Բադալյան Մարտիրոս	1895	-	-
6(31)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Աղաջանյան Ալեքսան	1896	-	-
7(32)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
8(33)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
9(34)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
10(35)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Ստեփանյան Ռուբեն	1932
11(36)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
12(37)	Դիզմար-Ղշլաղ	1946	-	-	-	Տեր-Գրիգորյան Սամսոն	1905
13(38)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Բաղդասարյան Բագրատ	1928
14(39)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
15(40)	Իրգոթին-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Հարությունյան Համբարձում	1891	-	-
16(41)	Ղշլաղ-Դիզմար	x	-- ,, --	Հովհաննիսյան Ալեքսան	1888	-	-
17(42)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Ավագյան Արշակ	1922
18(43)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
19(44)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
20(45)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Դանիելյան Մարգար	1922
21(46)	Գորիս<Վինա	x	-	-	-	Բաբախանյան Արսեն	1917

1	2	3	4	5	6	7	8
22(47)	Գորիս<Վինա	x	-	-	-	Բաբախանյան Արսեն	1917
23(48)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
24(49)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
25(50)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
26(51)	Բաքու<Նորաշեն	1985	-	-	-	Դոլուխանյան Վոլոդյա	1933
27(52)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
28(53)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
29(54)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
30(55)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
31(56)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
32(57)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
33(58)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Դանիելյան Գալուստ	1924
			3. Պատմական դեմքեր				
1(59)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Ստեփանյան Ռուբեն	1924
2(60)	Բերդին-Քեյվան	1984	-	-	-	Մեսրոպյան Հովհաննես	1901
3(61)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
4(62)	Բերդին-Քեյվան	1984	-	-	-	-- ,, --	-- ,, --
5(63)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
6(64)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
7(65)	Բերդին-Քեյվան	1984	-	-	-	Մեսրոպյան Հովհաննես	1901
8(66)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
9(67)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
10(68)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
11(69)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
			4. Կենդանական հեքիաթներ				
1(70)	Թաշլու-Հասանով	x	Հովհաննես Հովսեփյան	Վարդանյան Ղահրաման	1872	-	-
2(71)	Երևան<Սարդու	1984	-	-	-	Բաղդասարյան Բագրատ	1928
3(72)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
4(73)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
5(74)	Գորիս<Վինա	x	-	-	-	Բաբախանյան Արսեն	1917
6(75)	-- ,, --	-- ,, --				-- ,, --	-- ,, --
7(76)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Արզումանյան Արմենակ	1907	-	-
8(77)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
9(78)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
10(79)	Խանագահ-Դիզմար	x	-- ,, --	Հարությունյան Մնացական	1907	-	-
11(80)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
12(81)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
13(82)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-

1	2	3	4	5	6	7	8
14(83)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Սարգսյան Թադևոս	1896	-	-
15(84)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Ոսկանյան Ալեքսան	1906	-	-
16(85)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Աղաջանյան Հարություն	1888	-	-
17(86)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
18(87)	Նորաշեն-Հասանով	-- ,, --	-	-	-	Գրիգորյան Թովմաս	1892
19(88)	Լումա-Հասանով	-- ,, --	-	-	-	Հայրապետյան Մարտիրոս	1914
20(89)	Աղաղան-Դիզմար	-- ,, --	-	-	-	Խաչատրյան Աղաջան	1902
21(90)	Ղշլաղ-Դիզմար	-- ,, --	-	-	-	Առաքելյան Մկրտիչ	1902
22(91)	Ողան-Մշափարա	-- ,, --	-	-	-	Սարգսյան Հովակիմ	1917
5. Մանկական հեքիաթներ							
1(92)	Նորաշեն-Հասանով	x	-	-	-	Հովսեփյան Հասմիկ	1922
2(93)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
3(94)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
4(95)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
5(96)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
6(97)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
7(98)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
8(99)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
9(100)	Նորաշեն-Հասանով	x	-	-	-	Հովսեփյան Հասմիկ	1922
10(101)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
11(102)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
12(103)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
			6. Ձրույցներ				
1(104)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Բաղալյան Անահիտ	1871	-	-
2(105)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Բաղալյան Մարտիրոս	1895	-	-
3(106)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
4(107)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Աղաջանյան Ալեքսան	1896	-	-
5(108)	Իրգոթին-Դիզմար	1946	-- ,, --	Հարությունյան Համբարձում	1891	-	-
6(109)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
7(110)	Ղշլաղ-Դիզմար	x	-- ,, --	Հովհաննիսյան Ալեքսան	1888	-	-
8(111)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
9(112)	Ղուլուդի-Դիզմար	-- ,, --	-- ,, --	Ջավադյան Մարտիրոս	1900	-	-
10(113)	Գորիս<Վինա	x	-	-	-	Բաբախանյան Արսեն	1917
11(114)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
12(115)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
13(116)	Բաքու<Նորաշեն	1985	-	-	-	Դոլուխանյան Վոլոդյա	1933

1	2	3	4	5	6	7	8
14(117)	Բաքու<Նորաշեն	1985	-	-	-	Դոլուխանյան Վոլոդյա	1933
15(118)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
16(119)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
17(120)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
18(121)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
19(122)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
20(123)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
21(124)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
22(125)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
23(126)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Արզումանյան Արմենակ	1907	-	-
24(127)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
25(128)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
26(129)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Հարությունյան Սնացական	1907	-	-
27(130)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	Սարգսյան Թադևոս	1896	-	-
28(131)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
29(132)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
30(133)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
31(134)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
32(135)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-

1	2	3	4	5	6	7	8
33(136)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Ոսկանյան Ալեքսան	1906	-	-
34(137)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
35(138)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
36(139)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
37(140)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
38(141)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
39(142)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
40(143)	-- ,, --	-,,-	-,,-	Աղաջանյան Հարություն	1888	-	-
41(144)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
42(145)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
43(146)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
44(147)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
45(148)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
46(149)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
47(150)	-- ,, --	-,,-	-,,-	Դադյան Ալեքսան	1871	-	-
48(151)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
49(152)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
50(153)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-
51(154)	-- ,, --	-,,-	-,,-	-,,-	-,,-	-	-

1	2	3	4	5	6	7	8
52(155)	Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Դադյան Ալեքսան	1871	-	-
53(156)	Երևան<Նորաշեն-Հասանով	-- ,, --	-	-	-	Դոլուխանյան Հայրապետ	1902
54(157)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
55(158)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
56(159)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
57(160)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
58(161)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
59(162)	Երևան<Նորաշեն-Հասանով	-- ,, --	-	-	-	Գրիգորյան Թովմաս	1892
60(163)	Իրգոթին-Դիզմար	-- ,, --	-	-	-	Գրիգորյան Հովհաննես	1914
61(164)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
62(165)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
63(166)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
64(167)	Երևան<Աղաղան-Դիզմար	-- ,, --	-	-	-	Խաչատրյան Աղաջան	1902
65(168)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
66(169)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
67(170)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
68(171)	Երևան<Ղշլաղ-Դիզմար	x	-	-	-	Առաքելյան Սկրտիչ	1902
69(172)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
70(173)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
71(174)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
72(175)	Երևան<Սարդու-Դիզմար	-- ,, --	-	-	-	Ստեփանյան Վարդան	1903
73(176)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
74(177)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
75(178)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
76(179)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
77(180)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
78(181)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
79(182)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
80(183)	Երևան<Ողան-Մշափարա	-- ,, --	-	-	-	Սարգսյան Հովակիմ	1917
81(184)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
82(185)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
83(186)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
84(187)	Երևան<Ողան-Մշափարա	x	-	-	-	Սարգսյան Հովակիմ	1917
85(188)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
86(189)	Ղասմաշեն-Քեյվան	-- ,, --	-	-	-	Ղասումյան Ջահանգիր	1902
87(190)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
88(191)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
89(192)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
90(193)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
91(194)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
92(195)	Նորաշեն-Հասանով	-- ,, --	-	-	-	Գալստյան Շուշանիկ	1903
93(196)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
94(197)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
95(198)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
96(199)	Երևան<Խանագահ	-- ,, --	-	-	-	Դանիելյան Գալուստ	1924
97(200)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
98(201)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
7. Իրապատում զրույցներ							
1(202)	Իրգոթին-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Հարությունյան Համբարձում	1891	-	-
2(203)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-

1	2	3	4	5	6	7	8
3(204)	Ղշլաղ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	Հովհաննիսյան Ալեքսան	1888	-	-
4(205)	Ղուլուդի-Դիզմար	-,,-	-,,-	Ջավադյան Մարտիրոս	1900	-	-
5(206)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Ավագյան Արշակ	1922
6(207)	--,,--	-,,-	-	-	-	Դանիելյան Մարգար	1922
7(208)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
8(209)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
9(210)	Բաքու<Նորաշեն	1985	-	-	-	Դոլուխանյան Վոլոդյա	1933
10(211)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
11(212)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
12(213)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
13(214)	--,,--	-,,-	-	-	-	--,,--	--,,--
14(215)	-	-	-	-	-	-	-
15(216)	-	-	-	-	-	-	-
16(217)	-	-	-	-	-	-	-
17(218)	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8
18(219)	-	-	-	-	-	-	-
19(220)	-	-	-	-	-	-	-
20(221)	-	-	-	-	-	-	-
21(222)	-	-	-	-	-	-	-
22(223)	-	-	-	-	-	-	-
23(224)	-	-	-	-	-	-	-
24(225)	-	-	-	-	-	-	-
25(226)	-	-	-	-	-	-	-
26(227)	-	-	-	-	-	-	-
27(228)	-	-	-	-	-	-	-
28(229)	-	-	-	-	-	-	-
29(230)	-	-	-	-	-	-	-
30(231)	-	-	-	-	-	-	-
31(232)	-	-	-	-	-	-	-
32(233)	-	-	-	-	-	-	-
33(234)	-	-	-	-	-	-	-
34(235)	-	-	-	-	-	-	-
35(236)	-	-	-	-	-	-	-
36(237)	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8
37(238)	-	-	-	-	-	-	-
38(239)	-	-	-	-	-	-	-
39(240)	-	-	-	-	-	-	-
40(241)	Նորաշեն-Հասանով	x	-	-	-	Գալստյան Շուշանիկ	1903
41(242)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
42(243)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
43(244)	Երևան<Խանագահ	1984	-	-	-	Դանիելյան Գալուստ	1924
44(245)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
45(246)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
8. Զվարճախոսություններ							
1(247)	Չարենցավան< Նորաշեն	1984	-	-	-	Հայրապետյան Գրիգոր	1923
2(248)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
3(249)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
4(250)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
5(251)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
6(252)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
7(253)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
8(254)	Իրգոթին-Դիզմար	x	-	-	-	Գրիգորյան Հովհաննես	1914

1	2	3	4	5	6	7	8
9(255)	Աղաղան-Դիզմար	x	-	-	-	Խաչատրյան Աղաջան	1902
10(256)	Վինա-Մինջևան	-- ,, --	-	-	-	Նարինյան Սիմոն	1904
11(257)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
12(258)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
13(259)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
14(260)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
15(261)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
16(262)	Նորաշեն-Հասանով	x	-	-	-	Գրիգորյան Թովմաս	1892
17(263)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
18(264)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
19(265)	Լումա-Հասանով	x	-	-	-	Հայրապետյան Մարտիրոս	1914
20(266)	-- ,, --	-- ,, --	-		-	-- ,, --	-- ,, --
21(267)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
22(268)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
23(269)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
24(270)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
25(271)	Իրգոթին-Դիզմար	x	-	-	-	Գրիգորյան Հովհաննես	-- ,, --
26(272)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
27(273)	Ղուլուդի-Դիզմար	x	-	-	-	Սարգսյան Արմենակ	1897
28(274)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
29(275)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
30(276)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
31(277)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
32(278)	Երևան<Խանագահ	1985	-	-	-	Դանիելյան Ժենյա	1930
33(279)	-- ,, --	-- ,, --	-	-		-- ,, --	-- ,, --
34(280)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
35(281)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
36(282)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
37(283)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
38(284)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
39(285)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
40(286)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
41(287)	Երևան<Վինա-Մինջևան	x	-	-	-	Նարինյան Սիմոն	1904
42(288)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
43(289)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
44(290)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
45(291)	Երևան<Վինա-Մինջևան	x	-	-	-	Նարինյան Սիմոն	1904
46(292)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
47(293)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
48(294)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
49(295)	Երևան<Խանագահ	x	-	-	-	-	-
50(296)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
51(297)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
52(298)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
53(299)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
54(300)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
55(301)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
56(302)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
57(303)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
58(304)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
59(305)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
60(306)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
61(307)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
62(308)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8
63(309)	Երևան<Խանագահ	x	-	-	-	-	-
64(310)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
65(311)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
66(312)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
67(313)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
68(314)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-	-
69(315)	Երևան<Դիզմար-Խանագահ	x	-	-	-	Հովսեփյան Ժորա	1928
70(316)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
71(317)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
72(318)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
73(319)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
74(320)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
75(321)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
76(322)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
77(323)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
78(324)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
79(325)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
80(326)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --

1	2	3	4	5	6	7	8
81(327)	Երևան<Դիզմար-Խանագահ	x	-	-	-	Հովսեփյան Ժորա	1928
82(328)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
83(329)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
84(330)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
85(331)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
86(332)	-- ,, --	-- ,, --	-	-	-	-- ,, --	-- ,, --
9. Ստապատում							
1(333)	Երևան<Խանագահ-Դիզմար	x	Հովհաննես Հովսեփյան	x	x	-	-
2(334)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
3(335)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
4(336)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
5(337)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
6(338)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
7(339)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
8(340)	Երևան<Նորաշեն-Հասանով	-- ,, --	-- ,, --	Ուստա Մուրադ	1890	-	-
9(341)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
10(342)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-

1	2	3	4	5	6	7	8
11(343)	Երևան<Նորաշեն-Հասանով	x	Հովհաննես Հովսեփյան	Ուստա Մուրադ	1890	-	-
11(343)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
12(344)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-
13(345)	Երևան<Խանագահ-Դիզմար	-- ,, --	-- ,, --	-	-	Սեյրանյան Սուրեն	1928
14(346)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-	-- ,, --	-- ,, --
15(347)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-	-- ,, --	-- ,, --
16(348)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-	-- ,, --	-- ,, --
17(349)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-	-- ,, --	-- ,, --
18(350)	-- ,, --	-- ,, --	-- ,, --	-	-	-- ,, --	-- ,, --

ԲԱՌԱՐԱՆ[1]

Ա

Աբի - երկնագույն
Աբուռ - 1. ամոթ, 2. պատիվ
Աբուռը ետ կալ - ամոթանք տուր
Ադիթունավ - այդպիսով
Ազար - հիվանդություն, համաճարակ
Ազգավլադ - տոհմ, ընտանիք
Ազրահիլ - հոգեառ (հրեշտակ)
Աթա-բաբադան - ապուպապեր
Աթալար - նախնիներ, հայրեր
Աթան տեղ - դաշտավայր
Ալաթ - արոր
Ալաղա - մոլախոտ
Ալամաթ – 1. գիտություն, հնարամտություն, 2. հիանալի, սքանչելի
Ալամ - աշխարհ
Ալան-թալան - կողոպուտ
Ալլա - էլի
Ալխային - հանգիստ
Ալվերչի - առևտրական
Ալուզ - հիվանդ
Ալօր - մյուս օրը
Ախառնը - մատաղացու կենդանի, հանրային մատաղ
Ախրը - վերջը
Ախր - չէ որ
Ածել - նվագել
Ական - 1. պայթուցիկ սարք, 2. անցք, փոս, 3. անկորուստ
Ակութ - 1. օջախ, 2. փոքրիկ թոնիր
Ահդ արըլ - ուխտել, երդվել
Աղալ - ոչխարի մակաղատեղի
Աղայանա - իշխանավայել
Աղլքասան - խելամիտ
Աղսախկալնե - հոգաբարձության ղեկավարներ
Աղվայիշ - կեցվածք
Ամանաթ - ավանդ, պահ տված բան
Ամանի գյունի ա - մեր նեղ օրն է
Ամարաթ (էմարաթ) - ապարանք, պալատ
Ամբար - պահեստ
Ամբար տալ - պահեստավորել
Ամի - հորեղբայր
Այազ- սառնամանիք
Այամ - աշխարհ
Այամ (քյոհնա այամեն) - ժամանակ, վաղ ժամանակ
Այան - մեծ մայր
Այան դըռնալ - վկայել
Այիբ - 1. ամոթ, 2. թերություն, արատ
Այիլ-մայիլ դըռնալ - հիանալ, հմայվել
Այնոյնը - 1. ունեցած-չունեցածը, եղած-չեղածը, գնումները (մանր-մունր)
Այսլ - զավակ, ժառանգ
Այտս - հետո, այնուհետև
Անամ - նվեր
Անթիկա - հետաքրքիր
Անդմ - քայլ
Անծուղ - ածուխ, փայտածուխ
Անղն - բամբակ գործող ինքնաշեն գործիք
Անջաղ - հագիվ
Անջուկ - ականջ
Աշան - կալսելու հացահատիկը
Աշկյար - հայտնի, անթաքույց, բացահայտ
Աշկու տակ ունիլ - նկատի ունենալ
Աշպազխանե - խոհանոց
Ապի - պապ, հայր
Ապրանք - մանր և խոշոր եղջերավոր անասուններ
Աջալ - վերջ, ավարտ
Աջան - ոստիկան
Աջիզ - աչքաբաց

[1] Բառարանում օգտագործված որոշ բառերի բացատրություններ բանահավաքի կողմից են ստուգաբանվել, որոնք թողել ենք նույնությամբ (ծանոթ. կազմողների):

Առաչավտ - նախապես
Առչավըրս - արջառրս
Ասիր - գերի
Ասիրգյամիշ արիլ - մերժել
Ասլան - առյուծ
Ասլան բալա - կորյուն
Ասման - երկինք
Ավադ - շեն, մշակված
Ավազը - փոխարենը
Ավալ - սկիզբ
Արախչի - գլխարկ
Արան տեղ - դաշտավայր
Արաշի - մոլի
Արաշտ - երաշտ
Արզ արըլ - գանգատվել, բողոքել
Արզու - խնդիր, ցանկություն
Արխ - առու
Արխաջ - տավարի կանգնելու տեղ հանդում, մակաղելու տեղ
Արկաթ - երկաթ
Արղալի - վայրի ոչխար
Արմունգ - արմունկ
Արշա անիլ - աճել
Արջախաթու - խխունջ, իշախառանչ (համատեքստում՝ խոտակեր)
Արսա գյոլ - 1. բազմանալ, 2. լույս ընկնել
Արքու - բերդ, ամրոց, ամրություն, պատվար
Ափաթ - չտեսնված, հիանալի
Ափարիմ - կեցցե

Բ

Բաբաթ - բավարար չափով, բավականաչափ
Բագան չի արալ - չի հավանել, հավատ չի ընծայել, հավանություն չի տվել
Բագան կանալ - հավանել
Բագ յարսշան - բեկի սազական
Բագյան (բագան) - պարիսպ, բերդ
Բազար - շուկա
Բազզադ (բազադ) - խորամանկ
Բազի - մի քանի, որոշ, ինչ-որ, ոմն
Բալա - որդի
Բալի - գուցե
Բալիմնը - գուցե
Բալլու վա դրռնալիս - պարզվում է
Բալքա (բալքյա) - գուցե, թերևս
Բախտ - ճակատագիր
Բահրա - կալվածատիրոջ հացահատիկի բաժինը, բնավճար
Բաղ - այգի
Բաղվանչի - այգեպան
Բաղտաեշուղ - բախտագուշակ
Բաջանաղ - քենակալ
Բաջի - քույր
Բաջօղլի - քրոջ որդի
Բայաթի - սգերգ, ողբ
Բանգի - խիտ տերևներով գարշահոտ բույս
Բար - բերք, պտուղ
Բարաբար - հավասար
Բարաթ - մուրհակ, կտակ
Բարաքյաթ - 1. առատություն, լիություն, 2. արդյունավետություն, հաջողություն
Բարաքյալլա - կեցցես
Բարգյահ տալ - նշան տալ
Բարիշել - հաշտվել
Բարիշ - հաշտ
Բարխան - 1. դեղին ծաղկով պայտածև տերևներով խոտ, 2. ունեցվածք
Բարոտա ծառ - մրգատու ծառ
Բարութ - վառոդ
Բեդասիլ – 1. անարժան, 2. անամոթ
Բեդովլաթ - անպետք, ապիկար, ապաշնորհ, բառացի՝ ընչազուրկ
Բեզար - 1. հոգնած, 2. ծանծրացած
Բեզնիգ - ջարդված կավե աման
Բելազաթ - անհամ
Բելի - կնքահայր, քավոր, սանահեր
Բեխաբար - անտեղյակ
Բեխկ - բողկ
Բեհալ - անտրամադիր
Բեհ - կանխավ, կանխավճար
Բեղեյրաթ - ծույլ, անբան, անճարակ, անպատիվ, վաստակ չունեցող, անխեր
Բեյթաղ - դրոշակ
Բեյթուն - իզուր

Բեն - բան
Բենամուսութուն - անպատվություն
Բենբակ - բամբակ
Բենջակ (բենչակ) - բաճկոն, տղամարդու վերնազգեստ
Բեջուռա - անճոռնի, տգեղ, անշնորհք
Բերց - բարձ
Բեցբիցիհար - չծածկված
Բեքի - բոխի
Բէց - բաց
Բըլամա - շերամ
Բըլուլ - հնձած խոտի բլրածև կույտ
Բըխչոտ - այգիներ
Բըռուշնի - շրթունքներ
Բըրիշակ - ավերակ
Բիաբուռ - անպատիվ
Բիդյա - 5 լիտրանոց լայն բերանով պղնձե աման
Բիլագ - դաստակ
Բիլազուկ - ապարանջան
Բիլբիլալ - պտտվել
Բիլդի-բիլդի յա ըրիս - շորորալ
Բիլոլի (բիլալի) - բանալի
Բիկիլ – մրսել, թմրել
Բիհիր - տնամերձ հողամաս
Բիհր - ցից
Բինիտեղ (բինիտեղեն, բինատեղ) - աշխատավայր, գործատեղ
Բիջիլ - մայել, բառաչել
Բիրդոմ (բիրդամ, բիրդան) - հանկարծ
Բհամ գյո (բհիամ եկած) - առաջանալ, գոյանալ
Բհաս ընել - վիճաբանել
Բյազ - բամբակյա գործվածքի տեսակ
Բոզ - 1. սպիտակ, 2. անբարոյական
Բոլիգյ - հոտ
Բոլլուղ - առատություն
Բողազ - կոկորդ
Բոմբի - բաղարճ
Բոյ-բուսաթ - 1. հասակ, 2. տեսք
Բոստան - բանջարանոց
Բորլոմիշ - փարթամանալ
Բրանա (բրանի, բըրանի) - դդում
Բրուշիմ (բուրուշում) - մետաքս
Բուդուդ (քամու) -հոսանք, պտտահողմ
Բուդուրմիշ ինիլ - սայթաքել
Բութուլ - շիշ
Բուլբուլ կտրել - շաղակրատել, ճարտար խոսել, խոսքաշատ
Բուլել (խմորը) - գնդել
Բուլուր - կլոր
Բուխարի - ծխնելույզ
Բուխչա (բոխչա) - կապոց
Բուխչամաչ - կապոցի մեջ
Բույթուղ - հրաման
Բունդ - բլուր
Բունդու պըտոկ - բլրի գագաթ
Բուշհաբա - ափսե
Բուռնըհարել - բռնցքահարել
Բուսաթ - տեսք, հասակ
Բուսավ մտնել - գաղտագողի հետևել
Բուսխուն պիել - գաղտագողի հետևել, հետամուտ լինել, հսկել
Բուսխոն - նեղը գցել
Բուսու յըն մտնիլիս - գաղտագողի հետևել
Բուրջ - աշտարակ
Բուք տալ - պոկել

Գ

Գազ (գյազ, գեզ) - երկարության պարսկական միավոր = 112 սմ
Գեդան-գյալմազ - գնացող չվերադարձող
Գեյմա - վերարկու
Գերմակ - մաճր
Գեփր - ազդրեր
Գըդըլ - կարճ
Գիդ - խորամանկ
Գիլեյ ընել - գանգատվել
Գիլեյ-գիյբաթ - բամբասանք
Գիղեցե - եկեղեցի
Գյազագյան - մաճ եկող
Գյալաջա - զրույց
Գյալաջի ըրիլ - զրուցել
Գյամ - սանճ
Գյամի - նավակ, նավ

Գյամրչի - նավավար
Գյոզ - մեզ
Գյոլ (գյուլ) - գայլ
Գյոլ - լիճ, լճակ
Գյող կնալ - թաքնվել
Գյոմագ - օգնություն
Գյոշ - կոտ, կուշ
Գյոռ(ն) (գյոռան) - գառ
Գյովդա - 1. իրան, մարմին, 2. հաղթանդամ, 3. երկնքում, օդում
Գյորա - համեմատ, համաձայն
Գյորդ - խոշոր սուր
Գյորե - գարի
Գյորիշ (գյորիշմ, գյորաշլըղ) - տեսություն, տեսակցություն
Գյորոնք (գերունք, գյորունք) - գարուն
Գյոռխնակ (գյոռխնակ, գյոռհնակ) - գորտ
Գյուզել - միզել
Գյուլաս - կեռաս
Գյուլլա - գնդակ
Գյուլլի բաղ - վարդանոց
Գյուղկըլանե - մանկական խաղ՝ պահմտոցի
Գյունգ - կավե խողովակ
Գյուռոտ (գյոռոտ) - գերեզմանատուն (մահմեդական)
Գյուռչաթ - ամպրոպ
Գյուրգ - 1. գոգ, 2. գոգնոց, 3. գիրկ
Գյուքինալ - չաղանալ, գիրանալ

Դ

Դաբաղ - կենդանիների վարակիչ հիվանդություն
Դաբան - կրունկ
Դադա - հայր
Դալդա - ծածուկ, չերևացող տեղ
Դալի - գիժ
Դալլաք - վարսավիր
Դալլաքխանա - վարսավիրանոց
Դակումենդ - փաստաթուղթ
Դահնա - 1. մսագործի դանակ, 2. ակունք, գետաբերան
Դաղ - խարան, կսկիծ
Դաղ-նուղ (դաղանուղ) - ցաքուցրիվ
Դամ - 1. կերակրի եփվելու անհրաժեշտ չափը, 2. մեկին աջակցել
Դամիրչի - դարբին
Դայաղ - հսկել, մեկին հովանավորել
Դայաղ տալ - դիմանալ
Դայի - քեռի
Դայօղլի - քեռու տղա
Դան - աղուն, աղալու համար պատրաստված հացահատիկ
Դանա - հորթ (մեկ տարեկան), մոզի
Դանդանա - փոքր երեխային գրկում թողնելը, խաղացնելը
Դանմիշ ընել - ուրանալ
Դասստ գյոլ - նեղվել
Դաստա - 1. փունջ, 2. խումբ
Դաստին - առանց հապաղելու, շտապ
Դավա (դևա)- ուղտ
Դավաչի - ուղտապան
Դավթար - 1. գիրք, 2. մատյան
Դարզի - դերձակ
Դարդահան ղըռնալ - վիշտը կիսել
Դեղ-դարման ընիլ - բուժել
Դեչանը - մինչև
Դեռնը - դառը
Դեսնը – 1.այս կողմը, 2. դաղձ
Դեր- տերտեր, քահանա
Դըմըզլըղ - ցեղ, տոհմ, ազգուտակ
Դընատար - մոզու տեր
Դըռընդոռենչ - տյառնընդառաջի խարույկ
Դըրբըզա (դարբազա) - դարպաս
Դիբիդեն - դեպի այն կողմ
Դիբիդես - դեպի այս կողմ
Դիլի-դիլբար - լեզվանի
Դիյեր - վերև
Դինատար - աղունի տեր
Դինգյանա - սարք, որով թեփահանում են բրինձն ու ցորենը
Դինջ - հանգիստ, անտարբեր
Դինջինալ - հանգստանալ
Դիվան - դատ
Դիվատար - ուղտի տեր
Դիվեր - ներքև
Դիք - զառիվեր, բարձունք, բլրակ

Դնարած - հորթարած
Դոդի - խրտվիլակ
Դոզալմիշ հնիլ (անըլ) - նշան բռնել
Դոզբադոզ - ուղղահայաց
Դոզլամա - հարթավայրային
Դոլաբ - սենյակի պատի մեջ պատրաստված պահարան
Դոխ - աղավնի, վառեկ
Դոխտոր - բժիշկ
Դոմբի - թմբուկ, դհոլ
Դոն (դոնըմ) - անգամ
Դոշ (սարեն) – 1. լանջ (սարի), 2. կուրծք
Դոստ - բարեկամ
Դովր - ժամանակ
Դովրիբարեն (դովրըբարեն) - շրջակաև (շրջակայք), միջավայր
Դորագյ - կավե ամաև՝ ջուր խմելու համար
Դուզ - ուղիղ, ճիշտ
Դուզբադուզ - ճշմարտապես
Դուզգյունի - ուղիղ, շիտակ
Դուլ - այրի
Դուլգար - հյուսն
Դումջակ - դուռռում, թարմ լավաշի մեջ փաթաթած պանիր կամ այլ ուտելիք
Դույուղ ընել (դույող ընել) - տեղեկացնել, հայտնել
Դունյա - աշխարհ
Դուշկուն – 1. հյուծված, 2. մտատանջ
Դուշման - թշնամի
Դուրք - դուռ
Դուքյան - 1. արհեստանոց, խանութ

Ե

Եթիմ -որբ
Եթիմխանա - որբանոց
Եթկեն - հետևի
Եխտ - կեղտ
Եկաչի - չի եկել
Եղ - յուղ
Եղան հերենջ -.եղնիկի՝ երրորդ տարվա մեջ մտած էգ հորթ
Եղնը - եղնիկ
Եմիշ - սեխ
Եշի - նայի
Եռնանց - վերևից
Եսիր (եսսիր) - գերի
Ետ ա ինգյալ - հետ է ընկել
Ետ արի - հետ արի
Ետեք - անցյալ
Ետիտը - հետո
Ետտոր - հետ տուր
Ետ կալալ (կանալ) - դադարել
Ետնատոր - հացաթխում մի քանի օրվա համար
Երբայեր - տեղնուտեղը, դռնեդուռ ընկնել
Երե - վրա
Եր-եմիշ - զանազան մրգեր
Երէ - խոտակեր կենդանի
Երի - մորթված կենդանու առջևի ոտքերի վերին մասը
Երի անըլ - կրակել
Երիննան-դուրան -տեղից ելնողը, վեր կացողը
Երիշ (երիշավ) - քայլք
Եր կալ - վերցրու
Եր կաց - վեր կաց
Եքքա - ահագին, մեծ

Զ

Զադ - որևէ բան
Զալըմ - կատաղի
Զախ տոլ - շպրտել, նետել
Զախրա - թույն
Զահլան տանիլ - զզվեցնել, հոգնեցնել
Զաղզ - ծամոն
Զամբ - 1. Զրաղացի քարի շուրջը թմբածև շեղջված ալյուր
2. քամուց կուտակված ծյան հաստ շերտ
Զանդ - այն, ինչ ավելացվում է կշռված ապրանքի վրա՝ քաշը լրացնելու համար, լիքաշ
Զարբ - թափ, ուժ, հարված
Զարգար, զարգյար - ոսկերիչ
Զարդա - հացահատիկ՝ բարձր որակի ցորեն

Ջարզանդ - սարսափ, վախ
Ջարզանդել - սաստիկ վախենալ
Ջափռա - չոռուցավ (չոռուցավ ուտես), զահրումար
Ջեմքուչ - զոքանչ
Ջըխկի - չոռուցավ
Ջըխկուն - զահրումար
Ջըկըռնը - զկեռ
Ջըհար - թույն
Ջըռզառուտ (զիռզառուտ) - ծաղկավոր, նախշուն, գույնզգույն
Ջինգիլակ - զանգակ
Ջիսկեղեն - զարդեր
Ջիրզամբի - ներքնատուն
Ջխկի - ժլատ
Ջհարլամիշ արըլ - թունավորել
Ջնազու (կամ ջնազու, կամ ջնաչու) - պատգարակ
Ջոռավ - մի կերպ, ուժով
Ջորբաթոն - ուժով
Ջուլում - աղետ, դժբախտություն

է
էլ - համայնք
էլիգյանա - համայնքային
էլմ (էլմավ) - մի կերպ
էծու փի - այծի ճրագու
էհդիբար (էհթիբար, էյթիբար) - հավատ, վստահություն
էմարաթ - տե՛ս ամարաթ
էյբ - պակասություն, արատ
էյլամ տալ - հայտարարություն տալ
էքյուց - վաղը
էքսի - հաջորդ օրը

ը
Ըլուրատոն - ջրաղացի ալրատուն, ջրաղացի քարի առջև փայտյա կամ քարե ավազան, որտեղ լցվում է աղացած ալյուրը
Ըխտիյար - ծեր
Ըծիլ - նվագել
Ըկանաըլ - հաշվել, տեղակել, ստուգել, հետաքրքրվել
Ըղան (ըղղան) - որջ
Ըղըքսակ - աղի տոպրակ
Ըմարաթ - տե՛ս ամարաթ
Ըմնեք - ամանեղեն
Ըմռնամոտ - ամառնամուտ
Ընդուր - նրան
Ընջուկ - տե՛ս անջուկ
Ըշկըդիրած - սիրած, աչքադրած
Ըշկըհոլունք - աչքաուլունք
Ըշքըհոպի - ննջել
Ըշտեղ - որտեղ
Ըռազի - գոհ, բավական
Ըռանգ - գույն, երանգ
Ըռըխ - երախ, բերան
Ըռըհաթի - ծագար
Ըռըշվաթ - կաշառք
Ըռհսկի գյոլ - համարձակվել
Ըռհաթ - պատրույգ
Ըռշկին - առաջ
Ըռջնակ - առաջնեկ
Ըստաքան - բաժակ
Ըրակու -երեկո
Ըրթավա - թեյնիկ
Ըրկե - երեկ
Ըրկոմինջին -երկրորդ
Ըրկոնաց - երեկոյան
Ըրկոքան - երկուսով
Ըրտվա - տե՛ս ըրթավա

թ
Թաբարզա - քաղցրահամ, քաղցրակորիզ ծիրանի տեսակ
Թաբարզու - դահճի կացին
Թաբեհ - ենթակա որևէ մեկին
Թադարիք (թադարեք) – պատրաստություն
Թազա (թազզա) – նոր
Թազնած – պառկած, շնթռկած
Թաթման – ձեռնոց
Թալա (թիլա) – 1.թակարդ, 2. բացատ
Թալաքա - փոքր
Թալաքյա - հասարակ
Թալվար – սաղարթախիտ, դալար

Թալվոր – 1. այգում փայտից պատրաստած տնակ, 2. խաղողի թարմա
Թախտ (թաքավորեն) - գահ
Թախտաջաև – հարթակ
Թակիլ - ծեծել
Թահրը (թահրավ) - կերպը, ձևը
Թահրեն – կարգին, տեղը տեղին
Թաղըր – մարգեր
Թամահ – 1. աչքածակություն, 2. կարոտ մնացած
Թամահ արըլ - ագահություն անել, ձգտել ունենալ
Թամամ – ողջ, ամբողջ, բոլոր, բովանդակ
Թամամ դըռնալ (թամամել) – լրանալ
Թամարզլու –կարոտած
Թամբահ – պատվեր
Թամբահ ընել – հանձնարարել, ապսպրել, լուր ուղարկել
Թամիզեթուն – մաքրություն
Թամուզ - մաքուր
Թայա տված - դիզած
Թայդաշ – ընկերակից, մեկի թայը լինել, դառնալ
Թայդի - անմիջապես, արագ, վռազ, շտապ
Թայ-թուշ – շրջապատ
Թաջր (թաջիր) – վաճառական
Թառլան ղուշ – չքնաղ, գեղեցիկ թռչուն
Թասիբ - պատիվ, հարգանք, ինքնասիրություն
Թավադ - կալվածատեր
Թարազու դըռնալ – հավասարակշռությունը պահել
Թարափ - կողմ
Թարգ (թարգը տալ) - որևէ արարքի, սովորության վերջ տալ
Թարիփ ըրիլ - գովել, մեծարել
Թացան – կաթնամթերք
Թափան – որովայնի թաղանթը, աղիքը, ստամոքս
Թափանչա - ատրճանակ, հրազեն
Թափշուր ընել - պատվիրել, հանձնարարել, պարտավորեցնել
Թափշուրմա - հանձնարարություն
Թաք (մի) – մի հատ
Թաք-թաքբիր – մեկ, մեկ-մեկ
Թաքա տված - դիզած
Թաքլա - միայն թե
Թաքյա - նոխազ
Թեխյա (թեխիա) - ամբողջը, բոլորը, լրիվ
Թեղ - (ցորենի) - դեզ, հարդախառն ցորենի դեզ
Թեյփա - 1. տոհմ, համայնք, 2. խմբավորում, կողմնակցություն
Թերատ – կիսատ
Թըխսըկան – թուխս, թխսկան
Թըռփոշացած – 1. երեխայական շրջանից անցած, մեծացած, հասունացած, 2. հարստացած, 3. թփակալած, փարթամացած (բույսերի մասին)
Թըվըր –թևեր
Թըրըրը – ցողունները
Թըփըռ - փետուր
Թիաթավ - կամաց-կամաց
Թիլիսիմ – կախարդանք, թալիսման
Թիման - դրամական միավոր, պարսկական ոսկեդրամ
Թիմարիլ - անասունների մարմինները ձեռքով կամ խոզանակով շփելը, շոյել
Թիմիշա արըլ - նայել, դիտել
Թինգիտարե - ծանր, բանկության ու սովի տարի
Թինգինափաս – ծանրաշունչ
Թինգյանուց – բանկարժեք
Թինջորա (թինջիրա) – պղնձե ափսե, պնակ
Թիվանգ (թվանգ) – հրացան, զենք
Թիվր – տե՛ս թըվըր
Թիրափ - կողմ
Թիքա (մի) – կտոր, պատառ
Թիքյա-թիքյա - կտոր-կտոր

Թխիլ – խփել, հարվածել
Թոզաղան - փոշու ամպ
Թոթխան – կիսատ մնացած ցանկութուն, անմուրազ
Թոլ ըլել - գլորվել
Թոլի-թավաքի - տե՛ս թուլի-թավաքի
Թոխմախ – մեծ մուրճ
Թոխտ - գիր, նամակ, թուղթ
Թոխուր (թոխր)– քլունգաձև գյուղատնտեսական գործիք
Թոհմաթ տալ – հանդիմանել, նախատել
Թողբ - մառախուղ, թուխպ
Թոռ – 1. անձրև, 2. ուռկան
Թորբա - գործած տոպրակ
Թռսխա - ծաղր
Թրմածք – մնացորդ
Թութի ղուշ - թութակ
Թութուն – ծխախոտ
Թուլի-թավաքի - միամիտ, խեղճ, աշխարհից անտեղյակ
Թուլուղ – հորթի կամ այծի մորթուց պատրաստված խնոցի, տիկ
Թուխրիլ – հերկել, փորել
Թուշ – 1. այտ, 2. ուղիղ, ուղղակի
Թուշուրթմիշ անել – վիճակվել
Թուռնըտոռ – թոնրատուն
Թուռութաց - անձրևային
Թուռ ու թողբ (թըռըթողբ) - անձրևային, ամպամած օր
Թուրակ – կաքավի նման թռչուն
Թուրուն (թոռնը) – թոնիր

ժ

ժանջիլ – շղթա
ժին – ժանիք, ատամ
ժանգյալ – կանաչեղեն, վայրի բույս
ժեշտ – թիթեղ
ժըմայեմ – իրիկնամուտ
ժընգըռնած - բարկացած, թթված. խոժոռված

Ի

Իգիթ – քաջ, կտրիճ
Իզ - հետք
Իլալ ա - եղել է
Իլած-չիլած - եղած-չեղած
Իլբիհալ – իսկույն, անմիջապես
Իլլաջ – 1. հնարավորություն, 2. միջոց, ճար, 3. ուժ, կարողություն
Ինդի - այնպես
Ինձակմաև – ինձնից բացի
Իննադ ինգնիլ – հակառակվել, կամակորություն անել, համառել
Ինջիմիշ իլած (դըռած) – հոգնած
Ինջիմիշ արիլ – նեղացնել
Ինսան – մարդ
Իշտահ - ախորժակ
Իջարա - կապալ
Իս - ես
Իս հիդամ - ես ի՞նչ գիտեմ
Իսդար – 1. այսքան, 2. անտեղի
Իստի - այսպես
Իտուց - դրանց
Իրան արթակ – մաքուր, անխառն
Իրբիթավք – հմայիլ
Իրգյուջի – իրիկնադեմ
Իրգյուջի լալ – իրականություն է, իրողություն
Իրինճակ - արեգակ
Իրիս - երես, դեմք
Իրկիշտ – տգեղ,
Իրփիվերի – որբևայրի
Իրք (իրըք) - երեք
Իրքմինջին - երրորդ

L

Լաբլաբի - բոված սիսեռ
Լազաթ - բավականություն, հաճույք, համ
Լազաթ արալ – հաճույք, բավականություն ստանալ
Լազգի – լեզգի (ազգություն)
Լալ, լալեգ - համր
Լալա մեհրի - կակաչ, սիրելի
Լակ – 1. շներին տրվող ուտելիք, 2. փչացած ձու
Լակլակ – 1. արագիլի կլթացնելու ձայնի անվանում, 2. արագիլ
Լակուտ – շան թուլա
Լամ – 1. լինդ, 2. ծնոտ

Լամփաշ - գեր, անգործունյա, դանդաղաշարժ
Լայաղ – վայել, արժանի
Լանգյար - երկար ծող, որ օգտագործվում է ծառից ընկույզ թափելու նպատակով
Լաշ (լեշ) - դիակ
Լառ - երկարահասակ
Լառի – մեծ, խոշոր, մարմնեղ
Լաստ (արխաջե) – ցանկապատի հորիզոնական փայտ
Լափ - 1. բոլորովին, լրիվ, 2. շանը տրվող ջրիկ ճաշ
Լափա - մանրած սիսեռ, չամիչ՝ փլավի վրա դնելու համար
Լեղ ըրիլ (ընել) – շտապել
Լեց – լաց
Լըլ - տիղմ
Լինջիլ - ննջել
Լոթիյանա - համարձակ
Լողտի – 1. ագահ, 2. բոյով, նիհար տղամարդ
Լոպպազ - պարծենկոտ
Լոք տալ – ցատկել
Լպրաստակ – նապաստակ
Լութ - աղքատ, չունևոր, տկլոր
Լուլա - փող (հրացանի)
Լուծ-ալաթ - արոր, գութան
Լուկտան – սանձ
Լուսինգյա (լուսլոնգյա) – լուսին

Խ

Խազ - խակ, չհասած
Խազալ – 1. չոր տերևներ, 2. եղնիկ
Խազինա (խազնա) - գանձ, գանձարան
Խաթալու – վտանգավոր
Խաթր (պայմանեն խաթր, խաթրու) – պայմանի պատճառով, պատճառով
Խալխ – ժողովուրդ
Խալվաթ տեղ - մեկուսի տեղ
Խամ - անփորձ
Խամբար - եգիպտացորեն
Խայ – միամիտ
Խային – նախանձ, նենգ, չար
Խանդաթ - բնական կամ արհեստական երկար ու խոր փոս
Խանըմ (խանում) – տիկին
Խանծուղ - փայտածուխ
Խաշիլ - փոխինձից կամ բոված ալյուրից պատրաստված թանձր ճաշ
Խաջիլ (խաջալաթ) - ամոթով
Խասյաթ - բնավորություն
Խարաբա - ավերակ
Խարաբալը - ավերակ
Խարակ – 1. ժայռ, քարաժայռ, 2. հերկած արտի մեջ չհերկված հողակտոր
Խարար – կարպետից կամ գորգից պատրաստված պարկ, որի մեջ ցորեն են լցնում
Խարջիլ – ծախսել, մսխել
Խափիլատու –խաբեբա
Խեժնը – առաջին կաթը
Խզակոթ (խըզակոթ) – վզակոթ
Խըզըկըտոր – ծաղիկ հասակում մահացած
Խըլազնը – մողես
Խըլըղ – վերնազգեստ, հագուստ, արխալուղ
Խըլըշած – ուշադրությունը լարած, ականջները սրած
Խըռեք տալ – քշել, հալածել
Խըռվասունք – խորովելու սունկ, գետնասունկ
Խթմաթ արիլ – ծառայել
Խիլի - ահագին
Խիյալ արող – մտածող
Խիչակ - երկծյուղ փայտյա ծող, որն իբրև նեցուկ դրվում է մրգատու ծառերի տակ
Խիտմար – ծառայություն
Խիտմար անիլ – ծառայել
Խլաս ըրիլ (անել) – տեղավորել
Խլշկոտալ – վախից անհանգիստ այս ու այն կողմ նայել, անհանգիստ շարժումներ անել
Խյալ ըրիս (ընիլ) – մտածել
Խոխա - երեխա
Խոխատար - երեխատեր

Խոնախա - 1. հյուրին դիմելու հարգալից ձև Ղարադաղում, 2. ծանոթ, բարեկամ
Խոնջան – վարտիքի, անդրավարտիքի կապ
Խոշը գյոլ - դուր գալ, հավանել
Խոռնը - ուրց
Խոռհնը կապել – խուրձ կապել
Խոտորու (խուտուրու) ինգյած – պառկած
Խրեգ - քիչ
Խրխմնած - փարթամացած (խոտ)
Խուդոժնիկ- նկարիչ
Խուզավըրս – վարազի որս
Խումար (խոմար) – հուզված, տխուր
Խումար ա դըռնալիս – տխրում է
Խուտհարեն – խոտ քաղելու գործիք
Խուտուրու – հենց այնպես, իզուր, աննշան բան

Ծ

Ծեգ - արևածագ, լուսաբաց
Ծըռըպտող – ծառի պտուղ, միրգ, բար
Ծհան – ծայրը կռիկով երկաթե ծող՝ թոնրից հացը հանելու համար, ակիշ, թաթակիշ
Ծմակ - անտառ
Ծմըթկան – նոր ծննդաբերած կին
Ծնեփուկ – ծնեբեկ
Ծուկի տալ – պահմտոցի խաղալ

Կ

Կազ - մետաքսի թել
Կավ – կով
Կավչնի (կավիչնի) – չկա
Կեռեք – ատամ
Կզնվալ (կզնվիլ) – ջղայնանալ, զայրանալ, բարկանալ
Կըծկեծոն (կեծակ) – կայծակ
Կըծկեծուն տալ - փայլատակել
Կընըչկարմուր – ծիածան
Կըռըքնե - ատամներ
Կիծըքար – կայծքար
Կլզնչալ – մլավել
Կլպոնծի - գլուխկոնծի
Կլվնջուլիս – մլավելիս
Կհանա - տերտեր
Կման - բացի
Կոզնը – ոզնի
Կոխլ կանալ – ըմբշամարտել
Կոկլեգ - կոկիկ
Կոմբալ քար – խոշոր, բութ
Կոպուր - ծյուռ
Կործ – կուրծք
Կորմիտ ընել – կերակրել
Կռմռ (կըռմըռ) – ծուռումուռ, կեռ-մեռ
Կռոզնե - կորիզներ
Կրկկալած – վառված ածուխ
Կուճի - փոքր

Հ

Հաբաթ - աբեթ
Հաբգյա - ուսախուրջին, ճամփորդական փոքր խուրջին
Հագի – պոչ, ագի
Հագյվեն պտոկ – պոչի ծայրը
Հադաթ (հադատ) - անտեղի բան, իզուր
Հադար բեն - ավելորդ բան
Հազր – պատրաստ, պատրաստի
Հազրի գյոլ - գլխի ընկնել
Հաթաթա - սպառնալիք
Հալա - դեռևս, դեռ
Հալալ – 1. հարազատ, 2. մաքուր
Հալավ - զգեստ, հագուստ, շապիկ, ներքնաշապիկ
Հալբաթ - գուցե, երևի
Համամ - բաղնիք
Համան (համին) – նույն
Համիլ – սովոր
Համիլ դըռնալ – ընտելանալ, սովորել
Համոթ - ամոթ
Համփա - 1. տնտեսություն, 2. հարուստ, ունևոր
Հայաթ (հիյաթ) - բակ
Հանաքավարի – կատակով
Հանաքչի – կատակասեր

Հաչա (հըչոմ) – 1. խեչակ, 2. երկճյուղ, ծառի երկու ճյուղերի միացման տեղ
Հաջաթ - գործիք
Հառն (հառհն) – հարս
Հասաբալ(յ)ի սանադքար - ասենք թե, ենթադրենք
Հասար – պարիսպ, ցանկապատ
Հասիլիլ – մշակել
Հասրաթ – կարոտ
Հավա - եղանակ
Հավասու հետե - հաճույքի համար
Հարամզադա - խարդախ, նենգավոր, սրիկա մարդու որդի
Հարամի - ավազակ
Հարբա գյոլ – սպառնալ
Հարչաև – մինչև, ինչքան, որքան
Հափուռ - բուռ
Հաքիմ – 1. բժիշկ, 2. իմաստուն, գիտնական, 3. դատավոր
Հաքրօղլի –հորաքրոջ որդի
Հեյվան - անասուն, կենդանի
Հետե (ինձ) – համար (ինձ)
Հերս (հըրս) - զայրույթ
Հզետկեն (հզեդեգ) - զատիկ (քրիստոնեական տոն)
Հըզրվել (հազրվել) – պատրաստվել
Հըներակ - երանի
Հիբ (հիբի) - երբ
Հիլիլի - հայելի
Հիլիյ ընել – հալեցնել
Հիլիվր - ալևոր, ծերունի
Հինդամ – ինչ իմանամ
Հղե - ճանապարհ
Հղող –ուղեղ
Հմնչիլ - ամաչել
Հյուրդավ - երդիկով
Հնգրոտենք – ընկերներ
Հնգյուստնե - հանգստարան, գերեզմանոց
Հոլ – ուլ
Հոլիգ - տնակ, փոքրիկ հյուղակ այգիներում և բանջարանոցներում
Հոռե ծառ – ուռենի
Հորեգ -ուրագ
Հոքմ (հոքմը) – հրաման, կարգադրություն
Հոքմաթ – իշխանություն
Հոնատար – հարսի տեր
Հոնքատար – հարսանիքի տեր
Հսաբ արլ (հսսաբ ընել) - հաշվի առնել, հաշվել
Հու - ով
Հուլուրիլ – շրջել
Հուն - հոն
Հունարավ – շնորհքով
Հունչոր (հունչուր) – ինչպիսի, ինչպես
Հուշիյար - ուշիմ
Հուջաթ – պարտամուրհակ, սպառնալիք
Հուջոլ (հուջիլ, հուջուլ) – ոջիլ
Հուջում անել – հարձակվել, հակառակվել, սպառնալ
Հուր – ում
Հուր հետե - ում համար
Հուրդ - երդիկ
Հուրմաթ – պատիվ
Հուրմաթ տալ –պատիվ տալ

Ձ

Ձըրքըարկան (ձըրքըըրկան, ձըրքըրկնե) - ձեռքի երկանք
Ձըրքըյալլխ - թաշկինակ

Ղ

Ղաբուլ ընիլ - համաձայնվել
Ղադաղա - արգելք
Ղադաք - թավիշ, մահուդ
Ղազիլ - այծի մազ
Ղազիլու նաևե - այծի մազից
Ղաթ - 1. արանք, 2. շերտ
Ղալա - բերդ
Ղալաթ - սխալ
Ղալաթ արըլ - սխալվել
Ղալամ - գրիչ, վրձին
Ղալը - կեղծ, խարդախ
Ղալիբ - կաղապար
Ղալին – 1. բավականին, շատ, 2. խիտ, հաստ

Ղալմաղալ (ղլմղալ, ղլմըղալ) - աղմուկ-աղաղակ
Ղալյան (ղլյան) - ծխափող, նարգիլե
Ղամա - սուր
Ղամիշ - եղեգ
Ղամշի - մտրակ
Ղայդա - դրվածք, ձև, եղանակ
Ղայիմ - պինդ, ամուր, հաստատուն
Ղայիշ - կաշվե գոտի, կաշեփոկ
Ղանավուզ - մետաքսե կտոր
Ղանդ - գլուխ շաքար
Ղանդոր - տեղյակ
Ղանդուր արըլ - տեղյակ պահել
Ղանթար - 1. ծանրություն, 2. մեծ կշեռք
Ղանչաք ընել - աղաչել
Ղաշանգ - գեղեցիկ
Ղաշղա - սպիտակ նշանով, պիծակավոր
Ղասաբ - մսագործ
Ղասիդ (ղասեդ) - սուրհանդակ, լրաբեր, նամակատար, 2. ցրիչ, . դիտավորյալ
Ղավըխ (ղավլըխ) - աբեթ
Ղարաչի – 1. ազգություն, որ ապրել է Ղարադաղում, 2. ուզվոր, աներես
Ղարավաշ - սպասուհի, աղախին, տնային ծառա
Ղարավուլ - պահապան, պահակ
Ղարիբեթուն- օտարություն
Ղափազ (ղփազ) - վանդակ
Ղափաղ (գյլխեն) - կափարիչ
Ղափլան - վագր
Ղդղա արըլ - արգելել
Ղեյրաթ - պատիվ, հեղինակություն
Ղեյրաթի ա ինիլիս – պատիվ է տալիս
Ղզլղուշ - ոսկե թռչուն
Ղզղան - կաթսա
Ջըզըլբաշ – կարմիր գլխարկավոր
Ղըրզախ - արագ
Ղըրղի - բազե
Ղթարը - չափը, նորման
Ղթար ընիլ - շարվել
Ղիդա - խաղողի հյութ
Ղիմար (ղիյմար) - արժեք
Ղիմիշ չի ըրիլիս - ափսոսում է
Ղիյամաթ - սառնամանիք
Ղիյմար ընել - արժեքավորել
Ղմիշոտ - եղեգնուտ
Ղոլ - կողմ
Ղոնախլըղ - հյուրասիրություն
Ղոնաղ (ղունաղ) - հյուր
Ղոնեգ - աղավնի
Ղոշուն (ղոշոմ) - զորք, բանակ
Ղոշունքյաշլըղա (ղոշունքյաշլըղ ա ըրիս) - զորահավաք, զորքերի կուտակում, տեղաշարժում
Ղոչ - խոյ
Ղորող - արգելված հանդամաս՝ արածելու համար
Ղորողչի - հանդապահ, արգելանոցի հսկիչ
Ղոչաղ - քաջ
Ղորթ (ղորթ ա) - ճիշտ, ճշմարիտ
Ղորմա (ղորմի) – ողորմի
Ղորփուր - հորեղբայր
Ղռան - պարսկական արծաթյա դրամ (1/10 թուման)
Ղսմաթ - հաջողություն, բախտ
Ղսմաթ դըռալ - վիճակվել, արժանանալ
Ղվաթ (ղվաթի) - ուժ, ուժեղ, ֆիզիկապես կարող
Ղրաղ - եզր
Ղուզի - անջրդի, արևահայաց անջուր տեղ
Ղուզղուն - արծիվ, անգղ
Ղութի - սնդուկ, արկղ, տուփ
Ղում - ավազ
Ղումարբազեթուն - խաղամոլություն, թղթախաղի մոլություն
Ղումրի - տատրակ
Ղունաղատոն - հյուրատուն, հյուրանոց
Ղունլուղ ընել - ծառայություն մատուցել
Ղունղօթախ - հյուրասենյակ
Ղուշ - թռչուն
Ղուրբան - մատաղ
Ղուրթավ - իրոք

Ղուրի - մի բան գաղտնի թռցնել, գողանալ

Ճ

Ճապկե - ամուր բնափայտով թուփ, որից պատրաստում էին ճիպոտ և մահակ
Ճար-մադար չօնենալ - հնար, միջոց չունենալ
Ճըղըպորի - ընկուզենի
Ճիճեխիլ - ջախջախել
Ճղոպուր - ընկույզ
Ճոթ (ճոթ անըլ) - կտոր (կիսել)
Ճոնդ - 1. անկյուն, 2. ծայր
Ճվարան - կողով
Ճուբեղեն - կտորեղեն

Մ

Մագյար - միթե
Մադան - հանքախորշ, քարհանք
Մադար - միակ
Մազալու - հետաքրքիր
Մաթալ - զարմացած
Մաթալ մնալ - 1. շվարել, շվարած մնալ, զարմանալ, 2. հիանալ
Մալլա (մոլա, մոլլա) - մահմեդական հոգևորական
Մախե քոլ - եղևնի
Մախլող (մախլուղ) - ժողովուրդ
Մախուսան - դիտավորյալ
Մահանա - պատճառ
Մահլա - թաղամաս
Մայդան (մադյան) - էգ ձի, մատակ
Ման - չափի միավոր, հավասար է 5 կգ
Մանի - 1. պատճառ, 2. գաղտնիք
Մանշուր արալ - նշան անել, երևալ
Մաշ - լոբու տեսակ
Մաշա - 1. կրակխառնիչ, 2. ունելի
Մաշկը - մեջք
Մաջալ (միջալ) - ժամանակ, միջոց
Մաջլիս (հռհնքեն) - հարսանեկան հանդես
Մասալա - առակ, խոսք
Մասլահաթ - խորհուրդ
Մասիլ - հացահատիկի բերք
Մասխարա - կատակ, ծեռք առնել
Մասխարաչի - կատակասեր
Մավիս - շվար
Մարալ - եղնիկ
Մարդիմազար - չար, վատ կամեցող
Մարիփաթ - շնորհք
Մարջ - գրազ
Մեհքար - ծիապաս
Մեյդանչոմը - հրապարակում
Մեյըդ - դիակ
Մըղիբ - մութ
Մընընը գիծել - մտաբերել, հիշել
Միդոնա - միանգամից
Միզար (մեզար) - սփռոց, հացի փոքր սփռոց
Մի թաք - միակ
Մինի-մինի - մեկ առ մեկ
Մինջա (մինչա) - միայն
Մինջատըղս - մեջտեղը
Միսի ջամ - պղնձե աման
Միալ (մահալ)- գավառ
Միեգ - հիմա
Միեգուց - այժմյան
Միետ - մի անգամ
Մղափուն - ափսոս
Մղդուսի - մահտեսի
Մղրաճանջ - մեղու
Մշառ (մաշառ, մշառավ) - սղոց
Մշտլղչի - կանխագուշակ, լավ լուր, աչքալուսանք բերող
Մոհլաթ - ժամանակ, հնարավորություն
Մոհրը - կնիք
Մութրաբ - ծաղրածու, գնչու
Մուզդ - աշխատավարձ, օրավարձ
Մուլայ - անտարբեր
Մուլի-շուլի ըրել - ալարել, ժամանակ անց կացնել

Յ

Յաբախտ - 1. դիպվածով, 2. պատահական, 3. հույսը բախտի վրա դնել
Յաբան - ամայի
Յադ - օտար

Յալանչեթուն - ծաղրածություն
Յալլխ (յայլխ) - թաշկինակ, գլխաշոր
Յամաջ տեղ - թեք, զառիթափ
Յանի - թերևս, գուցե
Յավա - բերանբաց
Յարա - վերք
Յարաբ - արդյոք
Յարիքար դըռնը - օժանդակել
Յերբայեր - տեղնուտեղը
Յըղե - հղի
Յիհարիլ - թամբել
Յիշել (յիշիս) - նայել
Յոլայաթր - համերաշխ
Յուլաղ - արահետ
Յուրդատեղ - անասունների ամառանոցատեղ
Յուրդաքոռու այալ - տնավեր
Յուրղան - վերմակ

Ն

Նադան - անչափահաս
Նադինջեթուն - անհանգստություն
Նազըր (նազիր) - պալատական գլխավոր խորհրդական
Նալի - անալի
Նախկա (օղձ) - վիշապ
Նախշուտ - սիրուն, գեղեցիկ
Նախոշ գյոլ - դուր գալ
Նախոշը կգյո - դուր կգա
Նաղդ - կանխիկ
Նաղլ - հեքիաթ, պատմություն
Նաղլ արըլ - պատմել
Նահանգ (նհանգ) - հսկա
Նահլաթ - անեծք
Նամաթ - բարիք
Նամություն - խոնավություն
Նամուս - պատիվ
Նասիաթ տալ - կտակել
Նասիյաթ (նազիյաթ) - խրատ, խորհուրդ
Նասլ - ցեղ
Նարդիվան - աստիճան, սանդուղք
Նափաս - շունչ
Նեննի - ճոճ
Նեստե կնալ - կպչել մի բանի
Նեստի տալ - խփել, հարվածել, նետել
Ներակ (ներակ տալ) - երանի (երանի տալ)
Նիգյարան - անհանգիստ, մտահոգված, թևաթափ, հուսահատ
Նիյաթ - նպատակ
Նիշանգյահ - հիշատակ
Նի վեչ գյո - չկպչի
Նհախ (նահախ) - իզուր
Նհետ (հնձ) - (հնձ) հետ
Նյաթ - տե՛ս նիյաթ
Նոթ - նավթ
Նոքյար - ծառա

Շ

Շագիրդ - աշակերտ
Շախկա ընել - կիսել
Շահի - պարսկական մանրադրամ (ղռանի 1/20 մասը)
Շամ - մոմ
Շառ - փորձանք
Շառափ - տեղատարափ անձրև
Շատ սորուն - շատ լավ
Շարիք - ընկեր
Շարիք բեն - ընկերովի գործ
Շարիք ընել - ընկերացնել
Շափաղ-շափաղ (շափըղ-շափաղ) - շողշողուն
Շաքիլ - նկար
Շաքյա - կասկածանք
Շենբաշեն - գյուղեգյուղ
Շըխ հնգիլ - շտապել
Շիլա - կարմիր կտավ
Շինամաչ - գյուղամեջ
Շինացե - գյուղացի
Շինիթկընը - գյուղեր
Շիքյաստ - հաշմանդամ (փխբ.)
Շլլաղ - մտրակ
Շխոր ընգիլ - աղմուկ-աղաղակ ընկնել
Շհադ - ջրաղացում աղալու վարձ
Շհադալ - աղունավարձ
Շհար - քաղաք
Շյաք - տե՛ս շաքյա

Շոխկ - ճառագայթ, շող
Շոհրաթ - սովորույթ
Շոռ գյոլ - ման գալ, փնտրել, շրջել
Շտակըլ (մաջլիսը) - դասավորել, սպասարկել հանդեսը, հավաքույթը
Շրըղնե - եզերք (գետի)
Շուլուղչի - կատակասեր
Շունքփադ - շեմափայտ
Շուքավըր - ստվերախիտ

Չ

Չագյուչ - մուրճ
Չաթո (չաթու) - պարան, չվան
Չալ - գույնզգույն, խատուտիկ, պուտ-պուտ
Չալիգ - ծեռնափայտ
Չալըշմիշ ինալ - չարչարվել
Չալղաթ - շղարշ
Չալղուն - ծյունախառն բուք
Չախկու - գրպանի փոքր դանակ
Չամչիգ (չամչուգ) - շերեփ
Չայ - թեյ
Չայչիխանա - թեյարան
Չանգիր - ճանկեր
Չավուշչենքյ - մունետիկներ
Չատտամիշ ինի - պայթի
Չարազեղեն - աղանդեր
Չափ - շիլ
Չափպուլ - զույգ
Չափուջ (չաբուջ) - մեկից երկու տարեկան ուլ
Չեշմագյ - ակնոց
Չըխմխքար - կայծքար
Չիլիմսըզգ - վտիտ
Չիման - խոտառատ խոնավ տարածք, մարգագետին
Չին - մանգաղ (ցորեն հնձելու)
Չինի (չանա) - ծնոտ
Չխարակ - ճախարակ
Չխմազ (խոսք) - անկապ, անիմաստ
Չմոշկ - կոշիկ
Չոլ - վայրի, ամայի տեղ, դաշտ
Չոլ-յաբան - ամայի
Չոլու - վայրի
Չոնբաղ (չոմբաղ) - մահակ
Չոռ - ցավ, հիվանդություն
Չորք - չորս
Չվալ - տե՛ս ջվալ
Չվան – պարան
Չուբող - ծխամորճ
Չուլուտ - անմարդաբնակ դաշտ
Չումբղ - տե՛ս չոնբաղ
Չուրաթան – չորաթան

Պ

Պառակ տեղ (պըռըկնե) - արեգունի, հարավահայաց
Պատառ - մի քիչ
Պատրուն - կեսրար
Պարղաճ - բաղարճ, բլիթ
Պաք - պաս
Պզան - սուլիչ
Պըլ - հիմար, գիժ, խենթ
Պընգըլ - հանելուկ
Պընդ - սաստիկ
Պընդըն ա գյոլիս (պընդը գյոլ) - սաստիկ նեղվել
Պըրըվաթոխտ - բարևագիր, նամակ
Պըրպոճակ - գառան, ուլի մորթուց պատրաստված պարկ
Պըրտկել - տեղավորել, թաքցնել
Պըտըռհան - պատի մեջ արված խորշ, պահարան
Պըտրուն - տե՛ս պատրուն
Պիզ - սուր
Պիզ թիրափավ - սուր կողմով
Պիճեթուն - խորամանկություն, ստորություն
Պլանալ - գժվել
Պղոճ - բզեզ
Պոզ (պուզ) - եղջյուր
Պտռոց (ընել) - քջուջ (անել)
Պուպու - ընկույզի միջուկ

Ջ

Ջադիդ - կրոնափոխված
Ջադու - կախարդ
Ջադուբազ - կախարդ
Ջալդ - արագ
Ջալլադ - դահիճ
Ջահդա հղե - մայրուղի

Ջամ - գավաթ, պղնձե փոքր աման
Ջամդաք - մարմին
Ջամիաթ - ժողովուրդ
Ջան - 1. մարմին, 2. հոգի
Ջանգալոթ - անանցանելի մացառուտ, թավուտ
Ջառ գիցիլ - հայտարարություն տալ, վիճակ գցել
Ջարգին - շարքով
Ջարմա - 1. տուգանք, 2. նեղություն, գլխացավանք
Ջըլկվըր - ջուլհակի մանածագործական հաստոց
Ջիգյար - 1. թոքն ու լյարդը միասին, 2. սիրտ
Ջին-ջանավար - վայրի գազան, գազաններ
Ջինս - ցեղ
Ջիհալ (ջիհիլ) - հանդիպել, հանդիպում
Ջլավ - սանձ
Ջհանդամ - դժոխք
Ջհեզ - օժիտ
Ջոզ - շրջան, շրջանագիծ
Ջմաթ - մարդ
Ջյալդ - արագավազ
Ջոխտ (ջողխթ) - զույգ
Ջոնդըր - ծայրեր
Ջվալ - մեծ պարկ
Ջուբ - գրպան
Ջուկուցըրի - առանձնացրի, ջոկեցի
Ջուղաբ - պատասխան
Ջուղաբ տալ - պատասխանել

Ռ

Ռանգ - գույն
Ռանգը-ռուշ - դեմքի արտահայտություն
Ռանգսաղեթուն - ներկարարություն
Ռայաթ - ճորտ, հպատակ գյուղացի
Ռաշպար - հողագործ, աշխատավոր

Ս

Սաբաբ - միջնորդ, որևէ բանի պատճառ
Սաբիր - փոշտոց
Սաբիր գյոլ - փոշտալ
Սաբութ անել - ապացուցել
Սադդեն (սադը) - սահման
Սազ գյոլ - համաձայնության գալ
Սալամաթ - անխաթար, ամբողջական, ողջ
Սալղա (սալղեն) - խնամքով
Սախս - ապակեղեն
Սակուլեգ - ողորկ
Սաղ - ողջ, կենդանի, առողջ
Սաղլամ - ամբողջը, ամբողջական
Սամքը գիծալ - հարմարեցնել
Սայաղ - զգույշ, զգոն
Սայաղ կանալ - աչալուրջ լինել
Սանադ(ը) - արհեստ
Սանադքար - արհեստավոր
Սապոգ - երկարաճիտ կոշիկ
Սապուն - օճառ
Սաս - ծայն
Սավադ - ուսում
Սարին - հով
Սարինքյան - հովին
Սաքյու - առանձին նստատեղ թոնրատանը
Սեյր ընել - զբոսնել
Սըզընը - սեզնը
Սընդերք (սանդերք) - բուրդ գզելու գործիք
Սըփաթ, սիփաթ - տեսք, դեմք
Սըփառհնած - գունատված
Սիլիթա - անամոթ, աներես
Սիլլա - ապտակ
Սիմավար - ինքնաեռ
Սիվքա - սկիզբ, նախ, նախապես
Սիչիմ - բարակ պարան
Սհաբա - խեր
Սհաթ (էտ սհաթեն) - ժամ, ժամանակ
Սհաթտա - անմիջապես, նույն րոպեին
Սնղչի - ոսկրաբույժ
Սոհբաթ - զրույց
Սողան (սողնը) - սոխ
Սոն - սյուն

Սոնգսըզ (սոնգսազ, սոնքսզ) - չբեր, անզավակ
Սորաշըղա արըլ - հարցուփորձ անել, հետաքրքրվել
Սորին - լավ, կարգին, հավաք, սիրուն
Սվավըղ - սևահող
Սվըտավար - խոշոր եղջերավոր անասուն
Սուզունքու - ծանծաղուտ
Սուտանա - սատանա
Սուրու - հոտ

Վ

Վաքան - հայրենիք, երկիր
Վալադ - տեղյակ
Վախտ - ժամանակ
Վահդա - ժամանակ
Վառիգ - 1. հավի էգ ճուտ, 2. նոր ածել սկսող հավ
Վառնուրթ (վարնուրտ) - հողը հերկող, վարող, հողագործ, երկրագործ
Վասիյա - կտակ
Վասյա ըրիս (ընել) - կտակել
Վարավուրդ ընել - նկատել
Վարգյան ընել - զբոսնել
Վըղ (վըղեն) - հող
Վընըծանդր լալ - հղի լինել
Վըննասաս - ոտքի ծայն (ոտնաձայն)
Վըննը - ոտք
Վըռհնը - որդ
Վըսկե - ոսկի
Վըսկեքյաքյուլ - ոսկեմազ, ոսկեծամ
Վըտընա - ոտքը դեմ տալ, պահանջել
Վըտվըտալ - տրտնջալ
Վըր -1. որ, 2. հոր
Վըրթը - հորթ
Վըրթըվեր - վարդավառ
Վըրծակ - աքաղաղ
Վըրսկնեթուն - որսորդություն
Վթվթել - հոտոտել
Վիզանունք - վզնոց, մանյակ
Վիրուննի - վայրի
Վիրուննի հըյվընե - վայրի կենդանիներ

Տ

Տալիրքիներ - ափսեներ
Տակո - արմատ
Տավար - խոշոր և մանր եղջերավոր անասուններ
Տեպեգ - ոտաբոբիկ
Տընկըռե - արմատ
Տըղեր - անկողին
Տըղորմա - տերողորմյա
Տընազ - ծաղր
Տկըլվազի (տկլվազի) ընել - մերկացնել
Տկռհան ընել - արմատախիլ անել
Տղատըռնը - տղատիրոջ
Տնատըռնը - տանտերը
Տռըզած - ուռած
Տվրատար - տավարի, անասունի տեր
Տուզնը - սոված
Տուլաշ - աներես

Ց

Ցաքե - փշե թուփ
Ցընկատ (ցակատ) - հատող գործիք (ցաքի հատելու գործիք)
Ցիյնել (ցիյնած) – շան ծնել (ծնած)

ՈՒ

Ուբե (օբա) - սարի ամառանոցային ժամանակավոր բնակավայր
Ուդոր - դրա
Ուլխացալ - ուրախացել
Ուլուզանալ - հիվանդանալ
Ութախ - սենյակ
Ուլախ – լծկան անասուն
Ումուդ - հույս
Ումուդ կապիլ – հույս դնել
Ուշունց - հայհոյանք, հիշոց
Ուշունք - աշուն
Ուջաղ - օջախ
Ուռնատ - առնետ

Ուռուզ - օրվա ապրուստ, ապրուստի միջոց, սննդամթերք
Ուռուջահ - առաջ
Ուռուսխաք - թույլտվություն, իրավունք
Ուրգյուջի - իրիկնամուտ
Ուրթում(ն) - երդում
Ուրկկնե - երկուս
Ուրկուշափտի - երկուշաբթի

Փ

Փալա (փալայով) - ինքնասարք լաստ, տիկերով սարքած լաստ
Փալանգ-բալասի - վագրի ծագ
Փալանդուզ - համետ կարող, թամբագործ
Փահլա - օրավարձով բանվոր
Փայ - բաժին
Փայ-փայ ընել - բաժանել
Փայ-փուշկ անըլ - բաժանել
Փայդա - օգուտ
Փանդ - ձև, գաղտնիք, հնարք
Փանդ-փել - հնարք
Փանդալ - հնարամիտ
Փանջարա - լուսամուտ, պատուհան
Փառակ (փռակ) - փեշ, քղանցք
Փառաջա - վերնազգեստ, փարաջա
Փառիգ - հավի ճուտ
Փարդա - 1. վարագույր, 2. թաղանթ
Փարե կընալ - չարչարվել
Փարզ (բեն ա) - 1. շտապ, 2.. կարևոր
Փարման (փարման տալ) - հրաման, հրամայել
Փարվազ ընիս - թռչել, թռիչք կատարել, ճախրել, շուրջը պտույտ գալ
Փարց (խոսք) - խիստ կարևոր
Փափաղ - գլխարկ
Փեհն (փեյին) - գոմաղբ
Փեհինլղ - աղբանոց
Փեհինվընղ - աղբային հող
Փեյղամբար - մարգարե
Փեշակ (փիշակ) - արհեստ
Փեշկիր - գոգնոց
Փեշքյաշ - նվեր, ընծա
Փեչադ - կնիք
Փեքյարա - գզիր
Փիադա - ոտքով, հետիոտն
Փիալա (փիյալա) - պղնձե աման, փոքր թաս
Փիթելա - պատրույգ
Փիլինքան - աստիճան
Փինըհան արըլ - ոչնչացնել
Փիչիտիլ - կնքել
Փիս - վատ
Փլան - այսինչ կամ այնինչ
Փկընծկոռ - բանալու փականքի անցքը
Փղաղընլ - գզվռտել, քլոլել
Փոթ (փոթ ա դիրալ) - պակասություն, արատ
Փոխան - ներքնաշոր, ոտաշոր
Փող - աղբանոց
Փոնծա - չափի միավոր
Փոշման - ափսոսանք, զղջում
Փոր - պակասություն
Փորսող - գորշուկ
Փսոր - աղբ

Ք

Քամահար - քամոտ, զով
Քաշ - ագռավ
Քաշկ - քաջք
Քավթառ - ծեր (անարգ.)
Քարժանգ - կարիճ
Քեչա - թաղիք
Քընշաթողը - մեգ, ցածր ամպ, մառախուղ
Քընշկափոխ - սատանափոխ դարձած
Քթընվեր - կոթավոր, թավա
Քիչիվալ - կճպել
Քիչիվնե - ծվի կճեպներ
Քիսա - քսակ
Քիրահավ - վարձով
Քիրահ ընել - վարձակալել
Քիրվա - 1. հայի և մահմեդականի բարեկամություն, 2. քավոր

Քյալագ - փորձանք, օյին
Քյալանքըվ - գերանդի
Քյալլա - գլուխ, գանգ
Քյալլա տալ - դիմադրել
Քյալմա (մի) խոսք - մի բերան, մի խոսք, հարուստ, ծանր
Քյաղը (քյաղեր) - ծմեռանոց
Քյանդիրբազեթոն - լարախաղացություն
Քյասադ - պակաս, կիսատ
Քյասար - կարճ
Քյավշան (քիվշան, քավշան) - դաշտ, տարածք
Քյար - օգուտ
Քյափուր - գազան, փխբ. անողորմ
Քյոլ(ը) - մոխիր
Քյոլոգն - քլունգ
Քյոհնա - հին
Քյոհնա լուսլոնգան - լիալուսին
Քյոմագ - օգնություն
Քյոմիր - փայտի ածուխ
Քյոնազ - կոպիտ, կամակոր
Քյոնազեթուն - կոպտություն
Քյոռուղ քաշիլ - նեղություն կրել
Քյոք - գեր
Քյութոլ (քիթոլ) - գդալ
Քյուլաշ - ցողուն, ծղոտ
Քյուլփաթ - ընտանիք
Քյուի - փչոց, սուտ
Քյուիչի – ստախոս, փչող, քամի անող,
Քյունջ - անկյուն
Քյունջ-պուճախ - անկյուններ
Քյուչա - փողոց
Քյուռ - խուլ
Քնդոկ - սա ղարադաղցիների բնակարանի այն մասն է, որտեղ տեղավորված է հացահատիկի և ալյուրի պահեստը
Քոլ (ցաքե քոլ) - 1. անտառ, 2. թուփ, փշե թուփ
Քող - պարան
Քոն իլած - քնած
Քոռուփեշման (քոռըփեշման) - լրիվ փոշմանած, զղջացած
Քշանաց - գիշերահաս, առավոտ վաղ
Քշկոռ գծիլ - կապ գցել
Քռնքած - քրտնած
Քրըտակ - քարանձավ, քարայր
Քուլաղ - արահետ
Քուլուտակ - անտառամերձ տարածք
Քուշտ (քուշտավ, քուշտեն) - մոտ, մոտով

O

Օբա սարքալ - վրաններ սարքել, ամառանոցային ժամանակավոր բնակավայր
Օդդղ չի տալիս - հանգիստ չի տալիս
Օթախ - սենյակ
Օլում (օլոմ) - մահ
Օխտըմինջին - յոթերորդ
Օղծ - օձ
Օղուլ - որդյակ, զավակիկ, տարիքով փոքրին դիմելու ձև
Օճռոք - առաստաղ
Օմբիր - կյանք
Օյաղ - կայտառ, արթուն, սրամիտ
Օյինբազեթուն- խեղկատակություն
Օյմա - 1. կանացի հագուստի եզր, 2. շրջազգեստ
Օյն - փորձանք
Օշ - ուշքը
Օշնակ (յեղեն) - պուլիկ, կավե կճուճ
Օսսը - ուսը
Օրբաօր - օրեցօր
Օրեշ - ուրիշ

РЕЗЮМЕ

Материал сборника "Армяне Карадага", кн.2, "Фольклор" записан собирателем-фольклористом, по происхождению карадахцем, Оганесом Овсепяном в 1941 - 1946 гг. в более чем 10 селах Карадагского района, а после исхода в 1946 г. оттуда армян - в 1984 - 1989 гг., от обосновавшихся в Баку, Ереване, Капане, Горисе, Чаренцаване армян-карадахцев.

Армяне Карадага в течение веков жили в селах правобережной области среднего течения реки Аракс, в северной части Ирана. Среди них бытовал своеобразный диалект, который по своим грамматическим особенностям и словарному запасу занимал среднее положение между диалектами Мегри и Карабаха.

Собиратель с соотвествующими комментариями представляет информацию о бытовании фольклорных материалов, первоисточниках, о значимости путях передачи от поколения к поколению. Эта информация, безусловно, займет свое достойное место в истории армянской фольклористики. В сборник включены волшебные и бытовые сказки - местные варианты известных как в других историко-этнографических областях Армении, так и в фольклоре соседних народов.

Сборник имеет научно-познавательное и историческое значение. Своей самобытностью, содержанию местных особенностей и колорита, стилевому, языковому своеобразию сборник может быть полезен не только фольклористам, этнографам, диалектологам, но и для исследовательских работ других, смежных отраслей науки , а по неповторимости художественной прелести - широкому кругу читателей.

SUMMARY

The materials of the collection «The Folk Arts of Karadagh» are recorded by the folklorist Ohanes Hovsepyan. Being by origin from Karadagh, he worked in over 10 villages of Karadagh during 1941-1946. After Armenians' emigration from Karadagh, Hovsepyan continued his work in 1984-1989 among those of them who have settled in Baku, Yerevan, Kapan, Goris, Charentsavan.

During many centuries the villages of the right bank of Arax in the North Iran were populated by Armenians. Their "Karadagh" dialect by its grammatical features and lexicon has occupied a middle position between the Armenian dialects of Meghri and Karabagh.

In corresponding commentaries, the collector provides information on the existence of folklore materials, their sources and the importance of its communication from one generation to another. This information will undoubtedly take its worthy place in the history of Armenian folklore studies. For example, the fairy-tales and the tales of everyday life are the local variants of those known from other historical-ethnographical regions of Armenia, as well as from folklore of neighbouring peoples.

The collection has academic and cognitive significance. By its originality, both in contents and style this collection would be useful for specialists of folklore, ethnography, dialectology and other disciplines, and by its fascination – for a wide circle of readers.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 7

ԲԱՆԱՀԱՎԱՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ 13

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 17
Հրաշապատում հեքիաթներ 17
1 (1). ՀԱԶԱՐԱՆ ԲՈՒԼԲՈՒԼԸ 17
2 (2). ՎԸՍԿԵՔՅԱՔՈՒԼ ՏՂԱՆ 24
3 (3). ԶՄՐՈՒԽՏ ՊՈՒՇԸ 33
4 (4). ՀՐԵՂԵՆ ՁԻՆ 40
5 (5). ՄՂՈՂՈՍՈՆ ՆԱՊԼԸ 44
6 (6). ՈՒԽԱՅԸ 56
7 (7). ՆԱԽՐՁՈՒՆ ԱՂՋԻԿԸ 62
8 (8). ԽՈՐԹ ՄԱՐԸ 64
9 (9). ՀԱՑԸ ՀՈ՞Ւ ՎԱ ՏԱԼԻՍ 71
10 (10). ՔԱՇԿԵՐԵՆ ԴՎԱՆԸ 76
11 (11). ԽՈՍՔ ՇԱԽՈՒՊ ԴԱՐՎԻՇԸ 80
12 (12). ՏՎՐԱՇԵՆ ԱԽՐԸ 83
13 (13). ՎՐՍԿԱՆԵՆ ԲԱԽՏԸ 89
14 (14). ԿՈՒՌՆԵՐԸ ԿՏՐԱՇ ԱՂՋԻԿԸ 93
15 (15). ԹԻԼԵՆ ԿՇԵԳԸ 100
16 (16). ԱՍԼԱՆ-ՂԸՌԱՍԼԱՆ 103
17 (17). ԲԱԽՏԻՅԱՐԸ 108
18 (18). ՆԱԽՇՈՒՏ ՀԱՌՆԸ 115
19 (19). ԷՐԿՈՒ ՀՆԳԵՐԸ 121
20 (20). ԳԻՐԱՇԸ ԻՆԱ ՉԻ ՃԻՆՋԻ 128
21 (21). ԱՐԱԶԸ ԿԱՊԱՐՎԱԼ Ա 130
22 (22). ՕԽՏԸ ԱԽՊԵՐ, ՄԻ ՔՈՒՐԸ 135
23 (23). ԱՂՋԻԿՅԸ ՀՈ՞ՒՐ ԿԸՀԱՍՆԻ 138
24 (24). ԵՂՆԸ ԱՂՋԻԿՅ 142
25 (25). ՓԱՆԴԱԼ ԳՅՈՒՔԻ 147

Իրապատում հեքիաթներ 152
1 (26). ՋՈՒԼՀԱԿԸ 152
2 (27). ԱՆՎԱԽՏ ՊՈՒ-ՊՈՒ ԿԱՆՉՈՒՂ ՊՈՒՇԸ 154
3 (28). ՆՈՔՅԱՐԸ ԴԸՌԱԼ Ա ԱՂԱ 158
4 (29). ՀԱԼԱԼ ԿԹՆԱԿԵՐԸ 165

5 (30). ՅԱՄԱՆ ԿՆԵԳԸ 168
6 (31). ԳՅԼԽՅԱՎԵՆ ՃԱՐԸ 172
7 (32). ԲԱԽՏԵՆ ՇՈՌ ԵԿՈՒՂԸ 175
8 (33). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԹԱՆԳ ԲԵՆԸ 179
9 (34). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԹԱՆԳ ԲԵՆԸ (*տարբերակ*) 181
10 (35). ԻՐԱՆ ԼՈՒՋՎԱՎԸ ԹԱԼԱ ՅԱ ԻՆԳՅԱԼ 182
11 (36). ԱՐԹԱՐ ՓԱՓԱՂԸ 185
12 (37). ՊԸՆԳԼԸ ՃԱՐԱԼ Ա ՀԱՌՆԸ 188
13 (38). ՄՈՒՍԻ ԴԵՐ Ա ԴԸՌԱԾ 190
14 (39). ՔԱՇԿԵՆ ՓԱՆՂԸ ՊԵՏՔԻ Ա ԵԿԱԼ 192
15 (40). ԻՐՔ ՀԱՓՈՒՌ ՎԸՂԸ 196
16 (41). ԱՇԽԱՐՔԸ ՄԻ ՓԻԼԻՆՔՅԱՆ Ա 199
17 (42). ԹԱՔԱՎԵՐԵՆ ԴԱՎԱՆ 202
18 (43). ԱՇԽԱՐՔԵՆ ՆԱՆԵ ԱՆԿՈՇՏԸ 205
19 (44). ՄՏԱՆՈՒՆ ՕՆԴՐԵԹՈՆԸ 207
20 (45). ԴԱՅԻՆ ՆԱ ԲԱՋՕՂԼԻՆ 208
21 (46). ԻՐԸՔ ԱԽՊՈՒՐԸ. ԷՐԿՈՒ ՓԱՅ 212
22 (47). ՉՈՐԱՆԸ ԴԸՌԱԼ Ա ԹԱՔԱՎՈՐԵՆ ՎԱՋԻՐԸ 220
23 (48). ԹԱՔԱՎՈՐԵՆ ՂՈՂԸ 224
24 (49). ՔՅՈՆԱՋ ՔՅՈՒԽՎԱՆ ՆԱ ՀԱՔԻՄ ՆԱԽԸՐՉԻՆ 226
25 (50). ՊԱՐԻԿԵՆԹԱՆԸ 227
26 (51). ԷՐԿՈՒ ԵԹԻՄ ԱԽՊՈՒՐՑԸ ԲԱԽՏԸ 230
27 (52). ՔԱՋ ՆԱՋԱՐԸ 232
28 (53). ԹԱՔԱՎՈՐԸ ՄԱՆՑԱԼ Ա ԽԱՋԻԼ 236
29 (54). ԻՄԱՍՏՈՒՆ ԿՆԵԳՅԸ 238
30 (55). ԽՐԱՏ ՏՎՈՂԵՆ ԼՍՈՂ Ա ՊԵՏՔ 241
31 (56). ԹԱՔԱՎՈՐԵՆ ԱՆՋՈՒԿԸ 243
32 (57). ԱՐԹԱՐ ՀԱՔԻՄԸ 245
33 (58). ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՆԵԳԸ 247

Պատմական անձինք 249
1 (59). ՇԱՀ ԱԲԲԱՍԵ ՊՈՋՐ ՕՆԻ 249
2 (60). ՇԱՀ ԱԲԲԱՍԵ ԱԼԼԱՀՎԵՐԴԻ ԽԱՆ ՎԱՋԻՐԸ 250
3 (61). ՏՎԸՐԱԾԵՆ ԱՂՉԻԳԸ 253
4 (62). ՇԱՀԸ ՀՈՔՄԸ ԵՏ Ա ԵՐ ԿԱԼԱԼ 255
5 (63). ՄԱՐԹԵՆ ԻՇՏԱՀԸ 258
6 (64). ԱԼԼԱՀՎԵՐԴԻ ԽԱՆԵ ԿՆԱՆԵՆՔԸ 259
7 (65). ՀՈՌԵ ՕԱՌՐԸ ՇԱԴԱՐՆ ԴԸՌԱԼ 262
8 (66). ԱՐՈՒՆԸ ՆՇԱՆՑ ԿՏԱ 263
9 (67). ՆԱԽՐՉՈՒՆ ԽԸԼՔԸ 264

10 (68). ԽՈՒՄԱՐ ՄԱՐԹԸ 265
11 (69). ՀՂՑԻՆ ՄԱՉԵՆ ՔԱՐԸ ԿՈՐԱԼ Ա 266

Կենդանական հեքիաթներ 268
1 (70). ՂՐՂԱՂԵՆ ԳՅՈՒԼԸ 268
2 (71). ՄԱՐԹՆ ՆԱ ՕՂՋԸ 271
3 (72). ՄԱՐԹՆ ՆԱ ՕՂՋԸ (*տարբերակ*) 273
4 (73). ՓԱԼԱՆԳՆ ՆԱ ԿԱՏՈՒՆ 274
5 (74). ՇԻՆԱՑՈՒՆ ՆԱ ԱՐՋԵՆ ՇԱՐԻՔԵԹՈՒՆԸ 276
6 (75). ՇԱՆԸ ՆԱ ՈՒՍՏԱ ԿԱՏԸՎԵՆ ՆԱՂԸԼԸ 277
7 (76). ԱՂՎԵՍԵՆ ՆԱ ՕՂՋԵՆ ՀՆԳՐԵԹՈՒՆԸ 279
8 (77). ՔԱՇԵՆ ԽՐԱՏԸ 279
9 (78). ԼՊՐՍՏԱԿԵՆ ՆԱՆԵ ՎԱԽՈՒՂԸ ԿԱ 280
10 (79). ՄԻՇՏ ՈՒՄՈՒՂՏ ՔԻ ԵՐԵ ՊԱՀԻ 280
11 (80). ՂՈՒՇԵՆ ՎԱԹԱՆԸ 281
12 (81). ՊՍՊՂԱՆ ՀՈԼՈՆՔԸ 281
13 (82). ՇԸՏԵՆ ԳՅՈՒԼԲՔՆԵՆ 282
14 (83). ԷՇԵՆ ԽԸԼՔԸ 282
15 (84). ՓԻԼԱՆԳԵՆ ԽԸԼՔԸ 283
16 (85). ԿՈՋՆԵՆ ՆԱ ԼՊՐՍՏԱԿԵՆ ՄԱՐՋԸ 283
17 (86). ԱՄԵՆԱՆԱԽՇՈՒՏ ՃՈՏԸ 284
18 (87). ՉՂՋԻԿԸ ՄԱՆՑԱԼ Ա ԱՋԱՏ 284
19 (88). ԱՍԼԱՆԵՆ ՃԱՐԸ ԱՂՎԵՍԸ ՃԱՐԱԼ Ա 285
20 (89). ՇՈՒԿՆԵՆ ՆԱ ՔԻՐԺԱՆԳԵՆ ԽԱՍԻԱԹԸ 286
21 (90). ՄՈԿՆԸ ԱՍԼԱՆԵՆ ՊԵՏՔԻ Ա ԵԿԱԼ 286
22 (91). ԳՅՈՒԼԵ ՆԱ ՂՈՒՋՂՈՒՆԵՆ ՄԱՐՋԸ 287

Մանկական հեքիաթներ 288
1 (92). ՇԱՏ ԳԻԴ ԱՂՎԵՍԸ 288
2 (93). ՄԱՐԱՆԸ 289
3 (94). ԿՈՒՃԻ ՄՈԿՆԸ 290
4 (95). ԽԱՓԼԱՆ ԱՂՎԵՍԸ 291
5 (96). ԳՅՈՂ ԱՐՋԸ 292
6 (97). ԸՇԽԱՐՔԵՆ ՈՒՄՄՈՒՆՈՑ ՈՒԺԵՂԸ 293
7 (98). ՉԱԼ ՀԱՎԵՆ ՆԱՂԼԸ 295
8 (99). ԻՐԻՆՆԱԿՆ ՆԱ ԼՈՒՍԼՈՆԳԱՆ 297
9 (100). ՇԸՏԵՆ ՆԱՂԼԸ 297
10 (101). ՋՂԱՑՊԱՆԸ ԹԱՔԱՎԵՐ Ա ՂԸՈԱԼ 299
11 (102). ՎԸՍԿԵ ՋՈՒՆ 301
12 (103). ՄՂՐԱՃԱՆՋՆ ՆԱ ՂՈՒՄՐԻՆ 302

Զրույցներ 303
1 (104). ԿՈՒճԻ ԲԵՆԻՑ՝ ՄԵՇ ԲԵՆ 303
2 (105). ԽՆՁՈՐԸ ԳՅԱՆՔ Ա ՏՎԱԼ 305
3 (106). ՎԽԻՍՄ ԻՆՁ ԱԼ ՏԱՆՆ 306
4 (107). ԳԵՆՑԱԼ Ա ԻՆԱ ՉԻ ԱՍԻ 308
5 (108). ՄԻ ՀԱՓՈՒՌ, ԿԵՍ ՀԱՓՈՒՌ 310
6 (109). ՄԻ ԿՈԼԱ ՁՈՒՐԸ 312
7 (110). ՉՈԲԱՆՆ ՈՒ ՆԿԱՐԻՉԸ 313
8 (111). ԿՆԳԱ ԽՈՍԿԸ 314
9 (112). ՏԱՆԸ ԿՈՇՐԸ ՀԱՑԵ ՅԱ 316
10 (113). ՄԸՇ ԱԽՊԵՐ, ԱՂՎԵՍ ԱԽՊԵՐ, ՁՈՒՌՆԱՉԻ ԱԽՊԵՐ 316
11 (114). ՎԸՐԸ ԼԱԼ ՏՂԱՆ, ՎԸՐԸ ԼԱԼ ՔԱՇԿԸ 317
12 (115). ԼԱԼԵԳ ՀԱՌՀՆԸ 320
13 (116). ԱՌԱՆՑ ՀՈՒՆԳ ՅՈՒՍՏՆԵ ՇԻՀԱՐԸ 321
14 (117). ՀԻԼԻՎԻՐԸ ՀԻ՞ՆՉ Ա ԱՍԱԼ ՉԻԱՎՈՐՆՈՒՆ 323
15 (118). ԽՆՁՈՐԸ ՓՍՈՐԱՎ ՇԱԽՈՒՂԸ 324
16 (119). ՊՈԱՎԵՆ ՂԱՆԱՆ 325
17 (120). ՀՈՒ ՎԵՐ ԷՇ, ԻՄ՝ ՓԱԼԱՆ 326
18 (121). ՔԱՌԸ, ՔՈՌԸ, ՉՈԼԱԽԸ 326
19 (122). ԷՇԵՆ ՀԱԳԻՆ ԿՏՐԱՉՆ 327
20 (123). ԻՍ ՄԻ ԱՍԼԱՆ, ԴՈՒ ՄԻ ԱՍԼԱՆ ԲԱԼԱ 327
21 (124). ԲԱՋԱՂ ՀԱՌՀՆԸ 328
22 (125). ԲՌՈՒՇՆԻ ՓԱՂԵՆ ՁՈՐՈՒԹՈՒՆԸ 329
23 (126). ՓԱՂԵ ԱՄԱՆԸ 330
24 (127). ԱՐՁԵՆ ԽՐԱՏԸ 331
25 (128). ՀԵՆԳ ՓԱՓԱՂ ՄԻ ՄՈՐԹՈՒՑ 331
26 (129). ՉՈՒԲԱՆԵՆ ՀՐՍԱՆԵՔՆ ԿԱՆՉԱԼ 332
27 (130). ԱՆՄԸ ՓՈԽԱԼՆ 333
28 (131). ԱԽՊՈՒՐԸ ՍԸՐՏԸ 333
29 (132). ՔԱՆԴԻԼԸ՝ ՔԱՆԴԻԼ Ա 334
30 (133). ԷՐԿՈՒ ՁՈՒ 334
31 (134). ՊԱՐՏՔՍՄ ՏԱԼԻՍ 335
32 (135). ՕՄԵՆ ՕՐ ԻՄ ՕՐԸ ԷՍ Ա 335
33 (136). ԳՅՈՂԵՆ ՁՈՒՌՆԵՆ ՍԱՍԸ 336
34 (137). ՁՂՑՊԱՆԵՆ ՕՂՈՐՄԻՆ 336
35 (138). ՏԸՂԵՆ ՁՈՒՂԱԲ 337
36 (139). ՎԸՍԿԵՆ ԱԼԼԱ ՄԱՆՑԱԼ Ա ԱՆՏԵՐ 337
37 (140). ՄԻՆԸ՝ ՇԻՆԻԼԱՎ, ՄԻՆԸ՝ ՔՆԴԻԼԱՎ 338
38 (141). ՆԱՆԱՆ ԼՈՌՆ ՈՒՏԻ 338
39 (142). ԴՈՒ ՇՎԵՆ ԱՇԱԼՍ 339

40 (143). ՎԸՂԵՆ ՔՂՑՐԵԹՈՒՆԸ 339
41 (144). ԴԵՐԵՆ ՄՐՈՔԸ 340
42 (145). ՔՅՈՒԽՎԵՆ ՓՈԽԱՆԸ 341
43 (146). ՉՈՒԲԱՆԵՆ ՓԱՓԱՂԸ 342
44 (147). ՈՒՏԵՆ ԲԵՂԵՆ ԵՂԸ 342
45 (148). ՔԱՐ ՏՈՐ, ՑԸԽ ՏՈՐ 343
46 (149). ԹԱՔԱՎԵՐԵՆ ՉԻ ՕՆՈՒՂԸ 343
47 (150). ԳԻՂԱՑԱԼՄ ԹԱՔԱՎԵՐԸ ՋՈՐԹՈՒՆ Ա 344
48 (151). ՍԱՋԸ 345
49 (152). ՋՈՒՌՆԱՆ 345
50 (153). ՋՂԱՑԵՆ ՋՈՒՐԸ-ՋՈՒՐԸ 346
51 (154). ՔՅՈՀՆԱ ԼՈՒՍԼՈՆԳԱՆ 346
52 (155). ՉԻԱՆԸ ԹՈՐԲԱՆ 347
53 (156). ԷՇԵՆ ՋՈՆ 348
54 (157). ՄԻՆԸ ԳԻՂԱԼԻՍ Ա, ՄԻՆԸ ԳԻՂԱԼԻՍ ՉԻ 349
55 (158). ՃՂՈՒՊՈՒՐԵՆ ԾԱՌԸ 349
56 (159). ՄՈԹԱԼԸ 350
57 (160). ՄՂԱՓՈՒՆ ԲՈՒԽԱՐԻՆ ԾՈՌ Ա 350
58 (161). ԼՈՒՋԻՆ 351
59 (162). ՄՈԿԱՆԸ ՃԱՐԸ 352
60 (163). ՇԱԴԱԹ ԾԱՌԸ 352
61 (164). ԱՇԽԱՐՔԵՆ ՄԱՐԹԿԱՆՑ ԷՀՈՒԲԱՐԸ 353
62 (165). ԷՐԿՈՒՍԵՆ ՄԻՆԸ 354
63 (166). ՋԽԿԻ ԱՂԱՆ, ԽԵԼՈՒՆՔ ԾԱՌԱՆ 355
64 (167). ՊԱՊԱ, ՎԽԻԼԻՍՄ 356
65 (168). ՔՅՈՆԱՋ ԷԾՐԸ 356
66 (169). ՀԱՄԱՎ ՃԱՇԸ 357
67 (170). ԿՏԱՂԱԾ ԿԱՑԵՆԸ 357
68 (171). ԱՉՔԵՆ ՃԱՐԸ 358
69 (172). ՎԸՏՐԸ ՋԻՐՈՄՆ Ա 358
70 (173). ՄԱՐԵԳՆ ՆԱՆ ՔԱՄԵՆ 359
71 (174). ՈՒԹԱՆԱՍՈՒՆԵՆ ՆԱՆԵ Ա 360
72 (175). ԱՍՏՈՒԾ ԹԱԿԻ ԹԱՅԳԻ ԲԵՆԸ 360
73 (176). ՑԽԻՎԻԼԵՆ ՕԺԸ 361
74 (177). ԽԱՉԻՆԱՆ ՃԱՐԱԼՆ 361
75 (178). ՂՎԱԹՈՒՆ ՆԱՆԵ ՂՎԱԹԻՆ ԱԼ ԿԱ 362
76 (179). ՉԵՇՄԱԳԸ 362
77 (180). ՉՈՔԱՆ ՆԱ ՍԱԽՍԵՆ 363
78 (181). ԹԱՔԱՎԵՐԵՆ ՀԵՏԵ ՏՈՆՆ ՇԻՆԱԼ 363
79 (182). ՋԻՆ ՀՈ՞Ր ՓՈՂԱՎՍ ԿԱԼԱԾ 364

80 (183). ԼՈՒՍԱՎ ԿԼԸՑՐՄ ՔՈ ԱՄԲԱՐԸ 365
81 (184). ՀՈՐԸ ՀԵՏԵ ՏՈՆՆ ՇԻՆԱԼ 366
82 (185). ԴՈՒ ԳԻՆԻ ՋԵՂԱՑԸ ՍԱՐՔԻ 367
83 (186). ՔԱՎԵՐ, ԻՆՁ ԻՇՏԱՀ ՉՕՆՄ 368
84 (187). ՔԹՈՑԸ ՏԱՐ ՊԱՀԻ ՊԵՏՔ ԿԳՅՈ 369
85 (188). ԼՈՒՍԼՈՒՆԳԻՆ ՍՈՒՆԸ 369
86 (189). ԷՍՕՐ ԱԼ ԸՆՔ ՎՆԱՍ ԱՐԱԼ 370
87 (190). ՔՇԱՆԱՑ ՇՈՒԴ ԵՐ ԿԱՑ ՝ ՆՊԱՏԱԿԵՏ ՀԱՍՆՍ 370
88 (191). ԴԵՐԸ ԳԵՆՑԱԼ Ա ԵՐՈՒՍԱՊԵՄ 371
89 (192). ԱՐՈՒՆԵՍ ՄԱՉԵՆ ԿԱՆՆԻ 372
90 (193). ՄԻ ԹԻՔԱ ՋԻԳԱՐՄ ՈՒՋԻՍ 372
91 (194). ՄՈՐ ՍԸՐՏԸ 373
92 (195). ԳՅՈԼ ՇԻՆԻ 374
93 (196). ԴԵՐԸ ՍՐՄԱՑՈՆ ՕՐՀՆԱԼ Ա 374
94 (197). ՇԱՏԱԿԵՐ ՀԱՌՀՆԸ 376
95 (198). ԹԵԳՈՒՆՔԸ 376
96 (199). ՇԱՆ ԹՈՒԼԱՆ 376
97 (200). ՀԱԼՎԱ ՅԸՄ ՈՒՋԻԼԻՍ 377
98 (201). ԱՇԿԸ 377

Իրապատում զրույցներ 379
1 (202). ՄԻ ՄԱՆԵԹԸ ՕՋԱ ՉԸՄ 379
2 (203). ՄԻ ԳՅՈՒՇ ԿՈՐԿԸ 379
3 (204). ԹԱՂՄԱՆ ԿԱՐՔԸ 381
4 (205). ՋԱՌՈՒ ՓԱՆԴԸ 382
5 (206). ՀԱՐՈՒԹԵ ԴԱՎԹԱՐԸ 383
6 (207). ՀԻ՞ՆՁ ՈՐ ԱՍՄ, ՄԻ ԲԵՆ ԱԼ ԴՈՒ ԿԻՎԻԼՑՐՄ 384
7 (208). ՄԸՐ ԾՐԵԳԸ ԸՆՑՐԱԼՆՔ 386
8 (209). ՉԻ՛, ՉԻ, ԻՍ ԱԼ ՉԻ 386
9 (210). ՄՈՒՐԱԴԵ ՄԱՍՆԸ 387
10 (211). ՉՈԲԱՆ ԽԱՉԻ ՄԱՍՆ Ա ԿԱԼԱԼ 388
11 (212). ԻՆԳՅԱԼ Ա ԳՅՈԼԸ, ԱԼ ԵԿԱ ՉԻ 389
12 (213). ՂՈՐԹ Ա, ՄԱՐԹ ԸՍ ՂԸՌԱԾ, ԷՇՈՒ ԽԱՍՅԱԹԸ ԹՈՂԱԾ ՉԸՍ 389
13 (214). ԴԵՐԸ ՍՈՒՓՐԱ ՅԱ ԲԵՑԻԼ ՏԸՎԱԼ 390
14 (215). ՊԱՀԱԾՄ՝ ԳԵՆԱՄ ՄՐԹԱՄԱՉ 392
15 (216). ՏԱՍԸ ՕՐՈՒՄԸ՝ ՈՒՍՏԱ 392
16 (217). ՓՈՂԵՆ ԱԽՐԸ 393
17 (218). ՏԱՔ ՋՈՒՐ ԳԵՆՑՈՒՂԸ 396
18 (219). ՄԱԿՈՒ ՆԱ ՋԱՌՈՒ ՆԱՂԼԸ 396
19 (220). ԲԵՉԱ ԲԱԼԻ 399

20 (221). ԴԱՍԻԴ ՊԸՏՐՈՒՍ 400
21 (222). ՍՈՆԱ ԲԻԲՈՒ ԳԵՆԳՅԱՏԸ 402
22 (223). ՄԱՐՋԱՆ ՋԻՋՈՒՆ ԽՐԱՏԸ 403
23 (224). ՄԵՐ ՇԵՆՄԸ ՄԻ ԲԵՆ ԿԱ 403
24 (225). ՆՈՒՇՈՒ ՏԵՂԸ՝ ՇՈՒՇԻ 404
25 (226). ՔՇԿԱՓՈՒՆ ԽՈՒԽԱՆ 406
26 (227). ԵՂԱՊԵՏ ԱԼ ԴԱՐԱՎԱԾ ՈՒՋԵՑԱ ՉԻ 408
27 (228). ՀԱՋԻ ԽԱՆ ՄԱՆՑԱԼ Ա ՄԱԹԱԼ 410
28 (229). ՄԱՆՑԻ ԱՊԵՐԸ ՉՈՒԽԱՆ ՃԱՐԱ ՉԻ 412
29 (230). ԴՈՎԻ ԴԱՅՈՒՆ ԼՊՐԱՍՏԱԿԸ 414
30 (231). ԿՈՔՎԸ ԿՈՔՎԵՆ ԵՐԵ 417
31 (232). ՍՈՆԱ ԳԻԼԵՅԸ ԹԱՐԳՅԱԼ Ա 418
32 (233). ՀՈՒՐՋԱՊԵ ԳՅԼԽԱՑԱՎԵՆ ՃԱՐԸ 420
33 (234). ԻՄ ՀԱՄՆ ԱԼ ՏԸՍԵՔ 422
34 (235). ՀԱՐՈՒԹ ԲԵԼՈՒՆ ՉԱԲՈՒՋՆԵՆ 422
35 (236). ԴՐԴՂԵՑԵՆ ՆԱ ԱՋԱՆԸ 424
36 (237). ԽՈՍՔԵՆ ԴՈՒՋԸ 424
37 (238). ՌՋԱ ԽԱՆ ՀԱՅ Ա ԴԸՌԱԼ 425
38 (239). ՄԱՇԱՊԻ ՕՌՈՒՋԻ ԳԵՆԳՅԱՏԸ 427
39 (240). ԲԱՔԻ ՇԵՅԹԱՆ ՇԻՀԱՐԻ ՕԼՈՒՓ 428
40 (241). ԴՎԵՐԸ՝ ՇԻԼԱ, ԴԻԵՐԸ՝ ԱԲԻ 429
41 (242). ԱԱԿՈՒՓՋԱՆԵ ՊԱՄԱՊՈՐԸ 430
42 (243). ԱԹԱ ԱՊՐՈՑ ՔԱՇԿՐԸ 430
43 (244). ԼՈՊՊԱՋ ՄԱՐԹԸ 431
44 (245). ՊՈՒԼՈՊԵՑԵ ՄԱԿԻ 431
45 (246). ԹՈՒՐՈՍ ԱՊՐՈՆ ՄՐՈՔԸ 432

ՋՎԱՐԵԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋՎԱՐԵԱԽՈՍՆԵՐ 434
1 (247). ԲԵՐ ԿԱՊԻ ԼՈՒՋՎԵՍ 434
2 (248). ԻՆՁ ԱԼ ՓԱՅ ՕՆՄ 434
3 (249). ՕԽՏԸ ԲԱՋԱՆԱՊՆԵՆ 435
4 (250). ՉՈՔԱՆ ՆԱ ՊՈՒՔՅԱՆՉԻՆ 435
5 (251). ՀՈ՞Ւ ԿԵՐԱՇ Ա ԲՐԻՆՁԱՎ ՓԼԱՎԸ 436
6 (252). ՀՈ՞ՒՐ ԷՇ Ա ՋԱԼՊ 436
7 (253). ԿՈՒՇԻ ԲԻԼԻԹԸ 437
8 (254). ՊԻՊԱՆ ՋՈՒՐ Ա ԴԸՌԱԼ 437
9 (255). ՄԱՆՑԱԼ Ա ԿՇԸՍ, ՊՈՒՍ ՕՆՍ 438
10 (256). ՔԱՁԱԼ ԽԱՉԻ ՈՒՌՈՒՍ Ա ԴԸՌԱՇ 438
11 (257). ՆԱԲԻ ՆԱ ԿԱԲԻ ՋԻՀԻԼԱՑԱԼՆ 440
12 (258). ԿԱՑՆԵՆ ՔՍԱԿԸ 441

13 (259). ՂՈՒՆԱՂԵՆ ՈՍՊԱՎ ՃԱՇՆ ՏՎԱԼ 441
14 (260). ՏՂԱՆ ԳԵՆՑԱԼ Ա ՆՇՆՇԱՏԸՍ 442
15 (261). ԱԿՈՒՓՋԱՆԵ ԳԵՆԳԱՏԸ 443
16 (212). ԿՈՐՎԸ ՅՈՒՐՂԱՆԵՆ ՀԵՏԵ ԼԱԼ 444
17 (263). ՄՈՒՐԱՂԵ ՀՈՒՋԱԹ ԿԱՐԹԻԼԸ 445
18 (264). ՄԻ ՉԱՄՉԻԳ ԻՍ ՇՈՒՂՄ ԿԵՐԱՇ 445
19 (265). ՃՂՈՊՈՒՐ ՕՏՂԸ ՃՈՒՂՈՒՊՈՐ ՕՏԻԼԸ
ՀԻՆՉՈ՞Ր ՂԱՂԱՂԱՆ ԱՆԻ 446
20 (266). ԹՈՒԹՈՒՆԵՆ ՄԱՆԻՆ ԳԻՂԱԼԱՑԱԼՆ 447
21 (267). ՔՅՈՒԽՎԵՆ ԱՐՏԸ ՇԱՇԿԱԼՆ 447
22 (268). ՄԵՂՔԸ ԴԵՐԵՆ ՄԱՍԱՆՆ ԼԱԼ 448
23 (269). ՏՀԱԼՆ ՎԱՐԱԼ 448
24 (270). ՂԵՎԻ ՆԱ ԿԵՎԻ 449
25 (271). ՇԱՏԸ ՀԱԼԱ ՆԱՅԵ ՇԻԼԸՄԱՆՄԸ 450
26 (272). ԱՌԱՋ ՎԸՆՆԱՎՐԸ ԿԵՐԵՔ 450
27 (273). ՀԱՄԱ ԽԱՓԱԼՄ Է՞... 451
28 (274). ՄԻՆԸ՝ ԻՍ 452
29 (275). ՔԱՐՈՋԻՉ ՆԱ ՂԶՂՆԱՏԱՐԸ 452
30 (276). ԱՍՏՈՒՇ ԿԱՆՉՈՒՂԸ 453
31 (277). ԱՍՏՈՒՇԵՆ ՆԱՆԵ ՓՈՂ ՕՋՈՒՂԸ 453

Պատառ ալ ծըծաղնք 455
32 (278). ՂՐՂԱՂԵՆ ԱՐՋՐԸ 455
33 (279). ԻՍ ՄԱՐԹՄ 455
34 (280). ԷՇԵՆ ՇԸՇԱՂԸ 455
35 (281). ԿՈՒՆԻ ԲԻԼԻԹԸ 456
36 (282). ԱՊՐԻԼ 456
37 (283). ԴԵՐԸ 456
38 (284). ԿՈՒՆԸԳԵՐԱՆԸ ՀԱՑԵ Ա 456
39 (285). ՏԵՂԵՆ ՊԱՏԱՍԽԱՆ 457
40 (286). ՊՈՒՂՈՒՍ-ՊԸՏՐՈՍ 457
41 (287). ԴՈՎՈՒ ՆԵՏԸ, ՄԱՆՑԱ ԵՍՏԸ 457

Ղարադաղի զվարճախոս Դովունց Ավու մասալները 458
42 (288). ԱՎԻ ՆԱ ԳԻՐՔԸ 458
43 (289). ԱՎԻ ՆԱ ՉԵՇՄԱԳՅԸ 458
44 (290). ՅԱ՝ ՄԱՇԿՄՍ, ՅԱ՝ ՓՈՐՄՍ 459
45 (291). ԱՎՈՒ ԹԱՑԱՆԸ 459
46 (292). ԱՎՈՒ ԿՌԸՎԸ ԷՇԵՆ ՆՀԵՏ 459
47 (293). ԱՎԻ ԽԵԼՈՒՆՔ ՎԸՐՍԱԿԱՆ 460

48 (294). ԱՎԻ ՏՔԱՑԱԼ Ա....460
49 (295). ԱՎԻ ՈՒԼԽԱՑԱԼ Ա, ՊԱՐ ԵԿԱԼ....461
50 (296). ԱՎԻ ՄԱՋԼԻՍ ՇՐԱԿՈՒՂ Ա ԴԸՌԱԼ....461
51 (297). ԱՎՈՒ ՓՍԱԿԱԼՆ, ՏՆԸՎԸՐԱԼ....462
52 (298). ԱՎՈՒ ՋԱՄԸ ՔԱՇԿՐԸ ՏՆԻՍՆ....463
53 (299). ԱՎԻ ԼՊՐԱՍՏԱԿ Ա ՓՌՆԱԼ....463
54 (300). ԱՎԻ ԹՈԹ Ա ԿԵՐԱԼ....464
55 (301). ԱՎԻ ԹՈԽՍ Ա ՆՍՏԻՍ....465
56 (302). ԱՎԻ ՑԵՑ ՔԱՐԵՆ ԳՅԼԽԵՆ....465
57 (303). ԱՎՈՒ ՀԱՃԱՐ ՎԱՐԻԼԸ....466
58 (304). ԱՎՈՒ ՄԻ ԳՅՈՒՇ ԿՈՐՈՒԿԸ....466
59 (305). ՕԽՏԸ ԹԱՀՐԻ ՍԸՐՄԸ ՄԻ ԱՐՏՄ....467
60 (306). ԱՎԻ ՄԻ ՔԻՍԱ ՓՈՂ Ա ՃԱՐԱԼ....467
61 (307). ԱՎՈՒ ՋԱՐՄԱՆ....468

Պըլ Պուղի....468
62 (308). ԻՐՔ ՕՐ ՊՈՒՂԻՆ ՄԵԼԻՔ Ա ԴԸՌԱԼ....468
63 (309). ԱՇԽԱՐՔԵՆ ԱՄԵՆԱԱՆԽԸԼՔ ՄԱՐԹԸ....469
64 (310). ՄԵԼԻՔԸ ՊՈՒՂՈՒՆ ՂՈՐԿԱԼ Ա ԿԱԽԱՂԱՆ....470
65 (311). ՂԶՂԱՆԸ ԾՆԱԼ Ա....471
66 (312). ՊՈՒՂԻ ԲԱԽՏՈՒ ԵՇՈՂ Ա ԴԸՌԱԼ....471
67 (313). ՊՈՒՂՈՒ ԼՊՐՍՏԱԿԵՆ ՃՈՏՐԸ....472
68 (314). ՊՈՒՂՈՒ ԲՈՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՔԸ....473

Մոլլա Նասրեդին....474
69 (315). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԵ ՏԱՐԱԼՆ ԿԱԽԱՂԱՆ....474
70 (316). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԵ ԴՆՈՏԵՆՔԸ....475
71 (317). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆ ՎԸՐՋԱԿ Ա ԴԸՌԱԼ....475
72 (318). ԷՇԵՆ ՈՒՍՈՒՄԸ....476
73 (319). ՄՈԼԼԵՆ ՋԱՀԵԼՈԹՈՒՆԸ....476
74 (320). ՄՈԼԼԱՆ ԳԵՆՑԱԼ Ա ՂԱՐԻԲԵԹՈՆ....476
75 (321). ՄՈԼԼԵՆ ԿՆԵԳՑԸ....477
76 (322). ՄՈԼԼԵՆ ՀԱՎԱՏԱԼԻՍ ՉԸՆ....477
77 (323). ՄՈԼԼԱՆ ԹԱ ՍԱՂ ԻՆԻ....477
78 (324). ՄՈԼԼԵՆ ԷՇԵՐԵՆ ՀԱՇԻՎԸ....478
79 (325). ՄՈԼԼԵՆ ԷՄԱՄԱԹԸ....478
80 (326). ՄՈԼԼԱՆ ՓԼԱՎ Ա ԿԵՐԱԼ....479
81 (327). ՄՈԼԼԵՆ ԵՐԵ ԿՐԵՑԱ ՉԸՆ ԳՅՈՒՂԵԹՈՒՆԸ ՀԱՏԱԴԻ....480
82 (328). ՄՈԼԼԱՆ ՀՎԱՏԱՐ Ա ԴԸՌԱԼ....481
83 (329). ԳՅԼԽԸՑԱՎԵՆ ԴԵՂԸ....481

84 (330). ՄՈԼԼԵՆ ՂԱՐԻԲԵԹՈՒՆ ԳԻՆԻԼԸ (*տարբերակ*) 482
85 (331). ՀԱ՜Յ ԳԻՊԻ ՋԱՀԵԼՈՒԹԻՆ (*տարբերակ*) 482
86 (332). ՄՈԼԼԵՆ ՆՅԱԹԸ 482

ՍՏԱՊԱՏՈՒՄ 484
Պուղուզ ապուր ստերը 484
1 (333). ՀՈՐԸՍ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ 484
2 (334). ՕԽՏԸ ԱՐՋԸՐԸ 485
3 (335). ՕԽՏԸ ԳՅՈՒԼՈՒՐԸ 486
4 (336). ՕԽՏԸ ԹՈՐՔ ՏԸՂԵՐՔԸՍ 487
5 (337). ՕԽՏԸ ԳՅՈՂՈՒՐԸ 488
6 (338). ՂՈՒՋՂՈՒՆԵՆ ՕԽՏԸ ՉՈՒՆ ՆԱ ՕԽՏԸ ԽԸՌՎԱՍՈՒՆՔԸ 489
7 (339). ՕԽՏԸ ԷՇՈՒ ԲԵՌՆԸ ՄՈՐԵՆ 491

Ուստա Մուրադի ստերը 492
8 (340). ՄՈՒՐԱԴԵ ՀՈՒՋԱԹ ԿԱՐԹԻԼԸ 492
9 (341). ԱՐՋԵՆ ՔՈԹԵԹԸ 492
10 (342). ԹՈՐՔԵՆ ՀՈՒՋՈՒԼՆԵՆ 493
11 (343). ԻՐԸՔ ԳՅՈՂԸՐԸ 493
12 (344). ՔԱՇԿԵՐԵՆ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ 494

Սըտասան Սուրի 495
13 (345). ԼԸՊԸՐԸՍՏԱԿՆՈՒՆ ՃՈՏԸՐԸ 495
14 (346). ՏԱՍԸ ԳՅՈՒԼՈՒՐԸ 496
15 (347). ԻՐԸՔ ՕՐՎԱ ՀԸՂԵՆ ՄԻ ՍՀԱԹԸՄ 496
16 (348). ՎԵՑ ԲԵՌՆԸ ԱԼՅՈՒՐԻՑ՝ ՎԵՑ ՊԱՐՂԱՃ 498
17 (349). ՀԸՐԸՎԱՆ ԽԱՉԱՆԵ ԹՈՒԹՈՒՆԸ 498
18 (350). ՋԱՌՋԱՄՈՒ ՔԱՇԿԸՐԸ 499

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 501
Ծիսական և քնարական երգեր 501
1 (351). ՃՈՐԱ-ՃՈՐԱ 501
2 (352). ԱՍՏՈՒԾ-ԱՍՏՈՒԾ 502
3 (353). ԲԱԼԱՏ ՄԸՌՆԻ, ՂԸՆԱՏԱՐ 503
4 (354). ԳՅՈՒԼՈՒ ԽԱՂԸ 504
5 (355). ՋՂԱՑԵՆ ԳՅԸԼԽԵՆ 505

Խաղիկներ 1(356)-5(360) 505

ԲԱՆԱՋԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 1 (361). - 472 (832). 506

Առածներ և ասացվածքներ 506

Դարձվածներ 1(833). – 15 (848). 524

Թևավոր խոսքեր 1 (849). - 5 (853). 529

Շուտասելուկներ_1 (854). - 3 (856). 532

Երգիծական քառյակներ 1 (857). - 9 (865). 532

Հանելուկներ_1 (866). - 30 (895). 535

Անեծք1 (896) 539

ՀԱՎԵԼՎԱԾ 540
Բառախաղ 1 (897). - 16 (912). 540

Մանուկների լեզու 17 (913 - 19 (915) 542

Ծածկալեզու 20 (916) 544

Վերապատումներ 1 (917) - 10 (926) 546

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1 (927) - 29 (954) 554

Հ.Հ. Հովսեփյանի համառոտ ինքնակենսագրությունը 560

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 562

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՂՅՈՒՍԱԿ 589

ԲԱՌԱՐԱՆ 610

ԱՄՓՈՓՈՒՄ (ռուսերեն) 629

ԱՄՓՈՓՈՒՄ (անգլերեն) 630

Համառոտագրություններ

ծան. ասաց.- ծանոթագրություն ասացողի
ծան. բան. - ծանոթագրություն բանասացի
ծան. կազմ. - ծանոթագրություն կազմողի
ծան. խմբ. - ծանոթագրություն խմբագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ
II
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Պատ. խմբագիր՝ Ա. Ս. Ղազիյան
Կազմողներ՝ Ս. Ա. Վարդանյան
Է. Հ. Խեմչյան
Հրատ. խմբագիր Ա.Վ. Հովակիմյան

Համակարգչային
շարվածքը՝ Մ. Հ. Խեմչյանի
Գ. Բ. Ղազիյանի
էջադրումը՝ Գ. Բ. Ղազիյանի

Հրատ. պատվեր N 231
Ստորագրված է տպագրության 10.02.2009թ.
Չափսը՝ 60x84 1/8: 41,5 տպ. մամուլ:
Թուղթ՝ օֆսեթ N 1: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային

«Էդիթ-Պրինտ» ՍՊԸ տպարան

[5000yp.]

ԳԱԱՀ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0149493

A II
95406